

U. S. GOVERNMENT

U.S. GOVERNMENT  
PRINTING OFFICE,  
1903.

1

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР  
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ ИМ. М. АБЕГЯНА

С. Б. АГАБАБЯН -

ИСТОРИЯ  
АРМЯНСКОЙ  
СОВЕТСКОЙ  
ЛИТЕРАТУРЫ

ТОМ ПЕРВЫЙ

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР  
ЕРЕВАН

1986

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ  
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ս. Բ. ԱՂԱԲԱԲՅԱՆ

ՀԱՅ  
ՍՈՎԵՏԱԿԱՆ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ԵՐԵՎԱՆ 1986

ԵՊՀ ԳՐԱԴՐՈՒՅԹ  
 Ա. Կ.  
 БИБЛИОТЕКА ЕГУ  
 БИ

**Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ Մ. Արենյանի անվան գրականության ինստիտուտի  
գիտական խորհրդի ոռոշմամբ**

**Գառաքանական խմբագիր՝ բանասիրական գիտուրյունների բեկնածու Վ. Մ. ՄԵԼԱՑԱԿԱՆՅԱՆ**

**Դիւցր հրատարակության են երշխավորել՝ բանասիրական գիտուրյունների դոկտոր  
Խ. Մ. ԴՅՈՒՆԱԶԱՐՅԱՆԸ և բանասիրական գիտուրյունների բեկնածու Դ. Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆԸ**

### Աղաբարյան Ս. Բ.

**Ա. 431 Հայ սովետական գրականության պատմությունների հատուրությունների համար  
ըստ Հ. 1.—Եր.: ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986.**

**Վերնախորագր.՝ ՀՍՍՀ ԳԱ, Մ. Արենյանի անվ. գրակ. ին-տ.:  
Հ. 1. (20—30-ական թթ.) /Պատ. խմբ./ Վ. Մ. ՄԵԼԱՑԱԿԱՆՅԱՆ.  
1986. 576 էջ. 4 թ. նկ.:**

**Հատորն ընդգրկում է 1920—1930-ական թվականները։ Հատորում քննության  
են ենթարկվել նշված ժամանակաշրջանի հայ սովետական գրականության զար-  
գացման օրինաշափությունները, վեր են հանվել հայ գրականության դերն ու նշա-  
նակությունը սովետական բազմազգ գրականության զարգացման պրոցեսը։**

**Հառցեագրվում է ընթերցող լայն շրջաններին։**

4603010200

Ա-----74-85

703(02)-86

ԳՄԴ 83.327

## ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Հայ սովետական գրականության պատմագրության գլխավոր ինդիրը այդ գրականության փաստերի, եղելությունների, դրվագների համակարգվածքնությունն է՝ պատմական զարգացման հիմնական օրինաչափությունների բացահայտումով։ Առաջին այդպիսի հախափորձը կատարել է Հարություն Սուրխաթյանը՝ դեռ 1929-ին ասպարեզ հանելով «Ետհոկտեմբերյան հայ գրականությունը» գիրքը, որ նորագույն գրականության մեթոդաբանական խընդիրներին նվիրված ընդարձակ Առաջարևանին հետևում են 20-ական թվականների մի շալք գրողների ուրվագծային դիմանկարները։

Դրանից հետո հայ սովետական գրականության պրոբլեմները և նշանավոր գրողների ստեղծագործությունները մեկնաբանվում են գրական պարբերականներում, մինչև որ 1954 և 1955 թվականներին Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սովետական գրականության բաժինը հրատարակում է «Սովետահայ գրականություն» դպրոցական դասագիրքը (Խ դպսարան), Այդ դասագիրքը նույնպես նախափորձ էր պատմության փաստերի համակարգման առումով. թեև նրանում շրջանառության մեջ դրվեցին հատկապես 20—30-ական թվականների գրական շարժմանը հատուկ որոշ եղելություններ՝ թուոցիկ մեկնաբանություններով։

Հիսնական թվականներին արեն սովետական (նաև հայ սովետական) գրականության պատմության կառուցվածքային բնույթի և պարբերացման խնդիրները դառնում են գրականագիտական բուռն ասուլիսների նյութ։ Մասնավոր շատ հարցերի կողքին առանձին սրությամբ դրվեց գրականության պատմությունը գրական շարժման ընթացքով՝ շղթայաբար ներկայացնելու, ընթացքի հետ նաև գրական վառ անհատականություններին մենագրական առանձին գլոխներ հատկացնելու խնդիրը։

Նույնպիսի սրությամբ քննության առարկա դարձան գրականության պատմության շրջանացման՝ պարբերացման խնդիրները. ոմանք հակված էին գրականության պատմությունը քաղաքացիականի հետ նույնացնելու տեսանկյունը, մյուսները պարբերացման ելակետ էին համարում գրականության ներքին օրինաչափությունների հայտնագործման շափանիշը. Վեճերն այդպես էլ մնացին շուծված (դեռ շարունակվում են մինչև օրս)։

Այդուամենայնիվ, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի սովետական գրականության բաժինը ընտրեց ընթացքի և մենագրությունների համադրման ճանապարհը. 1961 թվականին լուս տեսավ «Հայ սովետական գրականության պատմության առաջին հատորը», 1965-ին՝ Երկրորդը, իսկ 1966-ին Մոսկվայի «Հայկա» հրատարակչությունը Մ. Գորկու անվան Համաշխարհային գրականության ինստիտուտի մատենաշարով լուս ընծայեց «История советской армянской литературы» մեծադիր հատորը։

**Այդ հատորները իբրև գրականության նորագույն պատմության նյութի գասակարգման անդրանիկ փորձ, որոշակի գրական դեր խաղացին, դարձան «Հայ սովետական գրականության պատմություն» բուհական դիսցիպլինի հիմնական ձեռնարկը:**

**Այդ հատորներում տեղադրվեց 1917—1960 թթ. գրականության փաստերի մեծ քանակություն, բազմակողմանիորեն ներկայացվեցին գրական շարժման առանձին փուլերը և ականավոր գրողների դիմանկարները, ապա նաև մեկնաբանվեցին պատմատեսական բնույթի մի շարք խնդիրներ:**

**Այսուամենայնիվ, քիչ շէին նաև թերությունները՝ անպարտադիր անունների շուալություն, տեսական հարցերի լուծման որոշ մակերեսայնություն, գեղարվեստական անհատականությունների «ներքին աշխարհի» թափանցման պակաս խորություն, պարբերացման՝ գրականության առանձին շրջանների սահմանագծերի ավելորդ լայնացում և այլն:**

**Անցած տարիները հրամայաբար առաջ քաշեցին Պատմության նոր երկ-հատորյակի ստեղծման խնդիրը, որը թեև կառուցվածքով «ընդօրինակությունն է» նախորդ երկհատորյակի (գրական ժանրերի զարգացման ընթացքի գրական-պատմական ակնարկների և մենագրությունների զուգակցում), սակայն հենվում է պարբերացման նոր կազմության վրա. I-հատորը 20—30-ական թվականների միասնական պատմությունն է, II-հատորը 1941—1956 թթ. և 1956—1985 թթ. գրականության պատմության շարադրանքը: Երեք պարբերաշրջաններն էլ ներկայացվում են առավել աշքի ընկած գեղարվեստական անհատականություններին նվիրված մենագրական գլուխներով:**

\* \* \*

1983

## ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

### 1

XX դարասկիզբը հայ հասարակական գիտակցությանը հույս էր ներշնչում, որ մոտիկ պատասխան են ստանալու ազգային կյանքի բարդ ու խճճված հանգույցները:

Նորդարյա առաջին իսկ համարում «Մշակ» օրաթերթն իր խմբագրական հոդվածի մեջ ի լուր ամենքի ծանուցում էր. «Առաջիկա հասներորդ դարը, որի մեջ ենք մենք այսօր, պետք է պատասխան տա մեր հասարակական հարցերին և լուծի մի շարժ գորդյան հանգույցներ»<sup>1</sup>:

Ժամանակի ամենամասսայական լրագրի խոստում-կանխատեսությունը վերաբերում էր ոչ միայն «կյանքի ու մահու խնդրի բնավորություն ստացած» (Վ. Տերյան) «Հայոց դատի»՝ «Հայկական հարցի» քաղաքական լուծումների հեռանկարին, այն հարցի, որը դարավերջյան ապարդյուն ջանքերից հետո անցավ XX դարասկիզբի ազգային օրակարգը, այլև հայ հասարակության նոցեոր շարժմանը, որը պատմական հանգամանքների բերումով դարձել էր ազգային գոյության սկեռակետերից մեկը, թերևս գիխավոր կետը:

Դարերի հնություն ունեցող հայ ազատագրական լեգենդի փլուզման և ազգային գոյուրչյան հարցականի ճակատագրական-աղետավոր թվականներին այլևսյ գաղափարական մտայնությունների և գուշակությունների շարքում ձեզվարվեցին «Հոգեւոր Հայաստանի» կառուցման նախագծերը, որոնք կոշված էին փոխարինելու քաղաքական-նյութական-աշխարհագրական հայրենիքին և ժողովրդի պատմական ճանապարհի գալիք ընթացքին տալու ինքնուրույնուրյան յուրօրինակ դրոշ:

«Հոգեւոր Հայաստանի» ծրագիրը ոչ միայն անպտուղ երազողների կառուցած անմարմին ցնորդը չէր, այլև մեծագույն աղետների մեջ հայտնված ժողովրդի փրկության անդուզ որոնումների բնական ու տրամաբանական ծնունդն էր:

Կառուցվածքով լինելով մարգարեռություն, «Հոգեւոր Հայաստանի» նախագիծը բոն է ությամբ ունալիստական թափանցում էր իրականության խորքերը, այնպիսի թափանցում, որի հարուցած գրգիռներով ասպարեզ հանվեցին ժամանակի խորունկ մտածող-կրահողների հեռանկարային գաղափարական առաջադրությունները՝ իբրև ազգային գոյության խարիսխ ու ճանապարհ, թեև «Հոգեւոր Հայաստանի» գաղափարը հայոց պատմության մեջ ուներ դարավոր հնություն և հնադարյան ակունքներ (հասնում է մինչև V դար, հայկական գրերի գյուտից սկզբնավորված մտավոր հզոր շարժումը), թեև «Հոգեւոր Հայաստանի» գաղափարը նեցուկ էր նաև XIX դարի ազգային զարթոնքի և ազատագրության գաղափարախոսությանը (սկսած և. Աբրովյանից), սակայն ազգային հիմնական մտահոգություն դարձավ XX դարասկիզբին, երբ նրա վրա դրվեցին գոյուրչյան, հեռանկարի ճակատագրական խնդիրները:

«Նոր շարժումը ուներ կենսական հիմքեր, կապված էր մեր կյանքի յուղահատուկ պայմանների հետ: Տանուլ տալով քաղաքականության և նյութական արժեքների ասպարեզում, կորցնելով ֆիզիկական դիմադրության հիմքերը, ժողովուրդն ու նրա մտածող մասը աղետի պայմաններում ձգտում էին ամեն գնով պահպանել գոյության մյուս կովանը՝ հոգեոր աշխարհը: Մայր էր առնում հոգեոր դիմադրությունը և մաքառումը՝ ներքին ուժերի վերելքի համար»<sup>2</sup>:

«Հոգեոր Հայաստանի» դրոշակակիրը եղավ Հովհ. Թումանյանը: Վերին աստիճանի խորիմաստ է այն հանգամանքը, որ մեծագույն ազգային աղետի օրերին վերածնության ճանապարհը նա համարում էր ոչ այլ ինչ, եթե... Հոգեոր կյանքի թոփքը: Դեռ 1916-ին նա գրում է. «Վերջին ժամանակներս մեր մեջ առանձին թափով վերստին ամբողջանալու, առողջանալու, ինքնուրույն կուլտուրայով մի ամբողջական ազգ դառնալու ձգտումը առաջ է բերել մի համատարած հոսանք մեր կյանքի ամեն կողմերում և ամեն ասպարեզում»<sup>3</sup>:

Հովհ. Թումանյանը «համատարած հոսանքի» ընդգծումով նկատի ուներ XX դարասկզբին հայ իրականության մեջ սկսված աննախընթաց մշակութային շարժումը, գեղարվեստի բոլոր ճյուղերի, հայագիտության և հայրենագիտության բոլոր ասպարեզների վերելքը, այն շարժումը, որը իր վրա էր վերցնելու շեղյալ պետականության դերը:

«Հոգեոր Հայաստանի» մյուս համբավաբերը՝ Վահան Տերյանը, արձագանքելով Հովհ. Թումանյանին, «Մշակ» թերթի 1914 թ. գեկտեմբերի 4-ին տպագրեց իր ընդարձակ հոդվածը, ուր մասնավորապես ասվում էր. «Հայության «հավաքում» կամ «հայուրյան կազմակերպում» գաղափարական իմաստով,—ահա ինչ եմ հասկանում ես «Հոգեոր Հայաստան» ասելով: Դա այն կուլտուրան է, կոլտուրապես կազմակերպված ժողովուրդն է, որի գալուն մենք կուգենք հավատալ... Այդ հոգեոր Հայաստանի կառուցումը ծանր ու տևական աշխատություն է պահանջում, անթիվ կյանքերի տեսական հավատու գիտակցություն, անարյուն, բայց ազնիվ, գուցե ավելի դժվար, ավելի ահավոր դոհաբերում, քան արյունի զոհաբերումը...»<sup>4</sup>:

Վերլուծելով ժամանակի այլեւայլ հասարակական հոսանքների դիրքորոշումը ազատագրության ուղիների շուրջը, Վահան Տերյանը ազգային փըրկության ստույգ ճանապարհը համարում էր մշակութային կյանքի զարգացումը, մշակույրի արժեքների «անդադար» ստեղծագործումը. «Բացի արտաքին արգելքներ հաղթահարելուց ամեն մի՝ ազգ կազմելու ցանկություն ու կամք ունեցող ժողովուրդ անդադար պետք է ստեղծի այն արժեքները, որոնք նրա իննուրյան առհավատշան են»<sup>5</sup>:

Ուշագրավ է հետեւյալ պարագան. ժամանակի մտածողները այն մըտքին էին, որ նոր սերունդը պետք է լինի մի քանի սերունդների անձնվեր գործունեությամբ ձեռք բերված հոգեկան մեծահարուստ ժառանգության կտակարարը, պետք է պահպանի անցյալը՝ հանուն ապագայի փրկության:

«Ինքնության» մեծ խորհուրդը պարունակելուց զատ, «Հոգեոր Հայաստանը», ըստ նրա նախագծողների, այն ոսկե կամուրջն է, որով, ինչպես Հովհ. Թումանյանն էր մարգարեանում, հայ ժողովուրդը մտնելու էր «Մեծ կյանք» «հառաջադեմ ազգերի հետ երազելու կյանքի վսեմ երազները, նրանց հետ միասին մասնակից լինելու համարդիկային մեծ խնդիրների մշակույթի ազնիվ գործին...»<sup>6</sup>: Շատ բնորոշ է, որ Թումանյանը «մեծ կյանքը» համա-

րում էր նորագույն քաղաքակրթության լայն խնդիրները, դրանց կոչելով հայ ժողովրդի միտքն ու հոգին:

2

Ազգային գոյության հեռանկարը տեղադրելով «Հոգևոր Հայաստանի» մարգարեական կառուցվածքի մեջ, հայոց մտավոր կյանքի առաջնորդները, բնականաբար, առանձնահատուկ դեր էին հատկացնում լեզվի և գրականության՝ ազգային ինքնազիտակցության նիմեական նեցուկների, զարգացմանը, և՛ մեկի, և՛ մյուսի վերանորոգումը դիտելով իբրև «Հայաստանի ազնիվ և լուսηն ոգու» (սա Վ. Տերյանի խոսքն է) վերանորության և հառումի հիմնագարը: Գնայած այն հանգամանքին, որ Կովկասի փոխարքա Գոլիցինի հրամանով փակվել էին հայկական դպրոցները (իսկ ծխական դպրոցներն էին գերազանցապես այն օշախները, որ վառվում էր հայոց լեզվի լույսը), շնայած պարբերական մամուլն արդեն սկսել էր խոսել հայոց լեզվի զարգացման նպատակին իրադրությունից, շնայած «բարձրաշխարհիկ» հասարակության հայոց լեզվի հանդեպ բռնած արհամարհալից վերաբերմունքին, այդուամենայնիվ չէր մարել լեզվի բարգավաճման հավատը: Դրան նպաստում էր, մասնավորապես, հայ գրերի գյուտի 1500-ամյակի և հայ գրքի տպագրության 400-ամյակի համազգային տոնակատարությունների եռուզեռը, որը Ալ-Մյասնիկյանը «Երկու կուլտուրական տոն» (1913) նշանավոր հոդվածի մեջ գնահատեց իբրև «Հոգևոր Հայաստանի» մասունքը:

Հայոց լեզվի ճգնաժամին վերաբերող խոսակցությունների օրերին Վահան Տերյանը հանդես եկավ «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության՝ գրական լեզվի նակատագրին վերաբերող մտորումներով, որ հոշակում էր մայրենի լեզվի ապագան՝ «Հոգևոր Հայաստանի» սահմաններում:

Վերանորության հույսերի և մեծ հավատի հոգեբանությունն էր նաև հայ գրականության ապագայի գեղագիտական կուահումների հիմնական բովանդակությունը:

XX դարասկզբին՝ 900-ական և 10-ական թվականներին, հայոց պատմության թերևս ամենածանր, ամենաճգնաժամային տարիներին, հայոց մուսաները եղան ավելի քան հավատավոր, եղան հուսալիր:

Այդ ծանրածանր օրերին Վահան Տերյանը գրեց ազգային հավատի բանաստեղծական մանիթեստը՝

Երկիր, իմ երկիր, հավատով անմար,  
Սուրբ է քո ուղին և պահեց՝ վեհ...—

իսկ Հովհ. Թումանյանը՝ հայոց աշխարհի բանաստեղծական մարգարետյունը.

Բայց հին ու նոր քո վերբերով կանգնած ես գու կենդանի,  
Կանգնած խոհանն, խորհրդավոր, ճամփին նորի ու հնի,  
Հառաջանքով սրտի խորքից խոսք ես խոսում աստծու հատ...

Դառնալով XX դարասկզբի գեղարվեստական կյանքին, ոչ հեռու անցյալում գրականության և արվեստի պատմաբանները սովորաբար մատնանշում էին

«ուեալիստական ավանդների թուղացման» փաստը և այդ ժամանակաշրջանի գեղարվեստի նշանը համարում էին «ուեալիզմի փլուզումը»: Ավելին, որոշ մեկնաբաններ հայոց գեղարվեստի և գրականության զարգացման ընթացքի մեջ դիտում էին համատարած տարընթացուրյուն, դա բացատրելով ժամանակաշրջանի բաղաքական բարդ կյանքի ներքին հակասություններով և ժողովրդի պատմական ճակատագրի զարտուղիներով:

Անշուշտ մեծագույն ազգային ողբերգության թվականները նպաստում էին այլևայլ «փրկչական-տեսիլքային» գաղափարների և դրանց համապատասխանող գեղարվեստական ձևերի տարածմանը: Պատմության շար հողմերի քմահաճույքով հոգեկան տարագործության մեջ հայտնված ժողովրդի արվեստի ու գրականության մեջ անխուսափելիորեն թափանցում են բոլոր այն գաղափարները՝ սկսած ազգային-հեթանոսական միֆերի նորդարյա խմբագրությունից (նավասարդյան հեթանոսական շարժումը), «Հին աստվածների» տեսիլքներից (կոն Շանթի հռչակած «երազների» սլաքով), «լուսեղեն ու հեռավոր ափերի» պատրանքներից մինչ ոռու սիմվոլիստների հրահանգած «ահեղ դատաստանի», «աշխարհի վախճանի» (ապոկալիպսիսի) պատրանքները և նիշշեական Զրուդաշտի պատվիրանները, որոնք խոստանում էին կործանվող մարդկության և փլուզվող հայրենիքի փրկության ինչ-ինչ հեռանկարներ:

Անտարակուսելիորեն ժանր, խճճված, կապանքված ժամանակաշրջանի գրականությունն իր վրա կրում էր հասարակական նախասլաշարմունքի և ժամանակակիցների բեկված ու բեկորված հոգեբանության դրոշմը, նրանում լայն տեղ են գրավում այդ հոգեբանությանը պատշաճող գեղարվեստական մտածողության ձևերը, ինքնասուզումներն ու կուահումները, խորհրդապատկերներն ու երևույթների միստիկական հայեցումները:

Բայց ամբողջ խնդիրն այն է, որ այդ երևույթները օրգանական կապ չունեին գրականության, առհասարակ՝ գեղարվեստի խոր նոսաների հետ, որ չույն՝ 900-ական և 10-ական թվականներին, պատմական ուժգին ցնցումների ժամանակաշրջանում, հայ գրականությունը փարեց գեղարվեստական իդեալների, որոնք նշանավորում էին գեղագիտական նոր բովանդակությունը՝ XIX դարի գրականության հիմնական գծերի հարաբերությամբ:

Մինչ XIX դարի հայ գրականությունն ու արվեստը գերազանցորեն զարգանում էին կամ ազգային ազատագրության շարժումների, ազգային զարթոնքի հուզական հիմքերն ամրապնդելու նշանաբանով, կամ ազգի հայրենասիրական պոտենցիալը հրահրելու կոչերով, կամ ժողովրդագրկիչ առաջալների «գրադարակների ու գեղարկղների» (սա Զեխովի խոսքն է) միջոցով, հայ իրականությանը պատաժ խավարը ցրելու լուսավորական ծրագրերով, XX դարի հայ գրականությունն ու արվեստը, բնավ շմոռանալով հայրենիքի երգը՝ ազգային վիշտը, փարեց այնպիսի իդեալների, որոնք բերում էին որակական նոր տեսագեր:

Դարասկզբի գեղարվեստական կյանքը՝ և արևելահայ, և արևմտահայ հատվածներում, լեփ-լեցուն է «գրական երազանքներով»՝ գալիք օրվա կանխատեսություններով ու կուահումներով: Այդ «երազանքները» քմածին «անակընկալներ» չեին, այլ արտահայտում էին հասարակական շրջադարձի նախազգացողաւրյաւնները, կյանքի սոցիալ-պատմական դինամիկայից բխող պահանջները:

Այս առումով վերին աստիճանի հետաքրքրական են գեղարվեստի զարգացման այն մոդելները, որոնք վերաբերում էին ազգային գրականության նոր ուղիներին և նրա գեղագիտական նոր բովանդակությանը: Խնչպես նկատում է Ս. Սարինյանը «Էջեր հայ քննադատական մտքի պատմությունից» հոդվածում, «շարժումն իր ընդհանրության մեջ միասնական է, իր ուղղությամբ ու բովանդակությամբ նույնական և ուրույն հետաքրքրություն է ներկայացնում համազգային գրական շարժման զուգահեռներում»<sup>7</sup>:

1907 թվականին Հովհաննես Թումանյանը Թիֆլիսի ժողովրդական համալսարանում կարդում է «Կյանք և գրականություն» դասախոսությունը, որը գրականության գալիք օրը ծրագրող գեղագիտական մանիֆեստ էր:

Հովհ. Թումանյանի այդ դասախոսությունը իր նշանակությամբ հավասարարժեք էր և աշակերտուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի Առաջաբանին, Միք. Նալբանդյանի «Կրիտիկային»:

Ինչպես հայ գեղագիտական մտքի այդ կոթողային հուշարձանները, Հովհ. Թումանյանի «Կյանք և գրականություն» դասախոսությունը ևս ազգային գրականության զարգացման որոշակի հատվածի գլխավոր ուղղությունը սահմանող փաստաթուղթ էր:

Թումանյանը, իբրև զարգացման գլխավոր ուղղություն, առաջ քաշեց և հիմնավորեց բնաշխարհիկ գրականության տեսությունը գրագաղության զարգացման որոշակի հատվածի գլխավոր ուղղությունը:

Զափազանց հատկանշական է, որ բնաշխարհիկ գրականության տեսությունը իբրև գործողության ծրագիր առաջադրվեց ոչ թե ազգային գրականության ձևավորման ցածրագույն-նախանական աստիճանում, այլ նրա զարգացման ու դիմորոշման բարձր աստիճանում:

Ի՞նչ բովանդակություն էր սահմանում Հովհ. Թումանյանը ազգային գրականության համար: Դիմենք նրա դասախոսության ամենատարածված ու ամենաէական քաղվածքին. «Հայոց բանաստեղծին ավելի ազդում ու վշտացնում է այն, թե ինչու են և ամպեր կուտակվել Մասսիսի ձյունափառ գազաթին և նաշատ քիչ է նկատում կենդանի հայ գյուղացու ճակատի սկ ամպերը: Հայոց հայրենասերները Արտազը և Տարոնը ավելի են սիրում, քան Արտազում և Տարոնում ապրող ժողովուրդը...»<sup>8</sup>:

Հովհ. Թումանյանի ապրած ժամանակի՝ XX դարասկզբի պատմական հոգևոր փորձը, որի հայտարարներն էին այդ տարիների սոցիալական-քաղաքական նշանակալից շարժումները, ազգային ինքնագիտակցության ուժեղացման նոր երևույթները, քաղաքակրթության զարգացման մեջ ժողովրդի դերի մեծացման նորագույն ուսմունքները և, վերջապես, կյանքի արմատական հեղաշրջման նախազգացողությունները, գրականությանը թելադրում և պարտադրում էին իր բովանդակությունը ազատագրել աշխարհագրական-ազգագրական-բարբարական կաղապարներից և ամբողջ երևով մեկ շրջվել դեպի ժողովրդի իրական գիտակցությունն ու իրական հոգսերը, պահանջները, ապրումները:

Բնաշխարհիկ գրականության տեսությամբ Թումանյանը սահմանագծում էր գեղագիտական երկու վերաբերմունք, երկու հայացք. ժողովրդի նետ-ի և ժողովրդի մեջ-ի վերաբերմունքները:

Սրանք ոչ միայն նույն բաները չեին, այլև ենթադրում էին գեղագիտական միանգամայն տարրեր դիրքեր: Մինչ «պանդուխտ» հոսանքի գրողները թեև

ամբողջ էությամբ ժողովրդի հետ էին, այրվում էին հայրենիքի ճակատագրով, բայց անհաղորդ էին ժողովրդի իրական հոգսերին ու հոգեկան կնճիռներին, «բնաշխարհիկ» գրողները (որոնց նախակարապետն էր Խաչատուր Աբովյանը) ժողովրդական կյանքի ներքին, խորագույն ծալքերում և ժողովրդի մարդկանց աշխարհազգացման բուն տարերքի մեջ էին որոնում և ստեղծագործության նյութը, և բովանդակությունը, և գեղագիտական իդեալները:

Թե 1907-ին կարդացած դասախոսության մեջ, թե ազգային գրականության զարգացմանը նվիրված մյուս՝ գեղագիտական բնույթի ելույթներում, Հովհաննեսը հայ գրականության հիմնական ուղղությունը համարում էր ժողովրդի ընթացիկ կյանքի, «ժողովրդական աշխարհի» և նրա պատմության գլխավոր գծերի ոչ միայն թեմատիկական, այլև գեղարվեստական յուրացումը, այդ երկու սկիզբների համագրումը: Սա նշանակում էր՝ յուրացնել գեղարվեստի ամենակարևոր պայմանը՝ սովորական մարդու հոգեկան աշխարհի հարուստ ծալքերը, հենվել աշխարհի կարգ ու կանոնի այն ըմբռնումների վրա, որոնք կուտակվել էին ժողովրդական փորձի մեջ:

Հովհաննեսը հոշակում էր ժողովրդայնությունը՝ այս հասկացության ոչ թե քրեստոմատիական, այլ ընդունակ բովանդակությամբ:

Գրականության ու արվեստների ժողովրդայնացման միտումը թեև նորագույն ուղղությունների խայտարղեստ խալմերուկներում ոմանց աշքին երևում էր «ժամանակավրեպ», «պահպանողական» երևույթի կերպարանքով, սակայն, իրականում, նշանավորում էր գեղարվեստական առաջադիմության նոր աստիճանը:

Հովհաննեսը գեղագիտության տրամաբանական շարունակությունն էր հասարակության կյանքում գրականության դերի նրա պատկերացումը. «Այո՛, գրականությունը հայելի չէ լոկ և եթե հայելի էլ ասենք, ապա շատ տարօրինակ ու կախարդական հայելի է նա: Նա ոչ միայն արտացոլում է ժամանակը և իր դեպքերն ու դեմքերը, այլև տալիս է իր լույսն ու շերմությունը կյանքին, և ձգտում է կյանքում ստեղծել էն վեհ ու վսեմ, էն մաքուր ու անաղարտ չափակերը, որ տվել է նրան աստված, կազմված և հյուսված բնության ամենամքուր տարրերից:

Եթե գրականությունը կյանքի հայելի ասենք, ապա գրականության ամեն տեսակի ստեղծագործությունների աղբյուրը ամենից առաջ մարդու սիրտն է: Եվ երբ էսպես է, աշխատեցեք ձեր սրտերը պահել մաքուր և աշխարհին ու մարդուն նայեցեք բարի սրտով ու պայծառ հայացքով: Եվ արդեն բանաստեղծության բնությունն է էսպես ծնունդից: Դիցաբանությունն ասում է, թե Ապոլոնը, որ բանաստեղծությունն է ներկայացնում և արևն է միաժամանակ, իր կյանքում երբեք մութ ու մուսլ չեր տեսած, որովհետև արևն է ինքը և իր հայացքը արև է, և ամեն մոայլ շքանում է նրա հայացքից:

Արևի նման նայեցեք աշխարհին»<sup>9</sup>:

Հովհաննեսը հոշակած գրականության ժողովրդական ուղղությունը հատկապես 10-ական թվականների հայ քննադատության մեջ, ի գեմս Ա. Տերտերյանի, Յ. Խանլաղյանի, Ն. Աղբալյանի, Պ. Մակինցյանի և այլոց, գտավ շերմ ընդունելություն և համարվեց գրական առաջադիմության գլխավոր շափանիշը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ հայ գրականության արևմտյան հատվածում ևս, դեռ գարավերջից սուր գրապայքարի ասպարեզ էր գարձել «վաղ-

վան գրականության» խնդիրը: Որտեղից պետք է գրականությունն առնի իր նյութն ու բովանդակությունը, ինչո՞վ պետք է լցնե իր երակները, ի՞նչ աղբյուրներով պետք է մաքրագործի իր դեմքը,—այս հարցերին արված պատասխանների շրջանակներում միմյանց էին հակադրվում «Պոլսի գրականությանը» և «զավաոի գրականությունը», որոնք դավանում էին գեղագիտական տարրեր սկզբունքներ: Հարցի էությունը աշխարհագրական-տերիտորիալ նշանը չէր: Աշխարհագրական դասակարգման հիմքում, վերշին հաշվով, զբրգած էր աղգային գրականության ճակատագրի և նրա զարգացման ստույգ նախադրյալների խնդիրը: Մինչ «Պոլսի գրականության» շատագովները գրականության զարգացման ընթացքը պատկերացնում էին «բարձրաշխարհիկ» հասարակության բարքերի ու սիրային արկածների նկարագրության մեջ, «գավաոի գրականության» պաշտպանները գրողների ուշադրությունը հրավիրում էին հայոց գավառների խոնարհ ժողովրդի կյանքի արտացոլման վրա: Պարբերական մամուլում և հրապարակագրության մեջ լայնորեն արծարծելով «վաղվան գրականության» հարցը, դրա տեսաբանները, ըստ էության, արժարծում էին կյանքի իրական ներշնչանքներով գրականության ժողովրդական հիմքերն ամրացնելու հասունացած պահանջը:

«Վաղվան գրականության» խնդիր շուրջը պարբերաբար ընթացող բանավեճերի յուրօրինակ շարունակությունն էին Կոստանդնուպոլսի ծասայան սանուց Միության հրապարակային գրական ասուլիսները՝ 1913 թվականին, որոնց մասնակցում էին արևմտահայ նշանավոր գրողները, հրապարականուսները, խմբագիրները:

Այդ ասուլիսների սրոշի շեշտը ժողովրդական կյանքի կենդանի աղբյուրներով գրականության նորոգման հոգսն էր, իսկ այդ գիտակցության համբավաբերն էր ոչ այլ ոք... Կոմիտասը: Տոհմիկ-ազգային՝ հայկական երգի հայտնագործությամբ Կոմիտաս վարդապետը նախանշում էր նաև մյուս արվեստների զարգացման ուղիները: Նրան զորավիր էին ժամանակի արևմտահայ խորոնկ և հեռատես մտածողները: «Մեհյանը» հանգանակում իր խնդիրը համարելով «հայ ոգու հայսոնագործումը, դրա առաջին պայմանը, նրա իսկ տեսաբանի համազմունքով, համարում էր ստեղծագործությունը: Կ. Զարյանը գրում էր. «Ցեղ մը, որ կուզե ապրիլ՝ պարավալոր է ստեղծել»<sup>10</sup>:

Ճիշտ էր հարցի դրվածքը, սխալ էր առաջարկվող ճանապարհը: «Ազգային ողին» հայտաբերելու պայմանը «Մեհյանը» համարում էր օտար լիցքերին տիրելը: Եվ այսպես. մինչ «նավասարդյանները» հեթանոսական դրաբերի վերաբարձի և հեթանոսական ապրումների հրահրման մեջ էին փնտրում զարգացման ուղիները, մինչ «մեհյանականները» ազգային գրականության շավիդները փորձում էին լուսավորել օտար ճրագներով, ավելի հեռատես մտածողները ազգային գրականության ճակատագիրը կապում էին ազգային կյանքի կոնկրետ անցուղարձի, ասենք պատմական, հոգեբանական, կուլտուրական, սոցիալական ինդիքների, ժողովրդական աշխարհի բուն արմատների լուսաբանության հետ:

Դարասկիզբն առհասարակ աշքի էր ընկնում գեղարվեստական կյանքի ներքին խմբումներով, գրական, թատերական, կերպարվեստագիտական, երաժշտական, թարգմանչական, հայագիտական, ժողովրդագիտական շարժումների լայն թափով:

Գավկայում էր հայ ժողովրդի ներքին հնարավորությունները, նրա կենսութակույթը, որի մասին ամենածանր ժամանակներում՝ 1918-ին, Հովհաննես Թումանյանը գրում էր. «Զարմանալի է մեր ազգի կենսունակությունը: Ես լիքն եմ էդ մեծ կենսունակության անսասան հավատքով: Կենսունակությունն էլ որ ասում եմ՝ ասում եմ խոսքի բարձր ու ազնիվ իմաստով: Եվ ոչ մի բռնակալ, և ոչ մի բարբարոս երբեք չի կարողացել նվաճել ու ընկճել հայկական ցեղի էդ հղոր հատկությունը: Ամեն անգամ, ամեն մի բռնակալի հայ ժողովուրդը կարող էր կրկնել Վարդանանց խոսքը՝ թե որ կարող ես հայի մարմինը տանջել, բայց նրա ոգու հետ ի՞նչ ես անհլու... Իսկ էդ ոգի ասած բանը անշունչ բարերից էլ կարող է Արքահամա զավակներ հարուցանել և դաշտերում ցրված ոսկորներից՝ կենդանի ժողովուրդը<sup>11</sup>:

Գեղարվեստական շարժումը՝ իր ընդարձակ շրջագծերով, խարսխվում էր «կենդանի ժողովրդի» կենդանի ոգու, իբրև գոյության հաստատարանի վրա, ասպարեզ կուելով «գրական երազանքները»:

Հայ գրականության բարենորոգության երազներով էր շնչում 1914-ին Թիֆլիսում Վահան Տերյանի կարդացած «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը:

Ինչպես պարզել են հետազոտությունները, Վ. Տերյանի այդ դասախոսությունը անմիջական թելերով առնչվում էր դեռ 1910-ին Մոսկվայում հիմնված «Գարուն» խմբակի գեղագիտական դավանանքին, այն խմբակի, որը ծրագրում էր հայ իրականության մեջ առաջ բերել «նոր հոսանք»:

Այդ «նոր հոսանքի» պատգամախոսներն էին ուսուական առաջավոր մաավորականության միջավայրում կրթված նոր սերնդի մարդիկ՝ Ալ. Մյասնիկյան, Պ. Մակինցյան, Յ. Խանդաղյան, Վ. Տերյան և այլք, որոնք հիմնադրելով «Գարուն» գեղարվեստական ալմանախը, առաջին քայլերն էին անում իրականացնելու ազգային գրականության զարգացման նոր աստիճանը:

«Գարուն» խմբակի միջավայրում հասունացած գեղարվեստական հայացքներն էր, ահա, Վ. Տերյանը առաջարկում հանրության ուշադրությանը: Զնայած Տերյանի դասախոսության գնահատականների մեջ եղած առանձին ծայրահեղություններին, — հայ գրականության անցած ուղիներում նա տեսնում էր «ազգային կեղեկի» և գավառականության գերակշռություն՝ ժողովրդական հոսանքի համեմատությամբ, — նա միանգամայն ճիշտ և հստակ բացատրություն էր տալիս ազգային գրականության գալիք ծաղկման պատմահասարակական նախադրյաների խնդրին: Վ. Տերյանը ասում էր. «Եթե մենք չենք կամ մենում լինել անպատճ ցնորողներ և օդային ամրոցներ կառուցողներ, բնականաբար, պետք է ենենք տվյալ իրականությունից, պետք է հաշվի առնենք բոլոր այն հանգամանքները, որ հարկադրի զորություն ունեն կուլտուրական զարգացման համար... Մեր մոտավոր նպատակն է՝ զարգացնել մեր բոլոր ստեղծագործ ուժերը, այլ կերպով արտահայտել մեզ կյանքում, այսինքն՝ մտնել կուլտուրական մարդկության գերդաստանը ոչ իբրև խորթ զավակ կամ ծուլլ ու խավար մի ստրուկ, այլ ձուլել մեր կյանքը համամարդկային կյանքի հոսանքին, պահպանելով մեր հոգեկան առանձնահատուկ գծերն ու գոյշերը»<sup>12</sup>:

Գրականության նոր աստիճանի իրականացումը Վ. Տերյանը կապում էր կյանքի նեղաշրջման՝ երկրի քաղաքական-տնտեսական վերափոխությունների հետ. «Ահա այդ ինտելիգենցիան է (խոսքը «ազգային կեղեկից» ձերադատ-

ված և ժամանակի առաջավոր հոսանքների դրոշի տակ անցած մտավորականության մասին է—Ս. Ա.), որ պիտի հարթի մեր գրականությունը նեղ ու անծուկ ազգային կղերական բանտից դեպի իսկական արվեստի անժայրածիր լայնությունը։ Այդ գրականության նորաբաց ծիւերը կան, իսկ նրանց փարթամ ու գոնագեղ ծաղկումը կինքի այն ժամանակ, երբ երիտասարդ Ռուսիան կթափահարի իր արծվի թերթ, երբ երկրի կենդանի ուժերը գարնան ելման ջրերի նման կշարժվեն՝ հզոր ու խնդուն...»<sup>13</sup>:

Ազգային արվեստի համամարդկային որակի յուրացումը ուղղակիորեն կապելով քաղաքական նպաստավոր հանգամանքների հետ, դարի առաջավոր մտածողները կյանքի հեղաշրջման հետ նախագուշակում էին նաև գրականության հեղաշրջումը։ Նրանք գտնում էին, որ հասունացել է գրականության որակային կերպարանափոխությունների ժամանակը։

Այս առումով վերին աստիճանի ուշագրավ է հայ գրականության ընթացիկ վիճակին ու զարգացման հեռանկարներին վերաբերող այն հարցաթերթիկը, որ 1919 թվականին հասարակական լայն քննության էր դրել «Պատանի» ալմանախի խմբագրությունը։ Հարցաթերթիկին պատասխանել են հայ նշանավոր գրողներն ու հրապարակախոսները, որոնք բոլորը միաբերան այն կարծիքին են, որ գրականության ոչ այնքան միմբարական ներկան կարող է արգասաբեր զալիք դառնալ միայն և միայն հասարակության կյանքի արմատական վերաշրջման, ասել է թե՝ ազգային կյանքի բովանդակության վերանորոգման հիման վրա։

Այսպես, զգոհելով գեղեցիկ հայ գրականության ներկայից, Նար-Դոսը գրում էր. «Ճին աշխարհը ճարճատում է հիմն ի վեր, և պիտի փլվի անխուսափելիորեն, տեղի տալով նոր հիմունքներով ստեղծված մի նոր, գեռս անծանոթ աշխարհի», իսկ այդ նոր աշխարհի գրականությունը «ավելի կորով ու թափ պիտի ստանա, ստեղծագործական ավելի ազատ թոփչք, զերծ անցյալի բազմազան կաշկանդումներից...»<sup>14</sup>։

Վրթ. Փափազյանը գրում էր. «Ապագան հղի է մեծ սպասումներով, մեր մինչև այժմ ունեցած պատկերացումներից պիտի տարբերվեն հայ կյանքն ու ըմբռնումները»<sup>15</sup>։

Ալ. Շիրվանզադեն, Դ. Դեմիրճյանը, Յ. Խանզադյանը, մյուսները գեղարվեստական առաջադիմուրյան նախապայմանների մեջ առանձնահատուկ ուշադրություն են դարձնում երկու կարևոր կետի վրա։ Դրանցից մեկը կյանքի հեղաշրջումն է, մյուսը՝ գրականության և արվեստների «հայրենացման» ըղձանքը։

Մինչև հեղափոխությունը հայ գրականությունը գերազանցորեն եղել է «գաղութների գրականուրյուն»՝ կտրված հայրենական հողից ու արմատներից։ Թիֆլիսում և Բաքվում, Մոսկվայում և Պետերբուրգում, Կոստանդնուպոլսում և Զմյուռնիայում, Փարիզում և Վենետիկում, աշխարհի այլևայլ ծագերում թեև ստեղծվել են գեղարվեստական խոշոր արժեքներ, սակայն գրականության անխափան զարգացման վճռական նախապայմանը՝ հայրենացմը, մնացել է սոսկ իշրկ «գրուկան երազանք»։

Գրականության հայրենացման՝ նրա բնաշխարհիկ բովանդակության ու կերպարանքի խնդիրը ճակատագրական սրությամբ է դրվում հատկապես XX դարասկզբին։

«Մինչև այժմ մեր գրականությունը, — գրում է Հովհ. Թումանյանը՝ պատասխանելով «Պատանի» ալմանախի հարցաթերթիկին, — հարազատ հող մի ունեցել իր ոտքի տակ, մեծ մասով գաղութային գրականություն է եղել Բանաստեղծի ոտք իրական ու հարազատ հողի վրա պիտի լինի, նրանից հետո միայն նա կարող է բարձրանալ, թեկուզ գլուխը մինչև երկինք հասնի... Հայոց ապագա գրականության զարգացման գրավականը ազատ Հայաստանն է, ազատ, հարազատ նողը, ծողովուրդը...»<sup>16</sup>:

### 3

«Ապագա գրականություն», «վաղվա գրականություն», «գրականության գալիք օրը», «շրջադարձի գրականություն», «նորագույն գրականություն» և Ժամանակի հրապարակախոսության ու քննադատության բառապաշտի մեջ պարբերաբար հոլովվող նման բնույթի մյուս հասկացությունները վերաբերում էին ոչ միայն եկող-սպասվող-գալիք Ժամանակներին, այլև այդ նույն տեսագծերը հրահրող Ժամանակին: Ոչ միայն տեսության մեջ՝ «գրական երազանքներում», այլև գեղարվեստական ստեղծագործության բուն խորքերում ծնվեցին և ամրապնդվեցին աշխարհաճանաշման՝ մարդու, կյանքի, հայրենիքի, աշխարհի գնահատման այնպիսի շափանիշներ, որոնք նշանավորում էին հայ գրականության գեղարվեստական արժեքայնության նոր շափը, գեղագիտական նոր որակը:

«Գրականության և արվեստի մեջ առաջադիմության մասին» ուսումնամիրության մեջ ակադեմիկոս Մ. Խրապչենկոն գեղարվեստական առաջադիմության ամենակարևոր պայմանը իրավացիորեն համարում է ոչ այնքան «նոր երեսւյթների յուրացումը», ոչ այնքան «գեղարվեստական հնարավորւթյունների լայնացումը», այլ, նախ և առաջ, «աշխարհին տված գնահատականների խորությունը»<sup>17</sup>:

Դեռ ավելին. գեղարվեստական առաջադիմության հատկանիշներից մեկը Խրապչենկոն համարում է մարդու հոգեկան գործունեության ու հոգեկան կյանքի ընդգրկումը, ելակետ ունենալով այն ճշմարտությունը, որ «կյանքը ոչ միայն սոցիալական, քաղաքական, կենցաղային հարաբերություններն են, այլև մարդկային ոգու կյանքն է»<sup>18</sup>:

Իհարկե, գրականագետը նկատի ունի ոչ թե վերացական, մարդու ճակատագրից ածանցված, այլ պատմության կենդանի ընթացքի հետ շաղկապված և մարդկության ճակատագրից անբաժան մարդու հոգեկան ներքին աշխարհից արտացոլումը:

Դեղարվեստական առաջադիմության այսօրինակ պատկերացման ցայտուն արտահայտություններից մեկը դարասկզբի հայոց գրական-գեղարվեստական շարժումն է՝ ի դեմս այդ շարժման հիմնական ծանրությունը կրող խոշոր անհատականությունների ստեղծագործության:

Ո՞րն է, ուրեմն, առաջադիմության էությունը:

XX 'դարը, ինչպես հայտնի է, սկսվեց նախորդ շրջանի գրական տիրապետական մտածողության՝ ուսալիզմի ֆննադատական կերպի հանդեպ գրողների ու գեղարվեստագետների որոշ անբավականությամբ: «Կյանքն՝ իր իսկ ձևերով» արտացոլելու գեղագիտությունը, որ համարվում էր ուսալիզմի գլխա-

վոր սկզբունքը, այլևս նեղ էր թվում՝ աշխարհի պատմական-դինամիկ կապերը և մարդու հոգեկան կյանքի ամբողջ հարստությունն արտահայտելու համարժությունը:

Այս շրջադարձը, իհարկե, քննադատական ռեալիզմի «սպառման» ու «ճրգ-նաժամի» իրողությունը չէր վավերացնում, ինչպես ենթադրում են դարասկզբի գրականության որոշ պատմաբաններ, այլ արտահայտում էր ռեալիզմը նոր ժամանակների հոգեոր-պատմական փորձով հարստացնելու և մարդու գնահատման նորագույն շափանիշներով հարստացնելու հասունացած պահանջը:

XX դարի գրականությունը ամենուրեք տեսնդագին փնտրում էր իր գեղագիտական նոր իդեալն ու նոր բովանդակությունը:

Սովորաբար, նախապաշարմունքների տուրքով գեղագիտական նոր որակը կապում են բացառապես պրոլետարական գրական հոսանքի հետ, տեսակետ, որով զգալիորեն նեղացվում է գրականության գեղարվեստական որունուների տեսադաշտը և սահմանափակվում է պատմության նոր երևույթի՝ սոցիալիստական գաղափարախոսության ազդեցության ոլորտը: Բանն այն է, որ նոր ձևավորվող պրօլետարական գրական հոսանքը սոցիալիզմը դավանում էր նախ և առաջ իբրև հասարակական ու էրիկական իդեալ, առաջադրում էր կյանքի սոցիալական վերափոխման պահանջներ, սակայն չէր հայուարարում այն լայն ու խոր բովանդակությունը, որ հատուկ էր XX դարի՝ աշխարհի հեղափոխական ցնցուների դարաշրջանի, հասարակական առաջավոր գիտակցությանն ընդհանրապես:

Այդ հոսանքը գրականությունը լրացնում էր բանվորական կյանքի պատկերներով և իրականության կապանքների դեմ ընդդիման մոտիվներով, մի կեցվածք, որը խորթ չէր նաև առաջավոր ոռմանտիկներին և քննադատական ռեալիստներին:

Իրականում, երևույթների մեկնաբանության վերլուծական-սոցիալական սկզբունքից բացի XX դարը՝ հոգեոր առանցք ունենալով սոցիալիստական գաղափարախոսությունը, թելադրում էր նաև աշխարհի ու մարդու ներդաշնակության գեղարվեստական խոր հիմնավորումներ, աշխարհում կատարվող իրադարձությունները պատմական հեռուների՝ նեռանկարի, մեջ գնահատելու հայացք ու դիրք:

Գեղարվեստական նոր հայացքի ամենաբնորոշ արտահայտություններից մեկը Հովհաննես Թումանյանի ստեղծագործությունն է, որի ամբողջ տարածքով ու խորքով անցնող ներդաշնակ ու ազատ աշխարհի, ներդաշնակ, կատարյալ մարդու փիլիսոփայությունը հազվագյուտ խորությամբ արտահայտում էր գեղարվեստական նոր իդեալի բովանդակությունը:

Զարգացնելով հայ գրականության նախորդ շրջանների գեղարվեստական հայթայթունները և հենքելով դրանց վրա, Հովհաննես Թումանյանը ուղղակի իմաստով հեղաշրջեց իր ժամանակի գեղարվեստական պատկերացումները, նոր ուղղություն տվեց գեղարվեստական մտածողության խորքային կերպերին:

Հովհաննես Թումանյանի ապրած ժամանակը, որը կը Տումանյանին նվիրված հողվածաշարում Վ. Ի. Լենինը համարում է մի քայլ առաջ մարդկության պատմության մեջ, այդ ժամանակը բնութագրվում էր հասարակական զարգացման ընթացքի մեջ դեմոկրատական գիտակցության դերի աննախընթաց ուժեղացումով, մարդու ազատագրման սոցիալական և հումանիստական ընդհանուր պայքարի նոր ու հզոր թափով: Դիմոկրատական լայն գանգվածի հա-

յացքների մեջ կատարված բեկումը անխուսափելիորեն բեկում մտցրեց նաև ժամանակի գեղագիտական գիտակցության մեջ:

Այլ կերպ էլ չէր կարող լինել, որովհետև արվեստը, վերջին հաշվով, արտահայտում է հասարակության գեղագիտական գիտակցությունը:

Իհարկե, հասարակական դինամիկայի և գեղարվեստի շարժման փոխարքերությունը ինքնին բարդ երեսով է և չի ենթարկվում մեխանիստական նույնացման ու իդեալական դաշնության, սակայն, այդ երկու «կողմերի» միջև գոյություն ունի մի որոշ կարգ ու կանոն, ներքին համաձայնություն:

Ինչպես բուն Ռուսաստանում, այնպես էլ ոռուսական կայսրության մեջ մտնող մյուս ժողովուրդների հասարակական գիտակցության մեջ XIX դարավերջին և XX դարասկզբին մշակվեց դեմոկրատական շարժման մի նոր տիպ, որի ամենաբնորոշ գիծը, կենքինի բնութագրմամբ, աշխատավոր լայն մասսաների, բողոքող մասսայի շարժումն էր հանուն իր մարդկային իրավունքների պաշտպանության, հանուն իր կյանքի նոր ճանապարհների:

Համընդհանուր դեմոկրատական գիտակցության հասունացման տվյալներից մեկը հայ գրականության ու արվեստի գեղագիտական կառուցվածքի փոփոխությունն է, որ առավել ցցուն և ամբողջական արտահայտություն ունեցավ Հովհաննես:

Եթե Հովհաննեսը հայ գրականության մեջ հայտնագործեց ուեալիզմի նոր, բարձրագույն աստիճանը, այսպես կոչված «սինթեզների ուեալիզմը», որը, ի տարբերություն նախորդ շրջանի ուեալիստների առաջադրած «մարդուց դեպի աշխարհը» սկզբունքի, ասպարեզ հանեց «աշխարհից դեպի մարդը» գեղագիտությունը: Այս գեղագիտությամբ մարդը ըմբռնվում էր ոչ թե իր «փոքրությամբ» տիեզերքի մեջ և սոցիալական աշխարհի բարդ խաշմերուկներում, այլ հակառակը՝ իր հզորությամբ, հոգեկան վիթխարի պոտենցիայով, ոգու ինքնակալությամբ, գոյության «հրաշալի սկիզբը» լինելու պատմական առաքելությամբ:

Այս հայացքով Հովհաննեսը արձագանքում էր աշխարհի մեծագույն հումանիստներին, առավելապես մարդու մեծարման տոլստոյական դիրքերին: Հե Տոլստոյի մահվան տպագորության տակ նա գրեց «Մեծ դժգոհը» նշանավոր հոդվածը՝ հազվագյուտ խոր մեկնաբանություններով: Այդ հոդվածը կարելի է համարել նաև իննեանկար-ինքնաբնուրագրություն, այնքան ճիշտ են որոշված մեծ գանգատավորների և կյանքի մեծ օրհներգունների աշխարհայցքային կորողինատները:

Թումանյանի գրական սյուժեները և նրա հոգեկան աշխարհի մյուս վավերագրերը լեփ-լեցուն են ժամանակի կապանքների ու ճակատագրի գեմուղղված գանգատներով, բողոքներով, ծառացման խոսքերով: Այսուամենայնիվ, հայ իրականության մեծ Դժգոհը, որի սաեղծագործության դոմինանտ գալափարը Դ. Դևիթինյանի խոր մեկնաբանությամբ՝ հալածվածության թախիծն է, ոչ թե անհծում էր կյանքն ու աշխարհը, այլ խոնարհվում էր կյանքի անշափելի մեծության և տիեզերքի անհասանելի խորության առաջ:

**ՀավՀ.** Թումանյանը իր ստեղծագործության էջերում՝ քնարերգությունից մինչև պոեմներ, դիմելով ողբերգական սյուժեների և ողբերգական զգացողությունների, Ողբերգականի բացահայտումներով հետամուտ էր աշխարհի բարդ հարաբերությունների մեջ մարդու արժեքի մեծացման գեղարվեստական խնդրին: Այս կեառում նա եղավ հայ իրականության մեծ աշխարհասերն ու մեծ մարդասերը:

**ՀովՀ.** Թումանյանի ստեղծագործության մյուս դոմինանտ գաղափարը կապվում է դարձյալ մարդու գաղափարի հետ: ՀովՀ. Թումանյանը այն մտքին էր, որ ամենասովորական, ամենաշարրքային մարդու հոգեկան աշխարհի ներքին ծալքերում ծրաբված են համամարդկայնության վիթխարի պաշարներ, նրա հայացքով մարդ որքան մոտ է իր բնությանը և որքան հարազատ է աշխարհին, այնքան նրա էության մեջ խորն է արտացոլվում աշխարհի ամբողջականությունը:

**ՀովՀ.** Թումանյանի աշխարհայացքային որոնումները ի վերջո նրան բերեցին աշխարհի նեխարային կառուցվածքի ըմբռնման դիրքերը, որով նա հերքում էր մարդկությանն ու հայրենիքին մայրամուտ գուշակող նորդարյա գաղափարախոսությունները և հոշակում էր կենդանի, ապագա Հայաստանի ժողովրդական տեսիլքը:

**ՀովՀ.** Թումանյանը իր ամբողջ ստեղծագործությամբ արդեն կանգնած էր նոր արվեստի սահմանագծին:

Նա, սակայն, միայնակ չէր:

Հայ գրականությունը XX դարասկզբին իր գեղարվեստական ուելեֆուվ (և ոչ թե երկրորդական հայտնություններով) գտնվում էր XX դարի համադեմոկրատական, հումանիստական շարժումների բարձրացող ալիքների խոր ազդեցության ներքո: Վերակառուցված արվեստի մյուս ցայտում դրվագը Ավետիք Իսահակյանի ստեղծագործությունն է:

Երկու դարերի սահմանագծի տարիների հասարակական տրամադրությունների մոլեգին ընթացքը նոր ուղղություն տվեց Ավ. Իսահակյանի քնարերին՝ նրա վրա դնելով սիրերգակից և մայրերգակից բացի նաև ռազմերգակի, զանգանակարի պարտականությունը: Ոչ միայն դարասկզբի զանգահարություններում («Տիեզերական զանգ», «Ազատության զանգ» և այլն), այլև առհասարակ քնարական մանրապատումներում և «Աբու-Լալա Մահարի» քնարական պոեմում նա ծառս եղավ աշխարհի կարգ ու սարքի դեմ, կյանքի անարդար կառուցվածքի դեմ, հոշակելով իր հետևյալ նշանաբանը՝

Եղ մարգարի հուրն է իմ կրծքում,  
Սուր է իմ ձեռքում, բարբառս ազատ...

Իսկ այս ամենից հետո, իր քաղաքացիական հզորընթաց մոլեգնությունից և խոռվարար ծառացումից հետո Ավ. Իսահակյանը, Թումանյանի պես, ոչ միայն շանիծեց աշխարհը, այլև հասավ այն գաղափարական մեծ հայտնությանը, որի համաձայն աշխարհը, մարդը, բնությունը (տիեզերքը) անտրոհելի ներդաշնակություններ են, որ պատմության շարժիչ վառելանյութը ժողովրդի ընդերքում կուտակված հոգեոր լիցքերն են:

Այն ժամանակ, երբ շատ ու շատ մտածողներ ժողովրդին համարում էին ոչ այլ ինչ, քան պատմության հավելյալ հատված, պատմական անցքերի

անդեմ ֆոն, Ավ. Իսահակյանը սուզվեց ժողովրդի հոգեկան աշխարհի գաղտնարանները և այնտեղից պեղեց մարդկային ամենանվիրական գաղաքարները, նաև աշխարհի գոյության ամբողջությանը պարտադիր ազատության գաղափարը (Միք. Նալբանդյանի մոդելով), որի ուղիներով աշխարհ վերադարձան իր աշխարհաթող հերոսները՝ անապատները քաշված Արու-Լալա Մահարին և քարանձավում փակված արդարության մարգարեն՝ Փոքր ՄՀերը:

Աշխարհաթողությունից մինչև աշխարհի բոլոր դրվագների՝ հայրենիքի, մարդու, բնության, կյանքի միասնություն, — ահա դեղագիտական այն բովանդակությունը, որ հայտաբերեց Ավ. Իսահակյանի ստեղծագործական բարդ ձանապարհը՝ մինչև հեղափոխությունը:

Ավ. Իսահակյանը դարասկզբի իր որոնումներով արդեն կրում էր XX դարի արվեստի որակական ցնցումների ուժեղ կնիքը, մասնավորապես՝ կյանքի հզոր ուժի ազդեցությամբ գեղարվեստական պատկերի բովանդակությունը կերպարանափոխելու, արևապաշտության ազգային ավանդները պահպանելու, երևույթների փիլիսոփայական գնահատականների կետերում, թեև անպակաս են եղել «աշխարհի ողբասացի», «հեռանկարը կորցրած պեսիմիստի», «հասարակությունից հեռացած մարդախույսի» գրականագիտական կաղապարները:

Ի տարբերություն ուղղափառ սիմվոլիստների հռչակած «Եսի» պաշտամունքի (Փ. Սոլոցյուն). Կետեղ անողություն կատարում է այլաբանություններով և այլաբանություններով:

Դարասկզբի հայ գրականության որակական ցնցումների մյուս արտահայտությունը Վահան Տերյանի ստեղծագործությունն է:

Հուսեղեն հեռումների ու երազային մթնշաղների, մեռնող օրվա և անլույս գիշերների նվազներից, դեմոկրատական գիտակցության անվեպ ազդեցությամբ, Վ. Տերյանի պոեզիան կորագծվեց դեպի ժողովրդայնության այլ մակարդակը, որին մատչելի են ժողովրդի հոգեկան աշխարհի նվիրական խորքերում եղած բարոյական արժեքները:

Մթնշաղների և մարմրող կրակների երգիչը, որ ինչ-որ շափով ու երանքով արտահայտում էր հավելյալ աշխարհների սիմվոլիստական գաղափարը, որ ապրում էր հոգեբանական անձկության դրամա, տասական թվականներին ամբողջ էությամբ մխրճվեց իր պատմության աննախընթաց աղետն ապրող ժողովրդի հոգեկան կառուցվածքի մեջ և այնտեղից լույս աշխարհ հանեց «Երկիր նախրի» խորագրված բանաստեղծությունների շարքի մաքառման փիլիսոփայությունը:

«Երկիր նախրին» ոչ Տերյանի տուրքն էր դիցաբանական ոռմանտիզմին, որ լայն հուն էր բացել XX դարի գեղագիտության մեջ, ոչ էլ հոգեբանական ետնաշխարհի (Hinterland) ոռմանտիկական մեծարումն էր, որ տեղ ուներ ամբողջ կազմով թափառական դարձած ժողովրդի նախապաշարմունքների մեջ:

«Նախրին պետք է հասկանալ ոչ թե պատմական, այլ իդեալական իմաստով», — ինքը՝ Վ. Տերյանը այս բացատրությունն է տվել շարքի բովանդակությանը:

Իսկ ո՞րն է շարքի գաղափարական առանցքը: Դա հառնումի — իր մոխրներից վերակենդանացող վյունիկ-բոշունի գաղափարն է, այսինքն՝ ժողովրդի մաքառման հոգեբանության գաղափարը, որ Տերյանն արտահայտել է նշանավոր սոնետում.

Թող գումար գիշերն անհասաստ դավի,  
Որքան մութք՝ սև, այնքան եւ՝ անահ,  
Երկիր, իու երկիր, հավատով անմար,  
Սուրբ է քո ուղին և պըսակդ՝ վեճ:

Փյունիկ թռչունի հնադարյան առասպելի արծարծումներով Վ. Տերյանը հայոց ճակատագիրը դուրս հանեց հնամենի ուտոպիաների և տեսիլային գաղափարախոսության սահմաններից, նրան տվեց ուելության կերպարանք: Ինչպես Հովհանն Թումանյանը, որ դարասկզբին խոսում էր հուսահատության քարրառով, իսկ պատմության շիկացած թվականներին՝ հույսի ու հավատի լեզվով, Վ. Տերյանը ևս հոշակեց կենդանի, եղյալ հայրենիքի, նրա «սուրբ ճանապարհ» ու ազգային վերածնության հավատը, գրելով «Վերադարձի» տողերը.

Մենության խավար զնդանից կրկին  
եւ վերադարձա հզոր ու հպարտ...

Վ. Տերյանի վերադարձը իրականացավ երկու ուղղությամբ՝ հայրենիքի և ենդափոխության:

Գուշակելով հայրենիքի իրական ապագան («Եգիպտական բուրգերը փոշի կդառնան, Արևի պես, երկիր իմ, կվառվես վառման») Տերյանը իր բանաստեղծությունների պատկերային կազմի մեջ առավ արշալույսների, մրրկահավերի, զանգերի, մարդուուսների, ազատության դրոշների ոչ սիմվոլիստական խորհրդանշանները՝

Դու մարգարե պիտի լինես, խաշակիր և մարտիրոս,  
եարույկ ու խաչ պիտի ելնես, — ոչ իբր սարուկ, այլ հերոս...

Դարասկզբի հայ գրականությունը իր բոլոր շերտերով, իր գեղարվեստական որոնումների ամբողջական կազմով, իր առաջադրած հոգեբանական, էթիկական, մարդախուզական, կոսմոգոնիտական, սոցիալական և այլ դեղատոմսերով կոշված էր մարդու և աշխարհի ներդաշնակության հումանիստական մեծ խնդրի լուծմանը:

Այդ տեսակետից առանձին հետաքրքրություն են ներկայացնում Սիամանթոյի «Հայկական ամբոխների» աստվածացման տարերքը, Միսաք Մեծարենցի և Ռ. Վարուժանի պատմուրանների մեջ ծրարված մարդկային ոգու ներդաշնակության և խաղաղ աշխատանքի երազները, բնության բոլոր էակների հավասարության դեմիրճյանական էթիկական սուզումները, Լևոն Շանթի հեթանուսական «հին աստվածների» ազատության և լույսի որոնումները, վաղ շրջանի Ստ. Զորյանի նովելների հումանիստական շեշտերը, վաղ Զարենցի աշխարհահամարությունը հեղափոխական ողջակիզման հիմունքներով, Ե. Օտյանի երգիծանքի («Ճանապարհորդություն ի Մապըլվար») ժողովրդական առողջութին, Էլի ուրիշ գրական երեսությներ, որոնք փաստում էին դարասկզբի հայ գրականության մեջ ձևավորվող ապագա գրականության հոգեորդ-գեղագիտական պատվանդանը:

Արդեն ասվածից պարզորոշ երկում է, որ XX դարում, այդ դարի հասարակական առաջադիմության, մասնավորապես հեղափոխական իրադրության ազգեցությամբ, հայ գրականությունը նվաճում էր գեղարվեստականության նոր բնագծեր և առաջարկում էր աշխարհի, կյանքի, հայրենիքի, մարդու ճանաշման այնպիսի բանալիներ, որոնք էական նշանակություն ունեցան սովետական գրականության գեղագիտական բովանդակությունը՝ նոր որակը ձեվավորելու մեջ:

Կարելի է նույնիսկ ասել, որ հայ սովետական գրականությունը եղավ XX դարի գրական առաջադիմության ուղղակի, բնական շարունակությունը և նրա գեղագիտական հայթայթումների զարգացումը:

Ժաւանդական խոր առնչություններով էլ հայ սովետական գրականությունը հաստատում է գրական մեծ օրինաշափությունը՝ սոցիալիստական ու եալիզմը ոչ թե գրականության ընդհանուր մայրուղուց դուրս հայտնված արահետ է, այլ գրականության ազգային խոր աղբյուրներով ու կենդանի երակներով, սոցիալիստական դարաշրջանի հոգևոր-պատմական փորձով՝ հարստացող նոր երևույթ:

Սոցիալիստական ու եալիզմի գրականությունը ազգային գրականության նոր աստիճանն է:

Մեր գրականագիտությունը ինչպես հարկն է չի անդրադարձել նորագույն գրականության ակունքների խնդրին և այդ գրականության մեթոդի՝ սոցիալիստական ու եալիզմի առաջացման, կազմավորման ու զարգացման օրինաշափություններին:

Դաշտնիք չէ, որ սոցիալիստական ու եալիզմի ծագման և նրա էության մեկնաբանություններում տեղ են գտել բազում սխալներ և աղանդավորական ծայրահեղություններ: Այսպես, հայտնի նախապաշարմունքով երկար տարիներ սոցիալիստական ու եալիզմի ծագումնաբանական ակունքը համարվում էր բացառապես պրոլետարական գրական հոսանքը, մի հայացք, որով նորագույն գրականությանը հատկացվում էր շափականց նեղ գեղագիտական թիկունք, մինչդեռ գեղարվեստական գրականությունն իր զարգացման կենդանի ընթացքում ամենալայն և ամենաճկուն հարաբերությունների մեջ էր դարերից եկող ավանդների հետ, լիցքեր էր բաղում հնադարյան պատմագրությունից և միջնադարյան աշխարհիկ (և ոչ աշխարհիկ) քնարից, բանահյուսության սքանչելի հուշարձաններից, նոր հասարակության տարեգիրներն ու գրիները յուրացնում էին Աբովյանի և Բաֆֆու, Պարոնյանի և Նալբանդյանի, Թումանյանի և Վարուժանի, Սիամանթոյի և Տերյանի գեղարվեստական ավանդները:

Հաղթահարելով տեսական մոլորությունները՝ «դասակարգային ինքնամփոփածության» և «հոգեբանական սահմանափակության» կնիքները, Պրոլետական աշխատավորական դրույթները, մեր գրականագիտությունը, արդարացիորեն լայնացնում է նորագույն գրականության ավանդների ավազանը, հատկապես մեծ նշանակություն տալով XX դարասկզբի գեղարվեստական խմբումների դերին:

Հայ սովետական գրականությունը, բռնելով սոցիալիստական զարգացման որակական նորացման ուղին, պետք է որ օգտագործեր իր պողիտիվ ավանդների փորձը, պետք է որ քննադատաբար ու ստեղծագործաբար յու-

քացներ իր և այլոց գեմոկրատական ու սոցիալիստական կուլտուրայի այն տարրերը, որոնց մասին խոսում է Վ. Ի. Լինինը՝ մի ազգի «երկու կուլտուրացի» վերաբերյալ հանրահայտ նկատողություններում:

Իհարկե, ազգային ավանդների գարգացումը բնավ էլ չէր նշանակում, որ նոր հասարակության գրողները պետք է մեխանիկորեն պատճենեին և կրկնեին իրենց նախորդներին: Ամեն մի ժամանակ առաջ էր քաշում իր խընդիրները և դրանց լուծման իր եղանակները: Սա քրեստոմատիկական ճշմարտություն է: Հայ սովետական գրականությունը ևս, իր պատմության ընթացքում, նոր հասարակության և սոցիալական-մարդկային նոր հարաբերությունների մեջ, զարգացման սոցիալիստական ճանապարհը բռնած ժողովրդի կյանքի մեջ որոնելով իր նորացման աղբյուրները, միաժամանակ խորացնում և զարգացնում է այն ավանդները, որ ստացել է բազմադարյան իր պատմությունից:

Իր նշանավոր տաղերից մեկում Զարենցը սոցիալիստական հայ գրականության համար պարտադիր հայտանիշ էր համարում երկու բան՝ դարի արելը և երկրի եղյամը, ասել է թե՝ համամարդկային-սոցիալիստական և ազգային փերի հրաշալի ձուլվածքը:

XX դարի գեղագիտական նոր իրադրությունը իր որոշակի դրոշմը դրեց նաև հայ-ուսուական գրական հարաբերությունների համակարգի վրա՝ մասնավորապես շեշտերի տեղաշրջման առումով:

Յուրաքանչյուր նոր ժամանակ, իր բովանդակության գլխավոր ուղղության թելադրանքով, բերում է դասական ավանդների ընթերցման իր շափն ու շափանիշը, այդ ավանդներից ընտրում և ճանապարհ է տալիս որոշակի գծերի: Մինչ նախորդ հարյուրամյակում գլխավոր շեշտն ընկնում էր ոռու գրականության առաքած գաղափարական ներշնչանքների՝ ազգի «լուսավորության», ազտատիրական զգացմունքներ դաստիարակելու, անհատների «բարոյական կատարելագործման», սոցիալական նախապաշարմունքներից բեռնաթափելու և համանման գծերի վրա, XX դարի սկզբին, այդ կենսական խընդիրներին զուգընթաց, վճռական կշիռ են ձեռու բերում նաև ոռու գրականությանը բնորոշ գեղարվեստական մոդելների իմաստավորումները՝ ազգային ճակատագրի նյութի հիման վրա:

Մինչ նախորդ շրջանում, օրինակ, Պուշկինը, Լերմոնտովը, Գոդովը, հայ գրականության «ուղեծիր» էին դուրս գալիս առավելապես իրենց ստեղծագործության զաղափարական նշաններով, դարասկզբին ոռու գրականության այդ դասականները, ինչպես նաև լև Տոլստոյը, Դոստոևսկին, Չեխովը, Գորկին, Բլոկը, մյուս հայտնի գրողները երեսում են նաև իրենց ստեղծագործության կառուցվածքային-ոճային-արտահայտչական հայտնագործություններով, այսինքն՝ գեղարվեստական նշաններով:

XX դարասկզբի գրականությունը նորագույնին կտակեց ոչ միայն արվեստի ազգային նախահմերի և ազգային դրոշմի ու ժողովրդական հոգեբանության պատվիրանները, այլև համամարդկայնության այն դասերը, որ նա քաղում էր համաշխարհային գեղարվեստի հետ ունեցած մերձեցումներից: Ավելորդ չի լինի նշել հետեւյալ գեղագիտական պարադրսը. մինչ զարգացման ցածր աստիճաններում ազգային գրականությունը պակաս կարիք է զգում միշտապահան շփումների՝ մտահոգվելով ինքնուրույնության կորստյան վտանգով, զարգացման ավելի բարձր մակարդակներում առավել համարձակորեն է գնում «օտար փոխառությունների»: Մրանք էլ գեղարվեստական նոր կա-

ոուցվածքների մեջ երևում են ոչ թե «հիբրիդային» պատվաստների, այլ դիֆուզիայի՝ տարրալուծման կերպարանքով:

Յուրի Տինյանովը, ոուս «ակադեմիական» գրականագիտության հայտնի գեմքերից մեկը, իր «Հայնե և Տյուտչև» հոդվածում տարբերակում է ժառանգուրդության երկու կերպ՝ ԳԵՆԵՏԻԿԱԿԱՆ ԵՎ ԱՎԱՆԴՈՒՅԹԱՅԻՆ, առաջին կերպը հատկացնելով ներքին-ազգային կապերին, երկրորդը՝ միջազգայինին: Այս տարբերակումից հետեւում է գրականագիտության մյուս կարևոր պրոբլեմի՝ գրական շարժման երկնողմանի՝ «ազգային ակունքների» կողքին նաև միջազգային ավազանի հետազոտման անհրաժեշտությունը:

Այս ելակետի դեպքում հայ գրականությունը ևս տեղ կունենա «համաշխարհային գրականության» կազմավորման միասնական պրոցեսի մեջ, այն պրոցեսի, որի սկիզբը դրվեց դեռ XIX դարում՝ «տեղական ինքնամփոփփածության» հաղթահարման հիմքի վրա, իսկ ամբողջացումը շարունակվեց XX դարում՝ զարգացման «լայն ուղիների»՝ ներքին հնարավորությունների և բազմազան «աղբյուրների», փոխներթափանցման ճանապարհով:

Հայ սովետական գրականությունը և՛ իր նախապատմությամբ, և՛ իր հետագա պատմությամբ այդ պրոցեսի էական դրվագն ու նոր աստիճանն է:

## 20—30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

### 1

XX դարի առաջին երկու տասնամյակներին (900-ական և 10-ական թվականներ) հայ ժողովուրդն ապրեց իր բազմադարյա պատմության ամենաողբերգական շրջանը:

Դեռ XIX դարի վերջերին՝ 1895 թվականին սուլթանհամիդյան թուրքիայի կազմակերպած մասսայական ջարդերը պարբերական բնույթ ստացան և շաքունակվեցին մինչև 1915 թվականի Եղեռնը (պատմությանը հայտնի է «Ապրիլյան մեծ եղեռն» անունով), մինչև 1918—21 թթ. թուրքական հրոսակների նոր արշավանքները:

Թուրքական արյունոտ յաթաղանին զոհ գնաց Արևմտյան Հայաստանի մեկուկես միլիոն խաղաղ բնակչություն։ Ժողովրդի կենդանի մնացած բեկորները՝ անդեկ քարավանները, տեղահանվեցին իրենց բնիկ հայրենիքից և բըռնեցին տարագրության փշածածկ ճամփաները։

«Երիտասարդ թուրքերի» ոճրագործ պետությունը, որը համախմբված էր «Էնվեր-թալիւմբ-Ջեմալ-Նազրմ» առանցքի շուրջը, իր հրոսակներն ուղղեց գեպի Արևելյան Հայաստան՝ բնաշնչելու ժողովրդի մյուս հատվածին ևս։

«Երիտասարդ թուրքերը», ապա և նրանց հաջորդած «հանրապետական-ները»՝ քեմալականները, հրով ու սրով, բռնությամբ ու հաշվեհարդարներով իրագործում էին հայերի ցեղասպանության (գենոցիդի) պետականորեն մշակված, պանիսլամական ազգայնամոլ գաղափարախոսությամբ զոդված բարբարոսական ծրագիրը։

Թուրքական հափշաակիշների կազմակերպած կոտորածները հայ ժողովրդի կացության ամենասև ու ամենամոռայլ էին է։

Ազգային կյանքի բնականոն զարգացմանը, սակայն, արգելակում էին ուրիշ գործոններ ևս, ինչպես 1905 թվականի հեղափոխությունից հետո Ռուսաստանում մոլեգնող քաղաքական ռեակցիան։

Ցարիզմի կովկասյան սպասավորները ոչ միայն դաժանորեն ճնշում էին գեմոկրատական երանգի քաղաքական-սոցիալական շարժումները, այլև անում էին ամեն ինչ՝ խափանելու ազգային մշակույթի առաջադիմությունը։

«Պատմության մեծ հալածականը»՝ հայ ժողովուրդը, որին ամեն օր և ամեն ժամ իրազում էին և հեռավոր արարական ավալուտներում, և եվրոպական մայրաքաղաքների գիվանագիտական վեհաժողովների հոշակած դաշնագրերում, և պետական հրովարտակներում, կանգնեց իր ազգային գոյության մեծ հարցականի առաջ։

Վերջացել էր XIX դարը՝ ազգային-ռումանտիկական պատրանքների և հույսերի ժամանակաշրջանը։

Երանի՛ էր ձեզ, գովկած երգիշներ  
Դուք երգում էիք վաղ առավոտյան,

Երբ որ երազներն ապրում էին դեռ,  
Ուկի երազներն հայի փրկության...

Այս «երանի»-ով էր ազգային մեծ բանաստեղծը՝ Հովհաննես Թումանյանը, սահմանադժում XX դարի ահեղ ժամանակը XIX դարի համեմատաբար խաղաղ ժամանակից, երբ դեռ կենդանի էին աղատագրության «ոսկե երազները»:

Փողովրդի գոյության ոսկե երազների օրիներգուն «հարկադրաբար» դարձավ նաև նրա հոգեհիմնագուտյան պատարագիշը.

Ու վեր կացա ես, որ մեր հայրենի օրենքովը չին,  
Վերջին հանգիստը կարդամ իմ աղջի անբախտ զոհերին,  
Որ շնու ու քաղաք, որ սար ու հովիտ, ծովից մինչև ծով,  
Մարած են, մեռած, փլված ու ցրված հազար-հազարով...

Նահատակված և ուղեմոլոր ժողովրդի արյան գույներից շառագումած հայրենիքի ճակատագիրը դարձավ հայ գրականության գլխավոր մտահոգությունը, ավելի ստույգ՝ հայրենիքի երգը, որ դարեր շարունակ եղել է հայ գրականության «կարմիր թելը», ասպարեզ եկավ նոր շեշտերով ու նոր գույներով:

XIX դարի աղատագրական քնարի հաղթական շեփորներին, ժանրածանր դեպքերի տպագորության տակ, փոխարինեցին տրտմության սաղմոսներն ու վհատության նվազները.

Եղ մենք խորտակված մեր կյանքի ծեղից,  
Անհույս ու զալուկ, ճակատներս ցած,  
Ընկնում է քնար մեր մատաղ ձեռքից,  
Ընկնում են սրտից և երգ, և աստված,

Ազգային գոյության փլուզման անմիջական սպառնալիքը հրահրեց հայքանաստեղծության հարցականների շարքը՝

...Ե՞րբ կրացվի պայծառ առավոտ  
Հայոց լեռներում, բարձր լեռներում...  
...Բայց ո՞վ պիտի բերե, ո՞վ պիտի բերե, ըստ,  
Քո սրբազն մոխիրեղ ափ մը մոխիր...  
...Մի՞թե վերջին պոտն եմ ես,  
Վերջին երգին իմ երկրի...

Հայ գրականության հարցականների շարքը ճգնաժամային իրադրության տրամաբանական արտահայտությունն էր:

Դեռ քաղաքակրթություն արշալույսին իր ծնունդը սեպագիր արձանագրություններով վավերացրած Հայաստանը, որ դարերի ժանր փորձությունների միջով արարել էր իր ճակատագիրը, XX դարասկզբին կանգնեց այդ փորձություններից ամենադժվարինի՝ «լիճել-շիճնելու» հարցականի առաջ:

«Հայկական հարցը», որ մինչև ուսութուրքական 1877—78 թթ. պատերազմը, մինչև Բելինի 1878 թ. Վեհաժողովը, անգամ այդ Վեհաժողովից հետո էլ դեռ հայ ժողովրդի լայն խավերում արթնացնում էր աղատագրության ինչինչ պատրանքներ, XX դարասկզբին դարձավ սոսկ թղթային իրականություն,

որի մասին ազդարարում էին հայոց մամուլի առաջնորդողներն ու Հողվածաշարքեր:

Այնքան դժվարին էր իրադրությունը, որ այլևս շատ շատերը տրվել էին հուսահատության համատարած հոսանքին:

Եվ, ինչպես հաճախ լինում է ճակատագրական ժամերին, ազգային կառաստրոֆայի օրերին, գոտնվեց այն ուժը, որն արեց ամեն ինչ՝ հայ ժողովրդի ազգային գոյության իրավունքը հաստատելու համար:

Այդ ուժը հայ հեղափոխական սոցիալ-դեմոկրատիան էր, որի գործունեությանը բարձր գնահատական էր տվել Վ. Ի. Լենինը 1902 թ., «Խորայի» էջերում: Վ. Ի. Լենինը գրում է. «Մենք ամբողջ հոգով ողոնում ենք Հայ Սոցիալ-դեմոկրատների Միությունը և հատկապես նրա հիանալի փորձը ազգային հարցի միջտ դրվածքի համար»<sup>1</sup>:

Սոցիալ-դեմոկրատական խմբերին ամուր նեցուկ էր հայ դեմոկրատական մտավորականությունը՝ իր ոռուսական կոմնորոշումով:

«Իմացած եղեք, — հավատով լի գրում էր Հովհաննես Թումանյանը, — որ էդ կատարված դեպքերը պատահական չեն, պատմության ուղիղ ընթացքն է: Մեր ապագան, ինչպես միշտ ասել եմ և դոք էլ գիտեք, կապված է Ռուսաստանի հետ, իսկ Ռուսաստանն ինչքան աղատ, էնքան լավ թե մեզ համար, թե աշխարհքի»<sup>2</sup>:

Հավասի այս լիցքերով էլ հոգեհանգստյան նվազների կողքին Հովհաննեսի պարձակ ազատագրված հայրենիքի տեսիլքին.

Բայց հին ու նոր քո վերքերով կանգնած ես դու կենդանի,  
Կանգնած խոհո՞ւն, խորհրդավոր, ճամփին հնի ու նորի:  
Հառաշանքով սրտի խորքից խոսք ես ասում աստծու հետ,  
Ու խորհում ես խորին խորհուրդ տանջանքներում շարադիտ,  
Խորհում ես դու էն մեծ խոսքը, որ տի ասես աշխարհքին,  
Ու պիտ դառնաս էն երկիրը, ուր ձգում է մեր հոգին,—  
Հո՞ւսի հայրենիք,  
Քո՞ւսի հայրենիք:

## 2

Ինչպես Ռուսաստանում բնակվող մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ճակատագրի համար բացառիկ նշանակություն ունեցավ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը հեղափոխության ազդեցությամբ ստացավ նոր թափ, ազգային և սոցիալական վերածնուրյան ուղղություն:

Ազատագրության հեղափոխական պայքարը, սակայն, տեղի ունեցավ շափազանց դժվարին իրադրության մեջ: Հոկտեմբերի հաղթանակից անմիջապես հետո անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունները ելլուպական իմպերիալիստական պետությունների ամենաեռանդում աջակցությամբ ստեղծեցին խորհուրդների դեմ պայքարի լայն ճակատ՝ «Հակախորհրդային կուլիցիա», որի գործիքն էր այսպես կոչված «անդրկովկասյան կոմիսարիատը» (1918 թ. փետրվարից՝ «անդրկովկասյան սեյմը»):

Կոմիսարիատին լայն աջակցություն էին ցույց տալիս վրացական, ազրբեջանական և հայկական «Ազգային խորհուրդները»:

Հաշվի առնելով Կովկասում ստեղծված քաղաքական բարդ իրադրությունը, Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների սովետը 1917 թ. դեկտեմբերի 17-ին Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար նշանակեց Քաքի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանին:

1917 թ. դեկտեմբերի 31-ին սովետական կառավարությունը հրապարակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը հոչակում էր ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդուակ մինչև լիակատար անկախություն:

Հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց Դեկրետի հրապարակումը, սակայն գերմանաթուրքական հրոսակների ձեռնարկած արշավանքը երիտասարդ սովետական երկրի դեմ, ինչպես նաև դաշնակցականների անհետես քաղաքականությունը խափանեցին Արևմտյան Հայաստանի ինքնորոշման իրավունքի իրագործումը:

Արդեն 1917 թ. վերջից ծավալվեցին բանվորների, գյուղացիների և զինվորների ժողովրդական շարժումները՝ ընդեմ Անդրկովկասյան Կոմիսարիատի և Ազգային խորհուրդների: Կովկասյան ուղղմանակատում թուրքական բանակի վերսկսած ուազմական գործողությունները վկայեցին Անդրկովկասյան Կոմիսարիատի անզորությունը՝ զավթիչներին ուժեղ դիմադրություն ցույց տալու գործում: Թուրքական հրոսակները մտան Արևելյան Հայաստանի սահմանները: Ժողովուրդը տվեց մեծաթիվ զոհեր: Անդրկովկասում լիակատար տիրապետություն հաստատելու և Սովետական Ռուսաստանի ղեմ մղվող պայքարը ընդարձակելու համար 1918 թ. մայիսին ցրված «Անդրկովկասյան սեյմի» փոխարեն ստեղծվեցին բուրժուացիոնալիստական մարիոնետային հանրապետություններ:

«Արարատյան հանրապետության» կարճատև գոյության ընթացքում (1918—20 թթ.) Հայաստանը կանգնեց ֆիզիկական լիակատար ոչնչացման վտանգի առաջ:

Հարցականի տակ դրվեց Հայ ժողովրդի գոյությունը: Այդ գդացողությամբ են լեցուն ժամանակի մամուկի հաղորդագրությունները և պաշտոնական գրագրությունները:

Ազգային գոյության հարցականի թելադրությամբ Հայաստանի անհապաղ ազատագրության խնդիրը դրվում է ամենայն վճռականությամբ:

Դեռ 1918 թ. հոկտեմբերին Վ. Ի. Լենինին հղված հեռագրում Գ. Կ. Օրջոնիկիձեն Հայտնում էր՝ «Հայաստանի դրությունը ողբերգական է... Հայ ժողովուրդը անհամբերությամբ օգնություն է սպասում Սովետական Ռուսաստանից»<sup>3</sup>:

Դաշնակցական կառավարության վարիչները, լիցքավորված արևմտաեվրոպական դիվանագիտության սուստ խոստումներից, բռնում են արկածախնդրության ուղին՝ փորձելով խորթության պատնեշ զնել Հայաստանի և հեղափոխական Ռուսաստանի միջև նրանք անում էին ամեն ինչ՝ հեղափոխական շարժումները ճնշելու համար: Զնայած ազատագրական շարժման ընթացքը ձախողելու փորձերին, այդ շարժումը օրեցօր նվաճում էր նոր բնագծեր և ծավալվում էր Հայաստանում սովետական իշխանություն հաստատելու նշանաբանով:

Հայաստանի աշխատավորության հեղափոխական պայքարին մեծ օգնություն ցույց տվեց 1917 թ. դեկտեմբերին Մոսկվայի Ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից ստեղծված հայկական զործերի կոմիսարիատը: Կոմիսարիատի տպարանում տպագրված ութսուն անուն մարքսիս-

տական շնչի բրոշյուրները՝ 422 հազար տպաքանակով, տարածվեցին հայ լնակշության լայն գանգվածների մեջ:

«Կոմիսարիատին հաջողվեց,—գրել է Վահան Տերյանը,—իր գործունեության հենց սկզբից Անդրկովկաս առաքել ագիտատորներ և պրոպագանիստներ՝ Հոկտեմբերյան հեղափոխության բնույթը և նպատակները բացատրելու Սովետական իշխանության գաղափարները մասսայականացնելու և Անդրկովկասի հետ կապերը կարգավորելու համար»<sup>4</sup>:

1920 թ. հունվարին Երևանում անլեգալ պայմաններում հրավիրվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպության առաջին կոնֆերանսը, որը մշակում է դաշնակցական կառավարությունը տապալելու և զինված ազըստամբության ճանապարհով Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելու կոնկրետ ծրագիր:

Այդ ծրագրի իրագործման առաջին նշանակալից դրվագն էր Հայաստանի գրեթե բոլոր շրջաններն ընդգրկած մայիսյան ժողովրդական ապստամբությունը, որը թեև պարտություն կրեց, սակայն, ուսանելի դասեր թողեց հեղափոխական-աղատագրական շարժման կազմակերպիչներին:

Շատ շուտով, 1920 թ. ամռան ամիսներին, Հայաստանում բարձրացավ հեղափոխական պայքարի հուժկու ալիք՝ սովետական կարգերի հաստատման նշանաբանով:

Այդ պայքարի բարձրակետը եղան 1920 թվականի հոկտեմբեր-նոյեմբերյան անցքերը, ինչպես նաև 11-րդ Կարմիր Բանակի մուտքը Հայաստանի սահմանները:

### 3

1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի հեղկոմը հռչակեց խորհրդային իշխանության պատմական մեծ իրադարձությունը:

Դեկտեմբերի 2-ին, Հայաստանի հեղափոխական զինվորական կոմիտեի նախագահ Սարգիս Կասյանին հղած հեռազրում Վ. Ի. Լենինը ողջունեց հայ ժողովրդի պատմական տարեգրության նոր, սոցիալիստական փուլի սկիզբը։ Ի դեմք Զեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանը»<sup>5</sup>:

Սոցիալիստական հեղափոխությունը լուծեց Հայկական հարցը (իհարկե Արևելյան Հայաստանի շափանիշով), դրեց ազգային պետականության հիմքերը և հայ ժողովրդին հնարավորություն տվեց Սովետական Միության ժողովուրդների եղբայրական ընտանիքում ստեղծարար աշխատանքով կռելու և կոփելու իր ապագան:

«Մենք հրով և սրով նվաճեցինք ազատ կյանք»,—հայտարարել է Ալ. Մյասնիկյանը 1922-ին, Հայաստանի խորհուրդների առաջին համագումարում<sup>6</sup>:

Ազատ ու անկախ քաղաքական կյանքի՝ ազգային վերածնության երազանքների սպառիչ բնութագրությունն է ազգային մեծ բանաստեղծ Հովհաննես Թումանյանի 1920 թ. դեկտեմբերի 18-ին Հայաստանի Ռեզումին գրած պատմական նամակը։ Այդ նամակում Հովհ. Թումանյանը գրում է. «Ամենքից լրված ու հուսահատված հայ ժողովուրդը իր հայացքը դարձրեց դարձյալ գեափի Ռուսաստանը։ Այժմ նոր, ազատ Ռուսաստանից է կախված ոչ միայն հայ ժողովրդին ազատել վերահաս վտանգից, այլև ապահովել նրա անկախ

քաղաքական կյանքը, խաղաղ վերջացնել հայկական արյունոտ խնդիրը, հայ ժողովրդին հաշտեցնել մահմեղական հարևանների հետ և արդար աշխատանքի ճանապարհով առաջնորդել դեպի նոր կյանք... նոր Խուսաստանը... նոր զարաշքան է բաց անում մարդկության պատմության մեջ»<sup>7</sup>:

Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, հաղթանակելով քաղաքացիական կողմերում, տեղերում ամրապնդեցին սովետական իշխանությունը և ձեռնամուխ եղան նոր կյանքի կառուցմանը՝ սոցիալիստական հիմունքներով:

Հայաստանում նոր կյանքի շինարարությունը կապված էր մեծ դժվարություններ հաղթահարելու հետ: Անվերջ պատերազմներից հյուծված երկիրը լցված էր անօինան որբերով ու գաղթականներով, որոնց քարավանների անընդհատ հոսանքը շարունակվում էր դեպի մայր-Հայաստան: Մայրահեղորեն քայլված, կաթվածահար տնտեսություն էր ժառանգություն մնացել անցյալից: Որոշ տեղերում, ինչպես օրինակ, Զանգեղուրում, դեռ զգալի էր տապալված ուժերի գիմաղորությունը (դրա մի դրվագն էր 1921 թ. փետրվարյան խոռվությունը):

✓ Զնայած տնտեսական, քաղաքական, հոգեբանական, ներքին ու արտաքին գժվարություններին, Հայաստանում, ի դեմս բանվորա-գյուղացիական դաշինքի, զանգվածների աշխատանքային եռանդի, տնտեսական նոր քաղաքականության, Ռուսաստանից ստացվող տնտեսական օգնության և սոցիալիզմի կառուցման փորձի, ստեղծվում են նոր հասարակության շինարարության հաստատում նախադրյաներ: Այդ ոգով է շնչում ՀՕԿ-ի նախագահ Հովհ. Թումանյանի Կոչը՝ աշխարհասփյուռ հայությանը: ✓

Սոցիալիստական շինարարության առաջնահերթ խնդիրները լուծելու համար կարևորագույն նշանակություն ունեցավ Ռովետական Ռուսաստանի փորձը (այդ մասին պարբերաբար խոսվում էր պետական կուսակցական համաժողովներում) և Վ. Ի. Լենինի 1921 թ. ապրիլի 14-ի ծրագրային նամակը՝ «Աղբերեցանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների հանրապետության կոմունիստ ընկերներին»:

Այդ նամակը Անդրկովկաս էր բերել Հայաստան առաքված Ալ. Մյասնիկյանը, որի խնդիրքով, ըստ երևոյթին, Վ. Ի. Լենինը շարադրել էր նամակը՝ ի ցուց գնելով տնտեսական քաղաքականության կոնկրետ ուղիները Անդրկովկասում, այն երկրամասում, որն իր զարգացման մակարդակով և տնտեսական, քաղաքական, սոցիալական մի շարք այլ պայմաններով առանձնահատուկ տեղ էր գրավում:

Լենինյան նամակի գլխավոր շեշտը տեղական պայմաններին համապատասխանող ինքնուրույն տակտիկայի կիրառումն է. «Ամենից ավելի կարեղոր է որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց գրության, իրենց հանրապետությունների գրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՌ-ի գրության պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ շընդորինակելու, այլ մտածված կերպով, կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձեւափոխելու անհրաժեշտությունը»<sup>8</sup>:

Ենելով այն նախադրյալից, որ Կովկասոն իր բնակչության կազմով գերազանցապես գյուղացիական երկրամաս է, Վ. Ի. Լենինը ցուցում է տվել, որ ժողովրդական տնտեսության վերականգնումը պետք է սկսել ոռոգման աշխատանքներից: «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների գրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման աշխատանքները: Ոռոգումն ամենից

ավելի է պետք և ամենից ավելի կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրացնի անցումը դեպի սոցիալիզմ»<sup>9</sup>:

Խորհրդային Հայաստանի կառավարությունը, դեկավարվելով Վ. Ի. Լենինի նամակի ծրագրային առաջադրություններով, հողի ազգայնացումից հետո ձեռնամուխ է լինում ոռոգման և էլեկտրիֆիկացիայի լայնածավալ աշխատանքներին:

1922 թ. սկսվում է Շիրակի ջրանցքի կառուցումը (ավարտվում է 1925)-ին: Նույն թվականին կառուցվում են էջմիածնի ջրանցքը և Երևանի հիդրոէլեկտրակայանը: 1927 թ. դրվում է Զորագետի մեծ հիդրոկայանի շինարարության հիմքը:

Արդյունաբերական զարգացման հիման վրա ձևավորվում է Հայաստանի բանվոր պատասխանակի վերջում դառնում է հանրապետության տնտեսության առաջատար ուժը:

Էական փոփոխություններ են կատարվում գյուղացիության կյանքում, որոնք միավորվում են հանրային տնտեսությունների մեջ:

1922 թ. հունվարի 22-ից մինչև փետրվարի 4-ը Երևանում գումարվում է Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարը, որը հաստատում է Հայաստանի առաջին Սահմանադրությունը:

Անդրկովկասի այն ժամանակվա տնտեսական ու քաղաքական իրադրությունը հրամայաբար թելադրում էր նրա կազմի մեջ մտնող խորհրդային հանրապետությունների Ֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտությունը: Ֆեդերացիան կարևորագույն նախադրյալ էր լինելու սոցիալիստական հասարակության կառուցման համար: 1921 թ. ապրիլի 14-ի նամակում հանրապետությունների «դաշինքի» նշանակության մասին Վ. Ի. Լենինը գրում էր: «Ճերմագին ողջունելով սովետական հանրապետությունները, ես ինձ թույլ եմ տալիս հույս Հայտնել, որ նրանց սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»<sup>10</sup>:

Հետեւելով լենինյան պատվիրանին, անդրկովկասյան հանրապետությունները 1922 թ. մարտ ամսին միավորվում են անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմի մեջ, իսկ նույն թվականի դեկտեմբեր ամսին Հայաստանի հանրապետությունը Ֆեդերացիայի միջոցով մտնում էր ՍՍՀՄ կազմի մեջ:

Տնտեսական շինարարության ձեռնարկումների և քաղաքական պայմանների ամրապնդմանը զուգընթաց Հայաստանում ծավալվում է կուլտուրական հեղափոխության ուժգին ալիր:

Երևանը աստիճանաբար դառնում է հայ մշակույթի կենտրոնը:

Տարություն Սուրբամայանը գրում էր: «Այլևս կասկածից վեր է, որ մեր կուլտուրայի հիմքը դրվում է ամենից առաջ Հայաստանում, Երևանում»<sup>11</sup>, իսկ Պ. Մակինյանը ազդարարում էր: «Թիֆլիսը պետք է օգնության գա Երևանին և լցնի Հայաստանի կուլտուրական պարապը»:

✓ Այդպես էլ լինում է:

Հայաստանի հոգեոր շարժման ամենավառ արտահայտությունը հայոց լեզուն պետական լեզու հայտարարելու մասին Ռեկոմի 1920 թ. դեկտեմբերի 6-ի Դեկրետն էր: Նույն Ռեկոմի մի շարք ուրիշ դեկրետներով դպրոցն անշատվեց եկեղեցուց (1921 թ. դեկտեմբերի 5-ի դեկրետը), պետականացվեցին դպրոցական և կուլտուր-լուսավորական բոլոր հաստատությունները:

Ժողովրդական կրթության ասպարեզում կատարվում են արմատական տեղաշարժեր. բացվում են հարյուրավոր նոր դպրոցներ, անգրագիտության վերացման խմբակներ ու լիկայաններ, հրապարակվում են մայրենի լեզվով տասնյակ նոր դասագրքեր:

Վ 1921 թ. Հունվարի 23-ին բացվում է առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Երևանի պետական համալսարանը, իսկ Հունիսի 10-ին ստեղծվում է Հայաստանի պետական հրատարակչությունը: ✓

20-ական թվականներին մեկը մյուսի ետևից շարք են մտնում մշակութային օջախները՝ Հնությունների պահպանության կոմիտեն, Կուլտուրայի պատմության ինստիտուտը, Պետկինոն, Կոնսերվատորիան, Թանգարանները, Թատրոնները և այլն:

Սովետական Հայաստանի կյանքի առաջին տասնամյակի տնտեսական և կուլտուրական վերափոխությունները նոր թափով շարունակվում են 30-ական թվականներին, հիմնովին փոխելով Հայաստանի դիմապատկերը:

Զարգացման հզոր դինամիկան սովետական կառավարության կյանքի կոչած հնգամյա պլանների արդյունքն էր:

Հնգամյակների ընթացքում շարք են մտնում արդյունաբերական այնպիսի հսկաներ, ինչպես Զորագիսը և Քանաքեռգիսը, Կիրովականի քիմիական գոմբինատը և Երևանի սինթետիկ կառւուկի կոմբինատը, Ղափանի, Ալավերդու, Արարատի, Լենինականի ֆաբրիկաներն ու գործարանները:

Գյուղատնտեսության զարգացման մեջ նույնպես կատարվում են էական տեղաշարժեր՝ տնտեսությունների մեքենայացման և ինտենսիվացման ուղղությամբ, թեև այս ասպարեզում անհամեմատ շատ էին «ծոռամները» գլխավոր գծից:

Հայաստանում սոցիալիզմի կառուցման պերճախոս վկայությունը մշակութի աննախընթաց վերելքն էր:

Ժ ժողովրդական կրթությունը, գիտությունը, արվեստները՝ ճարտարապետություն, երաժշտություն, նկարչություն, քանդակագործություն, թատրոն, կինո, պետական հովանավորության պայմաններում բռնում են զարգացման լայն ճանապարհ: ✓

Կարճ ընթացքում (1920—1940) Հայաստանն անցավ դարերի ճանապարհ և թեակոխեց իր պատմության «Հրաշքի», ժողովրդական եռանդի բուռն ծաղկման շրջանը:

#### 4

Հ Հայ սովետական գրականության գաղափարական-գեղարվեստական կառուցվածքի ձևավորումը դառնում է ժամանակի հոգևոր կյանքի ամենակարենու ինդիրներից մեկը:

Ներգրական (և ոչ միայն) խոսակցությունների մեջ, բնականաբար, կենուրունական տեղը գրավում են նոր գրականության կառուցման հնարավորությունների ու նրա հեռանկարների ինդիրները:

Առանձին տեսաբան-քննադատներ, մասնակցելով գրական ասուլիսներին, գտնում էին, որ Հայաստանը, լինելով գերազանցապես գյուղացիական երկիր, ներկա՝ նախնական էտապում, ի վիճակի չէ մասնակցություն բերելու պրոլետարական գրական շարժմանը:

«Պրոլետարական պոեզիան կարող է ծնվել միայն պրոլետարական խոշոր կենտրոններում», —գրում էր Հարություն Սուրխանյանը<sup>12</sup>,

«Սոցիալական բաղայի» պատճառաբանությունն էր նաև մյուս տեսաբանի՝ Տիգրան Հախոսյանի, տեսակետի առանցքը. «Մեզանում պրոլետարական կուլտուրայի և պոեզիայի (գեղարվեստական գրականության—Ս. Ա.) համար միակ կարևոր հանգամանքը—սոցիալական բաղան դեռ չկա»<sup>13</sup>:

Այս և նման տեսակետները իրենց մեջ պարունակում էին շատ նորոր վրիպում. Հայաստանի գյուղական իրականությունը համարվում էր սոցիալիստական գրականությանը անհարազատ տարերք, տրամագծորեն հակադիր սոցիալական բովանդակություններ էին դիտվում «պրոլետարական» և «գյուղացիական» հոգեբանությունները:

Նեպական «նահանջի» իրադրության մեջ աշխուժացած քաղքենիությունը, այսպես կոչված «ներքին էմիգրացիան», ձևանակցում էր արտասահմանյան մամուլի («Հուսաբեր» և այլն), բացասող տեսակետներին, որոնց համաձայն հայ նորագույն գրականությունը զարգացման հիւանդար չունի, լավագույն դեպքում կարող է լինել նախահեղափոխական գրականության թույլ արձագանքը: Ուրիշ ոչինչ:

Պրոլետարական գրականության կառուցման մյուս դժվարությունն այն էր, որ գրական աղանդավորները դռները փակում էին հին մտավորականության առաջ: «Ենինարար տենդով բռնված երկրում անապատ է նրա (մտավորականության—Ս. Ա.) ճանապարհը», —ասվում է մի հոդվածում: Մի ուրիշ հոդվածի մեջ պարզապես հրահանգվում էր. «Ոչ մի ինտելիգենտ այդ սահմաններում (պրոլետարական գրականության—Ս. Ա.)»<sup>14</sup>:

Այս հայացքների կողմնակիցները գտնում էին, որ հեղափոխությունից առաջ իրենց գործունեությունը սկսած գրողները՝ լինելով մահացող սոցիալական միջավայրի «պրոդուկտ», հոգեբանորեն անպատրաստ են մասնակցություն բերելու նոր գրականության շինարարությանը:

Այսուամենայնիվ, բարդ իրադրության մեջ իսկ հաղթում էր՝ գրականության կառուցման լավատեսական պաթոսը, գրականությունը ի հայտ էր բերում իր նոր կառուցվածքի ներքին ու հարուստ պաշարները: Վ

### 5

Հայ սովետական գրականության ձեավորման (կազմավորման) շրջանի համար առանձնակի կարևորություն ստացավ նրա ստեղծագործական անձնակազմի խնդիրը՝ ովքե՞ր են լինելու նորագույն գրականության կառուցողները, ի՞նչ հարաբերություններ են լինելու «հին» և «նոր» գրական ուժերի միջև: Վ

Սա գրողների ցուցակի խնդիր չէր, իհարկե, այլ բարդ հանգույց, որի լուծումը կախված էր այն վերաբերմունքից, որ գրականության տարբեր շերտերը պարտավոր էին հանդեռ բերել հեղափոխական նոր իրականության հանդեպ:

Անուազնահերթ խնդիր էր հայ ականավոր գրողների՝ դասականների, բաղադրական ինքնորոշումը. կընդունե՞ն արդյոք, հեղափոխությունը, թե՞ երես կշրջեն նոր իրականությունից: Ջ

Հայ մտավորականության շարքերում, իհարկե, եղան սակավաթիվ փախբստականներ, ուստար ափերում՝ դեպքերողներ, սակայն նրա մեծագույն մասը,

առանց վերապահության, ընդունեց սոցիալիստական հեղափոխության պատմական անհրաժեշտությունը:

Հեղափոխության խնդիրը հայ գրողների համար նախ և առաջ ժողովրդի գոյության հեռանկարի խնդիրն էր, ուստի և նրանք իրենց ընտրության մեջ չունեցան հոգեբանական կնճիռներ։ ✓

Հայ իրականության մեծագույն իմաստումը՝ Հովհ. Թումանյանը, անմնացորդ փարեց «մուրճի և մանգաղի» ժողովրդական իշխանությանը և դարձավ կուլտուրական նոր շարժման զահակիրը, ինչպես նաև սովետական կառավարության «գրական դեսպանը» աշխարհասփյուռ հայության հավաքման ու ագրագոդման գործում։

Իբրև ՀՕԿ-ի նախագահ, Հովհ. Թումանյանը գործի դրեց իր լիազորությունները՝ կաղմակերպելու Հայաստանի տնտեսական և բարոյական աշակցությունը, իսկ իբրև Հայարտան վարչության նախագահ գործարար հունի մեջ դրեց Թիֆլիսի գրական-գեղարվեստական կյանքը։

Հեղափոխության դիրքերի վրա կանգնեցին նար-Դոսը և բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանը, որը դեռ 1918 թվականից աշխատել էր Բաքվի Կոմունայում, իսկ այնուհետև դարձավ նոր մշակույթի կառուցման եռանդում գործիչներից մեկը։

Հայրենի հերկերի մշակի առաքելությամբ օտար ափերից Սովետական Հայաստան վերադարձան հայ արվեստի ճանաչված վարպետները՝ Մարտիրոս Սարյանը, Ալեքսանդր Թամանյանը, Հովհաննես Աբելյանը, Ալեքսանդր Սպենդիարյանը, հայ գրականության նշանավոր գեմքերը՝ Ալեքսանդր Շիրվանզադեն և Ավետիք Խսահակյանը։

Թեև նրանց վերադարձը առանձին դեպքերում կապված է եղել աշխարհայացքային զիգզագների՝ հարցականների ու կասկածանքների հետ, սակայն, ի վերջո, բոլորը զգացին պատմության նոր ժամկետը՝ մեծագույն իմաստը։

«Եվ հայ ժողովուրդն էլ գիտե շատ լավ,— գրեց Ալեքսանդր Շիրվանզադեն 1922 թվականին,— որ եթե բարեկամ է ուսւ ժողովրդի հետ, ունի իրական պաշտպան, եթե թշնամի է, շոմի ոչ մի անկեղծ պաշտպան և իր գոյությունը ենթարկված է վտանգի»<sup>15</sup>։

Մի ուրիշ հողվածում Շիրվանզադեն գրեց. «Թող լալկանները շարունակեն ողբալ, թող թերահավատները իրենց թթու երգերը հորչորչեն,— ես նավատում եմ Հայաստանի, լավագույն Հայաստանի գոյությանը։ Հավատում եմ և պատրաստվում եմ նրա երգը երգելու և նրան նվիրելու իմ կյանքի մնացորդը Հավատում եմ նրա երիտասարդ կառավարության ուժերին, ազնվությանը, հայրենասիրությանը և անկեղծությանը։ Գիտեմ, որքան դժվարին, որքան ծանր է այլասերված ու ապուշ տարրերի ձեռքով ավերված երկրի վերականգնումը, բայց և գիտեմ, որքան զորավոր է հայ աշխատավորի, հայ գյուղացու բազուկը»<sup>16</sup>։

Տարութերումներով ընթացավ Ավ. Խսահակյանի քաղաքական շրջադարձը։ Հաղթահարելով ներքին հակասությունները և կուահելով պատմության տրամաբանությունը, մեծ վտարանդին «օտար, ամայի ճամփաներից վերադարձավ» հայրենի ափեր՝ վերածնության երկրը։

«Հայ ժողովուրդն էլ,— գրեց Ավ. Խսահակյանը,— որ դարեր տեղող անհավասարության և զարհուրելի պայքարի մեջ էր ընդդեմ բարբարոս բռնակալների՝ իր հողի, իր աշխատանքի և մշակույթի ազատության համար, շնորհիվ Հոկտեմբերյան-Նոյեմբերյան հեղափոխության, ձեռք բերեց երազած կա-

պույտ թռչումը՝ Ազատությունը, ունեցավ սեփական հող իր ոտքերի տակ։ Աշխատավորական երկաթե հղոր մուրճով փակվեց և գամվեց դուռը դարավոր թշվառության վրա և բացվեց նոր կյանքի դարագլուխը, վերածննդի էջեր՝ արեի բոցով գրված»<sup>17:</sup>

Ալ. Շիրվանղաղեի և Ավ. Իսահակյանի քաղաքական դիրքորոշումը մեծ տպավորություն թողեց արտասահմանյան հայ աշխատավորական զանգվածների և այն մտավորականների վրա, որոնք ինչ-որ ժամանակ խարուսիկ հույսներ էին կապել արեմտյան դիվանագիտության հետ։

1921—25 թթ. նորաստեղծ խորհրդային իշխանության պաշտպանությամբ հանդիս եկան Սփյուռքի նշանավոր գրողներն ու արվեստագետները՝ Երվանդ Օսյան, Արշակ Չոպանյան, Վահան Թեքեյան, Լևոն Բաշալյան, Զապել Եսայան, Սիպիլ, Վահան Մալեզյան, Զարուհի Գալեմբերյան, Տիգրան Կամսարական, Էդգար Շահին, Հակոբ Գյուրջյան և այլք։

«Էջեր սոցիալիստական հայ գրականությունից» գրքում (1958, Երևան) բանասեր Ասատրյանը բազմաթիվ պերճախոս փաստերով վկայում է հայ գրականությանը համակած խանդավառությունը սովետական իշխանության վարած ազգային քաղաքականության կապակցությամբ, այն քաղաքականության, որի մեջ նշմարում էին հայ ժողովրդի սոցիալական և մշակութային վերածնունդը։

Վ Արտասահմանի նշանավոր գործիչները որոնում էին նաև Մայր-Հայրենիքի հետ բարեկամության գործնական ձևեր։ Այսպես, Տիգրան Կամսարականը իր միջոցներով հայ սովետական գրողների համար սահմանեց գրական մրցանակաբաշխություն (1929 թ. մրցանակների արժանացան Ստ. Զորյանը, Դ. Դեմիրճյանը, Ա. Բակոնցը, Վ. Ալազանը, Վ. Նորենցը)։

Դասական համբավի հասած գրողների կողքին էին նաև նախահեղափոխական տարիներին գրական երկերով ճանաշման արժանացած հեղինակները՝ Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Վ. Թոթովենց, Խնկո-Ապեր, Վ. Միրաքրյան, Մ. Մանվելյան և այլք։

Մա գրողների այն խումբն էր, որը հետագայում մկրտվեց «ռուեկիցներ» անունով՝ իբրև պրոլետարական գրականությանը զուգահեռ խումբ։

Հայ սովետական գրականության անձնակազմի առաջին շերտը, իհարկե, մարտիկներն էին՝ 1905 թ. հեղափոխության բոցերում քաղաքացիական մկրտություն և հեղափոխական կոփվածք ստացած գրողներն ու հրապարակախոսները։

Պրոլետարական գրական հոսանքի սկզբնավորողներ Հակոբ Հակոբյանի և Շուշանիկ Կուրդինյանի, բանվոր գրամատուրգ Անուշավան Վարդանյանի, բանաստեղծ Հակոբ Խանիլարյանի, արձակագիրներ Մովսես Արագու, Մադաթ Պետրոսյանի, Հակոբ Կամարիի, Սելիք Սելիքյանի («Եղովչկա»), Մարտ Զուրաբյանի, Սուսան Դարբինյանի, սոցիալ-դեմոկրատական պարբերականներում տպագրվող մյուս գրողների ու հրապարակախոսների համար գոյություն չուներ անցման խնդիր։ Ոչ միայն գրչով, այլև զենքով նրանք մարտնչել էին հեղափոխության հաղթության համար։

Գրողների մյուս խումբը այն մարդիկ էին, որոնց կյանքի ուղեգիր ավեցին քաղաքացիական կոփների իրադարձությունները՝ Ե. Զարենց, Ա. Վշտունի, Գ. Արով և այլք։

Եվ, վերջապես, նորագույն գրականության հիմնական զանգվածը գործարաններից ու հաստոցների մոտից, գյուղերից ու որբանոցներից եկած երի-

տասարդ գրողներն եին՝ Ա. Բակունիք, Դ. Մահմադի Վ. Ալազան, Վ. Նորենց,  
Ն. Զարյան, Գ. Սարյան, Սիրաս, Ս. Տարոնցի, Արաքս, Սարմեն, Ա. Արմեն, և  
այլք:

Գեղարվեստական տարբեր դավանանքների ու տարբեր ձիրքերի տեր  
գրական մշակների համախմբման ու ստեղծագործական համագործակցու-  
թյան խնդիրը դառնում է գրական ընթացիկ շարժման գլխավոր լծակը:

## 6

Հեղափոխությունից անմիջապես հետո Հայաստանում և հայաշատ քա-  
ղաքներում (Թիֆլիս, Բաքու, Մոսկվա, Դոնի-Ռուստով) ծավալվում է պրոլե-  
տարական գրական լայն շարժում՝ խնդիր ունենալով ստեղծելու նոր ժամա-  
նակների կարիքները բավարարող գեղարվեստական գրականություն:

Այդ շարժումը, բնականաբար, կյանքի է կոչում պրոլետարական գրա-  
կան խմբակներն ու ենթախմբակները, որոնք ասպարեզ են հանում իրենց  
գեղարվեստական հանգանակները:

Գրական շարժմանը, անտարակուսելիորեն, շեշտ էր տալիս Պրոլետակու-  
տի «ինքնավարության» քաղաքականությունը:

Մինչև պրոլետարական գրական խմբակությունների ձեւավորումը հայ-  
իրականության մեջ արդեն կազմակերպվել էին կուլտուր-լուսավորական  
հիմունքներով զողված կազմակերպչական օջախներ, ինչպես Թիֆլիսի Հայար-  
տանը կից «Հայ գրչի մշակների ընկերությունը» (1921—23) և Երևանի «Հայ  
գեղարվեստական գրականության աշխատավորների միությունը» (1921—23):

Սրանք վճռական դեր չէին խաղում ժամանակի գեղարվեստական կյան-  
քում, եթե չհաշվենք «պրոլետկուլտական արշավից» դասական գրականու-  
թյան պաշտպանության համար Թիֆլիսի Հայարտան գործադրած շանքերը:

Յ Հայարտունը (կոչվում էր Վահան Տերյանի անունով) իր բազմաթիվ սեկ-  
ցիաներով՝ գրական, նկարչական, թատերական, երաժշտական, պատմական  
և այլն, շափազանց մեծ մշակութային աշխատանք է կատարում, իր շուրջը  
համախմբելով Թիֆլիսի մտավորականության գլխավոր դեմքերին՝ Հովհ. Թումանյան, Ռ. Մելիքյան, Ա. Տիգրանյան, Գ. Շարբարյան, Կարա-Դարվիշ,  
Ե. Թադևոսյան, Դ. Դիմիրճյան, Ստ. Քափանակյան, Ա. Բաշբեուկ-Մելիքյան,  
Լ. Քալանթար, Ա. Արմենյան և այլք<sup>18</sup>: Ա

Հայարտունը հիշեցնող կազմակերպություն էր նաև Երևանի «Գրականու-  
թյան և արվեստի դիսկուսիոն ակումբը» (1923), որը երկար կյանք չունեցավ:

Պրոլետարական գրական շարժման ամենանշանակալից երեսութը եղավ  
«Երեքի» Ե. Զարենցի, Գ. Աբովի, Ա. Վշտունով խմբակը, որը 1922 թ. հունիսի  
14-ին «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (№ 130) հրապարակեց իր  
հանգանակը, պատմությանը հայտնի «Երեքի Դեկլարացիան»:

Դեկլարացիան բաղկացած էր երկու մասից՝ նախահեղափոխական տարի-  
ների գրականության գնահատականից և նոր գրականության զարգացման  
ուղիների մեկնաբանությունից: Ա

Ահա դեկլարացիայի ամբողջական տեքստը.

«Ներկա հայ բանաստեղծությունը մի թոքախտավոր է, որն անխուսափե-  
լիորեն դատապարտված է մահվան:

Նրա գոյության միակ արդարացումը մահամերձ լինելն է։ Նրա տրադի-  
ցիաները նման են թոքախտավոր երեխաների, որոնք բացի վարակումից ոչինչ  
չեն առաջացնում։

«Հայրենիք», «Սեր անբիծ», «Անապատ ու մենություն», «Մթնշաղեր նըր-  
բակերտ», «Մոռացում ու երազնիք»;—ահա մեր գրական թոքախտի մանրէնե-  
րը, որոնց առաջացրած պտուղներն են՝ նացիոնալիզմը, ոռմանտիզմը, պեսի-  
միզմը, սիմվոլիզմը։

Մենք հանգես ենք գալիս որպես ախտահանողներ։ Մենք բերում ենք մեզ  
հետ մաքուր օդ և երկաթե առողջություն։ Քաղքենի նացիոնալիզմին մենք  
հակադրում ենք պրոլետարական ինտերնացիոնալիզմը։ «Անբիծ սիրուն» մենք  
դեմ ենք զնում առողջ բնազդը։

Մեզ համար անապատները դարձել են բազմաժխոր քաղաքներ։ Իսկ մեր  
երակների մեջ մենք զգում ենք բազմահազար ամբոխների հույզը։

Նրբակերտ մթնշաղներին այսօր հաջորդել է բոսոր արշալույսը և պայ-  
քարող դասակարգի մարտական շեփորը մեզ արթնացրել է «մոռացման երազ-  
ներից»։

Մեր մեջ ստեղծագործում է բազմությունների տեմպը և մենք դեպի բազ-  
մություններն ենք իշեցնում մեր ստեղծագործությունը։

Մենք պահանջում ենք.

1. Դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու  
մասսաները և գրքերից՝ դեպի կենդանի խոսքը։

2. Արտահայտել այն, ինչ այժմեւական է՝ շարժում, դասակարգային  
պայքար, երկաթ ու կարմիր։

3. Այդ նպատակներին հասնելու համար բանաստեղծության մեջ պետք  
է կիրառել՝

1. Ռիթմը, որպես շարժում։

2. Պատկերը (օբրազ) որպես կենցաղի բնորոշում։

3. Ոճը և լեղուն որպես տվյալ նյութի և խառնվածքի արտահայտություն։

Մեր օրվա լոգունգն է՝ կորչեն գրական արիստոկրատ շկոլաները, առանձ-  
նասենյակային գրողները, գրադարաններում ննջող գրքերը և սալոնային կա-  
նայք։ Կեցցե՝ գեղարվեստական կենդանի խոսքը, ստեղծագործող բազմու-  
թյունները։

Կեցցե ստեղծագործող բազմությունը՝ իր հզոր ոիթմով։

Կեցցե պրոլետարական հեղափոխությունը։

Եղիշե Զարենց, Ազատ Վշտունի, Գ. Աբով»

Թեև հրապարակ գալուց անմիջապես հետո «Երեքի Դեկլարացիան» ար-  
ժանացավ սուր քննադատության՝ գեղագիտական ծուռ դրույթների համար<sup>19</sup>,  
բայց էությամբ և շնչով դա ու հեղինակների կամայականությունն էր, ոչ էլ  
«խեղատակային», «ատղատիկ» մի բան, ինչպես ենթադրում էին Դեկլարա-  
ցիայի ընդդիմախոսները։

Թեև Դեկլարացիան գրված էր նոր օրերի բանաստեղծության գարգացման  
շարժառիթով, սակայն արտահայտում էր համընդհանուր գրական բովանդա-  
կություն։

Առաջին տեղում էր, անշուշտ, վերաբերմումքը նախորդ շրջանի գրակա-  
նության և նրա ավանդների հանդեպ։ Այդ վերաբերմունքը արմատապես ժրխ-  
տական էր, ուր դեր էր խաղում այն գիտակցությունը, որ հասարակական

Կյանքի վերաշրջումը պետք է հրահրի հեղափոխության ողում համապատասխանող գեղարվեստական ձևեր:

Ժխտական կեցվածքը ընդհանուր, տարածված հոգեբանության արտահայտություն լինելով, միաժամանակ ուներ ծննդաբանության գրական ակունքներ։ Գլխավոր ակունքից՝ «Ճախ» ֆուտուրիստներից (Վլ. Մայակովսկու և այլոց) ժառանդած շեշտերից բացի, ինչոր տեղ էլ Դեկլարացիան արձագանքում էր պրոլետկուլտուրական դոկտրինաներին՝ անցյալի ժառանգության մեկնաբանություններում։

«Ճախ» ֆուտուրիստներն այլևս հող չունեին գրականության մեջ։ Այս առումով ուշագրավ է 1924-ին, Թիֆլիսի Հայարտան թատրոնում կայացած Կարա-Դարվիշի ստեղծագործության դատաքննարկումը, մանավանդ դատավճիռը։

Ահա դրա տեքստը.

«Դատարանը գտնում է, որ—

1. Ֆուտուրիզմը միշազգային գրական հետադիմական, դատապարտված հոսանք է, ինչպես դատապարտված է նրան սնուցած բուրժուական իրավակարգը։

2. Ֆուտուրիզմի ռուսական թեր մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը եղել է եվրոպական ֆուտուրիզմի ճյուղավորումներից մեկը՝ հարմարեցված ռուսական ազգային միշազգայրին։

3. Ռուսական ֆուտուրիզմը Հոկտեմբերի հաղթանակից հետո միայն հարկ է տվել հեղափոխական տարերքին։ Կանգնած լինելով երկրնտրանքի առջև՝ պրոլետարիատի դիկտատուրայի գտիշ հարվածների տակ նա հարմարվել է նոր իրավակարգին, բայց որպես ինտելիգենտական գրական հոսանք, ըստ էության, անկարող է եղել բանվոր դասակարգի անմիշազգան ապրումների արտահայտիչը լինել արվեստի մեջ։

4. Ետհոկտեմբերյան ֆուտուրիզմը մեր պրոլետարական իրավակարգում հանդիսանում է միայն ժամանակավոր ուղեկիցը Հոկտեմբերին. նա մեր բանվոր գյուղացիական իրականության մեջ չունի ոտքի տակ ուեալ հող իր զարգացման ու հարատեսության համար, և անխուսափելիորեն կամ պետք է կանգնի պրոլետարական արվեստի ձևավորողների կողքին՝ ինքնածխուման գնով կանխապես թափ տալով ֆուտուրիստական փոշին (որպիսի զգաստացման նշաններ արդեն երևում են), կամ պրոլետարական արվեստի աստիճանական դարգացման ու նվաճումների հետ զուգընթաց՝ մեռնի իր բնական մահով՝ պինդ կառչած ֆուտուրիստական տրադիցիաներին։

5. Կարա-Դարվիշը հայ իրականության մեջ հանդիսանում է գրական այդ հոսանքի անդրանիկ արտահայտիչը և մասնավորապես ֆուտուրիզմի առաջին տեսաբանը մեզանում՝ իր 1914 թվին հրատարակած «Ի՞նչ է ֆուտուրիզմը» գրքույկով։

6. Կարա-Դարվիշը իր ֆուտուրիստական գործունեության ժամանակ դըրսկորել է այդ հոսանքի բոլոր հատկանշական կողմերը—ինչպես, օրինակ՝ ժայրահեղ ինդիվիդուալիզմ...»

7. Կարա-Դարվիշը՝ հակառակ իր տասնամյա ֆուտուրիստական գործունեության, նույնիսկ իր ռուս հեղինակավոր ֆուտուրիստ ընկերների օգնությամբ շի կարողացել մեզանում ստեղծել դպրոց, որովհետև հայ աշխատավորական իրականության մեջ բնավ հող չկա նման գրական ինտելիգենտական գործերի համար։ Կարա-Դարվիշը—ինչպես և նրա հոգևոր զավակների ֆու-

տուրիստական ստեղծագործության նմուշները մնացել և մնալու են որպես ռուսական ֆուտուրիզմի ինտելիգենտական արձագանքներ մեզանում՝ գուցե երբեմն շոյող մեր մանրբուրժուական ինտելիգենցիայի ականջը, բավարարող ոչ-պրոլետարական տարրերի գրական «նուրբ» ճաշակը, բայց ոչ մի առնչություն շունեցող մեր բանվորական և գյուղացիական մասսաների առողջ զեղարվեստական պահանջների հետ»:

Ինչպես «Ճախ» ֆուտուրիստները, ինչպես պրոլետկուլտականները, երբեքը ևս խաչ քաշելով անցյալի գեղարվեստական ժառանգության վրա, դասական արվեստի օգտագործումը համարելով պատմական անախրոնիզմ և «արտուրդ», այդուամենայնիվ, առաջադիմական էին գեղարվեստական կենդանի խոսքի և բազմությունների հոգեբանության ու կենցաղի արտացոլման կետում:

Ոչ միայն Դեկլարացիայի տեքստում, այլև այդ հանգանակը պաշտպանող հոդվածներում և հրապարակային ասուլիսներում «Երեքը», առավելապես ծ. Զարենցը, պաշտպանելով «Հեղափոխական այժմեականությանը» սպասարկող գեղարվեստի դրույթը, դավանում էին ոչ թե «դասակարգային ինքնամփոփածության» պրոլետկուլտական տեսակետը, այլ ավելի լայնախոհ հայցքներ։

Իր հոդվածածարքում («Խնշ պետք է լինի արդի հայ բանաստեղծությունը», «Ապադասակարգային ինտելիգենտը և դեկլարացիան», («Рго дото сиа») Զարենցը վճռականորեն ծառանում էր «զտարյուն պրոլետարական կուլտուրայի» նշանաբանի դեմ, այդպիսի «Հրահնանգավորումը» համարելով մարքսիստական գեղագիտության խեղաթյուրում։ Պատասխանելով Դեկլարացիայի քննադատներին, Զարենցը գրում է. «Ոչ մեր դեկլարացիայում և ոչ էլ իմ հոդվածաշարում ոչ մի բառ չկա այն մասին, որ մենք ուզում ենք պրոլետարական կուլտուրա ստեղծել, մանավանդ սիսալ այն ըմբռնումով, որ կա ձեր ուղեղներում այդ հարցի նկատմամբ»<sup>20</sup>։

Թերևս այդ վերապահությունն էր այն հիմքը, որով Զարենցը 1923 թ. գրած «Երկու աշխարհի սահմանագծում» հոդվածում որոշ տեսանկյունով վերաբարեց իր համոզմունքները, դասական գրականության այսօրվա պատադիր հերքումը համարելով վաղվա պարտադիր ընդունման դիալեկտիկական օղակը։

«Երեք» խմբակը իր գրական բուռն շաբաթներից և ամենօրյա աղմկոտ բանավեճերից հետո կանգնեց պառակտման փաստի առաջ։

Ե. Զարենցը, Գ. Աբովը, Ա. Վշտունին «լեզու չգտնելով» միմյանց հետ, գնացին ամեն մեկն իր ուղղությամբ։ Ա. Վշտունին սկսեց դեկավարել Հայաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիան, Գ. Աբովը Մոսկվայում, 1924-ին հրատարակեց «Զարկի» գեկլարացիան, Զարենցը «Ավանգարդ» անունով ծուռնալ հրատարակելու անհաջող փորձից հետո Մոսկվայում ճարտարապետներ Կարո Հալարյանի և Միքայել Մազմանյանի հետ դարձյալ 1924-ին տպագրեց «Standart» ամսաթերթի միակ համարը։

Եվ, այսպես, պրոլետարական գրական շարժումը հոնավորվեց պրոլետկան շնչի խմբակներում, որոնք համախմբված էին «Մուրճ» (Երևան), «Շարբնոց» (Թիֆլիս), «Քուրա» (Մոսկվա), «Վիշլա» (Բաքու), «Մուրճ և մանգադ» (Դոնի-Ռոստով) պարբերականների շուրջը։

Ինչպես ամբողջ երկրի գրական կյանքը, այնպես էլ հայոց գեղարվեստական կյանքը շնչում էր պրոլետկուլտական նշանաբաններով ու լոգոնգներով։

Դեռևս հեղափոխությունից առաջ հայ գրականության մեջ Պրոլետակուլտուր ունեցել էր որոշակի արձագանքներ: Այսպես, 1919 թ. Թիֆլիսում հրատարակվում էր «Պրոլետարական կուլտուրա» շաբաթաթերթը, որն իր էջերում վերաշարադրում էր մայր-ամսագրի «բանվոր դասակարգի ինքնուրույն կուլտուրա» ստեղծելու հայացքները, մասնավորապես այն դրույթը, որ բանվորի ապրումները կարող են արտահայտել միայն բանվորները և ոչ թե մտավորական խավերից դուրս եկած գրողները<sup>21</sup>:

Թիֆլիսյան պարբերականի հրատարակիչն էր Սուրեն Երզնկյանը:

Պրոլետական հայացքները տարածվում էին նաև Ա. Բողդանովի, Ֆրիչի և այլոց հոդվածների թարգմանություններով<sup>22</sup>:

Պրոյետակուլտական հայացքները ավելի խորն են ակոսում հիշյալ պարբերականների ստեղծման օրերին, որոնք և դառնում են գրական խմբակցությունների հիմնակորիզը:

Երևանի «Մուրճը» (1922—23), Թիֆլիսի «Դարբնոցը» (1922—23), Մոսկվայի «Քուրան» (1923), Բաքվի «Վիշիկան» (1925) խմբագրականներում շարադրելով իրենց գործունեության նպատակները, հանգում էին ցեխային գրականության, զտարյուն պրոլետարական կուլտուրայի դրույթին, ուրիշ խոռովով կրկնում էին Պրոլետակուլտի և 1920-ին նրանից անշատված «Կյանուց» խմբակի գեղագիտական դիրքերը: Դրանք բոլորը «Կյանուց»-ի հայկական տարատեսակներն էին և հինգում էին ուսւ իրականության հոսանքային-ենթահոսանքային «կալեյդոսկոպի» թերեւ ամենաուժեղ հոսանքի ղեղատոմսերի վրա:

«Դարբնոց» ամսագիրը՝ Հակոբ Հակոբյանի հոգմոր զավակը, իր գործունեությունը սկսեց 1922 թ. հովհանով՝ դառնալով Վրաստանի պրոլետարական դրույների Ասոցիացիայի հայկական սեկցիայի պաշտոնական օրգանը:

Դարբնոցականները՝ Հ. Հակոբյան, Ս. Խանոյան, Մ. Արագի, Մ. Դարբինյան, Հ. Աղաբար, Ս. Թորգոմյան և այլք, իրենց շուրջը համախմբելով Թիֆլիսում բնակվող սկսնակ գրողներին-լրագրողներին, բանվոր ու կիսամտավորական մարդկանց, իրենց խմբակը դարձնում են գրական կյանքին շեշտ ավող, ազդեցիկ ուժ:

«Ի՞նչն է մեր նպատակը, — ասվում է «Դարբնոց» ամսագրի առաջին համարի խմբագրականում (1922, № 1): — «Դարբնոցի» միջոցով դարբնել հայ պրոլետարիատի ամբողջական կյանքը, արտացոլել նրա կոլեկտիվ ապրումները, նրա հոգեբանական իմպուլսները»:

Հակոբ Հակոբյանը 1925 թ. արդեն որոշ նահանջ է հանդիս բերում իր դիրքերից: Մոսկվայում, պրոլետարական գրողների առաջին խորհրդակցության առթիվ կազմված թեղերում Հակոբյանը գրում է. «Հնից շենք հրաժարվում անպայման, բայց նրան շենք պաշտում, շենք աստվածացնում»<sup>23</sup>:

Պրոլետակուլտական ոգով է շարադրված Հակոբ Հակոբյանի «Կոչ պրոլետարական գրողներին» հոդվածը, ուր «Դարբնոցի» ուղղությունը համարվում էր միացյալ ուժերով ստեղծագործելը, աշխատավորական կյանքի կովի, հաղթանակի և այլն, ըմբռնումների խորացումը<sup>24</sup>:

Թիֆլիսի «Դարբնոց» խմբակն ուներ իր նախատիպարը՝ ի դեմս 1914-ի Հ. Հակոբյանի և Մ. Արագու հիմնագրած բանվորական «Նոր գրադարանի», որը ոչ միայն հրատարակչական, այլև կազմակերպչական օջախ էր:

Հ. Հակոբյանը և, առհասարակ, դարբնոցականները, փաստորեն արձագանքում էին գրականությունը ոնոր բանվորական կոլեկտիվիզմի» հետ հա-40

վասարեցնելու այն տեսությանը, որի եռանդում պատգամախոսն էր ոռւս բանաստեղծ Ն. Գաստել:

Երեանի «Մուրճը» ևս, ինչպես «Դարրնոցը», հանդես եկավ գեղարվեստական գրականության «կոլեկտիվիստական էությունը» շեփորող ծրագրերով:

Ամսագրի առաջին իսկ համարում խմբագիրը՝ Ազատ Վշտունին, «Մուրճի» նպատակները ձևակերպեց հետևյալ կերպ. «Մուրճը հրապարակվում է ոչ թե տիրացու էսթետների հոգեկան բավականության համար, այլ կոելու, կոփելու աշխատավորության գեղարվեստական գիտակցությունը...»

Մեր պարբերականը գլխավորապես պետք է հետապնդի երկու կարևոր հարցերի լուծումը. տանելով գրականությունը աշխատավորական-դասակարգային գաղափարախոսության ուղիով, որքան հնարավոր է առաջ քաշել աշխատավորական խավերից դուրս եկած գրողներին և արվեստագետներին»:

Թեև Ազատ Վշտունին պրոլետարական գրողներին ուղղված կոչի մեջ որոշ առումով հակադրվում է Հ. Հակոբյանին, անցյալի գեղարվեստական գրականության ուսումնասիրության հետ կապելով պրոլետարական գրականության աստիճանական ձևավորումը, սակայն այդ հակադրությունը ձևական մոմենտ էր: Ըստ էության, Ազատ Վշտունու «Մուրճը» ևս ազգային գրականության հերքման դավանանքին էր, պրոլետարական գրականությունը «օտար գրական դպրոցներից», այսինքն դասական գրականությունից մեկուսացնելու շատագովն էր:

«Անցել է բաֆֆիների, գամառ-քաթիպաների և, եթե կուգեք, թումանյանների գրական շրջանը, ազգային գրականության շրջանը», — հայտարարում էր Ազատ Վշտունին<sup>25</sup>:

Մոսկվայում համախմբված հայ գրողների «Մուրճ ու մանգաղ» խմբակցությունը (Գ. Հայկունի, Ա. Արշարունի, Վ. Վանդեկ և այլք) հրատարակելով իր պարբերականը՝ «Քուրա» ամսագիրը, իր նշանաբանը ձևակերպեց հետեւյալ խոսքերով. «Ով ունի պրոլետարական թափանցող միտք, ում կրծքում բարախում է անկեղծ ու դգայուն սիրտ, ով վառվում է ստեղծագործական պայքարի համար—թող գա ասպարեզը<sup>26</sup>,

Համադրելով միմյանց հետ ծրագրային այն ձևակերպումները, որով հանդես էին գալիս պրոլետարական գրականության պարբերականները, նշմարում ենք, որ դրանց միջև շկան քիչ թե շատ էական տարրերություններ: Բոլոր պարբերականների գործունեության առանցքը մասսայական գրականության ստեղծումն էր՝ ճիշտ և ճիշտ Պրոլետկուլտի ինքնավարության ոգով ու ցեխային կեցվածքով:

Պրոլետարական գրական ամսագրերն ու թերթերը, ինչպես և նրանց հիմքի վրա կազմակերպված գրական խմբակցությունները պատմական անհրաժեշտություն էին և բոլոր դեպքերում նրանց գործունեության գնահատությունը պահանջում է պատմական մոտեցում:

Դրական էր ամենից առաջ այդ խմբակների մասսայական հիմքը, որը բխում էր կոլտուրայի սեփական վարպետներ ունենալու կուսակցական քաղաքականության ոգուց:

Այնուհետև. պարբերականների տպագրած գեղարվեստական երկերը թեև շատ հեռու էին կատարելությունից, սակայն արդյունավետ էր պրոլետարական գրողների կողմնորոշումը դեպի կյանքը, երեսույթների սոցիալական համարժեքի հայտարերման նրանց ձգուումը:

Այս դիրքերի վրա էր Հայաստանի Պրոլետարական Գրողների Ասոցիացիան, որը կազմակերպվեց 1922 թ. դեկտեմբեր—1923 թ. հունվար ամիսներին, «Մուրճ» պարբերականի հիման վրա:

ՀՊԴԱ-ի կազմի մեջ նրա սկզբնավորման շրջանում մտան Ազատ Վլշառունին, Գևորգ Աբովյան, Նահիրի Զարյանը, Անուշավան Վարդանյանը, Հմայակ Սիրասը, Վահրամ Ալավանը, Գուրգեն Մահարին, Խնկո-Ապերը, Նորայր Դարբանյանը, Գուրգեն Վանանդեցին, Էղվարդ Խոզիկը, Սարմենը, Արաքսը և այլք:

«Մուրճ», որդեգրելով պրոլետական դոկտրինաները, հանդես էր գալիս դասակարգային ինքնամփոփվածության պատվիրանով, նոր գրականությունը դիտելով իբրև առավելապես «ցեխի»՝ բանվոր դասակարգի գրականություն:

«Պրոլետարական պոեզիան,—գրում էր Ազատ Վշտունին,—պետք է ձևակերպի հենց ինքը՝ պրոլետարիատը: Ինչ փույթ, թե առաջին նվագ նրա ձևակերպումը կլինի երբեմն թույլ, երբեմն ոչ գեղարվեստական ու միտումնավոր, նոր իշխող դասակարգը կունենա իր սխալներն ու թույլ կողմերը, մինչև որ կյանքը ցույց կտա բնական ուղին, մինչև որ հետզհետե բանվորական կոլեկտիվիստական գրականությունը կհղվի, կղարդանա և կունենա բանվոր դասակարգի ապագա հեռանկարների նրբություններն ու գեղեցկությունները»<sup>27</sup>:

«Մուրճականները (ասոցիացիականները), դարբնոցականները, քուրայականները, վիշկայականները, ինչպես և «Երեքը» կրկներգում էին Պրոլետկութիւն «ձախ» նշանաբանները, հատկապես այն միտքը, որ «պրոլետարական կուլտուրայի առաջ ամայի դատարկություն է», ուստի և պետք է ամբողջովին քանդել դասական ժառանգությանը կապող թելերը:

Ընդհանուր մեթոդաբանական խնդիրներում դավանելով «զտարյուն պրոլետարական կուլտուրայի» նշանաբանը, պրոլետարական գրական խմբակցությունները մասնավոր-գեղարվեստական խնդիրներում ևս կիրառում էին գեղարվեստի ու դիկտատուրայի նույնացման սկզբունքը՝ հանդես գալով իբրև արվեստի տապալողներ»:

Այդ հոգեբանության ցայտուն արտահայտությունն էր Ազատ Վշտունու ժողով՝ Հակոբ Հակոբյանին.

Մի Դանթե  
Կամ թե  
Պուշկին ես դու...  
Չէ, ընկեր,  
Ազելի ուժգին ես դու

Հայկական Ասոցիացիայի վարիչներն ու տեսաբանները հեգեմոնիան քնական ճանապարհով նվաճելու փոխարեն դիմում էին դիկտատորական մեթոդների, ապա նաև ինքնամեծարարանքների ու ինքնաթմբկահարությունների:

Այս երևույթը տիպիկ է բնութագրել Գուրգեն Մահարին իր հուշերում. «Մանր ժամանակներ էին, հիրավի: Ասոցիացիան չէր ճանաշում Եղիշե Զարենցին, որպես պրոլետարական պոետի, իսկ Զարենցին սիրողները համարվում էին նրա էպիգոնները, այն էլ մանր-բուրժուական: Ասոցիացիայի անդամները գրում էին անարյուն, անսիրտ պատմվածքներ, ստիխներ և ստեղծագործական կարողությունից զույլ բաղուկներով ուզում էին հաստատել իրենց հեգեմոնիան: Հեգեմոնիա ասածը դա մի մարմին էր, որի գլուխը Վշտունին էր, աշ ձեռքը Ալավանը, իսկ ձախը՝ Ն. Զարյանը: Իսկ մարմնի ողնաշա՞րը... բայց ողնաշար չուներ այդ մարմինը»<sup>28</sup>:

Ասոցիացիայի վարած գրական քաղաքականությունը իր գրոշմն էր զնում նաև ստեղծագործության վրա, ուր այլևս բացառվում են հոգեանական խորացումները, «ներքին մարդու բացահայտումները, Դրանց տեղը գրավում են առարկայապաշտությունը՝ իրերի պաշտամունքը, տեխնիցիզմը՝ «շոգեհանդեսները», «շոգեգալուստները», «էլեկտրադիկտատուրան», պսիխոդինամիկան՝ սխեմատիզմի հիմնական աղբյուրները»:

## 7

**Գեղարվեստական գրականության զարգացման համար առաջնահերթ կարորություն ուներ նյութական հնարավորությունների խնդիրը:** Բախտի քմահաճույքին և առանձին «բարերարների» կամքին թողնված հայ գրողները, իդեմս խորհրդային իշխանության մի շարք ձեռնարկումների, ստացան նյութական լայն աշակցություն:

Նշանակալից էր հատկապես 1921 թ. հոկտեմբերին հրատարակված «Գրական-գեղարվեստական աշխատողների ապահովության մասին» Դեկրետը, որով կենսաթոշակ էր նշանակվում ոչ միայն Անդրկովկասի տարածքում ապրող, այլև զեր արտասահմաններում թափառող բոլոր հայտնի հայ գրողներին, անգամ վտարանդիններին (Լևոն Շանթ):

Հովհաննես Թումանյանը 1921 թ. հոկտեմբերի 4-ին հտալիայում (Վճնետիկում) գտնվող Ավ. Խսահակյանին շտապում էր հայտնել իր տպավորությունները. «Մեր այժմյան կառավարությունը շատ ավելի լավն է, քան կարող ես երեակայել: Մանավանդ գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա եղած չեն մեր աշխարհի գումարմանը:

Մինչև իմ նամակի քեզ հասնելը, որու արդեն իմացած կլինես, որ մի շարք գրողների ու գեղարվեստագետների կենսաթոշակ են նշանակել, իսկ շտապով կհրապարակվի և կիմանաս, որ տալիս են ամեն արտօնություն, ամեն հարմարություն ու հնարավորություն: Նրանց թվում կկարդաս և քո անունը:

...Երկիրն ավերված է, երաշտն էլ մյուս կողմից է շատ վնասել: Բայց մեծ շանք են թափում փրկելու և շինելու, և ամեն կերպ պիտի օգնենք»<sup>29</sup>:

Զնայած հրատարակական լայն հնարավորությունների բացակայությանը, տարեցտարի Հայաստանում ավելանում էր հրատարակված գրականության ցանկն ու տպաքանակը:

Գեղարվեստական գրեթեը տպագրվում են մեծ մասամբ առանց պատշաճ նկարչական ձեւագորման, անորակ թղթի վրա, երբեմն ուրիշ քաղաքների մասնավոր հրատարակական ընկերությունների տպարաններում, երբեմն էլ տպագրվում են ձեռագիր (խմորատիա, մեքենագրատիպ կամ ապակետիպ) վիճակով:

Հրատարակական բարդ խնդիրների լուծումը իրացնում է գրական ժողովական առաջնական տպահանձնիկան, որը կրում էր գեղարվեստական կյանքի հիմնական ժանրությունը:

Հեկը մյուսի ետևից լույս հն տեսնում գրական-գեղարվեստական-քաղաքական-հասարակական հանդեսներ՝ «Նոր աշխարհ» (1922, Թիֆլիս, լույս է

տեսել երեք համար), «Նորք» (1922—28, Երևան), «Դարբնոց», (1922—23, Թիֆլիս), «Մուրճ» (1922—23, Երևան), «Նոր ակոս» (1924—25, Երևան), «Դիրքերում» (1925, Թիֆլիս), «Վերելք» (1924—25, Երևան), «Վիշկա» (1925, Բաքու), «Լուսաբաց» (1927—30, Թիֆլիս), «Նոր ուղի» (1929—32, Երևան), «Գրական դիրքերում» (1927—32, Երևան), «Գրոհ» (1932—33, Թիֆլիս), «Արշավ», (1932—1941, Թիֆլիս):

Կուսակցական օրաթերթերը՝ Փառհրդային Հայաստան», «Մարտակոչ» լույս են տեսնում գրական հավելվածներով՝ «Պայքար», «Գրական շաբաթ»:

Հրատարակվում են մանկական և երիտասարդական պարբերականներ՝ «Պատկոմ» (1923—24), «Կարմիր ծիլեր» (1923), «Պիոներ» (1923—30), «Հոկտեմբերիկ», «Երիտասարդ բոլշևիկ» (1925—34), կարճընթաց գրական թերթեր՝ «Նոյեմբեր» (լույս է տեսել մեկ համար), «Գյուղգրող» (1925, Բայազետ, մեկ համար), «Պոլետագոռող» (1925, մեկ համար), երգիծական պարբերականներ՝ «Շեշտ» (1923), «Զուռնա» (1924), «Կարմիր աքլոր» (1925), «Կարմիր մոծակ» (1926—27), «Կարիճ» (1930) և այլն:

Զնայած ներքին տարածայնություններին և գրական դավանանքի տարբերություններին, գրական լրագրությունը մեծ դեր խաղաց գեղարվեստական նոր երկերի տպագրության և մասսայականացման, գրականության հիմնական կադրերի աճման, ոռու գրականության նորությունները մասսայականացնելու, գրական տեսության որոշ հասունացած խնդիրների պատասխանները մշակելու ասպարեզում:

Առանձնապես նշանակալից էր «Նորք» հանդեսի դերը, ուր տպագրվեցին հայ սովետական գրականության մի շարք մեծարժեք երկեր: Գրական հարցերի պարբերական դրվագներով հատկապես աշքի ընկավ թիֆլիսի «Մարտակոչ» թերթը՝ իր գրական հավելվածներով («Մարտակոչ», «Արվեստ, գրականություն, գիտություն», «Գրական շաբաթ», «Գրական արշավ»):

Գրական պարբերականների էջերում առավել սրությամբ արտահայտվեցին ներգրական պայքարի իրադարձությունները:

## 8

Պրոլետարական գրական շարժումը նախնական՝ «ինքնորոշման», «ինքնահաստատման» (1921—24 թթ.) շրջանից 1925—26 թթ. թևակոխում է, պայմանականորեն ասենք, «գրական դիրքերի ամրացման» շրջանը:

Պրոլետարական գրողների Ասոցիացիան դառնում է մասսայական կազմակերպություն, իր բաժանմունքները ստեղծելով լենինականում, Ղարափիկիսայում, Ալավերդում, Էջմիածնում և Հայաստանի ուրիշ բնակավայրերում:

Ասոցիացիան և նրա պարբերականները զգալի աշխատանք են կպտարում բանվորագյուղացիական միջավայրից գրական նոր կադրերը հավաքագրելու և նրանց գաղափարական կոփվածքը ապահովելու ասպարեզում:

Պարբերականների էջերում ծավալվող բանավեճերը, հրապարակային ասուլիսները, նոր երկերի վերլուծությանը նվիրված գրական դատերը մեծապես նպաստում են պրոլետարական գրական շարժման հասարական ներգործության դաշտի ընդանունը: Հայաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիան նպաստում է նաև բուրժուական գաղափարախոսության ներխուժան ցույնների դեմ մղվող պայքարին: Այսուամենայնիվ, ինչպես մայր

կազմակերպության՝ ՎԱԱՊ-ի—ՌԱՊՊ-ի, այնպես էլ ՀՊԳԱ-ի գործումնեռության մեջ տեղ են գտնում էական մինուսներ՝ գրական քաղաքականության կոպիտ խեղաթյուրումներ։

Գրականության զարգացման հեռանկարների և բնույթի ճշգրիտ կողմնորոշումը ՀՊԳԱ-ն փոխարինում է հրամանագրության ու բանաձեռների անկանութարափով, գրական ոչ պրոլետարական շերտերի, օրինակ, «ուղեկիցների» հանդեպ կիրառում է ղեկավարման կոպիտ վարչարարության ձևերը, անցյալի գեղարվեստական ժառանգությունը գնահատում է դարձյալ հերժման ու հարցականի տեսակետով<sup>30</sup>, ստեղծագործական ազատ մրցության սկզբումքը փոխարինում է դիկտատորական-վարչական մենաշնորհի սկզբունքով։

Պրոլետարական գրական շարժման հեգեմոնիան նվաճելու համար Ասոցիացիայի որոշ ղեկավարներ դիմում են բացահայտ կոպտությունների։ Զախության շուայլությունները՝ վարչարարական հոսանքը, բնականաբար, հրահրում է նույն Ասոցիացիայի ներքին տարածայնությունները՝ հակահոսանքը։

Այնքան սուր կերպարանք են առնում բախումները, որ Ասոցիացիայի ներսում գոյանում են առանձին հակադիր թեեր, ստեղծվում են «միամյա», անգամ «միօրյա» գրական ինքնավարություններ (ավտոնոմիաներ)՝ այլազանթեքումներով։

Ներքին տարածայնությունները շիկացման են հասնում 1925 թ. հունվարին։ Հրավիրված Հայաստանի պրոլետարական գրողների առաջին համագումարում։ Հայտնի են դառնում ճգնածամի բոլոր նշանները։ Տեղերում՝ հանրապետություններում, իհարկե, երեսում էին մայր կազմակերպության՝ ՌԱՊՊ-ի գրադարականության կրկնապատկերները։

Ներքին ճգնածամի իրադրության մեջ հրապարակվեց ԱԿ(Բ)Կ Կենտկոմի 1925 թ. հունիսի 18-ի բանաձեկ՝ «Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում»։

Բանաձեկ ամփոփեց պրոլետարական (և առհասարակ սովետական գրականության) անցած ճանապարհի փորձը և մատնանշեց նրա հետագա վերելքի ուղիները։

Բանաձեկի հիմնական կետերից մեկը բուրժուական գաղափարախոսությունների ներթափանցման դատապարտումն էր, նաև դրա հետ կապված «պարտվողական»—տրոցկիստական այն տեսությունների վճռական քննադատությունը, որոնք հարցականի տակ էին դնում պրոլետարական գրականության զարգացման հեռանկարը։

Կերպութելով պրոլետարական գրական շարժման վիճակը և ի ցույց դնելով «առկա ցուցանիշներ», Բանաձեկը հիմնական խնդիր էր համարում պրոլետարական գրականության հեգեմոնիայի պատմական իրավունքի նվաճումը բնականոն ճանապարհով։

Պայքարի սլաքն ուղեկով վարչարարական կոմսնապարծության, «ուղեկիցների» հանդեպ տարվող մխտական քաղաքականության դեմ, ինչպես նաև դատապարտելով «ջերմոցային» գրականություն ստեղծելու ապարդյուն ջանքերը, Բանաձեկ հոչակում էր գրական տարրեր հոսանքների ստեղծագործական աղատ մրցության պայմանը։ «Եյութապես և բարոյապես օժանդակելով պրոլետարական-գյուղացիական գրականությանը, օժանդակելով «ուղեկիցներին» և այն, կուսակցությունը չի կարող մենաշնորհ տալ խմբերից որեւէ մեկին, նույնիսկ իր գաղափարական բովանդակությամբ ամենապրոլետարականին։ Դա ամենից առաջ կնշանակեր կործանել պրոլետարական գրականությունը»։

**20-ական** թվականների ամենակողմյա՞ և տնտեսական, և քաղաքական դժվարին իրադրության մեջ կուսակցությունը հոչակեց գրականության զարգացման գաղափարական-գեղարվեստական հիմնական սկզբունքները, գրողների ջանքերն ուղղելով «ոցիալիստական նոր արվեստի ստեղծման գործին»:

1925 թվականին Բանաձեկի միջոցով կուսակցությունը գրողներին կոչ էր անում՝ դառնալ սոցիալիզմի շինարարության ակտիվ մասնակիցներ, ստեղծել մասսայական գրականություն՝ օգտագործելով «արդիականության վիթխարի նյութերը»:

Բանաձեկի կարեռագույն կետերից մեկը՝ «դասակարգային մեկուսացվածության» հաղթահարման կետն էր. «Երեսույթների լայն ընդգրկում. Զպարփակվել մեկ գործարանի շրջանակներում, լինել ոչ թե ցեխի, այլ պայքարող, իր ետերից միլիոնավոր գյուղացիներին առաջ տանող մեծ դասակարգի գրականություն. այսպիսին պետք է լինին պրոլետարական գրականության բովանդակության շրջանակները»:

Բանաձեկի էական դրույթներից մյուսը Սովետական Միության կազմի մեջ մտնող հանրապետությունների «ազգային գրականությունների» զարգացման խթանումն էր:

Բանաձեկը արդյունավետ նշանակություն ունեցավ նաև հայ պրոլետարական գրական շարժման ամրացման համար:

Ասոցիացիայի ներքին տարածայնությունների հետևանքներից մեկը եղավ գրական նոր խմբակցություններ ստեղծելու պահանջը:

Այդ պահանջի իրացման կոնկրետ արտահայտություններից մեկը լևնինականի բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» խմբակի ստեղծումն էր՝ Ասոցիացիայից դժո՞հ գրողների (Մ. Արմեն, Գ. Մահարի, Գ. Սարյան և այլք) եռանդուն մասնակցությամբ:

«Հոկտեմբեր» խմբակի առաջացման բացատրությունը ճշտորեն տրված էր Գ. Մահարու «Ինչո՞ւ անշատվեցինք» հոդված-հայտարարության մեջ. «Մենք անհրաժեշտ գտանք անշատվել մի խմբակից, որն ոմի երեք տարվա տրադիցիա և որը, չնայած բազում վերակազմություններին և վերավերակազմություններին, մնաց նույն կաստայական և իներս խմբակցությունը... Մենք գտանք, որ գրական մի նոր շարժում պետք է ստեղծել, առանց մազաշափ շեղվելու պրոլետարական հաստատուն գծից... և մեզ կոչեցինք հայ բանվոր և գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միություն»<sup>31</sup>:

Թեև Ասոցիացիայի ղեկավարները՝ Վ. Ալազանը և Ն. Զարյանը «Մեր պատասխանը» դարձյալ հոդված-հայտարարության մեջ փորձեցին անշատումը մեկնաբանել Գ. Մահարու քաղաքական ու անձնական վարքի շարժառիթներով<sup>32</sup>, գլխավոր պատճառը մնում էր Ասոցիացիայի ինքնամեկուսացման գիծը:

Թեև «Հոկտեմբեր» մտահղացվել էր 1925 թվականի Բանաձեկց ավելի վաղ, սակայն նրա գործունեությանը նոր թափ հաղորդեց Բանաձեկի մեջ հրոշակված «ազատ մրցակցության» սկզբունքը:

«Հոկտեմբերը», ինչպես երեսում է նրա անդամների՝ Մ. Արմենի և Գ. Մահարու հուշապատումներից<sup>33</sup>, որոշակի աշխատանքներ է ծավալել պրոլետարական գրական շարժման լայնացման համար, սակայն չունենալով գործունեության հստակ ծրագիր, այդպես էլ չի կարողացել իր ձեռքը վերցնել պրոլետարական գրականության ղեկը:

«Հոկտեմբերը» Ասոցիացիային հակադրվող և գրական քաղաքականությունը վերաշրջող իրական ուժը չէր:

«Հոկտեմբերի» «պատվավոր նախագահ» Եղիշե Զարենցը պրոլետարական գրական շարժման համար անբավարար էր գանում այդ խմբակի տեղային-աշխարհագրական նեղությունը և դիրքերի անորոշությունը:

Զարենցին մտահոգում էր «համահայաստանյան» գրական խմբակցության հեռանկարը:

Իր հուշերում Գ. Մահարին պատմում է Զարենցի այդ մտահոգության մասին. «Բանվորա-գյուղացիական: Էսպիսի գրականություն չկա: Պրոլետարական-վասսալամ: Միությունը պիտի դարձնել համահայաստանյան: Պիտի վերցնել Հայաստանի խորհրդայնացման ամիսը՝ նոյեմբերը:

— Եվ էսպես, դուրս եկավ էսպես—Հայաստանի պրոլետարական գրող-ների «Նոյեմբեր» միությունը<sup>34</sup>:

«Նոյեմբեր» միությունը կազմակերպչորեն ձևավորվեց 1925 թ. սեպտեմբերի 12-ին, իսկ հաջորդ օրը, սեպտեմբերի 13-ին «Խորհրդային Հայաստան» թւրթը հրապարակեց միության գեկլարացիան:

«Նոյեմբերի» գեկլարացիայի ելակետերը բխում էին 1925 թվականի բանաձևի դրույթներից:

«Իբրև զործունեության պլատֆորմ,—ասվում է գեկլարացիայում,—Հայաստանի պրոլետարական գրողների միությունը ընդհանուր սկզբունքային առումով ընդունում է պրոլետարական գրողների առաջին համամիութենական կոնֆերենցիայի բանաձեռ, այն վերապահությամբ, որը կազմում է այդ բանաձևի մեջ եղած հիմնական տարրերությունը:

Այդ տարրերությունն ամենացայտում կերպով արտահայտվում է:

1. Հեգեմոնիայի հարցում:

2. Վերաբերմունքի հարցում գեպի գտնազան գրական խմբավորումները<sup>35</sup>:

Սույն բանաձևաման մեջ վերին աստիճանի հետաքրքրական են վերապահույթյանները:

Մինչ ՎԱՊՊ-ի թանաձևում հռչակվում էր իշխանությունը, «Նոյեմբերը» դավանում էր հեգեմոնիայի պատմական իրավունքի նվաճման «ազատ մըրցության» ձանապարհը:

Այնուհետև, մինչ ՎԱՊՊ-ը շարունակում էր «ուղեկիցների» հանդեպ կիրավող անբարյացակամ վերաբերմունքի քաղաքականությունը, «Նոյեմբերը» հրաժարվում է դրանից և կանգնում հանդուրժողական, համբերատար վերաբերմունքի դիրքերի վրա:

«Նոյեմբերի» ծննդյան հիմնավորումը կուսակցության առաջադրած ազատ մրցակցության կիրառությունն էր: Նոյեմբերականները՝ Զարենցի առաջատարությամբ, գտնում էին, որ պրոլետարական գրական շարժման լայնացումը արդյունավետ կարող է ազդել նաև ստեղծագործության բովանդակության վրա՝ գրական արտադրանքը բեռնաթափելով ցեխային հոգերանության կաշ-կանդումներից ու դրոշմներից:

Ամեն մի կաստայցում համարելով վնասաբեր՝ գրական ստեղծագործության համար, նոյեմբերականները, մասնավորապես Զարենցը, իրենց վաղեմի «պողիցիաններից» թոփք էին կատարում գեպի սոցիալիստական ոեալիզմի գրականությունը:

«Պողիցիաների» վերանայման պատմական անհրաժեշտությունը Զարենցը կառահում էր արդեն արտասահմանյան ուղևորության ժամանակ, իր թղթակիցներին և խմբագրություններին գրած նամակներում շարադրելով նոր դավանանքի բովանդակությունը:

Այս առումով պատմագրական նշանակալից վավերագիր է Բաքվում հրատարակվող «Վիշկա» ամսագրի խմբագրությունը (խմբագիր Սուրեն Երզնկյանին) Զարենցի գրած նամակը, ուր, մասնագորապես, ասվում է. «Իսկ մենք ի՞նչ էինք անում. կարծում էինք աշխարհը կարող ենք նվաճել պլակատներով և ողորմելի ագիտանի հրով, որոնք շատ-շատ կարող էին ունենալ ընթացիկ ռեկլամի նշանակություն. Եվ կարծում էինք, որ դա է այն հիմնական արվեստը, որ հարկագոր է պրոլետարիատին: Մեր ինտելիգենտական ողորմելի խելքով վերցնում էինք կենդանի բանվորներին և շինում էինք մի՛ իբր թե ռդասակարգային օգուտիս անկենդան շուշելո, այդ օգուտն էլ վերցնում էին ամբողջ մարդուց առանձին, օգում կախված,—չէ՞ որ մենք հերքում էինք կենցաղը և հոգեբանությունը: Լեֆից փոխառած ինտելիգենտական կեղծ դրամները մենք ուզում էինք սաղացնել իբրև պրոլետարական գաղափարախոսության լիակշիռ ոսկիներ»<sup>36</sup>:

Զարենցի լայնախոհ հայացքների շնչով է «Նոյեմբեր» սկսում իր գործունեությունը՝ երկօրյա համագումարից (1925 թ. սեպտեմբերի 27—28) մինչև իր հրատարակություններն ու 1925—26 թթ. բանավեճային իրադարձությունները:

Ասոցիացիային զուգահեռ դարձյալ պրոլետարական «Նոյեմբեր» խըմբակի գոյությունը մեծապես նպաստում է գրական շարժման վերելքին:

Թեև նոյեմբերականների շարժումը «կզբնական շրջանում ընթանում է ասոցիացիականների հետ համերաշխության պայմաններում, սակայն դա թվայցալ «խաղաղություն» էր:

Մինչ Զարենցի խմբակցությունը աշխատում էր հարավորության սահմաններում հեռու մնալ կաստայացումից և ավելի լայն բովանդակություն դնել «պրոլետարական գրականություն» հասկացության մեջ, ասոցիացիականները կաստայացման՝ «ինքնամեկուսացման» դիրքերից շարունակում էին պայքարը նոյեմբերականների դեմ:

Այսուամենայնիվ, երկու կազմակերպությունների միացումը և համագործակցությունը դառնում է անհրաժեշտություն, որի մասին հրապարակային խոստովանություններով մամուլում և ամբիոններից հանդես են գալիս թե՝ մեկ և թե՛ մյուս թեկ գրողները:

Բանակցություններ էին վարում «միասնական գրական ֆրոնտ ստեղծելու համար: Այդ ոգով է անցնում «Նոյեմբեր» համահայստանյան կազմակերպական ժողովը (1926, նոյեմբեր), ուր եղած տարածայնությունների վերացման պայմանը համարվում է համագործակցությունը Ասոցիացիայի հետ:

Դեռևս 1926 թ. մայիսին Թիֆլիսում կարգացած «Պրոլետարական գրականության ուղիները» զեկուցման մեջ Զարենցը նշում էր. «Այժմս պրոլետարական այդ երկու խմբակցությունների մեջ խոշոր տարածայնություններ շկան և հնարավոր է մոտ ապագայում նրանք միանան և կազմեն մի միասնական գրական ֆրոնտ, որի համար արդեն բանակցություններ են վարվում»<sup>37</sup>:

Ասոցիացիականների հետ «խաղաղ գոյակցության» իրադրության մեջ (սա արձանագրում է նաև ՀԿ(Բ)Կ կենտկոմի 1926 թվականի բանաձկը) թեև երկու պրոլետարական կազմակերպությունների զուգընթացությունը որոշ ժա-

մանակ այլես խոշոր տարածայնությունների առիթներ չի տալիս՝ հող նախապատրաստելով դրանց միավորման համար, այդուամենայնիվ, նրանց գործունեությունը ի հայտ է բերում ստեղծագործական բնույթի լուրջ անհամաձայնություններ:

Մինչ ասոցիացիականները դարձյալ հենվում են «գասակարգային ինքնամփոփածության» նախոպայմանին եղրիս տեսական դրույթների վրա, նոյնիմբերականները հրահանգում են ժողովրդի հավաքական լայն զանգվածների կյանքի ու հոգեբանության վրա հենվող ռեալիստական արվեստի պահանջր:

Եվ, այսպես, հասունանում է «միասնական ֆրոնտի» ժամանակը: 1926 թ. դեկտեմբերի 21-ից 23-ը տեղի է ունենում Ասոցիացիայի և «Նոյեմբերի» միավորի կոնֆերանսը, ուր ի ձևավորվում է Հայաստանի պրոլետարական դրադերի Միությունը:

Միասնացման առաջին քայլը պետք է լիներ «Պրոլետարական գրողներ» (1927) ժողովածուն, ուր Ասոցիացիայի բանաստեղծները տպագրվում են առանձին բաժնում՝ իրենց առաջարկով, նոյեմբերական բանաստեղծները՝ դարձյալ առանձին բաժնում, ուրիշ առաջարկով:

«Առանձնացումները» ինքնին վկայում է անհամաձայնությունների շարունակվելը, որի մասին մամուլում ընդարձակ խոսակցություն ծավալվեց ամբողջ 1927 թվականի ընթացքում: Նախկին ասոցիացիականները սրեր էին ճոհում նախկին նոյեմբերականների դեմ՝ հիմնականում նյութ ունենալով նրանց առաջարկած տեղային մինուրությունը, իսկ նոյեմբերականները հանդես էին զալիս ասոցիացիականների դեմ՝ գրական սխեմատիզմի դավանականքի քննադատությամբ:

Հայաստանի պրոլետարական գրողների միության պաշտոնական օրգան՝ «Գրական դիրքերում» ամսագիրը (հրատարակվել է 1927 թ. օգոստոսին) թեև կոչված էր լինելու համագործակցության դրոշակակիրը և «միասնական ֆրոնտի» համբավաբերը, սակայն վարում էր զտարյուն ասոցիացիական բաղադրականություն՝ գումարիկ սոցիոլոգիական քննադատության սլաքներն ուղղելով ու միայն «ուղեկիցների» (օրինակ, Ստ. Զորյանի), այլև անզամ պրոլետարական գրողների (օրինակ, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Գ. Մահարու) դեմ:

Հանդեսին շեշտ էին տալիս երկրորդ տեսակի արվեստի շեփորաշար-քննադատները (Գ. Վանանդեցի, Հ. Մկրտչյան, Ն. Դաբաղյան, Ընձակ Վահանյան և այլք), որոնք ինքնանպատակ էին տիտիզմի դեմ պայքարի դիրքերից հարցականի տակ էին առնում առհասարակ արվեստի գեղեցկություններն ու յուրահատկությունները:

Օգովկելով հատկապես այն գնահատականից, որ Հայաստանի Ասոցիացիային տվել էր ՌԱՊՊ-ի տեսաբաններից մեկը՝ Ա. Սեմվանովսկին («Զգալի սխալներ գործեց նաև նոպաստովյան այնպիսի հին և փորձված չոկատ, ինչպիսին Հայաստանի Ասոցիացիան է»—«Լիտերատուրայի ֆրոնտ»), հայ դիրքականները զարձան ավելի մոլեգին: Ն. Զարյանը և Վ. Ալավանը ասպարեզ հանեցին «Վճռական մարտերի նապաստովյան ֆրոնտում» մարտաշումը հոգվածը:

Դիրքական քննադատության գլխավոր նշանակետը, իհարկե, Ե. Չարենցի ստեղծագործությունն էր, որի «պսակագերծումով» այդ քննադատությունը ցանկանում էր թուացնել նոյեմբերականների գեղագիտական առաջադրությունները:

Գ. Վանանդեցու, Ն. Դաբաղյանի, Հ. Մկրտչյանի բանավեճային հոդվածների նպատակետը ըստ էության ստեղծագործական հարցերը չէին, այլ խմբակային նկատառումները, ասել է թե՝ Զարենցի և մյուս նոյեմբերականների գրական կայուն դիրքերը և. Վշտունու, Վ. Ալազանի, Ն. Զարյանի անկայուն դիրքերով փոխարինելը:

Վերին աստիճանի բնորոշ է, որ դիրքականներն իրենց քննադատությունը տանում էին առավելապես գրականության ազգային հիմքերի՝ «ազգային խանձարուրի», պատկաներծման ուղղությամբ:

«Գրական դիրքերում» հանդեսը արտահայտում էր մի որոշակի քաղաքականություն՝ ազգային մշակույթի օգտագործման հանդեպ ժխտական վերաբերմունք, սխեմատիզմի թմրկահարություն, կոմսնապարծական կեցվածք, որը, բնականաբար, առաջ էր բերում դժգոհության ուժեղ ալիք ոչ համախոհ գրողների շրջանակում:

Այդ մասին լայն խոսակցություն է գնում պրոլետարական գրողների անդրկովկասյան առաջին համագումարում՝ 1928 թվականին, ուր մասնավորապես Սուտիրինի զեկուցման մեջ ի ցուց է դրվում նախկին ասոցիացիականների և նախկին նոյեմբերականների մեջ խորացող խրամատի վտանգավոր հետևանքները հայոց գրական շարժման ճակատագրի համար:

Նորից ծառանում է կազմակերպչական նոր միավոր ստեղծելու, գոյություն ունեցող գորական կազմակերպությունների համախմբման խնդիրը:

Բանն այն է, որ պրոլետարական գրողների միությանը զուգահեռ գործում էին նաև «Հայ գրական ընկերությունը» (1926 թ. մայիսից) և «Հայ աշխատավորական գրողների միությունը» (1927 թ. օգոստոսից):

Գրական ընկերությունը (Սալման, Էմին Տեր-Գրիգորյան, Ստեփան Կանայան և այլք) դավանում էր «քաղաքականությունից անկախ արվեստի» նշանաբանը, իսկ աշխատավորական գրողների միությունը (Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Մ. Մանվելյան, Վ. Թոթովենց, Յ. Խանզադյան, Ա. Տերտերյան և այլք) արտահայտում էր «ուղեկիցների» կամքը՝ ակտիվորեն մասնակցելու սոցիալիստական շինարարության խնդիրների լուծմանը:

Կազմակերպչական նոր միավորման նախնական քայլը եղավ «Նոր ուղի» (1929, հունվար) ամսագիրը, որի դրոշակի վրա գրված էր մտավորականության բոլոր շերտերի համագործակցման նշանաբանը:

Այդ նշանաբանով էլ 1929 թ. ապրիլի 28-ին կայացավ Պրոլետարական գրողների Միության և Աշխատավորական գրողների Միության միավորի կոնֆերանսը, ուր ծնունդ առավ Հայստանի խորհրդային գրողների ֆեղերացիան: «Նոր ուղի» ամսագիրը դարձավ ֆեղերացիայի պաշտոնական օրգանը:

Ֆեղերացիայի զեկլարացիայի մեջ նրա անելիքների մասին ասված է. «Ֆեղերացիան ստեղծագործական խնդիրներում կանգնելով պրոլետարական ուսալիզմի տեսակետի վրա, պայքարելով գրական սխեմատիզմի արտահայտությունների դեմ, իրեն նպատակ է դնում տալ կենդանի մարդու գեղարվեստական պատկերացումը»<sup>38</sup>:

յին խնդիրները: 20-ական թվականների հրահանգավորումը՝ գրականության սոցիալիստական որակի ստեղծման վերաբերյալ, դառնում է առաջնահերթ կապված սոցիալիստական հասարակության նոր թոփշքների ու հեղափոխական թափի վերելքի հետ:

Հասարակության սոցիալիստական սկիզբների ընդարձակումը գրականության մեջ հրահրում է գեղագիտական նոր կողմնորոշումներ ու կուանումներ: Գրական ուժերի համագործակցությունը, իր հերթին, խթանում է գեղարվեստական ստեղծագործության կենսունակ ուժերի արդյունավետ ընթացքը:

Պատմական նոր իրադրության առաջարած գեղագիտական նոր խնդիրները առավել խորությամբ արտահայտում են դիմացիկայի գեղագետները: Նրանց մեջ էր Եղիշե Զարենցը, որի «Էպիքական լուսաբաց» (1930) ժողովածուն ստեղծվեց սոցիալիստական գեղագիտության կարևորագույն հարցերի պատասխանը գտնելու անհրաժեշտությունից:

Չնայած «Էպիքական լուսաբացի» հանդեպ եղած ուսպական-դիրքական գրողների ու քննադատների (Հ. Մկրտչյան, Հ. Գյուլիքելիսյան, Գ. Վանանդեցի, Ն. Զարյան) բացասական վերաբերմունքին, չնայած նրանց փորձերին՝ Զարդենցին իշեցնելու «տեսության ստորոտները», այդ ժողովածուն նշանավորեց հայ գեղագիտական գիտակցության շրջադարձը:

Մի կողմ թողնելով խմբակային գրապայքարի «մանրությունները», առաջ անցնելով իր և ժամանակակիցների մոլորություններից, Զարենցը ասպարեզ հանեց մեծ խոհը հայ գրականության նոր ճանապարհի՝ էպիկական առավոտի վերաբերյալ:

Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից  
Սկսվում է մի նոր, մի գծվարին վերելք,  
Մին աենշերի փոշին մեր խոհերից քերենք,  
Ու ճանապարհ ընկնենք, մեծ ճանապարհ, նորից...

Մեծ ճանապարհի հրահանգով Զարենցն առաջին հերթին կարևորում էր բանաստեղծության և ժամանակի հոգսերի սերտ առնչության օրենքը, գտնելով, որ բանաստեղծության նորացումն ու զարգացումը անկարելի է առանց պատմության նոր երևույթների ներքին բովանդակությունն արտահայտող գեղարվեստական սկզբունքների, առանց հայացքի խորացման ու տեսադաշտի լայնացման:

«Էպիքական լուսաբացում» Զարենցը խեթ հայացքով է նայում իր ստեղծագործության լեֆիստական-օգտապայտական-standart-ական հատվածին, դարգացման հեռանկարը կապելով մարդու ճակատագրի մեջ թափանցող բանաստեղծության հետ:

Գեղագիտական ճշմարիտ դիրքերի պայմաններում անակնկալ էր Ն. Զարյանի «Բաց նամակ ընկ. Եղիշե Զարենցին» ընդդիմախոսությունը<sup>39</sup>, ուր «Էպիքական լուսաբացը» համարվեց «նահանջ պրոլետարական գրականությունից», «թեմատիկական կրիզիս», «հեռացում արդիականության այրող խընդիրներից» և այլն, և այլն:

Թեև այդ նամակում ն. Զարյանը մի քանի անգամ ակնարկում է Զարենցի ուժը («Դու վատ ես վարվում քո փայլուն տաղանդի հետ», «Ես շեմ հավատում, թե դադարել է քո տաղանդի զարկերակը», «Մասնակցիր սոցիալիստական շինարարությանը» և այլն), բայց նամակի եղրակացությունները թող-

նում են անհեռանկար բանաստեղծի տրամադրությունների դատաստանի տպավորություն:

Ահա ն. Զարյանի հետեւթյուններից մեկը. «Դու նմանվում ես այն քաշասիրտ մարդուն, որ մենակ, ամայի տեղով անցնելիս, վախից բարձր երգում է, խլացնելու համար իր վախի ձայնը»:

Իհարկե, ն. Զարյանի Բաց նամակը շոշափում էր ժամանակի առաջին անհրաժեշտության ստեղծագործական խնդիրները, բայց նույն այդ գրության մեջ չէր կարելի չնշմարել Ռապավական մակերեսայնության նստվածքները, գրականության արդիականությունը հրատապությամբ, ներքին շարժումը՝ իրարանցումով փոխարինելու միտումները:

«Էպիքական լուսաբացի» շուրջը ծավալված խոսակցությունները, ինչպես նշվել է, ձեռք բերեցին նամբնդիանուր գրական նշանակություն:

Նույն այդ տարիներին՝ 1929, 30, 31, 32 թթ. կուսակցական և գրական մամուլը առավել արդյունավետությամբ առաջազրեց գրականության ստեղծագործական խնդիրները:

Առաջին պլանի վրա դրվեց սխեմատիզմի գեղագիտության քննադատությունը:

Բանն այն է, որ որոշ տեսաբաններ համառորեն թմբկահարում էին սխեմատիզմը՝ իբրև թե նրան հատուկ «գաղափարական լայնության» և «գեղարվեստական խորացման» ոկզբունքների համար:

Տեսաբաններից մեկը՝ Հարություն Մկրտչյանը, 1930 թվականին գրում էր. «Սովորաբար սխեմատիզմին հակադրվում է կենդանի մարդու՝ պսիխոլոգիզմի լոգոնգը, մինչդեռ սխեմատիզմը բնավ չի հակասում կենդանի մարդու և ճիշտ հոգեբանության գաղափարներին: Սխեմատիզմը մնում է որպես խտացված գաղափարների միջոցով իրականությունը պատկերացնելու մեթոդ, որը պարզեցնում է բարդությունները, անտես է առնում մանրամասնությունները և առավելապես խնայում միջոցները, ձգտում է հասնել մեծագույն էֆեկտների: Պուղիայի սոցիալական ներդաշնակության ուժը մեծացնելու համար երբեմն անհրաժեշտ է լինում դիմել սխեմաների, մինչդեռ կենդանի մարդու հոգեբանության մեջ խորասուզվելը, ծայրահեղ պրատումը անհատի հոգու ծալքերի մեջ՝ հաճախ հեռացնում է սոցիալական խնդիրներից, էպոխայի մեծ պրոբլեմներից»<sup>40</sup>:

Սխեմատիզմի՝ իբրև գեղարվեստական լիարժեք սկզբունքի հրահրումը անպայմանորեն կապված էր որոշ հոգեբանության՝ «Արվեստի դասակարգայնության» բնույթի գուհիկ ըմբռնումների, ինչպես և պլեխանովյան «սոցիալական համարժեքի» տեսության հետ:

Եվ այսպես, սոցիալիստական նոր արվեստի կառուցման ասպարեզում բախվում էին մակերևսային, սահմանափակ և խոր, լայնահուն սկզբունքներ, որոնք շուտով դադարեցին ստեղծագործական վեճ լինելուց և ստացան խըմբակային տարածայնությունների կերպարանք:

բակառուցման վերաբերյալ ՀամԿ(թ)Կ Կենտրոնական կոմիտեի 1932 թ. ապրիլի 23-ի որոշումը:

Սովետական գրականության բոլոր հորիզոնականներում ստեղծվել էր այնպիսի վիճակ, երբ պրոլետարական գրականությունից դուրս էին գրվում խոսքի մեջ վարպետները, այն գրողները, որոնց համարում էին կամ «ուղեկիցներ», կամ «դաշնակիցներ»:

Խմբակային մեկուսացվածությունը դառնում էր գրականության զարգացման լուրջ արգելակ: Այդ հանգամանքը վտանգ էր ստեղծում, որ հիշյալ կազմակերպությունները (ՎԱՊՊ, ՌԱՊՊ, ՌԱՄՊ—Ս. Ա.), որոնք մինչև այդ հանդիսանում էին սովետական գրողներին ու արվեստագետներին սոցիալիստական շինարարության խնդիրների շուրջը մորիլիզացնելու միջոց, կդառնան գրական շարժումը կանխող ուժ:

Հայաստանի կուսակցության Կենտրոնական կոմիտեի քարտուղարությունը, որը զեռ որոշումից առաջ՝ 1932 թ. փետրվարի 28-ին անդրադարձել էր պրոլետարական գրողների Ասոցիացիայի գործունեությանը և դատապարտել էր անսկզբունք խմբակայնությունը, ապրիլի 23-ի որոշման լույսի տակ ընդունում է վերակառուցման հրահանգը. «1. Լիկվիդացիայի ենթարկել Հայաստանի պրոլետարական գրողների կազմակերպությունը (ՀՊԳԱ), Հայաստանի գրողների ֆեդերացիան, Հայաստանի պրոլետ երաժիշտների, պրոլետարական ճարտարապետների ու նկարիչների միությունները:

2. Կազմակերպել Հայաստանի խորհրդային գրողների Միություն՝ խորհրդական իշխանության պլատֆորմը պաշտպանող և սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողներից՝ կազմակերպելով միության կից կոմիտրակցիա»:

Նույն որոշման հիման վրա կազմակերպվում է գրողների Միության ստեղծումը նախապատրաստող կազմկոմիտե:

✓ 1932 թ. մայիսին լույս տեսավ «Դրական թերթի» առաջին համարը: Թերթի, ինչպես նաև գրական նոր հանդեսների («Նոյեմբեր»—Երևան, «Արշավ»—Թիֆլիս, «Խորհրդային գրող»—Բաքու) առաջնահերթ խնդիրը համարվեց ՀՊԳԱ-ի «տեսական-քաղաքական սիմաների» քննադատությունը և նորագույն գրականության զարգացման տեսական-գաղափարական հիմունքների մշակումը: Դրանց մեջ առավել հետաքրքրություն էր ներկայացնում գրականության աղքային ձեի և սոցիալիստական բովանդակության հարցի դրվագքը, այն հարցի, որն ուներ մեթոդաբանական կարևոր նշանակություն առհասարակ սոցիալիստական մշակույթի շինարարության ընթացքի համար:

✓ 1933 թ. «Դրական թերթում» Մ. Արմենի տպագրած «Զարենցի» և հարակից խնդիրների մասին» հոդվածի շարժառիթով այդ հարցը դարձավ գրական կյանքի առանցքներից մեկը: ✓

Մ. Արմենի հոդվածի հետ միասին թերթի նույն համարում տպագրվեցին դրա ընդդիմախոսությունները՝ Գ. Վանանդեցու «Լեգենդա «ազգային» և «միջազգային ձեի» մասին», Ե. Չուրարի «Ճախջախել խմբակայնությունը և նացիոնալ-դեմոկրատական տեսլենցները» և անանուն հեղինակի խմբագրական հոդվածները<sup>41</sup>:

Մ. Արմենի հոդվածը, ինչպես ինքն է վկայում Հոկտեմբեր-նոյեմբեր գրական միության պատմությանը նվիրված «Գլխավոր հունով» դեռևս ձեռագիր աշխատության մեջ, արտահայտում էր «նոյն հայացքները» պաշտ-

պանող շորս գրողների՝ Ե. Զարենցի, Ա. Բակոնցի, Մ. Արմենի, Դ. Մահա-  
րու, այսպես կոչված «նոյեմբեր» խմբակի գեղագիտական ժրագրերը:

Մ. Արմենի հոդվածը կարդացվել էր նույն խմբակի հավաքում և արժանա-  
ցել նրա անդամների «լիակատար համաձայնությանը»:

Թերթի նույն համարում ընդդիմախոսությունների տպագրության փաստն  
իսկ վկայում է հարցադրման առանձնակի բարդությունը:

Մ. Արմենի հոդվածում, կային, իհարկե, անճիշտ ձեւակերպումներ, տեսա-  
կան խակություններ, ասկայն հիմնականում ճիշտ էր պաթոս՝ ազգային մշա-  
կույթի միջոցով միջազգային մշակույթ ստեղծելու նշանաբանը: ✓ Տեսական  
այս զանգակատնից էլ հոդվածում գնահատվում էր հայ գրականությունը, մաս-  
նավորապես Ե. Զարենցի բանհինգամյա ժառանգությունը, ուր, Մ. Արմենի  
տպագրությամբ, սոցիալիստական բովանդակության և ազգային ձեփ դրված-  
քը գտել է ցայտուն արտահայտություն:

✓ Մ. Արմենի հոդվածի շուրջը բացված սուր խոսակցությունները ճակա-  
տագրական նշանակություն ունեցան հայ գրականության համար: Այդ հոդվա-  
ծի առիթով ասպարեզ հանվեց «ազգային առանձնահատկությունների խտաց-  
ման տեսությունը՝ իբրև Ե. Զարենցի, Ա. Բակոնցի և մյուսների դավանանք:

Ազգային ձեփ բանավեճը այնքան սուր կերպարանք ատացավ, որ դար-  
ձավ քաղաքական մեղադրանքների գլխավոր շարժառիթը:

✓ Դեռ մինչև Հայաստանի գրողների առաջին համագումարը, ✓ 1934 թ.  
Հուլիսի 21-ին հրապարակային զեկուցում կարդաց Ա. Բակոնցը «Տեղական  
նացիոնալիզմի մի քանի արտահայտությունները մեր գրականության մեջ»  
թեմայով, ուր «դատապարտվում էին» իր և մյուսների «ազգայնական սխալ-  
ները»: Բակոնցի զեկուցման առիթիվ Գ. Մահարին հանդես եկավ «Խոսում է  
Ակսել Բակոնցը» ուսպիկով, ուր նա ևս «միանում» էր ինքնադատապարտ-  
մանը:

Նման խոսակցություններ եղան նաև համագումարում, որը, ինչպես նշեց  
Զարենցը, ընթանում էր սխալ հունով՝ ինքնաձադկման:

Այսուամենայնիվ, ազգային ձեփ շուրջը եղած վեճերում քաղաքական շեշ-  
տից բացի ասպարեզ հանվեցին նաև ստեղծագործական-տեսական այնպիսի  
ըմբռնումներ, որոնք մերժագրանական հետաքրքրություն են ներկայացնում  
հարցադրման և հարցերի պատասխանի տեսակետից:

Մի շարք ինքնատիպ ձեւակերպումներ տեղ գտան Դ. Դեմիրճյանի հոդ-  
վածներում (ինչպես՝ «ազգային ձեփ ֆարբիկաներում շեն ստեղծում»): Հար-  
ցերի ավելի լայն ու խոր դրվագքով աշքի ընկավ Գրողների Միության Կազմ-  
կոմիտեին և «Գրական թերթի» խմբագրությանը հղված եղիշե Զարենցի «Բաց  
նամակը», որը թեև գրվել էր «ինքնապաշտպանական» նպատակներով, սա-  
կայն վերաճեց գեղագիտական տրակտատի: «Բաց նամակը», թեև գրության  
օրերին շտպագրվեց<sup>42</sup>, սակայն նրա հիմնական դրույթները հայտնի էին գրա-  
կան շրջանակներին:

✓ Պաշտպանելով Մ. Արմենի սահմանումը, Ե. Զարենցը տվեց ազգային  
ձեփ և բովանդակության վերին աստիճանի կուռ հետևյալ բանաձեռ. «Ազգա-  
յին ձեփ գրականության մեջ հանդում է ոչ այլ ինչիվ, եթե ոչ բովանդակության  
ուսալիստական կոնկրետ դրսնորման... Ակսել պարզ ասած՝ ազգային ձեփ  
դրականության մեջ ոչ այլ ինչ է, եթե ոչ բովանդակության այնպիսի դրսնո-  
րում, եթե հեղինակի լեզվառնը, նկարագրված մարդկանց և վայրերի ընդհա-  
նուր կոլորիտը աղեկված է տվյալ ազգային միջավայրին, բնորոշում է՝ տրվ-

յալ ազգային միջավայրի այն հատկանշական կողմերը, որոնք բնորոշ են միմիայն այդ ազգային միջավայրի համար և իբրև ձև տարբերվում են բովանդակությամբ նման բոլոր մյուս միջավայրերից»<sup>43:</sup>

Մ. Արմենի հոդվածը հայ գրական միջավայրում ստեղծեց վերին աստիճանի շիկացած մթնոլորտ, խթանեց խմբակային պայքարի ուժեղացմանը: ✓ Հայաստանի գրողների առաջին համագումարը (1934, 1—5-օգոստոսի) կայացավ նախահամագումարյան սուր բանավեճերից և քննարկումներից հետո: ✓

Այդ բանավեճերը իրենց բուռն շարժունակությամբ ասպարեզ հանեցին կենսական նշանակության մի շարք խնդիրներ, ինչպես գրական լեզվի զարգացման, ազգային ձևի և սոցիալիստական բոլանդակության հարաբերության դրվածքը, «տեղական նացիոնալիզմի արտահայտությունները գրականության մեջ» և այլն: ✓

Սյու խնդիրները, իհարկե, դյուրամատշելի չեին քննարկումների համար, ուր հաճախ դեր էին խաղում անձնական կրեերը, հուզական մոտիվները, վարչարարական հրահանգավորումները, հարցերի գոեհիկ-սոցիոլոգիական խեղաթյուրումները: Այսուամենայնիվ, նախահամագումարյան բուռն իրադարձերից հետո, համագումարն անցավ համեմատաբար խաղաղ իրադրության մեջ: Այստեղ դեր խաղաց Հայաստանի կուսակցության կենտրոնի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի ճառը, որը գնահատում էր հայ գրողների «լուրջ նվաճումները» գեղարվեստական նոր բնագծերը նվաճելիս: Ա. Խանջյանը անդրադարձավ նաև գրականության զարգացման թերություններին ու թուլություններին, մթնոլորտի բարելավման խնդիրներին և այլն:

Բնականաբար, համագումարի հուետորների ելույթների բովանդակության մեջ առաջին տեղը տրվում էր «սոցիալիստական պրակտիկայի» արտացոլման՝ իբրև գրականության սոցիալիստական որակի նախապայմանի, խնդրին: Համագումարի ճառերի սղագրությունները և լրագրային հրապարակումները վկայում են արծարծված խնդիրների բազմազանությունը: Արդիական թեմատիկայի առանցքային խնդրի բազմակողմանի մեկնաբանություններից բացի լայն խոսակցության նյութ դարձան գրական ժանրերի և ոճերի հարստության, գրական լեզվի ճակատագրի, ազգային մշակույթի դեմոկրատական ավանդների քննադատական յուրացման, գրական նախասիրությունների, ապա նաև պրոլետարական ինտերնացիոնալիզմի՝ սովետական գրականության ոգեկան շաղախի, խնդիրները:

Համագումարում սուր քննադատություն ծավալվեց «ձախության» շոայլությունների, մասնավորապես գրական քննադատության դեմ, որը տեսական անբավարար զինվածության և պրոֆեսիոնալ շածր պատրաստականության պատճառով հաճախ գեղարվեստական երկերի խոր, հավասարակշուկած վերլուծությունները փոխարինում էր «պիտակավորումներով», անձնական կըրքերին հենվող գնահատականներով, տեսական անգրագիտությամբ: Թեև համագումարում նույնպես արտահայտվեցին «կրքերը» և «բարքերը», սակայն գրական կյանքի ընդհանուր գույնը թվացյալ հանգստությունն էր: Այդ տրամադրությամբ էլ հայ գրողների պատվիրակությունը մասնակցեց գրողների համամիութենական առաջին համագումարին:

Սովետական գրողների համամիութենական առաջին համագումարի (1934 թ. օգոստոս) թացման խոսքում Մաքսիմ Գորկին իբրև նշանակալից երևությ ընդգծեց այն փաստը, որ «Խորհուրդների երկրի պրոլետարիատի

առաջ, բոլոր երկրների հեղափոխական պրոլետարիատի առաջ և ամբողջ աշխարհի մեջ բարեկամ գրողների առաջ մեր բոլոր հանրապետությունների բազմացնեղ, բազմազգ գրականությունը հանդես է գալիս իրեւ միասնական ամբողջություն։

Սովետական գրողների համամիութենական առաջին համագումարը և գաղափարական-դեղագիտական, և կազմակերպչական առումներով էական նշանաձող էր երկրի գրական կյանքում։

Համագումարի վիթխարի, անանց նշանակությունը նախ և առաջ արտահայտվեց գրողների հիմնական դանդաղածի գաղափարական միասնության փաստով։

Տարբեր հասակի, տարբեր ազգության, տարբեր կենսագրության և կենսափորձի գրողները խորապես գիտակցեցին իրենց ստեղծագործությունը սոցիալիզմի շինարարությանը ծառայեցնելու անհրաժեշտությունը։

Գաղափարական միասնության, հայացքների ընդհանրության հիմքի վրա էլ համագումարում ձեւվորվեց գրողների կազմակերպչական համախմբվածությունը, որը բխում էր 1932 թ. ապրիլի 23-ի որոշման ոգուց։

Նորաստեղծ սովետական գրողների միությունը ոչ թե ավանդական «գրական միավորում» էր, կամ «նյութանպաստ ընկերություն», այլ ստեղծագործական դավանակից-համախոհների միություն, ուր նույն դրոշի տակ հանդես էին գալիս և՝ նախկին «պրոլետարական գրողները», և «գյուղացիական գրողները», և «ուղեկիցները»։

Եղրափակիչ խոսքում Մ. Գորկին այդ փաստը գնահատեց իրեւ «բոլշևիկամի հաղթանակ գրողների համագումարում»։

Համագումարի պատգամավորները առանձին հպարտությամբ էին նշում գաղափարական միասնության հրեւութը, դա համարելով գրականության լենինյան կուսակցականության ծրագրերի իրագործումը։

Համագումարի պատմական նշանակությունը արտահայտվեց նաև նրա առաջարած հեռանկարային ծրագրերում։ Դրանց մեջ առաջին հերթին ուշադրության արժանացավ Սովետական Միության ազգային գրականությունների համեմատական ուսումնասիրման խնդիրը։

Թեև ազգային գրականություններին նվիրված զեկուցումները, այդ շարքում նաև հայ գրականության մասին Դ. Սիմոնյանի հարակից զեկուցումը զգալի շափով տառապում էին գոեհիկ-սոցիոլոգիական դրույթներով, սիեմատիզմով, պատմության ծուռ մեկնաբանություններով, այդուամենայնիվ շատ հուետորների ելույթներում իբրև լեյտոնուրիվ հնչում էր ազգային գրականությունների փոխադարձ ազդեցությունների գործողության դաշտը լայնացնելու մոտիվը։

Այս առումով տեսական և գործնական խոր հետաքրքրություն էր ներկայացնում եղիշե Զարենցի հառը։

Համագումարի հեռանկարային դասերից մյուս սոցիալիստական ռեալիզմի տեսության զինարանի հարստացումն էր նոր դիտարկումներով։ Դրանց մեջ առաջին հերթին ուշագրավ էր գեղարվեստական ձեերի բազմազանության տեսակետը, որի մասին իրենց մտորումները ասպարեզ հանեցին բազմազգ սովետական գրականության վարպետները, այդ թվում նաև Ակսել Բակոնցը։

Համագումարի էական դասերի մեջ էր նաև ժողովրդի կյանքի գլխավոր էջերի գեղարվեստական խոր թափանցման խնդիրը։ Դա էր, նախ և առաջ, Մ. Գորկու զեկուցման պաթուր։ Գորկին ասաց, որ «Մեր գրքերում իբրև գլխա-

վոր հերոս մենք պետք է ընտրենք աշխատանքը, ասել է թե աշխատանքային դործողություններով կազմակերպվող մարդուն... Մենք պարտավոր ենք սովորել գնահատել աշխատանքն իրեւ ստեղծագործություն»:

Այս մտքի շարունակությունն է Մ. Դորկու մյուս դրույթը. «Սոցիալիստական ռեալիզմը հաստատում է կեցությունն իրեւ ստեղծագործություն, որի նպատակն է մարդու թանկագին տնհատական հատկությունների անդրադրում զարգացում՝ հանուն բնության ուժերի գեմ հաղթանակի, հանուն երկրի վշա ապրելու մեծ երջանկության, այն երկրի, որը իր պահանջմունքների աճմանը համապատասխան նա ցանկանում է վերակառուցել իրեւ մի ընտանիքի մեջ համախմբված մարդկության ապաստարան»:

Հայ գրողների պատվիրակությունից ճառեր արտասանեցին Ե. Զարենցը, Ա. Բակոնցը, Դ. Դեմիրճյանը, Ն. Զարյանը, իսկ Շիրվանզադեն և Զապել Եսայանը հանդես եկան ողջուններով, առաջինը՝ սովետական իշխանության կողմն անցած հին մտավորականների, երկրորդը՝ արտասահմանյան հայ զանգվածների անունից:

Հայ սովետական գրականությունն արդեն նվաճում էր գեղարվեստականության նոր բնագծեր, սակայն «անհատի պաշտամունքի» հետ կապված անցքերը ժամանակավորապես խափանեցին ստեղծագործության վերելքը:

Անտարակույս, 1935—40 «անվերնագիր թվականներին» ևս ստեղծվեցին գեղարվեստական երկիր, սակայն ստեղծագործության հիմնորոշ որակը հակագեղարվեստական ներբողագրությունն էր՝ «տիեզերական անհատի» անսանձ գովաբանությունը:

Այս տարիներին «ժողովրդական ինքնագործունեության» անվան տակ ասպարեզը գրավել էին «քաղաքական աշուղները»:

## 12

Ազգային մշակութի շինարարության գլխավոր թեմաների համակարգում առանձնակի դիրք էր գրավում գրական լեզվի զարգացման խնդիրը:

Մինչ 20-ական թվականների ասովիսներում գրեթե աշքաթող էին արվում գրական լեզվի աղբյուրների և բնույթի լսյն խնդիրները՝ դրանք փոխարինվելով արտահայտման ոճի, պատկերավորության «նեղ» առաջադրություններով, 30-ական թվականներին, ազգային ինքնագիտակցության վերելքի թելագրությամբ, առաջնահերթ կարևորություն է ստանում գրական լեզվի ճակատագիրը:

Տասնամյակի հենց սկզբից իրար են հաջորդում գրական լեզվի զարգացմանը նվիրված ասովիսները, ի հայտ բերելով տարբեր դիրքորոշումներ և ըմբռնումներ:

Գրական լեզվի շինարարության խնդիրներին ավելի մեծ շափով անդրադառնում են Հայաստանի գրողների համագումարի նախօրյակին և համագումարի բուն ընթացքում: Բունը վիճաբանությունների դրոշմն էին կրում 1934 թ. Հունիս ամսին կայացած ասովիսները՝ դիսպուտները: Հունիսի 8—10-ը կայացած դիսպուտում քննարկվել է պոեզիայի լեզվի խնդիրը (զեկուցող՝ Վահրամ Թերդիրացյան), Հունիսի 11—13-ը կայացած դիսպուտում՝ գրական լեզվի շինարարության խնդիրը (գեկուցող՝ Դերենիկ Դեմիրճյան), իսկ Հունիսի 28-ին

Ե. Զարենցը զեկուցել է «Մեր գրական լեզվի զարգացման տեսդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն» թեմայով:

Հնդարձակ ասուլիսներից բացի կայացել են նաև փոքր տրամաշափի քննարկումներ՝ նվիրված գեղարվեստական առանձին երկերի լեզվի վերլուծաթյանը, գրական վարպետության հարցերին՝ կապված Մ. Դորկու լեզվի մասին հրապարակած հոդվածների հետ:

Իրենց «լեզվական մտածմոնքները» ասպարեզ հանելիս հայ սովետական գրողները որոշ առումով շարունակում էին դարասկզբի հայ իրականության մեջ սկսված խոսակցությունները գրական լեզվի զարգացման ուղիների վերաբերյալ, մասնավորապես Հովհաննես Շովհ։ Թումանյանի՝ ազգային դրոշմ ունեցող լեզվին վերաբերող հայացքները:

Գրական լեզվի շինարարության առաջին գծի վրա էին Ա. Բակոնցի և Ե. Զարենցի պատկերացումները, որոնք թեև երբեմն հանդիպում էին գրական-լեզվաբանական միջավայրի դիմադրություններին և պիտակավորմանը (օրինակ, Ն. Զարյանի «Գրական լեզվի նացիոնալիստական աղավաղումների զեմ» գեկուցումը՝ 1936-ին), սակայն արդյունավետ նշանակություն ունեցան գրական լեզվի ճակատագրի համար։ Դա այն դեպքում, երբ Բակոնցը և Զարենցը որոշ սկզբունքային հարցերում հակառակ դիրքերի վրա էին. օրինակ, Հովհաննես Շովհ։ Թումանյանի լեզվի գնահատության և արդիական նշանակության։ Մինչ Բակոնցը զարգացման հեռանկարը համարում էր թումանյանի լեզվի ժողովրդական ուղղությունը, Զարենցը չէր բաժանում այդ տեսակետը։

Ա. Բակոնցը դավանում էր կենտրոնախույս լեզվի, ասել է թե՝ գավառաբարբառների ամբողջ հարստությունը, նրա կենսունակ, առողջ, իմաստում տարբերը դեպի գրական լեզվի շրադացը ուղղելու սկզբունքը, որն իր էությամբ Հովհ. Թումանյանի լեզվական դավանանքի շարունակությունն էր պատմական նոր ժամանակներում։

Հովհ. Թումանյանը, բնակուն, կենդանի հայոց լեզվի օրհներգուն էր, այն լեզվի, որը հենվում է ժողովրդական բանավոր խոսքի նյութին՝ իսպառ մերժելով գրքային բառակազմությունները և ազգային լեզվի օրենքներին խորթ ներմուծումները։ «Լեզվի գործին հաստատ ազգային դրոշմ ու հիմք տալու համար պետք է հիմնվել ժողովրդի կենդանի լեզվի, նրա ոգու ու օրենքների վրա»<sup>44</sup>։

Նույն դավանանքին էր նաև Բակոնցը, որն անգամ գրոց՝ գրաբարյան բառաձերի կիրառությունը ենթադրում էր ոչ այլ կերպ, եթե դրանց ժողովրդական գունավորումով, այսինքն՝ ժողովրդի բանավոր խոսքի մեջ պահպանված գրաբարյան բառ ու ձևերի պեղումներով։

Այդ դավանանքին էր նաև Ստ. Զորյանը, նախազգուշացնելով, սակայն, դավառաբարբառի պատճենումներից ու գոեհացումներից, գրվածքները «վաներենով», «լոռիերենով», «սասուներենով» փոխարինելու շեշտերից։

Դ. Դեմիրճյանը իր «լեզվական դիրքերը» ասպարեզ հանելիս հակված էր և դեպի բարբառները («շափակոր») և դեպի գրոց լեզուն (առավելապես)։

Գրական լեզվի շինարարությունը գրավում էր նաև լեզվաբաններին (լեզվական ասուլիսներին եռանդով մասնակցում էր Գուրգեն Սևակը)։

Այս հարցում ուրույն հայացքներ ուներ Ե. Զարենցը։

Ազգային գրական լեզվի ճակատագրի համար Զարենցը, եթե կարելի է այսպես ասել, առանցքային խնդիր էր համարում կենտրոնաձիգ լեզվի ճանապարհը, ուր բացառվում են բարբառային լեզվառձերի թափանցումները։

Իր հիմնական միտումներով՝ Զարենցի «լեզվաշխարհությունը» հակված էր գեպի Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության դրույթները, միայն այն տարբերությամբ, որ Զարենցը ամբողջ լայնքով առաջ էր քաշում գեղարվեստական լեզվի էական տարրերի՝ ազգային մտածողության, շարահյուսման ազգային կերպերի ու ոճաեղանակների կիրառության խընդիրները:

Հայոց գրական լեզվի զարգացման ուղիների իր պատկերացումները թակունցը արտահայտեց «Կյորես» բրոնիկոնի ժողովրդական լեզվի մեծարանքով՝ «Ի՞նչ շքնաղ լեզու էր կյորեսերենը... Չուտեիր և շխմեիր, այլ միայն այդ լեզվով խոսեիր կամ լսեիր, թե ինչպես քաղցր և նուրբ հնչուններով խոսում էր լվացարարուհի Մինան, ինչպես էր ծոր տալիս, ասես ոչ թե խոսում, այլ ճախարակի առաջ բարակ երգ էր ասում և բառերը նստում էին, ինչպես փափուկ մալանչներ։ Հապա Դոլուն Կարին... Կունում էր սառն աղբյուրի վրա, կուշտ խմում և ջուրը բեղերից կաթկթելով ասում էր. խովա՛յ... և այնպես էր ասում, որ եթե աղբյուրը նորահարս լիներ, ամոթից քողը կքաշեր երեսին... խսկ Աթա ապերը երբ բարկանար, այնպիսի մի ըմբո՛ կասեր, որ Մեղրաքերծը կղրնգար...»

Գորիսի ոչ մի փողոցում լեզուն այնքան վճիռ չէր, որքան Հին ճանապարհի վրա։ Այդ լեզու չէր, այլ կարոտ, տիրություն, զայրույթ։ Այդպես Ղաթրինի ձորում երգում էր Կաքավը և մինում կարկաշում էր Ցուրտ աղբյուրը...»։

«Թեղեցիկ և հնչեղ էր Կյորեսի լեզուն,—նա մի շքնաղ գորգ էր, նախշերով և վարդ ծաղիկներով մի հին գորգ, ինչպես Մինայի աղջիկ ծամանակ գործած գորգը... ինչքան հնանում և մաշվում էր, այնքան շքեղանում էին գորգի գույները և պատահում էր, որ Մինան, երբ այդ հին գորգը տանում էր գետը և լվանում էր,—Մինան լաց էր լինում և նրա հետ լաց էր լինում Կյորեսի լեզուն...»։

Զարենցը իր Զոնի մեջ փառաբանում էր Հայոց լեզվի հզորությունը։

Մեր լեզուն ճկում է ու բարբարս,  
Առնական է, կոպիտ, բայց միևնույն պահին,  
Պայծառ է նա, որպես մշտառորբար փարսս  
Վաղված հրով անշեց, դարերում հին...—  
Եղ վարպետներ խոնարհ ու հանձարեղ,—  
Հղկել են այն դարեր, որպես մարմար,  
Իղ փայլել է նա մերթ, որպես բյուրեղ,  
Մերթ կոպտացել, ինչպես լեռնային քար,  
Եղ միշտ պահել է նա իր կենդանի սպին...»

### 13

Սովետական գրականությունը և արվեստը՝ բոլոր ճյուղերով, սոցիալիստական ուսամբեկման մեթոդի որոնումներով, բնականաբար, բախվում են ուսամբեկմի էությանը խորթ երևույթների, ինչպիսիք էին ֆորմալիզմի ու նատուրալիզմի առանձին արտահայտությունները։

1936 թ., այն բանից հետո, երբ «Պրավդան» տպագրեց ֆորմալիզմը և նատուրալիզմը դատապարտող խմբագրական-հրահանգչական հոդվածների շարքը՝ «Նաբլոնի և պարզության մասին», «Ֆորմալիստական ծամածությունները արվեստի մեջ», «Կակաֆոնիան ճարտարապետության մեջ», «Խոպանը կինոյի մեջ», «Շփոթ՝ երաժշտության փոխարեն», «Բալետային ֆալշ»,

հասարակական օրակարգի գլխավոր կետը դարձան «Ֆորմալիստ-նատուրալիստների» քննադատությունները, ապա և ինքնածաղկումները:

Մեզանում քննադատական առավել եռանդով աշքի ընկավ «Խորհրդային արվեստ» շարաթաթերթը (խմբագիր Ազատ Վշտունի), որի էջերում «Հայտնի դարձան» երաժշտության, թատրոնի, նկարչության, ճարտարապետության ասպարեզի «ֆորմալիստ-նատուրալիստները»:

Ոչ հեռու անցյալի ալեկոծություններից հետո գրական միջավայրը ավելի քան խաղաղ պայմաններում անցկացրեց հերթական կամպանիան: Դրան, ըստ Երևույթին, նպաստեց «Պրավդայում» Մ. Կոլցովի տպագրած «Խարուսիկ թեթևություն» ֆելիտոնը, որը կանխում էր շպատճառաբանված քննադատության և ինքնախարազանումների խորացումը:

Մ. Կոլցովը գրում էր. «Ֆորմալիզմի դեմ ծավալված պայքարը տեղադր դեմ է առնում այսպես կոչված հումքի հարցերին, կամ այլ խոսքով՝ ֆորմալիստների պակասությանը: Մանավանդ գավառում: Քիչ են ֆորմալիստներ Ուրալում, Ազով-Սևծովյան երկրում, Չուվաշիայում: Ֆորմալիստներ ճարելու գործը դժվար է նաև Ուզբեկստանում, Հայաստանում և նույնիսկ այնպիսի խոշոր կենտրոնում, ինչպիսին է Բաքուն...»<sup>45</sup>:

Մ. Կոլցովի հոդվածը սթափեցրեց տեղական «որսագողերին»:

## 14

1920 թ. պատմական շրջադարձից սկսած հայ գրականությունը զարգանում է սովետական միասնական գրականության առաջ ծառացած խնդիրների շրջանակներում:

«Ազգային մեկուսացվածության» հաղթահարման այն ընթացքը, որ դարձել էր դարասկզբի հայ գրականության զարգացման նշանաբանն ու նշանը, հեղափոխական իրադրության մեջ գտնում է իր նոր բանաձեռ՝ գրականությունների փոխադարձ ազդեցությունների ու փոխադարձ հարստացումների օրինաշափությունը:

Բնականաբար, նորագույն գրականության ուղիները որոնելիս առաջին հերթին ուշադրության են արժանանում ոռւս գրականության «ուղիներն ու շահիղները», որոնք ամենալայն արձագանքն են գտնում հայ իրականության մեջ: Ուռւս զասական գրականության «Հայկական արձագանքները», մասնավարապես XIX հարյուրամյակից եկող վաղեմի ավանդները շարունակվում են նախ և առաջ ոռւս գրականության նորույթների թարգմանություններով և դրանց գնահատություններով:

Մավավում է թարգմանչական բուռն շարժում. առաջին հերթին թարգմանվում են այն գրվածքները, որոնք արտահայտում էին գրականության սոցիալիստական որակը՝ Վ. Մայակովսկու, Ա. Բենկի, Դ. Բեղնու, Ս. Եսենինի, Ն. Տիխոնովի բանաստեղծությունները, Մ. Գորկու, Ա. Սերաֆիմովիչի, Դ. Ֆուրմանովի, Ա. Ֆադեևի, Լ. Սեյֆուլինայի արձակը, Մ. Դորկու, Ա. Լունաշարսկու, Կիրշոնի, Աֆինոգենովի, Ն. Պոգոդինի պիեսները և այլն:

Թարգմանական գրականությունը պարբերաբար գրախոսվում էր մամուլում՝ ներկայացվելով իրու գրականության սոցիալիստական որակի նմուշներ:

Հայ սովետական գրականության գաղափարական և գեղարվեստական սկզբունքների ձեւալորման գործում ոռւս գրականության խաղացած դերի մեջ անտարակուսկիորեն առաջին տեղում են Մաքսիմ Գորկու մի շարք կարևորագույն մտքերը:

Դեռ անցյալ դարի 90-ական թվականներից անմիջական կապեր հաստատելով հայ իրականության գործիչների հետ, իսկ դարասկզբին գործնական տեսք տալով հայ ժողովրդի հետ ունեցած վաղեմի բարեկամությանը (դրա առարկայական արտահայտությունն էր 1916-ին հրատարակած «Հայ գրականության ժողովածուն»), Մ. Գորկին այնուհետև ևս մասնակցություն է բերում հայ գրական «մթնոլորտը» որոշակի տեսանկյան տակ վերափոխելու գործին:

Այսպես, 1928 թ. «Դրական դիրքերում» ամսագրի հրապարակումից գրական լայն հասարակայնությանը հայտնի դարձավ Մ. Գորկու գրած նամակը Ղարաբիլիսա՝ Տիգրան Հախումյանին, ուր բացառիկ թափանցումով ոռւս մեծ գրողը կանխորոշում է ճշմարիտ գրականության դիրքերը: Նամակում Մ. Գորկին՝ Ա. Պեշկովը, գրում է. «Եհարկե, դուք պետք է գրեք և շատ, բայց նույնքան անհրաժեշտ է Զեզ համար ավելի մոտ կանգնել կյանքին, անմիջականորեն օգտվել նրա ներշնչումներից, կերպարներից, պատկերներից, զգալ նրա իրթիոք և նրա միսն ու արյունը: Մի կենտրոնացեք Զեզ վրա, այլ աշխարհը կենտրոնացրեք Զեր մեզ: Կյանքի մեջ շատ փույն կա, բայց կա և մեղք, — գտեք այդ մեղքը: Մի լինեք լոկ քնարերգու, մի փակեք Զեր հոգին Զեր իսկ կառուցած վանդակի մեջ, համարձակություն ունեցեք լինելու և՛ երգիծաբան, և՛ պարզապես ուրախ մարդ: Պետք է ամեն բան վերցնել և ամեն ան տալ կյանքին, մարդկանց: Բանաստեղծների մեծամասնությունը կարծես թե անմարդաբնակ կղզիների վրա ապրելիս լինի, կյանքից և նրա քառսից դուրս: Դա, իհարկե, ավելի հեշտ է և հարմար, քան թե իրականության քառսի մեջ ապրելը, սակայն դա նշանակում է ինքն իրեն կողոպտել: Զպետք է Ռոբինզոն լինել, — շի հարկավոր: Պետք է ապրել, աղմկել, խնդալ, հայնոյել, սիրել: Պետք է որոնել այն, ինչ որ գեռնս չի գտնված՝ նոր խոսքը, հանգը, պատկերը. բանաստեղծը աշխարհիս արձագանքն է և ոչ միայն իր հոգու դայակը»<sup>46</sup>:

Գրականությունը դեպի կյանքի ժխորը կոչող «խորհուրդները», անկասկած, դրական նշանակություն ունեցան հայ գրականության «ոռքինզոնոդաները» կենդանի մարդկանց իրական ապրումներով ողողելու, կյանքի հոգսերին արձագանքելու, նոր գեղարվեստական խոսքը կյանքի խամարաններում որոնելու մեջ:

Հասարակական լայն ուշադրության առարկա դարձավ 1931 թ. «Իզվեստիա» թերթում Մ. Գորկու տպագրած հոդվածը Նար-Դոսի «Մահը» վեպի ուղերեն թարգմանության մասին:

Այդ հոդվածը ուշագրավ է հատկապես գրականության ակտիվ, կյանքը վերափոխող հերոսի պահանջով, այն հերոսի, որը պետք է լիներ հակադրությունը XIX դարի միջազգային գրականության մեջ լայն շրջանառության մեջ գտնվող անվճուական հերոսի բազմաթիվ տարրերակների: Գորկին գրում է. «Մահը» հայ գրող Նար-Դոսի վեպն է, գրված անցյալ դարի 90-ական թվականներին: Այդ գրվածքի նախարանում հանձնարարված է, որ նրա հերոսը թույլ զարգացած հասարակական իմպուլսների տեր մարդ է, կամազուրկ, անզոր, անգործունյա մի ջղագար, որը գրադված է ինքնավերլուծությամբ, տառապում է ինքնասիրությունից, կասկածամտությունից, երկշոտությունից,

անվճռականությունից: Շատ լավ ծանոթ մի դեմք: Արևմուտքի և մեր գրականությունը, XIX դարի 20-ական թվականներից սկսել է նկարել այս հիմանալի անձավորության դիմանկարները: Առաջինը, որին առանձնապես հաջողվել է այս «անդավանանք» մարդու դիմանկարը, Ստենդալն է: Նրա օրինակին հետեւցին Եվրոպայի և Ռուսաստանի տասնյակ խոշորագույն գրողներ: Ամբողջ մի հարյուրամյակի ընթացքում գրականության գլխավոր, փայլում կերպով մշակված թեման էլ հենց այդ երիտասարդի կյանքի և արկածների նկարագրությունն է, մի երիտասարդի, որի «Եսը» նվազ կամ առավել կերպով ծագալվել, հիպերտրոֆիայի է ենթարկվել և որը, տեղ չգտնելով քաղքենիական կյանքի պայմաններում, իր մեջ ոչ ուժ, ոչ էլ ցանկություն է գտնում փոխելու այդ պայմանները:

Նար-Դոսի վեպը ցույց է տալիս, որ Հայաստանի գրականությունն էլ է ժամանթ այդ վճար տիպին»<sup>47</sup>:

Մ. Գորկու հոդվածի մեջ հատկապես կարևորվում էր իր «նեղ» աշխարհի մեջ խորասովված կամազուրկ հերոսին ուժեղ, կամային հերոսով փոխարինելու դրվագքը, հասարակական կյանքի վրա ազդեցություն թողնող ժամանակի հերոսի աեսանկյունը:

Թեև բավականաշափ ուշացումով հրապարակվեց Մ. Գորկու կարծիքը Մ. Արագու «Ընկեր Մուկուզը» պատմվածքի մասին, սակայն գրական շրջանակներում հայտնի էր «Советская страна» գեղարվեստական ալմանախի խոմբագրական հանձնաժողովի անդամներին Սորենտոյից (Խոտալիա) 1929-ին գրած նամակը, ուր ասված է. «Բացառությամբ Սովլիխաշվիլու և Արագու պատմվածքների, մնացած բոլորը այնպես են գրված, ասես թե դրանց հեղինակները XIX դարի 70-ական թվականների օդով են շնչում, իսկ այն, որ օրացույցը ցույց է տալիս XX դարի երկրորդ քառորդը և Հոկտեմբերյան հեղափոխության 12-րդ տարին, հեղինակներին ոչինչ հայտնի չէ»<sup>48</sup>:

Մաքսիմ Գորկու նպաստը հայ գրականության դիմանկարի ձևագործման մեջ մեծացավ 1928-ին Հայաստանում կատարած ճանապարհորդությունից հետո:

Մի քանի օր ծանոթանալով Հայաստանի տնտեսական ու մշակութային կյանքի վիթխարի կերպարանափոխություններին, Մ. Գորկին իր տպավորությունները ամփոփեց ճանապարհորդական նոթերում, ուր հետեւյալ խոսքով է բնութագրված հայ ժողովրդի կյանքի պատմական նոր գործողությունը՝ «ի՞նչքան գեղեցկություն է հարուցել հեղափոխական կենարար փոթորիկը»<sup>49</sup>:

Հուշագիրների (Ստ. Զորյան, Վ. Ալազան) վկայությամբ Մ. Գորկին իր զրուցների ընթացքում հայ գրողների ուշադրությունը հրավիրում էր հենց այդ կերպարանափոխությունները գրականության արտացոլման նյութ դարձնելու խնդրի վրա, դրա մեջ նկատելով ազգային գրականության նոր հորիզոնների նվաճումը: Մ. Գորկու «բանագնացության» գլխավոր կետերից մեկը եղել է ժողովուրդների հոգեկան մերձեցման՝ գրականությունների փոխադարձ ճանաշման, խնդրը:

Այդ առթիվ նա գրել է. «Ապրել այնպես, ինչպես ապրել ենք մինչև հեղափոխությունը, անհնարին է: Այժմ ուրիշ պայմաններ են, ուրիշ է տերը և շատ լավ տեր է: Անհրաժեշտ է կուզտուրական բոլոր ուժերի միացում, որոնք ընթանում են նոր կուլտուրայի, նոր մարդու ճանապարհով և դրան հնարավոր է հասնել կոլեկտիվ աշխատանքով»<sup>50</sup>:

Հայ-ոռուսական գրական հարաբերությունների մեծ զատագովը՝ Վ. Բըրյուսովը ևս, ինչպես Մ. Դորկին, զարգացնում է ստեղծագործական կապերը Հայ մշակույթի գործիչների հետ:

Դեռ 1915—1916 աղետավոր թվականներին նպատակ դնելով «ոռուս ընթերցողի առջև բացել Հայաստանի բանաստեղծական աշխարհ», Վ. Բըրյուսովը իր խմբագրությամբ և ընդարձակ առաջարանով հրապարակեց «Ուզուա Արմենիա» ժողովածուն, Հայ գրականությունը դիտելով իրու «Թանկագին ավանդ հանուր մարդկության գանձարանում»: Այդ ժողովածուն պատրաստելու օրերի անձնվիրության ոգով Վ. Բըրյուսովը շարունակում է կապերը Հայ գրականության հետ: Դրա արտահայտությունն էին Ե. Զարենցի «Ամենապեմիս թարգմանությունը՝ 1923 թվականին, Հովհ. Թումանյանի մահվան առիթով գրած հոդված-մահախոսականը» («Կրասնա նիվա», 1923, № 4), և հետաքրքրությունները նոր մշակույթի ճակատագրով: Գնահատելով Հայ ժողովը դիմին և նրա մշակույթին Վ. Բըրյուսովի բերած մեծ ծառայությունները, Հայաստանի ժողովմիորհը նրան շնորհում է Հայաստանի ժողովրդական բանաստեղծի կոչում: Խորհրդանշական է այն փաստը, որ ոռուս բանաստեղծի ծննդյան 50-ամյակի հոբելյանական հանդեսում՝ 1924-ին, Հայ աշուղները կատարում են Սայաթ-Նովայի երգերը և ի նշան երախտագիտության՝ Վ. Բըրյուսովի ոտքերի առաջ են դնում Հայ ժողովրդական երաժշտական գործիք:

Հայ մշակույթի նոր դիմագծի ձևավորման գործում նշանակալից դեր է խաղում նաև Ա. Վ. Լունաշարսկին: Երկու անգամ գալով Հայաստան, մեկ՝ 1924 թվականին, մեկ՝ 1928-ին, զրուցներ բացելով Հայ մտավորականության հետ, Ա. Վ. Լունաշարսկին գեղարվեստի մարդկանց ուշադրությունը բևեռում է ազգային և միջազգային գծերի համարման՝ իրու գեղարվեստական առաջադիմության պայմանի վրա:

«Երեք օր Խորհրդային Հայաստանում» ճանապարհորդական նոթերում, Մ. Սարյանի գեղանկարչությանը նվիրված հոդվածում («Կրասնա հովե»), Հ. Հակոբյանի «Նոր առավոտ» ժողովածուի ոռուսերեն թարգմանության առաջարանում Լունաշարսկին Հայ գեղարվեստական միտքը կողմնորոշում է դեպի ժողովրդի կյանքի արտացոլում՝ ազգային գծերով ու գույներով: Հայ գրականության կողմնորոշումների մեջ առհասարակ նշանակալից դեր են խաղում Լունաշարսկու ընդհանուր մշակութաբանական հայացքները:

Ռուս քննադատական միտքը ևս անդրադառնում է Հայ գրականության նորություններին: Այս ասպարեզում տեմպերը, իշարկե, դանդաղ էին, այնքան դանդաղ, որ արժանանում էին անգամ ոռուս գրողների ինքնաքննադատությանը: Այդուամենայնիվ, 20—30-ական թվականներին տպագրվեցին միշտ շարք արժեքավոր քննադատական նյութեր Հայ գրականության վերաբերյալ:

Դրանց մեջ են «Երկիր նաիրի» վեպի ոռուսերեն թարգմանության գրախոսականները (Յու. Լիբիդինսկու, Վ. Կավերինի, Վ. Գոլցեկի և այլոց), նապուտովական Վ. Սուտիրինի «Օչերки Закавказской литературы», (1928) գիրքը, ուր տրվում է Ե. Զարենցի համամիութենական գնահատականը, Մ. Շահինյանի, Վ. Կիրապոտինի, Ս. Դորոդեկու հոդվածները, Հայ գրականության առաջին տասնօրյակի (1939) արձագանքները և այլն:

Ինչպես և պետք էր սպասել, Հայաստանը 20—30-ական թվականներին դառնում է ոռուս մի շարք գրողների ճանապարհորդական երթուղին: Առաջին գրող-ճանապարհորդը լինում է Նիկոլայ Տիխոնովը, որը իր տպագրությունները շարադրում է ճանապարհորդական նոթերում:

Այնուհետև Հայաստան են գալիս Օլգա Ֆորշը, Անդրեյ Բելին, Միխայիլ Գոլցովը, Աննա Ախմատովան, Խոսիֆ Մանդեշտամը և այլք:

20-ական թվականների վերջերից բացվում է հայ գրականության և մյուս ազգային գրականությունների մերձեցումների լայն հունը:

Դրա առաջին նշանակալից փաստերը հանդիսացան անդրկովկասյան հանրապետությունների՝ Վրաստանի, Աղբեջանի և Հայաստանի գրողների պատվիրակությունների փոխայցելությունները (շաբաթները) Թիֆլիսում, Բաքվում և Երևանում, որոնք վերածվեցին գրականությունների բարեկամության տոնահանդեսի: Միամյակ-տոնահանդեսին (1929) նախորդել էր հանրապետությունների պրոլետարական գրական շարժումներին վերաբերող ստեղծագործական հարցերի համատեղ քննարկումը՝ պրոլետարական գրողների անդրկովկասյան առաջին պլենումում (1928, Թիֆլիս), Երկրորդ պլենումը կայացագ Երևանում՝ 1930-ին: Աստիճանաբար հայ գրականությունը ընդլայնում է իր համամիութենական տարածման շառավիլները:

Ոչ միայն Աղբեջանում և Վրաստանում, այլև Ռուսականայում ձեռնամուխ են լինում հայ գրականության երկերի թարգմանությանը: Այդ գործի ակունքների մոտ կանգնած են Պավլո Տիշինան (որը հայ պոեզիայի նահապետի՝ Հովհաննիսյանի սրտակից բարեկամն էր) և Մաքսիմ Ռիլսկին: Հետագայում (1934), երբ Հայաստան է այցելում ուկրաինացի գրողների պատվիրակությունը, թարգմանական գործի մեջ են ներգրավվում Մ. Բաժանը, Լ. Պերվոմայսկին և ուրիշներ:

Եթե 30-ական թվականներին հայ սովետական գրողներից ստհմանափակ թվով գործեր են թարգմանվում ոռուսերեն՝ առանձին բանաստեղծություններ, Հ. Հակոբյանի «Խօօօ սրբ» ժողովածուն և Յ. Զարենցի «Երկիր Նախրի» վեպը (ոռուս ընթերցողին Զարենցը նախ և առաջ հայտնի է դարձել իբրև արձակագիր), ապա 30-ական թվականներին միանգամից լայն թափ է ստանում թարգմանչական գործը:

Այդ գործին մեծապես նպաստում են ոռուս գրողների ստեղծագործական բրիգանձների պարբերական այցելությունները Հայաստան: 1933 թ. բրիգանձի կազմում էին Վ. Կավերինը, Ա. Մալիշկինը, Ա. Գատովը, 1935 թ. բրիգանձի՝ Պ. Անտոկոլսկին, Վ. Գոլցելը, Վ. Կիրպոտինը և այլք: Ռուսերեն թարգմանությամբ լույս են տեսնում Ալ. Շիրվանզադեի, Ա. Բակոնցի, Ստ. Զորյանի, Գ. Մահարու, Մ. Արմենի արձակ երկերը, «Հայաստանի բանաստեղծները» («Поэты Армении»—1934) ժողովածում՝ Ա. Գատովի թարգմանությամբ, «Հայ պոեզիայի անթոլոգիան» (Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը»—1940), որը Վ. Բրյուսովի ժողովածուից հետո երկրորդ մեծադիր գիրքն էր հայ բազմադարյան պոեզիայի ոռուսերեն թարգմանության ասպարեզում:

Ռուս-բանաստեղծ-թարգմանիչները՝ Պ. Անտոկոլսկին, Վ. Ռոժենստելլիսկին, Մ. Սվետլովը, Ա. Գատովը և մյուսները ներշնչվում են նաև հայկական մոտիվներով: Հայաստանյան անմիջական շփումներից ծնունդ առավ Խոսիֆ Մանեղլշտամի ստեղծագործության պսակը՝ բանաստեղծությունների «Հայաստան» շարքը («Новый мир», 1931, № 3, «Литературная газета», 1934, 18 դեկաբրյ): «Հայկական թեման» տեղ է գտնում նաև նիկոլայ Տիխոնովի, Խվան Կատակի, Զազուբրինի և այլոց բանաստեղծություններում ու արձակում:

Հայկական մոտիվները արձագանք են գտնում նաև այլազգի գրողների՝ Պ. Տիշինայի, Լ. Պերվոմայսկու, Տիցիան Տաբիձեի և ուրիշների բանաստեղծություններում:

**S. Տաբիձեն Հայաստանին նվիրված շարքի մեջ արտահայտում է ազգերի սոցիալիստական բարեկամության գաղափարը, գրելով նշանակալից տողեր՝**

Выходит, гостили в чужой стороне Я,

Чужих не нашел Я, как ни странно,

Слушал зато я эпос Чаренца,

Был Сарьяном Я очарован...<sup>51</sup>

Հայ ժողովրդի կյանքին ու մշակույթին ծանոթանալու նպատակով 20—30-ական թվականներին Հայաստան են գալիս նաև արտասահմանյան հեղափոխական մի շարք գրողներ, ինչպես Գերմանիայի ականավոր բանաստեղծներ Խոհաննես Բենիերը և Լյուդվիգ Ռեննը, Հոնդարացի արծակագիր, «Ծիսսան բոցերի մեջ» վեպի հեղինակ Բելլա Իլլեց, Մատե Զալկան՝ հետագայում Խոպանիայում հոչակված «Գեներալ Լուկաշը», Ֆրանսիայի ականավոր կոմունիստ գրող, «Կրակ» վեպի հեղինակ Հանրի Բարբյուսը և այլք:

1927 թվականին, առաջին ուղևորությունից հետո, Հանրի Բարբյուսը ասաց. «Ինձ համար մեծ երջանկություն է, որ ձեզանից մի քանիսի հետ կապեր հաստատեցի, և ամենից առաջ ցանկանում եմ, որ Խորհրդային Հայաստանում կատարած իմ ճանապարհորդությունն առիթ լինի՝ տևական և ամուր կապ ստեղծելու մեր միջն, մեր արևմուտքի ուշ մնացածներիս և Զեր, որ կառուցում եք գրական և գեղարվեստական այն գործը, որ նույնանում է այն գործի հետ, որ դուք կառուցել եք ընկերային և քաղաքական հողի վրա, որ մենք սրանից հետո աշխատելու ենք ազատագրելու համար համաշխարհային պրոլետարիատին, լուսավորելու հին աշխարհի ուղին սոցիալիստական հիմունքներով»<sup>52</sup>:

## 15

Հայ սովետական գրականության գարգացման համար միշտ էլ կենսական խնդիր է եղել գրական ժառանգության հանդեպ կողմնորոշումը: Բայց հավասար չի եղել վերաբերմունքի նժարների ծանրությունը: Մինչ 20-ական թվականներին, մինչև Չարենցի «Վերադարձի» կանչը (1927) շրջանառության մեջ էր «անցյալը խաչելու» մասսայական հոգեբանությունը, 30-ական թվականների սկզբին որոշ շրջադարձ է նկատվում գրական ժառանգության գնահատման հարցերում:

Ճիշտ է, այդ թվականներին նույնպես գործում է անցյալի օտարացման նշանաբանը: Բանն այնտեղ է հասնում, որ նույնիսկ Սայաթ-Նովան Գ. Աստուրի հրատարակած Խաղերի (1934) առաջաբանում (Պ. Մակինցյանի) գնահատվում է իբրև «պալատականության երգիչ», ստեղծական միտքը զանքեր է գործադրում «գեմոկրատական ուժեղ հակումների տեր գրողներին» դուրս հանելու «դասակարգացին» «նեղ կամերաներից» և նրանց վերադարձնելու ժողովրդին:

Գոեհիկ հայացքների հաղթահարման նշաններն արդեն կային, երբ հրապարակվեց «Պրավդա» թերթի խմբագրական հողվածը (1937)՝ շատ էական ցուցմունքներով. «Անցյալի մեծ արվեստագետները պատկանում են աշխատավոր ժողովրդին, որը ժառանգել է նախընթաց դասակարգերի կուլտուրական բոլոր արժեքները և մեր շահերին նպաստավոր չէ պահել այդ արժեքները անհայտության մեջ, փոշիացնել դրանք և վերածել պատմական հնոտիների, ինչպես փորձում են անել գոեհիկ-սոցիոլոգները: Մեծ արվեստագետները կենդանի են մեզ համար, նրանց շանքերը իզուր չեն անցել: Նրանց լավագույն

երկերն արթնացրել են մաքեր և օգնել են ժողովրդին առաջ ընթանալու և դրանով իսկ գտնելու ազատագրման ուղին»<sup>53</sup>:

Իհարկե, «Պրավդայի» խմբագրականը զգալի շափով նպաստեց «սոցիալական բովանդակության» գրողների ստեղծագործության մարքսիստական լուսաբանությանը, սակայն գեռ շարունակվում էին կամայականությունները առանձին գրողների, հատկապես ազգային ազատագրական հոսանքի (Բաֆֆի, Ռ. Պատկանյան—Գամառ-Քաթիպա, արևմտահայ բանաստեղծներ և այլն) գնահատման հարցերում:

Ընդհանուր տրամադրության համար վերին աստիճանի պերճախոս էր Մ. Մկրյանի հոդվածը՝ Պերճ Պոռշյանի «Հացի խնդիր» վեպի մասին<sup>54</sup>: Մինչ «Հացի խնդիրը» հոդվածում իրավացիորեն մեծարվում է իբրև հայ վիպասանության սոցիալական պաթոսի լավագույն էջերից մեկը, Բաֆֆին և Գր. Արծրունին գնահատվում են իբրև «բուրժուազիայի ուսակցիոն ազգայնական իդեոլոգիայի» արտահայտիչներ:

«Պոռշյանը «Հացի խնդիրը» վեպով,— գրել է Մ. Մկրյանը,— ակնհայտ կերպով հակադրվել է բաֆֆիական ազգայնական վեպերի ուղղությանը»:

Կամայական քաղաքականության տխուր զրվագն էր Գամառ-Քաթիպայի արձանը էջմիածնի Գևորգյան ճեմարանի պատվանդանից ցած նետելը:

Այս իրադրության մեջ զգաստացնող նշանակություն ունեցավ Ա. Ա. Ֆադեևի ելույթը, ուր այլևս գրական խնդիրների շարքում նա հատկապես անդրադառնում է նաև Բաֆֆու ժառանգության հանդեպ եղած չարդարարական վերաբերմունքին: Ա. Ա. Ֆադեևը գրում է. «Հիմնվելով այն բանի վրա, որ առաջներում ճնշված ժողովուրդների դասականների մոտ կարելի է հայտնաբերել շատ կամ քիչ նացիոնալիզմի գծեր... դեռ են գցում այն առաջադիմական նշանակությունը, որ այդ կլասիկներն ունեն իրենց ժամանակին և հայտարարելով նրանց «նացիոնալիստ», արգելում էին տպագրել և հրատարակել նրանց գործերը».

Օրինակ՝ Հայաստանում մի քանի ընկերներ անցած դարի հայտնի հայ դասական Բաֆֆուն հոշակել են «Չովինիստական դաշնակցության գաղափարների ոգեշնչող»: Եղել են և՛ մարդիկ, որոնք Բաֆֆուն հայտարարել են ֆաշիստ, կարծես *XIX* դարի Հայաստանը գիտեր մի այնպիսի երեսութ, ինչպիսին ֆաշիզմն է: Էլ ինչ զարմանալու բան կա, որ Բաֆֆուն այլևս չեն հրատարակում Հայաստանում, որ Բաֆֆու մասին գրելը համարվում է ամոթալի բան, որ գրադարանավարները չգիտեն Բաֆֆու աշխատությունները գրադարաններից հանեն, թե՞ոչ Բաֆֆուն՝ անցած դարի հայ բուրժուազիայի խոշորագույն ոռմանտիկին, իրոք, հատուկ էին նացիոնալիստական հայացքներ, բայց նա քննադատության է ենթարկել ֆեոդալական մնացուկները և եղել է խոսքի հիմնալի վարպետ: Ընթանալով մի քանի հայ ընկերների ուղիով՝ պետք կլինի ուսական կլասիկ ժառանգությունից դուրս շպրտել կը Տոլստոյին՝ իբրև արմատացած հետադիմականի՝ իբրև անուղղելի խավարամոլի»<sup>55</sup>:

Ոչ միայն Բաֆֆին, այլև հայ գրականության գեղարվեստական շատ հուշարձաններ արժանանում են ավելի խնամքոտ վերաբերմունքի՝ իրենց պատմական և արդիական նշանակալից արժեքով:

Անցյալի գեղարվեստական հուշարձանների գնահատման բարձրակետը եղավ «Սասունցի Դավիթ» հայ ժողովրդական վեպի 1000-ամյակի տոնակատարությունը՝ ոչ միայն համահայկական, այլև համամիութենական լայն շրջագծով:

Թեև դեռ 1913 թ. տոնվել էր հայ գրերի գյուտի 1500-ամյակը և հայ տպագրության 400-ամյակը, սակայն հայ ժողովողի պատմական տարեգրության մեջ նրա գեղարվեստական հուշարձաններից ամենանշանակալիցը մեր օրերում էր արժանանում այդքան մեծ ուշադրության:

1938 թ. Հայաստանի կառավարության որոշումից հետո ծավալվեց լայնածավալ աշխատանք՝ «Սասունցի Դավթի» 1000-ամյակը 1939-ին նշելու համար:

Դեռ 1936 թ. Մ. Աբեղյանը հրատարակել էր «Սասունա ծոեր» մեծադիր հատորը՝ վեպի բազմաթիվ տարբերակներով (տարբեր անացողների պատումներով), որի հիման վրա Մ. Աբեղյանը, Գ. Աբովը և Ա. Ղանալանյանը հյուսիցին «Սասունցի Դավթի» համահավաք բնագիրը: «Համահավաքը» լույս տեսավ Հովսեփ Օրբելու առաջարանով, թարգմանվեց նաև ռուսերեն (ոմանքավ երեք հրատարակություն՝ Երևանում, Լենինգրադում, Մոսկվայում), ինչպես նաև ՍՍՀՄ ժողովուրդների մի շարք լեզուներով:

ՍՍՀՄ Գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը իր գիտական 4-րդ նստաշրջանը նվիրեց «Սասունցի Դավթին», ուր գիտական խոր զեկուցումներով հանդես եկան Հայաստանի և Երկրի այլ քաղաքների ականավոր գիտնականները: «Սասունցի Դավթի» տոնակատարության բարձրակետը ՍՍՀՄ Գրողների միության վարչության 7-րդ հոբելյանական պլենումն էր Երևանում: Էպոսի տոնակատարությանը մասնակցելու համար Երևան էին եկել սովորական բազմազդ ականավոր գրողներն ու գիտնականները՝ Ա. Ֆադեև, Ա. Տոլստոյ, Կ. Ֆեդին, Վ. Իվանով, Պ. Տիգինա, Պ. Բրովկա, Ս. Վուրդում, Գ. Լեռնիձե, Մ. Զավախիշվիլի, Շ. Դադիանի, Ս. Շերվինսկի և այլք:

Ելույթ ունենալով զրողների միության վարչության պլենումում, սովորական գրականության և գիտության ներկայացուցիչները նշեցին հայ ժողովրդական վեպի համամարդկայնությունը և մարդասիրական-դեմոկրատական հզոր ոպին:

Տոնակատարությունը խթանեց հայ ժողովրդի հանճարեղ ստեղծագործության լայն տարածմանն ու ճանաշմանը:

«Պրավդա» թերթը իր խմբագրական հոդվածում հետեւալ խոսքերով բնութագրեց հոբելյանի նշանակությունը: «Հայ ժողովուրդը տոնում է իր հերոսական էպոսի մեծագույն երկի՝ «Սասունցի Դավթի» հիանալի պոեմի հազարամյակը: Այդ տոնակատարությանը մասնակցում է ամբողջ սովորական ժողովուրդը: Պոեմի հերոսական կերպարները մտել են սովորական գրականության և կուլտուրայի ընդհանուր գանձարանը: Դրանք հարստացնում են գրողների, բանաստեղծների, նկարիչների ստեղծագործությունը մեր Միության բոլոր հանրապետություններում: Սովորական կուլտուրայի միջոցով՝ «Սասունցի Դավթիթը» մտնում է համաշխարհային կուլտուրայի ուղեծիր և դառնում է մարդկության հերոսական մեծ էպոսի մի մասը՝ «Խիսկանի», «Ողիսականի», ուս ժողովրդի դյուցազնական բիլինային էպոսի, «Կալեվալայի» և հյուսիսի սագաների, «Նիբելունգների երգի» և ժողովրդական ստեղծագործության շատ այլ գանձերի կողքին»<sup>56</sup>:

Հայ մշակույթի տարեգրության մյուս նշանակալից իրադարձությունները հայ արվեստի (1940) և հայ գրականության (1941, հոմիս) տասնօրյակներն էին: Գրական տասնօրյակը ի ցույց դրեց հայ բազմադարյան գրականության մարդասիրական, ժողովրդական, այլասիրական ավանդները, որոնցից հայ սովորական գրականությունը քաղեց իր հետագա զարգացման լիցքերը:

## ՊՈԵԶԻԱ

1

Հեղափոխության՝ սահմանագծի՝ ժամանակի, գլխավոր հայոց հայոց բանաստեղծության նոր դիմագծի հայտնագործությունն էր, որը գրական ասուլիսներում ասպարեզ եկավ «Ի՞նչ պետք է լինի արդի բանաստեղծությունը» սահմանումով։

Հարցը զրված էր ամենայն սրությամբ և որոշակիությամբ՝ վերաշրջել զարգացման վաղեմի ուղիները, նոր ձև ու կերպարանք տալ հայոց բանաստեղծությանը։ Բանաստեղծական մտածողության նորացման խնդիրը հայ գրականությանը զբաղեցնում էր դեռ դարասկզբից, ավելի ուժեղ շիկացաւմով՝ 10-ական թվականներին։

Այս տեսակետից բնորոշ է Վահան Տերյանի յուրօրինակ «գանգատը»։

Ի՞նչ կարող եմ անել ես, արդյոք ի՞նչ  
Եղրայրներ իմ, եղրայրներ իմ, ձեղ համար,  
Ահա բեկված իմ հոգին անօգ ու աննինչ,  
Չեր թափիծով է այրվում համր ու անդադար...  
Մի անսկիզր, մի անվերշ—մի աղեկեզ, մին հին երգ  
Դառն ու միալար—  
Բայց չի լսում սիրաք ձեր  
Երգն այս ցավագար։  
Չեզ ճշան է հարկավոր, և փող, և թմրուկ,  
Իսկ իմ երգը միշտ տիսուր, երգըս վշտի ու սիրո,  
Ես եմ անօգ, ես անօգ, որպես մի մանուկ,  
Ես երգիշ եմ, երազող  
Աշխարհի դեմ, շարի դեմ  
Ռդշակեզ եմ,  
Ճահ...»

Նոր երգի ծննդյան երազանքով թեև ողողված էր 10-ական թվականների բանաստեղծությունը, սակայն դա օրակարգի առաջին կետ դարձավ պատմության հեղափոխական շրջադարձից հետո։

Իսկ այդ շրջադարձը թելադրում էր միանգամայն նոր սկզբունքներ՝ արմատապես տարրեր արվեստի հին ուղիներից։

«Անհատական գեղարվեստը,—ազդարարում էր հայոց լրագիրը,—պետք է տեղի տա համայնական գեղարվեստին»<sup>1</sup>։

«Համայնական գեղարվեստի» ստեղծման հոգեբանությամբ էր շնչում մանավանդ բանաստեղծական մթնոլորտը, որից անպակաս էին վեճերն ու վիճաբանությունները, հրովարտակներն ու ծրագրերը։ Այդ մթնոլորտի կենտրոնական գեմքը եղիշե Զարենցն էր՝ տասական թվականներին արդեն հայ իրականության մեջ հռչակված նոր բանաստեղծը, որն ամենից խորն էր կրում բանաստեղծության որակային նոր սկիզբների հոգեբանությունը։

Միմվոլիստական ուղղության խորհրդանշանների ու կոահումների, իսկ այնուհետև ուղևանափական ուղղության հուզական պայմանների և ուժի գեղագիտության դպրոցն անցած բանաստեղծը տենդագին որոնում էր ժամանակի նոր երգը:

Հայոց բանաստեղծությունը, —մտածում էր Զարենցը, —«...վերջին տասը տարվա ընթացքում ապրել է իր ամենախորության կրիզիսներից մեզը<sup>2</sup>, նրա զարգացումը ընթացել է գերազանցորեն Վահան Տերյանի դպրոցի հետագծով, այն ուղղության, որի կենսական մթերանոցները սպառվել են այն աստիճան, որ անկարող են այլևս նյութ մատակարարել նոր հոգերանությունն արտահայտելու կոչված բանաստեղծությանը: Վահան Տերյանը, —ասում էր Զարենցը, —«հայ բանաստեղծության ոչ թե սկիզբն էր, այլ վերջը»<sup>3</sup>:

Դեղագիտական այս իրադրության մեջ Զարենցը 1922 թ. ամռանը երիտասարդ բանաստեղծներ Գևորգ Աբովի և Ազատ Վշտունու հետ ստորագրեց «Երեք» խմբակի հանգանակը (Դեկլարացիան), որը «Բոլորի'ն, բոլորի'ն, բոլորի'ն» հրովարտակով տպագրվեց հունիսի 14-ին, «Խորհրդային Հայաստան» օրաթերթում (№ 130):

«Երեքի Դեկլարացիան», իհարկե, մեթոդաբանական տեսություն էր գրականության համար ընդհանրապես, բայց առավելապես վերաբերում էր բանաստեղծական արվեստին, որը ժամանակի ամենաազդեցիկ և առաջատար ժամրն էր՝ իր հնթաժանրերով:

«Երեքի Դեկլարացիան», անտարակույս, շփման եզրեր է հայտաբերում նաև ժամանակի այլևսյլ բանաստեղծական հոսանքների առաջադրությունների հետ, բայց իր գլխավոր պաթոսով ֆուտուրիստական հանգանակ է:

Սկզբնավորվելով հտալիհայում՝ իրեն XX դարի տեխնիկական առաջընթացի գեղագիտական համարժեք (1909-ին Մարինետտին հրապարակեց իր մանիքնեստը), ֆուտուրիզմը տասական թվականներին խոր արմատներ գտեց նաև Ռուսաստանում՝ ի դեմս իրենց «բացելու» համարող Վլ. Մայակովսկու, Դ. Բուլյակի, Վ. և Կ. Խերբենիկովի, Վ. Կրուժենիխի ապագայապաշտական հրովարտակների և բանաստեղծական փորձերի:

Ֆուտուրիստական ծրագրերը շուտով թափանցեցին նաև հայ իրականություն. Կարա Դերվիշը 1914-ին Թիֆլիսում տպագրեց «Ի՞նչ է ֆուտուրիզմը» գրքույզը, ուր, ուսև ֆուտուրիստների ոգով, վերաշարադրում էր նրանց «Ապակա հասարակական նաշակին» (1912) դեկլարացիայի դրույթները:

Միանգամայն ճիշտ է նկատված, որ ինչպես Զարենցը, այնպես էլ Գ. Աբովն ու Ա. Վշտունին, ապրելով Թիֆլիսում, դեռ տասական թվականներին հաղորդակցվել են ֆուտուրիստական գեղագիտությանը<sup>4</sup>:

Իսկ երբ գալիս է նոր երգի հոչակման ժամանակը, նրանք առաջին հերթին դիմում են այդ ուղղության տեսական մթերանոցներին, որը Զարենցի և նրա «համախոհների» աշքին երևացել էր բանաստեղծության գալիքի կերպարանքով:

Ի տարրերություն հտալական ֆուտուրիստների դավանանքի մեջ առաջին շեշտը համարվող տեխնիկական դարի բանաստեղծության արագության և ուժի գրույթի, ուսև ֆուտուրիստների հանգաների գլխավոր շեշտը բանաստեղծության հրապարակայնացումն էր, բանաստեղծական խոսքը դեպի լայն մասսաները տանելու մղումը, որը և դարձավ հայ ֆուտուրիստների Դեկլարացիայի հիմնաշեշտը. «Դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից դեպի կենդանի խոսքը»<sup>5</sup>:

«Երեքի» դեկլարացիայի այս առաջին արմատական սկզբունքը իր վրա կրում էր ոռու ֆուտուրիստների պարագլուխ Վլ. Մայակովսկու գեղագիտական հայացքների ակներև ազդեցությունը:

«Մեզ անհրաժեշտ է ոչ թե արվեստի մեռյալ տաճար, ուր լկվում են արվեստի երկերը,—հայտարարում էր Վլ. Մայակովսկին,—այլ մարդկային հոգու կենդանի գործարան... Արվեստը պետք է կենտրոնանա ոչ թե մեռած տաճար թանգարաններում, այլ ամենուրեք՝ փողոցներում, տրամվայներում, ձեռնարկություններում, արհեստանոցներում և բանվորական թաղամասերում»:

Որդեգրելով մայակովսկիական-ֆուտուրիստական հանգանակների մյուս կետերը ևս՝ «Բազումի» (մհօյեցտեա)՝ բազմությունների տարերքի արտացոլում, ոիթմի առանձնաշեշտում և այլն, «Երեքը» արձագանքում էին ժամանակի գրական տեսության մեջ արմատացած այն տեսակետին, որի համաձայն բանաստեղծության զարգացման «այսօրը» համարվում էր ֆուտուրիզմը: Վ. Բրյուսովի «Մուսական պոեզիայի երեկը, այսօրը և վաղը» (սիմվոլիզմ, ֆուտուրիզմ, պրոլետարական պոեզիա) հոդվածի հետևողամբ Զարենցի կարդացած «Արդի ոռուսական պոեզիան» դասախոսության մեջ զարգացվում էր այն միտքը, որ «հեղափոխական այժմեականության» խնդիրներին ամենից ավելի բավարարություն է տալիս ֆուտուրիզմը՝ ի դեմս Վլ. Մայակովսկու ստեղծագործության, որը նվաճել էր ոռու գրականության նորագույն բնագծերը:

Եթե «Երեքի» Դեկլարացիայի առաջին գլխավոր սկզբունքը՝ բանաստեղծության լեզվի նորացման պահանջը, արտահայտում էր գեղարվեստի նոր բովանդակությունը և նոր ձեզ սահմանելու պատմական անհրաժեշտությունը, ապա Դեկլարացիայի երկրորդ գլխավոր սկզբունքը՝ դասական ավանդների հերքման գիծը, արտահայտում էր ժամանակի նեղ-աղանդավորական հոգերանությունը: Դեկլարացիայի՝ դասական ավանդները ժխտող լողոմգները ներշնչված էին և ֆուտուրիստների («Երկրի երեսից զնշել գեղարվեստական հին ձևերը»), և պրոլետկուլտական հրահանգների («Հանուն մեր վաղվա այրենք Ռաֆայելին, ավերենք թանգարանները, տրորենք ծաղիկներն արվեստ») գրույթներով:

Բանն այն է, որ չնայած ֆուտուրիստական և պրոլետկուլտական (դարբնոցական) բանաստեղծական հոսանքների դիրքերի միջև կային էական տարբերություններ, բայց այդ և մյուս բոլոր հոսանքները հանդես էին գալիս իբրև ապագայի, գալիքի համբավաբերներ, ուստի և խաչ քաշելով անցյալի վրա, իրենց վրա էին վերցնում «ախտահանողի» պարտականությունը:

Նոր երգի գեղագիտության ամենաբնորոշ օրինակը՝ և իրեւ տեսություն, և իրեւ այդ տեսության գեղարվեստական յուրացում, եղավ Զարենցի «Ամենապոեմը»:

Արդեն այս պոեմի նախերգանքում հոչակվում է ռամենքի մասին, ամենքի համար և ամենքի անոմից» ծրագրված բանաստեղծության պահանջը.

Ինչո՞ւ միայն ես.  
Թող բոլորը՝ նրանք—երգեն  
Բոլորին, բոլորին, բոլորին—  
Երգեն,  
Թո՞ղ երգեն, ինչքան մարդ որ կա,  
Թող աշխարհը ամբողջ երգի:

Համայնաերգի ելակետը այն է, որ ամեն մի մշակ ռիր խոնավ թոքերում ունի բյուր Տերյան ու Վերլեն, ու Պո», որ «աշխարհում ուրիշ հանճարներ չկան—նրանցից բացի...»:

«Համայնական գեղարվեստի» հոգերանական լիցքերով էին ներշնչված նաև «Մուրճ», «Դարբնոց», «Քուրա» պարբերականների բանաստեղծությունների ծրագրային հանգանակները: Ռուսական «Կոզնից» խմբակցության առաջադրած բանվորազարկի բանաստեղծությունը (սա Ա. Գաստերի ««Պօջան բարեկանության մեջ ևս գտնում է իր դավանակիցներին, ինչպես, օրինակ, «Երեքից» անջատված Ա. Վշտումուն և Գ. Աբովյան»:

Ա. Վշտումին հոչակում էր՝

Մենք նոր ենք, մենք պոետներ հանճար,  
Մեր մուսան էլեկտրիկն է, շոգին,—

իսկ Գ. Աբովյան հայտարարում էր, որ ինքը «առաջին պոետն է, որ հագավ պրոպելլեր»:

Մուրճական-դարբնոցական-քուրայական մյուս բանաստեղծները ևս դաշվանում էին երկաթի, մետաղի, աերոկարուտի, հրաբուխի, մեքենայի բանաստեղծությունը: Գ. Վանանդեցին, օրինակ, պոեղիան համարում էր «պղնձահընցյուն օրկեստր», Ն. Զարյանը «Ակրոռողջույն» էր հղում իր նոր երգին, Վ. Ալազանը շեփորում էր հրարխապողիայի լայն շառավիղները, մյուսները գովք էին հղում անիվներին ու մուրճներին, շուգումին ու պողպատին, մեքենաներին ու գործարաններին:

Պրոլետկուլտական անխառն ոգով ներշնչված տրամադրությունները տեղ են գտնում նաև Ե. Զարենցի հայացքների մեջ:

Դրա ամենաուժեղ արձագանքն էր «Բոլոր պոետներին» (1924) հրովարտակը՝ հետեւյալ հրամայականով.

Հասկանո՞ւմ եք՝  
—Ո՞ւ մի Պանաս,  
Թեկուզ պրոլետպահան,  
Թեկուզ պրոլետպեղիա:

Պառնասի-պոեզիայի փոխարեն Զարենցը իր ժամանակի պոետներին պարտադրում էր հետեւյալ խնդիրը.

Եթե դու պետքական ես, պոետ,  
Երգերի տեղ երկրներ շինեն:  
Տողերդ կամուրջներ թող լինեն,  
Օղակն գետերը զնգուն,  
Որ անցնեն հազար տարիներ  
Եվ հազարն էլ թափվեն Զանգուն:  
Թե կարող ես—այնպիս արա դու,  
Որ այստեղ... նոր քաղաք բռնին...  
Բայց դու... դեռ նստել ես արթուն  
Եվ նայում ես այդ լիրք լուսնին...

Լուսինային-սրնգային բանաստեղծության վաղեմի ավանդները դրվում են հարցականի տակ: «Երբ արշավում է նորը, հրավառն ու վիթխարին,—գոռում է Գ. Մահարին, —ծղրիդները թող չերգեն ու թող լուսինը մարի»:

Իրենց բոլոր ծայրահեղություններով հանգերձ, թե՛ «Երեքը» և թե՛ դարբնոցական-մուրճականները անտարակուսելիորեն ճիշտ էին բանաստեղծության նոր որակը՝ սոցիալիստականը որոնելու մղումների մեջ, միայն թե այդ նոր որակը նրանք պատկերացնում էին թեև կյանքի ու կենցաղի ոլորտներում, բայց անկախ՝ մարդու, «ներքին մարդու հոգեբանությունից ու ապրումներից:

Պոեզիայի նոր ուղիների որոնումները թեև մեծ մասամբ նմանվում էին «Հեծելազորային գրուների», «գերհեղափոխական» թոփշների, բայց առանձին դեպքերում ստանում էր ներքին դրամայի բովանդակություն:

Այդ դրամայի կրողներն էին ոչ միայն քնարականները (ինչպես Գ. Մահարին, որը գրում էր. «Ես սրնգով եկա հանդես, երբ թմրուկներն էին պայթում»), այլև Եղիշե Զարենցը, որը խորապես վերապրում էր ժամանակի արվեստի մեծ դրաման:

Դրա տպավորիչ արտահայտությունն էր «Երկու աշխարհի սահմանագծում» (1923) հոդվածը, ուր Զարենցը խոր մորմոքով հրաժեշտ տալով հայոց բանաստեղծության «երօղակ շղթային» (Հովհ. Թումանյան, Ավ. Խսահակյան, Վ. Տերյան), միաժամանակ գտնում էր, որ խզումը ժամանակավոր է, որ գալու է անցյալի բանաստեղծների վերածնդյան օրը. «Եվ ինչքան որ հեռու կլինի մեր վաղվա պոեզիայի սոցիալական բովանդակությունը, օրհներգած կենցաղը լոռեցի Հովհաննեսի, գյումրեցի Ավոյի և գանձացի Վահանի պատկերած կյանքից—այնքան էլ սիրելի ու ընդունելի կլինեն նրանք, հին աշխարհի քնարերգուները նոր աշխարհի պոետներին»<sup>6</sup>:

Սա, Զարենցի կարծիքով, ապագայի խնդիր է, իսկ ներկան «վիճանման մի գիծ է քաշել», նոր բանաստեղծությանը պարտադրելով «օրերի դինամիկական շաշունի» նոր երգը. «Ուրիշ պիտի լինի մեր օրերի երգը, և նա, ուզե էլ, չի կարող առնչվել հնին, անցյալին: Գուցե նա ևս, մեր այսօրվա պոեզիան, պիտի դեռ երկար ժամանակ թպրտա «Երկու աշխարհի սահմանագծում», բայց այդ լինելու է այլևս «Երկունք», և ոչ թե հոգեվարք»<sup>7</sup>:

«Երկունքի» շրջանում, բնականարար, հայոց բանաստեղծությունը հայացքը շրջում էր դեպի ուսւ հեղափոխական գրականության ափերը, այնտեղ «...փնտրելով մեր վաղվա պոեզիայի համար ուղիներ ու շավիղներ...»<sup>8</sup>:

Այդ «փնտրումների» մի բնորոշ դրվագն էր «Standart»-ի (1924) գրական ծրագիրը, որը կրում էր Զախ արվեստի ֆրոնտի՝ «Լեֆ» ժուռնալի տեսական դրույթների կնիքը:

Զարենցին ու նրան ընկերացած ճարտարապետներ Կ. Հալարյանին ու Մ. Մազմանյանին այլևս գրավում են ֆուտուրա-կոնստրուկտիվիստական այն ելակետները, որոնք տեղ ունեին «Լեֆ»-ի դավանանքի մեջ:

«Standart»-ի ծրագրի բացատրության մեջ Զարենցը գրում էր. «Երեքի» գեկլարացիան առաջին փորձն էր ձեւակերպելու մեր հետ-հոկտեմբերյան բանաստեղծության անելիքները և որպես այդպիսին, որպես փորձ՝ զուրկ չէր որոշ նշանակությունից: Նա այն ժամանակ տեղին ու հարկավոր էր ամենից առաջ որպես ժխտում հնի, որպես գրական-հասարակական մի ակտ, որ կազմակերպված ձեռվ եղրափակում էր մեր պոեզիայի «տերյանական» շրջանը և հիմք էր զնում նոր շրջանի: Մի բան նա լավ գիտեր—այն, որ «հինը... վերշացել է, ու չկա վերադարձ այդ հնին,— բայց թե ի՞նչը պետք է բռնի նրա տեղը—դեռ մութ էր «Երեքի» համար, անկոնկրետ, անորոշ:

«Երեքի» գեկլարացիայի այդ հիմնական բացն է, ահա, որ գալիս է լրացնելու «Ստանդարտը»: Գրականությանը վերաբերող նրա առաջադրությունները

րը ոչ ժխտումն են կամ փոփոխությունը «Երեքի» դեկլարացիայի, այլ վերջինիս զարգացումը, կոնկրետացումը, նրա իդեոլոգիական և ձեւական դեմալիզացիան»<sup>9</sup>:

Եթե մոռանանք ժամանակի ոգով պայմանավորված «Ճախության» շռայլությունները և նույն ժամանակի աղանդավորական հոգեբանության հրահրաժ մոլորությունները, 20-ական թվականների գեղագիտական միտքը իր տեսական առաջադրություններով ցանկանում էր հայ բանաստեղծության մեջ բերել կյանքի շունչը, ժամանակակից առօրյայի էական գծերը, նույն այդ կյանքի բովանդակությանը համապատասխանող բանաստեղծական նոր, ներգործուն կառուցվածքները:

Այն կառուցվածքներն ու ձերեր, որոնք պետք է լինեին ժխտումը «տերյանական» կիսածայնային-կամերային բանաստեղծության և հաստատումը լայնաշունչ-պաթոսային խոսքի՝ մայակովսկիական-ուիտմենյան-վերհարնյան դինամիկ բանաստեղծության կողմնորոշումով:

## 2

Բանաստեղծության տեսական առաջադրությունների շափածո տարրերակները «Ճրագրերից» բացի նաև ժամանակակից հայ իրականության «Թեմատիկական» յուրացումներն էին: Նորագույն բանաստեղծության թեմատիկայի մեջ առաջին տեղը, հասկանալի պատճառներով, գրավում էր երկրի զարթոնքի, Հայաստանի սոցիալական վերածնության թեման: Բանաստեղծության նյութ են դառնում «Երկաթավորվող երկրի» սոցիալիստական շինարարության առաջին քայլերը՝ գլուղական տեխնիկան (շոգեգության, սերմնագտիչ, տրակտոր), գյուղի կոռուպերացիան և կուլտուրական օգախները (խրճիթ-ընթերցարաններ և դպրոցներ), ջրանցքներն ու էլեկտրակայանները:

Հայաստանն իրապես զինվում էր երկաթով. «Մի երկաթե թռչում մեր նաիրյան տոթում թպտում է էսօր» (Զարենց):

Անտարակույս, հայ բանաստեղծության մեջ ևս հնչում են «Երկաթե հյուրի» գալստյան դեմ ուղղված դատապարտման խոսքեր (Ս. Եսենինի «Քառասունքի» ոգով), բայց հիմնական շեշտը «շուգումնե ոենեսանսի» փառաբանությունն էր՝ պաթետիկ-հրեղեն խոսքով:

Այս առումով հայ նորագույն բանաստեղծության զարգացման նախնական փուլի (1920—25) կարևոր դրվագը եղավ այսպես կոչված «Հիրկանալյան պոեզիան»:

1922 թ. Ալեքսանդրապոլին (Լենինական) մերձակա Կապս գյուղում սկսված Շիրակի ջրանցքի կառուցումը ոգեսրության այնպիսի ալիք առաջ բերեց ժողովրդի մեջ, որ նրան համակած խանդավառությունը փոխանցվեց նաև չափածո խոսքին՝ բանահյուսությանը և բանաստեղծությանը:

Նորագույն բանահյուսության մեջ հնագույն բանահյուսության ավանդական մստիլներից մեկը՝ ջրի մոտիվը, ենթարկվում է որոշակի կերպարանափոխության: Ժողովրդական-անանոն ասացողների հյուսած ժողովրդական խաղիկներում (որոնք տեղ են գտել 1938-ին տպագրված «Հայկական խորհրդային ֆոլկլոր» ժողովածուի մեջ) ջրի ակունքները խափանող վիշապների ու դեմքի փոխարեն հանդիս են գալիս ժողովրդական ակնկալությունները մարմնացնող այն մարդիկ, որոնք իրենց կամքին են ենթարկում ջրային տարերքը՝ երկրի սոցիալական առաջադիմության վճռական գործոններից մեկը:

**Ժողովրդական-բանահյուսական** մեկնակետը յուրովի արձագանք է գըտնում նաև բանաստեղծության մեջ: Գ. Սարյանը («Երակի հարսանիքը»—1925), Սարմենը («Դաշտերը ժպտում են»—1925), Գ. Մահարին («Երակի շրանցքը»—1925), Մ. Արմենը («Երկանալ»—1926), Ն. Զարյանը («Ձրանցքի կապույտ երկրում»—1926) և ուրիշներ արձագանքելով Հայաստանի սոցիալիստական շինարարության առաջնեկի հարուցած համաժողովրդական ցնծությանը, դրանով իսկ բանաստեղծական պատկերը մերձեցնում են կոնկրետ իրականության նյութին և այդ նյութի հուզական-հոգեբանական «իմպուլսներին»:

«Երկանալյան պոեզիան», մերկապարանոց սխեմատիզմով և հռետորականությամբ հանդերձ, նշանավորում էր աշխատանքի բանաստեղծության գեղագիտության սկիզբը:

Այդ գեղագիտությունը հրահրեց նաև գեղարվեստական այնպիսի արժեքի ծովոնդը, ինչպիսին հեղափոխական-պրոլետարական բանաստեղծ Հակոբ Հակոբյանի «Բոլշևիկ է Երկանալը» ասքապատումն է:

Հակոբ Հակոբյանի (1866—1937) անունն անխցիկորեն կապված է հայ գրականության պրոլետարական հոսանքի հետ: Նա այդ հոսանքի հիմնադիրն է և ամենահայտնի դեմքը:

Ստեփան Շահումյանն իր հողվածներից մեկում այսպես բնութագրեց բանաստեղծի պատմական ծառայությունը. «...Մեր մեջ կա մի ամբողջ հասարակական խավ՝ գիտակցության և կող բանվորությունը, որի համար Հակոբ Հակոբյանը ճանաշված բանաստեղծ է... Նա այդ բանվորական ցավերի և ուրախությունների արտահայտիչն է, նրանց աշխատանքի և կովի երգիլը»<sup>10</sup>:

Հեղափոխության երգիլը խորհրդային իշխանության տարիներին դարձավ իր վերածնված երկրի սոցիալիստական կառուցման քնարերգուն:

Հ. Հակոբյանը ծնվել է 1866 թ. մայիսի 26-ին, Գանձակում (ներկայումս՝ Կիրովարադ): Դանձակի հայոց ծխական դպրոցից հետո նա պետական թոշակով ընդունվեց քաղաքային գիմնազիան: Հակոբյանը գիմնազիայում անցկացրած տարիները (1879—1886) համարում է իր հոգեոր աշխարհի ձևավորման շրջանը: Այստեղ նա կարդում է Պուչկինի, Լերմոնտովի, Նեկրասովի ազատամիրական ոտանավորները, Աբովյանի և Բաֆֆու վեպերը, Աղայանի ժողովրդաշունչ երգերը: Նրա վրա մեծ տպավորություն է թողնում Միքայել Նալբանդյանի «Ազատն աստված» բանաստեղծությունը: «...Այդ բանաստեղծությունն էր,— գրում է Հ. Հակոբյանը հիշատակարանում,— որ առաջին անգամ գիտակցորեն խանդավառեց իմ հոգին, մեջս ներշնչեց ազատության գաղափարը և ինձ համար այնուհետև դարձավ պաշտելի»:

1885 թ. ցարական լուսավորության մինիստր Դելյանովի կարգադրությամբ Անդրկովկասի հայկական դպրոցները փակվում են: Մայրենի լեզվի բռնության դեմ ժողովուրդն ամենուրեք բարձրացնում է խոռվություններ: Գիմնազիստ Հակոբյանը գրում է «Հյուսիսի ագուավը» երգիծական ոտանավորը: Իր զայրույթն արտահայտելով կատարվածի դեմ: Դրա համար նրան հեռացնում են գիմնազիայից:

Մեկնում է Թիֆլիս՝ ծառայում որպես դեղագործ, ապա տեղափոխվում Քաքու՝ աշխատում իբրև սևագործ բանվոր, գործարանային գանձապահ, հաշվապահ և այլն: «Ան քաղաքը»՝ Անդրկովկասի բանվորական կենտրոն Բաքուն, վճռական դեր է խաղում Հ. Հակոբյանի աշխարհայացքի ձևավորման մեջ: 1887-ից մինչև 1893 թվականը ապրելով Բաքում, Հ. Հակոբյանը հիմ-

նավորապես ուսումնասիրում է աշխատավոր մշակների կյանքը և ականատես լինում բազմազգ նավթագործների ընդգումներին:

1893-ին «Մուրճ» ամսագրում Հ. Հակոբյանը տպագրում է «Ռւփստ բարեկամության» ոտանավորը: «Մուրճի» խմբագիր ու հրատարակիչ Ավետիք Արասիմյանը խրախուսում է Հակոբյանին՝ հրավիրելով աշխատակցելու իր՝ ամսագրին:

1894-ին նորահայտ բանաստեղծը վերադառնում է Թիֆլիս, ուր նրան բանտարկում են: Երկամյա բանտարկությունից հետո՝ Հ. Հակոբյանը վերսկսում է իր գրական և հեղափոխական գործը: 1895-ին գործարանային հաշվապահը դարձյալ «Մուրճ» ամսագրում տպագրում է իր հանրահայտ «Նամուս և ղեյրաթ» բանաստեղծությունը, որին Դ. Աղայանը տեղ է տալիս իր կազմած հայոց լեզվի դասագրքում:

1899-ին «Մուրճ» ամսագիրը հրատարակում է Հ. Հակոբյանի բանաստեղծությունների առաջին զբույյը, որ ժամանակի մամուլում առաջ է բերում վիճարանություններ: Քննադատներից մեկը «Նոր-Դար» թերթում տպագրում է անբարյացակամ մի հոդված: Նույն թերթում Հակոբյանի տաղանդի գնահատությամբ հանդիս է գալիս ապագա նշանավոր հայագետ Մանուկ Աբեղյանը:

Աշխատելով Թիֆլիսի Կովկասյան բանկում (1901 թվականից), Հ. Հակոբյանը կատարում է և հեղափոխական աշխատանք, և, միաժամանակ, շարունակում է գրել:

Պատանեկան սիրո ապրումներ, դյուղական կենցաղի պատկերներ, բանաստեղծի կոչման մասին խորհրդածություններ,— ահա այն մոտիվները, որ տեղ են գտել Հ. Հակոբյանի բանաստեղծությունների առաջին գրքում: Հակոբյանը մեծ մասամբ ընդօրինակում էր իր ժամանակակիցների տրամադրություններն ու մտքերը:

Բայց, չնայած նմանություններին, Հ. Հակոբյանի բանաստեղծություններում կար մի երակ, որը կարող էր նրան դուրս բերել ինքնուրույն ճանապարհ: Նրա ամենամտերմական, զուտ անձնական ոտանավորներում անգամ ակներև էր հասարակական շունչը: Հ. Հակոբյանի ոտանավորների քաղաքացիական երակը ավելի որոշակի է երևում նրա գյուղանկարներում («Պատկերներ», «Գյուղական բալլադ») և քաղաքային արհեստավորին նվիրված բանաստեղծություններում:

Այս վերջիններից է «Նամուս ու ղեյրաթը», որ բանաստեղծը ձոնել է Ավճակայի (հին Թիֆլիսի արվարձան) ջրմուղի բանվորներին: Բանաստեղծության քնարական հերոսն իր քրտինքով ապրող այն արհեստավոր-դարրինն է,



որ կյանքում ամեն բանից վեր է դասում մարդկային արժանապատվությունը: «Նամուս ու զեյրաթը» աշքի է ընկնում ազնիվ բարոյախոսությամբ, դաստիարակում է պատվախնդրություն, շիտակ վերաբերմունք դեպի աշխարհը: Բանաստեղծությունն արծարծում է արդար աշխատանքի գաղափարը, — վսեմ մի գաղափար, որ հնչեց իր ժամանակին և գտավ ընդունելություն:

Դարասկզբին Հակոբյանը գրում է ուրիշ ոտանավորներ ևս, հանդես բերելով իր քնարի նոր հնարավորությունները: Դեմոկրատ բանաստեղծը նախազում է հասարակական մթնոլորտում խմորվող նոր տրամադրությունները և այդ զգացողությունն արտահայտում է գեղագիտական ուրույն ծրագրով: «Ամբոխի կոչը» (1902) բանաստեղծության մեջ պոետն ասում է.

Վիշտը շոյող ու փայփայով  
Երգը դարձավ ձանձրակի...

Նա պահանջում է բանաստեղծական այնպիսի նվաճներ, որոնք ոչ թե ողբալու են կարիքի մեջ տառապող անհատների ցավերը, այլ արտահայտելու են ժողովրդական բազմությունների՝ ամբոխների, ցասումն ու բողոքը: Սա 1902 թվականն էր, այն տարին, երբ Հ. Հակոբյանը ավելի մտերմացավ բանավորական աշխարհի հետ և բանվորների խնդրանքով թարգմանեց «Մարսելի» հեղափոխական տողերը:

Առաջին բանաստեղծություններում Հ. Հակոբյանը թեև ներկայացնում էր ժողովրդի կյանքի սոցիալական հակապատկերները, պատմում էր աշխատավորի ծանր ապրումներից, բայց դրանցում չկար հին աշխարհի դեմ պայքարելու ուղղակի կոչ:

Բանվորական շարժման վերելքի տարիներից՝ 1905 թ. հեղափոխության ժամանակաշրջանից սկսած Հ. Հակոբյանի քնարի հիմնական մոտիվները եղան հեղափոխության և սոցիալիզմի գաղափարները:

Հարցը միայն այն չէ, որ փոխվեց բանաստեղծի թեմատիկան և բանվորական աշխարհը դարձավ նրա զննումների առարկան: Բանվորների կյանքից գրում էին նաև ժամանակի ուրիշ բանաստեղծներ ու արձակագիրներ: Ավելի կարևոր էր այն, որ առաջին անգամ Հ. Հակոբյանի բանաստեղծություններում բանվոր հանդես եկավ իր սոցիալական ինքնագիտակցությամբ ու հեղափոխական գործողությամբ:

«Ամբոխն իմ աշխարհքը» բանաստեղծության մեջ հոչակելով պոեզիայի նոր ուղղությունը՝ պատմել կյանքի մեջ տառապողների մասին («Արի պոետ, մեր վիշտը լացիր, մեզ ընկեր դարձիր»), Հ. Հակոբյանն այնուհետև հրատարակեց իր հիմնական ժողովածուները՝ «Աշխատանքի երգեր» (1906) և «Հեղափոխական երգեր» (1907) վերնագրերով: Ոչ միայն թեմատիկայով, այլև արամադրություններով այս ժողովածուները լրացնում են իրար:

Այդ տարիներին Հ. Հակոբյանը թիֆլիսի ու երմեսու տպարանի գրաշարների մեջ պրոպագանդիստական աշխատանք էր կատարում, թարգմանում էր Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական կուսակցության Կովկասյան կոմիտեի ժարտական թուրքիկները, բանվորների համար զեկուցումներ էր կարդում, շփում էր հեղափոխական գործիչների հետ, աշխատակցում էր «Կայծ» բոլշևիկյան թերթին: Այս ամենը հարստացրեց նրա հեղափոխական կենսափորձը:

1905 թ. հեղափոխության պարտությունից հետո Ռուսաստանում սկսվեց քաղաքական ռեակցիայի դաժան շրջանը: Ոտնահարվեցին դեմոկրատիայի բոլ-

լոր իրավունքները, ուժեղացան ազատ խոսքի ու ազատ մամուլի դեմ կազմակերպված հալածանքները, ցարիզմը արյունահեղ դատաստան տեսավրանվորական և զյուղացիական շարժումների հետ։ Ժամանակի մտավորականության մեծ մասի մեջ քաղաքական ռեակցիան առաջ բերեց հուսալքում։ Խորտակված տեսնելով «Հեղափոխական փոթորկի» հետ կապված իրենց հուսերը, հայ բանաստեղծները ևս ապրեցին հուսահատություն։ Այսպես, Ավ. Խաչակրյանը, որ 1903 թվականին գրել էր իր «Ազատության զանգը», այժմ, իր իսկ խոստովանությամբ, փորձում էր հեռանալ վհատեցնող իրականությունից։ Վահան Տերյանի քնարը նույնպես՝ ենթարկվեց նկուն ապրումների ազգեցությանը։ «Իմ հոգու համար չկա արշալուս», — գրեց Տերյանը այդ ժանր օրերին։

Քերը միայն, ովքեր կապված էին բանվորական շարժումների հետ, անվարան մնացին ազատագրական պայքարի դիրքերում։

Ռեակցիայի տարիներին ևս Հ. Հակոբյանը շարունակում է հեղափոխական գործունեությունը։ Թիֆլիսի նրա բնակարանը դառնում է բոլշևիկյան ընդհատակի կենտրոններից մեկը։ Այնտեղ գրվում էին հեղափոխական կոչեր և թուցիկներ, հավաքվում էին ընդհատակի մասնակիցները և ծրագրում իրենց անելիքները։

1911-ին, կուսակցության հանձնարարությամբ, Հ. Հակոբյանը մեկնում է արտասահման։ Լինում է Գերմանիայում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և կապեր է հաստատում կուսակցության արտասահմանյան խըմբերի հետ։ Արտասահմանյան ուղերության ընթացքում նա շատ կարեռ մի գործ է կատարում՝ ազատելու համար Մետեխի բանտում արգելափակված Կամոյին։ Նա Կարլ Լիբկնեխտին և Լոնաշարսկուն է հանձնում այն փաստաթղթերի կրկնօրինակները, որոնք պատմում էին Կամոյի ֆիզիկական խոշտանգումների մասին։ Այդ նյութերը, հրատարակելով ֆրանսիական «Յումանիտե» և գերմանական «Ֆորվերտս» սոցիալիստական թերթերում, համաշխարհային հասարակական կարծիք են ստեղծում։ Հօգուտ Կամոյի ազատմանը

Հեղափոխական աշխատանքը Հ. Հակոբյանը զուգակցում է ստեղծագործականի հետ։ Ինչքան համարձակ էր ու նվիրված որպես հեղափոխության զինվոր, նույնքան խիզախ էր ու հեղափոխության գործին հավատարիմ՝ իր բանաստեղծություններում։

Հուսալքված երգիչների վհատ ապրումներին նա հակադրեց հեղափոխական լավատեսությամբ շնչող ու ապագա դասակարգային մարտերի կոչող իր բանաստեղծությունները։ «Մաքառման ժամին» ոտանավորում նա պատգամում է վառ պահել հեղափոխական ոգին և արթում մնալ պայքարի դիրքերում։ Պայքարը նա համարում է միայն խիզախների գործը և շարքերից դուրս է հրավիրում վարանողներին, տատանվողներին, թուլամորթներին, թեև ցարիզմը արյունոտ դատաստան է տեսել հեղափոխության հետ, թեև արդար գործի համար ժողովրդի ազնիվ զավակները զոհաբերել են իրենց կյանքը, բայց պատմությունը գործում է նրանց օգտին։ Ժամանակը լի է հեղափոխական փոթորկի նոր սպասումներով ու ամբոխներով ցասման հումկու ալիքներով։

Հողմը նոր զադրած թերն է պարզում—  
Գումար գոթորիկ։

Զգայուն ծովը թափով երազում  
Իներորդ ալիք,

Եվ մթնոլորտում ցասկու հրդեհի  
Կայծը բորբոքվում,  
Հզոր, վիթխարի, անխուսափելի  
Վրեմը կռփվում...

Հեղափոխական լավատեսության և պրոլետարիատի պայքարի հանդեպ ունեցած հավատի վառ օրինակ է «Մեռան», չկորան» բանաստեղծությունը:

Ազատագրական կոփվների և հեղափոխությունների ժամանակ ուղղմաշունչ երգերից բացի ստեղծվում են նաև զորվածներին նվիրված սպի երգեր: Հայ ժողովուրդը, որ պատմության քառուղիներում շատ նահատակներ է ունեցել, բնականաբար ստեղծել է նաև նրանց անմահացնող սպերգեր: Ազատագրական սպերգ է Մ. Պեշիկթաշլյանի «Թաղումն քաջորդվույն» բանաստեղծությունը, համազգային սպերգ՝ Հովհ. Թումանյանի «Հոգեհանգիստը», իսկ Հ. Հակոբյանի «Մեռան», չկորանը՝ հեղափոխական սպերգ:

Բանաստեղծական այս տեսակը զարգացավ 1905 թ. հեղափոխության տարիներին, երբ ժողովրդական զանգվածների ուժից աշարեկված ցարիզմը կազմակերպեց հեղափոխական մարտիկների արյունոտ դատաստանը: Այդ փաստի արձագանքն էր նաև Հ. Հակոբյանի բանաստեղծությունը, գրված 1906 թ.: Հեղափոխության համար իրենց արյունը տված մարտիկներն են այն մարդիկ, որոնց մասին բանաստեղծը գրում է այսպիսի ներշնչված ու սիրով ողողված տողեր:

Կրակն էր ցայտում նրանց աշբ-ունքից,  
Շանթը՝ շրբունքից  
Ծըր խոսում էին ծով-ամրոխի մեջ  
Վիշտ ու կարիքից.  
Վրեմի, ցասման հրով բորբոքված՝  
Նրանք բեմ ելան,  
Եվ բեմը դարձավ արյունով ներկված  
Զոհերի սեղան:  
Խնչպիսի հերոս ընկերներ մեռան...

Պրոլետարական պոեզիան շահմանափակվեց միայն մարտաշունչ ուստանավորներով, շափածո կոչերով, բանաստեղծական դիմումներով: Նա ստեղծեց նաև մեծ կտավի գործեր՝ պոեմներ:

Պրոլետարիատի կյանքից գրված առաջին պոեմը պատկանում է Հ. Հակոբյանի գրչին: Դա «նոր առավոտ» պոեմն է, որը տպագրվել է 1909-ին, թիֆլիսում, հայ մշակույթի հայտնի գործիչ Գարեգին Լևոնյանի «Գեղարվեստ» հանդեսում:

«Նոր առավոտ» պոեմում Հակոբյանն արծարծում է այնպիսի հասարակական խնդիրներ, որոնք անշափ կարենոր էին իր ժամանակի համար:

Պոեմը կառուցված է բանաստեղծի խորհրդածությունների ձևով: Առաջին մասում արդեն ճանապարհ անցած բանաստեղծը երազում է կյանքի մի այնպիսի ընկերուհի, որ և հոգեպես հարազատ լինի իրեն, և մասնակցություն բերի մարդկության «նոր առավոտի» համար ոտքի ելած բազմությունների պայքարին: Դա իդեալն է այն բանաստեղծի, որ սիրո վայելքից բացի կյանքում ճանաշում է ավելի մեծ բան՝ «կարիքի աշխարհի» ազատագրումը: Անձնական երջանկությունը նա ուզում է իմաստավորել ու հարստացնել հասարակական բովանդակությամբ:

Իր մտերմուհուն բանաստեղծը հրավիրում է գործարան՝ արդար աշխատանքի մարդկանց միջավայրը: Բայց ունինալով տարբեր հայացքներ մարդու կոշման մասին, նրանց ճամփաները բաժանվում են: Սիրած աղջիկը մտածում է այլ կերպ: Սիրո պայմանը նա համարում է տղատ ու խաղաղ բնության մեջ ներանձնանալը: Բանաստեղծը, հակառակը, համոզված է, որ գեղեցիկ և մեծ սերը կարող է իրականանալ փշոտ ճանապարհի վրա, այն միջավայրում, ուր եսը ձուլվում է կողեկտիվ ապրումներին:

Պատկաներծելով անհատապաշտական ու քաղենիական հոգեբանությունը, «Նոր առավոտ» պոեմի շարունակության մեջ Հ. Հակոբյանը ներկայացնում է գործարանային կյանքն ու աշխատանքը:

Կապիտալիստական գործարանը հայ պոեզիայում առաջին անգամ Հ. Հակոբյանի պոեմով է ներկայացվում: Գործարանային կյանքի այն նկարագրությունը, որ տվիլ է բանաստեղծը, Սուրեն Սպանդարյանը համարում է կապիտալիստական գործարանի «սինթետիկ պատկեր»: Մեքենաներից, հնոցներից, երկաթե սյուններից ու ծինելույզներից բացի բանաստեղծը ներկայացնում է նաև բանվորների աշխատանքն ու բնութագրում աշխատանքի բովում ձևավորվող քաղաքական գիտակցությունը:

Անդրկովկասում սովետների իշխանության հաստատվելու օրից մինչև իր մահը Հ. Հակոբյանը Ֆեծ խանդավառությամբ շարունակեց գրական աշխատանքը: Նա թեև Վրաստանի բանկերի կոմիսարն էր՝ բազմազբաղ մի պարտականություն, բայց ժամանակ էր գտնում նաև ստեղծագործելու համար:

Այս շրջանում Հ. Հակոբյանը գրեց իր հեղափոխական ընկերներին ու բարեկամներին նվիրված ձոնիր («Ստեփան Շահումյանին», «Կամոյին», «Միխա Ցիակայային», «Ալ. Մյասնիկյանին»): Ապա դիմեց աշխատանքի փառաբանությանը, «Կարմիր հայրենիքի մելոդիաներից» շարքով սկզբնավորեց աշխատանքային նոր քնարերգություն: Այնուհետև հանդես եկավ անցյալի հեղափոխական անցքերին նվիրված հիշողություններով («Ագիտատորի հուշերից»), պատմվածքներով, ուղեգրական ակնարկներով և հրապարակախոսական ու քննադատական հոդվածներով:

Հ. Հակոբյանի ետհոկտեմբերյան ժառանգության մեջ, սակայն, առաջին մեջը գրավում են սոցիալիստական շինարարությանը նվիրված էպիկական պոեմները («Աստվածները խոսեցին»՝ 1922, «Բոլշևիկ է Շիրկանալը»՝ 1924, «Վոլխովստրոյ»՝ 1928):

«Աշխատանքի գաղափարը ինձ համար եղել է ամենասիրելի բանը աշխատանք», — գրել է Հ. Հակոբյանը մի հոդվածում: Բնական է, որ ականատես լինելով աշխատանքի ազատագրմանը, Հ. Հակոբյանը պիտք է ապրեր անսահման ոգեսրություն: Դրա արտահայտություններից մեկն էր «Աստվածները խոսեցին» պոեմը: «Գործարանի սկ աշխատանքի» երգից նորոգում է իր քնարի բովանդակությունը: «Եմ երգի համար, ես քեզ եմ ընտրել, կարմիր աշխատանք», — այս նշանաբանն է համարում նա իր նոր դավանանքը: Կարմիր աշխատանքի ու նոր կյանքի կերտողներին բանաստեղծը նմանեցնում է այն աստվածներին, որ իրենց շնչով վերափոխում են աշխարհի կառուցվածքը:

Եթե «Աստվածները խոսեցին» պոեմում և դարբնոցական շնչի բանաստեղծական «մելոդիաներում» Հակոբյանը դավանում էր մասսայական «պահիսուղինամիկայի» դավանանքը՝ «եսը ապրում է ամենքի համար» գեղարվեստական ուղղությամբ, եթե այդ նույն գործերում նա դեգերում էր «Նոր աստ-

վածների»՝ կյանքի շինարարների, վերացական ու վերացարկված ըմբռնումների ոլորտում («Ճակատներին աստվածների այն՝ լույսեր են իշխ մովսիսանման»), ապա «Բոլշևիկ է Շիրկանալլ» պոեմում դառնում է սոցիալիստական շինարարության կոնկրետ առօրյային՝ Շիրակի ջրանցքի կառուցման մեջ որսալով սոցիալիստական կյանքի ու աշխատանքի պատմական բովանդակությունը:

Պոեմի նախերգանքում Հակոբյանը բանաստեղծ է հռչակում զրանցքը կառուցողներին.

Եկել եմ, որ մի շնչում երգեմ երգդ այն զիլ, հնչում,  
Որ ձուկեցին պոհաներգ յոթ հարյուր օրվա միջում:

Նախերգանքից հետո, ժողովրդական պոեմիցի արտահայտչական եղանակներով և էպիկական ոճով բանաստեղծը տալիս է Հայաստանի վերածնության խորհրդանիշ Շիրակի ջրանցքի կառուցման պատկերը.

Բոլշևիկ է Շիրկանալլ, — մի աժդահա հեքիաթալին,  
Շուրթը նրա ջուր է խմում պաղ ակունքից Արփաշայի:  
Գլուխը հարթ թաղել է խոր կանաչագույն զուլալ գետում,  
Պոլը հեռու կապսի ծոցում, ալիքներն է հեռու նետում:  
Մէծ ու մեծ է Շիրկանալլ, կամարաձև, գեղեցկաթով,  
Փաթաթվել է, ոնց է գրկել, Շիրահարթը երկու թաթով:

Հ. Հակոբյանի շինարարական պոեմներն այն նշանակությունն ունեցան, որ գրականությունը մղեցին դեպի մասսայական աշխատանքն ու նրա հերոսները: «Տառապանքի երգերից, բողոքի երգերից, ցասման երգերից հաղթանակի երգերի միջով, — գրել է Ա. Վ. Լուսաշարսկին «Հովու յոր» գրքի առաջաբանում, — Հ. Հակոբյանն անցավ դեպի շինարարության լայնահորդ պոեմները<sup>11</sup>:

20-ական թվականներին, ինչպես և պետք էր սպասել, պոեզիայի «արտադրական թեր» հետաքրքրությունների առանցքը հայ գյուղի սոցիալիստական վերածնության նյութն էր, գերազանցապես այդ գյուղի կենցաղի մեջ կատարված փոփոխությունների անդրադարձումը: «Գյուղացիական բանաստեղծների» առաջին դեմքը Ալբարել Խնկոյանը—Խնկո Ապերն էր (1870—1935), որը հայտնի էր դարձել դեռ հեղափոխությունից առաջ:

Սուտ մեկ տասնամյակ (1902—1911) ծառայելով իբրև ուսուցիչ Լոռի-Փամբակի գավառի գյուղերում, Աթ. Խնկոյանը այնուհետև դառնում է «Հասկեր» մանկական գեղարվեստական հանդեսի աշխատակիցը (1911—1917): «Հասկերի» հրատարակչական ընկերությունը շարունակաբար առանձին գրքույիններով (թվով 18) տպագրում է Աթ. Խնկոյանի լեգենդների ու առակների, հեքիաթների ու ժողովրդական զրույցների մշակումները, որոնք մուտք են գործում բոլոր գրաճանաչ հայ ընտանիքները:

Հատկապես մեծ տպագրություն են թողնում սոցիալական ուժեղ երգիծանքով և ժողովրդական ոճերով հագեցած առակները, որոնցով Աթ. Խնկոյանը հոչակվում է իբրև հայ իրականության առաջնակարգ առակախոսը:

Տարիներ անց, դմահատելով հայ առակագրության մեջ Աթ. Խնկոյանի մուժած ավանդը, Դ. Դեմիրճյանը գրել է. «Խնկո-Ապոր ժառայությունը շատ մեծ է հայ առակագրության մեջ: Կարելի է ասել, որ նա ստեղծեց իր արվեստը, որ շատ հարազատ է մեր ժողովրդին: Նրա առակների կենդանիները, առարկաները, բնության ուժերը դրսեռվում են մեր առջև իբրև մարդկային 80

կոնկրետ անձնավորություններ։ Խնկո-Ապոր առակը շատ է կենդանի և կոլորիտային։ Զի կարելի չհանալ նրա թարմ, ժողովրդական, պատկերավոր, հյութեղ դարձվածքներով հագեցած կենդանի լեզվով և ոճով<sup>12</sup>։

Սովետական տարիներին Խնկո-Ապերը շարունակեց դեռ «Հասկերի» շըրջանից սկսած մանկական ընթերցանության նյութեր շարահյուսելու գործը։ Հանդես եկավ ժողովրդական հեքիաթների և զրուցների մշակումներով, գրեց դասական առակներ (որոնց մեջ «Մկների ժողովը», «Ճպուռն ու մրջումը» հանրահայտ առակները), մանկական բանաստեղծություններ, փոխադրեց—«հայացրեց», թարգմանեց ոուս և այլազգի նշանավոր գրողների (Կոիլով, Պուշկին, Անդերսեն, Դ. Բեդնի, Ս. Մարշակ, Ա. Բարտո) գրվածքները, որոնք տասնամյակներ շարունակ եղել են «Մայրենի լեզվի» դասագրքերի անբաժան էջերը։

Մի խումբ փորձված մանկավարժ-մանկագիրների (Հայրապետ Հայրապետյան, Հակոբ Աղաբար և այլք) հետ Խնկո-Ապերը եռանդուն մասնակցություն բերեց սովետահայ առաջին մանկական գեղարվեստական ամսագրերի («Պատկոմ» — 1923, Երևան, «Կարմիր ծիլեր», 1923, Թիֆլիս, «Պիոներ», 1925, Երևան) ձևավորմանը, ինչպես նաև սովետական առաջին դասագրքերի, մասնավորապես ընթերցարանների ստեղծմանը։

Աթաբեկ Խնկոյանի ստեղծագործության մյուս ասպարեզը նոր գյուղիկենցաղի ու սոցիալական դիմագծի բացահայտումն էր։

Երկար տարիներ (1923—1930) աշխատակցելով գյուղացիական «Մաճկալ» թերթին, որը հրատարակվում էր կիսագրագետ, գեղջուկ ընթերցողների համար, Ա. Խնկոյանը պարբերաբար տպագրում էր պլակատ-բանաստեղծություններ, ագիտկաներ, շափածո Ֆելիխտոններ, առակներ, ակնարկներ։ Դրանց մի մասը այնուհետև լույս էին տեսնում «Մաճկալի գրադարան» մատենաշարով։

Հայ գյուղի սոցիալական վերակառուցման առաջին տարիների բանաստեղծական ագիտկաներում գյուղացիական լայն ընթերցողներին մատչելի և պատկերավոր լեզվով Ա. Խնկոյանը պատմում էր նոր կյանքի առավելություններից, շեշտը զնելով կենդանի փաստերի վրա, ինչպիսիք էին գյուղացիների անգրագիտության վերացումը («Ես հովիվ եմ գրագետ»)։

Խրճիթ-Ընթերցարանների և լիկկայանների հիմնադրումը («Խնչ մաճկալից—էն ուղիղ գծից»), կանանց մասնակցությունը հասարակական անցուդարձին («Մանանի երգը»), գյուղատնտեսական նոր տեխնիկայի մուտքը, քաղաքի օգնությունը գյուղին, գյուղական կոոպերացիաների կազմակերպումը («Կոոպերատիվին լայն գույս») և այլն։ Դործի զնելով ժողովրդական խոսքի իր-



Հարուստ իմացությունները (այս բանի համար նրան գնահատում էր դեռ Հովհաննելի կամ Արքայանը), Աթ. Խնկոյանը մասնավորապես իր ազգություններում առածներով, թևավոր խոսքերով, ժողովրդական հանգերով, կալամբուրներով, երփիծական բառ ու բանով կիսագրագետ գյուղացի ընթերցողներին բացատրում էր նոր իշխանության լոգումների նշանակությունը գյուղացիության ճակատագրի համար:

Ազգություններին և ագիտականներին զուգահեռ, Աթ. Խնկոյանը հանդես էր գալիս նաև շափածո-ֆելիետոններով, որոնց ծաղրի առարկան առավելապես տերտերն ու կուլակն էին:

Կուլակների ագիտացիային Խնկոյանը պատասխանում է հակա-ագիտացիայով («Խելքի կարուտ գյուղի աղքատ, քեզ մի-անի ալրահատ», «Երեսներդ դեպի գյուղ», «Կովի լուրը—կուլակի առեստուրը»): Այս և նման բանաստեղծությունները, չնայած ուրույն պարզունակությանը, դեր էին խաղում գյուղացիության հոգեբանական վերակառուցման գործում:

Ավելի դիպուկ էր Աթ. Խնկոյանի ծաղրը՝ ուղղված հոգեորականության դեմ: Առհասարակ 20-ական թվականները հակարոնական ագիտացիայի տարիներ էին: Թատրոնը, նկարչությունը, լրագրությունը, գրականությունը՝ յուրաքանչյուրն իր միջոցներով՝ սկետչներով, ծաղրանկարներով, հոգվածներով, ֆելիետոններով եռանդուն մասնակցում էին կրոնական դոգմաների, «դասակարգային հաշտեցման» քարոզների մերկացմանը: Առանձնապես ուժգին էր հակարոնական ագիտացիան «Անաստված» ամսաթերթի էջերում: Այստեղ էլ իր երփիծական ծաղրանկարային դիմանկարներն էր տպագրում Աթ. Խնկոյանը: Մասսայական, հանրամատչելի ժանրերի հանդեպ ոմեցած հակումով և «օրվա շարիբային» թեմաների արծարծումներով Աթ. Խնկոյանը հիշեցնում էր Դեմյան Բեղնու լրագրային ամենօրյա աշխատանքը: Դեմյան Բեղնուն նա հարազատ էր նաև իր շափածոյի բանահյուսական արդուզարդով:

### 3

20-ական թվականներին հեղափոխական, զարթնող Արևելքը դառնում է հայ պոեզիայի թեմատիկական առանցքներից մեկը: Դեռ դարասկզբից Ռուսաստանում սկսված արևելագնացությունը՝ օրիենտալիստական լայն շարժումը, կոչված էր հայտնագործելու ոչ թե էկզոտիկական, խորհրդավոր, առևելծվածային Արևելքը, այլ նրա ներքին ոգին, կենդանի շարժումը, «հոգու հայրենիքը», ինչպես այդ երեւութը սահմանել է տոլլսոյական շնչի արևելագնաց Հովհաննելի կամ Արքայանը՝ «Դեպ Արևելքն աստվածային-հայրենիքը իմ հոգու»:

Դարասկզբի օրիենտալիստական բաղձանքները, հեղափոխական բարձրացող ալիքների ազդեցությամբ, կերպարանափոխվում են նոր օրիենտալիստայի, որի հիմնական բովանդակությունը ոչ միայն Արևելքի ոճային-կոլորիտային գույնների որոնումն էր, այլ Արևելքի ընդերքում հասումացող ազատագրական պայքարի հայտնագործումը:

Այդ հայեցակետն էր ընկած հայոց նորագույն արևելապատումի-արևելահիմների (այսպես է անվանել Ն. Զարյանը իր պոեմներից մեկը) հիմքում: որը սկզբնավորվեց Արևելքի ժողովուրդների Բաքվում կայացած առաջին համագումարի (1920 թ. սեպտեմբեր) ազատագրական կոշ-ուղերձների ոգով և դարձավ առաջին տասնամյակի բանաստեղծական տարեգրության գլխավոր էջերից մեկը:

Արևելքը թեև արձագանք գտավ ժամանակի գործող գրեթե բոլոր բանաստեղծների ստեղծագործության մեջ (Ե. Չարենց, Գ. Մահարի, Գ. Սարյան, Վ. Ալազան, Ն. Զարյան, Ս. Տարոնցի), բայց արևելագիր բանաստեղծի դափնին իրավացիորեն պատկանում է Ազատ Վշտունում:

Ազատ Վշտունին ծնվել է 1894 թ. հունիսի 17-ին, Կան քաղաքում: Ծննդավայրի Երամյան դպրոցից հետո սովորում է Կոստանդնուպոլսի Ազգային կենտրոնական վարժարանում (1908—1911), այնուհետև՝ Սորբոնի Համալսարանի (Փարիզ) գրական-փիլիսոփայական ֆակուլտետում:

Փարիզյան ուսումնառության շրջանում կատարում է բանաստեղծական առաջին փորձերը, դրանք շարունակում է կենսագրության կովկասյան հանգըրվանում, ուր նա եկել էր 1914 թ. աշնանը, Հովհաննես Թումանյանին հղված հատուկ հանձնարարականով:

1915 թ. Բաքվում Ազատ Վշտունին տպագրում է առաջին գիրքը՝ «Սրտիս լարերն» խորագրով, իսկ 1918-ին Թիֆլիսում հրատարակում է «Բանաստեղծություններ» ժողովածուն:

Ա. Վշտունու վաղ քնարը դեռևս հեռու է գեղարվեստական ինքնուրույնությունից: Նրա բանաստեղծությունների վրա ակնհայտորեն գգացվում են այլեւկայլ բանաստեղծների, սկսած սիմվոլիստներից (Վերլեն) և ֆուտուրիստներից մինչև Վահան Տերյան և Ավ. Իսահակյան, մեխանիկական ազդեցությունը:

Վաղ քնարը ընդգծվում է քաղաքացիական շեշտերով: «Տերևաթափի», «աշնանայնության», «վերջալույսի», «դալուկ աղջկա», «հայրենագրկության», «մենակության», «անհույս ճամփաների» ավանդական բանաստեղծական պատկերների կողքին նրա բանաստեղծություններում երևում են «ոսկե հորթերի» դեմ ուղղված ատելության շեշտեր, հայրենասիրական մաքառման ոիթմեր («Սրբիր աշքերդ, ժամը չէ լացի, — 0՞ն, զենքերդ առ...»):

Դառնալով «Պայքար» բոլցկիկյան թերթի աշխատակիցը, Ա. Վշտունին նոր գաղափարների ազդեցությամբ իր քնարը լարում է սոցիալական մոտիվների հանգույն («Բանվորական քայլերգ», «Գարնանականը»—1917), արևի զորավոր ուժի ապրումներով («Դուռը բացի հյուղակիս, Արևն առավ ներս...»):

Ա. Վշտունու վաղ քնարի բարձր կետը 1917-ին գրած «Փոքրիկ լրագրավաճարը» խոր ապրումի և անմիջական շնչի բանաստեղծությունն է:

Բանաստեղծը վերակերտել է «խարտյաշ մազերով, լճակ աշքերով» տասնամյա այն տղայի կերպարը, որն իր ձայներով լցնում է մեծ քաղաքի փողոցը:

Բոքիկ ոտքերով տղա, առուլգ, կիսամերկ տղա,  
Փողոցն միշտ կանցնես արագ, մայթը կըթնդա վազեղ,  
Հպարտ, աշխատող տղա, մրի, զրկանքի տղա,  
Կանչիր, համարձակ գնուա—նոր լուր, հեռագիր, գազեթ...

Բանաստեղծական մուտքի օրերին Ազատ Վշտունին աշքի է ընկնում նաև հասարակական գործի տվյալներով: 1918—1919 թթ. աշխատում է Թիֆլիսի Հին Ներսիսյան որբանոցում՝ իբրև կառավարիչ, հրատարակում է որբանոցի «Փարոս» տպագիր հանդիսը, որին մասնակցում են Գ. Մահարին, Վեսպերը, Սարմենը և բանաստեղծական մուսաներով հափշտակված ուրիշ որբեր:

20-ական թվականներին Ե. Չարենցից հետո ամենատարածված անոնքը Ա. Վշտունին էր: Այդ մասսայականությունը նա նվաճել էր իբրև պրոլետարական գրական շարժման կազմակերպիչ: Հայաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիայի և նրա օրգան «Մուրճ» (1922) ամսագրի հիմնադիրը հե-

տագայում վարել է այլևայլ գրական-խմբագրական պաշտոններ Երևանում, Թիֆլիսում, Ռուսական Մոսկվայում, ի ցույց դնելով կազմակերպչական անուրանալի կարողություններ:

Հայաստանի պրոլետարական գրական շարժման ոգեծնչողներից մեկը լինելով, իր գործունեության ընթացքում Ա. Վշտունին թույլ է տվել նաև «աղանդավորական» բնույթի սիալներ, նոր գրականության ձևավորման հիմնական ծանրությունը դնելով «ցեխի» բանաստեղծության տեխնիցիզմը («Անիվ, անիվ, անիվ, բանող, մանող, հանող» և այլն):

Ստեղծագործության մեջ ևս Ա. Վշտունին հակված էր դեպի «ցեխի» բանաստեղծության տեխնիցիզմը («Անիվ, անիվ, անիվ, բանող, մանող, հանող» և այլն):

Մուրճական շնչի բանաստեղծությունները փաստորեն ընդհանուր մոդելներ էին՝ թափուր մարդկային կենդանի ապրումներից:

Հուգական-պաթետիկ շնչով աշխի ընկան «արևելյան» բանաստեղծություններն ու պոեմները, որոնք դեռ հեղափոխության օրեանունում:

Հետ  
Արևելքի մահացող ալամ,  
Սաւամ քեզ...

Իր «Հրագիր ղալամը» Վշտունին կատարելագործում է 20-ական թվականների արևելյան շարքերի մեջ: Դրանցից առաջինը նա տպագրում է մամուլում՝ Սեյիդ Էլ Նուր՝ Արևելքի անհայտ բանաստեղծի անումով, մյուսները՝ «Neo Orientalia» (1923), «Սալամնամե» (1924), «Արևելքը հուր է հիմա» (1927) ժողովածուներում: Դեռ 1919—20 թթ. Վշտունին եղել էր Արևելքի հայտնի կենտրոններում՝ Հալեպ, Մոսուլ, Բաղդադ, Բեյրութ, Երուսաղեմ, իսկ 1921-ին սովետական կառավարության հանձնարարությամբ մեկնել էր Իրան և Իրաք՝ կազմակերպելու հայ տարագիրների վերադարձը:

Այդ ուղերությունները հարավորություններ են ստեղծում ավելի մոտիկից շփվելու Արևելքի կյանքի հետ և ավելի ստույգ ճանաշելու «անարև մարդկանց» ապրելակերպի սոցիալական-դիմագիծը, նրանց հոգում կուտակվող ցամաման ու բողոքի ալիքները, ավելի գգալու արևելյան բազմերանգ կոլորիտը:

Ա. Վշտունու և առհասարար հայ բանաստեղծության արևելապատումի մեջ շկան, իհարկե, «արևելյան ոգու» հայտնություններ և «Արևելքի հասկացված էության» այնպիսի թափանցումներ, ինչպես դա արեց Մարտիրոս Սարյանը իր նկարչության մեջ: Ա. Վշտունու արձագանքները գերազանցորեն



սոցիալական հակադրությունների բանաստեղծություններ են («Դրախտ», «Դերվիշը», «Ծովը», «Արևելքի փողոցում» և այլն), երբեմն նաև դարերով անշարժ ու նիրհած կենցաղի զարթնումը ազդարարող պոռթկումների գրանցումներ:

Ա. Վշտունու արևելագրության ուժեղ էջը, անտարակույս, «Ուղտը» լայնաշունչ բանաստեղծությունն է, ուր ավանդական արևելյան խորհրդանշանը վերաիմաստավորվում է ազատագրական պայքարի խորհրդանշանով:

Ուղտապանը, դիմելով իր հարազատ ընկերոջը, իր մտերմին՝ Ուղտին, նրա իսկ տիրության ու բարկության միջոցով պատմում է իր հոգեկան տառապանքը.

Ինչո՞ւ,  
Սիրելիս,  
Հայացքիդ մեջ թափիծ կա,  
Հայացքիդ մեջ՝  
Անաստղ գիշեր  
Ու բարկություն:  
Ինչո՞ւ  
Օտարների հետքեր կան  
Ավազների վրա:  
Հարազատներիդ արյան շիթեր կան  
Ավազների վրա,  
Սիրելիներիդ արցունքի ցողեր կան  
Ավազների վրա:

«Ինչո՞ւ հարցին, բնականաբար, պետք է հետևեր «Ե՞րբ» հարցումը՝ ապագա կյանքի լուսեղեն երազանքով.»

Ե՞րբ,  
Երբ վերջապես տեսնենք պիտի  
Պարանոցդ արկին պարզած  
Թռ հողմածուփ  
Եվ շոգեկունչ նոր անապատթամ:  
Ե՞րբ,  
Ե՞րբ,  
Ե՞րբ,  
Սիրելիս:

Արևելյան ժողովուրդների ինքնագիտակցության արթնացումը նկարագրելու առումով որոշ հետաքրքրություն է ներկայացնում հնդիկ և չին պատանիների մասին պատմող «Ռամ-Ռոյ» պոեմը, ուր դրամատիկ սյուժեն ողողվում է քնարական զեղումներով:

Ինչպես Վշտունին, այնպես էլ Արևելքի թեմայով հանդես եկած մյուս բանաստեղծները ավելի ուշադիր էին Արևելքում սկսված շարժման գաղափարի, քան պատմական-կենցաղյին միջավայրի բանաստեղծական ձևի հանդեպ: Նրանց բանաստեղծություններում ևս տեղ ունեին եվրոպական օրիենտալիստական շարժմանը բնորոշ էկզոտիկ հափշտակությունները, երևույթների արտաքին ցուցադրման գիծը, գույնզգույն «արևելականությունը», «խորհրդագրությունը»:

Վշտունուն ևս ավելի գրավում էր Արևելքի աշխարհագրությունը, քան բուն, ներքին էությունը, այն, ինչ Հովհաննես ծեակերպել է «Արևելքի եղեմներին իշավ պայծառ իրիկուն» տողով և Մ. Սարյանը արտահայտել է պոլսական, եգիպտական, պարսկական հանրահայտ կտավներում:

30—40-ական թվականներին Ա. Վշտունին հանդես եկավ մի շարք նոր գործերով («Խոսում է Արևելքը» հրապարակախոսական շնչի ոեպորտաժը, թուրքմենական շարքը, պատերազմի տարիների հայրենասիրական բանաստեղծությունները և այլն), որոնք ոմեն սոսկ գրապատմական նշանակություն:

#### 4

Հայ նորագույն բանաստեղծության ինքնորոշման շրջանի (1921—1925) գեղագիտական կողմնորոշումները, անշուշտ, ունեն պատմասոցիալական և հոգեբանական անհրաժեշտ հիմնավորումներ: Պատմության արմատական անկյունաքարը՝ սոցիալիստական հեղափոխությունը, հրամայարար թելադրում էր երգի՝ բանաստեղծական խոսքի նոր տեսակներ ու նոր ձևեր, որոնք պետք է համապատասխանեն նույն հեղափոխության հրահրած նոր բովանդակությանը: Աներկա հայ բանաստեղծությունը, —գրում էր Ե. Զարենցը, —պետք է փորձի գեղարվեստական ձևեր գտնել մեր աշխատավորության հոգեբանությանը և խառնվածքին համապատասխան»<sup>13</sup>:

«Արդի ոռւսական պոեզիան» գեկուցման մեջ Ե. Զարենցը գրում էր: «Ռուսաստանում կատարված ամեն մի գրական շարժում անմիջապես արձագանքել է մեղանում, առաջ է մղել մեր գրականության անիվը, նշել է նրա համար շավիղներ և ուղիներ»<sup>14</sup>:

Այս մտքի առարկայական ցոլացումն է նաև հայ բանաստեղծության ներկան՝ հատկապես 20-ական թվականների բանաստեղծական կյանքը, որի «անմիջական մասնակիցներն» էին Վլ. Մայակովսկին և Ս. Եսենինը, Էդ. Բագրիչկին և Դ. Բեդնին, «պրոլետկովտական» և «կոմերիտական» բանաստեղծները, ոոմանտիկներն ու ռեալիստները, գյուղագիլներն ու քաղաքագիլները:

Հայ պոեզիայի պատմության նշանակալից էշերից մեկը Վլ. Մայակովսկու պոեզիայի հետ ունեցած լայնահուն փոխանցն է:

Դեռ 10-ական թվականների վերջից Վլ. Մայակովսկին դառնում է նաև հայ բանաստեղծների ուշադրության առարկան՝ իր հեղափոխական ոիթմերով ու երազանքներով, իսկ հաջորդ տասնամյակներում՝ 20—30-ական թվականներին, նորագույն պոեզիայի առաջադրությունները լուծելիս հայ բանաստեղծները շարունակ դիմում էին նրա գեղարվեստական նորարարությանը:

Թեև որոշ ուսումնասիրություններում, օրինակ, Հր. Գրիգորյանի «Մայակովսկին և հայ գրականությունը» (1956, Երևան) ոռւսերեն գրքում ակնհայտ շափազանցությամբ հայ գրական կյանքի առանցքը համարված է «հանուն և ընդգեմ Մայակովսկու գրությը, այդուամենայնիվ Մայակովսկու գերը իրապես նշանակալից է: Նշանակալից է մի շարք առումներով. նախ և առաջ բանաստեղծությունը իրականությանը մերձեցնելու, թեմատիկայի կոնկրետացման տեսակետից: Ճիշտ է, Վլ. Մայակովսկու գասերից հետո էլ դեռ բանաստեղծական միտքը շատ դեպքերում դեգերում էր վերացական կոսմիկականության և «էլեկտրաերկաթյա» իրականության ձոներգային փառաբանության ուղիներում, սակայն շատ դեպքերում էլ արձագանքում էր նոր իրականության վլսավոր անցքերին՝ կոնկրետ-թեմատիկական ուղղությամբ:

Դրա մի վառ արտահայտությունն էր հայ իրականության ուրբանիզացիայի արձագանքը բանաստեղծության մեջ, որը սկսվեց Զարենցի «Պոեզությունայիշ» թեև դրամատիկ, բայց պատմական օրինաշափությամբ և շարունակություն:

Նակվեց նոր քաղաքների ներբողներով, գյուղաքաղաքային կյանքի հատկա-նիշների իմանդավառ ընդգծումով՝ «փողոցում ոփթմ ու տենդ» (Մ. Արմեն): Այդ նոր «ոփթմն ու տենդը», սակայն, հաճախ հանդես են գալիս բանվորա-զարկի բանաստեղծության բոլոր հատկանիշներով՝ «արտադրական արվես-տի» գլխավոր դրույթով:

## 5

20-ական թվականների վաղ տարիների պղնձի շեփորների և զվարթա-ձայն թմբուկների համերգի մեջ գրեթե անլսելի էին քնարական սրինգները, որոնք համարվում էին անզոր ու անօգնական՝ արձագանքելու ժամանակի ոփթմերին: Անհատական-մտերմական քնարերգության ժխտումը դարձյալ սկսվում էր դասական բանաստեղծության ավանդների վրա խաչ քաշելով:

Ոչ միայն Չարենցը՝ «Ռոմանս անսերի» հայտնի տողերով («Տերյանի երգը թքոտ»), ոչ միայն ուղղափառ մուրմական-դարբնոցականները, այլև Գ. Մահարու նման սրնգահարը ժամանակավոր բռնկման մի պահի իրեն «օտարը» էր համարում սիրո, գարնան, կարոտի ու ցավի երգիշներին, օրի-նակ, Հովհ. Հովհաննիսյանին:

Մտերմական ապրումներից, իհարկե, առաջին հերթին գրոհվում էր սիրո երգը, համարվելով քաղքինիություն («մեշանիզմ»), իսկ լավագույն դեպ-քում մեծարվում էր հոգեկան ապրումներից թափուր, մարմնական-զգայական սերը՝ «սեռական առողջ բնազդի» այն տեսանկյունով, որ հրահանգում էին «ծրեքի» բանաստեղծները: Հակադրվելով գալանտ սիրո քնարերգությանը, Վ. Տերյանի նրբածայների ու նրբագոյների բանաստեղծությանը, ոչ միայն «Ռոմանս անսերի» Չարենցը, այլև ուրիշները, օրինակ, Գ. Արովը, Էսթետաց-նում էին կրքի գալարներն ու հեշտամոլ ցանկությունները, կին-էգին ու սե-ռական բնազդները, «ստինքները նյարդահաշիշ» ու «կոնքերը ամոքիչ»:

«Սեռական բնազդի» բանաստեղծության ամենաբնորոշ օրինակը Գ. Արո-վի «Միայն կինը» ժողովածում էր:

Մտերմական քնարերգության մոլեգին բացասման օրերին իսկ («Դեն նետեցեք ձեր շվին», 1922-ին գրում էր Չարենցը, «Դեն տարեք քնարները ձեր», — 1923-ին ձայնակցում էր Վ. Ալավանը) լսվում են նաև սթափ ձայներ, որոնք պաշտպանում են այդ քնարերգությունը: Այս առումով շափազանց դնահատելի են նույն Գ. Մահարու գեղագիտական դիրքերը, որոնք իրենց մեջ կրելով եսենինյան որոշակի լիցքեր՝ ուղղված «երկաթի թաթի» տիրապետու-թյան դեմ («Վաղը ուշ կինի, երկաթ ու մեքենա» — 1923) ճանապարհ էին հայ-ցում կանացիության սկզբի՝ սիրո, բնության գեղեցկությունների, մարդկային տիրությունների, պայծառ ու ամոքիչ թախծի համար, «ներքին մարդու հո-գեբանության համար»:

Քնարական-իրիկնային սրնգի իրավունքը Գ. Մահարին ասպարեզ է հա-նում Վ. Տերյանի «կրակների» պաշտպանությամբ («Ո՞վ է թքում քո կրակին — Վահան Տերյան», 1924), բանավեճ բացելով Չարենցի դիրքերի դեմ:

Գ. Մահարու «հակաւչարենցյան» ծառացումները բախվում էին նույն Չա-րենցի գեղագիտական այն ծրագրերին, որոնք հակասության մեջ էին նրա ոռ-մանս-անսերյան մոլեգնությունների հետ: Դրա օրինակն է «Ասպետական» ուապսողիան, ուր մեծարվում է սիրո ուժը:

Այսուամենայնիվ, դեռ ժամանակ էր պետք՝ նվաճելու մտերմական քնարերգության իրավունքը:

6

20-ական թվականների պոեզիայի (նաև հայ պոեզիայի) «այուծետային» ուղղությունը կապվում էր գերազանցապես բալլարի բնարական տեսակի զարգացման հետ: Այնքան շատ և այնքան արտահայտիչ բալլադներ գրվեցին, որ գրական տեսությունը սկսեց խոսել ոչ թե հինավորց ժանրի «մահացման» կամ «ծերացման» փաստից, այլ վերածնդից: Բալլարի բուռն զարգացման օրինաշափությունը հիանալի բնութագրեց Վլ. Մայակովսկին՝ «Այդ մասին» պոեմի (1923) բնարական «շեղումներից» մեկում.

Не молод очень лад баллад,  
Но если слова болят  
И слова говорят про то, что болят,  
Молодеж и лад баллад!<sup>15</sup>

Հարց է ծագում, ինչո՞ւ ժամանակի պոեզիան ողողվեց բալլարային կառուցվածքներով ու ոիթմերով, ինչո՞ւ բալլարը նվաճեց առաջին բնագծեր:

Հարցերի բացատրությունը կապված է բալլարի ժանրի գեղարվեստական հնարավորությունների, ինչպես նաև առանձնահատկության հետ:

Բանն այն է, որ սոցիալիստական հեղափոխության բովանդակությունը՝ հերոսության և պայքարի ոռմանտիկան, որոնում էր գեղարվեստական արտահայտման համապատասխան միջոցներ, իսկ բալլարը ճկոմ բանաստեղծական այն տեսակն էր, որ դրամատիկական լարված սյուժեի և բնարական հուզական վերաբերմունքի միջոցով կարող էր հնչեցնել հերոսության ոռմանտիկական վեհությունը:

Կար նաև մյուս մոմենտը. բալլարը գործողության ժանր էր, Ն. Տիխոնովի բնորոշումով՝ «մերկ արագություն», իսկ դա շատ էր պատշաճում ուժի, շարժման և գործողության գեղագիտությունը:

Մննդյան նոր վկայականի արժանացած բալլարը, անտարակույս, ավանդական-ժողովրդական կամ գրական բալլադների պարզ կրկնությունը կամ մոտավոր վերարտադրությունը չէր:

Դա նման չէր ոչ ժանրի նախնական նմուշներին՝ պրովանսյան տրուքադրությունների պարերգներին, ոչ պատմական-տվանդապատումային սյուժեների բանահյուսական օրինակներին, ոչ ոռմանտիկական բալլարի կառուցվածքներին, ոչ էլ անդամ ժանրի ոեալիստական մեկնաբանություններին:

Հայտնի է, որ բալլարի ժանրի ծաղկումը կապված է ոռմանտիկմի գեղագիտության հետ: Վալտեր Սկոտը Շոտլանդիայում, «Էճային դպրոցի» բանաստեղծներն Անգլիայում, Աղամ Միցկեկիլը՝ Լեհաստանում, Ֆր. Շիլերը՝ Գերմանիայում, Ժոկովսկին՝ Ռուսաստանում, օգտագործելով ժողովրդական բալլարի կառուցվածքային սկզբունքները, կանոնիկ ժանրային տեսքի բերին ժանրը, պարտադիր համարելով ավանդապատումային սյուժեն, ֆանտաստիկական պայմանական միջավայրը, գործողության լարումը, ֆրագմենտակերպ պատումը, հանդույցների անսպասելի, «հեքիաթային» լուծումները:

Ռումանատիկների կանոնացված բալլարը, լինելով որոշակի աշխարհայեցողության ծնունդ, բնականաբար, չէր կարող վերակրկնվել պատմական այլ

Հանգամանքներում: Նոր ժամանակների նյութը անհրաժեշտաբար բավագի ժանրատեսակին թելադրեց «ապականոնացված» կառուցվածքներ: Ասել է թե՝ բալլարդ թոթափեցին ավանդապատումային-դիտարանական-ֆանտաստիկական սկիզբներից և ժանրի նյութական ատաղձը դարձրին անպայմանական, իրական հանգամանքներում գործող հերոսների, գերազանցապես քաղաքացիական կոփվների նահատակների սխրանքները:

Ժանրի նորացումը ընթանում էր առավելապես ուսալիստական և հոգեբանական գծերի կուտակման ճանապարհով, թեև պահպանում էր նաև բալլարդ ավանդական կառուցվածքներին հատուկ շունչն ու կոլորիտը:

Բալլարդի սովետական վարպետների՝ Վ. Մայակովսկու, Ն. Տիխոնովի, Գ. Տարիեցի, Էդ. Բագրիցկու, Պ. Տիշինայի, Մ. Սվետլովի և այլոց հետ ստեղծագործական փոխկանչի էին գնում նաև հայ բանաստեղծները, առաջին հերթին Եղիշե Զարենցը:

Ժանրի «սիմվոլիստական ըմբռնումներին» քաջածանոթ բանաստեղծը.— ինչպես նկատել է գրականագետը, ««վճռականորեն հեռացավ իր նախկին բալլարդների ոճից, առանձին նշանակություն տալով սյուժեի դրամատիկական բովանդակությանը»<sup>16</sup>:

Իրենց բնույթով Զարենցի բալլարդները մարտիրոսագրություններ են, որոնք ներկայացնում են ժողովրդի ազատության ճանապարհին նահատակված մարտիկների՝ կիպարիտ Միշյանի, 26 կոմիսարների, Բորիս Զնելաձեի և այլոց, հերոսական կյանքը:

Մարտիրոսագրության թեքում ունեն նաև բալլարդիր մյուս բանաստեղծների (Գ. Մահարի, Ս. Տարոնցի, Ս. Վահոնի) գրվածքները:

## 7

Եթե պատմականորեն արդարացված էին նոր բովանդակությանը համարժեք բանաստեղծական նոր ձևերի որոնումները, սակայն անստույգ էին դրանց յուրացման ուղիները, մասնավորապես դասական ավանդներից խզման հրահանգները:

Հայ սովետական պոեզիայի սկզբնավորման տարիների հախուսն բացառումներից հետո, 20-ակտոն թվականների երկրորդ կեսից արդեն սկսվում է այսպես կոչված դասականների վերադարձի շարժումը՝ ավելի վաղ, քան «նախատեսել էր» Եղիշե Զարենցը իր «սահմանագծային» կուանումների օրերին:

Մինչ «Երկու աշխարհի սահմանագծում» հոդվածի մեջ դասականների վերադարձի-հաղորդակցության ժամանակը համարվում էր հեռավոր ժամանակը, մինչ «այսօրվա պոեզիան» համարվում էր «Հնից, անցյալից» խզման անհաղորդ խոսք, այդ տրամադրություններից քիչ ժամանակ անց նույն Զարենցը խորապես զգաց վերադարձի կանչի անհրաժեշտությունը:

Պոեզիայի օրենսդիր Զարենցը, ինչպես երևում է արտասահմանից 1925-ին գրած նամակներից (Ալ. Մյասնիկյանին, Հ. Սուրխաթյանին, «Վիշ-կայի» խմբագրությանը), «Պոեմ հերոսականի» Պրոլոգից («Լեֆյան թմբուկը թողած մի կողմ») էական սրբագրություններ է կատարում իր գեղագիտական «պողիցիաների» մեջ, կոնկրետ իրականության երևույթների արտացոլման դրույթների հետ միասին զարգացման պարտադիր պայմանը համարելով դասական հողի ներշնչանքը՝ դասական գեղարվեստական ձևերի կատարելագործումը:

Սահմանագծային 1927 թվականն էր, երբ Զարենցը հայտնի երեսդարձից հետո հանդես եկավ Վ. Տերյանին ուղղված «Վերադարձի կանչով», որը նշանակություն ունեցավ առհասարակ գրական շարժման համար ինավ պատահական չէ, որ շարենցյան վերադարձի կանչը լայն արձագանք ունեցավ բանաստեղծների շրջանում (սկսվեց դասականների ծոներգությունը), իսկ 30-ական թվականներին այլևս վերադարձը դարձավ գեղագիտական մի ամբողջ շարժում՝ շարենցյան հայտնի սահմանումներից («Վերադարձը դարձ չէ այլևս և ոչ էլ կրկնություն հնի» և այլն) և նրա պուշկինյան-գյոթեական-թումանյանական, առհասարակ դասական մեծ արվեստի ներշնչանքներից բացի իր մեջ ընդգրրեկելով այլևսյ բանաստեղծական ծրագրեր (ինչպես Վ. Ալազանի «Պոեմ պոետների համար» երգը, և. Զարյանի «Ֆիրդուսի» բանաստեղծությունը, Գ. Մահարու, Ս. Տարոնցու, մյուսների ծոներգները՝ դասականներին):

## 8

20-ական թվականների և 30-ական թվականների սահմանագծային գրական ասովիսների առանցքն է դառնում բանաստեղծության «հոգեբանականացման» խնդիրը:

Ամբողջ մի տասնամյակ հիմնականում գեգերելով պաթոսային-հրապարակային, նաև աղմկարար-անթրթիռ բանաստեղծության ուղիներում, նորագույն սովետական պոեզիան, գրականության մյուս ժանրատեսակների հետ, սկսում է գիտակցել հոգեբանության, պատկերի հոգեբանական շնչավորման անհրաժեշտությունը:

Այս պահանջի հողի վրա տեսական ասպարեզ է նետվում այսպես ասած՝ «կենդանի մարդու հրահանգը՝ այդ հրահանգի ոչ միասին, անգամ հակադիր մեկնաբանություններով»:

Մինչև «կենդանի մարդու» նշանաբանի հրապարակ գալը, գրականության մեջ հերոսների (այդ թվում նաև «քնարական հերոսների») հոգեկան աշխարհի սուզումները ընթացիկ գրական տեսության մեջ համարվում էին անհարիր և անպատշաճ նոր գաղափարախոսության ոգուն:

«Հակահոգեբանական» դիրքերի ցայտուն արտահայտությունն էր, օրինակ, «Standart»-ի «գրական ծրագիրը», ուր Զարենցը գրում էր. «Պսիխոլոգիզմն առհասարակ առնշություն չունի պրոլետարիատի մատերիալիստական աշխարհայացքի հետ, որովհետև վերջինս հետաքրքրվում է իրերի ոչ թե այսպես կոչված «էությամբ», այլ փոխհարաբերությամբ: Մեր գրականությունը ևս, ելնելով այդ աշխարհայացքից, պետք է հետաքրքրվի ոչ թե նրանով, թե ինչ է կատարվում տվյալ անհատի այսպես կոչված հոգում, այլ նրանով, թե ինչ դեր է խաղում նա արտադրական հարաբերությունների մեջ: Իհարկե, սա շի նշանակում, թե մենք բացասում ենք հոգեբանությունը. սա նշանակում է միայն, որ այդ «հոգեբանությունը» վեր հանելու համար բավական է ցույց տալ գործողությունը»<sup>17</sup>:

Այս մտայնությունը, իհարկե, գտարյուն հայկական երեւյթ չէր և աչդ մտայնությամբ միայն Զարենցը չէր «գերված»:

Դա նույնպես լեֆական—«ձախ» լեֆական-կոնստրուկտիվիստական մտածողություն էր (հոգեբանության փոխարեն գործողություն), որին ընդգեմ ուապական տեսաբանները (որոնց մեջ ամենաակտիվը Վ. Երմիլովն էր) առաջ քա-

շեցին «կենդանի մարդու» և «պսիխոլոգիզմի» պրոբլեմը, իրեւ «պրոբլեմ-ների պրոբլեմ»:

«Կենդանի մարդու» լողումքը ուսպական ծագում ուներ: Նրա հրահանգիշ-ները՝ Վ. Երմիլովը, Ա. Ֆադենը, Լ. Ավերբախը գտնում էին, որ գրականության գարգացման գլխավոր լծակը, տվյալ ժամանակային հատվածում, «կենդանի մարդու պատկերումն է»:

Լողումքի հայ հետեւողները, մասնավորապես Հայկ Գյուլիքեսյանը, շեշտը դնելով «գործողության մոտիվացիայի» գլխավոր կետի վրա, իրենց հոդվածներում պակաս տեղ էին հատկացնում մարդու ներքին ապրումների պատկերման խնդրին, ասել է թե սխեմատիզմը փոխարինում էին դարձյալ սխեմա-տիզմով:

Էղ. Զրբաշյանը «Հոգու դիալեկտիկան» Եղիշե Զարենցի պոեզիայում» (1928—33) ուսումնասիրության մեջ («Զորս գագաթ», 1982) վկայակոչում է լուսպական գործիչների ասույթները, որով «պրոլետարական գրականության ուղին» համարվում էր «կենդանի մարդու հոգեբանական բացահայտումը»: Միաժամանակ նա ցուց է տալիս «կենդանի մարդու» լողումքի խեղաթյուրումները հայ մամուլի հոգվածներում:

Բնորոշ օրինակներից մեկը ն. Դարայյանի դատողություններն էին այդ հարցի կապակցությամբ:

Ընդունելով ղեկավար ցուցմունքը, թե «կենդանի մարդու» դավանանքը պրոլետարական գրականության ճանապարհն է, ն. Դարայյանը մերժում էր «անհատական հոգեբանությունը», գտնելով, որ այդ կերպը հնարավորություն է տալիս միայն «այս կամ այն հասարակական խմբակցության հոգեբանությունը վերլուծելու համար»<sup>16</sup>:

Ավելի խորունկ տեսաբանները, ի տարբերություն նրանց, ովքեր «կենդանի մարդու» հրահանգը հանգեցնում էին բացառապես «հոգեբանական իմպուլսների» վերարտադրման սխեմային, այդ նշանաբանը մեկնաբանում էին մարդու և հասարակական հարաբերությունների պլանով, անհատական հոգեբանության մեջ նշմարում էին հասարակական կյանքի բեկումները:

«Կենդանի մարդու» լողումքը, իհարկե, դեր խաղաց բանաստեղծության գարգացման առաջ կանգնած այնպիսի պատնեշի հաղթահարման մեջ, ինչպիսին սխեմատիզմն էր, որը տեղ էր գտել ոչ միայն ստեղծագործական գործնականի մեջ, այլև մի շարք դիրքական քննադատների շանքերով ստացել էր տեսական հիմնավորում՝ իրեւ դարաշրջանի գրականության մեթոդ:

Այսուամենայնիվ, «կենդանի մարդու» լողումքը, հոգեբանական վերլուծության պահանջը, որոնք պատմականորեն որոշակի դեր խաղացին գրականությունը սխեմատիզմից և վերացականությունից ազատագրելու գործում, շուտով իրենք էլ վերածվեցին յուրօրինակ սխեմայի, ձեռք բերեցին դոգմատիկ գծերը<sup>19</sup>:

«Կենդանի մարդու» լողումքի դոգմատիկացումը զգում էին նաև դրա պաշտպան-քննադատները, ծառանալով այդ լողումքի շարաշահումների և ժողումների դեմ:

Հայ իրականության դիրքական տեսաբաններից ամենից սթափը՝ Հայկ Գյուլիքեսյանը 1930-ին գրում էր. «Ոմանք մինչև այժմ էլ չեն դադարում կենդանի մարդու պրոբլեմը քաշքշելուց: Այդ պրոբլեմն առաջ եկավ, երբ կենդանի մարդուն անհրաժեշտ էր հակադրել սխեմատիկ, անկենդան մարդուն գրականության մեջ, երբ հարկավոր էր սխեմատիզմի հետ հաշիվները մաքրել

և անցնել զարգացման նոր, ավելի բարձր էտապին: Հիմա արդեն վեճը կենդանի մարդու շուրջն էապես զուրկ է այժմեականությունից, ունի սխոլաստիկ բնույթ: Ասել, որ պրոլետարական ռեալիզմի համար անհրաժեշտ է ցուցահանել, նկարագրել կենդանի մարդ, նշանակում է ընկնել ամենաձանձրալի կրկնողության մեջ»<sup>20</sup>:

Թերեւս լոգունգի շարունակ կրկնությունը, մանավանդ դրա սխոլաստիկ մնկնաբանությունները ավելորդ էին, բայց բանաստեղծության գործնական տնտեսությունը կարիք ուներ հոգեբանական խորացումների, որի սուր պահանջի արտահայտությունն էին ե. Չարենցի «էպիքական լուսաբաց» գրքի (1930) մտերմական զրույցները իր Մուսայի հետ՝ կենդանի մարդու հոգեկան ներքին աշխարհը թափանցելու թեմաներով:

Ինքը՝ Չարենցը, արդեն ստեղծել էր հոգեբանական կտավներ, ինչպես «Խըմբապետ Շավարշը» պոեմը, մի շարք բանաստեղծություններ, որոնց հիման վրա էլ ծառանում էր «իրերի գերության» դեմ («Ի՞ն էի ընտրել իրը հարսնացու») և պահանջ էր դնում հոգեբանությամբ շնչող պոեզիայի:

## 9

Հոգեբանությունը, թեև դժվարությամբ, թափանցում է քնարերգության մեջ:

Նորագույն բանաստեղծության առաջին հնգամյակի հիմնականում անթրթիո, հոգեկան անմիջականությունից զուրկ ոտանավորագրությունից հետո քնարական խառնվածքի այնպիսի բանաստեղծներ, ինչպես Գ. Մահարին, Գ. Սարյանը, Վեսպերը, Վ. Նորենցը ասպարեզ են հանում սիրո և կարոտի՝ «Հոգեկան շարժման» նվագներ:

Օրինաշափ էր և այն, որ անհատական ապրումների կենտրոնակետը դառնում է հեռուներում մոլորված ծննդավայրի կարոտը, և այն, որ այդ կարոտը՝ նոստալգիան, արտահայտվում է գերազանցապես տեսիլքի ու երազի՝ երազատեսության, բանաստեղծական հնարանքի միջոցով:

Քնարերգության առաջին սուրհանդակը լինում է Գուրգեն Մահարին, որը թեև գրում է «սեր երգել—լուսին», ի՞նչ սեր և ի՞նչ լուսին և նման տողեր, որի սիրային բանաստեղծությունը «Գրական դիրքերում» ամսագրում տպագրվում է «մարդերի փոխանակության կարգով» (1927-ին), այդուամենայնիւ վերադառնում է դեպի Վ. Տերյանի և Մ. Մեծարենցի բանաստեղծական աշխարհը՝ սիրո, բնության և հատկապես ծննդավայրի կարոտի, զիլ ձայների կողքին բերում է նաև տիխրության նվագներ:

Տիխրությունը ևս ռարգելված գոտին էր, ուստի և ժամանակի բանաստեղծը գրում էր.

Տիխրություն է իմ սրտում,  
Եվ ուրախ եմ, և տրտում.  
Մի արջ անցավ անտառում,  
Գիրքս էր կարդում, մրթմրթում:

Գ. Մահարին քաղաքացիական անցաթուղթ տվեց ոչ միայն «մտերմական թեմաներին», այլև դրանց արտահայտման թախծաշունչ շեշտերին, համայնական դողանջների մեջ ընդգծվող անհատական ձայներին:

Գ. Մահարու կողքին իբրև քնարական շնչի բանաստեղծ աշխի ընկալվաղացականի նորենցը (1903—1973):

Վաղարշակ նորենցը (Երիցյան) Սասոնի Շենիկ գյուղից՝ իր ծննդավայրից, հազարավոր հայրենակիցների շարքում 1915-ին բռնում է գաղթի ճամփան և հաստատվում կովկասյան որբանոցներում:

Թիֆլիսի որբանոցում նա կատարում է բանաստեղծական առաջին փորձերը, որոնցից մեկը՝ «Սասնա լեռներ» խորագրով (տպագրվում է 1917-ին), արժանանում է Հովհ. Թումանյանի քաջալերիչ խոսքին:

Մեծ բանաստեղծի առաջարկությամբ նորենցը դառնում է Հայ գրական Ընկերության որդեգիրը:

1918—1919 թթ. նա ևս, մյուս որբերի հետ միասին, բանաստեղծություններ է տպագրում Հին Ներսիսյան դպրոցի «Փարուս աշակերտական թերթում»:

Մինչև բանաստեղծությունների առաջին գրքի տպագրությունը («Օրերի ճամփին»—1926), Վ. Նորենցը մամուլում պարբերաբար հանդես է գալիս քնարական շնչի բանաստեղծություններով, որոնց մեջ ուշագրավ է «Ճերմակ տեսիլներ» շարքը:

Այդ շարքի բովանդակության համար հատկանշական է հետևյալ բանաստեղծական դարձվածքը՝

Թողած արեւ ուսկեղեն  
Ես տեսա սրուներ ճերմակ...



Իրապես, «Ճերմակ տեսիլներում» նորենցը պատմում է իր կորուստներից՝ հայրենական տան և հարազատների, որոնք այլևս նրան երեսում են ոչ թե առարկայական գոմագծերով, այլ հեռու-հեռավոր տեսիլքների տեսքով:

Տեսիլքներ են «Հայրը» («Անէացել և դարձել աղոթք»), «Մայրը» («Ութուել է դեպի երկինք՝ իմ կաթոգին մայրը թոշուն»), «Քույրը» («Դարձավ ճերմակ-ճերմակ փրփուր, ափին մնաց դատարկ սափոր»), «Եղբայրը», «Լուսինը», «Երկինքը», «Դիշերը», որոնց կորստյան՝ պատրանաթափի բովանդակությունը ասպարեզ է բերվում դրամատիկական շեշտերով:

Ոչ միայն հայրենի եզերքի հիշատակները, այլև սերը Վ. Նորենցի առաջին բանաստեղծություններում (1921—25) ներկայացվում է պատրանքի կառուցվածքով կամ էլ իբրև հոգուն սոսկ տանշանք բերող ապրում:

«Օրերի ճամփին» անդրանիկ ժողովածուն մի շարք ոչ եղերգական շնչի բանաստեղծություններով նշանավորում էր թիմատիկական և հնչերանգային նոր սահմանագիծ.

Լուսինն ինձանով վերջացավ,  
Արեւ ծագեց ինձանով:

«Էլուսինային» քնարերգության վախճանը և «արևային գույների» ծնողն դը նշանակում էին անփարատ տիսրության վերջը և օրերի նոր ոիթմերի մուտքը Վ. Նորենցի քնարերգության մեջ:

Թեմատիկական, հետևաբար նաև ոճային-հնչերանգային տեղաշարժը առավել տեսանելի արտահայտվեց Վ. Նորենցի մյուս ժողովածումերում՝ «Երկրորդ գիրք» (1930), «Լիրիկական ֆրոնտ» (1932), «Բանաստեղծություններ» (1936):

«Լիրիկական ֆրոնտ» խորագիրը կուանում էր նոր իրականության փաստերի բանաստեղծացման քնարական սկզբունքի ուժեղացումը: Դրան էին կոչում մասնավորապես ձոներգները, օրինակ, «Վահան Տերյանը» (1930), ուր Զարենցի հետագծով նրա աշակերտը ևս հոշակում է «Վերադարձը». «Հիմա Զարենցի կարոտն անծիր է, օ՛, վերադարձիր»:

Վ. Տերյանին կանչում է՝ նրա «գինուց» լցնելու «մեր երգերի վառ կարմիր թասը»:

Իր քնարական «տողերի դասակներով» Վ. Նորենցը ավելի է մոտենում իրականությանը, ավելի է կոնկրետացնում պատկերը՝ նյութ քաղելով կառուցող-շինարարի, բանվորի և հողագործի ապրումներից: Ուշագրավ է «Հացի երգեր» հովվերգական շարքը և «Լոռու ձորում» լայնաշումը բանաստեղծությունը, ուր նորենցը հանդես է գալիս իբրև կյանքի կերպարանափոխությունների երգիւ:

## 10

Տասնամյակի վերջում զարգացման նոր թափ է վերցնում այսպես կոչված կառուցման քնարերգությունը:

Ի տարբերություն երկաթաղարկի բանաստեղծական ազդարարների («Պղնձանշյում օրկեստր, դու մեր պոեզիա»—Գ. Վանանդեցի, «Շոգի, հոգի, պողպատ...»—Ա. Վշտունի), ի տարբերություն տեխնիկայի պաթետիկ մեծարանքի, նոր փուլի կառուցման երգերը ոռմանտիկական պաթուր համադրում են հոգեբանական ապրումի, երևույթի անմիջական ընկալման հետ:

Այս ուղղությամբ փորձեր են կատարում շատերը, բայց առավել ուշագրավ են Գեղամ Սարյանի, մասամբ էլ Վահրամ Ալազանի աշխատանքային երգերը:

Գեղամ Սարյանը (1902—1976) ի տարբերություն կառուցման տիեզերական-կոսմիկական շափանիշները մեծարող բանաստեղծության և ի տարբերություն թղթակցական շնչի բանաստեղծական ակնարկագրության, հանդես եկավ քաղաքագրության այնպիսի չշերով, որոնց մեջ կառուցումը ոչ միայն թեմատիկական առաջադրություն էր, այլև մարդու հոգու ներքին բովանդակություն:

Գ. Սարյանը (Թաղդասարյան) ծննդել է իրանի թավրիզ քաղաքում, արևեստավորի-դերձակի ընտանիքում:

Ծննդավայրի Արամյան շրոսդասյա ծխական դպրոցից հետո սովորել է թեմական դպրոցում (այստեղ իր ուսուցիչն էր Հրաչյա Աճառյանը), այնուհետև իբրև ուսուցիչ աշխատել է գավառական դպրոցներում (1920—1922), ուր կատարել է բանաստեղծական անդրանիկ փորձերը:

Հայ դասականների՝ Հովհ. Թումանյանի, Պ. Դուրյանի, Վ. Տերյանի հետ  
միասին պատանի Սարյանի հափշտակությունների մեջ են եղել Արևելքի մեծ  
բանաստեղծները՝ Ֆիրդուսի, Խայամ, Սահադի, Հաֆեզ:

«Երկու ակունքի» դերի մասին ինքնակենսագրական մի գրության մեջ  
Գ. Սարյանը գրել է. «Եթե Դուրյանն ու Տերյանը ինձ կաշառել էին իրենց խոր  
հուզականությամբ, իսկ Թումանյանն իր ժողովրդական ոգով, գեղեցիկ ոճով  
ու սրտամոտ զգացմունքներով, ապա պարսիկ պոետները ինձ կախարդել էին  
իրենց խորությամբ, իմաստությամբ ու գունագեղությամբ»:

Գ. Սարյանի վաղ շրջանի (1920—1922) բանաստեղծությունների վրա  
զգացմում է Վահան Տերյանի շունչը:

Պատանի Սարյանի ոտանակորները գրավիչ են իրենց կառուցվածքով,  
հղկված են ու բարեկազմ: Դրանց բովանդակությունը աշխարհում իր տեղը  
զգած անհատի ապրումներն են, իսկ տիրապետող տրամադրությունը՝ թա-  
խիծը, որով ողողված էր աշխարհը, կենցաղը, հայրենական հարկը, մարդ-  
կային առօրյան:

Բազմաթիվ տարբերակներով ու երանգներով բանաստեղծն արտահայտել  
է այն միտքը, որ ժամանակը մոխրացնում է ամեն մի գեղեցիկ ձգտում ու  
մարդուն դատապարտում անամոք տառապանքի: Տենչանքների, պատրանք-  
ների և անողոք իրականության բախումը պատանի բանաստեղծը ցույց է տվիլ  
ոչ թե ուղղակի հակադրություններով ու ըմբռստ շեշտերով, այլ կյանքի մա-  
սին մտածող անհատի խորհրդադրությամբ: Դրա բնորոշ օրինակը «Միախոսա»  
հանրահայտ բանաստեղծությունն է.

Միախոս, այրվում ես, վառվում եմ ինքդ քեզ, ինչպես ես,  
Ժպառում ես, հորանջում ես, ծխում ես, ինչպես ես,  
Անտրուունց ու խոհուն շիկանում, մախրանում ես լոփկ,  
Միախոսո, այրվում ես, վառվում եմ ինքդ քեզ, ինչպես ես:

Լուցին շուրթերդ վառեց, շիկնեցիր, ինչունս ես,  
Որ խոհերս քամուն եմ տվել ու տիսոր սիրսու՞ քեզ,  
Դու ծիփդ ոլորտների, ես մտքերիս մեջ եմ մոլորված,  
Միախոսո, այրվում ես, վառվում ես ինքդ քեզ, ինչպես ես:

Դու շիկնում ես, երբ քեզնից սփոփանք եմ ծծում ես,  
Ինչպես ես, երբ ինձնից ուրիշներն են ուզում այդ,  
Սակայն կրկին մոայլվում ես, ծերանում ես, ինձ պես, տես,  
Ու իամրում ես, մոխրանում ես, ինչպես ես, ինչպես ես...

Այնպիսի ցավով է բանաստեղծը խոսում մոխրացման ակնթարթի մասին  
և այնպիսի տրտմալի շեշտով է իր հոգեվիճակը համադրում ինքն իրեն այր-  
վող ծխախոտի հետ, որ «մոխրացման» վերաբերյալ մտորումը ներսից ճա-  
ռագայթում է կյանքի անհատում պաշտամունք:


Օրերի թախիծն ու մենակության վիշտը Գ. Սարյանն արտահայտում է  
նաև «Վերքեր ու մորմոքներ կան քո հոգում», «Ոչ գիշեր լիներ հիմա, ոչ անձրե  
տեղար», «Երբ իմ տունը կգաք դուքս քնարական խոստովանություններում:  
Բանաստեղծը դրանցում շարունակ խոսում է մենակության տառապանքից և  
կործանվող երազներից»:

Գ. Սարյանի վաղ բնարին հատուկ է մի զիծ, որն Ավ. Խսահակյանն ան-  
վանում է «երազային մտածում»: Սա առանձին գրավչություն է տալիս նրա  
բնարական խոստովանություններին, տիրությունը ողողում պայծառ երա-

գանքով: Առաջին ոտանավորներում առանձնապես ուժեղ է հնչում Հայրենիքից զրկված մարդու կարօնի տրամադրությունը:

1922-ին Գ. Սարյանն իր երազների ճամփով եկավ Խորհրդային Հայաստան և դարձավ նոր գրականության մշակներից մեկը: Իր ժողովրդի ազատագրված Հայրենիքում Գ. Սարյանն ապրեց ստեղծագործական բեղմնավոր կյանք: «Իմ առջև բացվեց նոր գաղափարների ու նոր թեմաների մի հարուստ աշխարհ», — գրել է բանաստեղծն ինքնակենսագրական նոթերում:

Քնարերգությունը հարստացնելով նոր ապրումներով, Գ. Սարյանն անհրաժեշտություն չզգաց: Վերանայելու ասելիքի արտահայտչական ձևերը: Դասական պոեզիայի ավանդներով դաստիարակված բանաստեղծը հավատարիմ մնաց իր խառնվածքին և շդիմեց ժամանակի պոեզիային հատուկ փորձարարությանը: Ինչպես սկըսել էր, այնպես էլ շարունակեց՝ մնալով դասական բանաստեղծության պարզ ու բնական ոճի երդույալ կողմնակիցը:



Գ. Սարյանը հանդես բերեց ոգկորություն՝ նոր իրականության երևույթները յուրացնելու ճանապարհին: Նա շբավարարվեց մըտերմական քնարերգությամբ, որ վաղ շրջանի միակ նախասիրությունն էր: Մտերմական ապրումների՝ սիրո, կարոտի, անձնվիրումի բանաստեղծական արծարումներից բացի, Սարյանի ստեղծագործության մեջ ընդգծվեցին կառուցման քնարերգությունը, Հայրենասիրության, ժողովուրդների բարեկամության մոտիվները, կյանքի ու մահվան, արվեստի ու ժամանակի, պատմության ու արդիականության գեղարվեստական լուծումները:

Կենսական նյութի հարստությունը, բնականաբար, թելադրեց արտահայտման միջոցների ու ժանրերի հարստություն՝ սյուժեներին բանաստեղծությունները, պոեմները, բալլագները, շափածո նովելները, ժողովրդական ավանդությունների ու զրույցների մշակումները: Պոեզիային առընթեր Գ. Սարյանն իր ուժերը փորձեց նաև արձակի ու թատերագրության մեջ. գրեց ակնարկներ, պատմվածքներ, պիեսներ:

1930-ին Գ. Սարյանը հրատարակեց «Երկիր խորհրդային» գիրքը, որին հետևեցին «Երկաթի ոտնածայնները» (1933), «Միջօրե» (1935) և մյուս ժողովածուները: Այդ գրքերի բանաստեղծությունների գերակշռող մասն արտահայտում է մտերմական ապրումներ՝ երազանք և կարոտ, սեր և անշատում, թախիծ և սփոփանք: Բայց այդ ապրումները բանաստեղծը այժմ քնարերգում է ոչ թե իրականությանը հակադրվելու սկզբունքով (ինչպես վաղ գործերում էր), այլ աշխարհի հետ իր հարազատությունը խորացնելու նշանաբանով:

Աերը նույն սերն է, կարոտը՝ նույն կարոտը, երազը՝ նույն երազը, բայց փոխվել է այդ ապրումների ներքին բովանդակությունը.

Իմ մորմոքները առուներին տամ,  
Սովոր ծով տանեն իմ մորմոքները,  
Մի զով ժառի տակ նստեմ հեկեկամ,  
Զինչ աղբյուր զառնան իմ մորմոքները.  
Դալար ծառերը աղբյուրից խմնն՝  
Անտառներ դառնան իմ մորմոքները  
Եվ շոգ պահերին իրշշան, օրորվեն,  
Աշխարհին զով տան իմ մորմոքները...

Ահա մարդասիրական մի բարձր իղձ, որ լցված է կյանքի ու մարդու սիրով: Տիրության մեջ անգամ բանաստեղծը ցանկանում է հաստատել աշխարհի հավերժության ու մեծության միտքը: Առաջնությունը տրվում է ոչ թե անհատին, այլ այն աշխարհին, որը մարդուն միացնում է իր հետ:

Մարդասիրական զգացմունքն է թրթոռում Գ. Սարյանի և այն բանաստեղծություններում, որոնք խոսում են մոր կարոտից, և բնության երգերում, և սիրո մասին պատմող շափառողերում: Ահա, օրինակ, սիրային խոստովանություններից մեկը.

Առուներ, երբ նա անցնի ձեր մոտով,  
Ասացեք նրան իմ սիրո մասին,  
Հովեր, ձեզ հանձնեմ սիրոս կարոտով,  
Լուր տարիեց նրան իմ սիրո մասին:  
Անտառներ, երբ նա նստի ձեր զովում,  
Երշշացեք մեղմիկ իմ սիրո մասին,  
Գարնան թոշուններ, երկնքի մակում:  
Երգեցեք նրան իմ սիրո մասին:  
Հանդեր, արոտներ, այգիներ ծաղկուն,  
Բուրեցեք նրան իմ սիրո մասին,  
Դուք եք ներշնչել այդ սերն իմ հոգուն,  
Դուք էլ հոգացեք իմ սիրո մասին:

Սա սիրո մի հանդես է, որին մասնակցում է բնությունն իր պեսապես արտահայտություններով ու գույններով: Թախիծ կա այս սիրո մեջ: Բայց թախիծը ոչ թե բռնադատում է քնարական հերոսին, այլ նրան մղում է փառաբանելու տիեզերքն ու բնությունը:

Գ. Սարյանի մտերմական ապրումների քնարերգությունը, այսպիսով, մարդու ներաշխարհից ծովալվում է զեպի իրենից դուրս գտնվող մեծ աշխարհը: Մինչդեռ վաղ քնարը գծում էր հակառակ ընթացքը՝ աշխարհը կծկվում ու անէանում էր անհատական ապրումների բավկայներում:

Ապրումների անհատականացման ուղղություն ոնք նաև երկրի «երկաթե ոտնածայները» ներկայացնող բանաստեղծությունը:

Ամեններն շգայթակղվելով ժամանակի բանաստեղծության մեջ բարգավաճած տեխնիցիզմով՝ տեխնիկայի գովեստով, Գ. Սարյանը իր բանաստեղծություններում («Օրացուցը», «Երկաթալարի երգը», «Քարտաշները», «Փամացույցը», «Քարերիդ երգը երգեմն», «Կգա նա», «Լույսերը», «Քաղաքը» և այլն) կառուցման թեմայի մեջ «որոնում է» մարդկային թրթիռներ: Նոր բարձրացող շենքին, քաղաքային շինարարական հրապարակին, երկաթալարին, մետաղափայլ կառուցվածքներին նվիրված բանաստեղծություններում առարկաները միշոց են՝ արտահայտելու ժամանակակիցների հոգեկան աշխարհը:

Այդ պոեզիայում բարախում է մի անկեղծ սիրտ, որը ապրում է հայրենիքի պատմական նոր կյանքի ցնծովիլունը:

Գ. Սարյանի երգը անկեղծ է ու վարակից: Սա վերաբերում է հատկապես այն ստանավորներին, որոնք ներկայացնում են քաղաքը, որ վաղուց չէ, ինչ մտել էր հայ քնարերգության մեջ:

Առաջին ուրբանիստները հանդես եկան Եվրոպայում՝ XIX դարի վերջում: Նրանցից խոշորագույնը բելգիացի մեծ բանաստեղծ էմիլ Վերարնն է, որ իր պոեզիայում ներկայացրեց կապիտալիստական մեծ քաղաքի բնորոշ գծերը՝ վիթխարի տեխնիկան, մարդկային հոծ բազմությունները, մարդուն ճնշող, մուայլ բնանկարը:

Հայ գրականության մեջ ուրբանիստական մոտիվները տեղ գտան Դ. Վարուժանի, Վ. Տերյանի, Հ. Հակոբյանի ստեղծագործության մեջ: Պոեզիա բերելով մեծ քաղաքների կյանքը, նրանք արտահայտում էին քաղաքների ճնշիչ ազդեցությունը մարդկանց վրա կամ էլ ներբողում էին քաղաքային կյանքի մեջ խլրտացող հեղափոխական տրամադրությունները:

Վահան Տերյանն, օրինակ, քաղաքը ներկայացնում է որպես մարդուն ճնշող, սարսափելի միջավայր:

Յեր շքեղ շենքերի ծանրությամբ սրտմաշուկ,  
Յեր ահեղ բերդերի համրությամբ վերամրած,  
Քաղաքներ, ձեր մեջ կա դժոխքի մի շշուկ,  
Քաղաքներ, ձեր բանահց արդյոք կա՞ վերադարձ:

Սովետական բանաստեղծների երգերում քաղաքն ըմբռնվում է որպես ժողովրդի վերածնված կյանքի ու հայրենիքի զահելության խորհրդանշան: Այս թիման գրավել է Գ. Սարյանին: Նրա «Ուրբանիստական» ոտանավորներից հայտնի է «Քաղաքը», որ Հայաստանի քաղաքներից մեկի քնարականորին վերապրված պատմությունն է:

Քաղաքի կենսագրությունն այստեղ ներկայացնում է երեք շափումով՝ անցյալով, ներկայով և գալիքով:

«Այս քաղաքում տեսել եմ ես անթափանց մի գիշեր» տողով սկսելով պատումը, բանաստեղծը ներկայացնում է մուայլ անցյալը՝ կիսափանդ տնակներ, անապակի պատուհաններ, սովալլուկ մանուկներ, որբերի լաց, զանգերի զողանջներ, աշնանային համբ տիրություն:

Այս մեռած, հազիվ շնչող աշխարհից թեսակոխելով ներկան, բանաստեղծը տեսնում է միանգամայն հակադիր բնանկար՝ նոր փողոցներ, վեր հառնող տուֆակերտ շենքեր, կառուցման ոգեսրությամբ համակված բազմություններ: Հին քաղաքի զանգերի տիրությանը փոխարինում է «վարդագույն խնդությունը»՝ ողողելով մարդկանց ճանապարհը:

Այս քաղաքը հարուցում է ոչ թե օտարացման, այլ հարազատության զգացում: Բանաստեղծն ազդարարում է.

Օ՛, քաղաք իմ, քեզ այնպիս հարազատ եմ ես  
Մտերիմ քո տաշած ամեն մի քարին:

Էլ ավելի հրապուրիչ են քաղաքի գալիք օրերը: Բանաստեղծությունն ավարտվում է քաղաքին ուղղված մի քնարական կոչով, որ արտահայտում է հեղինակի երազանքը:

Փոխվել է քո պատկերը, փոխվել է այնքան,  
Որ փոխվել է քեզ հետ նա՝ կյանքը հարածուն:

Ու հիմա քեզ լուսեղին ու զվարթաձայն,  
Օ, բաղաք իմ, վաղվա նոր օրերն են կանչում:

Հայրենական պատերազմի տարիներին, հավատարիմ իր ներհում խառնը վածքին, Սարյանը գրեց բանաստեղծական պատգամների մի շարք, տալով դրանց «Խոսք՝ բարի երթի» անունը: Ժողովրդական ոճերով ու իմաստովյամբ լեցուն պատգամներում («Դնա, քո հոգին թող երբեք շամպի», «Խոսք առաջոտյան», «Մայրական խոսքեր», «Պատգամ» և այլն) բանաստեղծը զինվորներին Հորդորում է բարձր պահել հայրենիքի պատիվը, հանգստել «դաժան հրդեհն աշխարհի» և փառքի ճամփաներով դառնալ հայրենական տուն:

Գ. Սարյանի բանաստեղծություններում պատերազմը ներկայացվում է նաև իր ողբերգական կողմերով: Ողբերգական ուժով հնչեց նրա այն բանաստեղծությունը, որ արծարծում է իր հերկվորին ու սերմնացանին կորցրած հողի թեման:

Հոգնած նայում եմ եռ ճամփաներին—  
Սերմնացանները շդարձան տուն.  
Հանգան շողերը լուր կատարներին—  
Սերմնացանները շդարձան տուն:

Իշավ երեկոն լուրթ ստվերներով—  
Սերմնացանները շդարձան տուն,  
Դրկեց հոգիս իր մութ, պաղ թերով—  
Սերմնացանները շդարձան տուն:

Լույսերը վառվեցին իրճիթներում—  
Սերմնացանները շդարձան տուն,  
Ահեղ լոռություն է ճամփաներում—  
Սերմնացանները շդարձան տուն:

Գ. Սարյանը ճանաշված է նաև իր պոեմներով ու բալլագներով: Այս ժանրերին նա դիմել է գրական կյանքի բոլոր շրջաններում: Պոեմների մեծ մասի նյութը սովետական մարդկանց հերոսությունն է քաղաքացիական կռիվների, սոցիալիստական շինարարության և Հայրենական պատերազմի տարիներին:

Հայրենական պատերազմի օրերին Գեղամ Սարյանը գրեց իր լավագույն պոեմը՝ «Դեպի կառափնարանը»: Այն ժամանակ դա հնչեց որպես հայ ժողովրդի հին ու նոր նահատակներին ձոնված ոեքվիեմ՝ հոգեհանգստի երգ:

Պոեմը պատմում է 1915 թ. Մեծ եղեռնի զարհուրելի դեպքերից մեկը. երկու հարյուր հայ մտավորականների (գրողներ, ուսուցիչներ, երաժիշտներ, հրապարակախոսներ, հրատարակիչներ, գիտնականներ ու քաղաքագետներ) թուրքական կառավարության հրեշտակոր ծրագրի համաձայն տանում են ոլոնշացնելու: Բանաստեղծը նկարագրում է այն պահը, երբ հայոց բազմությունները վերջին հրաժեշտն են տալիս կառափնարան գնացողներին՝ Կոմիտասին, Դ. Վարուժանին, Սիամանթոյին և մյուսներին.

Այսուղ էին նրանք... Այդ շարագույծ նավում,  
Հայոց քնարների վարպետները բալոր,  
Հայոց պահան մտքի աստղերն էին մարտա  
Այդ ահավար ժամին խավարի գեմ անզոր:

Պոեմում, որպես լեյտմուտիվ, հնչում է «Հայոց պատարագի» հուզիլ «տերողորմյան»: Հույսի այդ մեղեղին, ձուլվելով ծովի մրմունջներին ու աղեր-

սանքի նման տարածվելով օդում, ավելի է ընդգծում կատարվող ոճրի մեծությունը:

«Դեպի կառավնարանը» Սարյանի ստեղծագործության ամենաշիկացած կետն է: Հայոց նահատակների այդ բարձրաշունչ ողբը նաև մեղադրական զայրալից խոսք է՝ ընդդեմ թուրք ջարդարարների ու նրանց հետնորդ գերմանական ֆաշիստների:

30-ական թվականներին լայն տարածում գտան Գ. Սարյանի «արևելյան բալլադները» («Թառանի մորմոքը», «Կըզ-Կալասի», «Գյուղնարա» և այլն): Դրանք արևելյան դաժան իրականությունը դատապարտող գործեր են:

Հայրենական պատերազմի տարիներին Գ. Սարյանը գրեց բալլադներ՝ ավանդական և դիցաբանական սյուժեներով («Դեկիրոց և Էլ-Նուրին», «Կիպարիս», «Մարմարակերտ գեղուհին», «Ծան և մահը» և այլն): Այդ սյուժեները բանաստեղծին հուզող համամարդկային գաղափարներն արտահայտելու միջոցներ էին: Կյանքի իմաստի և սիրո բովանդակության, արվեստի էության և մարդկային գործի անմահության, անհատի ազատության ու մարդու ճակատագրի հավերժական թեմաներն այդ բալլադներում ստացել են ինքնատիպ լուծումներ:

Գ. Սարյանի ոտանավորները, լինելով որևէ հոգեվիճակի դրսևորում, միաժամանակ շաղախված են փիլիսոփայական խոհի տարրերով: Պոետն, ահա, թե ինչպես է արտահայտում մարդկային կյանքի անցողիկության ու գործի հավերժության գաղափարը.

Երբ շեմ լինի ես, երբ շեմ լինի ես,  
Երգս կմնա թղթերի վրա,  
Ապրող տողերն իմ եղեգների պես,  
Համբ շշուկով հարց կտան իրար.

—Ո՞ւր է միտքը այն, որ փայլ տիեզ մեզ,  
Աշքերը, որ մեզ թղթին ցողեցին,  
Սիրու՝ հուզերի մի սափոր կարծես,  
Որից մենք առաս հուզեր խմեցինք:

Ու մի վերջակետ, աննշմար ու խեղճ  
Կասի—բոլորը հալվեցին ձեր մեջ:

Ինչի մասին էլ գրում է Սարյանը՝ դաշտի վրա իշնող ձյան փաթիլների, թե օրացուցի թերթիկի, նոր բաղաքի, թե պատերազմող զինվորի, նրա ոտանավորներում մշտապես ներկա է հեղինակն իր անմիջական տրամադրությամբ, իր հուզական վերաբերմունքով: Եվ այդ նույն վերաբերմունքով համակվում է ընթերցողը: Սրա գաղտնիքն այն է, որ Սարյանը չի մեղանշում արվեստի այն օրենքի դիմ, որը պահանջում է ապրումների արտահայտման բնականություն և հարազատություն: Նա դավանում է այն համոզմունքը, որ պոեզիան ինքը գեղեցկություն է և կարիք չի գգում հավելյալ գեղեցկացման՝ արտաքին արդ ու զարդի:

Ահա, օրինակ, «Մայրամուտի ժամանակը»: Առանց ոճական սեթեթանքների ու բանաստեղծական պերճանքի Գ. Սարյանն արտահայտում է կյանքի մայրամուտին հասած մարդու ապրումները.

Մայրամուտի ժամանակ արեք թույլ է լինում,  
Հազմերը ծույլ են լինում մայրամուտի ժամանակ,

Ամպերը հուր են լինում, հանդերը լուռ են լինում,  
Կանչերը դուր են լինում մայրամուտի ժամանակ:

Մայրամուտի ժամանակ արևն անցնում է, գնում,  
Մի այլ ոչխարհ է գնում մայրամուտի ժամանակ,  
Հեռվում կապույտ, լուսայաց միայն մի լար է մնում,  
Անհուն խափար է մնում մայրամուտի ժամանակ:

Գեղամ Սարյանի բանաստեղծական ներհում խառնվածքով է բացատրը-  
վում և արտահայտման պարզությունը, և պատկերային համեմատությունների  
նվազագույն օգտագործումը, և լեզվի սահունությունը նա հայ պոեզիա է մու-  
ծել նաև տաղաշափական նոր սկզբունքներ, որոնք արժանացել են հայ տա-  
ղաշափության գիտակի՝ Ե. Զարենցի գնահատությանը:

Բանվորագարկի բանաստեղծությունից դեպի ռկառուցման քնարերգու-  
թյուն», — այսպիսին է Վահրամ Ալազանի գրական նկարագրի պատկերը:

Վահրամ Ալազանը (Գաբրուզյան, 1903—1966), — ինչպես սերնդակիցների  
հոծ բազմությանները, ճաշակում է դաւոնություն, սարսափի ու զաղթի բոլոր  
«հմայքները», մինչև որ որբանո-  
ցից մտնում է ինքնուրույն կյանք՝  
սկզբում աշխատելով իբրև գցա-  
շար, այնուհետև իբրև լրագրող  
(աշխատել է «Ավանդարդ» թեր-  
թում, խմբագրել է «Տպագրական  
բանվոր» թերթը):

«Բանվորական հույզերով»  
լցված Վ. Ալազանը շատ շուտով  
հայտնվում է Հայաստանի պրո-  
լետարական գրողների Ասոցիա-  
ցիայի ղեկավար կազմում, պար-  
բերական մամուլի էջերը ողողե-  
լով ասոցիացիականների հրա-  
հանգներով հյուսված «երկաթե-  
երգերով»:

«Հրաբխապեզիայի» հնչյու-  
նախաղերի և աղմուկների ոլորտ-  
ներում թափառելուց հետո հակ-  
վում է դեպի կառուցման երգերը:

Մինչ առաջին գիրքը՝ «Տարի-  
ների խաղը» (1923), բառա-հնչյունախաղերի հավաքածու էր, ամենակողմա-  
նի բանվորաղարկ ու մուրճահարված, բանաստեղծական մյուս ժողովածունե-  
րում («Երգեր կառուցման և հաղթանակի» — 1926, «Մաքառումներ» — 1933)՝  
Վ. Ալազանը հակումներ է հանդես բերում՝ հաղթահարելու սխեմաները և  
մերձենալու ներքնաշխարհի բանաստեղծությանը:

Ճիշտ է, այդ բանաստեղծության լիարժեք տիպարը մնում է ծրագրերում,  
չի դառնում գրական փառություն, ստկայն միտումը ինքնին դրական էր, մանա-  
վանդ որ այդ միտումի կրողը ուղղափառ ու ապահական էր, պրոլետարական  
գրողների Ասոցիացիայի նախագահը:



Արդեն 30-ական թվականների դռանը Ալազանը որոշակի ընդգծումով ծառանում է սոցիալիստական կառուցման սխեմատիկ արձագանքի ու արձանագրության դեմ՝ ասպարեզ հանելով բանաստեղծական այն ծրագրերը («Երգեր գրված ինձ համար», «Պոետների հետ», «Մեռած քերթողի համար», «Պոեմ՝ պոետների մասին»), որոնց մեջ նոր քնարերգության ճակատագիրը կապում է կյանքի խոր ներշնչանքների և գեղարվեստական ավանդների համադրման հետ:

Առաջին տասնամյակի «մոլորություններից» հետո Վ. Ալազանը մի առանձին գորովով դառնում է հայ դասականների ստեղծագործությանը, Հովհ. Թումանյանի, Դ. Վարուժանի, Մ. Մեծարենցի և այլոց ժառանգությանը, նրանց բանաստեղծական դաշանանքի մեջ նշմարելով նաև կառուցման քնարերգությանը անհրաժեշտ լիցքեր: Իր բանաստեղծական ծրագրերը շարադրելով զուգընթաց նույն «Մաքառումներ» գրքում Ալազանը տալիս է նաև այդ ծրագրերի բանաստեղծական նմուշները («Հանքափորը», «Կարրիդի երգը», «Չորագիշը» և այլն), որոնք գրավիչ են նոր կյանքին բնորոշ պաթուով, աշխատանքի հերոսների ապրումների արտահայտման կոնկրետ սյուժեներով, հընդգամյակների ներբողով:

Դրանք, կարելի է ասել, աշխատանքի մեծ թեմայի բանաստեղծական հետախուզությունն էին՝ նյութի ուրվագծերի ու պոետիկայի խառնուրդով:

Բանաստեղծական խորություն շունեն նաև Ալազանի գյուղանկարները՝ «Երգեր հողի գրքից» շարքը, ուր մոտավորապես վարուժանյան «Հացին երգի» կոլորիտով Ալազանը փորձում է վերստեղծել ոռմանտիկական գյուղաշխարհը՝ շրադացներ, զինջ լուսիններ, կալեր ու խոտի դեզեր:

Զիսրանալով մարդու հոգեբանության մեջ, Ալազանը չի անցնում ավանդական գյուղապատկերների սահմանից:

Վ. Ալազանը հանդես է եկել նաև իրեն արձակագիր՝ 1934-ին հրատարակելով «Կաթսոմերորդ հորիզոնում» լայն կտավը՝ հայ պղնձագործների աշխատանքի թեմայով:

1935-ին սովետական գրողների պատվիրակության կազմում Վ. Ալազանը մասնակցել է Կովտուրայի պաշտպանության միջազգային կոնգրեսին՝ Փարիզում: Իր տպավորությունները շարադրել է «Թղյակներ և որդեր» (1936) հրապարակախոսական նոթերի մեջ:

## 11

Աստիճանաբար հայ պոեզիայում նվազում են հայրենիքի անցյալի տիսուր հիշողությունները և, ընդհակառակը, առատանում են վերածնված հայրենիքի խանդավառ ընկալումները:

Հայրենասիրական քնարի լարը թեև հարցականի տակ էր տարիներ շարունակ (Զարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը 1922-ից այս կողմ այլևս չվերահատարակվեց), թեև դիրքական զլապինդ քննադատների շանքերով Գամառ-Քաթիպան դուրս էր գրվում «արդիականության նավից», այդուամենայիվ հայրենասիրական ներշնչանքները արգելքների միշտով իսկ ճանապարհ էին բացում:

Մասնավորապես 30-ական թվականների սկզբից ժավալվում է Խորհրդային Հայաստանի ծնունդը մեծարող ներբուղագրական շարժումը:

Խոմանտիկական բարձրաշունչ խոսքով բանաստեղծներն իրենց «սրտի խոսքն» էին հղում ազգային և սոցիալական վերածնության ուղին բռնած նոր Հայաստանին ու նրա ապագային:

Միանգամայն օրինաշափ էր բանաստեղծությունների բարձրաշունչ, խանդավառ պաթուր: 'Եռ 10—15 տարի առաջ, ինչպես դիպուկ բնութագրել է Ալ. Մյասնիկյանը, Հայաստանը «վշտի, հեծեծանքների, սուգի ու տառապանքների մի դժոխք»<sup>21</sup> էր, իսկ այժմ, պատմական կարճ ժամանակամիջոցում, դարձել էր լուսերի, «արեի երկիր», փլատակներից վեր էր հառնում նրա լուսեղեն կերպարանքը:

Այս դգացողությամբ գրվեցին բազմաթիվ ներբողներ (անգամ շատ պարզունակ նվիրումներ), որոնց շարքում է նաև Գևորգ Սարյանի հիմնային-հանդիսավոր շնչի «Խորհրդային Հայաստանին» բանաստեղծությունը.

Ո՞վ է ծնել  
Ծողողուն այս պատանին,  
Լուսագետ ու հրաշյա  
Ծողողուն այս պատանին:  
Խարտյաշ վարսերը փռել  
Լույս է տվել խավարին,  
Հույս է տվել սրտերին  
Ծողողուն այս պատանին:

Բազմադարյան հայ բանաստեղծությանը անծանոթ էր հայրենիքի այսպիսի պայծառ պատկերավորում՝ զերծ արցունքի ու արյան գույներից, վերծանգատի ու ցասման ելեկչներից: Ներբողային-ձռներգական բանաստեղծություններում առանձնապես գրավիչ էին բանաստեղծների վստահ, անսասան հայացքը երկրի, հայրենիքի հանդեպ, նրանց տողերի բաց, անկաշկանդ, անմիշական հնչերանգը, պատկերների էներգիան և մաժորային շոմշը.

Ոզո՞ւն քեզ, կյանք ու երեան,  
Քո արեին, հողին:  
Կրոյն ժամում է քո աշնան  
Խարտյաշ գեղեցկուհին:

Ն. Զարյանի այս տողերին հատուկ հրճվանքը ընդհանուր երևոյթ էր: Զգացմունքի վերելքը բնորոշ էր Գ. Մահարու «Արարատյան» շարքին և Գ. Սարյանի բաղաքագրությանը, Ս. Տարոնցու մտորումներին և Վեսպերի ներբողներին, մասնավորապես դեռ բոլորովին երիտասարդ Հովհաննես Շիրազի «Գարնանամուտներին»:

Շիրազի բանաստեղծությունները՝ աշխարհի «գարնանացման» աշխարհագցական տարերքով հերթումն էին «աշխարհի աշնանացման» վաղեմի բանաստեղծական մտայնությունների: Աշխարհի «գարնանացումը» հենվում էր վերածնված Հայաստանի իրականության տվյալների վրա:

Վերածնված Հայաստանի երգը, բնականարար, ասպարեզ էր բերվուալ պատմական անցյալի գույների ու պատմական հեռանկարի ֆոնի վրա: Այս օրինաշափության օրինակները շատ-շատ են (անցյալ-ներկա-ապագա կառուցվածքով), բայց ամենաբնորոշ օրինակը թերևս ն. Զարյանի «Վերածնունդ» բանաստեղծությունն էր՝ ժողովրդի անցած պատմական ճանապարհի յուրատեսակ գեղարվեստական փիլիսոփայությունը: Դիմելով բոլոր-բոլոր հողմերին դիմացած հավերժ կենսումակ ծաղկի այլաբանությանը, ն. Զարյան

յանը այդ «ծաղկի կյանքի» իմաստավորումով բացահայտում է ժողովրդի բնավորության վեհությունը, հոգու անլնկճելի ամրությունը, մաքառման ու գոյության կամքը.

Մի թուփ տեսա ճամփամիջին, ապրեմ-շապրեմ սպիտակ,  
Նա կոխոտվել էր, կըոացել անցորդների ոտքի տակ:  
Կաթում էր հյութն, ինչպես արյուն ցողուններից նրա ցած,  
Եվ տերեւներն էին բոլոր փոշեթաթախ, ծվատված,  
Բայց նա պահել էր լուսեղեն իր ծաղիկներն անաղտու,  
Եվ արեւով էր ողողված նրա հայացքը հըպարու  
Ես ցանկացա պոկել ծաղիկը արմատից ու նետել,  
Ամենօրյա գանդաղ մահից նրան ընդմիշտ ազատել:  
Բայց նա ցողունը լոկ զիշեց՝ պայքարելով մինչև վեր  
Ու խորածով արմատներով մնաց կրկին հողի մեջ:  
Մընաց... նորից նա կարձակի և նոր ծիլեր, և ցողուն,  
Եվ կըտուկա նախիների ու հողմերի անցնելուն:  
Ետ հայեցի ես մի վայրկյան՝ հեռու-մտահի գարերին,  
Եվ հիշեցի, իմ ժողովուրդ հերոսական քո ուղին:

«Վերածնունդը» ուշագրավ երեսով էր ոչ միայն պաթոսով, այլև հայրենասիրության պատմական շեշտի վերականգնման դիրքերով, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ այդ թվականներին պատմական հայրենիքը, իբրև եղալ փաստ ոմանց կողմից համարվում էր շեղյալ իրողություն:

Խորհրդային Հայաստանի ներբողագործյունը, իշարկե, անմասն չեր պարզութակ գովքերից և ծնծղաներից, աշուղական նեխիմներից և պսեդոհայրենասիրական կեցվածքներից, սակայն էականը հայ ժողովրդի նոր հայրենիքի բունագծերի բանաստեղծական հայտնագործումն էր:

## 12

b. Զարենցի «Էպիքական լուսաբաց» ժողովածուի ծրագրային առաջադրությունների առանցքը, ինչպես երեսում է և վերնագրից, և «Էպիքական Մուսայի» հղումներից, ժողովրդի պատմության և հոգեբանության տեղաշարժերի արտացոլման պահանջն էր՝ էպիքական արվեստի ձևերով։ Այդ ծրագրով Զարենցը հանդես եկավ դեռ «Ամենապոեմի» մեջ, բայց այստեղ է, որ պատմության գծերի ուլյեֆի արտացոլման հետ նա էական նախապայման է համարում նաև հոգեբանական մանրաքանդակի բացահայտումը։

Հրապարակ գալուց անմիշապես հետո «Էպիքական լուսաբացը» դարձավ գրական տարբեր դիրքերի արտահայտման կիզակետը։ Մինչ Զարենցը և համախոհները առաջ էին քաշում արդիականության գլխավոր հարցերը ստեղծագործության նյութ դարձնելու և սինեմատիկմը հաղթահարելու ճանապարհով դարի հոգեբանությունը նվաճելու պահանջներ, ընդդիմախոսները հանդես էին գալիս հակառակ դիրքերից։

Ռապական քննադատներից մեկը, օրինակ, Հ. Մկրտչյանը, անուղղակի հայտարարում էր, որ նորագույն պոեզիսն պետք է զարգանա «Էպիքական լուսաբացի» պահանջներին տրամադրուեն հակառակ ուղղությամբ<sup>22</sup>։

«Էպիքական լուսաբացի» շուրջը բորբոքված կրքերը դեռ չեին հանդարտվել, երբ Զարենցը հանդես եկավ բանաստեղծության ապագա հերկին վերա-

բերող իր խորհրդածություններով, որոնք կոչված էին պատասխանելու նոր իրադրության հասունացած պահանջներին:

Անցնելով զարգացման մի շարք նշանակետեր՝ «Երեքի» ֆուտուրիզմից «Լեֆ»-ի ուղեգծով դեպի «Նոյեմբերական» դիրքերը, այստեղից էլ էպիթական Մուսայի դավանանքը, Զարենցը «Գիրք ճանապարհի» մատյանում ասլարեզ հանեց բանաստեղծության, իբրև «բարդ արվեստի» գեղագիտությունը:

Դատելով գրողների համամիութենական համագումարի ճառից, այդ ճառի բանավեճային սրություններից («Ինչո՞ւ թաքցնենք մեր ինտելիգենտական գլուխները արվեստի բարդության խախուս տեսությունների ավազներում»), կարող է այն տպավորությունը թողնել, թե Զարենցը առևասարակ հարցականի տակ է դնում «բարդ» ու «բարձր» արվեստը: Բանն այն է, որ այդ նույն ճառում Զարենցը տարբերակում էր բարդության երկու տեսակ. մեկ էսթետական, «ինտելիգենտական» բարդությունը, կյանքի կենդանի աղբյուրներից և հուզական թրթիռներից խզված «բարդ ասոցիացիաների» արվեստը, մեկ էլ այն բանաստեղծությունը, ուր արվեստի բարդ կառուցվածքները երևում են «այժմեականության նոր սինթեզում», ուր բարդությունը՝ «սինթետիկ արվեստը» լիցքավորվում է կյանքի նյութով: Առանց արդիականության նոր սինթեզի, առանց կյանքի մշտատրոփ ակոնքներից եկող լիցքերի, — գտնում էր Զարենցը, — բարդ արվեստը կարող էր ոմենալ «Հնչին արժեք»:

Սառանալով մի կողմից «էսթետական բարդության», կյանքից անկախ «բարդ ասոցիացիաների», մյուս կողմից «Դեմյանից և Բեզիմենսկուց մինչև Ժարով և Ռւտկին ձգվող «անհաճո պարզության», պրիմիտիվիզմի երեւյթների դեմ, Զարենցը ժամանակակից և գալիք բանաստեղծության սահմանադրությունը համարում է այն արվեստը, ուր ի մի են գալիս դասական պարզությունը, պուշկինյան պլաստիկան և կյանքի խոր արմատներից սնվող, իր իսկ բառերով ասած՝ «բարդ, բայց ամենալայն մասսաներին հասկանալի սինթետիկ արվեստը»<sup>23</sup>:

Նույն ճառի մեջ, «սինթետիկ արվեստի» կողքին, Զարենցը գործ է ածում «վաղվա արվեստ» հասկացությունը, դրանով իսկ շշտը գցելով բանաստեղծական մտածողության կիրարանափոխության խնդրի վրա, նորացման կետի վրա:

Նորացման դրդումներով թե՛ Զարենցի և թե՛ առհասարակ 30-ական թվականների բանաստեղծների (Ն. Զարյան, Վ. Ալազան, Գ. Մահարի և այլք) լայն հուն բացեց գրական ավանդների՝ ժառանգականության մոտիվը:

Այլևս ամբողջ խորությամբ գիտակցվեց, որ բանաստեղծության առաջընթացը անմտածելի է առանց գեղարվեստական ավանդների՝ «հին ակոնքների» իմաստավորման ու շարունակման:

Այս մտածողությունը դարձյալ կուռ տեսք ստացավ Զարենցի գեղագիտության մեջ:

Թեև «Նոյեմբերի» շրջանից արդեն բանաստեղծության զարգացման ամուր նեցուկը Զարենցը որոնում էր դասական ներշնչանքների մեջ, բայց ճանապարհի Դրբի էջերում («Արվեստ քերթության») է արվեստի ժառանգականության ըմբռնումը հասցվում հրամայականի բարձրության.

Լավ իմացիր, որ եթե դու ուզում ես մի օր շտեել,—

Կեզ լոկ ողակ համարիր, և ոչ սկիզբ կամ վախճան...

Ով հանճարներ վիթխարի, — Դանթ, Հոմերոս, Ալեքսանդր,  
Զերն էր արոտն երեկվա, — Ճերն է և հունձքը վաղվա...

Ոչ միայն Զարենցի գրքերում, այլև մյուս բանաստեղծների, պարբերաբար հոլովկում են համաշխարհային և հայրենի գրականության մեծությունների անոնները՝ իրեւ կատարելության շափանիշներ, իրեւ վարպետության դասեր:

Իհարկե, առավել թափով արծարծվում է հայրենի գրականության ավանդների օգտագործման խնդիրը, որը իր հետ բերում է մի շատ անախորժ և հակագիտական վեճ: Խոսքը արեւելահայ և արևմտահայ բանաստեղծությունները միմյանց հակադրելու գծի մասին է, այն գծի, որ տեղ էր գտնում ժամանակի «գրական խորհրդածություններում»:

Բանաստեղծների մի թեր (Վ. Ալազան, Վ. Նորենց, Ս. Տարոնցի) ուներ արևմտահայ բանաստեղծության «կողմնորոշում», իսկ մյուս թեր հակված էր դեպի Հովհաննես: Խոսհակյանի և Ավ. Խոսհակյանի ժողովրդական շնչի բանաստեղծական արվեստի կողմը:

«Արեւելահայ» և «արևմտահայ» բանաստեղծության միջև փորված «խրամատը», իհարկե, գրապայքարին ուղեկցող շափազանցություն էր, քանի որ երկու հատվածներն էլ շատ բան ունեին տալու ժամանակակից բանաստեղծությանը, նրա զարգացումը դնելով ճիշտ հիմքերի վրա:

### 13

Գրական ասուլիսներ, վեճ ու վիճաբանություններ, ծրագրեր ու հրովարտակներ, բայց բանաստեղծությունը զարգանում էր մի կողմից «իհրիկական անտրակտի»՝ մարդու ներաշխարհի բացահայտման, մյուս կողմից «էպիքական լայնության»՝ ժամանակի սոցիալական նյութի արծարծման ուղղություններով:

Հրապարակախոսական թափի ու ներբողագրական շնչի բանաստեղծությունների կողքին հայտնվում են մտերմական քնարի որինակելի նմուշներ, նախ և առաջ սիրային բանաստեղծություններ:

Դրանց մեջ են ն. Զարյանի սիրային խոստովանությունները («Դու այրվել ես օտար օջախում, ես հասել եմ միայն քո մոխրին», «Անոավոտյան դու ես իմ խոհն առաջին, երիկոյան դու ես իմ խոհը վերջին», «Դու ինձ կփնարես, երբ ես շեմ լինի» և այլն), որոնց պասկը եղավ ապոթեոզային հանդիսավորության հասցված բանաստեղծությունը՝ մարդու և աշխարհի ներդաշնակության հրովարտակով:

Ծնորհակալ եմ աշխարհից, երբ որ դու կաս աշխարհում,  
Թեկուզ ինձնից հավետ հեռու, հավետ ահճաս աշխարհում:

«Իհրիկական անտրակտը» իր նպաստն է բերում նաև Գ. Մահարու սիրականշերին, Գ. Սարյանի «մորմոքներին»:

Յու-ական թվականներին մեկը մյուսի ետևից բանաստեղծական գորայան մեջ են մտնում նոր անոններ՝ խաչիկ Դաշտենց, Սուրեն Վահոնի, Թութով Հուրյան, Խաչիկ Հրաչյան, Աղավնի, Գուրգեն Բորյան, Մարո Մարգարյան, Գևորգ Էմին, Սուրեն Թարյան, «Պիոներ կանչի» բանաստեղծներից՝ Սիլվա Կապուտիկյան, Հրաչյա Հովհաննիսյան, Նորիկ Նաղարյան և այլք:

Նոր անունների ներհոսքով ընդարձակվում է այսպես ասած «լիրիկական ֆրոնտը»:

Արդեն «Գրական գիրքերում» ամրապնդված «բանվոր-հարվածայիններին» մտահոգող ծխնելուցների և անիվների հրգի, «մկանների լիրիկայի» կողքին (իսկ դրանց մեջ կային նաև անկեղծ ներշնչանքի բանաստեղծություններ, ինչպես Չարենցի գնահատությանն արժանացած Վահան Գրիգորյանի «Անիվ իմ, դարձիր», բանաստեղծների նոր սերունդը փորձում է դուրս գալ նախապաշտումների ազդեցությամբ, «պրոլետարական պոեզիան նոր մեքենաների կառուցման է»<sup>24</sup> և նուան հանձնարարականների սահմաններից: Բանաստեղծների նոր սերունդը մեքենայապաշտական ձոներգներին փորձում է հակադրել սիրո, նվիրումի, կարոտի, ինչպես նաև բնաշխարհի բանաստեղծական ներշնչանքները: Իհարկե, ոչ այնքան սուր ընդգծումով՝ ներքին բանավեճ էր գնում «տեխնիկների» և «լիրիկների» միջև:

Մինչ առաջինները կառուցման «սիմֆոնիաների» տպավորության տակ մոռացության էին մատնում «հոգիբանական մարդուն», քնարերգակները հակված էին դեպի այն բանաստեղծությունը, որը գործ ունի մարդկային զգացմունքների հետ:

Անտարակույս, բարդ չէին նոր բանաստեղծների արտահայտած ապրումները: Նրանց «երգեր»-ում ոռմանտիկական պաթոսի սարք ու կարգով արտահայտվում էին մտերմական հուզապրումները՝ սիրած աղջկա հանդեպ խանդալառ սերը, հայրենի արտերի շշուկները, բնության պես-պես գույների՝ վերջալույսների ու այգաբացների մեծարանքը:

Նոր բանաստեղծներն ունեին նաև իրենց գրական կողմնորոշումները: Խաչիկ Դաշտենցն, օրինակ, իր «գարնանային երգերով», վայրի վարդի և այլն խորհրդանշաններով հակված էր դեպի շարենցյան ավանդները, Աղավնու ներշնչանքները գալիս էին Արագածի-Մանթաշի գունագծերից, Գոգգեն Բորյանին հրապուրում էր երևանյան պեյզաժը, Թաթու Հուրյանը և Խաչիկ Հրաշյանը երգում էին «Հողի արյունը», Սուրեն Թարյանը՝ վաղամեռիկ և տաղանդավոր մի բանաստեղծ, կրում էր Գ. Մահարու քնարի կնիքը, Հովհաննես Շիրաղի ներշնչանքները գալիս էին Ավ. Խսահակյանի ծողովրդական շնչի ու կառուցվածքի բանաստեղծություններից, Մ. Մարգարյանը՝ «Մտերմություն» գրքում սերը դիտում էր իրեն աշխարհի կապը, Գ. Էմինը դիմում էր ուսանողական կենցաղին («Նախաշավիդ»), Հր. Հովհաննիսյանը հակվում է դեպի մեծարենցյան պաստորալները, Սիլվա Կապուտիկյանը՝ փիլիսոփայական խորհրդածությունները:

30-ական թվականների բանաստեղծության հայտնությունը, իհարկե, Հովհաննես Շիրազն էր, որի «Դարնանամուտ» (1935) և «Երգ Հայաստանի» (1940) անդրանիկ գրքերը հուշակում էին կյանքի շահելության և հավերժության միտքը:

Հովհաննես Շիրազը լիաբուն դիմում էր նաև բանահյուսական ծագում ունեցող դարձլածքների ու պատկերների:

Հայ պոեզիայի «բանահյուսական հագեցման» ընթացքի բնորոշ երևոյթներից մեկը Սոլոմոն Տարոնցու (1905—1971) ստեղծագործությունն է:

Պատմական Տարոնի Կոփ գյուղում ծնված պատանին ծննդավայրում և այլուր իր հորից՝ հայտնի բանահավաք Բենսեից, նաև թափառական հեքիաթ ասացողներից պարբերաբար լսում է ծողովրդական պատումներ ու խաղեր, որոնք ամուր դրոշմվում են նրա հոգում:

Թեև հենց սկզբից Տարոնցու ասպարեզը պիտի լիներ ասմոնքային շընչի բանաստեղծությունը, սակայն տրվելով օրերի հրամայականին, նա սկզբանապես հակվում է դեպի տերյանական թախծոտ նվազները, այնուհետև շարենցյան հեղափոխական ոիթմերը:

Տերյանի և Զարենցի, ինչպես և Հաֆեղի ու Սաադիի միաժամանակյա ազգեցությունն են կրում 30-ական թվականների բանաստեղծական ժողովածուները՝ «Առավոտ» (1930), «Սերուղների երգը» (1934), «Դարերի լեգենդը» (1935), «Բանաստեղծություններ» (1940):

Մինչ տերյանական կնիքի բանաստեղծություններում Ս. Տարոնցին դըրակորում է բանաստեղծական որոշակի կուլտուրա, նոր իրականության բանաստեղծական արձագանքներում

կամ կրկնում է շարենցյան կառուցվածքները, կամ էլ մնում է փաստագրության շրջանակներում:

Տարոնցու բանաստեղծական կենսագրության մեջ առավելապես ուշագրավ են ժողովրդական մոտիվավորումները:

Այդպիսին է, օրինակ, «Զըմբուխ բլբուկ» վերնագրված ժողովրդական տաղիկների շարքը (1920—1944), ուր Ս. Տարոնցին, դիմելով հայ ժողովրդական բանահյուսության պատումայինքնարական արտահայտչականդարձվածքին ձևերին, վերստեղծում է ժողովրդի հոգեբանության ու կենցաղի տպավորիչ պատկերներ: Այդ շարքի բանաստեղծություններում միշնադարյան հայրենների ոգով ու շնչով

Ս. Տարոնցին արտահայտում է գեղչկական աշխարհի ներքին բովանդակությունը («Պաղ զուր է բխում Բինգոլա սարից...», «Դաշտից կուգաս, ալ անուշակ...», «Յարս քոն մտել այգին, ծոցն է բացել լուսնյակին» և այլն): Դրանց մեծ մասը սիրերգեր-պարերգեր են:

Ժաղովրդական տաղիկների միջոցով Ս. Տարոնցին արտահայտում է նաև հեռվում մնացած երկրի կարոտը («Իմ անուշ Մշու աշխարհ, մնացիր հեռու, հեռու...», «Մովասարի ծով աղբյուրներ», և այլն):

Ծննդավայրի կարոտի տրամադրությունն է նաև Ս. Տարոնցու «Երեք գլրարները» բալլադաշունչ բանաստեղծությունը: Այստեղ ցավագին տիրությամբ ներկայացված է հին, անցած օրերի հոգեբանությունը կրողների՝ Մոկսի թափառական գլրարների դրամատիկական վերապրումները նոր իրականության մեջ, ուր նրանք այլևս անելիք չունեն:

Ծննդավայրի երազով ապրող, ուսերից հին անեղներ կախած երեք գլրարները դեռ իրենց անցյալ կյանքի հետ են, դեռ նահապետական աշխարհի գույների մեջ են:

Բայց փոխվել են ժամանակները, փոխվել է երգի նյութը, հետևաբար՝

Եվ այսպես անհույս, մոռլլ, անուրախ,  
Ուսերից կախած երեք անեղներ,  
Ստվերների պես այս երկրի վրա  
Դեռ շրջում եք դուք, մեռնող գզրարներ,  
Երեք գզրարներ...

Դրամատիկական խոր բովանդակություն ունի նաև «Սեր արագիլը» քրիստոմատիկական բանաստեղծությունը:

Անցնում է արագիլների վերջին երամը դեպի նոր հանգրվաններ: Այդ երամը թողնում է վերջին երգը սրտակեղեք՝ ուղղված մեռնող ծեր արագիլին («Քո աշքերում նվազում է կապույտ երազը շամբերի», «Քո երազները մարում են վերջին երգով»):

Հետևում է Սեր արագիլի մահը.

Երամն անցավ թխպոտ երկնով, ու չնայեց երեք հետեւ,  
Ու թողեց որ դու լուս մեռնես մենակ, տրտում  
ու տարագիր,  
Միայն քամին ծառերի հետ շնչաց րո սուզը թեթև,  
—Ու դու մեռար, ծեր արագիլ...

Ժողովրդական բանահյուսության հանդեպ ունեցած ուժգին հարցասիրությունից ծնվեցին «Սասունցի Դավիթ» վիպերգի առանձին հատվածների գրական մշակումները, որոնք մտան 1940 թվականին տպագրած ժողովածուի մեջ: Այդ մշակումներում երևում է նյութի և ժողովրդական արվեստի գաղտնիքների իմացություն:

Տարոնցին գրել է նաև դիստիքոսներ, բեյթեր, «արևելյան քայլակներ»՝ պարսիկ բանաստեղծների հետևությամբ: Այդ քայլակներում և խոհական բանաստեղծություններում նա արծարծում է կյանքի ու մահվան, արվեստի և կյանքի, բնության ու մարդու փիլիսոփայական խնդիրներ:

Սողոմոն Տարոնցին բեղմնավոր եղավ պատերազմի և ետպատերազմյան տարիներին, գրելով հակաֆաշիստական, հայրենասիրական, պատմական բազմաթիվ բանաստեղծություններ, սոնետներ, բալլադներ ու տաղեր, որոնք թեև կատարեցին իրենց դերը (հատկապիս Հայրենական պատերազմի շիկացած օրերին), սակայն, գրականության պատմության մեջ հիշատակելի են իրեւ գրապատմական փաստեր:

Ս. Տարոնցին համաշխարհային պոեզիայի գիտակ էր. դրա վկայությունն է աշխարհի բանաստեղծների թարգմանությունների ժաղկաքաղը՝ «Հազար ու մի երգ» խորագրով:

## 14

Եթե 20-ական թվականների բանաստեղծության «լայն կտավը» հիմնականում բալլադն էր՝ մարտիրոսագրական թեքումով կամ հոգեբանական դրաման էր («Խմբապետ Շավարշը»), ապա տասնամյակի վերջից հերոսական շնչի բալլադների կողքին շրջանառության մեջ են մտնում նաև պոեմի ժանրատեսակները՝ քնարական, հրապարակախոսական, վիպային:

Արդյունաբերական հսկաներ և կոլտնտեսային շարժում,—սրանք էին նորագույն պոեմի այսպես ասած «սոցիալական-մարդկային հումքը»: Իրականության «Ճիշճայ գրոմադա»-ն հրամայարար թելադրում էր «նոր հերոսների» որոնման պահանջը:

Այս գեղագիտական իրադրության մեջ առաջին պլան են մզվում աշխատանքի մոտիվները, իբրև սոցիալիստական հասարակության շարժիչ ուժեր ժամանակի գլխավոր գույնի՝ աշխատանքային վերելքի գեղարվեստական յուրացման համար ժամանակի բանաստեղծները գործուղում էին «ժամանակի հերոսների» մոտ՝ գործարանային հաստոցների, քաղաքները կառուցողների, կոլտնաեսությունների, այստեղից քաղելու «հումքը»:

Կոնկրետ շարժափիթներով գրված պոեմների մեծագույն մասը թեև բացառապես գրապատմական ու կենսագրական հետաքրքրություն է ներկայացնում (Վ. Ալազանի «Դարը դարի դեմ», Թ. Հուրյանի «Դնեպրը» և այլն), սակայն դրանք ուշագրավ են նոր թեմաների (առավելապես գործարանային կյանքի) հետախուզության, նյութի հետ «առաջին շիման», աշխատանքային սույնատիկան արծարծելու առումով:

Արդիականության կոնկրետ-առօրեական փաստերը մտնում էին գրականության մեջ իբրև էպիկական արվեստի սկիզբներ, իսկ դա արդեն յուղատեսական նվաճում էր:

Ժամանակակից թեմատիկայով պոեմի որոշ ավանդներ կապվում են Նախրի Զարյանի անվան հետ:

Լինելով ստեղծագործական եռանդուն և շուտափույթ խառնվածք, Ն. Զարյանը նախ և առաջ գրեց իր «արդյունաբերական» թեմատիկայի պոեմները («Հնոցի մոտ», «Աղաղակ», «Չուգուն»), որոնք ըստ էության ուսպանական գեղագիտական հրահանգների՝ տեխնիցիզմի, արտահայտություններ էին:

Թեև իր «գոնքասյան» ստեղծագործական գործուղման ընթացքում Ն. Զարյանը անմիջական շփումներ էր ոնեցել ածխահատների-մետաղագործների՝ հանքերում և հնոցների մոտ աշխատող մարդկանց հետ, սակայն ավելի ուշադիր էր գտնվել նրանց աշխատանքի արձանագրական մատուցման հանդեպ, քան այն նույն մարդկանց հոգեկան ապրումների, հոգսերի ու տագնապների:

Առարկաների՝ տեխնիկայի գերությունը խլացրել էր աշխատանքային նյութի հոգեբանական-մարդկային պոտենցիալը, գործը հասցնելով, վերջ ի-վերջո, գաղափարական սխեմաների:

Արդյունաբերական մոտիվներից Ն. Զարյանը շուտով շրջվեց գեպի հայ գյուղի սոցիալիստական վերափոխման թեմատիկան, որը զբաղեցնում էր նաև ուրիշ բանաստեղծ-հրապարակագիրների:

Պոեմ-ուրվագծերից («Ծնվում է նոր կյանքը», «Սաքո Միկինյան», «Կարինե») հետո, անկասկած, գրական որոշակի հետաքրքրություն է ներկայացնում «Խուշանի քարափը» էպիկա-դրամատիկական պոեմը (հեղինակի բնորոշումով «Հափածո էպոպեան»), որի առաջին տարբերակը լույս տեսավ 1930-ին, իսկ երկրորդը, հիմնովին վերամշակված տարբերակը՝ 1932-ին:

30-ական թվականների սկզբից՝ մի ամբողջ տասնամյակ, ստեղծվեցին գյուղի մասին պատմող վիպակ, բանաստեղծություն ու պոեմ, սակայն գրանցից և ոչ մեկը պատմական հեռավորության մեջ շի երեւմ «Խուշանի քարափի» նշանակությամբ:

Պոեմի արժեքը, ամենագլխավոր արժեքը ոչ թե նրա սյուժետային կառուցվածքն է, այլ մասնավոր սեփականատիրական հոգեբանությունից բաժանվելու գյուղացիական զանգվածներին համակած խոր դրամատիզմի պատկերումը:

Ինչպես կոլտնտեսային շարժմանը նվիրված սովետական պոեմների մեծ մասում, «Խուշանի քարափում» ևս կենցաղային թեև անշան, բայց պատմա-

կանությամբ շնչող պատկերներով ներկայացվում են հայ գյուղացու ողբերգական ցնցումները, նրա ներքին դրաման, նրա հոգերանությունը:

«Երուշանի քարափը», իհարկե, շունի այդ նույն թեմայի մշակման լավագույն բանաստեղծական երկի՝ Ալ. Տվարդովսկու «Երկիր Մուրավիա» պոեմի փիլիսոփայական խորությունը, ոչ էլ նրա հերոսներն ունեն նիկիտա Մորգունովի թափառումների-որոնումների մեծ խորհուրդը, սակայն վավերագրորեն ճշմարտացի է ներկայացված կոլտնտեսային շարժման սկզբնավորման տարիների կոնֆլիկտներն ու կենցաղային առօրյան:

«Երուշանի քարափը» ժամանակի հայ պոեզիայի համապատկերում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև ոճային առանձին խնդիրների լուծման տեսակետից, մասնավորապես՝ բարձրաշունչ խոսքից ունալիստական կոնկրետ պատկերին անցնելու, որի համար էլ արժանացավ Յ. Չարենցի գնահատությանը:

Էպիկական խնդիրներ ուներ լուծելու քաղաքացիական կոիվներին նվիրված «Դյուցազնագիրքը», որը, սակայն, ունեցավ միայն առանձին փայլատակումներ, իսկ ամբողջության մեջ մնաց գեղարվեստորեն շիրագործված և գաղափարապես սխալ:

## 15

Եթե 20-ական թվականներին ամբողջովին հանձնվելով անցյալին, պատմությունն ապրում էր հարաբերական հանգստության մեջ (ասել է Թե՛ բանաստեղծական գրիչները լուսակացնում էին Պատմության կողքով, իրեւ ռարգելված գոտուա), ապա 30-ական թվականներին, մի շաբաթ հանգամանքների պարտադրությամբ ամբողջ լայնությամբ և խորությամբ հարուցվեց պատմության խնդիրը:

Պատմական գիտակցության կրողը դարձյալ Եղիշե Զարենցն էր, որ «Պատմության քառուղիներով» պատմափիլիսոփայական պոեմի մեջ ասպարեզ հանեց հետևյալ տողերը՝ «անցյալի փառքերի» սնապարժության դեմ:

Եվ ես, ահավասիկ, հին գրերով մեր այս  
Իմ տողերը կոփող մի պոեմ—  
Ինչ խսուերով երգեմ և ինչ տենգով պատմեմ  
Մեր անանցյալ անցյալը, մեր ընթացքը, որ էլ  
Ոչ մի գուսան երգով չոգեկոչի հին փառքը  
Եվ կարոտով անմիտ ետ չնայի,—  
Զապարծենա այլնս, որ առանց մեզ աշխարհը  
Կիներ պարտեզ մի ամայի...

«Անանցյալ անցյալի» կողքին Զարենցը հրովարտակելով նաև «Օ, չի եղել մեր գայլը պղնձյա» տողը (որը ամենամեծ ընդհանրացումն է), նկատի ուներ հայոց ողբերգական պատմությունը՝ լեփ-լեցուն ձախողումներով: Դա էլ հարուցում էր ազգային ինքնաքննադատության կիրքը, հետեաբար՝ ազգային ինքնաճանաշողության կանչը:

Զարենցին, ինչպես մեկ տասնամյակ առաջ, դարձյալ մտահոգում էր «Երկիր Նախրի» վեպի Առաջաբանի պատմական հարցը: «Ի՞նչ ենք եղել երեկ և ինչ ենք լինելու վաղը»:

Սա որքան պատմական, նույնքան և արդիական մտահոգություն էր:

Պոեմի և առհասարակ «Գիրք ճանապարհի» ժողովածուի մյուս պոեմների («Մահվան տեսիլ» և այլն) կապակցությամբ ժամանակի գրական քննադատությունը ասպարեզ հանեց «ազգային նիհիլիստի» խարանը (մինչ այդ նրա անունից անբաժան էր «նացիոնալիստի» վերագրումը), սակայն այդ մտայնությունը (որը շարունակվում է մինչև օրս) սիալ է նախ և առաջ իր միակողմանիության պատճառով:

Հայոց պատմության քառուղիների իմաստավորումը Զարենցին անհրաժեշտ էր ոչ թե նրան վերագրելու ռունացությանց փիլիսոփայությունը, ոչ թե հայոց պատմության ուղիներին նղովք կարդալու, ոչ թե ժխտելու ազգային շարժումների դերը հայոց ճակատագրի մեջ, ինչպես մեկնաբանում են նրա դիրքերը («Զարենցն ասում է՝ մենք զերո ենք»), այլ արտահայտելու իր տագնապը «ազգային բացառիկության» սնամեջ քարոզների հանդեպ և հաստատելու Ազգային Գոյի պատմականության, այսինքն ազգի, իբրև մշտապես զարգացող երևույթի, դոկտրինան: Ազգային ճակատագրի մեկնաբանությունը սկսելով հայության էթնիկական ձևավորման ամենավաղ ժամանակներից (երբ դեռ չկար միասնական հայրենիքի գաղափարը) և անցնելով դարերի շերտերի միջով, իսկ մյուս պատմական շնչի պոեմներով («Մահվան տեսիլ», «Դեպի լյառն Մասիս», «Սասունցի Դավիթ» և այլն) անդրադառնալով **XIX** դարի և **XX** դարասկզբի ազգային-ազատագրական մաքառումների ողբերգական փլուզմանը, Զարենցը այդուամենայնիվ մնում է պատմական լավատեսության դիրքերում՝ հոչակելով ազգային պատմության դրական արժեքավորումը՝ «ոսկյա լապտերի լուսով ես դարձա գալիքի երգիշ...»:

Զարենցի «պատմական տեսության» մեջ եղած դատապարտող, ազգային ինքնաքննադատության շերտերը բնավ կապ չունեն «ազգային ոչնչականության» հին ու նոր տեսությունների հետ:

Զարենցը պատմական պոեմների շարքով, ըստ էության, լուծում էր արդիական խնդիրներ:

Նոր ժամանակների համար բնավ անկարեսոր չէր, թե հին ուղիների մեջ ինչ ավանդներ կային, որ պետք է դատապարտվեին և ինչ ավանդներ կային, որոնցով պետք է հիմնավորվեր ազգային նոր ճակատագրի տրամադրանությունը:

Սիսալ է գրականագիտության մեջ շրջանառություն գտած այն պատկերացումը, թե Զարենցը անմնացորդ պատմության դատապատճենին է հանձնում ազգային ոռմանտիզմի գաղափարախոսությունը, վերջինիս մեջ շտեսնելով որևէ դրական շերտ: Ազգային շարժումների շարենցյան գնահատության մեջ շատ կարեսոր են «Մահվան տեսիլի» տարբերակումները և, մանավանդ այն մոմենտը, որ չէր կարող ժխտել անցյալը՝ ապագայի նեցուկը՝ «Աչքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նմույգը նստած»:

Զարենցի «պատմական տեսության» մեջ առանձնակի տեղ ունի հայ ժողովրդական վիպերգի՝ «Սասունցի Դավիթ» մշակման փաստը: Այստեղ ժողովուրդը հանդես է գալիս իր պատմական երազներով.

Ստեղծել է նա իր հեքիաթները, և իր  
Հնամյա վեպում հանձարեղ՝  
Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր  
Եղ անմահ խորհուրդն է դրել...

Հայ սովետական պոեզիայում «պատմական թեմայի» յուրօրինակ արձագանքներն էին հայ ժողովրդական վիպերգի՝ «Սասնա ծռերի» տարբեր ճյուղերի գրական մշակումների փորձերը: 1937-ին Ավ. Խսահակյանը նորից անդրադարձավ 1919-ին գրած «Սասնա Մհեր» վիպերգին, որի նոր տարբերակը արտահայտում էր նոր ժամանակների շունչը:

Գրվեցին նաև պատմական ավանդությունների սյուժետային պոեմներ (ինչպես ն. Զարյանի «Արշակն ու Շապուհ»), պատմական սոնետներ, սակայն իր փիլիսոփայական խորությամբ ընդգծվեց Ավ. Խսահակյանի «Մեր պատմիչները և մեր գուսանները» բանաստեղծությունը՝ նվիրված ժողովրդական էպոսի ասացողներին:

Մեր գեղջուկի պարզ խրճիթում, սուրբ օչախի շուրջը նստած,  
Դոսանները մեր խանդավառ, առաջները գինի ու հաց,  
Վիպերգեցին հաղթանակը դյուցազների մեր մեծազոր  
Եվ ծաղրեցին պարտությունը սոսխների մեր բյուրավոր,  
Եվ հյուսեցին պատմությունը հավերժացող յողովրդի,  
Վառ հավատով վառքերը մեր ավանդեցին արդությունները,  
Տեսան շրեղ մեր ապագան, անընկճելի ազատ ոգին,  
Հայրենիքի սիրո համար միշտ բարձրացրած Թուր-Կայծակին:

## 16

Երեսնական թվականների վերջին հնգամյակը (1936—40) հատկապես բնութագրվում է պոեզիայի արժեթղթերի անկման փաստով: Ճիշտ է, այս տարիներին ևս գրվում են կյանքի թրթիւններով հարուստ բանաստեղծական մանրապատումներ, հանդիս են գալիս նոր, շնորհալի անուններ, սակայն պոեզիայի «ընդհանուր գույնը» այլևս անթրթիո, անհղացում, անապրում պաթետիկան էր:

Զարգացման մեծ արագություն վերցրեց բանաստեղծական օդայի տեսակը՝ այդ տեսակի ավանդական-կլասիցիստական որակով: Բանաստեղծների ամբողջ շարասյունը՝ «լեգիոնը», դրանց միացած նաև ասպարեզը ողողած «քաղաքական աշուղները» առաջին խնդիր էին համարում «տիեզերական անհատի» անսանձ փառաբանությունը՝ տիեզերական շափանիշներով: Իրար ձեռք էին մեկնում անհույզ բանաստեղծությունն ու կեղծ աշուղությունը, հիշյալ տարեթվերի բանաստեղծության ընդգծված հոսանքները:

Հրապարակայնորեն՝ մամուլում և քննադատության մեջ, խրախուսվում էին հատկապես «քաղաքական աշուղների» (Սերոբի և այլոց) երկարացում ձոները, այնքան ուժգին թափով էին խրախուսվում, որ բանաստեղծներն իրենց «բանաստեղծ» կոչումից սկսել էին գերադասել «գուսանի» ընդունելի թիկնոցը:

Թմբուկների և ծնծղաների զիլ ձայների բանաստեղծական համերգը, բնականաբար, խլացնում էր «քնարական սրինգների» մեղմաշշուկ ձայները, որոնք այլևս համարվում էին «անախրոնիզմ», պատմականորեն անհեռանկար...

Բանաստեղծության «հոգեբանականացման» ընթացքը, որ սկսվել էր տասնամյակի սկզբին, կանգ է առնում՝ «կանալ ճանապարհ» բացելով բարձրաշուշլ զովքերի, շքերթայնության, անբովանդակ ածականների՝ արևելականության, հախուսն և անկանգ հոսքի առաջ:

Բանաստեղծության ճակատագրին սպառնացող «աղետները» տեղ են գտնում բանաստեղծների խմբական այն նամակներում, որոնք հղվում էին «Հայր-առաջնորդին»...

Բանաստեղծությունը այս պայմաններում հարկադրաբար դիմում է նաև ժամկագրությունների: Վառ օրինակը ե. Զարենցի «Պատգամը» և մի շարք բանաստեղծություններն էին:

\* \* \*

20—30-ական թվականների հայ պոեզիայի զարգացումը թեև չի եղիլ անընդհատ վերելքի ճանապարհ (եղել են ընդհատումների ու ճգնաժամի տարիներ), այդուամինայնիվ, այդ զարգացումը եղել է դինամիկ ընթացք այն իմաստով, որ այդ տարիներին առաջադրվել են գեղագիտական բարձր սկզբունքներ (հատկապես Եղիշե Զարենցի կողմից) և ստեղծվել են գեղարվեստական գագաթնային երկեր՝ դարձյալ Զարենցի անումով:

20—30-ական թվականների հայ պոեզիան ասպարեզ է հանել քնարական շնչի բանաստեղծների՝ Գ. Մահարու, Գ. Սարյանի, Հ. Շիրազի և այլոց նվագները, Ն. Զարյանի «Ծուշանի քարափը» պոեմը, աշքի է ընկել ոճային և ձեական նոր օրինաշափություններով, այդ տարիներին ձևավորվել են գրական ձիրքեր, սակայն ընդհանուր զանգվածի մեջ բարձրանում է Եղիշե Զարենցի վիթխարի անհատականությունը, այն բանաստեղծի, որի ստեղծագործությամբ նորագույն պոեզիան օղակվեց բազմադարյա հայ պոեզիայի պատմությանը:

## ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐԶԱԿ

### 1

Հայ գեղարվեստական արձակը՝ ժանրի բոլոր ևնթատեսակներով (վեպ-վիպակ, պատմվածք-նովել, ակնարկ-ֆելիետոն), ի տարբերություն նոր հասարակության ծննդյան տարիների գեղարվեստական էներգիայի հիմնական ծանրությունը կրող բանաստեղծական ստեղծագործության, իր նորագույն պատմությունը սկսեց համեմատաբար «խաղաղ», ուժեղ «պայթյուններից» հեռու գրական իրադրության մեջ:

Դա, սակայն, թվացյալ, հարաբերական խաղաղություն էր:

Ճիշտ է, գեղարվեստական արձակի զարգացման ընթացքին բնորոշ չէին պոեզիային ուղեկցող հրապարակային վիճաբանությունների աղմկարար շում-ը և թատերագրության բարենորոգչական (ուժորմիստական) հրովարտակների կտրուկ դրվագքը, «ակայն արձակի զարգացման ճանապարհը ոչ միայն անպայքար ու անկորիվ չէր, այլև ընդգծվում էր ներքին, «ընդհատակյա» սուլր բախումներով, տարբեր սկզբունքների հակադրություններով:

Բախումնային իրադրությունը առհասարակ զարգացման դիալեկտիկայի պարտադիր հատկանիշն է:

Բանն այն է, որ գեղարվեստը մշտապես ձգտում է բովանդակության, ձեփ, ոճային արտահայտման գույների նորացման՝ արդիականացման (1896-ին իր օրագրում կը Տոլստոյը կատարել է հիտեյալ նշանակալից գրառումը՝ «Ոչ մի ուրիշ ասպարեզում պահպանողականությունն այնքան վնասակար չէ, որքան արվեստում»), իսկ պատմության արմատական շրջադարձի, այսպես կովկած «երկու աշխարհի սահմանագծի» թվականներին առավել նպատակալաց ու կրքով է դիմում վաղեմի ըմբռնումների, հասկացությունների, արժեքների վերագնահատման:

Վերագնահատությունը միշտ էլ ենթարում է բախումնային, ընդդիմագիր կեցվածք անցյալի ըմբռնումների ու արժեքների հանդեպ, անգամ այն դեպքերում, երբ նոր ձևավորվող գրականությունը լիուլի օգտվում է «հին արվեստի» շտեմարաններից:

Արդեն դարասկզբից հայ իրականության մեջ առաջադրվում էին գեղարվեստական գրականության բոլոր ժանրերի և արվեստի բոլոր տեսակների արդիականացման պահանջներ: Մասնավորապես արձակի համար առաջնահերթ էր համարվում «գավառական սահմանափակության», «արևելականության», նյութի բարբագրական մեկնաբանման հաղթահարման խնդիրը:

Դեռ 10-ական թվականներին ներգրավվելով Մաքսիմ Գորկու նախաձեռնած «Հայ գրականության ժողովածուի» նախապատրաստման աշխատանքներին, Վահան Տերյանը անմիջականորեն և շոշափելիորեն վերապրում է հայ արձակի բավականաշափ ցածր մակարդակը նույն ժամանակաշրջանի բանաստեղծական ստեղծագործության համեմատությամբ: Իր թղթակիցներին առա-

քած նամակներում շարունակ գանգատվելով Մ. Գորկու ժողովածուի համար համապատասխան գեղարվեստական արժեքայնության նյութեր Ալինելուց, Վահան Տերյանը որոնում է նաև հայ արձակի զարգացման ու վերանորոգման բանալիները:

Վահան Տերյանի և նրա համախոհների հրահանգած գեղարվեստական ժնուր «Հոսանքի», գրական նոր շարժման նպատակը ոչ միայն ավանդական ժանրային կառուցվածքների ու ձեւերի վերակառուցումն էր՝ «համաելքոպական» շափանիշների ուղղությամբ, այլև գրականության հասարակական, բարոյական-հոգեբանական պաթոսի լայնացումն էր՝ դարձյալ համաշխարհային արվեստի տիսագծերով:

Ի տարբերություն 900—10-ական թվականների բանաստեղծական ստեղծագործության որակական բարձր թոփշքների, նույն ժամանակաշրջանի հայ արձակը դրսերում է նախաճգնածմի բոլոր ստուգ նշանները՝ ի դեմս Ավ. Ահարոնյանի ողբասացական-կերկերում պսկղո-ուոմանտիզմի, Վահան Արծունու, Ռենի և այլոց պաթոլոգիական-նատուրալիստական «ժառանգականության» դրույթների, անհատապաշտության տարերքին հանձնված «եսին. մարդերի», գավառագիր-գյուղագիրների ազգագրական-բարքագրական սահմանափակության, մի խոսքով՝ ի դեմս անմիթար կացության:

Դարասկզբի առաջին տասնամյակների հայ գեղարվեստական արձակին բնորոշ այս խայտաբղիտ «կոլորիտը» հաղթահարելու բնական ճանապարհ «կյանքի խոր հոսանքի» մեջ արիաբար նետվող և հասարակությանը հուզող ամենաարմատական խնդիրներին արձագանքող գրականությունն էր, որը, սակայն, գարասկզբին մնում էր «գրական երազանքների» սահմաններում:

Թեև հասարակական մինուլորտում արդեն հասունացել էր ազգային ուժեղ վիպասանության պահանջը, սակայն դա իրագործվեց արդեն քսանական թվականների սկզբին, հայոց պատմության հեղափոխական շրջադարձից հետո՝ իբրև այդ շրջադարձի գեղարվեստական արտահայտություն:

Նորագույն արձակի զարգացման համար էական պակասություն էր խզումը իր «թիկունքից», իր ավանդներից:

Թեև հայ գեղարվեստական արձակի ավանդները, ինչպես բանաստեղծությանը, գալիս են դարերի խորքից<sup>1</sup>, թեև հայ պատմիշների մատյանները պատմական հիշատակարանների արժեքից բացի ունեն նաև գեղարվեստական նշանակություն, թեև միջնադարում տարածված են եղել արձակի մի շարք ենթատեսակներ (զրուց, խրատ, ավանդապատում, վարքագրություն, առակ, տեսակլթ), թեև XIX դարը և XX դարասկիզբը ստեղծել էին հարուստ ավանդներ՝ և. Արովյանի «Վերք Հայաստանին», Մաֆֆու վիպասանությունը, Մուրացանի պատմավեպը, Շիրվանղադեկի ուելիխտական վեպն ու վիպակը, Գ. Սունդուկյանի «Վարինկի վեչերը», Պարոնյանի երգիծանքը, արևմտահայ նորավիպագիրների գործերը, Հովհ. Թումանյանի պատմվածքը, սակայն, «սահմանագծի» հոգեբանությունը խանգարում էր ամբողջ խորությամբ գիտակցելու ազգային ավանդների նշանակությունը նորագույն գրականության զարգացման համար:

Իրականության մեջ կատարված պատմական տեղաշարժերը, բնականագար, ասպարեզ էին կոչում գեղագիտական նոր պահանջմունքներ և «հին շափանիշների» վերանայման հրահանգներ:

Այս «պարտադրության» մասին Մտ. Զորյանը տարիներ անց գրում է. «Սովորական նոր իրականությունը իր հետ բերեց և նոր մարդկային փոխարաբերություններ, նոր պրոբլեմներ, որոնց նկատմամբ չէր կարելի ան-

տարբեր մնալ... Նոր բովանդակությունը հրամայաբար պահանջում էր նոր ձև, նոր ոճ, նոր լեզվական ֆակտուրա»<sup>2:</sup>

«Նորացման», «վերանայման» այս հրամայականը նշանակում էր հայտնագործել գրականության «սոցիալիստական կոնցեպցիան», որը որքան դյուրին էր թվում իբրև տեսություն, նույնքան դժվար իրագործելի էր գործնականորեն:

Դժվարությունները նախ և առաջ ներքին բնույթի էին՝ կապված «նոր նյութի», «մարդկային նոր հումքի» յուրացման շափազանց դիմադրողունակ ինդրի հետ:

Ժամանակաշրջանը հարուստ, բարդ, բազմակնձիռ, ամենօրյա հակասություններով լեցուն ժամանակաշրջան էր, որին անդրադառնալու համար գրողները պատրաստ չէին հոգեբանորեն: Այս մասին Ստ. Զորյանը իր «գրական մտորումների» մեջ ասել է. «Փոթորկի մեջ ընկած մարդը որքան էլ լավ տեսողություն ունենա, չի կարող տեսնել նրա մեծությունը և ընդգրկել այն»<sup>3:</sup>

Արդիական կյանքի յուրացման պահանջը, որով հանդես էին գալիս նաև ուրիշ գրողներ, բախվում էր որոշ «գեղագիտական նախապաշարմունքների»:

Մի կողմից իրեն զգացնել էր տալիս սխեմատիզմը՝ «կաշվե բամկոնակի», գենդանի մարդու, «ինտուիտիվ հերոսի», «առույգ հերոսի» տարրերակներով, արտահայտման պաթոսային գույներով, մյուս կողմից ասպարեզ էր գտնում «մողերնիստական հոսանքը»՝ նեռումանտիկական գրելաձեռվ, ոիթմական ոճավորումներով, անբովանդակ-ֆորմալիստական ձևակառուցվածքներով: «Նոր ձևերի» անվան տակ հերքվում էր «հին» հոգեբանական ոեալիզմը՝ իբրև «պատմական անախրոնիզմ»:

Այս պայմաններում իսկ հայ գեղարվեստական արձակը ի հայտ է բերում կենսունակություն՝ յուրացնելու պատմական նոր ժամանակի նյութը, այդ նյութի հիման վրա վերանայելու գեղարվեստական հին ձևերը (և ոչ թե «պայթեցնելու» դրանք), նվաճելու գեղարվեստական նոր բնագծեր, ուր նկատելի գեր է կատարում ոռու նորագույն գրականության փորձը՝ ի դեմս Մ. Գորկու և Ա. Սերաֆիմովիչի, Ա. Ֆադենի և Դմ. Ֆուրմանովի, Յու. Լիբեդինսկու և Մ. Բարսելի, Լ. Սեյֆուլինայի և Ա. Նեվերովի («Տաշքենդ, հացի քաղաք») գրվածքների, որոնց թարգմանությունները արժանանում են հայոց պարբերականների գրախոսություններին՝ գերազանցորեն «օրինակելի նմուշի» թեքումով:

## 2

Գրականության գարգացման առանցքային խնդիրը անհրաժեշտաբար դառնում է ժամանակի գլխավոր հերոսի որոնումը: Արձակագիրների ուշադրությանն են արժանանում, առաջին հերթին, այն մարդկանց կերպարները, որոնք գտնվում էին պատմական անցքերի կենտրոնում, հեղափոխության և քաղաքացիական կոփների առաջին շարքերում՝ աննկուն հեղափոխականներ, անձնը-վեր ընդհատակայիններ, կարմիր պարտիզաններ, հայրենի հողի ազատագրության մարտիկ-նահատակներ և այլք: Արձակը փորձում էր դնել մարդու և հեղափոխության հարաբերության հիմունքը, բացահայտել հերոսության ակումբները:

Այս խնդիրը ոչ միայն դյուրին չէր իբրև գեղարվեստական առաջադրություն, այլև կապված էր որոշակի գեղագիտական նախապաշարմունքների ու

գոգմաների հաղթահարման հետ։ Որոշ տեսաբաններ ու գրողներ առաջադրելով «ժողովրդի հավաքական-զանդիային ուժի» արտացոլման ճշմարիտ պահանջը, դրանով էլ սահմանափակում էին անհատականության՝ հերոսների հոգեկան ներքին աշխարհի բացահայտման հնարավորությունները։

Հեղափոխության հերոսի պատկերման մլուս դժվարությունն այն էր, որ այդ հերոսը գերազանցորեն ներկայացվում էր իբրև ոռմանտիկական պաթոսի մարմնացում, իսկ պաթոսը բոլոր գեպքերում ստվերում է իրականության միջավայրի և մարդկանց կոնկրետ պատկերումը և բանը հասցնում է վերացականության, զաղափարական ընդհանուր սկզբունքի մեջ տարրալուծված «սխեմա-կերպարների»։

Կար նաև մյուս նախապաշարմունքը. հերոսությունը ոմանց կողմից հռչակվում էր ոչ իբրև անհատական, ոչ մարդկային երեսվթ, այլ համարվում էր լոկ «պատմական անհրաժեշտություն»։ Այս տեսակետով՝ մարդը դառնում էր պատմության ածանցյալ տարր, իր հոգեբանությունից և բնավորությունից լիցքաթափված, անդեմ սուրյեկտու։

Դեղարվեստական այս և այլ սահմանափակումները (նաև «կաշվե բաճկոնակների» լայն տարածումը, ժողովրդական զանգվածների պայքարի տարերայնության տեսակետը, տրամադրության գերակշռությունը փաստացի իրականությունից և այլն), բնականարար, արձակի մեջ ունեցան ոչ արդյունավետ բեկումներ։ Անդրադառնալով նույն ժամանակաշրջանի ուսւական արձակին, Ալ. Տոլստոյը գրել է. «Կենցաղի մանրամասնություններ, բառեր, բառակտորներ,—փայլուն են, կույս աշխարհ են հանված կյանքի հետաքրքրական բեկորներ... Լարված բոպեններ, երեսվթներ, դեպքեր, տրամադրություններ, բայց ամբողջությունը չի երեսւ, մարդկանց առկայժումներ, բայց ոչ ինքը՝ մարդը»<sup>4</sup>։

Ալ. Տոլստոյը 1924-ին պահոնցում էր՝ «Հերոս... Մեզ պետք է մեր ժամանակի հերոսը... Մենք չպետք է վախենանք լայն ժեստերից և մեծ խոռքերից»<sup>5</sup>։

Հայ արձակը թեև շտեղծեց հեղափոխական պայքարի բովով անցած ժողովրդի մոնումենտալ հերոսապատումը, ինչպես դա կատարեց ուսւաստական արձակը՝ ի դեմս Ալ. Սերաֆիմովիչի «Երկաթե հեղեղը», Ալ. Ֆադեևի «Զախարովումը» («Զարդը»), Դմ. Ֆուրմանովի «Զապակ», Ալ. Մալիշկինի «Դարիրի անկումը» (վիպական կտավների, սակայն հեղափոխական անցքերի և հերոսների պատկերման մեջ շատ դեպքերում հանդես եկավ գեղագիտական ճշմարիտ դիրքերով)։

Թա վերաբերում է, առաջին հերթին, քաղաքացիական կոիվների մասին Ստ. Զորյանի շարահյուսած կտավներին՝ «Քսանմեկ թիվը» վեպին (տարիներ անց, ամբողջացած տարբերակը լույս տեսավ «Ամիրյանների ընտանիքը» խորագրով), «Հեղկոմի նախագահը» (1923) և «Դրադարանի աղջիկը» (1925) վիպակներին։

Թեև ժամանակի քննադատությունը հարցականներ կախեց Ստ. Զորյանի գրվածքների վրա, «անախրոնիզմ» համարելով հերսների ցուցադրման «հոգեբանական պլանը» (խոսքը վերաբերում էր «Հեղկոմի նախագահին»), այսուամենայնիվ, ճշմարտությունը գրողի կողմն էր։

Չտարանշատելով իր գրական հերոսների սոցիալական և հոգեբանական էությունները, Ստ. Զորյանը հասավ ժողովրդի շահերի և հեղափոխության շա-

Հերի միասնության, իրրև պատմական ընթացքի գլխավոր օրինաշափության, ըմբռնմանը:

Հեղկումի նախագահի և գրադարանի աղջկա կերպարներով Զորյանի լուծեց նաև գեղարվեստական այնպիսի մի խնդիր, ինչպես ազգային նոր բնավորության խնդիրն է:

Սոցիալիստական ռեալիզմի գեղագիտությունն էր գրողին թելադրում, ի տարբերություն հեղափոխության պլակատային-վերացական-պաթոսային մեկնաբանությունների, գնալ դեպի կյանքի ժողովրդական արմատները և ազգային հայկական միջավայրում նշմարել բնավորության նոր գծեր:

Գեղագիտական նույն դիրքերն էր դավանում նաև Ակսել Բակունցը, որը ի դեմս «Բրուտ տղան» և «Սև ցելերի սերմնացանը» պատմվածքների նահատակ-հերոսների ներկայացրեց ոչ թե առասարակ հեղափոխականին, այլ հայրենի եզերքի ազատագրության զինվորներին:

Հայաստանում և Կովկասում քաղաքացիական կոփվներն ունեցան ուրիշ գրական արձագանքներ և՝ Գ. Արովի «Առաջին կոմունարը» պատմվածքը, Մ. Թորգոմյանի «Հորձանքում» (1930) վեպը, Վ. Անանյանի «Կրակե օղակում» (1930) վիպակը, Հ. Հակոբյանի «Ագիտատորի հուշերից» (1927), Մովսես Արալու «Այրվող հորիզոնը» վեպի առաջին գիրքը (1940), Վ. Թոթովենցի «Թաքու» եռահատոր վեպը, Հր. Քոչարի, Մ. Պայազատի պատմվածքները, սակայն դրանք ոչ թե հեղափոխության պատմական փորձի խոր մշակումներ են, այլ վավերագրական-սխեմատիկ պատումներ փոթորկությունը օրերի մասին:

### 3

Քաղաքացիական կոփվների վերջին կրակոցների հետ հեղափոխությունը ու միայն չի ընդհատվում, այլև շարունակվում է մարդկանց հոգեբանության մեջ, նրանց մի մասին կողմնորոշելով դեպի հեղափոխության առաջ քաշած խնդիրների լուծումը, մյուս մասին դատապարտելով կյանքից օտարանալու սպառնալիքին։ Քաղաքական-սոցիալական նոր հարաբերությունների, կյանքի նոր ձևերի ստեղծման ֆոնի վրա ավելի քան ուելյեֆ է դառնում հին կյանքի ձևերը երազողների, վերադարձի ակնկալություններով մոլորվածների դանդաղ մահացման ընթացքը՝ դրան ուղեկցող հոգեբանական ջղաձգումներով ու ֆանտաստիկական հույսերով։

«Երբ նորը հենց նոր է ծնվել, — գրել է Վ. Ի. Լենինը, — հինը մի որոշ ժամանակ միշտ մնում է նրանից ավելի ուժեղ...»<sup>6</sup>

Այնուհետեւ, մի ուրիշ անգամ, դառնալով հասարակական կյանքի հեղաշրջման ֆոնի վրա իրենց դարն ապրած հայացքների ու պատկերացումների կերպարանափոխությանը, Վ. Ի. Լենինը գրել է. «...Երբ չորս կողմն ամենասույնի աղմուկով ու տրաքոցով կոտրվում և փլվում է հինը, իսկ նրա կողքին աննկարազելի տանջանքներով ծնվում է նորը, ոմանց գլուխը պտտվում է, ոմանց աթրում է հուսալքում, ոմանք երբեմն շափազանց դառն իրականությունից փրկություն են սրոնում գեղեցիկ, հրապուրիշ ֆրագի հովանու տակ»։

Զարգացման արագություն վերցրած նոր կյանքի անկանգ ընթացքի մեջ հասարակական որոշ շերտերին համակած հոգեբանական դրաման և յուրահատուկ պեսիմիզմը արտադրում են վաղեմի փառքն ու դիրքը կորցրած մենակյացների, մեռած ափերի խարխուլ երազներով ապրող «հախկին մարդ-

կանց» բնորոշ տիպը, որոնց իր պատմվածքների վերնագրով՝ Մովսես Արագին տվեց «Անցվորներ» դիպուկ ահունը:

«Անցվորների»՝ իրենց համար անհարազատ սոցիալական նոր միջավայրում դատապարտված ետահայաց մարդկանց հոգեբանական գալարումներն ու ցնցումները տեղ գտան հայ արձակի շատ գրվածքներում՝ Դ. Դեմիրճյանի («Անցյալի ուրումներ» շարքի պատմվածքները), Ստ. Զորյանի («Անխուսափելի» պատմվածքը), Նար-Դոսի («Վերջին մոհկանները»), Գ. Սարյանի («Օտար մարդիկ»), Մ. Արագու, Մ. Մանվելյանի և այլոց ստեղծագործության մեջ, իսկ Ա. Թակունցի «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքում երևույթը բարձրացվում է փիլիսոփայական խոշոր ընդհանրացման աստիճանին:

«Անցվորների» թեման առանցքային եղակ Մ. Արագու և Մ. Մանվելյանի սովորական շրջանի ստեղծագործության մեջ:

Արագին (Մովսես Մելիքի Հարությունյան) ծնվել է 1878 թվականին Շուլավեր գյուղում (այժմ՝ Վրացական ՍՍՀ Շահումյանի շրջան), գյուղացու հարկի տակ: Արագու առաջին տպագորությունները կապված են գյուղական միջավայրի հետ:

Ծննդավայրի ծխական դպրոցում ստանալով նախնական կըրթություն (այստեղ հայոց լեզվի ուսուցիչն էր Հայտնի բանահավաք Սարգս Քամալյանը), այնուհետև նա թեակոխում է գըրքերի աշխարհը, ապրում և Արովյանի, Թաֆֆու, Հովհաննեսի ներշնչանքներով:

1892-ին Արագին ընդունվում է Թիֆլիսի ոեալական ուսումնարանը: Այստեղ դասընկերն էր Մտեփան Շահումյանը, որը կազմակերպել էր «Սիածան» անլեզարարական խմբակցությունը. ծիածանականները (նաև Արագին) կարդում են արգելված քաղաքական գրականություն, ծանոթա-

նում թելինսկու, Չերնիշևսկու, Դորոլյուբովի, Փիսարկի, Մ. Նալբանդյանի աշխատություններին:

Հետագայում Արագին սովորում է Պետերբուրգի տեխնոլոգիական ինստիտուտում, պահպանելով իր բարեկամական-մտերմական կապերը Ռիգայի պոլիտեխնիկական ինստիտուտի ուսանող Ստ. Շահումյանի հետ:

Արագու կիսագրության մեջ կարեռ էջ է «պետերբուրգյան շրջանը»: Այստեղ նրա գաղափարական հենակետներն էին բանվորական ցույցերն ու գործադրուկները, մարքսիստական գրականության լնիերցանությունը, քաղաքացիական-ազատասիրական շնչի պոեզիան՝ Պուշկինի և Նեկրասովի, լենինյան «հսկրա» թերթի համարները:

1901 թ. նոյեմբերի 4-ին Արագին մասնակցում է Կազանսկի հրապարակում կազմակերպված ուսանողական հայտնի ցույցին (դրա համար ձերբա-



կալվում է), իսկ 1902-ից իբրև «քաղաքական անբարեհույս», առնվում է ուստիկանական գործակալության հատուկ հսկողության տակ<sup>8</sup>:

Արագին ականատեսն էր ցարական ինքնակալության դեմ 1905 թ. պետերքության հոկտեմբերյան և նոյեմբերյան ցուցերին:

Պետերբուրգի հայ ուսանող Արագին իր կյանքի ուղիների վրա հանդիպելով Մ. Գորկու հոշակած գրական նոր հոսանքի գաղափարական պատգամներին, խորապես տարվեց մարդու պանծացման և վերահաս փոթորկի գորկիական ներշնչանքներով: Մ. Գորկու գրվածքները, մասնավորապես «Պառավ իզերգիլը», «Բազեի երգը», «Մրրկահավի երգը» և այլն, Արագու պատկերավոր արտահայտությամբ, «գարնան ամպրոպի նման բերում էին կյանքի նոր ազդանշան, հնչեցնում էին ահազանգի, ճնշված հոգիների պոռթկման, պայքարի մարտակոլը»:

Արագին ոչ միայն ոգեշնչվում է Մ. Գորկու գրվածքներով, այլև ներշնչվում է Նեկրասովի և Կոլցովի պոեզիայի դեմոկրատական մոտիվներով, Գյոթեի «Ֆաուստով» և Ռոբերտ Բերնսի նվագներով, ուժեղ տպավորություններ է ստանում Գոգոլի և Զեխովի արձակից:

1906-ին Արագին վերադարձավ Կովկաս՝ Թիֆլիս և հանգես եկավ իր գրական գերյուտով: «Մուրճ» ամսագրի սեպտեմբերյան համարում տպագրվեց առաջին պատմվածքը՝ «Դոն Կարապետի արշավանքը գեպի Կղերստան», որը արձագանքն էր դաշնակցության դեմ հայ մարքսիստների մղած գաղափարական գոտեմարտի: Այդ պատմվածքում Դաշնակցությունը ի դեմս Արագու գոտավ իր խոստումների և սնանկ էոթյան անողոք քննադատին:

Հեղափոխական շարժման նոր վերելքի իրադրության մեջ Արագին հանդես է գալիս մի շարք պատմվածքներով, որոնք տպագրվում են «Կարմիր միխակներ» և «Բանվորի ալբոմ» գեղարվեստական ալմանախներում, «Պայքար» թերթում:

Այդ պատմվածքներն արժանանում են մարքսիստ-քննադատաների ուշագրությանը, մասնավորապես «Արև» և «Կիսատ տունը»:

Այդ տարիների գրական ստեղծագործության համար շատ բնորոշ էր այլաբանության և խորհրդանշանների գրական ձևը, որը կոչված էր թաքցնելու շատ գրվածքների հեղափոխական բովանդակությունն ու մարտական շունչը:

«Լինելով դժվարին իբրև ձեւ,—գրում է Մ. Գորկին,— իբրև աշխատանք, այլաբանությունը շատ հարմար է իբրև գաղափարի հագուստ, նրա կաղապար... Այլաբանության տակ կարելի է ճարակորեն թաքցնել երգիծանքը, խայթոցը, հանդուն խոսքը, նրա մեջ կարելի է գաղափարական վիթխարի բովանդակություն դնել»<sup>9</sup>:

Տրվելով ժամանակի գրականության «այլաբանական պաթոսին», Մ. Արագին իր պատմվածքներում («Մենավոր լապտերը», «Վերջին երազը», «Կիսատ տունը», «Կարմիր հերոսուհին», «Արև» և այլն) իրականության կոնկրետ գծերի կողքին արտահայտում է կյանքի հեռանկարի ապագա աշխարհի ստուգման գաղափարը:

Կյանքի հեռանկարի գաղափարը Արագին արտահայտում է իրականության ստուգապատում գծերին զուգահեռ իր կերպարները լիցքավորող խորհրդանշանների միջոցով. այդպիսիք են «Արև» արձակ բանաստեղծությունը (1913)<sup>10</sup> հիվանդ, ոսկեծամիկ աղջկա արևային անուրջներով, «Պրոմեթեսը» (1913), ուր շղթայված հերոսը Զեսի իշխանությանն է ուղղում կյանքի նորոգման պատգամը՝ «Մենք կստեղծենք մարդ-աստվածների պանծալի կյանքը»,

«Կիսատ տունը», ուր գյուղացի Սարգիսը, գալով սոցիալական ինքնագիտակցոթյան, այն խոր հավատին է, որ պարտված հեղափոխությունը նորից շարունակելու է իր հաղթական երթը։ Այդպիսիք են «Վանդակներում», «Հեքիաթը», «Խորհրդավոր այգին», «Կարմիր համբույրը» և մյուս պատմվածքները, ուր Արագին հանդես է գալիս իրեն հերոսական սերունդների ու ազատագրական պայքարի երգի, իր գրվածքներով իսկ հայ գրականություն բերելով բանվորական-դեմոկրատական աշխարհզգացողություն, ինչպես նաև արտահայտման բնական, անզարդ ձևեր։

20-ական թվականներին Արագու տարերքը դարձյալ պատմվածքն էր, բայց ոչ թե պայմանական-այլաբանականը, այլ ռեալիստական-հոգեբանականը։

«Արևելյան մոտիվներ» խորագրված մի շարք պատմվածքներից հետո («Խալիջայի երգը», «Դուշմանի երգը», «Արծաթի տակ»), որոնք 1923-ին տպագրվում են «Մարտակոշում», «Դարբնոց» հանդեսում տպագրված մի շարք հուշային ակնարկներից հետո՝ Արագին 20-ական թվականների կեսից իր պատմվածքներում լայնորեն շոշափում է «ապրողների և անցվորների» թեման՝ ընդհուպ մոտենալով նոր իրականության կարևոր խնդիրներին։

Ապրողների թեմայի լավագույն մարմնացումը 1925-ին «Նորք» հանդեսում տպագրված «Ընկեր Մուկուլը» պատմվածքն է, որի մասին կա նաև Մ. Գորկու դրական գնահատականը։

1929 թ. Սորենտոյում (իտալիա) խմբագրելու համար Մ. Գորկին աշքի Է անցկացնում իրեն ուղարկված «Советская страна» գեղարվեստական ալմանախի նյութերը և նամակ է հղում խմբագրական հանձնաժողովի անդամներին՝ հետեւալ բովանդակությամբ։ «Բացառությամբ Սուլիխաշվիլու և Արագու պատմվածքների, մնացած բոլորը այնպես են գրված, կարծես թե դրանց հեղինակները XIX դարի 20-ական թվականների օդով են շնչում, իսկ այն, որ օրացույցը ցույց է տալիս XX դարի երկրորդ քառորդը և Հոկտեմբերյան հեղափոխության 12-րդ տարին, հեղինակներին ոչինչ հայտնի չէ»<sup>10</sup>։

«Ընկեր Մուկուլը» ընդարձակ պատմվածք է՝ կառուցված մի կերպարի ճակատագրի բացահայտման սկզբունքով։

Պատումը Արագին սկսում է հերոսի էության և արտաքին նկարագրի համառոտ տեղեկանքով։

«Ամեն ինչ փոխվում էր բացի Մուկուլից։

Տասը տարի էր, ինչ նա պահապան էր կաշվի գործարանում։ Այդ միջոցին պետական կարգերը իրկու անգամ հեղաշրջվել էին, գործարանի գլխույզ հինգ կառավարիչ էր անցել, բայց դժվար թե մեկն ու մեկը նկատեր Մուկուլի վրա որևէ փոփոխություն եվ ում էլ հարցնեիր, այն էր ասում, թե աշքը բաց է արեկ, տեսել Մուկուլին նույն հագուստով ու նույն տեղը...»

Ամառ-ձմեռ կտեսնեիք Մուկուլին նույն գորշ, կեղտի գույն հագուստի մեջ։ Թեպետ նրա կիսավերարկում բարակ, զինվորական կտորներից էր հավաքած, որոնք վազուց կորցրել էին նախկին գույնի հետքերը, բայց տակն այնքան լաթեր էր հագած, որ հեռվից Մուկուլը նմանվում էր շարժվող պարկի։

Պատմվածքի սյուժեն զարգանում է արտաքնապես հանդարտ և անշտապ։ Արագին նկարագրում է գործարանի պահակի կենսագրության այն շրջանը, երբ նա տագնապների մեջ է՝ ոչ այնքան կյանքի իմաստը հայտնագործելու մտահոգությամբ, որքան ընտանիքի հացի խնդիրը լուծելու հոգսերով։ Ամեն ինչ՝ կյանքի, վարչաձեկի փոփոխությունները նա կապում է հացի խնդրի հետ,

իսկ նրա ուրախությունը հասնում է գագաթնակետին, երբ սովետական իշխանության օրոք նշանակվում է գործարանի բանվորների հաց բաժանողը:

Այդ օրվանից սոսկ բնազդորեն նրա մեջ սկսում է խոսել կյանքի ծարավը. անիրավացի մեղադրվելով գողության մեջ (զործարանի ագահ և ընչառաղց վարսավիրի կողմից), Մուկուշը իր թիկունքում դգում է բանվորական կոլեկտիվի աջակցությունը. «Այնպես է լցվել Մուկուշի սիրտը, որ ի՞նչ հաց, ի՞նչ նեղություն, — նա թեկուզ կյանքն էլ տա, հոգը չէ: Ասես մեծանում է, աժդահագառնում, կոները լցվում են արյունով ու հպարտ-հպարտ կանչում է, իմաց անում բոլորին».

— Հե՞յ, լավ իմացեք, սրանից դենը էլ մենակ չեմ...»:

Նախկինում մոռացված, «աննշան» մարդու հոգեկան արթնացման ընթացքը Արագին ներկայացրել է իբրև սոցիալական միջավայրի ներգործության արդյունք. գործարանային հասարակ պահակից «ընկեր Մուկուշ» դառնալու ընթացքը Արագին դիտում է իբրև հոգեբանական երևույթ, պատումի շարադրանքում հատկապես ընդգծելով հոգեբանական մանրամասները:

«Ընկեր Մուկուշ» նաև ծրագրային նշանակություն ունեցող պատմվածք էր Արագու գրական կենսագրության մեջ. այդ կերպարով նա նվաճեց «գրական» կոչվող հերոսի կոնկրետ-պատմական նմուշը:

Թեև Արագին գծագրեց նաև ապրողների ուրիշ կերպարներ, ինչպես պյուղացի Հանեսը՝ «Աչքը վախեցած Հանեսը» պատմվածքից, սակայն ոչ մեկը յհասավ ընկեր Մուկուշի աստիճանին՝ ոչ հոգեբանական մշակման, ոչ էլ բնականության ու ճշմարտության առումներով:

Արագու պատմվածքներից առավել հետաքրքրական է «անցվորների» շարքը՝ «Անցյալի նիրհը», «Հին ժամացույց», «Զառիթափ», «Դեղին նստարանի վրա», «Փուշ Աբելը», «Տեսիլքը» և այլն: Այդ պատմվածքներում Արագին ցուցադրում է հոգեբանական այն գալարումներն ու ցնցումները, որ ունենում են «հախսկին մարդիկ»՝ հարուստ տնատերեր, ծերացած գեներալներ, բարձր աստիճանավորներ, կալվածքների կառավարիչներ: Հոգեբանական նրբանկատանցումներով, մանրամասների առատությամբ, հումորի հնչերանգով Արագին քողազերծում է այդ մարդկանց ֆանատիկական ծրագրերի սնամեջությունը և նրանց ծիծաղելի կացությունը նոր միջավայրում:

Այդպիսին է «Զառափաթը» պատմվածքի (1925) հերոսը՝ Բաքվի նավթաշխարհի նախկին ինժեները, որը թեև հարմարվում է նոր պայմաններին, ժողովներում հանդս է գալիս կրակոտ ճառերով, սակայն հայացքը ուղղված է դեպի անցյալը, այն «երանելի օրերը», երբ ինքը դրության տերն էր:

«Արա, զառափաթ է... շիշը որ շուր տաս, գլխի վրա դնես, կկանգնի...» Թե ճշմարիտը կուզես՝ ևս իշխանությունը մի շորս օր ավելի շի դիմանա», — աս է ինժեների սոցիալական երազանքի հենակետը:

«Զառափաթի» հերոսի տարբերակն է Թավարբեկյանը («Տեսիլք»), մի նախկին շինովնիկ, որը խխունջի պես քաշված իր պատյանի մեջ, ապրում է միայն անցյալի հուշերով, սարսափում է նորի հետ շփվելուց, գարձել է կենդանի դիակ:

Անցվորների հեռացումը անկորիվ, անբախում երևույթ չէ: Անցվորները բախվում են ապրողների հետ, ինչպես ծեր գեներալը («Անցյալի նիրհը»): Շուկայում, մի խարխուլ արկղի վրա նստած, առշեր փոած մի քանի հնատիպ գրքեր, գեներալը ննջում է, — այդ պահին նրա մոտով անցնում է բանակային

վաշտը՝ իր ոտնաձայնով ցնցելով նրան և հիշեցնելով ասպարեզը թողնելու պատմության հրամայականը:

Արագին ներկայացրել է ոչ միայն «Նախկին մարդկանց» հոգեբանական լուր մենամարտը նոր իրականության դեմ, այլև դասակարգային անհաջողությունները, մասնավորապես կուլակների դիմադրությունը («Փուշ Արելը», «Բարելոնյան աշտարակաշինություն», «Մոլախոտը», «Անխուսափելին»):

Այս շարքում լավագույնը «Փուշ Արելը» պատմվածքն է, ուր նախկին այգետիրոջ ջղածիգ դիմադրությունը ներկայացնելու համար Արագին գործի է գրել իր ձիրքի հիմնական գծերը՝ սուր, դատապարտող հնչերանգ, հոգեբանական մանրամասների նախասիրություն, զննողական տարերք:

30-ական թվականներին Արագին հանդես եկավ «Լուսնի շողերով» և «Ջրվեժի ցալքում» (1933) ոռմանտիկական վիպակներով, «Այրվող հորիզոններ» պատմահեղափոխական վեպի առաջին գրքով (1940), իսկ Հայրենական պատերազմի տարիներին գրեց և 1959-ին տպագրեց «Խորայել Օրի» պատմավեպի առաջին գիրքը:

Միքայել Մանվելյանը (1877—1944) ծննդավայրից՝ Գողթն գավառի Ներքին Ագուլիս գյուղից ծանր, ձախորդ կյանքի հարկադրանքով ուտք զնելով ժամանակի «լուսավորության կենտրոնները» (Թիֆլիս և այլուր), ավագ եղբոր՝ հայտնի մանկավարժ-գրող-բանասեր կեն Մանվելյանի միջոցով շփվելով մտավորական շրջանների հետ, ինչպես դարավերջի երիտասարդության մեծ մասը, նույնպես իր խնդիրը համարում է «ազգի լուսավորությանը» նվիրվելը:

Գործունեության հենց սկզբից Մանվելյանը սկսում է հավասարապես ծառայել թատրոնի և գրականության մուսաներին, թեև հետագա տարիներին գրականության ծառայությունը ավելի նվազ տեղ է գրավում նրա կյանքում:

XIX դարավերջի թատրոնական աշխարհում ունեցած համբավին 900—10-ական թվականներին գումարվում է ճանաշված արձակագրի և թատրոնագրի անունը:

Արդեն 1904 թ. Մոսկվայի հայ ուսանողների հրատարակչական խմբակի միջոցներով Մ. Մանվելյանը տպագրում է արձակ պատկերների «Էսքիզներ» խորագրով ժողովածուն (դա եղավ այդ խմբակի միակ հրատարակությունը):

Այդ գրքով և հաջորդ թվականներին տպագրած դրամատիկական տեսիլներով ու պատմվածքներով Մ. Մանվելյանը հայտնի դարձավ իբրև կյանքի «ետնախորշերի» նկարիչ (Բարիլի «Սև քաղաքի» պատկերներում), իբրև կոպիտ իրականության մեջ ցավագնորեն տառապող ազնվասիրտ մարդկանց դառն, նկոմ մորմոքների երգիչ:

Ուշագրավ է հետեւյալ հանգամանքը. մինչ իր բնմական կերպարները անձնավորելիս Մ. Մանվելյանը ներկայացրել է այն մարդկանց, ովքեր անգիտուեն հալածում են բարոյական բարձր նկարագրի ու նուրբ հոգու տեր՝ «իդեալիստներին», գրականության մեջ ներկայացնում է այդ բիրտ մարդկանց զոհերին՝ մեծ քաղաքի «կիսապրոլետարներին», թշվառներին, որոնք զրկվելով երբեմնի ուժերից և հավատից, գերի են դարձել ճակատագրի կույր կամքին:

Մ. Մանվելյանի պատկերների գեղարվեստական առաջադրությունը կոպիտ իրականությանը բախվող երազների թեման է՝ ողբերգա-կատակերգական այլումներով. աղքատ ուսանողը մեծ նույներ է կապում գտած փողի հետ, այնինչ փողերը կեղծ են դուրս գալիս («Կյանքի ծաղրը»), կրկեսի հայանի ծաղրածուն անքնության համար դիմում է բժշկի օգնությանը, իսկ սա խոր-


Հուրդ է տալիս «սրտանց ծիծաղել», հաճախ գնալ կրկես և նայել ժաղրածուին («Շաղրածուն», 1910):

Արձակ գրվածքները կարեկցության բարոյական շեշտի հետ մեկտեղ ասպարեզ հանեցին նաև պատումային հակիրճ և ֆրագմենտար գրելաձեր, որի համար Մ. Մանվելյանին տրվեց «տելեգրաֆիստ» անունը: Իր հայրենակից և բարեկամ կեռն Քալանթարը Մ. Մանվելյանի արվեստի կապակցությամբ «Թերթիկներ իմ կյանքից» գրքի առաջաբանում (1950) գրել է. «Իր աշխարհզգացողությամբ, շրջապատի իր ընկալմամբ՝ և անհատական կյանքում, և գրական ստեղծագործությամբ, և բեմական արվեստում ցայտոնորեն արտահայտված իմպրեսիոնիստ էր: Նա ապրում և ստեղծագործում էր վայրկենական, անմիջական տպավորություններով... Նա կարծես մի տեսակ վախենում էր մեծ ծավալներից, իրերին և երեսությերին ընդհանուր մոտենալուց»:

Մ. Մանվելյանը իր պատմը վածքներում և դրամատիկական պատկերներում դիմեց էքսպրեսիոնիստական (կեռնիդ Անդրեևի տառապանքի ու մղձավանչի էսթետացման ոգով) և սիմվոլիստական գեղագիտության դրույթներին: Այս առումով հատկապես ուշագրավ էր 1917-ին բեմ հանված «Դեերի քրքիչը» պիեսը, սիմվոլիստական տարազի մի գործ, որի մասին թատերախոս Ռուբեն Մամուլյանը հաղորդել է. «Խոտածածկ ավերակներում, մարդկանցից հեռու բռն են դրել դևերն ու ալքերը: Գիշերը, լուսնի շողերի մեջ, նրանք պարում են ու ծիծաղում, մինչդեռ մարդկանց մեջ արյուն է հեղվում և սրեր են շողում»:

«Դեերի քրքիչը» հեքիաթ-դրաման Մ. Մանվելյանի ստեղծագործության ուշագրավ էջն էր նաև ժողովրդական մտածողությանը հատուկ խորհրդանշանով՝ արտահայտվելու աշխարհզգացական երակով: Ուղղված լինելով պատերազմի արյունությանը դեմ, Մ. Մանվելյանը հակապատերազմական իր դիրքերը արտահայտում է մարդկանցից սարսափող բնության շարքերի՝ դեերի, խորհրդանշանով: Պիեսում կան նաև ուրիշ խորհրդանշաններ, ինչպես «կարմիր արշալույսի» խորհրդանշանը, որով ակնարկվում է կյանքին սպասավող կերպարանափոխությունների գաղափարը: Այս կետում էլ, ինչպես գրել է կեռն Քալանթարը, սկսվեց Մ. Մանվելյանի ոճի և մեթոդի վերակառությունը, «շրջադարձը դեպի ուսուլիզմը»:

Մ. Մանվելյանի սովետական ժամանակաշրջանի գրական ստեղծագործությունը ու քանակապես և ոչ էլ որակի սուումով շունի նրա ձիրքին համապատասխան կշիռը: Դեր խաղաց նաև այն հանգամանքը, որ գրողի հետ մըրցակցության մեջ էր դերասանը և հաղթում էր մի շարք դերերի բարձրակարգ:



**Կատարումով (Մանվելյանը 20—30-ական թվականներին Գ. Սունգուկյանի անվան թատրոնի արտիստների հոչակված խմբի մեջ էր):**

Այսուամենայիվ, սովետական տարիներին Մ. Մանվելյանը եռանդուն մասնակցություն է բերում մշակութային հոռովազություն նաև իրուն գրող:

Նրա գրական ստեղծագործության էջերում հայտնվում են համաշխարհային պատերազմի հուշեր՝ իրու հակապատերազմական տրամադրություններ արտահայտող պատկերներ: «Ֆելդֆերէ Խատիենկոն», «Թեռնակիր էշերի տրանսպորտը», «Ալյոդ հուշեր», «Ֆելդֆերէ Խատիենկոյի հավերը» և մյուս պատումներում հնօրյա տիտուր ապրումներին միախառնվում են կատակարանի հումորը:

**Մ. Մանվելյանը գրում է նաև արձակ բանաստեղծություններ, «Ժամանակակից մելոդրամա» վիպակը՝ սիրո թեմայով, շրանցքի կառուցմանը նվիրված «Անապատը կծաղկի» երկը, մանկական պատմվածքներ, «Թերթիկներ իմ կյանքից» հուշագրությունը, ուր այնքան գունեղ և կարոտով ներկայացնում է իր ծննդավայրի նիստն ու կացը:**

**Մ. Մանվելյանի ստեղծագործության սովետական շրջանի ամենաարժեքավոր գրվածքը, ինարկե, այդ հուշագրությունն է, թեև հասարակական առումով հետաքրքրություն է ներկայացնում պատմվածքների այն շարքը, որն իր բովանդակությամբ հարում է անցորների թևմատիկական գծին:**

«Ծեր գայլը», «Աղա Խոսրովը» և հարակից պատումներում **Մ. Մանվելյանը հոգեբանական հավաստիությամբ ներկայացնում է կյանքում բոլոր հենարանները և վաղեմի դիրքերը կորցրած մարդկանց «կատակառողբերպական» վիճակները, նրանց զղաձիգ գալարումներն ու կործանման փաստերը: Այդ մարդկանց շարքում հն ողտսի թևանը («Ծեր գայլը»), նախկին վաճառականը («Աղա Խոսրով») և այլն, կյանքի յուրօրինակ զոհեր: Եթե վաղ շրջանի պատմվածքներում «կյանքի զոհերի» «կիսապրոլետարների» «կատակառողբերպությունները» արթնացնում էին հեղինակի սրտագին կարեկցական վերաբերմունքը, ապա նախկին մարդկանց «կատակառողբերգական» հոգեվիճակներին նայում է հաղթողի հպարտ հայացքով, մեշտեղ բերելով նաև երգիծական մտրակման հնարը:**

#### 4

Երբ հեղափոխությունն իր հզոր հոսանքով հասավ երկրի ամենահեռավոր, ռկուսական անկյունները և կյանքի կոչելով ժողովրդական նախաձեռնության ու ստեղծագործության բոլոր նիրհող ուժերը, ժողովրդի բոլոր շանքերը ուղղեց նոր կյանքի շինարարությանը, խնդիր դրվեց ամրացնել գրականության և կյանքի կապերը, նվաճել առօրեական հարաբերությունների մեջ արտահայտող պատմական օրինաշափությունները:

«Ավելի շատ ուշադրություն կոմունիստական շինարարության ամենահասարակ, բայց կենդանի, կյանքից առնված, կյանքում ստուգված փաստերին—այս լողունգը պետք է անդադար կրկնենք մենք ամենքս, մեր գրողները, ափիտատորները, պրոպագանդիստները, կազմակերպիչները և այլն»<sup>11</sup>:

Լենինյան այս «սոցիալական պատվիրանի» գլխավոր մեխը արդիականության կոնկրետ նյութը՝ սոցիալիզմի շինարարության առաջին ծիլերը գեղարվեստական գրականության հիմնական առանցքը դարձնելու պահանջն էր:

Անշուշտ, հայ արձակում պատմական նոր երևույթների յուրացումը և պատմական նոր հերոսների գործողությունների պատկերումը չունեցավ նույն արագությունը, ինչ հանդիս բնորեց բանաստեղծական ստեղծագործությունը՝ իր աղմկոտ շեշտերով ու թափի, ուժի, արագության հրովարտակներով։

Մանրաքայլ արձակը որոշ ուշացումով տեղ գտավ գրական ընթացքի մեջ Զարգացման առաջին շրջանում, եթե չհաշվենք Դ. Դեմիրճյանի և Արազու «Կյանքի ժպիտը» կրող հերոսներին, արձակում տիրապետող էր գյուղաշխարհի թեմատիկան և հին, և նորացող գյուղի։

Հայ գրականության համար գյուղը ավանդական նախասիրություն էր, կապված հայ իրականության գերազանցապես գյուղական կառուցվածքի՝ բնակչության կազմի ու նրա զբաղմունքների հետ։

Բնականաբար, դասական անցյալից արդեն հայ գրականության կողմնորշումը դարձած գյուղի թեմատիկան պեսք է լայն տեղ գրավեր նաև հայ սովետական գրականության մեջ, նկատի ունենալով գյուղացիական ճակատագրի առավելագույն դերը հայ ժողովրդի ընդհանուր ճակատագրի մեջ։

Գյուղապատումը թեև գրավեց շատ գրուների ուշադրությունը (ժամանակի մամուկը ողղոված էր նախընթաց գյուղագրության ոգով գրված պատկերներով), սակայն այս ասպարեզում պատմագրական նշանակալից դեր ունեցավ Ակսել Բակոնցը, ասպարեզ հանելով իր երկու հայտնի ժողովածուները՝ «Մթնաձորը» (1927) և «Սև ցելերի սերմնացանը» (1933)։

Գյուղաշխարհի պատումը թակոնցի պատմվածքներում ընթանում է երկու ուղղությամբ։ մեկ՝ հին գյուղի սոցիալական հարաբերությունների և մարդկանց հոգեբանության («Նամակ ոռուսաց թագավորին», «Սպիտակ ձինա և այլն) վերհանման, մեկ էլ մթնաձորյան եզերքում արմատներ նետող նոր հարաբերությունների ու կապերի վերարտադրման։

Գյուղի թեմատիկան բաւկունցյան ստեղծագործության առանցքային կենտրոններից մեկը լինելով (դա պայմանավորված էր գյուղացիության գրաված դիրքով) ձեռք էր բերում նաև գեղագիտական որոշ կարևորագույն սկզբունքների պաշտպանության նշանակություն։

Թեև 20-ական թվականներին, «շոգե-գութանի» և «շոգեհանդեսի» պաշտամունքային իրադրության մեջ շրջանառություն ուներ առհասարակ գյուղացուն գրականության ետնաբակերում տեղ տալու նախապաշարմունքը, ապա Ակսել թակոնցը առաջիններից մեկն էր, որ հայ գյուղացու ճակատագիրը (և հին, և նոր) համարեց գրականության զարգացման հիմնական ուղղություններից մեկը։

Լինելով սոցիալական խոր մտածող, վերլուծական տարերքի և հոգեբանական թեքման գեղագիտ, թակոնցը ծառանում էր այսպես կոչված ոռմանտիկական, վերացական պաթոսի հերոսների տարածված սխեմայի դեմ։ Սառանալով էլ նա հաստատում էր ժողովրդի կյանքի խորքերը սուզվող, հասարակ մարդու ճակատագիրն ու հոգեբանությունը արտահայտող ոեալիստական-ժողովրդային գրականության գեղագիտական նշանաբանը։

Թակոնցը ծառանում էր նաև նեղ, «բարքագրական ոեալիզմի» դեմ։

Ա. թակոնցի պատմվածքը ոեալիզմի գեղագիտության իր դիրքերով մի կողմից ակամա բանավեճ էր հայ գրականության «գյուղագրական դպրոցի» դեմ, մյուս կողմից էլ շարունակություն էր հայ ոեալիզմի «սինթեզների» այն ուղղության, որը կապվում է անմիջականորեն Հովհ. Թումանյանի ստեղծագործության հետ։

ХІХ դարի վերջում և ԽХ դարի առաջին տասնամյակում հայ գրականության երկու հատվածներում՝ արևելյան և արևմտյան, ծավալվում է «գյուղագրության»՝ «գավառի գրականության» շարժումը. գյուղի և գավառի հետ կապված դեմոկրատական շնչի մտավորականները՝ ուսուցիչներ, գյուղատընտեսներ, փաստաբաններ և այլն, պարբերական մամուլում հանդես են գալիք պատկերներով, ակնարկներով, ճանապարհորդական նոթերով, զրուցներով, պատմվածքներով, որոնց մեջ քննադատական սուր դիտողություններ են անում գյուղական հարստացարիչների «բռունքքի», «պարսն Կուպոնի» հզորացող իշխանության, դրամական հարաբերությունների ավերիչ երթի, մարդու բարոյական նկարագրի աղճատման և այլ երեւյթների մասին: Կապիտալիզմի բերած ավերածությունների առաջն առնելու, «մոռացված աշխարհի» (սա գյուղագիր Հարություն Ճուղուրյանի բնութագրությունն է) փրկության համար գյուղագիրները առաջարկում են «ղեղարկղներ» ու «գրադարակներ» (սա Ա. Պ. Չեխովի խոսքն է), այսինքն առաջարկում են «լուսավորության հոնդեր» ցանել գյուղական համայնքներում կամ էլ դիմում են «առաքյալների» աջակցությանը:

Հայ գյուղագիրները, որոշ իմաստով որդեգրելով նարողնիկական սուրյեկտիվ սոցիոլոգիայի դրույթները, կամ հանդես են գալիս իրրև նահապետական անշարժության շատագովներ, միստիկական ուժ վերագրելով «հողի իշխանությանը», կամ էլ դիմում են «շարին հակառակվելու» տոլստոյական պատվիրանին՝ խոնջի արդարության հանձնարարականներով:

Գյուղագրությունը թեև փաստական հսկայական նյութ է կուտակել գյուղաշխարհի տնտեսական ու բարոյական փլուզման վերաբերյալ, թեև տնտեսական կյանքի, պատմաբանները շատ հասկացություններ ճշգրտում են գյուղագրության հավաքած նյութի հիման վրա, սակայն գյուղագրությունը գամված լինելով փաստագրական-ազգագրական-կենցաղային սահմանափակ հորիզոններին, ուսալիզմին ոչ միայն շտվեց հեռանկար, այլև ուսալիզմի հասկացությունը սահմանափակեց «հավաստիության», «ճշգրտության», «դիտողության» միակողմանիությամբ:

Թեև Ակսել Բակումյան ևս մի ժամանակ նույնպես դասել են գյուղագիրների շարքում<sup>12</sup>, սակայն նա նոր ժամանակների այն գրողն էր, որ ճեղքեց գյուղագրական կենցաղայնության սահմանները և մերձեցավ Հովհաններին, թումանյանի «համադրական ուսալիզմի» բովանդակությանը, այն ուսալիզմի հասկացությունը սահմանափակեց «հավաստիության», «ճշգրտության», «դիտողության» միակողմանիությամբ:

Սա Հովհաններին մեծադույն գեղագիտական ավանդությունն էր, որին ապալինեց Ա. Բակունցը՝ իր ստեղծագործության ծանրության կենտրոնը դարձնելով շարքային հայ մարդու ճակատագիրը, նրա հոգու անհատակ խորությունների և նրա էլության մեջ գործող աշխարհի ներդաշնակության բարձր իդեալների բացահայտումը:

«Բնաշխարհիկ», ծողովդական կյանքի թումանյանական գեղագիտության սկզբունքներով Ա. Բակունցը պատասխան տվեց նաև ազգային բնավորության ստեղծագործման դժվարին խնդրին:

Մինչ հեղափոխության ժամանակի տեղաշարժերին «շուտափույթ» և հապճեապ արձագանքող գրողները, տրվելով հերոսների «պաթոսային» մեծարանքին, ստեղծում են անկենդան սխեմաներ, Բակունցը ծողովդական կյանքի բուն խորքերի սուլումներով ասպարեզ է հանում կենդանի, ազգային կյանքը՝

կենդանի, ազգային բնավորություններով, հայրենի եզերքի հետ ոմեցած արյունակցական կապերով:

Նոր գյուղի զարդումներին նվիրած պատումներում թակոնցը ոչ միայն հերքեց «Հողի իշխանության»՝ իրեն բոլոր շարիքների սկզբնաղբյուրի հայացքը («Հողը թշնամի է», «Հողը կործանարար ուժ է» և այլն), այլև հողի ու մարդու զաշխնքը, լայն առումով՝ մարդու և Բնության բարեկամությունը համարեց կեցության բարձրագույն ձևը:

Ցրելով նահապետական աշխարհի սրբագործման ոռմանտիկական առասպեկտը, թակոնցը հայ գյուղացիների՝ հողապաշտ-մարդասերների ու ալլասերների կերպարներով հայտնագործեց ժողովրդական ոգու «ոսկեհատիկը», դրանով իսկ գյուղական իրականության խնդիրներին տալով զարգացման հեռանկար և համամարդկային բովանդակություն:

Բակոնցը հայ արձակում հաստատեց պատմվածքի ժանրի մեծ արվեստ: Հենվելով դարձյալ Հովհ. Թումանյանի գեղարվեստական արձակի «անձեռակերտ» կառուցվածքներին և հաղթահարելով ոռմանտիկական ուղղությանը բնորոշ նկարագրական երկարաբանությունները և պատկերային ճոխությունները, թակոնցը ստեղծեց դինամիկ, թանձր ոեալիստական պատմվածք: Իրապես նա հայ պատմվածքը հասցրեց համաշխարհային պատմվածքի բարձութքը, ինչպես նույն բանը կտտարել էր Ստ. Զորյանը 10-ական թվականների միշտոք սքանչելի պատմվածքներով:

Ակսել թակոնցը ձեռք էր մեկնում Ստ. Զորյանին, նույնպես Հովհ. Թումանյանի ստեղծագործության ոգուն հարազատ արձակագրին, որի վաստակը դարձյալ էական դեր էր խաղում հայկական պատմվածքի գեղարվեստական նկարագրի ձևավորման մեջ:

Ա. թակոնցի համարն այնքան մեծ էր, որ 20—30-ական թվականների սահմանագծին արձակի ասպարեզ մտած երիտասարդ գրողներից շատերը (Հր. Քոչար, Վ. Անանյան, Ս. Պայազատ և այլք) դիմում էին նրա պատմելաձևերին և ոճային նախասիրություններին:

Թեև գրվեցին շատ պատմվածքներ այլևայլ թեմաներով, սակայն Ա. թակոնցի պատմվածքը մնաց շգերազանցված:

Հայ գյուղի գիտակ էր նաև Մաթևոս Դարբինյանը (1889—1937):

Մ. Դարբինյանը ծնվել է Շամշադինի շրջանի Թովուզ գյուղում, գյուղական դարբնի ընտանիքում: Ծննդավյարի ծխական դպրոցում դառնալով գրանաւաշ, 1900-ին ընդունվում է ներսիսյան դպրոց: Ավարտելոց հետո (1908) անցնում է մանկավարժական աշխատանքի:

1907 թվականից «Խաթթաբալա» շաբաթաթերթում լույս են տեսնում Մ. Դարբինյանի երգիծական գրվածքները՝ հումորեսկները և ֆելիտոնները, իսկ 1908-ից նա աշխատակցում է «Հասկեր» ամսագրին՝ առակներով, հեքիաթներով, մանկական ոտանավորներով:

Մ. Դարբինյանի հայացքների ռաավորման մեջ էական դեր է խաղում սոցիալ-դեմոկրատական «Պայտար» թերթը, որին Ասլան Կեղծանոնով թղթակցում է 1916-ից:

20—30-ական թվականներին Մ. Դարբինյանը ապրում էր Թիֆլիսում՝ ակտիվ մասնակցություն բերելով տեղի գրական անցուղարձին:

Լինելով «Դարբնոց» հանդեսի կազմակերպիչներից և Վրաստանի պրոլետարական գրողների հայկական սեկցիայի ղեկավարներից մեկը, Մ. Դար-

բինյանը եռանդուն մասնակցություն է բերում թիֆլիսահայ գրական կյանքին (դիսպուտներ, գրական դատեր, գրական երեկոներ և այլն):

Ունենալով բեղուն գրիչ, Մ. Դարբինյանը թիֆլիսի հայկական թերթերն ու ամսագրերը («Մարտակոշ», «Կարմիր աստղ», «Կարմիր ծիլեր», «Պրոլետար») ողողում է Ֆելիխտոններով, ակնարկներով, հեքիաթներով, մանկական բանաստեղծություններով: 1923-ին թիֆլիսի հայկական թատրոնում բեմադրվում է «Մինիստրներ» կոմեդիան: Դրում է նաև ուրիշ պիեսներ:

Մ. Դարբինյանի արձակ գրվածքներից հայտնի էին «Սուլդին և Բուլդին» հեքիաթը (ի. Գրիշաշվիլու թարգմանությամբ երկու անգամ տպագրվել է վրացերեն), «Կիկոսը» վիպակը, մի շարք պատմվածքներ:

Մ. Դարբինյանի պատմվածքների նյութը իր ծննդավայրի նախահեղափոխական և ետհեղափոխական կյանքի պատկերներն են:

Ավանդական գյուղագրության ոգով և շնչով գրած պատկերներում Մ. Դարբինյանը ցուցադրում է հին գյուղի տնտեսական փլուզմանն ուղեկցող բարոյական շահանիշների անկման երևոյթները:

Մ. Դարբինյանի գյուղաշխարհի պատկերները ընդգծվում են գյուղական կենցաղի հյութեղ մանրամասնություններով, ժողովրդական բառ ու բանի կիրառություններով (որոնք երբեմն համում են բարբառային կոպտացումների), հումորով, սակայն վեր շեն բարձրանում պարզունակ ուսալիզմի սահմանափակ դիրքերից:

Հայ գյուղացին հաճախ այդ պատկերներում է իբրև սոսկ նախապաշտամունքներին հյուլ-հպատակ և ոչ թե բանական արարած:

Թարքագրության նեղ հորիզոնները հաղթահարելու հայտ էին արդեն սովետական շրջանի գյուղապատումները:

Մ. Դարբինյանը իր մի շարք պատմվածքներում («Տեր փոշմանը», «Դրատի», «Վստավայ պրոկլյատի», «Վլաստը» և այլն) անդրադառնում է հին գյուղից նոր գյուղ անցած կուլակի, տերտերի, տանուտերի կերպարներին, իսկ մի շարք պատմվածքներում էլ ցուցադրում է նախկին շահագործողների դեմ ըմբուտացող գյուղացու կերպարը (այդպիսին է «Փարսադանը» պատմվածքում կուլակի դեմ ոտքի կանգնած նախկին բատրակը):

«Փարսադանը» պատմվածքից բացի նոր գյուղին բնորոշ փաստերի անդրադառներ են «Զարթնող գյուղը» (1930) շարքի պատմվածքները, իսկ «Ճրադացպան Անտոնը» (Երևան, 1930) ներկայացնում է հայ գյուղացու ճակատագիրը դարասկզբին, ապա քաղաքացիական կոփվների տարիներին՝ դասակարգային գիտակցության փաստով, ապա ետհեղափոխական տարիներին,



երբ զրադաշտանը իր զաղացի քարերին է դիմում արդարության և աշխատանքի դերի մտորումներով:

Նոր պատմվածքներում ևս («Զարթնող գյուղը») Մ. Դարբինյանը ասպարեզ է հանում իր ձիրքի հատկանիշները՝ գյուղացու հոգեբանության ճանաշողություն, գեղարվեստական մանրամասների և նրբագերի նախասիրություն, ժողովրդական հումոր, սակայն չի հաղթահարում կենցաղայնությունը, իսկ արտահայտության մեջ հաճախ տուրք է տալիս գավառաբարբառի ընդօրինակման նատուրալիստական սկզբունքին:

Թեև Մ. Դարբինյանը թողել է ծավալուն ժառանգություն՝ բազմազան ժանրերով, սակայն անուն է հանել «Կիկոս» («Գլուխ պահող Կիկոսը») վիպակով, որն առաջին անգամ տպագրվել է «Նորք» հանդեսում, 1926 թ.:

Այդ գրվածքը բարձր է գնահատել ե. Զարենցը, առանձին հրատարակության (1930) համառոտ առաջաբանում գրելով. «Մաթ. Դարբինյանի «Կիկոսն» այն գրքերից է, որոնք կարիք չունեն ոչ մի հանձնարարականի: Մեր ետհոկտեմբերյան արձակագրության մեջ մենք չգիտենք ոչ մի այլ գիրք, որ այնքան պարզ, այնքան աշխույժ գրված լինի, որքան Կիկոսն է... Հեղինակը կարողացել է գեղարվեստական հնարների զարմանալի պարզությամբ տալ սոցիալական շերտավորման այն պատկերը, որ գոյություն ունի Հայաստանի գյուղում՝ նոյնմբերյան օրերին»<sup>13</sup>:

Հայաստանում քաղաքացիական կոփիների իրադարձությունների ֆոնի վրա, օգտվելով իր նախասիրած ֆելինոտնային գրելածնից, Մ. Դարբինյանը կերտել է հայկական գեղչկական Ծվեյկի, միամիտ, սրախոս, սուտ հիմար ձևացող Կիկոսի կերպարը, որի միջոցով ծաղրի խարազանի տակ է առնում ամեն տեսակի բռնությունները, կոպիտ ուժի վրա կառուցված իշխանությունները:

Հետազոտողի ճիշտ դիտումով, Կիկոսի կերպարի մեջ «...զարմանալիութեն զուգակցվում են հայ ունչպարի լավագույն գծերը՝ աշխատասիրությունը, խորշանքը հանդեպ «հարամ», առանց աշխատանքի ձեռք բերած վաստակն ու հացը, խաղաղասիրությունը, բնածին օրամտությունը, անզուգական հումորը»<sup>14</sup>:

## 5

20-ական թվականների հենց սկզբից, և՛ պոեզիայում, և՛ թատերագրության մեջ, բայց առավելապես արձակագրության մեջ սկսվում է ծիծաղի՝ երգիծանքի լայն շարժում: Դա պայմանավորված էր, իհարկե, առաջին հերթին, հեղափոխության այսպես ասած «մաքրագործող» հատկությամբ, որի տրամաբանությամբ, այն ամենը, ինչը արգելակում է նոր հասարակության առաջընթացին, պետք է արժանանա ծիծաղի դատ ու դատաստանին:

Մեծ հեղափոխությունը, ինչպիսին սոցիալիստականն էր, իր հաշիվները պետք է մաքրեր հին հասարակությունից ժառանգած ուեկցիոն գաղափարների, կյանքի անկենսունակ ձևերի, մի խոսքով ծիծաղի խարազանին արժանի բոլոր տեսակի երևույթների հետ:

Երգիծանքի զարգացման պատմական անհրաժեշտությունը դեռ նոր հասարակության ծննդյան օրերին ասպարեզ կոշեց գեղագիտական դիրքերի մի

ամբողջական շարք, որոնց մեջ ամենատպավորիչը թերևս քժշկի և վիրահատի գերերի տարբերության վիրաբերյալ շարենցյան մտորումն էր:

Առաջին պլան թերելով վիրահատի անդամահատական լանցետի կատարելիք փրկարար դերը, Զարենցը առաջադրում էր ազգային ինքնաքննադատության լայն ծրագիր: Իր երգիծական հետազոտությունների մեջ Զարենցը ուներ համախոհներ, ի դեմս Դ. Դեմիրճյանի, Լեռ Կամսարի և այլոց, որոնք անհրաժեշտ էին համարում երգիծաբանական ուժերի և պաշտպաների կենտրոնացում՝ խարխելու ազգային պատմության նոր կառուցվածքին անհարազատ երևոյթների գոյության հիմքերը:

Անտարակույս, երգիծական մտրակման ընթացքում եղան շափազանցություններ, սակայն իր ընդհանուր գանգվածով հայ երգիծանքը լուծում էր առաջադիմության կարևորագույն խնդիրներ:

Իրապես, Նրգիծական շարժման՝ ծիծաղի, գագաթը եղավ «Երկիր Նախրի» վեպը, ուր Զարենցը բացեց երգիծական դատաստանի աղբյուրները ազգային ֆետիշների և ուսուպիհանների դեմ:

«Երկիր Նախրի» «պոեմանման վեպը» ծննդյան իսկ օրից լայն համբավի արժանացավ, իսկ հետագայում նրա հետ կապվեցին հայ վեպի զարգացման ձանապարհները:

Այդ վեպի լայն արձագանքի գաղտնիքն այն էր, որ արծարծում էր հայ ժողովրդի ճակատագրի խնդիրը:

Երկիր Նախրիի իդեալը հայ ազատագրական շարժումների ծնունդն էր: Այն բանից հետո, երբ ժողովուրդը կորցրեց իր հայրենիքի աշխարհագրական սահմանները, դարձավ թափառական-տարագիր, ճակատագրական մի սկեռումով դարձավ միֆական նախահայրենիքի տեսիլքին, այդ տեսիլքի մեջ տեղադրելով իր փրկության ուղիները:

Թեև իր ժագումով և բնույթով Երկիր Նախրիի իդեալը ժողովրդական հոգեբանության հետևանքն է, այսուամենայնիվ ազգային կատաստրոֆայի ճակատագրական օրերին այդ գաղափարին փարեցին ազգային կուսակցությունները, նրա մեջ տեղադրելով իրենց «դասակարգային բաղանքները»:

Զարենցը իր վեպում միմյանցից տարանջատում է Երկիր Նախրիի ժողովրդական-դեմոկրատական և քաղեքնիական կոնցեպցիաները, մեծարում Երկիր Նախրին իբրև ժողովրդական փրկության հույսերի խորհրդանշան և պսակազերծում բուրժուական մեկնաբանությունը:

«Երկիր Նախրին» բարդ ու բազմաշերտ ստեղծագործություն է և ավելին է, քան գտարյուն երգիծանքը, սակայն նրա գլխավոր ծրագրերից մեկը ազգային ոռմանտիզմի հոգեբանության քննադատությունն էր, որը հատկապես պատմության տվյալ հատվածի համար ուներ «փրկարար» նշանակություն: Դա էր պատճառը, որ Զարենցից բացի, ազգային ոռմանտիզմի հրահրած պատրանքների ծաղրով հանդես են գալիս Դ. Դեմիրճյանը՝ «Համառոտ անմահներ կամ հավիտենական մահկանացուներ» (1924, «Վերելք») ուժեղ ֆիլիպիկայով, Ա. Բակունցը՝ «Հովնաթան Մարշը» (1927) վիպակով, որի ծաղրի առարկան ազգային ոռմանտիզմի ուշացած, ուստի և ավելի հիմարացած վարքագիծն է՝ աներեսակայելի ֆանտաստիկական ծրագրերով, և կու Կամսարի «Ազգային այբբենարան» (1926) քաղաքական ֆելիետոնների շարքը, նույն Զարենցի «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» («Խորհրդային Հայաստան»):

Այս երեսութից բացի երգիծանքի ոլորտի մեջ են մտնում միշտագային կյանքի հարցերը՝ հաճախ ազգային-հայկական բեկումներով և նոր հասարակության արատները, մասնավորապես բյուրոկրատիզմը և կենցաղի անկանոնությունները, ինչպես նաև քաղքենիությունը: Այդ տարիներին ուժեղ է հընչում հակակրոնական («Անաստվածի» էջերում) և հակակուլակային ծաղրը:

30-ական թվականների արձակի «երգիծական երակը» կապվում է դեռ երիտասարդ գրող Հրաչյա Քոչարի «Օգսեն Վասպուրի ճանապարհորդությունը» վիպակի հետ, որի նյութը կյանքի կենդանի լիցերին օտարացած գրողի տարորինակ մտածումներն են ժամանակի և իր մասին:

Մասնավորապես 20-ական թվականներին (30-ական թվականներին ծիծաղի տեղը նվազում է) երգիծական արձակը աշքի և ընկնում ու միայն գեղագիտական ինքնատիպ դրույթներով, ու միայն քաղաքական սուր թափանցումներով, այլև տեսակային բազմազանությամբ:

Վեպից («Երկիր Նախրի»), վիպակից («Հովոնաթան Մարշ»), պատմվածքից («Համառոտ անմահները...», «Հանգուցյալ պարոնը»), բացի պարբերական մամուլի էջերը բառացիորեն ողողված էին երգիծական մանրապատումներով՝ ֆելիետոն, «առականման հերթափ», պարողիա, պամֆլետ, երգիծական դիալոգ և էսքիզ: Երգիծանքի «մանր» տեսակները զարգանում են գերազանցապես երգիծական պարբերականներում՝ «Շեշտ» (1923), «Զուռնա» (1924), «Կարմիր մոծակ» (1926), հնագույն երգիծական ամսագրում՝ «Խաթաբալայում» (1906), որը շարունակում է հրատարակվել մինչև 1926 թվականը: «Խորհրդային Հայաստան», «Մաճկալ», «Անաստված» պարբերականները լույս են տեսնում երգիծական հատուկ բաժիններով:

20—30-ական թվականների երգիծանքը, բնականաբար, օգտվում է ավանդական հայ երգիծաբանության (Ռ. Պատկանյան, Հ. Պարոնյան, Գ. Սոմոդուկյան, Եր. Օտյան) արտահայտչական զինանոցից, ինչպես և երգիծանքի իբրև հասարակության ետադիմական ուժերի «բարեկեցությունը» մտրակող գեղագիտությունից:

Այնքան է մեծանում երգիծանքի հասարակական ներգործության դերը, որ ծիծաղի տրամադրության աշխուժացմանը մասնակցում են բազմաթիվ բանթթակից-գյուղթղթակիցներ՝ անհամար ծածկանումներով:

Անհրաժեշտություն է զգացվում կազմակերպելու լրագրող-երգիծաբանների ուսուցումը: Թիֆլիսի «Կարմիր մոծակ» պարբերաթերթն, օբինակ, 1926-ին կազմակերպում է «Հակոբ Պարոնյանի շաբաթ», առաջ բաշելով հայ մեծ երգիծաբանի ժառանգության, նրա ծիծաղի առանձնահատկությունների ուսումնասիրության խնդիրը:

Այդ թվականներին երգիծանքի ասպարեզում դեր են խաղում Փալանդուգ Մկոն՝ կենցաղային էսքիզներով, մի շարք երգիծական պարբերականների կազմակերպիչ էդուարդ Խոչիկը, Գ. Դեմիրճյանը, Վ. Թոթովենցը և, առանձնապես, Լեռ Կամսարը (1888—1965):

Քսան-երեսնական թվականների հայ գրականության լայնատարած ծիծաղապատումի-ծիծաղահանդեսի տեսադաշտի վրա աշքի ընկնող երեսութ էր Լեռ Կամսարի վաստակը, այն հրապարակագիր-լրագրողի, որին արդարացիորեն դուրգեն Մաճարին տեղ էր սահմանում Հակոբ Պարոնյանի և Երվանդ Օտյանի անունների շարքում: «Լեռ Կամսարը շատ մեծ գրիչ է և մեկն է մեր երգիծաբանության եռյակն՝ Պարոնյան, Օտյան, Լեռ Կամսար (1958-ին Շ. Շահրիկյանին գրած նամակից):

Ծննդավայրից՝ Վանից գալով էջմիածին՝ ուսումնառության, Գևորգյան հոգեւոր ճեմարանի սան լեռ Կամսարը (ծննդամատյանի անուն-ազգանունն է Աբամ Թովմաղյան) ոչ միայն շդարձավ քարոզիլ-քաշանա հոր եկեղեցական արարողությունների շարունակողը (ինչպես ծրագրված էր եղել նրա ապագան), այլ «ներքին ձայնի» թելագրությամբ նետվեց մամուկի՝ հրապարակագրության ասպարեզը, ուր կարող էր լիովի գործի զնել ազգային կյանքի զարգացումը խափանող վնասակար երեսությների՝ մոտայնությունների ու վարքագծերի հանդեպ ունիցած իր քննադատական անհաջող վերաբերմունքը:

Արդեն նախահեղափոխական տարիներին՝ 1915—1916 թվականներին, Երևանի, Թիֆլիսի, Բաքվի պարբերաթերթերում հաճախակի երեսում են նորահայտ երգիծաբանի պատմիւթետներն ու ֆելիետոնները, ծիծաղահարույց նոթագրություններն ու կատակերգական շնչի դիալոգները, վկայելով երգիծական դիպուկ նշանառության, ծաղրվող նյութի՝ անձնավորության, դեպքի, փոխհարաբերության խոր թափանցում, ինչպես նաև երգիծական համապատասխան բառաշաղախ և հեգնական հնչերանգ:

Այնքան տպագործ էր լեռ Կամսարի գրական-հրապարակագրական մուտքը, որ, իր հեգնախառն պատումի տվյալներով՝ «կովկասահայ բոլոր թերթերի ֆելիետոնիստները իրենց գրիչները վայր դրին», իսկ այդ թերթերի բոլոր խմբագիրները նրան հրավիրեցին «իրենց թերթին աշխատակցելու համար»։

Երգիծաբանին անհրաժեշտ ու պարտադիր տվյալներով 1921 թ. Թավրիզից լեռ Կամսարը վերադարձավ Երևան և ոտք դրեց քսանական թվականների հայոց կյանքի ծայր շիկացման հասած խառնարանը՝ «հաղթության նշանը» կրող արվեստի (սա ծիծաղին տված Ս. Վ. Լուսաշարսկու բնութագրությունն է), «գործողության արվեստի» (սա էլ մյուս բնորոշումն է) ուժին և պայթուցիկ միջոցներով դատ ու դատաստան բացելու օրվա շարիքային» երևույթների հանդեպ։

Կյանքի բազմակերպարանք շարիքներից, իր իսկ գրավոր խոստովանությամբ, լեռ Կամսարի առանձնահատուկ «քնքույշ» կոմպլիմենտին են արժանացել «երեք գլխավոր թշնամի»։

Դրանցից առաջինը կրոնի սպասավորներն են, «իսակ ու բուրգառի» առաջետները, որոնց գործունեության այլևայլ կողմերը, մասնավորապես փարիսեցիական վարքագիծը արժանացավ լեռ Կամսարի գրչի սուր խայթոցներին։

Երգիծաբանի մյուս թշնամին դաշնակցությունն է՝ իր ատիկար, անհեռատես գործելակերպով, այն կուսակցությունը, որը ի դեմս լեռ Կամսարի ոմեցավ իր ամենահետևողական, դաժան քննադատներից մեկին։

Նրա երգիծանքի մյուս հասցեատերը սովետական ապարատի տարրեր օղակներում բույն հյուսած բյուրոկրատիզմն է, որի դեմ ուղղված ծիծաղը ոչ միայն շմանաց «մանրաթեմայնության» սահմաններում, այլև հասցվեց հասարակական հնչողության աստիճանին։

Այս (և ոչ միայն այս) հասցեներով բացած ամենօրյա-ամենշաբաթյա-ամենամյա ծիծաղահերթերից գոյացան լեռ Կամսարի «Անվագեր մեռեներ» (1924), «Ազգային այբբենարան» (1926), «Վրիպած արցումքներ» (1934), «Գրաբար մարդիկ» (1955) հայտնի հավաքածուները, որոնցով, ինչպես ծանուցում է ինքնաֆելիետոնը, նա լեզու է գտել ընթերցողների լայն շարքերի հետ։ «Ասում, խոսում և ծիծաղում էինք»։

Իրրև թե ոչինչ էլ չի պատահել, այնքան «անմեղ» տեսքով է ներկայացնում կեռ Կամսարը իր գործունիելությունը: «Անմեղության» և «կատակաբանության» և ոչ մի հետք:

Լեռ-Կամսարյան ծիծաղը իր «ծանրախոհությամբ», «լուրջ կեցվածքով», արմատական եզրակացություններով շափազանց հարազատ է պարոնյանականին: Ի տարբերություն Հնակարկատ (փինաշի) երգիծաբանների ծակ (փուշ), անբովանդակ խոսքերի ու ժամանցային-զվարճաբար ան ական կողմնորոշման, լեռ Կամսարը նորագույն ժամանակներում երգիծանքը դրեց ժանրատեսակին արժանավայել բարձրության վրա:

Տարիներ անց, 1964 թ., անդրադառնալով իր գրական ճակատագրի մեջ Հակոբ Պարոնյանի խաղացած դերին և հայ գրականության պատմության մեջ նրա գրաված առանձնահատուկ դիրքին, լեռ Կամսարը գրում է, որ ինքը միշտ բռնել է մեծ երգիծաբանի «Փիշերից», հետեւ է ծիծաղի մտրակող-ներգործական ուղղությանը, դավանել է «Ապրել՝ նշանակում է ծիծաղել» նշանաբանը:

Վերհիշենք լեռ Կամսարի խոստովանության («Պարոնյանի գրական հասցեն») մի կարեռ ֆրագմենտը. «Կյանքի մեջ շատ կան լալու բաներ և մարդն էլ իր կյանքի վերջակետը դնում է լացով:

Զեզ եմ թողնում երևակայել, թե այսպիսի մարդը ինչքան պիտի ցանկանա կյանքի մեջ գեթ մի անգամ ծիծաղել: Խակ այդ ծաղրը քեզ կտա միայն Հակոբ Պարոնյանը:

Կան, իհարկե, նաև Հնակարկատ երգիծաբաններ, որոնց գործերը, կարտոնից շինված կոշիկների նման, խանութից տուն գալիս ճանապարհին... ծակվում են: Այս բոլորից հետո, գուցե գտնվի մի Հերոստրատ, որ ցանկանալով աշխարհում միակը լինել, ժխտի Պարոնյանի արժեքը, ասելով.—իսկ ինչին է պետք մարդուն ծիծաղն ու ժպիտը, մի՞թե առանց դրանց չի կարելի ապրել:

Պիտի պատասխանեմ, որ ոչ, առանց ծիծաղի կյանք չկա: Ծիծաղը հարկավոր է ոչ միայն կենդանի մարդուն, այլև մեռածին:

Հակոբ Պարոնյանը նրա աստվածն էր, իրվանդ Օտյանը՝ «աստծո տեղակալը», որոնց դասերով զինված լեռ Կամսարը 20—30-ական թվականների հայոց կյանքի մթնոլորտը ողողեց ծիծաղի ահազանգերով ու պայթյուններով:

Նրա հիմնական ամբիոնը լրագիրն էր, հատկապես «Խորհրդային Հայաստան» օրաթերթը, ուր տարիներ շարունակ տպագրվում էին «Լեռ Կամսար» ստորագրությունը կրող կիրակնօրյա նոթերը:

Դրանք անկեցվածք, ծաղրի և սրամտության հատուկ նպատակներ չհետապնդող, սովորական-բնական պատումներ ու դիալոգներ են, որոնց ընթացեաւ:



թի «ներքին», ընդհատակյա խորքերից փայլատակում են երգիծական շնչի ընդհանրացումները:

Ծանոթանալով կեռ Կամսարի ստեղծագործության էջերին, այնպիսի տպագորություն ես ստանում, թե հեղինակը բնավ էլ չի ցանկանում ծաղրել այս կամ այն երեսլիքը, թե նա պատմում և խոսում է այնքան անճիգ ու այնքան անմտադիր, որ ամեննին շես էլ զգում երգիծական նշանառության և նյութի երգիծական իմաստավորման պահը:

Թեև պարագորս է, բայց կարելի է ասել, որ «անմտադիր», «անկեցվածք» պատումը, այսինքն երգիծական հատուկ խնդիրներ չունեցող դիտակետը իսկական երգիծանքի ամենատպավորիչ նշանն է: Կեռ Կամսարը նույնպես, ինչպես երգիծաբանական թեքում ունեցող բոլոր գրողները, իրականությունը մըշտապես զգում և վերապրում է իբրև կատակերգական-զավեշտական-ծիծաղահարուց դիպվածների ընթացք, իբրև ծիծաղահանդես:

Եկեղեցին, ըստ կեռ Կամսարի պատկերացումների, նույնպես քաղաքական հաստատություն է, ուր «Հայրը, որդին և սուրբ Հոգին» վճռում են աշխարհի ամենաբարդ հանգույցները: Այդ պատկերացման վկայություններն են «Երկնային պլենում», «Աստված կլսե ամենօրյա զեկուցում», «Արարածները հաշվի են նստեր արարժին հետ», «Հայոց եկեղեցու բարեփոխության կարիքը» և այլ պամֆլետները, ուր «գործող անձինք»— հրեշտակապետներն ու հրեշտակները, աստվածն ու Մարիամ աստվածածինը, եկեղեցու սպասավորները՝ կաթողիկոսները, վարդապետները, քահանաներն ու գրագիրները, իրենց խոսք ու գրուցի մեջ յուրովի մեկնաբանում են «Երկրային գործերը»: Բերենք մի հատված «Երկնային պլենումից»: «Ընկ. զեկուցողը պատ խոսքը դարձնելով քրիստոնեության մասին, ըսավ.

— Քրիստոսի ոչ մի պատվիրան չէ պահվեր երկրի երեսին: Ոչ միայն շապիկ ունեցողը մեկը չի տար չունեցողին, այլ Ֆրանսիա, որ 12 շապիկ ոմի, Գերմանիո մեկ շապիկն ալ կուզե վրայեն հանել, Անգլիա երեք նեղուց ոմի՝ մեկը չի տար Ռուսաստանին: Աստված (Հիսուսին).— Ինչպես կերեմ, զավակըս, նորեն պիտի աշխարհ դրկեմ քեզի...

Լսելով հրեշտակապետի զեկուցումը քրիստոնեության մասին, աստված՝ իր որդին նորեն աշխարհ կղրկե...»:

Մի հատված էլ մյուս ֆելիստոնից: «Չորս օր է, ինչ անտեր կթափառինք երկնքին բացերը: Այրիացած Մարիամը կասլրի իր սրդի Հիսուսին քով: Հայտնի տեղերեք ուղղողներ կուզան՝ չի առներ, կը ունեմ ուզեր, որ Հիսուս խորթ հոր տեր դառնա: Երկինք իր գործերը լիկվիդացիա կընե: Դժոխքին կրակներուն վրա ջուր լցնելով ածուխ կշիռն ու եղիա մարգարեի կառքով դուրս կկրեն:

Մենք չենք գիտեր ինչ անհնք: Մեզմե շատեր իշան երկիր ու կապրին: Երեկ առտու ես ալ եկա: Գացի Երեանի հին զերեզմանատուն (Կողերն), ըսի մարմինս գտնեմ, նորեն հազնիմ ու ապրիմ»...

...Ես որոշել էի անպայման գալ երկիր: Եթե գլուխս շգտա վարձու գըլ-խով պիտի պտտիմ մինչեւ զիխաբանություն»:

Ինչպես երես է վերոբերյալ հատվածներից, կեռ Կամսարի երգիծանքի մեջ ծանրության կենտրոնը բառ-խոսքն է, այսպես կոչված խոսքային հեգնանքը, այն էլ ոչ թե հատուկ ընդգծումներով (կուրսիվով), այլ ամենասովորական պատումային շարահյուսության հեգնական ներքին պաշարների հայտաբերումով:

Լեռ Կամսարի երգիծանքի այս առանձնահատկությունը առավելապես երեւում է այն պամֆլետների և ֆելիտոնների մեջ, որոնք արծարծում են «հայոց հարցի» դիվանագիտական (և ոչ միայն) լուծումները:

«Ազգային այբբենարան» ժողովածուն իր գերազշիռ մասով նվիրված է ազգային պատմության նորագույն շրջանի առանցքային խնդիրների քննադատությանը:

Այդ ժողովածուի Հառաջարանում Արտ. Կարինյանը գրում է. «Լեռ Կամսարը շի հրապարակախոսում և գրեթե միշտ խուսափում է որևէ խորհրդածություն անելու իր զավիշտական «գործիչների» քայլերի ու գործերի առթիվ:

Նա ծիծաղում է, ծիծաղում և—միմիայն այդքան»:

Սա միանգամայն ճիշտ դիտարկում է լեռ Կամսարյան ծիծաղի բնույթի վերաբերյալ: Թեև լեռ Կամսարի «դիրքը» արժանանում է գրականագետի անվերապահ դրական վերաբերմունքին, սակայն նույն այդ «դիրքով» է պայմանավորված նաև երգիծաբանի թուլությունը՝ ամեն ինչ ծաղր ու ծանակի ենթարկելու կիրքը, երևոյթների տարրեր շերտերը իրարից շահմանազատելու կեցվածքը:

Անտարակույս, այդ «դիրքային անկախության» մեջ դեռ ուներ նաև ժամանակը, որն իր կնիքն էր դրել ընդհանուր մտայնության վրա: Այսուամենայնիվ լեռկամսարյան ֆելիետոնների մի մասը (ինչպես, օրինակ, «Հայոց պատմությունը»), որը Վանի 1915 թ. հերոսապատումի ծաղրանկարն է, ինչպես, օրինակ, «Հայոց հուկաները» ծաղրող, «Էջեր խաղը ու խայտառակություն գրքես» ֆելիետոնը, ինչպես, օրինակ, «Հայոց բանագնացությունների ծաղրապատումները» քննություն շրոնեց իր սեփական «խոհերի» բացակայության, իր վերաբերմունքի «շեզոքության» պատճառով:

Անցողիկ այս շերտի կողքին լեռ Կամսարի քաղաքական ֆելիետոնների մի մասը անի անանցողիկ գեղարվեստական արժեք, որի նշանակությունը Ա. Կարինյանը սահմանել է հետևյալ բնութագրական խոսքով. «Ինչպես մի ժամանակ Պարոնյանի «Ազգային ջոյերը» ապատկել են հայ բուրժուազիայի առաջին նարատներին, ճիշտ այդպես և լեռ Կամսարի գիրքը անվիճակ հարված է հասցնում միևնույն բուրժուազիայի նորածն մունետիկներին»:

Ազգային ոռմանափամի երգիծական մտրակման առումով ուշագրավ են «Դիվանագիտական զրույցներ», «Կնոջ դերը հայոց պատմության մեջ», «Համաշխարհային բժիշկը», «Մումբ», «Սկիզբն երկանց», «Քաղաքացի և պետություն» քաղաքական շնչի էջերը, ուր ծաղրի նշանակետը ազգային գործիչների վերաբերման փաստերն են (հատկապես էմիգրացիայում), իմպերիալիստական պետությունների որոգայթները, դիվանագիտական կեղծիքները և այլն:

Ազգային թեմայի արծարծումները նույնպես գրված են լեռ Կամսարի դիմուկ, բաց, անկաշկանդ խոսքով, սրամիտ և տպավորիչ բնութագրություններով, վավերագրական շնչով:

30-ական թվականներին՝ «Վրիպած արցումքների» շրջանում, լեռ Կամսարի երգիծանքի մեջ նվազում են քաղաքական-ազգային թեմաները և, հակառակը, ալվելանում են «ներքին կյանքի» երգիծական բացահայտումները:

Լեռ Կամսարը առանձնապես կարեորում է բյուրոկրատիզմի քննադատությունը («Պատիկ Խլեստակով մը», «Բյուրոկրատիզմի դեմ պիտի շկովել», «Դատարանի պատրաստություն» և այլն):

Իր ֆելիքտոններում կեռ Կամսարը ծանրանում է նաև ընտանեկան թեմաների՝ սեր, ամուսնություն, բաժանություն, գրական կենցաղի («Դեպի պրոցես գրականության հեգեմոնիան») խնդիրների վրա, «գեղագիտական արգելանոցներից» լույս աշխարհ հանելով ամենաանշան, շարքային իրողություններն ու փաստերը:

Ակամա լուսությունից հետո կեռ Կամսարը նորից գրական-երգիծական պարբերականներում երկում է 50-ական թվականներին: Մամուլի հրապարակումները կազմում են «Գրաբար մարդիկ» շարքի բովանդակությունը, իսկ «Մարդը տանու շորերով» շարքը և «Անտիպ Էջերը» լույս են տեսնում 1980 թվականի մեկնատորյակի մեջ: Այդ էջերը գրված են կեռ Կամսարի մյուս զբաղմունքի՝ մեղվապահության զուգահեռ: Բնականաբար խայթոցների հետ նրա երգիծական էջերում ավելացել է նաև «քաղցրությունը», որը գրականագիտական բառարանով կոչվում է «մանրաթիմայնություն»:

## 6

Արձակի թեմատիկական նախասիրությունները աստիճանաբար կապվում են մարդկային նոր հարաբերությունների ընթացքում ծնվող նոր հերոսների, «ապրողների» կերպարագծման հետ, ետին պլան մղելով հեռացած անցերի և հեռացող հերոսների՝ անցվորների պատկերումը:

«Ապրողները», սկզբնական շրջանում, կյանքի կենտրոնական դեմքերը չեն, իհարկե, այն մարդիկ, որոնք գույն ու շեշտ էին տալիս հասարակական կյանքի զարգացման ընթացքին: Դրանք գերազանցորեն այն մարդիկ էին, որոնք հեղափոխության շնորհիվ, բնազդի սահմաններում, եկան իրենց մարդկային արժանապատվության գիտակցությանը, ինչպես Արագու «Ընկեր Մուկուլը» պատմվածքի (1925) հերոսը՝ գործարանի պահակը, ինչպես Դ. Դևմիրճյանի մի շարք պատումները, որոնց հերոսները, արդար ու արդարամիտ աշխատանքի ազդեցությամբ վերագտնում են իրենց մարդկային էությունը («Հանգստի տանը», «Կայարանի Ակոբը», «Աբգուլը» և այլն):

«Ապրողների» ավելի շահել սերնդի կերպարների ստեղծումը կապվում է «կոմերիտական պատմվածքների» հետ, որոնց հեղինակներն էին նոր արձակագիրները՝ Մ. Արմեն, Արաքս, Հր. Քոչար, Գ. Բես և այլն:

Ընթերցողների շրջանում լայն արձագանք են գտնում 1928 և 1929 թվականներին Մ. Արմենի հրատարակած «Պատմվածքներ» խորագրված հավաքածումները: Լայն արձագանքի պատճառն այն էր, որ Մ. Արմենը, թեև հապճեպ լուծումներով, առաջադրում էր երիտասարդությանը հուզող մարդու բարոյական վարքագծի խնդիրները («Խորտակվող հոգիների փողոցում», «Խանդ» և այլն):

Արաքսի «Կոմերիտական պատմվածքների» շարքի պատումները («Ալվանը», «Նարգոն», «Էս ջուրն իր ճամփով կգնա» և այլն) ներկայացնում են հայ գեղջկուհիների հոգեկան վերածնության ընթացքը՝ դարավոր նախապաշարմուների բեռը հաղթահարելու ճանապարհով:

Արդեն քսանական թվականների վերջերից գեղարվեստական արձակի խնդիրների մեջ, իբրև թեմատիկական հիմնաթել, ամրանում է սոցիալիզմի կառուցման թեման:

Մոտավոր անցյալի նյութերից դեպի նոր կյանքի կառուցման թեմատիկան կատարվող շրջադարձը պայմանավորված էր հանրապետության կյանքում սոցիալիստական շինարարության տնտեսական ու տեխնիկական հիմունքների ամրացման երեսով, մանավանդ սոցիալիստական պլանի, իբրև սոցիալական առաջադիմության ամենավճռական ու ազդեցիկ ուժի, հոգեբանական-բարոյական դերով:

Մտնելով ժողովրդի առօրեական կենցաղի մեջ և դառնալով գործողություն, «պլանը» արմատականորեն կերպարանափոխեց մարդկանց կենսական գործողությունները, մարդու մեջ հրահրեց ապագայի հեռանկարներով ներշնչված երազողի խառնվածքը:

Գեղարվեստական գրականությունը նույնպես այդ տարիներին ողողված էր նախագծերով, պլանով, ֆանտաստիկայով. այս ամենի հավաքական անունն էր «սոցիալիստական ոռմանտիկա»:

Վերին աստիճանի ուշագրավ է, որ սոցիալիստական կառուցումը այլևայլ «թեմատիկական գծերի» շարքում տիրապետող-առանցքային խնդիրների շարքն է բերում այսպես ասած «ուրբանիստական գիծը», ասել է թե քաղաքաշինության և ճարտարապետության հարցերի գեղարվեստական յուրացման խնդիրը:

Դեռ 20-ական թվականների սկզբից այս ուղղությամբ մտադիր նախապատրաստական աշխատանքներ է սկսում Դ. Դեմիրճյանը: Ինչպես վկայում են Երկերի 14 հատորյակի VI հատորի ծանոթագրությունները, Դեմիրճյանը կուտակել է փաստական հսկայական նյութ՝ քաղաքաշինության, ճարտարապետության, պլանավորման վերաբերյալ հոդվածների, «Թերթային կտրոնների», որոնք այս կամ այն շափով տեղ են գտել նրա ուրբանիստական կտավի՝ «Նոր Մոնումենտալի» տպագրված հատվածներում (հատվածները տպագրվել են «Նոր ուղի», 1931, №№ 4, 5, 6, 1932, № 1, 2, «Նոյեմբեր», 1932, № 1, «Վերելք», 1933, № 5 պարբերականներում):

Տպագրված հատվածները չեն գոհացրել Դեմիրճյանին և նա, ինչպես գտնում են VI հատորի ծանոթագրողները, նույն 30-ական թվականներին սկսել է վեպի նոր տարբերակը՝ «Քաղաքը» վերնագրով, որի աշխատանքները ընդհատումներով շարունակվում են մինչև 50-ական թվականները:

Դեմիրճյանական գրությունների մեջ կան նշումներ՝ վեպի նոր վերնագրի վերաբերյալ: Այն կոչվելու էր «Միթ» (Կամ «Միթի դեմ»), որով Դեմիրճյանը, ըստ երեսույթին, ակնարկում է մայրաքաղաքի կառուցման միֆական բնույթը:

«Ուրբանիստական թեքում» ունեին նաև մյուս արձակագիրների նոր ստեղծագործությունները, Մ. Արագու «Հուսնի շողերով» վիպակը, ինչպես Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաքը» վեպը, Մ. Արմենի «Երևան» էպոպեան և «Քաղաքը բլուրի վրա» վիպակը, և այլն:

Անտարակուսելիորեն, քաղաքաշինության առանցքային թեմայի ֆոնի վրա արձակագիրները լուծում էին ավելի մասնավոր գեղարվեստական խընդիրներ, այսինքն՝ թեմայի մեջ փորձում էին բացահայտել ներքնամարդկային-հոգեբանական մոտիվներ: Այսպիսս, «Նոր մոնումենտալի» հանգուցային խըն-

զիրներից մեկը այսպես կոչված «Հին մտավորականության» հոգեբանական շրջադարձի, կամ ինչպես ձևակերպված է գրականագիտության բառարանում՝ «Հեղափոխության և մտավորականության» հարաբերության պրոբլեմն էր, որը չէր կարող շրջանցել Դեմիրճյանի պես արթուն մտքի և սուր զգացողությունների տեր գեղադեմության և առաջ այն պատճառով, որ դա ժամանակի արմատական խնդիրներից մեկն էր, որոշ առումով դրա վրա էր կառուցվում հեղափոխության հեռանկարը, այդ կետում էին բացահայտվում ժամանակաշրջանի հոգեբանական սուր կծիկները:

Այդ խնդրի առաջադրման մեջ կար նաև անձնական-կենսագրական շարժառիթը. դաստիարակությամբ և ներշնչանքներով լինելով «Հին մտավորական», Դեմիրճյանը այն «ուղեկիցների» շարքումն էր, ովքեր ժողովրդի դատի, նրա պատմական հեռանկարի խորին գիտակցությամբ ընդառաջ գնացին նոր հասարակության սոցիալ-հոգեբանական դինամիկային:

Դրա արտահայտությունն էր «Նոր մոնումենտալի» հղացումը. վեպի կենտրոնում «Հին մտավորականության» ներկայացուցիչներից մեկի՝ անվանի, համբավավոր ճարտարապետ Մելիքյանի, շինարարական մտահղացման պատմությունն է: Նա թեև գալիս է «անցյալից», սակայն այնպես է ներշնչված նոր հասարակության կառուցման պաթոսով, որ ծրագրում է «Նոր մոնումենտալը՝ իրեն քաղաքի կառուցման հիմնակետ»:

Դեմիրճյանը ի գեմս «Նոր մոնումենտալի» նկատի ուներ Երևանի ժողոտան կառուցումը, որը ժամանակի ճարտարապետական տարածայնությունների առանցքն էր, ի գեմս ճարտարապետ Մելիքյանի՝ մեծ ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին, որի ծրագրերի գեմ ծառանում էր երիտասարդ «կոնստրուկտիվիստների» սերունդը:

Ճարտարապետական ուղղությունների բանակոփիկը, անշուշտ, սոսկ տեսական հարցասիրությունն չէր, այլ քաղաքի հասարակական բովանդակության խնդիր, ուստի և Դեմիրճյանը մտահղացման նոր տարբերակի նպատակի մասին գրում էր. «Վեպի նոր վերակառուցում. նոր մոնումենտալի և միֆի միացմամբ: Ոչ թե մոնումենտալ շենք, այլ՝ քաղաք: Դա է նպատակը և դա է միայն հնարավոր: Մոնումենտալ շենքը եղակի է. նա միայն ինքն իրմով չի պայմանավորված, ինչպես անհատը. նա պիտի միջավայրում բարձրանա...»

Հանձնել են քաղաքի նախագիծ տալ, բայց Մելիքյանն զբաղված է մի մոնումենտալով, մոռանում է, հեռացնում է քաղաքը: Մելիքյանը կստեղծի միայն իր բաժինը և կգնա. մի անհատ չի կարող հավերժանալ, հավերժում է ժողովուրդը:

Երիտասարդները դնում են ամբողջ քաղաքի խնդիր, և սա անցնում է: Մելիքյանին հանձնում են քաղաքի նախագիծ տալ: Սա տալիս է և ահա սրա շուրջն է սկսվում պայքարը<sup>15</sup>:

«Քաղաք» տարբերակում Մելիքյանը վերանվանված է Աղոնց, որին և ճարտահրավեր են նետում դասական ճարտարապետությանը ծուռ հայացքով նայող, գերժամանակակից ձևերով հափշտակված կոնստրուկտիվիստների ներկայացուցիչները:

Այդ պայքարի նկարագրությունն էր վեպի երկու տարբերակների հենքը՝ այդ պայքարի տարբեր «ֆազերի» շեշտերով:

Հայ գրականության երեսնական թվականների հատվածում գեղարվեստական արձակը մի առանձին սեփառումով դարձավ դեպի՝ այսպես ասած, «մանկության» թեման՝ այդ իսկ թեմայի միջցողվ պատմելու ժողովրդական կյանքի տարեգրության էջերի մասին:

«Վերադարձ դեպի մանկություն» շարժումը պսակվեց հայ արձակի գեղարվեստական մի շարք նշանակալից արժեքներով:

Պրոլետարական հին գրող Մադաթ Պետրոսյանի «Մանկություն» պարզալուր հյուսվածքից և ուրիշ հեղինակների «անցյալից» ենթավերնագրով պատումներից հետո ստեղծվեց այն վիպաշարը (Դ. Մահարի. «Մանկություն և պատանեկություն», Զ. Եսայան, «Սիլիհտարի պարտեզները», Վ. Թորովնեց. «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա», Ստ. Զորյան. «Մի կյանքի պատմություն»), որոնց նյութը հեղինակների մանկապատանեկան հասակի տպավորություններն են իրենց շրջապատից՝ մարդկանցից, բնությունից, հասարակական կյանքի անցուգարձից:

Այս վիպաշարի յուրաքանչյուր դրվագ ունի իր գեղարվեստական-գաղափարական-Հոգերանական յուրահատկությունը՝ պայմանավորված այն մանկության յուրօրինակ բնույթով, որին անդրադարձել են հեղինակները:

Հայ գրականության անցյալում եղել են «հուշային-մեմորային» մանկություններ, ինչպես Ղ. Աղայանի, Փ. Պողյանի, Ալ. Շիրվանզադեի հիշատակարանները, սակայն չեն եղել «վիպային-վիպականացված» մանկություններ:

Այդ թեման գերազանցորեն արծարծվում էր պոեզիայում՝ մանկության էլեգիական կարոտի և մանկության կորստյան ուղղությամբ. «Մանկության օրեր, երազի նման...» և այլն:

Հայ արձակագիրների «մանկության» արծարծումները առավելապես կապվում են նյութի մեկնաբանության գորկիական ավանդներին:

Մինչև Մ. Գորկու հանրաճանաչ եռագրությունը («Մանկություն», «Իմ համալսարանները», «Մառայության մեջ») համաշխարհային գրականության տարբեր հորիզոնականներում ստեղծվել էին մանկության և պատանեկության կերպարի բազմաթիվ տարբերակներ, ինչպես Վիկտոր Հյուգոյի «Թշվառները» բազմահատոր վեպի երեխաների գիծը, Դիկկենսի «Դավիթ Կոպերֆիլդը» և «Օլիվեր Թվիստը», և Տոլստոյի «Մանկությունը», Սերգեյ Ակսակովի «Բագրով-թռուան մանկության տարիները», Մարկ Տվենի Թոմ-սոյերյան և Հեքլերի-ֆինյան արկածապատումները, որոնցից ամեն մեկը յուրովի արտահայտում էր գեղագիտական որոշակի դիրքեր:

Մանկության դասական պատումներից նոր հասարակության տարեգիրներին առավել հարազատ էին Մ. Գորկու գեղագիտական սկզբունքները:

Բանն այն է, որ թևմայի մեկնաբանության մեջ մուծելով լուսաստվերի գեղագիտական սկզբունքը (կյանքի լուսավոր և ստվերութ կողմերի արտացոլումը), ի տարբերություն ոռմանտիկների առաջարկած «անաղարտ մանկության-աղարտված հասունության» դրույթի, ի տարբերություն լուսավորիչների «անգրել տախտակից տեսության, ի տարբերություն ազնվականական միջավայրի «պաստորալային» մանկության և արկածային թափառումների մարկտվենյան գեղագիտության, Մաքսիմ Գորկին գնաց ժանրա-ոճային վերակառուցումների և ուսալիստական խորացումների:

Հուսաստվերի ռճաբանությունը մասնավորապես հարազատ էր հայ արձակագիրներին, որոնց նկարագրած մանկությունը նման չէր ո՞չ Մարկ Տվենի, ո՞չ Դիկենսի, ո՞չ Էն Սոլստոյի, ո՞չ Էլ Մյուս վիպագիրների ներկայացրած իրականություններին:

Մանկության միջոցով «ժամանակի տարեգրություն» հյուսելու խնդրից բացի, հայ արձակագիրները լուծում են նաև «ազգային-հայկական» մանկության վերստեղծման խնդիրը:

Տարբեր են նաև հայկական առանձին գավառների մանկությունները. արևելահայ գավառի՝ Ղարաքիլսայի մանկությունը («Մի կյանքի պատմություն») նման չէ Գ. Մահարու Վանի Այգեստանի, Վ. Թոթովենցի Խարբերդի՝ հին Հռովմեական ճանապարհի, Զ. Եսայանի Կոստանդնուպոլիսի՝ Սիլիհարի պարտեզների մանկությանը, որոնց մեջ գլխավոր շեշտն ընկնում է ծննդավայրի կորստյան մոտիվի վրա:

Վահան Թոթովենցը՝ բազմաժանր և բեղմանավոր մի գրող, հայ գրականության պատմության մեջ է գրանցվել առաջին հերթին «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակով:

Վահան Թոթովենցը (1894—1937) հայ սովետական գրականության պատմության ամենահետաքրքրական դեմքերից մեկն է, արգասավոր մի գրող, որը հանդես է եկել ամենատարբեր ժամաներում՝ բանաստեղծության, արձակի, թատերագրության, հրապարակախոսության, հուշագրության, և թողել մնայուն հետքեր:

Վ. Թոթովենցը ծնվել է 1894 թվականին, Արևմտյան Հայաստանի Խարբերդի գավառի Մեղինե քաղաքում, ունեոր ընտանիքում (հայրը պետական գանձապահ էր): Մանկությունն անցել է հայրենի գավառի գեղատեսիլ վայրերում, ուր բնության հրաշալիքների կողքին նա տեսել է նաև սոցիալական անարդարություններ և ազգային ողբերգություններ՝ մտրակ ու սուր:

Նախնական կրթությունը Վ. Թոթովենցը ստացել է Խարբերդի ազգային կենտրոնական վարժարանում, ուր նրա ուսուցիչների մեջ էին արևմտահայ նշանավոր նորավիպագիրներ Թլկատինցին և Ռուբեն Զարգարյանը: Այստեղ էլ երեսում են գրական հակումները: Պատանության օրերին նրա գրական կուրքն էր Միսաք Մեծարենցը՝ իր գիշերներով, արևներով, լուսայգերով: Մեծարենցի ուժեղ «ազդեցությամբ» էլ Վ. Թոթովենցը իր գրիշը թաթախում է Մուսաների ավաղանում: «Յանկացա, որ իմ առաջին գիրքը տպվի «Միածնի» նման, միենույն թղթով, ձևով, շապիկով, միենույն տպարանում: Այդպես էլ եղավ: Բայց, էլի, ավաղ, ոչ մի տպագորություն չթողեց: Այն ժամանակ միայն ես զգացի, որ գոյություն ունի ինչ-որ ներքին մի բան, որ արտացոլվում է տպագրության մեջ, գոյություն ունի ինչ-որ մի բան, որ Դուրյանն ուներ, Մեծարենցն ուներ, բայց ես չունեի... Տարիներ հետո Պոլսում կուցա Միսաքի շիրիմը համբուրելու, Կնձ թվաց, որ Միսաքը խոսեց ինձ հետ, խոսեց արեի համար տածածքում սիրով»:

1908-ին տպագրած արձակ բանաստեղծությունների «Ավերակ» գրքունից հետո Թոթովենցը 1909-ին տպագրում է «Արինգ» բանաստեղծությունների ժողովածան:

«Արինգ» ժողովածուն շուներ զգացմունքների արտահայտման ինքնատիպություն, նրա բովանդակությունը հայտնի բանաստեղծների մոտիվների մեջենայական ընդօրինակություններն էին, իսկ ձևը բանաստեղծական հայտնի հնարանքների կրկնությունները:

1908-ին Թոթովենցը անցնում է Ամերիկա՝ «դեղին սատանայի քաղաքը», ուր ծանր տպավորություններ է ստանում հատկապես սոցիալական կոնտրաստներից:

«Ինքնակենսագրության» մեջ Վ. Թոթովենցը պատմում է Ամերիկայի իր հայտնագործման մասին. «Ամերիկան... վերացական բարձումքներից ինձ իշեցրեց և լնդուալ մոտեցրեց կյանքին: Ամերիկայում ես տեսա կյանքի հատակը»:

Վ. Թոթովենցը աշխատում է իբրև սևագործ բանվոր, ճաշարանի աշխատող, գորգագործ և ավարտում է Վիսկոնսինի համալսարանի պատմական ֆակուլտետը:

1915-ին, առնելով հայկական կոտորածների լուրը, Վ. Թոթովենցը գալիս է նախնյաց երկիրը և մասնակցում կամավորական շարժմանը: Այս շրջանում էլ նա դառնում է Անդրանիկ զորավարի մտերիմ բարեկամը, խմբագրում է նրա գնդի «Ազատամարտ» լրագիրը:

Հայաստանի մամուլում հանդես է գալիս հայրենասիրական շնչի հրապարակախոսական հոդվածներով, ապա 1920-ից նորից գեգերում է «օտար ափերում»՝ Ստամբուլում, Փարիզում, նյու Յորքում:


1917—20 թթ. նա գրում է «Ողբ անմահության» պոեմը (1917), «Դոկտոր Թուրբոնյան» երգիծավեպը (1918), պատմվածքներ, պիեսներ, լրագրային հոդվածներ:

Այդ երկերում Թոթովենցը հանդես է գալիս իբրև գավառական բարքերի խարազանող («Տոնոն»), ազգային «բարեգործների» բնադրատ («Ազգային բարերարին գերեզմանը»), «Ամերիկա գացող հարսնացուն»), Թուրքական բոնապետության մոլի հակառակորդ:

Այս շրջանի լավագույն գրվածքը «Դոկտոր Թուրբոնյան» վեպն է, որը նախապես ունեցել է «Հայաստանի Դոն-Քիշոտը» խորագիրը:

Այս երգիծավեպը ունի քաղաքական բովանդակություն. ի դեմս դաշնակցության «շրջիկ պրոպագանդիստի» կերպարի, որը, ինչպես Ե. Օտյանի Փանչունին (Թոթովենցը շատ բանով հետեւ է «Սապլվարի» գեղարվեստական սկզբունքներին) հանդես է գալիս բախտախնդիր գործելակերպով, «ժողովրդասիրական» մտորումներով և ամբոխավարական կոչերով: Իր գրական դիրքերի մասին Թոթովենցը գրել է. «Այս վեպը ես գրած չեմ ծաղրելու, ծիծաղելու և հեգնելու համար: Այս վեպը գրած եմ, որպեսզի մարդիկ կարդան և արտասվեն»:

«Դոկտոր Թուրբոնյանի» և Վ. Թոթովենցի այլ երկերի հիման վրա Ստ. Զորյանը ասել է. «Թոթովենցը ունի... երգիծողի անկասկածելի շնորհք»<sup>16</sup>:



Գրելակերպով «Դոկտոր Բուրբոնյանը» հիշեցնում է հայ երգիծանքի այլեւ նմուշներ: Այն իր արդիական հնչեղության համար արժանացավ շերմ ընդունելության, իսկ վեպի տպագրությունը շարժեց «ազգայնական ճահճի» հալածանքը հեղինակի դեմ:

«Դոկտոր Բուրբոնյանը» թեև ուներ կառուցվածքային-տիպագրման թերություններ, ֆելիետոնային թեթեության տարրեր, սակայն դրանցով իսկ հետաքրքրական էջ էր Վ. Թոթովենցի գրական կենսագրության մեջ: Մասնավորապես ներդաշնակ էր երգիծական առարկայի (հեղափոխության գործի «արքայազնի») և արտահայտման երգիծական ոճի կապը, ինչպես և ուշագրավ էր «ազգային հարցին» անդրադառնալու հեղինակային դիրքը:

Վահան Թոթովենցը թեև «օտար ափերում» էր, սակայն ամբողջ էությամբ կապված էր բնաշխարհին:

Դեռ 1920-ին, Փարիզում լսելով Հայաստանի ազատագրության լուրը, նա խոստովանում է. «Ինձ այնպես թվաց, թե իմ հոգում հյուսվում է երգ, բացվում է իմ հոգում պայծառ, զինջ և դուցազնական առավոտ»<sup>17</sup>:

Իրեն համակած այդ խանդավառ տրամադրությամբ էլ 1922-ին վերադառնում է Սովետական Հայաստան և հայրենասերի արդար խոհով ու քաղաքացիական պարտքի գիտակցությամբ մասնակցում վերածնվող մշակույթի կերտմանը:

20—30-ական թվականներին նա հանդես է գալիս գրական տարբեր ժանրերով՝ ակնարկ, ֆելիետոն, պատմվածք, վիպակ, վեպ, դրամա:

Ակնարկներն ու ֆելիետոնները թեև գեղարվեստական արժեքով բարձր չեն, սակայն ակնարկները հետաքրքրական են իբրև սոցիալիստական շինարարության նորակառուցյաների և նոր ավանների մասին պատմող վավերապրություններ, իսկ ֆելիետոնները իբրև հին հոգեբանության դեմ ուղղված մերկացումներ:

Վ. Թոթովենցի պատմվածքների մեջ են «Ամերիկա» (1929) շարքը՝ սույնական թեմատիկայով և հումանիստական պաթոսով, գավառական հուշապատումները, որոնց մեջ առանձնանում է «Բաց կապույտ ծաղիկները»:

Այս պատմվածքում հոգեբանական զարմանալի ներքնատեսությամբ Վ. Թոթովենցը հյուսում է որք պատասխությունը թորիկի և հանրատան աղջկա՝ Անժելի մեծ սիրո պատմությունը, «Հատակի» մարդկանց մեծարման ճանապարհով ժամանելով գավառական բարքերի ու նախապաշտարմունքների ճընշումը մարդկային ազատ հոգիների վրա: Իր մարդկային վարքագծի և հղոր սիրո ուժով մորիկը «Հատակից» վեր է բարձրացնում քաղենիսական կյանքի հորձանութի մեջ տառապող Անժելին, նրա առջև բացելով երջանկության ափերը: Այս պատմվածքի սյուժեով ուժիսոր Հենրիկ Մալյանը 1981-ին նկարահանեց «Կտոր մը երկինք» հիմնալի կինոժապավենը:

Վ. Թոթովենցի վիպակներից լավագույնը «Հովնաթան—որդի Երեմիայի» պատումն է:

Արվեստի հավերժության և անմահության գաղափարը,—ահա այդ գրքածքի նյութը: Այդ գաղափարի կրողն է բրուտագործների հին, ավանդական տոհմի շառավիղը՝ Հովնաթանը, արձանագործ մի պատանի, լցված կյանքի ու ստեղծագործության անսահման սիրով: Հովնաթանն իր նախնիների պարզ արհեստը՝ բրուտագործությունը հասցնում է դարերի մեջ տեսական նշանակություն ունեցող արվեստի բարձրության՝ իր քանդակների մեջ զնելով ժողովրդի մաքառման ու պայքարի պատմությունը, նրա ազատասիրական ու մար-

դասիրական լավագույն տենչերը: Հովհանքանի հմայիշ կերպարով Թոթովենցը հասնում է գեղարվեստական լայնածայն ընդհանրացման, հաստատելով ժողովրդի կենսունակության, դիմադրողական ուժի, ստեղծագործական անսպառ կարողությանների միտքը:

Վիպական լայն կտավներում Վ. Թոթովենցը շոնեցավ այն հաջողությունը, ինչ ունեցավ արձակի կարճ ձևերում. «Բաքու եռահատոր վեպից բացի նա գրեց նաև «Նյութ-Յորք» վիպակը, «Պերս Սալվադոր» դեղեկտիվը և այլն: Գրական-պատմական հետաքրքրություն է ներկայացնում «Բաքուն՝ իբրև անդրկովկասյան հեղափոխական շարժումների գրական առաջին արձագանքներից մեկը հայ իրականության մեջ:

Վ. Թոթովենցը գրել է նաև մի տասնյակի հասնող դրամաներ ու կոմեդիաներ («Մահվան բատալիոն», «Պողպատի ճաշ», «Բաքու-Լոնդոն», «Մոխրակույտ», «Հրդեհ», «Սասնա ծոեր», «Նոր-Բյուզանդիոն» և այլն), որոնցից հատկապես «Նոր-Բյուզանդիոնը» աշքի է ընկնում դրամատուրգիական վարպետությամբ՝ դրամատիկական սլացիկ գործողությամբ, հարուստ դիալոգով, հակասությունների մեջ բացահայտվող հյութեղ կերպարներով:

Վ. Թոթովենցի ժառանգության մեջ ամենաարժեքավոր երկը «Կյանքը հին Հոռվմեական ճանապարհի վրա» վիպակն է, որը Ավ. Խաչակյանը համարեց «հիանալի և մնայուն» արժեք հայ գրականության պատմության մեջ:

Ինչ էր իրենից ներկայացնում «Հին Հոռվմեական ճանապարհը»: Լսենք հեղինակին. «Մեր փողոցը հին արեւլքի այն ճանապարհի մասնիկն էր, որ ծայր էր առնում հին Հոռվմից, գալիս հասնում էր Բյուզանդիայի հին մայրաքաղաքը, ընդհատվում էր մի ակնթարթ կապույտ ծովով, ապա շարունակվում էր, օդակելով ամբողջ փոքր Ասիան, գալիս անցնում էր մեր տան առջևից և գնում մինչև «աշխարհի ծայրը»—Բաղդադ...»:

Հին Հոռվմեական ճանապարհը այն նեղ, փոշոտ փողոցն է, որտեղ անցնում են հեղինակի կյանքի գիտավոր դեպքերը և որտեղ, ինչպես մի կաթիլ չըրի մեջ, անդրագառնում են աղջային և սոցիալական պատմության երեսությունները: Ինքնակենսագրական ու ինքնավերլուծական զգալի նյութ պարունակող այս գրվածքում, պատմելով իր կյանքի «ողիսականը»՝ հանդիպումներ հարևանների ու փողոցի անցորդների հետ, դիպլածներ հարազատների միջավայրում, անսպասելի հայտնություններ ու «քարքարոտ» ուղիներ, մարդկանց ճանաշողություն՝ սկսած գավառային բարձրատոհմիկ անձանցից մինչև ցնցոտիապատ գյուղացին, Վ. Թոթովենցը վերարտադրում է անհետացած, հեռացած կյանքի լուսերն ու ստվերները, ի ցույց է գնում այդ կյանքի հասարակական հոգեբանությունը: Հուշագրական անկեղծ գրելակերպը հեղինակին չի տանում ավելորդ մանրամասնությունների արահետներով: Ընդհակառակը. գեղարվեստական սրատես դիտողականությամբ ու հոգեբանական վերլուծման միջոցով Թոթովենցը նկարագրում է, թե ինչպես իր կյանքի նեղ արահետը հենց այդ անշուր փողոցի սահմաններում խաչաձեվում է հասարակական կյանքի լայն ուղիներին, ցույց է տալիս, թե ինչպես են ազգային և սոցիալական երեւլույթները՝ հակասական ու բարդ անդրադառներով, անմիջական կամ միջնորդված ձեռվ, մուտք գործում պատանու իմացական աշխարհը:

Պատմողի «շվացուցակը» թեև «հին Հոռվմեական ճանապարհից» այն կողմ չի անցնում, բայց Թոթովենցը ներկայացնում է գավառի բովանդակայից ու բազմազան կյանքը: Նա անկիրք ու սառը նկարագրող չէ, պատումի «օր-

յեկտիվ» շեշտի միջոցով ընթերցողը անսխալ կերպով ճանաչում է հեղինակի համակրանքներն ու հակակրանքները:

Թոթովենցը դրան հասնում է անցյալի դեպքերի շղթայի միջից կարեռագույնները առանձնացնելու շնորհիվ: Նա ներկայացնում է տարբեր մարգկանց՝ իրենց հետաքրքրություններով, համակրանքներով ու հակակրանքներով, աշխատանքային կենցաղով, դատողություններով, բնագորության գծերով: Գաղափարական նպատակասլաց գիրքավորման շնորհիվ «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» երկը մի անհատի կենսագրության խոստովանությունը լինելուց վերաճում է մի ամբողջ սերնդի գեղագիտական կենսագրության, սերումդ, որը ցավագին գալարումներով վերապրում է նահապետական հարաբերությունների փլուզումն ու հայրենի օչախի վրա կախված արհավիրքների ծանրությունը, որը տառապանքի ու ցավի միջից անրջում է լուսավոր եղերքներ:

Թոթովենցի գրվածքը հյուսված մինելով առանձին գրվագներից, որոնցից մի քանիսը, օրինակ, «Աղավնիները», ինքնուրույն պատմվածքի արժեք ունեն, ֆրագմենտարության հետ մեկտեղ միասնական գաղափարով ներծծված ստեղծագործություն է: Վիպակի զեկավար-հանգուցային գաղափարը մարդու, նրա ստեղծագործական ուժերի, նրա աշխատանքի ու կոշման մեծարումն է, հայ գրականության անցյալից եկող այն ավանդի հաստատումը, թե ամենաբարձր մարդկային առաքինություններն ու հոգեկան գեղեցկությունները գտնվում են հասարակական կառուցվածքի ցածր աստիճանի վրա կանգնած «ամենաաննշան», հասարակ խավերի մեջ:

Մարդիկ են Վ. Թոթովենցի ստեղծագործության զննումների կենտրոնում, նա՝ ուշադիր հետևում է մարդկանց ամեն տեսակի կերպարանափոխություններին և նրա գրչի տակից դուրս են գալիս հասարակական ամենատարբեր խավերի ներկայացուցիչների կենդանի կերպարներ՝ սկսած մեծատումներից մինչև ցնցութագրումները:

«Կյանքը...» միաժամանակ, իմացաբանական արժեքից բացի, իսկական արվեստի նմուշ է: Նրանում հեղինակը հանդես է գալիս իր ձիրքի հետաքըրքը բարական կողմերով. մի քանի նրբագծով մարդու կենդանի դիմանկար կերտելու վարպետություն. բառագործածության հմտություն, կյանքի գումանկարչական ընկալման շնորհք, թանձր կոլորիտայնություն, քնարական շունչ: Նաև հումոր՝ մերթ շարածճի, մերթ ծանակող:

Ինչպես «մանկության» թեմայի մյուս արծարծումները, Վ. Թոթովենցի «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակում ևս որոշ առումով իրականությունը երեսում է զունազարդման կերպարանքով: Մանկության հետացած տարիների հուշերն, ինչ խոսք, արթնացնում են գեղեցկության տեսլիքներ, հարազատների ու մտերիմների լուսավոր դիմագծեր, ծննդավայրի բնության պատկերներ և այլն: Այսուամենայնիվ, մանկության լուսավոր գծերի վերհուցի կողքին հայտնվում են նաև նույն կյանքի ստվերները, տփեղ, սահմանափակ բարքերը, խեղված մարդիկ («մոխրակույտերի իշխանները»՝ փողոցների թափառականները), ճակատադրի դոհերը և այլն:

Վ. Թոթովենցի գրվածքը ևս գորկիական լուսաստվերի գեղագիտության արտահայտություններից մեկն է,—մանկության անմեղ հուշաբեկորների տեղը աստիճանաբար գրավում են կենցաղային միջավայրի և հասարակական կյանքի տեսագծերը, այն կյանքի, ուր, թեև ոչ մեծ շափով արդեն հուն են

բացում թուրքական բռնապետության սարսափները (ինչպես, օրինակ, Հայ հեղափոխականների գլխատումը):

Վ. Թոթովենցի «Կյանքը հին Հռովմեական ճանապարհի վրա» վիպակի անգլերեն թարգմանությունը (Միշա Գյուտյանի) չերմ արձագանք է գտնել անդ-լիագիր ընթերցողների շրջանում՝ իբրև բանաստեղծական բարձր ներշնչանք-ների և ազգային և ժեղադապություն:

Զատել Եսայանը ծնվել է Կոստանդնուպոլիսի Խսկյուտար թաղամասում՝ 1878 թվականին, արդեն վաղեմի համբավը կորցրած ազնվականի ընտանիքում: Ծննդավայրի հայկական վարժարաններում ստացել է բավականաշափ կայուն գիտելիքներ, վաղ հասակից հանդես բերելով գրասիրության-ընթերցասիրության ուժեղ հակումներ: Գեղարվեստական գրականության բուռն հափշտակությունը նրա կյանքում ունենում է ճակատագրական նշանակություն. որոշում է դառնալ գրչի մշակ, կյանքի մասին ունեցած պատկերացումներին տալ գրական ձեի տեսք: Այս ընտրության մեջ դեր է խաղում ուսուցիչը՝ Մելքոն Գյուրջյանը: Վաղ շրջանում գրում է գերազանցապես արձակ բանաստեղծություններ՝ մոտավորապես դարավերջի պոլսական գրականությանը բնորոշ սև գիշերների, մենակության, հուսահատ ճիշերի, հոգեվարքի, անկման ու հոգեկան փլուզման պատկերային շարքերով, որոնք թեև գրական աղբյուրների աղդեցությունների հետևանք էին, սակայն ինչ-որ տեղ էլ արտահայտում էին համիդյան մղձավանշի ճնշիչ կաղապարների տակ հուսաբեկության վերջին սահմանը հասած երիտասարդության հոգեվարքային ապրումները:

Դարավերջի Կ. Պոլիսը իր ծանր և դաժան «Կոլորիտով», քաղաքական հալածանքներով հայ մտավորականությանը՝ գրողներին, խմբագիրներին, արվեստագետներին ստիպում է կամ դիմելու տարագրության՝ եվրոպական ուսանները, կամ էլ պահպանելու համակերպման ու լուսակացության կեցվածք:

Զատել Եսայանը 1895-ին հարկադրաբար թողնում է Պոլիսը և հանգըրվանում Փարիզում, ուր կենտրոնացված էր հայ մտավորականների մի հզոր զանգված:

Այստեղ Զ. Եսայանը շիտումներ է ունենում ոչ միայն տարագիր հայ մտավորականների, այլև փարիզյան «գրական սալոնների» հետ,—երկու հենակետեր, որոնք այս կամ այն շափով դեր են խաղում նրա գրական ճակատագրի մեջ:

Կյանքի «փարիզյան հանգրվանը» ուշագրավ է ոչ միայն գրական ըմբռոնումների կազմավորման, այլև Զ. Եսայանի աշխարհայացքի հիմնորոշ գծերի արտահայտման առումով: Փարիզը սոցիալական բազմազան ուսմունքների խառնարան էր, որի հետ ծանոթանալով, Զ. Եսայանը հակվում է դեպի դարբառաշաղթիմությունը հրահրող գաղափարական ուսմունքները:

Փարիզում Զ. Եսայանը ֆրանսիական պարբերական մամուլում հանդես է գալիս ֆրանսիական լեզվով շարադրած պատմվածքներով, Էսսեներով, արձակ բանաստեղծություններով, հայ գրողների երկերի քննադատական վերլուծություններով, որոնք արժանանում են չերմ ընդունելության: Շուտով հանդես է գալիս նաև նորավեպերով:

Նրա անունը դառնում է Հանրածանոթ:

Զ. Եսայանը Փարիզից 1902-ին նորից վերադառնում է ծննդավայր, ուր ծավալում է գրական բեղմնավոր գործունեություն. պատմվածքներից և ժամանակի հուզող հասարակության և գրական հարցերի մասին գրած հրապարակախոսական հոդվածներից բացի Զ. Եսայանը ասպարեզ է հանում «Սպաս-

ման սրահին մեջ», «Սկյուտարի վերջալույսները», «Շնորհքով մարդիկ», «Կեղծ հանձարներ» վիպական կտավները, որոնցից հատկապես վերջինը մեծ տպավորություն է թողնում ընթերցողների վրա՝ ուսախստական նկարագրությունների, քաղքենիական միջավայրի արատների մերկացման, հոգեբանական թափանցման համար:



Զ. Եսայանի գրական դիմագծի ձևավորման մեջ անտարակուսելիորեն մեծ է եղել ֆրանսիական գրականության ազդեցությունը: «Մխիթարյան» և «գավառական» հոսանքների կողքին «Փրանսիական ուղղությունը» լինելով արևմտահայ գրականության տիրապետող մտայնություններից մեկը, ազդեցություն էր թողնում նոր տաղանդների վրա: Դրանց մեջ էր Զ. Եսայանը, որը տարվելով ոռմանտիզմով, պառնասականներով, ի վերջո, ինչպես նշում է նրա ստեղծագործության հետազոտող Սևակ Արզումանյանը, հակվում է դեպի Զոլյայի ու Մեսերլինկի «նատուրալ-հոգեբանական դպրոցի» գեղագիտական սկզբունքները:

Զ. Եսայանի գործունեության

քուռն շրջանը վերաբերում է 1910—20 Հակատագրական թվականներին, երբ նա իր անձնվեր, կարելի է ասել սիրագործության հավասար կենսագրությամբ անմնացորդ բաժանում է հայկական կոտորածներին զոհ գնացող ժողովրդի տառապանքներն ու տվայտանքները: Ճիշտ է, շատերի պես նա ևս որոշ ժամանակ հավատում է «երիտթուրքերի» դիվանագիտական-փարիսեցիական խոստումներին, որոշ ժամանակ էլ հավատում է աղգային կուսակցություններին, սակայն դեպքերի ընթացքի գգաստ վերլուծությամբ երես է թերում վաղանցուկ ցնորդներից և մինչև խորքը ճանաշում թուրքիայի նոր կառավարիչների բարբարոսությունը:

Այդ թվականներին արևմտահայ պարբերական մամուլը լեփ-լեցում էր Զ. Եսայանի հրապարակախոսական կրուտ հոգվածներով, ուր ամբողջ ուժով հնչում էր նրա ստելությունը հանդեպ ցեղասպանները և անմնացորդ ժողովրդասիրությունը:

Տասնամյակի ընթացքում հրատարակած գեղարվեստական երկերից ընդգծվում են Կիլիկիայի կոտորածների մասին պատմող «Ավերակներուն մեջ» գիրքը (1911) և իրենց տոհմական հայրենիքից հալածված, տարագրության դատապարտված հայերի մասին պատմող «Ժողովրդի մը հոգեվարքը» (1917):

Սրանք ճշմարտապատում և հուզախոռվ վավերագրություններ են հայոց շարադիտ ճակատագրի մասին:

Վավերագրություններից բացի, որբահավաքման դմվարին պարտականություններին զուգահեռաբար, Զ. Եսայանը գրում է նաև գեղարվեստական եր-

կեր, որոնցից ջնթերցողների վրա տպավորություն են թողնում «Վերջին բաժակը» և «Հոգին աքսորյալը» (1922) հոգերանական զննումներով հարուստ վիպակները, ինչպես նաև «Նահանջող ուժերը» (1923) վեպը, որի նյութը քաղաքական հոսանքների պայքարն է (1920-ին տպագրվել է Երևանում):

Զապել Եսայանը թեև ապրում էր Փարիզում, սակայն ամբողջ էությամբ, հոգու նրբին թելերով կապված էր ավերակներից վեր հառնող Սովետական Հայաստանի հետ: Դրա առարկայական ապացույցը եղավ 1926 թ. ճանապարհորդական տպավորություններից հյուսված «Պրոմեթես ազատագրված» (1928, Մարսել) նոթապիրքը, որը շափազանց տաք տողերով սփյուռքի հայ զանգվածներին պատմում էր վերածնված հայրենիքի մասին: Մի ամբողջ տասնամյակ ծավալելով լայն գործունեություն ի նպաստ Հայաստանի, Զ. Եսայանը 1923-ին գալիս է վերջին հանգրվանը՝ Երևան, 1934-ին մասնակցում գրողների համամիութենական առաջին համագումարին և ֆրանսերեն լեզվով ճառասում ամբիոնից:

Սովետական Հայաստանում սկսվում է Զ. Եսայանի ստեղծագործության նոր փուլը: Գեղարվեստական ակնարկներից և նոթերից բացի տպագրում և ծրագրում է մի շարք երկեր:

Զ. Եսայանի նոր գրվածքների նյութը հուշային իրականությունն էր, անցած-գնացած օրերի և դեպքերի ու դեմքերի վերհուշը:

Այդ շարքում են գեղարվեստական շնչով շարադրված «Ինքնակենսագրությունը» (մնացել է Կիսավարտ), ուր կան պլուսական կյանքի ու ալիստական նկարագրություններ, «Կրակե շապիկ» (1934) և «Սիլիհտարի պարտեզները» (1935) վիպակները:

«Կրակե շապիկը» մի ընտանիքի թշվառության կենցաղանկար է, որը Զ. Եսայանը ի հայտ է բերում ոչ միայն հոգերանի, այլև սոցիալական շափանիշներով մտածող գեղագետի ձիրք: Կրակե շապիկը խորհրդանշանն է այն մարդկանց, որոնք այրվում են չքավորության մեջ:

«Սիլիհտարի պարտեզները» թեև չի ավարտվել (Զ. Եսայանը գրել և հրապարակել է միայն առաջին մասը), սակայն այդ վիճակով էլ գեղարվեստական անտարակուսելի արժեք է, «Ինքնակենսագրական վեպի» հոսանքի երեվելի մի դրվագը: Իր կառուցվածքով «Սիլիհտարի պարտեզները» «նովելաշար հուշապատում» է, առանձին նովելների շղթա, որով արձակագրուհին ներկայացնում է դարավերջին՝ 90-ական թվականների Կոստանդնուպոլսի բնության, բարքերի, մարդկային հարաբերությունների «պանորաման»:

Վեպը սկսվում է պատմողի ծննդյան փաստի հակիրճ արձանագրությամբ, որին հաջորդում են այդ նույն պատմողի հուշերը ծննդավայրի կախարդական բնության վերաբերյալ:

Այնուհետև նրա տպավորությունների հուշային վերաբրումների մեջ տեղ են գրավում հարազատները՝ հայրը, մայրը, ապա հարեաններն ու մտերիմները, վերջապես դպրոցի ընկերներն ու դրսի մարդիկ, տարբեր կենսագրության, խառնվածքների և ըմբռումների մարդկային մի աշխարհ, որով Զ. Եսայանը իր կենսագրությունը տեղադրում է ժամանակի կենսագրության մեջ և գծագրում ժամանակի դիմագիծը:

Այդ դիմագիծը որոշողը Բոսֆորի կապույտ ջրերի, Պոլսի վերջալույսների և Սիլիհտարի պարտեզների քնարական ներշնչանքները չեն, ոչ էր հարազատների ժպտացող դիմաստվերներն են, ոչ էլ պատմողի հոգու անրջային-ցնորային հոգեկան պահերի հիշողությունները:

Որոշիչը մարդկային այն հոգսերն են և ողբերգական անցքերը, որ տեղ ունեն սուլթան-համիզյան «գեղ ժամանակներին մեջ»:

Զ. Եսայանը Կ. Պոլսի ընդհանուր բնանկարչական և սոցիալական-կենցաղային կոլորիտի ֆոնի վրա գծագրում է նաև հուշերը վերապրողի ինքնանկարը:

Անմիջական և բարի, գգայուն ու մտածող խառնվածքի տեր «հուշագիրը» երեսում է նաև իր ազնիվ վարքագծով՝ այլազգի աշակերտների հետ ունեցած հարաբերությունների մեջ, իր բարոյական աշխարհի մեջ ամրացող մարդու հավատով, իր սիրով ոչ միայն դեպի «մերձավորները», այլև առհասարակ դեպի «հասարակ մարդը»:

«Սիլիհտարի պարտեզները» ուշագրավ է նաև գեղարվեստական արտահայտման սկզբունքներով, ուր համադրվում են քնարական անմիջականությունն ու կենցաղի կոլորիտը, արտահայտման երաժշտական-որիթմական կառուցվածքն ու կերպարների գեղանկարչական «դիմապատկերումը»:

Կյանքի վերջին տարիները Զ. Եսայանը նվիրեց «Բարբա Խաչիկ» վեպին, որը դարձյալ ուներ ինքնակենսագրական հիմք: Վեպը թեև ավարտված է, բայց անմշակ. ոչ թե մանրանկար է, այլ որմնանկար, ինչպես ինքն է դասակարգել յամանակակից վեպի ժանրատեսակը՝ լայն գծեր, ընդարձակ կյանք, հարուստ բնավորություններ:

## 9

Բնականաբար, սոցիալիստական շինարարության ծավալմանը զուգը ընթաց, զարգացման արագություն է վերցնում գեղարվեստական արձակի ամենահրատապ տեսակը՝ ակնարկը:

20-ական թվականներին ծանրության նժարը գյուղի վերափոխությունների մասին պատմող ակնարկի կողմն էր՝ կապված գերազանցորեն Ա. Բակունցի «Գյուղական նամակներ» և «Գավառական նամականի» շարքերի հետ, որոնք տպագրվում էին «Մարտակոչ» և «Խորհրդային Հայաստան» օրաթերթերում:

Գյուղագրական ակնարկագրության մյուս երեսի էջերը արդեն կոլտընտեսային շարժման եւսուզեռին արձագանքող ն. Զարյանի «Երիգաղիրի բլոկնոտից», «Երկաթավոր գարնան համար» և մյուս ակնարկներն էին: Շուտով, երբ շարք են մտնում Հայաստանի արդյունաբերական հսկաները, ծանրության նժարը թեքվում է արդյունաբերական թեմայով ակնարկի կողմը:

Երկիրը շնչում էր աշխատանքային սխրանքներով ու ոռմանտիկական էնտուզիազմով, վերելքի տրամադրությամբ, որը ն. Զարյանը անվանում է «Աղաղակ»՝ այդ պաթոսի հետևյալ բնութագրությամբ.

Բարձրացել է մեր հզոր, անծայր հայրենիքում:  
Վիթիարաթափ մի ալիք, անմար մի աղաղակ:  
Այդ աղաղակն է լսում, այդ աղաղակն է հրգում  
Յուրաքանչյուր գործարան, յուրաքանչյուր քաղաք:

Այդ մի հորձանք է հումքու, մի սիրտ է լեռնացով,  
Մի հաղթական ճուշյուն, ձգված մկանների,  
Տիտանական հույզերի որոտաշունչ մի ծով,  
Մորի խիղախ կայծակներ ու տենչերի մըրիկ:

Այդ կառուցման, վերելքի երգ է շռնդալից,  
Դոմնաների րոց է այդ, մոտորների որոտ,  
Այդ կոմունիզմն է կյանքին մեծ քննություն տալիս՝  
Մետաղական ձայնի մեջ՝ հերսոսական կորով:

«Կառուցման վերելքը» թելագրում է գրողների և կյանքի կապի նոր ձեւեր, նրանց երկարամյա գործուղումները արդյունաբերական վայրերը՝ կամ քրիզադներով, կամ առանձին-առանձին:

Ն. Զարյանն, օրինակ, ինտերնացիոնալ բրիգադի կազմում մեկնում է Դոնբասի մետաղածուլական գործարանները ու քարածխի հանքերը: Հայաստանի շինարարական և արդյունաբերական տեղամասերն են շտապում շատ գրողներ: Պարբերական մամուլում հաճախակի տպագրվում են նրանց ռեպորտաժները Չորագէսի, Քանաքեռգէսի, Երևանի կառուցուկի, Արարատի ցեմենտի գործարանների, Ալավերդու և Ղափանի պղնձահանքերի, Լենինականի տեքստիլ կոմբինատի, երկաթուղային շոգեքարշների մարդկանց աշխատանքային սիրանքների ու բնավորության նոր գծերի ձեւորման մասին: Հրապարակվում է «Չորագէսը գրականության մեջ» ուշագրավ ժողովածում (1934), որտեղ ներբողային բանաստեղծություններից, վիպական հատվածից (Մ. Շահնշանի «Հիդրոցենտրալ») բացի տպագրվում են նաև շինարարության մարդկանց մասին պատմող ակնարկներ:

## 10

Հայ արձակում, սկսած դեռ նրա հինավուրց անցյալից, միշնադարյան առակներից ու զրույցներից, կրոնական ժանրերի (սրբախոսություններ, վարքագրություններ և այլն) ստեղծագործություններից ուժեղ է եղել կյանքի փիլիսոփայական իմաստավորման գիծը՝ մարդու էության ու կոչման, շար ու բարի ուժերի, աշխարհի «կարգ ու կանոնի» և այլն, թեմաներով ու բարոյախոսությամբ:

Խոհական-փիլիսոփայական տեսանկյունը ուրույն կերպարանք առավ ռոմանտիզմի գրականության մեջ, ուր լայնորեն մուծվեցին ժողովրդական ավանդապատումները՝ պատասխան տալու իդեալի և իրականության անհամապատասխանության, մարդու անիրագործելի երազանքների, գեղեցկության մարդկային ձգտման հարցերին:

Եթե միշնադարյան գրականության մեջ պայմանականորեն ասած «փիլիսոփայական արձակը» հենվում էր գերազանցուրեն աստվածաշնչյան-ավետարանական-սրբախոսական սյուժեների վրա, ապա ոռմանտիկական գրականությունը առավելապես դիմում էր բանահյուսական և դիցարանական մոտիվներին, ինչպես նաև արտահայտման սիմվոլիկային:

Բանահյուսական-դիցարանական գիծը շարունակեց նաև նեռոռմանտիզմի գրականությունը, ասպարեզ գալով իբրև աշխարհաճանաշման ուրույն մեկնակետ:

Այս ավանդության հունի մեջ է զարգացել նաև Ավետիք Իսահակյանի գեղարվեստական արձակը:

Արձակի փորձեր Ավ. Իսահակյանը կատարել է դեռ դարավերջին, գրելով արևելյան ոճի իր պատումները («Արևի հետ» և այլն): 900-ական և 10-ական թվականներին ռեալիստական առանձին պատկերներին զուգահեռ Ավ. Իսահակյանը հանդիս է գալիս դիցարանական-աստվածաշնչային և ժողովրդական

բանահյուսության սյուժեներով գրված արձակ լեզենդներով («Ավգուստինոսի տեսիլբը», «Աթիլան և իր սուրբ», «Օմար Խայամի վեճը աստծու հետ», «Անանդան և մահը», «Հրեական առասպեկ» և այլն):

Ոչ միայն արձակ, այլև շափածո լեզենդներին դիմելու պարբերականությունը Ավ. Խսահակյանը բացատրում է ժամրի հնարավորություններով: Նա գրում է. «Մարդկային տեսիլները, ձգտումները առասպելների, լեզենդների մեջ գտնում են իրականացում, բովանդակություն, վարձատրություն: Այն, ինչ չի կարելի աշխարհում նյութապես իրականացնել, իր կենսագործությամբ, ուրեմն, գտնում է երազների, տեսիլների, լեզենդների, առասպելների, պոետիայի մեջ»:

Ավ. Խսահակյան-ստեղծագործողի մեկնաբանությամբ՝ նրա նախընտրած ոլորտը «սովորական, բայց մարդկային գոյությանը մշտապես ուղեկցող կյանքի լեզենդն է, ձգտումների ու երազների այն առօրեականը, որ փոխակերպվելով, նոր բովանդակություն ստանալով հանդերձ, ասես պարպիւմ է ամեն անգամ և նորից տեսականորեն շարունակվում:

...Նրա համար (Ավ. Խսահակյանի—Ս. Ա.) ինչ բնական էր աշխարհում՝ լեզենդային էր միաժամանակ: Սրանով Խսահակյանի լեզենդները անմիջականորեն մերձենում են նրա մյուս երկերին, հատկապես արձակ պոեմներին»<sup>18</sup>:

20-ական թվականների սկզբին նույնպես Ավ. Խսահակյանը մնում է գերազանցորեն լեզենդային տարերքի մեջ, գրելով մի շարք փիլիսոփայական շնչի գործեր («Մասդի վերջին գարունը», «Բուդդան թոշուն», «Ուշինարա», «Լի-Թայ պու»), ինչպես նաև աստվածաշնչյան սյուժեի և քնարական շնչի «Լիլիթ» անգուգական արձակ պոեմը:

1926-ից, վերադարձից հետո Ավ. Խսահակյանը հակվում է դեպի պատումի ռեալիստական ձևը, գրելով այլ ժողովորդների ազատագրական-սոցիալական պայքարին նվիրված նկատմամբ («Զինական մեծ պարիսպի երգը», «Դերնիկայի նվիրական կաղնին», «Նրանք դրոշակ ունին»), ինչպես նաև հայկական շարքը («Հրն գյուղը», «Օջախի ծուխը», «Հովկերգություն», «Համբերանքի շիբուխը» և այլն):

Վերջին շարքը ուշագրավ է ժողովրդական կենցաղի վերին աստիճանի սուր զգացողությամբ և ժողովրդի մարդկանց կերպարների պատկերման հարազատ շնչով: Առհասարակ վճռական նշանակություն տալով գեղարվեստական խոսքի խրատական ուղղությանը, Ավ. Խսահակյանը իր պատմվածքներում, որոնք հիշեցնում են զրոյց-պատգամներ, ժողովրդական հրապարակախոսություն, ժողովրդի մարդկանց կերպարների միջոցով արտահայտում է դարավոր փիլիսոփայությունը՝ արդար աշխատանքի, մարդու բարձր կոչման, բարի գործի մասին: Այս առումով բնորոշ է «Համբերանքի շիբուխը» (1928) պատմվածքը՝ 0հան ամու մոնումենտալ կերպարով: Սա մարդկային գոյի խորհուրդը քննող, «աշխարհի բանը» վերլուծող ժողովրդական իմաստունի կերպար է, որը, ի վերջո, գալիք է այն համոզմունքին, որ «Մարդս էս աշխարհքն է եկել աշխատանքի համար»:

Աշխատանքի, իբրև կեցության արմատի դավանանքը նոր և էական գիծ էր Ավ. Խսահակյանի աշխարհայացքային կոորդինատներում:

Արձակի կարճ ձեռքի՝ լեզենդի, պոեմի, զրոյցի, առակի, հեքիաթի, պատմվածքի վարպետը երկար տարիներ, մինչև կյանքի վերջը, մտորում էր «Ուստա Կարո» պատմա-փիլիսոփայական էպոպեայի շուրջը:

Ղինելով էպոսային-ասքային-ասացողական շնչի գրող, հսահակյանը «Ուստա Կարոյի» հատվածները շարադրել է իրրե ազգային մեծ ասքի առանձին մասեր։

Այդ Ասքի նպատակը, ինչպես Ավ. հսահակյանն է ծրագրած եղել, հայ ժողովրդի պատմության վերջին շրջանի գլխավոր անցքերի վերարտադրությունն է։

«Ուստա Կարոն» սկսելով տասական թվականներից և այնուհետև շարունակ վերադառնալով ձեռագրին, Ավ. հսահակյանը ստեղծել է անգամ մոտավոր ուրվագծերով ավարտված տարբերակ։

«Ուստա Կարոն», ինչպես նշում է Ավ. հսահակյանի արձակի մեկնաբանը, շոնի սովորական, ավանդական իմաստով կառուցվածք, սյուժե, ֆարուշակ. դա «գլխավոր հերոսի ուղերթն է ժողովրդյան ու մարդկային ճակատագրերի միջով, իսկ այդ ուղերթի գերը հանգում է ժողովրդական կյանքի մթնոլորտը, ավելի ստույգ՝ «հայկական ոգին» վերհանելուն»<sup>19</sup>։

Իրրե նախօրինակներ ունենալով «Թոն-Քիշոտը», «Ճիլ Ուենշպիգելը», ասքային շնչի իսահակյանական ստեղծագործությունը ևս հակված է դեպի էպոսային բովանդակությունը՝ ժողովրդական բարքերի բարոյական մեծ շափանիշների, ժողովրդի հոգեբանության գլխավոր գծերի արտահայտման սլաքով։

«Ուստա Կարոն» գեղջկական-հովվական աշխարհի կապ ու կապակցություններով, իրապես, հայ արձակի մեջ հաստատում էր ազգային-ժողովրդական ոգու հայտնությունը, ժողովրդական առանձնահատուկ աշխարհի բարքերի ու սովորությունների մեջ ծրարված էպոսային ապրելակերպի ու վարքագծի տարերքը։

Ուստա Կարոյից բացի, վերստեղծված վիպային իրականության ծանրությունը կրում են միշտ շարք ուրիշ կերպարներ՝ Զառուշը, կապիտան Ղազարը և, իհարկե, գեղջուկների այն լայն համայնքը, որի հետ մշտապես հաղորդակցության մեջ է գլխավոր հերոսը։

Ավ. հսահակյանի արձակի ավանդների յուրովի շարունակությունն է Մ. Արմենի գլխավոր գիրքը՝ «Հեղնար աղբյուրը»։

Մկրտիչ Արմենը (Մկրտիչ Ալեքյան-Հարությունյան) ծնվել է 1906-ին, Ալեքսանդրապոլում (Լենինական), արհեստավորի ընտանիքում։ Վաղ հասակում զրկվելով հորից, Արմենը ճաշակում է որբության լուծը, ապա որոշ ժամանակ (1922—1928 թթ.) անց է կացնում իր ծննդավայրի ամերիկյան «հայախնամ» որբանոցներում։ Կենսագրության այս շրջանի բնորոշ անցքերը հետագայում գրի է առել ինքնակենսագրական հիմք ունեցող «Սկաուտ № 89» վիպակում։



Որբանոցում էլ գրում է բանաստեղծություններ, տպագրում ձեռագիր թերթում: Արդեն 1923-ից Արմենի բանաստեղծությունները տպագրվում են քաղաքային «Բանվոր» թերթում:

1923—25 թթ. Արմենը եռանդով մասնակցում է ծննդավայրի գեղարվեստական կյանքին, գրելով ագիտկաներ, սկետչներ, բանաստեղծություններ և այլն: Լենինականի «Հոկտեմբեր» գրական խմբակը հիմնադրվում է Արմենի ամենագործուն մասնակցությամբ (այս մասին նա պատմում է «Ակունքներ» հուշագրության մեջ, որը տպագրվել է Երկրի IV հատորում, 1971-ին):

Բանաստեղծական ժողովածուները («Շիրկանալ», 1925, Լենինական, «Կոմսոմոլիա», 1926, «Երկաթավորվող երկրի երգեր», 1927, Երևան) տեխնիցիզմի և լեֆտական օգտապաշտության ոգով գրված ոտանավորներ են՝ «Պողպատի գութանի», «Երկաթե ձիու» կարոտի ապրումներով:

Մ. Արմենը առաջնությունը տալիս է «արտադրական կոլորիտին»՝ կունին, շշակին, մեքենային:

1926-ից սկսած շափածոյին զուգահեռ Արմենը հանդես է գալիս նաև արձակ գրվածքներով. «Նորբ» հանդեսում այդ թվականին տպագրվում է նրա առաջին պատմվածքը՝ «Խորտակվող հոգիների փողոցում» խորագրով: Դրան հետևում են «Կոմերիտական պատմվածքների» պրակները (1928—1929) և «Զուբեյիդա» վիպակը:

Պատմվածքները արձագանք գտան մասնավորապես երիտասարդ ընթերցողների շրջանում, սիրո և ամուսնության՝ 20-ական թվականների կենցաղի համար շափազանց դժվարին հոգեբանական-բարոյական խնդիրներ արձարծելու համար:

«Անձնական կյանքի» և «հասարակական պարտի» մկրատը Արմենը լուծում է բավականաշափ հեշտ ուղիներով, անձնական պահանջների խլացման հաշվին:

Գյուղից գալով քաղաք, կոմերիտական հրահանգիչը սիրահարվում է մի աղջկա: Այդ սերը, սակայն, կարճ է տևում: Հրահանգիչը հեռանում է՝ «Գնասրարով, սիրելի Անահիտ, իսկ ես պետք է դիմացի զյուղը հասնեմ»:

Սա է «Խորտակված հոգիների փողոցում» պատմվածքի սյուժետային բովանդակությունը, այն պատմվածքի, որտեղ հոգիների փլուզման դրաման ծայր է առնում աղջկա մեջ եղած «հին հոգեբանությունից»:

Մ. Արմենի պատմվածքների մի մասը («Խանդը» և այլն) արտահայտությունն էին սիրո և ամուսնության վերաբերյալ 20-ական թվականներին տարածված «մի բաժակ զրի» տեսության:

Այդ պատմվածքները իրենց բնույթով նպատակաբանական էին, արտահայտման ձևերով՝ իրատ պայմանական, թեև Արմենը գրում է նաև երիտասարդության կենցաղի որոշ կողմերը ներկայացնող ուելիստական պատմվածքներ («Սաղկավոր շիթը», «Սոնա», «Կարմիր բառակուսին», «Մենավոր մարդկանց մասին»), ինչպես նաև արձակ բանաստեղծություններ՝ «Պատմվածքներերգեր»:

Գյուղական իրականության զարթոնքը ներկայացնող պատումներում հաճախ է Արմենը դիմում հանապարհի և երկաթի խորհրդանշաններին («Երկաթը փակեց սալլի ճանապարհը», «Երկաթը կարող է տակն ու զրա անել ամեն ինչ և հիմքից փոխել աշխարհը» և այլն):

«Երկաթե» քաղաքակրթության առարկայական ձևերին՝ գնացքին, տրամվայի ուղևերին, հանքափորի գործիքին նվիրված ներքողներից զատ, երկաթ-

ճանապարհ խորհրդանշանը նաև փառաբանությունն է այն «երկաթի մարդկանց», որոնք վճռականորեն ոտքի են ելել ընդդեմ «սայլային», «հյուղակային» նահապետականության:

Մ. Արմենը գրում է նաև Հոգեբանական երկեր, ինչպես «Զուբեյիդա» վիպակը, ուր աղբբեզանում վերածննդյան պատմությունը՝ նախապաշտումունքների, դարերով սրբագործված օրենքների դեմ ըմբռուտացումից մինչև իր անհատականության գիտակցությունը, տրված է իրու Հոգեբանական կերպարանափոխություն:

Դեռ գրական մուտքի օրերից Մ. Արմենը աշքի էր ընկնում գեղարվեստական արդիական ձեռի ու ոճի որոնումներով՝ հաղթահարելու, իր համոզմոնքով, ժամանդական ուսալիստական ձեռից միակողմանիությունը:

Որոնման ներքին պահանջը, սակայն, ծայրահեղ կերպեր է ստանում նրա առանձին գրվածքներում՝ բանը հանգեցնելով ոճավորման և ֆորմալիզմի: Այդ գծերով է ընդգծվում «Երևան» վեպը, ուր «արևմտյան» և «արևելյան» ոճերի, հին Երևանի՝ շայխանաների, բաղնիքների, մզկիթների, ուղտերի քարավանների Երևանի և նոր, կոնստրուկտիվիստական ճարտարապետության սկզբունքներով վերակառուցվող Երևանի «հանդիպումը» տրվում է ոչ թե իրական բախումների, այլ գլխավոր հերոսի՝ ճարտարապետ Արմեն Բուգալյանի երազի ու հալլուցինացիայի պայմանական միջոցներով:

Իրականության փաստերը տեղադրելով հերոսի ներքնազգացողությունների մեջ, Արմենը հորինում է ներքին հարստությունից, կենդանի գծերից զրկված, «շիմաստավորված» մի իրականություն:

Քննադատության մեջ (Խ. Սարգսյանի գրախոսության) ճիշտ է նկատված, որ «Երևան» վեպում Արմենը «ուրվականացնում է» իրականը և ընդհակառակը, հաստատում է իրականությունից վեր կանգնած «գերռեալը»<sup>20</sup>:

Սոցիալիստական քաղաքի «սինթեզի» ֆորմալիստական-սուբյեկտիվիստական փորձը Արմենը պաշտպանում է նաև տեսականորեն, գրելով «Խնայեն գրվում վեպերը» հոդվածը, ուր հետևողականորեն զարգացնում է զրական ստեղծագործության ենթագիտակցական հիմունքների և ազդակների միտքը:

Արդեն 20-ական թվականներին Մ. Արմենի հետ հույսեր է կապում Ե. Զարենցը, նրա մեջ տեսնելով որոնող, նոր խոսք ասելու պատրաստվող գրողին:

Հետագայում նույնպես Զարենցը գնահատում է Արմենին: «Մեր երիտասարդ գրողներից ես ամենից շատ սիրում և հավատում եմ Արմենին», — գրում է 1934-ին, օրագրում<sup>21</sup>:

Իսկ 1933-ին գրել էր իր հայտնի Զոեր՝

Դու մեր մեջ ամենից կրտսերն ես,  
Եվ մսիսի վրա մեր անցյալի  
Ուսմանում է քո մեջ ապագայի սերմը՝  
Մեր դպրության գոլիքը պանծալի:

30-ական թվականների սկզբին քննադատությունը շատ է զբաղվում «Արմենի պրոբլեմով»: Քննադատության ալիքի մեջ են ընկնում ոչ միայն «Երևան» էպոպեան, այլև նրա մի շարք սիմալ դատողությունները գրականության առարկայի ու խնդիրների մասին: Հոդվածներում Արմենը արվեստի դասակարգայնության դրույթին մոտենում է նեղ-ուտիշիտարիստական հրահանգների սպով, բացասելով գրականության գեղագիտական հաճույքի կոշումը, այս վերջինը

շփոթելով՝ ինքնանպատակ էսթետիզմի հետ։ Զնայած ծայրահեղություններին, Արմենի դատողությունների «ուսցիոնալ հատիկը» մարդու հասարակական և անհատական հոգեբանության, նրա սոցիալական միջավայրի ու անհատական կյանքի սինթեզը գտնելու պահանջն էր։ «Բետոնի և վարդենու, տուֆի և բարդենու սինթեզը» (Արմենի խոսքերն են) գրողին հանում է «մաքուր զգացմունքների» շրջանակներից՝ դեպի սոցիալիստական շինարարության առօրյան։ «Երևան», «Երեք սիրավեպ», «Քաղաքը բլուրի վրա» երկերից հետո նա հանդես է գալիս նոր ակնարկներով ու պատմվածքներով, որոնք լույս են տեսնում «Գագաթների երգը» ժողովածուում (1933)։ Այս ժողովածուի բնորոշ մոտիվը՝ կյանքի նոր ձևերի հաստատման համար ոտքի ելած մարդկանց խանդավագու աշխատանքն է, որի ստեղծարար հորձանքի առաջ, թեև դժվարությամբ ու ցավագին գալարումներով, նահանջում է նախկին պրովինցիան։ Պրովինցիալ ոռմանտիկայի մայրամուտի թեման արծարծվում է Արմենի շատ պատմըվածքներում, դրանց մեջ առավել հետաքրքրականը «Գագաթների երգը» և «Երգ քաղաքի մասին» գործերն են։

Առաջին պատմվածքը նվիրված է հին Դյումրու ուրույն ռումանտիկային սիրահարված բոստանչի հսպիրի մտորումներին։ Իր կյանքի մեծագույն մասը հսպիրն անց է կացրել բարդիներով ու ուսիներով շրջապատված իր բոստանում, վայելել նրա բարիքները, ճաշակել նրա անդորրն ու գեղեցկությունը։ Ուրախ է անցել նրա կյանքը, սակայն միշտ էլ «մի տիսուր քող է եղել նրա բոլոր ուրախությունների վրա»։ Հողապաշտ մարդը, կյանքի մայրամուտին, ամեն անգամ աշխատանքից հետո նստել է իր բոստանի հողիկում և երազել իրեն տանջող հարցի շուրջը։ Երազել է ըմբռնել «հողի իմաստությունը», բացատրել նրա գաղտնիքները, որից հետո «գոհ սրտով կթոշնի իր բոստանը»։ Սեփականության անեղծությանը նախանձախնդիր բոստանչին շուտով հրավիրվում է աշխատանքի՝ սովխոզում, որի անհամար մարգերի մեջ կորչում են նրա բոստանի փոքրաթիվ մարգերը։ «Իր փոքրիկ բոստանից այդ մեծ բոստանն ընկած հսպիրն իրեն զգում էր ոչ թե մեծ բոստանների, այլ մի փոքրիկ մարգում»։ Նա այլևս ապրում է երկակի կյանքով։ Հողի իմաստությունը, իր բոստանի հոլիկը, ավանդական կյանքի ձևերը նրա հոգեբանության մեջ այնքան խոր արմատներ են գցել, որ նա չի կարողանում հաշտվել համայնական կյանքի հետ։ Հոգեկան երկվությունը հաղթահարելու ճանապարհը բոստանչի հսպիրը համարում է վերադարձ դեպի իր նախկին կյանքը՝ անձուկ, բայց հարազատացած կյանք։ Նա, սակայն, «չի կարողանում գտնել ճանապարհը դեպի հետ»։ Բակոնցի «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքի անանուն հերոսի տարբերակն է Արմենի բոստանչին, հինը կարոտող, հինը անրջող մի մարդ։ Առուցինի ֆիղիկական անէացումն է հիշեցնում բոստանչու փախուստը, ապա մոլորվելը գիշերային խավարում։ Առաջինը պարտվում է նորի դեմ մղած գոտեմարտում, Արմենի հերոսն էլ է պարտվում՝ այն տարբերությամբ, որ սա միանում է հաղթողներին՝ նվաճելու նոր կյանքի գագաթները։ Բակոնցի հերոսի հողետեսությանն այստեղ փոխարինում է ժողովրդական մարդու առողջ ըմբռնումը։ սրանով էլ պայմանավորվում է երկու հերոսների ճակատագրերի զանազանությունը։

«Երգ քաղաքի մասին» պատմվածքում գավառական քաղաքի արմատական կերպարանափոխության համար մեջ բերված կառքի ու զնացքի, միահարկ տների ու բազմահարկ շենքերի, այլևս լորդանշանների միջոցով դարձ-

յալ հոշակվում է նորի հաղթանակը հնության դեմ, ցուցադրվում է պրովինցիայի խոռնապահար նահանջը նորի հաղթական ընթացքի առջև:

1935 թվականին լույս տեսավ Արմենի լավագույն ստեղծագործությունը և առհասարակ հայ արձակի ընտիր էջերից մեկը՝ «Հեղնար աղբյուրը»: Վիպակը չերմ ընդունելություն գտավ ընթերցողների շրջանում, տարամերժ գնահատականների արժանացավ քննադատության մեջ:

Բացասող գնահատականների խտացումը հանդիսացավ նաիրի Զարյանի «Փայլուն սրախաղություն», բայց ոչ բուն ճակատամարտ» հոդվածը<sup>22</sup>:

«Հեղնար աղբյուրը» ուղիղ գծով կապելով «Երեանի» հետ, հոդվածագիրը վիպակում տեսնում է սոսկ «ֆորմալիզմի քմահանույք», «նահապետական իդիլլայի ատիլիզացիա», կյանքի ճշմարտության աղավաղում, նատուրալիզմի և ֆորմալիզմի՝ նույն երևույթի «շիտակ և թարս երեսների խառնուրդ» և ուրիշ ոչինչ:

Ճշմարտությունը նրանց կողմն էր, ովքեր վիպակի գնահատությանը շմուտեցան սոցիոլոգիական շափ ու կշեռքով և, մոռացության շտալով նրա սյուժետային որոշ ճեղքածքները, այն գնահատեցին իբրև գրական իւկական երեւլույթ: Ճշմարիտ էր ընդհանուր եղանակացությունը, թի «Հեղնար աղբյուրը» ստեղծագործական լայն ճանապարհ դուրս գալու նշանաձող է Արմենի գրական կենսագրության մեջ:

Ի՞նչ աշխարհ էր բացում Արմենը ընթերցողի առաջ, ի՞նչ հարցեր էր արծարծում, արվեստի ինչպիսի ուժով էր բարձրացնում դրանք: «Հեղնար աղբյուրը» գրքի ճակատին Արմենը գրել է «Ամենասիրելի վարպետ Ավետիք Խսահակյանին» ընծայականը: Սա երախտագիտության սովորական տուրք չէր, այլ խորիմաստ մի ակնարկ ազգակցական այն կատակի մասին, որ գոյություն ուներ Ավ. Խսահակյանի ստեղծագործության և «Հեղնարի...» միջև: Բանաստեղծական և միաժամանակ ողբերգական, լիրիկական և էպիկական այն փարթամ կոլորիտը, որ Շիրակի նյութի վրա բացահայտեց Խսահակյանը, — հանդիսանում է նաև Արմենի գրվածքի մեկնակետը:

«Հեղնար աղբյուրը» անդրադանում է ավանդական Գյումրու պլեբեյական խապի՝ արհեստավորության կյանքն ու կենցաղը, այդ խապի «սրբագործածք» ըմբռնումները աշխատանքի ու մարդու կոշման, պատավի ու մարդկային առաքինությունների, սիրո և ընտանիքի մասին:

Վիպակը բացվում է Ուստա Մկրտիչ՝ գլխավոր հերոսի, մահվան նկարագրությամբ. «Լենինականի հին թաղերից մեկում՝ Զորի Բողազում, որն ամենայն իրավամբ դեռ կարող էր կրել Գյումրի անոնմը, իր փոքրիկ տան մեջ մեռնում էր աղբյուրների հոշակավոր վարպետ Ուստա Մկրտիչը:

Թեև նա արդեն վաթսունհինգ տարեկան էր, բայց ծերությունը չէր նրա մեռնելու պատճառը, որովհետև նա դեռ ամրակազմ էր և առողջ: Այնքան ամրակազմ էր նա և այնքան առողջ, որ թվում էր, թե ահա վեր կկենա, կհագնի իր ավանդական արխալուղը, կդնի իր ավանդական շափիան և, մի անգամ շփնով իր պայծառ ճակատը, դուրս բաց կանի և նորից դուրս կգնա զեպի աշխարհ: Սակայն նա պատկել էր և մեռնում էր մահապարտի անխուսափելի և անհետածելի մահով: Նա մեռնում էր, որովհետև հաւել էր իր նպատակին որովհետև վերջացրել էր իր հաշիվներն աշխարհի հետ: Նա դրսում այլևս ոչինչ չուներ անելու: Իր վարպետության ողջ քառասուն տարիների ընթացքում նա միշտ այդպես էլ համոզված էր, որ երբ ավարտի իր քառասուներորդ աղբյուրը՝ պիտի մեռնի»:

Ուստա Մկրտիչը՝ էպիկական մոնումենտալ մի կերպար, իր մեջ ամբարում է ժողովրդի իմաստությունը, նրա բարձր խոհը մարդու կյանքում աշխատանքի գերի մասին, ժողովրդի բանաստեղծական ոպին, կենսասիրության ծարավը: Ուստա Մկրտիչը քառասուն տարում կառուցել է, քառասուն աղբյուր, — քառասուն շահ՝ անապական աղբյուր է թողել իր կյանքի ճանապարհին: Կյանքի մայրամուտին Ուստան նորից նոր վերնիշում է իր կառուցած բոլոր աղբյուրները, նորից նոր մտորում է աղբյուրի նման հոսող կյանքի մասին, և իր բազում իմաստություններին գումարում ևս մեկը. «Իսկ հետո թվաց, թե այնտեղ հոսողը բոլորովին էլ իր կյանքը չեր, այլ երկրի արյունն էր, որ նշանակված էր նրա զավակների երակները կյանք լցնելու համար, իսկ ինքը, Ուստա Մկրտիչը, մի սովորական գյումրեցի էր, որին, սակայն, վիճակված էր եղել բաց անել իր երկրի քառասուն աղբյուրները իր ժամանակակիցների համար, իր երկրացիների համար»:

Եվ նա գոնի էր այդ մեծ, այդ բարձր պատվից...»:

Ուստան կարուտով է նայում հեռացող աշխարհին, բայց այդ կարուտը չի վերածվում անհույս գալարումների ու զղածգումների՝ մահվան առաջ, որովհետեւ նա չի ապրել անիմաստ: Իր հարուստ, բովանդակալից, օգտաշահ կյանքով նա նախապատրաստել է նույնքան բովանդակալից ժահ՝ անմահությունը:

Մահը առեղծված չի դարձնում, նրան միստիկական սարսափներ չի վերագրում ոչ միայն Ուստա Մկրտիչը. այդպես է մտածում նրա շրջապատը, այդպես խաղաղ ու անվրդով հն նայում իրականությանը Ուստայի ընկերները՝ արհեստավորական դասի ներկայացուցիչները:

«Մարդու մեջ մե բանըմ կա, որ իրան հետ չպիտի մեռնի, որ մարդու մեռնելեն ետք պիտի փրկըլի: Կուզեք հոգի ըսեք էդոր անուն, կուզեք՝ գործ, կուզեք—շունչ: Ըշտը ես ախպուրս կշինեմ էդ մե բանի փրկության համար...»:

Իրենց կյանքի դրամատիկ պահերին հաճախ աստծո «հեղինակությանը» գիմող և նրա «զորության» ապավինող Ուստան և իր «ախպեր» ընկերները «Շոգուց» ավելի գերադասում են գործի ու անվան անմահությունը: «Ինչքան որ մեր ճակատին քրտինք կար, տվինք աշխարհին», — ոգենորված ասում են արհեստավորները, ձևակերպելով իրենց գոյության իրավունքը, իրենց կոլումը: Աշխատանքի մեծարման գաղափարական մոտիվը իր բարձրակետին է հասնում խնջույքի՝ բարձր արվեստով գրված տեսարանում: «Բացակա Ուստա Մկրտչին հատկացրին ամենալավ տեղը՝ սփուցի գլխին՝ ծառի բնի տակ: Նրա կողքերին նստեցին Օնեսն ու Կարոն, սփուցի մի կողմում՝ Բագրատն ու Սարգիսը, մյուս կողմում՝ Ավետիքն ու Աղասին, շարեցին յոթ բաժակ, օդի լրցրեցին»:

Ավանդական սովորությամբ բաժակները խփելով բացակա Ուստայի բաժակին, նրանցից յուրաքանչյուրը դառնում է աշխատանքի բանաստեղծ, յարաքանչյուրն իր բնածին խոհով «իմաստավորում» է կյանքի անկյունաքարը՝ աշխատանքը: Ահա դրանցից միայն մեկի մաղթանք-դատողությունը. «Գործըդ արծըթե քառոսն ախպար եղավ, Ուստա: Վով անցավ՝ էնոնց շուրը խմեց, ում տղեն անցավ՝ էնոնց շուրը խմեց, ում թոռն անցավ՝ էնոնց շուրը խմեց: Ում ծոռն անցնի՝ էնոնց շուրը պիտի խմե: Ամենքը կանցնին, գործդ չի անցնի, Ուստա...»:

Այսպիսով, Արմենի հերոսները աշխատանքի մեծարման ճանապարհով են գիտակցում աշխարհը, իրականությունը, կյանքը, աշխատանքով են լավատեսուազնիվ, հպարտ ու մարդասեր, լայնախոն ու բարեսիրտ:

Արմենը, սակայն, չի կանգնում անցյալ կյանքի բանաստեղծական այս կողմերի վրա. նա չի հասարակացնում իրականությունը: Բանաստեղծական հույզերով, բարձր արժեքներով առատ նույն աշխարհը հայտնաբերում է նաև ուրիշ հատկություններ, իր յուրահատուկ դրամաներն ու ցնցումները: Այս վերջինները նույնպես կապված են նահապետական աշխարհի «սրբագործած» օրենքների, նրա ավանդական նորմաների, մարդկային հոգեբանությունների, նրա յուրահատուկ արժեվորումների հետ: Ուստա Մկրտիչի կյանքը՝ էպիկական, հարուստ կյանք, — չի անցել այնպիս, «անվրդով» ու հանգիստ, իր կառուցած աղբյուրների պես անապական ու վճիտ, ինչպես «ներկայանում» է նա իր կյանքի մայրամուտին: Ուստա Մկրտիչը ամուր կառչիլ է սերնդե-սերունդ անցած բարոյական այն ըմբռնումներին, որոնց համաձայն «պսակը սուրբ է», վերուստ սահմանված, անքակտելի, նրա դեմ ուղղված ամեն մի հարված՝ խիստ պատժի արժանի հանցանք:

Նույն կերպ է մտածում Գյումրու հայ, թուրք և հույն ամրող գեմոկրատական խավը, որը ի դիմս աղբյուրների հոչակավոր վարպետ Ուստա Մկրտիչի, տեսնում է իր բարոյական ավանդությունների շերմեռանդ պաշտպանին: Բայց կատարվում է անոպասելին. այն մարդը, որ համաքաղաքացիների մեջ վայելում է ամենամեծ հարգանքը իր դավանած բարոյական ըմբռնումների կայունության համար, ահա այդ մարդը՝ Մկրտիչը, ստանում է ամենածանր հարվածը:

Հեղնարը, թրբունու անվան տակ, քաղաքի թուրքական թաղամասում, ծպտված տեսակցություններ է ունենում ակնավաճառի որդի Վարոսի հետ «Թրբունու վրա «սեր է գցում» նաև բոստանչի երանոսը: Ստեղծվում է դրամատիկական մի ժանր փոխհարաբերություն, նահապետական կյանքի բնորոշ դրամաներից մեկը՝ իր նույնքան բնորոշ ողբերգական վախճանով: Վիպակի մեր նշած պրոբլեմատիկային (աշխատանքի փիլիսոփայությանը) զուգահեռ ծալվալվում է մարդու անհատականության, զգացմունքի ազատության թեման երանոսը՝ հողի հետ մերձավորություն ստեղծած, հողապաշտ ու ազնիվ, լայնախոհ այդ մարդը դառնում է «սիրո» առաջին զոհը: Երանոսը սիրահարվում է «այլադավան» կնոջ՝ նրան ներշնչել են, որ դա «մեղք է» աստծո դեմ: Նա փորձում է օգնություն ստանալ Ուստայից, որը, սակայն, անհաղորդ է մնում նրա առապանքին: Երանոսի՝ նահապետական միջավայրում դաստիարակված մարդու, ըմբռնումների մեջ սերը խոր ճեղքվածք է բացում. «...Ընտանիքի պատիվը սուրբ է... Հմը սերն էլ է սուրբ... Պ՞ըն է ավելի սուրբ՝ ասպած գիտե... Վով ընտանիքի համար իրեն սերը սպանե՝ իրեն կըսպանե... Տա ասպած, որ ամեն տեղ ընտանիքն ու սերն իրար բռնեն...»: Տառապանքի մեջ այսպիսի եղրակացության է գալիս երանոսը: Միրո և ընտանիքի ներդաշնակության, տղամարդու և կնոջ համերաշխության («...տղամարդն ընտանիքի սունն է, իսկ կնիքը՝ երդիկը») գիտակցման ընթացքի մեջ անգամ երանոսը չի կարողանում ճնշել իր բնական մղումները և Ուստայի հարկի տակ Հեղնարին շատել գաղտնիքը բացող ճակատագրական խոսքը. «կենացդ, բաշի...»:

«Մի ուժեղ ճիշ խոռվեց սեղանի խաղաղությունը:

Ուստան նետվեց դեպի կինը»:

Հեղնարը թեև իր ամբողջ էությամբ, ինքնամոռացության աստիճան նվիրված է Վարոսին (վկա՝ Հարիբայի տան տեսակցությունները), սակայն նա լավ գիտե, որ իր արածը «մեղք է» վերուստ սահմանված օրինականության դեմ, որ ինքը՝ «գաղտնիքը բացվելու դեպքում, ենթարկվելու է հասարակա-

կան ահեղ դատաստանին, Հեղնարի և Վարոսի գաղտնի սերը ուղղված էր հասարակական հենց այդ նախապաշարմունքների, նահապետականության «ուկեզօծված» նորմաների դեմ. ինչպես Երանուսը, Հեղնարն ու Վարոսը նույնպես, իրենց մեջ կրում են մարդու անհատականությունը սահմանափակող միջավայրի դեմ ուղղված բացասական լիցբը:

Սակայն, ինչպես դիպուկ նկատված է «Հեղնար աղբյուրին» նվիրված քըն-նադատական առաջին հոդվածներից մեկում, Հեղնարը «մեղքում է կնոջ հնագանդության դարավոր օրենքը, բայց ոչ իրուն իրավունք, այլ իրուն մեղքը<sup>23</sup>:

Հեղնարի գործած «Հանցանքը» նրան տանում է դեպի անխուսափելի կործանում. դեպքից ցնցված ու խումապահար բնակիչները Հեղնարին տեսնում են անշնչացած՝ հատակին ընկած: «Ահեղ դատաստանից» լի խուսափում նաև Վարոսը: Նա բռնում է Երուսաղեմի ճանապարհ՝ քավելու իր «մեղքը», թողություն խնդրելու:

Արմենի վիպակում ծայրեծայր, հաջորդաբար հոլովկում է աղբյուրի պատկերը: Վերջին անգամ աղբյուրը հանդես է գալիս «Հրաշքի» կերպարանքով. Ուստա Մկրտիչը կառուցում է վերջին, քառասունմեկերորդ աղբյուրը՝ նրա ճակատը զարդարելով «ամեն մի կնիկ իրան մարդու ախպուրն է, ուրիշ մեկը իրավունք չունի խմելու էնոր զրեն» խոսքով:

«Հրաշք-աղբյուրը» ցամաքում է անմիջապես, երբ նրան է մոտենում որևէ անցորդ: «Աղբյուրին մոտեցան և հերթով պավան իշան Հեղնարի եղբայրը, ընկերուհին, ազգականները... Սակայն վայրկենապես ցամաքած խողովակի վերևից օրենքն ասում էր նրանց, որ ամուսնացած կնոջ տերն այլևս նրա ամուսինն է, և նրա վրա իրավունք չունի նույնիսկ ծնող մայրը, նույնիսկ ծղբայրը...»:

Իր նկարագրած աշխարհի հանդեպ գրողի վերաբերմունքը պարզվում է վերջաբանից. տարիներ հետո Հեղնարի գերիշմանին է դարձել Վարոսը: Նրա համար այլևս պարզվել է, որ «Հեղնար աղբյուրի» հրաշքը կապված է մի հասարակ մեխանիզմի հետ, որ այդ «Հրաշքը» ոչ թե բնության մեջ է, այլ մարդկանց «հավերժացրած» ու «սրբագործած» օրհնքների, նրանց երեակայության մեջ: «Ըսել է՝ սո՞ւտ էր ամեն ինչ, —սաղ քաղաքն ավատաց, սաղ քաղաքն ինձի ու Հեղնարին մեղքեց: Սերը պապանձվակ», —մտորում է ինքն իրեն Վարոսը, և բղավում ամբողջ ձայնով. «Յա... ըպը կյանքըս ընչի՞ անցավ»: Վարոսի այս խոսքը, անշուշտ, գայրացած գանգատ էր նախապաշարումներով շնչող, մարդկային զգացմունքի ազատությունը՝ սահմանափակող միջավայրի դեմ:

Անվերծանելի, «շղարշով պարուրված», հանելուկային է համարվել Արմենի վերաբերմունքը՝ իր նկարագրած միջավայրի և իր կերպարների հանդեպ: Այսվել է, թե անորոշ է մնացել գրողի համակրանքը: Բանն այն է, որ Արմենը, ցուցադրելով անցած իրականության մի բեկորը, նրա մեջ արժեվորում է բոլոր դրական կողմերը՝ ոչ միայն արհեստավորների կենսափրությունն ու աշխատանքի ծարավը, այլև երանուի, Հեղնարի ու Վարոսի հոգեկան արժեքները՝ միջավայրի ստեղծած նախապաշարումների դեմ ուղղված գոտեմարտը հանուն անհատականության հաստատման:

«Հեղնար աղբյուրը» արվեստի բարձր գործ է, նուրբ ու ավարտված: Երկը գրված է բանաստեղծական հարուստ ոիթմերով, բառի օգտագործման հաղվագյուտ զգացումով, երևույթների խոր ընկալումներով:

Հին Գյումրու կոլորիտը, մարդկանց առօրյա կենցաղը, սովորությունները, նրանց ուրույն հայացքները լուսաբանված են գրական ինքնատիպ միջոցներով։ Արմենի նկարագրությունները (Գյումրու առավոտը, ինչույքի տեսարանը, թուրքական թաղամասը և այլն) փայլում են պլաստիկ քանդակայնությամբ ու գոմագեղությամբ։

Այս հաջողության մեջ, անկասկած, արտահայտվել է Արմենի՝ հին Գյումրու կյանքի իմացությունը, որ սկսած վաղ մանկությունից նստվածք է տվել նրա գիտակցության մեջ և, բյուրեղանալով, դարձել արվեստի անթառամ արժեք։

Արմենը արգասավոր արձակագիր է։ Նրա գրական վաստակի ուշագրավ փաստերից մեկն է «Սկառուս № 89» (1933) և «Առաջին պատկումները» (1935) պատանեկան վիպակների հայտնությունը (1954-ին դրանք միացան մի շապիկի տակ՝ «Կարմիր և կապույտ փողկապներ» անունով)։

Այդ վիպակների նյութը 20-ական թվականները սկառուտանոց-որբանոցների կյանքն է՝ հայ որբերի ճակատագիրը, սկառուտական դաստիարակության և բարքերի (հետանդություն, ստրկամտություն և այլն) մերկացումը։

Սկառուտական միջավայրի որբերի տառապանքի ու վշտերի կողքին, «ինամակալների» բարեպաշտությանն ու անտարբեր վարքագիրն զուգահեռ Արմենը ներկայացնում է նաև պատկումական շարժման ծավալման ընթացքը, այդ ընթացքն էլ դիտելով իբրև մարդկային արժանապատվության արթնացման երեւութ։

Մ. Արմենի գրիւշ բեղմնավոր եղավ 50—60-ական թվականներին, երբ տևական դադարից հետո նա նորից հայտնվեց գրական ասպարեզում։

Ուրալի ծայրը հյուսիսում գտնվող Յասվա գետի ափին ապրող մարդկանց և բնության մասին է պատմում «Յասվա» վիպակը (1953), ուր Արմենը նկատելի հաջողությունների է հասել հյուսիսային բնությունը նկարագրելիս, անտառահատման աշխատանքի շարշարանքները ցուցադրելիս։ Արմենը ստեղծել է մի շարք գեղարվեստական վառ կերպարներ, ինչպես «Ուրալյան գեղեցկութիւն»՝ Անտոնինան, ինչպես շրջկոմի քարտուղար Յարկինը, որուս հասարակ մարդիկ և այլն։

«Յասվայից» հետո տպագրվեցին «Պատվիրեցին հանձնել ձեզ» ժողովածուն (ուր կան մի շարք ուժեղ պատումներ) և «Ժիրայր Գլենց» երկգիրք վիպակը, որոնց նյութը հյուսիսային ճամբարների մարդկանց առօրյան է, ինչպես նաև «Ռակե Հնձան» (1957) գրվածքը՝ Արարատյան դաշտի թանձր կոլորիտով և «Գույնզգույն թագավորություն» հեքիաթ-վիպակը։

Մ. Արմենը հաճախ պարբերական մամուլում հանդես է եկել քննադատական-տեսական հոդվածներով՝ գրականության, քաղաքաշինության, գրականագիտական խնդիրների շուրջը։

Մահվանից առաջ նա ավարտել էր «Հոկտեմբեր-նոյեմբեր» գրական խմբակցությունների վավերագրական պատումը («Գլխավոր հոմնով»), որից միայն առանձին հոդվածներ են տպագրվել գրական մամուլում։

քառման ճյուղերով, «արգելված գոտի էր» ամբողջ սովետական գրականության համար: Լավագույն դեպքում խրախուսվում էին Ռուսաստանի, գյուղացիական-հակածորտատիրական խոռվությունները (Ստեպան Ռազինի, Եմելյան Պուգաչի շարժումները), իսկ պատմական հնության մեջ ու հարուստ շերտերը համարվում էին յուրահատուկ տարու՝ լսության ուժեղ փականքով:

Հայ գրականությունը, որ *XIX* դարի ազատագրական հույսերի թելադրությամբ, ստեղծել էր պատմավեպի հարուստ ավանդներ՝ ի դեմս Բաֆֆու, Շերենցի, Մուրացանի հայտնի գրվածքների, Պոկրովսկու դպրոցի և այլ ազգեցություններով կազմ է ժամանակների կապը ներկայի և անցյալի միջև:

Այդ և հետագա թվականներին ասպարեզ են գալիս պատմական լեգենդների մշակումներ, ինչպես, օրինակ, Սիրասի ավանդապատումները («Մամեն ու Աշեն» և այլն), որոնք աշքի էին ընկնում ոռմանտիկական հայտնի սիրավեպերի «հանգույցների» վիպանման լուծումներով և արտահայտչության կեղծ արդուզարդով:

Բնական է, որ «արգելված գոտին» չէր կարող երկար ժամանակ մնալ այդ վիճակում. արդեն երեսնական թվականներին արձակում ևս, ինչպես պոեզիայում և դրամատորգիայում, հայտնվում են հայոց պատմության փիլիսոփայական իմաստավորումներ, ինչպես Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանց» յուրօրինակ ասքը և Ա. Բակունցի «Խաչատուր Արովյան» վեպը՝ տպագրված երեք հատվածներով:

Երբ Բակունցը գրում էր «Խաչատուր Արովյան» վեպը, արովյանագիտությունը դեռ չէր «լիցքաթափկել» հարյուրամյա հնություն ունեցող այն առասպեկներից, որոնք հայ լուսավորական շարժման մեծագույն ռահվիրային ներկայացնում էին ոչ թե իր գործի պատմական վիթխարի նշանակությամբ:

Բակունցը ոչ միայն նոր մեկնաբանություն տվեց ազգային զարթոնքի մեծագույն ազգարարի գործին՝ նրա կերպարի վրայից դեռ նետելով հակագիտական, «նեղ-դասակարգային» լուսաբանությունների թանձր շերտը, այլև, ի տարրերություն *XIX* դարի ոռուանտիկական պատմավեպի դաշտած սկզբունքների, հայ գրականության մեջ արմատավորեց անցյալ ժամանակաշրջանների պատմական դեպքերի ու պատմական անձնավորությունների գեղարվեստական յուրացման նոր սկզբունքներ:

Բակունցը պատմական վեպ գրելուն ձեռնամուխ եղավ այն շրջանում՝ 30-ական թվականների սկզբին, երբ սովետական հասարակության գիտակցության մեջ, ճիշտ է, ցալվագին և դժվարին վերակրումներով, հաճախ ոչ հիմնական ուղիներով, այլ թևանցիկ նրաշավիղներով, որոնվում էին ժողովուրդների ներկան ու ապագան նրանց անցած անապարհի հետ կապող գլխավոր հանգույցները: Դա նշանակում էր հաղթահարել պատմության անշարժության կամ «կտրուկ» սահմանազատման գոհհիկ ու ոչ պատմական հայացքը, որ լայն շրջանառություն ուներ հեղափոխությանը հաջորդած առաջին տասնամյակում:

Ժողովուրդների կյանքում վերստին արթնանում էր ռապտմության զգացմունքը, այն հզոր ճառագայթը, որը ցրելով ժամանակների հեռավորության թանձր մշուշը՝ լուսավորելու էր պատմական զարգացման շղթայի գլխավոր հանգույցները: Այդ տարիներին, մասնավորապես գիտական շրջաններում, զգաստ վերաբերմունք է մշակվում գոհհիկ-սոցիոլոգիական կոնցեպցիաների ու պատմագիտական ժուռ սիեմաների հանդեպ: «Տեսու սով Շառոց»-ի շըրջանի՝ 20-ական թվականների մոլեգնության շափ ժայրահեղ բացասումների

փշալարերի միջով ժողովուրդները քննական հայացք են նետում իրենց անցյալին՝ արքաների ու տիրապետող դաստիարակերի պատմությունից զատ առանձնացնելով հասարակության առաջադիմական ուժերի՝ ժողովրդական լայն զանգվածների պատմությունը:

Նոր դարաշրջանի պատմությունը թելադրում էր զուգահեռներ որոնել անցյալ դարաշրջաններում, որպեսզի հաստատվեր մարդկության պատմության մեջ հեղափոխության պատմական անխուսափելիությունը, պրոցեսի անընդհատությունը, շարժման ընթացքը: Հետաքրքրական է նաև այսպիսի մի երեսով. այդ տարիներին զգալիորեն ընդարձակվում է «պատմություն» հասկացողությունը: «Պատմության» մեջ են դիտվում ոչ միայն պալատական հեղաշրջումներն ու պատերազմները, ազատագրական կոիլներն ու դիվանագիտական բանակցությունները, այլև ժողովրդի քաղաքական ու սոցիալական հոգեբանության, նրա կուլտուրական զարթոնքի հարցերը:

Հասարակական ինքնագիտակցության զարգացման ու հայրենասիրական ձգումների սրման հիմքի վրա էլ սովետական գրականության դաշտում խոր ակոսներ է գծում պատմական թեման: Կատարի ունենալով նոր երևոյթը, Մաքսիմ Գորկին 30-ական թվականներին արդեն գրում է. «Մեզանում, ի միջի այլոց, ստեղծվեց թվական և բարձրարժեք պատմական վեպ... որպիսին չի ճանաչել մինչհեղափոխական գրականությունը: Անցյալում, հին գրականության մեջ, եղել են Զագոսկինի, Մոսալսկու, Լաշեմնիկովի, Ա. Կ. Տոլստոյի, Վսեվոլոդ Սոլովյովի քաղցր-մեղցր, էժանագին երկերը և էլի ինչ-որ բան, նույնքան անարժեք ու նույնքան անհետաքրքիր»<sup>24</sup>:

Հայ գրականությունը նույնպես, իրեն փոքր ժողովրդի գրականություն, սուր պահանջ է զգում դառնալու ժողովրդի երթուղիներին՝ գեղարվեստական պատկերով արտահայտելու սոցիալիզմի առաջ բերած կենսաձևի փոփոխությունները և քննելու հեղափոխությանն ապավինած ժողովրդի պատմական մաքառման ուղիները:

## 12

Եթե շհաշվենք եղիշե Զարենցի «Երկիր Նաիրի» «այլակերպ» երկը, ապա 20-ական թվականների հայ գեղարվեստական արձակը հիմնականում զարգանում էր կարճ ձեերի՝ պատմվածքի, պատկերի, նոթագրության, ակնարկի ժանրային սահմանագծերի մեջ:

Տասնամյակի վերջում արդեն և երեսնական թվականներին միայն զարգանում է էպիկական լայն կտավը՝ հասարակական կյանքի պատմական խոշոր մասշտաբները արտացոլելու հասունացած պահանջի թելադրությամբ:

Նույն տարիներին տեսության մեջ ամբողջ սրությամբ դրվում է ժողովրդի անցած պատմական ճանապարհի արտահայտման՝ «մոնումենտալ ձեւվերի» պահանջը: Այդ մոմենտն են ընդգծում 1930 թ. «Գրական դիրքերում» ամսագրի հարցաթերթիկին պատասխանած գրողներն ու քննադատները: Այդ պահանջն էր ընդգծում Դ. Դեմիրճյանը իր «Գրական մտորումների» մեջ, իսկ 1929-ին գրած մի նամակում Ա. Բակունցը ուղղակիորեն գանգատվում էր, թե «Մեր ժողովրդի անցկացրած զարմանալու շափ վիթխարի ճանապարհը դեռ նկատված չէ»:

Էպիկական մեծ կտավների ստեղծագործման անհանգիստ խմբումներով էին շնչում մի շարք անվանի գրողներ:

Այսպես, վտարանդիությունից հայրենիք դարձած Ալ. Շիրվանզադեն՝ ռեալիստական արձակի վարպետը, պատրաստվում էր գրելու «Թաքու» էպոպեան, ցանկանալով այդ երկում նորովի մեկնաբանել կապիտալիզմի զարգացումն Անդրկովկասում և հեղափոխական, բանվորական շարժումները:

Սոցիալական-հոգեբանական նովելի վարպետը՝ Նար-Դուսը, ծրագրում էր «Նոր մարդը» ընդարձակ կտավը: Ինչպես երեսում է վեպի տպագրված հատվածներից (թիֆլիսի «Լուսաբաց» պարբերականում) և պահպանված նյութերից (գրառումներ, պլաններ, մտքեր, դիտարկումներ) Նար-Դուսը ծրագրում էր լայն կտավի վրա ներկայացնել բոլորուական հասարակության կործանման և հեղափոխական իդեալների հաղթանակի ընթացքը, ստեղծել պատմության արարիչ՝ «նոր մարդու» մոնումենտալ կերպարը: Նար-Դուսը գտնում էր, որ «հեղափոխությունը մարդկության պատմության մեջ շեղած խոր ակոս է գցել հնի և դեռևս անժանոթ նորի, անցյալի և ապագայի միջև, հսկայական հեղաշրջում առաջ բերելով մարդկային կյանքի բոլոր ասպարեզներում», իսկ այդ «հեղաշրջումը» պահանջում էր արվեստի մոնումենտալ ձևեր: Դա, ըստ երեվույթին, ամենից խոր գիտակցում էր Ակսել Բակոնցը, որը դեռևս 1928-ից սկսել էր շարադրել «Կարմրաքար» էպոպեան: Դատելով տպագրված հատվածներից և կերպարների զարգացման տրամաբանությունից, հայ գյուղացիարձի «սոցիալական իրականությունը» ներկայացվում է իրեն «...գյուղացիների ապագյուղացիացման» ընթացք, իբրև նորագույն «քաղաքակրթության» արշավանքը նահապետական աշխարհի վրա՝ ավերածությունների ուժեղ հետքերով:

«Կարմրաքարում» թեև գյուղացիությունը ապրում է անցյալի շապականված բարքերի վերհուցային կարգով, սակայն Բակոնցը ոչ թե էլեգիա է հյուսում հնի գյուղի մասին, այլ գգաստ մտածողի թափանցումով անցյալի այդ կորստի մեջ առանձնացնում է հողի, իրրև ապագայի արժեքի, պահպանման ու բարեկամության մոտիվը:

«Կարմրաքարը» իր ժանրային կառուցվածքով կոչված էր լինելու հայ գյուղի էպոպեան:

Լայն վրձինով, թանձր գույներով, կյանքի երեսույթների անընդհատ հոսանքի նկարագրություններով, Բակոնցը ցուցադրում է պատմական ժամանակաշրջանը՝ տեսանելի ու «անտեսանելի», էական ու «անէական» հակասություններով, գծերով ու գծիկներով, ուելքեֆով ու մանրամասներով, հոգեբանական ու սոցիալական տեղաշարժերով,—մի խոսքով նա տալիս է կյանքի ընթացքը:

Բակոնցյան վիպական սիստեմում գոյություն չունի գլխավոր և երկրորդական դեպքերի, կենտրոնական ու դրվագային հերոսների տարանշատում: Ժամանակի ընթացքը վերարտադրելու համար նա կիրառում է բազմաձայնության սկզբունքը: Բազմաձայնության սկզբունքի կիրառումը տուրք չէ անդեմ մասսայակերպությանը և ոչ էլ անտարբեր նկարագրությանը, այլ էպոպեայի ժանրային առանձնահատկություններով պայմանավորված ստեղծագործական նպատակ: Ո՞րն է բազմաձայնության սկզբունքի իմաստը. այն, որ Բակոնցը, ժամանակի իրականության մեջ չի առանձնացնում մի ուրիշ «վիպական» իրականություն, ժողովրդական կյանքի բազմատեսակ բնավորություններից չի ընդգում մի քանիսը՝ համապատասխան սոցիալական ու հոգեբանական դե-

րով, այլ աշխատում է գրվածքը դարձնել կյանքի անպայմանական ընթացքի հայելին:

«Փողովրդական վեպի» ժանրային նպատակադրումից է ծնվել վիպասանի առանձնահատուկ ուշադրությունը մասսայական տեսարանների նկատմամբ: Մասսայական տեսարաններն այն հանգույցներն են, որտեղ լուծվում են ժողովրդական կյանքի խնդիրները:

Եթե վեպում ժողովուրդը նկարագրություն օրյեկտ է, այսպես կոչված, «սոցիալական ֆոն»՝ ավելի խոր, իմաստալից ու պատճառաբանված արտահայտելու անհատների ճակատագրի կապերը հասարակական հանգամանքների հետ, ապա էպոպեայի ժանրում, ձեսփոխության ենթարկվելով, ժողովուրդը դառնում է գործողության զլիավլոր սուրբեկար, ժողովուրդը գիտակցվում է որպես տվյալ դարաշրջանի սոցիալական ու քաղաքական հարաբերությունների զարգացման հիմնական շարժիչ ուժ, ժողովուրդը գիտակցվում է որպես կյանքի կենտրոն:

Դեռ Ն. Վ. Դոգոլն է նկատել վեպի և էպոպեայի տարբերությունը. «Վեպը էպոպեա չէ, ավելի շուտ նա կարելի է դրամա համարել...»<sup>25</sup>:

Ուրիշները նույնպես վեպը համարում են «ծանրաշարժ» դրամա, նկատի ունենալով նրա կենտրոնացումը անհատական ճակատագրի վրա, իսկ էպոպեան անվանում են էպոն՝ նկատի ունենալով դեպքերի մատուցման մասշտաբայնությունը և կենտրոնացումը՝ ժողովուրդի հոգեբանության շուրջը:

Վեպի և էպոպեայի ժանրերի որակական զգալի տարբերությունը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ առաջին դեպքում ներկայացվում է հասարակական կյանքի, այսպես կոչված, առօրյան, նրա հարաբերականորեն ըմբռնված «ստատիկան», երկրորդ դեպքում՝ ժողովուրդի կյանքի պատմական շրջադարձը, նրա դինամիկան, նրա կյանքի հեղադարձությունը:

Էպոպեայի ժանրում, այսպիսով, ավելի նշանակալից դեր է խաղում ժողովուրդի պատմական զարգացումը և այդ ժանրային տեսակը ավելի է հագեցած պատմական բովանդակությամբ:

Ժանրային նոր տեսակների կազմավորումը միշտ էլ տեղի է ոմանում հին տեսակների հիմքի վրա՝ կապված արծարձլող նյութի բարդացման հետ: Ինչպես նշում է Վ. Դնեբրովը, «այն բովանդակությունը, որ առաջ միայն մաս էր, գեղարվեստական կառուցվածքի մի մոմենտ, սկսում է ինքնուրույնություն ձեռք բերել և գտնել իր յուրահատուկ ժանրային ձևը»<sup>26</sup>,

Այդպես էլ վեպի մի մոմենտը՝ ժողովրդական կյանքը, մի ուրիշ ժանրային կաղապար է փնտրում. այդ «կաղապարը» հանդիսացավ էպոպեան, որտեղ մոմենտը դարձավ գլխավոր բովանդակություն:

Էպոպեայի հեռանկար ուներ նաև Վահան Թոթովենցի «Բաքուն»: Ինքը՝ Թոթովենցը, իր այդ լամաշունչ կտավի ծրագիրը համարել է «դյուցազներգություն» ստեղծելու փորձ<sup>27</sup>, սակայն այդպես էլ երեք հատորների մեջ չի կարողացել ներկայացնել անդրկովկասյան իրականության հեղափոխական շարժումների խոր պատկերը:

Վիպագրական ծրագրերն ու հայտերը թեև շատ-շատ էին, սակայն դրանք կամ մնացին սեագիր ու անմշակ վիճակում (ինչպես Դ. Դեմիրճյանի «Քաղաքը»), կամ դարաշրջանի այրող խնդիրները պարփակեցին արձակ բարքագրության սահմաններում, ինչպես Հմ. Սիրասի «Զգրված օրենքը» (վերանված «Անահիտ») և Լ. Թարգյովի «Հսկաների աշխարհումը», կամ էլ լիցքավորվեցին պատումի էկլեկտիկական խառնուրդով, ինչպես Մ. Արմենի «Երևանը»:

Վ. Արմենի այդ վեպը հայ գրականության մեջ «գիտակցության հոսքի» գեղագիտության առաջին նմուշն է, երկի թե վերաբաղված արևմտյան վիպագրության փորձից:

«Ինչպես են գրվում վեպերը» հոդվածում Մ. Արմենը իր գրվածքի քննադատությանը պատասխանեց «սինթետիկ վեպի» հանձնարարականով.

«Արդ, ի՞նչ գրական շկոլայի հմ ես հետեւում: Գոյություն ունեցողներից և ոչ մեկին: Իմ էպոպեան գրված է մի քանի պլանով՝ ուսալիստական, ողոմանտիկական, սիմվոլիստական, նատուրալիստական»: Այնուհետև՝ «Ես չեմ կարծում, որ միայն մի անգամ կարդալով «Երևանը», կարելի կլինի բան հասկանալ նրանից: Շատ-շատ նրան կարելի է հասկանալ մի պլանով: Այնինչ նա մի պլանով չի գրված»<sup>28</sup>:

Արմենը, սակայն, ոչ միայն չետևեց իր ծրագրած բազմապլանայնության բնական ձուլվածքին, այլև «սինթեզը» տարրալուծեց այլևայլ պատումային-նկարագրական ոճերի արհեստականորեն բարդացված կերպերի մեջ:

Թեև հայ վիպագրությունը (վեպն ու վիպակը) արժեքներ ստեղծեց այսպես ասած «հարակից» թեմաներով, ինչպես «ինքնակենսագրական» պատումների նշանավոր շարքը, սակայն հրատապ-արդիական վեպի խնդիրը մնում էր վլուծված խնդիրներից մեկը:

Ծուտով «բաղաքի», «կառուցման» թեմատիկայի համեմատությամբ ծանրության նժարը թերվեց գեպի գյուղական, կոլտնտեսային թեմատիկան, որի գեղարվեստական յուրացումները աշքի ընկան գեպերի նատուրալիստական վերարտադրությունով (ինչպես Քր. Թափալցյանի «Կյանքի արշալույսին» վեպը) կամ էլ պաթոսային խանդավառ նկարագրություններով (ինչպես Մ. Մանվելյանի «Անապատը կծաղկի» վիպակը):

Այսուամենայնիվ 30-ական թվականներին ասպարեզ եկավ Ն. Զարյանի «Հացավան» վեպի առաջին մասը (տպագրվեց 1937-ին), ուր ժամանակի իրականության գլխավոր երևույթը՝ գյուղացիության հոգեբանական շրջադարձը, թեև ներկայացվում է վասկիրագրության սկզբունքով, բայց վաշերագրությունը հագեցված է մարդկային ուժեղ կոնֆլիկտներով ու կյանքի նոր ձեւերը, վարքագծի նոր շափանիշները հաստատող մի շարք ուշագրավ բնավորություններով: Ն. Զարյանը ոչ միայն ցուցադրում է գյուղի սոցիալական ուժերի բևեռացումը, այլև գյուղացու հոգեբանական արթնացման, նախապաշարմունքներից՝ ազատագրվելու ընթացքը:

«Հացավան» վեպի արժեքը նաև զանգվածի կողքին անհատների ներքին աշխարհի պատկերման միտումն է, ասել է թե՝ կենցաղի կողքին նաև հոգեբանության պատկերումը:

Այսպիսով, հետեւելով 20—30-ական թվականների հայ վիպագրության գարգացման ընթացքին, դիտում ենք անհամաշափ ընթացք. «Երկիր նաիրի» «պոեմանման վեպից» հետո, որը իրապես արտահայտում էր վեպի նոր ձևի պահանջը, այլև մյուս հայտերը անհաջող փորձեր էին մինչև «Կարմրաքարը», որը ինչ-ինչ հանգամանքների պատճառով մնաց անավարտ:

30-ական թվականներին հրապարակվեցին «համապատկերներ» («Բաքու», «Չգրված օրենք» և այլն), որոնք ավելի շուտ ժանրի քայլայման նշաններ էին հայտաբերում, քան ձեավորման:

«Ինքնակենսագրական» վիպաշարը վեպը տարավ քնարականացման հունով, որից թեև չնվազեցին դրամատիկական շեշտերը, սակայն ինչ-որ շափով

պակասեց «կյանքը լայն հոսանքով», էպիկական թանձր գույներով վերաբ-տադրելու «սինթեզի» սկզբունքը:

Վիպագրությանը դեռևս կաշկանդում էր քննադատական ուսալիզմի վի-պային կառուցվածքը (դա արտահայտվեց նույնիսկ «Հացավանում»):

Այսուհետեւ, շատ վեպերի ու վիպակների գեղարվեստական տարածությունը և գեղարվեստական ժամանակը սահմանափակվելով կոնկրետ դեպ-քերով, վիպագիրները բացառեցին «փիլիսոփայական խորհուրդների» հնա-րավորությունը:

### 13

Առաջին երկու տասնամյակների հայ սովետական գեղարվեստական ար-ձակը ընդգծվեց ժանրատեսակների և ոճային արտահայտման եղանակների բազմազանությամբ: Թեև տեսությունը հրահանգում էր «պաթոսային» և «սխե-մատիկացված» գրականությունը, նաև նույն շաղախի արձակը, սակայն բուժ ստեղծագործական ընթացքը ի հայտ բերեց ժանրերի և ոճերի հարստություն, դրանով իսկ հաստատելով նորագույն ուսալիզմի (սկզբում «պրոլետարական ուսալիզմ» անունով, ապա՝ «սոցիալիստական ուսալիզմ»), այսպես ասած «բաց համակարգի» բնույթը: Ճիշտ է, «բաց համակարգ» տերմինը մերօրյա հասկացություն է, սակայն արդեն նորագույն գրականության սկզբնավորման օրերից իսկ կար երեսութիւն տարերային ըմբռնումը, այլապես գրականությունը (նաև գեղարվեստական արձակը) կամփոփվեր լոկ «գաղափարական» կաղա-պարների շրջանակներում:

Ոճային արտահայտման սահմանափակումների դեմ այդ տարիներին հանդես էին գալիս հայտնի գրողները, հենակետ ունենալով Մարքսի մի շարք պատվիրանները, որոնցից մեկը հետևյալն է. «Եթե նույնիսկ հասարակական նման պայմաններում ամեն մի անհատ լիներ գերազանց նկարիչ, ապա դա բոլորովին չէր բացառի այն բանի հնարավորությունը, որ ամեն մի անհատ լիներ նաև ինքնատիպ նկարիչ»:

Այս մտքի առարկայական ցոլացումն է 20—30-ական թվականների հայ սովետական արձակի ձեռագրային բազմազանությունը. Ե. Չարենցի «Երկիր Նախրի» վեպի գրոտեսկային և հեքնական պաթետիկայի կողքին Ստեփան Զորյանի պատմողական արձակի հանդարտ սահմանքները, Գ. Մահարու քնարա-կան ներշնչանքների և ժպտացող հումորի կողքին Դ. Դեմիրճյանի հետազոտական-վերլուծական արձակի գույները, Ակսել Բակունցի պատումների ժո-ղովրդական կառուցվածքների կողքին Լեռ Կամսարի երգիծանքի լայն գծերը, Վահան Թոթովենցի գեղանկարչական թանձրացումների կողքին Ն. Զարյանի ուսալիստական ճշգրիտ պատումը:

Իրապես, 20—30-ական թվականների արձակը ոճային տարրեր գույների գեղարվեստական խճանկար է, շափազանց հետաքրքրական երեսութիւն առհա-սարակ հայ արձակի պատմության մեջ:

Երբ նորագույն արձակը համեմատության մեջ են դնում նախորդ տաս-նամյակների արձակի հետ, ակներև է դառնում վերջինիս ընդհանուր գորշությունը և նորագույնի արտահայտման ոճային կերպերի հարստությունը:

Մինչ նախորդ տասնամյակներին հայ արձակագիրները հակված էին ար-տահայտման ավանդական կերպերի կողմը (չհաշված առանձին բացառություն-

ներ), ապա 20—30-ական թվականների արձակագրության մեջ տեղի էին ունենում ներքին խմորումներ՝ գտնելու արտահայտման ինքնուրույն և ինքնատիպ, այլևայլ գրելակերպերից առանձնացող ոճային համարժեքները:

Անհատական ոճային գծերի որոնումների լոնթացքում, իշարկե, եղան «ծոռումներ», սակայն գլխավոր միտումը հանգում էր ժողովրդական պատումացին ավանդների օգտագործմանը: Այդ գլխավոր ուղղությունը բերեց անհատական տարբերակներ, որոնք և նշանավորեցին հայ արձակի գրելակերպերի հարստությունը:

Գրելակերպերի ընդհանուր գումարից գոյացավ նորագույն հայ արձակի ազգային դպրոցը, որն արդեն 30-ական թվականներին, սկսված թարգմանչական աշխատանքների շնորհիվ, դառնում էր համամիութենական գրականության փաստ: Ե. Զարենցի «Երկիր Նախրիից» բացի ուստեղեն թարգմանվեցին Ստ. Զորյանի պատմվածքները և «Մի կյանքի պատմությունը», Ակսել Բակունցի պատմվածքները, Մ. Արմենի «Հեղնար աղբյուրը», Գ. Մահարու Խնճնակենսագրական վիպակները, որոնք պերճախոս վկայում էին գեղարվեստական պատշաճ մակարդակի:

Ոճային բազմազանության հետ միասին 20—30-ական թվականների հայ արձակը աչքի է ընկնում ժանրային կառուցվածքների արդիականությամբ:

Այստեղ դեր են ունեցել ոչ միայն համաշխարհային արձակի փորձի յուրացումները (օրինակ, գոգոլյան և այլ աղբյուրների «օգտագործումները» «Երկիր Նախրի» վեպում), ոչ միայն XIX դարի ժամանակակիցները, այլև հազույն ազգային գրական աղբյուրների մեջ ծրարված նոր ժանրագոյացումներին անհրաժեշտ լիցերը:

Այս կապսկցությամբ գրական ընթացքի ճանաշման համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում Ա. Բակունցի գեղագիտական հայացքները:

1934 թ., գրողների համամիութենական առաջին համագումարում արտասահմանում, Բակունցն ուրիշ խնդիրներից բացի կանգ է առնում նաև գրականության ժանրային միակողմանիությունը վերացնելու, անցյալի խոշոր վարպետների կողմից արդեն յորացված գեղարվեստական ձևերի կապանքները հաղթահարելու ու գրական նոր ձևեր զարգացնելու պրոբլեմի վրա: Գեղարվեստական ձևի արդիականացման ու նորացման համար Բակունցը ոչ թե վերացական դեղատոմսեր է առաջարկում կամ ժամանակի «մոդեռն» ուղղությունների ճաշակին հարմարվում, այլ առաջարկում է մի ճանապարհ, որ տանում է դեպի գրականության պատմության հնագույն ակունքները: Մասնավորապես նա առաջ է քաշում հին գրականության որոշ տեսակներ, այդ թվում պատմական երոնիկոնի ժանրը զարգացնելու, նրա էպիկական վեհությունը և հարտարապետական բարիձեռությունը օգտագործելու խնդիրը:

«Վիթխարի հետաքրքրություն են ներկայացնում ժանրի հարցերը, — ասում է Բակունցը համագումարում: — Ես պետք է ասեմ, որ ազգային գրականությունների հիմնական թերությունն է ժանրերի ոչ արդիական լինելը, այն, որ այդ գրականություններն ընկնում են խոշոր վարպետների կողմից արդեն հաղթահարված ձևերի ազգեցության տակ: Ոչ ոք այժմ չի կարող գրել Ռուսթավելու նման: Ես նույնիսկ կասեի, որ այն ձևերը, որոնք հաղթահարված են ԼIX և XX դարերում այս կամ այն վրացի կամ հայ վարպետի կողմից, ընդօրինակման պատճառով արգելք են հանդիսանում գեղարվեստական նոր ձևերի զարգացման համար:»

Ո՞րն է ճիշտ ճամապարհը, Վերադարձը դեպի սկզբնաղբյուրը, դեպի ժողովրդական ստեղծագործությունը՝ Ես նկատի ունեմ ոչ թե վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության հին աղբյուրները, դեպի ֆոլկլորը, թեև Փոլկլորը նույնպես ապրում և զարգանում է, այլ ժողովրդական ստեղծագործության նոր և խկական արմատները»<sup>29</sup>:

Ակներկ է, որ Բակունցն այստեղ նկատի ունի ոչ թե ժողովրդական բանահյուսության նյութերի մշակումն ու դրանց ոճավորումը, այլև գրավոր գրականության այն հուշարձանները, որոնց վրա զգացվում է ժողովրդական մտածողության դեմոկրատական շռնչը, «ուամկական» հոգեբանության կնիքը: Այս առիթով նա մատնացույց է անում միջնադարյան պատմական քրոնիկոնը. «Ժանրերի հարցի կապակցությամբ, ես պետք է ասեմ, որ մեծ հետաքրքրություն է ներկայացնում պատմական գեղարվեստական քրոնիկոնի ժանրը: Հայկական գեղարվեստական քրոնիկոնների վիթխարի պաշարը շի օգտագործված գեղարվեստական գրականության մեջ: Մեր գրողների պարտականությունն է՝ բննել դրանք, ուսումնասիրել, քննադատորեն վերցնել նրանց էպիկականությունը, խստաշունչ տոնը, լեզվի հարստությունը, խոսքի ժամանակակից ակդրունքը»:

Ժանրերի հարցը Բակունցը առաջ է քաշում տեսական լայն պլանով, սույնալիստական ոեալիզմի մեթոդի շրջանակներում «Հին ժանրերի օգտագործման և նոր ժանրերի ձևավորման» դիալեկտիկական բարդ հարաբերությամբ: Այս հարցի մասին նա խոսում է նաև «Литературная газета» թերթում տպագրած «Ժանրերի բազմադանության համար» հոդվածում, գրողներից պահանջելով «բավարար մտածված վերաբերմունք» դեպի հին ժանրերը նոր ձեռվ ու նոր միջոցներով լրացնելու խնդիրը. «Ես կարծում եմ, որ ձեռվ աղքային, էպիթյամբ սոցիալիստական բանաձեռ պետք է լեցվի կոնկրետ բովանդակությամբ նաև այս (ժանրի—Ս. Ա.) բնագավառում: Յուրաքանչյուր ազգության գրականությունն իր ավանդը պետք է մուծի սոցիալիստական գրականության ձևերի ընդհանուր գանձարանը: Մինչդեռ համարյա թե մեզնից ոչ ոք չի օգտագործել, օրինակ, արևելյան հեքիաթի ժանրը: Իսկ այդ ժանրը կարող է ավելի արդյունավետ ձեռվ օգտագործվել, ինչպես ցույց է տալիս թեկուզ և Դերենիկ Դեմիրճյանի «Քաջ Նազար» պիեսի հաջողությունը»<sup>30</sup>:

Բակունցին գրավել է հնագույն ժողովրդական հեքիաթի ոչ միայն գաղափարական բովանդակության, այլև ժանրային կառուցվածքի նորացումը, հեքիաթի արմատական ձևափոխությունը՝ Դ. Դեմիրճյանի գրչի տակ: Այդպիսի մի օրինակ էլ Բակունցը համարում է Ն. Վ. Գոգոլի «Տարաս Բուլբա» էպոպեան, որի ժանրային նկարագրի կապակցությամբ նա անում է հետևյալ դիտողությունը. «Տարաս Բուլբան» ճիշտ հասկանանք, եթե այդ երկն ընդունենք իբրև նմանություն ժողովրդական ավանդավեպին, իբրև մի զրույց, որ փանդիռի նվազակցությամբ պատմում էին ուկրաինական գյուղերում: Գոգոլը վերցնում է ոչ միայն ավանդավեպի նյութը, այլև ձեզ... Սակայն Գոգոլը պարզ նմանողությամբ շի օգտագործել ժողովրդական ստեղծագործության ձևերը: Այդ ձեւերը մշակել և հարստացրել է»<sup>31</sup>:

Պատմական քրոնիկոնի, արևելյան հեքիաթի, հնագույն տարեգրության, ժողովրդական ավանդագրույցի և գեղարվեստական ուրիշ ձևերի օգտագործումը Բակունցը պատկերացնում էր ոչ թե որպես պատրաստի, նախադրված կաղապար, որի մեջ պետք է լցնել ինչ-որ նոր բովանդակություն, այլ անհամաժեշտ էր համարում դրանց կառուցվածքում ներմուծել նաև հետագա դարերի

գրական ձևերի փորձը։ Ժանրերի նորացումը նա ըմբռնում էր հին և նոր ձևերի փոխադարձ հարստացման ու ներթափանցման ճանապարհով։

Ժանրերի խնդրի այսպիսի լայն դրվածքը՝ տեսական իմաստավորումը, արտահայտում էր հայ արձակի հասունացման և կատարելագործման հրամայական անհրաժեշտությունը։ Իսկ դա նշանակում էր՝ հաղթահարել հայ արձակի մեջ եղած «զավառականության» կապանքները և արձանագրական, նաղլահերիաթային ոճի դրսերումները, գնալ իսիդախման ճանապարհով՝ կյանքի խոր իմացությունները համադրելով գեղարվեստական ավանդների հետ։

## ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 1

Հայաստանի կուլտուրական շինարարության լայնաշումն նախագծումների մեջ առաջին տեղը տրվեց թատրոնի զարգացմանը: Բացի այն, որ հայոց թատերական արվեստն ուներ հեռավոր դարերից եկող մեծահարուստ ավանդներ (դա ինքնին վճռական նախադրյալ էր նորի ստեղծման համար), թատրոնը համարվում էր նաև գեղարվեստի հանրամատչելի, դեմոկրատական այն ձեւը, որը կարող էր հրատապ կազմակերպել ժողովրդական զանգվածների հոգեոր դաստիարակության գործը:

Այդ նպատակով էլ սովետական իշխանության հաստատումից անմիջապես հետո Հայաստանում զարկ տրվեց թատերական արվեստի զարգացմանը<sup>1</sup>:

1920—21 թթ. Երևանում, Ալեքսանդրապոլում, Ղարաբիլիսայում, Դիլիջանում և այլուր ստեղծվեցին ժողովրդական շրջիկ-թատրոնների հիմունքներով գործող առաջին թատերախմբերը Հայաստանի տարածքում:

1921 թ. օգոստոսի 16-ին Հայաստանի ժողովում խորհրդական ժամանակակից առաջին թատրոնը բնութագրվեց առաջին մասին<sup>2</sup>, իսկ 1922 թ. հունվարի 25-ին Երևանում, նախկին դաշնակցական պառամենտի շենքում (մականվանյալ՝ «Տուփ») բացվեց այդ թատրոնի վարագույրը:

Ալ. Մյասնիկյանի խորհրդով<sup>3</sup> առաջին պետական թատրոնի հիմնադրման օրը ներկայացվեց Գ. Սունդուկյանի «Պեպո» կատակերգությունը:

Այդ պիեսի ընտրության խորհրդանշական իմաստն այն էր, որ ընդգծվում էր նոր թատրոնի ժառանգական-արյունակցական կապը նախահեղափոխականի հետ, մեկ էլ այն, որ ի դեմս «հասարակ խալիք» սոցիալական զայրույթը մարմնացնող ձկնորս Պեպոյի կերպարի, հոչակվում էր ժողովրդի հաղթանակը «խավարի թագավորության» դեմ:

Այնուհետև թատրոններ կազմակերպվեցին Հայաստանի վարչական (գավառական) կենտրոններում, ինչպես և ստեղծագործաբար ու կազմակերպչորեն վերակառուցվեցին դեռևս մինչև հեղափոխությունը Անդրկովկասի հայաբնակ վայրերում (Թիֆլիս, Բաքու) գործող թատրոնները:

Թիֆլիսում հիմնադրվեց Ստ. Շահումյանի անվան «Ռուսումների թատրոնը» (ոեժիսոր Ստեփան Քափանակյանի գլխավորությամբ):

Հայ սովետական թատրոնի զարգացումը, բնականաբար, ընթանում էր ժամանակակից գեղարվեստական ըմբռումների և ժամանակակից ճաշակի յուրացման ճանապարհով: Այս գործում անգնահատելի եղավ ազգությունների ժողովրդական կոմիսարիատի հայկական գործերի կոմիսարի տեղակալ Վահան Տերյանի և ունդուն ջանքերով ստեղծված Մոսկվայի հայկական թատերական ստուդիայի գործումներությունը (հիմնադրվել է 1919-ին), այն ստուդիայի, ուր կամ դասավանդում, կամ դասախոսություններ էին կարդում այնպիսի մեծահամբավ գիտնականներ, ինչպես ն. Մառը, Վ. Բրյուսովը, Ա. Հովհաննեսը, Ա. Տուլ-

Հաննիսյանը, Հ. Օրբելին, Ա. Զիվիլեգովը և գեղարվեստի այնպիսի նշանավոր բարենորոգիչներ, ինչպես Կ. Ստանիսլավսկին, Ե. Վախթանգովը, Հ. Գյուրջյանը, Գ. Յակովովը:

Դեղարվեստական բազմազան հոսանք-ենթահոսանքներով և հաճախ ճաշակային հակադիր ըմբռնումներով բարդացված իրադրության մեջ ձևավորվող հայ սովորական թատրոնը համառորեն որոնում էր իր նոր դիմագիծը, թատերական արվեստի պատմականորեն նոր տիպը, իր գեղարվեստական նոր դավանանքը:

## 2

Հեղափոխական նոր իրականության անմիջական պահանջով սուր կերպով դրվեց թատրոնի խաղացանկի նորացման, ասել է թե՝ ժամանակակից ազգային թատերագրություն ստեղծելու խնդիրը:

Այդ խնդիրն, իհարկե, ուներ իր նախապատմությունը՝ կապված XX դարասկզբի գեղարվեստական կյանքի մեջ սկսված նոր խմբումների հետ:

Մուս իրականության մեջ դարասկզբին ծայր առած խռովությունը թատրոնի «ակադեմիական» ուղղության դեմ, թափանցեց նաև հայ իրականություն՝ հարցականի տակ առնելով թատրոնի այսպես ասած պոպիտիվիստական, այսինքն՝ «ռեալիստական» և «նատուրալիստական» ուղղությունները՝ հանուն, մի դեպքում, սիմվոլիստական, մյուս դեպքում՝ ժողովրդական-հրապարակային արվեստի գեղագիտության:

XX դարի թատրոնական ստեղծագործության որոշ սկզբունքներ թափանցեցին նաև քսանական թվականների թատերական կենցաղի մեջ, անտարակույս, ոչ թե հին նշանաբաններով («կենցաղի դեմ—Ոգի»), այլ նորաձեւ կոչու լոգունգներով:

20-ական թվականներին, մասնավորապես, լայն շրջանառություն ուներ առհասարակ «անցյալը խաչելու» կոչը:

Այս դրույթը տեղափոխելով գեղարվեստի բնագավառ («Ստեղծել դիկտուրա արվեստի ասպարեզում»)<sup>4</sup> և մեխանիկորեն կիրառելով, «Ճախ-հեղափոխական» արվեստի տեսաբանները՝ ներշնչված Պրոլետկուլտի ժխտական կեցվածքով, այլևս պատմական անախրոնիզմ, «թանգարանային» «մեռած» արժեքներ էին համարում թե դասական թատերագրությունը՝ Սոֆոկլեսից մինչև Հենրիկ Իբսեն, ներառյալ նաև հայրենականը (Գ. Սունդուկյան, Ալ. Շիրվանզադե, Լ. Շանթ) և թե ավանդական թատրոնի ձևերը:

Նոր իրականությանը համապատասխանող նոր արվեստի ստեղծման հոգերանական դրդապատճառով թատրոնը կոնֆլիկտի մեջ մտավ իր անցյալի հետ, գեղարվեստական հին ավանդների հետ: «Հին թատրոնի վերացում,—ահա թե որ է տանում ներկա բեմի էվոլյուցիան,—իր «Դեկլարացիայում» գրում էր հայ ֆուտուրիզմի տեսաբան Կարա-Դարվիշը (Հակոբ Գյոնջյան):—Կեղծ բեմի տեղ կյանքի հրապարակ, որտեղ իրար կհանդիպեն մարդիկ և ոչ թե դիրասանները»<sup>5</sup>:

Հին կանոններից թատրոնը «ազատագրելու» այս դրույթը փաստորեն ընդառաջում էր թատրոնի, իրուն «ազնվականական արվեստի» վերացման այն պահանջին, որը տեղ էր գտել Պրոլետկուլտի տեսական հանգանակներում:

Իսկ «կյանքի հրապարակը» ի՞նչ էր ներկայացնելու հանդիսատեսին:

Այս հարցի պատասխանն է ժամանակի թատերական նոր գեղագիտության սկզբունքներով խելահեղորեն հափշտակված Զարենցի հետևյալ կը տրուկ «դատավճիռը»:

թագական է ինչքան ձեզ խաղան  
Անտիգոն,  
Նամուս,  
Օթելլո,  
Թիբին  
Ի՞նչներիդ է էսօր հարկավոր  
«Դատաստան»,  
«Ճանդ շրասուկան»:

Սա ոչ միայն «ակադեմիական», իր դերն «ավարտած» դասական ճաշակի դեմ ուղղված խոռվություն էր, այլև հիմնավորումն էր այն դրույթի, որ ժամանակակից հեղափոխական թատրոնը պետք է հրաժարվի հոգեբանական-սյուժետային թատերագրության ավանդներից, գործունեության նշանաբան և ստեղծագործական դավանանք ընդունելով միայն «գործողության թատրոնի» սկզբունքը՝ անմիջական «բեմական իմպրովիզացիան», կամ ինչպես բնորոշել է Լևոն Քալանթարը՝ «մարդկային մարմնի շարժումը տարածության և ժամանակի մեջ»<sup>7</sup>:

### 3

Հրապարակային-ժողովրդական թատրոնի՝ թատերական հանդիսանքների և բեմական անմիջական իմպրովիզացիայի գեղարվեստական ճաշակի պաշտպանությունն էր նաև Ե. Զարենցի, Կ. Հալարյանի և Մ. Մազմանյանի «Standart» ժուռնալի (1924) թատերական ծրագիրը, որը շարադրել էր թատրոնի մեծ բարենորոգիչ Ե. Վախիթանգովի «ուղղափառ» աշակերտ, հայագի ոեժիսոր Ռուգեն Սիմոնովը:

Այդ ծրագրում մասնավորապես ասվում էր. «Ժամանակակից թատրոնը ձգուում է ազատագրվել պայմանական վարագույրից, դեկորից, քանդել բեմը, լայնացնել այն մինչև հրապարակային սահմաններ... Գալիք թատրոնի տեղը հրապարակն է, ուր կինեն երգեցիկ խմբեր, օրկեստր, մարմնամարզական տոներ և այլն»<sup>8</sup>:

Թատրոնի գլխավոր խնդիրը Standart-ը համարում էր կյանքի կոնստրուկտիվիստական վերարտադրությունը. «Կամերային թատրոնի փոխարեն շարժական խմբերի ագիտ-թատրոն... Խեցերտուար՝ սատիր-ագիտ, քաղաքական բուֆոնադ, հերոսական ագիտ-դրամա. Հոգեբանության փոխարեն՝ տըրյուկիզմ»<sup>9</sup>:

Հայ թատրոնի անցողարձը 20-ական թվականներին բնորոշվում էր նաև ուրիշ երեւությներով և միտումներով, բայց մթնոլորտին հիմնական շեշտ տվողը հրապարակային-ագիտացիոն-միտինգային թատրոնն էր՝ ժողովրդական հանդիսանքներ և տոնահանդեսներ, թատերական կարնավալներ, բեմական հանպատրաստից ներկայացումներ, ագիտ-հանդեսներ և այլն, և այլն:

«Առաջ եկան հրապարակային ներկայացումներ, — պատմում է դերասան Վաղարշ Վաղարշյանն իր մեմուարներում: — Կազմվում էին բեմական գործեր պատմության այս կամ այն հերոսապատումներից կամ հեղափոխության ան-

ցուղարձից և մասսայաբար, հազարավոր մարդկանց մասնակցությամբ խաղացվում հրապարակներում, փողոցներում, մինչև անգամ՝ դիերի վրա, հրացաններով, թնդանոթներով... Կազմված ինսցինիրովկան փորձվում էր ներկայացման վայրում՝ տեղն ու տեղը, խոշոր շտրիխներով, մեծ կրքերով, մասսաներին իրար դեմ հանելով... Կառնավալները, շքերթները, մասսայական խաղ ու պարը բռնել էին փողոց ու հրապարակ, Դրանք տևեցին մինչև 1925—26 թվականները»<sup>10</sup>:

Հայ իրականության մեջ հրապարակային թատրոնի ամենահիշարժան դրվագը Ալեքսանդրապոլի՝ հունական ամֆիթատրոնի բնական կառուցվածքը հիշեցնող «Կազմչի պոստ» վայրում 1922-ին ուժիսոր Արմեն Արմենյանի բեմադրած «Սասունցի Դավիթ» թատերախաղն էր, որին, ականատեսների վկայությամբ, մասնակցել են մանկատների սաները, քաղաքի բնակիչները, ինչպես նաև Կարմիր բանակի հեծելազորային զնդի մարտիկները, մոտ 10,000 մարդ՝ «դերասան» ու «հանդիսական»:

Հրապարակային թատրոնի կանոններով էին շարադրված նաև այն թատերախաղերը, որոնց տրվեց «ագիտկա» անունը:

Քաղաքական որոշակի միտումներով ներթափանցված տասնյակ ագիտկաները հետապնդում էին զուտ գործնական-լուսավորական նպատակներ՝ ուղղակիորեն ներազել հանդիսատեսների հոգեբանական-հուզական աշխարհի վրա, ամրացնել նրանց սոցիալական գիտակցությունը և մասնակից դարձնել օրվա խնդիրների լուծմանը:

Ագիտացիոն-գործնական նպատակաբանության իրադրության մեջ թատրոնում առաջատար դիրքեր գրավեցին ագիտատոր-դերասանը, պլակատիստնկարիչը, հանդիսարար-խաղավար-ուժիսորը, հրապարակախոս-թատերագիրը:

Անտարակույս, գավառական և գյուղական վայրերում բեմադրված ագիտկաները որոշ դեր խաղացել են «մասսայական հոգեբանությունը» կազմակերպելու, ժողովրդական լայն զանգվածներին մատշելի միջոցներով սովետական իշխանության հերթական խնդիրները բացատրելու գործում, բայց քիչ թե շատ նկատելի հետք չեն թողել թատերագրության դարձացման վրա:

Ավելին. հոգեբանական բովանդակությունից թափուր, պարզունակ, նախադիր սխեմաներով ձևված ագիտկաներն ու հանպատրաստից թատերապատկերները կարող էին լուրջ սպառնալիք դաւոնալ թատերագրության զարգացման ժանապարհին, եթե օր առաջ զգիտակցվեր բարձր արվեստի հրամայականը՝ Այդ ագիտկաները լոկ հայ սովետական թատերագրության «խանձարուրային շրջանի» վավերագրերն են: Ոչ ավելին:

Standart-ի հիմնական սկզբունքներից մեկը գեղարվեստի այսպես կոչված «անմիշական օգուտի»՝ ուտիլիտարիզմի դրույթն էր: Այդ ոգով էր Զարենցը մեկնաբանում նոր արվեստի խնդիրը, նոր հասարակությանը սպասարկող արվեստի տեսակներից առանձնապես կարևորելով ագիտկայի նշանակությունը. «Մենք առաջադրում ենք ագիտկան, ոչ թե վերջին հաշվով ագիտկան, այլ առաջին հաշվով ագիտկան, որպես արվեստի ամենանպատակահարմար ու միակ բնույնելի տեսակը, որ հարկավոր է մեզ այսօր-արվեստի այն տեսակը, որը զենք է և ոչ թե հայելի, «գեղեցիկն» և «վսեմը» թողնելով ֆիլիստերներին...»<sup>11</sup>:

Մեծարելով ագիտկան և քննադատելով «կախարդական հայելու տեսությունը, Զարենցը նկատի ուներ ոչ թե արվեստի պարզունակ ձևերը, այլ նույն ագիտկայի բարդ կառուցվածքները»:

Զարենցը դեռ Մոսկվայում ապրելիս (1922) ականատես էր նորագույն թատերական իրադարձություններին, հրապուրված էր հատկապես Ե. Վախիթանգովի «Փանտաստիկական ուսալիզմով» («Արքայադուստր Տուրանդոտ») և Վ. Մելքոնովի «Եղափոխական-ագիտացիոն-միտինգային թատրոնով», ունկընդում էր ժամանակակից թատրոնը ժողովրդական հին ակունքներով (բալագան, մնշախաղ և այլն) վերանորոգելու կոչերը՝ դա համարելով ապագա թատրոնի զարգացման ճանապարհը:

Նրա էության մեջ գործում էր բարենորոգչական ուժեղ կիրքը:

Տեսական նոր դրույթներով ու արվեստի նոր պատկերացումներով Զարենցը արդեն 1923-ին շարադրեց «Կապկազ» թամաշան, որը կարելի է համարել ագիտկայի միակ օրինակելի նմուշը հայ թատերագրության պատմության մեջ՝ կյանքի հարուստ լիցքեր պարունակող վառվոռմ և շափազանց սուր մի ստեղծագործություն:

«Կապկազը» իսկական թամաշա է՝ «թամամ-թամաշա», ուր իրար են հյուսված ամենատարրեր կառուցվածքային-ոճաբանական շերտեր՝ հնագույն ժողովրդական թատրոնի՝ Ղարագուղի, բուլեսկային զրնգում արտահայտչությունը և մայակովսկիական բուֆը, դիմակների կոմեդիայի գծերն ու քաղաքական պլակատը, ֆանտաստիկական վերամարմնավորման կերպերն ու հրապարակախոսական ուղղակի խոսքը, բեմական ատրակցիոնն ու կերպարների շարժային բնութագրությունը:

Թատրոնի բարենորոգի Զարենցի հղացումով «Կապկազը» պետք է յուրացվեր ոչ այնքան թատերական բեմերում, որքան հասարակական հրապարակներում, պետք է ներկայացվեր իբրև ծիծաղի ժողովրդական հանդես, ուր դիտողները լինելու էին նաև «սյուժետային դեպքերը» գնահատողներ, այսինքն՝ անցքերի քաղաքական մեկնաբաններ:

«Կապկազի» այս յուրահատկության և նրա «այլակերպ» կառուցվածքի բացահայտումն է հանդիսականներին հղած Ղարայի՝ խաղավարի, ցուցմունքը, թե հիմա, իրենք միասին, «շանց կտան» մի «Ղարագուզ», որի համար շեն պահնջում հատուկ թատերասարքեր: «Տեսնո՞ւմ եք, բեմը դատարկ է, բան չկա: Ոչ անտառ, ոչ օթաղ, ոչ էլ ուրիշ դեկոր: Մենակ մի զանգ վերից քաշ է տված թոկով»:

Ավանդական՝ հոգեբանական-սյուժետային թատրոնի վախճանը և հրապարակային-ժողովրդական նոր թատրոնի ծնունդը հոչակող Ղարայի հրգվարտակից հետո սկսվում է անդրկովկասյան սեյմի ստեղծման ու քայլայման (1918 թ. փետրվար-մայիս) զավեշտական պատմությունն անող հանպարաստից թամաշան:

Հանդիսարար-խաղավար Ղարան պտտեցնում է բեմում դրված շարիք (անիվը), որը ներկաված է տարբեր գույներով.

Դեմք մեկ էլ—մի շարի,  
Որ գառնում է հաճախ,  
Փոխում է գույնը՝  
Սև է,  
Դառնում է աւաճա:

Հետո կապույտ,

Դեղին—

Նայած աեղին:

Գտտվող անիվի ամեն մի նոր գույնը, թատերագրի մտահղացումով, արտահայտում է «անդրկովկասյան կառավարողների» հոգեքանական վիճակների փոփոխությունը, մեկ՝ քաղաքական ամբարտավանությունը, մեկ՝ սարսափը ժողովրդի հեղափոխական զայրույթի արթնացումից, ապա՝ սոցիալիստական ֆրազաբանությամբ փետրավորվելը և ավանտյուրիստական վարչագիծը, այսուհետեւ՝ ներքին ջղաձգումներն ու անդրություն.

Մի խոսքով՝ շուռ գալն էլ շարիփ,—  
Մեկ է թե շուռ գալն աշխարհիքի:

«Կապկապը»՝ շնչով և կառուցվածքով, կերպարների բնութագրման գրոտեսկային եղանակներով, կրում է Վլ. Մայակովսկու «Միստերիա-Բուֆֆի» ուժեղ դրոշմը: Ազգեցությունն առավելապես զգացվում է գործող անձանց՝ սոցիալական հակադիր բնեաների դրամատուրգիական դասավորության մեջ: Վլ. Մայակովսկու բուֆֆոնադի «Յոթ զույգ Մաքուրների» և «Յոթ զույգ Անմաքուրների» կառուցվածքով տեղաբաշխելով իր թատերախաղի հերոսներին, մի կողման հին աշխարհի տերերն են (կնյազ, տերտեր, մոլլա, աղամելիք և այլն), մյուս կողմում ժողովրդական խավը (զինվոր, բանվոր, ամբոխ և այլն). Զարենցը հասնում է պատմական պրոցեսը կրող հասարակական շերտերի պլաստիկ, շշափելի բացահայտման:

«Կապկապը»՝ նյութի, միջավայրի ոեալիստական զգացողությամբ և պատմական ճշմարտությամբ հագեցած մի «այլակերպ» գործ, հայ թատրոն էր բերում Սիծաղի շոնչը, հաղթողների զրնգուն ծիծաղը, որով և բացատրվում է նրա բեմական մարմնացումների հաշողությունը Բաքվի (1925) և Թիֆլիսի (1926) հայոց բեմերում: Ուշագրավ է այն փաստը, որ երկու թատրոնում էլ Զարայի դերակատարը եղել է մեծ ողբերգակ Վահրամ Փափազյանը<sup>12</sup>:

«Կապկապի» դրամատուրգիան Զարենցը համարում էր ժողովրդական թատրոնի իր դավանանքի վառ արտահայտությունը: Դեռ երկար ժամանակ նա մնում է այդ դավանանքին՝ հասկացության «մեյքրհոլոյյան՝ թեքումով»: Այսպես, «Երեանի ուղղիւ տնից...» նոթերում (1927), նկարագրելով ինքնագործ թատերախմբի գործունեությունը գրում է. «Դա՛ ոչ թե խաղ էր կարծես, այլ մասսայական կենդանի գործողություն»<sup>13</sup>:

Ժողովրդական ակունքների վերադարձի գեղագիտությունը, ինչպես ճիշտ նկատում է Վ. Գրիգորյանը<sup>14</sup>, իր կնիքն է դրել նաև «Կապկապից» մեկ տասնամյակ անց Զարենցի գրած «Աքիլես, թե՞ Պյերո» դրամատիկական ինտերմեդիայի վրա:

«Ժողովրդական թատրոնի» գաղափարը թեև գալիս էր պատմական անցյալից, բայց նոր ուժով հնչեց XX դարասկզբին: Ռուս իրականության մեջ այդ գեղագիտության երդվալ հետևորդն էր Ալեքսանդր Բլոկը, որը դեռ 1908-ին գրած «Թատրոնի մասին» տրակտատում քննադատելով թատրոնի «շեխովյան» ուղղությունը, այսինքն՝ «գործողությունից թափուր», կիսատոների և նրբերանգների՝ ենթաբնագրի թատերագրությունը, առաջնության դափնին հանձնում էր ժողովրդական-հրապարակային թատրոնի ձեւերին: Ալ. Բլոկը «նոր արվեստի» դիրքերից առաջ էր քաշում սեալիզմի հարստացման ինդիրը,

«թատրոն թատրոնի ներսում» նշանաբանի մեջ դիտելով ռեալիզմի գարգացման և հարստացման աղբյուրը:

XX դարասկզբին սկսված թատրոնի բարենորոգման շարժումը նոր թափ առավ հեղափոխության ժամանակաշրջանում, դարձավ ժամանակի նշանավոր ուժիսորների (Ստանիսլավսկի, Մեյերհոլդ, Վախթանգով, Թաիրով, Կուրրան, Մարշանով, Բուրչալյան և այլն) գլխավոր ծրագիրը: «Թատրոնը միջնադարյան Հայաստանում մեծարժեք աշխատության մեջ Հ. Հովհաննիսյանը գրում է՝ «Խ դարասկզբի թատերական արվեստի նորարարները, փընտրելով բեմական վերարտադրության նոր, հոգերանական թատրոնից տարրեր ձեռք, ոչ սակավ դիմել են միջնադարյան հրապարակային թատրոնի պայմանականությանը: Մեյերհոլդը և Վախթանգովը, ի ցուցց գնելով թատրոնի ընդհանրապես պայմանական էությունը, հարստացրել են այն բեմական գործողության միջնադարյան ոճավորումներով»<sup>15</sup>:

Հայ իրականության մեջ «Նոր թատրոնի» դրոշակակիրներից մեկը եղավ ի. Զարենցը, որի ինտերմեդիան իր դավանանքի մի նոր վկայությունն էր: «Աքիլես, թե՞ Պյերոն» ես, ինչպես «Կապկազը», յուրօրինակ մասսայական թամաշա է, «բեմ բեմի վրա», ուր պիեսի մասնակիցները որոշում են հերոսի էությունը և գալիս են հետևության, որ իրեն Աքիլես համարող հերոսն ընդամենը խեղկատակ Պյերո է.

Ինում է, չի լինում  
Մի անգո հերոս,  
Աքիլես հնում,  
Հիմա—Պյերո...

Ինչպես իր բանաստեղծական և արձակ ստեղծագործության մեջ, այնպես էլ թատերագրականի, Զարենցը դավանում էր նոր, պատմականորեն վերափոխված կառուցվածքները՝ դեմ գնալով թատրոնի իբրև ժամանցի, «զվարճարանական արվեստի» նախապաշարմունքներին:

Ի հակադրություն հասարակությանը «գեղագիտական քաղցրավենիներ» մատուցող թատրոնի, Զարենցը զարգացման ստույգ ուղղությունը դիտում էր ժողովրդական ակոմքների վերադարձի մեջ:

### 3

20-ական թվականներին՝ հայ ժողովրդի պատմական կյանքի անկյունադարձի տարիներին, ծիծաղը հասարակական գիտակցության մեջ ծրագրվում էր իբրև անցյալը մեկընդուշտ պատմությանը հանձնելու, հնության ուրվականներից և կուռքերից սահմանազատվելու ամենահեղափոխական, ամենաարմատական գործողություն:

Ժամանակի անմիջական խթաններով ինչպես գրականության ու արվեստի մյուս ոլորտներում, իսկ ավելի ուժեղ ընդգծումով՝ թատրոնում և թատերագրության մեջ, տեսակարար մեծ կշիռ ձեռք բերեց և դիրքեր գրավեց «Ծիծաղի՝ «ուրախության» և «հաղթության» գեղագիտությունը:

Այս երեսույթի՝ Ծիծաղի դիրքերի հզորացման խոր բացատրությունը տվել է Մարքսը. «Պատմությունը գործում է հիմնավորապես և բազմաթիվ փուլերից:

անցնում, երբ գերեզման է տանում կյանքի հնացած ձևը։ Համաշխարհային-պատմական ձևի վերջին փուլը նրա կոմեդիան է»<sup>16</sup>։

Այս նույն տրամաբանությամբ հայ թատերագրության մեջ, նրա ձևավորման շրջանում, ուժեղ դիրքեր գրավեց կատակերգության ժանրը՝ արտահայտչական-ոճաբանական պաշարներ քաղելով դարձյալ ժողովրդական արվեստի ակունքներից՝ հինավորց թատերահանդեսներից և մնջախաղի զվարճության աղբյուրներից, ինչպես և ժողովրդական բանահյուսության հարուստ շտեմարաններից։

Միծադի շեշտը դարձավ ժամանակի գլխավոր շեշտերից մեկը։

Զարենցի «Կապկապի» հետ միասին նույն 1923-ին ստեղծվեց Դ. Դեմիրճյանի «Քաջ նազար» կատակերգությունը։

Դ. Դեմիրճյանի «Քաջ նազարը» որոշ իմաստով և որոշ սահմաններում ընդուազում էր ժամանակի թատերական-թատերագրական նոր ոճի և մտածողության որոնումներին՝ «մասսայական», «հրապարակային» արվեստի միտումներին։

Դրա անհերքելի փաստումն են և արևելյան հեքիսթ-սատիրայի, մի այլ բնորոշումով՝ «արևելյան բուժոնադի» յուրօրինակ կառուցվածքը, և կատակերգականի մատոցման ժողովրդական դրվածքը, և, իհարկե, առաջին հերթին, ժողովրդական հեքիսթի հանրաճանալ սյուժեի մշակման «անակնկալը»։

Մինչև «Քաջ նազարը» Դ. Դեմիրճյանը համարում ունեցող թատերագիր էր: «Վասակ» (1912), «Դատաստան» (1916), «Հովնան Մեծատուն» (1918—1919) պիեսներում դասական-հոգեբանական դրամայի կանոններով և կառուցվածքով Դեմիրճյանը հասարակական քննության էր դնում «մարդու ճանաշման» մի շարք էական բարոյական խնդիրներ: Թեև այդ պիեսներում ևս երեսում էր XX դարի գեղարվեստական ոճի և մտածողության, մասնավորապես իբրև հոգեբանական թափանցման արվեստի շունչը,—կտոն Շանթի կողքին Դ. Դեմիրճյանը նույնպես փորձում էր նոր հոմ բացել հայոց դրամայի զարգացման համար,—բայց նրա բարոյախոսական դրույթները դեռևս հանդիպում էին ավանդական դրամայի կառուցվածքի ու ձևի դիմադրությանը։

Բնական է, որ սովետական տարիներին նույնպես՝ «բարենորոգչական» մղումներով ներշնչված և ժամանակի առաջ քաշած նոր հարցերի հանդեպ շափազնոց զգայում այնպիսի գեղագետ, ինչպիսին Դեմիրճյանն էր, չէր կարող մնալ ավանդական գեղագիտության դիրքերում։

Եվ նա գտավ այն ոլորտը, ուր կարող էր յուրացնել գեղագիտական իր նոր ճաշակը, ինչպես նաև արտահայտել էթիկական իր կոնցեպցիան։

Նրա գեղագիտության «փրկարար» հիմքը եղավ ժողովրդական բանահյուսությունը, որը դարեր շարունակ, Մովսես Խորենացուց մինչև Հովհաննես Թումանյան, հայ գրականությանը մատակարարել է ժողովրդի հարուստ կենսափորձն ու իմաստուն փիլիսոփայությունն արտահայտող գաղափարներ, կերպարներ, սյուժեներ, արտահայտչության և ոճական մտածողության պաշարներ։

Օրինաշափ է, որ, առաջին հերթին, ուշադրության պետք է արժանանային բանահյուսական այն սյուժեները, որոնք արտահայտում են աշխարհագերաբերմունքային լայն ու խոր բովանդակություն։

Դրանցից է «կարծեցյալ հերոսի», «պատահմունքով մեծ փառքի տիրացած», բայց իրականում ոչնչություն ներկայացնող հերոսի ժողովրդական սյուժեն, որի միջազգային, ուստական և կովկասյան բազմաթիվ տարբերակ-178

ների ու «խմբագրությունների» շարքում ուրույն տեղ ունի նաև հայկական հերիաթի այն տարբերակը, որը հրատարակել է բազմավաստակ բանահավաք-ազգագրագետ Գարեգին Մրվանձտյանը՝ «Դրժիկո» անունով:

Գ. Մրվանձտյանցի ժողովրդական հերիաթի գրառումը մի պարզ, սովորական պատում է անբան և վախկոտ, սովորական գեղջուկի մասին, որը չունենալով ոչ մի տվյալ, հանգամանքների բերումով, դառնում է հռչակավոր մարդ, շարժելով համագյուղացիների «արմանք-գարմանքը»:

«Դրժիկո» հերիաթի սյուժեի հիման վրա, իհարկե, «կարծեցյալ հերոսի» այլեալլ միջազգային տարբերակների և բանահյուսական-դրական ավանդների հարստացման ճանապարհով, հայ գրականության մեջ ստեղծվել են Քաջ Նազարի գեղարվեստական մշակումները, որոնց մեջ են Հովհաննեսի համանուն հերիաթը, Ավ. Խսահակյանի «Աղա Նազար» պատմվածքը, Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» կատակերգությունը, Ստ. Զորյանի և Համաստեղի նույնանուն հերիաթիները և այլն:

Մրանց մեջ գեղարվեստական բարձր արժեքը, անտարակույս, Հովհաննեսի «Քաջ Նազար» հերիաթն է, որը սկզբնավորեց «Քաջ Նազարականության» երեսութիւն գրական մեկնաբանության ավանդությունը՝ ուղիներ բացելով մյուս գրողների համար:

Պատահական չէ, որ ինքը՝ Հովհաննեսի «Քաջ Նազար» հերիաթին է ամբողջ ամենակարգինը համարել է «Քաջ Նազարը». «Ես միայն մի հերիաթ եմ մշակել կարգին»<sup>17</sup>:

Հովհաննեսի «Քաջ Նազար» հերիաթին է ամբողջ ամենաբանության իրախանքը<sup>18</sup>, ծաղրում է, նախ և առաջ, «մարդկային հիմարության խրախնանքը», երկյուղի և ստորագրության այն հոգեբանությունը, որի հիմքի վրա տվյալ հասարակության մեջ բարձրանում է Ոչնչությունը և իրավունք է ստանում ամբարտավանորեն նայելու աշխարհի վրա:

«Ի՞նչ քաջություն, ի՞նչ խելք, ի՞նչ հանճարա»,—դատարկ բաներ են բոլորը: Բանը մարդուն տված բախտն է: Բախտ ունես—քեֆ արա»,—սա է Քաջ Նազարի «իմաստությունը», որի հիտ Թումանյանը համաձայն չէ՝ իրու կյանքի սկզբունք, բայց միանգամայն համերաշխ է իրու կյանքի մշտառե օրինաշափություն:

Թումանյանի մեկնաբանության մեջ ուշագրավ է կույր նախապաշար-մունքների վրա հենվող ամբոխային հոգեբանության դեմ ուղղված ծաղրը, այն հոգեբանության, որով առասպելական հերոսի աստիճանին է բարձրաց-վում սովորական պարծենկոտ-ստախոսը:

Թումանյանի մշակած հերիաթում գաղափարական հիմնական դրույթը հասարակական այն միջավայրի մերկացումն է, որը Ոչնչությունից այնպիսի կուռքեր են ստեղծվում, որոնք աղետ են դառնում նույն միջերը հրահրող «բազմության» համար:

Մեկնաբանությամբ Թումանյանի Քաջ Նազարից էական տարբերություններ ունի Ավ. Խսահակյանի Աղա Նազարը: Սա «կարծեցյալ հերոսի» ավելի կենցաղային-գեղջկական տարատեսակն է, անօրեական բնավորություն՝ Թումանյանի «համամարդկային» կերպարի համեմատությամբ:

Ժողովրդական սյուժեի խսահակյանական մշակման մեջ առանձնապես կարերվում է «բախտի», «նախախնամության», «կույր ճակատագրի» մոտիվը (մեկը բախտ ունի, մյուսը՝ ոչ), ուստի և Ավ. Խսահակյանը հուզական-գա-

դափարական շեշտը գցում է ֆատալիստական հոգեբանությունը պատագեր-ժելու խնդրի վրա:

Հովհ. Թումանյանի և Ավ. Խսահակյանի վերստեղծած կերպարներից «ան-կախ», ինքնուրույն կերպար է Համաստեղի Քաջ-Նազարը:

Զբաղմունքով փորագրիչ-արվեստագետ, Համաստեղի նազարը փայփա-յում է ինչ-ինչ ցնորքներ, բայց նրա երազանքները փշրվում են՝ հանդիպելով կոպիտ իրականությանը:

Թեև արձակագիրը ցնորքներով ապրող իր հերոսին իջեցնելով երկրային հարաբերությունների վրա, պատահագերծում է նրա հոգեկան աշխարհի դա-տարկությունը, բայց և ինչ-որ տեղ էլ կարեկցում է նրան, ասելով, որ մեղա-վոր է այն իրականությունը, որն անկատար է թողնում «փոքր մարդու» նվազ երազանքները:

Ի տարբերություն Հովհ. Թումանյանի մոնումենտալ-փիլիսոփայական, Ավ. Խսահակյանի՝ գեղարվեստական-կենցաղային, Համաստեղի՝ պայմանական-երազող Քաջ նազարների Դ. Դեմիրճյանի կատակերգության հերոսն իր տի-պարանական հատկանիշներով շատ ավելի մոտ է «պատմական» հերոսի ախպին:

Դ. Դեմիրճյանն, անտարակույս, հետևել է Հովհ. Թումանյանի մշակած հեքիաթի գեղարվեստական սկզբունքներին և դադափարական դրույթներին, օգտվել է և թումանյանական սյուժեից, և «փիլիսոփայությունից», բայց «Թուլ է տվել» այնպիսի «շեղումներ», որով քաջ-նազարիզմը՝ հավերժական երևույթը, ներկայացվում է իրեք արդիականության կոնկրետ երևույթ:

«Դերենիկ Դեմիրճյանի դրամատուրգիան» ուսումնասիրության մեջ Տիգ-րան Հախումյանը գրում է, որ Դեմիրճյանը «Դիտում է կյանքը նրա առանձին քնորոշ կոնկրետացումների մեջ, լավ գիտենալով, որ դրանք բոլորն էլ ժամա-նակի հասարակական որոշ հարաբերությունների արգասիք են, որ դրանք ծըն-վել ու ձևավորվել են ինչ-որ պայքարի բովերում և հանդիսանում են, այդ-պիսով, գոյություն ունեցող ինչ-որ հանարակական հոգեբանության արտա-հայտություն»<sup>19</sup>:

Այս դիրքերով Դեմիրճյանը Քաջ-Նազարին, ինչպես իր պատմական ու ժամանակակից մյուս հերոսներին, տանում է կոնկրետ հասարակական հարա-բերությունների ոլորտը, նրա միջոցով ևս լուծելու «մարդու» իր բարոյախո-սությունը: «Եթե գրում էի «Քաջ նազարը», —խոստովանել է Դեմիրճյանը, — ես դեռ շարունակում էի մարդու լուսաբանությունը»:

Սա ամենեին չի նշանակում, թե թատերագիրը «մողեռնացրել է» ժողո-վըրդական բնագիրը, «Քաջ նազարին» դարձրել պատմական կոնկրետ հան-գամանքներում ու կոնկրետ հարաբերությունների մեջ գործող պատմական-իրական հերոս:

Դ. Դեմիրճյանի կատակերգության մեջ, ի տարբերություն մյուս մշակում-ների, Քաջ-Նազարն արձանանում է ժողովրդի դատ ու դատաստանին՝ կորց-նում է տիրակալի գահը:

Քաջ նազարի կործանման դեմիրճյանական լուծումը՝ աշխարհի վրա անա-մոթաբար ծիծաղող «հերոսներին» իրենց անսասան թվացող բարձրությունից ցած գցելու և մինչև վերջ մերկացնելու գաղափարական-գեղարվեստական դիմք, անտարակույս, ներշնչված է պատմության հեղափոխական շրջադարձից, արտահայտում է այդ շրջադարձի հոգեբանությունն ու բովանդակությունը:

Դրանով է բացատրվում նաև Դեմիրճյանի երգիծանքի դաժանությունն ու «չորությունը»՝ մյուս մշակումների ողբերգա-կատակերգական կամ կարեկ-ցական հնչերանգի համեմատությամբ:

Մինչ Հովհաննելով մամենկին քեն չունի Քաջ նազարի հանդեպ (ինչ մեզի տեր է), նույնիսկ երեխն կարեկցում է նրան իբրև «հալածվածի»՝ շրջապատից «հալածվածի», ծաղրն՝ ուղղելով հիմնականում երևույթը սնող բարբերի դեմ, մինչ Ավ. Խաչակյանը, ելնելով հերոսին արտոնված նախախնամության հրամայականից, նրա հանդեպ բանեցնում է գեղջկական բարեմիտ, ներող հումորի հնչերանգ, Դեմիրճյանը երևում է միանգամայն ուրիշ կեցվածքով:

Նրա Քաջ նազարը ոչ թե սովորական գեղջուկն է, այլ ամեն մի քայլով գահին մոտեցող ստահակը, ուստի և Դեմիրճյանը վարգում է «անողոքաբար», մինչև վերջնագիծը հասցնելով քաջ-նազարականության պսակազերծումը:

Դ. Դեմիրճյանի «Քաջ նազարը» ծիծառի իսկական խրախնանք է, ուր հավասարապես տեղ ու դեր ունեն և՛ կատակերգական դրությունները, և՛ հյութեղ ու սրամիտ դիալոգը, և՛, մանավանդ, Քաջ-նազարի «փիլիսոփայության» ինքնատիպ՝ դեմիրճյանական ճկուն պարադոքսները:

«Քաջ նազարը», Ե. Զարենցի մեկնաբանությամբ, «մեր լեզվի «ազգային ձևի»<sup>20</sup> դասական նմուշ է, մի երկ, ուր Դեմիրճյանը յուրացրել է լեզվի «ազգային ձևի ինքնուրույնության էլեմենտներ կուտակելու»<sup>21</sup> առաջադրությունը, որի շնորհիվ «նա կարողանում է ինքնուրույն լեզվական էլեմենտներով տալ ոչ միայն կոլորիտը, ոչ միայն երանգը, այլև սոցիալական բովանդակությունը»<sup>22</sup>:

Լեզվի ազգային ձեմի մշակումը, դարձալ Զարենցի դիտումով, Դեմիրճյանը տարել է ոչ միայն բառապաշտիրի», այլ սինտաքսիսի<sup>23</sup>, դժվարագույն այգ միշոցի, օգտագործման ուղիներով:

Հայ թատերագրության մյուս նշանակալից գեղարվեստական երևույթը Ալեքսանդր Շիրվանզարի «Մորգանի խնամին» (1926) կատակերգությունն է: Այս գործը ևս ասպարեզ եկավ «հաղթության արվեստի» Սիծաղի ծավալման տրամաբանությամբ:

Մինչ «Կապկազը» կառուցված է ժողովրդական թամաշայի՝ թատերահանդեսի սկզբունքներով, մինչ «Քաջ նազարում» Դ. Դեմիրճյանը դիմել է նորագույն «ֆանտաստիկական ռեալիզմի» արտահայտչությանը, «Մորգանի խնամին» դասական կատակերգության կանոններով կերտված գործ է:

Ստեղծագործական մեծ և արգասավոր ճանապարհ անցած գրողը՝ Շիրվանզադեն, որը եղել էր մի ամբողջ գրական ուղղության՝ քննադատական ռեալիզմի, ճանաչված պարագլուխը, նաև տեսականորեն հիմնավորել էր խորհութեանության և կյանքի ճշմարտության գեղագիտությունը, բնական է, որ չէր կարող հրապուրվել նորագույն հոսանքների ձևաբանական առաջադրություններով: Նրան լիսով բավարարում էր դասական թատերագրության արտահայտման լեզում և ոճը:

Ազգային թատերագրության մեջ «Մորգանի խնամին» երևույթ է և՛ իբրև քաղաքական կատակերգության երենելի նմուշ, ուր նորից փայլատակեց կոնֆլիկտի զարգացման և լուծման, կատակերգական ծաղրի ու դիալոգի վարպետությունը, և իբրև ականավոր գրողի քաղաքական համակրանքներն ու կեցվածքը ներկայացնող ստեղծագործություն:

Մինչև «Մորգանի խնամին» Շիրվանզադին արդեն անցել էր կյանքի և գրականության մեծ ճանապարհ:

Ապրելով բուրժուական հասարակության ձեւավորման պայմաններում՝ (XIX դարավերջ—XX դար) Շիրվանզադեն ճանաչել էր այդ հասարակության խոր հակասությունները և իր ստեղծագործությամբ դարձել կապիտալիստական կարգի ու նրան բնորոշ հոգեբանության համոզված, անհաշտ քննադատը։ Առաջին իսկ պատմվածքից («Հրդեհ նավթագործարանում») սկսած Շիրվանզադեն գեղագետի հղոր վրձինով ներկայացրել է բուրժուական աշխարհի խոր ողբերգությունները, մարդու կործանումը և հասարակական քառորդ։ Մի ինչուր ժամանակ փայփայելով լիբերալ-լուսավորական պատրանքներ, ինչուր տեղ ձայնակցելով «մարդու կատարելագործման» բարոյախոսական-իդեալիստական տեսություններին, Շիրվանզադեն, այդուամենայնիվ, եկել էր այն եղբակացության, որ բուրժուական աշխարհը դատապարտված է պատմականորեն։



Ժայաստան և եռանդուն մասնակցություն բերեց սոցիալիստական նոր մշակույթի կառուցմանը։

Նրա ստեղծագործական ճանապարհը մեջ հայտնվեց «սովետական շրջան» բաժանումը։ Այդ տարիներին (1926—1936) նա գրեց մի շարք հրապարակախոսական հոդվածներ, «Վերջին շատրվան» կինոսցենարը, ավարտեց «Կյանքի բովից» հուշապատումի երկու գիրքը՝ հայ մեմուարային գրականության գագաթը, գրեց «Մորգանի խնամին», որն արդեն կես դար է լի իշնում հայ բեմից։

«Մորգանի խնամին» կատակերգությամբ Շիրվանզադեն ամբողջացրեց բուրժուական հասարակության զարգացման ու կործանման այն պատմությունը, որ նա սկսել էր անցյալ դարի 80-ական թվականներից՝ առաջին ակնարկներից ու պատմվածքներից հասնելով այնպիսի հղոր գեղարվեստական ընդհանրացումների, ինչպիս «Քառորդ»՝ հայ ուսալիստական վեպի պսակը, «Պատվի համարը»՝ հայ ուսալիստական դրամայի զարդը, մի շարք այլ մեծարժեք երկեր։

Բուրժուական հասարակության գեղարվեստական նկարագրությունը՝ այդ հասարակության հանդեպ ունեցած քննադասական-մերկացնող վերաբերմունքը, «Մորգանի խնամին» կատակերգության մեջ հասցվում է տրամաբանական ավարտի։

Պատմություն ընթացքի խոր կուհումը և այն ըմբռնումը, թե հեղափոխությունը վերջնականապես լուծել է հին հասարակությանը բնորոշ սոցիալական հակասությունները, Շիրվանզաղեին դնում են անհաշտ, անզիջում, արմատական հարաբերության մեջ գեպի բուրժուական աշխարհի ջղաճումներն ու քառորդ մարմնացնող այն ուժերը, որոնք քաղաքական լեզվով կոչվում են «վերշին մոհկաններ»:

Այս հասկացության տակ են խմբվում քաղաքական վտարանդիության անփառունակ ճանապարհը բռնած նախկին կապիտալիստներն ու «սպիտակ գվարդիականները», որոնց «վերադարձի» «սուրբ դաշինքը» արժանանում է հաշտության ու մի եզր հանդուրժող հեղինակի սպանիլ ու կծու երգիծանդին: Նախկին արդյունաբերողները, իշխաններն ու ցարական գեներալները «Մորդականի խնամին» կատակերգության մեջ երևում են և իրենց անբովանդակ, մեռած կինցաղով, և իրենց քաղաքական սնանկ ծրագրերով, արտահայտելով գեմոկրատիային թշնամի աշխարհայացքը: Դրանով է բացարկվում ծաղրի խստությունը, ծիծաղի այն որակը, որը կարելի է կոչել՝ «ծիծաղ առանց ներողամտության»:

Շիրվանզաղեի ստեղծագործության հետազոտող Հր. Թամրազյանի ճիշտ նկատողությամբ<sup>24</sup>, «Մորդականի խնամին» իր էությամբ քաղաքական կատակերգություն է, թեև նրանում տեղ ունեն նաև կինցաղային և սոցիալական կատակերգության գծերը:

Այս կատակերգության մեջ, Պետրոս Մինթուկի զավեշտական պատմությունից բացի (սա է պիեսի սյուժետային հիմքը) ծավալվում է դրամատիկական սուր կոնֆլիկտ, որի մի ծայրում են քաղաքականապես ու բարոյապես անանկացած վտարանդիները (իշխան Արղութով-Լայնակզակ, ցարական նախկին գեներալ Շպուլենկո, նաև կին նավթարդյունաբերող Մինթուկ), մյուս ծայրում՝ այդ կործանվող միջավայրի հետ կապերը խզած, սոցիալական առաջադիմության իմաստը կուհած Արտաշեսն ու Լիզան:

Մինչ առաջինները կատակերգության մեջ երևում են իբրև ժխտվող սոցիալական ուժեր, որոնց միապետական ցնորդներն ու վերադարձի մնանկ սպասումները արժանանում են հեղինակի դատ ու դատաստանին, ապա երկորդներն իրենց քաղաքական համակրանքներով՝ սոցիալիստական նոր հանրակարգի հանդեպ ունեցած վերաբերմունքով, դառնում են այդ ժխտվող սոցիալական ուժերի բարոյական դատավորները:

Առաջին շրջանի կատակերգությունը իր նյութը քաղում էր կամ ժողովրդական բանահյուսությունից (ինչպես «Քաջ-Նազարյան»)՝ փիլիսոփայական լայն խնդիրներ բարձրացնելու համար, կամ էլ երգիծական մտրակման ոլորտի մեջ էր առնում պատմական ընթացքով արդեն դատապարտված հասարակական ուժերին («Կապկազ», «Մորդականի խնամին»): Ժողովրդին «հիշեցնելու» իրեն իսկ գեմընթաց ուժերի անփառունակ վախճանը:

Արդիական կյանքի նյութը կատակերգություններ չեն գրվում, մինչդեռ իրականությունը, որն անխոռվ, իդեալական ներդաշնակություն չէր, տալիս էր դրա նյութը: Հասումանում էր այդ նյութը կատակերգության ոլորտի մեջ բերելու պահանջը:

1932-ին իր մի հոդվածում Ստեփան Զորյանը այդպես էլ գրեց. «Ինչո՞ւ չգրել խորհրդային «Անկիղոր»<sup>25</sup>, թատերագիրների ուշադրությունը հրավիրելով սոցիալիստական իրականությանը խորթ երևույթների երգիծական խարթը՝ ման վրա:

Ավելի դիպուկ էր Դ. Դեմիրճյանի խոսքը. «Ահագին մի երկիր չի կարողանում գոնե այնքան թերություն ու պատճառ ունենա, որ գրականության մի կարեռ ձյուղ, ինչպես երգիծանքն է, «ժաղկի»<sup>26</sup>:

Հասարակական հարցասիրությանը շուտով տրվեց գեղարվեստական համոզիչ և ուղղակի պատասխան:

Դ. Դեմիրճյանը 1934-ին գրեց «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգությունը: Սա իր կառուցվածքով ու մտահղացումով գոգոլյան «Վերաբնիլը» հիշեցնող սուր և նպատակաւուց գործ է:

«Նապոլեոն Կորկոտյան» կատակերգության մեջ, համարյա «քաջնազարական» սրությամբ, փայլատակեց Դ. Դեմիրճյանի երգիծական խոսքի վարպետությունը, բայց նույն փայլը շունեցավ հանրային գույքի հափշտակիչների մերկացման սոցիալական սրությունը: Բանը միայն այն չէ, որ կատակերգության մեջ չի երևում բացասական գործող անձանց հակադրվող դրական ուժը (այս գերը իր վրա է վերցրել հեղինակը՝ «Վերաբնիլը» հիշեցնող միակ դրական կերպարը), այլև այն, որ երեւութը դիտվելու է նեղ-բարբագրական պլանով, առանց ծանրակշիռ հետեւթյունների:

«Նապոլեոն Կորկոտյանից» հետո հայ կատակերգությունն այլևս բնթացավ քնարական հումորի հունով, այսինքն հեռացավ հասարակական խոր հարցերի դրվագներից:

Վրա հասավ կատակերգության՝ երգիծական վախճանը:

## 5

20—30-ական թվականներին հայ թատերագրության մեջ ակուներ բացեց (իհարկե, ոչ այնքան խոր, երբեմն՝ նոսր ակուներ) պատմական թեման:

Բացի այն, որ պատմական նյութով վերականգնվում էր «Ժամանակների կապը», պատմական շերտեր շոշափող պիեսների ասպարեզ գալը բացատրվում էր նաև գեղարվեստական որոշ ավանդների կենսունակությամբ:

Հայ գրականության XIX դարը բառացիորեն ողողված էր պատմական ողբերգության և դրամայի նմուշներով: Այդ ժանրերի տարածումը անմիջականորեն կապված էր ազգային-ազտագրական գաղափարախոսության հետ, որը մի ամբողջ հարյուրամյակ՝ XIX դարի մի ժայրից մյուսը, ժողովրդի լայն խավերին համակած ու հասարակական հոսանքներին զբաղեցնող հիմնական դադափարախոսությունն էր՝ այլևայլ տարբերակներով:

Հայ կլասիցիստները, իսկ այնուհետև՝ ոռմանտիկները, հայոց պատմության խորքերից, պատմագրքերից ու տարեգրություններից, պեղում էին նշանավոր թագավորների, հայրենասեր նախարարների ու զորավարների կերպարներ, նրանց օրինակով կենդանի պահելու ժողովրդի ազգային-հայրենանիրական գիտակցությունը, շրջանառության մեջ պահելու «ազգության մեծարանքի» հոգեբանությունը:

XIX դարը, կարելի է ասել, շնորհ էր IV—V դարերի կերպարներով ու կրոֆերով, զգեստներով ու ապրումներով,— արդիականությունն ապրում էր անցյալի պաշարների հաշվին:

Ավանդական-պատմական թատերագրությունը՝ և կլասիցիստականը, և ոռմանտիկականը՝ հավասարապես «արշակյան», «վարդանյան», «սանդուխտշուշանիկյան» և այլն ցիկլերով, իր նպատակները սահմանափակելով սոսկ հայրենասիրական զգացմունքի պանծացման ու «անցյալի մեծարանքի» խըն-

գիրներով, չէր բերում գեղարվեստական արժեքայնության պայմանը՝ ճշմարիտ պատմականությունը:

Բնավ պատմական չէ, որ այդ թատերագրությունը արժանանում էր ժամանակի զգաստ մտածողների՝ Մ. Նալբանդյանի, Հ. Պարոնյանի և այլոց սուր քննադատությանը:

Նկատի ունենալով XIX դարում մեծ տարածում գտած «վարդանյան» ցիկլի թատերագրության ոչ պատմական բնույթը, Հ. Պարոնյանը գրում էր. «Մեկուն մեջ կնայիս, որ Վարդանը պատերազմին մեջ կմեռնի, մյուսին մեջ՝ Տղմուտ գետին մեջ կխեղդվի, մեկելին մեջ՝ պատերազմե դառնալեն ետքը կմեռնի, վերջապես ամեն մարդ ուզածին պես կմեռցնե Քաջն Վարդան, եկու տես, որ Քաջն Վարդան այս ողբերգությանց մեջ ալ կցուցունե յուր քաջությունը, զինքը մեռցնող ողբերգակներուն մեծագույն մասն ալ ինքը կմեռցունե...»<sup>27</sup>:

Ավանդական պատմական թատերագրության ամենամեծ թերությունը՝ պատմական ճշմարտության հանդեպ ասպարեզ բերած կամայականությունը, քացատրվում էր, ամենից առաջ, գեղարվեստական մտածողության սոցիալական նստվածքների քացակայությամբ:

Կասիցիսաւ և ոռմանտիկ ողբերգակները պատմությանը նայում էին «վերականգնողի» հայացքով, առանց խորամուխ լինելու պատմության ներքին տրամաբանության, նրա իրական, սոցիալականորեն ու հոգերանորեն հիմնավորված սյուժեների մեջ։ Սա էլ, իր հերթին, դուռ էր բացում պատմական սխեմատիզմի, անկենդան հերոսների, պատմական նյութի մատուցման ոչ գեղարվեստական ձևերի առաջ:

Ինքնին հասկանալի է, որ պատմական դրամայի այս ավանդությունը ոչ միայն չէր կարող դառնալ սոցիալիստական թատերագրության զարգացման ելակետը, այլև, հակառակը, պատմական նոր գրաման հակադրվելու էր ավանդականին՝ ասպարեզ բերելով իր նոր սկզբունքները։ Այս հակադրության արտահայտություններն էին, մասնավորապես, Եկատերինա Բահաթուրի պատմական ողբերգությունները՝ «Արտավագդ», «Թոնդրակեցիներ», «Մբատ Բագրատունի» և այլն։

Ուշագրավ է, նախ ե՛ առաջ, պատմական ողբերգության հերոսի ընտրությունը։ Մինչ ավանդաբար թատերագրությունը դիմում էր թագավորների («արշակյան ցիկլ»), զորավարների («Վարդանյան ցիկլ»), քրիստոնեական հավատի նահատակների («Սանդուխտ-շուշանիկյան» ցիկլ) կերպարներին, ե. Բահաթուրը պատմության սոցիալական բովանդակությունը վերհանելու նպատակով դիմում էր բանահյուսական կերպարներին՝ արքայազն Արտավագդի լեգենդին, Թոնդրակեցիների կես-պատմական, կես-առասպելական շարժմանը և այլն։

Հերոսի ընտրությամբ իսկ արդեն Բահաթուրը հայտ էր ներկայացնում հաղթահարելու պատմական դրամայի ավանդության սահմանափակությունը և պատմականության որակը հիմնավորելու սոցիալական շերտերով։

Պատմական անցյալի մեկնաբանության այս ճիշտ միտումը Բահաթուրի գործերում հասավ ծայրահեղության։

Այսպես, «Արտավագդ» ողբերգության մեջ, հենվելով Մովսես Խորենացու, Եզնիկ Կողբացու և Վ դարի գրական այլ հուշարձաններում պահպանված տըվյալների վրա, Բահաթուրը փորձում էր տալ լեգենդի իր մեկնաբանությունը։ Մինչ «վիշապների» կողմից բարայրում արգելափակված Արտավագդը, միշ-

նադարյան պատմիչի (Մ. Խորենացի) և փիլիսոփայի (Եզնիկ) բացատրությամբ, արտահայտում էր շար և բարի ուժերի դիցաբանական պատկերացումը, Բահաթուրի դրամայում նույն Արտավազդը երևում է իբրև մարդկությանը ստրկության շղթաներից ազատագրող հերոս, սոցիալական արդարության առաջալ:

Այս մեկնաբանությունը, անշուշտ, իր վրա կրում էր ժամանակի շոնչը, այն ժամանակի, որը յուրովի խմբագրում էր պատմությունը, ամեն ինչ կապելով «դասակարգային» հոգեբանության հետ:

Պատմական ճշմարտության հայտաբերման իմաստով՝ ավելի ճշմարտանման էր Ե. Բահաթուրի մյուս դրաման՝ «Թոնդրակեցիները», որի նյութը քաղված է ավանդական պատմագրության կողմից մոռացված միջնադարյան աղանդավորական շարժումներից:

Բայց «Թոնդրակեցիներում» նույնպես արտահայտվեց պատմությունը ըստ ժամանակի պատկերի սրբագրելու միտումը, այն, ինչ կոչվում է «պատմության մոդեռնացում»:

Միջնադարյան աղանդավորական շարժումը, որն իր մեջ անպայման պարունակում էր սոցիալական խոր նստվածքներ, «Թոնդրակեցիներ»-ում երևում է սոցիալական այդ նստվածքների բացարձակացումով, միանգամայն շղթայագերծված միջնադարի բնորոշ հոգեբանական հակասություններից ու պատմական յուրահատուկ գծերից:

Մոդեռնացման ճանապարհով պատմությունը պարզունակացնելու, պատմությանը ոռմանտիկական լուսապսակ հագցնելու միտումը տիրապետող գեղարվեստական հոգեբանություն էր:

Դա արտահայտվեց հետո Լ. Միքայելյանի «Գոշ» դրամայում, ուր միջնադարյան ճորտը երևում է ֆեոդալական կապանքները գրոհող, սոցիալական գիտակցության բարձրագույն աստիճանին հասած առաջնորդի դերով, և Վ. Վաղարշյանի «Սասունցի Դավիթ» պիեսում:

Հայ ժողովրդական վեպը, ժամանակի պահանջով, այս տարիներին նյութ է մատակարարում արդիականությանը՝ լուծելու ժողովրդի պատմական մաքառման խնդիրները:

Երևան են գալիս նաև վիպերգի դրամատիկական մշակումներ, որոնց առաջնեկը Գ. Ալթունյանի «Սասունցի Դավիթն» էր, ապա՝ Ա. Աթայանինը, հետո՝ Վ. Վաղարշյանինը:

Բոլոր այս մշակումներում պակասում է էպոսի պատմական շոնչը և, հակառակը, իշխում է քաղաքական ու սոցիալական նստվածքների ծայրաստիճան բացարձակացումը, ժամանակի քննադատության լեզվով ասած՝ «հոգի մոդեռնացումը»:

Ընթանալով այդ ճանապարհով, թերևս ցանկանալով արդի ժամանակաշրջանի մեջ տեսնել պատմության արձագանքները, Վ. Վաղարշյանը գրեց վերպատմական, ըստ էության՝ էպոսի բուն ոգուն անհարազատ մի պիես, ուր ժանրության կենտրոնը դարձել էր արաբական հարկահանների դեմ ժողովրդի բարձրացրած ու սոցիալական լայն ծրագրերով գիտակցված ապստամբությունը:

Պատմական իրադրությունը տեղադրելով էպոսային հարաբերությունների մեջ, թատերագիրը փաստորեն հասել էր հակառակ արդյունքի՝ պատմության անստույգ մեկնաբանության:

Երեսնական թվականներին հայ թատերագրության մեջ երևում են նաև պատմության ավելի սթափ թափանցումներ:

Դրանց շարքում է Դ. Դեմիրճյանի «հրկիր հայրենին» (1939)՝ թատերագրության արվեստի առումով էական պակասներ ունեցող մի գործ, որը, սակայն, պատմականության առումով հարազատ է ներկայացնում միջնադարյան Հայաստանի իրադրությունը:

Աղդային անկախության ու օտար կողմնորոշման (բյուզանդական) բարդ քաղաքական հարաբերությունների ընթացքում Դ. Դեմիրճյանը ներկայացնում

է նաև ժողովրդական ներքնախավերին, նրանց հայրենասիրական իդեալների ու դեմոկրատական ձգտումների մեջ դիտելով հայրենիրի կենսունակության աղբյուրները: Անին կառուցող վարպետները դառնում են նաև երկիր հայրենիի պաշտպանները, — սա է գեղարվեստական այն գլխավոր միտքը, որ քարոզում էր Դեմիրճյանի պատմական դրաման:

Հայ թատերագրության մեջ աշքի ընկնող երեսույթ եղավ նաև նշանավոր զերասան Մ. Զանանի «Շահնամե» պատմական ողբերգությունը՝ արժանանալով լավագույն պիեսների համամիութենական մրցանակաբաշխության երրորդ մրցանակին, Վ. Կիրշոնի և Վ. Կոչերգայի պիեսներից հետո:

Հեմական անվիճելի արժանիքներ ունեցող այս պիեսում, պատմական-քանահյուսական նյութի վրա՝ քաղված արևելյան Փոլկորից ու գրական աղբյուրներից (Ա. Դավրիծեցի, Չուղայեցի և այլն) թատերագրից արծարծում է այն գաղափարը, որ բռնապետությունը և ժողովրդասիրությունը անհամատեղելի հասկացություններ են:

Պայմանականորեն պատմական կարելի է համարել նաև մոտավոր անցյալի՝ Հայաստանի քաղաքացիական կոիվների որոշ դրվագները ներկայացնող պիեսները՝ Վ. Վաղարշյանի «Օղակումը», Ա. Գուլակյանի «Արշալույսինը», Գ. Սարյանի «Երեք երգը» և այլն:

Սրանց մեջ թատերագրական որոշակի որակ է «Օղակումը» սովետական իշխանության հաղթանակի համար Զանգեզուրի գյուղացիների պայքարի կենդանի տեսարաններով և, մանավանդ, գեղջկական դարավոր փիլիսոփայությունը մարմնացնող Ասլան ամուցայտուն, հյութեղ կերպարով:

րական-բարոյական կառուցվածքը արտացոլող ժամանակակից դրամայի ստեղծումն էր, ասել է թե՝ պատմական նոր ժամանակի էությունը, ոգին, հեռանկարն արտահայտող մարդկային բնավորությունների հայտնագործումը:

Հասարակական կյանքի զարգացման դրամատիկ, կոնֆլիկտային-բախումնային, «աններդաշնակություններով» լեցուն իրադրությունը հրամայարար հարուցում էր դրամայի ժանրի սովոր կարիքը, այն ժանրի, որի խնդիրների մեջ կարեռագույնը, ըստ ուսու սովետական հայտնի թատերագիր Ն. Պոգոյինի դասակարգման, կյանքի «աններդաշնակությունները» վերացնելն էր:

«Անցյալի ուրվականների» դեմ ուղղված սուր երգիծանքը՝ կատակերգության ժանրով, կամ աղդային պատմության հին շերտերի նորովի իմաստավորումը՝ պատմական ողբերգության ժանրով, անշուշտ կարևոր դեր ունեին խաղալու հասարակության կյանքում, բայց վճռական խոսքը սպասվում էր դրամայից՝ նոր հասարակության սոցիալական-բարոյական դիմանկարը հաստատող և՝ կյանքի «աններդաշնակությունների» աղբյուրները բացահայտող ժանրից:

Իսկ ժամանակակից դրամայի յուրացումն ինքնին ստեղծագործական շափազանց դժվարին խնդիր էր:

**Մի շարք առումներով:**

Բացի այն, որ պատմական նոր իրականության նյութը՝ «դարաշրջանի դիմանմիզմը», կամ, ինչպես այդ տարիներին էին ասում՝ «պատմության արագությունը», կանխում էր երևույթների բուն խորքերը թափանցելու հնարավորությունը, ասպարեզի վրա էին մի շարք տեսական-գեղագիտական սկզբունքներ, որոնք ըստ էության, հրահրում էին զարգացման ոչ արդյունավետ, հեղհեղուկ, վիճելի ուղիներ:

Տեսական հրահանգներից ամենատարածվածն ու օրինականացվածն այն դրույթն էր, թե ժամանակակից դրաման կյանքի ճշմարտությանը հասնելու համար անպայման պետք է լինի «մասսայակերպ», պետք է բեմ հանի բացառապես ժողովրդի հավաքական զանգվածներին: Դրամայի «մասսայակերպության» սկզբունքը, ինչ խոսք, պայմանավորված էր ժամանակակից իրականության արմատական էությունը ճանաշելու ելակետով, բայց դառնալով կայուն գեղարկվեստական օրենք, ամենից առաջ խփում էր դրամայի բուն էությանը՝ նրանից օտարելով ներքին, հոգերանական դրամատիզմը, հակամարտ կրքերի և զգացմունքների բախումը:

Տեսական այդ դրույթի հետ անմիջականորեն կապված էր թատերագործության նպատակաբանական ուղղության առաջնայնության գաղափարը՝ անարյուն սխեմատիզմի և վերացական պաթոսի այդ հրահրողը:

Ժամանակի արվեստաբանական-տեսական միտքը դեգերում էր նաև ուրիշ մոլոր ուղիներում, ինչպիսին էր, օրինակ, ժանրի «արմատական» վերակառուցման, այսինքն՝ «կանոնազանցության» հայացքը:

Վերանայել դասական դրամայի բոլոր կանոնները, — անարխիստական այս հայացքը թեև ենում էր կյանքի մեջ առաջ եկած նոր հարաբերությունների և բախումների արտակարգ սրությունը արտացոլելու անհրաժեշտությունից, բայց, ըստ էության, ականներ էր զնում թատերագրության ստուգված ճանապարհին:

Տեսական սխեմատիկ, հաճախ անորոշ և անկայուն հրահանգներին գումարվում էր նաև թատերագործության «սպեցիֆիկայի» հետ կապված դժվարությունը:

Հնուց ի վեր հայտնի դժվարությունը, թե դրաման (լայն առումով) գրականության դժվարին ժամրն է, ավելի քան ճշտվում էր պատմական նոր իրադրության մեջ, կյանքի նոր նյութի ուժեղ «դիմադրության» պայմաններում:

Քսանական թվականներին թեև երևացին նոր իրականության նյութը շոշափող մի շաբթ թատերապատկերներ, ինչպես քաղաքացիական կոփվների դեպքերին նվիրված Դ. Դեմիրճյանի «Հաղթական սիրո երգը» (1926) դրամատիկական էսքիզը, անցյալի գյուղի խավարը պատկերող Լ. Սաղաթելյանի «Մի կտոր հողի համար» պիեսը, գյուղի սոցիալիստական դարթոնքը ներկայացնող Ա. Ղարագյուղանի «Կոմսոմոլ Աստղիկը», Վ. Վաղարշյանի «Նավթը» արդյունաբերական թեմայով, Ան. Վարդանյանի՝ գյուղական կյանքի պատումները, թեև թատերական ազդագրերում երևացին ուրիշ վերնագրեր, բայց դրանք շդարձան արվեստի երևույթներ, նախ՝ հերոսների միագիծ սոցիալական մեկնաբանության, պիեսների նպատակաբանական սիեմատիզմի, այնուհետև՝ երևույթների մատուցման նեղ-բարքագրական մեկնակետի պատճառով:

Թեև չկար մեծ զգացմունքների և մեծ կրքերի ժամանակակից դրաման, բարդ, բազմաշերտ կյանքի սուր դրամատիզմը՝ հնի ավերման ընթացքում ծնվող նոր հոգեբանությունը բացահայտող ժանրը, բայց հասարակական հրատապ խնդիրներ հրահրող այդ ժանրի պահանջն այնքան մեծ էր, որ ժամանակի մամուլը բառացիորեն ողողված էր դրամայի կարիքը հիմնավորող քննադատական-տեսական ելույթներով:

Մինչ այլ դեպքերում, ասենք, օրինակ, պոեզիայի և արձակի դեպքում, տեսությունը մշակվում էր նյութից հետո կամ գրական նյութին գուգընթացար, այստեղ տեղի ունեցավ հակառակը՝ տեսությունն առաջ ընկալ թատերական գործնականից:

Ժամանակակից դրամայի տեսության հարցերը խոր, երբեմն հակասական, երբեմն վիճելի մեկնաբանություն ստացան Դերենիկ Դեմիրճյանի մի շաբթ հողվածներում: Դ. Դեմիրճյանի դրամատուրգիայի մեկնաբան Տ. Հախումյանի միանգամայն միշտ դիտողությամբ, Դ. Դեմիրճյանը այդ տարիներին ստեղծեց «սոցիալիստական դրամայի իր համակարգը»<sup>28</sup>, որը նկատելի դեր խաղաց հայ սովետական գեղագիտական մտքի պատմության մեջ:

Թատերագրության ընդհանուր և «սպեցիֆիկ» հարցերը թեև Դ. Դեմիրճյանին զբաղեցնում էին դեռ նախահեղափոխական տարիներից, բայց նրա մտքերն ու դիտողությունները կայուն համակարգի տակ դրվեցին երեսնական թվականների սկզբին, երբ մեկը մյուսի ետևից լույս աշխարհ եկան նոր թատերագրության զարգացման հարցերն արծածող, գրականության այդ ասպարեզի հրատապ խնդիրները յուրացնող խորաթափանց հողվածներն ու հրապարակային ճառերի սղագրությունները:

Հայ սովետական թատերագրությունը 30-ական թվականներին, «խանձարուրային» կամ «նախնական կուտակման» շրջանը անցնելուց հետո, կանգնեց իր զարգացման հեռանկարները պարզելու անհրաժեշտության առաջ: Սկզբ առան բուռն, ծայրաստիճան կրքուտ վիճաբանություններ, թատերական մթնոլորտը լցվեց տեսական խոսք ու գրույցով, ուր առանձնապես ծանրակշիռ հնչեց թատերագրական մեծ փորձի տեր և, մանավանդ, ինքնատիպ մտածող Դ. Դեմիրճյանի խոսքը:

Հատկապես կարեռելով դրամայի և իրականության կապերի խորացման խնդիրը, Դ. Դեմիրճյանը այդ կապի գլխավոր պայմանը տեսնում էր ոչ այ-

լուր, քան դրամայի դրամատիզմի, այսինքն՝ ժամրի տոհմական-գենետիկական հատկանիշների վերադարձի մեջ:

Առանց այդ պայմանի՝ դրամատիզմացված դրամայի, —ասում էր Դեմիրճյանը, —անհնարին է պատկերել իրականության՝ քանդման և կառուցման ժամանակաշրջանի, ամբողջ բարդությունը, հասարակական զարգացման հակասական, կոնֆլիկտային բնույթը, անհնարին է հասնել բախվող ուժերի ճշշմարտությանը:

«Դրամայի դրամատիզմի» հանգույցի լուծումը Դեմիրճյանը ենթադրում էր բուն իրականության մեջ, այդ իրականության զարգացման ներքին զըսպանակները ասպարեզ հանելով, ավելի ստույգ՝ այդ իրականության ներքին բարդությունը կրող և ներքին բախումները արտահայտող հերոսի մեջ:

Նա առաջադրում էր հոգեբանական հարուստ կնճիռներ, հոգեկան ներքին հակամարտություն ունեցող հերոսի յուրացման՝ իբրև իսկական (և ոչ թե արտաքին) դրամատիզմի, պահանջը:

Դրամայի դրամատիզմի խնդրի տեսական քննության առումով վերին աստիճանի ուշագրավ է գրողների համամիութենական առաջին համագումարում Դեմիրճյանի ունեցած ճառը, ուր իրեն հատուկ խորությամբ նա բացատրում է «Ներքին հոգեբանական կոնֆլիկտների», հերոսի ինքնաճանաշման, ինքնորոնման էությունը՝ իբրև ուսալիստական կենդանի կերպարներ ստեղծելու լիարժեք պայմանի. «Դրամայի և նրա հերոսների դրամատիկացումը կանգնած է սովետական թատերագրության օրակարգում: Բայց ի՞նչ ձևով դրամատիկացնել դրաման և նրա հերոսներին: Հերոսը, ինչպես դուք գիտեք, ինչ-որ պատրաստի բան չէ: Հերոսը պատրաստվում է լարված գործունեությամբ և դիալեկտիկորեն փոփոխական իրականության կողմից: Հերոսների ձևավորման ուղին դիալեկտիկական է, այստեղ թատերագրի խնդիրն է որոնել և բացահայտել հակասությունների միասնության արվիստը և ցուցադրել զարգացումը»<sup>29</sup>:

Իհարկե, այդ դրույթով Դեմիրճյանը նորություն չէր բերում դրամայի տեսության մեջ, ուր, սկսած Դիդրոյից և Լեսսինգից ներքին հոգեբանության պահանջը միշտ էլ եղել է իբրև հիմնական պահանջ, բայց այդ դրույթով նա ժամանակակից դրաման պաշտպանում էր այն միտումներից, որինք շեշտը գնելով արտաքին բախումների վրա, փաստորեն դրաման զրկում էին ժանրի տոհմական հատկություններից:

Սոցիալիստական թատերագրության զարգացման համար 20—30-ական թվականներին բացառիկ կարեռություն ունեցող հարց դարձավ «ժամանակակից թեմատիկայի յուրացման» խնդիրը:

Քրեստոմատիկական դարձած հայացքը, թե ժամանակակից դրաման կյանքի նյութով կարող է լիցքավորվել՝ միայն դիմելով բուն կյանքի երևույթներին, այն ժամանակ չուներ այժմյան պարզությունը:

«Հին» և «նոր» թեմատիկայի հարաբերության խնդիրը բնելով, Դ. Դեմիրճյանը կարեռում էր «սահմանագծեր» շքաշելու, այլ ժամանակակից մոտեցման, «հին նյութի» մեջ եղած արդիական նստվածքները հնչեցնելու մոմենտը, խնդիրը դուրս էր բերում փիլիսոփայական լայն տեսադաշտ, բայց և տվյալ կոնկրետ իրականությունն էր համարում դրամայի արդիականության սկզբնաղբյուրը: Այն իրականությունը, ուր մարդը մաքառում էր կեցության և բարոյականության նոր ձևերի հաստատման համար:

թամանակակից թեմատիկան համարելով թատերագրության արդիական դիմագծի ակունքը, Դեմիրճյանն առավել գնահատում էր երկրորդ քայլը՝ թեմայի գեղարվեստական յուրացումը, ժամանակի պատմական նստվածքների իմաստավորումը, երեսութիւնների բուն էությունը հասկանալը։ Մեկ անգամ չէ, որ իր հոդվածներում Դեմիրճյանը խոսում է թափանցումից, իմաստավորումից, խորացումից, «յուրացումից», այդ ամենի տակ հասկանալով ոչ միայն կյանքի մոտիմոտո, ուղղակի ճանաշողությունը, այլև ճանաշողության գեղարվեստական կիրառ։ «Յուրացումը թեմայի՝ դա միայն ճանաշողությունը չէ։ Յուրացումը դա կյանքի մեջ թափանցելու այն աստիճանն ու դրությունն է, երբ տվյալ կյանքի վայրը, մարդիկ, դեպքերը, գաղափարները դառնում են պատկերներ, կերպարներ, ապրումներ, հուզականություն»<sup>30</sup>։

Այստեղից հետեւում է դեմիրճյանական պարադոքսը «թեմայի հնացման» մասին. «Կալիս են որոշ տարիներ, կյանքը մեջ է գցում մարդիկ, դեպքեր՝ դրամատուրգիայի գրչին արժանի։ Եվ ահա սկսվում է հետաքրքրական մի երեւութ։ Տվյալ թեման ողողում է բոլոր պիեսների բովանդակությունը։ Ամենքը գրում են տվյալ թեմայի մասին...»

Եվ թեման հնանում է...»<sup>31</sup>։

Բայց, — շարունակում է իր միտքը Դեմիրճյանը, — հնանում է ոչ թե թեման, այլ մի ուրիշ բան՝ թեմայի արտահայտման ձևն ու եղանակը, հնանում է մոտեցումը։

Յուրահատուկ պարադոքսներով մերժելով «թեմայի հնացման» տեսակետը, Դեմիրճյանը նորից դնում է «օրվա շարիքայինի» և «դարաշրջանի մնայունի» ինդիրը, թափանցման և խորացման ինդիրը, բերելով Ա. Պ. Չեխովի օրինակը. «Օրվա հրատապությունը պատկերող դրամատուրգը՝ եթե չի գրանում նրա այն օղակը, որով այդ հրատապությունը կապվում է էպոխայի հետ, անցնում է իր ընտրած թեմայի հետ՝ հնանում է։ Չեխովի թեմաները օրվա շարիքային են եղել իր էպոխայի մեջ։ Բայց նա գտել է մնայուն օղակները, որով և կապել է այդ օրվա շարիքայինը ուրիշ էպոխաների հետ»<sup>32</sup>...

Թատերագրության տեսության դեմիրճյանական համակարգում կարմիր թելի պես անցնում է հերոսի պրոբլեմը։ Շարունակ և անընդմեջ հիշեցնելով մարդու նորացման դիալեկտիկան, նոր հսկերանության աստիճանական արթնացումը, ինչպես և նախազգուշացնելով թատերագրության «ապեցիֆիկայի» արտաքին հանգամանքների մեջ կղզիանալու վտանգից, Դեմիրճյանը նույն հետեւողականությամբ առաջնահերթ նշանակություն է տալիս «բնական էությանը»՝ «խարակտերի» դրվագքին, առանց որի թատերագրությունը չի կարող լինել ներգործուն արվեստ։

Բնավորության ճշմարտությունը նա կապում է հերոսի էության հետ։ «Խարակտերը բացվում է գործի մեջ, ներքին հակամարտության մեջ»<sup>33</sup>, Դ. Դեմիրճյանն այդ հերոսին ըմբռնում է նաև և առաջ իբրև մարդ, իբրև կենդանի և բազմակողմանի անհատականություն։

«Ի՞նչ բան է խարակտերը։ Դա նախ և առաջ մարդ է։

Մարդկային հատկությունները կարող են միայն խարակտերի ստեղծման հարցում օգնել։ Առանց խորքը թափանցելու, առանց ինքնատիպ գծերի, առանց մարդկային կենդանի հատկությունների խարակտեր չկա։ Խարակտերը որքան ընդհանրացում է, այնքան էլ կոնկրետ է, «տվյալ դեպքում է»։ Խարակտերը պետք է հանդես գա իր մտքերով ու ապրումներով, իր յուրահատուկ գծերով։ Այլապես նա կդառնա վերացական մարդ»<sup>34</sup>։

Մի այլ տեղ նա գրում է. «Ասել վերջին խոսքը հենց սկզբից՝ դա մամովի պիծն է: Այսպես չէ գրականությունը... նա սիրում է «գնալ խորքերը», թափանցել իրերի փիլիսոփայության մեջ, թաքնվել պատկերների ետևը, քողարկել իր տենդենցը, գեղեցկացնել իր ձևերը, գործել իր հուզական ապարատի միջոցով»<sup>35</sup>:

Սոցիալիստական դրամայի դեմիրճյանական քննություններում մեծ տեղ է տրվում ժանրին:

Խառնվածքով և մտածողությամբ լինելով ավանդական ժանրերը նորացնելու ջատագով, Դեմիրճյանը այս ելակետով էլ դառնում է թատերագրության ժանրային կառուցվածքին, Հրատապ Համարելով «գարաւշը ժանրին ընդգծումը. «Դրամա, ուրեմն և մոնումենտալ, ուրեմն և մեծակառույց մի օրյեկտ, որի մանրաքանդակը շպիտի խանգարի նրա «սինթետիկ» ստիլին, նրա ընդհանուր դիրքին... Դա մի հասարակական հանդիսավոր հուշարձան է, որ դիտվում է հեռվից, պերսպեկտիվից կամ դեպի պերսպեկտիվը և տարածությունը սքրում է մանրամասները, կենցաղը, հոգեբանությունը...»

Հանգույցի, կենցաղի, բարբերի, հոգեբանական նրբությունների ու համասական խճանումների մանրաքանդակը կընկնի հետին պլանը և առաջ կրաշմեն խոշոր գծերը, հաղթական կամարներն ու այուները, ընդհանուր կառուցվածքի ուշ շրջագիծը»:

«Մոնումենտալի» տեսությունը որոշ իմաստով արձագանքում էր սովետական դրամատուրգիայի ժանրային էության այն ասուլիսին, ուր մի թեում հանդես էին գալիս Կիրշոնը և Սֆինոգենովը՝ սիրո, կենցաղի անխուսափելի պահանջով, մյուս թեում՝ Վս. Վիշնևսկին և ն. Պոգոդինը՝ անհատական ապրումների ժխտումով։

Մոնումենտալի և մանրաքանդակի տեսությունը տեղադրելով ընդհանուր, սովետական, համամիութենական թատերագրության գործնականի մեջ, Դեմիրճյանը տարբերակում է երկու ուղղություն՝ «մասսայական» և «անհատական», «զանգվածային» և «կամերային», առաջնությունը տալով «մասսաների կյանքի մեջ կատարված բեկումը» արտացոլող մոնումենտալին, զանգվածային ոճին, սա համարելով նոր ոճի արտահայտություն, իսկ մյուսը՝ «ավանդական»։

Դրականության պատմաբանի իրավացի դիտումով Դեմիրճյանի «այս հայացքներն ունեին իրենց լույսն ու ստվերը Վերջիվերջո, իհարկե, դրամատուրգը միշտ էր նկատում հերոսական-ուժանտիկական և կենցաղային-հոգեբանական դրամաների տարբերությունները. Իրոք, առաջինում խոշոր գեր հն խաղում ոռմանտիկական պաթուսը, ընդհանուր գծերը, երկրորդը նույնպես ձգտում է կերպավորել, բայց գերազանցապես հոգեբանության, ներքին դրամայի և մանրամասների միջոցով։

Դեմիրճյանի հայացքների ստվերն այն էր, որ նա փաստորեն տիպականը տեսնում էր սոսկ ընդհանուրի և հերոսականի մեջ, ուելյեֆներ չեր տեսնում երկրորդի մեջ, այս տիպի դրամաների կերպավորման եղանակը համարելով մանրաքանդակը»<sup>36</sup>:

Դ. Դեմիրճյանից բացի ժամանակակից թատերագրության զարգացման հրատապ խնդիրները այս կամ այն տիսանկյունով քննության առարկա են դառնում Հ. Գյուղիքեխյանի, Տ. Հախումյանի, Գ. Աբովի, Վ. Թոթովենցի, Մ. Զանանի, Լ. Քալանթարի, Վ. Վաղարշյանի, Ս. Մելիքսեթյանի, Ա. Գուլակյանի և այլոց հոդվածներում։ Տեսական ասուլիսների հրահրմանը մեծապես

իսթանում է 1934-ից հրատարակվող «Խորհրդային արվեստ» ամսաթերթը, որը դառնում է հասարակական այն ամբիոնը, ուր բարձրանում են ժամանակակից հերոսի, թատերագրության ժանրերի, արտահայտչական նոր ձևերի, նատուրալիստական ու ֆորմալիստական միտումների հաղթահարման և այլ խնդիրները:

Սուրբ վեճերի ու տարածայնությունների ընթացքում ստեղծվում է տեսական մթնոլորտ, ավել կամ պակաս հստակությամբ պարզվում են սոցիալիստական թատերագրության հանգույցները:

Տեսական իրադրությանը զուգընթաց ստեղծվում են նաև ժամանակակից դրամաներ, որոնք հետաքրքրական են ոչ այնքան իրենց գեղարվեստական արժեքով, որքան որոնումներով, «դրամայի դրամատիզացիայի»՝ հոգեբանական թափանցման, միտումներով։ Այս առումով ուշագրավ է Դ. Դեմիրճյանի «Ֆուֆորային շողը», որն իր հսկ՝ հեղինակի բացատրությամբ, խնդիր ուներ «հասարակական կյանքը դրսից տանել ընտանիք»։

Այս մտահացումը, սակայն, չունեցավ խոր, հոգեբանական իրացում, ինչպես և թատերագրական որակ շեղավ Դ. Դեմիրճյանի մյուս պիեսը՝ «Ժողովրդական ճշմարտության հեքիաթը» պատմող «Կապուտանը»։

Թատերագրության տեսարան Դեմիրճյանը, որ անհաջու մարտնչում էր սխեմատիզմի՝ նպատակաբանական արվեստի դեմ, ստեղծագործական իր որանումներով շխուսափեց նույն սխեմատիզմից, կյանքի բարդ հարաբերությունների հասարակացումից։

Հարցը միայն այն չէ, որ այդ պիեսներում կա «մոնումենտալի», հերոսականի պաթոս, և ոչ էլ այն, որ գաղափարները ազդարարվում են հրապարակախոսական անմիջականությամբ։ Անհաջողության ավելի խոր պատճառն այն է, որ հեղինակին զրադեցրած գաղափարները թե մեկ, թե մյուս դեպքում, դրվելով կոնկրետ, շատ կոնկրետ, նեղության շափ ճշգրիտ բանաձեռի, դասագրքային սահմանների տակ, թատերագրին ետ պահեցին դրանց գեղարվեստական որոնման ու արտահայտման ուղիներից։ Այդ պիեսներում կար ընդհանուր տեսակետը, ընդհանուր, պատրաստի հայացքը, բայց շկար իր՝ թատերագրի ներքին ձայնը, իր անհատական տեսանկյունը, իր դրամատուրգիան։

Դրամայի նոր կառուցվածքի ու ձեի որոնումը հանգեցնելով՝ այսպես ասած «դրամատիկական բանաձեռին», դրա կյանքային համարժեքին, Դեմիրճյանը «Ֆուֆորային շող» (1932) պիեսում, նաև ժամանակի մյուս հայտնի թատերագիր Վահան Թոթովենցը իր «Երկու սուր» (1930), «Մոխրակույտ» (1936) պիեսներում դարձյալ դիմեցին լուսավորական-բուրժուական դրամայի «ընտանեկան» սյուժեին, ուր հերոսներն են յուրայինները՝ ազգական, արյունակից, բարեկամ։ «Ֆուֆորային շողում»՝ Ռադինը, կինը, Ռադինի քենին, սրա ամուսինը՝ Բերնացկին, «Երկու սուր» պիեսում՝ շեկիստ Ալյոշան, կինը՝ Մարգարիտան, կնոջ եղբայրը՝ Արսենը, կնոջ հորաքույրը։

Խնդիրը «ընտանեկան սյուժեի» ավանդականությունը չէ, այլ այն, որ այդ պիեսներում գլխավոր շեշտը գցելով սոցիալական գծի վրա, թատերագիրները պակաս ուշադրություն են դարձնում մարդկային՝ ներքին հակամարտությունների գծին, որի պատճառով էլ տուժում է դրամայի դրամատիզմը։

Դեմիրճյանն իր դրամաներում, մասնավորապես «Կապուտանում», շկարողացավ ընթանալ հոգեբանական թափանցման արահետներով, այլ զնացքնադատության (և պաշտօնական կարծիքի) բացած «կանաչ ճանապարհով», որը սխեմատիզմի ճանապարհն էր։

**Սխեմատիզմի հունի մեջ էին նաև ժամանակաշրջանի թատերագրության մյուս փորձերը, որոնցից մի քանիսը թեև ունեցան բեմական կյանք, բայց քիչ թե շատ ամուր հետագիծ շթողին թատրոնի պատմության մեջ:**

**Դրամաների մեծ մասում դրամատիկական բախումները փոխարինվում էին հակադրումներով (բացասական ու դրական հերոսների), կերպարները՝ գաղափարական ձայնափողությամբ, հուզականությունը՝ հուզական զեղումներով:**

**«Ժողով, ճառ, կրակոց,—գրում էր Ստ. Զորյանը 1932-ին,—սրանք են դրամայի «արտահայտչական զենքերը»<sup>37</sup>:**

**Այս իրադրության մեջ իսկական դրամայի, արդիական, բրեխտյան իմաստով փիլիսոփայական դրամայի հայտ ներկայացրեց Եղիշե Զարենցը, «Գիրք ճանապարհի» ժողովածուի մեջ (1933) տպագրելով «Աքիլես, թե՛ Պյերո», գործը՝ «դրամատիկական ինտերմեցո» ժանրային անունով:**

**Զարենցի դրաման, սակայն, շդարձավ ժամանակաշրջանի թատերագրական փաստ, որովհետև վերատպված (1934) հավաքածուի մեջ արդեն չկարայող գործը:**

## ՔՆՍԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1

XX դարասկիզբը հայ իրականության մեջ նշանավորվեց գրական քննադատության զարգացման նոր և բարձր աստիճանով։ Դրա առարկայական նշաններն էին առավել եռանդում մասնակցությունը ընթացիկ գրական շարժմանը, մեթոդաբանական տարրեր ուղղությունների սուր, սկզբունքային բանավեճերը, քննադատության ժանրային ինքնորոշումը («անջատումը» լրագրային հրապարակախոսությունից), ժանրատեսակների բազմազանությունը, հասարակական լայն տեսագիծը, գեղարվեստական արժեքայնության շափանիշների կիրառումը, գրականության զարգացման կենսուների սթափ կուահումները և այլն, և այլն։

Քննադատության առաջընթացի երկույթը հետևյալ կերպ բնութագրեց Հովհ. Թումանյանը. «Մուրիկ» օրերից սկսած մեր մեջ երկում են գրական հասկացողության ու ճաշակի տեր մարդիկ, որոնք քննադատության մեջ դնելով գրական-գեղարվեստական խիստ պահանջներ, միաժամանակ իրենց հետ բերում են լուրջ վերաբերմունք ու հարգանք դեպի գրողն ու գրականությունը»<sup>1</sup>:

Դարասկդիրի հայ քննադատության բուռն զարգացումը պայմանավորված էր առհասարակ գեղարվեստի մեջ «նոր ուղիներ» և «նոր հոսանքներ» հայտնագործելու համար սկսված շարժման ուժեղ թափով, այն շարժման, որը հրահրում էր հայ գրականության գեղագիտական նոր բովանդակությունը՝ գեղարվեստական հին ըմբռնումների ու հնացած պատկերացումների վերանայման նշանաբանով։

XX դարի գեղարվեստական նոր իրադրության մեջ, բնականաբար, տեսական-քննադատական միտքը նույնպես ընդառաջ էր գնալու նոր պահանջներին, տեսականորեն հիմնավորելու էր գեղարվեստի զարգացման ընթացիկ մոմենտի յուրահատկությունները։

Նոր պահանջների յուրացումը ինքնին ենթադրում էր անհաշտություն գրական քննադատության մեջ գործող որոշ սկզբունքների հանդեպ։ Առաջին հերթին դա վերաբերում էր Լեոյի «ազգային-ուստիլիտարիստական» մեթոդի (սակայն Տերյանի բնորոշումն է) քննադատությանը, որի ելակետը բոլոր դեպքերում գեղարվեստի ազգային-հասարակական օգտակարության գաղափարն էր՝ հաճախ հասկացված նեղ ու միակողմանի, առանց թափանցելու արվեստի ներքին գեղագիտական հարստության և բարդության մեջ<sup>2</sup>։

Բնավ պատահական չէ, որ տասական թվականներին գրական բանավեճերում էական հարցականներ կախվեցին Լեոյի գրականագիտական դավանանքի վրա։

Լեոյի «ազգային-ուստիլիտարիստական» ուղղությունը մի տարրերակն էր կուտուր-պատմական այն դպրոցի, որն ուներ համաշխարհային լայն տա-

րածում՝ տեղային արտահայտություններով։ Այդ դպրոցի իպոլիտ-տեսական խմբագրությունը տեղ գտավ նաև հայ իրականության մեջ, քննադատությունը կողմնորոշելով դեպի աշխարհագրական միջավայրի վճռական դերի ընդգծումը։

Կուլտուր-պատմական դպրոցի կողքին դարասկզբին գեղագիտական որոշակի դիրքերով ընդգծվեցին պատմասոցիոլոգիական և հոգեբանական ուղղությունները՝ սրանց տարբերակներով, ինչպես և ծանրակշիռ հասարակական փաստ դարձավ մարքսիստական քննադատությունը։

1900—910-ական թվականների գրական բուռն վեճերի մեջ մկրտություն ստացած քննադատ-գրականագետ-հրապարակախոսների նոր սերնդի միշտ հայտնի դեմքեր նշանակալից դեր խաղացին նաև հայ սովետական քննադատության և գրականագիտության սկզբնավորման տարիներին։

## 2

Հայ սովետական գրականության սկզբնավորման ու ձեւվորման շրջանի կենտրոնական, կարելի է ասել՝ առանցքային հարցը նորագույն գրականության բնույթի և հեռանկարի հարցն էր, որին տեսությունը տալիս էր տարբեր, ոչ միանշանակ պատասխաններ։ Ինչպես Ռուսաստանում, հայ իրականության մեջ ևս քսանական թվականների սկզբին առաջին դիրքերի վրա էր Պրոլետկուլտի հրահանգած «պրոլետարական կուլտուրայի» այն մոդելը, որը ենթադրում էր ժառանգորդական թելերի լիակատար խզում՝ հանուն պրոլետարական գրականության «ինքնավարության»։

Որդեգրելով համառուսաստանյան Պրոլետկուլտի հիմնարար դրույթները, այդ կազմակերպության հայ հետևորդները նույնպես ամբողջովին բացասում էին գեղարվեստական ավանդների նշանակությունը, նոր գեղարվեստի կառուցումը հանգեցնելով բացառապես «պրոլետարական հուզապրումների» վերարծարծմանը։

Պրոլետկուլտական հույժ միակողմանի, ըստ էության նեղ-աղանդավորական տեսական առաջադրությունները որոշակի գեղարվեստական պլատֆորմի տեսք առան «Մուրճ», «Դարրնոց», «Քուրա» պարբերականների էջերում<sup>3</sup>, ուր ամբողջ ձայնով շեփորվում էր «ցեխի գրականության», այսինքն՝ մի դասակարգի գրականության, իրրե Ապագայի արվեստի, տեսակետը։

Պրոլետկուլտական անխառն ոգով էին շնչում ոչ միայն ուսուական «Կյունիցա» խմբակցության (սա Պրոլետկուլտի մի տարատեսակն էր և «գործնական-արտադրական ցեխը») տեսաբանների՝ Ա. Բոգդանովի, Ն. Լյաշկոյի, Ա. Պլատոնովի հոդվածների թարգմանությունների և դրանց վերաշրադրությունների տպագրությունները, այլև հայկական գրական պարբերականների շուրջը խմբված գրող-խմբագիրների ու քննադատների ատեսական հիմնավորումները։

«Մուրճ», «Դարրնոց», «Քուրայի» խմբագրականներն ու հողվածները հայ սովետական գրական քննադատության անդրանիկ էջերն են, ներթափանցված նոր գրականության զարգացման հեռանկարը միակողմանի և հապճեպ գծերով ներկայացնող եղրակացություններով։

«Դասակարգային ինքնամփոփշվածովթյան» դրույթի տրամարանական հետևությունն էր դասական ժառանգության դիկտատորական-վարչական տպապալման հրահանգը, անցյալի արվեստի ստեղծագործությումները «Հնացած»

ու «սպառված» համարելու տեսակետը: Դրա կրողներն էին ոչ միայն մուրճական-դարբնոցականները, այլև «Երեքի» խմբակի հրահանգիչները, որոնք նույնպես իրենց Դեկլարացիայում և դրա հրապարակային մեկնաբանություններում հրահանգում էին «արմատական խզման»՝ հին և նորագույն գրականության սահմանագծի դավանանքը:

Նորագույն գրականության զարգացման առանցքային, գլխավոր խընդիրների հենքի վրա էլ դիմորոշվեց 20—30-ական թթ. գրականագիտությունը (քննադատությունը)՝ մեթոդաբանական տարրեր ուղղություններով:

### 3

Դրականության զարգացմանն ուղեկցող տեսական հրահանգների և նշանաբան-լողոննգների խառնադմուկի օրերին մարքսիստական տեսակետներով հանդես եկան դեռ հեղափոխությունից առաջ ճանաշված մի շարք տեսաբանքնադատներ, որոնց մեջ անվիճելի հեղինակություն էր Ալեքսանդր Մյասնիկյանը՝ Ալ. Մարտոնին (1886—1925):

Ալ. Մյասնիկյանը ծնվել է նոր Նախիջևանում՝ հայոց ազգային ազատագրության և սոցիալական առաջադիմության գլխավոր կենտրոններից մեկում, որի ներշնչանքները դեռ պատանության օրերից իրենց խոր դրոշմը դրեցին նրա քաղաքացիական նկարագրի վրա:

Ծննդավայրի ծխական դպրոցից (1894—1898) հետո Մյասնիկյանը սովորում է թիմական սեմինարիայում (1898—1903), այնուհետև՝ Մոսկվայի Լազարյան ճեմարանում (1904—1906) և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում (1908—1911):

Ռուսական ազատամտական և հեղափոխական մտավորականության ազգեցությամբ Ալ. Մյասնիկյանը փարում է սոցիալիստական գաղաքարախոսությանը (1906-ից ընդունվում է ՌՍԴԲԿ շարքերը), դրա մեջ տեսնելով ուսական կայսրության մեջ ապրող ժողովուրդների, այդ թվում նաև հայ ժողովրդի սոցիալական և քաղաքական ազատագրության միակ ճիշտ ուղին:

Արդեն դարասկեբից Ալ. Մյասնիկյանը նետվում է Ռուսաստանում հասունացող սոցիալիստական հեղափոխության բոցերի մեջ և դառնում պրոֆեսիոնալ հեղափոխական՝ այս հասկացության անթերի նշանակությամբ:

1906 թվականից սկսած Ալ. Մարտոնի ստորագրությամբ նա հանդես է գալիս քաղաքական-հրապարակախոսական, ինչպես նաև գրաքննադատական հոդվածներով ու հետազոտություններով:

Արդեն առաջին հոդվածներում, որոնք տպագրվեցին 1906—1907 թթ. «Նոր կյանք» (նոր Նախիջևան) թերթի էջերում, Մյասնիկյանը հանդես է գալիս կուսակցական գրականության լենինյան դիրքերի ոգով, մերկացնելով «դասակարգային համերաշխության» և գաղաքարախոսության կարծեցյալ «անկուսակցականության» բուրժուական քարոզները:

Ալ. Մյասնիկյանն իր հոդվածներով յուրովսանն արձագանքում էր սոցիալիստական գրականության և արվեստի ստեղծման այն ջանքերին, որ հայ իրականության մեջ տեսականորեն հիմնավորում էին Ստեփան Շահումյանը և Սուրեն Սպանդարյանը: Այս առումով հախահեղափոխական տարիների նրա գրաքննադատական ժառանգության երեսի դրվագն է «Խնչպե՞ս են գրվում ուցենքիաները մեզանում» «Նամակ խմբագրությանը» («Մշակ», 1910, № 26), ուր Մյասնիկյանը հանդես է գալիս այն գրախոսության սկզբունքային քննադատությամբ, ուր Քրեդոն (Հակոբ Հակոբյանը) բանավիճում է Բ. Իշխանյանի

«Աշխատանքի գաղափարը Հակոբ Հակոբյանի, Ադա Նեգրու և Շուշանիկ Կուր-զինյանի ստեղծագործության մեջ» գրքույկի որոշ տեսակետների գեմ: Այդ «Նամակում» Մյասնիկյանը պաշտպանության տակ է առնում Ծ. Կուրղինյանի քնարի հասարակական-պրոլետարական բովանդակությունը, նրա «Արշալույսի ղողանջներ» շարքի սոցիալական պաթուը՝ ընդդեմ Հակոբ Հակոբյանի միակողմանի և կամայական մեկնարանությունների:

Գրական քննադատ Ալ. Մյասնիկյանի համար վերին աստիճանի բնորոշ



էր հայ գեղարվեստական գրականության մեջ «նոր հոսանքի» հրահրումը, որի ապագա հորիզոնները նա տեսնում էր ուսնորագույն գրականության, հատկապես Մաքսիմ Գորկու և արեմբարձյան նորագույն գրականության, հատկապես էմիլ Վերհարնի ներշնչանքների խոր յուրացման իրադրության մեջ:

1909 թ. Մ. Սարյանին, ապաև Ծ. Կուրղինյանին գրած նամակներում Մյասնիկյանը պաթետիկայի հասնող շեշտերով է խոսում «բելգիական սոցիալիստական գրող» էմիլ Վերհարնի բանաստեղծությունների նշանակալից արժեքի մասին, իսկ

1914-ին շարադրած «Արթնացում» հոդվածում՝ դառնալով

ուսուական գեղարվեստական կյանքին, իրարից կարուկ սահմանադատում է անկումային-միստիկական, կյանքը ժխտող և սոցիալական խոր լավատեսությամբ շնչող, հասարակության արթնացումը հրահրող գրական հոսանքները:

Մյասնիկյանը գրում է. «Ահա գրականությունը:

Սանին, Պինկերտոն, Վայնինգեր ու մազոխիզմ՝ մի կողմից, աստվածախումզներ ու միստիկներ, կրոնական պսիխոպատներ ու Մերեծկովսկի-Գիպպիուս-Ֆիլիսոփյան տիպի ստորարժեք քննադատներ մյուս կողմից:

Այսօր գրականությունը մաքրվում է որոմներից...

Վատ գրականությունը տեղի է տալիս առողջ գրականության, նորից հրապարակի վրա է Մաքսիմ Գորկին, որին դեռ երեկ հիմարների բանակը վախճանի երդ էր ասում: Այսօր քննադատական ցինիզմին փոխարինում է իսկական պրոգրեսիվ քննադատությունը<sup>4</sup>:

Դարասկզբի գրական նկատողությունների գլխավոր, որոշիչ շեշտը գրականության հասարակական գերի քմբոնումն էր, որով Մյասնիկյան-Մարտունին պատմական նոր իրադրության մեջ զարգացնում էր անցյալ դարի 60-ական թվականների հեղափոխական-դեմոկրատական քննադատության պվանդները:

Այս առումով հայ քննադատության մեջ նշանակալից երեսությ էր «Գարուն» ալմանախի հրարդ գրքում (1912) տպագրած պատմագրական ակնարկը Հովհ. Հովհաննիսյանի և Ալ. Մատուրյանի ստեղծագործությունների «հասարակական

արժեքի» մասին, ուր Ալ. Մարտունին հիմնավորում էր հայոց բանաստեղծության «սոցիալական հագեցման» դրույթը՝ հասարակական որոշակի խավերի հոգեբանության և շահերի հետ կապելով բանաստեղծական ստեղծագործության զարգացումը:

Մատերիալիստական-մարքսիստական գեղագիտության հիմնորոշ այդ ելակետով է նա մեկնաբանում նաև ազգային մշակույթի մի շարք երևույթներ, ինչպես հայ գրերի գյուտը և հայոց տպագրության սկզբնավորումը («Երկու կուտուրական տոն»—1913), ինչպես Միքայել Նալբանդյանի հրապարակախոսական ժառանգությունը:

Միանգամայն օրինաշափ ու բնական էր, որ իր հեղափոխական գործունեության բուլուն օրերին Ալ. Մյասնիկյանն առանձնակի վերաբերմունքով անդրադարձավ Միքայել Նալբանդյանի ժառանգությանը, այն գրողի և մտածողի, որը եղավ XIX դարի հայոց ազատագրության և հասարակական վերափոխման առաջին գծի մարտիկը, հայ իրականության խավարի մեջ ծագած «լուսաբառ»:

1919 թ. Մոսկվայում Ալ. Մարտունին տպագրեց «Միքայել Նալբանդյան» գրքույկը (Հայկական Գործերի կոմիսարիատի տպարանում), որը դեռ 1910 թվականին «Հորիզոն» թերթում աղավաղումներով և կրծատումներով տպագրված տեքստի վերաճշտված տարբերակն էր:

Մ. Նալբանդյանի ժառանգությունը գնահատելով իրոք հայոց դեմոկրատիայի հայացքների և տրամադրությունների արտացոլում, իր այս դրույթով Մարտունին նոր, թարմ խոսք ասաց ավանդական նալբանդյանագիտության մեջ:

Սովետական Հայաստանում և Անդրկովկասում աշխատելու տարիներին (1921—1925), շնայած կուսակցական և պետական աշխատանքի բազում բարականության և ազգային մշակույթի զարգացման խնդիրներով:

Փա երևաց նախ և առաջ դաստիկան ժառանգության հանդեպ մշակած դրական ու հստակ վերաբերմունքի մեջ: Մինչ ամենուրեք շեփորվում էին դասականների «տապապալման» կամ, լավագույն դեպքում, դասականներից «սահմանազատվելու» կոչերը, Ալ. Մյասնիկյանը պարբերաբար ընդգծում էր, որ անցյալի գրականության խոշոր ներկայացուցիչները արդիականության հուսալի զինակիցներն են:

Այդ մտքով են ներթափանցված «Միք. Նալբանդյանը և հայ ինտելիգենցիան» (1923), «Հովհ. Թումանյանի ստեղծագործության սոցիալական արժեքը» (1923) հետազոտությունները, որոնց մեջ առանձին ընդգծումով ուշադրություն է դարձված գեղարվեստական գրականության սոցիալական վիթխարի ներգործուն դերի վրա:

Աղանդավորական-նիհիլիստական իշխող մտայնության պայմաններում Մյասնիկյանը անցյալի ժառանգության մեջ կուահում էր ապագայի արժեքները: Այդպիսին էր, նրա հայացքով, Հովհ. Թումանյանի ստեղծագործությունը, որը խթանելով իր ստեղծման ժամանակի հասարակական ինքնագիտակցությունը, Մյասնիկյանի կուահումով, դառնալու է նաև ապագա սերունդների» հոգենոր ու բարոյական դաստիարակության հզոր աղբյուրը:

Ալ. Մյասնիկյանն, իհարկե, տարբերակված վերաբերմունք ուներ ժառանգության հանդեպ, նա ընդունում էր հասարակության սոցիալական առաջդիմությունը խթանող գրականությունը և հանդես էր գալիս ընդդեմ գրա-

կան ուսակցիայի: Այս առումով ուշագրավ են թիֆլիսի «Նոր աշխարհ» ամսագրի 1922 թվականի երկու համարներում տպագրած «Գրական քննադատության մեթոդի մասին» և 3ու. Այսենվալդի «Բանաստեղծները և բանաստեղծուհիները» հոդվածները:

Դրանք, կարելի է ասել, նույն հոդվածի երկու հատվածներն են, ուր Մյասնիկյանը, նախ մեկնաբանում է գրական քննադատության մեթոդի իր ըմբռնումը (բացառում է և «զուտ գեղարվեստական», և «զուտ սոցիոլոգիական» ուղղությունները), ապա անդրադառնում է Յու. Այսենվալդի «մաքուր գեղարվեստի» դավանանքին, ի ցուց դնում էսթետիզմի հասարակական վտանգավորությունը և պատմական անզորությունը: Մյասնիկյանն ասում է, որ «մաքուր գեղարվեստի» փիլիսոփայությունը սուս է, որ դա թզատերև է՝ քողարկելու հոգեվարք ապրող հասարակական խավերի վերակենդանացման լաղձանքները:

Էսթետիզմի ինքնաբավությանը նա հակադրում է «հասարակագիտական տեսակետի» լայնությունը, «սոցիոլոգիային» վերագրելով «գիտությունների մայրը» լինելու դերը<sup>5</sup>:

Ալ. Մյասնիկյանին առանձնապես մտահոգում էր գրական նոր շարժման ճակատագիրը: Դրա առարկայական ցայտուն արտահայտությունն է «Պրոլետարական գրականությանը նվիրված «Մուրճ» ամսագրի համար 1-ի առթիվ» ընդարձակ հոդվածը («Խորհրդային Հայաստան», 1922, № 267, 268), որը իր մի շարք ինքնատիպ ու խորոնկ դրույթներով գեղագիտական ծրագրի նշանակություն ունեցավ նորագույն գրականության զարգացման համար:

Նշանակությամբ պատմական այդ հոդվածում Ալ. Մյասնիկյանը առաջադրեց «հայ գրականության պրոլետարականության և պրոլետարական գրականության հայկականության» վերին աստիճանի դիպուկ բանաձևը, ուր երեւութը ներկայացված էր դիալեկտիկական ներքին, խոր կապերով:

Մինչ մի շարք տեսաբաններ նորագույն գրականության շրջանակներում շէին հանդուրժում ազգային կյանքից քաղված թեմաները և բացասում էին ազգային գեղարվեստական ավանդների գենետիկական նշանակությունը, Ալ. Մյասնիկյանը, ընդհակառակը, ուեալիստական գրականության ծաղկումը անմտածելի էր համարում առանց այդ վճռական հենարանների:

Մուրճական բանաստեղծների և արձակագիրների հիմնական թուլությունը համարելով նյութի վերացականությունը, ուսւա «դարբնոցական» բանաստեղծների արծարծած թեմաների մեքենայական ընդօրինակումը, Մյասնիկյանը նոր գրողների ուշադրությունը ուղղում էր ազգային կյանքի, տեղական նյութի վրա՝ խորհուրդ տալով այնտեղից քաղել ստեղծագործության ներշնչանքները. «Հեղափոխական գրողը, աշխատավորության իդեալներով տոպորված բանաստեղծը հայ կյանքում այս 1922 թվականի նոյեմբեր ամսին պետք է որ տեսնի այն, ինչ որ կա այնտեղ, պետք է, որ երգի այն, ինչ բնական է...»<sup>6</sup>:

Այնուհետև. «Նկարեցեք, գրեցեք ու երգեցեք հայ հեղափոխական արագիցիա, հայ պրոլետարական սկզբունք: Ունենք ամբողջ հեղափոխական էպոխա, որ ստեղծել է ժողովուրդը... գեղարվեստական ոգի ներշնչեցեք նրան»<sup>7</sup>:

Ամբողջ վճռականությամբ Մյասնիկյանը դնում էր «մթնոլորտի»՝ գրականության զարգացման այդ վճռական պայմանի, խնդիրը. «Այդ մթնոլորտը արդի հայ կյանքն է... խորհրդային շինարարության պեսպես կողմերն ու ձեւերը, հայ շինականի ու քաղաքի աշխատավորի մտորումները...»<sup>8</sup>:

Թեև «մթնոլորտի» տեսությունը հանդիպեց գրական աղանդավորների ուժեղ դիմադրությանը (Մյասնիկյանի դեմ գրվեցին վիճաբանական հոդվածներ), բայց և այնպես այդ տեսությունը միանգամայն ճիշտ էր զնում զարդացման նախադրյալների խնդիրը<sup>9</sup>:

«Մոլոր ամսագրի անդրանիկ համարին նվիրված հոդվածում Մյասնիկյանը ասպարեզ հանեց նաև գրական երկերի արժեքայնության շափանիշը: Նա գտնում էր, որ ամսագրում հրատարակված բանաստեղծություններն ու պատմվածքները «մասամբ ոչ պրոլետարական են, մասամբ շեն արտահայտում հայ կյանքը և ավելի մեծ շափով էլ անգեղարվեստական են»<sup>10</sup>:

Գաղափարական խորություն, արդիական նյութ, գեղարվեստական ճաշակ,—ահա եռամիսնական այն շափանիշը, որը, Ալ. Մյասնիկյանի պատկերացումով, պետք է լինի գեղարվեստական ստեղծագործության նախապայմանն ու գրական թոփշքների սկզբնաղբյուրը:

Առաջադրելով «մթնոլորտի» տեսությունը, Ալ. Մյասնիկյանը ոչ միայն չէր բաժանում «տեղային սահմանափակության» նախապաշարմունքը, այլև ազգային կուլտուրաների զարգացումը պատկերացնում էր ինտերնացիոնալիստական լայն հիմքերի վրա. «Բայց մենք գիտենք նաև, թե այլ է ձեզ և շըրշանակը, որոնց մեջ զարգանում է առանձին ազգերի կուլտուրան, բայց բոլորովին այլ բան է, երբ այդ ազգային կուլտուրաները զարգանում են և ոչ միայն շեն խանգարում միմյանց, այլև օգնում են իրար... Մենք աշխատում ենք հավասարվել միմյանց, բայց ընդունին մենք ստեղծում ենք մեր սոցիալիստական, պրոլետարական կուլտուրան»<sup>11</sup>:

Ալ. Մյասնիկյանի դավանած «կուլտուրական շինարարության» տեսությունն իր լայնաշունչ բովանդակությամբ հենվում էր Կովկասի կոմունիստներին հղած Վ. Ի. Լենինի հայտնի նամակի վրա (այդ նամակը Անդրկովկաս Հր բերել ինքը՝ Ալ. Մյասնիկյանը), ուր մեծ առաջնորդը խորհուրդ էր տալիս՝ մերենայրեն լընդորինակել Ռուսաստանի փորձը, այլ այդ փորձի մեջ տառը սահմանադատել ոգուց և բովանդակությունից:

Մինչև իր ողբերգական մահը (1925 թվականի ինքնաթիռային վթարը) Ալ. Մյասնիկյանը իր քաղաքական-հասարակական դործունեությունը զուգակցեց գրական-քննադատականի գործի հետ:

Վերին աստիճանի դիպուկ է նշանավոր պատմաբան և հրապարակախոս Լեոյի տված բնութագիրը. «Դերազանցորեն պետական մարդ և գերազանցորեն գրական մարդ: Ինձ և Հովհաննես Թումանյանին հափշտակում էր հենց այդ հանդամանքը: Հայոց գրականությունը Մյասնիկյանի պես մեծ բարեկամ երբեք չի ունեցել»<sup>12</sup>:

Ալեքսանդր Մյասնիկյանը գեղարվեստը հասարակության սոցիալական առաջադիմության պայքարում հզոր զենք համարող քննադատ-հրապարակախոսի այն տիպարն էր, որին ասպարեզ կոչեց XX դարի հեղափոխական անցքերի շիկացած իրադրություն:

Այդ իրադրության մեջ իր գրական-հրապարակախոսական գործունեությունը սկսեց նույնպես պրոֆեսիոնալ հեղափոխական Արտաշես Կարինյանը (Դաբրիելյան)՝ դառնալով հայ մարքսիստական քննադատության երևելի դեմքերից մեկը:

Ա. Կարինյանի քաղաքական և գեղագիտական համոզմունքների ձևավորման մեջ էական դեր է խաղացել պատանության տարիների օրրանը՝ Բաքուն (ծնվել է 1886-ին, Բալախանիի նավթահանքերի ծառայողի ընտանիքում),

ուր նա կլասիկական գիմնազիայի աշակերտ էր և սոցիալ-դեմոկրատական խմբակների կազմում փարեց հեղափոխական շարժումներին։ Նրա պատանեկան ներշնչանքների մեջ էին անցյալ դարի հեղափոխականները՝ դեկաբրիստներից մինչև նառողիկներ ու նարոդովոլցիներ, ինչպես նաև գրականության ու արվեստի քաղաքացիական շնչի երկերն ու կերպարները՝ նեկրասովի և Շեշնկոյի ըմբոստության կանչող բանաստեղծությունները, Տուրգենևի թագարովը և Գերնիշևսկու Ռախմետովը, Վոյնիշի «Հոռոր», Ստեփան Ռազինի մասին եղած բանահյուսական պատումները, Զեխովի պատմվածքների ներհուն մտավորականները, Մաքսիմ Գորկու «բոսյակները», Նկարիչներ Մակովսկու և Յարշենկոյի աքսորական-հեղափոխականների ղիմաստվերները։

Բարվի աշակերտական անլեգալ խմբակների հավաքույթներում Ա. Կարինյանը կարդում է առաջին գրական ոեֆերատները Խաչատուր Աբովյանի, Գլեբ Ուսպենսկու, Անտոն Չեխովի մասին, դրանց մեջ դրսեռելով մի մոտեցում, որն այնուհետև եղավ իր գրականագիտական-քննադատական գործի գլխավոր շեշտը։ Դա դեղարվեստը հասարակական հոգսերի և կյանքի առաջադիմության դիրքերից քննելու մոտեցումն էր։ Ուշագրավ է այն փաստը, որ իր տպագրած քննադատական անդրանիկ ակնարկը՝ Մ. Գորկու «Հովեկներ» պիեսի վերլուծությունը, 1906-ին տպագրվեց «Գրականություն» և կյանք վերնագրով (տպագրվել է «Մշակում»)։

Արտաշես Կարինյանի հոգնոր զարգացման և քաղաքական հայացքների բյուրեղացման մեջ վճռական դեր է խաղում կենսագրության «պետերբուրգյան շրջանը» (1906—1909 թթ.)։

Պետերբուրգի համալսարանի իրավաբանական ֆակուլտետի ուսանողը ուսական հեղափոխության և ուսական առաջադիմական մշակույթի միջնաբերդում հարուստ լիցենցի է ստանում և մարքսիստական տեսությունից, և անցյալի հեղափոխական ուսմունքներից, և համաշխարհային գեղարվեստական ժառանգությունից։

Արդեն Պետերբուրգի Ա. Կարինյանը հրապարակախոսական-քաղաքական սուր հոդվածներով թղթակցում է կովկասյան մամուլին, իսկ երբ 1911 թ. Ստ. Եահումյանը թաքվում հիմնադրում է «Նոր խոսք» մարքսիստական տեսական պարբերագիրը, Ա. Կարինյանը դառնում է հանդեսի գլխավոր դեմքերից մեկը։ Նրա վրա է ընկնում այդ պարբերականի գրաքննադատական բաժնի ծանրությունը։

«Նոր խոսքը» տպագրում է Ա. Կարինյանի մի շարք հոդվածներն ու գրախոսականները («Գյուղացին ուսահայ գրականության մեջ»՝ 1911, № 1—2, 1912, № 5—6, «Գծեր արևմտահայ գրականությունից»՝ 1912, № 3—4, «Քաղաքի երգիներ. Տերյան Վ., Հակոբյան Հ.—1912», № 5—6 և այլն), որոնք նրան բերում են մարքսիստ-քննադատի համրավ։

Գրականության ժողովրդայնության և ուսալիստական շնչի դավանանքի առումով շափազանց արժեքավոր գրաքննադատական վավերագրեր են 1914 թ. «Մ. Կ.», և «Հ. Կալինին» ժամկանուներով «Պրավդա» («Путь Правды») թերթում տպագրած գրախոսություններն ու հոդվածները (Մ. Գորկու խմբագրած պրոլետարական գրողների ժողովածոփ, «Բանվորի գրադարան» հայկական մատենաշարի, Մ. Գորկու «Խտալական հեքիաթների» մասին և այլն)։

Այդ շարքում նշանակալիցը, անտարակույս, «Ռեալիզմի վերածնունդը» («Վозрождение реализма») հոդվածն է, ուր տասական թվականների ուսւ

իրականության գրական շարժումը բնութագրված է այնքան ճշգրիտ, որ այդ ժամանակաշրջանի գրական ընթացքի պատմաբանները դիմում են դրան իրու մեթոդաբանական կարևոր, քրեստոմատիկական ելակետի:

Քննադատը գրում էր՝ «Մեր գեղարվեստական գրականության մեջ ներկայում նկատվում է որոշ թեքում գեղի ուսալիզմը: Այսօր «կոպիտա» իրականությունը նկարագրող գրողների թիվը շատ ավելի մեծ է, քան մոտիկ անցյալում: Մաքսիմ Գորկին, Ալեքսեյ Տոլստոյը, Բունինը, Շահները, Սուլրգուչեր և այլ գրողներ իրենց երկերի մեջ նկարագրում են ոչ թե «հերքիաթային հեռու ժամանակները», կամ «խորհրդավոր թափթցիներին», այլ իսկական ուսական կյանքը իր բոլոր արհավիրքներով և քաղքենիական առօրյայով... Պրոլետարիատը ուսւհասարակության միակ դասակարգն է, որ նորից ասպարեղի վրա է զնում կենսական խնդիրներ ու նպատակներ: Եվ ահա հենց այսօր էլ ուսալիստ հեղինակները ստանում են հասարակական մեծ նշանակություն»<sup>13</sup>:



Այդ տարիների համար վերին աստիճանի էական էր այն միտքը, որ ուսալիստ գրողներից շատերը կապված չինելով անգամ պրոլետարական գաղափարախոսության հետ, այդուամենայնիվ, կյանքի հարուցած խնդիրների ազգեցությամբ ընդառաջ են գնում հասարակության գեմոկրատական շրջանների արթնացող հոգեբանությունը:

Ինչպես «Պրավդայում», այնպես էլ Թիֆլիսի «Պայքար» թերթում տպագրած մի շարք հոդվածներում («Տաճկահայ նորագույն գրականությունից, Ալում Յարճանյան»—1916, «Դանիել Վարուժան»—1916, «Քաղաքի պոետը. Վերհարն»—1917, Վ. Բրյուսովի «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի գրախոսությունը—1916 և այլն) Ա. Կարինյանը գրականության երեւլյները մեկնաբանում է կյանքի հետ ունեցած կապերի լույսի տակ, հիմնական շեշտը գնելով գեղարվեստի և հասարակական կյանքի առնշությունների վրա:

Նախահեղափոխական տարիներին Ա. Կարինյանի գրած հոդվածները ուշագրավ են նաև մեթոդաբանական այն դրույթով, որի համաձայն գրական երեւլյները պետք է քննել իրենց ծնող ժամանակի այրող խնդիրների կոնտեքստի մեջ:

1918—1920 թթ. հեղափոխական շինացած իրադրության մեջ Ա. Կարինյանը հանդես է գալիս գերազանցորեն քաղաքական հոդվածներով, ամենաբազմազան հարցեր շոշափող այդ հոդվածները տպագրելով Բաֆվի «Բանվորի խոսք», Մոսկվայի «Կոմունիստ», «Կարմիր դրոշ» և այլ պարբերաթերթերում:

Բարվի կոմունայի անկումից հետո Բարվի սովետական կառավարության արդարադատության կոմիսար Ա. Կարինյանը Մոսկվայում վարում էր Ազգությունների ժողկոմատի հայկական գործերի կոմիսարիատի գրական-հրատարակչական բաժինը: Այդ օրերին էլ նա տպագրում է «Հին» և «Նոր» գեղարվեստը՝ մատենագրական ակնարկը (1920, Մոսկվա)՝ իրեւ Ա. Բոգդանովի «Գեղարվեստը և բանվոր դասակարգը» գրքի (1920) հավելված:

Հայ գեղագիտության պատմության մեջ այդ ակնարկը ուշագրավ փաստ է իրեւ Պրոլետկուլտի «ցեխային» հոգեբանության, «Հին արվեստը» տապալողների սահմանագծի տեսության սկզբոնքային քննադատության վառ օրինակ և իրեւ գեղարվեստի զարգացման ժառանգորդական հիմունքների կը բրուտ պաշտպանություն:

Ահա, օրինակ, Կարինյանի տեսական դրույթներից մեկը և շատ կարևորը. «Հին արվեստը լի է այնպիսի մոմենտներով, որոնք հարազատ և մոտեն մեզ նույնիսկ ավելի, քան անցյալի հասարակությանը ...Հասել է այն ժամը, երբ հնարավոր է մեկնել և ըմբռնել մեծ արվեստագետների «մոռացված» գործերը, «Հին արվեստի» բոլոր հարուստ և բարդ գծերը»<sup>14</sup>:

«Հին արվեստի» իրեւ «նոր արվեստի» զարգացման կարևորագույն նախադրյալի մեկնակետը Ա. Կարինյանի համար դարձավ կայուն, անսասան դավանանք:

Դա արտահայտվեց 20—30-ական թվականներին գրած մեծաթիվ քննադատական հոդվածներում:

Այդ թվականներին Ա. Կարինյանը հայ իրականության ամենաբեղմնավոր հրապարակախոսներից մեկն էր, —պարբերական մամուլը բառացիորեն ողողված էր անդրկովկասյան պրոլետարիատի հերոսական անցյալն ու հեղափոխության գործիչներին բնութագրող հոդվածներով, դաշնակցության դեմ ուղղված ֆիլիպիկաներով, ազգային շարժումների գնահատություններով, ինչպես նաև գրաֆննադատական հոդվածներով ու հուշային նոթերով: Այդ նյութերը տեղ գտան «Դիմքեր և դեպքեր» (1928) գրքում:

Դրաքննադատական նյութերի առանցքը սոցիալիստական նոր գրականության ստեղծման խնդիրն էր, այդ խնդիրի երկու կարևոր օղակների՝ դասական ժառանգության դարձումների և կոնկրետ իրականության արտացոլման պահանջի լուսաբանություններով:

Դասական արվեստի հուշարձաններով իր ճաշակը կրթած քննադատը ոչ միայն շտրվեց դասական ստեղծագործությունները «խաչելու», «մյուսեռն-ները» կործանելու, արվեստի գեղեցկություններից հրաժարվելու նիհիլիստական հոսանքին, այլև հանդես եկավ զարգացման հեռանկարի մեջ «Հին արվեստի» արգասավոր նշանակության խոր հայացքներով: Կարինյանի նման կեցվածքը պայմանավորված էր նաև իր վաղեմի բարեկամների՝ Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի, Վ. Տերյանի մշակած գեղագիտական լայնախոհ պլատֆորմով: Անցյալի ժառանգության բուռն հերքման օրերին առանձնապես բարձր էր հնչում Ա. Կարինյանի խոսքը, որը շերմեռանդ հավատացյալի պես ամենուրեք՝ ամրիոններից և մամուլի էշերից, բազմամարդ լսարաններում և գրական ասուլիսներում, ինչպես Ա. Վ. Լոնաշարսկին ուսական իրականության մեջ, քարոզում էր դասական արվեստի նշանակությունը սոցիալիստական նոր մշակույթի շինարարության մեջ: Բնորոշ է, օրինակ, նրա հետեւյալ միտքը. «Ամեն մի «նոր» շարժում արվեստի մեջ այնքան է ուժեղ, որքան լավ կարողանում է օգտագործել «Հնի» փորձը»:

Գրականության գարգացման ժառանգական թելերի՝ ավանդների շարունակման և գարգացման տեսակետը իր բուն ոգով ուղղված էր վերացական, անարմատ, կյանքի պահանջներից կտրված փորձարարության դեմ և պաշտպանությունն էր ուղարկումների գեղագիտության:

Նորագույն գրականության ձևավորման տարիներին գեղարվեստական շարժման տեսական հանգանակների մեջ լայնորեն հոլովում էր «պօշենայ լիտերատուրա» հասկացությունը:

Այդ մտքով է թափանցված նաև Ա. Կարինյանի 1923—25 թթ. գրած հոդվածների այն շարքը, ուր քննադատը անդրադառնում է նոր գրականության ուղիներին և հեռանկարներին («Հայ պրոլետարական գրողները և գյուղացիական Հայաստանը»—«Մարտակոչ», 1923, «Նոր գրականության անհրաժեշտությունը»—«Մարտակոչ», 1923, «Պրոլետարական գրականության մասին»—«Պայքար», 1923, «Արվեստը և պրոլետարիատը»—«Նոր ակոս», 1924, «Մեր օրերի գրականությունը»—«Խորհրդային Հայաստան», 1924, «Դրական հոսանքների բնութագրության շուրջը Հայաստանում»—«Մարտակոչ», 1925, «Նոր գրականությունը»—«Խորհրդային Հայաստան», 1925, «Խորհրդային պրոլետարական գրականության մասին»—«Խորհրդային Հայաստան», 1925 և այլն):

Ա. Կարինյանի բոլոր ծրագրային հոդվածների միջով կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ նոր հասարակության գեղարվեստական տարեգիրները ելակետ պետք է ունենան «կոնկրետ մթնոլորտը»՝ ազգային նյութը բարձրացնելու համամարդկային հնչեղության:

«Նոր ուղիներով» հոդվածում Կարինյանը գրում է. «Զկա և չի կարող լինել առողջ արվեստ այնտեղ, որտեղ այդ արվեստն արտահայտվում է միօրինակ պարբերություններով և կտրված է կյանքից, իրականությունից... Մեր երիտասարդությունը ևս պետք է կարողանա արտահայտել իրական Հայաստանի, գյուղացիական Հայաստանի խոսքը»<sup>15</sup>:

«Նոր Սարյանը» ակնարկի մեջ Կարինյանը գրում է. «Այնքան որքան նրանք հեռու կլինեն իրենց կոնկրետ միջավայրից, իրական հողից, ապրող և գործող, պայքարող և մտածող ժողովրդից, նրանց արվեստը կլինի անկենդան և տաղտկալի, նրանց խոսքը կլինի անհամոզիչ, գույներն ու ներկերը՝ ցամաք ու պղտոր, հանգերն ու ոիթմը՝ անորոշ»<sup>16</sup>:

Իր քննադատական նոթերում Ա. Կարինյանը սոցիալիստական նոր գրականության վերընթաց զարգացումը պատկերացնում էր իրուկ գրական տարբեր նախասիրությունների և ոճերի համագործակցություն, դրանով իսկ հըռշակելով այդ գրականության դավանած գեղարվեստական մեթոդի հարստության դրույթը:

Իր իսկ հոչակած քննադատական սկզբունքների յուրացումը եղան ժամանակակից հայ և ուսւ գրողների ստեղծագործությունների վերլուծությունները, հատկապես Զարենցի պոեզիային և արձակին նվիրված «Զարենցը. նորագույն գրագետներ» («Խորհրդային Հայաստան», 1925) ուսումնասիրությունը:

Ա. Կարինյանը գնահատում է մասնավորապես Ե. Զարենցի ստեղծագործության լայնությունը և խորությունը, նրա ստեղծագործության մեջ դիտելով գեղարվեստական հին ավանդների և նոր ժամանակների բովանդակության համագրությունը:

20.-ական թթ. Կարինյանը տպագրում է նաև համաշխարհային գրականության մի շարք նշանավոր գեմքերին (Էմիլ Վերհարն, Ուոլտ Ուիտմեն, Անատոլ Ֆրանս և այլն) նվիրված գրական ակնարկներ, նրանց օրինակով նույն-

պես ցանկանալով նորագույն հայ գրականության մեջ հրահրել քաղաքացիական ոգին:

«Գրոհի և փոթորկի» տառնամյակի բուռն և անձնվեր գործունեությունից հետո Ա. Կարինյանը 30-ական թվականների սկզբից արդեն հակվում է դեպի ավելի «խաղաղ», «ակադեմիական թեմատիկան (հուշեր և նոթեր անցյալից, մտորումներ գրողների ու նկարիչների մասին, գրախոսություններ ու ուսումնական թվականների սկզբից անմնացրդ նվիրվում է հայ մշակույթի պատմության, գրական փոխառնչությունների, ընդհանուր գրականագիտության մի շարք հիմնական պրոբլեմների մշակմանը»:

Նա հանդես է գալիս հայոց հին գրականությանը և թատրոնին նվիրված ինքնատիպ հետազոտություններով («Սոցիալական պայքարի արձագանքները հայ հին գրականության մեջ», «Հեթանոս հայերի թատրոնի մասին»), հապարակում է «Հայ պարբերական մամուլի պատմության» հիմնարար մենագրության առաջին և երկրորդ հատորները (1956, 1960), տպագրում է XIX—XX դարերի հայ, ոռու և հվառապական դրակների դիմաստվերների (Բայրոն, Պուչկին, Ստենդալ, Գոգոլ, Նեկրասով, Դոբրոլուսով, Լոնգֆելո, Չերնիշևսկի, Նալբանդյան, Շելենկո, Հ. Պարոնյան, Չեխով, Կորոլենկո, Չուկովսկի, Շոլոխով և այլն) ինքնատիպ շարքը, պարբերական մամուլում հանդես է գալիս ամենատարբեր՝ պատմագիտական, գեղարվեստական, տնտեսագիտական, աշխարհագրական և այլն, թեմաների նոր գրենի մատենախոսություններով, շարադրում է իր մեմուարների առանձին ֆրագմենները անցյալի գրական և հեղափոխական գործիշների մասին:

1976թ. ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով Ա. Բ. Կարինյանը ստացավ Սոցիալիստական աշխատանքի հերոսի կոչում:

Ա. Կարինյանը մահացավ 1982 թվականին:

#### 4

20—30-ական թվականներին հայ քննադատությունը (և գրականագիտությունը) ներկայացնում էր մի շարք ուղղությունների և ենթաուղղությունների յուրօրինակ խճանկար, ուր առանձնապես տպագորիչ էր այսպէս ասած «ակադեմիական-պատմասոցիոլոգիական» հոսանքը: Այդ ուղղության բովանդակության գլխավոր ազդակներն էին, մի կողմից սոցիոլոգիական համարժեքի (էկվիվալենտի) պլեխանովյան տեսությունը<sup>17</sup>, մյուս կողմից ոռու իրականության մեջ լայն ճանաչում գտած Վ. Մ. Ֆրիչեի և Վ. Ֆ. Պերեվրզեի «արվեստի սոցիոլոգիայի» դավանանքը:

Հայ իրականության մեջ ևս դասագրքային հեղինակություն էր ակադեմիկոս Վ. Մ. Ֆրիչեի «Արվեստի սոցիոլոգիա» (1923թ.) հիմնարար աշխատությունը (թարգմանվեց 1926-ին), որում նա զարգացնում էր իր հիմնական գաղափարները: «Արվեստի դասակարգայնության» նրա դավանանքի համաձայն, առաջին՝ անցյալի բոլոր նշանավոր գեղարվեստագետները եղել են տիրապետող դասակարգերի սպասավորները և իրենց ստեղծագործություններով ամրապնդել են տիրող սոցիալական կառուցվածքը, երկրորդ՝ արվեստի զարգացման մակարդակը ուղղակիորեն կախված է տնտեսության և տեխնիկայի զարգացման աստիճանից, երրորդ՝ արվեստի և գրականության արժեքայնության գլխավոր պայմանը «օգտապաշտության» տեսանկյունն է, չորրորդ՝

գրականության գարգացման գալիք աստիճանը ենթադրում է նյութի, առարկաների, մեքենաների մեջ տարրալուծված արվեստի ձևեր և այլն:

Ֆրիչեն գեղագիտության արմատականության խնդիրը համարում էր գրական ոճերի հերթափոխության բացատրությունը, ոճի մեջ էլ հիմնական մոմենտը կապում էր դասակարգային հոգեբանության արտացոլման հետ, ինչպես նաև տնտեսության և տեխնիկայի զարգացման մակարդակի հետ: Այս տեսակետին էր նաև Վ. Ֆ. Պերեվերզեր, որի հայացքների («Պերեվերզերի դրամացի») շուրջը 1928—30 թթ. կազմակերպվեց հասարակական լայն ասուլիս:

Ռուս գրականության զարգացման պատմական ընթացքը փորձելով իմաստավորել մատերիալիստական սոցիոլոգիայի ոգով, Պերեվերզեր, սակայն, հակված էր դեպի այդ մեթոդաբանության մեխանիստական կիրառությունը: Նա նույնպես, ինչպես Ֆրիչեն, գեղարվեստական երկերի էությունը բացատրում էր «դասակարգային կեցությամբ»:

Արվեստի սոցիոլոգիայի թե պլեխանովյան և թե ֆրիչե-պերեվերզեկան, նաև գուշիկ սոցիոլոգիական ուղղությունները, չնայած առանձին տեսաբանների «ընդվզումներին», ազդեցիկ դիրքեր էին գրավել ընթացիկ քննադատության և հայ գրականության պատմագրության մեջ:

Պատմասոցիոլոգիական հոսանքի ամենաընդգծված դեմքը հայ իրականության մեջ Հարություն Սուրխաթյանն էր:

Հարություն Սուրխաթյանը (Թումանյան) ծնվել է 1882-ին, Հին Ղրիմ (կամ՝ Սուրխաթ) քաղաքում:

Ավարտելով ծննդավայրի երկդասյան ծխական դպրոցը, Հ. Սուրխաթյանն այնուհետև կրթությունը շարումակել է «կյանքի համալսարաններում», եղել է ծխախոտի պլանտացիաների մշակ, ձուլարանի բանվոր և այլն: Խնքնակըրթությամբ նա ժողովել է գրական-բանասիրական-արվեստաբանական գիտելիքների հարուստ պաշտու: Վաղ երիտասարդական հասակի գեղարվեստական ու թարգմանական փորձերից հետո, 1910 թվականից (երբ վերջնականապես հաստատվում է Թիֆլիսում), Սուրխաթյանը նվիրվում է մանկավարժական (ուսուցիչ էր Հովհաննյան դպրոցում և գիմնազիայում), հրապարակախոսական (աշխատակցում էր «Մշակ», «Արոր» պարբերականներին) և քննադատական-գրականագիտական գործանելության:

1913—1914 թթ. պարբերական մամուլի («Մշակ») էջերում տպագրվուան Սուրխաթյանի հոդվածները՝ քննադատության մեթոդաբանության խնդիրների մասին («Դրական քննադատությունը և հասարակական հարաբերությունների տեսակետը», «Գեղարվեստական գրականությունը, քննադատությունը և հասարակությունը»):

Այդ հոդվածներում, ի պատասխան «Բարվի ձայն» թերթում Ցոլակ Խանգաղյանի առաջադրած «գեղարվեստականության շափանիշի» դրույթի, Հ. Սուրխաթյանը գեղարվեստական գրականության, հետևաբար և գրական քննադատության առաջնահերթ խնդիրը համարում է «հասարակագիտական համարժեքի» հայտնագործումը: Այս ըմբռնումն իր վրա կրում է պլեխանովյան գեղագիտության միակողմանիության դրոշմը:

Իր համար պարզելով քննադատի դերն ու տեղը արդի իրականության, հասարակական զարգացման ընթացքի մեջ, Հ. Սուրխաթյանը պարբերական մամուլի էջերը ողողում է ոչ միայն հայ, այլև եվրոպական և ոռու գրականության հանգուցային խնդիրներին նվիրված հոդվածներով՝ պաշտպանելով իր իսկ բառով ասած «առողջ ոեալիզմի» գրականությունը:

Ռեալիզմի համապարփակ հնարավորությունների և հասարակական բովանդակության դիրքերից էլ նա քննադատում է գեղարվեստի այսպես ասած «մոդեռն» հոսանքները՝ անհատապաշտության բազմազան տարրերակները: Նրա քննադատության սուր սլաքներին է արժանանում իրեն նոր արվեստի համբավաբեր հոչակած ֆուտուրիզմը («Ի՞նչ է ֆուտուրիզմը», «Ո՞րն է ոռւսական ֆուտուրիզմը»—1914):

Քաղաքացիական ավյունով քննադատը մերկացնում է ֆուտուրիզմի հակահասարակական էությունը՝ գեղարվեստական այդ ուղղության հետ շկապելով ապագա որվեստի որևէ հեռանկար:



Տասական: Բնականներին Հ. Սուրխաթյանի գրած հոդվածների շարքում առանձնանում էն լև. Տոլստոյի ստեղծագործության մեկնաբանությունները, ուր նա լենինյան հոդվածների շնչով նշմարում է ոռւս մեծ գրողի աշխարհայացքի նաև «գյուղացիական արմատները»:

Հին հունական և եվրոպական (Եեքսպիր, Իբսեն) գրականությանը նվիրված հետազոտություններից բացի, Հ. Սուրխաթյանը հանդես եկավ հայ գրականության զարգացման կենդանի ընթացքի հայտնի անունների՝ Հովհ. Թումանյանի, Վահան Տերյանի, Սիմանթոյի ստեղծագործության ճշգրիտ և դիպուկ արժեքավորումներով:

Տասական թվականների հեղափոխական նոր վերելքի իրադրության մեջ Հ. Սուրխաթյանը մերձեցավ բողկիկյան հրատարակություններին: Նրա հատուկ ուշադրությանն արժանացան սոցիալիստական հեղափոխության շնչով տոգորված ստեղծագործությունները, ինչպես Ալ. Բլոկի «Տասաներկուսը», Ե. Չարենցի «Ամբոխները խելագարված» պիեմները և այլն:

Հեղափոխության շրջանի քննադատական գործունեության ուղղակի շարունակությունն էր Հ. Սուրխաթյանի սովետական տարիների գրականագիտական-հրապարակախոսական գործունեությունը:

Վարելով մի շարք պատասխանատու պաշտոններ («Նոր աշխարհ» ամսագրի խմբագիր, Անդրֆեդերացիայի լիազոր ներկայացուցիչը Հայաստանում և այլն), Հ. Սուրխաթյանը նույն եռանդով և նույն արդյունավետությամբ ինչպես տասական թվականներին, զբաղվում է բանասիրությամբ՝ այս հասկացության բաղմակողմանի ըմբռնումներով:

Լայն հարցասիրությունների բանասեր Հ. Սուրխաթյանը կազմում է դրայբոցական քրեստոմատիաներ և դասընթացներ, գրում է հետազոտություններ և առաջարաբաններ, գրականագիտական ակնարկներ և քննադատական հոդվածներ:

Հնթերցողների լայն շրջաններում սրտագին ընդունելություն գտան նրա կազմած «Գրական գոհարներ» (1922) և «Հայ գրականություն» (1926) երկնաւոր քրեստոմատիաները, ինչպես նաև «Հին հունական գրականություն» (1922) ուսուցման ձեռնարկը և «Հոմերոս, Շեքսպիր» (1935) աշխատությունը:

Համաշխարհային գրականության ականավոր ներկայացուցիչների (Գյուբե, Սերվանտես, Մոլյեր, Իբսեն, Զեկ Լոնդոն, Գերցեն, Բելինսկի և այլք) մասին գրած հոդվածներից և նրանց երկերի առաջարաններից (Ֆ. Մ. Դոստոևսկի, «Երկերի ժողովածու»՝ 1934, և Տոլստոյ, «Աննա Կարենինա»—1936) երեսում է Հ. Սուրխաթյանի խոր ակնածանքը դասական ժառանգության հանդեպ և հավատարմությունը այդ ժառանգության գնահատման լենինյան մոտեցումներին:

Հ. Սուրխաթյան-գրականագետի համբավին մեծապես նպաստել է նրա ամենօրյա ակտիվ մասնակցությունը ընթացիկ գրական (և մշակութային) կյանքին:

Ինչպես և պետք էր սպասել, նրա հետաքրքրությունների առանցքը եղել է Ե. Չարենցի ստեղծագործությունը: Քննադատելով Չարենցի առանձին վրիպումներն ու մոլորությունները («Երեքի» դեկլարացիան, «Մոմանս անսեր» և այլն), Սուրխաթյանը ամենայն եռանդով հեղափոխության մեծ բանաստեղծին պաշտպանում էր ասոցիացիական-դիրքական աղանդավորների, օրինակ, Դ. Վանանդեցու և Ն. Դաբաղյանի մշտական գրուներից:

Հ. Սուրխաթյանը 20—30-ական թթ. բուն գրապայքարի մեջ հանդես է գալիս նաև «ուղեկիցների» պաշտպանությամբ՝ սուր քննադատելով վարդինիզմի ու նապուտովականների հակագրական դիրքերը:

Ուղի-ուշով հետեւելով նորագույն գրական շարժմանը, Հ. Սուրխաթյանը արդեն 1929.թ. հրատարակեց «Ետհոկտեմբերյան հայ գրականություն» աշխատությունը, որը փաստորեն սկիզբն է հայ սովետական գրականության պատմագրության: Ամփոփելով հայ սովետական գրականության զարգացման առաջին տասնամյակի արդյունքները և կանխագծելով նրա զարգացման հեռանկարները, այդ աշխատության մեջ Սուրխաթյանը միաժամանակ ներկայացնում է մի ամբողջ շարք նոր արձակագիրների ու բանաստեղծների դիմանկարներ:

Ի տարրերություն 20-ական թվականներին տարածված «կենսագրական սոցիոգիզմի» (որը գրողների ստեղծագործությունը մեկնաբանում էր նրանց կենսագրության՝ սոցիալական ծագման տվյալներով), Սուրխաթյանը ոչ միայն էտիկետներ մի դրոշմում գրական դիմանկարների վրա, այլև հանդես է բերում մեթոդաբանական զգաստ կարգապահություն՝ դրողներին բնութագրելիս: Այդ բնութագրությունները մեծ մասամբ դիպուկ էին և ճշգրիտ, պատմականորեն արդարացված:

«Ետհոկտեմբերյան հայ գրականություն» աշխատությունն իր ժամանակի համար նշանակալից երեսութ էր: Դա վկայեց Հ. Սուրխաթյանի գրականագիտական հարցամիտությունների գերազանցապես արդիական պաթոսը: Նորագույն գրականության առաջին պատմաբանը, զարգացման օրինաչափությունները հայտնագործելուց բացի, բնականաբար, լայն ուշադրություն է դարձնում նաև շլուժված ինդիրներին, նորագույն գրականության գեղարվեստական վարպետությունը բարձրացնելու հարցերին: Պատմագրական ակնարկի «քննադատական» ուղղությունը, որը արտահայտվեց «Պրոլետարական գրականությունը և նրա զարգացման ուղիները» ընդարձակ ներածության մեջ, ըստ էության

վկայում էր գրականագետի խոր մտահոգությունը հայ գրականության ճակատագրով:

5

Թեև ասպարեզի վրա էին անցյալի ժառանգության քննադատական յուրացման լենինյան պատվիրանները, մասնավորապես Կոմերիտմիության երրորդ համագումարում (1920) Վ. Ի. Լենինի արտասանած պատմական ճառի դրույթները, բայց տեսական միտքը երկար ժամանակ կառչած էր «նեղ դասակարգայնության» աղանդավորական կաղապարներից, անցյալի հայ գլուղներին, ինչպես նաև ժամանակակիցներին այս կամ այն դասակարգի ու դասի գաղափարախոս-ձայնափողը հայտարարելու հակագիտական դիրքերից:



Արվեստի և գրականության ստեղծագործությունների գոեհիկ-սոցիոլոգիական մեկնաբանությունը ավել կամ պակաս շափով տեղ գտավ 20—30-ական թվականներին հայտնի գրականագետ-հրապարակախոս-լրագրողների հոդվածներում, բայց այդ մեթոդաբանությունն իր ամբողջական տիեզրով արտահայտվեց Գուրգեն Վանանդեցու գործունեության մեջ:

Գուրգեն Վանանդեցին (Գուրգեն Փորսուղյան, 1899—1937) իր գործունեությունը սկսեց պրոլետասոցիագիականների շնչի վերացական ու աղմկարար բանաստեղծություններով, բայց հայտնի դարձավ իրեւ հայ նոր գրականության պատմաբան և ընթացիկ գրական շարժման քըն-նադատ:

Պրոլետակուլտական աղանդի ճաշակով նա տպագրեց Եղիշե Զարենցին քննութագրող մի շարք հոդվածներ, ինչպես նաև «Եղիշե Զարենց և Մարտիրոս Սարյան» գրքույկը, որոնց մեջ բանաստեղծի ժառանգությունը անմնացորդ հատկացվում է մանրըւրժուական անառագաստ տարերքին, այդ ժառանգության մեջ բացառվում են հեղափոխական գիտակցության նշույլներն անգամ: Վերակրկնելով «նապոստովական» քննադատության՝ «Հա պօտյ» ամսագրի (1923—25) տեսաբան-հրատարակիչների՝ լելկիչի, Ռադոյի և այլոց նեղաղանդավորական տեսակետները, Գ. Վանանդեցին Ե. Զարենցին հոչակում է իրեւ «անարխո-բուրժուական» պաթոսի կրողը հայ գրականության մեջ: «Ե. Զարենցը և հեղափոխությունը» հոդվածի հայտականության մեջ՝ «Ե. Զարենցը և հեղափոխությունը» հոդվածի («Մարտակոչ», 1925) ժողովունայթաբուն դրույթները հետագա շրջանի իր հոդվածներում Գ. Վանանդեցին «վերախմբագրեց» Զարենցի ստեղծագործության բացառապես «ազգային» (նացիոնալիստական) պաթոսի դրույթով: Ի աարբերություն քննադատ նորայր Դաբաղյանի, որը նրա գաղափարական համախոնն էր ընթացիկ գրականության ճակատագրով:

թյան զարգացման խնդիրները քննելիս, Գ. Վանանդեցին քննադատության լրագրային-հրապարակախոսական ժանրերից բացի դիմում է նաև գրական ստեղծագործությունների գիտական խորացումների, աշխատում է ինչ-ինչ բացատրություններ տալ այս կամ այն երկի առաջացման և ձեւվորման՝ «կեն-սագրության», նախադրյալներին:

Այսուամենայնիվ նա ևս մնում է անսասան դիրքական, ինչպես Նորայր Դարավյանը, վերջինիս հետ կիսելով ուսպասիկան քննադատության՝ գրական խեղաթյուրումների, հիմնական ծանրությունը:

Ընթացիկ գրական շարժման խնդիրներից Գ. Վանանդեցուն առավել զբացեցրել են XIX դարի հայ գրականության մի շարք աշխի ընկնող դեմքերի ստեղծագործության գաղափարական բովանդակության բացահայտումները:

1928-ին Գ. Վանանդեցին տպագրեց «Բաֆֆու վեպերը» մենագրությունը, երկու տարի անց՝ Շիրվանզաղեի ստեղծագործության հետազոտությունը, 1933-ին «Հայ գրականության պատմության ծրագրային յոթհատորյակի երկրորդ հատորի մի շարք առանցքային հոդվածները» («30—40 թթ. ոռուսահայ իրականության ընդհանուր բնութագիրը»), «Խաչատուր Աբովյան», «Ռուսահայ հասարակական մտքի հոսանքները 50—60-ական թվականներին», «Պերճ Պոլշյան»:

Թեև Գ. Վանանդեցու գրականագիտական հետազոտությունների ելակետային դրույթները ոչ միայն վիճելի են, այլև անընդունելի՝ գիտության ժամանակակից արդյունքների համեմատությամբ, բայց և նրա աշխատություններում է աւաղանդավոր գրիշը, կրքու մտածողը, հայոց հասարակական լայնահուն կյանքի բաղմակերպ ու բազմազան դրվագների ինքնատիպ վերլուծությը:

«Բաֆֆու վեպերը» ուսումնասիրությունից սկսած և վերջացրած «Հայ գրականության պատմության» հատվածները Գ. Վանանդեցու հայացքները կրում են որոշակի գաղափարական փոփոխություններ՝ անձուկ աղանդավորականությունից դեպի պլեխանովյան «սոցիոգիական համարժեքը»:

Այսուամենայնիվ, շեշտերի տեղաշարժերով իսկ Գ. Վանանդեցին մնում է սոցիոլոգիայի գոեհկացված տարատևակի ընդգծված դեմքը հայ իրականության մեջ:

\* \* \*

Գոեհկ-սոցիոլոգիական դոկտրինան այնքան տիրապետող մտայնություն էր, որ տեղ գտավ անգամ Աշոտ Հովհաննիսյանի և Արսեն Տերտերյանի պես ինքնուրույն, անկաշկանդ մտածողների աշխատություններում:

Գերազանցորեն հայ հասարակական հոսանքների պատմաբան, Աշոտ Հովհաննիսյանն իր գործունեության տարբեր շրջաններում հանդես է եկել նաև պատմական թեքում ունեցող գրականագիտական հետազոտություններով՝ հայ դասական գրողների աշխարհայացքի բացահայտման ուղիներով:

Այդպիսի ուղղություն ուներ նաև «Խաչատուր Աբովյան» (1933) աշխատությունը, որը գրվեց իրեն պատասխան Ակսել Բակոնցի «Խաչատուր Աբովյանի անհայտ բացակայումը» (1932) հետազոտության մեջ առաջ քաշված դրույթների:

Մինչ Ա. Բակոնցը Խ. Աբովյանի աշխարհայացքի մեջ դիտում էր հայ դեմոկրատիայի երազանքների ու հոգսերի յուրովի արտացոլումը, հետազոտող պատմաբանը Աբովյանին կաղապարում էր դասակարգային նեղ վան-

դակների մեջ, նրան ներկայացնելով մերթ իբրև կրոնական թեորիայի և վա-նական պրակտիկայի, մերթ էլ իբրև բուրժուական պրակտիցիզմի ու գաղու-թային ստրկության գաղափարախոսի:

Արդեն 1934-ին գրած «Դրական նկատողություններ»<sup>18</sup> հոդվածում, որը «Հայ գրականության պատմության» երկրորդ հատորի ընդարձակ քննական տեսությունն է, Աշ. Հովհաննիսյանը զգալիորեն վերանայում է իր հայացքը գրականության «դասակարգայնության» վերաբերյալ և նոր մոտեցումներով սրբագրում և. Աբովյանի, Պ. Պոռշյանի, Ղ. Աղայանի, Գ. Սունդուկյանի և մյուս դասական գրողների մասին տիրապետող տեսակետները:

Ուշագրավ է թեկուզ այն հանգամանքը, որ երկրորդ հատորը որակված է իբրև «գրականության սոցիոլոգիա», ուր գրողները տեղադրված են «դասա-կարգային առանձին կամերաներում», մինչդեռ Աշ. Հովհաննիսյանի կարծիքով մեթոդաբանական այդ սահմանափակությանն անհրաժեշտ էր հակադրել լայ-նաշունչ պատմականությունը՝ XX դարի 30—60-ական թթ. դասական գրող-ների ստեղծագործության օրյեկտիվ բովանդակության բացահայտումը:

Աշ. Հովհաննիսյանի մեթոդաբանական վերանայումների պսակը եղավ Միքայել Նալբանդյանի «Անտիպ երկերի» հրատարակությունը (1935)՝ Առա-ջարանով, ժանոթագրություններով և Կոմմնտարներով (շուրջ 400 էջ), որը գիտական խոր հոնի մեջ դրեց նալբանդյանագիտությունը:

«Անտիպ երկերում» նալբանդյանական տեքստերի հրապարակումների հետ միասին Աշ. Հովհաննիսյանը միանգամայն նոր բացատրություններ տվեց հայ հեղափոխական դեմոկրատիայի պարագլիքի աշխարհայացքային որո-նումներին ու համառուսական ազատագրական շարժումների հետ ունեցած առնչություններին:

Հետագա տարիներին (60—70-ական թթ.) Աշ. Հովհաննիսյանը հանդես եկավ կոթողային աշխատություններով, ինչպես «Միք. Նալբանդյանը և նրա ժամանակը» (երկու մեծադիր հատորով), ուր խորապես հերկված է 50—60-ական թվականների հայ իրականության բազմածալք նյութը, ինչպես «Թրվագ-ներ հայ ազատագրական մտքի պատմության» դարձյալ երկհատոր աշխատու-թյունը, ուր հազվագյուտ գիտական թափանցումով մեկնաբանված են միշ-նադարյան հայ ազատագրական լեգենդի սոցիալական ակոմքներն ու քաղա-քական միտումները:

Այդ աշխատությունները դասական հայագիտության երևելի էջեր են:

## 6

Սոցիոլոգիայի պերեվերգական տարրերակը արտահայտվեց նաև ականա-վոր գրականագետ Արսեն Տերտերյանի (1882—1953) որոշ գրականագիտա-կան քննություններում:

Էջմիածնի Գորգյան ճեմարանի (1905) և Պետերբուրգի Հոգենյարդաբա-նական ինստիտուտի (1907—1909) դասընթացն ավարտելուց հետո Ա. Տեր-տերյանը մեկը մյուսի ետևից՝ 1910—1913 թթ., ասպարեզ հանեց Միքայել Նալբանդյանին, Վահան Տերյանին, Հովհաննես Փումանյանին, Շիրվանյա-գեին, Հովհ. Հովհաննիսյանին, Մուրացանին, Նար-Դոսին, Լևոն Շանթին նվիր-ված իր ինքնատիպ հետազոտությունները, որոնց մեջ հակադրվելով գեղար-վեստի օգտապաշտության դրույթներին, հատկապես կարևորեց հասարակա-կան «անիծյալ խնդիրների» հանդեպ գրողների ու արվեստագետների անկախ

կեցվածքը։ Հնայած հայացքների մեջ եղած իդեալիստական որոշ ըմբռնումներին (գեղարվեստը արմատապես սահմանազատում էր «տենդենցիայից»՝ հրապարակախոսությունից, նրա էությանը խորթ համարելով պայքարը, մաքառման ոգին և այլն), Ա. Տերտերյանն առաջնության դափնին տալիս էր ռեալիստական, հոգեբանական խորացումների գրականությանը, առաջին հերթին՝ Հովհաննեսի և Շիրվանզադեի սանդղագործությանը։

Տասական թվականների քննադատական գործունեությամբ Ա. Տերտերյանը հայ իրականության մեջ ստեղծեց իր դպրոցը՝ «հոգեբանական քննադատությունը», ուր վճռական նշանակություն էր տրվում տվյալ գրողի ստեղծագործության «հոգեբանական կենտրոնների» և առանցքային, կայունացած կերպար-պատկերների հայտնագործմանը։ Այս դիրքորոշման մեջ երկում է սուս հայտնի գրականագետ Օվսյանիկո-Կուլիկովսկու հայացքների ուժեղ ազդեցությունը։

30-ական թվականների սկզբից Երևանի նորաբաց պետական համալսարանում դառնալով դասախոս, այնուհետև երկար տարիներ վարելով հայ գրականության ամբիոնը, Ա. Տերտերյանը ամբողջովին նվիրվեց **XIX** դարի և **XX** դարասկզբի գրականության պատմության հետազոտմանը։

Բնականաբար, Ա. Տերտերյանը ևս վերանայելու էր իր մեթոդաբանական դիրքերը։ Սովետական իշխանության առաջին տասնամյակում այդ «վերանայումը» արտահայտվեց գեղարվեստական երկերի սոցիոլոգիական վերլուծության կոպտացումներով, գրական ստեղծագործությունը այս կամ այն հասարակական ֆորմացիայի ուղղակի, անմիջական արտադրությունը համարող դրույթի լայն կիրառումով։

Ա. Տերտերյանի գրականագիտական հայացքների բեկման մեջ ևս դեռ խաղացին Ֆրիչեն (վերջինիս տեսության շնչով գրեց «Գրական ոճի սոցիոլոգիան», «Յրիչեն իբրև քննադատ» հոդվածները) և Պերեվերգեր՝ «Սոցիոլոգիական դոմինանտի» դրույթով։

Սոցիոլոգիական կոպտացումների արտահայտություն էին մասնավորապես **XIX** դարի հայ գրականության մասին դասախոսությունները՝ ապակետիպ Առաջադրությունները, ուր երբեմնի հոգեբան-դրականագետը ընկալ հակառակ ծայրահեղության մեջ՝ գրողներին բացառապես խմբավորելով նրանց «դասակարգային հայտանշանների» համաձայն։ Դեգերելով վաղեմի նախասիրությունների՝ գրական կերպարների «հոգեբանական անկախության» և նոր դիրքերի՝ գրական երկերի «դասակարգայնության» ուղիներում, Արսեն Տերտերյանը 30-ական թվականների վերջին տարիների աշխատություններում հաղթահարում է «մոլորությունները» և կանգնում գրական ստեղծագործության վերլուծման պատմական դիրքերի, ավելի ստույգ՝ պատմական-սոցիալական և հոգեբանական գեղագիտական միահյուսված ելակետերի, վրա։

Մեթոդաբանական «շրջադարձի» ամենացայտուն դրվագը Թաֆֆու «Սամվել» պատմավեպի 1940 թ. հրատարակության ընդարձակ առաջարանն էր, ուր Ա. Տերտերյանը հազվագյուտ թափանցումով վերլուծում է հայ խոշոր վիպասանի գլուխգործոցը, բացահայտելով վեպի գաղափարական և գեղարվեստական բազմազան շերտերի հարստությունը։

Առաջաբանի մեծ արժեքը լոկ պատմավեպի բարձր գնահատականը չէր. Թաֆֆու ստեղծագործության երկարատև գաղափարական «մշակումից» հետո առաջին անգամ մեզանում հայ խոշորագույն վիպասանը գնահատվում էր

իրեն ժողովրդական մտքերի ու հոգմունքների, հոգսերի ու երազանքների թարգման, իրեն ազգային հոգեբանության արտահայտիչ:

«Սամվելի» Առաջարանին բնորոշ գրական երևոյթները պատմական կապակցությունների մեջ դիտելու դիրքերը արտահայտվեցին նաև Ա. Տերտերյանի նույն տարիների մյուա աշխատություններում, մասնավորապես «Խաչատուր Աբովյանի ստեղծագործությունը» ծավալուն մենագրության մեջ (1941 թ.):



Այդ աշխատությունը աբովյանագիտության մեջ երևոյթ էր հայ մեջ լուսավորչի ստեղծագործության միջազգային դուգահեռականները բացահայտելու, ինչպես և և. Աբովյանի գրվածքների սոցիալական ու գեղարվեստական արժեքները ներկայացնելու առումով:

Միասնական ելակետը այլևս դառնում է Ա. Տերտերյանի գրականագիտության գլխավոր շեշտը: Այդ մեկնակետով է գրված նաև «Սովետահայ պատմավեպը» (1944) ուսումնասիրությունը, ուր Տերտերյանը գնահատում է հայոց պատմավեպի նոր աստիճանը՝ ի դեմ «Վարդանանքի» ու «Պապ թագավորի»:

Հետագա տաճրիներին մինչև իր մահը, Ա. Տերտերյանը հանգելու եկավ հայ և ոռու գրողներին

(Գր. Զոհրապ, Հովհ. Հովհաննիսյան, Հ. Պարոնյան, Պ. Պողոսյան, Կոփլով, Պուշկին, Բելինսկի, Վ. Բրյուսով) նվիրված նոր ուսումնասիրություններով: Հայ մշակութին Ա. Տերտերյանի բերած մեծ նպաստը հայ նոր գրականության զարգացման օրինաշափությունների գիտական համակարգի ստեղծումն էր: Այդ գրականության պատմագրությունը առավելապես հենվում է Ա. Տերտերյանի մշակած համակարգի վրա:

## 7

Պրոլետկուլտի հայտնի տեսարաններից մեկը՝ Լեբեդե-Պոլյանսկին գրել է. «Գրականագիտության մեջ մենք բոլորս սկիզբ ենք առնում Գ. Վ. Պլեխանովի հայացքներից»:

Սա շափաղանցություն չէ: Վ. Գ. Պլեխանովը 10—20-ական թթ. համարվում էր մարքսիստական գեղագիտության առաջին դեմքը, նրա ասույթներով էին մեկնարանվում գրականության զարգացման օրինաշափությունները, մասնավորապես գեղարվեստի և հասարակական կյանքի փոխառնչությունները: Պլեխանովն ուներ հետեւրդներ նաև հայ իրականության մեջ, որոնք նրա բանալիներով էին գնահատում հայ գրականության զարգացման ուղիները: Պլեխանովյան «սոցիոլոգիական համարժեքի» տեսանկյունը առանձին դեպ-

քերում այնքան բացարձակացվեց, որ դարձավ գոեհիկ սոցիոլոգիական հայացքների սկզբնաղբյուրը:

Այնքան ժամանակ, քանի դեռ չէին հրատարակվել Մարքսի, Էնգելսի, Լենինի գեղագիտական շնչի հոդվածներն ու փաստաթղթերը, այդքան ժամանակ Պլեխանովը մնում էր մարքսիստական գրականագիտության գլխավոր գեմքը:

Արդեն 30-ական թվականների սկզբին իրադրությունը կերպարանափոխվեց: Առաջին անգամ մի շապիկի տակ համախմբվեցին Մարքսի և Էնգելսի հոդվածները, նաև ակները, ասուլիթները. 1933 թ. լույս տեսավ՝ «Մարքսը և Էնգելսը արվեստի մասին» ժողովածուն (այդ ժողովածուի հայերեն թարգմանությունը իրացվեց 1934-ին):

Հրատարակվեցին Վ. Ի. Լենինի «Փիլիսոփայական տետրակները»՝ արտացոլման տեսության խորունկ բացատրություններով, տպագրվեցին լենինյան ժողովածուները կուլտուրայի մասին, Գրականագիտության մեթոդաբանական սկզբունքների մշակման համար հեղաշրջի նշանակություն ունեցավ լունաշարսկու «Լենինը և գրականագիտությունը» (1934) աշխատությունը, ուր նոր լույսի տակ երևաց լենինյան տեսական ժառանգության արդիական արժեքը:

Ինչպես Ռուսաստանում, այնպես էլ մեզանում գրականության տեսական ժթնուրտը ողղովեց մարքսիստական գեղագիտության դրույթներով:

30-ական թվականներին հայ իրականության մեջ ավելի ու ավելի մեծ կշիռ ստացան տեսական խնդիրների քննությունները:

Այս ասպարեզում նշանակալից է հատկապես մարքսիզմի նշանավոր պրոպագանդիստներ Արշավիր Մելիքյանի և Հայկ Դյուլիքենյանի վաստակը:

Աշշավիր Մելիքյանը (1879—1937) ուսաւական և եվրոպական ոստաններում ստանալով բարձրագույն կրթություն (սովորել է Խարկովի համալսարանի բնագիտական և Ցյուրիխի համալսարանի ֆիլիսոփայական ֆակուլտետներում), ուսանողական տարիներից իսկ նետվում է հեղափոխական պայքարի ասպարեզ: Նրա աշխարհայացքի և քաղաքական վարքագծի ձևավորման մեջ վճռական դեր են խաղում անձնական շփումները Լենինի, Պլեխանովի, Լունաշարսկու, Ժան Ժորժի, Բերելի, Ռոզա Լյուքսեմբուրգի, Կարլ Լիբկնեխտի և ուրիշ հայտնի մարքսիստների հետ:

Տեսական հարուստ պատրաստականությամբ արտասահմանից վերադառնալով հայրենիք, Արշ. Մելիքյանը մեծ աշխատանք է տանում մարքսիզմի գաղափարները Հայաստանում տարածելու գործում:

1921 թվականից վերաբնակվելով Թիֆլիսում, Արշ. Մելիքյանը եռանդուն մասնակցություն է բերում «Կարմիր աստղ», «Նոր աշխարհ», «Պորլետար» պարբերականներին, Հայարտան և Վրաստանի պրոլետարական գրողների Ասոցիացիայի հայկական սեկցիայի, Անդրկովկասյան Կոմոնիստական համալսարանի գործունեությանը:

Ինելով խորապես պատրաստված հասարակագետ և տիրապետելով եվրոպական մի քանի լեզվի, Արշ. Մելիքյանն իր գիտելիքների պաշարը գործադրում է ինչպես մարքսիստական տեսության մի շարք հարցերի, այնպես էլ հայ հասարակական մտքի պատմության կարևոր հանգույցների լուսաբանության մեջ:

Նրա հետաքրքրությունների մեջ առաջին տեղերից մեկը գրավում էին գրականագիտության խնդիրները, հատկապես նորագույն գրականության զար-

գացման հեռանկարները։ Արդեն 20-ական թվականների վերջում գրած հոդվածներում Արշ. Մելիքյանը հանդես է գալիս նորագույն գրականության գոյությունը հերքողների հրահանգած «անապատի» տեսության քննադատի դերում և ի դեմս Ե. Չարենցի, Ստ. Զորյանի, Դ. Դեմիքյանի երկերի հոչակում է այդ գրականության «անշեղ վերելքի» իրողությունը։

Արշ. Մելիքյանը եզել է Անդրկովկասյան Կոմունիստական համալսարանի փիլիսոփայական բուռն ասուլիսների (1927—1928) կազմակերպիչը։ Այդ ասուլիսներում մեծ տեղ է տրվել նաև ազգային մշակութի շինարարության տեսությանը։ Արշ. Մելիքյանը ասուլիսների ընթացքում հանդես է եկել իրեւ դասական ժառանգության քննադատական յուրացման լենինյան սկզբունքների հետևողական պաշտպան։

Արշ. Մելիքյանի գրական ժառանգության մեջ էական տեղ են գրավում պուշկինյան թեմայով գրած հետազոտությունները, մասնավորապես «Խուս քննադատները Պուշկինի մասին» ուսումնասիրությունը, որը 1935—36 թթ. առանձին հատվածներով տպագրվեց «Խորհրդային գրականություն» և «Խորհրդային արվեստ» ամսագրերում։

30-ական թվականներին Արշ. Մելիքյանը մեծ գործ արեց մարքսիստական գեղագիտության դրույթների մասսայականացման ուղղությամբ։ Հիշարժան են «Արվեստի հիմնական խնդիրների մասին» («Պրոլետար», 1929), «Մարքսը արվեստի մասին» («Արշավ», 1933) հոդվածները։

Արվեստի մարքսիստական փիլիսոփայության ասպարեզում հեղինակություն է նաև Հայկ Գյուլիկիսյանը (1886—1951)։ Ծննդավայրի՝ Շուշվա, ուելական դպրոցը ավարտելուց հետո Հ. Գյուլիկիսյանը սովորել է եվրոպական համալսարաններում (Ենայի, Լայպցիգի, Ֆյուրիխի, Հալդելբերգի)։ Գերմանիայում ակտիվորեն մասնակցել է «Սպարտակ» հեղափոխական կազմակերպության գործունեությանը և հեղափոխական կոփվածքով էլ վերադարձել է Խուսաստան։

Վարելով մի շարք պատասխանատու կուսակցական, լրագրային (եղել է «Կոմունիստ», «Կարմիր ծիրակ» թերթերի, «Վերելք» ամսագրի խմբագիրը) և գիտական պաշտոններ, Հ. Գյուլիկիսյանը առանձնակի ուշադրություն է դարձնում Հայաստանի կոլտուրական շինարարության, մասնավորապես արվեստի և գրականության զարգացման խնդիրներին։ Բնդհանուր տեսական հոդվածներից բացի Հ. Գյուլիկիսյանը մամուլում հանդես է գալիս ընթացիկ գրականության արմատական խնդիրները մեկնարանող հոդվածներով։

Ուշագրավ են Հատկապես 1930 թ. ծավալված գրական ասուլիսների առթիվ տպագրած «Գեղարվեստական գրականության հիմնական խնդիրները» («Խորհրդային Հայաստան», 1930, № 80), «Խարձալ սխեմատիզմի մասին» («Նոր ուղի», 1930, № 4—5), «Նորից գրական սխեմատիզմի և հարակից խընդիրների մասին» («Գրական դիրքերում», 1930, № 8—9) հոդվածները։

Մինչ ուրիշները, ինչպես Հարություն Մկրտչյանը, պաշտպանում էին սխեմատիզմը, իրեն թե նրան բնորոշ «գաղափարական լայնության» համար, Հ. Գյուլիկիսյանը սխեմատիզմը համարում էր «անցման շրջանի» ոճը և դնում էր դրա հաղթահարման անհրաժեշտության խնդիրը։

Հանդես գալով սխեմատիզմին բնորոշ հասարակացումների և լոգոնգայնության դեմ, Հ. Գյուլիկիսյանը առաջադրում էր նորագույն գրականության հոգերանական խորացման և վարպետության բարձրացման պահանջը։

Լինելով պրոլետարական գրողների Ասոցիացիայի և նրա օրգան «Թրական դիրքերում» ամսագրի ղեկավար-տեսաբաններից մեկը, Հ. Գյուլիքենիյանը իր քննադատական հոդվածներում, բնականաբար, արտահայտում էր նաև ռապական—«դիրքական» որոշակի հայացքներ: Նորագույն գրականության «իդեոլոգիական շեղումների» և «վրիպումների» զգալի մասը նա հատկացնում էր Ե. Զարենցին, տեսականորեն հիմնավորում «հակաշարենցյան» քըն-նադատությունը:


Հ. Գյուլիքենիյանի ռապական դիրքորոշումները, իհարկե, նույնական չէին մարտնչող, երդրվյալ ռապականների անհանդուրժողական քաղաքականության հետ: Գյուլիքենիյանը հանդես էր գալիս իբրև նորագույն գրականության գաղափարական անազարտությունը զատագովող և խորթ ազգեցությունների թափանցումները հերքող քննադատ:

Այդ բարդ խնդիրների լուծման ընթացքում էլ, բնականաբար, հակվում էր գեպի որոշ նախապաշարմունքներ:

Հ. Գյուլիքենիյանը առաջիններից մեկը եղավ հայ իրականության մեջ, որ սկսեց զբաղվել սովետական գրականության մեթոդի սահմանման խնդիրներով:

30-ական թվականներին մեթոդի սահմանումը տեսության գլխավոր հարցն էր: Մի շարք հոդվածներում Գյուլիքենիյանը տալիս է իր սահմանումները, որոնք թեև կրկնությունն էին ոռուս սովետական տեսաբանների առաջարկությունների, սակայն աշքի էին ընկնում մեթոդի էության բազմակողմանիության դրվագքով: Գործունեության հետագա տարիներին Հ. Գյուլիքենիյանը դարձավ հայ սովետական դրամատուրգիայի տեսաբանն ու պատմաբանը: 1948-ին տպագրեց «Սովետական դրամատուրգիայի մասին» գիրքը, որը բնութագրված են սովետահայ դրամատուրգիայի զարգացման փուլերը:

Կյանքի վերջին տարիներին գրեց նաև մանր հետազոտություններ Գ. Սունգովակյանի, Ռաֆֆու, Ռ. Պատկանյանի մասին:



Հայ գրականագիտության և քննադատության ընդհանուր դիմանկարի մեջ որոշակի երանգ ուներ նաև այսպես ասած «գեղագիտական ուղղությունը»: Այդ ուղղության աշքի ընկնող դեմքերից մեկն էր Յոլակ Խանզադյանը:

Յոլակ Խանզադյանը (1886—1935) ծնվել է Ղարաքիլիսայում, հայրենաբ-ազգագանվեր քահանա Տեր-Խորենի ընտանիքում: Լազարյան ճեմարանում

և Մոսկվայի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում սովորելու տարիներին ի դեմս Ցոլակ Խանզադյանի ծևավորվում է հայ մտավորականի խելական տիպարը. տասական թվականներից մինչև կյանքի վերջը նա զբաղվել է ուսուցչական, լրագրային, կոռագրացիոն, գրական-քննադատական, դասական, թարգմանչական գործունեությամբ:



տեղծագործության գեղարվեստական վրիպումները, մասնավորապես գեր-ռոմանտիկ, սենտիմենտալ, արհեստական ոճը:

Գրականության զարգացման նորագույն փուլում Յ. Խանզադյանը պաշտպանում էր խոր ու հարուստ ուսալիզմը և մերժելով մերժում էր անարմատ, տարաշխարհիկ, իրականության կենդանի հոգսերից հեռացած «ռոմանական արվեստը»:

1913—1914 թվականից Յ. Խանզադյանը տպագրում է քննադատության խնդիրների մասին մի շարք հոդվածներ («Բաքրի ձայն»), ուր վիճում է Հ. Սուլրիաթյանի միակողմանի դրույթների, մասնավորապես գեղարվեստական երկերի կոնկրետ պատմական հիմքերի և դրանց համամարդկային բովանդակության միջև եղած խզման դրույթի գեմ։ Խնչան ճիշտ նկատել է էդ. Զրբաջյանը, Յ. Խանզադյանը «վճռական նշանակություն տալով գեղարվեստական ֆենոմենին», ոի վերջո ընկնում է մի ուրիշ ծայրահեղության մեջ, մասնակիութեն տուրք է տալիս «գեղարվեստը գեղարվեստի համար» տեսությանը<sup>19</sup>։ Յ. Խանզադյանի հոդվածների համար էականը, սակայն, ոչ թե բանավիճային իրադրությունից ծագած այդ ծայրահեղություններն էին, այլ գեղարվեստական ճշմարտության սկզբունքների հետևողական պաշտպանությունը։

Այս առումով շափազանց արժեքավոր էջեր են հատկապես «Բաֆֆու գեղարվեստական հայացքները» (1913) և «Ակամա Հերոստրատներ» (1913) լրագրային հոդվածները։

Առաջին հոդվածում Յ. Խանզադյանը խոր բացատրություն է տալիս Բաֆֆու դավանած «ուսալիստական գեղարվեստի թեորիայի» և ստեղծագործության ռոմանական սկզբունքների հասարակական պատճառականության խնդրին, իսկ մյուս հոդվածում հոշակում է Հովհ. Թումանյանի ստեղծագոր-

թյամբ, իհարկե, գրականագիտության մարզն էր, ուր նա թողել է իր որոշակի հետագիծը։

Յ. Խանզադյանի գլխավոր կոչումը, իհարկե, գրականագիտության-քննադատության մարզն էր, ուր նա թողել է իր որոշակի հետագիծը։

Խանզադյանին գեղարվեստական առաջադիմության խնդիրներով այրվող քննադատի համբավ բերեց «Դարուն» ալմանախի երրորդ հատորում տպագրված «Ավետիք Ահարոնյան» ընդարձակ ուսումնասիրությունը։

Ուսալիստական գեղագիտության շափանիշներով Յ. Խանզադյանն այդ հոդվածում սուր և սկզբունքային քննադատության ենթարկեց Ավ. Ահարոնյանի ըս-

տեղծագործությունը։

ժության համամարդկային նշանակությունը. «Եվ չեն տեսնում մեր գրականության այն գագաթը, որ պատիվ կարող է բերել մեծ ազգերի գրականություններին անգամ: Իսկ հայ քննադատները չեն զգում, որ այդ զվարճախոս, պարզ ու միամիտ մարդը այնպիսի մեծություն է, որ կարող է մի ժողովուրդ պարզերես անել պատմության առաջ»<sup>20</sup>:

Յ. Խանզադյանը առաջիններից մեկն էր, որ Թումանյանին դուրս բերեց իր «անձուկ միջավայրից» և նրա պոեզիայի մեջ նշմարեց հայ ժողովրդի հոգերը ուժերի թանձրացված անդրադառնություն:

Գրականագիտական գործունեության սոլիետական փուլում ևս Ցոլակ Խանզադյանը հայատարիմ մնաց գրականության հասարակական խոր բովանդակության և բարձր գեղարվեստականության միասնության դավանանքին:

Թանակովելով 20—30-ական թվականներին բարգավաճած «Ճախության» շուայլությունների, արվեստի երկերի գունդիկ-սոցիոլոգիական մեկնաբանությունների դեմ, Ցոլակ Խանզադյանը հաստատում էր պատմականությանը հենվող սոցիոլոգիական վերլուծության մեթոդը: Այս առումով ուշագրավ են «Վահան Տերյանի երկերի հրատարակությունը», «Միքայել Նալբանդյանի «Դիվանի» առթիվ», «Գ. Սոնդուկյանի երկերի լիակատար ժողովածուն» հոդված-գրախոսությունները: Ուշագրավ են և հայ գրողների ստեղծագործության խորքերը թափանցելու առումով, և մեթոդաբանական այն ցուցմունքով, որ ամեն մի գիտական եզրակացություն պարտավոր է հենվել ճշգրտված-ստուգ-ված փաստերի վրա:

Խանզադյանի դավանանքի արտահայտությունն էին «Սուրխաթյան. գրական գոհարներ», «Աշխատանքի գրական դպրոց», «Աշխատանքի դպրոց», «Արտադասարանային ընթերցանության համար» քննադատական մանրապատումները, որոնք մանկավարժական նկատառումներից բացի, արտահայտում են որոշակի սկզբունքային վերաբերմունք հայ գրականության անցյալի հանդեպ: Քննադատելով «Գրական գոհարներում» գրողներին տրված կամայական բնութագրությունները, Յ. Խանզադյանը գրում է. «Երբ որ այսքան լայն է դիտվում խնդիրը, պարզ է, ի՞նչ արկե, նորաստեղծ ֆամուսովի վերաբերմունքը՝ հավաքել բոլոր ազգասիրսկան գրքերը և այրել: Միայն չի հասկանում, որ այդ տեսակետից պետք է ոչնչացնել հայ գրականության խոշոր մասը, որովհետև «այրության» և «ցավիրի» խնդիրը մեծ տեղ է բնում այնտեղ: Ինչ արկե, հայկական մուսան գունատ է, արնոտված, մտրակահարված: Ինչ անենք, վարչական միջոցներով կովենք հայոց գրականության դեմ, արտաքսելով հեղինակներին, կեղծելով պատմությունը, թե՛ գիտական մարքսիստական մեթոդովգիայով նոր վերաբերմունք մշակենք դեպի անցյալը, հասկանանք պատմական հեռուների մեջ»:

«Պատմական հեռուների» դիրքերից էլ Յ. Խանզադյանը քննադատում էր 20-ական թվականների գրական դեկլարացիաներում արտահայտված անցյալի ժառանգության ժխտման տենդենցները: Կյանքի վերջին տարիներին Յ. Խանզադյանը շարադրում էր «Հայ գրականության պատմության ներածություն» գիրքը, որից մնացել են առանձին հատվածներ:

«Գեղագիտական ուղղության» ամենատպավորիլ դեմքը Պողոս Մակինցյանն էր:

Պողոս Մակինցյանը (1884—1938) ծնվել է Ներքին Ագուլիս գյուղում (Երևանի նահանգ):

Հազարյան ճեմարանի գիմնազիական դասընթացն ավարտելուց հետո, 1906 թվականից Մակինցյանը սովորում է Սոսկվայի համալսարանի պատմաբանասիրական ֆակուլտետում (ավարտում է 1913 թ.):

Դեռ ճեմարանական տարիներին Մակինցյանը աշքի է ընկնում իբրև ուժեղ «հումանիտար» և հմուտ «լեզվագիտակ», իսկ արդեն համալսարանական տարիներին նրա էության մեջ արթնանում է գրական-մշակութային, լայն առումով՝ հանրային գործիչը:

Մակինցյանի ընդհանուր-հասարակագիտական և մասնավոր-գեղագիտական հայացքների կազմավորման մեջ վճռական դեր են խաղում, մի կողմից, դարասկզբի ուսւական դեմոկրատական երիտասարդության միջավայրը՝ մյուս կողմից մտերմությունը և համագործակցությունը հասարակական լայն շահախնդրությունների տեր ուսանողների՝ Ալ. Մյասնիկյանի, Յ. Խանզադյանի, Վ. Տերյանի հետ։ Թիև Մակինցյանը ունեցել է ուրիշ մտերիմներ ևս, սակայն նրան ամենից ավելի գրավել են այս «եռյակի» (ինքն էլ հետը՝ «քառյակի») ծրագրերն ու ներշնչանքները։ Հանդես գալով արժեքների վերագնահատման ժամանակաշրջանում, Պողոս Մակինցյանն ու իր ընկերները կողմնորոշվել են դեպի կյանքի բոլոր ասպարեզներում նոր հոսանք սկսելու, հայ իրականության «գավառականության կապանքները» թոթափելու հեռանկարը։ Նրանց գործունեության սկզբին այդպիսի հայտ էր «Գարում» խմբակը՝ համաձուն Ալմանախի երեք գրքով։

Ալմանախի քննադատական հատորում (1912 թ.) տպագրվում են նաև Պողոս Մակինցյանի գրած Հովհաննես Թումանյանի և Ալ. Խահակյանի Դիմանկարները։ Այդ դիմանկարների ընդգծված հատկանիշը հայ ականավոր բանաստեղծների ներքին աշխարհը թափանցելու և նրանց ստեղծաբործության գեղարվեստական յուրահատկությունները բացահայտելու մղումն էր։

Զինված գեղագիտական ու բանասիրական անհրաժեշտ գիտելիքներով, Պողոս Մակինցյանը սուլվում է Հովհ։ Թումանյանի գերազանցորեն էպիկական արվեստի և Ալ. Խահակյանի քնարերգության խորքերը, ասպարեզ հանելով այնպիսի եզրեր, որոնք ունեն նաև այժմեական նշանակություն։

Թումանյանագիտության և խահակյանագիտության սկզբնավորման տարիներին Պ. Մակինցյանը ասպարեզ հանեց մի շարք սկզբունքային, կողմնուրոշիչ գրությներ, ինչպես Հովհ։ Թումանյանի ստեղծագործության «ազգային-ժողովրդական արմատների», արտահայտման էպիկական ոճի մեջ բեկված խորությականության, համամարդկայնության շերտերի, Ալ. Խահակյանի քնարերգության անհատական ուժեղ դրոշմի, «Արու-Լալա-Մահարի» պոեմի արդիական հզոր պաթոսի, բանաստեղծին վերագրված «նիցշեականության» հերքման դրությները։

Նախահեղափոխական տարիներին Պողոս Մակինցյանը հանդես է եկել քննադատական, հրապարակախոսական, բանավիճական հոդվածներով, սակայն նրա ամենաերեսի գործը Մաքսիմ Գորկու «Հայ գրականություն» ժողովածուին և Վ. Բրյուսովի «Հայաստանի պոեզիան» անթոլոգիային բերած մեծարժեք նպաստն է։

Պ. Մակինցյանը Վ. Բրյուսովի գլխավոր խորհրդատուն էր հայ բազմադարյան գրականության հուշարձանների «դասակարգման խնդիրներում (նրան դասեր էր տալիս հայոց լեզվից, գրականությունից, պատմությունից), իսկ Յ. Գորկու ժողովածուի համար պատրաստել էր տողացիներ և գրել էր «Ակնարկ հայ գրականության» ուսումնասիրությունը։

ինչպես իր պրակտիկ գործունեության մեջ, այնպես էլ տեսական եզրակացություններում Պողոս Մակինցյանը հակված էր դեպի գեղարվեստականության շափանիշների բացարձակացումը և պատմականության մոմենտի թերագնահատությունը, որը և դարձավ «էսթետ քննադատ» վերագրումի պայմանը:

Իհարկե, էսթետական ինչ-ինչ շոշափուկներ կարելի է մատնացույց անել Մակինցյանի գեղագիտական մոտեցումների մեջ, բայց դրանցով իսկ Մակինցյանը բնավ էլ արվեստը չէր անջատում հասարակական բովանդակությունից: Դա են վկայում իր գրած Դիմանկարները:

Հոկտեմբերից անմիջապես հետո Պողոս Մակինցյանը լրձվում է սովետական իշխանության կուլտուրական նախագծումների իրականացմանը: Էջմիածնի Գևորգյան ճեմարանի և Երևանի թեմական դպրոցի նախկին դասատուն շտապում է Մոսկվա և ստանձնում մի շարք կարևոր պաշտոններ: Ազգությունների կոմիսարիատում նա մեծ գործ է անում հայերեն գրականության հրատարակման, քաղաքացիական ակտերի ձևակերպման, Լազարյան ճեմարանի վերականգնման ուղղությամբ: Այնուհետև աշխատանքի է անցնում ՌՍՖՍՌ Լուսավորության ժողկոմատում՝ իրեն ազգային փոքրամասնությունների լուսավորության բաժնի վարիչ (ժողկոմն էր Ա. Լունաշարսկին), արտաքին գործերի ժողկոմատում՝ իրեն գրական բյուրոյի վարիչ (ժողկոմն էր Ֆ. Զերժինսկին), միաժամանակ Ն. Ցու. Մառի հրավերով վարում է Պետերբուրգի համալսարանի արևելյան լեզուների ամբիոնը (1918-ին):

1921 թ. Պ. Մակինցյանը մտնում է Ալ. Մյասնիկյանի գլխավորած Հայաստանի սովետական կառավարության կազմի մեջ իրեն ներքին գործերի և լուսավորության ժողկոմ: 1922—27 թթ. անցնում է դիվանագիտական աշխատանքի Թուրքիայում (Կ. Պոլիս) և Իտալիայում (Հոռոմ), այնուհետև աշխատում է Թիֆլիսում («Յարա Յունա»-թերթում, ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի անդրկովկասյան ֆիլիալում): Բազմազբաղ հասարակական գործունեությունը թեև շատ ժամանակ էր խլում Պողոս Մակինցյանից, բայց նա ժամանակ գտնում էր նաև գրական աշխատանքի համար:

Քննադատություն, թարգմանություն, տեքստաբանություն,—սրանք են այն ասպարեզները, ուր Պողոս Մակինցյանը ասել է իր ծանրակշիռ խոսքը:

Ինչպես գրում է Աշոտ Հովհաննիսյանը «Հուշեր և խոհեր Պողոս Մակինցյանի մասին» հոդվածում, «Մակինցյանի ետհոկտեմբերյան քննադատությունը շկարողացավ շարունակել ու զարգացնել բեղմնավոր այն մտքերը, որոնք նա ձևակերպել ու պաշտպանել էր նախահեղափոխական շրջանի մեծ տաղանդով գրած իր գրական-քննադատական ուրվագծերում<sup>21</sup>:



Այսուամենայնիվ, նա գրեց Վահան Տերյանին («Վահան Տերյանի մահն ու մահերգը»—«Նորք», 1922, № 1) և նղիշե Զարենցին («Եղիշե Զարենց, Երկերի ժողովածու», «Զարենցը և նրա պոեմները», «Էպիփական լուսաբաց») բնովթագրող հետաքրքրական հոդվածները, իսկ «Հայկական Բուլղուն և նրա արբանյակները՝ թվով երեք ու կես» գրական ֆելիետոնը հանդիսանում է քսանական թվականների քննադատական մտքի փայլուն երևույթներից մեկը։ Հանդես գալով «Երեքի» արշավանքի դեմ՝ ի պաշտպանություն գեղարվեստական ժառանգության, Պողոս Մակինցյանը բանավիճական այդ սուր հոդվածում բանաստեղծ Զարենցին հիմնավորապես անջատում է «պոեզիայի օրենսդիր» Զարենցից, նրա ձախողությունները բացարում ոռուսական գրական միջավայրի՝ կուրիստների, իմաժինիստների, ֆուտուրիստների վաղանցուկ ազդեցություններով։

Մյուս հոդվածներում Պողոս Մակինցյանն ընդհանրապես ճիշտ է գնահատում Զարենցի եզակի դերը հայ նորագույն գրականության գեղարվեստական սկզբունքների ձևակերպման մեջ, թեև առանձին դեպքերում, օրինակ, «Էպիփական լուսաբացի» գնահատման մեջ, թույլ է տալիս կոպիտ սոցիոլոգիական վրիպումներ։

Աշ. Հովհաննիսյանը նկատել է, որ «պատմա-սոցիոլոգիական թեքումը դգալի այլերածություններ էր կատարել նույնիսկ «Էսթետ» Մակինցյանի քըննադատական գործերում»<sup>22</sup>։

Ամենայայտուն վկայությունը 1929 թ. «Նոր-ուղի» հանդեսում տպագրած հոդվածն էր Հովհ. Թումանյանի ստեղծագործության մասին։

Քննադատ Մակինցյանի հարցասիրությունների առանցքը 20-ական թվականներին, իհարկե, «Զարենցի թեման» էր՝ բանաստեղծի ճակատագրի ու հետանկարի մտահոգությումը։ Երբեմն էլ նա հանդես էր գալիս բնութագրական-հուչագրական նյութերով (Մ. Գորկու, Վ. Բրյուսովի, Ալ. Բլոկի «Տասներկումի») ու առաջարաններով (Գ. Հառւալդմանի «Ճրասույզ զանգի», Սերվանտեսի «Դոն Կիխոտի»), որոնք ապացուցում են Մակինցյանի բարձր ճաշակն ու խոսքի կոլտուկան։

Դեռ նախահեղափոխական տարիներից Մակինցյանը զբաղվել է թարգմանչական գործերով («Պանթեոն» հրատարակության համար թարգմանել էր Արթուր Շնիցլեր), իսկ ետհեղափոխական թվականներին թարգմանում է ոռուս և եվրոպական գրականությունների մի շարք դասական հուչագրականներ (Պուշկինի «Բորիս Գոդունովը», Դոստոևսկու «Խաղամոլը», Գ. Հառւալդմանի «Ճրասույզ զանգը»), Սերվանտեսի «Դոն Կիխոտի» առաջին հատորը)։ Դրանք ոչ թե թարգմանական հերթական հրատարակություններ էին, այլ թարգմանական որոշակի սկզբունքների վրա հենվող ծրագրային հրատարակություններ։

Պողոս Մակինցյանը, լինելով հայ գրականության արժեքների պրոպագանդիստներից մեկը, ոռուսերեն է թարգմանել Հովհ. Թումանյանի «Գիբորը», Շիրվանզադեի «Քառոր», Ա. Բակունցի (պատմվածքներ), Գ. Մահարու («Մանկություն»), Մ. Արմենի («Հեղեղնար աղբյուր») գրվածքները։ Թարգմանական նյութերի ընտրությունը ցույց է տալիս, որ Մակինցյանը առավելապես կարևորում է դրանց գեղարվեստական արժեքայնության աստիճանը։

Պողոս Մակինցյանի գրականագիտական-բանասիրական վաստակի պսակը, անտարակույս, Վահան Տերյանի Երկերի ժողովածուի հրատարակություններում հատուրով (1923—25)։ Առաջին անգամ նոր ժամանակների գրողը արժանանում է գիտական հրատարակության։ Դրա նշանակության մասին ինքը՝

Պողոս Մակինցյանը Վ. Տերյանի Երկերի առաջին հատորին կցած առաջաբանում (1923, Կ. Պոլիս) գրում է. «Մեր հին և միջնադարյան գրականությունից հրատարակված են մի շարք քննորեն ստուգված տեքստեր՝ բաղդատությամբ բազմաթիվ ձեռագիրների. Մեր նոր հեղինակներից և ոչ մեկը չի արժանացել այդ պատվին: Այդ թիւ է: Հրապարակի վրա գոյություն ունեն պարզապես աղճատված տեքստեր և բացակայում են անգամ մեր ամենակարևոր հեղինակների լիակատար ժղովածուները...: Այդ իսկ պատճառով մեր նոր գրականության ուսումնասիրությունը դառնում է դժվարին մի գործ և գրականության պատմությունը՝ անխուսափելիորև թերի»:

Վ. Տերյանի բանաստեղծությունների ճշգրտված բնագրերի, դրանց տարբերակների ու ստեղծագործական պատմության աղբյուրագիտական տվյալներից բացի Պողոս Մակինցյանի հրատարակությունը, ինչպես նշվել է, արժեքավոր է նաև տեքստաբանության—(բնագրագիտության) բազմաթիվ տերմին-հասկացություններ ստեղծելու առումով:

Այդ հրատարակությունը փաստորեն սովետական տարիներին իրագործված անդրանիկ գիտական հրատարակությունն է և տերյանագիտության ամսաբառականը:

Գեղագիտական ուղղության հասարակական-պատմական շումը առավել որոշակի երկաց Սիմեոն Հակոբյանի (1880—1942) աշխատություններում:

Բարձրագույն կրթություն ստանալով Շվեյցարիայում (1902—1907), Սիմեոն Հակոբյանը, բնականաբար, իրազեկ է դառնում եվրոպական գրականության նորագույն հոսանքներին: Դրա վկայությունն էր 1906-ին «Մուլճ» ամսագրում տպագրած «Սիմվոլիզմը դրամայի մեջ» հոդվածը, ուր Ս. Հակոբյանը բացահայտում է գրական նոր ուղղության տարածման հասարակական շարժառիթները: Իննելով կուլտուր-պատմական գրականագիտության հետևորդը, Ս. Հակոբյանը հպոլիտ Տենի գեղարվեստի տեսությունը խմբագրում է գրական ստեղծագործության տվյալ ուղղությունը պայմանավորող հասարակական-սոցիալական կոնկրետ միջավայրի ներգործության դրույթով: Նրա անդրանիկ մենագրությունը Շիրվանզադեի ռեալիզմի քննությունն էր (տպագրվել է 1911-ին), որին հետևեցին պարբերական մամուլի մի շարք հոգվածները և 20-ական թվականների սկզբին արտասահմանում հրապարակած գրեթե Պ. Դուրյանի, Վ. Տերյանի, Հերանուշ Արշակյանի, ինչպես նաև Ե. Զարենցի մասին:

Վիեննայում հրատարակած «Արեգա շաբաթաթերթի մեջ 1924-ին տպագրվեց Ե. Զարենցի պոեզիայի քննությունը (լույս տեսավ նաև առանձին գրքույկով), ուր միանգամայն հստակ մեթոդաբանական ելակետերով Ս. Հակոբյանը ներկայացնում է հեղափոխական իրականության բանաստեղծի ծննդը: «Նրա (Զարենցի) արվեստը,—գրում է Ս. Հակոբյանը—հեղափոխության հարազատ արտացոլումն է և բյուրեղացնում է ոչ միայն հեղափոխության առավել կամ նվազ հակիրճ վայրկյանները, այլև լայն ու մեծ թափք»:

Գետք է նկատել, որ կուլտուր-պատմական դպրոցի գրականագետները շատ ավելի հիմնավոր ու ճիշտ էին մեկնաբանում Զարենցի պոեզիայի բովանդակությունը, քան սոցիոլոգիական ուղղության քննադատները: Այսպես, Սիմեոն Հակոբյանի գրքից երկու տարի առաջ՝ 1922-ին, դարձյալ արտասահմանում Զարենցի ստեղծագործությանն անդրադապավ երդվյալ իպոլիտական Արշակ Զովանյանը և ասպարեզ հանեց այնպիսի գնահատականներ, որոնք մինչև օրս էլ պահպանում են իրենց այժմեականությունը:

Կոահումների հմուտ վարպետը՝ Արշ. Չոպանյանը, Չարենցի հարցում ևս հանդես բերեց հազվագյուտ թափանցում և բնութագրությունների ստուգություն։ Նույն հատկանիշներով են աշքի ընկնում նաև Սիմեոն Հակոբյանի զրականագիտական հետազոտությունները, որոնց բնավ չեն դիպել ժամանակի «ձախ» տրամադրությունները։ Դրանք դասական գրողների կը ուղարկած, հիմնավոր բնութագրություններ են, նրանց ստեղծագործության պատմագեղարվեստական արժեքի էական հետևություններով։

Արտասահմանյան դեգերումներից վերադառնալով հայրենիք, Ս. Հակոբյանը մեկ տասնամյակից ավելի եվրոպական գրականության պատմության դասընթաց էր վարում Երևանի պետական համալսարանում։ Այդ տասնամյակը նշանավորվեց «Արևմտա-Եվրոպական գրականության պատմության ուրվագծեր» աշխատությամբ (գրվել է իբրև դասագիրք) և XX դարի եվրոպական գրական նոր հոսանքները ներկայացնող գրողների (Հ. Բարբյուս, Հառուպտման, Ռ. Ռոլան և այլն) տպավորիչ դիմապատկերներով։



«Եվրոպական գրականության պատմության ուրվագծեր» աշխատությամբ (գրվել է իբրև դասագիրք) և XX դարի եվրոպական գրական նոր հոսանքները ներկայացնող գրողների (Հ. Բարբյուս, Հառուպտման, Ռ. Ռոլան և այլն) տպավորիչ դիմապատկերներով։

«Եվրոպական գրականության պատմությունը» Ս. Հակոբյանը հրատարակեց Հովհ. Մամիկոնյանի համահեղինակությամբ։ Վերջինս տպագրեց նաև «Արևմտայան եվրոպայի վերածնության դարաշրջանի գրականության պատմության մասմբ մակերևսային», անուշացիոն բնույթի գրախոսականներ նոր հրատարակված գրքերի մասին, որոնք բնականաբար, չեն կարող եղանակ ստեղծել։

#### Թյան պատմության» երեք պրակները (1939—40):

Զնայած գրականագիտական տարբերաբնույթ հետազոտություններին և գրականության զարգացման ուղիները քննարկող բանավեճների մեծ քանակին, միանգամայն սահմանափակ էին կոնկրետ քննադատության օրինակները։

Պարբերական մամուլը տպագրում էր միծ մասմբ մակերևսային, անուշացիոն բնույթի գրախոսականներ նոր հրատարակված գրքերի մասին, որոնք բնականաբար, չեն կարող եղանակ ստեղծել։

Տասնամյակի վերջում արդեն երևում են կոնկրետ քննադատության առաջին տպավորիչ օրինակները։

Այս առումով հետաքրքրություն են ներկայացնում Խորեն Սարգսյանի մի շարք հողվածներն ու գրախոսականները։

«Վահան Տերյան» (1920) և «Լևոն Շանթ» (1930) մանրապատում մենագրությունների հեղինակը՝ Խ. Սարգսյանը, հանդես եկավ նաև իբրև ժամանակակից գրականության քննադատ։ 1928-ին «Նորք» հանդեսում տպագրեց Ա. Բակոնցի «Մթնաձոր» ժողովածուի մեկնաբանությունը, 1932 և 1934 թվականներին «Գրական թերթում»՝ Մ. Արմենի «Երևան» և «Հեղնար աղբյուր» երկերի բնութագրությունները, որոնք ընդգծվում էին այդ գրվածքների սո-

ցիւլական-փիլիսոփայական բովանդակության և գեղարվեստական համարժեքի համապարական վերլուծությամբ:

Այդ հոդվածներում հորեն Արագսյանը երևում է իրրե գրական ստեղծագործությունների ընդհատակը թափանցող, դրանց պատկերային ինքնատիպությունը հայտնագործող, առանձնահատկությունները ճանաչող քննադատ:

Քսանական թվականներին ժամանակակից պոեզիայի, իսկ 30-ական թվականներին՝ ժամանակակից դրամատուրգիայի հարցերով զբաղվող քննադատների մեջ էր Տիգրան Հախումյանը, որի հոդվածներն աշքի էին ընկնում բանավիճակին կրօու շեշտերով ու զարգացման հեռանկարը որոնելու միտումներով:

30-ական թվականներին «Գրական թերթի» (1932) կազմակերպումից հետո, ասպարեղ մտավ նորագույն գրականության քննադատների բավականաշափ ստվար խումբ, որոնց մի մասը հակված էր դեպի «գեղարվեստական համարժեքի» հայտնագործումը (Ռ. Զարյան, Ս. Հարությունյան, Էդ. Թոփյան, Ա. Ինճիկյան, Ս. Սողոմոնյան), մյուս մասը՝ դեպի «դասակարգային համարժեքը» (Հ. Մկրտչյան, Մ. Մկրտչյան, Արտ. Ոսկերչյան, Հ. Մամիկոնյան, Գ. Կոլողյան, Աս. Ասատրյան), այդ երկու դիրքերի ծայրահեղություններով.

Վրա հասան քննադատության և, առհասարակ, գրականության զարգացման դժվարին ժամանակները՝ 1935—38 թվականները, որոնք և իրենց ուժեղ դրոշմը դրին մտածողության վրա: Գրական վերլուծությունները փոխարինվեցին պիտակավորումներով ու վերագրումներով, ինքնուրույն մտքերի տեղը գրավեցին պատրաստի կաղապարները, դժվարին իրադրության մեջ էլ սկսվեց քննադատների ներհոսքը բանասիրության ասպարեզ:

## 9

Գրականագիտության զարգացման ակներև նշաններից մեկը անցյալ դարաշրջանների գեղարվեստական հուշարձանների՝ բնագրերի, գիտական հրատարակությունն էր Բնագրագիտությունը թեևանցյալում ստեղծել էր որոշակի ավանդներ, մասնավորապես հնադարյան (միջնադարյան) ձեռագրերի հրատարակության սկզբունքները մշտակելու և գործադրելու ասպարեզում, սակայն գիտության այդ հյուղի արդիականացումը սկսվեց քսանական թվականներից:

Վահան Տերյանի երկերի ժողովածուի Պ. Մակինցյանի հրատարակությունը հաջորդեց Հակոբ Պարոնյանի երկերի տասնմեկհատորյա հրատարակությունը, որի գլուխն անցավ խմբագրական հատուկ հանձնաժողովը՝ ՀՍՍՀ Գիտության և Արվեստի հիմնադրությամբ:

Հակոբ Պարոնյանի երկերի աշխատանքների գրեթե ամբողջ ժանրությունը, երկրորդ հասորից սկսած, իր վրա վերցրեց բանասիր-պարոնյանագետ Սարգիս Մանուկյանը:

Հաղթահարելով նյութերի հայթայթման և դրանց գիտական մատուցման հետ կապված դժվարությունները, Ս. Մանուկյանը այդ հրատարակությամբ դրեց Հակոբ Պարոնյանի ժառանգության գիտական հրատարակության հիմնաքարը:

Երեսնական թվականներին հայ նոր գրականության բնագրերի գիտական հրատարակությունը ստացավ նոր թափ:

Այս ասպարեզի կոթողային աշխատությունը Աշ. Հովհաննիսյանի հրա-

տարակած «Մ. Նալբանդյան, Անտիպ Երկեր» (1935, Երևան-Մոսկվա) մեծա-  
դիր (52 տպագրական մամուլ) ժողովածուն էր:

Երեսնական թվականներին բնագրագիտական լայն աշխատանքներ սկսե-  
ցին բանասերներ Խորեն Մարգույանը (Հրատարակել է Պ. Պոռշյանի «Հուշիկ-  
ները»), Ռուբեն Զարյանը (սկսել է Նար-Դոսի և Հովհաննեսի Եր-  
կերի հրատարակությունները), Արամ Ինձիկյանը, Հրայր Մուրադյանը, Ասա-  
տուր Ասատրյանը, բանաստեղծներ Վ. Նորենցը և Վ. Ալազանը (Հրատարա-  
կել են Մ. Մեծարենցի Երկերի լիակատար ժողովածուն՝ 1934 թ.):

Բնագրագիտության սկզբնավորման տարիներին հատկապես ընդգծվեցին  
Երվանդ Շահնազիզի (1856—1951) ջանքերը:

Դեռ XIX դարավերջից ե. Շահնազիզը հայտնի էր դարձել իբրև անձնվեր  
մանկավարժ, հասարակական եռանդում գործիչ և հայրենի մշակույթի մա-  
սումքների արթուն պահապան:

Ավարտելով կազմարյան ճեմարանը (1879) և նրա լիցեյը (1882), ե. Շա-  
հնազիզը շուրջ քառասում տարի ապրում է նոր Նախիջևանում, մանկավար-  
ժական գործունեությունը (եղել է թեմական դպրոցի ուսուցիչ և տեսուչ) զու-  
գացելով գիտահետազոտականին:

Իր դաստիարակությամբ լինելով 50—70-ական թթ. հայ ազատագրական  
և լուսավորական շարժման ականավոր գործիչների արժանի ժառանգործը,—  
նրա գաղափարական ներշնչանքները գալիս էին ճեմարանական ուսուցիչնե-  
րից, իր հորեղբայր Սմբատ Շահնազիզից, Ստ. Նազարյանցի և Մ. Նալբանդյա-  
նի «Հյուսիսափայլից», —ե. Շահնազիզը ամբողջ էությամբ նվիրվում է հայոց  
ամենաերեսի գաղութներից մեկի՝ նոր Նախիջևանի պատմության վավերա-  
գրական շարադրանքին, ինչպես նաև Մ. Նալբանդյանի ու Ռ. Պատկանյանի  
բազմակողմանի կենսագրությունների ամենատարբեր եզրերի բանասիրա-  
կան քննությանը:

Նալբանդյանական-պատկանյանական բազմաթիվ հետախուզումներից  
բացի ե. Շահնազիզը գործադրում է մեծ ջանքեր՝ գեղարվեստական-մշակութա-  
յին գրավոր արժեքները ի մի բերելու ուղղությամբ:

Ե. Շահնազիզի հավաքածուների վրա ստեղծվեց Հայաստանի գրական  
թանգարանը, ուր աստիճանաբար կհնտրոնացվեցին բազմաթիվ հայ գրողների  
ու մշակույթի գործիչների արխիվները:

Ե. Շահնազիզը ոչ միայն նյութեր-փաստաթղթեր հավաքող էր, այլև հայ  
գրականության նյութերը գիտական շրջանառության մեջ դնող ինքնատիպ  
մեկնաբան:

Արդարեւ, «նրա միտքը գրական փաստերի ու վավերական տեղեկություն-  
ների աներեակայելիորեն հարուստ ու անսպառ մի շատմարան էր, իսկ ինքը՝  
նոր շրջանի հայ գրական ու մշակութային կյանքի յուրօրինակ սկզբնաղբյու-  
րը, մի կենդանի կամուրջ, որն իրար էր միացնում հին ու նոր բանասիրական  
միտքը»<sup>23</sup>:

1922 թ. Լուսմողկոմ Աշ. Հովհաննիսյանի հրավերով տեղափոխվելով Սո-  
վետական Հայաստան, Ե. Շահնազիզը անխոնչ եռանդով լծվում է XIX դարի  
հայ նշանավոր գրողների (Մ. Նալբանդյան, Ռ. Պատկանյան, և. Աբովյան,  
Գ. Սոնդուկյան, Ս. Շահնազիզ) կենսագրության և ժառանգության հետազոտ-  
մանը:

Բազմաթիվ աշխատությունների շարքում հատկապես արժեքավոր են  
«Դիվան Միքայել Նալբանդյանի» (1932), «Խաչատուր Աբովյանի դիվանը»

(առաջին հատորը լույս է տեսել 1940-ին, երկրորդը՝ 1948-ին), «Սմբատ Շահազիզի կենսագրությունը» (1945), դեռևս անտիպ Ռ. Պատկանյանի նամականին, —քնագրագիտական բարձր շափանիշներով հյուսված աշխատափրություններ, որոնք ունեն աղբյուրագիտական անտարակուսելի արժեք:

39-ական թվականների վերջում, սովետական գրողների համամիութենական առաջին համագումարում ֆոլկորին Մ. Դորկու տված բարձր գնահատականից հետո, թափ ստացավ հատկապես բանահյուսական հուշարձանների հրատարակությունը:

Այս ասպարեզի հիմնարար աշխատությունները կապված են մեծ հայագիտ Մանուկ Աբեղյանի անվան հետ:


Դեռ դարավերջին մուտք գործելով հայ մշակույթի հետաղուման բնագավառը, Մանուկ Աբեղյանը քննադատական-գրականագիտական, լեզվաբանական-քերականագիտական, ընդհանուր մշակութաբանական աշխատությունների հետ միասին հրոշակվեց նաև իրրև բանահավաք ու բանագետ: Նրա բանահավաքշական գործի անդրանիկ քայլը

«Սասունցի Դավիթ» վիպերգի տարբերակներից մեկի գրառումն էր: Դա 1886-ին նախոր քեռուց գրի առնված և 1889-ին տպագրած «Դավիթ և Մհեր» պատումն էր, որին հետեւց Մ. Աբեղյանի հավաքական բուն գործունեությունը:

Տասնամյակների մեղվազան որոնումների արգյումբը եղան «Փողավրդական խաղիկներ» (Կոմիտասի համագործակցությամբ) և «Գուսանական ժողովրդական տաղեր, հայրեններ և անտունիներ» մեծածավալ հավաքածումները, որոնք երկուսն էլ գիտական համակարգությամբ, բնագրագիտական նորագույն սկզբունքներին խարոխված ապարատով լույս տեսան 1940 թվականին:

Մ. Աբեղյանի բանագիտական աշխատությունների պսակը եղավ «Սասնա Ծոեր» ժողովրդական վիպերգի գիտական հրատարակության երկհատորյակը: Առաջին հասորը տպագրվեց 1936 թ., երկրորդ հատորի առաջին գիրքը՝ 1944-ին, երկրորդ գիրքը (Կ. Մելիք-Օհանչանյանի համագործակցությամբ)՝ 1951-ին: Երշանառության մեջ զնելով «Սասնա Ծոեր» վիպերգի բազմաթիվ պատումներ, Մ. Աբեղյանը այդ հրատարակությամբ ճանապարհ բացեց հայ ժողովրդի գեղարվեստական հանճարեղ կոթողի լայն ու բազմակողմանի հետազոտության համար:

Այդ պատումների հիման վրա Մ. Աբեղյանը, Դ. Աբովը և Ա. Ղանալանյանը ստեղծեցին «Սասունցի Դավիթ» համահավաք բնագիրը, որը դարձավ ազգային էպոսի 1000-ամյակի տոնակատարության գլխավոր իրադարձություններից մեկը:



## ԵՂԻԾԵ ԶԱՐԵՆՑ

Պատանության օրերին, —պատմում է հուշագիրը, —Զարենցը ցանկանում էր վերցնել գրքեր ու ձեռագրեր, կողմնացույց ու քարտեզ, ոտքով ու սայլով, ձիակառքավ ու գնացքով, մայրուղիներով ու կից ուղիներով դուրս գալ լայն աշխարհ՝ հեռաստանից հեռաստան, ճանաչել մարդկանց ու ժողովուրդներին, կյանքն ու աշխարհը, պատմությունն ու տիեզերքը<sup>1</sup>:

«Հարդագողի ճամփորդի» հանդուգն ու միամիտ «Փանտաստիկական ճանապարհորդությունը», իշարկե, անկատար մնաց, բայց կարճատև կյանքում (1897—1937) Զարենցն իրագործեց «Հոգենոր ճանապարհորդությունը ժամանակի խաշուղիներում, պատմության հին ու նոր հատվածներում, համաշխարհային արվեստի հազար ու մի բնագծերում՝ լուս աշխարհ բերելու իր ոգու հերկն ու ցանքը, իր երգի արևք:

Դրանով էլ նա միացավ XX դարի միջազգային գրականության արևային լուսատուներին, որոնց վիթխարի նշանակությունը մարդկության հոգենոր կենսագործյան ու ճակատագրի մեջ լուի Արագոնը բնութագրել է հետևյալ խոսքով. «Մեր դարի ճակատը կրում է պոետներից մի քանիսի պայծառ անհնաների դրոշմը: Անգլիայում դա Կիպլինգն է, Ֆրանսիայում՝ Ապոլիները և Էլյուարը, Գերմանիայում՝ Ռիլքեն, Ֆրանսիայում՝ Գարսիա Լորկան, Ռուսաստանում՝ Մայակովսկին և Եսենինը, Հայաստանում՝ Զարենցը և Խաչակյանը: Այն անգամ երբ այդ լուսատուներից մեկն ու մեկը մարում է, թվում է, թե խավարով է պատում աշխարհը: Սակայն այն ամենը, ինչ նրանք իրենցից հետո թողել են, ստվեր շի եղել, այլ՝ խարուկ»<sup>2</sup>:

Զարենցի էությունը ոչ ոք ավելի խորոնկ շի արտահայտել, ինչպես Մարտիրոս Սարյանը՝ 1923 թվականի հանրահայտ դիմանկարում:

Ավանդական ապոլոնյան քնարի փոխարեն, որով սովորաբար գեղանկարիչները պատկերել են բանաստեղծների ներշնչված ոռմանտիկական կեցվածքը, Սարյանը կտավի կապույտ ֆոնի վրա, դիմանկարի կողքին, դրել է եղիպական դիմակ:

Մ. Սարյանը գրում է. «Դիմակի հավերժից եկող, սառած աշքերը, կոնտրաստի մեջ մտնելով Զարենցի կենդանի և խորիմաստ աշքերի հետ, ընդգծում են բանաստեղծի աշքերի անհում խորությունը»<sup>3</sup>:

Սարյանական Զարենցի դեմքի վրա դրոշմված է մի անհում տառապանք, իսկ թափանցող, սուր աշքերը, ասես թե, նայում են հեռուների՝ ժամանակի ու տարածության խորքը՝ գտնելու կեցության հազար ու մեկ հարցերի պատասխանները:

Եղիպական հնագույն արվեստի ստեղծագործությունը՝ դիմակը, խորհրդանշում է իմացության բևեռների մեջ՝ մարդկության վաղնջական որոնումներից մինչև ետնադարյան թափանցումներ, մաքառող և նորից մաքառող ոգու հզոր ուժը:

Սարյանի դիմանկարի նշանակություններից մեկն էլ, ոռւս արվեստաբան Ա. Կամենսկու նուրբ մեկնաբանությամբ, հետևյալն է. «Հնադարյան խորհրդավոր դիմակի ու բանաստեղծի առօրենական դեմքի համադրությունը արտահայտում է այն գաղափարը, որ ամենից ավելի ճշգրիտ կարող է բնորոշել իրեն՝ Զարենցի, դիստիքոսը»:

Երգը այնժամ և միայն քերթողից իր և դարից իր անցնում, նոր առնչվում է հյանքին հուր միջուկով. իր անանցաւ:

Բանաստեղծների և լեռնապարի հնամաշակ համեմատությունը թերեւս ամենաճշշտն է բոլոր համեմատություններից: Բլրակներն ու բլուրները հեռավորությունից շեն երեսում: Սարերը բազմում են իրար վրա՝ մեկ անհետանալով, մեկ երևալով, նորից հեռանալով, նորից հայտնվելով: Միայն ձյունափառ բարձրագագարներն են, որ առանձնանում են լեռնաշղթայից և շողում իրենց հասակի բարձրությամբ՝ ոչ միայն պարզ ու արևոտ օրերին, այլև անգամ խիտ մշուշների պահերին: Գագաթների հանդեպ սննդոր են ժամանակն ու տարածությունը: Գագաթներն իրենք ժամանակն են: Ժամանակի վկաներն են ու թանձրացումները:

Այդպիսի անսասան գագաթ է եղիշե Զարենցի՝ հայոց Պատմության հավերժական ուղենորը, ժամանակի մեծ որոնողն ու Ապագայի սրատես մարգարեն, որ բոլորից ճիշտ ինքն է արժեքավորել իր ստեղծագործության էությունը.

Ինչ ունեցել է ծաղովուրդը քա  
Հնում, անցյալում—լուսավոր ու վեհ,  
Ինչ ունի այսօր, ինչ ցնորք ու խահ,—  
Ոզք հավաքել և քեզ է տվել,—

Տվել է, որ դու այդ ամենը այս  
Օրերին խառնած, խոր հավատքով լի՝  
Պարզես գալիքի ցնորքին անհաս—  
Եվ բնդմիշտ մնաս մեծ ու սիրելի:

## 1

...1912 թվականին Թիֆլիսում հրատարակվող «Պատանի» ալմանախում (4-րդ գիրք) Եղիշե Սողոմոնյան ստորագրությամբ տպագրվում է Կարսից ուղարկված այս բանաստեղծությունը.

Ծաղիկները հեզ թերգում են քամու օրորի տակին—  
Եվ լուս նրա հեռակցը բերող երգը տխրագին...  
Քամին ծաղկունանց շորթերն է դողդոց շոյում, զուրգուրում  
Ու լուս մրնջում, թե հեռուներում ինչպես են սիրում...  
Եվ այս ամենը կատարվում է միշտ իրիկնայամին,  
Երբ որ տրտում են հեզ ծաղիկները ու մեղմ է քամին:

Եղիշե Սողոմոնյանի «դպրոցական ուսանավորներից» «Սաղիկները հեզ...» բանաստեղծությունն առանձնանում է վարակիչ տրամադրությամբ և ապրումի արտահայտման իմպրեսիոնիստական նրբությամբ:

15-ամյա բանաստեղծի առաջին տպագրված փորձն արդեն որոշակի գեղարվեստական որակ է՝ մեծ ճանապարհի վայելու սկիզբ:

Բանաստեղծության պատկերային կառուցվածքում՝ տիտր-երազային հնշերանգում երեսում են ասպարեզ մտնող նոր բանաստեղծի՝ մարդու կարո-

տով ու սիրո մտերմությամբ այրվող, բարձր ու վսեմ կյանքի երազներով շնչող աշխարհայացքի սաղմերը:

Վեցտողանոց քնարական վերապրումի մեջ արդեն գրվում է աշխարհածիաման ու աշխարհիացումի բանաստեղծական թեմայի հիմքը: Այստեղից է սկիզբ առնում երազների ու տեսիլների պատկերային համակարգը (իրիկնաժամ, հեռուներ, տրտում ծաղկներ), որը շուտով Զարենցի ստեղծագործության մեջ դառնալու է հիմնական բովանդակություն:

1914-ին, Կարսում՝ բանաստեղծի ծննդավայրում, տպագրվում է առաջին գրքույիշ՝ «Երեք երգ տիրադայուկ ապօկան...» խորագրով: Կարսի գրոսայդիների ծառողիներում հաճախ երեացող «բաց-շագանակագույն թիկնոցով, ծխամորճով և մեծ ձեռնափայտով պատանին» այդ գրքով այլևս անվանափոխվում է՝ դառնալով բանաստեղծ Եղիշե Զարենց:

«Երեք երգը...», «Ճամփին», «Անեռն զիշերին», «Մեռելոց» ուշագրավ է թե՛ գրական առնչություններով, թե՛ ապրումների դրամատիկ շնչով, թե՛, մանավանդ, բանաստեղծական տրամադրության կենսական երակով:

«Երեք երգը...» ուներ «...Եվ այդ վերջին սերն է վաղընջական գիշերվա» բնաբանը՝ քաղված ֆրանսիացի բանաստեղծ Ալբերտ Սամենի «Անավարտ պոեմներ» շարքի «Ամենտի» բանաստեղծությունից:

«Երեք երգը...» ուներ նաև «Աստղիկ Ղոնդախյանին» ընծայականը, որ փաստում է այդ երգաշարում արտահայտված ապրումների ինքնակենսագրական-ինքնամեկնաբանական առնչությունները:

Թեպետև «Երեք երգի...» բանաստեղծական սյուժեն մի կոնկրետ, պատանեկան սիրո կործանման պատմություն է, բայց այդ «եղելության» խորքում երևում է «թափառաշշրիկների» ու «պատահական անցորդների» սերնդի՝ տասական թվականներին հայ իրականության մեջ հայտնված անհեռանկար ու անտում երիտասարդության, տիուր ճակատագիրը:

Անորոշ ճանապարհի, երկնային ու անդրերկրային տեսիլքի, թափառական անցորդի, ճակատագրի (Fatoupi) և նման խորհրդապատկերներով «Երեք երգ...» կապվում է սիմվոլիստ բանաստեղծների արտահայտչությանը, գրական իրողություն, որ մատնանշել են Զարենցի վաղ քնարի հետազոտողները, նրա հուզապրումները կապելով Ալ. Բլոկի «Բանաստեղծություններ Գեղանի Տիկնողը» գրքի ինչպես նաև ուրիշ սիմվոլիստների հետ:

Ճիշտ չի լինի, սակայն, գրական առնչությունները պարզելով, շտեսնել նաև «Երեք երգի...» հղացման անմիջական, կենսական շարժառիթները՝ այդտեղ արտահայտված իրական ապրումները:

Զարենցի առաջին տպավորությունների աղբյուրը եղել է զավառական քաղաքը՝ Կարսը, ուր անցել են նրա մանկության ու պատանեկության տարիները:

Դավառական քաղաքում, Զարենցի այնտեղ ապրած տարիներին, թանձրացել էր հնամյա ու ծանր թախիծը՝ դառնաթախիծը:

Արհեստավորների մելամաղձոտ երգերից, մարդկանց մոռայլ և տիսուր հայացքներից, գավառացի պատանիների շփոթված հոգիներից, փողոցներից ու ճամփաներից, բովարներից ու շոկաներից՝ ամեն տեղ ու ամեն ինչից, ծորում էր անփարատ տիրությունը:

Թախիծը բռնել էր աշխարհը, համատարած շառավիղով փռել թևերը:

Թախիծը բարձրացել էր ժամանակի հոգկոր զերքի վրա:

Թախծի մի իսկական բույն էր Զարենցի հայրական օջախը՝ մարմնացած Աբդար աղայի մոպալ «Հազարամյա» կերպարանքում:

Այս ամենը Կարս քաղաքի «Հոգևոր մթնոլորտի» ու կենցաղային առօրյայի գույներն ու նվագներն էին: Այդ գույներն ու նվագները եղան պատանի բանաստեղծի նախնական կուտակումները:

Տասական թվականներին որպես ընթերցանության առաջին գրքեր ասպարեզի վրա էին Ստանիսլավ Պշերիշևսկին՝  *Homo sapiens*-ը, Ֆրիդրիխ Նիցշեն՝ «Այսպես խոսեց Զրադաշտը», Շոպենհաուերը՝ «Հոգու անմահությունը», Շտտո Վայնինգերը՝ «Մեռ և բնավորություն», գրական նորագույն հոսանքների՝ սիմվոլիստների և իմպրեսիոնիստների բանաստեղծությունները, վեպերն ու դրամաները: Ինչպես հայ պարբերական մամուլի էջերում, այնպես էլ առանձին գրքերով թարգմանաբար տպագրվում էին XIX դարավերջի և XX դարասկզբի գրական անվիճելի հեղինակությունները՝ Հենրիկ Իրսեն և Գերհարդ Հաուպտման, Մորիս Մետերլինկ և Կնուտ Համսուն, Օսկար Ռուզլիդ և Գ. գ'Անունցին, Էռոնիդ Անդրեև և Վյաչեսլավ Իվանով, Շարլ Բողեր և Պոլ Վերլեն, Վալերի Բրյուսով և Ֆեոդոր Սոլոգուր, Էլի ուրիշ՝ պակաս հայտնի անուններ:

Շառլ Բողերի «Ճավի ծաղիկների» անարխիստական իրոնիան, Պոլ Վերլենի՝ կործանվող աշնան մեղմ նվագները, Օսկար Ռուզլիդի նրբակերտ արձակի ու դրամայի խորհրդապատկերները, Էմիլ Վերհարնի ուրբանիստական մոտիվները, Ստեֆան Մալարմեի՝ ինքն իրեն սիրահարված և արևը, աստվածը, ամրող աշխարհը այդ եղակի սիրո մեջ ներսուզած նարցիսի կերպարը, Կնուտ Համսունի՝ դեպի բնության նախաստեղծ անդորրությունը կանցող հերոսները, Վ. Բրյուսովի, Ֆ. Սոլոգուրի, Ա. Բելու, Վյաչ. Իվանովի, Օ. Բայլմոնտի բանաստեղծական պատկերները, «Ապօլլոն»-ի և «Մյազագետ»-ի պարբերական հատորներում անվերջորեն հողովով «ոգու որոնումները», — այս պես-պես, և բարդ, և հաճախ տարօրինակ մտայնությունները գրավել էին ժամանակի հոգերը մթնոլորտը ու տարածել իրենց անդիմադրելի հմայքը:

Ճակատագրական ժամանակաշրջանի հայ ընթերցողը բառիս բուն իմաստով հափշտակված էր նորագույն հոսանքներով: Այդ հափշտակության պատճառների շարքում, ըստ երեսութին, ամենագլխավոր պատճառն այն էր, որ «կուպիտ իրականության» գծերից ավելի դրանց մեջ մեծ տեղ էր գրավում «երազների անյութական աշխարհը», մարդկությանն անհայտ գաղափարների մեծարումը:

Ճակատագրական ժամանակը նաև պատրանքների կառուցման ժամանակ էր: Հայ հասարակական զիտակցությունը, խորտակված տեսնելով Վաղորդայնի հույսերն ու պատրանքները, եռանդագին որոնում էր փրկության նոր շավիղներ:

Ճիշտ է, պատրանքների ծնունդին շուտով հետեւց պատրանաթափը, — համաշխարհային պատերազմը խորտակեց բոլոր հույսերն ու արյունով ներկեց բոլոր պատրանքները, — բայց փաստը մնում է փաստ՝ հայ իրականության անգամ ամենահեռավոր անկյունները թափանցեցին նորդարյա «փրկական գաղափարները»:

Զարենցը նույնպես տարվում է հասարակական կայուն հենարաններ և սոցիալական որոշակի փորձ շունեցող, անդավանանք երիտասարդության վաղանցուկ կուտքերով:

Լեհ գրող Պշերիշևսկու ամբողջ աշխարհում աղմուկ հանած «*Homo Sapiens*» գիրքը պատանի Զարենցի համար դառնում է յուրատիսակ ավետա-

րան։ Այդ գրքի թեման Զարենցի գիտակցության մեջ միանգամայն ինքնատիպ մեկնաբանություն է ստանում, մարմնանալով շրջապատից վեր բարձրացող տիտան մարդու՝ փրկչի, կերպարում։

Պատանի Զարենցը հաճախ էր հայացքն ուղղում դեպի սիմվոլիստների խոստացած հեռավոր եզրքներն ու միստիկական տեսիլները, գրքային ներսուղումը համարելով ժանր կյանքի կոպիտ տպավորությունները մոռանալու ամենահուսալի ու փրկարար միջոցը։

Զարենցի բանաստեղծական մկրտությունը զուգադիպեց ժողովրդի բաղադրական հույսերի խորտակման ժամանակին, որ և ցայտուն հետագիծ թողեց սիմվոլիստական գեղագիտությունը։ Այս ուղղության մի շարք կողմեր, ինչպես ճակատագրի և հրաշքի թեմաները, պատրանքի ու հույսի վերապրումը, որոնման՝ նոր ուղիների, կանչը առանձնապես հարազատ էին Զարենցի անփորձ հասակին։ Զարենցի համար աշխարհը շմեկնված գաղտնիք էր՝ լի բազում առեղծվածներով, իսկ նրա տեսադաշտում հայտնված սիմվոլիստները խոստանում էին աշխարհի փականքները բացելու ինչ-ինչ բանալիներ։ Դա էր պատճառը, որ «մի կողմ թողած» նույն ժամանակաշրջանի հայ գրականության մեջ բարձր զարգացման հասած ազգային-ժողովրդական քնարի (Հովհ. Բումանյան, Ավ. Իսահակյան) կենդանի ավանդները, Զարենցը առանձնահատուկ սեռումով դարձավ դեպի նորագույն ուղղությունը։

Սիմվոլիզմը նրա համար եղավ հարազատ գիրկ։

Զարենցի սիմվոլիստական հրապուրանքներին խթանեց նաև այն հանգամանքը, որ նորագույն բանաստեղծները՝ ֆրանսիական և ոռւսական մոդեռնի ներկայացուցիչները, աշխարհի քառսային պատկերացումներով ու տագնապի ահազանգերով ավելի «խոստումնալից» էին երեսում, քան աշխարհի բանն իմաստնորեն զննող Հովհ. Թումանյանն ու Ավ. Իսահակյանը։

Ուշագրավ է նաև այն, որ Զարենցի վաղ քնարի սիմվոլիստական արժարծումները բեկվում են ազգային-տեսլական գաղափարաբանության՝ գուշակությունների, հայտնությունների, հրաշքների, կանխատեսությունների մտապատկերով։

Մի կողմից՝ ազգային-տեսլական հոգիբանությունը, մյուս կողմից՝ սիմվոլիստների տեսլական գեղագիտությունը, — այս երկու իմացական աղբյուրներն են սնում վաղ Զարենցի գեղարվեստական մտածողությունը։

Եթե ազգային տեսիլները կոշված էին պատմության անթափանց մշուշների մեջ կորած հայրենիքը ուտեղծագործելու խնդրին, ապա սիմվոլիստական տպավորությունները կոշված էին արտահայտելու մարդու խորթացումը անհեթեթ, քառսային իրականությունից։

Տիրագալուկ աղջկան նվիրած «Երեք երգ...»-ում, ինչպես և դրանից հետո գրած մյուս շարքերում («Հրո երկիլ»—1913—1916, «Տեսլագամեր»—1915, «Լիրիկական բալլադներ»—1915—1917, «Ծիծածան»—1917) Զարենցը արտահայտում է տասական թվականների անտուն ու թափառական, անդեկ ու անտուգաստ երիտասարդության հոգեկան մղումների աշխարհը՝ նրանց ֆանտաստիկան։

Ժամանակի մեծ ու փոքր ողբերգությունները՝ աղքային աննախընթաց աղետն ու ամենասովորական հոգեկան մղումների ոչնչացումը, մարդկանց հայացքները գամել էին այն առտղացոլ հեռումներին, որոնք, նրանց կարծիքով, բերելու էին փակուղիներից գորու գալու ինչ-ինչ լուծումներ ու ելքեր։



Հայմանես Բռնիմյան



Սիմվոլիստ բանաստեղծների փոխառյալ կերպարներով, թեմաներով ու պատկերային կապակցություններով, մի խոսքով սիմվոլիստական գեղագիտության բանալիներով, Զարենցն արտահայտում է երազասերների սերնդի ուղերանության մեջ հուն բացած հավելյալ աշխարհների տևսիլքը:

Մերթ նրա ստեղծագործության մեջ այդ տեսիլը հայտնվում է եզիստական անդրշիրիմյան Ամենատի և զերքի նշանով,— մի անծանոթ հանգրվան, որի մասին ասվում է, թե այստեղ՝

Հոգին չի մեռնում: Մարմինը թուղած երկրային փռսով—  
Քափառում է նա ողբերական լարիրինթոսում:

Անցնում է բոլոր ճամփաները սուս ու անբեր երկրի,—  
Որ պայծառ, մաքուր, դարձերից հետո,—թու զրկում բերկրի:

Բայց ե՞ր կհասնի հոգիս, որպես ևեգ, որբացած մի զոհ,—  
Մայրամետային ծգերը կապույտ, լուս եզերը քա...

Մերթ տեսիլքը համբառնում է երկինք և նրա ելագիծն են դառնում Հարդագողի «ոսկեման ուղիները».

Մենք սիրել ենք արտամությունը մեր հոգու՝  
Անրջական ինչ-որ կարոտ, ինչ-որ սեր,  
Ու սիրում ենք առավոտից-իրիկուն  
Ճամփա երթալ—ու հավիայան երազել  
Աշբերիս մեջ մենք պահել ենք երկրային  
Ճամփաների հեռուները դյութական—  
Ու անցնում ենք ուղիներով երկրային  
Ուր բյուր մարդիկ երազեցին ու չկան...

Մերթ տեսիլի կերպարանք է առնում կապույտի անեղորությունը.

Կապույտ հոգու աղոթքն է, քույր,  
Կապույտը—թախիծ:

Մերթ «մանուշակագույն մշուշի» մեջ է որոնվում հոգեկան անդորրության ակնթարթը.

...Քույր, փովեց ահա իմ տրասում հոգում,  
Որպես երազում ապրած երեկո—  
Մի խամրած մշուշ մանուշակագույն:

Բանաստեղծության տեսլական կառուցվածքի սնուցողը «սարսափելի աշխարհից» ստացած տպագործություններն էին, որոնց ազդեցությամբ Զարենցի բնարը դառնում է ավելի դրամատիկ և տագնապալից: Իրականության տպագորությունները՝ գույներն ու գծերը, խորացրին փախուստի-հեռացման թեման, որն այս դեպքում ոչ թե կյանքի դեմ ուղղված արմատական ընդգում էր, այլ ըստ էության, կեցության իդեալական շափանիշների, այսինքն՝ պատրանքի մեծարում:

Զարենցի բանաստեղծական շարքերում այդպիսի դերով երեաց «հեռավոր եզերքների» թեման, որը փախուստի ոչ թե իրական, այլ ֆանտաստիկական-հայեցողական լուծում էր:

Նույն դերով հայտնվեցին նաև Զարենցի բնարի այն նվազները, որ կանչում էին դեպի բնության անեղորությունը («Որպես հսկա ադամանդ, տեսադագաթը ձյուն...»), դեպի իդեալականի բարձրագույն արտահայտությունը՝ դեպի սիրո հեքիաթը:

Այդ հեքիաթին բնորոշ էր իդեալական-ֆանտաստիկական աշխարհ՝ նվաճման այն եղանակը, որի մասին Վահան Տեղաքան ասում էր:

Թեզ այնտեղ կտանեմ իմ հոգու թևերով,  
Թեզ այնտեղ կտանեմ իմ պայծառ երազով...

Սիրո նվազը ևս Զարենցի քնարերգության մեջ «զարդարվեց» սիմվոլիստների արտահայտչական գույներով ու պատկերներով:

Սիրո հեքիաթում իբրև կենտրոնական կերպարներ հանդես են գալիս բանասանեղը և Իրիկնային քույրը:

Ինչպես Բլոկը և Տերյանը, Զարենցը ևս ամենաերկրային, ամենակենդանի զգացմունքը տեղափոխում է երկնային ոլորտներ և այդ բարձր կետում որոնում իր իսկ միստիֆիկացրած Կանացիության ու Սիրո իդեալը:

Դրամատիկական բովանդակություն ունի բանաստեղծի կառուցած սիրո այն ֆանտաստիկան, որը տեղ է գտել «Հրո երկիր», «Լիրիկական բալլագներ» և «Սիածան» շարքերում:

«Հրո երկիր» (1913—1916), ըստ Էռիթյան, «Սիածանի» նախնական տարրերակն է: Այս շարքում Զարենցը կատացում է ֆանտաստիկական սիրավեպի առաջին դրվագը, ուր, բանաստեղծի բնազդական կոահումով, պետք է որ միասնանան «մարմինը և հոգին», կիրքն ու երազը, Շամիրամն ու աստվածությունը.

Երազում եմ այն երկիրը հեռավոր,  
Ուր մարմինը, սեզ մարմինը ու հոգին՝  
Աննյութացած ու նյութացած լուսավոր՝  
Աղջակիզվեն Արեի մեջ, քույր իմ, կի՞ն:

«Հրո երկիր» շարքում առաջին անգամ Զարենցի քնարերգության մեջ տեղ է գտնում նրա Հրաշալի Անժանութունու «կապույտ դրյակի» խորհրդանշանը, որ ավելի ընդարձակ մեկնաբանությամբ անցնում է «Երեքը» (Պոեմ Հավիտենական) և «Հետերա-երազ» բալլագներին:

Բանաստեղծի հոգեկան դրաման է արտահայտում «Սիածան» բանաստեղծական շարքը, որն առանձին գրքույկով լույս տեսակ 1917-ին, Մոսկվայում և ուներ «Երկնային քրոշ՝ Կարինե Քոթանջյանին» նվիրումը:

Բովանդակությամբ և կառուցվածքով «Սիածանը» ամբողջական քնարական պոեմ է, որը վերարտադրում է Աստվածամոր աշքերով աղջկա (Հրաշը աղջկա, Հրաշալի Անժանութունու կրկնակի) և բանաստեղծի ֆանտաստիկական սիրո պատմությունը:

«Սիածանը» բացվում է մի բնորոշ քառյակով, որը պարզում է այդ սիրո յուրահատկությունը:

Ես աստեղային մի պետ, Լաբիրինթում քո Կապույտ,  
Քույր, անցնում եմ, որպես աստղ, հոգիս մեռած աստղի փայլ,  
Այնքան արտում է հոգիս, բայց միշտ մատում է հոգուի,  
Որ երազը շղանա Գողգորայի նահանգարն...

Աստեղային բանաստեղծ և կապույտ աղջկի, Երազներ և հույսներ, սիրո ոսկի հեքիաթի կարոտ և սիրո խոստումներ, պայտ՝ կապուտաշյա երշանկության առասպելի կործանում,—սա է, ընդհանուր գծով, «Սիածանի» սյուժեամային բովանդակությունը:

Ինչպես առհասարակ բոլոր սիմվոլիստների մոտ, Զարենցի բանաստեղծություններում ևս սերը կոնկրետ, զգացական ապրումի գծեր չունի: Դա

անակրեոնյան վայելքի գծերից դտված, սուկ հիշողական զուգորդումներով կառուցված գաղափար-խորհրդանշան է:

Դա այն սերն է, որ Այսաշխարհից ծավալվում է գեպի Այնաշխարհ։ Երկրային առօրյայից զեպի անհայտություն, դեպի ֆանտաստիկական այն եզերքը, որտեղ մարդու հոգին, ազատվելով «սուս ու անբերր» երկրի տառապահներից, վերագտնում է իր նախասկիզբ լուսավոր էությունը։

«Հրաշք աղջկեր», «Երիկնային Թույրը», «Կապույտ աղջկը» աստղային պոետի պատմած սիրո հեքիաթի մեջ, որի համապատասխան մասերն են «Ծիածանը», «Կապույտը», «Ոսկին», «Մանուշակագույնը», «Հրաժեշտի երեկոն», «Գազելներ», ևնթաշարքերում ասպարեղ բնրված բազմաթիվ քնարական էտյուդները, ներկայանում են որպես երազ ու խոստում, որպես հույս ու սպառում, որպես հրաշքներ արարող ուժ։

Կապույտը, ոսկին, մանուշակագույնը՝ սիմվոլիստական պոեզիայի «գունային երրորդությունը», սրանց բնորսչ հմայքներով ու հրաշագործություններով՝ մաքուր արցունքներ, լուսավոր դողանչներ, արենի ոսկի, կանչող կարապներ, լուսեղեն երազներ, օրորվող լճակներ, ոսկեգույն առագաստներ, հասկերի շշուկներ, մայրամուտային հանգստի պահեր, ծիածանի ճաճանչներ, — այս ամենը, որոնք բանաստեղծի ֆանտաստիկական սիրավեպի ու հեքիաթի մասերն ու մասնիկներն են, իրենց տեղը տալիս են իրականության գծերին՝ իրական տառապանքին ու իրական ցավին։

XX դարի բազմազան ուղիների բարդ հարաբերության մեջ երիտասարդ Զարենցի համար համբաւակության առարկա եղան հայրենական պոեզիայի ավանդները, մասնավորապես Վահան Տերյանի և Միսաք Մեծարենցի բանաստեղծական աշխարհը։

Վաղ Զարենցի բանաստեղծական աշխարհի ձևավորմանը ազդակներ են տվել հայրենի գրականության ուրիշ նշանավոր դեմքեր ևս, Գրիգոր Նարեկացուց մինչև Սիամանթո նրան պարզել են մարդկային ապրումներն արտահայտելու բանալիներ ու սկզբունքներ։ Բայց ամենից ավելի Մ. Մեծարենցը և, հատկապես, Վահան Տերյանն է Զարենցի քնարերգության վրա թողել ամուր և անջնջելի կնիք։

Վաղ Զարենցը, ինչպես Վ. Տերյանը և Մ. Մեծարենցը, գերազանցորեն պիտության ու տագնապի բանաստեղծ է։

«Անծայր ու խոր տիրությունը» որպես գլխավոր ապրում անցնում է համարյա բոլոր բանաստեղծությունների միջնվայր։

Տիրության բանաձևումներից մեկն է այս խորհրդածությունը, որ կարող է, իբրև բնաբան, դրվել Զարենցի 1912—1917 թթ. բանաստեղծություններն ամփոփող հատորի ճակատին։

Կյանքը—երգի, երկնքի պես անհուն, անհուն,—

Կյանքը—կորած աստղերի պես հազարանուն։

Կյանքը—կրակ նահիններում՝ կտ ու շկա, —

Կյանքը—ձամփորդ, սպասված հյուր, որ պետք է գտ։

Կյանքը—երդի, երկնքի պես անհուն, անհուն,

Կյանքը—կորած աստղերի պես հազարանուն...»

Զարենցի քնարի բազմատարած տիրությունը միանգամայն համարժեք էր այն տիրությանը, որին քաղաքացիական անցաթուղթ տվին Մեծարենցն ու Տերյանը։

«Յավերով ու հույսերով» ողողված մեծարենցյան քնարի նվագմերը,

քնական է, որ պեսք է գրավեին այն բանաստեղծի ուշադրությունը, որի հայցքի առաջ էր մարդու և ժողովրդի կործանման տխուր իրականությունը:

Արդեն գրական հասունության տարիներին՝ 1933-ին, Զարենցը տվեց Գարնան և լույսի երգչի եզակիորեն խոր ու փայլուն գնահատությունը.

Այրուն է եղել սշխարհում:—Եղել է եղեռն ու կոփ,

Լեռնացել են ուժեր վիթխարի՝ ամենի ելած իրար դեմ:

Աշխարհից հնուու մի գյուղում,

Արև է երգել ու գարուն այս հիվանդ, հանձարել պատանին:

Մեծարենցյան արևկանը, որի մեկնակետը տառապող մարդու հանդեպ ունեցած հումանիստական բարձր զգացումն է («Տուր ինձի Տեր, ուրախությունն ան-անձնական...»), այնքան էր հարազատ Զարենցի հոգեկան կառուցվածքին, որ այդ տաղի նմանությամբ գրեց արևի կենսատու ուժից դաշնություն ակըն-կալող հետևյալ տողերը.

Գիշերը ամբողջ հիվանդ, խելագար,

Ես երազեցի արևի մասին:

Շուրջս ոչ մի ձայն ու շշուկ չկար-

Գունատ էր շուրջս՝ զիշեր ու լուսին:

Ես երազեցի արևի ոսկին,

Տենչացի նրա հրաշքը խնդուն՝

Ուզեցի սիրել շշուկն իմաստուն

Արևանման, արևավառ խոսքի.—

Բայց շուրջս այնպես գունատ էր, տկար—

Խոսքեր շկային ու արև շկար...

Միսաք Մեծարենցից ավելի Զարենցի տևական, կարելի է ասել, խելահեղ հափշտակությունը եղել է «բեկված հոգիների» երգչի՝ Վահան Տերյանի, բանաստեղծությունը:

Զարենցի համար Վահան Տերյանը սովորական, վաղանցով հափշտակություն չէր, այլ արյան ու կենսագրության մեջ մտած «աստվածային հայտնություն»:

Զարենցի «տերյանական գերությունը» ունեցավ զարգացման երեք աստիճան:

Սկզբուն Զարենցը Վահան Տերյանի բանաստեղծությունների ընթերցողն էր, ապա՝ նրա «գրական դպրոցի» աշակերտը, այնուհետև դարձավ բանաստեղծական ավանդների շարունակողն ու հարստացնողը:

Ընթերցող Զարենցը, ինչպես ժամանակի երիտասարդության մեծ մասը, քերանացի գիտեր Տերյանի նուրբ ու երազային, լուսակաթ ու թավշյա բանաստեղծությունները:

Գրական դպրոցի աշակերտ Զարենցը, ինչպես մյուս հետևյորդները, իր բանաստեղծությունները «նախշում էր» տերյանական քաղվածքներով ու պատեկերներով, որը ոչ միայն անսովոր մի բան չէր, այլև տասական թվականների բանաստեղծական կենցաղի համար կարծես թի սահմանված անհրաժեշտություն էր:

Գրական ավանդներ շարունակող Զարենցը, յուրացնելով Վ. Տերյանի բանաստեղծական աշխարհի «գաղտնիքները», աշակերտելու շրջանում իսկ ձգտում էր երգի ինքնուրույնության՝ իր խոսքին, որով և տարբերվում է հայ քնարերգության անձրեսոտ-արցունքոտ անդաստանում սունկի նման հայտ-

Նըզած էպիգրաֆ՝ «Վահան Տերյանի սավերներից»: Ճիշտ է նկատված, որ Եղիշե Չարենցը Տերյանի բնական և ինքնուրույն շարունակությունն է<sup>5</sup>:

Չարենցի առաջին իսկ տպագիրը բանաստեղծությունը («Մաղիկները հեզ...») այնքան տիսուր-տերյանաշշոմչ է, որ թվում է, թե քաղված է «Մինչաղի անուրջ-ներից»՝ սրա առաջին («Տիսուրություն») և 19-րդ («Թափառականը») երգերից: Նույնն է տիսուրության և նրամանքի տրամադրությունը, նույնն է նաև ապրումի արտահայտման պատկերային ձևը (Տերյանի մոտ՝ «Մաղիկներն, ահա, քըն-քուշ փակվեցին...»):

Վահան Տերյանի բանաստեղծության ածականների բառարանը (լուս հանգըրվան, սուրբ շշուկ, մհենավոր ուղի, ոսկեղեն հեռու, անանց լուսություն, լուսե երաղ, ցուրտ աշխարհ, մոլոր ճամփա և այլն), մտապատկերները (թափառական, փողոց, լապտեր, իրիկնաժամ, գիշեր, ցնորք, հրաշք, լեռնագագաթներ, արեգակ, հեռաստան, հրաժեշտ, աստղեր, մթնշաղ, հայրենական տուն և այլն), գարձվածքները («Կյանքս, նա մի լուսեղեն հեքիաթ էր», «Մութ հեռաստանները դժկամ նայում են ինձ», «Ես մի ճամփորդ եմ մթում մոլորված...», «Սիրտ իմ, բաց ես աշխարհի և շարի դեմ, սիրտ իմ բաց», «Ես որպես արևն արդար ու առատ խավար աշխարհում», «Հավիտ քեզ կապված, քեզ օտար եմ ես, հավիտյան օտար, հայրենական տուն», «Եվ անցած կյանքս կդառնա լեգենդ», «Դարձիր իմ մոտ, վերադարձիր դու նորից», «Իմ մեջ մարել է մի լույս արեգակ» և այլն) ոտանավորի մտերմական կառուցվածքը («Ես-ի և դու-ի» հարաբերության ձևը), տաղաշափությունը (պայմանական՝ տերյանական շափը), — մի խոսքով Վահան Տերյանի բանաստեղծության ֆակտուրան Չարենցի ստեղծագործության մեջ այն նստվածքն է, որը հալելով իր ոգևորության հնոցում, նա ստեղծել է Տերյանի գծի բանաստեղծությունները:

Ուշադիր զննելով Չարենցի վաղ քնարը, տեսնում ենք հոգեբանական մի ընթացքը, որի սահմանումները հանգում են հետևյալ կետերում. իրականության մեջ բանաստեղծը շունի և ոչ մի նեցուկ, կանգնած է փակուղիների առաջ խորտակվել են բոլոր սորոր երազները, փոշիացել ու տրոհվել բոլոր կապերը: Այսոքն այլևս չունի ոչ մի հմայք ու գեղեցիկություն: Բանաստեղծին, այս ամենից հետո, մնում է հետևյալ խոստովանությունը.

Ես ուզեցի երգել գովքը աստծու,  
Երգել փառքը պայծառ սիրո ու հացի.  
Սիրտս լցվեց... բայց չգիտեմ, թե ինչու—  
Դորշ օրերի տաղտկությունը երգեցի...

Իրիկնային Քրոջ լուսապստկով հափշտակված Ասպետի ու կապուտի ցնորքներով այրվող երազասերի կողքին Չարենցի բանաստեղծության մեջ հայտնվում է նաև «Թափառաշրջիկը»՝ հայրենական օշախներից հեռացած «պատահական անցորդը».

Կան անտես հյուրեր: Դալիս են նրանք  
Անխոս ու անձայն, լսության ծոցում  
Դալիս են, ապրում ու անցնում նրանք  
Ոչ դուռ ենք բացում և ոչ դուռ գոցում:

Թափառաշրջիկի թեման եղավ այն կենսական պատվանդանը, որի վրա Չարենցը կառուցեց վաղ տարիների երկու շատ կարևոր բանաստեղծություն:

Դրանցից մեկը՝ «Հեռացումի խոսքեր» (1917) քնարական խոստովանությունն է, մյուսը՝ «Հարդագողի ճամփորդները» (1917) քնարական բալլագը:

Առաջին բանաստեղծության մեջ Զարենցը տալիս է իր էպության հետեւյալ բնութագրությունը.

Իմ աշքերի մեջ այնքան կրակներ եմ մարել ես  
Եվ հոգու մեջ, Հուսահատ, այնքան առազեր եմ մարել  
Կյանքո, որ հուզ է դարձել, Հուսակի շանիծես.  
Կյանքս կանցնի, կմարի—բայց երդո կա, կապրի դեռ:

Բանաստեղծը հեռանում է պատրանքից: Երազային սերը, չունենալով մարդկային սովորական սիրո զգացական գեղեցկությունը, այլևս չի բավարում բանաստեղծին: Երազակին սերը սաւմանափակ է: Դա լիարժեք սեր չէ: Պատվելով անմարմին երազների միւնույն շրջափակում, այդ սերը այլևս դարձել է տխուր, ձանձրալի ու անիմաստ:

«Հեռացումի խոսքերին» ուղիղ գծով միանում է «Հարդագողի ճամփորդները»:

Ո՞րն է կապող օղակը: Դա սոցիալոկան ծանրածանր իրականության մեջ մարդու հոգեկան մղումների կորստյան բանաստեղծական թեման է, որի մասին բալլադն արձանագրում է հետեւյալը.

Թազված մնաց իմ աշքերում մի անհուն,  
Կապուտացյա երշանկության առասպել.  
Մի երկեային առնչության պատմություն—  
Եւ կարերացավ սիրու՝ անլույս ու անբեր:

«Հարդագողի ճամփորդները» բալլագը, որը թափառաշրջիկի շարենցյան թեմայի բարձրակեան է, թեև նորից է արծարծում երազանքի ճամփաների խնդիրը, բայց այսուղ արդեն երազանքը որոշակիորեն խզված է «եզրմային առնության պատմություննեց» և հակացրված է նրան:

Հարդագողը երկնքում է, բայց նրան գամված հայացքները այլևս սպասելիքներ չունեն երկնային պարգևներից («Փնտրում ենք անկարելի մի խնդություն...»):

## 2

Իրականության դեմ ուղղված գանգատի, անուրջների խորտակման ու կյանքի կարոտի բանաստեղծական թեմաներին զուգընթաց Եղիշե Զարենցի վաղ քնարերգության մեջ տեղ է գրավում հայրենական տան կերպարը:

Իր պատմության խոր ճպանամն ստպող հայրենիքը, որի պատագան ու ձանապահը պատած էր անթափանց մշուշով, որի ծանր կացությունը հուսահատության մի լայնատարած հոսանք գծեց հայ իրականության մեջ,—այդ հայրենիքը երիտասարդ Զարենցի համար դարձավ գոյության վերին շափանիշ:

Տյունապատ լեռներ ու կապույտ լճեր:  
Երկինքներ, որպես երազներ հոգու  
Երկինքներ, որպես մանկական աշեր:  
Մենակ էի ես: Ինձ հետ կիր դու

Երբ լսում էի մրմանջը լճի  
Թւ նայում էի թափանցիկ հեռուն—  
Զարթեսմ էր իմ մեջ քա սուրբ անուրջի  
Կարսոց այն հին, առաջին, անհուն,

Կանչում էր, կանչում ձյունու լեռներում  
Մեկը կարոտի իրիկնամուտին:  
Իսկ գիշերն իշնում, ծածկում էր հեռան,  
Խոնեղով հոգիս աստղային մութին...

Սա այն հոգեբանության արձագանքն է, որ Վահան Տերյանը արտահայտել է հետևյալ տողով. «Երազ ես դարձել—Հայրենական տոմ...»:

«Տեսիլածամեր» շարքի բնարական էտյուդները ներնշված են Հայրենական տան կարոտով: Դրանց մեջ Հայրենական տոմը երևում է տեսիլքի կերպարանքով:

Հայրենական տոմը Գարենցի հայացքի առաջ գծվում է անհետացող-հեռացող երեսութիւն հետևյալ ուրվանկարով.

Անցնում է, որպես անմարմին տեսիլ  
Ու նորից միզում երևում է նա:  
Ու նորից չկա: Ու նորից գիշեր—  
Փողոցի վրա ու հոգու վրա:

Իրար կողքի դնելով «Տեսիլածամերի» բոլոր լոթ կտորները, դժվար չէ նկատել Հայրենական տան կարոտով հոգեկան դրաման հազթահարելու բանաստեղծական թեման:

Բանաստեղծին պաշարած գլխավոր միտքն այն է, որ Հայրենական տան ամեն մի ակնթարթային երևում կոչված է Հաղթահարելու ու փարատելու հոգու տիխրությունը:

«Տեսիլածամեր» շարքը աննյութական Հայրենիքի, երազային Հայրենիքի տեսիլածամն է: Սա փակագծերի մեջ խցկված, իր ողբերգական արդիականությամբ բանաստեղծի բնարին դեռևս անմատչելի Հայրենիքի ուրվագիծն է: Այստեղ չկան ոչ աղգային դրաման, ոչ ծողովրդական տարերքն ու շարշարանքը, ոչ էլ արժարծվում են ազգային գոյության խնդիրներ:

1915-ին Թիֆլիսում առանձին գրքով հրատարակվեց «Կապուտայլա Հայրենիք» բնարական պոեմը:

«Կապուտայլա Հայրենիքը» կառուցվածքով հին ու հեռավոր Հայրենիքի մասին ասված բնարական մենախոսություն է:

Բանաստեղծը մենախոսում է Հայրենիքի որոնման երազներից և նրա առանձին բեկորներից վերստեղծում երևակայական-գաղափարական Հայրենիքի ամբողջական իդեալը:

Բնարական մենախոսության մեջ երևում է Հայրենիքի երկու պատկերացում:

Դրանցից առաջինը Հայրենիքի իրական հատկանիշներն են՝ ճամփաներ, այսի ու անակ՝ գետի եգերքին, մայրը՝ սեղանն օրհնելիս, հնձվորներ, հողի մշակներ, վանք ու վանահայր և այլն:

Մյուս պատկերացումը՝ իդեալական, դեռևս որոշակիություն չստացած երազ-Հայրենիքն է, որի հմայրով ոգնորված երազասերները ճամփաներ են շափում՝ նրան գտնելու համար:

Բանաստեղծին չէր կարող բավարարել այն Հայրենիքը, որ «կար», բայց բեկորված էր, զրկված ամբողջականությունից: Նա տենում էր մի ուրիշ Հայրենիք, որը չկար, բայց կարող էր լինել, կարող էր մարմնանալ հեռաստանում:

Տեսիլքային-ֆանտաստիկական-պայմանական միջավայրի մեջ դնելով իր երազը, Զարենցը բնավ էլ բեկորված առօրյան չէր անշատում իդեալական Հայրենիքից: Ավելին՝ իդեալականը լրացնում է իրական Հայրենիքի նյութական

**գույներով:** Մեծարելով հեռաստանը, նա, ըստ էության, մեծարում էր կոնկրետ էծերով հայտնի իր եղերքը, որը, սակայն, ապրում էր հոգեվարքի դաժան ժամեր:

Բանաստեղծի ֆանտաստիկան, այսպիսով, կառուցվում է իրական հայրենիքի պատվանդանի վրա:

**Պոեմի առաջին հրատարակությունն ունի նախերգանել, որ պարզում է այդ ֆանտաստիկայի բուն էությունը.**

...Երգեցի մի իրիկոն՝ երր հոգիս լեփ-լեցուն էր  
երազներով և արևով

Այնտեղ, մեռնող օրվա արնաթաթախ հայացքում  
ես տեսա հանկարծ հեթանոս  
Հարսանիքը կապուտաշյա Սիրուհու-Հայրենիքիս...

Այս մեծ տեսիլքին հետևում են առանձին տեսիլները՝ բանաստեղծի երկա-  
կայական ճանապարհորդությունը՝ երազ-հայրենիքի լուսեղեն ճամփաներով.

Որոնումիս ճանապարհին անծանոթ  
Չհոգնեցի, չհոգնեցի ես երբեք:  
Այրում էր իմ սիրտը հեռու մի կարոտ,  
Կանչում էր լույս հեռուներդ անեզերը:

Ճանապարհորդության տարբեր հանգրվաններում ասպարեզ են գալիս մեծ  
չույսը՝ մեծ Հրաշքը, սուրբ երազը, ճերմակ Հայրենիքը, անապական Քույրը,  
գիտառատ Աստվածը, ինչպես նաև հեթանոսական աստվածների զոհասեղաններն  
ու Հայրենիքի ուխտավորները: Վերջապես՝ կատարվում է «Կապուտաշյա սիրու-  
հու» աստվածավայել հարսանիքը, որի պատկերով բոլորվում է հեթանոսական  
խրախճանքը.

Առասպելներ ապրված, առասպելներ դյութական՝  
Անցորների մասին, որ մի օր անցան ու չկան:  
Եվ որսեր եմ ես բերել՝ անտառներում զարնված՝  
Ճերմակ, ճերմակ, որպես ձյուն՝ երկնքի մեջ սերմված:  
Կաղողներ կան սեղանին, որ քաղել են կույս ձեռքեր՝  
Երբ ուզեցել է քամին նրանց գովքը սիրերգել:

Հեթանոսական խրախճանքը, որի «արևառատ սեղանին» կանչվում են  
հայրենի երկրի հողնարեկ ու արդար մշակները, ամբողջացնում է բանաստեղծի  
ֆանտաստիկական տեսիլը. իրական Հայաստանի փոխարեն կանգնում է երե-  
վակայության մեջ կառուցված Հայաստանի հեռապատկերը:

**Պոեմի միջով բանաստեղծի երազին զուգահեռ անցնում են հայրենի դաշ-  
տերի հնձվորների կերպարները, որոնց մասին պոեմի վերջում հնչում է հետե-  
վյալ դիֆերամբը.**

Օ՛, ոսկեգիրկ, արևաշտ Հայրենիք...  
Ես, Քո որդին, Քո զավակը անտոնակ—  
Պատրաստել եմ խրախճանքի մի ընթրիք՝  
Վառելով սերո՝ որպես լուսին ու ճրագի  
Երիկնամուկն արդեն իշավ դաշտերին,  
Հնձվորները, վաստակավոր, կգան տուն.  
Թող կուշտ ուստին սեղանին բերքն ու քննեն,  
Եվ թող խնդա ճրագիս լույսը արթուն:  
Օ, սրբաղան, արեգնաղան Հայրենիք...  
Ես շահել եմ սիրով, սիրով լեփ-լեցուն,  
Ունեմ հազար զոհաբերում ու բարիք  
Քո գրկառատ ու հեթանոս Աստվածուն:

Հունձքը կանցնի: Հավաքելով ամեն ինչ՝  
Ամեն ժպիտ, ամեն արցունք ու բարիք՝  
Տուն կղառնան հնձպրները թիւ-թիւ  
Եվ կորհնեն թեզ, Կապուտաշա՝ Հայրենիք...

Զարենցի «Հեթանոսական հրապուրանքի» մեջ հիմնական հուզապրումը «սրբազն հայրենիքի» սերն էր, որը և նրան, անգամ ուղիների ճնշածամին, կապում էր ծամանակի հասարակական գիտակցության մեջ անթեղի տակից բոցավովող աշխարհասիրության երակի հետ: «Սրբազն հայրենիքը» շուտով Զարենցի ստեղծագործության մեջ երեաց ոչ թե ֆանտաստիկական հայեցվածքով, այլ ողբերգական-իրական շնչով:

Հայկական յոթերորդ կամավորական զոկատի ակամա զինվոր Եղիշե Սոզոմոնյանը, Կարսից, որտեղ դեռևս չէին հասել պատերազմի կրակոցները, 1915-ին ճանապարհվեց ռազմաճակատ և ուղարկան զորքերի շարքում հասավ մինչև Վանի մատուցնելը:

Բայց ինչպես մյուս ժողովրդական կամավորները, Զարենցը ևս պատերազմում տեսավ ճիշտ հակառակն այն ամենի, ինչ ներշնչում էին «ազգության փրկության» հրապարակախոսները՝ ավետյաց երկրի հառնումի մասին: Ժողովրդի մեջ ուժ էր ստացել «Նախրիի փրկությունը սրի ծայրին է» լեզենդը, ամենուրեք հավատում էին դարավոր երազանքի՝ անկախ պետականության, մոտալուս իրականացմանը: Բայց Նախրիի երազանքը այդպես էլ մնաց երազանք:

Զկար, չէր եղել երկիր նախրին: Նրա փոխարեն ամենուրեք տիրում էր Մահավան՝ արյունոտ կոտորածի, խրախճանքը:

Կապուտաշյա հայրենիքը՝ պատերազմի ճանկերում, ժողովրդի զավակները՝ դանթեական նոր դժոխքի պարունակներում,— սա էր Զարենցի տեսածու ճանաշած ազգային պանորաման:

Զինվոր Զարենցը տեսավ պատերազմի իսկական դեմքը՝ «Հրացան, հրանոթ, ոումբեր», երկրի տարբեր ծայրերից հայրենիքի փրկության համար զինված մարտիկների «փայտե դիակներ», այլանդակված մարդկային դեմքեր,— մի խոսքով դանթեական սարսափի պատերներ:

Մահվան անվերջանալի «խայտանկարը», կոտորածների բովանդակ սարսափը, պատերազմի դաժան Աստծո անկարգ ու անիմաստ երթը դառնագին ապրումներով ողողեցին պատերազմի շարքային մասնակցի հոգեկան աշխարհը: Տեղի ունեցավ հերասության ու մարտիրոսության ողբերգական վերաշրջում.

...Բայց հետո հանկարգ բացվեց մեր առաջ  
Մի ավեր ուղի, ուր անհան ու խոր  
Մի տառապանքի խորշակ կար վառած:  
Եվ կամաց-կամաց դարձավ վիրավոր  
Մեր ողին անոգ ու բազմաերազ...

Պատերազմի անմիջական դիտումների ու տպավորությունների պաշարով Զարենցը գրեց վաղ ստեղծագործության ամենաուժեղ էջերից մեկը՝ «Դանթեական առասպել» պոեմը, որը նոր բանաստեղծի անունը հայտնի դարձրեց մտադրական հասարակությանը:

«Դանթեականը...» պատումային եղանակով պատերազմի շարքային մասնակցի ռազմական տպավորությունների հուշագրություն է:

Հուշագրող դարձած բանաստեղծը պատմում է, թի ինչպես զինակիր ընկերների հետ «անդորր հուզերով» ու լուսավոր պատրանքներով մեկնելով ռազմաճակատ և ճանապարհին դիտելով մահվան ավերի հունձքը, ամայացած կյուղական խրճիթներ ու պատերազմի զոհերի անթաղ դիակներ, դիտելով անվախճան ու անսկիզբ Մահվան դաժանությունը, — կանգնում է ճակատագրական հարցերի լուծման առաջ:

«Ազգամիջյան կոտորածների բովանդակ զարհուրանքը պատկերելու նպատակով...» գրված պոեմը, — այսպես է բացատրել Զարենցը «Դանթեականի...» հղացման բուն շարժառիթը, — երևույթի ճանաշման շնորհիվ շրջվում է դեպի բանականության հսկողությունից դուրս ընկած իրականության ամենասուր ոլորտը՝ մաքրկայնությունը կորցնող մարդու ճակատագրի ոլորտը:

Վաղ շրջանի Զարենցի ստեղծագործության մեջ «Դանթեական առասպելը» այն գործն է, որտեղ ամենից ավելի է օգտագործված սարսափելի իրականության նյութը: Բանաստեղծը տեսավ մարդկային տառապանքի անհուն ծովը, ծողովրդի անծայր աղետը և դրա կոնկրետ, ամենակոնկրետ արտահայտություններով ողողեց իր առասպելապատումը: Բայց, չնայած այս հագեցմանը, վաղ Զարենցի ոչ մի գործում այնքան ուժեղ չէ աշխարհահիացումը, որքան «Դանթեականում...»:

Բանաստեղծը պատմում է մի իրականության մասին, որտեղ անգթորեն ոչնչացվում է կյանքը և, այդուամենայնիվ, «Դանթեականը...» ոչ թե հաշտեցում է մահվան հետ, այլ կյանքի ու գեղիցկության, աշխարհի ու գոյության դիֆերամբ:

Պոեմի միջով անցնող մահվան ու կյանքի գուգահեռները՝ իրական, շոշափելի մահերն ու շինչ առավոտի տեսիլները, հոգեկան կակիծն ու հոգու բերկրանքը, մահվան հովիտն ու կյանքի բարձրությունը, անթաղ դիակներն ու ցորենի ոսկյա արտերը, տվերդված գյուղերն ու գյուղական բնության կանաչ շորշպարը, կյանքի անմեկնելի, քարացած սֆինքսի աստիճանին հասցրած հարցադրումը և սահմաններ չճանաչող բնության պաշտամունքը, — այս և նման՝ իրար հերքող պատկերացումները, ոչ միայն շեն մթագնում բանաստեղծի տեսադաշտը, այլև, հակադարձ անդրադարձման օրենքով, նրան բերում են այն ամուր հավատին, որ մահվան գիշերն իր ծանրածանը նստվածքով անգամ անզոր է խափանել կյանքի շինչ ասավոտների ճանապարհը:

Աշխարհի հանդեպ էքստատիկ մի վերաբերմունքով Զարենցը «Հավերժական կշռույթների» ասպարեզից՝ պատերազմից անգամ, իբրև առաջնային ու կենսումակ սկզբումք, հանում է ապագայի երազանքի շերտը.

...Ու պետք է քայլել ու քայլել համառ՝  
Հակա երազի տենչը բեռ արտե...

Փողովրդի դժոխային նահատակության մատյանը գրելիս, հայ բանաստեղծը, բնականաբար, չէր կարող շրջանցիլ Ալիգիերի Դանտեի «Դժոխքը»: Այս առնչությունը սոսկ վիրնագրի մեջ չէ, այլ պոեմի բուն էության:

«Դանթեականում...» շարունակ հոլովվող փակ ուղիները, շրհորը, անդունդը, փոսերը, հողն ու երկինքը, գետն ու լեռը, ջրահեղձներն ու սատանաները, գանգերն ու մեռյալները, լինելով հայոց դանթեականի իրական նշաններ, միաժամանակ ենթարկվել են մեծ իտալացու գեղարվեստական մտածողության «խմբագրությանը»:

Անդամ պոեմի կառուցվածքը՝ Վիրգիլիոսի առաջնորդությունն ստանձնած բանաստեղծը ընթերցողին տանում է Դժոխքի պարունակներով («Դանթեականի...» ամեն մի հանգրվան, ըստ էության, մի պարունակ է), ինչպես և ամեն մի հանգրվանում բանաստեղծի արած խոստովանություններն ու հզանդիմումները վկայում են «Աստվածային կատակերգության» հետ «Դանթեականի...» սերտ աղերսները:

1917-ին, պատերազմի ստրատեգիական գլխավոր հանգույցներից մեկում՝ էրզրումում, Զարենցը գրում է «Ազգային երազ պոեմը: Ինչպես «Դանթեական առասպելը», սա ևս պատերազմի անմիջական տպավորություններից քաղված գործ է»:

Ազգային երազը բանաստեղծին երեսում է ոչ այլ կերպ, քան կրակահանգեսի պատերով:

Հայոց աշխարհը կանգնած է անդսւնդի եզրին՝ անհուսության պռնկին, նա ամբողջովին բռնված է մաշկան շնչով,-- չղաճիգ, սուր ու դաժան մի կացություն, որի գեղարվեստական ստույգ իլլուստրացիան է Քամու (որը սիմվոլիստների բառարանում ճակատագիրն է) երգը:

Մի կողմից ժողովրդի գոյության սարսափելի գուշներ, մյուս կողմից՝ «ազգության պաշտպանների» մակերեսային, անհատապաշտական հայրենասիրություն,— առաջ երկու նախադրյալ, որ. Զարենցին հուշեցին մահվան ու կյանքի հավասարեցման գաղափարը.

Միրայ է կյանքը, երազ ու աեսիլ...

\* \* \*

Եղիշե Զարենցի ստեղծագործության առաջին՝ կազմավորման շրջանը (1912—1917 թթ.) հայտաբերեց տրամադրությունների բարդ գիգագներ:

Մարդու ճակատագրի անորոշության վիրապրում և մարդու հաստատման սուր ծարավ, աշխարհի անճանաչելիության գեղարվեստական կողմնորոշում և աշխարհի զաղտնիքներին տիրելու խոր պահանջ, խորթացում իրականությունից և իրականությանը մերձենալու կրքու մղումներ, «անտրամաբանական» հեռացումներ իրական կյանքից՝ դեպի ցնորդների դեմ, հայրենիքի պատրանքներ և պատրանքների ողբերգական փլուզումներ, անեծքի խոսքեր և աղոթքի խոսքեր,— բարդ ապրումների այս շրջանակում է իրեն գտնում վաղ Զարենցի աշխարհածխառումի ու աշխարհահիացումի ընարքը:

Հիմասթափությունների ու հրապուրանքների, անկումների ու վերելքների, կորուստների ու գտնումների անընդհատ շղթայի միջով որպես վճռական սկզբումք անցնում է աշխարհածխառուման մեջ ծրարված աշխարհասկրությունը՝ մարդու, կյանքի և հայրենիքի սերը, որը և եղավ վաղ Զարենցի ստեղծագործության էպիկենտրոնը:

3

Ամենքից լրված, բազմատանջ ու հալածական ժողովուրդը, ինչպես երրեք, կարիք էր զգում մեծ տեսանողի ու կրահողի, որը պետք է ասեր ճշմարտությունը. ո՞ւր է գնում Հայաստանը՝ կործանում, թե՞լինելություն:

Հայ գրականության մեջ ժողովրդի «լինել-շինելու» խնդրի ամենասթափ պատասխանողը, այսինքն՝ մեծ մարդարեն, քսանամյա Եղիշե Զարենցի էր:

Չարենցի հետ կատարվեց մեծագույն բեկումը, որի տրամաբանության մասին Մ. Սարյանը գրել է. «Նախրին ծնեց Չարենցին... ժայռակոփ պատկերներ և սեպագրեր տեսավ, ծաղկազարդ մագուղաթներ և ձուլածո տաճարներ, բայց ծով արյան ու ծով ցավերի մեջ... Բարձրացրեց գլուխը՝ տեսավ շողացող Արեւ... Եվ իր հայրենիքի արցոնքները սրբելու համար միրճվեց փոթորիկների մեջ ու ելքեր որոնեց»<sup>6</sup>:

Պատմական փոթորիկների լուսը ճառագեց բանաստեղծի հուզաշխարհում՝ նրան դարձնելով ապագա Հայաստանի կոչնակը:

Մեծագույն հավատով ու անկասելի կողմնորոշումով բանաստեղծը հեղափոխությանը դիմեց հետևյալ կանչով.

Եվ ես գիտեմ որ կամ՝ միիթարիչ ու պայծառ:

1918-ին Չարենցը գրում է իր ամենատխուր, մելամաղձոտ բանաստեղծություններից մեկը՝ «Հատվածը»:

Նորից դիմելով բյուրապատիկ խաչված իր երկրին, խզված ձայնով, համարյա ողբի եղանակով բանաստեղծը հարց է տալիս.

Էն ո՞վ է սրաին քո  
Դրել իր  
Կապարը—  
Էն ո՞վ է թքել քո  
Հրին.  
Հեյ ո՞վ է կոփել կուռ,  
Անդուլ այս խավարը՝  
Մահե շիրմաքարը  
Լոին:

Հայրենիքի օրհասի ճակատագրական ժամին (նկատենք, որ սա թուրքական նոր արշավանքի տարին է), բանաստեղծն ուզում է ճանաչել ոչ այնքան «մահվան շիրմաքար» հրահանգող ուժերը (նրա համար սա այլևս գաղտնիք ու հարց չէր), որքան կոահել այն ուղիները, որոնք Հայաստանին են վերագրածնելու նրա պատմության ու գոյության հազարամյա Հուրը՝ անխորտակ կամքն ու ոգու անհանգչելի լուսը.

Չարենցի հարցերը («Եվ ո՞վ...», «Էլ ո՞վ...», «Էն ո՞վ...») սոսկ հուսահատության ճիշեր չէին: Այդ հարցերը կոչված էին նաև հայտաբերելու այն ուժը, որ պետք է «թոփչք ու թևեր» տար ճղակոտոր ու գետնատարած հայրենիքին: Ռուրիշ խոսքով՝ անհրաժեշտ էր կողմնորոշվել քաղաքական բարդ իրադրության մեջ և գտնել համոզիշ պատմական դավանանքը:

Չարենցը փարեց հեղափոխության «կարմիր ամպրոպին» և դա համարեց այն լուսը, որ պետք է ճառագեր ավերակված հայրենիքի անժպիտ դեմքին, նրան պետք է վերագրածներ պատմության «հաղարամյա Հուրը».

Վասր, երկիրս, քո ղեմ—մի կարմիր կանթեղ,  
Նետիր ժայտող վերջին իմ ավեր երկրին.  
Տուր վերքերին նրա մառ, վերքերին անդեղ  
Կարմիր ճպիտը քո սուրբ, քուր իմ, Սոմա՛, կի՛ն:

1918-ին իբրև նորակազմ Կարմիր բանակի շարքային զինվոր երիտասարդ՝ Չարենցը մասնակցում է Ռուսաստանի քաղաքացիական պատերազմին: Զինվորի խրամատային կյանքը նա սկսում է հեղափոխության ամենավճռական հանգույցում՝ Ցարիցինում, ապա շարունակում է Հյուսիսային Կովկասում:

Հեղափոխության զինվորների ասպետական անձնվիրությունը, ռազմակատարի հերոսական տարերքը, ժողովրդական պայքարի կարմիր բոցերը իրենց իշխանության տակ են առնում Զարենցի աշխարհը, անհանգրվան ու տարտամ ուղիներից նրան տանում են դեպի պատմության շրջադարձի ուղիները:

Այս անցման ճշգրիտ բանաձևումն է հետեւյալ խոստովանությունը.

Ոզգակեզ: Խնդություն: Ու մի  
Անհատնում վատնում միասին—  
Եվ նոզիս սանձարձակ բռավ...  
Այսպես էր տասնըութ թվին.—  
Սոմա...

Այս գիտակցությամբ էլ Զարենցը գեռ ցարիցինյան խրամատներից օրհասի մեջ գտնվող իր ժողովրդին դիմեց մի հանձնարարականով, որով բանաստեղծը դարձավ մարգարե.

Հեյ, հեռավոր ընկերներ ու եղբայրներ,—  
Դուք չե՞ք լսում. ձեզ ենք կանչում.—  
Զգարթ ու սեգ.  
Եկեք, մտեք շուրջպարը մեր—  
Եկեք, եկեք.

Օ՛, կուրք է նա, ով չի տեսնում,  
Երկինք հասած կրակը թեժ.  
Եկեք, եկեք, ով սիրու ունի  
Ողջակիզվող ու հրակեց...

«Ողջակիզվող ու հրակեց սրտերին» ուղղված այս հրովարտակը հատված է «Սոմա» քնարական պոեմից, որը Զարենցը գրել է 1918 թ. հունիսին, Յարիցինում: Նույն տարում «Սոման» լույս է տեսնում Թիֆլիսում, առանձին դրույկով:

Առաջին հրատարակության «Սոման» ունի «Նոր վելյան պոեմ» ենթավերնագիրը և հին հնդկական գրական հուշարձանից՝ Ռիգ-վեդայից, քաղած հետեւյալ բնաբանը. «Սոմա՛, որու վերջին ազատություն...»:

Վեղայական գրականության՝ հին հնդկների «սուրբ գրքերի» հազարավոր կրոնական հիմների ու բանաձերի մեջ Զարենցին առանձնապես գրավել է Սոմայի հիմներգությունը:

Ո՞րն է հրապուրանքի պատճառը.

Նախ և առաջ, իհարկե, հնդկական նախակրոնական աշխարհայացքով Սոմային վերագրված ֆունկցիաների բազմազանությունը: Սոման, հնդկական իմաստասիրությամբ, ունի բույսից սերմած աստվածային խմիչքի՝ խելահեղ արբեցման հրաշագործ ուժ:

Հնդկական արեւակի և ամպրոպի աստվածը՝ Խնդրան, ինչպես և նախարուդայական մյուս աստվածները, իրենց ուժը քաղում և բաղմապատկում են՝ խմիչք սոման: Այդ մասին «Ռիգվեդան» ունի հետեւյալ բանաձեր. «Սոմա խմողն արագ խմելով անեց զորությամբ»:

Սոման, ուրեմն, հրաշագործ է, միայն թե երկրաբնակներին, — ասում է Ս. Բաղչակրիշնանը, — հրաշքն ու անմահությունը պարզենում է «երկնակամարի երրորդ երկնքում», արևի «հավերժական լույսի» թագավորության մեջ:

Սոման նաև սրբազան կրակի՝ Ագնու, հատկություն ունի. երկրաբնակներին կարող է բերիլ աստվածային հուրը, այլ խոսքով՝ աստվածային ցասումը, որի առջև ոչինչ են մյուս բոլոր ուժերը:

Սոման, միաժամանակ, ազատության հավերժական նախասկիզբն է, ձևափոխությունների շարժիչ ուժ:

Եվ, վերջապես, Սոման այնպիսի զորություն ունի, որ ստիպում է արևին՝ ըարձրանալ նաև ավարին՝ նահանջել:

Այսքան «գիտական կարագություններ»՝ կերպարանափոխություններ պարունակող Սոմայի աստվածությունը, բնականաբար, ամենահարմար ոլորտըն էր, ուր Զարենցը կապույտ թախծի հոգեվարդից հետո կարող էր յուրացնել ըմբռուտացող տարերքի կեղագիտական առաջադրությունը: Պարզ ասած Սոման այն միջոցն էր, որով Զարենցը մարմնացնում է կյանքի արմատական վերանորոգման սկզբունքի՝ հեղափոխության, իր պատկերացումները:

Ճիշտ է նկատված, որ պոեմի «Առաջին գլուխներում Սոմայի կերպարն ասես, ծնվում է տառապանքներում և ուժ է հավաքում: Այստեղ հանդիպում ենք որոշ իմաստով վերացական և կոսմիկական կարգի արտահայտությունների. բանաստեղծը փորձում է «որսալ», «գտնել» ցանկալի կերպարը.

Ու սիրոս ազած մահի անուրջին,—  
Մահ էի տենչում,—  
Բայց տեսա հանկարծ քա դեմքը վերջին  
Այս ազշամուղամ...

Գնալով աճում է Սոմայի գործունեությունը: «Քաղցր քույրը» փոխակերպվում է սրբազան խմիչքի, աղատության խորհրդանիշի և, վերջապես, փոթորկվող կրակ-հրդեհի, որը հարակում է «կյանքը այս շար, այս կյանքը տիսուր»<sup>7</sup>:

Մարմնացումների (փոխակերպությունների) այս հերթականությունը արտահայտում է Զարենցի աշխարհավերաբերմունքի ներքին հարստությունը:

Սոմայից սերված «աստվածային խմիչքից» սկսելով Սոմայի փառաբանությունը, բանաստեղծը ցանկանում է գտնել ամեն ինչից բարձր ուժը, ստեղծաբար ողին:

Սոմայի առջև բացելով նվիրումի ու սիրո ծես, մեծագույն երանություն համարելով Սոմայի կամքը, բանաստեղծը այս նվիրաբերումի միջոցով արտահայտում է միասնանալու, միաձուլվելու, զոդվելու, հավաքական ամրող-չությամբ գոյությունը նվաճելու միտքը:

Այնուհեան, օրհներգելով հեթանոս հնդիկների դիցաբանական միստերիայում արտահայտված մոլեգին բռնկումը, Զարենցը պոեմի կենտրոն է բերում սրբազան խմիչքի փոխակերպության նոր ասափճանք՝ հուր, կրակ, Ագնի դառնալը: Կրակը երևում է իբրև կյանքի, գործողության, վերածնության՝ ազդեցության մեջ ուժ ունեցող սուբստանցիա:

Սոմա, օ՛, Սոմա, օրհնվե թող այն  
Վայրկյանը կարմիր աշխարհում այս շար,  
Երբ մարդու սրտում առաջին անգամ  
Հրի փռխվեցիր ու Ագնի դարձար...  
Յւ հրդեհ դարձար, ու կրակ, ու հուր,  
Մրտից ծփարվ—անցար աշխարհին,  
Նվ կյանքը այս շար, այս կյանքը տիսուր  
Հանձնեցիր հրին,

**Պոեմի հետագա հատվածներում** արդեն կենտրոնական տեղ է զբաղեցնում **կրակի կերպարը:** Բայց սա այլևս ոչ թե նախնական աստվածային տրրվածք է, առասպելական աշխարհայացքի բանաստեղծական մեկնաբանություն, այլ չենքն ամբոխների» կամքն ու ոգին կազմակերպող իրական ուժ:

«**Կրակի»** կենտրոնական կերպար դառնալը կապված է իմաստային որոշակի նորացումների հետ: Դիցաբանական Առմայի նախնական հատկանիշները տարրալուծվում են նոր ժամանակի մեջ, Հոմ բացելով կոնկրետ երեսութների՝ նոր աշխարհը մաքրող հրդեհների, «անվերջ-անվերջ» եկող «ահագին ամբոխների» համար:

«...Այդ ժամանակի,—գրել է Զարենցը մի հոդվածում, —ես հեղափոխությունը ապրում էի որպես ոռմանտիկական-հուզական բռնկման պրոցես, որի սկիզբը դրված է 1918 թ. տպակած իմ «Սոմա» պոեմում»:

Երեկի թե անհնար է գտնել ավելի դիպուկ և ավելի ճիշտ մի բնորոշում հեղափոխության շարենցյան ընկալումների էությունն արտահայտելու համար, քան այս բնորոշումն է:

Հուզական պայմանի գեղագիտությունը, որ «Սոմայից» բացի կիրառվում է ամբոխների ողջակիզումին նվիրված բանաստեղծություններում ու պոեմներում, անտարակուսելիորեն, նշանավորում է բանաստեղծական նոր հայացքի ծնունդը:

Ինչպես «Սոման», «Ամբոխները խելագարված» պոեմը Զարենցը գրել է այն օրերին, երբ «կարմիր զորքերի» շարքում, զենքը ձեռքին, կռվում էր հեղափոխության պաշտպանության դիրքերում:

Պոեմի առաջին հրատարակության մեջ (1919 թ.) նշված են գրության թվականը, վայրը, հանգամանքները. «1918, Հուլիս: Ցարիցին: Հեղափոխական Կարմիր բանակ»:

Վերհիշելով 1918 թ. անցքերը, Զարենցը գրել է.

Կարմիր բանակ:  
Նորեկ են հեղնդները սեւ:  
Անսահման դաշտերի վրա  
Շաշում են քո թևերը լսւեւ:  
• • • • •  
Կայարան:  
Զորքեր,  
Զորքեր:  
Զինվորներ. կարմիր:  
Գիշեր:  
Ու կարմիր զորքերի վրա  
Կործվել է խավարը սեւ

«**Զարենց-նամե»** ինքնակենսագրական պոեմում հիշատակված երկաթուղային կայարանի գրավման հավաստի պատմությունը, դրա հետ միասին նաև հին աշխարհի զառամյալ բաղաբակրթությունը մարմնացնող քաղաքի պարտությունը, — սրանք են այն դրվագները, որ դարձել են «Ամբոխները խելագարված» ասքի սյուժետային հենակետերը: Բայց սյուժետային կոնկրետ գըրվագներից ավելի և առաջին հերթին Զարենցի գրվածքում գլխավոր դեպքի արժեք ունի ժողովրդական զանգվածների հեղափոխական ոգու բռնկումը:

«**Խենթ ամբոխների»** թիման արդեն կար «Սոմա» պոեմում: Այնտեղ, սակայն, «խելագար ամբոխները» երեսում են իրեն Սոմայի՝ աստվածային խմիւրի ներգործությամբ էքստագային բռնկման աստիճանին հասած զանգվածներ,

պայմանական խորհրդանշաններ, նրանք դեռևս շունեն կոնկրետ անոմներ ու կոնկրետ գծեր:

«Ամբոխները խելագարված» պոեմում այդ նույն ամբոխները հանդես են գալիս ստեղներից, քաղաքներից ու գյուղերից պատմության վիթխարդ տոնահանդեսին մասնակցելու եկած մարդկանց անվան տակ: Նրանք այլևս պայմանա-ֆանտաստիկական մարմնացումներ չեն: Ավելին՝ պատմության այն կոնկրետ ուժերն են, որոնք կոչված են լուծելու հին աշխարհը կործանելու և նրա փլատակների վրա նոր աշխարհ կառուցելու պատմական խնդիր:

«Գույր տարերքը» վերնագիրն ուներ Զարենցի ստեղծագործությանը նվիրված առաջին հոդվածներից մեկը, որի հեղինակն էր Դավիթ Անանունը: Հոդվածի վերնագիրն իսկ խոսում է այն վերաբերմունքի մասին, որ այդ տարիներին (1918—1920 թթ.) գոյություն ուներ դեպի Զարենցի ստեղծագործությունն առհասարակ: Ոչ միայն «Ամբոխները...» պոեմը, այլև Զարենցի բանաստեղծական աշխարհը համարվում էր հստակ նպատակներ շունեցող, անառագաստ ու անդեկ տարերքի, կյանքի ու աշխարհի դեմ ուղղված անարխիստական-անհատապաշտական խոռվություն:

Վերնագրի ընտրության և, առօսասարակ, Զարենցի պոեմի կառուցվածքի մեջ որոշակի դեր է խաղացել Սիամանթոյի աստվածացումի բանաստեղծության պատկերային մթնոլորտը՝ «արև հագած» «ըմբոստացողների ամբոխ», «ամբոխը՝ աշրվներն ու շարժումները ահարկու», «ամբոխները հայկական», «հազարավորներ էին անոնք, հազարավորներ ու հազարավորներ»՝ «ընդվզումի վարպետները», որոնք գալիս էին «ավաններեն ու դաշտերեն ու արտերեն անձայրածիր, դեպի քաղաքներն ու գյուղերն ու հնձաններն հեռավոր»:

Զարենցի պոեմում ուղղակի վխառում են սիամանթոյական դարձվածքներն ու պատկերացումները («Առավոտե առավոտ ու իրիկվնե իրիկուն», «Հորիզոնե հորիզոն», «եկան, եկան, եկան անոնք...» և այլն, և այլն), որ անկասկած է դարձնում «խելագարված ամբոխների» գրական ծագումը (Սիամանթուն ունի «խելահեղ ամբոխներ» գործածությունը): Ինչպես Սիամանթոյի հայորդիների, այնպես էլ Զարենցի արեգակ նվաճողների «խելահեղ-խելագարված» մականունը, անտարակույս, ուղղակիորեն առնշվում է ժողովրդական բանավոր ստեղծագործության հետեւյալ հատկության հետ: Ժողովորդը իր բանավոր ստեղծագործություններում դրական երեւոյթներին հաճախ անուններ է տալիս, որոնք առաջին տպավորությամբ պարունակում են բացասական բնութագրության որոշ երանգ, իսկ իրականում արտահայտում են ամենախոր դրական բովանդակություն:

«Խելագարված ամբոխների» շարենցյան փառաբանությունը համադրելով «խենթ-խելառների» բավականաշափ բարդ համակարգի հետ, մեկնաբանել են իրեւ «Կործանող ուժերի պաշտամունքի» երեւոյթ:

Դա արմատականորեն սխալ ու միակողմանի մեկնաբանություն է: Հարցի էությունը այն է, որ հեղսկոխության, իբրև քանդող սկզբունքի, շարենցյան պատկերացումը անբաժանելի է նրա ստեղծաբար-կառուցողական սկզբունքից:

Հեղափոխությունն անհնարին է ներկայացնել այդ երկու սկզբունքների միաժամությունն անտեսելով, անհնարին է մոռացության տալ հեղափոխության մեջ եղած անցման (դա անցում էր հին կեցությունից նորին) մոմենտը:

Անցման ընթացքում ոչ միայն չէր բացառվում կործանման սկզբունքը,



Եղիշ Զարենց



այլև դա համարվում էր երևույթը լրիվությամբ արտահայտելու ամենաանհրաժեշտ, ամենապարտագիր պայմաններից մեկը:

Պռեմի ամբողջ ընթացքում Զարենցը հիմներգում և փառաբանում է հեղափոխության Բանականությունը, նշանավոր ապոթեոզի մեջ հասնելով ժողովրդի ստեղծարար ուժի այսպիսի խորունկ ընդհանրացման.

Խավար է մեծ սիրտը նոցա, բայց խավարում անձայրածիր—  
երկինքներ կան կապուտացա, նորիզոններ՝ անծայր, անծիր:  
Ու աշքերում նրանց կապուտ, ուր իշել է գիշերը մութ—  
Հազար բողոք կա կրակոտ, ու արշալուս, ու առավտու:  
Նրանց ձգված մկաններում ուժն է նստել խոնավ հողի—  
հին ուզեն՝ արևներին նոր տեմպ կրտան ու նոր ուզի...  
Եթե ուզեն՝ արեգակներ կըշպտեն երկինքն ի վեր:  
Եթե ուզեն՝ վար կըրերեն երկինքներից արեգակներ...  
Եթե ուզեն՝ կամքով արի ու աշխարհի հրով վառված...  
Ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

«Ամբոխները...» մտահղացված է իրեն ժողովրդական վիպերգություն, ժողովրդական դյուցազնավեպ: Ժանրի այս հատկանիշը երևում է պոեմի և կառուցվածքում, և պաթոսի մեջ:

Դյուցազնավեպի ժանրի առանձնահատկությամբ է բացատրվում «Ամբոխները խելագարված» պոեմի պատկերային կառուցվածքը: Բանաստեղծն օգտվում է ժողովրդի համահավաք հոգեբանությունն արտահայտող հասկացություններից՝ բացահայտելու հեղափոխության համատիեզերական ծնունդն ու բնույթը: Դրա բնորոշ փաստումը արևային տարերքի շարենցյան փառաբանությունն է, նրա արևապաշտությունը, որ վաղ քնարի անձուկ տարածությունից հետո «Ամբոխները...»-ում դրվեց պատմական ընդարձակ մասշտաբների մեջ: Անցնելով ամբողջ պոեմի միջով, արևի կերպարը վերջաբանում (17-րդ գլուխ) դառնում է գեպի Ապագան շարժվող ամբոխների պատմական գործողության մեջ խորհրդանշան:

Արևային տարերքի շարենցյան պատկերացումների մեջ, անտարակույս, էական դեր է խաղացել հեղափոխության բանաստեղծների արևապաշտության մինուրութը: Բայց ավելի վճռական դեր ունեն դիցաբանական-հեթանոսական ժամանակներից եկող արևապաշտության աղգային ավանդները:

«Արևի պաշտամունքը», լինելով համընդհանուր, տարածված, համայնական պաշտամունք և բոլոր ժողովուրդների դիցաբանական-պանթեիստական մտածողությունից անբաժան հատկանիշ, ամեն մի կոնկրետ դեպքում հայտնաբերում է իր սեփական, ազգային, ինքնուրույն բովանդակությունը:

Գ. Յակովովի մանվան տարելիցին ունեցած բանավոր ելույթում Մ. Շահինյանը հիշում է նկարչի մտահղացած այն «եղակի գաղափարը», որով հիմնավորվում է արվեստի ազգային ոճը: Գ. Յակովովը իր ինքնակենսագրություն-օրագրի մեջ գրել է, որ մշակույթների տարբերությունը բացատրվում է լույսի տարբերությամբ: Ավելի ստույգ՝ «Ոնչը ծագում է արևի ընկալման առանձնահատկությունից», հողագնդի տարբեր մասերում արևը ընկալվում է տարբեր ձևով, ուստի և տվյալ ընկալումն էլ դառնում է ոճի առանձնահատկություն: Զեսվորման առաջին փուլում Յակովովի այս տեսությունը վերաբերում էր գեղանկարչությանը (դրան է նվիրված 1914-ին գրած «Կապույտ արև հողվածը»): Այնուհետև տարածվեց ընդհանրապես տվյալ ժողովրդի մշակութի վրա»:

Հոգենոր երգերի ծագման արևային ազդակների մասին Հովհ. Թումանյանը գրել է. «...մեր Շարականները ոչ մեր հոգենոր հայրերի բացատրած «Շարականցն» են, ոչ էլ հանգ. էմինի ասած արաբական «շեր»-երգ բառիցն են ծագում, այլ ավելի շուտ կապ ունեն շարք-Արևելք, սառակինոս-արևելքցի և նման բառերի հետ, և նշանակում են Արևի երգեր, Արևի ծագման, Արևին նվիրված երգեր և իրենք էլ մեծ մասամբ նվիրված են Արևագալին, Արևին և լիքն են Արևովք»:

Արևապաշտությունը հայկական արվեստի ազգային ոճից անբաժանելի երեսույթ է:

Հայերի համար, ինչպես վկայում են թե հնադարյան առասպելները (օրինակ, Վահագնի առասպելը), թե հոգենոր երգերը, թե ավելի ուշ շրջանում ստեղծված ժողովրդական ավանդությունները (օրինակ, Արևամանուկի ավանդությունը), — Արևը եղել է ուժի և արիության, իսկ առաջին հերթին՝ վերածնության, զարթոնքի, հառնքի խորհրդանշան:

Արևը հայոց աշխարհայացքի դարավոր պատվանդանն է, հայ գրականության և արվեստի գլխավոր սյուժեն, նրա հերիաթն ու աեսթետը:

Ազգային հոգերանության հրահրումներով էլ Զարենցը վաղ քնարից սկսած դիմեց արևի ճանապարհի սյուժեին և արդեն «Ամբոխներում...» հասավ այդ երազի նյութականացմանը:

Բանաստեղծական նոր էպոսի պահանջը օդի մեջ էր:

Բնավ պատահական չէ, որ հեղափոխության առաջին տարիներին հիմնային-ձոններգային-ներբողական քնարի հետ միասին թե ուսւ գրականության, թե մյուս ժողովուրդների գրականությունների մեջ ամբողջ երկայնքով մեկ ծավալքեց հեղափոխության էպոսային տարեգրությունը:

Հայ գրականության մեջ հեղափոխական նոր էպոս ստեղծելու պատմական խնդիրը կատարեց Զարենցը, մի բանաստեղծ, որի խոռվահույզ տարերքին ու ամպրոպածին ոգոն համապատասխանում էր հեղափոխական զանգվածների պայքարի մոլեգին թափն ու ժամանակի բոցերում թրծվող ժողովրդյան սիրտը:

#### 4

«Ողբակիզվող կրակ» շարքի «հնչպես երկիրս անսկոփ...» տողով սկսվող բանաստեղծության մեջ, դառնալով իր կյանքի համար ամենաթանկ հարերությանը՝ իր երգի ու իր երկրի հարաբերությանը, Զարենցն այրող շեշտով ու թիապարտի տնքոցով ինքն իրեն, ապա և հայրենակիցներին է դիմում հետեւյալ հարցով.

Եվ այս երգերը իմ կարմիր, ա՞խ, այս երգերը իմ կարմիր,  
Որ երգում է անսկոփ սիրտս կրակուն—  
հնչպես պիտի արդյոք հնչեն, ախ, այս երգերը իմ կարմիր—  
Իմ ավերակ, իմ որք երկրում...

Կարմիր երգ և ավերակ երկիրը.

Այս մեծ հակասությունը Զարենցի քնարի ռպարադոքսն» է: Բայց ոչ միակը: 1918—1920 թթ. Զարենցի ստեղծագործությունը ողողված է նման հարցումներով, ինքնաշըզումներով, հակասական ապրումներով, ողբերգական խոստովանանքներով: Հայրենիքի գոյության այդ դժվարին՝ «անցման շրջանի նրա քնարը մեկ պիրկ աղեղի պես լարվում է ու շիկանում, մեկ ճղակոտոր ու դյուրաքեկ ծառի պես խոնարհվում է զետին:

Երկու բևեռների մեջ օրորվող հարցերի ու հոգեբանական պարագոքսների պատասխանը տալիս է այդ նույն «որք ու ավերակ», հալածական ու հոշոտվող, «ահեղ դատաստանի» ցնցումներից մտամոլոր հայրենիքը՝ իր բանաստեղծի առաջ փոխով իր անընդգրկելի ցավն ու ահավոր, համատարած դառնաթախիծը:

Ահա այդ հարցին Զարենցի տված պատասխանը, որը, վերջին հաշվով նույնպիսի հարց, նույնպիսի մտահոգություն, նույնպիսի խոստովանություն է, ինչպես առաջին բանաստեղծությունից բերված քաղվածքը:

Ի՞նչ է ուզում ինձանից կապույտ մորմոքը հրի.

Ի՞նչ է ուզում քո հոգին, հազարամյա նսիրի:

Եվ ինչո՞ւ ես զու փոել իմ զեմ քո բույրը բուր,

Եվ իմ մորմոքը վառել թախիծներով ահավոր:

Մանրածանը նախազգացումներով ու մորմոքներով, «ինչերով ու ինչուներով», «ահով ու մահով» լի այս տողերը քաղված են 1920-ին գրած այն բանաստեղծությունից, որին տրված է «Անկումների սարսափից» խորագիրը։ Հայաստանի տարածամին ու բանաստեղծի հոգեվիճակին միանգամայն բնորոշ, արդար խորագիր։ Բայց բանը ճշգրիտ խորագիրը չէ, այլ ապրումների այն ողբերգական խորությունը, որով Զարենցը կանգնում է իր իսկ ցնորքների գեմ՝ արտահայտելու կյանքի ձայնը, իրականության ալեբախությունները, հայրենիքի ճակատագիրը։

...1919 թվականին, հեղափոխության ժամապահության դիրքերից («Կարմիր զորքերից»)՝ Հյուսիսային Կովկասի հայ գաղթականների վերադառնությունների հետ գալով Հայաստան, Զարենցը տեսավ անկարելին՝ հայրենի տան գլխին կուտակված սև, կապարե ամպերը։ Նա նորից, և, թերևս ավելի ցավագնորեն, ավելի իմաստնացած, վերապրեց ասպատակված, նորից ասպատակվող հայրենիքի կործանման սարսափն ու անկման մահագույժը։

Բանաստեղծի այս «վերապրում-վերադարձը» նրա ինքնակենսագրության մեջ դիտվում է որպես մահու չափ դժվարին թվական։

Նորից Հայաստան գնացի  
Տասնըիննը թվի վերջերին։  
Այնտեղ—նսիրի երկրում,  
Հնավանդ ցանկությամբ ուրիշ՝  
Արդեն խմբակեա Դրոն  
Պարզել էր երեքույն դրոշ։  
Պարզել էր—օրեան քաղաքում  
Հնամյա Մասիսին մոտիկ։  
Ու լցրել էին հռղագույն  
Ուրուներ քաղաքն անոթի։  
Որպես քար՝ տիրությունն իշավ,  
Սանրացավ ուսերին,  
Վրաս։

Զարենցը Հայաստան է գալիս մեծ սպասելիքներով ու վառ հույսերով։ Իր հետ նա բժիռում էր «Ամբոխները խելագարված» տոնական պոեմի կարմիր տողերն ու լուսեղ գալիքի ղողանքներով լցված հրաբորը սիրտը։ Բայց իր երկրում նա անծանոթ, օտար, անժամանակյա այցելու չէր։

Նա Հայաստանի զավակն էր ու բանաստեղծը։

Թեև նրա թիկունքում էր հեղափոխական պայթյուններով ու ազատաշոմաչ հողմերով վերածնվող Ռուսաստանը, թեև նա արդեն փարում էր ամբոխների հեղափոխական անսանձ պոռթկումներով միայն վերածնվող Հայաստանի գաղափարին, բայց նրա ամենօրյա հայացքի առաջ էր արյունաքամ, հոգեվարք ապրող երկիրն ու ժողովուրդը, շավդից դուրս ընկած պատմությունը՝ ժողովրդի «հոգեկան տարագրությունը»:

Ունենալով ճակատագրական րոպեների հազվագյուտ սուր գգացողություն, մարգարեի խառնվածք, Չարենցն առաջին պարտականություն ու առաջին խնդիր է համարում Հայաստանի ողբերգական կացությանը դիմադարձ լինելը:

Ինչպես Բլոկն իր անշափ պաշտելի «статная царевна» Ռուսիայի, ինչպես Վահան Տերյանը՝ «արքայական», «քնած թագուհու» երկիր Նախրիի, այդպես էլ Զարենցը Լուսապսակ Քրոջ՝ Հայաստանի ճակատագիրը ընկալում է որպես անձնական ողբերգություն, որպես «սիրավեպի» փլուզում։ Դրանով է բացատրվում նրա տառապանքի ահագնությունն ու ապրումների ողբերգական շիկացումը։

Զարենցի սիրավեպի ողբերգական փլուզման բարձրակետը 1920-ի հոկտեմբերի 6-ին գրած «Մահվան տեսիլ» բանաստեղծությունն է, — եզակիորեն խոր ու անկեղծ մի բանաստեղծություն, իսկապես մի «աստվածաշնչյան սարսուազդու ոճի... սակավագեպ հանճարեղություն»<sup>9</sup>, որ կարող էր դրվել Վահան Տերյանի «Երկիր Նախրիի» և Հովհ. Թումանյանի «Հայրենիքիս հետաշրերի լավագույն կտորների կողքին։

Այդ բանաստեղծությունն անմիջապես հիշեցնում է Ա. Ս. Պուշկինի «Քանի գեռ Ապոլոնը շի պահանջում պոետին որպես սուրբ զոհաբերություն...» գեղագիտությունը, այսինքն՝ քաղաքացիական ծառայության մեծ պոեգիան։

Իր կառուցվածքով «Մահվան տեսիլը» անձնական խոստովանություն է։ Դա այն անհատի խոստովանությունն է իր խղճին՝ հայրենիքին, որի սրտի մեջ խոր ճեղքեր են բացել հայրենիքի արյունոտ պատկերները՝ նրա վերքերը, որի էության մեջ է խուժել ու արյան պես հարազատ դարձել հայրենիքի ճակատագիրը։

Հայաստանն իր վերջին, ամենավերջին օրհասի մեջ է: «Պատմության հարցական» լինելուց նա դարձել է այլևս իրական մի կեցություն, որին սպասում է կախաղանը՝ «մի պիրկ պարան ու երկնուղեց փայտեր երկու»։

«Փահավեծ փլուզվում է բանաստեղծի կարուտներից ու երաղներից հյուսված «սիրավեպը», ճակատագրական լուսացյան մեջ օրորվում է կախաղանը՝ վերջին քնարը»։

Եվ արդյոք ո՞վ է երազել այդքան դաժան—  
Ու լուսավոր առավոտները իմ հոգու  
Ո՞վ դարձեց—մի անկրակ իրիկնածամ,  
և գորշ պարան, ու երկնուղեց փայտեր երկու։

Զարենցի պես արդարախոս ու անձնազոհության պատրաստ անհատը կարող էր միայն հայրենիքի ճգնաժամի համար դատափետել իրեն, անձնական պատասխանատվության ծանրությունը վերցնել իր վրա։

Գուցե այդ ես եմ, որ սրաով իմ լուսնահար,  
Ոչ մի կրակ հեռուներից ձեզ չըերի,  
Ու թանկացա, որ չօրներգի ոչ մի քնար  
Լուսապսակ, պայծառ գալիքը նախրի...»

Հայրենիքի զավակը՝ նրա շարշարանաց ժամին, անձնական պարտականության խնդիր է համարում կյանքի գոհաբերությունը՝ հաշտեցնելու անհատների ու երկրի ճակատագրի մեջ բացված «հակասությունը».

Երբամ հիմա: Ու կարոտով տնմիթար,  
Իմ երգիչ երազներով ու հրեռով,  
Անհրապույր իմ օրերի երգով մթար  
Ու նախրյան իմ երազի վերջին սիրով,—  
Երթամ մարող ու մարմրող իրկիվա մեջ,  
Նրանու ուրու հալածական, որպես տեսիլ—  
Տամ պարանցոց կարոտին այն երկնուղեց  
Ու օրորվեմ եղերական ու անբասիր...  
Թող ոչ մի զոհ շպահանշվի ինձնից բացի,  
Որիշ ոտքեր կախաղանին թող մոտ շգան.  
Եվ թող տեսնեն իմ աշքերի մեջ կախվածի,  
իմ բորբ երկիր, լուսապսակ քո ապագան:  
Թող դուրս ընկած իմ աշքերի մեջ կախվածի  
Նորա տեսնեն պայծառ օրերդ ապագան—  
Թող ոչ մի զոհ շպահանշվի ինձնից բացի  
Ոչ մի ստվեր կախաղանին թող մոտ շգան...

Այս տողերն անմիջապես հիշեցնում են նաև Գր. Նարեկացու «Մատյանի...» մեղաները (մեղավորից մեղավորը շկա), միայն փոխվել են աղոթքի հասցեները. Նարեկացու երկնային արդարաբնակ աստծոմ այստեղ փոխարինել է Զարենցի երկրային աստվածը՝ Հայրենիքը: «Մահվան տեսիլը» նույն «Մատյանի» դրաման է, նույն խոստովանությունը մարդկային խղճի առաջ, միայն այս ինքնավերլուծության մեջ չկա հոգեկան մասնատում ու երկվություն, Զարենցը շունի միջնադարյան ճգնավորի հակամարտության հոգին, ովքում և հառաչում է, բայց իրականությանը նայում է հետնադարյան մարդու անմիջականությամբ:

Բանաստեղծությունը թեև լցված է մահվան տեսիլի հոգերանությամբ, — կախաղանը Զարենցը դիտում է որպես «կարոտների գագաթ», — բայց նրա էությունը, վերջին հաշվով, ոչ թե կործանման միստիկական ինքնամոռացումն է, այլ Հայրենասիրական գործողության անհրաժեշտության գիտակցումը:

Այս զգացուլությամբ Զարենցի բանաստեղծությունը մտնում է ապրումների այն հոմը, որ բացել էր Վահան Տերյանը՝ «կուսաքացին նա բարձրացավ կախաղանա-ից մինչև «երկիր նախրի», ուր տրվում է այս ընդհանրացումը».

Որտե՞ղ է աղոթքն այնպես վեհ ու պարզ  
Եվ զոհաբերումն այնպես խնդագին...

«Մահվան տեսիլի» «քնարական խոստովանության» միջով անցնող անձնվիրումի թեման յուրահատուկ հոգերանական «մաքրագործումի» «կատարսին», դեռ է խաղում, նույն բանը թելադրելով նաև կախաղանի շուրջը խըմբված մարդկանց:

Անհատների կործանումը Զարենցը համարում է Հայրենիքի համար ստեղծված ծանր իրադրությունից փրկվելու միակ ելքը: Կրկնվում է Հայոց պատմության հանրածանոթ տրամարանությունը. «Վասն Հայրենյաց մեռար, դու շատ ապրեցաը»:

Զարենցի քնարի այն հատվածը, որի մեջ տեղադրվում են «Ողջակիզվող Արակի» (1918—1920) երեք մասերը, «Փողոցային պշտուհուն» (1920) շարքի լիրիկական բալլադները՝ թվով յոթ, «Նախրյան դառնաթախծի» ու մորմոքի» թեմաներով գրված մի շարք բանաստեղծություններ, իրենց հուզական բովանդակությամբ այդ շարքերին հարազատ մի քանի ուրիշ էջեր, — բնութագրովում են ներքին մաքառումներով ու հոգեբանական զիգզագներով, տրամադրությունների փոխակերպումներով:

Զարենցի 1918—20 թթ. ստեղծագործությունը հակասությունների ու հանգույցների րարդ, չափազանց բարդ կծիկ է: Կրեթե միաժամանակ նա գրում և տպագրում է համարյա իրար ծխտող, միանգամայն «տարբեր» հուզական շեշտ ու բովանդակություն ունեցող գործեր՝ ամենաառույգ, զվարթ ցնծությամբ լի տողերից մինչև ամենաառույգ ու հուսահատական տողերը, ամենապայծառ տրամադրություններից անցում է կատարում դեպի ամենաարսափելի եզրակացությունները:

Այդ տարիներին նա գրում է «Ողջակիզվող կրակի» մաժորն ու «Լիրիկական բալլադների» («Փողոցային պշտուհին») մինորը, ստեղծում է «Անկումների սարսափից»-ի մահվան խելագար պարի ու «Աստղիկի» հոգեկան խենթբոցավառման պատկերները, տարութերվում է Ամենտի եզերքի ու կարմիր նժույգների բնենուրում:

Բանաստեղծություններում Զարենցը խոսում է «երկու իրականության» գոյության մասին:

Մի բնեռում ժողովրդի ողբերգությունն է, նրա արյունն ու տառապանքը, մյուս բնեռում՝ երկրում ահազնացող «Հեղափոխական իրադրությունը»:

Վաղ տարիների «քնարական հերոսին» գավառական փողոցների թափառականին, երազասեր ճամփորդին, ծիածանի ասպետին, հավիտենական ճշմարտություններ որոնողին, պատերազմից դարձած կամավորին փոխարինելու է եկել մի նոր հերոս՝ Զինվորը, Քաղաքացին, Բանաստեղծը, որն իր խնդիրներից առաջինն է համարում Հայաստանի և հեղափոխության միասնացման խնդիրը:

Այս գիտակցության գրական փաստաթուղթը «Ողջակիզվող կրակը»՝ վերին աստիճանի հարուստ և հուզական-փիլիսոփայական խոր նստվածքներ ունեցող բանաստեղծական շարքն է՝ բաղկացած «Իրիկում», «Վերադարձ», «Առավոտ» մասերից:

Այդ մասերը շեն գրվել միանգամից: Դրանք ունեն գրության տարբեր թվականներ: «Իրիկումը» գրված է 1918 թ. փետրվար-մարտ ամիսներին, «Վերադարձը»՝ նույն թվականի հունիսին, իսկ «Առավոտը» ավարտվել է 1920-ի ամռան:

Զնայած յուրաքանչյուր ենթաշարք ունի «առանձին», սեփական բովանդակություն՝ մոտիվների իր համակարգը, բայց շարքի երեք մասերը մեկտեղ արտահայտում են կործանվող ու վերածնության անկասելի ձգտումներով այրվող Հայաստանի մեծ թեման:

Մահից՝ ողջակիզվումից մինչև կրակ՝ վերածնություն, — ահա բավականաշափ բարդ, բավականաշափ դժվարին, մեծ ցնցումների հետ կապված այն տարածությունը, ուր Հայաստանը որոնում է գոյության խորհուրդը, իր պատմության ու արդիականության վկայությունը, որոնում է նահատակների արյունով ու պայծառ հույսերով, ինքնայրումներով ու երազի շահերով, որոնում է «փյուշիկ-թռչունի» տրամաբանությամբ:

**«Առավոտ» ենթաշարքում ես, ինչպես «Իրիկունի» մեջ, ընդարձակ տեղ են գրավում կրակային տարերքի պատկերացումները։ Բայց եթե «Իրիկունի» արևապաշտությունը դեռևս կոսմիկական նախնական կեղեկի մեջ է և շունի սոցիալական-պատմական հագեցում, ապա «Առավոտի» կրակապաշտությունը արտահայտում է ժամանակի կոնկրետ սոցիալական երևոյթի՝ հեղափոխության, հայտնությունը։**

Եթե «Իրիկունի» մեջ հրաշեկ արեք երեսում է հեթանոսական միստերիայի և տեսիլի կերպարանքով, երեսում է որպես արարության բիբլիական քաղվածք, ապա «Առավոտի» կրակը բազմաթիվ անուններով ու որոշիչներով՝ կարմիր կանքեղ, կարմիր բոց, կարմիր երգ և այլն, ոչ թե դիցարանական ամպրոպածնության գաղափար է, այլ հեղափոխության տարերք։

Այս մետամորֆոզով՝ արեք կրակ, և երեսույթի կոնկրետացումով, Զարենցը Հայաստանը վերջնականապես պոկում է Նրկնքի ֆանտաստիկայից և տեղադրում իրականության սահմանների մեջ։

«Առավոտ» շարքի բարձրացող տրամադրությունները քաղված են 1919—20 թթ. իրադրությունից։ Դա այն ժամանակն էր, երբ հեղափոխության ալիքները հասել էին նաև Հայաստան ու բերել վերածնության, հայրենական մարած օշախների բոցավառման հույս։ Դրանով էլ բացատրվում է կրակի տարերքի անընդհատ ծավալումն ու խորացումը բանաստեղծական պատկերների համակարգում։

Դա այլևս մթնշաղային պահերին հորիզոնում երևացող դալուկ արեք չէ, այլ մի ամբողջ աշխարհ, մի կենդանի ու շարժուն տարերք։

Դա այլևս արեք ֆանտաստիկան չէ, այլ երկիրն իր մեջ առած հեղափոխությունը։

Թռ փայլով գու վառել ես երկիրը,  
Կարուտով ու փայլով քո անուշ։

**«Առավոտի» տռնական ապրումները ծնում են հայրենիքի և հեղափոխության դաշինքի խորհրդանշանը՝ Բրոնզե բրուշ կերպարը։**

Բրոնզե բրուշ իմ, բրոնզե բրուշ իմ, բրոնզե հարս,  
Լուսավոր գու, հրասիրտ ու հրավարս,  
Բրոնզե բրուշ իմ, բրոնզե բրուշ իմ, բրոնզե հարս,  
Դու վառվել ես օրերի մեջ ու հրամ,  
Դու վառվել ես կարմրավառ այս օրերամ,  
Դու վառել ես գալիքները ու հռուն։

**«Բրոնզե բրուշ» կողքին հայտնվում են դեպի գալիքը սլացող կարմիր նժույգները։**

Կարմիր նժույգները թրուամ են սրբնիաց,  
Կարմիր նժույգները՝ բաշերը փրփուր։  
Վառվում, բացկլտում են պայտերը նրանց,  
Պայտերը սփռում են բացկլտուք ու հուրու...

Զարենցի կարմիր նժույգների անընդհատ շարքերը՝ իրենց փրփուր-բաշերով, պայտերից որպես նետ արձակած բոցերով, իրենց հողմնային հետագծով, Հայաստանը դուրս են բերում դեպի հեղափոխության անծայր հեռաստաններ, նրան զնում աշխարհի դինամիկ կառուցվածքի մեջ։

Պատմության այն ճակատագրական պահին, երբ հասարակական գիտակցությանը սնումդ չեն մատակարարում անգամ «գյութական տեսիլներն» ու

կապույտ առասպելները, երբ գետնահարվում է անգամ հայկական ռոմանտիկական գաղափարախոսության նեցուկը՝ տեսիլային-վախճանաբանական գիտակցությունը, իր տեղը զիշելով մերկ, սարսափելի, ամենասարսափելի իրականությանը, —պատմության այս տարածամին Զարենցի քնարը ծայրեիծայր ողողվում է Հայաստանի և մարդու ողբերգական ճակատագրին բնորոշ թեմաներով:

Այնքան է սրվում բանաստեղծի ողբերգությունը, որ նա դիմում է անգամ ինքնառշնչացման ու ինքնաժխտման:

Ես, —խեղկատակ եմ հիմա,—

ասում է Զարենցը 1920 թ. սեպտեմբերի 16—23-ը գրած «Փողոցային պշրուհում» լիրիկական բալագների շարքի վերջին բալագում:

Բանաստեղծութիւնի կեյլիին գրած մի նամակում Զարենցը տալիս է հետեյալ բացատրությունը. «Զեզ համար յոթք բալագ եմ գրել: Մի բալագի վերնադիրն է—«Խեղկատակ»: Նշանակում է—այս. Ես եմ:—Խեղկատակ: Ոչինչ: Հավէ:

Այս անակնկալ ու հանպատրաստի խեղկատակությունը՝ արյան վերջին միջը, որոշ հետազոտողներ կապում են ժողովրդական բալագանների հայտնի կատակարանների «ուրախ հերիաթների» ու գրական դիմակների ավանդների հետ: «Խեղկատակ» բանաստեղծության մեջ,—գրում է լ. Հարությունովը, —կատակարանի դիմակով հանդես է գալիս արդեն ինքը՝ բանաստեղծը, որը, հայտնելով ամեն ինչ և ամեն ինչի մասին երգելու առաջարկը, անց է կացնում բուրժուական աշխարհում «ստեղծագործողի» ողբերգական ճակատագրի միտքը... Դրամատիկական իրադրությունը քողարկվում է «ուրախությունը», ինչպես և Բլոկինը; դառնուած է մարդկանց ուղղված մեղադրական ու կոչ<sup>10</sup>:

Ոչ միայն «Խեղկատակը», այլև «Փողոցային պշրուհում» շարքն ամբողջությամբ, համարվում է դիմակային, առեկինադի արտահայտություն. «Շարքի միջով անցնում է դիմակի և կրկնորդի թեման, ժաղածութիւնը և առեկինադի մոտիվը»:

Ավելին. «Անկումների սարսափից» բանաստեղծությունը ևս դիմում է իրրե դիմակի արվեստ:

Ինչ-որ հեռավոր կապեր կարելի է հայտարերել, իհարկե, Զարենցի խեղկատակի բացառիկ անկնեղծության («Ես երգում եմ ակամա: Ի՞նչ էլ երգեմ. կուզեք—սեր, Կուզեք—մահ:—Բայց չեմ կեղծում ես երբեք») և Ալ. Բլոկի «Բալագանցիկ» գրամայի կատակարանի մեջ, բայց դժվար է համաձայնել Զարենցին վերագրվող «ուրախ դիմակի» մտքի և, մանավանդ այն տեսակետի հետ, թե Զարենցի և Տիգիան Տաբիձեի համար («Խալդիական բալագան») հայրենիքը «բաղաբական բալագան էր»:

Զարենցի խեղկատակի արմատները նախ և առաջ պետք է որոնել այն կոնկրետ ժամանակի մեջ, որը թելադրեց նրան իր կյանքին այդ պմենադաժան խոստովանությունը:

«Ես—խեղկատակ եմ հիմա» տողը Զարենցը գրել է 1920 թ. սեպտեմբերի 23-ին, այսինքն՝ թուրքական նոր հարձակման նախօրյակին:

Արևելյան Հայաստանի սահմանները ներխուժած թուրքական զավթիչներն արդեն պատրաստ էին այն ուազմական գործողություններին, որոնց նպատակի մասին Կովկասյան ուազմաճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշան հետեւյալ հեռագիրն էր ուղարկել Անկարա. «Մոտ օրերս ևս պետք է

Հայտնեմ Զեզ, որ Հայաստանը ջնշված է աշխարհի քարտեզի վրայից»:

Ավերիլ Հարձակման դեմ անօպնական ու միայնակ կանգնած Հայաստանի վերքերի երգին ուրիշ բան չէր մնում, բան խեղկատակի խոստովանությունը։ Նա խեղկատակություն է համարում իր զբաղմունքը, անիմաստ է համարում երգը, անտեղի՝ հուզումները։

Բանաստեղծի համար այլևս միենույն էր, թե ինչ բովանդակություն և ինչ նստվածքներ կունենա իր երգը։

Կուզե՞ք—երգս՞

Զեզ համար

Հիմա։

Այսպես երգեմ, ու զգաբ—

Ինչ որ կուզեք, կուզեք—սեր,

Կուզեք—մահ։

Սա Մուսայի աղբյուրների՝ ազգային սուրբ իդեալների կործանման և մարդու ոչնչացման երևոյթից ծնված հուսահատական ճիշ է, տանջալից ու անքուն օրերի միակ եղրակացությունը։

Չարենցի խեղկատակը անդիմակ է և անկրկնորդ Եթե Ալ. Բլոկի դիմակները նրա երկրորդ էությունն ին, և բանաստեղծի պատվիրանով ինչ-որ տեղ կարող են վերադարձնել հոգեկան հավասարակշռությունը՝ առաջին էությունը, աւագ Չարենցի «խեղկատակությունը» նման միստիկական հրաշագործության ուժ շունի։ Դա այն անհատի խոստովանությունն է, ով իրեն այլևս չի օրորում «անուշ հեքիաթներով» և «արշի քնքշությունը» համարում է ամենավերին պարզեւ։

Դա ցավերի ողբերգական պոռթկումն է, որը և նրան կանգնեցնում է ինքնաժխտման փաստի առաջ ժխտվում են երգը, անհատականությունը, ճանապարհը, աշխարհը, ամեն ինչ։

Բնորոշ է բանաստեղծի հետեւյալ եղրակացությունը։

Վաղուց անցել ես դու, Աստղիկ, կյանքից մեր մութ,

Թողել ես կյանքը այս հիվանդ քրոջդ մեղկ։

Թողել ես, որ երգեն նրան երգեր լուսատ,

Լուսնատ երգեր երգեն տխոր ձայնով բեկրեկ։

Աստղիկը՝ Չարենցի մեկնաբանությամբ, իր էության մեջ ռկտրուկ անցումներից՝ պայմթյունների, միծ ուժ ունի։ Նա Ծղոր, ամենակարող, մարդկային ուժեղ կրերի խորհրդանշանն է՝ կոչված հիվանդ ու մանր զգացումների տիրապետությունից ազատագրելու կյանքը, արվեստը, մարդուն։

Նա կյանքի շարժման ու կենդանության ոգին է։ Նրա մեջ գործում է աշխարհի բոցավառվող սկզբունքը։

Աստղիկը ոգու խորհրդանշանն է։ Իր հզոր ու կրքու սիրով նա կոչված է վերածնել, վերակենդանացնել, վերաշրջել զառամած աշխարհը։ Պատմական իրադրության ճգնաժամին Աստղիկի գալարքն ու հուրը պետք է դառնա գալիքի ակնաղբյուրը, նրա պտղաբերությունը պետք է բացի ժամանակի ու արվեստի նոր ճամփան։

Արի, Աստղիկ, հիմա, որպես գալիք կյանքի

Անհուն, բեկուն խավար՝ աստղի համար իմ վառ։

Եղիր որպես պղինձ, երկաթ եղիր հանքի,

Եինող կամքիս համար եղիր կարմիր մարմար։

Արի, որպես անմար կրքով լցված գարուն,  
Ու կույս եղիր՝ զարնան դաշտի նման խոպան,  
Զարնան իւանդի նման եղիր բորբռք, եռուն,  
Որ եռ, կայտառ, վառեմ քո մեջ իմ նոր ճամփան:

«Աստղիկ» բանաստեղծությունը Զարնցի մարգարեությունն է:

Հօգևոր կերպարանափոխությունների և կեցության ներդաշնակության գորավոր ուժ վերագրելով հեթանոսական սիրո և հառնող գարնան աստվածությանը, Զարենցն իր հայացքը արդիականությունից շրջում է դեպի ապագան:

Աստղիկի դիֆերամբով նա կանգնում է պատմական լավատեսության մակարդակին.

Խշպես օրերը այս՝ գալիքներով բեղուն—  
Այնպես արգանդը քո անհուն լինի թող տոթ:  
Աստղիկ, գալիք գարձիր, դարձիր տարերք բեղուն,  
Այլեւ մայր գարձիր՝ գալիք կյանքի խորհուրդ:

Արդեն սկսած «Սոմայից» Զարենցը հայ բանաստեղծության ամենադիպուկ նետածիգն էր, այսինքն՝ բանաստեղծ, որ առաջինն էր կուահում այն, ինչ տեղի է ունենալու, առաջինն էր գծում ապագայի պատկերին ու պատկերացումները, առաջինն էր հայտարերում պատմության տիրապետող ուիթմերը:

Զարենցյան դիպուկ նետածգության վերահաստատումը եղավ «Երեք ռադիո-պոեմը»՝ «Նախիրի երկրից», «Դեպի ապագան», «Թրոնզե թևերը կարմիր գալիքի», որը «Բոլորին, բոլորին, բոլորին» հրովարտակային վերնագրով լրւյս տեսավ երևանում, 1920-ին:

Դադիպուեմների թվագրությունը (1920 մարտ-հունիս) վկայում է մի շատ կարևոր էություն. դա Զարենցի քաղաքական մտածողության զարմանամի պայծառատեսությունն է:

Դեռ 1919 թվականից Կարսի հեղափոխական ընդհատակի հետ կապված և նրա ագիտացիոն-լուսավորական որոշ հանձնարարությունները կատարող բանաստեղծը դաշնակցական Հայաստանում խիզախսեց մի բանաստեղծության, որը նվաճելու համար քաղաքացիական արիությունից բացի և դրանից առաջ անհրաժեշտ էր քաղաքական հատակ միտք ու կողմնորոշում:

Մշուշների մեջ նա տեսավ Հայաստանի վրա բացվող նոր առավոտը և, ինչպես առաջին քրիստոնյաները՝ շերմեռանդ հավատացյալները, ներրողեց ազատ, իրական, Ապագա Հայաստանը:

Զարենցը եղավ հայ իրականության ամպրոպի կուահողը:

Հեղափոխության ընկալման շարենցյան պատկերացումները կոնկրետ էին և հստակ: Զարենցը շղիմեց ոչ անցյալի ոգիների՝ կրոնական կերպարների գինակցությանը, ոչ էլ իր երգի մեջ տեղ բացեց ավետարանական հաստիքների համար: Նա հեղափոխությունը ներկայացրեց իբրև կոնկրետ ու շոշափելի իրականություն: Զարենցի պատկերացրած հեղափոխությունը ոչ թե ընկնում է ավետարանական երկնքից, այլ ծնվում է երկրից՝ ժողովրդական կյանքի բում արմատներից:

Ահա, օրինակ, հեղափոխության շարենցյան կառուցվածքը, ուր «կարմիր ապագան» երեսում է իրեր ժողովրդի հին ու հավերժական կարոտի վերջին հանգրվան, բազմամրրիկ աշխարհի վերջին կամք.

Ու կանգնել եմ եռ  
Լեռների վրա իմ ավեր երկրի,

Կանգնել եմ հաստատ ու երգ եմ ասում  
 Խնդասիրտ, արի,  
 Եվ նետում եմ իմ երգը Հողմաձայն  
 Ժողովուրդներին բոլոր կողմերի—  
 Բոլոր կողմերում տառապող մարդուն:  
 Եվ ասում եմ ես.  
 —Եկե՛լ եմ ահա.  
 Եկել, հասիլ եմ դարերի մուժից,  
 Անրոց մշուշից հեռու դարերի—  
 Եվ բերել եմ ձեզ, կարմիր ձեր երթին,  
 Սիրտը նախրի...

Այս հրովարտակը, որ առաջին ուղիովումի («Նախրի երկրից») ամենա-  
 հուժկու երակն է, իրար է բերում և միասնացնում այնպիսի արժեքներ, ինչ-  
 պես հեղափոխությունը, երկիր նախրին և պոեղիան.

Նախրի երկրից—իմ ողույնը ձեզ.  
 Չեր կարմիր հրին—նախրի կարմիր  
 Սիրտը—ողակեզ:

Ուաղիոպումներում Զարենցը ծավալում է հեղափոխության արարումի մի  
 այնպիսի պատկեր, որը հիշեցնում է ասուվածներին նվիրված հնագույն ծի-  
 սակատարությունը, հեթանոսական կուռքերի հանդիսավոր հիմներգությունը:  
 Բանաստեղծն ի մի է բերում «բոլոր կողմերի» ու «բոլոր սրտերի» «ու-  
 պիոկայանները», որոնք բարձրածայն խոսում են հեղափոխության ծնունդից,  
 նրա անխուսափելի լինելությունից և ժողովրդական կամքի ու ոգու միասնաց-  
 ման ընթացքից.

Երկաթե հսկա մի դիսկի նման  
 Բյուր եղայրների կամքը մեր արի,  
 Տիեզերական—  
 Նետել ենք արդեն թափով վիթխարի  
 Դեպի հողմերը գալիք օրերի,  
 Դեպի—Ապագան...

«Ռադիոպումները» «ոռոմանտիկական պայթյունի» շարենցյան գեղագի-  
 տության շարունակությունն են՝ «Ամբոխների...» և «Ողջակիզվող կրակի»  
 զարգացումը:

Ռոմանտիկ լինելով, Զարենցը ռադիոպումներում, բնականաբար, պետք  
 է լիներ նաև շափազանցնող, երեսութները տարածության մեջ խոշորացնող:

Նրա քնարը այլևս թևածում է միշմոլորակային սահմաններում, երգի մեջ  
 ասրանում է տարածության լայնության զգացմունքը, ասել է թե՝ բանաստեղ-  
 ծը տիեզերքը տեսնում, է ափի մեջ, երգը տեղադրում է համաշխարհի կա-  
 ռուցվածքում:

Յնցելով կանոնիկ արվեստի հիմքերը, ռադիոպումները ճանապարհ տվին  
 բանաստեղծի մի նոր կերպարի: Դա ամենատես, խորատես, հավերժատես և  
 դյուցազրուն՝ հսկա բանաստեղծն է, որն իր սիրտը դարձնելով ռադիոկայան,  
 այնտեղ է հավաքում համաշխարհային պատմության նոր ալիքները և այն-  
 տեղից հաղորդում է աշխարհի արթնացման բանաստեղծական դողանջներ:

Նոր բանաստեղծը իր էությունը պարզում է հետևյալ խոսքով՝

Ես գալիս եմ ահա:—Նայեցեք, նայեցեք,  
 Ես գալիս եմ ահա—դարերից...

...Նո եմ նախը մի հոկա պտեռ—  
Եկել եմ ուս գարերից հեռու  
Ու հին մշուշից—  
Մշուշի հիշեց անթիվ գարերի  
Իմ հազերժառես, պայծառ պղքերով  
Խոյում եմ հեռու:

**Դարերը, որ անցյալն է ու հեռում, որ ապագան է, կամրջում են աշխարհի ամբողջությունը՝ իրենց մեջ ոմենալով աշխարհի նոր կանչերը բռնած հոկա, անհում բանաստեղծին:**

## 5

**Դասական «պահպանողական» արվեստը «սահմանագծային» հոգեբանությամբ նորոգելու խնդիրը Զարենցին թելադրեց նյութին մերձենալու նոր եղանակներ: 1918 թ. հեղափոխական պոեմներից, «Աղջակիզվող կրակ» շարքից, ապա՝ ուղիուպումներից հետո Զարենցը գրեց հեղափոխության ծննդյան և հազարակի պատումը՝ «Ամենապոեմը» (1920—1921):**

**«Ամենապոեմը», անկախ ծրարած կոնկրետ պատմական բովանդակությամբ, հետաքրքրական է նախ և առաջ գեղագիտական կողմնորոշումներով ու գրույթներով:**

**Դա ժամանակի նոր գեղագիտությունը բանաստեղծական խոսքով հիմնավորելու, հեղափոխական պոեզիայի ուղղությունն ու բնույթը, բովանդակությունն ու խնդիրները որոշելու մի վերին աստիճանի ուշագրավ փորձ է համասովետական գրականության մեջ:**

**Արդեն 1918 թ. Զարենցի պոեզիայում խոր արմատներ գցած հեղափոխական էպոսի թեման՝ խելագարված ամբոխների, կրակային տարերքի, ողջակիզվող սրտերի, կարմիր ապագայի, բարձրացող արևի և այլն, ենթաթեմաներով,— նրան բերում է վճռական այն եղակացությանը, որ պետք է ստեղծել գեղարվեստի նոր ուղղություն ու բովանդակության արտահայտման նոր ոճ:**

**Դեռք Աբովի վկայությամբ<sup>11</sup> Զարենցը Մայակովսկու ստեղծագործաւթյանը ծանոթ էր դեռ 1916 թվականից, երբ Մոսկվայում հաճախում էր Կ. Բայլմոնտի, Ա. Բելու, Իգոր Սեերյանինի և այլոց աղմկոտ գրական երեկոներին: Այդ ժամանակ Մայակովսկին արդեն գրական հեղինակություն էր՝ սիմվոլիստներին հակադրվող ուրբանիստ բանաստեղծ, որով հետաքրքրվում էին շատ-շատերը: Զարենցը նույնպես: Նախնական ծանոթությունը, սակայն, Մայակովսկու պոեզիայի նորարարական էության գիտակցական ու խոր ըմբռնում դարձավ, երբ Հայաստանի փետրվարյան խոռվությունից հետո, 1921-ի աշնանը Զարենցը նորից հայտնվեց Մոսկվայում:**

**Մինչև Մոսկվա գնալը Զարենցի կյանքում կատարվեց մի նշանավոր դեպք ևս: «Նախրյան առաջին կարմիր բանակում», որի գնդերից մեկի կոմիսարն էր իր համերկրացի կիպարիտ Միշյանը (1894—1921), նա մասնակցեց փետրվարյան խոռվության ճնշմանը և սովետական իշխանության վերահաստատմանը:**

**«1921 թ. փետրվարի 21-ից մինչև ապրիլի 4-ը Ղամարլուի ֆրոնտի քաղաքացիական կոիվների ընթացքում գտնվել եմ Յանիշեսկու կոմանդայում**

իրեկ մարտիկ», — գրել է Զարենցը Հետագայում, 1937 թ. բազմաթիվ գրավոր «բացատրություններից» մեջում:

«Նախրյան առաջին կարմիր բանակը», բանաստեղծի սոցիալական-քաղաքական-հոգևոր փորձի հարստացման աղբյուր դառնալով, միաժամանակ նրա առաջ դրեց բանաստեղծական հորիզոնը լայնացնելու, նոր արվեստով ու նոր հոգեբանությամբ զինվելու խնդիր:

Զարենցը գնաց Մոսկվա՝ սովորելու:

Մոսկվայի համալսարանում, ինչպես երեսում է մի նամակից, ազատ տեղ չի եղել և չի լուծվել անձնաբաժնի (ՊԱԷԿ) Հարցը: Զարենցը ժամանակավորապես մտել է Արենելքի Աշխատավորների Կոմունիստական Համալսարանը (ԿՈՒՏՎ), որտեղ հայտնում էր նա՝ «...Մթերքներ են տալիս բավականաշափ»:

Զարենցի հետ Մոսկվայում էր նաև կինը՝ Արքենիկ Տեր-Աստվածատրյանը (1899—1926):

Գնայած կյանքի դժվարություններին՝ ընթացիկ կենցաղի ու ապրուստի ծանր հոգսերին, բանաստեղծը ոչ միայն արտակարգ եռանդով պարապում էր, սկզբում համալսարանի հանրակացարանի, ապա՝ Մոսկվայի հայկական եկեղեցու բակում վարձած տներից մեկի իր անկյունում («1921 թ. մոսկովյան աշունը» նրա կենսագրության արդյունավոր շրջաններից մեկն է), այլև ուշադիր հետեւում էր մայրաքաղաքի գեղարվեստական կյանքի նորություններին և ուսւ գրականության նոր խմբումներին:

Բանաստեղծի վաղեմի կուրքերը՝ սիմվոլիստները, գրականության մեջ շունեին նախկին դիրքերը. նրանց «երգը երգած էր»: Հրապարակում աղմբեկում էին նոր ու նորահայտ հոսանքներ, որոնք բառացիորեն հայտնվում էին սունկի պես: Զարենցն աշխատում էր ճանաշել ու ըմբռնել այդ հոսանքների էությունը, բայց նրան ամենեին չէին հրապուրում ոչ «Կյզնիւ» խմբակի «երկաթե երգի» բանաստեղծները, ոչ իմածինիստները, ոչ էլ մյուս հոսանքները:

Իմածինիստները՝ Շերշենկիչը, Մարիենհոֆը, Կուսիկովը, Խվնկը և մյուսները, որոնք իրեկ մամանակի պոեզիայի գլխավոր հատկանիշ առաջ էին քաշում «բանաստեղծությունը մարմին չէ, այլ պատկերների ամբոխ» նշանաբանը և բանաստեղծական պատկերը գտում էին հասարակական բովանդակությունից, — շափականց բացասական տպավորություն են թողնում Զարենցի վրա:

Մայակովսկին, ինչպես շատերի, այնպես էլ Զարենցի աշքին երեսում էր ուսւական պոեզիայի փրկչի ու նրա զարգացման նոր ուղիները արարողի կերպարանքով:

Անհավանական չէ, որ ամեն ինչի հանդեպ վերին աստիճանի հարցասեր, մայրաքաղաքի գրական բազմամիսոր կյանքին՝ նրա շարժուն ու աղմկոտ «բոհեմային» լավատեղյակ Զարենցը առիթներ է ունեցել լինելու նաև Պոլիտեխնիկական թանգարանում, որտեղ Մայակովսկին զրնգուն բասով հաճախ էր հրապարակային ելույթներ ունենում:

Զարենցի այդ տարիների գրություններում, ինչպես և ժամանակակիցների հուշերում կարեռ վկայություններ կան, որ պարզում են հայ բանաստեղծի «մայակովսկիական հափշտակությունը»: Ահա զրանցից մեկը և, թերևս, ամենապերճախոսը. «Ես կարող եմ հայտարարել, որ շատ բան եմ սովորել Մայակովսկուց, որին պարծանքով կարող եմ համարել իմ ուսուցչը»:

Հեղափոխության երգիչները տեսնում էին ժամանակին հատուկ հոգե-

կան ընդհանությունները, սոցիալական առաջադիմության միասնական պրոցեսը, որը թելագրում, էր համապատասխան գեղարվեստական հայացքներ ու պատկերային-ոճային նույնություններ:

Այս օրինաշափությամբ է բացատրվում նաև Մայակովսկու ու Զարենցի պոեմների՝ «150.000.000»-ի ու «Ամենապոեմի» հղացման, կառուցվածքի, սոցիալական դրութների խոր ազգակցությունը:

«150.000.000» պոեմը Մայակովսկին գրել է 1919—20 թթ. ընթացքում և տպագրել է 1921 թ. ապրիլին: Այդ ժամանակ Զարենցն արդեն ավարտելիս է եղել (թերևս նաև ավարտել էր) «Ամենապոեմը»: 1922 թ. հրատարակության մեջ (դա պոեմի առաջին հրապարակումն է) Զարենցը պահպանել է Մայակովսկու բանաստեղծության «Հետքերը»՝ տողերի աստիճանաձև դասավորությունը, նրա հայտնի «լեսենկա»-ն:

Որոշակի դժվար է ասել՝ Զարենցը ծանո՞թ էր Մայակովսկու պոեմին, թե՞ անկախ է հղացել իր գրվածքի կառուցվածքը և բովանդակությունը:

Բայց փաստը մնում է փաստ, որ այդ պոեմներն ունեն մտահղացման, գաղափարների ու պատկերային լուծումների նկատելի ընդհանություններ:

Դա երևում է արդեն վերնագրից:

«Բոլորի մասին, բոլորի համար և բոլորի անունից» գեղագիտական գրութը՝ Ամենապոեմի սկզբունքը, ելակետ է եղել նաև Մայակովսկու համար:

«150.000.000»-ը ըստ էության, նույնպես Ամենապոեմ է: Մայակովսկին այդ վերնագրով դիմում էր այն ժամանակվա Ռուսաստանի բնակչության կաղմին և նրան համարում համահեղինակ: Դա է «գաղտնիքն» այն բանի, որ պոեմը Մայակովսկին տպագրության հանձնեց առանց ստորագրության, այդ անսպասելի «նորությամբ» հասկացնել տալով, որ պոեմի հեղինակն ամբողջ Ռուսաստանն է: Պոեմի սեագիր տարբերակներից մեկում Մայակովսկին արել է հետեւյալ նշումը. «Առաջ գոյություն ունի ին փափկակինցաղ գրողներ... իսկ այժմ գրողը զանգվածների ձայնն է»: Մի՞թե նույն «զանգվածային ձայնի» տրամաբանությունը չի ակնարկում պատումն ավարտելուց հետո ժողովրդական ընթերցարանին դիմած Զարենցի հետեւյալ հղումը. «Այս պոեմս—դու երգեցիր»:

Զարենցի ստեղծագործության նախորդ ուսումնասիրողները (Էդ. Զըրքաշյան, Հ. Սալախյան, Հր. Գրիգորյան և ուրիշներ) վերնագրերի առնչությունից բացի հայտարարել են «Ամենապոեմը» «150.000.000»-ին. կապակցող այլնայլ ընդհանուր կետեր են:

Որո՞նք են այդ հայթայթումները:

Առաջին. Մայակովսկու հերոսի՝ ուսուական բիլինայի դյուցազն «Միասնական հվանի» (Էդիսի Խեց) նման հավաքական կերպար է նաև Զարենցի հերոսը՝ «հսկա, բյուրանուն Պողոսը»:

Երկրորդ. ինչպես «միասնական հվանի», այնպես էլ «բյուրանուն Պողոսի» արարքները հատուկ են ֆանտաստիկական, հրաշապատում հերիաթների հերոսներին: Նրանք երկուան էլ ոչ թե սովորական, առօրեական հերոսներ են, այլ դյուցազնական հատկանիշներով օժտված հսկաներ: Առաջինը գոտեմարտում է և ծնկի բերում Ամերիկայի պրեզիդենտ Վիլյու Վիլսոնին, երկրորդը աշխարհ է գալիս հրաշապատումի օրենքով (Աստաֆյան փողոցում ընկած բրտինքի «հրաշքը»):

Երրորդ. և Մայակովսկու, և Զարենցի գրվածքներում ներկայացվում է հզորացող ժողովրդի և իրենց սպառած քաղաքական ուժերի, պատմության

կենսունակ, ապրող ու հնացած, մեռնող սկզբունքների մենամարտը:

Չորրորդ. պատմական կոնֆլիկտը ներկայացնելու համար թե՛ Մայակովսկին, թե՛ Զարենցն օգտվում են արտահայտման մի այնպիսի ոճարանությունից, որտեղ հավասարապես դեր ունեն և՛ էպիկական պատումը, և՛ քարական բացահայտումը, և՛ երգիծական-գրոտեսկային տիպականացման սկզբունքը, և՛ այլաբանությունը:

Հինգերորդ. ժանրային նկարագրով երկու պունմները էպոսային շունչ ունեն. մեկը գրված է ուստական բիլինաների ոճով, մյուսը՝ ֆոլկլորային տարեգրության սկզբունքով:

Վեցերորդ. «Ամենապոեմի» ոտանավորը մայակովսկիական համաշեշտ ոտանավորի ներմուծումն է հայկական տաղալափության մեջ:

Այս «նմանություն-զուգաղիպություններին» կարելի է ավելացնել ևս մի ընդհանրություն:

Մայակովսկին և Զարենցը, մեկը Ռուսաստանի, մյուսը Հայաստանի ճակատագրերի խնդիրը քննում են համաշխարհային պատմության լայն ասպարեզի վրա, իրենց հայրենիքի ապագան պատկերացնում են ընդհանուր մարդկությանը մտահոգող սոցիալական-քաղաքական հարցերի ոլորտում:

Այս ընդհանրություններով իսկ «Ամենապոեմը» ինքնանման գեղարվեստական երևույթ է:

Թիվետև «Ամենապոեմը» պատմում է ամենքի, հանուրի, բոլորի մասին, քայլ նրա գեղարվեստական առանձնահատկություններից մեկն այն է, որ ամենքը երևում են սոցիալական որոշակի հոգեբանություն ներկայացնող հերոսների կերպարանքով: «Ամենապոեմը» Զարենցի հեղափոխական տարեգրության այն հատվածն է, ուր առաջին անգամ հանդես են գալիս իրենց սոցիալական բնորոշ դեմքն ունեցող հերոսներ:

Դրանցից մեկը բյուրանուն Պողոսն է, որ ներկայացնում է ժողովրդական արթնացող ու հզորացող տարերքը, մյուսը խանութպան Համոն է, երրորդը՝ վարժապետ Սողոն: Վերջին երկուսը ներկայացնում են ժողովրդի երազներին ու հոգեկան-սոցիալական մղումներին ընդդիմադիր քաղաքական տարերքը:

«Ամենապոեմի» գործողության ժամանակը համաշխարհային առաջին պատերազմի և հեղափոխության ժամանակն է, գործողության վայրը՝ պատմական այդ անցքերի մեջ ներգրավված Նախին՝ ազգային հին պատրանքներով ու սոցիալական նոր երազներով:

Պատումը սկսելով «մուշա Պողոսի» կերպարի բնութագրությամբ, Զարենցը դրանով միանգամայն հստակորեն արտահայտում է իր հուզական-գաղափարական վերաբերմունքը:

Պողոսն է Նախիրյան աշխարհի հիմքը, նրա հետ է կապվում ժողովրդի ապագան, ուստի և նրա կենսագրությունն է դրվում իրադարձությունների կենտրոնում:

Եղ երանց բոլորի աղաջից  
Մի դրոշ առնական ուսին՝  
Արշավում է Պողոսը հաստատ—  
Ելնում էր փողոցի փոշին:

Ելնում էր փողոցի փոշին,  
Սիծիում էր բանակը հոծ.—  
—Անցնում էր դարերի միջից  
Մի հակա, բյուրանուն Պողոս,

«Հրաշքի» ֆանտաստիկայից հետո, որը Պողոսի մարգարեական երազն է՝ աշխարհի փոշոտ փողոցում,— այդ ֆանտաստիկայից հետո Զարենցը ծանրանում է հերոսի կենսագրության այն դրվագների վրա, որոնք բնութագրում ևն պատմական պրոցեսի ներքին առանձնահատկությունը՝ հնագանդության մերաճումը սոցիալական ակտիվության:

Պողոսի պարզ ու հասարակ կյանքի պատմության մեջ երևում է այն խոր պրոցեսների արձագանքը, որով ապրում ու շնչում էր ժամանակի հայ իրականությունը:

Աստաֆյան նեղ ու փոշոտ փողոցից «բյուրանուն պողոսների» գործողության դաշտը լայնանում է մինչև ամբողջ «երկրագումդը», նշանավորելով պատմության նոր սկիզբը:

Պողոսի ներկայացրած նաիրյան աշխարհը դրվում է համաշխարհային պատմության ու գալիքի մեջ.

Եվ ոչ թե վարժապետ Սողոն,  
Այլ Պողոսն է հիմա, բո որդին,  
Որ դեմքը քրտինքով ողող՝  
Լծվել է գալիքիդ երթին:

«Ամենապոեմում» իբրև Պողոսին հակոտնյա սոցիալական հոգերանության ու գաղափարախոսության կրողներ հանդես են գալիս խանութպան Համոն և վարժապետ Սողոն:

Սրանք նույնպես հավաքական կերպարներ են, ինչպես «բյուրանուն Պողոսը»: Սրանց թիկունքում ևս կանգնած են ժամանակի հայ իրականության բնորոշ սոցիալական խմբեր՝ «խանութպանությունն» ու «վարժապետությունը»: Սրանք այն ուժերն են, որոնք թեև ներկայանում էին իբրև նաիրյան աշխարհի հզորության կրողներ ու նաիրիի հիմքերը ամրացնողներ, բայց իրենց գործունեությամբ փաստորեն փորում էին հայրենիքի գոյության հիմքերը:

Խանութպանությունն ու վարժապետությունը «Ամենապոեմի» կառուցվածքում երևում են իբրև դաշնակիցներ, իբրև «բյուրանուն Պողոսին» ընդդիմագիր սոցիալական հոգերանության արտահայտիչներ.

Աշխարհի այն ահեղ օրերին,  
Աշխարհի ճամփերի մեջտեղում,  
Ուր եղել էր հին նաիրին—  
Կանգնել էր—խանութպան Համոն:

Կանգնել էր խանութի առաջ,  
Նաիրի պես «հզոր», «անսասան»—  
Դնացել էր արյունոտ ռազմադաշտ  
Համագասպը՝ «քաջ շանրեզար»:

Իսկ նրանց երկուսի մեջտեղում,  
Ակնոցը նաիրյան քթին՝  
Կանգնել էր վարժապետ Սողոն՝  
Նաիրի հարազատ որդին:  
  
Դարերի մշուշից ելած  
Զեռքին՝ հնամյա մի նետ—  
Դարերի մշուշի վրա  
Գրում էր՝ «Վեց վիլայեթ»:

Սրանք նույնպես, ինչպես Պողոսը, փարում են ապագայի երազներից Բայց միանգամայն տարբեր է սրանց երազների հեռանկարը: Խանութպանու-

թյան ու վարժապետության փայփայած երազը գուրկ է իրական բովանդակությունից:

«Ամենապոեմը» Զարենցի առաջին կտավն է, որտեղ երևացին ժամանակաշրջանի կոնկրետ գծերը՝ պատերազմը, հեղափոխություն կատարող մարդիկ, հեղափոխությանը դիմագրող սոցիալական ուժերը, Հայաստանի յուրահատուկ կենցաղը և այլն: «Ամենապոեմում» արտացոլվեց հեղափոխության ժամանակագրությունը՝ ամենաբնորոշ հանգույցներով:

«Ամենապոեմը» զուգորդությունների մի վերին աստիճանի բարդ կծիկ է, ուր խաշմերգում են ժամանակի էական երևույթները՝ պատերազմ ու խաղաղություն, ազգային պատրանքներ ու հեղափոխական գործողություն, քաղաքական կյանք ու սոցիալական կենցաղ, աշխատանքի ու կապիտալի հարաբերություն, «հոգեոր Հայաստան» ու իրական Հայաստան, հին ու նոր արվեստ և այլն:

Զուգորդությունների այս կծիկը բացելու համար, բնական է, որ բանաստեղծը դիմելու էր արտահայտչության մի քանի եղանակների՝ ռեալիստական, ռոմանտիկական, ֆանտաստիկական, գրոտեսկային-երգիծական և այլն:

«Ամբոխները խելագարված» պոեմից հետո «Ամենապոեմը» Զարենցի երկրորդ գործն է, որ հատկապես լայն ուշադրության արժանացավ: Նրա համբավը շուտով տարածվեց Հայաստանի սահմաններից գուրս: Վ. Բրյուսովի նման բազմազբաղ մարդը, ծանոթանալով պոեմի տողացի թարգմանությանը, կատարեց նրա գեղարվեստական թարգմանությունը:

«Ամենապոեմը» նոր խոսք էր հայ պոեզիայում: Եվ բանաստեղծական մտահղացումը, և մտածողության սոցիալական լայնությունը, և ինքնատիպ արտահայտչությունը այդ երկը դնում են հայ սովետական պոեզիայի պատմության գլխավոր արժեքների շարքում:

Ամենապոեմն իրեն ժամանակի գեղագիտության գլխավոր նշանաբան հոչակած բանաստեղծը այդ նույն օրերին գրեց նաև ինքնապոեմը, տալով նրան «Զարենց-նամե» վերնագիրը:

«Զարենց-նամեն», առաջին տպավորությամբ, սովորական ինքնակենսագրական պատում է, ուր ժամանակագրական հաջորդականությամբ հայտնը վկանում են բանաստեղծի կյանքի հիմնական դեպքերն ու կոնկրետ թվականները: Ըստ կության, սակայն, դա ոչ թե ինքնապատում է, այլ նորից ամենապատում: Բանաստեղծը սեփական կենսագրության շղթան դարձնում է շարժառիթ՝ պատմելու և խորհրդածելու ամենապատումի՝ իր սերնդի, իր ժամանակի, իր նախրիի, իր հեղափոխության, իր արվեստի ճակատագրի մասին: Այս ամենի համադրության մասին:

Միայն Ամենապոեմի համամոլորակային շունչ ու տրամաշափ ունեցող բանաստեղծ կարող էր գրել «Զարենց-նամեի» նման ինքնապոեմ, ուր՝ գլխավոր երակը պատմության երևույթների ճանաշման ու արժեքավորման երակն է՝ անդրադարձված մի կենսագրության մեջ:

Այդ կենսագրությունը, սկսվելով գավառական քաղաքի ոսկի հեքիաթներից, շարունակվում է պատմության մեծ կերպարանափոխությունների ճանաշումով և հայրենիքի գյուտով:

Իր կենսագրության դրվագները՝ մանկությունից մինչև մոսկովյան «մըրրիկ» (1922), Զարենցը գնահատում է հեքիաթի շափանիշով.

Ոսկեղան արևի նման  
Իրանից նետված նախրի,

Նաիրեկց նետված Մոռկով—  
Ես երգում եմ կյանքս հիմա—  
Արևով,  
Արյունով,  
Ուկով:

Այդ հեքիաթի գլխավոր արժեքներն են արևը, արյունը, ուկին, որով ընդհանուր հայտարարի են բերվում բանաստեղծի հոգու երեք ապրումները՝ պոեզիան, հայրենիքը և հեղափոխությունը:

Երեքն էլ բանաստեղծի կենսագրության այն մասունքներն են, որոնք «Զարենց-նամեռում» երեսում են իրեն հաստատվող ու երկրպագվող, իրեն հոգեկան աշխարհի սահմանները ընդարձակող արժեքներ:

Արգևն «Սոմա» պոեմը, «Ամբոխները խելագարված» հերոսական ասքը, «Ողջակիզվող կրակի» պատկերային որոշ շարքեր «պայթեցնում» էին դասական հայ բանաստեղծության էլեգիական կառուցվածքը: Դա, սակայն, միայն հնչերանգի փոփոխության գուտ ձևական խնդիր չէր: Հնչերանգից առաջ մոփում-պարզվում է բանաստեղծի աշխարհավերաբերմունքը, նորանում են աշխարհին տված զնահատականները: Իսկ եթե խոսենք ավելի կոնկրետ՝ Զարենցի ստեղծագործության մեջ ամրանում է աշխարհի գրական ընկալումը: Իսկ նորացած աշխարհավերաբերմունքի ազդեցությամբ կուտակվում են գեղարվեստական նոր հատկանիշներ, էական տեղաշարժեր են կատարվում Զարենցի պոեզիայի թե՛ բովանդակության, թե՛ ձևական-արտահայտչական կառուցվածքի մեջ:

«Իր և ժամանակին մասին պատմելու համար Զարենցը ոչ միայն օգտվում է ժամանակի պոեզիայի մեջ կիրառվող գեղարվեստական ձևերից, ոչ միայն յուրացնում է ուսասկան պոեզիայի, մասնավորապես «Ճախ» ֆուտուրիստների ձևական-տաղաշափական կառուցվածքները («Ամենապոեմ» և այլն), այլև դիմում է հայկական միջնադարի արվեստին՝ այնտեղից պեղելու արտահայտման ոճի նոր աղբյուրներ:

Գեղարվեստական այս կողմնորոշման ինքնատիպ արտահայտություններից մեկը եղավ «Տաղարանը», որը Զարենցն ավարտել է 1921 թ. տարեմուտին և 1922-ին տպագրել մոռովական երկհատորյակի առաջին հատորում:

Զարենցի գրական ճանապարհի մեջ «Տաղարանն» այն հատվածն է, որտեղ այլևս դեր չունեն բարդացված ինքնազննությունն ու ֆանտաստիկական տեսիլները, ցնորային գիտակցության անգամ հեռավոր շորջոփներն ու «անտրամաբանական» այլարանությունները, այսինքն՝ բանաստեղծական մտածողության այն տարրերը, որոնցից կառուցված էր նրա առաջին սիրավեպ՝ «Ծիածանը» (1917):

«Տաղարանը» Զարենցի անկաշկանդ, աշխարհաճանաչման մեջ նոր գեղեցկություններ հայտնագործող հոգեկոր մատյանն է, որն ունի մի բնաբան («Կու մեռնիմ—շի տեսնի Սայաթ-Նովի պիս...»), երկու մուտք-լուսանցք և քսան տաղ:

Կյանքի երեսւյթների անվիճելիությունը հասկացրել է Տաղասացին, որ թումանյանական՝ հաշտ ու արդար, «ուրախ» ու խաղաղ վերաբերմունքով պետք է անցնել մարդուն տրված կարճ կյանքի բաժինը, որ իրականության անհատնում և անվերջ հարատությունից պետք է քաղել հոգու զվարթ լույսը, հոգու ներդաշնակությունը, իրականության բնական գույներով պետք է գեղեցկացնել ու զարդարել աշխարհը:

Այս լայն բովանդակությամբ «Տաղարանը» դառնում է աշխարհահիացության թեմայի հարստացումը և, մանավանդ, որա խորացումը:

Իսկ ինչո՞ւ է Մայաթ-նովան տեղադրվել Զարենցի կենսագրության եւ մանավանդ, աշխարհահիացումի մեջ, այն Մայաթ-նովան, որ հանճարեղ աշուղի ստեղծագործությանը նվիրված առաջնակարգ հետազոտության հեղինակ, դանաստեղծ Պարույր Սևակի փայլուն բնորոշումով, հայ գրականության «Մեծ Ռեզարածն» էր ու «Մեծ Ըղձավորը»<sup>12</sup>, այն Մայաթ-նովան, որ, ըղձալով աշխարհի գեղեցկությունները, բեղարեց և, վերջիվերջո, կանգնեց փակուղիների առաջ ու դատապարտվեց Հաղպատի մենաստանի կրոնավոր-ճգնավորի սքեմին:

Ինչո՞ւ է Մայաթ-նովան դարձել «Տաղարանի» կնքահայրը:

«Տաղարանում» Մայաթ-նովայի «կնքահայր» լինելու հանգամանքը շեկարելի կապել ոչ գրական ոճավորման հետ և ոչ էլ մեծ աշուղի խաղերի նմանագրության հետ:

Ընդհակառակ՝ Զարենցը իր երգաշարի «սայաթնովյան երանգներով» ու առնչություններով շատ գեպքերում, ըստ էության, վիճում է միջնադարյան երգչի հետ, նրա կաշկանդվածության ու դառնության դեմ հանդիման կանգնեցնելով իր հոգու խենթ աղատությունն ու լուսավոր զվարթությունը, նրա բեղուածությանը հակադրելով վայելումի քաղցրությունը, նրա հուսահատությանը («աշխարհն հիմա շատ է նիղացել»)՝ իր անշիշանելի լավատեսությունը, աշխարհը նեղ լուսամուտ-փանջարա համարող նրա «տեսությանը»՝ իր լայնածավալ աշխարհասիրությունը:

Աշուղական բանաստեղծության բառակազմին ու աշուղական ձեերին դիմելը, մեր կարծիքով, ունի նաև հետևյալ բացատրությունը. քնարական բանաստեղծության Զարենցի ժամանակի համակարգը ինչ-որ սպառման՝ «ճգնաժամի» մեջ էր, — համենայն գեպս այդպես էր մտածում Զարենցը շատ ժամանակակիցների հետ միասին:

Հանրածանոթ քնարերգության գեղարվեստական «արդուզարդը» անբավարար էր համարվում մարդու իրական գիտակցության լիակատար ու խորացուլման, նրա հոգեկան հարստության բացահայտման համար: Այդ իրադրության մեջ ժողովրդական պոեզիայի «միջնորդությունը», նրա ձեերն ու դարձլածաբանաւթյանը դիտվում էին որպես ամենահարժար գեղաթափեր՝ քնարական բեկբեկուն ոճերն ու սիթմերը հաղթահարելու, աշխարհի բանաստեղծական ներդաշնակության գաղափարը Հանտատելու և մարդու ներքին բովանդակությունը բացելու մեջ:

Զարենցի «Տաղարանը» սահմանված էր սիրո, երազի, կարոտի, դառնության, գանգատի, բաժանման՝ հակադիր զգացմունքների ներդաշնակության, մարդու էության խորացման խնդրին: Այդ բանը արտահայտվում է թե՝ տաղաշարի սյունեեում, ուր ամրապնդվում են աշխարհի ներդաշնակության շարենցյան կենսափիլիսոփայության հիմունքները, թե՛ նրա միջով անցնող բանավեճում, որը կոչված էր սուս, անգույն, սալոնային-գրքային սիրո ու անկենդան գեղեցկությունների դիմաց փառաբանել սովորական մարդու կենդանի գեղեցկությունը:

Նախ բանավեճի մասին:

Զարենցի բանավիճային շունչը երեսում է արդեն 1920-ին գրած «Էմալե պրոֆիլը. Ձեր» շարքից: Ազատագրվելով սիրո և եթիաթից՝ «ծիածանի» սրբապատկերից, հրաժեշտ տալով սիմվոլիստական բանաստեղծության երազային

ու անմարմին Քրոջը՝ Հրաշքին, Զարենցը որոնում էր սիրերգության այն ավանդությունը, որով պետք է արտահայտիր սիրո զգացմունքի բուն էությունը: Այդ որոնումների ընթացքում նրա ուշադրությունը գրավեց ֆրանսիական պառասականների գեղագիտությունը, Մ. Գորկու բնութագրությամբ՝ գրական այդ «...պաղ դպրոցի» ավանդները, որ շատ հարմար էր ժամանակին ընդարձակ տեղ գրաված «տիկնիկային սիրո» արտահայտությունները բացահայտելու համար:

Դալուկ զդացումներ և պուդրայած դեմքեր, գունատ ապրումներ ու անմարմին դիմակներ, անփուլթ հայացքներ ու դիմակահանդես, բարալիկ մատներ ու չնշին պահանջներ, սալոնային քաղցր-մեղցրություն ու գրիմ, մի խոսքով՝ հոգեկան դատարկության պճնազարդում,—սա էր ժամանակի անկրակ սիրո առանձնահատկությունը:

Մարդը մանրանալով, դարձավ տիկնիկ, տիկնիկը մտավ սիրո մեջ: Տիկնիկը դարձավ սիրո գլխավոր դեմքը:

Այս երեսութիւ առաջին նկատողը եղավ Վահան Տերյանը և գրեց բանաստեղծական այն շարքը, որը կոչվում է «Կատվի դրախտ»: Տերյանը այս շարքում ստեղծեց Գեղանի Պրինցեսայի կերպարը, առաջին հայացքից մեծարման տպավորություն թողնող, բայց ըստ էության պսակագերծվող մի կերպար, որ ներկայացնում է «հոգեկան թափառականների» «բարձր սիրո» ցածրությունը: Ճիշտ է, «Կատվի դրախտում» շկան պսակագերծման բացահայտ ակնարկներ, բայց արտահայտչության հեգնական-կատակային եղանակը, Տիկնոջը ուղղված հանդիսավոր խոսքը («Ո՞վ կարող է շոիրել Զեզ...»), Պրինցեսայի հրեշտակային դիմապատկերը և այլն, վկայում են բանաստեղծի անբավականությունը սալոնային «տաքուկ անկյունների» մեջ ապաստան գտած տիկնիկային սիրո երեսութիւց:

Բանաստեղծը, թվում է թե, ծնկի է գալիս Պրինցեսայի առաջ, բայց նրա մեջ, եթե կարելի է այսպես արտահայտվել, գործում է այն սատանան, որ ճանաշում է Հրեշտակի «գաղտնիքները» և մեծարում է նրան՝ կործանելու համար:

Գեղարվեստական նույն սկզբունքով է գրված նաև Զարենցի «Էմալե պրոֆիլը Զեր» շարքը, որն ունի նաև «Գալանտ երգեր» ենթավերնագիրը: Դա Տերյանի «Կատվի դրախտ» ակնհայտ ազդեցությամբ, նրա ոգով ու շնչով գըրված երգերի մի փունջ է, ուր գործում է Հրեշտակի ու սատանայի, մեծարման ու պսակագերծման նույն տրամաբանությունը:

Շարքի բանաստեղծությունները կառուցված են առերեսութ մեծարման, բայց, ըստ էության, «իդեալական լուսապսակի» պսակագերծման նույն տրամաբանությամբ.

Էմալե պրոֆիլը Զեր,  
Զեր հակինթ աշքերը բիւ—  
Ես այսօր կուզեմ երգել,  
Որուես մի անհայտ ոք Լիւ:  
Արդյոք ո՞ր վարպետը մեծ  
Հորինել է դեմքը Զեր.  
Արդյոք ո՞ր Ոզին տվեց  
Զեր դեմքին լուսե գծեր:  
Կուզեմ երգեր կապել  
Եվ գովել երգով անծիր  
Էմալե պրոֆիլը Զեր,  
Զեր հակինթ աշքերը բիւ:

## Զարենցը ծարավի էր կենդանի բանաստեղծության:

Հիմա շատ են երգիները—հոգու ուզած տաղը չկա,  
Ամենայն տեղ ինդություն է՝ սրտի ուզած խաղը չկա,—

այսպես գրեց նա «Տաղարանի» տասնչորսերորդ (ԺԴ) գլխում:

Այս զգացողությամբ՝ անբավականության նշանի տակ («սրտի ուզած խաղը չկա...»), նա հյուսեց «Տաղարանը», ձևանալով «սրտի խաղը» ասող նորօրյա Աշուղ-Տաղառաց: Նա ձեռքն առավ աշուղի ավանդական սազը՝ հընչեցնելու անարգեստ կենցաղի, կենդանի գեղեցկության, մեծ աշխարհի գնահատության երդեր. «Երգեմ պիտի գիշեր-ցերեկ—ու սրտի խաղ պիտի ասեմ»:

Սովորական սիրո լիարժեքության երգը որոնելիս, Զարենցը, անտարակույս, լուծում է նաև ոճային խնդիրներ. նա գիտավորյալ պարզեցնում-հասարակացնում է վերաբերմունքի գրական եղանակները՝ դիմելով աշուղական պոեզիայի արտահայտությանը: Ոճային խնդիրների լուծումը, սակայն, առաջնային, գլխավոր խնդիր չէ: Ոճից ավելի Զարենցը կարեռում է իրեն զբաղեցնող բարոյախոսությունը հարազատ միշավայրում և բնական գույներով արտահայտելու հարցը:

Միշավայրի խնդիրը լուծելու համար բանաստեղծը հատուկ միտումով վերցնում է կենցաղի այն հատվածը (Հավլաբարի թաղ, քուշաներ, ֆայտոն, խնջույքի սուփրա, քեֆ, պանդոկ, դուքանդար, հաց ու գինի և այլն), որտեղ առավելագույն որոշությամբ է երևում հասարակության գեմոկրատական-պլեբեյական խավերի զգացմունքների լայնությունը: Սիրո և խրախճանքի սովոր քաղաքային պլեբեյը բանաստեղծին երևում է բարոյական «կանոններով», որոնցից ճառագայթում է աշխարհի գրական ընկալման թեև տարերային, բայց որոշակի աշխարհայացք: Զարենցին գրավում է այդ յուրօրինակ հոգերանության մարդասիրական նստվածքը:

Այս իմաստով բնորոշ է «Տաղարանի» շորրորդ (Դ) երգը, որ մասսայականանալով դարձել է հայ ժողովրդի ուրախության խնջույքներից ու խրախճանքներից անբաժան խոստովանություն.

Յայտոն նստած՝ անցնեմ քուշով, պատուհանից վրես նայես՝  
Էշիդ անքուն սիրոս ընկնի—ու լաց ըլիմ մինչև էգուց:

Եելքս քամուն, հօվին տված՝ երթամ ընկնեմ դուքան ու բաղ՝  
Ընկերների սուփրին գինի ու հաց ըլիմ մինչև էգուց:

Երթամ—ուրիշ գողաների գիրկը դնեմ գլուխս տաք՝  
Փռ էդ անուշ, աղիդ տեսքով հարրած ըլիմ մինչև էգուց:

Սիրո և բարեկամության խսկական ասպետ է Զարենցի սիրահարը: Դա, սակայն, Դեղանի Տիկնողը սպառարկող ու նրա քմահաճույքներին գերի ասպետը չէ: Դա ժողովրդական-պլեբեյական բարոյախոսության համն ու հոտը ճաշակած, այդ բարոյախոսության բարձր շափանիշները առօրյա վարքադին խառնած, աշխարհի առաջ լայն սիրտը բաց արած մարդն է, որ կարող է սիրո նեղ սահմանները ընդարձակել մինչև համատարած սիրո բարձունքը և այդ բարձունքից նայել կյանքին՝ «ամեն մարդու ընկեր ըլիմ» վսեմ բաղձանքով:

Մինչև տասնութերորդ տաղը՝ «Աշխարհիս մեջ ես էլ մե օր կանցնեմ...» (ԺԾ), «Տաղարանը» ծարավում է ինքնակենուագրական նյութի՝ Տաղասացի ու Գողայի հարաբերությունների, Տաղասացի ու խալսի առնչությունների, նրա պես-պես ապրումների հայտարերման ու գնահատման ուղղությամբ: Սիրա-

վեպի դասական, կանոնիկ կառուցվածքի մեջ (Տաղասաց, Գողալ, Հասարա-կական միջավայր) Զարենցը շարադրում է իր ըմբռնումների համակարգը՝ աշխարհի ներդաշնակության՝ «Հակասությունների հաշտեցման», լայն մարդասիրության ու մարդկայնության բարձր իդեալի, անկեղծ ու սրտալի բանաստեղծության, ժողովրդական-պլեբեյական բարոյախոսության առավելության ու ներման թեմաների մասին։ Այդ կառուցվածքում՝ որպես բոլոր թեմաներից ածանցված հիմնական բովանդակություն, անցնում է «աշխարհի մարդկայնացման» գաղափարը։ Դրանով «Տաղարանը», իսկապես, դառնում է մեծ կյանքի օրհներգություն, անկախ այդ կյանքի մեջ եղած ողբերգական իրադրություններից ու անկատար կողմերից, վշտից ու ցավից, անկախ աշխարհի զվարթ լույսերին առընթեր ստվերներից։

Բանաստեղծական սուր, անսխալ բնազդը Զարենցին թելադրեց, որ առանց հայրենիքի՝ որա աշխարհագրական կոնկրետ անունով (Հայաստան), դժվար կլինի ամփոփել համատարած սիրո ու ներման՝ աշխարհի ներդաշնակության իր ինքնատիպ կոնցեպցիական։

ՄՌ երկրի սրտում թախիծ կա այնքան,  
ԵՎ այնքան ներռում—ՌՌ երկրի սրտում, —

այս վիմագիր խոսքով է Վահան Տերյանը բանաձեռ հայ ժողովրդի հազարամյա պատմության ամենաբնորոշ առանձնուհատկությունը։

Ներման հոգեբանության պատվանդանի վրա է դրվում նաև այն մեծ ու անբեկանելի հավատը, որ անցնում է Զարենցի տասնիններորդ (ԺԹ) տաղի միջով։

Հազար ու մի վերք եռ տեսել—էլի կտեսնես,  
Հազար խալխի ձեռք ես տեսել—էլի կտեսնես։

Աշնան քաղած արտի նման՝ հազար զոհերի  
Զհավաքած բերք ես տեսել—էլի կտեսնես։

Դլովսդ շար քամուն տված պանդսւտի նման  
Հազար տարվա հերք ես տեսել—էլի կտեսնես։

Խարեկացի, Շնորհալի, Նաղաշ Հովնաթան—  
Ինչըան Հանճար, խելք ես տեսել—էլի կտեսնես։

ՔՌ Զարենցին լեզու տվող երկիր Հայաստան,  
Հազար ու մի երգ ես տեսել—էլի կտեսնես։

Հայոց պատմության մի ամրող տեսություն է անցնում մանրանկարչական տասնատող գաղելում՝ Հազարամյա վերքերից ու զոհերից մինչև լուսավոր ապագան, խորտակումից մինչև Հառնում, մահից մինչև «Հրաշալի հարություն»։

Զարենցը, ինչպես և Վահան Տերյանը, ինչպես և Մարտիրոս Սարյանը, դիպուկ նկատել է Մարիկետա Շահինյանը, կարողանում է «նյութի սուր անհպիստ—շարժումը» լուծել «զարմանալի հանգիստ ներդաշնակությամբ», կարողանում է նվաճել «անհանգստությունը մարելու» արվեստի գաղտնիքները<sup>13</sup>։

Իսկ «ներդաշնակության գաղունիքին» համար պայմանն այն է, որ Զարենցի համար այլևս աշխարհը ոչ թե խորհրդավոր, մշուշապատ էություն է, ոչ թե անվերծանելի ու անճանաչելի առեղծված է, այլ լույսով ողողված, ճանաշելի և հասկացված արժեք։

**«Տաղարանը» փակվում է «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությամբ:**

«Եթե «Տաղարանն» իր քսան տաղով նմանեցնենք քսան բացվածքից բաղկացած ճարտարապետական տարածուն շենքի, — ասում է հետազոտողը, — ապա նրա վերջին՝ «Ես իմ անուշ Հայաստանի...» տաղը այդ շենքի ավարտական դրվագն է, նրա վեր սլացող կոթողը»<sup>14</sup>:

«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը, մտնելով ժողովրդի մեջ, դարձել է բանաստեղծական կտակ ու ոչ պաշտոնական ազգային հիմն:

«Ես իմ անուշ Հայաստանին...» ազգային տոն է ու ժողովրդական տոնախմբություն, ուր համախմբված է Հայաստանի ամբողջ պատմությունը՝ առասպելական հնագարից մինչև մեր ժամանակները:

«Դա եղակի, աննախընթաց բան է, — գրում է Ավ. Խսահակյանը: — Նույնիսկ կարելի է ասել, որ եվրոպական, համաշխարհային գրականության հայրենասիրական ժանրի բանաստեղծությունները այդպիսի թափով, այդպիսի ընդարձակ խորքով գրված բան գոնե ես չեմ հիշում»<sup>15</sup>:

Ինչո՞վ է այդպիսի մի գործ, որ աշքի շի ընկնում ոչ մետաֆորական-փիլիսոփայական բարդությամբ, ոչ գեղարվեստական հնարամտությամբ: Դեռ ավելին, ինչո՞վ է զարմանալի մի գործ, ուր բառերը վերցված են իրենց ուղղակի իմաստներով, ուր պատկերային շարակարգը ծավալվում է համարյաթե միապաղադ ընթացքով, ուր կիրառված է արեւելյան բանաստեղծության հանրահայտ կառուցվածքը:

Ինչո՞վ է «զարմանալի զարմանք»:

Նախ և առաջ՝ հայ ժողովրդի ազգային գոյր՝ «ազգային սուրստանցիան» նրա ներքին հոգեկան ուժերի զարգացման տրամարանությունը և բնավորությունը արտահայտելու բացառիկ ուժով և խորությամբ:

«Ես իմ անուշ Հայաստանին...» ընդամենը շորս քառյակ է, շորս ավանդական տուն, բայց տասնվեց տողի մեջ բանաստեղծը կարողացել է իրացնել ժողովրդի մաքառման ու գոյատևման փիլիսոփայությունը, մաքառում, ուր իրենց վճռական տեղն ունեն Հայոց Պատմության հոգեոր լույսի աղբյուրները՝ սկսած հնամենի բառից մինչև հավերժական Արարատը:

Եթե ցանկանանք որոշել «ազգային գոյր» դոմինանտը՝ հանված այս բանաստեղծության տրամարանությունից, ապա դա կինի լույսը, որ կայծակում է նրա ամեն մի տողից ու բնութագրությունից; Երա առանձին մասերից ու ամբողջությունից:

Բանաստեղծության երկրորդ կարևորագույն հատկանիշն այն է, որ Զարենցը ժողովրդի պատմական երթի ու մաքառման թեման յուրացըել է ազգային մտածողության, ազգային զգացմունքի ու բարոյախոսության, ազգային շնչի ու լեզվի հարուստ պաշարների կինոտրոնացումով:

«Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծության տողերում պատմությունը շնչում է հայերեն. նրանում ուժեղ կնիք է զրել Հայաստանի պատմության դարավոր շունչը: Տաղի բարոյախոսությունը բեկում է հայերեն. նրանում երեսում են ժողովրդի բարոյաբանական խոր նստվածքները: Տաղի ոգին կայծակում է հայերեն. նրանում յուրաքանչյուր բառ ու պատկեր, տող ու պարբերություն իրացնում է հայոց մաքառման ոգին:

Եվ, վերջապես, երրորդ կական հատկանիշը բառի ու էպիտետի, հնչերանգի ու շարահյուսության գոսական ներդաշնակությունն է:

Աշխաղական բանաստեղծության՝ «մուխամմազի», կապանքված կաղապարի մեջ Զարենցը ստեղծել է մի սյուժե, ուր ամեն մի տող ու քառյակ մի ինքնուրույն միավոր է, և շարժման մեջ է զնում մյուսին, և միասնանում է նրա հետ։ Տեղի է ունենում, այսպես կոչված շղթայական ռեակցիա, ուր ոչինչ չի մնում իր տեղում, ամեն ինչ տեղաշարժվում է՝ ժողովրդի «ազգային գոյի» պատմությունը հասցնելով «Իմ կարոտած սրտի համար ոչ մի ուրիշ հեքիագ շկա..» մակագրությանը։

## 6

Նոր ժամանակների հոգեբանությունն արտահայտող հեղափոխական բանաստեղծությունը ստեղծագործելու շարենցյան մղումներն առանձնապես սուր կերպարանք ստացան 1922—1924 թթ. ընթացքում,—անհանգիստ, բուռն, կըրքերով շիկացած տարիներ,—որ Զարենցին՝ կովող բանաստեղծին, նետում էին մեկ այս, մեկ այն գրական շավիղներ՝ գտնելու արտահայտման նոր ոճն ու նոր համակարգը։

Զարենցը, որ մոսկովյան շփումների շնորհիվ քաջ ծանոթ էր ոռու իրականության մեջ հեղափոխությունից հետո ձևավորված բազմաթիվ գրական խմբակցությունների տեսական առաջադիմություններին, նոր հոսանքների գեղագիտական դեկլարացիաներին և սեփական ուժերի գիտակցությամբ իրեն համարում էր անոր պոեզիայի «օրենսդիր, — ձգտում էր շուտափույթ լուծել հայ պոեզիայի արմատական վերակառուցման, նրա զարգացման հին ուղիների վերաշրջման խնդիրը։

Դուրգեն Մահարին «Զարենց-նամե» հուշագրության մեջ «Երեքի» Դեկլարացիայի շրջանը բնորոշում է հետևյալ դիպուկ խոսքով. «Կրակ՝ Տերյանի և սալոնային կանանց վրա»<sup>16</sup>։

Ինչպես Դեկլարացիան, 1922—23 թթ. գրած Զարենցի հոդվածները ևս հայտաբերում են հոգեբանական հակասություններ. մի կողմից գրականության նորոգման պահանձ՝ կապված տնտեսության ու կենցաղի մեջ կատարված արմատական հեղաշրջման հետ, մյուս կողմից՝ այդ պահանջի յուրացման սխալ ու հակապատմական հրահանգներ։

Ուշագրավ է, որ բանաստեղծական նոր ձեր խնդիրը դնելով, Զարենցը հրաժարվում է կյանքի արտացոլման «կոսմիկական շափանիշներից», դարձնոցական հոսանքի՝ բանվորազարկի բանաստեղծության, վերացական պաթոսից և, հակառակը, գեղարվեստական նոր պատկերի ակունքը համարում է այն սոցիալական կոնկրետ միջավայրը, որտեղ ձևավորվում են հոգեբանության նոր գծերը. «Մենք մեր աշխատավորությանը պետք է տանք նրա հոգեբանությանը և կենցաղին բովսնդակությամբ ու ձեռվ համապատասխան նոր երկ, և ձեր խնդրում պետք է ելնենք մեր այսօրյա կենցաղից»։

Նրա «դասակարգային հոգեբանությանը» անհարազատ էին «ապաղասակարգայինների»՝ կ. Տերյանի «կիսայամբ-կիսադակտիլներով» գովերգված «սալոնական անկենդան կանայք» և Ավ. Խահակյանի «գեկուլտե հագած գեղջկուհիները», որոնց, մեծ սխալ գործելով, Զարենցը հատկացնում էր սիմվոլիստների գեղագիտությանը։

Մինչև ոռու սիմվոլիստները և նրանց հայ հետևորդները, ըստ Զարենցի, անհատի ազատագրման պայմանը համարում էին «անձնական հաճույքը», մինչ պրոլետարական (հասկանալ՝ դարբնոցական) բանաստեղծները լավագույն դեպքում բավարարվում էին դիմակների վերացական խորհրդանշան-

ներով, Զարենցը բերում էր միանգամայն ուրիշ հուզապրում։ Դա բանաձևված է նրա հետևյալ խոսքում։

Ոչ ցնորք ես դու մի դալուկ,  
Ոչ հոգու մի հրաշք անգո...»

Թափանցիկ այս ակնարկով Զարենցը առհասարակ անպետք էր համարում Եղիշան Քնարը՝ շշուկների, շշոնչների, տրամադրության բանաստեղծությունը և, Հակառակը, առաջին պլան էր մղում ուժի, արագության, թափի ոճը։

Այս ոգով է գրված «Ծոմանս անսերի» ծրագրային մուտքը՝ «Ոչ սկիզբը», ուր Զարենցն իր «երգի ղամշիով» մտրակում է տերյանական սիրերգության և, առհասարակ, ավանդական-լուսինային քնարերգության «ցնորքները», հին արվեստը («Մի՞թե ձեզ նայեմ, միթե ձեզ, էսօրվա կուզիկ պոետներ») և նրանց տեղը դնում հետևյալ անսեր երգը։

Ծոմանս եք ուզում,  
Կամ ոռման.  
Խնդու չէ, առման տամ ձեզ  
Բայց  
Գիտե՞ք—  
Ծոման անռոման  
Կամ ոռմանս անսեր...»

Սովորաբար «Ծոմանս անսերի» մասին խոսելիս նրա կողքին են դնում և նրա պաթոսին են հավասարեցնում «Պոեզոգուռնան» (1922) բանաստեղծությունների մի շարք, որով Զարենցը փորձում էր՝ քանդելով պոետական հին կանոններն ու կաղապարները, յուրացնել նոր իրականության նյութը։ Տարակուսելի չէ, իհարկե, որ «Ծոմանս անսերի» և «Պոեզոգուռնայի» մեջ Զարենցը հետեւում էր Մայակովսկու ֆուտուրիստական ձևարարությանը և ցանկանում էր նրա ոգով մեկնաբանել պոեզիայի նոր առարկան։ Ավելին, «Պոեզոգուռնայի» մեջ Զարենցի բանաստեղծական պատկերը տրվում է նաև դարբնոցականների հուշակած Երկաթի ու Պողպատի, Շոգեղալուստի ու Մեքենայի տարերքին, Պրոլետկուլտական «ցեխային» հոգեբանությանը։ Բայց աններելի սխալ արած կլինենք, եթե նույն «Պոեզոգուռնայի» մեջ շտեսնենք և նրա խորապես մարդկային, եսենինյան իմաստով՝ դրամատիկ-բանաստեղծական երակները։

Ինչպես «Ծոմանս անսերը», այնպես էլ «Պոեզոգուռնան» կոչված էին գործնականացնել «Երեքի գեկլարացիայի» տեսական դրույթները։ Բայց եթե «Ծոմանսը...» Դեկլարացիայի՝ հին քնարերգակների սիրո պոեզիան ժխտող դրույթի («Մեր անբիծ...») պատասխանն էր, ապա «Պոեզոգուռնան» իրականացնում էր Դեկլարացիայի դրույթներից մյուսը, այն է՝ պոեզիան ծառայության մեջ դնել ժամանակի հասարակական հոգերանությանը, պատմության նոր վագքին։

Հետևելով «Պոեզոգուռնայի» ֆրագմենտ-բանաստեղծություններից հյուսված «քնարական սյուժեի» ընթացքին, տեսնում ենք շատ բնորոշ մի հոգեբանություն, մի նոր հուզական վերաբերմունք աշխարհի հանդեպ։

Բանաստեղծը, որ իր ամբողջ կյանքում երազել է արևի մասին՝

Ու խաղում էր մեր կտապույտ հոգում  
Արևի լույսը դեղին...»—

Ակել-Հասել է մի հոգեվիճակի, որ տեսնում է արդեն իր երկրի նոր այգաբացը և փառաբանում է նրա շաֆրանն ու արեց:

Այս իմաստով «Պոեզոգունան» 1921-ին գրած և կյանքի անզուգական ընկերոցը՝ Արքիկին, նվիրած «Ութնյակներ արևին» շարքի անմիջական շարունակովթյունն է:

Զարենցի ստեղծագործության մեջ Արևի ութնյակները կարևորում են աշխարհազգացման մի շատ էական մոմենտ. առաջին անգամ բանաստեղծն այստեղ է լիովին, անմնացորդ, ամբողջ էությամբ նվաճում իր վաղեմի երաղը՝ Արեց («Ես երազեցի արևի ոսկին...»), այսինքն տեսնում է իրականացած, հաղթած արեց և նրան է ուղղում իր հոգու ճիշն ու հուզմունքները: «Հիմա ես տրիութեաներ եմ գրում: Տրիութեաներ արևին», — անափ մի կարոտով խոստովանում է Զարենցը: Արևի երգը նույնացնելով երկիր նախրիին, որը ամենից առաջ «արև էր—լուս, կապույտ, հեռու»:

Ութնյակներից յուրաքանչյուրը մի-մի դողանչ է՝ հաղթած Արևին հղված երկրպագության ջերմ խոսք: Վաղեմի շշունջների ու կապույտ կործանումների, մայրամուտային մեռնող արեգակի փոխարեն բանաստեղծը ասպարեզ է բերում հաղթական արևի բոլոր նրբերաններն ու որոշիշները:

Արևային տրիութեաները բանաստեղծի հոգեկան աշխարհի պարզության գեղարվեստական յուրացումներն են: Այդ ութնյակները աշխարհին ու կյանքին ուղղված հիմներգություններ են:

Կապույտից ու մանուշակագույնից հետո՝ ոսկեգեմ արև ու արեգնածին շաֆրան, — այս վառ գույներին հասած բանաստեղծը, բնական է, որ էմալի գունատ պրոֆիլից պետք է գերադասեր իր երկրի երկաթի նոր պրոֆիլը:

Բանաստեղծն ու արևն այնքան են մտերմացել և այնքան են համերաշխավել, որ Զարենցը Մայակովսկու հանգով ու ոճով հայտարարում է.

Ինչ որ չի, չի երազել  
Դեռ ոչ մի պոետ-աստղաբիր.  
Ուզո՞ւմ եք՝ որպես գնդասեղ  
Արեց խրեմ փողկապիս:  
Առնեմ, որպես սինի,  
Երկինքը աստղերի խաղով—  
Ու տանեմ այն հարսանիք,  
Որպես միրգ՝ մի ճութ խաղող:

«Պոեզոգունայի» բանաստեղծական-քնարական սյուժեում երկրի ապագայի դիմումը, բնականաբար, անկախ չէ այն վերաբերմունքից, որ բանաստեղծն ունի անցյալի հանդեպ:

Հույնան ու սրինգը, զուռնաշին ու ծեր սրնգահարը, ձանձրույթ անձրևող փողոցներն ու աշնան տրտում դաշտերը, մի խոսքով՝ «զուռնա-նաղարայի» ու աշնուտի ամրող մթնոլորտը, բանաստեղծի պատկերացումով, մարմնացնում ևն պրովինցիայի բուն էությունը, որի վրա հաղթականորեն արշավում է նոր կենցաղը՝ իր ձևափոխություններով:

Զարենցը «Պոեզոգունայի» հոչակում է «պրովինցիայի մայրամուտը» և նոր կենցաղի ծնունդը. նա հրովարտակում է ազգային նոր իրականության ձևավորումը և հնության պարտադիր, անխուսափելի նահանջը:

Երկրի անցյալ կենցաղը ժխտելու և նոր կենցաղը հաստատելու մեջ երեւան բերելով բավականաշափ արմատականություն, Զարենցը, այդուամենայ-

նիվ, ուղեկան մի ներքին, թաքուն դրամայով է բաժանվում այն գծերից ու գույներից, որ երբեք բնորոշել են իր ազգային իրականությունը:

Հեղափոխությանը «ամենօրյա ծառայություն» բերելու կողմնորոշումը. պոեզիայի մեջ գործնական նպատակներ հայութերելու մղումները Զարենցին տարան դեպի ագիտական, որի արտահայտությունն էին «Կապկազ-թամաշան» (1923), «Կոմալմանախ» բանաստեղծությունների ժողովածուն (1924), «Մաճ-կալ-Սաքոյի պատմությունը» պոեմը (1924), «Մտինեսի մասին» ագիտ-սատիրը (1924) և այլն:

1923—24 թվականները Զարենցի կենսագրության մեջ մտան «իրարամերժ» գեղարվեստական միտումներով: Մի կողմից դասական օկտավներով գրված, նրբագեղ ուապսողիա՝ «Ասպետական», մյուս կողմից հանրամատչելի զրուցի ոճով կառուցված «Մաճկով Սաքոյի պատմություն», մի կողմից մուլտիպլիկացիայի բարդ սկզբունքներով շարահյուսված «Մոռուղեն ամուսիններ...», մյուս կողմից կոմալմանախյան պարզունակ հրապարակախոսություն, մի կողմից կոնստրուկտիվիստական ֆանտաստիկա («Ես և Խլիլը»), մյուս կողմից բանաստեղծության ռեալիստական ձև:

Հարց է ծագում. Հստա՞կ էին, արդյոք, Զարենցի որոնումները, արդարացվա՞ծ էին, արդյոք, անցումները մի բենոից մյուսը:

Այս Հարցերին դժվար է պատասխանել կամ հաստատական կամ ժխտական նշաններով: Անտարակույս, շարենցյան որոնումներում կան բանաստեղծության դասական կառուցվածքների ու դասական մոտիվների դեմ ուղղված տաքարյուն խոռվարարության զգալի տարր, բայց մեծ սխալ արած կլինենք. եթե խաչ քաշենք այդ փորձարկումների վրա և շպարզենք դրանց հոգեբանական-սոցիալական բուն շարժառիթները:

Բանն այն է, որ Զարենցն իր որոնումներով ցանկանում էր հայ բանաստեղծության մեջ բերել իրական կյանքի շունչը, ցանկանում էր ստեղծագործել և հեղափոխության համար, և հեղափոխության հետ միասին:

Առաջին տպագրությամբ Զարենցը մեղանչում է գեղեցիկ արվեստի դեմ և ցանկանում է պոեզիան փոխարինել «առարկաների» դիկտատուրայով: Բայց նրա «մեղանչումը», նրա ընդգծված հակագեղագիտական-հակապոետական գիրքավորումը («Ոչ մի Պառնաս») ավելի բարդ ու ավելի նուրբ երևույթ է, քան կարող է թվական առաջին հայացքից:

«Հակագեղագիտական» գիտակցված դիրքերով Զարենցը փորձում էր լուծել իրերի էության մեջ թափանցելու խնդիրը, փորձում էր հաղթահարել կոնկրետ-առօրեական «նյութի դիմադրությունը» և քնարական անառարկա պերճախոսության փոխարին հոշակել բանաստեղծական խոսքի ճշգրիտ, կօնկրետ-նյութական, բնական ձևը:

Զարենցի գեղագիտական ըմբռնումների մեջ հայտնված ռմարմնացած, նյութականացած խոսքի սկզբունքը, բնականաբար, նրան հարազատ է դարձնում այն բանաստեղծներին (Վլ. Մայակովսկի, Էմիլ Վերհարն, Ռուլտ Ռիտմեն), որոնց գործերում իրերն ու հարաբերությունները երևում են իրենց նյութական կարծրությամբ, թանձր պատկերավորությամբ, ամենակոնկրետ հատկանիշներով:

Պատահական չէ, որ Զարենցը այս նույն ժամանակ՝ 1923-ին, թարգմանություններ է կատարել մեծ ֆլամանդացու՝ Էմիլ Վերհարնի («Բանկիր», «Կինը ճամփամիջին», «Լոնդոն», «Դեկտեմբերը») և «անդրովկիանյան սպիտակամորուս ծերունու» Ռուլտ Ռիտմենի («Մեր օրերը», «Եվրոպա») պոեզիայից,

թարգմանություններ, որոնք իրենց «մասնակցությունը» բերին Զարենցի ստեղծագործության մեջ հայտնված «երկու աշխարհի» թեմայի բանաստեղծական մեկնաբանությանը:

7

XX զարի աղետավոր ու հանցավոր տարիներին հայ հասարակությունը հայացքը մեխեց անցյալին՝ միակ կարծեցյալ ռեալությանը՝ այնտեղ հաստատելու ժողովրդի կողը բած օրորանը՝ հայրենիքի հռովարակերը:

Երկիր նաիրին հակապատմական ու հակաբնական շինվածք չէր, պատմական բովանդակությունից զտված, ինչ-որ անհայտ տեղից ու անհայտ աղբյուրներից վերաքաղված ֆանտաստիկա չէր: Այդ լեզենդը կառուցվեց համադեմոկրատական ազգային շարժման ու տարերքի հողի վրա՝ իրականության մեջ ունենալով իր հոգեբանական կաղապարն ու աղդակները:

Լեզենդը արտահայտում էր ազգային դեմոկրատական շարժման որոշ մակարդակը: Նրա մեջ տեղ գտան իմացական տարրեր շերտեր՝ և մասսաների պարզունակ դեմոկրատական գիտակցության տվյալները, և ազգային ոգու կողմնորոշումները, և ժողովրդասիրական երանգով ներծծված միամիտ ուսուպիաները, և փրկչական վաղեմի պատրանքները, և զարթոնքի հոգեբանության բաղձանքները:

Չնայած այն բանին, որ Երկիր նաիրին հայ ոռմանտիկական գաղափարախոսության ողբերգության ծնունդ էր, — ստեղծվեց ոչ թե այդ գաղափարախոսության հաղթական սպասելիքների, այլ ողբերգական փլուզման ժամանակաշրջանում, — բայց ուներ նստվածքներ, որոնք արտացոլում էին հայ հասարակության գերազանցորեն դեմոկրատական խավերի մաքառման ու հավատի հոգեբանությունը, ընդառաջում էին ժողովրդական սպասումներին:

Այդ իսկ պատճառով Երկիր նաիրին գաղափարը մեր դարի տասական թվականներին սրբացվեց այն աստիճան, որ դարձավ ազգային նվիրական պաշտամունք: Դրա համար էլ այդ գաղափարապատկերի մեջ տեղադրվեց հառնումի՝ իր այրումից ու սեփական մոխիրներից վերակենդանացող փյունիկ-թոշումի, հնագույն առասպեկտի մոտիվը:

Անդիմադրելի մի մղումով փարելով «հառնումի» և «հարության» գաղափարին, ժողովրդի համահավաք գիտակցությունը արտահայտում էր սեփական ուժերի նկատմամբ ունեցած հավատը:

Այստեղից էլ միանգամայն հասկանալի է դառնում, թե ինչու Երկիր նաիրին մտավ ժողովրդի ազգային պատճության ու կենցաղի մեջ իրեն վերածնության խորհրդանշան ու վերանորոգման զինադրոշ, իրեն ազատության համահավաք սպասումներն ու երազանքներն արտահայտող գիտակցության ձև, իրեն դեմոկրատական գաղափարախոսության խարիսխ ու հենարան:

Գրականությունից սպասվում էր այն գործը, որ լայնատարած շառավիղով ընդգրկելու էր ոչ այնքան պատճության կոնկրետ իրադարձերը, որքան դրանց բում էությունը՝ դեպքերի «ոգեկան» բովանդակությունը: Սպասվում էր ոչ թե ժամանակի «գրավոր հիշատակարան»՝ մեմուար, ոչ թե անցուդարձի փաստագրական-վավերագրական շարադրանք, այլ հասարակական ապրումների գաղափարական ընդհանրացում, ամփոփում, երևոյթների պատմական ներծծում:

Հասարակության բում հարցամիրությունը շուտով ունեցավ գեղարվեստական պատասխան. «Նորք» հանդեսի էջերում Եղիշե Զարենցը հաջորդաբար

տպագրեց ազգային նոր վեպի երեք մասերը, որոնք 1926-ին ամբողջացան մի գրքում:

Վեպի առաջին մասը՝ «Քաղաքը և բնակիչները» խորագրով, լույս տեսավ ֆնորդի առաջին գրքում (1922), երկրորդ մասը՝ «Դեպի Նահրի», տպագրվեց հանդեսի երկրորդ գրքում (1923), իսկ երրորդ մասը՝ «Երկիր Նահրի» լույս տեսավ 4—5 միացյալ համարում (1925): Խմբագրական որոշ շակումներից ու ոճական մասնակի միջամտություններից հետո «Երկիր Նահրին» տպագրվեց առանձին գրքով (1926): Սա ուներ «Երկրորդ հրատարակության առթիվ» նոր, լրացուցիչ առաջաբան («Նորք»-ում տպագրվածը սկսվում էր հայտնի Առաջաբանով՝ «Հաղուց-վաղուց մտորում է իմ մեջ...») և Վահան Տերյանի «Երկիր Նահրի» շարքից քաղված բանաստեղծական հետեւյալ բնաբանը.

Երկիր Նահրի, երազ հեռավոր,  
Քնել ես քնքուշ թագունու նման.  
Միթե ե՞ս պիտի երգեմ քնզ օրոր  
Եվ արքայական դնեմ զերեզման:

Վեպի տպագրությունը համարվեց հայ գրականության պատմության նշանավոր երեսությներից մեկը: Ժամանակակիցների պատմելով, Զարենցի գործը իսկական ցնծությամբ ընդունվեց հայ մամուլում և առաջին իսկ օրից դարձավ կանոնագիր, դիտվեց որպես նոր գրականության ուղիների հանգուցակետ. մի այնպիսի երեսությունը ուղարկած է գրականության ժամանակագրական թվականներից մեկը:

«Երկիր Նահրի» վեպի ցնծությաց գնահատության և հասարակական արբեցումի պատճառը միայն նրա գեղարվեստական բարձր որակը չէր, կամ հեղինակի սիրո և ատելության թափը, կամ գրական անսովոր ձերը: Սրանք գեր ունեցան, իհարկե, բայց այդքան լայն հարցասիրության զիխավոր պատճառը ազգության ճակատագրի մասին իսկական ազգային գրականության ստեղծման պարագան էր:

Հրապարակ գալուց անմիջապես հետո «Երկիր Նահրին» գարձավ բուռն և միշտ սաստկացող վիճաբանությունների, կրքուտ և մտադիր բախումների, ուղիղ և ծուռ ընթերցումների շիկացման կետ:

«Երկիր Նահրիի» շուրջը բացված խոսակցությունները դուրս եկան սովորական գրական բանավեճի սահմաններից: Եթե գրական պահպանողականներն ու հնասերները խեթ և անհանդուրժող հայացքով վեպի կառուցվածքն ու ձեր համարում էին ամենաքիշ... գեղարվեստի «բնական օրենքները» խարիսող քմահանույք, տպա գաղափարական ախոյանները, վեպի բովանդակության մեջ տեսնելով «ոռմանտիկական անցյալապաշտության» գաղափարախոսության սուր քննադատություն, կոպիտ հարձակումներ գործեցին Զարենցի անձի ու գործի վրա:

Հայ մամուլի արձագանքներից բացի «Երկիր Նահրին» առանձնահատուկ ուշադրության է արժանանում նաև Ռուսաստանի պարբերական մամուլում:

Ժամանակակիցների պատմելով, ուշադրության գաղտնիքն այն էր, որ ընթերցողները հանդիսում էին ազգային գրականության մեծ երեսութիւն:

Ահա թե անակնկալ հանդիպման մասին ինչ է պատմում վեպի ոռւսերեն թարգմանության առաջին ընթերցողը, և, հավանաբար, նաև վերին աստիճանի բարդ տեխնիկական թարգմանության բանիմաց խորհրդատուն՝ Մարիետա Շահինյանը. «...Եվ ահա այն հեռավոր տարիներին իմ առջև դրեցին Զարենցի «Եր-

կիր Նաիրի» վեպի ձեռագիրը, որը հայերենից ռուսերեն էր թարգմանել Հ. Ս. Խաչատրյանցը: Ես պետք է գրախոսեի այդ ձեռագիրը և նրա համար գրեի առաջաբան: Առաջին իսկ էջի ընթերցումից հետո իմ վերապրած զգացմունքը ավելի ստույգ չէր կարող բնորոշել որևէ մեկ այլ բառ, քան ցնցում բառն է: Ես, իւկական իմաստով, ցնցված էի: Ես զգացի... այն իսկական ֆիզիկական հուզմունքը, երբ դեմ առ զեմ հանդիպում ես արվեստի ճշմարիտ ստեղծագործության: Դրանք կյանքի հավաքյուտ պահերն են: Բայց այդ պահերն անսխալ են: Արվեստի մեջ իսկականը ճանաշվում է մի ակնթարթում և նրա ընկալման՝ հրճվանքը այրում ամեն մի տարակուսանք, ինչպես շատ ուժեղ շիկացումը մի ակնթարթում գոլորշիացնում է նրա վրա ընկած կաթիլը<sup>17</sup>:

Թեեւ հայ ու ռուսական մամուլի արձագանքները տառապում էին անխառն ու պարզունակ սոցիոլոգիական մտածողությանը ու սխեմաներին բնորոշ միակողմանիությամբ, բայց կարեորն այն էր, որ դրանց մեջ խոսքը գնում էր ոչ թե շարքային գործի, այլ գրականության երեւոյթի մասին:

Հայ գրականության,—ներառյալ նաև նրա դասական մեծահարուստ պատմությունը,—ամենից դժվար վերծանվող, բովանդակությամբ և կառուցվածքով ամենից բարդ գրվածքների շարքում է «Երկիր Նաիրին»: Դա է պատճառը, որ ծննդյան օրից մինչև հիմա՝ շուրջ հիսուն տարի, չեն հանդարտվում գանգատներն ու լիճաբանությունները, առաջարկվում են վեպի նորանոր ընթերցումներ և արտահայտվում են նրա ներքին էությունը բացատրող նորանոր մեկնաբանություններ: Մասնավորապես շատ է խոսվում և տարբեր ձեռվ է խոսվում «Երկիր Նաիրիի» գաղափարական պաթոսի, նրա ուղղության և որակի մասին:

«Երկիր Նաիրին»,—իրավացիորեն արձանագրել են Զարենցի ժառանգության հնորյա և մերօրյա բռլոր հետազոտողները,—ուժեղ և անողոք, սուր և մտրակող ծաղր է՝ դաշնակցության հասցեին:

Վեպի հիմնական ուղղությունը,—դարձյալ ճիշտ նկատել են մեկնիշները,—դաշնակցության վարած անհեռատես ու կորստաբեր քաղաքականության, նրա ավանտյուրաների և նրա մի շարք «պատկառելի» ու «համբավավոր» գործիշների վարքագծի պսակագերծումն է:

Զարենցի գրվածքի բովանդակությունը, սակայն, չի սպառվում միայն ազգային ոռմանտիզմի «մաղութի-համոյական» տարատեսակի պսակագերծումով:

Վեպի գաղափարական առաջադրության վերաբերյալ ասպարեզում եղած այս բացատրությունը ճիշտ լինելով, միաժամանակ թերի, անավարտ և էական լրացումների կարոտ բացատրություն է:

Բանն այն է, որ այդ բացատրությունը, ըստ էության, թեանցում է վեպի շատ կարեր խնդիրներ և, ամենից առաջ, հայոց պատմության այն գեղարվեստական կոնցեպցիան, որն առաջ է քաշված վեպում և որն ավելի լայն է նրա կոնկրետ նյութից ու ընթացիկ բավանդակությունից:

Չխորանալով Զարենցի «Երգիծական ներշնչման» շատ նուրբ առանձնահատկության և վեպի ըստ ամենայնի բարդ գաղափարական խորբերի մեջ, ուսումնասիրողները «Երկիր Նաիրին» ներկայացրել են որպես ազգային նվիրական արժեքների նիհիլիստական կոպիտ բացասում, որպես հայ ժողովրդի ազգային նկարագրի ու նրա հերոսական մաքառումների ժխտում և շտապ ևնթաղություններ են արել, թե առաջին անգամ հայ գրականության պատ-

մության մեջ Զարենցը այս վեպում հայտնագործում է «Հայի ազգային բնակությունը»:

Անգամ Մարիետա Շահինյանի նման խորաթափանց ու ճկուն մտածողը, որը շատ բարձր է գնահատում «Երկիր Նախրիի» գեղարվեստական և պատմագրական նշանակությունը, անգամ նա էլ տուրք բերելով ժամանակի սիեմատիկ-պարզունակ մտածողությանը, սխալ ու հապճեպ եղրակացություն է անում վեպի գաղափարական առաջարկության մասին: Մ. Շահինյանը գրում է, որ Զարենցը «...առաջին անգամ, կարելի է ասել, հայի «ազգային տիպարը» մարմնավորեց ոչ թե իդեալական հեռապատկերի սկզբունքով (ինչպես նրան ստեղծել էին մեր գասականները՝ Բաֆֆին, Շիրվանզադեն և ուրիշները), այլ նրա ամենօրյա... էությամբ»<sup>18</sup>:

Դասական հայ գրականության հարուստ, բազմազան բովանդակությունը տեղադրելով սոսկ ազգային-ոռոմանտիկական մոտիվների, «ազգային տենչերի» և հայ մարտիկի իդեալական հեռապատկերի անվերջ որոնումներում ու որոնումների բազմամյա ընթացքին հակադրելով Զարենցի գրվածքի ժայր աստիճան թանձր, խստաշունչ ուսալիզմը, Մ. Շահինյանն այս հակադրությամբ, հենց սկզբից, բացասում է «Երկիր Նախրիի» հայրենասիրական-էպիկական խոր բովանդակությունը, ակամայից գրվանի տակ է դնում «նախրյան ճակատագրի» շարենցյան մեկնաբանության յուրահատուկ երակները:

«Երկիր Նախրի» վեպի ոռուսերեն վերջին հրատարակություններից մեկի Առաջաբանում Մ. Շահինյանը շանացել է վերախմբագրել հայ վեպի էության մասին առաջարկած իր հայացքները, սակայն մինչև վերջ չի կարողացել հաղթահարել նախկին՝ Խմբագրի առաջարբանում (1933) եղած հնացած տեսական կառուցումները:

Ահա հայ վեպի պատմության և «Էության» նոր խմբագրությունը. «Նախահեղափոխական հայ իրականության մեջ լայն իմաստով ըմբռնված ազգային վեպ ստեղծելու համար պետական հող չկար (?)», որովհետև ժողովրդի վերնախավը (?) հայկական գյուղացիական մասսայի խորագույն շերտերի հետ կապված էր ոչ թե ազգայնորեն-պետականորեն, նույնիսկ ոչ թե տերիտորիայով, այլ միայն այդ կապի արհեստական գաղափարով՝ ազգային-ազատագրության պայքարի գաղափարով: Այդ իսկ պատճառով կարելի է ասել, որ մինչև «Երկիր Նախրին» հայկական վեպը, եթե նկատի շունենանք Շիրվանզադեի ուսալիստական արձակ գրվածքները, հասակ է նետել այսպես կոչված «բաղադանքների» հողի վրա: Նա մարմնացրել է հայ մարտիկի իդեալական հեռապատկերը, հայոց ճնշման իդեալական հեռապատկերը և այն բախումների իդեալական հեռապատկերը, որ ծնվեցին դասակարգային պայքարի ոռոմանտիկայից: Հայ վեպը չի յուրացրել այն կոնկրետ իրականությունը, ուր ապրում էին ժողովրդի հիմնական՝ աշխատավոր, մասսաները: Իր ժամանակին այդպիսի գրականությունը հրատապ էր, նա տվել է բազմաթիվ խոշոր երկեր, թեև դրանցից մի քանիսը, իրենց արմատներով մխրճվելով գաղափարախոսական հեռապատկերների աշխարհի մեջ, անխուսափելիորեն ստացան պայմանականության կերպարանք և ավելի ազգակից էին հրապարակախոսությանը, քան մոնումենտալ արվեստին: Հրապարակախոսությամբ ողողվեցին, օրինակ, Բաֆֆու վեպերը, դա զգացվում է նույնիսկ «Մեծապատիվ մուրացկաններում»:

Զարենցի գաղափարական ծրագրի և վեպի էության վերաբերյալ արտահայտված միակողմանի հայացքները հետևանք էին նաև այն բանի, որ քննա-

դատությունը, հատկապես քսանական թվականներին, սեղմված էր որոշ կադապարների ու նախադիր սիեմաների ճնշիչ պատերում:

Վերլուծությունը հարմարեցնելով առօրյա հրապարակախոսական նկատառումներին կառչած ելակետային հրահանգներին, գրական քննադատությունը զանց էր առնում ոչ միայն վեպի երկրորդ պլանը, — տեքստի հետ անընդմեջ գործող և նրան «Հակադրվող» ենթատեքստը, — այլև այն «Կողմնակի», լրացուցիչ աղբյուրները, որոնք անուղղակիորեն պարզաբանում են Զարենցի գեղարվեստական կտավի ուրույն գաղտնիքներն ու բանաստեղծական խորհուրդները:

Այսպես, առաջին տպավորությամբ ուղղակի մերձեցման ոչ մի եզր շունեն «Ես իմ անուշ Հայաստանի...» բանաստեղծությունը և «Երկիր Նաիրի» պուեմանման վեպը:

Նույն՝ 1922 թ., երբ «Նորք» հանդեսում արդեն տպագրվում էր «Երկիր Նաիրի» առաջին մասը, Զարենցի «Տաղարանը» լրացվեց «Ես իմ անուշ Հայաստանի...» տաղով՝ հայ քնարերգության ամենից ներշնչված, ամենից անկեղծ ու սրտաբուխ փայլատակումներից մեկով:

Հարց է առաջանում. կարո՞ղ էր, արդյոք, նույն գրիչը նույն տարում նույն առարկայի մասին հյուսել և պամֆլետ, և հիմն, կարո՞ղ էր արդյոք ասպարեզ հանել այդքան «ծայրահեղ», իրար բացասող, իրար հերքող գործեր։ Մանավանդ, երբ այդ գրի տերը Զարենցի պես իր երազների ու մտորումների, իր զգացմունքների ու իդեալների մեջ հետեղական-անդրդվելի խառնվածքն էր։

Հազիվ թե։

«Ես իմ անուշ Հայաստանին...» շնչով ու ոգով այնքան հարազատ է «Երկիր Նաիրի» վեպին, որ իրեն բնաբան կարող է դրվել նրա ճակատին կամ էլ մի երկրորդ Առաջարան՝ մուտք, լինել նրա համար։

Նորից կարող են հարց տալ՝ ինչպե՞ս հաշտեցնել երկու գրվածք, երբ դրանցից մեկում Զարենցը դրսեղորում է բացասման այնպիսի մոլեգնած ու հզոր կիրք, որ թվում է, թե իրականության մեջ ոչ մի լուսավոր բան չի տեսնում, իսկ մյուս դեպքում ազգային պատմությունն ու կեցությունը երկում են իրենց ամենալուսավոր, ամենակեալական, ամենաբանաստեղծական մարմնացումներով։ Ինչպե՞ս հաշտեցնել երկու կտավ, որոնցից մեկում իշխում են բացասող, դատապարտող գույները, իսկ մյուսը բերում է քնարական հաստատման այնպիսի անլուկի շոնչ, որ ազգային պատմության մասունքները բարձրացվում են երկինք։

Եվ, իսկապես, ինչպե՞ս հաշտեցնել, — սա դեռ բավական չէ, — մերձեցնել երկու գրվածք, որոնցից մեկում ազգային հոգեբանությունը ներկայացվում է որպես ամենայն ծիծաղելիի, անբնականի, անհեթեթ վերաբերմունքի աղբյուր, իսկ մյուսում այդ նույն հոգեբանությունը հրեսում է իրեն ազգային հպարտության անսասան պատվանդան, որոնցից մեկում ասվում են անհեծքի խոսքեր, իսկ մյուսում ազգային պատմության ավանդական երկույթները հաստատվում են աղոթքի աղնվությամբ։

Մահմերգն ու սգերգը ինչպե՞ս հաշտեցնել օրհներգի ու օրորոցի երգի հետ։

Արդյո՞ք առաջինը չի ժխտում երկրորդը, արդյո՞ք դառն ու փշաքաղ վեպի պարողիան չէ բանաստեղծության անսահման նուրբ կառուցվածքը, որի վրա Զարենցը հաստատապես դրոշմել է Հայաստանի բանաստեղծական կերպարը։

Ո՞րն է գեղագիտական այս ճոճվածքի բացատրությունը։

Արդյո՞ք մենք գործ ունենք «երկու Զարենցի» հետ, ինչպես կարծում էին գաղափարական ընդդիմախոսները:

Խնդրի էությունն այն է, որ Զարենցի գրիշը անկեղծ էր և ժխտման, և Հաստատման ժամանակ, և՝ երգիծանքի դառն մեղեղիներ հնչեցնելիս, և՝ սիրո քնարական խոստովանություն անելիս: Այս գեղագիտական պարագոբանի հիմնավորումը պետք է փնտրել երգիծանքի բազմաթիվ առանձնահատկություններից մեկի՝ նրա «անտրամարտնական» էության մեջ:

Քաղաքական կամ այլ տեսակի որևէ իդեալ երգիծանքը հաստատում է հակառակ ծայրից՝ ժխտումով է հաստատում: Նեկրասովին է պատկանում այս «անտրամարտնական» էության դասական ձեակերպումը, որ առաջարկել է Ն. Վ. Գոգոլին բնութագրելիս. «Սեր է քարոզում բացասման թշնամական խոսքով»:

Զարենցի բացասումն ունի սիրելի, ամենաթանկ և սրբության շափ հարազատ երևույթը՝ նախրի երկրի ժողովրդական արժեքավորումը, անհարազատ նստվածքներից հեռացնելու, նախրիի բուն էությունն անկայուն փրփուրներից սահմանազատելու և միայն էությունը, որ ժողովրդի գոյի իրական ու հավերժական սկզբունքն է, հաստատելու վսեմ նպատակ:

Զարենցն իր ժողովրդի և իր հայրենիքի բարբարոսական խոշտանգման ականատեսն էր:

Զարենցը տեսավ, թե ինչպես իր եզերքը, որ կոնկրետ աշխարհագրական մի անկյուն էր, ժամանակի մեջ մեխվեց որպես արյունոտ հարցանիշ:

Պատմության աղետներից ցնցված մարդիկ իրենց շփոթված հայացքները գամեցին հեռավոր դարերին, նրա խորքերից հանելով հայրենիքի նախապատմական անունը, որպես գոյատեսման և «հոգեոր Հայաստանի» խորհրդանշան:

Իր պատմական հայրենիքը՝ ժողովրդի գոյության օրորանը, կորցրած ժողովրդի գիտակցության և հոգեոր աշխարհում գոյացած «շեղյալ նախրին», աշխարհագրական քարտեզներում և ոչ մի տեղ չպաղեցնող այդ «խորհրդավոր լեգենդը» «որտեղից մեյդան ընկավ», — հարցնում է Զարենցը և շտապում ասել, որ դա ամենսին էլ իր հորինածը չէ, որ լեգենդի հայտնությունը կապված է պատմական ու հոգեկան ինչ-ինչ երևույթների հետ. «Սիրելի ընթերցող! Ես չեմ հնարել այդ անունը և պարզապես չգիտեմ, թե ի՞նչ է նա նշանակում: Դուցե «նախրի» նշանակում է ցնորք. ո՞վ իմանա: Դուցե և նշանակում է՝ «անքաշ պանիր», աստված ինքը գիտե: Կամ, գուցե, «նախրի» այն գարին է նշանակում, որ տեսել է երկարական քեռին իր այն նշանավոր նրազում: Զգիտեմ: Եվ ի՞նչ նշանակություն ունի վերջապես, թե ի՞նչ է նշանակում «նախրի»: «նախրին»— նախրի է— պրծավ գնաց: Պայմանավորվենք միայն, որ դա, մի շարք այլ բաներ նշանակելուց բացի, մի երկրի անուն է, ինչպես Սողոմոնը— մարդու և... եվ նորից— խոլընդոտ, սիրելի ընթերցող— Ռուտեղ է, ո՞րն է այդ երկիրը— կարող ես հարցնել դու հիմա, — և ես նորից կարող եմ մնալ քիթս կախ, այսինքն՝ շվարած: Շվարած ոչ թե այն պատճառվ, որ չգիտեմ այդ երկրի տեղը, այլ այն հասարակ պատճառվ, որ իմ հավաքած պատմական և աշխարհագրական ստույգ տեղեկությանց նայելով— այդ երկիրը շատ քիչ է նման գոյություն ունեցող այլ երկրներին, ասենք— Արգենտինային, Չիլիին, Տաճկաստանին, Ռուսաստանին, կամ թեկուզ Հայաստանին կամ Ալբանիային... Քիչ է նման ոչ թե իր աշխարհագրական դիրքով, բնակիչների կազմով, պետական սիստեմով և այլն, այլն... Հենց այս «այլումն է» բանը, սիրելի ընթերցող: Այս «այլն» է ահա, որ ձեռդնթափ է

անում ինձ, քարից-քար խփում, խայտառակում: Բանն այն է, որ այդ «երկիրը», այդ շարաբաստիկ «Նախրին», ինչպես բանաստեղծներն են հաճախ ասում իրենց գերերկրային սիրուհիների մասին—«և կա, և չկա»: Կա, իհարկե, կա, եթե ոչ ինչպես պիտի ապրեին «չեղյալ» այդ երկրում մի շարք այնպիսի պատկառելի մարդիկ, ինչպիսիք են Գեներալ Ալուզը, Օսեփ Նարիմանովը, քոռ Արութը, պ. Մարուքեն, —ո՞րը թվեմ: Մարդիկ, որոնց երկրային գոյությունը, ինչպես տեսնում եք, ոչ մի դեպքում չի կարելի, իհարկե, կասկածի ենթարկել: Եվ, միևնույն ժամանակ, չկա, որովհետեւ... եթե նա լիներ—ապա ուրեմն ինչո՞ւ նա պիտի անվանվեր «Նախրի»—այսինքն կրեր մի անում, որը դուք չեք գտնի այսօր և ոչ մի աշխարհագրական քարտեղի վրա»:

Պատմական մեծ իրադարձությունից՝ հեղափոխությունից հետո, Նախրին, անտարակույս, ուրիշ կերպ է երեսում Զարենցին: Նա ցանկանում է իր խոսքն ասել թեև արդեն «Հնացած», բայց և շմոռացված խնդրի մասին, շարունակում է որոնել Նախրին, որոնել ոչ թե կորած՝ տերյանականը, այլ գտածը՝ «Հակատերյանականը»:

Այլ կերպ ասած՝ Զարենցը որոնում է Նախրիի նոր տեսանկյունը:

Այս խնդրի մասին ամենայն հստակությամբ, առանց ծածկագրության, ուղիղ և որոշ գրում է վիպի քնարական Առաջաբանում: «Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում: Ի՞նչ ենք եղել և ի՞նչ պիտի լինենք վաղը»:

Քնարական մտորման եղանակով ընթերցողին ուղղված այս հարցը, եթե թարգմանենք հասարակագիտական տերմինաբանության լեզվով, ապա կըստանանք հետեւյալ սխեմա՝ ի՞նչ ճանապարհ է անցել ժողովրդի պատմությունը և ի՞նչ ուղիներով է նա անցնելու այսուհետեւ:

Ուրիշ խոսքով, Զարենցին գրադեցնում է ոչ միայն ժողովրդի եղեռնապատումը, այլև հետաքրքրում է Նախրյան երկրի հեռավոր պատմական անցյալը, իսկ առաջին հերթին՝ ապագա ուղիները: Անցյալի, ներկայի և ապագայի ամրող համադրությունը:

«Ի՞նչ ենք մենք և ո՞ւր ենք գնում...»:

Այս կենտրոնական, գլխավոր հարցի տեսանկյունով էլ Զարենցը դառնում է երկիր Նախրիի գաղափարական առաջադրությանը, պարզելով, ամենից առաջ, որ երեւլյն ունի երկու կողմ, երկու քեռացված սկզբունք:

Դրանցից մեկը երկիր Նախրիի ժողովրդական պատկերացումն է, այսինքն՝ այն պատկերացումը, որ ժողովրդի դարավոր, առողջ և ազնիվ տոշորումների, նրա երազների բնական շարունակությունն է:

Դրանցից մյուսը՝ բուրժուական պատրիոտիկայից գաղափարախոսության վրա կառուցված պատկերացումն է՝ ոսկեզօծված առեղծվածի խորհրդավոր շղարշով:

Առաջին պատկերացումը իրականություն դառնալու ժողովրդական երազն է, երկրորդ՝ իրականության կենսական հարցերից հեռացող «Հավելյալ աշխարհի» մշուշն է:

Զարենցը իր առաջադրած խնդրի («ի՞նչ» և «ո՞ւր») լուծմանն է դիմում երկիր Նախրիի ժողովրդական ու բուրժուական պատկերացումների՝ սկզբումքորեն հակադիր այդ գաղափարախոսությունների ելակետով, բացահայտում է, առաջին հերթին, այդ երկու ըմբռնումների ներքին անհաշտությունը:

Եթե Վահան Տերյանի և, առհասարակ, հայ ժողովրդի մեծագույն հատվածի՝ նրա դեմոկրատիկայի համար, երկիր Նախրին պատերազմի արյունոտ մագիլներում կործանվող ժողովրդի փրկության գինադրոշն էր, սպասվող վե-

բածնության և հույսի խորհրդանշանը, քաղաքական ազատության և ազգային կուլտուրայի արժեքների պահպանման խարիսխը, ապա դեմոկրատիայի տարբերից հեռու կանգնած սոցիալական ուժերի, մասնավորապես դաշնակցություն կուսակցության վարիչների ու գաղափարախոսների համար դա մի հավելյալ, միֆական աշխարհ էր՝ հետնաշխարհ, որի տեսլացած պատկերի հետ էին առնչվում հայ բուրդուազիայի դասակարգային բաղձանքները:

Եթե հայ դեմոկրատիայի համար նաիրին անպարտ երկրի ապագա հառնումի հենարանն էր, ապա նեղահայաց ազգայնական գործիչների համար նաիրին այն թղատերնն էր, որ կոչված էր «գաղտնագրելու» նրանց գասակարգային ակնկալությունները:

Ինչո՞ւ և ի՞նչ պատճառաբանությամբ ազգության ճակատագրին նվիրված վեպը Զարենցը գրեց ոչ թե որևէ ուրիշ հյուսվածքով, ասենք՝ ահարոնյանական լալահառաջ ողբի բանալիներով (հակառակը, ծաղրեց այդ ոճը), կամ Շիրվանզաղի զտարյուն սոցիալական կտավի օրինակով, կամ հոգեբանական վերլուծության հանրածանոթ կանոններով, այլ երգիծական ոճով։

Ինչո՞ւ Զարենցը դիմեց երգիծանքին։

Հարցն ունի գեղագիտական հիմնավոր պատասխան և նույնքան հիմնավոր բացատրություն։

Երգիծանքի ոճաբանությունը ժամանակի հրամայականն էր, ասել է թե՝ ժամանակն էր թելադրում իրեն պիտանի, իրեն անհրաժեշտ, իրեն վայելու արտահայտչական ոճը։

Երգիծանքի տեսադաշտն են մտնում նաև ուրիշ երեսությներ, բայց ամենից ավելի հետևողականորեն և սրությամբ երգիծանքը գրագվում է «ազգային ոռմանտիզմի» հոգեբանությամբ։

Հայոց վերջին պետականության անկումից հետո, շուրջ հինգ հարյուր տարի, պատմական Հայաստանը գրաված օսմանյան թուրքերն անում էին ամեն ինչ՝ բարբարոսական հետապնդումներից մինչև գենոցիդ, վերջ տալու հայ ժողովրդի ինքնուրույն գոյությանը։

«...Թուրքական բռնապետության Սցիլլայի և ոռուսական բռնապետության Խարիբդայի արանքում» (սա հայ ժողովրդի քաղաքական կացությանը գեռ 1899-ին էնգելսի տված գնահատականն է) գտնվող հայությունը, այդուամենայնիվ, փայփայում էր ազգային ու քաղաքացիական ազատագրության մեծ հույսը։ Այդ հույսի հիմքի վրա XIX դարում բարգավաճեց ազգային ոռմանտիզմի գաղափարախոսությունը, իսկ դարավերջին ստեղծվեցին ազգային կուսակցություններ։

Լինելով ոչ խելամիտ, անհեռատես քաղաքագետննր, այդ կուսակցությունների վարիչները ոչ միայն շկարողացան ճիշտ հունի մեջ զնել ազգային շարժումները, այլև ժողովրդի քաղաքական բախտը տնօրինելիս հրապարակ հանցին անիրագործելի, մինչև անդամ անհեթեթ ծրագրեր։ Նրանց վարած քաղաքանության մեջ բացակայում էր ուելիստական սթափ ու զգաստ հայցը։ Ավելին. նրանց քաղաքականությունը, ժողովրդի պատմական բախտի ճակատագրական ժամերին, մերձենում էր գոն-թիշոտյան անճարակության ու դիվանագիտական խեղճության։ Ազգային կուսակցությունների քաղաքական ավանդությունը առանձնապես ցայտում երեաց մեր դարի 10-ական թվականներին։ Թուրքական կազմակերպված ու ծրագրված ցեղասպանությանը նրանք պատասխանում էին կամ դաշինքներով (հիշենք 1908-ին՝ «Երիտթուրքերի» հետ կնքած դաշինքը), կամ հավատով (1912—1914 թթ. հայկական

բարենորոգումների հետ կապված հույսերը), կամ ազգային-ռոմանտիկական լողունքներով ու պատրանքներով:

Համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, ինչպես հայտնի է, հայ ժողովրդի լայն խավերում վերջին անգամ ճառագեց ազատագրության հույսը: Ոգևորվելով ցարական կառավարության սուտ խոստումներով և ազատագրության պատրանքներով, հոգեվարք ապրող ժողովրդի մեջ 1914-ին լայն արձագանք գտավ կամավորական շարժումը, որի նպատակն էր ուսուական սվինների օգնությամբ ազատագրել թուրքական բռնապետության ցանցերում տառապող Արևմտյան Հայաստանը: Հազարավոր հայրենասերներ՝ ժողովրդի քաջ զավակներ, խմբվելով կամավորական գնդերում, միամտաբար կարծում էին, որ ցարիզմը վստահելի նեցուկ կլինի ազատագրության ուխտին և պաշտպան կանգնի տառապող ժողովրդի ճակատագրին: Այդ հավատը նրանց ներշնչում էին դաշնակցության կարծատես քաղաքագետները, որոնք, «եղբայրական» դաշինք կնքելով ցարիզմի հետ, պատմության դաժան ժամին շկարողացան ղեկավարել ժողովրդի ազատագրական շարժումը և կազմակերպել անգամ Արևելյան Հայաստանի ինքնապաշտպանությունը.

«...Գլորվեցին օրերը, տիսուր ու աղետաբեր. գլորվեցին և իրականացան 1914, 15, 16 թվականները—ելան, տեսիլանման... և իրականացան այնտեղ, սահմանի այն կողմը, այնտեղ, ուր պիտի հառներ տարիների մուժից երկիրը նաիրի, այնտեղ, ուր հեռացավ գնացքը՝ «նաիրյան ուժերով» բեռնավոր: Իրականացան այդ տարիները, դաժան ու անկարելի, այնտեղ,—Վանում, Բիթլիսում, Մուշում, Դիարբեքիրում,—այնտեղ—էրզրումում, Սվազում, Երզնկայում,—այնտեղ—Գարահիսարում... Անապատում ելած միրաժի նման՝ ելավ-գետնահարվեց... Ու մնացին—դիեր, դիեր, դիեր,—առտնին զառանցանք: Ու մնացին—ավերակներ...»:

Երբ ավերակված, արյունաքամ Հայաստանում հինգհարյուրամյա խզումից հետո, վերջապես ստեղծվեց սոցիալիստական, արևմտյան երկրների «մանդատներից» անկախ պետականություն, ժողովրդի համար պարզ դարձավ, որ նրան այլևս ոչինչ չեն կարող տալ ուժանտիկական պատրանքներն ու դիվանագիտական ամուլ կողմնորոշումները: Ավելին. սոցիալիստական հեղափոխության շնորհիվ պետականության տեր դարձած ժողովրդի նոր հոգեբանությանն անհարազատ թվացին այն պատրանքները, որոնք ինչ-որ շափով խոստանում էին համաժողովրդական աղետների կանխում:

Սա էր հասարակական այն նախադրյալը, որ քանական թվականներին հրահրեց ազգային ոոմանտիզմի գեմ ուղղված երգիծանքի ուժեղ շաշը:

«Երկիր նաիրիի» գեղարվեստական յուրացումների քննությանն անցնելուց առաջ անհրաժեշտ է պարզել ևս մի հարց: Դա «ստեղծագործական պատմության» հարցն է. Ե՞րբ է ձեւավորվել վեպի գաղափարը և Ե՞րբ է գրվել վեպը:

Այս հարցի պատասխանը մեզ տանում է Զարենցի ստեղծագործության խորքերը:

Բանն այն է, որ Երկիր նաիրին իբրև ինդիր Զարենցին զրադեցրել է առաջին իսկ գրական քայլերից սկսած, միշտ և շարունակ Զարենցը ապրել է այդ խնդիրի հուզական մթնոլորտում, բերել է հարցի տարբեր պատասխաններ ու լուծումներ:

Այս մասին հեղինակը պարզորոշ ակնարկում է վեպի Առաջարանում. «կաղուց, վաղուց մտորում է իմ մեջ մի անհուն ցանկություն: Վաղուց ելք

է փնտրում կուտակված մի կարոտ: Մթի մեջ, գիշերի կեսին, կամ ցերեկը, երբ ես զրադշած եմ լինում առօրյա հոգսերով, կամ անգամ երբ ես տարված եմ լինում գինու կամ կնոջ հմայիչ հաճույքով,—ներսը, սրտիս խորֆում, գողի պես զգույշ, կամացուկ շարժվում է նա:

Ինչպես վաղուց արված մի խոստում, կամ ինչպես ժամանակին շվճարված պարտամուրհակ—ծանրանում է սրտիս, անողոք—ուտում է սիրտս:

Հաճախ պատկերանում է նա ինձ, որպես մի վաղեմի բարեկամ. վաղեմի ժանոթի մի նման, որին ես շատ առաջ եմ հանդիպել, բայց կորցրել եմ հետո—օրերի մշուշից ելնում է նա հաճախ, օրերի մշուշից նայում է ինձ: Երկարերկար նայում է աշքերիս: Ասում է՝ չե՞ս ճանաշում: Մոռացե՞լ ես,—ասում է նա,—Ու սահում է էլի, թաղվում է օրերի մշուշում—կորչում է օրերում:

Հազար-հազար տեսքով ու կերպարանքով պատկերանում է նա ինձ...

Բայց ո՞վ է, կամ ի՞նչ է նա—ահա ամենաէականը: Գուցե մեծ լինի զարմանքդ, սիրելի ընթերցող, եթե ասեմ, որ ես էլ շգիտեմ: Գիտեմ, որ նա—կա, եղել է և հին է, որպես իմ արյունն է—հին: Կա.—զգում եմ, շոշափում եմ սրտով, տեսնում եմ,—բայց հենց որ ուզում եմ բռնեմ, տեսնեմ մարմնավոր, կանգնեցնեմ հաստատ,—կորչում է, դառնում է աներեսույթ, ցնդում է, որպես ծուխ, կամ ցնորք...

— Ինչքան, ինչքան անգամ հարցրել եմ ես ինձ, թե ի՞նչ է, վերջապես—նաիրին: Գուցե քեզ տարօրինակ թվա այս հարցը, սիրելի ընթերցող: Բայց դա նույնքան է բնական, որքան այն հարցը, թե ո՞վ ենք մենք, վերջապես—նաիրցիներս: Ի՞նչ ենք մենք և ո՞վ ենք գնում: Ի՞նչ ենք եղել երեկ և ի՞նչ պիտի լինենք վաղը:

Ամեն, ամեն անգամ, երբ նման հարցերը կերել են սիրտս,—մեկը, մի ուրիշը կարծես,—ուրվականի նման ենելով օրերից, օրերի մշուշից, տվել է ուղեղիս շարախինդ մի հարց.—«Զէ՞ր կարելի արդյոք տեսնել մարմնավոր, պատկերացնել հաստատ երկիրը նաիրի: Նու, թեկուլ հենց իրենց՝ նաիրցիների կյանքում, կենցաղում: Շոշափել այդ երկույթը—նաիրյան—սրտով, շոշափել մարմնավոր, պատկերել երկրային... Գուցե սուտ է նաիրին—շկա... Գուցե—հուշ է միայն,—ֆիկցիա, միֆ:—Ուղեղային մորմոք. սրտի հիվանդություն...»

Վեպի ծրագրի մասին ջարենցը մտորել է արդեն 1920 թվականին:

Թեև «Երկիր նաիրին» ջարենցը գրել է մաս-մաս՝ ընդհատումներով (1921-ին Մոսկվայում ավարտել է «Քաղաքը և բնակիչները», 1922-ի աշնանը՝ «Դեպի նաիրին», իսկ 1924-ի փետրվարին, Երևանում՝ «Երկիր նաիրին»), բայց վեպի ամբողջ ծրագիրը և կառուցվածքը հայտնի է եղել դեռևս այն ժամանակ, երբ հանձն էր առել այդ մոնումենտալ գործը:

Ծագում է ևս մի էական հարց. «Երկիր նաիրին» դեպքերի ժամանակագրություն-հիշատակարան է, թե՞ո ուրիշ ժանրի գործ:

Ջարենցն, իհարկե, ժամանակագրում-տարեգրում է 1913—20 թվականներին Կարս քաղաքի կյանքում կատարված գլխավոր դեպքերը: Այս շափով ու այս սահմանում էլ վեպը Կարսի այդ տարիների ժամանակագրությունն է:

Բայց հեղինակի նպատակը ոչ այնքան ամենամերձավոր անցյալի դեպքերի հավաստի և ճշգրիտ ժամանակագրությունը տալն է, որքան այդ դեպքերը որոշ աշխարհայացքի լույսի տակ գնահատելը և դրանց «պատմական» նշանակությունը բացահայտելը:

Այս «գաղտնիքը» պարզում են Երկերի ժողովածուի Վ հատորի ընդարձակ ու մանրակրկիտ գիտական ժանոթագրությունները, որը մեծ ջանասի-

բությամբ, բանասիրական խնամքով և հետազոտական թափանցումով շրջանառության մեջ է դրել Ալմաստ Զաքարյանը:

Պատմական կոնկրետ իրականությունից են վերցված ոչ միայն «Երկիր Նախրի» վեպի նյութը (Հանգամանքներ, Հերոսներ, արտահայտման ոճ), այլև նրա բովանդակությունը, իսկ ավելի լայն ասումով՝ նաև աշխարհայացքը:

Այդ բովանդակության բոյն ատաղձը ժամանակի գաղափարախոսական վեճերն են, նույն խնդրի և առարկայի շուրջը հրապարակում եղած տրամագծորեն հակադիր, թեր և դեմ հայացքների բախումները:

Այս առումով էլ «Երկիր Նախրին» ոչ թե սովորական քաղաքական, կամ սոցիալական-հոգեբանական, կամ կենցաղային վեպ է՝ կառուցված սյուժետային գծերի համախմբման հանրածանոթ կանոններով, այլ գաղափարների վեպ է, կամ, ավելի ստույգ, վեպ է գաղափարի վերաբերյալ:

Սա նշանակում է, որ այստեղ գաղափարը ոչ թե նկարագրության՝ պատումի, կողմնորոշում է, այլ ինքը հենց նկարագրության-մեկնաբանության բոյն առարկան է:

Դա Երկիր Նախրիի գաղափարն է:

Նորից հարց է ծագում. ո՞վ է վեպի գլխավոր այն հերոսը, որ, հանդես գալով իրեւ գաղափարակիր, արտահայտում է հեղինակի կողմնորոշումն ու նրա դրական իդեալը:

Այդ հերոսը ինքը՝ հեղինակն է, որ հսնդես է գալիս որպես վեպի գլխավոր գործող անձ և կրթությունը վեճ է վարում հայ հասարակությանը հուզող նյութի շուրջը:

«Երկիր Նախրին» Զարենցի գաղափարական բանավեճն է:

Բանավիճային բնույթը հաշվի առնելով, «Երկիր Նախրին» կարելի է համարել դիալոգային վեպ:

Դա հեղինակի դիալոգն է ժամանակի հետ՝ կոչված այն բանին, որպեսզի արվի «Ո՞րն է Երկիրը Նախրի» հարցի ճիշտ պատասխանը:

Ճշմարտության դիալոգային որոնման նկարունքներով կառուցելով «Երկիր Նախրին», Զարենցը մտնում է հաղար ու մի դերի մեջ՝ պատմողի, տարբեգողի, մեկնաբանողի, հարցնողի, պատասխանողի, մտրակողի, հեգնողի, սփոփողի, կասկածողի և այլն, պարզելու երկիր Նախրիի Գոյականությունն ու նրա ստույգ, իսկական ու վերջնական հասցեն:

Վեպի մի շարք հատվածներում շարունակաբար Զարենցը խոսում է ուղեղային մորմոքից, սրտի հիվանդությունից, անգու տեսիլքից, միրաժից, ֆիկցիայից և այլն, հզումներ, որոնք շափազանց «ուժեղ կովաններ են» այն ընթերցողների ձեռքին, ովքեր Զարենցին դնում են «ավգային սկյութացիների» և իր ժողովրդի ազգային իդեալների «Կործանողի» շարքում:

Հղումներից մեկն էլ հետեւալ բացատրությունն է, որ վեպի վերջաբանում Զարենցը հանձնարարում է ընթերցողին. «Վաղուց հետեւ մեր գրականության, մանավանդ բանաստեղծության մեջ շկա մի բառ, որ ավելի հոլովվեր, քան «Նախրի» գոյականը, բայց, չնայած դրան, մինչև իմ սույն այս պոեմանման վեպը, մեր լեզվագիտության ամուլ անդաստանում չէր ճարվում և ոչ մի Մանուկ Արեղյան, որ զբաղվեր այդ շամիչի պես գործածական դարձած բառի քերականական կազմությամբ,—և ես... նվաստս էի, որ առաջին անգամ զբաղվեցի այդ քերականական հարցով և գլխի ընկա, որ «Նախրի» բառը ոչ թե գոյական է, այլ—եթե միայն կարելի է քերականության մեջ այսպես ասել—«մազութի համոյական»... սնախրին», իբրև քերականության ենթակա մի

Հանգամանք, այսինքն իբր բառ գոյություն ունենալուց առաջ՝ վաղուց արդեն գոյություն է ունեցել մի շարք ավելի քան պատկառելի մարդկանց մեջ (կարդա սույն վեպս), որպես ուղեղային մորմոք, սրտի հիվանդություն... Իսկ նման դեպքերում, ինչպես գիտեք, քիչ գործ ունի անելու լեզվագիտությունը. այստեղ, կարծում ենք, արդեն բժիշկ է հարկավոր, անդամահատական աքցան կամ լանցետ և ոչ թե քերականություն»:

Եթե հավատալու լինենք հեղինակի «դաժան» խոստովանությանը, ապա պետք է ճիշտ համարենք այն հանդիմանությունը, թե Զարենցը կասկածի տակ է զնում նաիրի գոյականության պարագան, թե Զարենցը նաիրին ամբողջությամբ հանձնում է «ուղեղային մորմոքի», այսինքն գաղափարախոսական ջիկցիայի, իշխանությանը:

Բայց խնդրի էությունն այն է, որ Զարենցը գոյականությունից զրկում է ոչ թե նաիրին առհասարակ, այլ միայն նրա մազութի-համոյական կտրվածքը:

«Մազութի-համոյականությունը», Զարենցի մեկնաբանությամբ, ազգային իդեալի այն տարատեսակն է, որն իր բովանդակությունը քաղում է ոչ թե ժողովրդական երազներից ու ազատագրության ժողովրդական պատկերացումներից, այլ առանձին անհատների ուղեղային մորմոքից: Դա ազգային իդեալի այն ձևն է, որ, շոնենալով խոր արմատներ ժողովրդական լայն խավերի հոգեբանության մեջ, ասպարեզ է նետվում իբրև ինքնամսնուց բովանդակության մի տիսուր դրվագ:

«Այդ հանճարեղագույն ուղեղը,—վարում է իր բանավեճը Զարենցը,—ուներ հանճարեղագույն հատկություններ... այդ տարօրինակ ուղեղը տարիներ, դարեր շարունակ, հնամենի հնուց կրում էր իր վերո՛իշյալ եղջյուրների վրա մի ամբողջ երկիր... այդ զարմանալի ուղեղի վրա էր կանգնած երկիրը նաիրի, որպես հնում աշխարհն՝ առասպելական այն ցուլի եղջյուրների վրա»:

«Այդ զարմանալի ուղեղը,—շարունակում է դատողությունները Զարենցը,—կանգնած էր... հնեց ինքն իր վրա... Կար, գոյություն ուներ և աշխատում էր, անխոնջ ու մշտնչենական, ինչպես ինքը բնությունը, կամ, ավելի լավ է ասել՝ որպես մի իսկական «պերպետում-մորթիլ». գերմանական հայտնի գիտնական Հելմհոլցի նշանավոր թեորիան միանգամայն ժխտելով՝ ապացուցում էր իր կենդանի օրինակով, որ նման մի ինքնաշարժ մեքենա ոչ միայն հնարավոր է սկզբունքորեն, այլև կա, գոյություն ունի և կարող է աշխատել՝ ինքն իրեն սնելով դարեր ու դարեր, մահանալ ու կյանք առնել նորից, իր սեփական աճյումից, որպես եգիպտական մի ֆենիքս-թոշուն: Այսպիսի ահա ինքնամսնուց մի թոշուն, բայց, ավելի լավ է ասել՝ «պերպետում-մորթիլ» էր Համո Համբարձումովիշի ուղեղը. ինքնաշարժ մեքենա, որ, ինչպես ասացինք, ինքն իրեն սնելով՝ դուրս էր թողնում, հանում էր շրջանառության անսպառ քանակությամբ—ոնց ասենք... նու, ազգային եռանդ (էներգիա)...»:

Մազութի-համոյական նաիրին համարելով քերականական օրենքներից դուրս գտնվող ուղեղային խաբկանք, գաղափարախոսական կեղծիք, Զարենցը դրան հակադրում է գոյականական նաիրի սեփական պատկերացումները:

Գաղափարական այս դիրքերի տրամաբանական ավարտումն է երկրորդ հրատարակության (1926) Առաջաբանում տեղ գտած Զարենցի կոշն իր հայրենակիցներին, ուր ասվում է. «Եթե նրանք ունեն ստույգ տեղեկություններ հիշյալ կարեռագույն հանգամանքը ճշտող՝ թող բարի լինեն գրել մեզ, հետեւյալ հասցեով.»

Երկիր նաիրի, եղիշե Զարենցին»:

Վեպն ավարտվում է ծնվող ու վեր բարձրացող Նահիրիի դիֆերամբով. «Կենդանի մնացածներից շատերն արդեն ազատ են վերօհիշյալ ուղեղային մորմոքից ու սրտի հիվանդությունից և այսօր իրենց երկիրն են շինում—մի երկիր, սակայն, որի գոյական լինելը ճշտելու համար կարիք չկա դիմելու ոչ մի Մանուկ Արեղյանի, որովհետեւ այդ պարզապես տեսնում են բոլոր նրանք, ովքեր գործ ունեն հողի ու աշխատանքի հետ»:

Վեպին դարձած գրականագետները, փորձելով գրական զուգահեռներ գտնել «գործող անձ» դարձած հեղինակի համար, մատնացույց են արել գոգոլյան «Դիկանկա խուտորի երեկոները» վիպակի միամիտ պարզախոս ձեացող մեղվապահի՝ Ռուդի Պանկոյին, որը պատմում է ուկրաինական գյուղի հովվերգությունը, ինչպես և ականավոր շեխ երգիծաբան Յարոսլավ Հաշեկի «Քաջ զինվոր Շվեյկի արկածները» անմոռաց գրքի անմոռաց հերոսին:

Առավել համոզիլ է քաջ զինվոր Շվեյկի զուգահեռը:

Բանն այն է, որ դիտավորյալ ձեանալով որպես «տարօրինակ» մի սուբյեկտ՝ միամիտ, դեպքերից ոչինչ չհասկացող, խենթավուն մի անձնավորություն, «գործող անձ» դարձած հեղինակը բացում է իր հոգու երկու հոսանքի շտեմարանը՝ կծու երգիծանքի առատաբուխ շատրվանն ու նորբ քնարի հորդահոս աղբյուրները՝ գնահատելու գաղափարախոսությունների պայքարը, ժխտելու կամ հաստատելու երկիր Նահիրիի գաղափարը:

Առաջին հոսանքից հեղինակը լիովի բաժին է հասցնում «նահրակերպ արքաներին», երկրորդից՝ ժողովրդական տարերքին: Առաջին հոսանքը նա ասպարեզ է հանում «նահրյան քաղաքի» «օրերի ու վաստակների» «բնական պատմությունը» շարագրելիս, երկրորդը՝ ընթերցողին ուղղված հարցումների, պաթետիկ-քնարական դիմումների, հրապարակախոսական և այլարանական խորհրդածությունների միջոցին:

Դաշնակցական կենտրոնի «ազգանվեր» գործոմնեության դրվագները, այսինքն՝ հասարակական կյանքի ֆասադը, նկարագրելիս Զարենցի պատումի էջերը լցովում են մոլեգին քրիզներով: Եվ, հակառակը, անսահման վշտով է համակվում հեղինակի խոսքը, երբ շափում է իրենց արտ ու հանդից պոկված, իրենց բնական արմատներից տեղահան արված գյուղացիության մոլորության անդունդը:

Հեղինակը մեկ մեֆիստոֆելյան ժպիտը դեմքին ջղաձգորեն ծաղրում է մազութի-համոյական շաղակրատությունը, մեկ իր արցունքներն է խառնում «Տանըը-մեն աղե զան, տա-նըը-մեեեն», երգը՝ «անդուռ վշտի հան-ձարեղ այդ ոռնոցը», շուրթերին ուազմաճակատ մեկնող հայ տրեխավոր գեղ-ջուկի «պառավաճայն ողբերին»:

Երկու հոսանքի գեղագիտության դիրքերից Զարենցն ասում է, որ «Լույս» նավթային ընկերության Տեղական կոմիտեի գործիչները, ինչպես և վարժապետ վառողյաններն ու հոգեոր հոտի պարագլուխները՝ սրի և խաչի ասպետները, ժողովրդի քաղաքական իրավունքների իսկական պաշտպանները չեն. Նրանց «հայրենասիրությունը» ամբոխավարական աղմկարարությունից այն կողմ չի անցնում:

Մազութի-համոյական «ազգային իդեալի» շարենցյան պսակազերծումը հնչում է որպես մեղադրական թուղթ ու մահվան դատավճիռ:

Ինչո՞ւ է այդքան անողոք, այդքան անզիջում դատավճիռը, մանավանդ,

երբ գիտենք, որ Զարենցի համար ևս միանգամայն հարազատ ապրում ու ներշնչանք էր «ազգային իդեալը»:

Թանն այն է, որ Զարենցը նմանության-հավասարության և ոչ մի եզր չի անենում ազգային իդեալի մազութ-համոյական, այսինքն՝ բոլոժուական ըմբռումումների և նրա հակոտնյայի՝ ծովովրդական պատկերացումների միջև:

Թեև երգիծանքը գերազանցապես օգտվում է արտահայտման պայմանական ձևերից (հիպերբոլա, ֆանտաստիկա, շարժ, գրոտեսկ և այլն), թեև երգիծանքը դիմում է գերազանցապես այնպիսի գեղարվեստական հնարանքների, որոնք առաջին նվագ ոչնչացնում են ճշմարտանմանության տպավորությունը, բայց արտացոլման երգիծական-պայմանական հյուսվածքի էական առանձնահատկությունն այն է, որ իրականությունը պարտավոր է երևալ կենդանի գծերի ու հարաբերությունների, բարդ կապերի ու ներքին առնչությունների «չքողարկված» ճշմարտությամբ:

Երգիծաբանի վարպետության ու հնարագիտության աստիճանը շափվում է, վերշին հաշվով, նրանով, թե ծիծաղի ոճաբանության սահմաններում ինչ շափով է հարազատ մնում կյանքի ճշմարտանմանությանը, թե գրոտեսկային-շափազանցված-սրված կերպարների և բեեռացված դրությունների միջոցով որքան է հավաստի ներկայացնում իրականության «ընդհանուր գույնը»:

«Երգիծական ոգեշնչմանը», առաջին հերթին, ենթարկվում են գավառաքաղաքի նշանավոր ու անշան, հին ու նոր, պատմական և ոչ պատմական «հիշատակները»՝ Բերդը, Առաքելոց եկեղեցին, «Լույս» ընկերության տեղական գրասենյակը, Հինգ հարկանի շինությունը և այլն, և այլն:

Ինչո՞ւ է Զարենցը սկսում իրերի երգիծանքից, ի՞նչ նպատակով ու խորհրդով:

Թանն այն է, որ քաղաքի բնակիչների աշքին «հրաշքի» կերպարանք առած իրեղեն երեւլյթները, Զարենցի մեկնաբանությամբ, ոչ թե «նախրապետության» անցուղարձի անշարժ, համր, լուռ վկաներն են, այլ «նախրցիների» հոգեբանության մասնակիցներն ու մասնիկները: Նախրյան քաղաքի հիշատակները հոգեր այն կետերն են, որոնք իրենց մեջ ծրարած պատմական ու ժամանակակից ավանդություններով, հայտնի ու խորհրդավոր դեպքերով հասարակական կյանքին պարտադրում են «ազգային եռանդի» մշտաբում աղբյուրներ:

Նախրյան քաղաքի «հրաշքների» երգիծական ոգեշնչման բարձր կետը, անտարակույս, նրա «քարե ակնածանքի»՝ «ամենակարող կենտրոն» Հինգ հարկանի շինության «փառաբանությունն» է: Այս շինությունից, ուր կինտրոնացված են գավառի ու քաղաքի ամենաազդեցիկ հիմնարկությունները, «վճիռներ ու ճակատագրեր են ելնում»՝ շարժման մեջ զնելով հասարակական կյանքի բոլոր լծակները:

«Անգո կենտրոն»,—շարունակ ու անընդեշ այսպես որակելով Հինգ հարկանի «Հրաշքի» բովանդակությունը, Զարենցն այդ գնահատականով ուզում է հասկացնել, որ ամեններն էլ այդպես չէ, որ Հինգ հարկանի շենքը նախրյան քաղաքի ամենագոյականական երեւլյթն է, որ նրա մութ ու խորհրդավոր սենյակներում (որտեղից վարժապետ Վառողյանը մի օր դուրս եկավ Ընկերության կապուլա հետքերը կոնակին) ստեղծվում են ազգային կյանքի ծրագրեր ու հեռանկարներ:

Հինգ հարկանի շինությունից բացի, երգիծաբանի առանձնակի վերաբերմքին է արժանանում նաև «Լույս» նավթային ընկերության տեղական գրասենյակը,—առաջին տպավորությամբ մի անշուր ու աննկատ հիմնարկություն,

որի առևտրական «անմեղ» ցուցանակի տակ կատարվում են «հիացմունքի արժանի» և փառավոր գործեր»: Այս գրասենյակի հրահանգով են լուծվում ազգային և հասարակական կյանքի բոլոր էական հարցերը և, ինչպես հավաստիացնում է վարժապետ Վառողյանը, այստեղից են ենում «սուլթաններ, շահեր և կայսրեր» Կործանելու «պատմական կոչերը»:

Քաղաքի տարեգիրը՝ «պատմական հիշատակներից» անցնելով դեպի նրա փողոցներն ու նշանավոր հասարակական հավաքատեղիները (ակումբ, խանութ և այլն), ծիծաղի ոլորտի մեջ է առնում քաղաքի բնակիչներին՝ սկսած երեկոյի հանրային գործիչներից՝ «Լույս» նավթային ընկերության տեղական գրասենյակի կառավարիչ Մազութի Համոյից, հաշտարար դատավոր Օսեփ Նարիմանովից, Գեներալ Ալոշից, բժիշկ Սերգե Կասպարիչից, Հուսիկ վարդապետից մինչև արհեստավորական խավը, մանր վաճառականների Հոգաբարձուների, գավառացի վարժապետների կաղմը, դեռ սրանցից էլ ավելի ցածր աստիճանի կանգնածները՝ մոտակա գյուղերի տրեխավորներն ու «վակզալի բաշիբողուկները»:

Քաղաքի բնակիչների էության և արարքների, նրանց խոսքի ու գործի, նրանց ամենօրյա լճացած, անշարժ կենցաղի մանրակրկիտ նկարագրություններով, որով լեցուն է հատկապես վեպի առաջին մասը, Զարենցը հետամուտ է «ուղեղային մորմորի» արտածման ուղիների ճանաշմանը:

Վերին աստիճանի իմաստալից է Զարենցի գեղագիտական վերաբերմունքի մի հատկությունը. Նախրյան քաղաքի իրեղեն, առարկայական վկաների նկարագրությամբ նա ամեն կերպ աշխատում է դրանց վերագրել կենդանի գծեր և, հակառակը, անցնելով մարդկանց նկարագրությանը, նույն հետևողականությամբ սրանց առարկայացնում է:

Առարկայացված մարդիկ, Զարենցի համոզմունքով, միայն ձեռվ են մարդ, իսկ էությամբ դիմակներ են, ավելին՝ կենդանի դիմակներ են:

Դարավոր անցյալ ունեցող քաղաքը՝ միապաղաղ ու անգույն կենցաղով, կյանքի քարացած ձերի հանգեպ պաշտամունքի հասնող վերաբերմունքով, քաղաքի բնակիչների հայացքների սահմանափակությունն ու նեղությունը,— ասում է Զարենցը,— այն սննդարար միջավայրն էր, ուր անհրաժեշտաբար արմատներ պետք է գցեին ֆանտաստիկական պատրանքներն ու ամրոխավարկան հոգերանությունը:

Ն. Վ. Գոգոլն իր «Մեռած հոգիներ» վեպի մասին ասել է. «Ես ցանկանում եմ այս վեպում, թեկուզ մի եզրից, ցուցադրել ամբողջ Ռուսիան...»:

Մի եզրի գեղարվեստական ծրագիր է ունեցել նաև Զարենցը. Դա երկիր նախրիի մազութի-համոյական տարատեսակի ցուցադրման ծրագիրն է: Դրա համար էլ դիմել է մի եզրը ներկայացնող երգիծական դիմանկարների շարքին:

Վեպի ամբողջ երկայնքով անցնող Մազութի Համոյին Զարենցը զննում է ամենայն մանրամասնությամբ՝ նրա կենցաղային, սոցիալական ու քաղաքական կենսագործյունը, որով և ամբողջանում է XX դարի «ազգային միֆը» մարմնացնողի էությունը:

Այս վեպի հեղինակը՝ Զարենցը, խոսք է տվել նաև մի պատմողի՝ իր կրկնակին, որը կոչված է համապատասխան գրական մշակումով, այսինքն՝ գեղարվեստական արտահայտչական այլեայլ միջոցների (հիպերբոլա ու գրոտեսկ, հոեստրուական ոճ ու հեգնանք, պատումի ֆելիետոնային եղանակ ու բանաստեղծական դիմում, օբյեկտիվ նկարագրություն ու սուրյեկտիվ քնարականություն) կիրառությամբ, արտահայտել նրա՝ հեղինակի, տպավորություն-

ներն ու դիտումները, տեսակետներն ու գնահատությունները, վերաբերմումքն ու հակավերաբերմումքը:

Պատմողը, որ հավասարապես նաև նկարագրող-երգիծող-բանաստեղծող-մտածող է, այդ պատմողը, ենելով հեղինակի ծրագրած բանավեճից, ամեն ինչ ենթարկում է բանավեճի տրամաբանությանը:

Հանձն առնելով բանավեճողի պարտականություն, պատմողը, բնականաբար, նաիրյան բաղաքի պատուհանից միշտ նայում է դեպի դուրս՝ պատմությանն ու ժամանակին, սրանց օգնությամբ է փորձում գտնել նվիրական գաղափարի ձեռափոխությունների ընթացքը։ Կանխավ և ոչ առանց հիմքի ընդունելով, որ նաիրի գաղափարը հավերժական շարժիչ է, պատմողը ասպարեզ է բերում երևույթի ճանաշողության բարդ գինարանը և իր հոգու հրածարանից դուրս է նետում խոսքի բոլոր միջոցները՝ սկսած գաղափարական վեճը շահելու համար։

Ամեն մի բանավեճ, բնականաբար, ենթադրում է հարցերի մի որոշակի խումբ, կամ մի էական, գլխավոր հարց և այդ հարցերի խմբին կամ էական հարցին բավարարող պատասխաններ։ Հարց ու պատասխանը, այսինքն բանավեճը, իր հետ բերում է ոճաբանական բաղմազան միջոցներ ու արտահայտության եղանակներ, որոնք բոլորը միասին կոչված են սպառագելու հարցի գըլխավոր էությունը։

Գաղափարական հույժ կարենոր հարցին նվիրված վեպում, այն էլ՝ բանավիճային դրվածք ունեցող վեպում, — սա հիանալի ներքնատեսությամբ զգացել է Զարենցը, — այնքան էլ կարենոր չէ հերոսների բանավոր խոսքի հնչերանգը։ Այստեղ ավելի կարենոր է այն, թե ինչպես է պատմողի «անխառն» խոսքի մեջ նյութականանում առաջադրված գաղափարախոսությունը։ Վեպի այս մասնաւտկությամբ էլ բացատրվում է այն իրողությունը, որ «Երկիր նաիրին» գրեթե համատարած կերպով հեղինակի՝ պատմողի խոսքն է։ Ոչինչ օտարամուտ չկա այդ խոսք-բանավեճի մեջ։ Եվ չէր էլ կարող լինել, որովհետեւ Զարենցի սկսած բանավեճը չոնի երկու կողմ։ Ինքը, պատմողն է և հարց դնողը, և այդ հարցին պատասխան տվողը։ Պատմողն է և հաստատողը, և հերքողը, և ծառացողը, և խոնարհվողը։ Հեղինակային խոսքն է համախմբում վեպի սյուժեն ու գործողությունը։ Այդ խոսքի մեջ են իրար գալիս ճգրիտ, արժանավատ, օրյեկտիվ արձակի նկարագրության ուղղիստական գույներն ու սուբյեկտիվ արձակին հատուկ արտահայտման հուզական եղանակները։

Արձակի տարբեր գույները խառնուրդող պատումի ոգեշնչված ու բարձր պաթոսն է, այսպես կոչված՝ հոետորական-պաթետիկ արտահայտչությունը, որը մի դեպքում՝ միտման դեպքում, հանգում է «երգիծական ոգեշնչման», մյուս՝ հաստատման դեպքում, «քնարական խոնարհման»։

Պաթետիկ-ոգեշնչունչ գովարձության հոսանքի ալիքների մեջ են նաիրյան բաղաքի բոլոր ներկայացուցիչները, առանց բացառության։ Այդ գովարձությունից Զարենցը մեծ բաժին է հասցնում նրանց, ովքեր առավել ցածր են իրենց մարդկային-բարոյական նկարագրով, ովքեր ավելի են արժանի «գովարձության» ոչնչացնող խարազանին։ Ինչպես օրինակ, բժիշկ Սերգե Կասպարիչը, որի գերագույն ազնվությունը հաստատում է կնոջ հանելուկային ինքնասպանության փաստը, ինչպես Վառողյանը, որի հերոսությունն անցնում է մորթապաշտության ու ստորոտիթյան եզրերով (ապացույց՝ կոնակի պատմությունը), ինչպես Գեներալ Ալոշը, ինչպես հաշտարար դատավոր Օսեփի Նարիմանովը, որի համար ծեղի արժեք չոնի իր կոշման՝ արդարության ու ճշմար-

տության հարցը, որի արդարամտությունն անցնում է սեփական ստամոքսի միջով:

Քաղաքի կենտրոնական անձնավորությունը՝ Մազութի Համոն, բնականաբար, դարձել է շարենցյան հեգնական պաթետիկայի հիմնական կրողը: Պատմողի ոգևորությունը, երբ նա պատմում է Մազութի Համոյի մասին, հասնում է կատարյալ հրավառության. հիացմունքը ողողում է հերոսի ամբողջ էությունը՝ հասարակական գործունեությունից մինչև կենցաղ, զմայլանքը տարածվում է նրա հետ կապված բոլոր հարաբերությունների ու առարկաների վրա: Եվ ամեն անգամ այդ հիացմունքը շրջվում է հակահիացմունքի, աննկատելիորեն վերաճում է սպանիչ մտրակման:

«Երկիր Նախրին» իրեւ ժանրային ձեւ ավանդական-կանոնիկ վեպի ուղղակի հակադրությունն է: Ոչ կենսագրական, ոչ սոցիալական-հոգեբանական, ոչ էլ կենցաղային ու ընտանեկան վեպի ավանդական-սյուժետային ձևերը, որոնցից օգտվում էին Զարենցի նախորդներն ու ժամանակակիցները, չէին կարող իրենց կառուցվածքի մեջ տեղադրել երկիր Նախրիի գաղափարախոսությունը: Անհրաժեշտ էր վեպի այնպիսի ձեւ ու կառուցվածք, որ համարժեք լիներ «գաղափարների վեպի» մտահղացմանը: Գրական հնարագիտությանը միշտ զարմացնող Զարենցը այս անգամ ևս գտավ գեղարվեստական առաջարությանը համապատասխանող նոր կառուցվածք՝ ժանրային նոր ձև:

«Երկիր Նախրիի» Վերջաբանը սկսվում է հետևյալ պարբերությամբ, որը նաև այդ նոր վիպական ձևի անուղղակի խոստովանությունն ու գիտակցումն է: «Ահա և ամբողջը, լնթերցող. ահա և մեր սույն պոեմանման վեպը, որը, վերջին հաշվով ոչ թե վեպ դուրս եկավ, այլ «այլակերպ» մի բան:—«Այլակերպ» բառն առնում ենք շակերտների մեջ, որովհետև այդպես պիտի ասեր սույն այս վեպիս մասին մեզ բավականին ժանոթ Հաջի Օնիկ էֆենդի Մանուկովը, այդ հայտնի անգիտախոս Նախրցին, եթե նա կենդանի լիներ և սույն այս վեպս կարդար: Այսո, այսպես պիտի ասեր Հաջին, և մենք միանգամայն համամիտ պիտի լինեինք նրան, որովհետև նա, իր հմուտ անգլիախոս և պատկառելի նախրցի, հարց պիտի դներ սույն այս վեպիս ձևի ոչ ամբողջական լինելու, նրանում վեպի էլեմենտար կանոնների բացակայության և հազար ու մի այլ թերությանց մասին, ու՝ մեր բազում քանքարավոր քննադատներին ի խրատ՝ պիտի հիմնավորեր իր կարծիքն իր հմուտ անգլիախոսությամբ և պատկառելի... նախրասիրությամբ...»:

Վեպի ծայրահեղ ինքնատիպությունն էր այն «տագնապի» պատճառը, որ ունեցել է Զարենցը, ենթադրելով, թե իր «այլակերպ» գրվածքը կարող է շփոթության մեջ զցել ընթերցողներին՝ շհասկացվել ու շփնահատվել:

Թեև Վերջաբանի հաջորդ տողերում Զարենցը կտրուկ հայտարարում է, որ էականը բովանդակությունն է և ոչ թե ձեւը, բայց տվյալ դեպքում ձևի «հերքումը», ինչպես այս վեպում նման հերքման տրամաբանությանն են ենթարկվում ուրիշ շատ հասկացություններ, ձևի հերքումը կատարվում է հաստատման նպատակով:

Վեպի «այլակերպության» խոստովանությունը իրականում շարենցյան հեգնանքի մի բեկորն է: Ուրիշ ոչինչ:

Զենք սիալվի, եթե ասենք, որ հեղինակին խստորեն մտահոգել է վեպի ժանրային տարբերակման ու կառուցվածքի խնդիրը: Այդ մասին նա բազմաթիվ առիթներով խոսում է վեպի ներսում, հիշեցնելով, մանավանդ, այն պարագան, որ ինքը մի գնացել եվրոպական վիպագրության ճանապարհով, շեղ-

վել է ավանդական ուղիներից, որ իրեն ամենեին էլ չի զբաղեցրել հերոսների հոգեբանական աշխարհի զննումը: Նման խոստովանությունները վկայում են Զարենցի «գեղագիտական տառապանքը»՝ գրվածքի ժանրային կառուցվածքը որոշելու հարցասիրությունը: «Երկիր Նախրիի» ամենաճշգրիտ սահմանումը՝ «պոեմանման վեպ», ընտրել է ինքը՝ Զարենցը:

Պոեմանման վեպ սահմանմանը հարազատ է նաև այն բնութագրությունը, որ «Երկիր Նախրիին» տվել է Մարիետա Շահինյանը: Խմբագրի Առաջաբանում Մ. Շահինյանը գրում է, որ Զարենցի գործը «Կարս քաղաքի էպոսն է՝ երեք ցիկլով» և ավելացնում. «Մեր առջև մի այնպիսի երկ է, գրված գոգոլյան բանալիով, որ եթե պոեմ չէ, ապա լավագույն դեպքում էպոս է, որը գեղարվեստական բացառիկ նշանակություն ունի հայ գրականության զարգացման համար»<sup>19</sup>:

Ժանրային այս տարբերակումը, ավելի ճիշտ՝ համարձակ զուգահեռը էպոսի հետ՝ մի գործի վերաբերյալ, որտեղ շկա ոչ մի էպիկական հերոս և էպոսի համար անհրաժեշտ հերոսապատում, առաջին հայացքից կարող է միայն զարմանք առաջացնել: Այս պարագործն ունի շատ հիմնավոր բացատրություն, ինչպես և հիմնավորված է «պոեմանման վեպ» սահմանումը:

Ո՞րն է դրանց արդարացումը:

Առաջին. Զարենցի նկարագրած կյանքի խիստ ծիծաղելի պրողային զուգահեռ, տեքստի ընդհատակում, ձգվում են էպոսային այնպիսի երակներ, որոնք ծիծաղելիին հակադրում են ժողովրդական աշխարհի ու հայրենի եղերքի պոեզիան, ասել է թե՝ Նախրիի այն ըմբռնումը, որը ժողովուրդը պահպանում է իբրև իր դարավոր փորձից, իր էությունից անբաժան երազ ու գաղափար:

Երկրորդ. Նախրիի գաղափարը տեղաշարժելով իրական աշխարհից դեպի ֆանտաստիկայի սահմաններ, ոեալ կեցությունից տանելով դեպի մտավարծության ասպարեզ, Զարենցը, այդուամենայնիվ, այս անրնական, բայց անհրաժեշտ քայլն անում է այն անհատի դիրքերից, որը Նախրին պսակադրելու փոխարեն ժամանակավորապես ստիպված է պսակադրելու:

Ծննդյան առաջին իսկ օրերից փորձեր են արվել պարզելու «Երկիր Նախրիի» դրական սկզբնաղբյուրները, ավելի ստույգ առնչություններն ու ազդեցությունները: Առաջարկվել են տարբեր աղբյուրներ՝ Գոգոլի «Մեռած հոգիներ» պոեմը, Սալտիկով Շշեղրինի երգիծանքը, մասնավորապես «Մի քաղաքի պատմությունը», Անդրեյ Բելի արձակը («Պետերբուրգ»). Այսպիսի վերը Հայաստանին»:

Մի դեպքում առնջության պայման է դիտվել Զարենցի ժանրային կողմնորոշումը (նա էլ, Գոգոլի օրինակով, գրել է «պոեմանման վեպ»), մյուս դեպքում՝ պատումի ոճական կառուցվածքը (Զարենցը Անդրեյ Բելի հետեւությամբ դիմել է արձակի ազատ, անկանոն շարահյուսությանը), ապա գեղագիտական նմանությունը (Աբովյանի պես Զարենցը մեծարում է հայրենիքը՝ «փնովելով»):

Դժվար է, իհարկե, շշուաշափով պարզել գրական այս կամ այն հուշարձանի «ազդեցության աստիճանը» կամ ցուց տալ այս կամ այն գրական հուշարձանից Զարենցի ստացած տպագորությունների սահմանը: Անժխտելի է մի բան, որ «Երկիր Նախրի» վեպում կարելի է հայտաբերել «յուրացումների» ինչ-ինչ տըլյալներ ու հետքեր, անգամ՝ գրական քաղվածքներ:

Զնայած գրական աղբյուրների «հետքերին», «Երկիր Նախրին» արվեստի միանգամայն ինքնատիպ որակ է:

Գրականությունների պատմության մեջ անսովոր չեն այն փաստերը, երբ այս կամ այն գրական հուշարձանը ոչ թե միանգամից, այլ աստիճանաբար է բացում ներքին հարստությունը: Այդպիսի բախտի է արժանացել նաև «Երկիր Նախրին», մեծարեք մի գեղարվեստական գործ, որի ցրիվ շարվածքի մեջ երեսում է Զարենցի կերպարանքը՝ իր մեծ տիրության, մեծ զայրությի և մեծ երազի պահին: «Երկիր Նախրին» ոչ միայն արվեստի բարձր շափանիշ է, գրական նորարարության տիպար, այլև արդիական հնչեղություն ունեցող մի գրքածք, ուր տեսնում ենք Զարենցի ճակատամարտն աշխարհի հավերժական շարիքների՝ բռնության, պատերազմի, հոգեոր կաշկանդվածության, ազգային աղանդավորության դեմ:

## 8

1924 թ. տարեմուտին, հայ գրականության և իր անձնական մեծ բարեկամի՝ Ալեքսանդր Մյասնիկյանի, հանձնարարությամբ ու եռանդուն աշակցությամբ, նղիշե Զարենցն ուղևորվում է արտասահման:

Արտասահմանյան յոթամյա ուղևորությունը, ինչպես երեսում է Զարենցի գրած մի շարք նամակներից և «շափածո մտորումներից», վճռական նշանակություն է ունենում նրա կյանքում: Արտասահմանյան տպավորությունների ազդեցությամբ էլ ավելի են ամբապնդվում Զարենցի քաշուրական կողմնորոշումները, ինչպես և էական բեկում է կատարվում նրա գեղագիտական բմբռոնումների մեջ:

Եվրոպական մեծ քաղաքներից՝ նրանց հասարակական գոյաձեկի «Ընդհանուր գույնից» ստացած տպավորությունների մասին Ալ. Մյասնիկյանին գրած նամակում Զարենցը պատմում է հետեւյալը. «Առհասարակ հարկավոր է ասել, որ Եվրոպայում շրջում է ոչ թե «կոմունիզմի ուրվականը», ինչպես ընդունված է ասել, այլ՝ կոմունիզմի սարսափը. այնպիսի մի սարսափ կա այս երկրներում բոլշեկիզմի հանդեպ, որ անհնարին է նկարագրել. ամեն մի փոքր շարժումի, ամեն մի խլրոտումի, ամեն մի ամենափոքր խլրոտումի մեջ այստեղ գտնում են բոլշեկիների մատը և ահավոր թմբուկ են խփում, որ իշխողները արթուր մնան: Աշարեկված բուրժուան, շշմտծ եղան նման, արյուն է կալել աշքերին—ու ամեն տեղ, ամեն ինչի մեջ տհնում է կարմիր գույնը ու բառաշում է վախից, ու ահազանգ է խփում...»:

Զարենցն արտասահման մեկնեց իբրև Խորհրդային երկրի բանաստեղծական դեսպան՝ հպարտ այն գիտակցությամբ, որ ինքը նոր աշխարհի՝ ազատագրված ազգերի Միության, քաղաքացին է:

Դեռ նավախցիկում գրած «Դեպի Ստամբուլ» բանաստեղծության «մտնում ենք—արտասահման» տողը աշխարհագրական սահմանագիծ նշանակելուց առաջ նշանակում էր քաղաքական անշրաբետ: Դա ավելի ցայտուն գծերով երեւաց Կոստանդնուպոլսում, որի անմիջական տպավորություններով Զարենցը գրեց հրապարակախոսական ուժեղ շնչի «Ստամբուլ» պոեմը:

Սովորական ֆաթիի ժամանակներից թեև դարեր են անցել, երկիրը այլևս կոշվում է «Ռեպյուբլիկ Թյուրք», անձանաշելիորեն փոխվել է Պոլսի դիմագիծը («Մի ոտքը մեկնած է Եվրոպա, Մի ոտքը Ասիր մեջքին»), Ստամբուլը «Հպարտ-դինջ» վայելում է XX դարի քաղաքակրթությունը, «Հրճվում է պոռնիկի նման»), բայց առաջվա պես միահեծան, բիրտ, բարրարոս ուժի տակ՝

Հեծում է ամբողջ մի երկիր,  
 Եվ ոչ թե լոկ մի պատ մարմարեւ  
 Անցել են այն օրից դարեր,  
 Բայց դեռ հետքը սուլթանի ձեռքի  
 Մնացել է պատին այս քարե—  
 Ու մոայլ ճակատին երկրի...

«Ստամբուլ» պոեմով Զարենցը բացեց արտասահմանյան երկերի շարքը, գործի դնելով իր հրապարակախոսական պաթոսի և երգիծանքի շոայլ աղբյուրները:

Արտասահմանից Բաքվի «Վիշկայի» խմբագրությանը գրած նամակում Զարենցը եկել է մի եզրակացության, որը էական նշանակություն ունի նրա գեղագիտական հայացքների «հիմնական հեղաշրջումը» (սա բանաստեղծի ինքնաբնորշումն է) հասկանալու համար:

Զարենցը ծառանում է լեֆական-ստանդարտական դոկտրինայի, մարդում մի կողմով՝ սոսկ դասակարգային խմորով, պատկերելու աղանդավորական կաղապարի, գեղագիտական ինքնասահմանափակման, արվեստն «իրերի արտադրությամբ» փոխարինելու միտումների դեմ:

Կարող է հարց տրվել. ինչո՞ւ էր Զարենցը ծառանում Standart-ի դրույթների դեմ, մանավանդ որ նրա գեղագիտական նոր ծրագրում ևս տեսակարար մեծ կշիռ ուներ արվեստը կյանքի հրատապ խնդիրներին ծառայեցնելու հրահանգը:

Բանն այն է, որ կյանքի և արվեստի փոխհարաբերությանը Standart-ով տրվում էր միակողմանի բացատրություն, գուհիկ մատերիալիստների ոգով և դրույթներով արվեստը համարվում էր հասարակական այս կամ այն ֆորմացիայի ուղղակի, անմիջական արտադրությունը: Բացավում էր արվեստի հարաբերական անկախությունն ու ինքնուրույնությունը, նրա յուրահատկությունը:

Զարենցին, ահա, ամենից առաջ շեր գոհացնում «Standart»-ական «պողիցիաների» խիստ միակողմանիությունը, ինչպես նաև կամ ձկին, կամ բռվանդակությանը առաջնություն տալու, դրանք իրարից անշատելու, դրանց փոխներթափանցումը՝ ներքին կապերը, ժխտելու լեֆական դոկտրինան:

Լեֆի տեսաբանները՝ Արվատովը, Չուժակը, որոնք մարքսիզմը «յուրացրել էին» բոգդանովյան, մախիստական աղբյուրներից և հերքում էին արվեստի ճանաչողական սկզբունքը, կյանքի արտացոլման աւեսությանը հակադրում էին արվեստի մեջ «կյանքի կառուցման» նշանաբանը: «Կյանքի կառուցման լոգոնքն, ըստ էության, ոչ միայն ընդհանուր եզրեր չուներ կյանքի խոր յուրացման ուսալիստական հայացքի հետ, այլև ուղղված էր բուն արվեստի՝ հոգնոր գործունեության յուրահատուկ ոլորտի դեմ, արտացոլման լենինյան տեսության դեմ»:

Ինչպես «Վիշկայի» խմբագրին՝ Սուրեն Երզնկյանին, այնպես էլ Հարություն Սուրբիաթյանին գրած նամակներում, որոնք տեղ-տեղ նույնիսկ բառացի կրկնում են միմյանց, Զարենցն ընդվզում է «ձախ» հոսանքների («Լեֆ», կոնստրուկտիվիստներ, «մորֆոլոգներ»), գեղարվեստական աղանդավորության ու սահմանափակումների դեմ:

Թեև Զարենցի նամականու ձևով գրված հոդվածներում կան նախկին «պողիցիաների» ու «դպրոցային» մտածողության որոշ հետքեր, ինչպես, օրինակ, արվեստի աշխարհահոշակ գործերը «յուրաքանչյուր դարաշրջանի տիրող դա-

սի» հոգեբանության կնիքով բացատրելու դրույթը, ինչպես արվեստի յուրահատկության հերքումը («Ոչ մի սպեցիֆիկացիա»), ինչպես ձեփ՝ ֆորմայի, հերթումը,—բայց այս թուղություններով իսկ արտասահմանից գրած նամակ-հողվածները նշանավորում են գրականության ու արվեստի խնդիրների գնահատման նոր աստիճան:

1925-ին գրում է «Պոեմ Հերոսականի» Պրոլոգը, ուր արծարծում է բանաստեղծության և կյանքի հարաբերության խնդիրը:

Այս անավարտ պոեմն սկսվում է հետեւյալ խոստովանությամբ.

Լեթյան թմբուկը թողած մի կողմ,  
Հատվող տողերը նետելով դեն,  
Կըրկին խրթին մի խոր դողով  
Առնում եմ յամբ ես ու քողազոտ,  
Որ մեր պայքարը քնարերգեմ:

Որոշ ժամանակ հրապուրվելով «Լեֆ»-ի գեղագիտական դոգմաներով, Զարենցն արդեն զգում է դրանց միակողմանիությունն ու սահմանափակությունը, ուստի և խնդիր է դնում հաղթահարել «ձախ» հոսանքների հրահանգած գրական սխեմատիզմը՝ «լեթյան թմբուկի» աղմկարարությունը և մտնել ավելի հանգիստ, ավելի խոր հուն:

Զարենցի ստեղծագործության մեջ առանձնահատուկ տեղ են գրավում այն բանաստեղծություններն ու պոեմները, որոնք անմիջականորեն կապված են լենինի անվան հետ՝ կամ նրա պատմական մեծ գործի շափածո գնահատականներ են, կամ նրա հետ առնչվող «թեմատիկ պատմություններ», կամ նրա գործով հիմնավորվող «արվեստի հիմնական օրենքի» բացահայտումներ:

Զարենցի լենինապատումի առաջին անվանական էջը 1923-ին շարադրած «Ես և Իլլիլը» ֆանտաստիկական պոեմն է:

Գալիքը հսկող, նետածիգ բանաստեղծը,—այսպես էր որակավորում իր բանաստեղծական առաքելությունը ինքը՝ Զարենցը,—անգլիացի նշանավոր ֆանտաստ գրող Հերբերտ Ուելսի «Ժամանակի մեքենայով» մտովին ճանապարհորդություն է կատարում դեպի... 2500 թվականը:

...Հոկտեմբերի հաղթությունից հետո, 1920-ին, արդեն տեղի էր ունեցել Վ. Ի. լենինի պատմական հանդիպումը անգլիացի գրողի հետ, որի արդյունքը եղավ Ուելսի «Ռուսաստանը մշուշի մեջ» հայտնի գիրքը:

Այդ գրքում լենինն անվանված է «կրեմլյան երազող»: լենինը, Հերբերտ Ուելսի տպավորությամբ, անհավատալի-անիրագործելի-ֆանտաստիկական ծրագրեր է մշակում Ռուսաստանի ապագայի համար...

Ուելսը լենինյան ծրագրերի ու կուսակցության նկատմամբ ուներ մի վերաբերմունք, որը կարելի է անվանել՝ թերատեսություն: Հեղափոխությամբ տակն ու վրա եղած Ռուսաստանը նրան երևում էր իրեն պատմության ալիքներում խորտակվող նավը: Հերբերտ Ուելսին թվում էր, որ ինքը շուտով լինելու է ոչ միայն Ռուսաստանի, այլև առհասարակ մարդկային քաղաքակրթության կործանման ականատեսը:

Զարենցի «Ես և Իլլիլը» ֆանտաստիկան, ըստ երևույթին, հղացվել է իրեն պատասխան Հերբերտ Ուելսի «Ռուսաստանը մշուշի մեջ» գրքում արտահայտված թերահավատության, մի տեսակետ, որն այդ օրերին գտնվում էր համաշխարհային հասարակական կարծիքի կիզակետում:

1924թ. հունվարյան անփառատելի վշտի օրերին սովետական շատ բանաստեղծներ՝ երկրի բոլոր եզերքներից, առաջնորդի մահվան անմիջական տպավորությամբ, գրեցին Հրաժեշտի բանաստեղծություններ:

Արդեն հունվարի 23-ին Զարենցը գրեց այժմ արդեն քրեստոմատիական դարձած «Լինին» ներբողը:

Այդ բանաստեղծության ուժը միայն վշտի անկեղծությունը չէր, այլև առաջնորդի Գործին տված գնահատականների խորությունն ու հեղափոխական լավատեսությունը:

Արդեն այս բանաստեղծության մեջ կարելի է նշմարել այն էական գաղափարական խնդիրները, որ Զարենցը լուծելու էր իր մյուս լենինյան պատումներում:

Լենինի մահը ամբողջ երկրում ստացավ համաժողովրդական սգի կերպարանք:

Հողագնդի բոլոր անկյուններում, նույնիսկ ամենահեռավոր եզերքներում, անմիջական արձագանք գտան ՌԿ(Բ) կենտկոմի «Կուսակցությանը» Բոլոր աշխատավորներին» Ուղերձի համառոտ, բայց տպավորիչ խոսքերը.

«Լենին ապրում է ամեն մի ազնիվ Բանվորի սրտում:

Լենին ապրում է ամեն մի ընշաղուրկ Գյուղացու սրտում:

Լենին ապրում է միլիոնավոր զաղությաին ստրուկների մեջ:

Զարենցի բանաստեղծական սգերգի արտահայտչությունը, Հնչյունը, ոիթմը, պառագան, ինչպես և գնահատականների կազմը, անտարակույս, ներշնչված է այդ պատմական Ուղերձի բնութագրություններից:

Լենինի մահից հետո, սովետական գրականության և արվեստի առաջնահերթ խնդիրը դարձավ «երկրագնդի վրա երբնէ եղած մարդկանցից ամենամարդկային» գեղարվեստական կերպարի ստեղծումը:

Դա վերին աստիճանի բարդ և դժվարին խնդիր էր:

Դժվարությունն ամենից առաջ այն էր, որ Լենինի մոնումենտալ և բազմակողմանի էությունը բացահայտելու համար անհրաժեշտ էին ոչ միայն լենինյան պատմական գործի փայլուն իմացություն, այսինքն՝ լենինյան աշխարհայացքի տիրապետում ու վերապրում, այլև գեղարվեստի հզոր ու համարժեք միջոցներ:

Մյուս դժվարությունները լենինի կերպարի մեկնաբանության հավաստի, այսինքն՝ ոչ միայն քաղաքական, այլև գեղարվեստական համոզիչ տեսակյունը գտնելն էր:

Անհրաժեշտ էր այնպես ներկայացնել առաջնորդին, որ երեար կերպարի «մարդկային տեսանկյունը» և ոչ թե քաղաքական գործի պլակատային սխեման:

Ինչպես Վլ. Մայակովսկին, Եղիշե Զարենցը նույնպես առաջին հերթին մտահոգված էր մեկնաբանության խնդրով: Դրա արտահայտությունն են նրա հետեյալ տողերը, ուր, ինչպես գրում է Պ. Սևակը, Զարենցի մտորումը ստացել է «գեղագիտության հիմնական օրենքի» ուժ:

...Լենին, այս՝, լենին—Բայց ոչ միտինզային,

Բայց ոչ թմրուկ թեթև, բայց ոչ պլակատ:

Լենին—այսօր արդեն ասել է զագաթ,

Ասել է—ներքին կառուցում քո նոր թեմայի:

Ա. Անդրեսի լենինյան քանդակների հոշակավոր շարքը, Վլ. Մայակովս-

կու «Վ. Ի. Լենին» պոեմը, Մ. Գորկու «Լենին» հուշագրական ակնարկը, Բ. Պաստերնակի, Ս. Եսենինի, Ն. Ասելի, Պ. Տիշինայի, Մ. Սվետլովի, Գ. Տարիձեի և այլոց բանաստեղծությունները սովետական արվեստում հաստատում էին լենինապատումի գեղագիտությունը:

Արդեն 1925-ին, արտասահմանում՝ Բևոլինում, Զարենցը տպագրեց «Երեք փոքրիկ պոեմ»՝ «Լենին» շարքից, գրքույկը, ուր տեղ գտան «Լենինն ու Ալին», «Լենին քեռին», «Բալլարդ Վլադիմիր Իլյիչ», մուժիկի և մի զույգ կոշիկի մասին» հանրահայտ պատումները:

Դժվար չէ նկատել, որ հասարակ մարդկանց հուզաշխարհի և լենինի հոգեկան միասնության գեղարվեստական կողմնորոշումը մեծ նշանակություն ունեցավ Զարենցի ստեղծագործության ռեալիստական հիմքերը ամրացնելու մեջ:

Լենինյան պոեմներով Զարենցը ոռմանտիկական ձևից անցավ պատումի ռեալիստական ձևին, արտահայտման ավանդական-ոռմանտիկական ոճից՝ ռեալիստական արտահայտչությանը, ուր էական դեր են խաղում կոնկրետ մանրամասները, ժամանակի նշաններն ու գույները, կենդանի, բնական հնչերանգը:

Մուշա Պողոսից («Ամենապոեմ») և հայ գեղջուկից («Մաճկալ Սաքոյի պատմությունը») հետո Զարենցի բանաստեղծության ոճային համակարգում այդպիսի «դեր ստանձնեցին» թուրք նավաստին, Պիտերի բանվորի տղան, ուսւ մուժիկը:

Բոսֆորի ափին լենինի մահը սգացող թուրք մակույկավար Ալին, հեռավոր Սիբիրից գյուղացիներին հուզող հոգսերով լենինի մոտ եկած մուժիկը, որ պատմությունների տպավորությամբ լենինին տեսնելու համար Կարմիր Հրապարակ շտապող բանվորի տղան կենդանի մարդիկ են՝ ամեն մեկը ապրումների արտահայտման յուրահատուկ, վերին աստիճանի բնական եղանակներով: Այդ հերոսների պարզ ու հասարակ պատմությունների միջոցով Զարենցը լուծում է գեղարվեստական այնպիսի էական ինդիր, ինչպես շարքային անհատի և երկրի առաջնորդի հարաբերության ինդիրն է:

«Երեք փոքրիկ պոեմի» հրատարակության «Լենին շարքից» հղումը հուշում է, որ Զարենցը ծրագրել էր ավելի լայն ընդգրկումով և բազմակողմանիուրեն ներկայացնել լենինի կերպարը:

Բանաստեղծի ինքնածրագրերի յուրացումները եղան մի շարք նոր գործեր՝ «Կոմունարների պատը Փարիզում» («Ալեքսանդր Մյասնիկյանի հիշատակին»), «Մաճվան քայլերք», «Չուգումե մարդը» և այլն:

Եթե «Կոմունարների պատը Փարիզում» պոեմի առաջին տարբերակը («Մյուր-դե-Ֆեներե») գերազանցորեն Փարիզի հակապատկերների գեղարվեստական յուրացումն է, ապա նոր տարբերակը Զարենցը խմբագրել է այնպես, որ պոեմի առանցքն է դարձել լենինյան գաղափարների փառարանման ու հաղթության մոտիվը:

Հեղափոխության գործին նվիրումով անձնական վիշտը հաղթահարելու մոտիվի յուրօրինակ շարունակությունն է Արփենիկի հիշատակին նվիրված «Երկու սոսները»:

Ինչպես պատմության շրջադարձը գնահատելիս Զարենցը վերին շափանիշ է համարում «ապստամբության վարպետի» քաղաքական հեռատեսությունը, գոյությունը գնահատելիս՝ լենինյան մտքի «դիսցիպլինը», այդպես էլ անձնական դրաման շափում է լենինյան վշտի շափանիշներով:

1927-ին, սկզբում Թիֆլիսի «Մարտակոչ» լրագրում՝ թերթոններով, ապա առանձին գրքով, դարձյալ Թիֆլիսում («Զակնիգա» հրատարակչություն), տպագրվեց Զարենցի արձակի երկրորդ ժամանակաշրջանը՝ «Հիշողություններ Երևանի Ուղղիւ տնից»:

Կինելով անհավասարակշիռ, «խենթ» խառնվածք, որը երբեմն նրան հասցեում էր անսանձ մոլեգնության, Զարենցը 1926 թ. աշնանը Երևանի Աստաֆյան (Աբովյան) փողոցում, օրը ցերեկով, կատարել էր «Հերթական», բայց այս անգամ՝ «ճակատագրական խենթությունը». ատրճանակից կրակել էր Երևանի սիրունատես, երեելի աղջիկներից մեկի վրա, նրան պատճառելով մարմնական թեթև վնասվածք:

Այս դիպվածի, իր իսկ որակումով՝ «քրեական ժանր հանցանքի» համար, Զարենցը գատվեց ու դատապարտվեց, դառնալով Երևանի Ուղղիւ տան կայանավոր:

Հայ գրականությունն այս «շարարաստիկ» ու տխուր պատմությանն է պարտական իր անգուգական էջերից մեկի՝ «Հիշողությունների...» ծնունդը:

Պատմելով այս երկը գրելու շարժառիթների մասին, Զարենցը մի քանի տողով ներկայացնում է նաև գեղարվեստական այն խնդիրը, որ պատմողին հուշել է «արտասովոր աշխարհը» Երևանի Ուղղիւ տան կյանքը:

Այս խնդիրը նաև հեղինակի դիրքորոշումն է. «Երերի դժբախտ բերումով ես առիթ ունեցա մոտ վեց ամսվա ընթացքում բավականին ծանոթանալու Երևանի Ուղղիւ տան կյանքին և այժմ էլ ուզում եմ նկարագրել այդ հետաքրքիր վայրը, որը... ապրում է մեր աշխերի առաջ իր յուրօրինակ կյանքով... ես այստեղ պատմելու եմ միմիայն «տպավորություններ» և բնավ հավակնություն շունեմ զբաղվելու խորհրդային կյանքի այդ, ես կասեի՝ դարմանալի անկյան ուսումնասիրությամբ։ Այս իմաստով իմ դիտողությունները կունենան բավականին սուրբեկտիվ բնույթ, սակայն ես միսիթարում եմ ինձ այն հույսով, որ դրանք զուրկ չեն լինի որոշ «մարդկային» հետաքրքրությունից...»։

Այս նախնական բացատրության մեջ տրված է գրվածի գեղարվեստական բանաձեռ՝ պատմել բացառապես «մարդկային» հետաքրքրություն ներկայացնող տպավորություններ, ուրիշ խոսքով՝ «խորհրդային կյանքի զարմանալի անկյան»՝ կալանավորական փակ աշխարհի մեջ յուրացնել նրա մարդկային-հույսական բովանդակությունը։

Գեղագիտական սույն կեցվածքը անծանոթ չէր գրականության պատմությանը. Դասական օրինակը տվել էր Ֆ. Մ. Դոստովեցին՝ Զարենցի գրվածքում բազմիցս հոլովող «Մեռյալ տունը» (1861—1862) նոթերով, որի գեղարվեստական հետքերն, անտարակուսելիորեն, կարելի է դիտել «Հիշողություններում...»։

Ֆ. Մ. Դոստովեսկուն համաշխարհային հոչակ բերած «Մեռյալ տունը»՝ դանտեական դաժան տեսարաններով և շղթայակապ Ռուսիայի տաժանակրության ահասարսուու նկարագրություններով, անշուշտ, չէր կարող ելակետ լինել Երևանի Ուղղիւ տան կյանքի նկարագրության համար, ոչ էլ Զարենցին կարող էր հարազատ լինել քրիստոնեական «հնագանդության» բարոյական այն պատվիրանը, որ իր գրվածքով քարոզում էր Դոստովեսկին։

Այսուամենայնիվ, իր կալանավորական տպագրությունները շարադրելիս Զարենցը աշքի առաջ է ունեցել «Մեռյալ տան» հեղինակի մարդկային դիր-

քերը, «փակ աշխարհի» բնակիչների հոգերանության յուրահատկությունները բացահայտելու դոստուկակիական կրքուտ հարցասիրությունը, ինչպես և «Մեռյալ տան» գեղարվեստական կառուցվածքն ու հերոսներին բնութագրելու դոստուկական պատումի եղանակը:

Ամենից առաջ՝ մարդկային դիրքերը:

Անտարակույս, պատմական վիթխարի անջրպետ է բաժանում իրարից Դոստուկու «Մեռյալ տան» տաժանակիրներին Զարենցի «Ուղղիչ տան» կամանավորների ճակատագրից:

Դոստուկու «Մեռյալ տունը», որ խորհրդանշում է ցարական Ռուսաստանի հասարակական կառուցվածքի ամբողջ դաժանությունը, այն վայրն է, ուր սպառվում և կործանվում են ծողովորի կենդանի ուժերը: Իր իսկ՝ Դոստուկու որակումով, «Մեռյալ տան» մեջ «իզուր կործանվեցին հզոր ուժերը, կործանվեցին աննորմալ կերպով, անօրինական, սնվելադարձ»:

Զարենցի «Ուղղիչ տունը», ընդհակառակը, այն վայրն է, ուր երբեմնի «շեղվածներն» ու հանցագործները կոչված են իրենց տեղը գտնելու կյանքում, փրկվելու կործանումից, դառնալու հասարակության լիարժեք անդամներ:

Ճակատագրի արմատական տարրեցությունը, ոչ էլ մեկի մուալ, մյուսի՝ լավատեսական շունչը, չի բացառում հեղինակային վերաբերմունքի նույնությունը, նրանց դիրքերի ընդհանրությունը:

Անկախ բոլոր տարրերություններից՝ պատմական ժամանակ, սոցիալական պաթոս, հեղինակային աշխարհայացք և այլն, Զարենցին խորապես հարազատ էր ուսւագականության մեծ մարդասերի հոգեկան շաղախը՝ նրա լայնատարած, անմնացորդ հումանիզմը:

Մարդու գնահատման շարենցյան բարձր դիրքերով է շնչում «Ուղղիչ տունը»՝ մարդկային եղբայրության շարենցյան մատյանը, որի պաթոսի համար շափազանց բնորոշ է նրա ամենավերջին հատվածը. «Վերջին հիշողությունը, որ մնացել է իմ մտքում այդ վերջին օրերից՝ այն երեք շարանձի, ցրտից այրված դեմքերով ու սե, պսպղոն աշքերով «խուժաններն» են, որոնց մի ցուրտ երեկո կայարանի ճանապարհին հավաքել էր մեր պետը, դրել կառք և բերել Ուղղիչ տուն...»

...Այդ օրը նրանց նոր շորեր հագցրին և տեղափոխեցին Ուղղիչ տան խոզաբուժարանը, որ գտնվում էր մեր շենքի դիմացը: Հին կալանավորական շորերից մի գիշերվա ընթացքում փոքրացրին ու ծիծաղելի-խոնթոշ զգեստներ կարեցին նրանց համար Անուշն ու Մարգարիտը: Նրանք ապրում էին ծառայողների սենյակի մի անկյունում և գոհ էին իրենց վիճակից: Պետը հարց էր հարուցել, որպեսզի նրանց մանկատուն ընդունեն, բայց գործը ձգձգվում էր: Ես նրանց այդտեղ էլ թողի, այդ երեք փոքրիկ «խուժաններին»—Ուղղիչ տան վերջին օրերիս երեք այդ իմ փոքրիկ ընկերներին—իմ երեխ եղբայրներին...»:

«Երևանի Ուղղիչ տունից» գրվածքը գեղարվեստական զարմանալի երևոյթ է ներքին աշխարհազգացական տրամադրությամբ ու միասնությամբ, ուր գերունի համազգացման այն վարակիչ պաթոսը, որն անընդմեջ թրթոում է պատումի ամբողջ ընթացքում՝ «փակ աշխարհի» «Մուտքից» մինչև նրա ելքը՝ «Վերջին օրերը»:

Երբ Զարենցը խոսում է իր տպավորությունների «սուբյեկտիվ բնույթից», առաջին հերթին նկատի ունի իր դրական վերաբերմունքն այն մարդկանց ճակատագրի նկատմամբ, ովքեր ինչ-ինչ պատճառներով, «հոգեբանական», «բիոլոգիական» կամ այլ կարգի շարժառիթներով, երբեմն իրենց կամքից

անկախ, հայտնվել են կյանքի հատակում՝ դարձել են բնակիչները. «Ուղղիւ տան»:

Զարենցյան որակագորումով՝ Ուղղիւ տան «անձնակազմը» ոչ միայն միատարր չէր իր մարդկային նկարագրով, այլև շափականց մեծ տարբերություններ կային բնակիչներից յուրաքանչյուրի ճակատագրի միջև. քրեական ծանր հանցագործների՝ մարդասպանների կողքին Ուղղիւ տան կամերաներում տեղ են գրավել չնշին զանցանք կատարած մարդիկ, մեծ ճանապարհի ավագակների կողքին՝ փողոցային գրանահատներ, նշանավոր գողերի կողքին՝ «անշառ», խեղճ ու կրակ արարածներ:

Զարենցի հուզական վերաբերմունքը, իր բազմազան տարբերակներով՝ կարեկցանք, խղճահարություն, մտերմություն, հանդիմանություն, ակնածանք, զմայլանք, զվարճանք, դառնաթախիծ հեգնանք և այլն, այն ճանապարհն է, որով նա մտնում է այդ մոլորված «հասարակության սիրտը»՝ ճանաշելու «փակ աշխարհի» մարդկային էությունը:

Այս առիթով ակամա մտաբերում ես «Երկիր Նաիրիի» հերոսների դատապարտման-մերկացման շարենցյան հնչերանգը:

Մինչ ազգային պատմության ճակատագրական օրհասին հայտնված ռպատվարժան «նաիրյան դեմքերը» արժանանում են գրողի դաժան դատ ու դատաստանին՝ շթողներով հաշտության և ներման ոչ մի ճանապարհ, «Ուղղիւ տան» բնակիչները, ընդհակառակը, արժանանում են գրողի «արդարացմանը» ճանապարհ տալով ներման շարենցյան հնչերանգին:

Բանն այն է, որ սրանք՝ կալանավորական «փակ աշխարհի» բնակիչները, հասարակական այնպիսի լուրջ վտանգ չեն ներկայացնում, ինչպես ազգային կյանքի մակարույծները:

Մինչ «Երկիր Նաիրի» վեպում Զարենցը առարկայացնում էր նաիրյան քաղաքի դեմքերին՝ զրկելով նրանց մարդկային նկարագրից ու հատկություններից, այլև գոյության հեռանկարից, «Ուղղիւ տան» մեջ, հակառակը, անում է ամեն ինչ՝ մարդկայնացնելու արդեն առարկա դարձած կալանավորներին և նշմարելու նրանց գոյության հեռանկարը:

«Ուղղիւ տան» ամենամեծ արժանիքը, «մարդկային դիրքերից» հետո, իհարկե, տիպագրման, բնավորություններ բացահայտելու շարենցյան հզոր վարպետությունն է:

«Երկանի Ուղղիւ տունը» այս առումով բնավ չի զիշում «Երկիր Նաիրի» վեպին. իբրև թե «անձնական հաճույքի», պարապ ժամերը լրացնելու, հոգեկան դատարկությունը հաղթահարելու մտահոգությամբ գրված «Հիշողություններում...» Զարենցը հերոսներին կյանք ու շունչ տվող նույնպիսի խոշոր վարպետ է, ինչպես «Երկիր Նաիրի» վեպում:

«Ուղղիւ տան...» Զարենցը խոր ու խորաթափանց դիտող է: Վերին աստիճանի պարզ է՝ «պարզունակության» հասնելու շափ պարզ, նրա արտահայտման ոճը: Ավելին. Զարենցը բնավ չի դիմում գեղարվեստական բարդացումների, այսպես կոչված «գրական հնարանների», չի դիմում որևէ ճիգ ու ջանքի՝ բնավորություններ բացահայտելու համար:

Բնական, ազատ, ինչ-որ շափով «թիթե ու թոռւցիկ», ինչ-որ տեղ «անկազմակերպ», «ցաքուցրիվ» պատումն էլ բավական է, որ «Ուղղիւ տան» բնակիչները երևան իրենց ուրույն լինավորությամբ, ավելի ստույգ՝ ավարտված անհատականությամբ: Այս առումով, անտարակույս, գեղարվեստական նշանակալից յուրացում է «կալանավորական արիստոկրատիայի» ներկայացուցիչ

Բաղդասարի կերպարը, որին Զարենցը հանձնարարում է իրքն «ամենաամբողջական տիպը» կալանավորական հասարակության մեջ:

Նույնը կարելի է ասել նաև կազգու (որ Ուղղիչ տուն է ընկել իր անրարույական կնոջ պատճառով), Ասլան բիծու՝ պարզամիտ, անշառ հայ գյուղացու, Բելոգուբովի և Բրավելմանի՝ էությամբ խեղաթյուրված մարդկանց, «Ուղղիւ տան» թերեւ բոլոր բնակիչների մասին՝ հյութեղ, կենդանի բնավորություններ, «բնավորության օրենքի» շարենցյան յուրացումներ:

Արտաքին ձեռվ հեղինակի օրագիր հիշեցնող պատումը (Զարենցը ներկայացնում է իր օրագրային գրառումները) ներքին բովանդակությամբ գեղարվեստական ուժեղ ընդհանրացումն է կյանքի այն անկյան, որը կոչվում է «կալանավորական հասարակություն»՝ յուրահատուկ «կենցաղային կոլորիտով», իր «օրերով ու վաստակներով», բարբերով ու վարքերով:

Ո՞րն է շարենցյան գեղարվեստական ընդհանրացման ժանրության կենտրոնը:

Երեք այն, թե ինչպես մարդկային քայլայված, աղճատված, խեղաթյուրված կապերը սոցիալական նոր ազդակների, առաջին հերթին՝ աշխատանքային նոր հարաբերությունների ազդեցությամբ, վերագտնում են իրենց մարդկային դիմագիծը, թե ինչպես ազնիվ ու հանրօգուտ աշխատանքը, անգամ Ուղղիւ տան նման միջավայրում, հրահրում է մարդու բարոյական վերածնունդը:

Այս մոտիվներն անցնում են «Ուղղիւ տան» բոլոր էջերով, որով և Զարենցի պատումը վերսճում է «մարդկային ռապոդիայի», ինչպես վերնագրել է ուս սովետական ականավոր դրամատուրգ Ն. Պոգոսինը դարձյալ կալանավորական աշխարհին նվիրված իր «Արիստոկրատներ» դրամայի առաջին տարբերակը:

## 10

«Խմբապետ Շավարշը» պոեմում (1928), որը Զարենցի ծրագրած «Ապըստամբություն» մեծ կտամի մի հատվածն է, բայց ամբողջական հատվածը, խմբապետության ճակատագիրը լուսաբանվում է ոչ թե զտարյուն երգիծանքի գույներով, ինչպես «Ազգային երազում» և «Ամենապեմում», այլ հոգեբանական խորացումների արտահայտչությամբ:

Տարբերությունն այն է, որ, հեռանալով երկույթի մակերեսային-արձանագրական և, մանավանդ, պլակատային-հրապարակախոսական լուծումներից՝ ժամանակի գրականության ու կերպարվեստի շատ գործերում տեղ գտած սխեմատիկ հասարակացումից, Զարենցը փորձում է երկույթը բննել ավելի խոր հայացքով, պարզել պարտիզանական շարժման ողբերգական վերասերման պատմահասարակական պատճանները և պատասխանել այն հարցին, թե ինչու խմբապետը, որ մի ժամանակ, իր ծննդյան օրերին, ժողովրդական լայն խավերի աշքին բարձր ու անվիճելի հեղինակություն էր, դարձավ միանգամայն ատելի այդ նույն ժողովրդական խավերի համար:

Շավարշը պարտիզանական շարժման դրաման արտահայտող հերոսը, լայն թագի տեր, կորովի, ջլապինդ, ուժեղ անձնավորություն է Այդպես է հանձնարարում նրան Զարենցը պոեմի նախագրության մեջ՝ Մուտքում, որը որոշ իմաստով նաև պոեմի ավարտամասն է՝ շիկացման բարձր կետը:

Ահա Զարենցի հանձնարարականը.

Խմբապետ Շավարշը: — Մի հաղթ տղամարդ,  
Երեսին՝ վերից վար՝ ուշույնի հարված.  
Ալզ հարվածն հայարում էր իր դեմքի պարողը՝  
Մանավանդ, երբ զգոն էր ու մի քիչ հարրած:  
Այդ հարվածն ու բեղերը: — Դեղին, ոլորած,  
Երկու խուրձ հրեղեն, երկու առու,  
Որ ժանր իշնելով կզակի վրա—  
Նրան տալիս էին «քաջի» համարում:  
Եվ մոալլ աշքերը՝ բիբերում արյուն,  
Եվ խիտ հոնքերի գերանդին...

**Շավարշի** արտաքին առնականության շարենցյան այս նկարագրին խորապես ներդաշնակում է նրա հոգեկան աշխարհի փլատակվածության նույնքան ազդեցիկ, տպավորիչ պատկերը.

...Հյուրանոցում խմբապետ Շավարշը  
խմում էր, խմում ու մուծով լցվում:  
  
Շավարշը խմում էր: — Լուռ, մոալլ բազմաֆ,  
Սեղանի գլուխը, որպես ամպ ժանր.  
Եվ ամեն մի բաժակը բամած  
Կան ցարձնում էր ավելի համու.

**Շավարշը**, որ մի ժամանակ կարծում էր, թե ինքը և հերոս է, և մարդ, հասել է ճակատագրական-ճգնաժամային մի հոգեվիճակի, երբ մտածում է, որ այլևս ոչ հերոս է, ոչ էլ մարդ... իր իսկ աշքին նրա անցյալը երևում է իբրև ցնդած երազ ու աներական լեզենդ, ներկան՝ ունայնություն...

Իսկ ինչ է պատահել, ինչո՞ւ Շավարշը, որ «իրեն համարում էր անհաղթ արու, որպես հրաշք՝ ելած հայ ցեղի արգանդից», հասել է հոգեկան այնպիսի փլատակվածության, որ այլևս տրվում է ինքնախոշտանգման:

Հերոսի վերասերումը բացահայտելու համար Զարենցն անցնում է նրա կյանքի պատմությանը:

Թուրքական բիրտ բռնություններից իր աշիբաթը փրկելու համար Շավարշը կնուսից գաղթել ու ապաստանել է «Արարատյան հանրապետության» սահմաններում, հուզ ունենալով, որ «ոռուսհայ եղացլները» աշակցության ձեռք կմեկնեն անիրավածներին, որ դաշնակցական կառավարությունը օգտության կամանի տունն ու տեղը կորցրած, ասպատակվող գաղթականներին...

Նրա սպասելիքները, սակայն, չեն իրականանում: «Արարատյան հանրապետության» մեջ նա բախվում է մի իրադրության, որ այլ կերպ չի կարելի գնահատել, քան «Ճգնաժամային կացություն»:

Ծրջապատված «տղերքով»՝ պարտիզանական կոիվների մեջ ամրացած մշեցի, կարսեցի, իգդիրցի զինվորներով, Շավարշը վերապրում է և իր աշիբաթի վրա կախված սպառնալիքը, և դաշնակցության «շոտարի» անճարակությունը, և մարդկային արժանապատվության ոտնահարումը, և վաղեմի «փրկչական» իդեալների փլոգումը...

Ամեն ինչ տակնուվրա է անում նրա հոգեկան աշխարհը, եթեմնի «քաջին» մատնելով անօգնական հուսահատության:

Նա ընդվզում և ծառանում է ամեն ինչի դեմ, բայց, առաջին հերթին, դաշնակցական շտարի դեմ, ուր վարիչ էր ինքը՝ Դրոն.

Ուսւահայ սպաներն են իշխում այսակու:  
Ուսւացած սպաները: — Օսլայած տղերը,

Զեռքերին՝ ձեռնոցներ, դեմքերին՝ պաւորա:  
Աշ գննք են տեսել, ոչ կոփէ:

Շավարշը խոր կասկածանքների ու հոգեկան գալարումների մեջ է: Առավոտյան ժամը վեցին նա իր խմբով պետք է ներկայանա Դրոյին:

Մինչ կկայացնի ճակատագրական որոշումը, Շավարշը նորից նոր վերհիշում է իրենց արտ ու հանդից տեղահան արված մարդկանց հետ պատահած սարսափները, նորից նոր նրա հայացքի ասաց մեխվում են մահվան տեսիլները, մտապատկերները ողողվում են ահավոր մղձավանշի տեսարաններով:

Յուրաքանչյուր նոր վերհուց ու տեսիլք, նոր տպավորություն ու մտածում խորացնում է Նավարշի Հոգեկան ճգնաժամը, նրան դնելով կոնֆլիկտային հարաբերության մեջ՝ իր հետ:

Շավարշը ընդվզում է, առաջին հերթին, իր դեմ: Ինչո՞ւ, ի՞նչ պատճառով. այն, որ հավատացել է դաշնակցության սուստ խոստումներին, որ իր աշիրաթի բախտը կապել է այն մարդկանց հետ, որոնց համար ազգն ու հայրենիքը լոկ թզատերէ է՝ իրենց «դասակարգային բաղձանքները» թաքցնելու համար:

Հազվագյուտ խոր թափանցումով ներկայացնելով Շավարշի Հոգեկան փլատակածությունը, Զարենցն աստիճանաբար մոտենում է իր այս գրվածքի գեղարվեստական գլխավոր խնդրին:

Ո՞րն է այդ խնդրը:

Դա հանցանքի և պատժի Հոգեբանության բացահայտումն է:

Ճակատագրական իրադրության մեջ, կորցնելով ոտքի տակի Հոգը և փլուզված տեսնելով բոլոր պատրանքները, Շավարշը հզոր ու հպարտ մի բնավորություն, կերպարանափոխվում է այն աստիճան, որ բռնում է Հանցագործության ուղին.

Այրեց, շարդեց, թափեց, քանդեց,  
Գյուղը գաշտ դարձրեց կարմիր հնձի,  
Կոտորեց, շարցրեց ծեր, կին, աղջիկ, մանուկ,—  
Մինչև ուշ գիշեր, մինչև ուշ գիշեր ասպատակեց.  
Հետո լուսինը կարծես՝ արյան մեջ էր լողանում,  
Իսկ գյուղը դիակ էր կարծես՝ կապված իր ձիու  
ասպանդակից:

Շավարշի հանցանքը, Զարենցի մեկնաբանությամբ, այն «քաջի» ողբերգության տրամաբանական շարունակությունն էր, որին այլևս ոչինչ չէր մնում՝ վրեմից բացի:

Իսկ կույր վրեմը անում է անկարելին՝

...Վաղ առավտվա մեց,  
Զարագուշակ, դաժան երգեց մառվերը  
Արյան, մուժի, մահի, ասպատակի երգ...

Ապամինելով այլևս նեմեսիսի՝ վրեմի ուժին, «հերոսը» քայլալվում և մանրանում է այն աստիճան, որ դառնում է անասնական կրքերի, ցածր բնազների ստրուկ:

Շավարշի էության մեջ գլուխ է բարձրացնում հակամարդը:

Շավարշը, Զարենցի մեկնաբանությամբ, դատապարտված է կործանման պատժի: Պատիժը նա կրում է արդեն իր մեջ, երբ այլևս սուտ են թվում բոլոր երազները, դատարկ է թվում կյանքը, անմիտ՝ զոհաբերությունները, անհետանկար հագատը:

Պահմում գլխավոր շեշտը հատկացված է ներքին գործողությանը՝ հերոսի ինքնավերլուծմանը, ավելի ստույգ՝ սեփական դրամայի ճանաչմանը, որի հիման վրա էլ «Խմբապետ Շավարշ» ժամրը կարելի է սահմանել «դրամատիկական տեսիլ» անոնուվ՝ օգտագործելով՝ պուշկինյան «Փոքր ողբերգությունների» հեղինակային բնորոշումը:

## 11

Ճանապարհի ամեն մի հանգրվանում, Պ. Սևակի դիպուկ նկատողությամբ, Զարենցը կառուցում էր նոր իշխանատուն, հավատարիմ մնալով իր իսկ սահմանած նշանաբանին. «Քո անցած ամեն մի ճամփին ասա՞—սառիշ է արդեն»:

Թանաստեղծության ուրիշությունը կամ ուրատադիր նորացումը Զարենցը հիմնավորում էր ոչ այլ բանով, եթե... պոեզիայի «պահպանողական էությամբ, նրա անփոփոխ ու անփոխարինելի բնույթով»:

Զարենցը, որն իր խառնվածքով թշնամի էր ամեն մի «պահպանողականության» և կրքոտ ջատագովը՝ նորարարության, որ բարենորոգիլ էր՝ այս հասկացության ամենաբարձր նշանակությամբ, այսուամենայնիվ այն մտքին էր, որ պոեզիան չի կարող հերքել իր նախնական էությունը:

Հանդիսանալով ժամանակի և բանաստեղծի փոխասացություն,—դատում է Զարենցը,— պոեզիան ոչ թե ժամանակից դուրս, այլ ժամանակի բուն խորքերում է որոնում նորացման կենդանի աղբյուրներն ու ինքնահաստատման հզոր լիցքերը:

Փատմության ճանապարհի բեկման ընթացքում ստեղծվեցին «Էպիքական լուսաբաց» և «Լիրիքական անտրակտ» շարքերը: Մրանց մեջ տեղ գտան այն գործերը, որ Զարենցը գրել էր 1927—30 թթ. ընթացքում:

Նոր շարքերի հուղական-իմացական էության համար վերին աստիճանի բնորոշ է այն բանաստեղծությունը, որով Զարենցը սահմանում է իր ստեղծագործության ու ճակատագրի նոր սկիզբը, անվանելով դա էպիքական առավոտ.

Սիրով եմ բաժանվում քեզանից,  
իմ հախուն անփոփություն,  
իմ անհոգ օրեր պատանի,  
իմ շոայլ շահելություն:  
Ողջունում եմ քեզ խնդությամբ  
եվ ոչ թե դառը ցավով,  
իմ վերշին, վերշին այգարաց,  
իմ էպիքական առավոտ:

Այս տողերը Զարենցը գրել է 1929-ին, այն ժամանակ, երբ արդեն անցել էր մեծ ճանապարհ՝ «Երեք երգից...» մինչև «Սոմա», այստեղից մինչև «Խմբապետ Շավարշ», երբ նվաճել էր հայ նոր բանաստեղծության բարձունքը:

Նվաճած կետից, ահա, նա նայում է իր ճանապարհին, սահմանելով ստեղծագործության նոր սկիզբ:

Ի՞նչ բովանդակություն են արտահայտում «մեծ ճանապարհ», «անհասանապարհ», «նոր, դժվարին վերելք», «սահման» ու «սահմանագիծ» հասկացությունները, ո՞րն է այդ հասկացությունների գեղագիտական իմացական

տեսանկյունը: Ինչի՞ է ծգում բանաստեղծը, բանաստեղծության զարգացման ի՞նչ կողմեր են մտահոգում նրան:

Այս հարցերին պատասխանելիս Զարենցը ասպարեղ է բերում ժամանակի համառ և փորձարկող «վերին իմպերատրիվը»՝ Հոգու:

«Էպիքական լուսաբաց» գիրքը նվիրելով «միակ բարեկամին»՝ Ակսել Բակունցին, այդ գրքի վրա Դրիգոր Նարեկացու «օգնությամբ» Զարենցն արել է Հայոց նշանակալից մակագրությունը՝ «Մի եղէց անպտուղ՝ ի փոքր վաստակոյս՝ իբր ապացան սերմանող անքերրի երկրի»<sup>20</sup>:

Դրոշակակրի, սերմնացանի, տեսանողի ու մտածողի բազմազան գերերով է բացատրվում այն հանգամանքը, որ «Էպիքական լուսաբաց» և «Լիրիքական անտրակու» շարքերում այդքան մեծ կշիռ ունեցան գեղագիտական արծարծումները՝ արվեստի փիլիսոփայության բանաստեղծական յուրացումները:

Ոչ միայն «Պոետական արվեստ» շարքի էսքիզները՝ թվով 21, այլև բազմաթիվ ուրիշ էջեր՝ փիլիսոփայական մտածմունքից մինչև էպիգրամ, բանաստեղծության էությունը պարզաբանող պատճամներ, ասույթներ, խորհուրդներ և դիտողություններ են:

Թեև բանաստեղծական ուրվագծերը կոչվում են «Ἄρτοις ποετίγα», բայց ամենաին էլ Զարենցը խնդիր չի ունեցել շարադրել պոետական արվեստի կանոնների գիրք, ինչպես վարվել են դասական օրենսդրությունները՝ Հորացիոսից մինչև Բուալո, մինչև Ռենե Գիլ:

Իր կենդանի-անմիջական, ազատ-անկաշկանդ բնույթով ու նպատակներով Զարենցի գեղագիտությունը նախ և առաջ բանաստեղծի ինքնաքննությունն է, իր ճակատագրի ու ճանապարհի յուրացումը, և, ապա, իուսաննես թեխերի գիպուկ խոսքով ասած՝ «պոեզիայի պաշտպանությունը»:

Զարենցի գեղագիտական դավանանքի մեջ առաջին տեղերից մեկը գրավում է «ի՞նչ է պոեզիան» երբեք շնացող, միշտ նոր էություն և նոր օրենքներ հայտաբերող հարցի պատասխանը:

Վերին աստիճանի ուշագրավ է, նախ և առաջ, Զարենցի դիմումը ավանդական բանաստեղծության, հատկապես ոռմանտիկականի, հնառն և հնաճաշական կերպարին՝ Մուսային:

Անկասկած է, որ Զարենցին հետաքրքրել է ոչ թե ոռմանտիկական բանաստեղծության Մուսայի դիցարանական մետաֆորը, ոչ թե Մուսայի՝ իրեն ներշնչման և ուժի աղբյուրի, կլասիցիստական-ավանդական պատկերացումը, այլ նույն ավանդական կերպարի ձևափոխված այն տարատեսակը, որ տեղ է գտել ն. Ա. Նեկրասովի «Երազ» բանաստեղծության մեջ:

Նեկրասովյան Մուսան Զարենցին առանձնապես գրավում էր իր ռեալիստական-պլեբեյական նկարագրի համար. դա այլև քնարը ձեռքն առած երկրներից առարկաված Թիմապիկական դիցուհին չէ, այլ վերին աստիճանի սովորական, առօրեական, հողեղեն մի արարած, որի հետ ուսւ բանաստեղծը խոսք ու զրույց է բացում ժամանակի ամենակենսական և ամենամտահոգի խնդիրների շուրջը, նրանով էլ սահմանելով իր բանաստեղծության ուղղությունը.

Կա նաև հարցի երկրորդ կողմը:

Նեկրասովյան Մուսան Զարենցին գրավել է ոչ միայն ռեալիստական կերպարանքի, այլև հարստության և բազմակողմանիության համար:

Ինչպես նեկրասովի «Մուսա» հոչակավոր բանաստեղծության մեջ Զարենցի Մուսան ևս միանգամայն իրական, երկրածին, ժամանակի հոգսերով 306

շնչող մի էակ է, որի հետ նա բացում է խոստովանության անկեղծ գրուց իր անցած ճանապարհի, պոեզիայի կենդանի շնչի և կենդանի ոգու, բանաստեղծական բովանդակության և ճշմարտության մասին:

Այս առումով ուշագրավ է բանաստեղծության հետևյալ հատվածը:

Զկարողացա ես կրել կյանքում  
Պայծառ անունը քո, որպես դրոշ,—  
Եզ ես հասկացա, որ դու ես այդ, դու  
Ինձ հետապնդում հատուցման սրով:  
  
Եզ ոռնացի ես, ինչպես մահամերձ  
Գաղանն է ոռնում մահվան սարսափից,  
Զեռքերս անով կարկառոցի քեզ,  
Կարռով անձուն կարռոտցի ես  
Կենդանի շնչից, հրիդ ու տապիդ:

Երգի վերադարձի գեղագիտությամբ Զարենցը բնավ չէր այրում քաղաքացիական բանաստեղծության կամուրջները, բնավ չէր հրաժարվում իր ճանապարհից, ինչպես դատում էին նրա որոշ ժամանակակիցներ՝ աղանդավորներն ու գոեհկարարները:

Ճիշտ հակառակը՝ այդ սահմանումով նա արտահայտում էր իսկական պոեզիայի քաղաքացիական ու մարդկային բովանդակության համադրման մտահոգությունը, պատմական նոր դարաշրջանի «իմպերատիվը»:

Զարենցի վերին մտահոգությունը սովետական դասական բանաստեղծություն ստեղծելն էր:

Իսկ ի՞նչ շափանիշներ էր նա կարեռում և համարում մեծ, բովանդակալից, իսկական բանաստեղծության պայմանը:

Զարենցը վկայակոշում է այլնայլ պայմաններ, բայց ամենից հաճախ դառնում է բանաստեղծի ժամանակի, ավելի լայն, փիլիսոփայական առումով՝ արվեստի և իրականության փոխհարաբերության վաղեմի, բայց միշտ նոր խնդրին:

Սա նրա գեղագիտական դավանանքի առանցքն է, սկիզբների սկիզբը:

Պարզ-բարդ արվեստի խնդիրը Զարենցը մեկնաբանում է ոչ թե վերացական սխեմաներով, այլ պատմական-հասարակական կոնկրետ մթնոլորտի մեջ, քնարի մասին խոսելիս շարունակ վկայակոշելով հասկացությունների այն շարքը՝ դար, ժամանակ, պատմություն, որոնք բովանդակություն, նյութ ու ձև, թոփք ու խորք, գույն ու ձայն են տալիս բանաստեղծությանը («Դու քո երգով ընդմիշտ կապված ես այս մեծ դարին», «Ներկան է հիմա իմ դեմ աղմակում», «Ի՞նչ են մեր մեծ դարի հանդեպ երգերը մեր թոթովախոս», «Մեր վիթխարի դարը...» և այլն, և այլն):

Դարի Հոգու Զարենցին երևում է իրեն իրականության բում խորքերից և կող ստեղծագործական ազդակ.

Հաղար թեկերով քաշում է ներկան  
Ինձ հործանուտը իր լուս պայքարի:

Զարենցի դիրքերի համար բնորոշ են «Խոհ» բանաստեղծությանը կցված բնարանները, մեկը՝ Օվիդիոս Նազոնից՝ «Մերը—ահա նրա միակ մեղքը», մյուսը Միսաք Մեծարենցից՝ «Շատ էր լեցուն հոգվույս, ով Տեր, բազմազեղումն այս շրջասփյուռ...»:

Բնաբանները պատահական, հանպատրասահից ընտրություն չէին: Դրանք, ինչպես և բանաստեղծությունը, ունեին բանավիճային ուղղություն:

Ո՞ւմ դեմ էր ուղղված բանավեճը:

Ժամանակակից բանաստեղծության այն «օրենսդիր»—հրահանգիչների դեմ, ովքեր արվեստի «հասարակական լայնության» դիրքերը պաշտպանելով, ըստ էության նեղացնում էին քաղաքացիական բանաստեղծության էությունը, բանաստեղծության ոլորտից դուրս մղելով մտերմական ապրումների շունչը, մարդու հետ աշխարհ եկած «հազար մտորումն ու հազար զգացումը»:

Բազմակողմանի, հոգեբանությամբ հարուստ մարդու դիրքերից Զարենցը ողջունում ու ողջագուրվում է իր բարեկամի, զինակցի, հավատարմատարի՝ Մուսայի հետ, որը բանաստեղծին բախչում է թերևս ամենամեծ հրճվանքը՝ «ոգու ջինջ թախիծը»: Սա ոչ թե վաղ քնարի դառնաթախիծն է, այլ մարդու մեծագույն կարոտը, մարդկայնության ծարավը:

Ժամանակի և մարդու բազմակողմանի էության խոր հերկման պահանջը, քնականաբար, ասպարեզ է թերում գեղարվեստական ավանդների շարունակման ու զարգացման խնդիրը:

Առաջին հերթին Զարենցի հատուկ վերաբերմունքին է արժանանում Ա. Ս. Պուշկինը, «պոետներից ամենապայծառն ու վսեմը», ինչպես բնորոշում է նրան Մամիկոն Գևորգյանին նվիրած գրքի («Էպիքական...») մակագրության մեջ:

Զարենցը՝ ոռու դասական գրականության խոր գիտակը, իհարկե, մինչև լենինգրադյան հանգրվանը նույնպես լավ գիտեր Պուշկինին, բայց լենինգրագում՝ հնամենի Պետերբուրգում, որը Պետրոսի քաղաքը լինելուց բացի, հավասարապես նաև Պուշկինի օրրանն էր, նորից նոր, սրբազն դողով ձեռքն է առնում Պուշկինի հատորները, նորից նոր սուզվում է պուշկինյան անհուն նվագների մեջ՝ պոեզիայի մեծ գանձարանից պեղելով արվեստի «հավիտենական ճշմարտությունները»:

Պուշկինը այլևս Զարենցի համար դառնում է բանաստեղծական խոսքի խորության և կատարելության իդեալ ու շափանիշ, ոգու և մտքի ամենաբարձր փայլատակումներից մեկը, ինչպես Հոմերոսը, Դանտեն, Գյոթեն:

Պուշկինյան բանաստեղծության ի՞նչ սկզբունքներ, ի՞նչ կողմեր են ամենից ավելի արժանանում Զարենցի ուշադրությանը:

Առաջին հերթին՝ Պուշկինի հանճարի խոր առնչությունները իր ժամանակի, իր դարի հոգեոր պահանջմունքների, հոգսերի ու պատմական միտումների հետ:

Զարենցին գրավում էր նաև Պուշկինի ստեղծագործության վերածննդյան շունչը, արվեստի հանճարեղ պարզությունը.

Քնարն է պետք Ալեքսանդրի,  
Ու քնարի հետ միասին՝  
Այդքան անհուն ու ահագին,  
Այդքան պայծառ ու վեհ մի սիրու—

Վերին աստիճանի ուշագրավ են Զարենցի մտորումները բանաստեղծության «սպեցիֆիկայի»՝ գրական վարպետության, սիթմի ու հանգի, նյութի դիմադրության և այլնի, մասին:

Ինչպես պոեզիայի այլևայլ հատկանիշներին, այնպես էլ վարպետությանը նվիրված մտորումները ոչ թե դիդակտիկական սահմանումներ ու պատվերներ են, այլ սեփական ստեղծագործական փորձից քաղված, «անձնական

**Ճակատագրի» կնիքը կրող եզրակացություններ, յուրահատուկ ռազմա մտքեր»:**

Ի՞նչ կարևոր, էական հետևությունների են բերում շարենցյան «գեղագիտական փորձերը»:

Ահա դրանցից ամենահիմնականը, ծրագրային-սկզբունքայինը, արտահայտված մի ամբողջ տեսություն ամփոփող հետևյալ ֆրագմենտի մեջ.

Թե ուզում ես, որ խոսքդ կորի հորիզոններ, դաշտեր,—

Պիտի վարպետ լինես անօրինակ թափի,

ինչպես լենինը—ապստամբության, ինչպես էլենտեյնը—

Թվի, տարածության, ձգողության, շափի:

Խոսքի վարպետությունը համադրելով քաղաքական և գիտական վարպետության՝ ապստամբության և տարածության գաղտնիքների խոր իմացության հետ, Զարենցն այս համադրությամբ կարենում է ոչ միայն և ոչ այնքան բանաստեղծության տեխնիկական զինվածությունը, այլ, առաջին հերթին, իրականության խոր ու ամբողջական գեղարվեստական հետազոտությունը:

Կենսագրության լենինգրադյան հանգրվանը (1929 թ. աշում) եղավ մոտավորապես երազած «բոլդինյան աշումը»:

Լենինգրադում, իր խոստովանությամբ, Զարենցը ճաշակեց հոգեկան խաղաղության, հետևաբար և հաճույքներից բարձրագույնի՝ ստեղծագործության, հաճույքը.

Ճաշակեցիր դու մի զարմանալի հանգիստ,

Օ՛, անհանգիստ իմ սիրտ, անհանգրվան ճամփորդ:

**Այստեղ, Պուշկինի ոստանում, նա գրեց ոչ միայն «Էպիքական լուսաբաց» շարքը՝ Մուսալի հետ բացած մտերմական խոստովանություններով, էպիքական ֆրագմենտներով, շափածո նովելներով, որոնք համախմբված են «Լենինգրադյան ցիկլ» խորագրի տակ, այլև «Լիրիքական անտրակտը», ուր Զարենցի գեղագիտական դավանանքը մեկնաբանող «Արք քուտիցա»-ի յուրօրինակ, շատ ինքնատիպ էսքիզներից բացի, տեղ գտան նաև ուրիշ գործեր՝ «Մանկություն» պոեմը, սատիրական բանաստեղծությունները, էպիգրամները՝ զրական-բարոյական թեմաներով և այլն:**

Էպիքական ֆրագմենտներով («Հատվածներ լգրված պոեմից», «Չուգունեամարդը», «Հոկտեմբեր 25—26. 1917») Զարենցը նորից դառնում է սոցիալիստական հեղափոխության ոլորտը՝ նյութ քաղելով Հայաստանի հեղափոխական իրադրության, երկրի վերակառուցման և 1917 թ. Հոկտեմբերի զինված ապստամբության դեպքերից:

Ի տարբերություն հեղափոխության անսանձ, փոթորկութ, բարձրացող տարերը ոռմանտիկական-հուզական պայմանի գեղագիտությամբ («Սոմա», «Ամբոխները...») և հանդիսավոր-հրովարտակային ոճով (Ռադիոպեմներ) բացահայտող գործերի, ֆրագմենտներում Զարենցը դիմում՝ է աեալիստական պատումի եղանակին:

Նորագույն պատության լեգենդի մի էական դրվագն է Պուշկինի «հանգով» հյուսած («Նրա հանգով է, որ հյուսեցի ես էլ այս երգս...») «Չուգունեամարդը», մյուսը՝ դարձյալ պուշկինյան «հանգով» գրված Զմեռային պալատի գրավումը նկարագրող «Հոկտեմբեր 25—26. 1917» ֆրագմենտն է:

Ուստի պոեզիայի պատմության մեջ պուշկինյան պլաստիկան անմրցակից է, իսկ նրա պլաստիկայի գագաթը համարվում է «Պղնձե հեծյալ» պոեմը,

ուստի Զարենցը գեղարվեստական պատկերի իր նոր սկզբունքները մշակելիս ամենից առաջ հենվում էր այդ պոեմի վրա:

Դրա մի արտահայտությունն է «Չուպոմն մարդը»:

1929-ին, «Նոր ուղի» ամսագրում (*N 9—10*) «Լենինգրադյան ցիկլից» ընդհանուր վերնագրի տակ Զարենցը տպագրեց երեք գործ՝ «Զմեռային պալատի ներքնահարկում», «Անակնակալ հանդիպում Պետրոպավլովյան ամրոցում», «Հոկտեմբեր 25—26. 1917»:

«Զարենցի ստեղծագործական ուղին» հոդվածում Արտաշես Կարինյանը արել է մի ենթադրություն, որը պարզում է «ցիկլային» բաժանման գաղտնիքը. «Հավանականությունից զուրկ չէ, որ հենց լենինգրադում նա սկսում է նորից կարդալ լենինի ուսումնասիրությունները, առանձնապես նրա «Գերցենի հիշատակին» հոդվածը; Ինձ թվում է, որ հենց այդ հոդվածում արծարծված մտուրումները կարող էին Զարենցին թելադրել այնքան յուրահատուկ կերպով մոտենալ անցյալի հեղափոխական շարժումներին»<sup>21</sup>:

Միանգամայն ճիշտ կուհում:

«Գերցենի հիշատակին» հոդվածը, ինչպես հայտնի է, լենինյան գրական ժառանգության մեջ յուրահատուկ տեղ է գրավում իրեն ուսումնական ազատագրական շարժման պարբերաշրջանների խորաթափանց վերլուծությունը Բնավ տարակուսելի չէ, որ Ռուսաստանի ազատագրական-հեղափոխական շարժումների լենինյան պարբերացման տպագորության տակ էլ Զարենցը մտահղացել է «լենինգրադյան ցիկլը», խնդիր ունենալով գեղարվեստական խոսքով լուսաբանել այդ շարժումների պատմական հաջորդականությունը՝ ազնվականական-դեկարտիստական («Զմեռային պալատի ներքնահարկում»), սազնոշինյան-դեմոկրատական («Անակնակալ հանդիպում...»), պրոլետարական-հեղափոխական («Հոկտեմբերի...») էտապները:

«Լենինգրադյան ցիկլը» Զարենցի ստեղծագործության ուշագրավ էջն է նաև պուշկինյան գեղարվեստական ավանդների՝ ժանրի, ոճի, ոտանավորի, ստեղծագործական յուրացման առումով:

Անզեն աշքով իսկ նկատելի է այդ ցիկլի «պուշկինյան ֆակտուրան»՝ հակիրճ, խտացած և պարզ պատում, էպիկական մոտիվների հուզական գումավորում, նյութի ոիթմական կազմակերպման ձկումնություն, խստաշունչ արտահայտչություն, պուշկինյան պեյզաժի (Նևա, Պետրոպավլովյան ամրոց, պղնձե հեծյալ, պատմական հուշարձաններ) նկարագրություններ և այլն:

1932-ի Երկերի մեջ «Անակնակալ հանդիպումը...» փոխում է իր տեղը. «Լենինգրադյան ցիկլից» անցնում է «Զափածո նովելների» շարքը, ուր խմբված էին ևս երեք գործ՝ «Հոմօ Sapiens», «Մեծ առօրյան», «Քանգրահեր տղան»:

«Զափածո նովելները», «այլակերպ», տարբեր հնչերանգով (առաջին դեպքում՝ քնարական, երկրորդում՝ սատիրական, երրորդում՝ պաթիտիկ) հյուսված «թեմատիկ պատմություններ են», որոնց միջոցով Զարենցը յուրացնում է իր կենսագրության որոշակի հատվածները:

«Homo Sapiens»-ում նա դառնում է կենսագրության վաղ շրջանին, պատանեկան ապրումներին, ուստի և դիմում է այդ նյութին համապատասխանող քնարական-դրամատիկ հնչերանգին:

«Մեծ առօրյայում» «թեմատիկ պատմության» նյութը սոցիալիստական շինարարության եռուկենից խորթացած «փոքր մարդու հոգեկան ճնաժամն արտահայտող ապրումներն են, որը և բերել է համապատասխան երգիծական-հեղմական հնչերանգ»:

«Գանգրահեր տղան» պատմում է ժողովրդի գալիքի, հասարակության ներդաշնակության բանաստեղծի իդեալի մասին, որը և թելադրել է նովելի ոգեշունչ-պաթետիկ-փառաբանական հնչերանգը:

Զափածո նովելների խմբին, որոց կողմերով, մասնավորապես իր կենսագրության դրվագի հետ կապված պատումով, միանում է «Մանկություն» պոեմը, որի շարժառիթն էր Գ. Մահարու «Մանկություն» և «Պատանեկություն» գրվածքների հրատարակությունը, որոնց շուրջը ժամանակի մամուլում բուռն վեճեր են զնացել:

Զարենցը ևս որոշել է մասնակցել այդ բանավեճին, բայց ոչ թե գրական հոդվածով, այլ շափածո խոսքով, պոեմի համար բնաբան ընտրելով Մահարու բանաստեղծության հետևյալ դարձվածքը՝ «Մանկություն իմ, ոսկեծամ...»:

Զարենցի բանաստեղծական վեճը թեև իր վրա կրում է ժամանակի «սուցիոնգիական դոկտրինայի» կնիքը, բայց տարբերվում է Գ. Մահարու վիպակների այլևսայլ ընթերցումներից՝ մեկնաբանության ազնվությամբ:

Զարենցը նույնպես չի բաժանում «ոսկե մանկության», «չինչ պատանեկության» մահարիական կեցվածքը և, պատմելով տխուր մի դեպք իր կյանքի առավոտներից (նոր զգեստի պատմությունը), գրշակից ընկերոջն է դիմում հետևյալ հանդիմանությամբ:

Եվ գու, Գուրգեն, իզուր ես քանքարը դրել,  
Որ համոզես, թե քոնց եղել է չինչ լուսին:

Իր իսկ մանկությունը Զարենցը գնահատում է ոչ այլ կերպ, քան ոգորչ կտավ».

Ես շգիտեմ հիմա, թե ես ինչ եմ հիշում,  
Իմ մանկությունն արդյոք, թե այն անթով,  
Այն զարշանու անցյալը, որ մեզ համար միայն  
Նողեալի բույր ուներ, ու անարդանք, ու մահ:

Այս գնահատության մեջ դեր է խաղացել Զարենցի իրապես դաժան մանկությունը: Դրա համար էլ նա բերում է իր մանկության պատկերն ու պատկերացում՝ հերքելու մահարիականը.

Օ, մանկություն իմ, պարզ պատմություն ես գու մի,  
Դու քնքություն, զու մեզմ թռվություն ես բարում...  
Փովում է դեմս ահա քո զորշազույն կտավը—  
Եվ իմ երգի համար ես ընտրում եմ Օկտավը:

## 12

1934-ին տպագրվեց Եղիշե Զարենցի նոր ժողովածում՝ «Գիրք ճանապարհ» խորագրով:

Զարենցը հավանորեն զգացել էր, որ սա լինելու է իր վերջին, ամենավերջին մատոյանը, ուստի և զըռում էր դարերի համար, դարերին հանձնելու իր մտքերն ու պատվիրանները:

Նախ՝ խորագրի մասին:

Ի՞նչ իմաստ է արտահայտում «Գիրք ճանապարհ» խորագիրը, ի՞նչ է նշանակում՝ ճանապարհի գիրք:

Հարցին որոշակի պարզություն է բերում խորագրի սկզբնաղբյուրը։ Գևորգ Էմինի վկայությամբ խորագիրը Զարենցը «յուրացրել» էր վաղըն-շական դարերի շինական փիլիսոփայության՝ դասսականության հիմնաղիր՝ Լառ-Ցզիից՝ ծանոթանալով վերջինիս գրքի ոռուերեն («Կնուք ու թարգմանությանը»)<sup>22</sup>:

Այդ վերնագիրն, անշուշտ, պատահական ընտրություն չէր։

Կարդալով դասսական իմաստափրության խոշոր գեմքերից մեկի՝ Լառ-Ցզիի «Դառ-Դի-Ցզին» գիրքը, ուր «ճանապարհի»՝ Դառ-ի, ուսմունքը գտել է իր կատարյալ և ամբողջական արտահայտությունը, Զարենցն այնտեղ նըշմարել է մտքեր, բանաձեռ, պատվիրաններ, մարգարեություններ և այլն, որոնք հարազատ են եղել այդ տարիների իր մտածումներին։

Դասսականությունը ոչ միայն միատարր և միակողմանի ուսմունք չէ, այլև վերին աստիճանի հարուստ ուսմունք է՝ բազմաթիվ ու բազմակողմանի իմացական շեշտերով։

Զեավորվելով մեր թվականությունից առաջ՝ VI—V դարերում, իբրև կոնֆիցիուսականությանը հակադրվող ուսմունք, «դասսականությունը» սկզբնապես նշանակել է ճանապարհի (Դառ-ի) ուսմունք, հետագայում հեռանալով նախնական «ճանապարհ», «ուղի», «երթ», «ուղղություն» իմաստներից, նշանակել է բնության օրինաչափությունների ճանապարհ, մարդկային կյանքի ճանապարհ («Դառ-դի»), իբրևի բնական ճանապարհ (մատերիալիստ Լառ-Ցզիի մոտ), «աստվածային, իդեալական սկիզբ» (դասսականության իդեալիստական թեկի մոտ) և այլն, և այլն։

Դասսականության ի՞նչ շերտեր կամ գաղափարական ի՞նչ մոտիվներ են գրավել Զարենցին։

Հավանորեն դասսականության ուսմունքի այն մոտիվը, որի համաձայն իրերը ծնվում, զարգանում և կերպարանափոխվում են միմիայն սեփական ճանապարհի, իրենց մեջ եղած ներքին լիցքերի շնորհիվ, իսկ եթե բացակայում են շարժման ներքին լիցքերը, ապա անհրաժեշտաբար վերաճում են իրենց հակադրությանը, այսինքն ճանապարհը զրկվում է բնական զարգացման հնարավորությունից։

Իրերի սեփական ճանապարհի մոտիվից բացի՝ Զարենցին հատկապես գրավել է հավերժական ճանապարհի գաղափարը՝ դասսականության փիլիսոփայության գլխավոր կետը։

30-ական թվականներին՝ ստեղծագործական կյանքի նոր հանգրվանում, Զարենցի ստեղծագործության մեջ հիմնական որակ է գառնում իրերի էության փիլիսոփայական թափանցումը։

Իրերից, բնականաբար, նրան ամենից ավելի հետաքրքրում են ժողովրդի պատմական երթի՝ Պատմության ճանապարհի, Գոյի էության՝ կյանքի ճանապարհի, արվեստի նշանակության՝ Արվեստի ճանապարհի, խնդիրները։

Այդ խնդիրներին համապատասխան էլ Զարենցը դասսակարգել է «Գիրք ճանապարհի» ժողովածում։

«Պատմության քառուղիներով» բաժինը նվիրված է ժողովրդի պատմական հին ու նոր ուղիների քննությանը, «Տաղեր և խորհուրդներ» բաժինը՝ կյանքի էության փիլիսոփայական մեկնաբանությանը, «Գիրք իմացության» և «Արվեստ-քերթության» բաժինները՝ արվեստի հավերժության բացատրությանը։

Չարենցի յուրօրինակ պատմափիլիսոփայության յուրացումը եղավ «Պատմության քառուղիներով» գործը, որով խորագրված է նաև պոեմների ամբողջ շղթան՝ թվով տասը պոեմ:

Սա, բնույթով, բնարական-հրապարակախոսական մենախոսություն է հայոց պատմության քառուղիների, նրա դժվարին երթի՝ անկումների և վերթեների, նրա գոյության հիմնական աղբյուրների մասին:

Այս պոեմի բովանդակությունը շարենցյան ճշտությամբ կարդալու համար անհրաժեշտ է նորից հիշել դասուականության բանաձևերը: Մեկ այն, որ իրեղը ծնվում և կերպարանափոխվում են սեփական ներքին լիցքերի միջոցով՝ կենսունակության ներքին պաշարներ հայթայթելով, մեկ էլ այն, որ իրեղը ձգտում են հավերժական ճանապարհին:

Դասուականության այս բանաձևը տեղադրելով հայոց պատմության իր տեսության մեջ, Չարենցը դրանց տվել է վճռական նշանակություն:

Պոեմը սկսվում է Հայոց Պատմությանը տրված հետեւալ ընդհանուր գնահատականով.

Պատմության քառուղիներով մենք քայլել ենք երկար՝  
Անդեկ, ցաքուցրիվ, անգազափար,  
Հին դարերից մինչև այս հանճարեղ ներկան,  
Որ հոգհրատում է մեր դեմ գալիքնափալ:  
Այն անգո առավոտից, երբ լեզնդական  
Եր խարուցն է վառել մեր անգո նախահայրը,  
Այս Մասիսի հանդեպ, այս անիրական  
Արարատյան գաշտում—որպես զրույց անծայր մի  
Տարածել է ուղին մեր անպատմելի,  
Անծայրածիր ձգվել ու դարերով ձիգ,  
Եվ զնում է այսօր ու երկարվում էլի  
Դեպ՝ ինչ անհայտ ափեր ու գալիքներ անծիր:

Մենախոսական պոեմի այս Մուտքը որոշակի տեսություն է հայոց պատմության ճակատագրի և ապագայի մասին:

Պոեմի հաջորդ Հատվածները կոնկրետացնում են Մուտքի ընդհանրացումը, ասպարեզ բերելով հայոց պատմության քառուղիները՝ այդ քառուղիների տարրեր ու տարրեր աստիճաններով, տարրեր հատվածներով:

Պատմության քառուղիների իր տեսությունը Չարենցը, բնականաբար, սկսելու էր խոր հնագարից՝ «անխնիներից փառապանծ», որոնք շեն արել ավելին, քան ստրկության և երկրային անիմաստ ընթացքի «գյուտը»:

Չարենցի կեցվածքը՝ նախնիների հանդեպ անպայմանորեն ժխտական է, դատապարտող:

Ինչո՞ւ է այդպես:

Ազգի գոյության խնդիրը կապելով մեսիանիզմի քարոզի հետ («Առանց մեզ աշխարհքը կլինի՝ ասպարեղ մի ամայիս»), նախնիները, Չարենցի պատմագիտական բացատրությամբ, ժողովրդին շեն տվել գոյության ամենահմատում զենքը՝ մաքառման, պայքարի, ոիմագրության ոգին.

Ծ, չի եղել մեր գայլը պղնձաւ,  
Եվ ոչ մարմարիոնա, և ոչ անգամ քարե, —  
Նիհար, կողերը լերկ, նա անցել է անծայր  
Տափաստաններ, մինչև նա հանգիստ է առել  
Այս Մասիսի հանդեպ անիրական,  
Այս խորշակյալ, անզուռ Արարատյան դաշտում,

Եվ՝ լուսնի գեմ նստած՝ նա երկար  
Ունացել է իր վիշտը անկշառմ...

«Օ՛, չի եղել մեր գայլը պղնձյա...» դարձվածքը պոեմի գլխավոր, ամենագլխավոր ընդհանրացումն է: Դրա վրա է հենցում Զարենցի պատմական տեսությունը: Մեղավոր են նախ և առաջ նախնիները:

Ի՞նչ են թողել սրանք հետագա դարերին:

Նրանց հորինած առասպելական գայլը՝ «գեմքը տված գալիք փորձանքների հողմին», քայլել է անդեկ, անառագաստ, ոռնացել է իր «անձուկ տառապանքը»:

ԵՎ Առնցը նրա  
Դարձել է հիմնը մեր անարձագանք—  
Ու դարերով հնչել մեր պատմության վրա...

Վաղնջական նախնիների անուղի ճանապարհը,— ասում է Զարենցը,— շարունակել են «արքաներ անծողովուրդ և գահազուրկ», որոնք հարյուրամյակներ շարունակ, անկերպարանք ուրուների նման, միայն օդային ամրոցներ են կառուցել, բնավ շմտահոգվելով ազգային գոյության ներքին պաշարների՝ դիմադրության պղնձյա ոգու, մասին:

Գալով հայոց պատմության V դար՝ ազգային գաղափարախոսության երկունքի ժամանակաշրջանը, Զարենցը դարձյալ պատմությունը գնահատում է ներքին ուժերի՝ սեփական ճանապարհի դիրքերից, ուստի և պահում է իր ժխտական կեցվածքը:

Ազգային փրկության առաջին գաղափարախոսներից հետո գալիս են XVIII դարի՝ դարձյալ անդեկ առաջնորդները, որոնք.

Եել են գիշերով ու մենակ ճամփորդել են  
Դեպի հյուսիս, դեպի հյուսիսային Արջ  
Արշերը սաղցասիրու ու արնաթաթախ, —  
Այդպէս մեր գայլն էր հին ճանապարհվում որոի՝  
Հյուծված, կողերը լերկ և անատամ...

Ապա գալիս են «երեկվա տերերը»՝ ավելի «անկերպարանք, անդեմ»:

Մի ամբողջական հայացքով ընդգրկելով հայոց պատմության երկարածիգ շղթան՝ հին դարերից մինչև «դարերը նորեկ», Զարենցը, բնականաբար, շէր կարող շրջանցել ժողովրդի գնահատության խնդիրը:

Իր պատմական տեսության մեջ Զարենցը ժողովուրդը առանձնաշնում է որպես հաստատվող, մեծարվող, դրական արժեք՝

Խսկ ժողովուրդը, որ եղել է հանճարեղ,  
Եղել է որմնադիր, եղել է կառուցող,  
Քաղաքներ է շինել, պարիսպներ է շարել,  
Կամուրջներ է գցել կոր գծով, —

Ժողովուրդը՝

Ապրել է նա իր ճարտարային կյանքով,  
Խոր խավարում՝ արկ երազել, —  
Եվ երգել է դարեր իր ուսմկական հանգով  
Իր խաները արդար ու վսեմ:  
Ստեղծել է նա իր հերիաթները, — և իր հնամյա  
Վեպում հանճարեղ

Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր  
եվ անժահ խորհուրդն է դրել:

Պատմության քառուղիներում ժողովուրդը եղել է այն ուժը, որ պահել ու  
պահպանել է գոյության ոգին և արևի ճանապարհի երազը, այն խարիսխը, ուր  
առագաստ է նետել հայոց պատմությունը՝ իր բոլոր երերումներից, իր ան-  
վերջ տարուրերումներից հետո:

Պոեմի մի ծայրից մյուսն անցկացնելով ժխտման գիծ, Զարենցն, այսու-  
մենայնիվ, դատապարտում-բացասումից հետո գրում է.

Մոլորակի վրա այս խայտաբղետ,  
Աշխարհի սկզբից մինչև վախճանը  
երևի առաջին ժողովուրդն ենք մենք,  
Որ կամենանք անգամ—դավաճանել  
Անկարող ենք փառքին մեր ու պատմության անցած

### Դեռ ավելին՝

Այդ մենք ենք երկի այն ուղղով հաստակող,  
Որ Հիսուսի առակին հակառակ,—  
Պիտի մտնենք՝ անգամ ասեղի նորր ծակով՝  
Ապազայի դրախտը անարատ...

«Հիսուսի առակով» Զարենցը նկատի ունի Մաթեոսի ավետարանի (ԺԹ)  
այն հատվածը, ուր Քրիստոսը պատկերավոր ձևով իր աշակերտներին բա-  
ցատրում է այսինչ կամ այնինչ գործողության անհնարինությունը. «Դյու-  
րին է մալխոյ (ուղտի) մտանել ընդ ծակ ասղան, քան մեծատուն յարքայու-  
թիւն Աստծոյ մտանել»:

Դժվար է այստեղ նկատել որևէ այլախոսություն:

Ավետարանական առակի հղումը տրամաբանական շարունակությունն է  
Զարենցի տեսության, ուր պատմությունը երևում է երկու վերաբերմունքով, —  
մեկ իբրև բացասվող, մեկ իբրև հաստատվող արժեք: Բացասվում են ազգա-  
յին գոյության իսկական աղբյուրները չհանձնարարած նախնիները, հաստատ-  
վում է ժողովրդական «անշեղ ոգին», որը ընդունակ է նվաճելու «անծիր» գա-  
լիքը, ժողովրդի հավերժության ճանապարհը:

Շարքի մյուս պոհմը «Մահվան տեսիլն» է:

Հարց է ծագում. ինչո՞ւ, ի՞նչ նպատակով Զարենցը դիմեց տեսիլքին, ին-  
չո՞ւ նա որոշեց հայ ազատագրական գաղափարախոսության անցած ուղիները  
ներկայացնել ոչ այլ կերպ, եթե ոչ՝ միշնադարյան հնառն տեսիլքի արտա-  
հայտշական միջոցներով:

Խնդիրը միայն այն չէ, որ XIX դարի և XX դարասկզբի ազգային պատ-  
մությունը՝ փրկության սպասումներից մինչև մեծագույն աղետը, այսինքն՝  
ազգային գոյության ուղիների ողբերգական փլուզումը, կարող էր յուրացվել  
ոչ այլ կերպ, եթե միայն մահվան տեսլանկարով, տեսիլային խառնապատ-  
կերով, տեսիլային այլափխություններով:

Սա իր հերթին:

Կա նաև ուրիշ պատճառ, տեսիլքների շարքին գիմելու ուրիշ արդարա-  
ցում:

Հայոց պատմության մի ամբողջ բարդ ժամանակաշրջանի երևոյթները  
տեղադրելով տեսլանկարի շրջանակներում, Զարենցը գեղարվեստական այդ

Կառուցվածքով փորձում էր պատմական ճշմարտությունը ներկայացնել իր ամենաօբյեկտիվ պատկերով:

Նրա մտահղացման յուրացման համար ճկում հնարավորություններ էին, տալիս տեսիլային մտածողության և համաշխարհային, և ազգային, և միջնադարյան, և նորագույն աղբյուրները:

Այդ աղբյուրները շատ-շատ են:

Դրանց մեջ, իրավացիորեն, առաջին հերթին հիշատակվում է միջնադարյան տեսիլային գրականության ամենամեծ կոթողի՝ Ալիգիերի Դանտեի «Աստվածային կատակերգության» անդրշիրիմյան թափառումների տեսիլքը, որի անմիջական ազդակներով, արդարե, Զարենցը գտել է «Մահվան տեսիլի» կառուցվածքը:

«Մահվան տեսիլը», ինչպես բազմիցս նշվել է, իր կառուցվածքով «Դժոխքի» արտանկարն է: Բանաստեղծը Դանտեի հետ (ինչպես վերջինս Վիրգիլիոսի առաջնորդությամբ) ճանապարհորդում է մեռյալների աշխարհում և զնաւատականներ տալիս մեռյալներին:

Ինչո՞ւ Զարենցն իր թափառումների ընթացքում առաջնորդ կարգեց Դանտեին և ոչ թե մեկ ուրիշի:

Այս հարցի ուղղակի պատասխանը տրված է պոեմի «Մուտքում», որը շատ կարենոր մեկնաբանական մտքեր է պարունակում:

Դրական «ոլորապտույտ ճանապարհներ» անցնելուց հետո Զարենցը եկել կանգնել է «բարձր լեռան» առջև: Դժվարին լեռը, այսինքն՝ պատմության ճշշմարտությունը («Դժոխքի» լեռը ևս խորհրդանշ է ճշմարտության) նվաճելու համար նա հայացքը հառում է անցյալի ստվերներին՝ Մտքի, Հանճարի և Քերթության գագաթներին, նրանցից քաղելու և ուժ, և վստահություն:

Նրան պետք էին հենարաններ:

Նեցուկ շէր կարող լինել ոչ Հոմերոսը, որ երգել է հերոսների մահը,  
սակայն խաղաղ սրբով, մի ճանկական  
հերիաթ իբրև թե,—

## ոչ Վիրգիլը՝

«Հատինական երգի հուշակը ավետող,—

## ոչ Ֆիրդուսին՝

«Չառյլորեն փարթամ»:

Սրանք բոլորը միասին թվում են «այնքան թոթովախոս ու միամիտ»:

Այն նյութը, որի մասին պատմելու է Զարենցը, շէր կարելի տեղադրել հերոսական-էպիկական արվեստի շրջանակներում:

Բայց անցյալը այն, այն ուղին, այն ճանապարհը  
շարշարանաց,  
Որին ահավասիկ ես ուզում եմ մոտենալ—  
Զէ լառն հերոսության, կամ վեհության ուզի,  
կամ փառքի ճանապարհ,

կամ իմաստության պարուեզ, կամ ոգորում հոգու,  
կամ տքնություն անմահ...

Եվ այն տեսիլը, որ տարիներից հառնած՝  
Նառացել է ահա իմ վարանոտ ու զարհուրյալ հայացքի դեմ—  
Ոչ փառքի գագաթ է խոստանում, ոչ քերթության Պառնաս,  
Ոչ անգամ փողփողաէ տողերի անմրցելի հանդես...

«Զարշարանաց ճանապարհի» տեսիլքը նկարագրելու համար, բնականաբար, պետք էր առաջնորդ ունենալ տառապած հանձարի, մեկին, որ տեսիլ էր մարդկացին շարշարանքներն ու սարսափները և կարող էր «հոգու խորքը» նայելով, իր աշակերտին առաջնորդել «մոայլ ուղիներով»՝ հայոց նոր պատմության դժնատեսիլ ճամփաներով:

Այդպիսի զորություն ուներ Ալիգիերի Դանտեն, ուստի և Զարենցը նրան է կարգում իրեն առաջնորդ:

Բնորոշ է անցյալի մեծությունների շարենցյան տարբերակումը, ուր Դանտեն ներկայանում է իբրև արյունակից:

Ձեր մարմարոնյա և դաշն դեմքերի փոխարեն,  
իրեւ վարպետ միակ, իրեւ անկատար մարգարե,  
Ահավասիկ հառնում է մոայլ միջնադարից  
եվ կանգնում է դեմս, ով տառապյալ հանձար,  
քո կերպարանքը բարե...  
Անցյալի արնակարմիր տեսիլներից շշմած հայացքներիս  
հանդեպ,—  
Որ սկզբուց են հայցում, և առաջնորդ արդար, և  
կորովի հանձար—  
Պատկերելու համար անցյալի խավարից հառած  
զարհուրանքը—  
Դժոխքի դժնի մշտչից բարձրանում է քո դեմքը  
բազմաշար...

Դանտեական Դժոխքից հայոց պատմության շարշարանաց ճանապարհը բաժանում էր ավելի քան հինգ հարյուր տարի և, այդուամենայնիվ, նրանց միջև կային ընդհանուր շատ եղբեր, ուստի և Զարենցը Դանտեին է ապավինում իր ճանապարհորդությունից առաջ:

Զարենցը, ինչպես երեսում է թե «Դանթեական առասպելից», թե հետագա տարիների գրառումներից, պատանեկան տարիներից սկսած ունեցել է Դանտեի նախասիրություն, ավելի ստուգ՝ «դանտեական ներշնչանք»:

Ներշնչանքի աղբյուրները մի քանիսն էին:

Նախ և առաջ դանտեականության հայկական ավանդները, որ ձգվում են վենետիկյան մենավորից՝ Ղ. Ալիշանից մինչև սիհամանթոյական կոտորածի պատկերները:

Տարակույս չի կարող լինել, որ Զարենցը բաշատեղյակ էր հայ դանտեականությանը՝ «Բազմավեպի» հոդվածներին, Միհիթարյան միաբանների, մասնավորապես Արսեն Ղաղիկյանի թարգմանություններին:

Այնուհետև գալիս են ոռուսական սիմվոլիստները, որոնց առանձնահատուկ վերաբերմունքը դեպի Դանտեն՝ «միջնադարի հանրագիտարանը», ինչպես բնորոշել է Ալ. Բլոկը, անպայմանորեն որոշակի ազդեցություն է թողել Զարենցի գրական ներշնչանքի վրա:

Եվ, վերջապես, հայ իրականությունն իր կենդանի դժոխքով, զարհուրանքի ու սարսափի, տառապանքի ու շարշարանքի մինուրտով, չէր կարող հարուցել դանտեական զուգորդություններ և տապավորություններ:

Դանտեականության այս հարուստ կուտակումներով էլ Զարենցը գրեց «Մահվան տեսիլը»:

Ճիշտ չի լինի, սակայն, դրությունը պատկերացնել այնպես, որ դանտեական «զույներից ու շրջագծից» զատ «Մահվան տեսիլ» պոեմում չեն օգտագործված գրական այլ աղբյուրներ:

«Աստվածային կատակերգության» մտապատկերներից բացի, պոևմում տեղ ունեն և Հուգո Ֆուկոլոյի «Յաղագս գերեզմանաց տաղի» կառուցվածքացին-արտահայտչական տարրերը (Զարենցը ևս, Ֆուկոլայի նման, տալիս. է ոչ թե անոններ, այլ ակնարկներով հասկացնում է այս կամ այն անձի ով լինելը, նա ևս ոգեկոշում է Դանտեին), և՝ Սիամանթոյի խառնանկարային տեսիլների լայնաշունչ վրձնահարվածները, և՝ Գր. Նարեկացու «Մատյանի...» ոճաձեւերը, և՝ «արդիականության Դանտեի»՝ Էմիլ Վերհարնի, բանաստեղծական ավանդները:

Հայոց պատմության մահվան տեսլանկարի միջոցով Զարենցը ներկայացնում է ազատագրական գաղափարախոսության ձեսփոխությունները՝ հույսի, սպասման, ակնկալությունների, հափնումի, գահավիժման և այլն, տարբերակներով։

Պոեմի «Մուտքից» հետո, ուր պարզվում են Զարենցի գեղագիտական կողմնորոշումները՝ ժամրի, կառուցվածքի խնդիրները, նկարագրվում են աշակերտի և ուսուցիչ (Դանտե) թափառումները հայոց պատմության քառուղիներում։

Ինչպես Դանտեն «Աստվածային կատակերգության» մեջ, Զարենցը նույնպես «Ճանապարհորդական թափառումներից» առաջ պատմում է իր դժվարին ապրումների մասին։

Քայլում ենք, իրարու բոնած, քայլերով տարտամ, երերուն,  
Անուղի, ինչպես մոլորված երկու կուր, կամ անոս մանուկ:  
Մինույն մառախուզն ը բոնել թե մոտիկը մեր, թե հեռուն,  
Մինույն լոռությունն անհոգ։

Ինչպես «Աստվածային կատակերգության» մեջ, «Մահվան տեսիլում» ևս ճանապարհորդությունը սկսվում է «մթին անտառի» պատկերով, որը տվյալ գեպբում խորհրդանշում է ճանապարհորդներին սպասվող դժվարությունները։

Զարենցը անընդմեջ դիմում է ձայների միջոցով տեսիլքը ներկայացնելու բանական հնարանքին («Եվ ահա հնչում է մթին անտառի խորքից մի հառաշլ...», «Մի գոռ թնդուն և ես ընդուստ սթափվեցի ակամա», «...շառալյուն երգի փոխարեն արձակեց խոպոտ հառաշլ, որ նման էր քամու կաղկանձի», «անտառը լցվեց ծայրեծայր բարձրածայն լացով ու ճիշով» և այլն, և այլն):

Կարելի է հայտաբերել նաև ուրիշ «դանտեական հզումներ»՝ նկարագրություններ («Դժոխք»՝ «Եվ մակաւյկով ահա դեպի մեզ է գալիս...»—«Մահվան տեսիլ»՝ «Մոտենում է մեկը, դեպի մեզ, դեպի մեզ է գալիս...»), բնութագրություններ («Օ՛, գու բոլոր պոետների փառք ու լույս», գրում է Դանտեն, «Առաջնորդ, տեր, ուսուցիչ», Վիրդիլի մասին, նույն կերպ է բնութագրում Զարենցը Դանտեին և՝ իրեն առաջնորդ, և՝ իրեն ուսուցիչ), վերապրումներ («Դժոխք», ո՛վ կարող է նույնիսկ արձակ խոսքերով պատմել արյունն ու վերքերը այն բոլոր, որ ես տեսա իմ սեփական աշքերով»,—«Մահվան տեսիլ»—«Այդ դաժան տեսիլքին ի տես—բայլերով երեր մենք փախսանք»), ոճեր, դարձվածքներ, սիմվոլներ (աստղ-լուսին), բայց Դանտեին օգտագործելու գլխավոր տվյալը նրա «Սրբազն պոեմի» կառուցվածքի ընդորինակումն է։

Զարենցը, ինչպես երկում է մի գրությունից, ուսումնասիրել էր «Աստվածային կատակերգության» կառուցվածքային սկզբունքները։

1937 թ. օրագրային գրառումներում այլևայլ անձնական «գաղտնիքների» շարքում նա թողել է նաև հետևյալ գրառումը։

«Դանտե. «Աստվ. Կատ.» կառուցվածքը... շարքում՝ ինը տառ ինը գլուխ 33 տերցին—101—102 տերցին յուրաքանչյուր շարքում (նայել Թհրկոլոպենյա): Համեմատել Դանտեի պոեմի առումով մեր և լատինական (իհարկե մեր հին) աղբյուրները:

Հավելում. «Աստվածային կատակերգության» բոլոր գլուխները վերջանում են աստղերի մասին խոսող տողերով...»:

Թեև դանտեական պոեմի այս զննումները արձանագրվել են «Մահվան տեսիլը» գրելուց չորս տարի հետո, սակայն բնավ կասկած չի հարուցում, որ Զարենցը դրանից շատ առաջ էլ տեղյակ էր Դանտեի ստեղծագործական «գաղտնիքներին»: «Դանթեական առասպելը»՝ ճանապարհի կառուցվածքով («Մենք ճամփա ելանք...») և վերիլի նկարագրություններով, վերջիվերջո, ներշընված է դանտեական թափառումներից:

Թե՛ «Դանթեական առասպելում», թե՛ «Մահվան տեսիլում» «Աստվածային կատակերգության» կառուցվածքային սկզբունքների օգտագործումը հետապնդում է ոչ միայն նյութի ձեական-հնարանքային բացահայտումների խնդիր:

Դանտեական կառուցվածքը այստեղ հանձն է առնում շարենցյան գնահատականները յուրովի անդրադարձնող հայելու դեր:

Զարենցի տեսլանկարում մեկը մյուսի ետևից անցնում են հայոց պատմության հայտնի դեմքերը, նրանք, ովքեր զորավիգ եղան ազատության ուստիին:

Ճիշտ չի լինի ասել, թե Զարենցը այդ պատմական գործիշներին գնահատելիս ասպարեզ է բերում «սիրել-ատել» պարզունակ շափանիշը՝ տեսլանկարում երևացող մարդկային ուրվականների մի շարքին ատում է, մյուսին՝ սիրում:

«Մահվան տեսիլ» պոեմում, անտարակույս, երևում է ազգային շարժման շարենցյան տարրերակումը:

Բայց անկախ դրանից, անկախ պատմության այս կամ «հերոսի» էության, մի դեպքում՝ հուզական-քնարական, մյուս դեպքում՝ գրոտեսկային-սատիրական բացահայտումից, էական նշանակություն ունի շարժման ընդհանուր գնահատականը, որ բնավ էլ բացասական չէ:

Ոչ մի տրամաբանության չի դիմանում այն տեսակետը, թե Զարենցը մի օր արթնացավ և ոչ այս, ոչ այն, սկսեց քարկոծել ազատագրության հայոց ուստի, ազգային շարժման նահատակների հիշտակաները:

Ճիշտ է, իբրև մտածող Զարենցն ավելի ապագայի հետ էր, քան անցյալի, բայց նա չէր ժխտում անցյալը՝ հենց այն բանի համար, որ ապագան չէր կարող գոյություն ունենալ առանց անցյալի:

Անցյալ-ապագա հարաբերության մեջ ունեցած իր դիրքը Զարենցը ձեակերպել է վերին աստիճանի հստակ՝ «աշքերս հառել եմ անցյալին՝ ապագայի նժույգը նստած»:

Սա է ամբողջ Զարենցը:

Սա է նաև «Մահվան տեսիլի» Զարենցը:

Անցյալի և ապագայի փոխհարաբերության այսպիսի ըմբռնում ունեցող բանաստեղծը չէր կարող հարցականի տակ դնել ազգային ազատագրության, ազգային մաքառման ամբողջ պատմությունը՝ սկզբնավորումից մինչև կոտորածներ, մինչև Մեծ եղեռնի հունձը:

Այդպիսի եզրակացության համար հիմք չեն տալիս իր այն գնահատական-ներն ու արժեքավորումները, որ բերում է ազգային շարժման գործիչների նկատմամբ:

Զարենցի տեսլանկարի մեջ «գործող անձինք» չունեն իրենց կոնկրետ անունները. իրենց կենսագրությունից և պատմությունից հայտնի դեպքերն ու փաստերն են ակնարկում նրանցից յուրաքանչյուրի ով լինելը:

Առաջինը ասպարեզ է գալիս Ղևոնդ Ալիշանը: Իր իսկ խոսքերի միջոցով սա յնութագրվում է իբրև մեծ ու անկաշառ հայրենասեր:

Ղևոնդ Ալիշանի Գործի մեջ գլխավոր շեշտը Զարենցը համարում է «նախ-նյաց փառքի» մեծարանքը: «Վառելով զաներն անցյալի, իբրև նոր փըր-կության փարոս», Ալիշանը, Զարենցի բնութագրությամբ, ասպարեզ բերեց «քաջարի այրերի անմահ մի սերունդ»:

Դ. Ալիշանից հետո իրենց դամբաներից հառնում և տեսլանում են Բաֆ-ֆին և Ռափայել Պատկանյանը:

Ռափայել Պատկանյանը՝ «իր ձեռքի պղնձյա շեփորով շեփորեց նա պայ-քար ու կոփիվ»:

Օրյեկտիվ պատմաբանի նման Զարենցը առանձնացնում է ամեն մեկի գործի գլխավոր շեշտը, այն շեշտը, որով նրանք հայտնի են պատմությանը:

Այնուհետև գալիս են՝ Քրիստափոր Միքայելյանը, Սուլթան Համիդի դեմ մահափորձ կատարելու ծրագրերով, որ տիսուր վախճան ունեցավ իր համար. նրա գաղափարակիցները՝ «Երկու մարդ սևազգեստ, մոռայլ, կրծքերին պղնձյա նշան», Ստեփանոս Նազարյանցը՝ ձեռքին բռնած այն գանձարանը, որի անունն էր «քաղաքական անոթ», Պետրոս Դուրյանը («Նվազում էր իր խեղճ սրինգով նաև տաղեր վշտի և սիրո»), Գրիգոր Արծրունին, Խրիմյան Հայրիկը՝ իր պատ-մական «շերեփով», Մկրտիչ Պեշիկթաշլյանը, Ավետիս Ահարոնյանը, Սիա-մանթոն, Դ. Վարուժանը և էլի ուրիշ պատմական անձինք:

Զարենցն, իհարկե, հավասար վերաբերմունք չունի իր «Տեսիլքի» մեջ հայտնված «ուրվականների» հանդեպ. նրա աշքին միևնույն կշիռը չունեն, ասենք, Գր. Արծրունին և Սիամանթոն, Ավետիս Ահարոնյանն ու Դանիել Վա-րուժանը, մյուսները: Դրա համար էլ նա որոշ տեղ դառնուած է դատապարտող, ինչպես Գր. Միքայելյանի հանդեպ:

Երբ ճիվաղը հանկարծ այն ծանոթ, որ նման էր մարդակերպ հոլի,

Մորեխի պես օդում ցատկելով՝ մոտեցավ Արքայի գահին,—

Մրոշ տեղ է՝ խանդաղատագին պաշտող, ինչպես Սիամանթոյի («Նա հող էր հայցում՝ խավարին կարկառած ձեռքով իր քարե...»), Դ. Վարուժանի («Եվ զուլալ, արծաթյա ձայնով երգում էր արևի մասին, իր գյուղի արևի մասին, որ մորթել էին ցերեկով...») հանդեպ: Իրենց դամբաներից տեսլացածներին Զարենցը մի դեպքում նկարագրում է գրոտեսկի միջոցներով (ինչպես Գր. Արծրունուն, Գր. Միքայելյանին), մյուս դեպքում քնարական (Պ. Դուրյան, Մ. Պեշիկթաշլյան և այլն):

Այսուամենայնիվ, ազգային ազատագրության նահատակների տեսիլքը Զարենցի համար միայն շարժառիթ է՝ ներկայացնելու հայ ժողովրդի դան-տեական Դժախիք, որ պոեմում սիմվոլացնում է կիսալուսնի տակի խալար, մթին «Անտառը»՝ մեռյալների գանգերով, աղաղակներով ու ճիշերով, քրքիշ-ներով ու հեկեկանքներով, նզովքով ու ողրով, արյան հեղեղներով, շարշա-

րանքներով, մահվան խրախճանքով, մահագույժով, որ շեփորում էր «արքան այն դժողին՝ որդանի նման մորուքով»:

«Մահվան աշխարհի Վարպետի» հետ անցնելով հայոց դանտեականի դաման պարունակներով, «անցյալի մուալլ եզերքով», Զարենցը փնտրում էր այն լուսը, որ կարող էր իրենց հանել «մութ անտառից»:

«Լուսի տեսիլքը», ինչպես բնութագրում է Զարենցը լենինի հայտնությունը, եղավ հայ ժողովրդի «փրկարար հուրը»:

Հայոց պատմության իր տեսությունը կառուցելիս Զարենցը չէր կարող շրջանցել այնպիսի խոր ազգային ստեղծագործություն, ինչպիսին «Սասնա ծոեր» ժողովրդական վիպերգն է և, հատկապես վիպերգի Դավթի դյուցազներգական-արմատական ճյուղը, ուր, բանաստեղծի իսկ բնութագրությամբ, խտացված է հայության պատմական մաքառման և պատմական երազների բովանդակ էությունը.

Ստեղծել է նա իր հերիաթները, և իր  
Հնամյա վեպում հանձարեղ՝  
Իր ապագա կյանքի գաղափարը կարմիր  
Եղ անմահ խորհուրդն է դրել:

Հայ ժողովրդական վեպի բացառապես սոցիալական բովանդակության ըմբռնումը առաջին տպավորությամբ պահպանվում է նաև «Սասոնցի Դավթի» պոեմում, ուր գրականագիտությունը տեսնում է ժողովրդական բանավոր նյութի «Հույժ արդիականացում»՝ «դասակարգային լուսի» որակով և ուրիշ ոչինչ:

Առարկությունների մեջ բաժինն ընկնում է Զենով Օհանի կերպարի, ինչպես և նրա ու Դավթի փոխարարերության շարենցյան մեկնաբանության վրա:

Զարենցի Զենով Օհանը, իրոք, ավանդական պատկերացումներից արմատապես տարբեր, նոր գույներով և նոր լուսով մեկնաբանված կերպար է:

Մինչ ժողովրդական վիպերգի սկզբնաղբյուրների գրառումներում՝ Գ. Սըրվանձտյանցի («Սասոնցի Դավթի») կամ «Մհերի դուռը»), Մ. Աբեղյանի («Դավթի և Մհեր»), Գ. Հովսեփյանի («Սասմայ ծոեր»), Բ. Խալաթյանցի և ուրիշների, որոնց հետ հավանորեն Զարենցը ծանոթ է եղել, ինչպես և վեպի գրական մշակումներում (այստեղ բարձրագույն կետը Հովհ. Թումանյանի մշակումն է) Զենով Օհանը երեսում է շրջահայաց, հաշվենկատ, իրադրության պահանջով անսխալ կողմնորոշվող, կյանքային, փորձառություն ձեռք բերած իմաստունի տեսքով (չեն մոռացվում նաև նրա մարդկային առանձին թուլությունները՝ ինքնագոհություն, երկշոտություն, իրասածի «ծոռություն» և այլն): Զարենցի պոեմի Զենով Օհանն ունի ազգային շահերի դավաճանի նկարագիր, հանդես է գալիս Դավթի հերոսական-մաքառման գծին ընդդիմադիր հոգեբանությունը մարմնացնողի կերպարանքով:

Զարենցին հայտնի էին, իհարկե, վեպի բանահյուսական տարբերակների և մանավանդ Հովհ. Թումանյանի գրական մշակման մեջ եղած արժեքագորումները, ուր Զենով Օհանը, անկախ նրա հանդեպ բանեցվող ժողովրդական հումորից, վերջիվերջո, ներկայացվում է Սասոնցի Դավթի մաքառման արմատական գիծը մարմնացնող հերոսների շարքում, իբրև Դավթի «համախոհն» ու գլխավոր նեցուկը:

Զենով Օհանի կերպարի և վարքագիծի այս մեկնաբանությունը չէր կարող գոհացնել Զարենցին, չէր կարող բավարարել հայոց պատմության նրա տե-

սոլիանը, որի հիմնական դրույթն է՝ «Օ», չի եղել մեր գայլը պղնձյա» սահմանումը:

Հայոց պատմության իր տեսության մեջ Զարենցն արմատական էր. նա մերժում էր միշին զծի հաշվենկատ, իր կարծիքով՝ անհեռանկար, ազգային շահերի տեսակետից վտանգավոր հոգեբանությունը:

Վիպերգը մշակելիս նրան անհրաժեշտ է եղել մի այնպիսի կերպարային նախատիպ, որի «օգնությամբ» պետք է արտահայտեր երևութիւն իր ըմբռումը:

Այդպիսի տվյալներ նա տեսավ վիպերգի Զենով Օհանի մեջ, որը, դատելով բանահյուսական պատումներից, Դավթի մղած կովի մեջ վարում էր «ժամանակ շահելու», օտարի «զայրույթը» մեղմելու գիծ:

Զենով Օհանի վարած դիվանագիտական գիծը՝ «պղնձյա ոգու» ըմբռնման համաձայն, մարմնացնում էր աղետաբեր հոսանքը, որը, Զարենցի տեսակետով, բացի վնասից, չի կարող որևէ օգուտ տալ ազգային ճակատագրին:

Ուշագրավ է, որ Զարենցը չէր բաժանում անկամ սկզբնաղբյուր վիպերգի Զենով Օհանին տված դրական գնահատականները և իր պոեմի մի հատվածում ուղղակի վիճում է զրույցն ասացողների հետ.

Եվ, Դավիթն, ընկած խավարում քար,  
Օգնության կանչեց երկար, երկար,  
Եվ զուր է ասում զրույցը հար,  
Թե պահուն այդ սե, այդ ժամին շար,  
Օգնության եկավ խորհուրդով վառ  
Զենով Օհանը, իշխանն այն մառ,—  
Նա չեկավ, Զենով իշխանն հայոց.  
Սկ սրտում՝ սարսափ ու ահ մահու  
Նա Մելիքն էր նվաստ նայում  
Եվ ժողովրդին հրամայում:

Այս ակնարկով («Զուր է ասում զրույցը հար») Զարենցը նշում է ժողովրդական վեպի, իր կարծիքով, միակ ճեղքվածքը, դրա մեջ նշմարելով «համակերպման», նվաստացման հոգեբանության թափանցումը հերոսական մաքառումն ու արմատականությունը փառաբանող պատումի մեջ:

«Սաման ծոեր» վիպերգի տարբերակներում, դատելով այդ հուշարձանի գիտական մեկնաբանություններից, Զենով Օհանը ներկայացնում է անհամար արհավիրքների և փորձությունների միջով անցած հայ մարդու «իմաստուն տիպը»:

Այդպես է բնութագրում Զենով Օհանին Դ. Դեմիրճյանը՝ «Ետևյալ բացատրությամբ. «Նա արդյունքն է հայ ժողովրդի դառն ու խրատական պատմության, նրա մեջ խտացած է հայ ժողովրդի պատմության նեղ ու դաժան մոմենտների՝ դարերի իմաստությունն ու հեռատեսությունը, նա տան մեծն է, տան տերը, ժողովրդի հոգսը քաշողը: Եվ եթե Դավիթը «գժություններ» է անում՝ Զենով Օհանը պարտավոր է մտածել այդ մասին, հոգալ, որ տան «ծուռ տղան» մի որևէ փորձանք շբերի տան գլխին ու ժողովրդին...»

Զենով Օհանը դարերի լուծը քաշած, փորձված, համակերպված արտաքինի տակ՝ ըմբռուտ ու պայքարող հոգի ունեցող հայ ժողովրդի իմաստուն տիպն է: Նա է, որ երբեմն իր պասսիվ վարվեցողությամբ, երբեմն բաց ու ակտիվ պայքարով, պահել է իր գոյությունը և դուրս է եկել փորձանքների, բուքերի, հեղեղների միջից»<sup>23</sup>,

**ԶԵՆՈՎ ՕՀԱՆՆ իր վարքով ու բարքով, իր հաշվենկատությամբ ու զիջուաներով իսկ և իսկ դեմիրճյանական «պատմության տեսությունը» արտահայտող կերպար է, այնպիսին, որը բնավ չէր բռնում «պղնձյա» ուժեղ և կամային ոգու, բաց, արմատական պայքարի ճանապարհը միակ ճանապարհ համարող պատմական տեսությանը:**

Ուրիշ հարց է, թե դրանցից որն է խրատական սկզբունքը:

**Չարենցի «Սասունցի Դավիթը» սյուժետային կազմությամբ, սյուժետային շղթայի օղակներով համարյա թե վերակրկնությունն է Հովհաննես Թումանյանի «Սասունցի Դավիթ» կառուցվածքի:**

**Տարբերությունը գաղափարական շեշտերի մեջ է, իհարկե, նաև վեպի մշակման գեղարվեստական սկզբունքների:**

**Դիրանք, անհամեմատելի մշակումներ են՝ եթե նկատի ենք ունենում Թումանյանի և Չարենցի պատումների ոճական (և ոչ միայն ոճական) հյուսվածքը:**

**Եթե Հովհաննեսը՝ հավատարիմ էպոսի մասին ունեցած իր պատկերացմանը («Ժողովուրդները ոչ մի բանի մեջ էնքան պարզ ու պայծառ չեն երեվում, ինչքան իրենց էպոսի մեջ»<sup>24</sup>), կերտել է վիպերգի շնչին համահավասար իր գործը, անգամ շեղումներով (հեղինակային ներմուծումներով) պահպանել է ժողովրդական սկզբնաղբյուրների անաղարտ ու անխաթար ոգին, ապա Չարենցը, իր մշակման մեջ, ընդառաջ գնալով էպոսի պատմական կոնկրետացման տարածված վարկածներին, էպոսային նյութը յուրացրել է ոչ թե «հանրամարդկային», համազգային, այլ կոնկրետ պատմական խնդիրներ լուծելու համար, ասել է թե՝ «լայն ժամանակների մեծ ընդհանրացումները», «համակենտրոնացումները», ինչպիսին էր հայկական վեպը, տարրալուծել է «նեղ սահմանագծերի» մեջ:**

**Կարեռ չէ, որ Չարենցը «ֆոլկորիստ» չէր (այս հասկացության ամենաբարձր ըմբռնումով), ինչպես Հովհաննը:**

Խառնվածքն, իհարկե, գեր ունեցել է:

**Հովհաննեսը՝ ժողովրդական-դյուցազներգական-էպիկական շնչի բանաստեղծ, հայկական էպոսի մեջ գտավ իր հարազատ, ամենահարազատ գիրկը: Դա իր տարերքն էր:**

**Եղիշե Չարենցը՝ գրքային շնչի բանաստեղծ, ինչքան էլ շքեղ ձիրքերի տեր, չէր կարող էպոսային գեղարվեստական մտածողության, նրա յուրահատուկ համի ու հոտի այնպիսի խոր թափանցում հայտաբերել, ինչքես դա արեց Հովհաննը. Թումանյանը: Ճիշտ է, Չարենցը նույնպես էպիկական հզոր տարերքի և ուժի բանաստեղծ էր, բայց նրա էպիկայի հողն ու պատվանդանը ոչ թե ժողովրդական ակունքներն էին, այլ իր իսկ էպությունը:**

**1934-ի օգոստոսի 30-ին Փարիզից բանասեր Ս. Սուքիասյանին ուղղված նամակում Ավ. Խահանակյանը գրում է. «Հզոր է պոեմների մեջ՝ «Դանթեական առասպեկը», «Խմբապետ Շավարշը», «Ամբոխները խելագարված», «Հոգիս ուղիոկայան է» և այլն: Սրանց մեջ կա շատ տարերք, կիրք ու կորով, թափ ու բոց, շոինդ ու շառաւ, բայց և շատ մտածում ու քարոզ, լավագույն անունով՝ լիրիկական էպիկա»:**

**Միանգամայն ստույգ, անվիճելի բնութագրություն, որ պատասխանում է նաև այն հարցին, թե ինչու Չարենցի բանահյուսական մշակումը չէր կարող ունենալ Հովհաննը. Թումանյանի պատմողական-ասմոնքային ոճի վառվունքուները:**

Հայ ժողովրդի պատմության նոր շրջանի զարգացման «գլխավոր գծերն» անցնում են Խաչատուր Աբովյանի «Դործի» միջով:

Թեև Աբովյանի գնահատման այս գիտակցությունը կար արդեն նրա կենդանության օրոք («Ես կարծում եմ—գրել է Ստ. Նաղարյանը Աբովյանին,— երախտագետ սերունդները մեզ կդահանատեն և մեզ վրա կնայեն զարմացած հայացքով, որպես հայրենյաց մաքուր սիրո գովելի օրինակների վրա»), թեև հայ լայնահուն դեմոկրատիան միշտ էլ ի դեմս Խաչատուր Աբովյանի տեսել է ազգային զարթոնքի մեծ պատգամախոսին և իր նվիրական երազանքների արտահայտչին, բայց և անպակաս են եղել նրա գործի ծուռ ու սիսալ մեկնաբանությունները, հակապատմական վերագրումները, Ոչ միայն հեղափոխությունից առաջ, այլև մեր օրերում:

Անհավանական չէ, որ Բակոնցի «Հայտնագործած» Աբովյանի անմիջական ազդակներով էլ հայոց «պատմության քառուղիների» գաղտնիքը լուծելու համար Զարենցը դիմեց նաև ապագայի պատգամախոսի կերպարին՝ քննելու նրա պատգամախոսության շափն ու կշիռը:

Հարենցի մտահղացումը եղավ «Դեպի լյառը Մասիս» պոեմը:

«Դեպի լյառը Մասիսը» Զարենցի ամենաուժեղ, ամենախորունակ, ամենատարողունակ գործերից մեկն է, բանաստեղծական բացառիկ մի թափանցում:

Իր բնույթով՝ հուգական շաղախով և կառուցվածքով, «Դեպի լյառը Մասիսը» դրամատիկական պոեմ է, ներքին դրամայի կանոններով գրված պոեմ, ինչպես «Խմբապետ Շավարշը»:

Ի տարբերություն սյուժետային-պատմողական պոեմի, դրամատիկականը, շրջանցելով «միջանկյալ» գծերն ու մանրամասնությունները, պատումը անմիջապես սկսում է գործողությունից, հերոսների կենուագրության դրամատիկական շիկացման հասած կետից:

Աբովյանի կյանքի համար այդպիսի շիկացած կետ էր 1848 թվականի ապրիլի 14-ը՝ նրա «անհայտ բացակայումի» օրը, որի հիշատակությամբ էլ բացվում է պոեմը.

Նա դուրս եկավ տնից առավոտվա ժեզին,  
Իր ետևից կամաց դուռը փակեց,  
Վերջին անգամ նայեց իր տնակին—  
Եվ քայլերը ուղղեց դեպի բաղերը:—  
Տուրտ էր:—Արևը դեռ հորիզոնից  
Նոր էր փոել աղջամուղը վաղընչական,  
Եվ վաղ առավոտի ծիրանագույն ֆոնին  
Հեռվում երեսում էր Մասիս՝ կապույտ  
ՀՂԱՐՉ հագած...

Սա, եթե կարելի է ասել, պոեմի «արտաքին» գործողությունն է, որին նախորդել է ճակատագրական գիշերը, ուր երեսում է Աբովյանի «ներքին գործողությունը»՝ նրա հոգեկան մեծ դրաման.

Գիշերը շէր քնելու—Քըրել էր թղթերը,  
Երկար թերթել թղթերը բաղմաթիվ:—  
Օրագրեր, գրքեր, ձեռագրեր,  
Գրություններ՝ մնացած դեռ Դորպատից:

Սա սովորական գիշեր չէ, այլ ճակատագրական անքուն այն գիշերն է, երբ տրվելով ինքնավերլուծության, Խաչատուր Աբովյանը քննում է իր գործի արժեքը՝ ի՞նչ է տվել իր ժողովրդին, ինչո՞վ է սատարել նրա գոյությունը,

ի՞նչ նշանակություն՝ ունեն իր մաքառումները ժողովրդի ապագայի համար, ի՞նչ է ներկայացնում իր քաղաքական կոսակը:

Վերջին՝ գիշերը՝ լի ողբերգական ապրումներով և ողբերգական առեղծվածներով:

Աբովյանի դրաման ներկայացնելու համար Զարենցը դիմում է իր իսկ հուշերին, առանձնացնելով կենսագրության բարձրակետերը, բարձրակետերի շարքը, որոնց համար էլ հիմք են ծառայում ծեռագրերը, օրագրերն ու նամակները: Մրանք իր խոհերն են՝ «ուղղված դեպի սերունդները գալիք», իր անկատար ծրագրերն են, իր մաքառման վկայություններն ու հոգու մասումքները:

«Վերք Հայաստանին» Աբովյանի քաղաքական կտակն է իր ժողովրդին, ուստի և ձեռագրի հետ կապված ապրումները Զարենցի պոեմում դառնում են նրա «հողեկան պայմանի» հարուցիչները:

Ճիշտ է արդյո՞ք գրված այդ գիրքը,— սա է հարցերի հարցը, որը Աբովյանին կանգնեցնում է տանչալից մտքերի ու կասկածանքների առաջ.

Արդեն մոտենում էր առավոտը, և նա պիտի գնար,  
Սակայն կարդում էր զեռ,—և հանկարծ  
Տագնապալից այն միտքը անհնար  
Բարձրացավ, ցցվեց ուղեղում՝ զարմանալի ուռուցիկ  
ու պայծառ—

Ի՞նչ է ասում այդ գիրքը և ի՞նչ է բարբառում.  
Ճուր չէ՝ արդյոք վատնել անհասնելի իր ձիրքը,  
Եկ չի արդյոք եղել իր ողջունած հեռուն  
Մի թիարան վատթար, և այդ գիրքը՝  
Իր արյունով՝ սրտի յուրաքանչյուր նյարդով,  
Իր վերջին ճիգով հորինած—  
Չէ՝ արդյոք խեղճության ու սիւալի արդյունք՝  
Սերունդների երթին ի վնաս...

Խաշատուր Աբովյանին մտահոգող այս հարցի ուղղակի պատասխանը թեև շկա պոեմում, բայց դժվար է համաձայնել «պատմական պեսիմիզմի» վերագրումին, իբրև թե Զարենցը Աբովյանին ներկայացնում է իր «գաղափարական ուխտը» հերքողի կերպարանքով, թե տալով Աբովյանի նախամահայան («գլուխը մահու տալու») տրամադրությունների պատկերը, Զարենցը համաձայնվում է «գաղափարական նահանջի»՝ իրականության հետ համակերպվող, լեզենդին:

Աբովյանի՝ ժամանակի խավարի դեմ ծառացած միայնակ անհատի, միայնակ մաքառողի խոռվիած հոգուց բխած տարակուսանքները, նրա ողբերգական գալարումները բնավ չիմք չեն տալիս նման եզրակացությունների համար: Խաշատուր Աբովյանը իր հանճարեղ գիրքը գրելով, չէր կարող չունենալ կասկածներ, մանավանդ, իրք տեսնում էր ցարիզմի բերած կնուտն ու աղքատությունը «Հայկական մարզում», տեսնում էր «կյանքի ժայռակուր պարիսպը»՝ լույսի և ազատության ճանապարհին:

Մանը իրականությունը հարուցում էր ողբերգականը:

Միթե սո՞ւ է բոլորը և փորձա՞նք...

Միթե մո՞ւ է բոլորը, ոգու սայթաքո՞ւմ,—

այս կասկածները Աբովյանին դնում են ճշմարտության որոնումների ճանապարհի վրա:

Գոեմը փակվում է Արարատի և Արովյանի միաձուման խորհրդանշական պատկերով.

Դեմք դաշտն էր անծայր, իսկ հեռվում Մասիս,  
Լյառն այն վսեմ, որի ճանապարհով մի օր  
Բարձրացել էր ինքը և սաղցանիստ  
Դեղեցկությամբ գերվել:—Եվ այժմ մենավոր  
Նա զնում էր կրկին դեպի հեռուն այն լուրթ,  
Դեպի Լյառը անհաս ու վեհանիստ,—  
Դեպի գագաթը բարձր, որ իր ժողովուրդը  
Համարել է հավետ իր գոյության խորհուրդը,—  
Որ ճաշակե այնտեղ հավերժական հանգիստ:

Զարենցը այլարանական այս պատկերով արտահայտում է ժողովրդական հավատը մեռնող և հարություն առնող հերոսների մասին, որոնց մահը դառնում է սկիզբը մի նոր կյանքի:

Զարենցի՝ պատմական մենության դրվագներն են «Նորք» և «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության» պոեմները:

«Նորքը»՝ «Պատմության քառուղիներով» շարքի ամենաքնարական պատումը, բացվում է հայոց ավանդական հողի ավանդական խորհրդանշաններից մեկի՝ նաիրյան բարդու, կինսագրությամբ (Ա. ութնյակ).

Բարձրաբերձ բլուրի վրա,  
Ավանում այն հին, հայրենի,  
Ամրացած հնավանդ իր բնին՝  
Բարձրացել էր բարդին այն բուրյան, —  
Բարձրացել էր բարդին նաիրյան  
Եվ թե լուս, թե մութ օրերում  
Իր իրանն էր մեղմ օրորում—  
Եվ սիրում էինք մենք նրան:

Նաիրյան բարդին մարմնացնում է իր ժողովրդի պատմության տրտում, վշտալի էջերը, նրա մորմոքներն ու կարոտները:

Մորմոքի և ցավի, կարոտի և վշտի երգիչներից մեկն էր Վահան Տերյանը՝ «մի պոետ մեղմախոս ու խեղճ»:

Բ ութնյակում Տերյանի երգը զուգահեռելով նաիրյան բարդում, Զարենցը գրում է.

Նու մի օր եկավ ու երգեց  
Այն բարդու հմայքը բուրյան.—  
Եվ սիրեց մեր ողին նրան,  
Պոետին այդ տիուր ու բարի,  
Իր կառշած բարդու այդ ծառին՝  
Մորմոքաց իր վիշտը նաիրյան:

Զարենցը անպայմանորեն դրական նշանով է արժեքավորում Վահան Տերյանի նվազները, դրանց մեջ դիտելով իր «հնավանդ տան», իր երկրի առանձնահատուկ՝ ուղեմոլոր, ծանր ճակատագրի, ցոլացումը:

Եվ, այսուամենայնիվ, ութնյակից-ութնյակ («Նորքը» կառուցված է ութատող տներից) նա աստիճանաբար իշեցնում է գնահատականները:

Գնահատականների իշեցումը վերաբերում է ոչ թե առհասարակ Վահան Տերյանի բանաստեղծությանը, որ նրա պաշտամունքն էր, այլ, իր կարծիքով, այդ բանաստեղծությանը պակասող մաքառող, ըմբոստացող տարերքին:

Չարենցն, իհարկե, շարաշար սխալվում էր՝ Վահան Տերյանի նվագների մեջ շգտնելով ոգու տոկության, ըմբոստացող տարերքի և մաքառման շեշտերը: Ավելի քան անարդար էր, երբ Տերյանի երազանքները տեղադրում էր անիրական ցնորքի սահմաններում, երբ նաիրյան «վերջին պոետին» վերաբում էր անհույս, նկուն հոռետեսի կեցվածք («Թե չկա փրկության օր աշխարհում մոռայլ ու մթին»), երբ Տերյանին պաշարած ահը («Որքան ահ կա իմ սրտում...») համարում էր դարերով պարտված մեր ոգու հարազատ արտահայտությունը:

Արդար շինելով առանձին գնահատականների մեջ, Չարենցը միանգամայն արդար էր երեւությունը ամբողջության մեջ գնահատելիս:

Արդեն բարձրացել էր հողմը՝ «Ուրագանն արյունոտ», շարժելով մահվան գերանդին, հնձել էր «բերքի նման սուլը նաիրյան գուսաններ անթիվ», սպառնալիք էր կախվել վերջին հենարանի՝ մեր իրկրի սրբազն բարդու վրա, երբ պայթեց Հոկտեմբերյան փոթորիկը:

Կատարվեց պատմական հրաշքը, հայոց տիսուր քնարը թեարաց սավանեց աշխարհում.

Մեր ոգին, ոգին նաիրյան,  
Որ գիտեր լոկ մորմոք ու լաց—  
Առաջին անգամ թևարաց  
Սավանեց աշխարհում համայն,—  
Մոռացած իր մորմոքը ունայն  
Իր բույնը թողած այն ինդեմ—  
Սավանեց ճիգով մի ահեղ  
Դեպի աշխարհը լայն:

«Գովք խաղողի, գինու և զեղեցիկ դպրության» պոեմի գլխավոր շեշտը կյանքի, գոյության («Ես կյանքի գովքն եմ երգում...») և ժողովրդի ստեղծարար ոգու մեծարանքն է:

Ժողովրդական ոգին մարմնացնում են, ի թիվս այլ արժեքների, նաև հայոց խաղողը, հայոց գինին և հայոց դպրությունը՝ բանաստեղծական մուսայի աղբյուրները.

Երգում եմ ահա այս գովքը ես  
Խաղողի մեր բորբ ու լուսատեսք,  
Մեր գինու պայծառ ու հրակեզ,  
Մեր արվեստների մեծահանդես  
Եվ դպրությունն եմ մեր երգում ես,  
Գեղեցկությունը դպրության վես,  
Որ օրերում այս պարզեն մեզ  
Հոյզեր հրահուր և մրգեր կեզ:

Չարենցը, հայոց պատմության իր տեսությունը մշակելիս, անհրաժեշտարար՝ տեսության ամբողջացման կարիքով, պետք է դառնար նաև Հայաստանի քաղաքացիական կոփվների անցքերին:

Սոցիալիստական հերոսապատումից նա ընտրել է թերևս ամենահուզիլ և ամենադրամատիկական դրվագներից մեկը՝ «Վարդան Զորավար» զրահագնացքի պատմությունը, այն զրահագնացքի, որը Հայաստանում հեղափոխական իրադրության շիկացման պայմաններում առաջինը պարզեց զինված ապստամբության դրոշը՝ ընդդեմ դաշնակցական հանրապետության:

30-ական թվականները սովետական հասարակության տարեգրության մեջ «աշխատանքային մեծ զորակոչի» տարիներ էին: Ամենուր՝ երկրի բոլոր ծայրերում, սկսվել էր սոցիալիզմի կառուցման հզոր արշավը: Սոցիալիզմի կառուցմանը եռանդուն մասնակցություն էր բերում նաև հայ ժողովուրդը, որն իր դարավոր պատմության ուղիներում առաջին անգամ վայելում էր բոլոր կապանքներից և բռնություններից ազատագրված Աշխատանքի հրճվանքը:

Բուռն և ինքնամոռաց աշխատանքային արբեցման զգացողությամբ են ներշնչված 30-ական թվականների հայ բանաստեղծության շատ էջեր, այդ շարքում նաև Զարենցի «Դալիքի որմնադիրները» և «Համայնական դաշտերի սերմնացանները» ներբողաշունչ պատումները:

Ումնադիր և սերմնացան, —սրանք այն հիմնական արժեքներն էին, որոնք պետք է տեղ ունենային, չեին կարող տեղ չունենալ Զարենցի պատմական տեսության մեջ:

### 13

Արևելյան հայեցող, ներհուն խառնվածք լինելով (իր «ամպլուան-տարիքն էր»), Զարենցն, այսուամենայնիվ, ինչպես երևում է դեռ պատանեկան քնարից, ունեցել է մարդկային կեցության խորհուրդը մեկնաբանելու փիլիսոփայական հակումներ: Դրա վկայություններն են կյանքի բարդ առեղծվածների և «երազ-կյանքի» արծարծումները, «Սոմա» պոեմի և «Աստղիկ» բանաստեղծության սահմանումները՝ երևույթների ճկուն փոխակերպությունների մասին, առաջին «Ճաղարանի» (1922)՝ խայամյան շնչի բանաստեղծությունները և այլն:

Տարիների հետ Զարենցի ստեղծագործության մեջ ավելի ու ավելի ամրանում են Գոյի խորհուրդները մեկնաբանող բանաստեղծական երակները:

Արդեն 1926-ին գրած «Ռուբայաթներ» (1927, Թիֆլիս) գրքույկում Զարենցը հակումներ է դրսեորում՝ վերանալու «կոնկրետ շարժառիթների», իր «անձնական գաղտնիքների» և տպավորությունների անմիջական-հուզական յուրացումներից՝ մեկնաբանելու կեցության համընդհանուր եզրերը:

Կեցության ներքին փիլիսոփայական խորքը բացելու համար նա դիմում է արևելյան դասական բանաստեղծության կանոնիկ ձևերից մեկին՝ ուռայթ-քառյակին: Հինավորց գրական ձևը ապրումի և մտքի համադրման արդեն մշակված կառուցվածքով այն ոլորտն էր, որը կարող էր տեղադրել բանաստեղծի փիլիսոփայական թափանցումները:

Քառյակի ավանդական-դասական կառուցվածքի մեջ Զարենցը մուծեց իմացության նոր աղբյուրներ: Նրա «ռուբայաթային» մտորումները յուրօրինակ բանաստեղծական ձևակերպումներ են այն մտքերի, որ տեղ ունեին ժամանակի փիլիսոփայական գրականության մեջ, մասնավորապես իմացության տեսության և դիալեկտիկայի նորագույն ձեռնարկներում:

Ժամանակի փիլիսոփայական դրականության մեջ հոլովկող ընդհանուր օրենքներից՝ «բանաձեւամանումներից», Զարենցը քաղում է այն մասնահատուկ-անհատականը, որը հարազատ էր իր դավանանքին և աշխարհատեսությանը:

Իրար բերելով «Ռուբայաթների» 44 ռուբայիները, դժվար չէ հայտաբերել փիլիսոփայական այն գլխավոր գաղափարը, որ միացնում է դրանց:

Ո՞րն է այդ գաղափարը:

Այն, որ գոյությունը նորաձեռումների, նորակազմությունների անընդհատ ընթացք է, որ աշխարհը անէացման և ծննդյան, հատնումի և գտնումի, կերպարանափոխությունների հարուստ սուբստանցիա է, որ անթիվ, անհամար, բազմապիսի ձևափոխություններից հետո էլ աշխարհը մնում է կանգում՝ հաստատ ու ամրողական:

Այլևայլ պատկերային համեմատություններով և զուգորդություններով Զարենցը ուսւայաթներում հաստատում է կյանքը՝ ոչ թե իրու երազ ու տեսիլք, ինչպես վարդում էր վաղ տարիների սիմվոլիստական հափշտակության օրերին, այլ իրու անընդհատ նորոգվող, իր հատնումներից նորանոր գույներ հայտաբերող, իր մահերից նորանոր ծնունդներ հայթայթող ուսալականություն, իրու զարգացման կենդանի երևույթ:

Գոյության ճանապարհը մեկնաբանող ուսւայաթների յուրօրինակ լրացումն են այն ուսւայինները, զիստիքոսները, բեյթերը, որոնք տեղ են գտել «Գիրք ճանապարհի» ժողովածուի «Գիրք իմացության» բաժնում:

1926-ի ուսւայաթներից Զարենցի քառյակների նոր շարքը, անտարակույս, ունի որոշակի տարբերություններ:

Նախ և առաջ՝ փիլիսոփայական մտածունքը իր կենսագրությանը, իր անձնական ճակատագրին մերելու գծով: Երկրորդ՝ դիդակտիկական-խրատական շեշտը վերլուծական-քնարական տարերքով խորացնելու և, վերջապես, քառյակի դասական կառուցվածքը՝ եզրափակիչ տողի դիպուկ հնչեղությունը պահպանելու առումով:

«Գիրք իմացության» շարքը Զարենցը գրել է իր «գլոթեական ներշնչանքի» օրերին, որով և բացատրվում է այդ շարքի ընդգծված քնարական ոգին:

Դա են վկայում Ա, Բ, Գ ուսւայինները՝ իմաստուն ոգու մեծարումները.

Այսպես՝ այս ուշ ժամին, եկավ և մոտեցավ քո ոգուն  
իմացության, կշռութների գիշերային անմահ բուն.—  
Ա՛խ, դեռ ինչպես ամենատես, իմաստունն է այն ասել—  
Գիշերով է ենում որի ալդ թոշունը իմաստուն:

Ողջունելով իմաստության թոշունի հայտնության ժամը, Զարենցը կատարում է հաջորդ քայլը՝ իմաստությունը սահմանազատում է հայեցությունից.

Ով իմաստուն, այդ շերեփով շի դատարկվի  
այս կաթսան,  
Քանի-քանի իմաստուններ և հանճարներ անսասան  
Այսպես՝ միայն հայեցումով այն ձգտեցին  
դատարկել—  
Եվ ոչ միայն հատակն, այլև-մակերեսը շտեսան:—

Զարենցը մերժում է արևելյան անգործնական փիլիսոփայությունը՝ հայեցողականությունը և մեծարում է ակտիվ, ըմբռուտացող տարերքը:

Ճանաշման վերին պայմանը համարելով ինքնայրումը, ինքնարոցավառումը, կրքերի խարույկը, Զարենցն այդ թեմային է նվիրում նաև «Է» ուսւային.

Ա՛խ, շռալ է լինում ոգին-լոկ մի անգամ իր կյանքում,  
երբ վառվելով, մոխրանալով՝ իր վախճանին է հանգում.  
Լինում է միշտ դա լուս, անվիշտ ու երշանիկ այն ժամին,  
երբ իր մահով խինդով, աչով՝ ծնում է աստղ իր հանգույս:

Գոյության ճանապարհի շարենցյան տեսության ինքնատիպ յուրացումներն են Տաղերը՝ ձոնված ապագայի պարմանիներին, եկվորներին, ճանա-

պարհորդներին, հիվանդներին, մեռյալներին, գրքերին, մանրանկարիչներին, բնությանը, և Խորհուրդները՝ հղված քաղաք կառուցողներին ու վարպետներին, գալիքի սերմնացաններին ու գալիքի երգասաններին:

«Տաղեր և Խորհուրդներ» շարքը առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում իրեն միջնադարյան հայ բանաստեղծության՝ աղաքարության մեջ մեծ զարգացման հասած բանաստեղծական կառուցվածքները վերափառավորելու, դրանց արտահայտչական հարուստ հնարավորությունները նորովի հնչեցնելու երևույթ:

Աղքային գեղարվեստական ավանդների «միջնադարյան գծի» օգտագործման խնդիրը շատ է զբաղեցնում նաև Զարենցին:

Այսպես, 1934 թվականին, գրողների համամիութենական առաջին համագումարում նա ասաց հետեւյալ նշանակալից խոսքը. «...Ես տեսնում եմ, որ այնպիսի վարպետներ, ինչպիսիք են մեր միջնադարյան աշխարհիկ բանաստեղծները, այդ «հանճարեղ ճորտերը», չի կարելի գտնել ուրիշ և ոչ մի գրականության մեջ, իհարկե, ոչ թե նրանց հանճարեղության, այլ գույների ու երանգների, ձևի ու նյութի մշակման ինքնատիպության իմաստով:

Այսօր նրանք մեծ օգնություն են ցույց տալիս ինձ՝ կերտելու այնպիսի ձևեր, որոնք արմատապիս տարբերվում են խորհրդային մյուս պոետների գործաժամկետից:

Մինչև այս խոստովանությունը Զարենցն արդեն «շոշափել» էր հայոց միջնադարը՝ ի դեմս իր առաջին, Սայաթ-Նովայի խաղերով կնքված «Տաղարանի»:

20-ական թվականներին, սակայն, նա շոներ հայոց նորդարյա բանաստեղծության հնագույն պատմական արմատների, նախահիմքային շերտերի այն թափանցումը, ինչին հասավ 30-ական թվականներին:

«Տաղեր և Խորհուրդներ» շարքում, անտարակուսելիորեն, երևում է միջնադարյան տաղասացության ավանդների շոնչը: Գրողների համագումարի նախ համապատասխան հատվածն էլ վերաբերում է, առաջին հերթին, այդ շարքին, թեև ուրիշ ասիթներով նույնպես Զարենցը «օգնություն է ստացել» միջնադարյան բանաստեղծական ձևերից՝ ողբերից, տեսիլքներից, հորդորակներից, ներբողյաններից:

Իր իսկ խոստովանությամբ Զարենցն օգավել է միջնադարյան տաղասացների նյութի մշակման ձևերից, ինքնատիպ կառուցվածքներից, պատումի երանգավորումներից, արտահայտման գույներից:

Այսպես, Ապագայի պարմանիներին ձոնված սիրո եռամաս տաղում (Ա, Բ, Գ) երևում է միջնադարյան սիրո և բնության փառաբանական տաղերի, մասնավորապես Կոստանդին Երզնկացու սիրո տևսիլքների («Մանուկ մը լուսեւն...») ու Բանքերի, Արևագալի ու Լույսի մեծարանքի («Բանք յաղագս արևագական արդարության», «Լույս, ի լուսոյ ծագումն»), բնության օրներգությունների («Վասն գարնան եղանակաց»), Հովհաննես Թվլուրանցու՝ դարձյալ բնության և սիրո տաղերի («Տաղ վասն սիրո» և այլն) շոնչը:

Եկվորներին նվիրած տաղերի մեջ ակնհայտ է միջնադարում տարածված իմաստական ասքերի, այսպես կոչված՝ «խրատական բանքերի», արտահայտման եղանակների յուրացումը (Կոստանդին Երզնկացի՝ «Ահա սկիզբն առնեմ բանից և խրատ տամ հասարակաց», Խաչատուր Կեշառեցի՝ «Եղբայրք, ձեզ խրատ մի տամ...», Նաղաջ Հովհաննես՝ «Խրատ պիտանի վասն հոգեոր...», Ֆրիկ՝ «Քեզ խըրատ մի տամ յիրաւի» և այլն, և այլն):

«Հասարակաց» խրատ սկզբունքներով են շարակարգված նաև Զարենցի յոթնարանյա խորհուրդները՝ «Ով դուք, որ գալու եք վաղը կառուցելու այս-տեղ», «Ով, գալիքի սերմնացաններ, որ լիաբու նետելու եք ձեր սերմը...», «Ահավասիկ, ով դուք, իմ առաջին խորհուրդը...»:

Զարենցի Տաղարանում կիրառված են նաև միջնադարյան բանաստեղծությանը բնորոշ նույնահանգության (Ն. Շնորհալու միակերպ հանգերով է գրոված «Դովքը») և ճարտասանական դիմումների յուրահատուկ ոճեր (Մ. Նաղաշ՝ «Լսեցեք այսօր և ողբացեք ամենեքեն, դառն արտասուք հառաջեցեք դուք միաբան»—Զարենց՝ «Ողջույն ձեզ, ողջույն ձեզ, ով անծանոթներ»), դարձվածարանություններ (Մ. Նաղաշ՝ «Ճանապարհ հեռավոր ունես գնալու—Զարենց՝ «Դու գնում ես դեպի հեռուները վսեմ...»):

Զարենցի Տաղարանը, անտարակույս, ամենից ավելի ներշնչված է միջնադարյան բանաստեղծության տեսակային կառուցվածքներից (ներբող և «ուղերձ առ...», գովասանություն և հորդորակ, ավետիս և մեղայական) և, նամանավանդ, պատմական շոնչ կրող ոճական-դարձվածքաբանական ձևերից՝ «ահավասիկ երգում եմ ես մեղսական քո սերը», «ոչ միայն մարմնով ե ոգու անգիտությամբ», «բերքեր անտեսանելի», «պտուղներ վայելքի և սերմեր իմաստության», «այս ճանապարհը ձեզ ի վերուստ սահմանաժամ», «ունայնության սաղմ», «գալիս եք ճաշակելու իմաստություն և մահ», «ես քեզ ապարինում և օգնություն կտամ», «Ով անդարձ հեռացողներ, ով մեռյալներ» և այլն, և այլն:

«Բանաստեղծի արհեստը» հետազոտության մեջ, դառնալով բանաստեղծական ավանդական ձևերի օրենքների՝ կանոնների, անբավարար տեսական քննությանը, Վ. Բրյուսովը գրում է, որ «արաք, պարսիկ, հին հայկական բանաստեղծների գործածած շատ ձևեր»<sup>25</sup> նույնպես կարիք են զգում տեսական իմաստավորման:

Բրյուսովը, ամենայն հավանականությամբ, նկատի է ունեցել միջնադարյան հայ քննարերգության ավանդական ժանրային ձեր՝ տաղը, «Տաղ՝ ասացյալները», սրանց ամենաբազմազան տարբերակներով:

Տաղերը և Խորհուրդները, ինչպես Զարենցն է խոստովանել, հենվում են միջնադարյան տաղարանների «ժանրային մողելներին», հատած են դրանց «ոսկե օրենքով»: Տաղային նախասիրություններով Զարենցը հերքեց այն սխալ մտայնությունը, թե «իրենց դարն ապրած», իրենց «սպառած» բանաստեղծական ձևերն այլևս չեն կարող ապաստարան լինել նոր բովանդակության արտահայտման համար:

Երևույթն ունի երկու կողմ՝ յուրացման և նորոգման:

Միջնադարյան ավանդական տաղերի, հատկապես խրատական-իմաստական հանգերի հետ, անտարակույս, Զարենցի տաղերն ունեն և կառուցվածքային (նյութի՝ թեմայի, նախնական շոշափում, թեմայի պատկերային ատաղձի զարգացում, նյութի խրատական ամփոփում), և ոճային-արտահայտչական (հուետորական դիմումներ, շրջասություններ, սիմվոլային հղումներ, քնարական պաթետիկայի շեշտեր) ընդհանրություններ: Դրանք, սակայն, վերջին հաշվով, միջնադարյան տաղային ձևերի մեխանիկական կրկնությունը կամ նմանակումը չեն, այլ գեղարվեստական նոր կազմություններ են, ուր տաղային հին կառուցվածքները նորոգվել են՝ ըստ Զարենցի ճարտարապետական «նոր մողելների»:

**Միջնադարյան խրատական** (և մյուս բնույթի) տաղերը ավելի «անկանոն են», արտահայտման ձեռվ ավելի ազատ և անկաղապար, Զարենցինը, կարելի է ասել, ժանրային կառուցվածքով ավելի «կանոնիկ են», ավելի համաշափու դաշնավոր, ուր, առաջին հերթին, կարևորվում է ճարտարապետական սկզբունքը:

Տաղային ճարտարապետության հիմնաքարը բանաստեղծի դիմում-Հղումն է նրանց, ում տրվելու է խորհուրդը: Հղումից հետո անմիջապես տրվում է գրլիավոր միտքը, տաղի հիմնական բովանդակությունը, այսինքն՝ գաղափարական արմատը: Այնուհետև հարկ առ հարկ, «ազատ վարիացիաներով», գլխավոր մտքից՝ արմատից, առանձնացվում են այդ մտքի ճյուղավորումները, որոնք, ի վերջո, հավաքվում են կառուցվածքի վերին հարկում:

«Տաղ եկվորներին ողջունելու համար» գործում դիմումից հետո («Ողջուն ձեզ, ողջուն ձեզ, ով անծանոթներ») Զարենցն արտահայտում է այն գլխավոր միտքը, որ աշխարհ եկողներն իրենց հետ բերելու են անհուն ու անհատնում պարզեներ, «անտեսանելի բերքեր», դրանցով զարդարելու և հարստացնելու են աշխարհը: Սա գաղափարական արմատն է:

Այս մտքին հետևում են բանաստեղծի դնահատականները՝ կյանքում սպասվող դժվարությունների («խնդությունը չի իշնում, իբրև ցող»), աշխարհի անսարքության («այս հինավուրց պարտեզը դեռ խառն է ու խոիվ»), աշխատանքի ստեղծարար դերի («որքան, որքան դեռ զանքեր են հարկավոր...»), երազանքի («թող ձեր երթը հսկի ապագայի Ղովտը...») մասին: Մրանք էլ արմատից բարձրացող ճյուղերն են, որոնց հետևում է նորից արմատին՝ ելակետային գաղափարին, տանող եզրակացությունը՝

Որ անխախտ ու հաստատ ընթանաք այս ուղին  
անծայրածիր,

Այս ճանապարհը՝ ձեզ ի վերուստ սահմանած,—

Որ այնքան հոգնությամբ ճաշակած ձեր

Հանապազօրյա հացը

Ունայնության սաղմով շդառնանա...

Ճարտարապետական նույն՝ արմատի և ճյուղերի սկզբումքով են կառուցված նաև մյուս Տաղերն ու խորհուրդները: Մանավանդ յոթ խորհուրդներ՝ կառուցողներին, սերմնացաններին, կառուցվածքային առումով ճարտարապետական համաշափության ցայտուն օրինակ են:

Գրական խառնվածքով լինելով բարենորոգիչ, Եղիշե Զարենցը պարբերաբար փորձարկում էր գեղարվեստական արտահայտման նոր սկզբունքներ՝ հաստատելու ժամանակի տվյալ հատվածի համար ամենահեռանկարային և ամենակենսունակ սկզբունքը: Ժամանակակից տերմինով ասած՝ ծրագրում էր գալիքի հերկը:

Զարենցը լավ գիտեր արվեստի զարգացման բարձրագույն օրենքը, որ անշարժությունը, անցյալ դարաշրջանների գեղարվեստական ձևերի մեքենայական ուստավը արվեստի մահացման ստույգ նշանն է, որ ասպարեզ մտնոլ յուրաքանչյուր նոր բանաստեղծ պետք է ունենա կոլոմբոսյան բնագդ՝ արվեստի նոր ափեր հայտաբերելու, դրանով էլ արվեստի զահելությունը՝ կևնդանի, գործող ոգին, արթուն պահելու համար:

Իր գեղագիտական դաշնանքի մեջ զարգացման առաջնային պայմաններից մեկը համարելով ժառանգորդությունը՝ «Ժամանակների կապը», «Զարենցը ավանդների յուրացումը դիտում էր ոչ թե իբրև զուտ «գեղարվեստի

երեւլթ», այլ կենսական լայն տարածության վրա, կերպարանափոխվող կյանքի հարուցած նոր հոգսերի յուրացման դիալեկտիկական փոխհարաբերության մեջ:

Սրանով է բացատրվում կյանքի աղբյուրների մեծարման, աստվածացման այն շունչը, որ երևում է Զարենցի գեղագիտական դավանանքում:

Ահա, օրինակ, այն դիստիքոսը, ուր կյանքը դիտվում է իբրև արվեստի ճանապարհի գլխավոր սկզբունք.

Երգը այնամ է քերթողից իր և դարից իր անցնում,  
երբ առընչվում է կյանքին հուր միջուկով իր ահանց:

Սա էլ մյուս դիստիքոսը, ուր բանաստեղծական ներշնչանքը հավասարեցվում է կյանքի աղբյուրներին.

Ոչ ակոնքները Դելփյան, ոչ կախարդանքը Պանի  
Զեն հողակի բեզ պոետ, եթե խորթ է ոգուդ-առօրյան:

Այս և համաշեշտ գեղագիտական թափանցումներից երեսում է, որ իսկական բանաստեղծության գլխավոր պայմանը Զարենցը համարում է կյանքային-հոգեկան փորձի և մշակութային, կուլտուր-պատմական փորձի բնական օրգանական սինթեզը, այս երկու աղբյուրների դաշնությունը։ Առանց այդ դաշնության, առանց Կյանքի և երգի (այսինքն՝ կուլտուրայի) հանդիպման, բանաստեղծությունը, Զարենցի դավանանքով, շի կարող ունենալ ներգործման հզոր ու անեկան թափ։

Մուրայաթներում, դիստիքոներում, այլևայլ բանաստեղծություններում ասպարեզ տալով գեղագիտական կարևոր դրույթների՝ «էության և ձեի» արվեստի դժվարին ճակատագրի, «սրտի քնշության» և «ոգու կորովի» հարաբերության, հնամյա քերթության ծաղկման, բանաստեղծական լայն տեսադաշտի, ոգու դաշնության, և այլն, մասին, Զարենցը միշտ էլ դրանք մեկնաբանում է պատմության, ժամանակի դիրքերից, ասպարեզ հանելով նաև այս խորհուրդը։

Դարը մեզ մուրհակ է տալիս. բայց այդ փակ մուրհակի  
Հատուցումը  
Սերունդներն են հշտում ապագա, և շատերն են սանակ  
Հոշակվում։

Դարի տված մուրհակի իսկական հատուցման մտահոգությամբ է գրված «Յոթը խորհուրդ գալիքի երգասաններին» տաղը, ուր Զարենցը միասնական պսակի մեջ է բերում գալիքի բանաստեղծության իր պատկերացումները։

Այս խորհուրդը բանաստեղծության «բազում ուղիներով և հերկերով անցած», բազում սկզբունքներ փորձարկած և իմաստության հասակը թեակոխած պոետի փորձի ամփոփումն է, այն փորձի, ուր տեղի ունեն նաև համաշխարհային պոեղիայի օրինաշափությունները։

Ծշմարիտ բանաստեղծությունը, շարենցյան յոթնաբանյա դասակարգումով, ունի գլխավոր ու պարտադիր հայտանշաններ։

Առաջին հայտանշան. «Երգը երկրից է աճում, և ոչ թե ձայներից կամ բառերից»։

Բանաստեղծության դարավոր ակոնքներով ստուգված այս խորհուրդը նշանակում է, որ առանց կյանքային և հայրենական արմատների, առանց բնական հիմքերի, անմտածելի է իսկական բանաստեղծությունը, որ բանաս-

տեղծական արտահայտման միջոցները երկրորդային կշիռ ունեն իրականության արմատների համեմատությամբ:

Երկրորդ հայտանշան. «Երգը—ընթացք է ու հուն, և տեղ է և ոգու աղամանդյա վահան, և բարիք է, և շնորհ անանձնապատկան»:

Այս խորհրդով Զարենցը կարևորում է բանաստեղծության շարժումը կեցության լայն ուղիներում, ստեղծագործական ակտի հարուցած հրճվանքի և անձնականությունից վեր կանգնած երգի դաշինքը:

Երրորդ հայտանշան. «Թեկուզ դարն է ծնում և երկիրն է տալիս երգին շունչ ու ոգի, — բայց երգը երկրից ու դարից միշտ երկար է տևում»:

Սույն խորհրդով Զարենցը դառնում է բանաստեղծության հավերժությանը, արվեստի համամարդկային էությանը, այն արվեստի, որը հաղթում է ժամանակին և բարձրանում պատմության կատարը:

Չորրորդ հայտանշան. «Որքան էլ վեհ լինի ձեր ներկան—շմոռանաք, որ դուք սերմեր ցանեք, որ լինեն դարից ձեր—երկար»:

Ամեն մի բանաստեղծություն, ներշնչվելով իր ժամանակի ապրումներով, միաժամանակ պարտավոր է ունենալ իր ժամանակից վեր բարձրացող բովանդակության պոտենցիան:

Հինգերորդ հայտանշան. «Ու մի աշխատանք տքնաշան չէ այնքան, որքան ոգու հերկը.—ի սկզբանն էր բանը, և բանն էր ճիգ ու ջանք, և ջանքին առընթեր : Էր երգը»:

Այս խորհրդով բանաստեղծությունը պատկերացվում է իրրև աշխատանքի և ոգու (տաղանդի, ձիրքի) համաձուլվածք, այս երկու կարևոր նախադրյալների միագումար:

Վեցերորդ հայտանշան. «Տքնեցեք տքնաշան ու հնչումներ ցանեք՝ հերկելով հերկերն անցյալի՝ հանում գալիք օրվա»:

Այս խորհրդով Զարենցը դառնում է «ժամանակների կապի» գեղագիտությանը, հոչակելով արվեստի ժառանգորդական խոր հիմքերը:

Այսուհետև գալիս է յոթերորդ հայտանշանը. «Խորհուրդ չի ընդունում ապագայի երգը», որով ամբողջանում է Զարենցի գեղագիտական պսակը:

## 14

«Դիրք ճանապարհին» փակեց Զարենցի ստեղծագործության գրավոր շրջանը. դրանից հետո նրա անունը հազվագեց էր երկում միայն պարբերական մամուկի էջերում, գերազանցորեն տոնական օրերին, գերազանցորեն տոնական բանաստեղծություններով՝ ձոնով ու ներքողով:

Այդ տարիներին (1934—37 թթ.) Զարենցը համարյա մեկուսացած էր գրական կյանքից, շրջապատից և մարդկանցից:

Դա են վկայում իր իսկ օրագրային գրառումները:

Վերին աստիճանի պերճախոս են այդ տարիների իր գրությունները՝ շափած և արձակ (նամականի, դիմում, օրագրություն), իր ֆրիկլան շնչի գանգատներն ու նարեկացիական հանգի ողբերը, որոնց մեջ իր և հայոց Հելիկոնի ճակատագրին վերաբերող «մտորումներից» բացի, շատ բնորոշ են վրա և կող օրերի («անորոշ օրերի») նախազգացումներն ու կուահումները:

Արդին 1934-ին գրած մի շարք բանաստեղծություններում, ինչպես հատուկ է մարգարեական-թափանցող խառնվածքի բանաստեղծին, Զարենցը կուահում էր հասարակական մթնոլորտում կուտակվող ամպերը:

Այդ թվականից արդեն նա գրում է իր տագնապի ու ահազանգի երգերը, այն երգերը, որոնք մարդկանց զգոնության էին կոչում՝ կանխելու մոտեցող սպառնալիքը:

1933—34—35 թթ. Զարենցը, բնականաբար, դառնում է իր անցած պոետական ճամփաներին՝ այդ ճամփաները ճամեմատելով իրեն վիճակված փորձությունների հետ:

Տագնապի ու հաշտության նվագներից, ապա և դիֆերամբներից հետո, թվում էր, թե Զարենցը այլևս պետք է դառնար հայրենական երգի «սերմնացանի» վերուստ տրված առաքելությանը, բայց... բանաստեղծի հոգեկան դրաման թեակոխեց սուր կետերի՝ շիկացման, փուլը:

Այդ թվականների էության մասին վերին աստիճանի հստակ գաղափար են տալիս Զարենցի բանաստեղծությունները՝

Եղել է արդյոք անցյալում, հնամ,  
Որ պոետները երգերի վերև  
Իրեւ վերնագիր՝ լոկ թվեր գրեն,—  
Որ լինեն դրանք ավելի անհուն,  
Ավելի խորունկ և իմաստավոր,  
Քան հազարատես զիրքը հստափոր...

Զարենցի անտիպ թղթերի մեջ կան մեր հասարակության կյանքում տեղի ունեցած կտրուկ փոփոխությունների («ի՞նչ պատահեց կյանքում») պոետական բացահայտումներ, դառն ապրումների խոստովանություններ:

Գիշերային առանձնության մեջ («ընտելացած արդեն կիսարթմնի կյանքի») նա գրում է իր գիշերային երգերը:

Կեսպիշերային ինքնաքննության այդպիսի մի պահի է գրվել «իմ լուսաստղը» սոնետը.

Առավոտ կանուխ բարձրացիր,  
Երբ նոր, գեր նոր մարմանդ լուսանում է:—  
Կըտեսնես լուսաստղը կապտածիր,  
Որ պայծառ ցոլքով բարձրանում է:—  
Ախ, այդպես բարձրացավ մի օր  
Աշխարհում, Զարենց, քո անունը...  
Բայց հետո-կլանեց անհունը,  
Քո լուսաստղը-ցոլուն, ոսկեզոր...

Այդ ոչ թե արևն էր՝ բարձրացավ—  
Եվ արեց ոսկեզօծ քո ցոլքը  
Իր շքեղ ցոլքերով պայծառ:—  
Ոչ:—Զնշն ամպերի սկ զորքը  
Պաշարեց արեց առաջ քեզ,—  
Իսկ այնտեղ, ներքեռմ-երգի սով էր:—  
Բայց ցնձում էր Պառնասն առանց քեզ...

«Իմ լուսաստղը» սոնետի հետ միևնույն շարքի մեջ է «Վերջին աղոթքը»՝ գիշերվա-առավոտվա, երազի-իրականության, անհունի-լուսաբացի սահմանագծին գրած տարրերակներով, ուր Զարենցը ներկայացնում է իր «անկեղծ մտերմությունը» մուսաների հետ, պոեզիայի իր «սրբազնագույն» պաշտամունքը, որը հարուցում է գրական հակառակորդների անզուսպ թշնամությունը:

Անգամ խոռված այս հոգեվիճակի մեջ Զարենցը դարձյալ պահպանում է հոգեկան աշխարհի մեծագույն կորովն ու անվճատ արիությունը.

Շնորհակալ եմ, Տեր, այն ամենի համար,  
Խել տվեցիր դու ինձ կյանքում իմ խեղճ...

## Եվ ապա՝

Ինձ մի ընկճել երբեք և ոչ մի ծանր քար,  
Եվ ոչ մի կոճ՝ ընկած իռովիս առջև

Դեռ ավելին. իր պաշտած մուսաների սուրբ ու անկեղծ մտերմության համար նա պատրաստակամություն է հայտնում տանել ամեն տեսակ շարշարանք և տառապանք, «անգամ՝ մահ», միայն թե կրի «պարգևը լույս...»։ Մինչդեռ՝ «անապակ պարգևը վերին՝ դարձավ մաղձ ու ցավ», թելադրելով նաև այս տողերը.

Իմ մահվան օրը կիշնի լուսիթյուն,  
Նանր կընսափ քաղաքի վրա,  
Խնչպես մթին ամպ կամ հին արտմություն  
Կամ լուր աղետալի՝ թերթերում գրած...

Եվ համր՝ մի պահ՝ գիշերվա կեսին  
Բոլորի սրտում կկանգնի հանկարծ,  
Անհաղորդ, ինչպես հեռավոր լուսին,  
Իմ զեմքը՝ արդեն հավիայան հանգած...

Մերթ հանդարտվելով, մերթ մոլեգնելով, մերթ հոգնելով, մերթ ծառս լինելով, Զարենցը նորից գալիս է իր ճակատագրին (Մոյրա-Մուա-Ճակատագիր), ասել է՝ դրամայի վերջին, ամենավերջին գործողությանը, որի մասին պատմում են մի շարք գործեր, նաև «Պոեմ անվերնագիր» (1937) գործի երազների մասին առաջին գլուխը.

Զարմանալի շփոթ, ու անհեթեթ, ու մութ,  
Ես մի երազ տեսա այս երեկո հանկարծ,  
Ոչ թե երազ-զամանցական տեսիլ—  
Արդեն վաղուց է, որ ես մատնված եմ այս  
Զառնացանքի նման անիրական կյանքին,  
Եվ, իոդի նման ծալապատիկ նստած՝  
Վարժեցնում եմ հոգիս հայեցումի անկիրը...

Նրան այլևս գրավում են միոտիկական երազները՝ յոգական ինքնաշարշարանքներն ու ինքնաներսուզումները («Արդեն վաղուց է՝ ես ընտելացել եմ այս տարօրինակ իոգային կյանքին»), էղդար Պոի («Ուզայում») բանաստեղծության սկ ուրվականները, ֆրոյդյան պսիխոանալիզը, ճակատագրի հնագույն ուսմունքները, «Այսպես խոսեց զրադաշտի» պատվիրանները։

Ամբողջ կյանքում ապրելու միակ ձևը և գոյության միակ իմաստը «անգին բռնկումը», ոգու բարձրացումը համարած բանաստեղծը ստիպված է տրվել նման հուզապրումների։

Այստեղից մի քայլ է մնում մինչև շուտափույթ մահվան տենչանքը՝ «Տուր ինձ երկինք այդպիսի մահ ու այդպիսի թաղում...»։

Եվ սկ թիկնոցը վրան բարձրանում է իր լեռան գագաթը՝ աղոթքի («Իմ լեռան աղոթքը»)։

Քառասունամյա կյանքի քարն ուսերիս վրա,  
Արարշական գործիս անագորույն կեսին,  
Հղում եմ թեզ կրկին ահավասիկ ես իմ  
Խոն անտրոտունց երթիս՝ աղոթքը իմ լեռան։

Թեղ, ով թաշխող խոհի և շնորհող եռանդ,  
 Թեղ, տվողի հանճար, և ինքնություն, և ձիբք,—  
 Դող՝ տարփուհուն ՚պարող, շնորհք՝ բանաստեղծին,  
 Որ բարբառն բանիվ և գեղգեղեն ձեռամբ...  
 Շնորհապարտ եմ, Տեր, ինձ լիարուռ ձոնած  
 Շնորհների համար և ձիբերի անեղծ,—  
 Որ կոչեցիր երգիշ ու բանաստեղծ,  
 Նվիրեցիր տավիդ և էվոլյան քնար:

Շնորհապարտ եմ, Տեր, ես առավել, սակայն,  
 Որ կոչեցիր դու ինձ ոչ սովորական քերթող,—  
 Այլ ասպետ, և պետ, և զինակիր,  
 Եվ սերմնացան աննինջ—դժմի ժամանակի...

**Նարեկացիական «մեղավորիցը մեղավոր շկա» և «կարեկցիր ինձ, Տեր» հառաշանք-դիմումների ոգով Զարենցը պարզում է իր հոգեկան ներքին պատկերը, ուր հակամարտությունը լուծվում է ոչ թե հոգեկան աշխարհի երկինք-կումով, ոչ թե երկվությամբ, այլ մի այնպիսի հավատով, որ կարող էր ունենալ միայն Զարենցի պես ամուր հոգու տեր Մարդը, «մեղսապարտ դպիրը քերթության արվեստի»: Իր դեմ ուղղված բոլոր հարվածները Զարենցը համեմատում է Արարատի վրա նետված շնչին քարերի հետ:**

Գր. Նարեկացու շնչի գիշերային ողերից և Վ. Տերյանի շնչի աշնան ու մայրամուտի նվագներից բացի, նույն օրերին նաև իր լուսաբացյան ցնորքները, իր լուսեղեն առասպելները, արվեստի և գոյի հավերժական էությունը հաստատող իր կանշերն ու տեսիլքները:

**Դրանց մեջ է բանաստեղծական Մուսայի ծնրադրությունը՝ «իմ Մուսային» ոռնդոն՝ գրված 1937-ին.**

Մաքուր իմ սեր, միակ իմ զեն,  
 Միակ իմ հուր, իմ սուր, իմ զարդ,  
 Հույս իմ լուսե, քույր իմ հպարտ,—  
 Իմ անաղարտ սիրո հույզեր,—  
 Լույս իմ կյանքի, հույս իմ զվարթ...

Ամեն վայրկյան ու ակնթարթ  
 Դու ես միայն ինձ հետ կիսել  
 Թե վիշտ, թե զերք, թե երգ, թե վարդ  
 Մաքուր իմ սեր:—

Ինչպես անգետ մանկան համար  
 Թոփչք ու վազք, ու կարուսել,—  
 Ինչպես երգչին-քնքուշ քնար,  
 Չորավարին—անկոր սուսեր,—  
 Իմ զեն, իմ սուր, իմ հուր անմար,—  
 Անհուն իմ սեր...

**Մուսայից հետո գալիս է կանացիության ծնրադրությունը՝ պեսպես ձևերով.**

Աստվածամայր, հեռացած կնոջ պատկեր լուսե,  
 Իբրև Տեսիլք՝ ճառագած երազներում մեր սին...  
 Քեզ նվիրած հիմներում մենք մեր ցնորքն ենք հյուսել՝  
 Այն, ինչ տրված ենք ուզել երազներում փիրուզ  
 Մեր մարմնաբույր, մեր հողի սիրուհիներին...

 Սիրային առասպելների պասկը, անտարակույս, հելլենական դիցաբանության թեմայով գրված «նավզիկե» պոեմի հատվածն է, որը համարելով իր ռամենաշքնաղ երկը», Զարենցը նվիրել է «Արփիկին, Արփիկին, իզարելլային»:

Արկածներով ու փորձանքներով լի ճանապարհորդությունից հետո անձանոթ կղզում հայտնված և նավզիկեռվ հմայված Ողիսեսի թեման Զարենցի համար այն ոլորտն էր, ուր կարող էր բացել իր կենսագրությունը:

Նավզիկեն Զարենցի համար նույնն է, ինչ լաուրան Պետրարկայի, Գյուղալը՝ Սայաթ-Նովայի, Հրաշք աղջիկը՝ Վահան Տերյանի համար:

Դա իր լուսեղեն երազների բարձունքն է՝

Մանկությունից իմ լուրի-մինչև կեսօրն իմ թեժ,  
Իմ օրերում՝ անցած երազի պես,—  
Ես սպասել եմ, որ՝ ահա կենսե իմ դեմ,  
Ամենօրյա ցնորք, իմ նավզիկե...

Կյանքի բոլոր հատվածներում՝ «անդարձ տարիների» բոլոր կետերում, կեցության բոլոր շրջադարձերում բանաստեղծի հայացքի առաջ կանգնել է նավզիկեն, այսինքն՝ մեծ կարոտի ու մեծ ներդաշնակության տեսիլքը.

Մերթ աղջկա նման, մերթ մանկական տեսքով,  
Մերթ որպես կին՝ տեսած երազի մեջ,—  
Մերթ իբրև կույս անեղծ, մերթ մի Մանոն Լեակո  
Պատկերացել է հնձ—իմ նավզիկեն...

Մերթ սպիտակ, որպես մարմարոնյա արձան,  
Մերթ մեքենյան կավե մի վազի պես  
Մերթ իբրևնա մարմնով եզիտուհի դարձած՝  
Հմայել է հեռվից իմ նավզիկեն...

Մերթ կոնֆերով ողորկ, որպես ձուլված արծաթ,  
Մերթ՝ որպես էգ օձ երազի թեզ՝  
Մերթ աշքերով կանաչ մի կին դարձած—  
Անկեղծ մի կույս կարծած իմ նավզիկեն...

Ամենատարբեր, հաճախ իրար հերքող հատկություններ՝ պարզ մարդկային գծերից մինչև գեմոնական կախարդունու գծեր, սովորական էությունից մինչև խորհրդավոր էություն,—վերագրելով նավզիկեին, Զարենցը աշխարհի կանացիության սկզբունքի թափանցումից աղեղ է կապում դեպի արվեստն ու գոյությունը:

«Նավզիկեն» ոչ միայն բանաստեղծի սիրո պատումն է, այլև արվեստի իմաստավորումը՝

Նա մերթ կանչել է հնձ սրինգային ձայնավ,  
Մերթ՝ քնարի քնքուշ նվազի պես,—  
Մերթ դարերով ծանոթ, մերթ միայն նոր,—  
Ինձ հարազատ ձայնով—իմ նավզիկեն...

Նավզիկեն՝ իբրև արվեստի անհասության, բարդության, բազմակողմանիության, կատարելության շափանիշ, երևացել է բանաստեղծի կենսագրության մեջ՝ «շրջադարձում, երթում, քայլափոխում ամեն..»:

Իր ճակատագրի յուրացումներից զատ, Զարենցի ներշնչանքների մեջ տեղ գտան նաև հայ ժողովրդի պատմական ճակատագրին և այդ ճակատագրի նվիրյալներին վերաբերող մտահղացումները:

Կոմիտասին «Հավերժական հանգիստ» ըղձացող օկտավիներից, Ակսել  
Բակոնցի ներողից, Ավ. Խսահակյանին՝ թաշկինակի վրա ձռնած բանաստեղ-  
ծությոնից բացի, գրական թողոնների մեջ կան մի շարք անավարտ էջեր,  
որոնք վկայում են նրա պատմական և մշակութային հարցասիրությունների  
շառավիղները:

Քո անունն է՝ Զարենց,  
Ասոնանսն է՝ «Արև»,  
Եվ բառն՝ «Հանճարեղ»:

**Սրանք Զարենցի տողերն են: Ճշմարիտ, անհերքելի տողեր:**

Զարենցը հայ գրականության դարավոր պատմության հավերժական ուղե-  
վորն է, նրա անմահության վկաներից մեկը:

## ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

Դերենիկ Դեմիրճյանը երկու պատմաշրջանի գրող է; մեկ՝ նախահեղափոխական, մեկ էլ՝ սովետական շրջանների:

Ստեղծագործական ճանապարհի «ակամա» բաժանումը իր կնիքն է դրել նրա գրվածքների բովանդակության և ուղղության վրա: Առաջին շրջանի երկրը բնութագրվում են գերազանցապես իրականության, առհասարակ կյանքի բացասաման բանաձևերով, բննադատական վերաբերմունքով, երկրորդ շրջանի երկերը՝ իրականությունը հաստատող դրական պաթուով, առհասարակ գոլության մեծարանքով:

Պատմական-ժամանակագրական այս սահմանագծի մեջ, կյանքի տարրեր շերտերի հիմքի վրա և տարրեր լուծումներով, Դեմիրճյանն անդրադարձել է «ներքին մարդու» բացատրությանը, այդ խնդիրը դարձնելով իր գեղարվեստական-փիլիսոփայական-բարոյախոսական հայտնագործումների գլխավոր առանցքը:

Մարդը՝ մարդը՝ ժամանակի, մարդը՝ աշխարհի հետ ունեցած հարաբերությունների տարրեր լուծումների, աշխարհազգացական տարրեր վերաբերմունքների մեջ էլ արտահայտվել է Դեմիրճյանի գեղարվեստական զարգացումը՝ բացասաման սահմանումներից դեպի դրական իդեալի դիրքերը:

Ինչպես ամեն մի գրող, Դ. Դեմիրճյանը ևս գալիս է գեղարվեստական մշակույթի որոշակի շերտերից ու աղբյուրներից: Նրա անհատականության ձևավորման մեջ դեր են ունեցել և Վ դարի հայ պատմիչների հրեղեն գրերը, և միջնադարյան արվեստի վերածննդյան գոյները, և հայ ժողովրդական վիպերգի արիության դասերը, և բայրոնյան «Համաշխարհային թախծի» կեցվածքը, և «Ժիծաղ» արցունքի միջից» գոգոլյան գեղագիտությունը, և Մ. Նալբանդյանը՝ հրապարակախոսական զղուտ ֆիլիպիկաներով, և Ֆ. Մ. Դուտուկին՝ մարդու հոգեկան անձավների միկրոսկոպիկ սուզումներով, և XX դարի նորագույն գրական հոսանքները, և իր ժամանակակիցները՝ Հովհ. Թումանյան, Ավ. Խաչակյան, Պ. Տերյան, Նար-Գոս:

Գեղարվեստական այս և այլ աղբյուրների խառնարանից Դեմիրճյանը յուրացրել է շատ բան, բայց, իր իսկ խոստովանությամբ, ամենամեծ ներշնչանքը եղել է իր ժողովրդի պատմական-հոգեր-բարոյական փորձի ճանաշումը, ինչպես և կյանքի հարուստ սկահողը, որի անխոնջ և սրատես, հմուտ և անհագ հետազոտողն էր նա:

Ամենայն առումով՝ կյանքի ներշնչանքների, «կյանքի գիտության» գրող, որի ստեղծագործության ժանրային և ոճային հարուստ կազմը նույնպես վկայում է նրա հարցասկրությունների բազմակողմանիությունն ու խորությունը:

Դեմիրճյանի ստեղծագործության նյութական տարածությունն իր ապրած ժամանակի դրվագներից, ակներն իրողությունից, առօրեական կոնկրետ պահից գնում-հասնում է մինչև ժողովրդի պատմական կյանքի հնագույն շերտե-

րը, մինչև դարերի քողի տակ պահված հոգեբանական արժեքները, անմիշական հուզապրումներից մինչև ժողովրդի հավաքական հոգեբանական-կյանքային տարերը:

Իր նյութական-պատմական տարածությունը Դեմիրճյանը յուրացնում է ոչ իբրև սովորական տարեգիր, այլ իբրև կյանքի մեկնաբան, միշտ անսովոր, միշտ ինքնուրույն մեկնաբանություններով, փիլիսոփայական խորացումներով, իր շոշափած նյութերի փիլիսոփայական միջուկի բացահայտումներով:

Անտարակույս, Դ. Դեմիրճյանը հենվում է և պատմության, և ժամանակակից դշանքի տարեգրային տվյալների վրա, բայց այդ տվյալները քննում է իր ուղղությամբ, մշտակես ձգտելով գեպի կեղեների տակ եղած միջուկը, գեպի երեսովիների ընդերքը՝ լինի դա պատմական մեծ իրադարձությունը, թե տվյալ կոնկրետ, ամենակոնկրետ երեսութքը:

Իր կյանքային պաշարները և դրանց մեկնաբանությունները Դեմիրճյանը տեղադրել է ամենատարբեր գրական տեսակների մեջ՝ քնարական բանաստեղծություն և փիլիսոփայական պոեմ, դրամա և կատակերգություն, պատմքածք և ակնարկ, ժամանակակից և պատմական վեպ, գրականագիտական հետազոտություն և քննադատական հոդված, արվեստաբանական վերլուծություն և հրապարակախոսություն, վերջապես՝ «գրական մանրություն»:

Հստ ամենայնի՝ բազմակողմանի տարերքի, մեծահարուստ ներշնչանքների և գեղարվեստական ինքնատիպ լուծումների գրող, որի ժառանգությունը հայ գրականության ոգովում է:

## 1

Ախալքալաքը, ուր 1877 թ. փետրվարի 17-ին ծնվել է Դերենիկ Դեմիրճյանը (ծննդյան մատյանով՝ Դեմիրչողյանը), թեև «հեռավոր, գավառական» անկյուն էր, բայց շնչում էր դարավերջի հայ գրականությանը բնորոշ ապրումներով՝ ազգային փրկության հույսեր, հայրենասիրական ոգորումներ... Արդեն լսել էին ոռւս-թուրքական (1877—1878 թթ.) պատերազմի կրակոցները, բայց այդ պատերազմի հետ կապված սոմանտիկական շունչը ոչ միայն շէր մարել, այլև գավառի բնակչությանը՝ գյուղացիներին, արհեստավորներին, վաճառականներին, ժողովրդական մտավորականներին, գեռ հրապուրում էր պատաշակրության պատրանքներով:

Ամենուրեք հնչում էին զինվորական, հայդուկային, աշուղական նշանավոր երգերը, եկեղեցական բեմերը ողսղված էին հայրենասիրության քարոզներով, «լուսավորության կենտրոններից» շրջագայության դուրս եկած թատերախմբը ներկայացնում էին ժամանակին հոշակված պատմական ողբերգությունները՝ հայոց պատմության հերոսներով ու նահատակներով։ Ազգային ոգու ճախրանքը Դեմիրճյանի ծննդավայրի կողորիտի հիմնական գույնն էր։ Ինքնակենսագրության վկայությամբ Դեմիրճյանն իր մանկությունը սկսել է մեկ հայրենասիրական ներշնչանքով, մեկ էլ՝ նյութական անապահով վիճակի տպավորություններով։

Հայրը թեև մի ժամանակ հարուստ վաճառականի դիրք էր ունեցել, բայց ինչ-որ արկածով ենթարկվել էր առևտրական աշխարհի սնանկացման օրենքին, ընտանիքը մատնելով «լիակատար թշվառության»։

Համաքաղաքացիները թեև հորը դեռ պատվում էին «Կարապետ աղա» անոմով, բայց դա «արդեն ֆինանսական մտքով անարժեք խոսք էր, ուներ բարոյական նշանակություն»:

Ախալքալաքի մեկդասյա դպրոցից ավելի, մանուկ Դեմիրճյանի համար մեծ ուրախություն էր իր քահանա հորեղբոր ընտանեկան հարկը, ուր եղել է արվեստի պաշտամոնք: Այստեղ պարբերաբար հայտնվում էին թափառական աշուկներ և նվազածուներ, բացելով երգի ու ասմունքի յուրօրինակ հանդեսներ:

«Արվեստի» առաջին դասերը ստացել է այս միջավայրից, ինչպես և հորեղբոր որդիներից, որոնցից մեկը՝ Ստեփանը, ազգային երգերի հեղինակ էր, բանաստեղծ և «վառվոռն հոետոր-քարոզիչ», իսկ մյուսը՝ Վահագնը, քաղաքում հոշակված թատերասեր: Սա հաճախակի կազմակերպում էր «ընտանեկան-բակային» ներկայացումներ, որոնք այդ տարիներին տարածված ազգային ողբերգությունների և կենցաղային ողբերգությունների խաղացանկի ընդօրինակությունն էին:

Այդ ներկայացումների պարտադիր արդուզարդը՝ սուր և վահան, նիզակ և սաղավարտ, սազ և քամանի, «ուազմադաշտում» գլորվող հերոսներ և մահավան շնչում ճառեր ճշացող զորավարներ,— այս ամենը, իր վկայությամբ, բառացիորեն կլանում են «հանդիսատես» Դերենիկի ուշքն ու միտքը, այնպես են հափշտակում, որ մեկ-մեկ հանդես է գալիս փոքրիկ դերերով և անգամ մտածում... դերասան դառնալու մասին:

Թատերական ովկորությունը երկար չի տևում. իր հոր և նրա մի վանեցի բարեկամի սրճարանը ավելի զրուցարան էր, քան վաստակի աղբյուր, ուստի և «Կարապետ աղան» բախտը փորձելու նպատակով ընտանիքով տեղափոխվում է Արդահան՝ կնոջ ծնողների մոտ: Արդահանում Դեմիրճյանը հաճախում է Ս. Տեր-Մելիքսենեկյանի նորաբաց դպրոցը:

Երբ արդեն անմնացորդ սերտել էր դասընթացը, Արդահանի դպրոցի հոգաբարձությունը 1892 թ. հունիսի 31-ին գրավոր միջնորդում է էջմիածնի Գեղվորգյան հեմարանի տեսչության առջև՝ լսարանական բաժին ընդունելու «աստվածատուր բնական ձիրքերով օժտված», «նախանձելի ընդունակությունների» տեր պատանուն:

Ճեմարանում իր ուսուցիչների մեջ էր բանաստեղծ և թատերագիր, անտիկ, ելորպական և ուսու գրականության բազմագիտակ Լեոն Մանվելյանը, որից էլ Դեմիրճյանը ստանում է «դասականության» վաղ ներշնչանքները: Ճեմարանում խորանում է հայոց պատմության մեջ՝ մատենագիտական սկզբնաղբյուրներով, ինչպես և ծանոթանում է համաշխարհային գրական հուշարձաններին: Նրա կուռքերն էին Ծեբսպիրը, Գյոթեն, Բայրոնը, Հայնին, Պուշկինը, Լերմոնտովը, Գովորը:

Բանաստեղծություններ գրելուց բացի Դեմիրճյանը փորձում է զարգացնել նաև իր երաժշտական ու նկարչական ձիրքերը, խորհրդատուններ ունենալով ճեմարանի ուսուցիչներ կոմիտասին և Եղիշե Թադևոսյանին:

1894 թ., երբ Գեղվորգյան հաստատության ազատախոհ ուսուցիչների մի մասը զրկվում է պաշտոններից, սկսվում են աշակերտական հուզումները: Դեմիրճյանը դրանց տպավորության տակ ինքնակամ հեռանում է Թիֆլիս և կրթությունը շարունակում ներսիսյան դպրոցում: Այստեղ կրոնի ուսուցիչն էր Պերճ Պոոշյանը: Դեմիրճյանի պատմելով Պոոշյանը վայելում էր աշակերտների հազվագյուտ սերը՝ կրոնական-ավետարանական նյութերից ավելի խոսք ու

զրուց բացելով ազգային պատմության, ժողովրդի հայրենասիրական անցյալի, հայրենագիտության և ազգագրության շուրջը: Պոռշյանը եղել է Դեմիրճյանի գրական ներշնչանքների խրախոսողը:

Դարավերջի թիֆլիսը՝ աշխույժ եռուզեռով, մանավանդ գեղարվեստական կյանքի նորություններով, Դեմիրճյանի առջև բացում է «նոր աշխարհ»՝ այնքան տարբեր իրեն քաջածանոթ գավառական կյանքից:

Դեպքերը, սակայն, դասավորվում են այնպես, որ դեռ մի կարգին շճաշակած թիֆլիսի «համն ու հոտը», Դեմիրճյանը 1897 թ., Ներսիսյան դպրոցն ավարտելուց անմիջապես հետո, հայտնվում է «ծառայության» մեջ: Մառայությունն սկսում է իբրև Արդարանի օդերևութարանական կայանի դիտորդ: Այս գործը՝ միալար, միապաղաղ ոիթմով, ձանձրույթի իսկական աղբյուր էր: Շատ շանցած Դեմիրճյանը դառնում է Արդարանի գյուղերից մեկի փոստակայանի վերակացու:

Դեմիրճյանը իր հուշապատումի մեջ կենսագրության այս կետը համարում է ամենասարսափելին՝ գոեհիկ կառապաններ, հարբած ուղևորներ, անքոն գիշերներ, ամեն տեսակետից անհրապույր միջավայր (կյանքի հատակ), որը շէր կարող հոգեկան բավականություն տալ արվեստի ներշնչանքով լեցուն երիտասարդին:

## 2

Երկու հանդիպում վճռական, կարելի է ասել՝ ճակատագրական, դեր են իւաղացել Դ. Դեմիրճյանի կյանքում. մեկը՝ Ավ. Խսահակյանի հետ, մյուսը՝ Հովհ. Թումանյանի «Վերնատան»:

Դեռ Գևորգյան ճեմարանում սովորելիս Դեմիրճյանը «բարդիների արահետներում», «մարգերի շուրջը», «Ներսիսյան լճի ափին», «ճեմարանի պարտեզում» որոնում էր իրենից առաջ Ալեքսանդրապոլից սովորելու եկած Ավ. Խսահակյանի հետքերը, որը աշակերտների շրջանում հայտնի էր «ճեմարանի բանաստեղծ» անունով:

Դեռ Խսահակյանին շտեսած, Դեմիրճյանը հաղորդակցության էր գնում նրա հետ, խորհրդավոր մի բնագով հոգեկան ներքին կապ էր տեսնում իրենց միջև («Ես ինձ մենակ չեմ զգում, ես նրա հետ էի», — գոել է հուշերում): Իսկ երբ «Տարադ» հանդեսում կարդում է Խսահակյանի բանաստեղծությունները, նույն բնագով սպասում է նրա խոսքին՝ իր բանաստեղծությունների մասին, որոնք «ուղեգիր» էին ստացել նույն «Տարադի» էջերից, 1893 թ.: Ստանում է առաջին նամակը՝ ժանության խոստումով, որին հետևում է առերես հանդիպումը Թիֆլիսում: Զրուցների նյութը եղել է բանաստեղծությունը՝ ճաշակային տարբերակներով: Որոշ ժամանակ անց, ստանում է մի որիշ, կարեոր նամակ՝ Արդարանում, ուր Դեմիրճյանը զօր ու գիշեր շարշարվում էր իր վերակացուական գործի մեջ:

Այդ նամակը՝ «բանաստեղծական պատվիրաններով», Դեմիրճյանին ավելի է մղում դեպի Ավ. Խսահակյանը, որն արդեն տպագրել էր «Երգեր ու վերքեր» ժողովածուն և դարձել ընթերցող հասարակության կուռքը:

Նամակը գրվել էր 1898 թ.: Մեկ տարի անց, ձեռքն առած իր «Բանաստեղծությունների» (1899) առաջին տետրակը, Դեմիրճյանը հայտնվում է Ավ. Խսահակյանի հայրենի քաղաքում, նրա հարկի տակ: Միասին անց են կացնում անմոռանալի օրեր Շիրակի գյուղերում, Ալեքսանդրապոլի հանրային հավաքա-

տեղիներում, ժողովրդական հանդեսներում, Արագածի փեշերին, սարվորների վրանների տակ: Այցելում են Անիի ավերակները:

Դրական զրույցները շարունակվում են նաև Ղազարապատում՝ ապտղապարդ գիշերներից մինչև լուսաբացյան աքլորականը:

Այստեղ էլ դրվում է մեծ բարեկամության սկիզբ՝ արվեստին և ժողովրդյան ուխտին անմնացորդ նվիրումի շափանիշներով:

Այնուհետև, մեկն Ալեքսանդրապոլից, մյուսն՝ Արդահանից, գալիս են Թիֆլիս, ուր այդ տարիներին կենտրոնացած էր հայ մտավորականությունը:

Դեմիրճյանն աշխատում է իրու Հայոց բարեգործական ընկերության տեխնիկական քարտուղար, ազատ ժամերը նվիրելով իր բանաստեղծական ներշնչանքներին:

Դարավերջյան Թիֆլիսը ամբողջովին շնչում էր ազգային մշակույթի զարգացման մտահոգություններով: Մտավոր կյանքը եռուզեռի մեջ էր: Հովհաննյանը սկսել էր «գրական նոր շարժումը»: Դեմիրճյանը թեև ուներ ծանոթավորականների լայն շրջապատ, բայց, ինչպես ամենքը, մղվում էր դեպի Հովհաննյանը: Ավ. Խաչակյանի «բարեխոսությամբ» կայանում է ծանոթությունը:

Դա 1900 թվականին էր<sup>2</sup>, երբ Թումանյանը մտահոգված էր գեղարվեստական նոր շարժումը կաղմակերպշական ամուր հիմքերի վրա դնելու խնդրով:

Զեավորվում է նշանավոր «Վերնատունը», որի հիմնադիր «վեցյակի» մեջ էին Ղազարոս Աղայանը, Հովհաննես Թումանյանը, Լևոն Շանթը, Նիկոլ Աղբալյանը, Ավետիք Խաչակյանը, Դերենիկ Դեմիրճյանը<sup>3</sup>:

«Վերնատան» «առաքյալներից» բացի խմբակի զրույցներին և ընթերցումներին մասնակցում էին Թիֆլիսում ապրող հայ գրողները՝ Պերճ Պոռշյան, Շիրվանզադե, Նար-Դոս, Լեռ, Մուրացան, Լևոն Մանվելյան, Վրթանես Փափաղյան, Հակոբ Հակոբյան, ինչպես նաև խմբագիրներ, հրատարակիչներ, ուսուցիչներ, նկարիչներ, երաժիշտներ, դերասաններ:

«Վերնատունը» մտերիմների սովորական խումբ չէր, այլ համախոհների ստեղծագործական միավորում՝ գեղագիտական որոշակի դավանանքով:

«Վերնատան» դավանանքի մասին Դեմիրճյանը գրել է. «Շարժում՝ դուրս գալու աղքային սահմանափակությունից, ժողովրդական ազգային կուլտուրա, համամարդկային գաղափարներ, համաշխարհային կլասիկա»<sup>4</sup>:

Դա մի լայն ծրագիր էր, որը խարսխվում էր արվեստի համամարդկային գծերի և ժողովրդական ազգային հիմքերի համադրման սկզբունքի վրա: Այդ դավանանքի դրոշակակիրը Հովհաննյան էր:

«Վերնատան» հավաքույթներին, որ տևում էին մինչև ուշ գիշերներ, գրական վեճ ու զրույցներից բացի, ընդունված է եղել գրական երկերի ուսումնասիրման «սեմինարական մեթոդը»: Այդ սեմինարներում, կետ առ կետ, մանրամասնորեն վերնականներն ուսումնասիրել են համաշխարհային գրականությունը՝ սկսած հին հունական ողբերգակներից, XVIII—XIX դարերի ելուագական և ուսուական գրական հսկաներից մինչև նորդարյա գեղարվեստական հոսանքները:

ցիկ» արահետներով, մի ոտքը պահած ժողովրդական գեղագիտության հողի վրա, մյուս ոտքը՝ նորագույն հոսանքների, սիմվոլիստական գեղագիտության:

Դեմիրճյանի գեղագիտական «երկփեղկման» ցայտոն վկայությունը իր պոեզիան է, որը, դատելով 1899 և 1913 թթ. բանաստեղծությունների ժողովածուներից, մի յուրօրինակ խճանկար է՝ տարբեր բանաստեղծական շերտերով: Այս մասին Դեմիրճյանը գրել է. «Պատանեկան ոռմանտիկական պեսիմիզմ, «բայրոնիզմ», սրա ոռւսական անդրադարձումները Պուշկինի և Լեռմոնտովի նախնական ստեղծագործությունների վրա, Գոգոլի ոռմանտիկական Ովկրահնան, «Մեռած հոգիների» բանաստեղծական ուսալիզմը, Հայնեի սիրո հումորն ու արցունքները, Գյոթեի կլասիկական հանգստությունը, խորամիտ փիլիսոփայությամբ ներշնչված Շեքսպիրի համամարդկային կրքերի ծովը... Այս ամենը հաճախ իրար հակառակ հոսանքներով իմ մեջ անդրադառնում էին յուրակերպ: Ես չէի գիտակցում, որ որոնում էի ինձ: Այդ որոնումը երկար տեղեց, նրա խմորումը, զարգացումը, որոշվելը անցավ երոշ տարիների պրոցեսի միջով»<sup>5</sup>:

Թեև դժվար է Դեմիրճյանի պոեզիայի տարբեր շերտերի համար առանձնացնել կտրուկ անցումների որոշակի տարեթվեր, այդուամենայնիվ ակնհայտ է 90-ական թթ. ոռմանտիկական-բարձրացող տարբերքի իշխող դիրքը և 900-ական թթ. սիմվոլիստական տարբերքի ուժեղացող երակը:

Գեղագիտական կողմնորոշումների այս պատկերը պայմանավորված էր հասարակական կյանքի բեկումնային երևությներով:

Դեմիրճյանի գրական մուտքը զուգադիպեց հայ հասարակության ազատագրական հույսերի շրջանին. այդ տարիների նրա բանաստեղծություններում հում բացեցին ճշմարտության որոնման խոռվարար կանչերն ու ժամանակի սարք ու կարգի գեմ ուղղված հարցականները: Խսկ երբ եկան հույսերի խորտակման տարիները, Դեմիրճյանի քնարը ապաստարան գտավ սիմվոլիստական գեղագիտության «անհայտ ուղիների» և տեսիլքների, աշնանաթափի և մենության ափերում:

Դ. Դեմիրճյանը, — իրավացիորեն գրել է ժամանակի քննադատը, — «անբույժ մենության երգիչն է»<sup>6</sup>, տառապանքի փիլիսոփան, շարդված, բեկված հոգիների ներանձնացման դրամայի կրողը: Սա է նրա բանաստեղծությունների ընդհանուր բանաձեռք: Տարբեր են միայն արտահայտման ձևերը:

90-ական թվականների բանաստեղծական կառուցվածքների էական տարրերն են ծովը, մրրիկը, կայծակը, շանթը, հալածական ամպը, ուժգնացող քամին, շառաչող անձրեց՝ ոռմանտիկական (նեռոռմանտիկական) տարազի մեջ, 900-ական թվականների բանաստեղծությունների պատկերային նյութն են աշունը, տերեւաթափը, անլույս գիշերները, դժգույն օրը, մենությունը՝ սիմվոլիստական արդուզարդի մեջ:

Դարավերջյան բանաստեղծություններում տեղ են գտնում հայ հասարակության մեջ արթնացող փրկության սպասումները, ինչպես, օրինակ, իր առաջին տպագիր ուտանավորի՝ «Ապագայի» («Տարագ», 1893) հետևյալ պատկերը.

Մանուկ առվակը առաջ է հոսում,  
Դեպ ծովն է վազում անայլալ խոխոջով,  
Եվ ճանապարհին նա կյանք է սփռում  
Դալար խռտերին գրկախառնվելով...

Բայց երբ որ դառնա ալիք կատաղած,  
Նա կլուրտաւի ահեղ նավերին,

Եվ ամեն բուզե՝ մրրկով բռնված  
Կրտսի կուրծքը կարծր ժայռերին...

Դեմիրճյանը դարավերջյան բանաստեղծություններում ներբողում էր «ահեղ նավերի» դեմ ծառացած կատաղած ալիքների և ծովային տարերքի խենթությունը՝ Հովհաննես Այվազովսկու շնչով ստեղծելով բանաստեղծական ծովամարտություն։

Դարասկզբյան բանաստեղծություններում արդեն, երբ վրա հասան փըրկության հույսերի փլուզման օրերը, Դեմիրճյանը փարեց «անկոփվ ապրումների» գեղագիտությանը։ Տրամադրությունների բեկման ընթացքը շափազանց ընդգծված բնորոշում է հետեւյալ բանաստեղծությունը։

Սովի բացերն ազատ, վայրի,  
Ուր մըրիկն է տրտնչում զուր՝  
Հնկած է գիրկն ալիքների  
Մի կայմ բեկված, հուսակտուր...  
  
Մերթ նա զատվում, նետվում է վեր,  
Մերթ հուսաբեկ իշնում էլի,  
Եվ քանի որ կյանքն է ավեր  
Զի տրտնչում արդեն հիմաւ  
  
Զունի մի ելք՝ ձգտի որին,  
Իր կյանքն արդեն տիսուր կատակ,  
Մեկ վեր, մեկ վար, օրը օրին  
Հածում է զուր, հոգնած, մենակ...»

Դեմիրճյանի բանաստեղծություններում աստիճանաբար նվազում են կյանքի կառուցվածքի դեմ ուղղված հարցականներն ու պողոթկումները և, հակառակը, խորանում են իր ժամանակակիցներին համակած տափապների ու հուսահատության շեշտերը։ Դրա վկայությունն են մենության և անհեռանկարյունության խոստովանությունները («Ու ես մենակ եմ, անսահման մենակ», «Եռուան ծաղկի պես մնացի մենակ»), մահվան ու գերեզմանի տեսիլքները, մայրամուտային աշնան նվագները։

Թեև 900-ական թվականներին Դեմիրճյանն իրեն որակավորում էր նշմարաւորյան «անտուն ու անքուն մարգարեի» տեսքով, սակայն իրականում նրա բանաստեղծությունները չեն կրում հասարակական-քաղաքական ապրումների ծանրությունը, լավագույն դեպքում նրա քնարը դեգերում էր տարերային տրտունջների և սենտիմենտալ-լալիկան հումանիզմի ափերում։

«Շատ տերեւներ թափլեցին  
Հուսակտուր այս գիշեր...»  
«Ո՞ւր ես, ափ, ուր ես  
Իմ մահվան հրեշտակ...»

Մինչ Հովհաննը և Ավ. Խսահակյանը, հենվելով ժողովրդական աշխարհագացության հավատի ու արիության նստվածքներին, հասարակական ժանր ողբերգության մեջ անգամ դառնում էին կյանքի մեծարանքին և «ազատության զանգերին», Դեմիրճյանը դիմում էր անորոշ եղերքների ու դալկացող կյանքի գեղագիտությանը՝ պեսիմիզմի ալաքով։ Կյանքը չի տալիս փրկության լաստեր, փշուր-փշուր են լինում բոլոր երազները, կյանքի հյուրերին և խեղճ թափառականներին անգամ «արևը մութն է երևում», ուստի պետք է համակերպվել հավիտենական տանշանքի իրականության հետ, —սա է Դեմիրճյանի նոր հավատը, որի ձևավորման մեջ դեր են ունեցել սիմվոլիս-

տական ուղղության հրահանգները՝ «աշխարհի ուսայնության», «վերջին դատաստանի» մտապատկերներով:

Դարասկզբին Դեմիրճյանը, ինչպես մյուս վերնականը՝ Լոռն Շանթը, անցնում է սիմվոլիստական գեղագիտության դիրքերը:

Եթե դարավերջյան բանաստեղծությունների արտահայտչության տեսակարար որակը գրական-գրքային ձևերի մեջ թափանցած ժողովրդական գույներն էին՝ իսահակյանական թեքումով (նամփորդ, դարդ, լացող ուսենի, զանել հասակ, արև կյանք), դարասկզբյան բանաստեղծություններում արտահայտությունը բացառապես գրական էր՝ տերյանական թեքումով (լուսե հանգըրվան, երազ, անձրև, մենավոր ուղիներ, անձև տենչանքներ և այլն):

Դարավերջին Դեմիրճյանը շնչում էր այդ տարիներին բնորոշ իսահակյանական զգացողություններով, դարասկզբին՝ տերյանական ճաշակով:

Գրականության պատմագրության մեջ Դեմիրճյանի նախաշավիղը՝ պոեզիան, դիտվել է ծայրահեղ հակառակ կետերից: Ոմանք բանաստեղծական ներշնչանքները համարել են անկարևոր, շարքային դրվագ նրա կենսագրության մեջ, ուրիշները (օրինակ՝ Հր. Մուրադյանը) հայոց բանաստեղծության մեջ Դեմիրճյանի դիրքերն ամրապնդելու համար... նրան դրել են Վ. Տերլանից առաջ, իբրև տերյանական բանաստեղծական մտածողությունը կանխողի: Բանն այն է, որ իսահակյանական գծից Դեմիրճյանն անցավ տերյանականին այն ժամանակ, երբ արդեն մթնոլորտը լցված էր Տերյանի շնչով: Վ. Տերյանն ավելի էր պատշաճում Դեմիրճյանի «կիսաուրբանիստական» խառնվածքին, ավելի հարազատ էր իր մենավոր բնավորությանը: Կար նաև արտահայտման նոր լեզվի խնդիրը, որը տերյանական դիրքերը բերեց անգամ Ավ. Իսահակյանին՝ ժողովրդագնացին, էլ ուր մնաց Դեմիրճյանը, որը թեև դարավերջին գրած մի նամակում (Ավ. Իսահակյանին) ասում էր, որ «ուրիշ ճամփա չկա... զեպի ժողովուրդը», բայց այդպես էլ շհասավ ժողովրդական ներշնչանքին, փորձեց և... շրջվեց դեպի իր ներաշխարհը, դեպի «նեղ օրերի մեջ» հայտնված քաղաքային մտավորականության զգացողությունները: Նրա դարձը նշանավորվեց ոչ այլ կերպ, եթե... «կյանքի առեղծվածների» փիլիսոփայական սուլումներով, որը երեխ թե միակ փրկությունն էր իր պեսիմիզմից:

Դ. Դեմիրճյանի խառնվածքի ուժեղ երակը երևոյթների փիլիսոփայական իմաստավորումն է, այն երակը, որը գնահատել է նաև Ավ. Իսահակյանը:

Սա վերաբերում է նրա որոշ բանաստեղծությունների և, առաջին հերթին, «Կյանքի տեսմիլը» (1904—1912) պոեմին, որին շափազանց մեծ նշանակություն տալով իբրև իր աշխարհագավանանքի անկյունաքարերից մեկին, Դեմիրճյանը անդրադարձել է մի քանի անգամ՝ ստեղծելով պոեմի տարբերակներ:

Արդեն բանաստեղծություններում հայտնված փիլիսոփայական հարցագրումներից թելեր են գալիս դեպի «Կյանքի տեսմիլը», որի առաջին տարբերակը տպագրվեց 1904-ին, «Մուրճ» ամսագրում:

Այնուհետև, ինչպես երևում է երկերի առաջին հատորի (1976) ժանոթագրություններից, եղել են մեկ տասնյակի հասնող տարբերակներ՝ մինչև 1913 թ. «Բանաստեղծություններ» գրքում տպագրված «կանոնիկ» բնագիրը:

Հայոց բանաստեղծության մեջ դարավերջին ուժեղանում է Գոյության, տիեզերքի, մարդու ճանաշման փիլիսոփայական տեսանկյունը: Այսպես ասած՝ սեալությունից, կյանքային ակներև, շոշափելի շերտերից բանաստեղծները ոտք են դնում նաև «տիեզերական առեղծվածների» ոլորտը՝ տիեզերական շափանիշներով բացատրելու Գոյության օրենքները:

Ազգային բանաստեղծության այս ընթացքի յուրովի արձագանքն էր նաև Դեմիրճյանի «տիեզերական պուեմը»՝ «Կյանքի տեսիլը», նույնաբնույթ պոեմ-ներից («Ոչ այս աշխարհի», «Դեպի տիեզերք») ամենահետաքրքրականը:

«Կյանքի տեսիլը» պոեմի կառուցվածքի մեջ, ինչպես նկատել են «Երկերի» առաջին հատորի (1976) ծանօթագրողները, տեղ են գտել եվրոպական գրական հուշարձանների որոշ մոտիվներ՝ Բայրունի «Մանֆրեդի» աշխարհափախուստը, բնության ոգիների՝ հավերժահարսերի, հայնեական մեծարանքը, մասնավորապես Գյոթեի «Ֆաուստի» և բանաստեղծությունների («Անտառի արքան»—«Էրլոնից») ստրոկտուրաները («Վալպուրգյան գիշերի» խառնապատկերը և այլն):

Այս մոտիվները ավելի էական դեր են խաղում պոեմի գաղափարական դրույթների, դեմիրճյանական բնափիլիսոփայական-կենսափիլիսոփայական որոնումների մեջ, քան բազմիցս հղված արաբական լեգենդների հերոսի՝ Անթարի, մոտիվը:

Թերևս Դեմիրճյանը ցանկացել է արաբական սկզբնաղբյուրի հիման վրա ստեղծել երաղանքի և հյանքի բախման դրամատիկական պատում՝ սիրային, սիրավեպային սյուժենով, բայց գնացել է այլ ուղղությամբ՝ փիլիսոփայական հարցադրումների, սկզբնաղբյուր լեգենդից թողնելով միայն իր հերոսի Անթարի, անունը:

Թեև տարբերակներում «Կյանքի տեսիլը» ենթարկվել է բազմաթիվ կառուցվածքային-սյուժենային փոփոխությունների և շեշտերի խմբագրության, բայց նրա փիլիսոփայական միջուկը՝ կյանքի իմաստի որոնման թեման, բոլոր տարբերակներում մնացել է «նույն տարապի» մեջ:

Դեմիրճյանական փիլիսոփայության կրողն է Անթարը, որը դուրս է եկել Մայր Բնության ոլորտները՝ նախ պարզելու, ամեն մի աղամորդու մտահոգող կյանքի՝ վայելքի արժեքը, այնուհետև՝ մարդու տեղը տիեզերական անսահմանության «շրջապտույտների» մեջ, վերջապես՝ բնության մյուս տարրերի և մարդու հարաբերությունը:

Անթարը՝ «առեղծվածները» թափանցողի, ֆառուստյան որոնումների դրոշմի մի հերոս, ինչպես ներկայացնում է Դ. Դեմիրճյանը, կյանքի ու վայելքի, մարդկային երջանկության անսահման տեսնշեռով է լցված: Նրան մտահոգող հարցերի առանցքն է տիեզերքի ամբողջական ընկալումը, որտեղից էլ սպասում է վայելքի իր բաժինը («Ինձ ով կտանի դեպի ափեզերք, ով կտա կյանքի գաղտնիք ու վայելք»):

Անթարը ձգտում է ոչ թե վաղանցուկ, այլ հավերժական վայելքին:

Այստեղից, այս կետից էլ սկսվում է նրա հոգեկան դրաման՝ երազանքի ու իրականության բախման հողի վրա: Նրա որոնումները, որոնք կոչված էին լրացնել իր փնտրածը, ըստ էության դառնում են կործանման սկիզբը:

Պոեմի «գործող անձերից» մեկը՝ Ամպը, որը մարմնացումն է «Հզոր նյութի» և տիեզերքի «գաղտնիքների» («Ես նյութն եմ հզոր, գաղտնիքը անլույծ մեծ տիեզերքի») Անթարին խոստանում է տալ իր փնտրած վայելքը՝ կյանքային երջանկությունը և նրան առաջնորդում է դեպի բնության խորքերը:

Անթարն, իրոք, իր տիեզերագնացության միջոցին վայելում է ամպի խոստացած կյանքային բարիքները, Զաղուի եփած խմիչքի շնորհիվ նա հաղորդակցության է գնում հավերժահարսին, ըմբոշխնում ակնթարթը: Կաթսայում եփվող խմիչքի ազդեցությամբ նա բարձրանում է երանության գագաթը.

Ողջո՞ւն քեզ, գաղտնիք, ահեղ հրաշալի,  
Մաքուր թի պղտոր, անուշ թե լեղի,  
Խել որ էլ լինս՝ հոժար եմ, արի  
Միայն տուր վայելք,  
Մի կաթիլ վայելք:

Վայելքի ճակատագրական պահը՝ հավերժահարսի կերպարանքով, դառնում է Անթարի տառապանքի սկիզբը, նրա մարդկային տանջանքների աղբյուրը: Նույն «անուշ գիշերը», որ Անթարին գցում է երանության գիրկը, որ նրան դարձնում է կյանքի բանաստեղծ-փառաբանող, այլևս զրկվում է արժեքից, երբ գալիս է կյանքի երազը ժխտող ոփին՝ Ամպը, իր դաժան հրահանգով.

Այսուեղից են ծագերն անձայն տիհերքի  
Թող կյանքդ կարճ, սա է դուռը հավերժության:

Անթարը, ինչպես հիանալի մեկնարանել է Ավ. Խսահակյանը, «տանջանքի և հաճույքի հավասարակշռության» դեմիրճյանական գաղափարի արտահայտությունն է, այն գաղափարի, որի համաձայն մարդուս երջանկությունը պատրանք է, նրա ճանապարհը՝ անվերջանալի դրամա, կյանքը՝ ինքնակործանման ընթացք:

Իր գրառումների մեջ, որ կոչվում է «Կյանքի տեսիլը» պոեմի շուրջ նկատողություններ և մտքեր», Դեմիրճյանը Անթարին համարում է «անցավոր կյանքի» դրամայի հերոսը. «Գեղեցիկ ես, անցավոր ես, դրա համար ես այդքան ցանկալի, բայց այդքան ցանկալի վայելքը կյանքը տանում է դեպի ոչընշացում»:

Անթարի դրաման հենց դրանումն է, որ այդ փիլիսոփայությունը ինքը ապրում է, ինքն էլ գործիք է բնության այս խաղի համար: Տանջանքը և վայելքը, մահը, կյանքը միևնույն ուժիներն են տիեզերքի անդունդում... Կյանքի տեսիլը մի դրամա է մարդու (Անթար) և նյութի (Ամպի) միշեւ<sup>7</sup>:

Անթարի դրաման պայմանավորված է ոչ միայն հավերժահարսի տված վայելքի՝ սիրո ակնթարթով (սա սեր է անում և անմիջապես հեռանում), այլև այն հանգամանքով, որ իր կյանքային վայելքը հիմնված է ուրիշ էակների, բնության մյուս մասնիկների՝ ծաղիկների, բույսերի, տերևների ոչչացման, այն էակների, որոնցից ջաղուն պատրաստում է կյանքի խմիչը՝ «բանը ահեղ և գեղեցիկ»: Այս դրամայի հիմքի վրա Անթարը ինքնավերլուծաբար հանգում է այն մտքին, որ մարդը բնության մեծ շրջապտույտի մեջ նույնպիսի մասնիկ է, ինչպես մյուս տարրերը, ենթակա կյանքի և մահվան, զարթոնքի և կործանման բնական օրենքներին:

Տարիներ անց, անավարտ ինքնակենսագրության մեջ, դառնալով «Կյանքի տեսիլի» շարժառիթներին, Դեմիրճյանը գրել է. «...Իմ լիրիկական բանաստեղծությունների շարքում աննկատելի կերպով հայտնվեց մի պոեմ, որ իր ձևով և բովանդակությամբ այլ էր, քան մինչև այդ իմ ստեղծագործությունը: Դա «Կյանքի տեսիլն» էր: Դա իմ առաջին գործն էր, որի մեջ արտահայտվեցին իմ խոհերը և աշխարհը բռնման ուղղությունը: Ինչպես իմ հետագա ստեղծագործական ժանրերի մեջ՝ դրամատիկական, վիպական, երգիծաբանական՝ սկսեցին երևան գալ իմ աշակերտական տարիների հակումները ղեպի կլասիկներից Շեքսպիրը, Տոլստոյը, Գոգովը, Մոպասանը, այնպես էլ այստեղ՝ Դյոթեն: Այս պոեմում ես պատկերացրի և անցկացրի իմ բնափիլիսոփայությունը կենսափիլիսոփայության բովով անցկացրած»<sup>8</sup>:

Սա շատ էական խոստովանություն է՝ «Կյանքի տեսիլի» բովանդակությունը ճիշտ ընթերցելու համար:

«Կյանքի տեսիլ» պոեմի փիլիսոփայական բազմազան շերտերից Ավ. Խսահակյանը առանձնապես էական էր համարում բնության բոլոր ձևերի հավասարության «բոլորովին ինքնուրույն եզրակացությունը», որով կյանքի հումանիստական ըմբռումը էր նույն պոեմի մեջ եղած «կյանքի ոմայնության» հոռետեսական հարցականներին:

Տասական թվականներին Դ. Դեմիրճյանի բանաստեղծական ներշնչանքների մեջ տեղ են գտնում նաև ազգային պատմության նյութերը. գրում է «Հենք Թիմուր» պատմական պոեմը, որի թարգմանությունը Վ. Բրյուսովը տպագրում է «Հայաստանի պոեզիան» անթոլոգիայի մեջ:

Հիշարժան է Սարդարապատի ճակատամարտի նահատակներին նվիրված Ռեբվիեմը: Դ. Դեմիրճյանը, ինչպես պատմում է ականատեսը՝ Հ. Թուրշյանը, կարդացել է նահատակների թաղման սգո հանգեսում<sup>9</sup>:

Ներանձնացման վիճակներից դուրս գալու մյուս ապացույցը «Գարուն» սիրային Տաղարանն է (1920, Թիֆլիս):

Դեռ իր առաջին բանաստեղծություններում Դեմիրճյանը սիրո զգացմունքին տալիս էր հոգեկան մենակությունը փարաւող ուժի դեր. «Եվ դու աստղի պես եկար ժպտալից, մտերիմ ու հեզ՝ ինչպիս երեկոն»:

Բանաստեղծը մեծարում է սիրո երազային ձեզ, այն «երազ-աշխարհը», ուր «սերն անուշ է ու խնդումն անվերց»: Իրական սիրո տառապանքի կողքին Դեմիրճյանը ապավինում էր անուրջի հովվերգական կառուցվածքին՝ հեռավոր տնակի, իրիկնային զանգերի ոռմանտիկական մեկնաբանությամբ.

Ճեռու մի տնակ, ոսկե լուսամուտ,  
Քնած են վրան մարմար կաղնիներ,  
Եվ վառ լուսի հետ խաղում են անփոյթ  
Զյունե թովուն ուրախ թիթեռներ:

Ոսկի մի ճրագ, մի բաց ոսկե գիրք,  
Թերվել է վրան երեսդ գողտրիկ,  
Հոսում է գիշեր, և լուռ սենյակում  
Օչախն անրշող աշքերն է փակում:

Բանաստեղծի աշքին սերը երեսում է լեզնդի կերպարանքով. «Ասում են հեռու, հեռու մի հովտում ապրում էր սերը»:

«Գարունի» մանրապատումների մեջ Դեմիրճյանը այլևս ոչ սիրո ոռմանտիկն է, ոչ էլ «բարի գիշերներից» հետո մենավոր ողբասացը, այլ, եթե կարելի է այսպես ասել, սիրո, իբրև գոյության հիմքերից մեկի, փիլիսոփան:

Քայլակ-վեցնյակ-ութնյակների մեջ թեև տեղ են գտել դժվար սիրո ապրումներ՝ անհասության հարուցած տիսրությունը, հոգեկան տանջանքի պահերը, բեկված սրտի ելեկջները, բայց այս «կոլորիտի» մեջ անգամ Դեմիրճյանը գալիս է այն մտքին, որ սիրը կյանքի վայելքի աղբյուրներից մեկն է. որ ասպետական նվիրումի երեսությունը է կյանքը հարուստ, ուստի և այդ դգացմունքը արժանի է պատակադրման:

Եթե դարավերջին Դեմիրճյանը իր «պատանեկան պոեմների» դրդումներով գրում էր՝ «Ես շեմ հավատում սիրո պատակին», ապա «Գարունի» քնարական ներշնչանքներում ամբողջ էությամբ մղվում է դեպի սիրո պատկը, մեծ սիրո վայելքի արարողությունը:

Դեմիրճյանի «սրտի դրաման»՝ միանձնուհին, քաղաքաբնակ աղջիկն է, մոտավորապես նարդոսյան մտավորական հերոսուհիների հոգեկան պատկերով: Դա ոչ Ավ. հսահակյանի մանիների զառ-վառ, կարմրաթուշ գեղջկուհին է, ոչ էլ մթնշաղային անուրջների դալուկ դիցուհին: Դա յուրօրինակ «իդեալիստ» է, գրքերի մեջ թաղված մի աղջիկ, որին սիրահար-ասպետը կանչում է սիրո արարողության:

Դեմիրճյանի Տաղարանի հիմնական որակը ասպետական նվիրումի կամքն է: Իր սիրո առարկան ամենաբարձր կետն է աշխարհում, միակն ու եղակին՝ «իմ միակ արշալույս, իմ վերջին վերջալույս», «իմ դժվար, իմ երբեք», «իմ վերջին մայսի օր», «իմ կյանքի միակ ժպիտ» և այլն:

Սա է, որ կա՝ թեև անմատելի («իմ անհաս»), բայց միակը. «Լցված եմ քեզանով, ես դու եմ և դու՝ ես»:

Թեև Դեմիրճյանը իր սիրո առարկային որակավորում է «առաքյալ ես, սուրբ ես», «լույս երազ ես» և նման «ոչ զգայական» հատկանիշներով, բայց դա սովորական գրական պերճախոսություն է: «Տաղարանը» դժվար սիրո («իմ գարնան որոնած, իմ աշնան գտնված») նվազներից ավելի լցված է գեղողնիստական-դիոնիսյան վայելքի կանչերով, այս հասկացության «Ժողովրդական» խմբագրությամբ՝ կյանքի ու քեֆի, ուրախության և գինու սահմաններում:

«Գարունից» հետո Դ. Դեմիրճյանը մյուս ժանրերի միջնարարում գրեց և քնարական, և քաղաքացիական շնչի բանաստեղծություններ, հանդես եկավ ժողովրդական առակների մշակումներով և մանկական բանաստեղծություններով (սրանց մեջ են հանրահայտ «Մտերի հարսանիքը» և «Պուլ-պուլկիկը»), կատարեց թարգմանություններ, որոնց մեջ է Պուշկինի «Աքսորյալ գեկաբրիստներին» բանաստեղծության հիանալի թարգմանությունը:

#### 4

Դարավերջին թեև հայտնի բանաստեղծ էր, բայց իրենից անպակաս էին կյանքի հոգսերը՝ հայ գրական աշխատավորի մշտական ուղեկիցները: Դեմիրճյանը մեկ դառնում է Թիֆլիսի բարեգործական ընկերության տեխնիկական քարտուղար (1900), մեկ Բաքվում աշխատանքի է անցնում (1903) Մանթաշշի նավթահանքերում՝ իբրև բանվորական թեյարանի գարիչ, մեկ ապարդյուն բախում է «գրական մեկենասների» դոները, մինչև որ վճռում է գնալ Շվեյցարիա՝ բարձրագույն կրթության: Սկզբում ընդունվում է ժնկի համալսարանի բնագիտական բաժանմունքը, այնուհետև փոխադրվում է մանկավարժականը, միաժամանակ, իբրև «ազատ ունկնդիր», դասախոսություններ է լսում գրականությունից և փիլիսոփայությունից: Նաև ջութակի դասեր է առնում կոնսերվատորիայում:

Կյանքի «շվեյցարական շրջանը» (1905—1909) վճռական դեր է խաղում Դեմիրճյանի և իմացությունների ժողովման, և աշխարհայացքի խորացման մեջ: «Ակադեմիական» պարագմունքներից զատ նա անձնական շփումների է գնում Ռուսաստանից ժնկում ապաստանած քաղաքական էմիգրանտների, ոուս հեղափոխականների, հայ հասարակական մտավորական խմբերի, ուսանողական շրջանակների հետ: Հասարակական-քաղաքական լայն ծրագրերով շնչող նոր միջավայրի ազդակներով առանձնապես տարվում է սոցիալիստական ուսմունքներով՝ հասարակագիտական գրականությամբ: Դեմիրճ-

յանը մասնակցում է նաև ուսանողական այն հավաքույթներին, ուր ելույթներ էին ունենում Վ. Ի. Լենինը և Գ. Վ. Պլեխանովը:

Անհանգիստ, գիտելիքների ծարավ, ամեն ինչով հափշտակվող բնավորություն, դեռ իր կոչումը շպարզած, Դ. Դեմիրճյանը ժնկում շափազանց քիչ ժամեր է նվիրում գրականությանը...

1910-ին գիտելիքների հարուստ բեռով վերադառնում է Թիֆլիս և ստանձնում հայոց լեզվի ուսուցչի պաշտոնը՝ Գայանյան օրիորդաց դպրոցում:

Տասական թվականներին նա վերստին նետվում է գրական ասպարեզ, այս անգամ գերազանցորեն արձակ և թատերագրական երկերով: Բանաստեղծությունն այլևս դառնում է առընթեր գործ, նրան կանչում էին արձակի հեռաստանները և թատերագրության խորությունները, որ տեսնում էր իր տարերքը: Մանավանդ որ անցել էր «կյանքի համալսարաններով» և, ըստ էության, նախապատրաստվել այն ժանրերին, որոնք, ներշնչանքներից բացի, պահանջում էին հոգեբանության թափանցումներ և կյանքի պաշարներ:

Արձակը, իհարկե, Դեմիրճյանի լազ ներշնչանքների մեջ ուներ իր նախապատմությունը. դեռ 1895-ին «Սուրճում» նա տպագրել էր «Եղեալիստը» պատմվածքը, 1905-ին՝ «Աշուցի հեքիաթը» երկու պատումից գրեուկը, 1909-ին «Զութակը և սրինգը»՝ հնդկական ավանդության յուրօրինակ ոճավորումը:

Սրանք, անգամ «Զութակը և սրինգը», որին մեծ տեղ են հատկացրել Դեմիրճյանի գրական ըմբռումները բացատրելիս, դեռևս չունեն արձակի այն որակը, որ կարելի է անվանել յեմիրճյանական որակ:

«Զութակը և սրինգը» արձակաշար բանաստեղծության հետևություններից մեկը՝ խոր և թեթև արվեստների տարբերակումը (առաջինի կրողն է չութակահար Նալը, երկրորդինը՝ սրնգահար Հայանթին), անտարակույս, տեղ է գտել Դեմիրճյանի գրական դավանանքի մեջ, բայց այդ պատումը արևելյան վծի սիրավեապային կառուցվածքով, բավականաշափ հեռու է տանական թվականների պատմվածքների դեմիրճյանական խնդիրներից:

Երբ մի ընդհանուր հայտարարի ենք բերում տասական թվականների պատմվածքների գաղափարական-գեղագիտական շեշտերը, ակներև է դառնում Դ. Դեմիրճյանի դոմինանտ բարոյախոսությունը: Դա «բնական մարդու աղավաղման պատճառների և հետեանքների վերլուծությունն է, որով Դեմիրճյանը յուրովի արձագանքում էր «մարդու հեռանկարի» ժամանակակից տեսություններին՝ իր մեկնաբանություններով»:

Դեմիրճյանի «բնական մարդու» «տեսության» սկիզբը եղավ 1910-ին գրած «Սեփականությունը» պատմվածքը, կատարումով ոչ այնքան ուժեղ, բայց հարցադրումներով՝ հետաքրքրական մի պատում, որի «դրույթները» անցան նրա մյուս պատումներին:

Պատմվածքի «գեպքը» հասարակ մի բան է. շվեյցարական գավառի պավաններից մեկում ժակ Բուրդիկելիեն անունով անձնավորությունը ունի մի այգի, որի մուտքը արգելված է կողմնակի մարդկանց, անգամ՝ երկնաքնակ թռչունների համար: Բայց, խախտելով մեփականության հրահանգը, այգին է խուժում մի հոգնած, շոգից տոշորվող օտարական՝ օգտվելու ոչ թե բարիքներից, այլ ընդամենը... ծառերի ստվերից: Մա է «միջադեպը», որի շարժադրություններով Դեմիրճյանը բացում է իր բարոյախոսության կծիկը «մարդու ապամարդկայնացման» պատճառների մասին: Այս հոգեբանության կրողը ժակ Բուրդիկելիեն է, որը հանգիստ վայելում է սեփականության բարիքները, բնավ

շմտածելով, որ դրանով նա խախտել է գընական օրենքի» սահմանները, բոլոր սարդկանց համար ստեղծված հողի (և կյանքի) հպատակության կանոնը:

«Աչքդ բաց արիր և տեսար այս տունը, այս այգին և ամենքը քեզ ասին, սա քոնն է», — իսորհրդածում է Դեմիրճյանը մասնավոր սեփականության էության մասին, այս կետում էլ բռնելով իր հերոսի հանցանքը:

Դեմիրճյանը «Հանգավոր մարդուն» կանչում է «աչեղ պատաստանի» պատժին՝ մահվան, որն, իհարկե, խնդրի բարոյական լուծումն էր և ոչ պատմական-սոցիալականը: «Հերթով ու ժամանակով» ամեն բան ընկում է իր տեղը, բոլոր մարդիկ կանգնում են մահվան իրականության առաջ: Սա, անտարակույս, «աշխարհի ունայնության» և «կյանքի անցողիկության» ուսմոնքների արձագանքն էր Դեմիրճյանի ստեղծագործության մեջ և այստեղ չէ Դեմիրճյանի պատումի արծեքը, մանավանդ որ ինչ-ինչ սահմաններում հեղինակը ժակ Բուրդիկինի կործանումը բացատրում է քրիստոնեական-ավետարանական ճակատագրականության շեշտերով: Ավելի էական է պատմվածքի այն շեշտը, որով «Հերոսը» տարբերակում է երկու վերաբերմունք՝ իր «ես»-ի վերաբերմունքը ուրիշների հանդիպ և իր «ես»-ի վերաբերմունքը իր հանդեպ: Նրա էության մեջ խոսում է անհատապաշտը, նա այն մտքին է, որ իր այգին մտած օտարականը «ավելորդ է», որ կյանքի վայելքը սահմանված է միայն իր համար և ոչ թե ուրիշների: Խուսոյական «բնական մարդու» տեսությամբ խմբագրված այս բարոյախոսությունը, անշուշտ, ուներ հումանիստական նախադրյալներ, որով և Դեմիրճյանը իր մյուս պատումներում ավելի ցայտուն գծերով զարգացրեց «Հավասարության» իր բարոյախոսական դոմինանտը:

«Սեփականություն» պատմվածքի էթիկական ստրուկտուրան այլ միջավայրի (հայկական) և այլ իրադրության (պատերազմի) նյութի վրա անցնում է նաև մյուս պատումներին, առաջին հերթին Դեմիրճյանի ամենահայտնի պատմվածքին՝ «Ավելորդին» (1917):

Ինքնակենսագրական նոթերում Դեմիրճյանը խոստովանում է, որ այդ տարիներին «մարդու էության» խնդրին ինքը մոտեցել է ոչ թե երկությների սոցիալական պատճառականության, կյանքի նյութի և հոգեբանության կապի տեսանկյունից, այլ ընդհանուր-վերացական բարոյագիտության շափանիշներով: Մոտեցումների նման ուղղության մեջ դժվար չէր նկատել էմիլ Զոլյայի ժառանգական-կենսաբանական շափանիշի, անհատների բարոյական ինքնարնության տղղտոյական ուսմունքի, «սիրիր մերձավորիդ» ավետարանական պատվիրանի խաշածել նստվածքները:

«Ավելորդը» պատմվածքի մեջ գոյակցում են վերոհիշյալ երեք շեշտերը:

Հաջի աղան վաճառական է, մեծ կայքի ու հարստության տեր: Սա էլ նրան ներշնչում է այն միտքը, որ ինքը բացառիկ էակ է, որին տրված է աստծո սահմանած կյանքի իրավունքը: Ոչ միայն խումապի առաջ կանգնած համարակարգիները (քաղաքին են մոտեցել թշնամու զորքերը), այլև յուրայինները, սկսած անդամալույժ, անօգնական քրոջից, մտահոգված են լոկ Հաջի աղայի փրկության խնդրով, որովհետեւ նա է աստծո բնտրյալը այս աշխարհում, նրան է տրված աւպրելու վերին իրավունքը: Նա նյութապաշտ է, անհատապաշտ, բնշաբաղց, — բացատրում է Դեմիրճյանը, — ոչ թե սոցիալական միջավայրի գծերը խտացնելու, այլ կենսաբանական ժառանգական հատկանիշների պատճառով:

Սա պատմվածքի զոլյայական շեշտն է՝ նեոդարվինիզմի խառնուրդով:

Հաջի աղան, ճակատագրական մի իրադրության մեջ, պետք է ձեռք մեկնի յուրայիններին, փրկության ձեռք: Դրա կարիքը ամենից շատ զգում է անդամալույժ քույրը, մի բարի, հրեշտակի նման արարած: Հաջի աղան, սակայն, մերժում է օգնությունը, քրոջն իբրև ավելորդի թողնում բախտի քմահանուքին, դրանով իսկ ոտնակոխ տալիս «սիրի մերձավորից» քրիստոնեական պատվիրանը: Նա դեմ է գնում աստծո օրենքներին, ուստի և կանզնում է դատաստանի առաջ: Հաջի աղան դատապարտյալ է, պարտավոր է կրել եթե ոչ ուրիշների, ապա իր սեփական անձի դատաստանը, որն արտահայտվում է Հոգեկան շարշարանքների ձեռվ:

Այս էլ պատմվածքի բարոյախրատական շերտն է:

Հաջի աղայի էության մեջ հանցանքից հետո սկսում է խոսել «խոճի ձայնը», նա փնտրում է մեղքերի քավություն, «բարոյական մաքրման» ուղիներ:

Սա էլ, ըստ էության, ինքնաքննության շերտն է:

Չնայած Դեմիրճյանի գեղարվեստական դիրքերի մեջ թափանցած տարասեռ նստվածքներին, նրա պատմվածքում «տարերայնորեն և ենթագիտակցորեն» (սա իր բնորոշումն է) տեղ են գտել նաև հասարակական միջավայրի այն օրենքները, որոնք մարդուն հանում են իր բնական էությունից և դատապարտում բարոյական կատարյալ խեղաթյուրման: Սկսելով բարոյական քըննությունից, Դեմիրճյանն ի վերջո գալիս է երեւութների գնահատման սոցիալական ելակետները, հոգու և նյութի հարաբերությունը, ակամա հանգում է այն մտքին, որ աշխարհում իրերն են ղեկավարում մարդկանց արարքները, որ Հաջի աղան «նյութի» լիցքերով հասավ իր անմարդկային վարքագծին:

Ոչ միայն Հաջի աղան, այլև յյուս արձակ պատումների հերոսները՝ գյուղական քահանան, որը ցնությամբ է ընդունում յյուս ծխի քահանայի մահը՝ իր եկամուտների ավելացման հեռանկարով («Տերտերը»), աշխարհը իր պատյանի մեջ ամփոփած ծայրահեղ ժլատ խանութպանը՝ համանուն պատմվածքից և մյուսները Դեմիրճյանի բարոյական քննությունների լույսի տակ երևում են իբրև խեղաթյուրված ուրվականներ:

Ճիշտ է, Դեմիրճյանը ինչպես պատմվածքներում (այստեղ ավելացնենք նաև «Ստամոքսը»), այնպես էլ դրամաներում («Դատաստան», «Հովինան Մեծատում») մարդկանց արարքները գնահատելիս գործի է զնում զոլյալական կենսաբանական-ժառանգական դոմինանտը, այդուամենայնիվ, «տարերայնորեն» (իր խոսքն է) գալիս է այն մտքին, որ հոգեախտաբանական երևութները հետեւանք են նյութապաշտական բնագդների: Այս առումով Դեմիրճյանի ստեղծագործության մեջ շատ էական դրվագ է «Դատաստան» (1916) դրաման՝ այդ ժանրի իր լավագույն գործը: Դեպքերը տեղի են ունենում Հին Ճուղա քաղաքում, պատմական հեռավորության վրա: Բայց «Դատաստանը» ամենենին էլ պատմական պիես չէ, ինչպես պատմուկան պիես չէր լուս Շանթի «Հին աստվածները», որի մեջ կիրառված թատերագրական սկզբունքները միանգամյն հարազատ էին Դեմիրճյանին:

«Դատաստան» պիեսում Դեմիրճյանին զբաղեցնում է տվյալ երևույթի հոգեբանական-բարոյական քննությունը: Հին Ճուղա քաղաքի դատավոր Թովմասը, խստաբարո և խստակենցաղ մի երիտասարդ, այն մտքին է, որ մարդն առհասարակ իրեն պետք է հեռու պահի աշխարհիկ վայելքներից, այլապես կհամարվի մեղսագործ՝ աստծո սահմանած կարգ ու սարքի դեմ:

Թովմասը քրիստոնեական դոգմաների երդվյալ պաշտպանն է, ախոյան ամեն մի, թեկուզ և չնշին, շեղման: Իր տեսությունը նա գործադրում է նաև իրականության մեջ, ամենարիրոտ հալածանքը մկսելով նկարիչ նաղաշի դեմ, որը քաղաքում հայտնի էր կյանքի վայելքները փառաբանող կտավներով և գեղեցիկի պաշտամունքով:

Թովմասի հալածանքը սաստկանում է, երբ նրան են հասնում նկարչի և գեղեցկուհի Թանգիկի սիրո լուրերը: Այդ սերը նա համարում է աստծո կարգի, դեմ ուղղված հանցանք և բարքերի այլասերում:

Քաղաքի պատիվը փրկելու համար նա որոշում է Թանգիկին պահել իր տան մեջ: Նկարիչը հրապարակով քարկոծվում է և ամբաստանվում, իսկ Թանգիկը տեղափոխվում է Թովմասի հարկի տակ:

Դիմելով այդ քայլին, Թովմասն ուզում է իր համաքաղաքացիներին ապացուցել, որ մարդ կարող է դիմանալ գեղեցկության դյութանքին և կարող է հեռու մնալ աշխարհիկ վայելքներից:

Բայց կատարվում է անսպասելին, ճակատագրականը. Թովմասի էության մեջ գլուխ է բարձրացնում զգացմունքը, նա գլխովին հափշտակվում է Թանգիկով, բայց հանուն քաղաքի «պատվի» թաքցնում է իր «մեղքը»:

Բայց քաղաքի սրբակենցաղ բնակիչները տեղյակ են ամեն ինչին և պահանջում են խոստովանել «մեղքը», ինչպես և հատուցել անարդար դատապարտված նկարիչ նաղաշի համար:

Թովմասը հրաժարվում է խոստովանությունից:

Այն ժամանակ, երբ ցանկանում է վկայության կանչել Թանգիկին, նրան է հասնում Թանգիկի ինքնասպանության՝ կախաղանի, լուրը:

Այստեղ Թովմասը խոստովանում է իր սերը («մեղքը») և ամբոխի թելադրությամբ գնում մահապատժի:

«Դատաստան» դրամայում Դեմիրճյանի գեղագիտական իդեալը մարդու հոգեկան կատարյալ ազատության իդեալն է, որի մեջ ակնհայտ է ընդվզումը մարդկային մղումները սահմանափակող հասարակական միջավայրի դեմ:

Մի հայտարարի բերելով Դ. Դեմիրճյանի ասաւական թվականների պատմվածքների ու դրամաների գաղափարական հետևությունները, դժվար չէ նկատել դրանց միջով անցնող «մարդու բացասաման» բանածերը: Այդ բանածեի տակ են դրված ոչ միայն բացահայտ անհատապաշտները, ինչպես Հաջի աղան կամ իր անձի փրկության համար բոլոր յուրաքիններին սրի քաշած Հովնանը («Հովնան Մեծատուն» դրամայից), այլև դոգմաների դեմ ծառացողները, ինչպես դատավոր Թովմասը, այլև ժլատներն ու ագահները, ինչպես խանութպանն ու տերտերը, այլև հասարակ մարդը, ինչպիսին է «Ստամոքս» պատմվածքի հյուսնը:

Բանն այն է, որ Դեմիրճյանը ժխտում էր մարդու կենսաբանական ձևը: Ճիշտ է, ինչ-որ սահմաններում Դեմիրճյանը դիմում էր նաև կյանքի սոցիալ-պատմական շերտերին,—ինչպիսիք էին պատերազմը, իրային հարաբերությունները և այլն, սակայն դրանք սուսկ շարժառիթներ էին (ոչ հիմնական գործոններ) մարդու կենսաբանական կառուցվածքը հարցականի տակ առնելու տեսության համար:

Մարդը, Դ. Դեմիրճյանի հայեցությամբ, դուրս գալով աստծո սահմանած բնական վիճակից, դաւնում է «մեղափոր», «հանցակիր», ուստի և կորցնում է գոյության հեռանկարը: Փրկության համար Դեմիրճյանն առաջարկում է փարել «աստծո» սահմանած բնական կարգին, մաքրագործել աստծո լույսով:

Արդեն նախահեղափոխական տարիներին ձևակերպվեց գեղագետի դեմիրճյանական որակը: Ե՛վ իր պոեմներում, և պատմվածքներում, և դրամաներում նա երևաց ոչ թե իբրև «արտաքին դեպքերի», եղելությունների ու ֆաբուլաների շարադրող, այլ կյանքի նյութի փիլիսոփայական ոիթմն ու խորքը հայտաբերող գեղագետ:

Դեմիրճյանի գրվածքները ըստ էության վերլուծություններ են, հետազոտություններ, հարցադրումներ իր պատասխաններով, «առեղծվածներ» ու «կնճիռներ»՝ իր լուծումներով, հոգեբանական կծիկներ՝ իր թափանցումներով:

Գեղարվեստական մտածողության վերլուծական ուղղությունը, երևությունների կապ ու կապակցությունների հետաղոտական տարերքը, հավատարիմ իր գրական խառնվածքին, Դեմիրճյանը գործի դրեց նաև 20—30-ական թվականների ստեղծագործության մեջ:

Այդ տարիների գրական դասակարգումով Դեմիրճյանը «ուղեկից» գրողների մեջ էր, այն գրողների, որոնք եկել էին նախահեղափոխական շրջանի դեմոկրատ-մտավորականների շարքերից: Դեմ առ դեմ կանգնելով պատմական նոր իրականության հարոցած գեղարվեստական խնդիրների առաջ, Դեմիրճյանը, իր իսկ խոստովանությամբ, կարիք ուներ ստեղծագործական դիրքերի: Վերանայման, ծրագրերի կարգավորման, նոր ժամանակի էության ճանաշման:

Վերին աստիճանի անհանգիստ, կյանքի հարցերով այրվող անհատականություն, 20—30-ական թվականներին Դեմիրճյանն անխափան գործում էր իրեն պատմվածքագիր, ակնարկագիր, վիպագիր, թատերագիր, Փելիստոնիստ, հրապարակախոս, քննադատ, արվեստաբան, դառնալով գեղարվեստական շարժման կենտրոնական դեմքերից մեկը:

Կարելի է ասել, որ Դեմիրճյանը այդ թվականներին ոչ թե ժամանակի հետ էր, այլ ժամանակի բուն խառնարանում, այնքան ուշադիր էր նա իրականության նոր փաստերի, մարդկանց հոգեբանական «բեկումների» հանդեպ:

Եթե տասական թվականների ստեղծագործության մեջ Դեմիրճյանը «մարդու լուսաբանության» իր գլխավոր խնդրին դիմում էր առավելապես բարոյախոսական տեսակետով, ապա քսանական թվականներից սկսած նա շոշափելիորեն լայնացնում է իր գրվածքների սոցիալական-պատմական տեսադաշտը, մարդկային հարաբերությունները մեկնարանում է առավելապես սոցիալական գործակիցներով:

Այս լուսի տակ առավել գրական հետաքրքրություն են ներկայացնում Դեմիրճյանի այն պատմվածքները, որոնք տպագրվելով ժամանակի պարբերականներում, 1929 թ. կազմեցին «Նրանց ժպիտը» ժողովածուն:

Նորագույն գրականության համար վճռական նշանակություն ունեցող պատումների շարք էր «Նրանց ժպիտը», առավելապես մարդու նկատմամբ մշակած նոր վերաբերմունքի, մարդու նոր կոնցեպցիայի առումով: Եթե մինչև հեղափոխությունը գրած պատմվածքներում Դեմիրճյանը մարդուն նայում էր իրեն խեղաթյուրված ուրուների, կյանքի բնական շրջագերից դուրս ընկած անհատապաշտի՝ հոգեախտաբանական գծերով, ապա «Սաթոն», «Կայարանի Ակոբը», «Մերկեն», «Հանգստյան տանը» և հարակից պատումներում նա այլևս մի կողմ է զնում վաղեմի հարցականները և մարդու էության մեջ հայտնա-

գործում է մարդկայնության այն երակը, որը ասպարեզ կոչեց հեղափոխությունը:

«Նրանց ժամանակի պատումներից յուրաքանչյուրը մի ճակատագրի պատմություն է: Գրական տիպաբանությամբ դրանք այն հերոսներն են, որոնց մի բառով անվանում են նակատագրով դատապարտվածներ, «ավելորդներ»:

Նախապաշարմունքների ճնշման տակ խեղճացած, անազատությունը գոյության միակ արդար ձևը համարած հերոսները՝ կյայարանի Ակորը, ծերունի Մերկն, բանվոր Սարգիսը և մյուսները, անմոռնչ տարել են ճակատագրի լուծը, բնավ շմտահոգվելով իրենց կյանքի հնարավոր փոփոխությունների մասին:

Բնական կյանքի շափիղներից գուրս մնացած այդ հերոսների հանդեպ կիրառելով հավասարության իր վաղեմի դոմինանտը, Դեմիրճյանը կատարեց աշխարհայացքային վճռական շրջադարձ՝ «կենսաբանական մարդուց» դեպի պատմական մարդու տեսանկյունը:

Հաշիվները մաքրելով անհատապաշտության խոցը կրող հերոսների հետ, նա դիմեց այն մարդկանց կերպարներին, ովքեր իրենց ուսերի վրա են պահում կեցության ծանրությունը, որոնց արվում է իրականությունը արարողի՝ դեմիրգի, նշանաբանը:

Դեմիրճյանի պատումներում կան և սյուժետային պատմություններ, և բնավորություններ, և բախման ոլորտներ, բայց ավելի էական է նոր հերոսների հանդեպ մշակած վերաբերմունքը՝ խոնարհ, գորովալից, հավատով լի վերաբերմունք:

Խնդիրը միայն այն էր, որ բոլոր «ավելորդները» հեղափոխության շընչով ապրում են իրենց կյանքի երկրորդ ծնունդը՝ իրավական առումով, առաջինը՝ փաստականորեն:

Սա իր հերթին:

Պակաս էական չէ նրանց հոգենոր վերածնության-զարթոնքի, շարժառիթների իմաստավորման դեմիրճյանական կերպը:

Հերոսների հոգեկան վերլուծության մեջ առաջին տեղը տրվում է արդար աշխատանքի զգացողությանը, որով «աննշան մարդիկ»՝ կյանքի բուռն եռուզերին անհաղորդ մի կայարանի Ակոր, խեղճ ու կրակ մի ծերունի Մերկն, հյուրանոցի ծառայող մի նախկին բանակային Սոկրատ, հանգստյան տանը անգամ անհանգիստ մի բանվոր Սարգիս, գյուղից քաղաք եկած մի գեղջկուհի Սաթո. դառնում են պարօսի հերոսներ:

Ինչպիսի ներշնչանքով և անսքող հրճվանքով են խոսում նրանք կյանքի վերադարձի, իրենց ամենաշարքային, համեստ գործի մասին, ինչպես ին գուրգուրում աշխատանքի գաղափարը:

«Նրանց ուժին» պատմվածքը Դեմիրճյանն անվանել է «Էտյուտ իրականությունից»: Այդպիսի էտյուդներ, պատկերներ, ուրվագծեր են «Կյանքի ժամկետը» շարքի մյուս բոլոր պատումները, ուր Դեմիրճյանը գծագրում է ոչ թե պատմության գլխավոր դեմքերի հոգեբանական բարդ դիմապատկերները, այլ սոցիալական բնագիտների աղղեցությամբ աննշան մարդկանց ներքնաշխարհի բեկումները, մասնավորապես մարդկային արժանապատվության արթնացման ընթացքը:

Այս առումով բնորոշ է հատկապես «Սաթոն» պատմվածքը:

Գյուղից գալով քաղաք, Սաթոն ծառայության է մանում տեխնիկ Սըմբառատյանի ընտանիքում: Տնային աղախնի պարտականությունները նա կատա-

րում է այնպիսի ոգևորությամբ, ասես դույլերով զուր բերելը և լվացք անելը մեծ բավականություն են պատճառում Սաթոյին: Դա, իհարկե, այդպես էլ է պյուղական միջավայրում մեծացած, առողջ կազմվածքի տեր, աշխատասեր աղջկա համար: Աշխատանքը նրա տարերքն է, ինչպես որ պետք է լինի ամեն մի կարգին մարդու բնավորության գլխավոր հատկանիշը: Թեև Սմբատյանի քաղքենիական ընտանիքում Սաթոյի վրա նայում են սոսկ իբրև կենսաբանական արարածի, սակայն Սաթոն ինքը գիտակցում է իր մարդկային արժեքը: Թեկուց և այն բանով, որ ուրիշի տանն անգամ, արհամարհանքի ու նվաստացման պայմաններում իսկ, նա հավատարիմ է մնում գեղջկական մաքուր հոգուն, աշխատավորի իր էությանը:

Դա էլ դառնում է այն հիմքը, որը նախապատրաստում է Սաթոյի հոգեկան վերածնությունը:

Սաթոն աստիճանաբար հասնում է մարդկային արժանապատվության գիտակցմանը: Կարծես այնքան էլ շատ բան չի փոխվել նրա կյանքում. հաճախում է կինո և լիկեայտն, գնում է ծողովների, սակայն այս «աննշան դեպքերն» էլ բավական են, որ նա կապվի նոր կյանքին և իրեն զգա իբրև հասարակության լիարժեք անդամ:

«Սարոն դառակ դեմք, ֆիզուրա, որակ», — այս խոսքերով է բնութագրում Դեմիրճյանը իր պատմվածքի թեման:

«Մարդ զգալու դժվարին ընթացքի լուսաբանությունը Դեմիրճյանը շարումակում է նաև 20—30-ական թվականների ուրիշ գրվածքներում:

Եթե «Նրանց ծպիտը» շարքի պատումները մի մարդու զգացմունքների ու մտորումների պատկերներ են, ապա 20—30-ական թվականներին գրած ընդարձակ կտավներում՝ վիպակներում, վեպերում, դրամաներում Դ. Դեմիրճյանը դիմում է ավելի լայն, ավելի զանգվածային նյութի՝ ներկայացնելու ժամանակի պատմական բովանդակությունը:

Թեև այդ տարիների իր տեսական հրահանգներում Դեմիրճյանը առավելապես հակված էր դեպի մոնումենտալ-բարձրաբանդակային պատկերագրությունը, սակայն գործնականում նա դիմում էր առավելապես կենցաղի միջոցով ժամանակի պատմական բովանդակությունը արտահայտող գեղագիտությանը:

Այդ գեղագիտության արտահայտություններն էին, նախ և առաջ, Հայաստանի աղբեջանական գյուղերի անցուղարձի մասին պատմող «Ծաշիդ» (1929) և «Նիգյար» (1932) վիպակները:

Թե մեզը և թե մյուսը Դ. Դեմիրճյանի ստեղծագործության մեջ ունեն նյութի նախնական մշակման արժեք: Ոչ ավելին: Անտարակույս, երկու վիպակներում էլ կան գեղարվեստական առանձին էջեր, «Ծաշիդում»՝ Հասան բեկի հոգեկան պարտության պատկերները և առհասարակ նրա շրջապատի կույր ատելությունը մարմնացնող դրվագները, «Նիգյարում»՝ Ասադի հոգին կրծող խանդր առ կինը՝ Նիգյարը և աղբեջանական կոլորիտի մասունքները:

Լինելով 20—30-ական թվականների աղբեջանական միջավայրի վավերագրություններ, «Ծաշիդը» և «Նիգյարը» շափած-ձևված էին իբրև հին և նոր աշխարհների՝ կուլակների և բարորակների («Ծաշիդ»), շադրայի հնագանդությունից ազատագրված կնոջ և նահապետականության բարոյական նորմերին գամված տղամարդու («Նիգյար») բախումների սիդելոգիական պրոեկցիաներ»:

Այն դեպքերում, երբ Դեմիրճյանը դիմում է ուղղակիորեն կյանքի (կենցաղի) նյութին, նրա պատկերները շնչում են ռեալիստական արժանահավատությամբ (սա էր գնահատում նաև Ե. Չարենցը): Խսկ այն դեպքերում, երբ Դեմիրճյանը այդ նյութը տեղադրում է գաղափարական սխեմաների մեջ, նրա պատկերները զրկվում են կենդանի թրթիռներից և դառնում թեզերի իլյուստրացիաներ:

Դեմիրճյանի ստեղծագործության այս թուլությունն էր քննադատում Սո. Զորյանը «Գրողը, քննադատը և հարակից հարցեր» հայտնի հոդվածում:

Կյանքի նյութի սխեմատիզացիան Դեմիրճյանը արդարացնում էր «դիստանցիայի տեսությամբ»՝ կյանքի արագությունից շուշանալու պատճառաբանությամբ:

Առհասարակ պետք է նկատել, որ շափազանց ակտիվ դիրքեր գրավելով նոր իրականության առաջադրած խնդիրների հանդեպ, Դեմիրճյանը երբեմն այդ խնդիրների գեղարվեստական լուծումները տանում էր բացառապես թեզիսների արծարծման ուղղությում:

Այլ խոսքով՝ սանդում էր յուրօրինակ «Էսավերիմենտալ արձակ», գրական սյուժեների միջոցով պատասխան տալու մի շարք հասարակագիտական-բարոյախոսական խնդիրների:

Էքսպերիմենտալ ուղղություն ունեն մասնավորապես «Երեքը» և «Ցաված սեր» ընդարձակ պատմվածքները: Դրանց մեջ Դեմիրճյանը քննում է «սիրո առեղծվածը» հետևյալ սխեմաներով՝ ի՞նչ վերաբերմունք պետք է ցույց տալ այն անձնավորությանը, որը ուժեղ զգացմունքներ է տածում իր մտերիմ ընկերոջ կնոջ հանդեպ (սահմանապահ Սյոմայի սերը Մաքսիմի կնոշ՝ Մարուսյայի հանդեպ), ինչպես է տվյալ անձնավորությունը (շինարար-բանվոր Ռուբենը) գնահատում չփրած կնոշ անձնավորումը (Սոֆյա Պետրովնան շերմագին խնամում է Ռուբենի լրված երեխաններին):

Թեև Դեմիրճյանը այս հարցերին պատասխանելիս միանգամայն հեռու է կյանքը քանոնի տակ դնելուց, թեև նա հակված է դեպի մարդկային զգացմունքների արտահայտման անկաշկանդ կերպերը, պաշտպանում է մարդու բնական իրավունքը, այդ հանգամանքներում իսկ դեմիրճյանական պատումները շունեն դրույթունների և բնավորությունների հոգեբանական խորություն և ուելիստական հավաստիություն:

Նույն թերություններով ընդգծվեցին նաև 30-ական թվականների դրամաները՝ «Ֆուֆորային շողը» և «Կապուտանը», որոնք, Դ. Դեմիրճյանի թատերագրության մեկնարանի տպավորությամբ<sup>10</sup> հենված են բացառապես արտաքին գործողությունների վրա, ուստի և կոնֆլիկտներն ու կերպարները տառապում են ակնհայտ սխեմատիզմով:

Լինելով երազակայաց-ապագայակայաց գրական խառնվածք, Դ. Դեմիրճյանը, բնականաբար, չէր կարող շրջանցել այնպիսի պատմական երես, վույթ, ինչպիսին ազգային կյանքի «ուրբանիզացման» ընթացքն էր:

Այդ երեսույթը տեղ գտավ «Նոր մոնումենտալ» (1931—32) վեպում և բովանդակությամբ նրան ազգակից «Քաղաքը» վեպի անավարտ կամ սեագիր հատվածներում, հեղինակային նշագրություններում և տարբերակներում:

Քսանական թվականների վերջում և 30-ականների սկզբին քաղաքաշինությունը, մասնավորապես Երևան մայրաքաղաքի կառուցումը ժամանակի ամենահրատապ, կենտրոնական խնդիրն էր, որը իր շուրջն էր համախմբել

Հայ մտավորականության և ժողովրդական լայն զանգվածների համակ եռանդը ու ոգևորությունը:

Մայրաքաղաքի կառուցման նյութով Դեմիրճյանը շարադրեց իր վիպական կտավները:

Այդ նյութը, բնականաբար, պետք է «շաշափիվեր» ժամանակի համար շատ բնորոշ երևութիւն հին մտավորականության, այսպես ասած՝ «սպեցների» վերակառուցման, իհարկե նաև ճարտարապետության տարրեր հոսանքների միջև ընթացող վեճերի վերաբարձման միջոցով:

Դատելով գլխավոր հերոսի՝ ճարտարապետ Մելիքյանի բնութագրման որոշակի տվյալներից, ի դեմս նրա կերպարի, Դեմիրճյանը նկատի է ոմեցել Ալ. Թամանյանի անձնավորությունը և կենսագրության որոշակի փուլը: «Նոր մոնումենտալի»՝ սոցիալիստական մեծ կառուցման գաղափարների կրողը՝ ճարտարապետ Մելիքյանը, ինչպես եղել է նախատիպարի հետ, ենթարկվում է ամենակողմանի մշակման՝ իբրև թե անցյալի ճարտարապետական ձևերի միջոցով անցյալ դարաշրջանների հոգեբանությունը վերադարձնելու համար: Ճարտարապետին գրոհում են, առաջին հերթին, ձախ Պրոլետկուլտական հովերով տարված ճարտարապետները, որոնք իրենց «կոնստրուկցիաները» համարում են ճարտարապետության «պրոլետարական ոճի» առարկայական արտահայտություններ:

Տեխնոկրատ—կոնստրուկտիվիստների հետ են նաև ճարտարապետի նախկին ուսանողները, որոնք իրենց հակադասական հայացքներով խոր ցավ են պատճառում ուսուցչին:

Ապա գալիս են լայն հասարակայնության ներկայացուցիչները՝ ի դեմս լրագրողների ու տեսաբանների: Եվ, վերջապես, ճարտարապետ Մելիքյանի դեմ են «նախկին սպեցները», այսպես կոչված բուրժուական ինժեներիան, որը դավանում է «կանխիկ օգուստի» սպառողական փիլիսոփայությունը:

Մելիքյանի ծրագրած «նոր մոնումենտալի» պարտությունը, ըստ էության, ճարտարապետի հոգեկան աշխարհում ծայր առած մեծ ողբերգության գլխավոր շարժառիթն էր, այն ողբերգության, որը եղել էր Դեմիրճյանի մտահղացման առանցքը:

«Նոր մոնումենտալին», ինչպես և նրա մյուս տարրերակին՝ «Քաղաքը վեպ-ուսուպիային Դեմիրճյանը, դատելով արխիվային հարուստ նյութերից, առանձին նշանակություն էր տալիս իր գրական կենսագրության մեջ:

Բայց այդպես էլ վեպի թե մեկ և թե մյուս աշխարհակները շդարձան գեղարվեստական նշանակալից փաստեր, մնացին «գրական երազանքների» մեջ:

## 6

Հասարակական կյանքի հանդեպ ոմեցած շափազանց սուր և արթուն վերաբերմունքը պայմանավորեց նաև Դ. Դեմիրճյանի էության «բացասող տարրերի»՝ երգիծական հնարագիտության զարգացումը:

Չսանական թվականների պարբերականները լեփ-լեցուն էին Դեմիրճյանի «երգիծական մանրուգով»՝ ֆելիետոններով, երգիծական դիալոգներով, հումորեսկներով, որոնք կեռ Կամսարի նույն ժանրատեսակներից հետո ընթերցողների շրջանում ունեին ամենաբարձր պահանջարկը:

Դ. Դեմիրճյանի ֆելիետոններից առավել նշանակալից են նրանք, որոնց ծաղրի առարկան միջազգային քաղաքական կյանքի երևությներն են՝ դիվա-

Նագիտական խաբեությունները, իմպերիալիստական տերությունների ազրեսիայի ծրագրերը, երկրորդ Խնտերնացիոնալի լիդերների օպորտոնիստական վարքագիծը և այլն:

Դ. Դեմիրճյանի քաղաքական ֆելիետոնները՝ «Պունակարեի պատերազմը և զարաքիլիսեցի բիձան», «Ազգերի լիգան գայլերի լիգա է», «Յոթ անգամ շափիր, մի անգամ կտրիր» և այլն, իրենց դրվածքների սրությամբ և հիմնավորվածությամբ հարում են Մ. Նալբանդյանի հրապարակախոսական պամֆլետներին:

Դ. Դեմիրճյանը իր ֆելիետոնների մյուս խմբի մեջ անդրադառել է «Ներքին կյանքի» խնդիրներին, կենցաղային հասարակ մանրութներից մինչև սովետական բյուրոկրատիան, որի անողոք քննադատներից էր լեռ Կամսարի հետ միասին:

Ֆելիետոններից բացի Դեմիրճյանը իր «Երգիծական գիտելիքները» տեղադրել է նաև գրական այլ տեսակներում:

Արձակում՝ երգիծական պատմվածքներն են, որոնց մեջ առանձնանում է «Համառոտ անմահներ կամ համահնական մահկանացուներ» պամֆլետը:

Դեմիրճյանի աշխարհայացքային կոռորդինատների մեջ, ազգային կյանքի առողջացման ծրագրերի տրամաբանությամբ, միշտ էլ էական տեղ է ունեցել ընշաքաղցության, փողատենչության, անձնապաշտության, իշխանամոլության դատապարտումը:

Հասարակական ամենավտանգավոր խոցը համարելով այդ երևույթները, դեռ 1919-ին գրած «Ազգային խայտառակություն» կատակերգության մեջ ծաղրի սուր ծայրն ուղղում է ազգի հակատագիրը տնօրինելու կոշված այն բախտահնդիրների դեմ, որոնք ազգային ողբերգությունն անգամ դիտում են իրոք հարստանալու աղբյուր:

Ընշաքաղցության դատապարտման գիծը Դ. Դեմիրճյանը շարունակում է նաև «Համառոտ անմահների» մեջ, այս անգամ նյութ ունենալով Արարատյան հանրապետության այն գործիչների վարքագիծը, որոնց վրա դրված է «ազգային նոգսերի» իրականացումը:

Անողոք երգիծանքով Դեմիրճյանը ջրի երես է հանում նորագույն «ազգային զոշերի» ծրագրերի քաղենիական բովանդակությունը, որը հանգում է բացառապես հաշվի և դիրքի, փողի և իշխանության պաշտամունքին: Ի տարբերություն ծիծաղելի երևույթների մակերեսային մեկնաբանությունների, Դ. Դեմիրճյանը խորապես հասկանում էր դրանց հասարակական վտանգավորությունը, որակելով դա ոչ այլ կերպ, քան «ազգային խայտառակուրյուն»:

«Ազգային խայտառակուրյան» մեկնակետն է նաև 1934-ին Դ. Դեմիրճյանի գրած «Խապունին Կորկուտյան» կատակերգության ներքին ուղղությունը: Թեև ժամանակի գրական-թատերական քննադատությունը սվիններով զիմավորեց այդ պիեսի հայտնությունը Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեմում՝ «իրականությունը խեղաթյուրելու», հասարակական արատները խտացնելու մեղադրանքներով, իրականում Դեմիրճյանը խորաթափանց այն գրողն էր, որ դեռ սաղմնավորման տարիներին կուահեց այնպիսի երևույթի խորացման նախադրյաները, ինչպես ժամանակակից քաղենիությունը՝ սպառողական հոգեբանության յուրօրինակ «փիլիսոփայությամբ»:

Կատակերգության նյութը սովորաբար մեկի «ղեկավար անձանց»՝ դիրեկտորի, հաշվապահի և մյուսների շահատակություններն են, հանրային ունեցվածքի հափշտակությունները:

Սովխոզի մարդիկ թալանում են հանրային բարիքը՝ «գաղափարական հիմնավորումներով», և սոցիալիզմին նվիրվածության ցույցերով։ Նրանք փառաբանում են սոցիալիզմը, որը հնարավորություններ է բացել մարդու կենսաբանական կարիքները բավարարելու համար։ Նրանք հորինել են «ուտելու», «ուտելով դեպի սոցիալիզմ» ընթանալու մի ամբողջ փիլիսոփայական համակարգ և այդ «փիլիսոփայությամբ» էլ արդարացնում են իրենց գործելակերպը... Նրանց հետ է նաև վերաբննիշ կոչված, իրականում շրջանային մթերման լիազոր նապոլեոն Կորկոտյանը, որի հայտնվելը սովխոզում սկզբում առաջ է բերում կատարյալ իրարանցում, իսկ այնուհետև տեղի է ունենում ուժերի համագործակցություն-դաշինք։

Դեմիրճյանը ի դեմու «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգության, արդարն, փորձել էր ստեղծել «Խորհրդային Ռեկորդ», պիեսի կառուցման համար դիմելով նախատիպարի կատակերգական միջացներին (և դրության, և խոսքի): Դեմիրճյանը այդ պիեսում ասպարեղ հանեց վերին աստիճանի կենդանի դիալոգ՝ կերպարների երգիծական բնութագրումներ, որոնցով հասարակական ծանակման սլաքը ուղղում էր ազգային կյանքի առողջընթացին վնասակար, հիվանդագին երևույթների դեմ։ Դեմիրճյանի հայտնագործած «խորթ մարդկանց» կերպարները եղան տարիներ անց հայ թատերագրության մեջ հայտնըված Բալաբեկի և նման պիրսոնածների նախօրինակները։

«Նապոլեոն Կորկոտյանը» մյուս նշանավոր կատակերգության՝ «Քաջ նազարի» հետ վկայեց Դեմիրճյանի քաղաքացիական ուժեղ խառնվածքը և երգիծական նշանառության որությունը։

1923թ. «Նորք» հանդեսում տպագրվեց Դեմիրճյանի երկրորդ կատակերգությունը՝ «Քաջ նազար» «արևելյան հեքիաթը»։ «Ինքնակենսագրության» մեջ (1948-ին գրած) կատակերգությունը գրելու շարժառիթների մասին Դեմիրճյանը պատմում է. «Մուսկվայից Թիֆլս էին եկել մի խումբ երիտասարդ ուսանողներ, որոնք վախթանգովի մոտ, ստուդիայում, սովորում էին։ Նրանց մեջ էին Թաթիկ Սարյանը, Գովակյանը և ուրիշներ, որոնց շեմ հիշում։ Նրանք ինձ խնդրեցին ցույց տալ ազգային մի որևէ հեքիաթ, էպոս կամ պատմություն՝ բեմավորելու համար։ Ես տվի «Սասունցի Թավիթ», «Քաջ նազար» և ինչ-որ հեքիաթ։ Նրանք հետևյալ օրը ինձ խնդրեցին մի էջ կոնսպեկտով տալ «Քաջ նազար» հեքիաթի սյուտեն։ Ես կատարեցի խնդրեցը։ Այնուհետև խընդրեցին գոնե մի գործողության շատ համեստ կոնսպեկտ տալ։ Այդ ևս կատարեցի։ Բայց երբ վերջացրի՝ ես նրանց ասացի, որ մի փոքր սպասեն և ես կտամ ավելի մշակված բան։ Կոնսպեկտը մեծացավ, և ես երեք ամսում գրեցի այժմյան «Քաջ նազարը»<sup>11</sup>։

Հայոց թատրոնի «սոցիալական պատվերով» գրված կատակերգությունը ընդառաջում էր և ժամանակի թատերական մասածողության մեջ խոր արմատներ նետած ժողովուրդական հանդիսանքի՝ քամաշայի պահանջներին («Միեսը թամաշա է որոշ շափով» խոստովանել է հեղինակը), և Դեմիրճյանի ստեղծագործության տիրապետող թեմային՝ «ներքին մարդու» մեկնաբանությանը։

«Երբ գրում էի «Քաջ նազարը», ես դեռ շարունակում էի «մարդու լուսաբանությունը»... Իհարկե, մեր քննադատությունը շատ խանգարվեց գրոտեսկային, հոմորային արտաքին ձևավորումից և կարծեց թե մի «զվարճալի» պիես է, ամենաշատը որոշ ափակ է ավանդուրիստականության։ Ոմանք գործը սեղմացին դաշնակցության շուրջը, օգտվելով այն հանգամանքից, որ այդ էլ

կար պիեսում... «Քաջ նազարի» խոր փիլիսոփայությունը դեռ մինչև օրս էլ անհայտ մնաց հայ քննադատության համար»<sup>12</sup>,

Դեմիրճյանը ուրիշ առիթներով ևս խոսել է իր պիեսի «փիլիսոփայական» ուղղվածության մասին:

«Քաջ նազար» կատակերգությունը տասնամյակների ընթացքում շատ մեկնություններ ու ընթերցումներ է ունեցել՝ և բեմական, և գրականագիտական, պիեսի կառուցվածքում մատնանշվել են տարասեռ մոտիվների խաչաձևումներ՝ ընթացիկ-պատմականից մինչև համերժական-փիլիսոփայականը։ Այստեղ բավական հարեանցիորեն, կարելի է ասել թուցիկ է խոսվել «մարդու մեկնաբանության» փիլիսոփայական միջուկի մասին, որի ծանրությունը կրում են «սարսափելի մարդու» էությունը բացահայտող «աշխարհը բիս միշին է» և «ես հերիք եմ» նշանաբանները։

Այս գլխավոր կետերի վրա է կառուցված Դ. Դեմիրճյանի Քաջ նազարի «փիլիսոփայական վերաբերմունքը» աշխարհի հանդեպ։

Դա էլ Դ. Դեմիրճյանի «Հեքիաթային հերոսի» նորությունն ու տարբերակությունն է և հեքիաթի սկզբնաղբյուր բնագրից, և գրական մյուս մշակումներից։

Հայկական «Քաջ նազար» հեքիաթի սկզբնաղբյուրը՝ Գ. Մրվանձտյանի գրի առաջ «Դրժիկոն» իր տիպաբանական առանձնահատկություններով մրտնում է համաշխարհային հեքիաթների այն համակարգի մեջ, որը բանագիտությունը առանձնացնում է «կարծեցյալ ենթաների հերթաքայլ» անունով։

Այս շարքը ոմի երկու ենթաշարք. առաջինը այն սյուժեներն են, որտեղ գլխավոր հերոսը ասպարեզ է գալիս ճարպիկ և փորձված խարեբայի, բախտախնդիր հերոսի գծերով, երկրորդը այն սյուժեներն են, ուր բախտի բերումով ծովզ, ապիկար և վախկոտ մարդը դառնում է հարստության և իշխանության տեր։ Հեքիաթի հայկական տարբերակը՝ «Դրժիկոն», իր տիպաբանական հատկանիշներով հարում է երկրորդ շարքին, ինչպես ուստական «Թովմա թերեննիկովը», համակովկասյան ռնազնայ հսկան» և այլն։

«Քաջ նազարի» գրական մշակումներին նվիրված մենագրական հետազոտության մեջ (անտիպ) բանագետ Սյուզան Գուլակյանը հմուտ վերլուծություններով անդրադարձել է սկզբնաղբյուրի և գրական մշակումների տարբերություններին, սկզբնաղբյուրից ամենից «խորթ, անհարազատ» համարելով Դ. Դեմիրճյանի մշակումը։

Դժվար չէ նկատել, որ Դ. Դեմիրճյանի «Քաջ նազարը» հենվում է ոչ թե ժողովրդական բնագրի, այլ Հովհաննես։ Թումանյանի մշակած հեքիաթի կառուցվածքի վրա, ի դեպ, մոսկովյան հայկական ստուդիայի գերասանները նախապես դիմել են Հովհաննես։ Թումանյանին։ Տկարության՝ վատառողջության պատճառով նա հրաժարվել է և խորհուրդ է տվել դիմել Դ. Դեմիրճյանին՝ գնահատելով վերջինիս թատերագրական հնարավորությունները։

Դ. Դեմիրճյանի պիեսի տարբերությունը Հովհաննես։ Թումանյանի և Ավ. հսահակյանի մշակումներից ոչ միայն ժամանակակից նոր կազմությունն է (նախորդները մշակել են հեքիաթներ, Դեմիրճյանը հեքիաթը վերածել է պիեսի՝ արեգելյան դրամատիկական բուֆոնադի), ոչ միայն բազմաթիվ նոր կերպարների ու դրվագների ներմուծումն է հայտնի սյուժեի մեջ, այլև գլխավոր հերոսի, առհասարակ «քաջնազարականություն» կոչվող երեւյթի գնահատման նոր և տարբեր տեսանկյունը։ Տարբերությունը սկսվում է արդեն այն բանից, որ Դեմիրճյանը իր գրվածքում հանդես է գալիս ոչ թե իբրև ժողովրդական նյութի գրական մշակող՝ բյուրեղացնող, ինչպես Պուշկինը և Թումանյանը, այլ

այդ նյութի շարժառիթներով միանգամայն ինքնուրույն ստեղծագործության շարահյուսող:

Հովհ. Թումանյանին, «Քաջ նազարը» մշակելիս, գրավել էր նախ և առաջ աշխարհի ժողովուրդների «թափառական հեքիաթի» հենց ժողովրդական-փիլիսոփայական շերտը, որի համաձայն բոլոր ժամանակներում էլ անարժան, ապիկար մարդիկ դառնում են դրության տերը և ծիծաղում են աշխարհի վրա: Թեև Ավ. Խաչակյանի «Աղա նազարը» շունի Թումանյանի հեքիաթի հերոսի մոնումենտալությունը և մասշտաբայնությունը, թեև դա կերպարի այսպես ասած շարքային-սովորական-ընթացիկ տարբերակն է, սակայն այս դեպքում ևս, ինչպես Թումանյանի մշակած հեքիաթում, շեշտը դրված է նախախնամության՝ ճակատագրի, ապա նաև միշավայրի անսանձ հիմարության և կույր բնազդների մոտիվների վրա:

Ե՛վ Հովհ. Թումանյանը, և Ավ. Խաչակյանը, և Դ. Դեմիրճյանը, և «Քաջ նազարի» սյուժեին դիմած մյուս հեղինակները (Համաստեղ, Ստ. Զորյան) նյութը մեկնաբանել են ըստ իրենց աշխարհայցքային և գեղարվեստական կոռորդինատների, ասել է թե՝ այս դեպքում ևս մնացել են իրենց ստեղծագործության գլխավոր հոնի և տարբերքի մեջ:

Այսպես, Հովհ. Թումանյանին «կարծեցյալ հերոսի» միշավայրին թափառական հեքիաթների տարբերակներում գրավել է նախ և առաջ դրանց համամարդկային, վերծամանակային և վերտարածական բովանդակությունը:

Մի որոշ ժամանակ փորձել են Հովհ. Թումանյանի մշակած հեքիաթը սեղմել սոցիալական կոնկրետ միշավայրի սահմաններում՝ մեկնաբանելով դա իրու իշխողների դեմ ուղղված սոցիալական երգիծանք: Իրականում Հովհ. Թումանյանին զրադեցրել է հավիտենական նշմարտուրյան փիլիսոփայական մոտիվը, որը արտահայտել է էպոսային շափանիշներով՝ վերանալով կերպարի պատմականացումից և սովորականացումից: Այս դեպքում ևս Հովհ. Թումանյանը հենքում է ժողովրդական կենսափիլիսոփայրյան և գաղափարական կողմնորոշումների վրա: Եթե Հովհ. Թումանյանին առանձնապես հարազատ էր այն միտքը, որ զանգվածներն են իրենց ամբոխավարական հոգեբանությամբ ոչնչություններից կուռքեր ստեղծում և բարձրացնում պաշտամոնքի պատվանդանին, ապա Ավ. Խաչակյանը ժողովրդական հեքիաթի մշակման մեջ վերադասավորելով շեշտերը, հիմնական շեշտը տալիս է կույր ճակատագրին՝ նախախնամության կամքին:

Եվս մեկ հարաբերություն. Ավ. Խաչակյանը ֆոլկլորային նյութին է դիմել զանգահարի, ըմբոստացողի իր խառնվածքին անհարազատ կրավորական հոգեբանությունը, պասսիվության վարքագիծը պսակավերծելու նպատակով. Ավ. Խաչակյանի մշակած հեքիաթի հերոսը, ինչպես և պետք էր սպասել քարական շնչի բանաստեղծից, որոշ սահմաններում ունի քնարական կերպարի նկարագիր, Հովհ. Թումանյանինը էպիկական-սինթետիկ հերոսի բնութագծեր, իսկ Դ. Դեմիրճյանի Քաջ նազարը...

Ինչպես ժողովրդական հեքիաթի մյուս մշակումներում, այնպես էլ Դ. Դեմիրճյանի կատակերգության մեջ, նազարն իր «գործունեությունն» սկսում է ձանձ սպանելուց և ավարառում թագավորական գահի վրա:

Այն շարաբաստիկ օրվանից, երբ գյուղի տիրացուն նազարի դրոշակի վրա գրում է «Անհաղթ նազար, քաջն նազար, մին կզարկի, զարդի հազար» սարսափաղու բառերը՝ նրա բախտի անիվը պտտվում է այնպիսի մի արագությամբ, որ նազարը մեկ էլ իրեն տեսնում է թագավորական գահին նըս-

տած ու «աշխարհը բռան մեջ»: Պահպանելով ժողովրդական բնագրի հեքիաթային միջադեպերը, թատերագիրը Քաջ Նազարին ներկայացնում է ավելի կունկրետ ու իրական հանգամանքներում: Դրա համար էլ նա իր գրվածքը անվանում է «Հեքիաթ-եղելություն»:

Հեքիաթայինը ծույլ, երկշոտ, անբան մարդուն ժպտացող բախտի մոտիվն է, որ Նազարին փառքի աստիճաններով բարձրացնում է մինչև գահակալություն: Եղելությունն այն է, որ կյանքը լիքն է անհեթեթ դիպվածներով, որոնց շնորհիվ մարդկային ոչնչությունը դառնում է դրության տեր և ամբարտավան հաճուքով ծիծաղում աշխարհի վրա:

Այսպիսի մեկնաբանությամբ Դեմիրճյանը վերանայում է ժողովրդական հեքիաթի այն հայացքը, որի համաձայն նախախնամությունը՝ ճակատագիրն է կառավարում մարդկանց հարաբերությունները: Դիպվածը, իհարկե, դեր խաղում է կատակերգության հերոսի կյանքում, բայց գլխավոր դերը պատկանում է այն միջավայրին, որ ինքնանար երկյուղով, ստորաքարշությամբ, համատարած հիմարությամբ պարարտ հող է ստեղծում բախտախնդիրների առաջացման համար: Թատերագիրը, բնականաբար, ծիծաղում է և Քաջ Նազարի վրա, որը հարուկորեն խաղում է մարդկային թուլությունների հետ, և առավելապես այն միջավայրի, որը ստրկահաճությամբ ողորմելի մարդուն դարձնում է իր կուռքը, նրան կնքելով ամենաշքեղ անուններով՝ «արեգակ արդարության», «ձյուն մաքրության», «պատկեր գեղեցկության»: Իր գաղափարական հետևությամբ գրողն առաջադրեց կարևոր մի բարոյախոսություն՝ անողոք լինել կույր հավատի ամեն մի արտահայտության հանդեպ, զգաստ լինել մարդկանց էությունը գնահատելիս:

Միանգամայն ուրիշ նկարագրի տեր է Դ. Դեմիրճյանի Քաջ Նազարը՝ ավելի բարդ, ավելի «խառը», բազմակողմանի կերպար, ժողովրդական սկզբնաղբյուրին արտաքնապես ավելի մոտ կանգնած, բայց ավելի հեռացած՝ ըստ էության:

Թատերագրական Քաջ Նազարը իր նկարագրով այն կերպարների շարքում է, որոնք Դեմիրճյանի դասակարգումով հանդես են գալիս իրուկ անհատապաշտական հոգեբանության կրողներ՝ Հաջի աղայի, Հովհանն Մեծատունի, դատավոր Թովմասի, «Ազգային խայտառակություն» կատակերգության հերոսների:

Քաջ Նազարը բացարձակի է հասցնում անձնապաշտությունը, այս զանդակատնից էլ սահմանելով իր դերն ու տեղը աշխարհում: Հիշենք նրա մտուրումների ինքնատիպ շարքը՝ «Իմ ցեղը սուրբ է», «Փողովուրդը պիտի աշխատի, ես ուտեմ», «Պիտի սրբերի դասը դասվեմ», «Մենք ցեղով աղնիվ ենք», «Աստծո օրենքի մեջ էդպես էլ գրված է, որ մենք պիտի հաղթենք», «Աշխարհը որ կա իմ գերին է» և այլն, և այլն: Դժվար չէ նկատել, որ «փիլիսոփայական» մտորումների իր համակարգով այս Քաջ Նազարը դեմիրճյանական «աստծո ընտրյալների» ուղղակի շարունակությունն է, դրանց անհատապաշտական անսահման ձգտումների թանձրացումը և, իհարկե, «իմաստնացած», կատարելագործված տարբերակը:

Անհատապաշտ լինելով, Դեմիրճյանի Քաջ Նազարը, բնականաբար, նաև վտանգավոր է: Նրա մասին Դեմիրճյանը ասում է՝ «սարտափելի մարդ է, երբ ձեռը ուժ ու հնար է ընկնում»:

Դեմիրճյանի Քաջ Նազարը, արդարե, բախտավոր է, բայց նաև բախտախնդիր է՝ ամբողջովին ներշնչված իշխելու, հրամայելու, վայելելու տենչով,

շատ վայրենի բնագդներով, նենք գործողություններով, հարձակողական վարչագծով:

Կերպարի և երևույթի այս բնութագիրը, ըստ էության, որոշել է Դ. Դեմիրճյանի մեկնաբանության, նրա վերաբերմունքի յուրահատկությունը:

Ո՞րն է նրա վերաբերմունքի մեկնակետը:

Արմատականությունը:

Նրա մարմնավորած Քաջ նազարը ոչ «ակամա զոհ է», ոչ էլ «ճակատագրի ընտրյալ», այլ նորից դիմենք Դեմիրճյանի բնութագրությանը՝ «սարսափելի մարդ», ուստի և նա գործի է զնում քրքացող, անգութ, երևույթի հետ հաշտության ոչ մի եզր Հանդուժող ծիծաղի ալիքները՝ արմատապես խարխնելու քաջնազարականությունը՝ իր բոլոր արտահայտություններով՝ և արդեն եղած, պատմական ճանապարհ անցած, և գեռ լինելիք, շարունակվող ձևերով:

Դ. Դեմիրճյանի կատակերգական հեքիսիթի կարևորագույն կետերից մեկը այն է, որ քաջնազարականությունը տեղադրում է նաև մյուս կերպարների մեջ: Դրա կրողներն են նաև Ուստիանը, իշխան Սաքոն, սենեկապետը, թամադան, տերտերը, պալատականները, հսկաները, Քաջ նազարի մեծ ու փոքր, տեսանելի ու անտեսանելի կրկնակները:

Թեև «Քաջ նազարին» նվիրված առանձին վերլուծություններում Ուստիանը համարվել է հականազարական գծի արտահայտություն (նկատի են ունեցել Ուստիանի դագանակը և առհասարակ նազարի հանդեպ ունեցած նրա իշխանությունը-կամքը), սակայն, ըստ էության, Ուստիանը և նազարը ներդաշնակություններ են: Դեռ ավելին. Ուստիանը ավելի գործնական է իր իշխանական ցանկությունների մեջ (իմանալով Քաջ նազարի գահակալության լուրը, անմիջապես ցանկանում է թագուհի դառնալ), ավելի համարձակ է իր վերաբերմունքը, մանավանդ հակաաշխատանքային էությունը արտահայտելիս՝ «Ինչ լայեղ է, որ աշխատեմ», ավելի կրքոտ է իր ազնվական ծագումը փաստարկելիս, ավելի անհանդուրդող է ենթականների հանդեպ:

Ուստիանը Քաջ նազարի կրկնակն է:

Քաջ նազարի բազմաթիվ կրկնակներին ասպարեզ հանելով, Դեմիրճյանը հետամուտ է, Տիգրան Հախումյանի մեկնաբանությամբ, «Քաջնազարիզմ» կոչվող հավերժական և կոնկրետ-պատմական երևույթի դատաստանին:

Ի տարբերություն թումանյանական «հավերժական սիմվոլի», Դեմիրճյանը, ինչպես նկատվել է, քաջնազարականությունը ներկայացնում է նաև իբրև XX դարի ագրեսիվ բյուրոկրատիայի ցայտուն արտահայտություն:

Փամանակակից այս շերտի մասին դեմիրճյանական մտքերի վկայակույուններ է բերում Ա. Զաքարյանը «Քաջ նազար կատակերգության շուրջը» հոդվածում. «Քաջ նազարի իշխանությունը վախկոտի իշխանություն է, ուստի և ճնշում է պանիկական ուժով», «Քաջ նազարի» իդեան ոչ թե միայն դաշնակացությունն է, մենշնիկովը, ցարիզմը և այլն, այլև մարդը, որ լրբորեն դաժան է, երբ իշխանություն ունի և սաստիկ մտահոգ իր անձի ապահովությանը, երբ վտանգների մեջ է»: Ոչ միայն նազարը, այլև նազարյանք՝ ամբողջ կազմով, վկայել է Դեմիրճյանը, «հաճոյակատար, վախկոտ, զարհուրող, քծնող իրենցից վերկին և դեսպոտ, անգութ, դաժան՝ իրենցից ստորինների հանդեպ»<sup>13</sup>:

Միանգամայն համոզիլ են «Քաջ նազարը» և ազգային ինքնանադատության դեմիրճյանական համակարգում տեղադրելու հիմնավորումները: Այս տրամաբանությամբ, որ Դեմիրճյանը հայ ժողովրդի ազգային փլուզման ճակատագրական թվականներին բանադրելով մորթապաշտության, արկած

ծախնդրության, մեծագարության, շահատակության, կրավորականության, աիրասիրության հասարակայնորեն վտանգավոր ախտերը («Ազգային խայտառակություն» կատակերգության մեջ, մի շարք բանադրական-դատաստանական շափածո թղթերում), իր ստեղծագործության այդ երակը շարունակեց «Քաջ նազարի» ժխտական-դատապարտող պաթոսով:

Իրապես Դեմիրճյանը այն մտքին էր, որ Քաջ նազարը, այսինքն՝ գահակալը իր շրջապատով, մեծ ու փոքր պալատական շահատակողներով, ոչինչ տալիք չունեն ազգային առաջադիմությանը և նրանցից ունեցած սպասելիքները սոսկ օճառի պղպջակներ են:

Քաջնազարականության՝ իրք առհասարակ մինչև վերջ դատապարտվող երեսութիւնի դեմիրճյանական արմատական վերաբերմունքը տեղ է գտել կատակերգության ֆինալում:

Այստեղ ուշագրավ է Դեմիրճյանի գաղափարական ստրուկտորայի հետևյալ եղրը. մինչ տասական թվականների գրվածքներում (դրամաներում և պատմվածքներում) «մեղավորներին» նա տանում էր այնաշխարհի դատաստանին (Բացարձակի՝ աստծո դեմ գործած հանցանքների համար), Քաջ նազարի և նրա շքախմբի վլուգումը ներկայացնում է այս աշխարհի մեջ՝ իրք պատմական անխուսափելի գործողություն։ Այլ խոսքով հանցանքի և պատճի վաղեմի էթիկական ստրուկտորան Դեմիրճյանը, հեղափոխական անցքերի ազդեցությամբ, վերանայում է պատմական ժամանակի բովանդակությամբ։

Քաջ նազարի կործանումը՝ գահընկեցությունը, քննադատության մեջ համարվել է կամ «անախրոնիզմ», կամ «մոդեռնացում»։ Դ. Դեմիրճյանի մոտեցումը տարակուսանքների տեղիք է տվել... ոչ թե Դեմիրճյանի, այլ թամանյանական լուսաբանության դիրքերից։ Հուշագիրները (օրինակ, Ռուբեն Զարյանը) պատմում են, որ Դ. Դեմիրճյանն ինքը անհամոզիլ էր համարում իր լուծումը՝ պիեսի ֆինալը,—գտնելով, որ դա «հակառակ է» հեքիաթի ոգուն։ «Բնավ էլ կարիք չկար, որ ես նոր լուծում գտնեի, քանի որ ժողովուրդը ինքը արել է այդ և չի սխալվել»։

Այս հուշի տվյալներով Դ. Դեմիրճյանը անհամաձայն է... Դեմիրճյանի հետ։

Բայց եթե խնդրին նայենք իր իսկ ասելիքի, իր նյութի, իր էթիկական հայցքների տրամաբանությամբ, Դ. Դեմիրճյանը անպայման պետք է շրջանցեր «Փոլկլորային լուծնան» սահմանները, պետք է գնար նաև Հովհաննին հակադիր ճանապարհով (մինչև այսօր էլ գահին է և ծիծաղում է աշխարհի վրա) և երեսությը տեղադրեր կոնկրետ-պատմական սահմանագծի մեջ։

Միայն այդ կերպ, եթե Քաջ նազարի «Փանտաստիկայի» հետ գործ ուներ Դեմիրճյանը՝ իր գրվածքներից անբաժան էթիկական հայացքներով։ Այստեղ դեր է խաղացել նաև այն հանգամանքը, որ Դեմիրճյանը միակողմանի, մի «հիմնական» գաղափարի արվեստագետ է։

«Հին» գրականության և «Հին» թատրոնի դեմ ուղղված իր կրքուտ բանավեճում («Ամենապումի» և «Կապկաղ թամաշայի» մեջ) ի թիվս Սոփոկլեսի, Դյումայի, Հաուպտմանի, Շիրվանզադեի պիեսների, Զարենցը հիշատակում է նաև Դ. Դեմիրճյանի «Դատաստան» պիեսը («Խնչերիդ է էսօր հարկավոր «Դատաստան»), Հոգերանական խորացումների թատերագրությանը հակադրելով գործադրության արվեստը։

**Ժամանակի «մասսայական թատրոնի» ուղղությանն ընդառաջ գնաց նաև Դեմիրճյանը՝ «Քաջ Նազար» կատակերգությունը ծրագրելով իբրև գործողության քատրորինակ նմուշ:**

«Քաջ Նազարը» ժամանակին խառնուրդ է, որի էությունը Դեմիրճյանը մի գրության մեջ սահմանել է հետևյալ կերպ. «Քաջ Նազարը... արևելյան ժողովրդական հեքիաթ՝ Է՝ վերածված բուփոնադի: Հեքիաթը կենցաղային բնույթ ոմի այստեղ և խառնված է ֆանտաստիկ տարրերով: Ուրեմն՝ Հայկական եթնոգրաֆիական ռեալիզմը պիտի հարակցվի ժողովրդական-ֆանտաստիկականին և դուրս բերվի խառն ստիլով ընդհանրապես արևելյան ժողովրդական բուփոնադ»<sup>14</sup>:

Մայակովսկիական-մեյերհոլդական բուֆից, ազգային եթնոգրաֆիական ռեալիզմից բացի «Քաջ Նազարի» կառուցվածքի մեջ իրավացիորեն մատնանշավել են նաև Ն. Վ. Գոգոլի «Ռեիզորի» երկհյուսվածքային (Խլեստակովի և գավառապետության) «ներդաշնակությանը» հարազատ (դիմադրություն և Համերաշխություն) կառուցվածքային ներմուծումները (Քաջ Նազարի դաշնությունը իրեն ծնող և սնող ամբողջական շրջապատի հետ):

Կառուցվածքային այս յուրահատկությունն էլ պայմանավորել է Դ. Դեմիրճյանի պիեսի գործող անձանց երգիծական բնութագրումների արտակարգ կենդանությունն ու սրությունը, կատակերգական իրավիճակների ու կատակերգական խոսքի զարմանալի բնականությունը: Ոչ միայն Քաջ Նազարն ու Ռևստիանը, այլև պիեսի մյուս բոլոր «պերսոնաժները», մասնավորապես սենեկապետը, ցնդած տիրացուն, թամադան ու վարժապետը տիպագրված են վերին աստիճանի տպավորիչ և կենդանի գույներով:

Դրության և խոսի կատակերգական արտահայտչամիջոցների հարաբերության մեջ ծանրության նժարը այնուամենայնիվ թեքվում է դեպի խոսքը, որը և գառնում է կերպարակերտման գլխավոր նախապայմանը:

Ժամանակակիցների հուշերի վկայությամբ՝ 20—30-ական թվականների հայ իրականությունը ողղոված էր «Քաջ Նազարի» թևավոր դարձվածքներով ու սրամիտ բառապաշտարով, մանավանդ դարձվածքներով՝ «Ամբուլներդ կիցոցնիմ երկինք», «գյաղա, աշխարհքը բեր բռնեմ», «մաքներինս էղ է», «ինչո՞ւ է էսքան տերությունն ու թագավորը, ես հերիք եմ», «Հիմի ուղում եմ, որ ոնցոր մտքիս տալիս է՝ էնպես էլ աշխարհք շարժվի», «Կնիկ, ինչ քարվան կտրելու գիշեր է» և այլն, և այլն:

Նման ոճաձեւերի կիրառությամբ Դեմիրճյանը յուրացնում է կերպարի մտքերի ներքին ընթացքը, ուրեմն նաև՝ նրա անհատականությունը, առավելապես մեծագարության ցնորդը:

Եթև Քաջ Նազարի խոսքը առավելապես հակված է բնութագրելու ապիկար, բախտախնդիր իշխանամոլին, ապա մյուս պերսոնաժների խոսքային պաշարները նույնպես ունեն անհատականացման նպատակակետեր: Օրինակ, սենեկապետի բառարանը, որով կատարյալ է դառնում արևելյան շողոքորթի նկարագիրը՝ «պատկերք գեղեցկության, ծյուն մաքրության, ձայն ավելյաց, գրիչ երկնային, կարկուտ բարկության, ծով խելաց, քիմք նրբաճաշակության, կենտրոն տիեզերաց» և այլն, և այլն: Մակդիրավորումների-հարաբերությունների մի ամբողջ շղթա, որով պերսոնաժի կատակերգական էությունը բացվում է առավել տպավորիչ և առավել բնական:

«Քաջ Նազարի» խոսքի առանձնահատկության մասին ասված է. «Քաջ Նազարը» գրելիս Դեմիրճյանը շի գնացել կոմիկական խոսքի կերտման տրոր:

ված ճանապարհով, երբ երգիծական ներգործությունը նվաճվում է բառախաղերի կամ ակնհայտորեն անհարիր լեզվական զուգորդումների միջոցով: Այս երկում ընտրված է կոմիկական խոսքի կերտման առավել դժվարին ուղիւ Ծիծաղը-ծաղը ոչ թե խոսքի միջոցով է վերագրվում-փոխանցվում կերպարին, այլ բխում է նրա բուն իսկ էությունից, ծիծաղելին-ծաղըլին նրա բնավորության մեջ է, ուստի և երբ հեղինակը կերպարի բերանով բացում է նրա բնավորությունը, ծիծաղելի է դառնում նաև խոսքը: Սա մի տեսակ թարուն, առերևույթ անկապ, բայց իր խոսքով շափազանց ցայտուն խոսքի կոմիզմ է, երբ ծիծաղելին ոչ միայն խոսքի ձևն է, այլև գլխավորապես բովանդակությունը<sup>15:</sup>

Դ. Գեմիրճյանի մի շարք այլ գրվածքների («Տերտերը», «Դատաստան») հետ միասին Եղիշե Զարենցը 1934 թ. զեկուցման մեջ բնորոշ օրինակներ է բերում նաև «Քաջ նազարից»՝ փաստարկելու ոչ միայն բառապաշարով, այլև շարահյուսությամբ (սինտաքսիսով) լեզվի և ոճի ազգային ձեզ հաստատող պեղագիտությունը:

«Քաջ նազարը» ծննդյան իսկ օրից եղել է հայոց թատրոնի խաղացանկի ամենաբանուկ պիեսներից մեկը: Թատերական վիճակագրության տվյալներով<sup>16:</sup>, «Քաջ նազարը» բեմադրվել է Երևանի, Թիֆլիսի, Բաքվի, Դոնի Ռոստովի, Բաթումիի, Տաշքենդի, Արմավիրի և այլ քաղաքների դրամատիկական 33 թատրոններում, Երևանի օպերային, Երաժշտական կոմեդիայի և տիկնիկային թատրոններում: «Քաջ նազարի» սյուժեով ֆիլմ է նկարահանել Երևանի կինոստուդիան: «Քաջ նազարի» 1924 թ. առաջին բեմադրությունների (Թիֆլիսի և Երևանի թատրոնների) ուժիսորը եղել է թատերական մտածողության ժամանակակից ձևերով հափշտակված Արշակ Բուրջալյանը: Մյուս բեմադրություններից հիշարժան են Թաթիկ Սարյանինը (Բաքվի թատրոնում, 1933-ին) և Ա. Գուլակյանինը (Երևանի Պատանի հանդիսատեսի թատրոնում, 1934-ին):

«Քաջ նազարի» բեմադրության ամբողջ պարտիտուրան արդեն մշակել էր Վարդան Աճեմյանը, սակայն վերահաս մահը կանխեց հայ թատրոնի մեծ ուժիսորի մոնումենտալ մտահղացման իրականացումը:

«Քաջ նազարի» բեմական նկարչության հետ կապված են Մ. Սարյանի, Միքայել և Սերգեյ Արուտչյանների, Գիգո Շարբարչյանի, ճարտարապետներ Կարո Հալաբյանի և Միքայել Մաղմանյանի անունները:

Քաջ նազարի բովանդակալից և հյութեղ դերը հայոց թատրոնի հիսուն բեմադրություններում ունեցել է փայլուն մարմնացումներ, որոնցից թատրոնի տարեգրության մեջ իրեւ առաջնակարգ երևույթներ հիշվում են Հովհաննես Աբելյանի, Բագրատ Մուրադյանի, Համբարձում Խաչանյանի դերակատարումները:

## 7

Գրական ճանապարհի գրեթե բոլոր կետերում Գեմիրճյանը դիմել է ազգային պատմության սյուժեներին և կերպարներին՝ այն հստակ և սպառիշ գիտակցությամբ, որ ամեն մի ժողովուրդ իր արմատների, իր պատմության շարունակությունն է: Հայոց պատմության էջերում նրան հետաքրքրել է ոչ թե եղելությունների արաւարին տեսքը, այսպես ասած՝ «պատմական բուտակության», այլ պատմական տվյալ դրվագի «բարոյական խորհուրդը», մասնավորապես պատմական այն շերտերի բացահայտումը, որոնք այս կամ այն

կերպ խոսում են արդիականության հետ, նեցուկ են դառնում՝ ժամանակակից խնդիրներ արծարծելու համար: Գեղագիտական այս սկզբունքը Դեմիրճյանը տարբեր ձևով էր յուրացնում նախահեղափոխական և սովորական տարբիների պատմական թիմա ունեցող գրվածքներում: Առաջին շրջանի համար բնորոշ էր պատմական նյութի նվազ կշիռը՝ «բարոյական-փիլիսոփայական» խնդիրների հարաբերության մեջ: Այսպես, «Լենկ-Թիմուր» (1905—1912) պոեմում միջնադարյան Հայաստանի աղետավոր իրականությունը լոկ շարժադիր էր «պատմության ունայնության» դեմիրճյանական հարցադրման համար, որով նա գնում էր «կյանքի ունայնության» սիմվոլիստական հրահանգների դիրքերը:

«Վասակ» դրամայում (1912) ~~թեև~~ Դեմիրճյանը ըստ ամենայնի պատմական նյութի ավելի լայն շերտեր էր բացում, բայց գեռնա իր նախասիրության՝ «շարժադարձների» մեթոդի, սահմանների մեջ էր:

Բանն այն է, որ Դեմիրճյանին այդ դրամայում գերազանցորեն զրադեցնում էր Վասակի ավանդական «առեղջվածք» իբրև հոգեբանական երևույթ, նրա ներշխարհի կծիկները, ուր պատմական իրականությունը խաղում էր սոսկ Փոնի դեր: Անտարակույս, Դեմիրճյանը հետապնդում էր պատմական ինչ-ինչ ճշմարտությունների բացահայտման խնդիրը, թեկուզ Վասակի կերպարի նոր մեկնաբանության այն խնդիրը, որ առաջարկում էին Մ. Գարագաշյանը և ուրիշներ, սակայն հայոց պատմության դիվանագիտական, անարյուն պայքարի իր տեսությունը Դեմիրճյանը ամրացնում էր հոգեբանական և ոչ թե պատմական նյութով:

«Վասակ» դրամայի կենտրոնական գաղափարը դրական Վասակի քաղաքական ուսաբիլիտացիայի, նրա դավաճանությունը դիվանագիտական ու ստրատեգիական նկատառումներով բացատրելու, նրա վարքագծի մեջ ինչ-որ հեռավոր «ողջախոհություն» ու հոգեբանական տառապանք տեսնելու իդեան, որ Դեմիրճյանը վերցրել էր իր ժամանակի պատմագրության զինանոցից, Տիգրան Հախումյանի «Դ. Դեմիրճյանի դրամատուրգիան» աշխատության մեջ արժանացել է լուրջ առարկությունների: Տ. Հախումյանը ասում է, որ Դեմիրճյանի գրվածքը պատմական նյութ չի արծարծում («Պատմականությունը երեւութական է, խիստ պայմանական»), որ եթե նա նույնիսկ «գաղտնի նպատակ» է ունեցել Վասակին ցույց տալու «նոր լուսի տակ», ապա պիեսում Վասակը դրվում է այնպիսի դրությունների մեջ և շրջապատը այնպիսի վերաբերմունք է հանդես բերում, որ մեջտեղից վերանում է Վասակ Սյունիի դրական հասկացության խնդիրը:

Ամբողջ հարցն այն է, որ դրամատուրգը «դիտավորյալ է» հեռացել պատմականությունից, որպեսզի, ի դեմս Վասակի, լուսապատճեն ներկայացնի բարդ ու ողբերգական այն անհատին, որը, ճիշտ է, ունեցել է բնավորության ծայրահեղ վատ գծեր (փառասեր, իշխանատենչ, միջոցների մեջ խտրություն շնորհ), բայց միաժամանակ լինելով ուժեղ քաղաքագետ, ավելի հեռուն է մտածել: Հախումյանի բերած փաստարկումները՝ թե շրջապատը ոչ մի դրական բան չի ասում նրա վարքագծի մասին, թե Վասակի ինքնախոսութանությունները մերկացնում են նրան, թե «Վասակն ահով ու տագնապով ինքն է առաջինն ասում իր մասին այն խոսքը, որ գիտե հաստատապես ասելու է ժողովուրդը», և այլն,—այս բոլոր փաստարկումները ուժից գրկում են նեղինակի նպատակադիր վերաբերմունքի առաջ:

Վասակի ինքնախոստովանություններն ու ռեպլիկները, որոնք գերազանցապես հետևյալ որակի են՝ «Մաղղեզանց կրոնը մի ժամանակավոր զգեստ է, կհաճենք, հետո կհանենք», «Դիր սուրբ պատյանը և մերկացրու խոհականությունը», «Թող հանգիստը իբրև գթոտ մայր՝ իր գիրկն առնի մեր հոգնությունը», «Հեղեղ եղեք գառան պես և համբերող՝ ինչպես ժամանակըս» և այլն,— ցույց են տալիս, որ Դեմիրճյանը ոչ թե ուղղագիծ դրական հերոսի է պատկերում, այլ տատանվող անհատականության, որը ողբերգական բախման մեջ՝ իրեն «Համակացող», հակավասակյան ուժերի հետ:

Որ Դեմիրճյանը ժողովրդի դիրքերից է «իդեալագործել» Վասակին,— դա ակնհայտ է: Սակայն ակներև է նաև այն, որ դրամատուրգը պատմությանը մոտեցել է սուբյեկտիվիստական պատմահայեցության դիրքերից, փորձել է ինչ-որ դետերմինիզմ փնտրել Վասակի վարքագծի և հեռավոր նպատակների միջև: Այստեղ է, ահա, նրա պատմահայեցության թուլությունը:

Ճիշտ է, «Վասակը» ևս մտնում է Դեմիրճյանին դրաղեցնող «մարդու թեմայի» շրջանակների մեջ, սակայն, դա, ինչպես նկատել է քննադատությունը, լուծված է այն կոնցեպցիայի ոգով, որ նրան դուրս էր բերում կերպարի ավանդական սահմանագծից:

Պատմության հանդեպ ունեցած բուռն հարցամիրությունը Դ. Դեմիրճյանը պահպանեց նաև սովետական տարիներին: Արդեն 30-ական թվականներին, քսանական թվականների «եռուկեռից» հետո ստեղծված համեմատաբար «խաղաղ» իրադրության մեջ՝ 1935-ին նա գրեց իր արձակի պսակներից մեկը՝ «Դիրք ծաղկանց» փիլիսոփայական ասքը:

Հայտնի է, որ հայ գրողները՝ բանաստեղծները, թատերագիրներն ու վիպասանները, ժողովրդի քաղաքական մաքառումը ներկայացնելու համար նյութ են քաղել հայոց պատմության հերոսական անցքերից կամ նահատակների կյանքից: Նրանց ուշադրությունից դուրս էր մնացել հայ ժողովրդի կուլտուրական մաքառումը: Դեմիրճյանի «Դիրք ծաղկանցը» այն երկն է, որ ի հայտ է բերում այդ թեման՝ նյութ քաղելով հայկական Վերածնության ժամանակաշրջանից:

Մյուս էական նորությունն այն է, որ պատմական մեծահոշակ դեմքերի կամ դիցարանության առասպելական հերոսների փոխարեն Դեմիրճյանը հերոսներ ընտրեց պատմության անանուն ներկայացուցիչներից:

Միջնադարյան Հայաստանում բարձր զարգացման հասավ գրչության ու գրքի պատկերագարդման արվեստը: Վանական խցերում, ձեթի ճրագի աղոտ լուսափ տակ գրիշներն ու նկարիշ-ծաղկողները օրինիբուն ստեղծում էին հայոց գիրք: Միջնադարյան հիշատակարանները նրանց մասին թողել են միայն թուոցիկ վկայություններ, թե այսինչ ձեռագիրը նկարագարդել է այսինչ ծաղկողը կամ այսինչ գիրքը ընդորինակելու համար տքնել է այսինչ գրիշը...

Պատմվածքի հերոսներ ընտրելով այդ մարդկանց միջավայրից՝ Դեմիրճյանը բացում էր պատմական թեմայի մեկնաբանության նոր ճանապարհ և բերում էր նոր սկզբունքներ:

Վանահայրը, որ նախկինում ճարտարապետ է եղել, նստած իր խցում գրում է մի աշխատություն: Դրա մեջ նա նկարում է նաև շենքեր, տալիս է ճարտարապետական գծագրեր: Իր աշակերտների՝ Զվարթի և Ղոմկիանոսի համար նա բարձրածայն կարդում է գրքի գլխավոր մտքերը: Աշխարհը, — ասում է նրա գիրքը, — հիմնված է կառուցման վրա: Թե՛ քաղաքը, թե՛ խոսքը, թե՛ միտքը, ամեն, ամեն ինչ, հաստատում են կառուցման մեծ խորհուրդը:

Վանահայրն իր գիրքը գրում է, որ սերունդներին կտակի կառուցման մեծ խորհուրդը:

«Եղեք և դուք կասուցողք և դուք շինարարք, որպես մարդիկք երկրի, սիրեցք աշխատանք, զի կառուցումն և աշխատանք սուրբ են...»:

Պատանի Զվարթը, որ վանք է բերվել կրոնի սպասավոր դառնալու, հափշտակվում է վանահոր վսեմ կերպարով։ Զվարթը նրա միջոցով «իսցից դուրս նայում է աշխարհին»։ Զվարթն ոմի բանաստեղծական շնորհ։ Նա հյուսում է կյանքի՝ ժաղիկների վեպը։

«Նա ոգում էր հափշտակված, բառերը անարգել հոսում էին, նա ոչինչ չէր տեսնում, — գալիս է գարունը, ձայն է տալիս հողին, զարթնում է հողը, ձայն տալիս բոլոր բույսերին։ Զարթնում է ձնժաղիկը, ձայն տալիս մյուս ժաղիկներին...»։

Հետո նկարիչ Թաղեն բնության ճոխ գույներով դարդարում է վանահոր աշխատությունը, որի մեջ գրի է առնվել նաև ժաղիկների մասին պատմող Զվարթի բանաստեղծությունը։

«Վանահայրը իր նվիրական գիրքը հանձնեց պատանիներին և պատվիրեց լավ պահպանել։ Նա մեռավ...»։ Մեռնում է նաև վանքի մենախցում արգելափակված Զվարթը՝ «Հոգում ժաղիկներ»։

Դեմիրճյանը հետևյալն է ասում դարերին ավանդ մնացած գրքի մասին։ «Ուսկե՛ատ մի գիրք, լի լուսեցով և իմաստությամբ։ Բոցավառ կենդանաթըռոշուններ, ձկնագազաններ և ծաղիկներ շրջանակել են երկու վեպ։ մեկը, որ խոսում է աշխարհի կառուցողական սկզբունքի, շինարարական աշխատանքի սրբության մասին, իսկ մյուսը, որ կրակե ժապավենի նման հոսում է էջ առ էջ՝ Զվարթի վեպը ժաղիկների մասին»։

Գիրքը ենթարկվում է դաժան փորձությունների։ Առաջին փրկիչը լինում է Ղունկիանուր՝ վանահոր աշակերտը և Զվարթի ընկերակիցը։ Սա և նկարիչ Թագեն գիրքը թաղում են քարե պատսպարանում։

Հայաստան են խուժում նվաճողները, ավերում են նրա ավանները, վանքերը, գրադարանները։ Լենների լանջով գնում է Ղունկիանուր, մեշքին մի պարկ, ձեռքին մի մետաքսի կապոց։ Նա հեռանում է մենաստանից, որպեսզի գրքերը լընկնեն թշնամու ձեռքը։ Ղունկիանուր գիրքը թաղում է մի լեռնային խարխով վանքի դռան առաջ։ «Զյան մեջ մի կիսաթաղ մարդ է երևում, պարկը մեշքին, կողքին մետաքսախառն մի գիրք, որ բացվել և ժպտում է կապույտ երկնքին»։

Դարերը հաջորդում են իրար, երկիրը ասպատակում են տարբեր նվաճողներ, բայց ժողովուրդը աներևակայելի զոհովությունների գնով, փրկում է գրքի կյանքը։ Անցնելով ձեռքից ձեռք, շատ անգամ վտանգվելով՝ կառուցման և ժաղիկների գիրքը մնում է կենդանի։

Վերջին անգամ գիրքը փրկում է Հուսիկ անոնով մի գյուղացի։ Սովոր ամբողջ երկրում։ Զրալացան Հակոբն իր որդուն՝ Հուսիկին է դիմում հետևյալ խորհրդով։ «Գնա, Հուսիկ, Դամասկոս։ Աղորիքները կանգնեցին։ Գնա ցորեն բեր, ցանենք, կենդանությունը շմարի»։

Հուսիկը ճանապարհ է ընկնում և հասնում է Դամասկոսի արաբական շուկան։ Այստեղ նա տեսնում է, թե ինչպես մի խուռն բազմություն «Ժիծազելով» իրար ձեռքից առնում և բարակ մատներով կողերը բացուխուի էին առնում մի գիրք։

Հուսիկը զննում է այդ գիրքը, որը նրա մեջ արթնացնում է հայրենի հովիտների, լեռների, ծաղիկների հարազատ ու մտերիմ գուշները:

Նա զինվորին է տալիս ցորեն առնելու համար հորից ստացած փողը և աշխատանքն ու կյանքը մեծարող այդ գիրքը բերում է հայրենիք:

Պատմվածքն ավարտվում է գրքի ներբողով.

«Մե դարերի խորքից գալիս է մի գիրք: Խավարի միշին թափառող լուսի նման դողդողում է, բայց գալիս է, թե ինչ վտանգներ է ապրում, չի տեսնում նա: Ոչ ձմեռ, ոչ խավար: Ոչ կրակն է այրում նրան, ոչ շոգը խեղդում: Հրաշքն է պահում նրան, թե՞ պատահմունքը: Բայց սերունդները խնամում են նրան, թաքցնում, փրկում և ավանդում նրան սերունդներին: Զեռքեծեռք է անցնում դարերի փորձանքներից, անցկացնում հուր, սուր, ջուր:

Մի կարմիր հողմ փոթորկալի թերթում է ոսկե լույս թերթերը գրքի, որ ընկած մի մեծ ճանապարհի վրա, նայում է նրան մտերմորեն, նա փրկված է իրեն միշտ փրկող ժողովրդի հետ:

Երկաթի գրադարակներում լուս են դարերը: Մի ալեհեր գլուխ հակված է պատմության անդունդը և խոր հովտում տեսնում է ծաղիկներ, ծաղիկներ...»:

«Գիրք ծաղկանց» պատմվածքով հեղինակն արտահայտում է այն գաղափարը, որ հայ ժողովուրդը իր կենսունակությունը պահպանել է ոչ միայն հերոսամարտերով ու ուզմական մաքառումներով, այլև կյանքի սիրով, աշխատանքի ու գեղեցիկ արվեստների պաշտամունքով, հոգեկան ազատության ծարավով:

Վանահոր, Զվարթի, Ղունկիանոսի և Հուսիկի կերպարներով Դեմիրճյանը բացահայտում է հայ ժողովուրդի կենսունակության աղբյուրները: Մի դեպքում այդ աղբյուրը կառուցման իմաստությունն է (Վանահայր), մյուս դեպքում՝ զգացմունքների ազատության ծարավը (Զվարթ), երրորդ դեպքում՝ հայրենականի պաշտամունքը (Ղունկիանոս), վերջապես, հոգու վեհանձնությունն ու անձնագոհությունը (Հուսիկ):

«Գիրք ծաղկանցը» Դ. Դեմիրճյանի կենսագրության մեջ ուշագրավ փաստ էր նաև պատմական նյութի մշակման սկզբունքներով: «Ծարժառիթների» վաղեմի մեթոդից նա շրջադարձ է կատարում դեպի նյութի «պատմական հիմքերի» գեղագիտությունը: Ինչպես պարզաբանում է Հրաշյա Թամրավյանը<sup>17</sup>, «Գիրք ծաղկանց» ասքը գրելու համար Դ. Դեմիրճյանը օգտվել է Կ. Երզնկացու երեք տաղից («Ումանք շարախոսեն դինքն վասն նախանձա», «Թանքը վարդի օրինակաւ զ’քրիստոս պատմե», «Մեկնություն վարդին համառոտ...»): Զվարթի կերպարը գծագրելու համար, Երզնկացու կենսագրության մի փաստից՝ Ղունկիանոսի կերպարի համարժեքի համար, Վենետիկի Միխիթարյանների Մատենադարանի № 88 ձեռագիր Ավետարանից՝ Հուսիկի հետ կապված գլխավոր դեպքը պատմելու համար:

1938 թ. Դ. Դեմիրճյանը գրեց «Երկիր հայրենի» հերոսական դրաման, որի նյութը հայ-բյուզանդական հարաբերությունների պատմության երևելի դրվագն էր՝ Գագիկ Երկրորդ արքայազնի հայրենասիրական մաքառումը Անիի Բագրատունյաց թագավորության անկախության համար:

Եթե Հաշվենք Սարդարապատի հերոսամարտի նահատակներին ձոնած մահերգը, Դ. Դեմիրճյանը մինչև «Երկիր հայրենին» երեք շէր դիմել հերոսական նյութի և հայրենասիրական պաթոսի:

Բայց պիեսի հայտնությունը նաև անտկնկալ շէր, եթե նկատի ունենանք բարոյական արժեքների անկասելի որոնման դեմիրճյանական կիրքը: Վաղ

թե ուշ իր աշխարհայացքային կտորդինատների մեջ նա տեղ պետք է տար հայրենասփռության բարոյական կատեգորիային, դրանով լրացնելու իր էթիկան:

Թեև Տ. Հախումյանը այն տեսակետին է, որ «Վասակ» դրամայի համեմատությամբ ուրակական փոփոխությունների չի ենթարկվել պատմական նյութի մշակման դեմիրճյանական ելակետը, իրականում Դեմիրճյանը հեռացել է «շարժադիմների» մեթոդից և ի հայտ բերել թե պատմական դեպքերի վավերագրական հարազատություն, թե պատմական ընթացքի ճշմարիտ ըմբռնում:

«Տարբերությունը ոչ միայն «վարպետացած գրողի», «ցայտոն խարակտերների», «ստեղծագործական խտացումների», այլև պատմությանը մերձենալու եղանակների և սկզբունքների մեջ է:

Մինչ «Վասակ» դրամայում պատմական նյութն, իրոք, շարժադիմ էր իր բարոյախսոսական դիրքերի ապացուցման համար, «Երկիր հայրենին» շնչում է խոր պատմականությամբ: Սա վերաբերում է ոչ միայն պատմությունից հայտնի կերպարներին և պատմական եղելություններին (Գագիկ, Պահավոնի, Մագիստրոս, Փառանձեմ, Վեստ-Սարգիս, հետկար), այն ամենին, որոնք արձանագրված են պատմական հիշատակարաններում, այլև պատմությանը անհայտ «մտացածին» կերպարներին ու պատմական կենցաղի մասունքներին:

Դեմիրճյանը մնացել է պատմության սահմաններում՝ արտահայտելու նողի և ծաղօվրդի միասնության, իրեն հայրենիքի հավերժության նախապայմանի, փիլիսոփայական գաղափարը: Այդ փիլիսոփայության կրողներն են ոչ միայն Անին կառուցած վարպետներն ու հայրենի հողի փիլիսոփաները («Հող ծանող է», «Վերջը կմնա էլի հողը, էլի ուամիկ», «Հողը շերթար, ուամիկ շերթար»), այլև Գագիկ Երկրորդը իր համախոհներուվ: Իշխանության և ժողովրդի հավաքագրումը՝ Գագիկ թագավորի գործունեության ամենակարևոր կետը, Դեմիրճյանը գնահատում է իրեն պետական մտածողության բարձրագույն արտահայտություն:

Ի դեմս Գագիկի կերպարի Դեմիրճյանը հայոց թատրոնի պատմության մեջ առաջինը բեմ հանեց ծողովրդական զանգվածին հենվող, հասարակության բոլոր հայրենասիրական շերտերը միավորող, հերոսական սիրազգործության պատրաստ թագավորի վառվոռն կերպարը:

Գագիկի կերպարն է նաև «Երկիր հայրենի» դրամայի Վարդան-Աճեմյանական բեմադրությունների (Երկու անգամ բեմադրվել է Գ. Սունդուկյանի անվան թատրոնում՝ 1940 և 1945 թվականներին, երկու անգամ՝ Լենինականի թատրոնում՝ 1943 և 1956 թվականներին) առանցքը<sup>18</sup>:

Գ. Սունդուկյանի անվան թատրոնի բեմադրությունը գնահատվել է իրեն ժողովրդական մեծաշունչ և լայնագիծ ներկայացում, «ամենահանդիսավոր և ամենահայրենասիրական ներկայացումը, որ երբեմ բեմադրվել է հայ դրամատիկական թատրոնում»<sup>19</sup>:

Իր տպագորությունները ներկայացումից Ավ. Խսահակյանը արտահայտել է հետեւյալ խոսքերով. «Խոշոր ներկայացում էր, հարուստ ժողովրդական պատկերներով: Ամենից լավ միտքս մնացել է Գագիկ արքայի բեմ մտնելը: Դա անակնկալի բերող, հուզիչ ցույց էր: Հայոց արքան բեմի վրա հայտնվում է հրաշքի պես, ասես բոցերի միջից: Դա ինձ հիշեցնում էր Վահագնի առասպելական ծնունդը: Երկիր խարսյաշ պատանեկիկը հենց այդպես բոցերի միշտ է պատկելով է աշխարհ եկել»<sup>20</sup>:

Դեմիրճյանի պիեսի պաթոսի նշաններից մեկը, ինչպես նկատել է թատերագետը, նրա բառապահարի առանձնահատկությունն է. «Այստեղ ոգի են առնում բուրգ-պարհսալ-աշտարակ մեծիմաստ գոյականները, հողն ասես հատուկ անուն է դարձել, իսկ դրանց կողքին բարձրածայն հնչում են գոռող ածականը և ածականաբար օգտագործվող ֆայլ բառը: Դրամայի մեջ փաստորեն չկա մի տեսարան, ուր այս բառերը ամենատարբեր ձևերով չհողովակն, չկա մի հերոս, որի շուրջին չնշեն այս բառերը: Քիչ չեն հողովակում նաև խիդին ու արյունը: Բայց զայլն ու գոռողը, հողն ու պարհսպը ավելի մեծ եռանդով են մտնում գործածության մեջ»<sup>21</sup>:

Ճիշտ է նկատված, որ զայլի պարբերական հղումով Դեմիրճյանը յուրովի բանավիճում է «չի եղել մեր զայլը պղնձյա» տեսակետի դեմ:

Դեմիրճյանը գրելով «Երկիր հայրենին», իրավամբ բեմ էր հանում հայոց պատմության պղնձյա ոգին՝ ի դեմս, առաջին հերթին, Գագիկ արքայի՝ «ինձ գայլ են ասում և ճշմարիտ ես գայլ եմ և այս օրերս կպատառութեմ բյուզանդական գայլին»:

Գագիկի հետ են երկրի հայրենասիրական բոլոր ուժերը, օտարի գերության լուծը չհանդուրժող անկցիները:

Վարելով «Հայրենի հողի», հայրենի երկրի կոփվը, Գագիկը պանծացնում էր ազգային արժանապատվության և հայրենասիրական կամքի ժողովրդական պատկերացումները:

«Երկիր հայրենի» դրամայի կապակցությամբ խոսք ու զրույց է գնացել նրա թատերագրական ուղղության շուրջը. շիլերյան-ոռոմանտիկական ձայնափողային դավանանքի, թէ՞ շեքսպիրյան-ուելիստական-հոգերանական սկզբ-բունքի արտահայտություն է:

Բանն այն է, որ Դեմիրճյանի պիեսում կան և՛ շիլերյան պաթոսի նմանակներ, և՛ շեքսպիրյան հոգերանական խորացումների «արձագանքներ», ուստի և ստույգ չի վերոհիշյալ հարցադրումը:

«Երկիր հայրենին» ամենայն առումով ուշագրավ երևույթ էր հայ գեղարվեստական կյանքում՝ և՛ իբրև պատմության մեկնաբանություն, և՛ իբրև ժամանակակից հնչեղության դրամա:

## 8

Դ. Դեմիրճյանի ստեղծագործական կենսագրության մեջ նոր սկիզբ եղան Հայրենական պատերազմի տարիները: Խնչպես և պեսիք չ սպասել քաղաքացիական տարերի գրողից, Դ. Դեմիրճյանը դուրս եկավ գրական առաջին բնագծեր՝ թիկունքը և ռազմաճակատը զինելու այդ տարիների համար այնքան անհրաժեշտ հոգեկան վառելանյութով:

Ժամանակի շիկացած ալիքների վրա ստեղծվեցին ատելության գիտությամբ շնչող նրա հրապարակախոսական բազմաթիվ հոդվածները, հերոսության բարձրագույն ձևեր՝ անձնագոհությունը ներկայացնող պատմվածքները («Խոշտանգվածի ավանդը» և այլն), կեցության տարբեր եզրերը շոշափող փիլիսոփայական մանրապատումները և, վերջապես, «Վարդանանք» պատմական էպոպեան՝ հայ գրականության թափքներից մեկը:

Հայրենական պատերազմը Դ. Դեմիրճյանը դիմավորեց այնքան կենտրոնացած, այնքան սթափ, որ պատկառելի հասակում դարձավ աշխարհազորա-

կան և անգամ, ինչպես հուշագիրներն են վկայում, ցանկացավ իբրև «կամավոր զորակոչիկ» մեկնել ռազմաճակատ:

Պատերազմի տարիներին, ըմբռնելով իրադրության ճակատագրական խորհուրդը, Դեմիրճյանը իրեն պահեց հայրենիքի զինվորի պես:

' Նման կեցվածքի համար նա ուներ երկու հիմնավոր պատճառ:

Առաջին՝ վտանգը կախվել էր սոցիալիստական հայրենիքի վրա, որի հովանու տակ «փոքր» հայրենիքը կառուցում էր իր կյանքը:

Երկրորդ՝ Դեմիրճյանը առանձին ատելություն ուներ առհասարակ պատերազմների՝ կյանքը կործանող ուժերի դեմ:

Այս այս երկու շարժառիթով նա դարձավ հակապատերազմական գրող՝ այս հասկացության բովանդակ առումով: Նրա հակապատերազմական տրամադրությունները տեղ գտան նաև «Վարդանանք» պատմավեպում, որը, իր իսկ՝ Դեմիրճյանի վկայությամբ, ստեղծվեց իրեն սովետական ժողովրդի մղած ազատադրական-հայրենական պատերազմի պատմական զուգահեռ՝ ժամանակակիցներին պատմության դասերով զինելու մեծ խորհրդով: Մի հոդվածում Դեմիրճյանը հետեւյալ բացատրությունն է տվել իր պատմավեպի ծննդյան շարժառիթին: «Վարդանանք» պատմավեպը ես գրեցի Հայրենական պատերազմի ժամանակ, երբ վճռվում էր մեր հայրենիքի լինել-վինելու ճակատագրական խնդիրը... ես զգացի, որ «Վարդանանքի» պահանջը օդի մեջ է... ես հիշեցի Հինգերորդ դարը, հայ ժողովրդի կյանքի ու մահի կոփվը պարտից բռնակալության դեմ և քանի որ ժողովուրդը դուրս էր եկել հայրենական պատերազմի՝ ես կամցա հիշեցնել նրան, որ նա հնում շատ է ունեցել հայրենիքի պաշտպանության պատերազմներ, որոնց մեջ ամենամեծը Վարդանաց պատերազմն էր»<sup>22</sup>:

Սեր թվակալության դարը հայոց պատմության մեջ շրջադարձային ժամանակաշրջան էր: Այս դարում ստեղծվեցին հայոց գրերն ու դպրությունը, որոնք գաղափարախոսական հզոր ուժ դարձան ազգային գոյության պայքարում (դեռ 387 թվականին, Հայաստանը՝ երբեմնի հզոր ու անկախ պետությունը, բաժանվել էր Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև):

Սասանյանների պարսկական՝ դինաստիան, շարունակելով Շ-ըոհ քաղաքականությունը, արդեն V դարում փորձում էր ոչնչացնել պետականության վերջին մնացորդները Արևելյան Հայաստանում, իսականել ազգային կուլտուրայի զարգացումը, հայերի մեջ ևս հաստատել զրադաշտական կրոնը (Կրակապաշտությունը):

Պարսկաստանի վարած քաղաքականությունը խոր գեգահություն է առաջ բերում ժողովրդական լայն խավերում և նրանց բարձրացնում ազգային-ազատագրական պայքարի: 451 թվականին հայերի և պարսիկների միջև տեղի է ունենում վճռական ճակատամարտ, որը հայ ժողովրդի պատմության մեջ մտել է Ավարայրի ճակատամարտ անունով:

Ժողովրդի ազատագրական պայքարը գլխավորում էր հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, որի անունը սրբագրութելով, դարձել է ժողովրդական հերոսի խորհրդանշան: Թեև Ավարայրի ճակատամարտում հայկական զորքը պարտություն կրեց, բայց պարսից կողմն էլ շափաղանց մեծ կորուստներ ունեցավ և տեսավ; որ դյուրին բան չէ կոտրել հայերի ազգային անկախությունն ու պետականությունը, նրանց՝ հայրենիքն ու լեզուն պաշտպանելու վճռականությունը:

Դա է Վարդանանց պատերազմի վիթխարի նշանակությունը հայոց պատմության մեջ: Այս բախտորոշ իրողությունն է կազմում Դեմիրճյանի «Վարդանանք» վեպի պատմական հիմքը:

Հայ ժողովրդի ազատագրական կրիվների դարավոր շղթայում ամենանշանակած վարդանական օդակը լինելով, վարդանանց շարժումը երևությունը ու միայն պատմական կոնկրետ ժամանակի՝ Վ դարի, ալեքայոց տարեգրության հետագա բոլոր դարերի համար ունեցած բացառիկ նշանակությամբ:

Դ. Դեմիրճյանը «Վարդանանքը» համարել է իր հայրենասիրական-քաղաքացիական, «մարտական պարտի» հատուցումը: Ահա թե ինչու վեպը նա գրել է ստեղծագործական հազվագյուղ ներշնչանքի՝ էխտազի պայմաններում, գործի դրել «ներքին այրման» շարժիները՝ որ առաջ ընթերցողներին հասցնելու հայրենասիրության պատգամը:

Օրագրային ցուցմունքների համաձայն, «Վարդանանքի» շարադրանքը Դ. Դեմիրճյանը սկսել է 1943 թ. փետրվարին և երկու (Ա և Բ) մասերը միասին ավարտել 1946 թ. մայիսի 14-ին: Այդ ժամանակամիջոցը եղել է տառապալից, անքուն զիշեների, դժվարությունների հաղթահարման, կամքի մեծագույն լարման, ստեղծագործական կենտրոնացման ու ներշնչանքի շրջան:

Երագրային մի գրառում (1944 թ. մայիսի լույս 3-ի գիշերվա) պատմում է. «Եթե իմ ընթերցողն իմանա, թե ինչ ծանր գիշերների արդյունք է «Վարդանանքը»: Ա մասը գրվեց, ըստ մեծ մասին, հիվանդանոցում, իսկ սկիզբները, որ մաս-մաս գրում տպել էի տալիս ամսագրում՝ դարձյալ մեծ մասը ասթմատիկ գիշերների ծնունդ էր... Աստված կամ սատանան հասնի ինձ»:

Մի այլ գրառում (1944 թ. մայիսի լույս 22-ի ժամը 2-ի) պատմում է. «Տաժանելի վիճակում (խեղում է սաստիկ) գրում եմ «Վարդանանքը»: Թե սա ինչպես է ազգելու վեպի որակի վրա, թող դատի սերունդը... Գրիշը հազիվ եմ բռնում...»:

«Վարդանանքը», գիտական հրատարակության (7-րդ և 8-րդ հատորների) ժամանակակից գրականության (7-րդ և 8-րդ հատորների) ժամանակակից գրականության համաձայն, ունեցել է երեք խմբագրություն:

Առաջինը Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահպող ձեռագիրն է (451 և 452 Փոնդեր), երկրորդը՝ առաջին հրատարակությունն է (Ա գիրք—1943, Բ գիրք—1946), երրորդը՝ վերամշակված տարբերակն է՝ 1951 թվականի հրատարակությունը:

Թեև 1954 և 1956 թթ. հրատարակություններում Դ. Դեմիրճյանը դարձյալ վերամշակել է վեպը, սակայն փոփոխությունները նույնքան էական չեն, ինչպես երրորդ խմբագրությունը:

Այսուամենայնիվ վեպի հեղինակային վերշնական բնագիրը համարվում է 1956 թվականի հրատարակությունը:

Դ. Դեմիրճյանին, բնականաբար, վեպը շարադրելիս, ամենից առաջ գրադեցնում էր Վարդանանց պատերազմի բնույթի, նրա բովանդակության և շարժի ուժերի խնդիրը:

1943-ին գրած «Վարդանանց պատերազմը» պատմագիտական հետազոտության մեջ Դեմիրճյանը հետևյալ կերպ հնութագրեց Ավարայրի ապստամբության խորհուրդը. «451 թվականի պատմական դեպքերը հայ ժողովրդի պատմության մեջ որքան փոքր ու համեստ են թվում ըստ երևույթին, սակայն խոշոր լն ու խրատական: Նախ և առաջ այդ դեպքերը օղակների շարունակությունն են այն պայքարի, որ մղել է հայ ժողովրդը օտար տիրակալություն-

ների դեմ և երկրորդ, դրանց մեջ խտացավ և ամբողջությամբ արտահայտվեց հայ ժողովրդի բոլոր պոտենցիալ ուժերն ու խարակտերը:

Վարդանանց պատերազմը մի տիպիկ իրադարձություն եղավ մեր պատմության մեջ, որովհետեւ այդ անհավասար և վճռական պայքարի մեջ հայ ժողովրդը դուրս եկավ ազատագրական պատերազմի և օրհասական կորվ մղելով՝ հասավ իր նպատակին, այն է՝ պաշտպանեց իր ազգային ինքնուրիալը:

Վարդանանց պատերազմը ժողովրդական պատագրական պատերազմ է իր բոլոր հիմնական և խարակտերիկ գծերով<sup>23</sup>:

Ոչ միայն հիշված հոդվածում, այլև բազմաթիվ ուրիշ առիթներով Դեմիրճյանը անդրադարձել է Վարդանանց շարժման հայրենական-ազատագրական-նամամաժողովրդական-հաղախական բովանդակությանը, Ավարայրի վրայից վերցնելով իբրև բացառապես քրիստոնեական հավատի համար մղված կրոնական պատերազմի, նահատակության պատերազմի պատկերացումը։ Վարդանանց պատերազմը համարելով ազգային անկախության և ինքնուրույնության ժողովրդական գործ, Դեմիրճյանը, այդուամենայնիվ, բնավ էլ չի բացասում նահատակության մոմենտը, որը, իր իսկ բացատրությամբ իբրև պատմական փաստ տեղ պետք է ունենար վեպի հյուսվածքում։

Այս առումով անշափ հետաքրքրական է վեպի ոռուսերեն թարգմանության շարժառիթով մոսկովյան հրատարակիչներին 1948 թ. փետրվարին գրած նամակում եղած մեկնաբանությունը։ Դ. Դեմիրճյանը գրում է.

«Եելամիտ համարեցի հրաժարվել հայ-պարսկական պատերազմը կրոնական պատկերելու մտքից։ Ես համաձայն եմ, որ այդ պատերազմը ըստ էության բնավ էլ կրոնական չէ, որ այն ծագեց ժողովրդի վճռով և ցանկությամբ։ Տիշտ է, հոգեռականությունը պաշտպանում էր եկեղեցին ու կրոնը, նույնը մասամբ և հայ ֆեոդալները, բայց այս երկու դասակարգերը կրոնի և իրենց հոգերի հետ պաշտպանում էին իրենց հայրենիքը, ազատությունը։ Սակայն դրա հետ միասին վեպի սյուժեն շարադրելիս, շկարողացա շրջանցել պատմական փաստը և դուրս նետել այս Պարսկական արքունիքի հիմնական նպատակը՝ հայերի վերջնական հնազանդեցումն ու ձուլումը, ծածկված էր հրովարտակի պաշտոնական բողով՝ «ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականությունը»։ Հենց այս ձեւակերպումից էլ հայերը բռնեցին։ Այսպիսով, կրոնի մասին խոսակցությունը իբրև «վեճի առարկա» կամա-ակամա անխուսափելի մտավ ինչպես պատմական իրադարձությունների, այնպես էլ վեպի մեջ։ Ահա և անուշադիր ընթերցողի այն տպավորությունը, թե պատերազմը ցույց է տրված իբրև կրոնական»<sup>24</sup>։

Այսպիսով, բնավ շբացառելով պատմական իրադարձությունների մեջ իբրև պատմական փաստ տեղակայված քրիստոնեական հավատի երանգը, Դ. Դեմիրճյանը Վարդանանց պատերազմի գլխավոր բովանդակությունը համարում է՝ ժողովրդյան մաքառումը, որին իրենց մասնակցությունն են բերում նաև հոգեռականներն ու նախարարները, որոնք «ժողովրդի հետ գործում են ոչ թե միասնական հոսքով, այլ իրենց դասակարգային շահերին համապատասխան՝ սոսկ տակտիկական նկատառումներով, միավորելով բոլոր հայերի ջանքերը»<sup>25</sup>։

Դեմիրճյանը շարունակ ընդգծում է Վարդանանց պատերազմի համաժողովրդական էությունը, ասպարեզ հանելով հարցի նաև փիլիսոփայական ըմբը նույնությունը։ «Ժողովրդական կամ հայրենական է այն պատերազմը, որին ժողովրդը, իր շահերի բարձր գիտակցումով, իր հայրենիքի անկախության ու ազատության համար մասնակցում է բացի իբրև զորք, նաև կամավորական աշխարհագորի

կամ պարտիզանական զորամասերի ձևով, հանդես բերելով իր կամքը և ծեռներեցությունը: Այդպիսի մասնակցությունը ժողովրդի կողմից փոխում է թե՛ պատերազմի ձևերը, թե՛ նրա ուժը և թե՛ գաղափարը: Պատերազմը ընդունում է այլ բնույթի: Դա ծավալում, դրսկորում է ժողովրդի ողջ ֆիզիկական և հոգեկան կարողությունները, դառնում է իրոք էպիկական, համաժողովրդական, հայրենական»<sup>26</sup>,

Կ. Տիրատուրյանի հոդվածում նշված են դեմիրճյանական ուրիշ մտորումներ Վարդանանց ժողովրդական շեցափ կապակցությամբ:

Այսպես, մի տեղ Դ. Դեմիրճյանը գրում է. «Վարդանանց պատերազմը չունի կամ քիչ ունի պալատական, վերնախավային, կամերային սյուժեների հարուստ նյութի: Դա ժողովրդական մասսաների նյութ է... «Վարդանանքը» ժողովրդական սյուժեն է, ժողովրդի պատմություն է»<sup>27</sup>:

Մի ուրիշ տեղ Դեմիրճյանը գրում է. «Ես ըմբռնել եմ պատերազմի հայրենասիրությունը իրեւ արտակարգ, ընդհանուր աղեաի, երկրաշարժի ֆորս մաժոր, որ նվազեցնում է (ոչ դանդաղեցնում) ներքին պատմության շարժումը, թափը»<sup>28</sup>:

Վարդանանց պատերազմի գլխավոր շարժիչ ուժը համարելով ժողովրդական կամքը, Դեմիրճյանը, իհարկե, չէր կարող նվազեցնել նաև այն դերը, որ կատարել էր հոգևորական-իշխանական դասը պատերազմի համաժողովրդականությունը պահպանելու առումով: Իր պատմագիտական մտորումներում Դեմիրճյանը մեկ անգամ չէ, որ խոսում է պատմության մոդեռնացման վլանգից, հատկապես դասակարգերի ներքին հակամարտությունից, նրանց շահերի հակադրությունների ընդգծումից, որը, իր իսկ ասելով դիսունանսներ կմտցնի հայրենիքի պաշտպանության գլխավոր նպատակասլացքի մեջ: Ժողովրդական ցասումը, Դեմիրճյանի ասելով, շատ էական խմբագրումներ է մտցնում նաև նախարարների և հոգեւորականության վերաբերմունքի մեջ, կարգավորում ճիգերի ու ջանքերի միացումը՝ հանուն հայրենիքի պաշտպանության:

Դեմիրճյանը պատմության խոր թափանցող էր և հանրագիտակ: Դա եթե վկայում է ոչ միայն «Վարդանանց» շարժման բովանդակության բազմակողմանի քննությունից, այլև առհասարակ Վ դարի հայ իրականության քաղաքական-մշակուրային լայն ֆոնի խոր իմացություններից:

«Վարդանանց պատերազմը» հետազոտության մեջ Դեմիրճյանը Ավարայրի «մեծ խորհուրդը» արժեքավորելուց զատ անդրադառնում է նաև «մասնավոր խնդիրների»՝ հայկական ուազմագիտության առանձնահատկություններին, Հայաստանի քաղաքական կողմնորոշումներին և նրան բնորոշ պետականության ձևին (կիսաանկախ գրությունն իրեւ պետականության տիպիկ ձև), հարեւան տերությունների շրջապատում Հայաստանի գրաված դիրքին, քրիստոնեության և հեթանոսության ներքնապայքարին, Վարդանի և Վասակի «առեղծվածին», բազմաթիվ ուրիշ խնդիրների:

Դեմիրճյանի աշխատության մեջ, բնականարար, հատուկ տեղ է գրավում բանասիրության մեջ բազմից արծարծված մի խնդիր ևս: Դա Եղիշեի «Վարդանի և հայոց պատերազմի մասին» գրքի աղբյուրագիտական հավաստիթյան խնդիրն է, որը Հարցականի տակ էին դրել մի շարք պատմաբան-բանասերներ սկսած Մ. Գարգաշյանից: Հակադրվելով «կասկածամիտ» բանասերներին, որոնք Եղիշեի գիրքը համարում էին հետագա ժամանակների «կեղծիք», իսկ պատմիչին՝ դեպքերը գեղարվեստորեն շարադրող և ոչ թե գիտականորեն

վերլուծող, Դեմիրճյանը հերքում էր այդ թյուր պատկերացումները, գտնելով, որ Եղիշեն «պատմագրության յուրահատուկ ձև է», բանաստեղծական կրակուտ ոճի մեջ իսկ զարմանալի ու ալիստական և վավերական, այնքան վավերական, որ Ավարայրին դիմող և ոչ մի գրիչ չի կարող շրջանցել այդ «բազմախորհուրդ աղյօտք»:

Դրա օրինակը տվեց նաև ինքը, որ պատմագիտական այլայլ աղբյուրների շարքից «Վարդանանքում» ամենից շռայլորեն դիմեց Եղիշեի «Պատմության...» կաղմնորոշումներին, իհարկե, իր գեղարվեստական աշխարհի ուժեղ կնիքով:

Եղիշեի Պատմությունից Դեմիրճյանը քաղել է հարուստ տվյալներ թե բուն ապստամբության ընթացքի և թե ժամանակի քաղաքական իրադրության— Հայերի ու պարսկական հարաբերությունների, նաև կրոնական զավանաբանական պայքարի վերաբերյալ: Դեմիրճյանը չէր կարող, իհարկե, համամիտ լինել Եղիշեի այն մտքին, որի համաձայն Վարդանանց պատերազմը մղվում էր Հանոն քրիստոնեական կրոնի գաղափարախոսության և դրա տակ շտեսնել պատմական-քաղաքական շատ ավելի մեծ իմաստ: Դեմիրճյանը ցույց տվեց, որ չնայած կրոնական տարազին, 451 թվականին հայերի բարձրացրած ապստամբությունն ուներ քաղաքական նպատակներ, արտահայտում էր հայրենիքի անկախության ժողովրդական գաղափարախոսությունը: Զգալով հայրենի հողը կորցնելու վերահաս սպառնալիքը, ժողովրդական տարերքի գլուխն անցան ժամանակի առաջավոր նախարարները, ինչպես նաև հոգևորական գործիչներ:

Դիմելով հնագույն պատմիչներին (Եղիշեից բացի նաև Ղազար Փարպեցուն, որի «Պատմության» երկրորդ գրվագր ևս նվիրված է Վարդանանց ապրությանը), Դեմիրճյանը քննադատարար է մոտեցել նրանց որոշ հայացքներին: «Վարդանանքը» գրելիս Դեմիրճյանը բավականաշափ շռայլորեն օգտագործել է պատմիչների գրքերում հիշատակված փաստերը՝ դեպքերի ժամանակագրությունը, պատերազմի մասնակիցների գործերին վերաբերող տվյալներ և այլն: Բայց գրողը հանդես եկավ Վարդանանց պատերազմի էության իր մեկնաբանությամբ, որով ժխտվում էր «կրոնական հավատի համար նահատակության» տեսակետը և հաստատվում այն հայացքը, որ Վարդանանց պատերազմը իր բավանդակությամբ ու խնդիրներով, խորապես ժողովրդական, ազատագրական կոփվ էր: Դեմիրճյանի լուսաբանությամբ, հայ ժողովուրդը Վ դարում այնքան հասունացավ, որ լիովին գիտակցեց պարսկիների առաջարկած կրոնակիության ահավոր հետևանքներն իր գոյության համար և մեկ մարդու պես ոտքի կանգնեց՝ արյամբ պաշտպանելու հայրենի հողը, հայրենական կուլտուրան, իր ազգային արժանապատվությունը:

Արտահայտելով ժողովրդական ապրումները, Վարդան Մամիկոնյանը գեպքերից առաջ ազդարարում էր. «...Բոնավորը բնաջնջման սուրբն է մեկնում մեր աշխարհին: Հավատքի պատրիվակով միտում է մեր ինքնազլիւթյանը, մեր աշխարհին, մեր ազգությանը... Մեր նախնիները մեզ կտակեցին հայրենիք և ազգ: Արյամբ պահպանեցին նրանք մեր ազատությունը, հայրենիքը և մեզ հրաման թողին անբասիր պահել այդ սրբությունները: Պաշտպանենք մեզ կտակած գանձերը: Մեռնենք, շտանք թշնամուն ոչինչ»:

Խորապես ըմբռնելով V դարի պատմության առանձնահատկությունները, Դ. Դեմիրճյանը ստեղծեց հայրենասիրության շերմ զգացմունքով ներծծված,

ժամանակաշրջանի ոգին ու հոգերանությունն արտահայտող մի երկ, որը հայ պատմավեպի գագաթներից մեկն է:

Ո՞րն է վեպի սյումեն՝ սեղմ գծերով:

Պարսկաստանի բննակալ թագավորը՝ Հազկերտ Զ-րդը, մի «Թուղթ» է առաքում Հայոց աշխարհ, հրաման արձակելով՝ քրիստոնեական Հավատի փոխարեն ընդունել զրադաշտական կրոնը: Նախարարներից էլ պահանջում է, որ գան Տիգրոն՝ իր աթոռանիստ քաղաքը և կրոնափոխության երդում տան:

Հազկերտի հրովարտակը, որ պարսից շահերի վաղեմի քաղաքականության մի նոր արտահայտությունն էր, ամբողջ Հայաստանով մեկ բարձրացնում է դժգոհության ալիք: Սպասվող արհավիրքը, որ սպանում էր վերջ տալ հայությանը, բոլորին գնում է ծանր մտատանջության մեջ: Նախարարների մեծ մասը, որոնց գլխավորում էր Հայոց սպարապետ Վարդան Մամիկոնյանը, համաձայն չէ պարսից թագավորի պահանջին: Միարանվելով, նրանք մտորում են իրենց հետագա անելիքների շուրջը:

Հազկերտը հայ նախարարներին կանչում է իր աթոռանիստ քաղաքը՝ Հավատափոխության: Նախարարների մի մասը, մարզպան Վասակ Սյունեցու հետ միասին, ընդունում է նոր կրոնը: Իսկ Վարդանը իր համախոհների ու կողմնակիցների հետ, կեղծ երդում է տալիս, որպեսզի ժամանակ շահի և ուժերը համախմբի: Դա միակ ելքն էր՝ ստեղծված դժվարին կացությունից գուրս գալու համար: Տիգրոնից վերադառնալով Հայաստան, Վարդանը միարանում է նախարարական տներին և գլխավորում երկրում հասունացող ժողովրդական ապստամբությունը:

451 թ. մայիս ամսին, Տղմուտ գետի ափին, Ավարայրի դաշտում, տեղի է ոմենում Հայերի ու պարսիկների ճակատամարտը: Այդ ճակատամարտում թեև Վարդանը և նրա զինակիցներից շատերը զոհվում են, բայց ժողովուրդը կարողանում է պաշտպանել իր անկախությունը: Հայերը պահպանում են իրենց նախկին իրավունքները և օգտվում զինադադարից՝ պատրաստվելու նոր ճակատամարտերի:

«Վարդանանքի» այս բովանդակությունը հիմնական գծերով համապատասխանում է պատմական անցքերի հաջորդական ընթացքին:

«Վարդանանքը» սյուժետային ճյուղերով, կոնֆլիկտներով և կերպարներով հարուստ, բարդ գրվածք է: V դարի Հայոց պատմության և ժամանակի բոլոր կողմերը՝ քաղաքական, սոցիալական ու անձնական կյանքի համարյա բոլոր ընագավառները, հասարակության բոլոր խավերը ներգրավված են վիպական սյուժեի մեջ:

Մյուս սյուժեն առաջ են մղում երկու հիմնական կոնֆլիկտ: Դրանցից մեկը Հայաստանի և Պարսկաստանի կոնֆլիկտն է, մյուսը՝ վարդանաց ու վասակյանց, այսինքն՝ Հայրենասերների ու Հականայրենասերների կոնֆլիկտը: Եյս հիմնական գծերից բացի, վեպում գործում են իրենց նշանակությամբ նույնպես կարևոր, բայց ստորադաս հարաբերություններ, ինչպես ժողովրդական խավերի՝ շինականների սոցիալական բողոքը նախարարական տների շահագործման դեմ, նախարարական առանձին տների անմիաբանությունը և այլն:

Վեպի գործողության ու կոնֆլիկտի զարգացման համար Դեմիրճյանն ստեղծել է լարված հանգույցներ, որոնք վճռական դեր են խաղում նրա կառուցվածքի մեջ:

Առաջին հանգույցը Հազկերտի հրովարտակն է և նրան տրվելիք պատասխանը: Այստեղ արդեն երեսմ են տարբեր դիրքավորությունները: Եթե Վարդանը և ժողովուրդը այդ հրովարտակը գնահատում են որպես ստորացման ու ազգառոշացման ծրագրի սպառնալիք, ապա Վասակի կողմնակիցները դավանափոխության առաջարկը համարում են սուկ կրոնով նույնանալու մտադրություն:

Վեպի կառուցվածքի մյուս կարեոր հանգույցը պարսկական արքունիք գնալու հարցի քննությունն է: Հայ նախարարների մի մասը պահանջում է անհապաղ մեկնել Տիգրիս, իսկ մյուս մասը ելք է որոնում ավելի սթափ գնահատելու ստեղծված իրադրությունը և ավելի նպաստավոր վիճակ ձեռք բերելու այդ վիճակից: Տագնապալից մթնոլորտում ավելի որոշակի է դառնում վարդանանց ու վասակյանց դավանած ուղիների տարբերությունը:

Հերթականորեն երրորդ էական հանգույցը Անգղի տարերային ճակատամարտն է, ուր Վասակը վերջնականապես ի հայտ է բնի՛ւմ՝ իր դիրքորոշումը, իսկ ժողովուրդը՝ իր ապստամբ ոգին:

Այս բոլոր դեպքերը, լարվելով ու շիկանալով, գալիս հասնում են Ավարդի ճակատամարտին, որը «Վարդանանքի» բարձրակետն է:

Հայ գրականության մեջ թերեւս չի կարելի ցույց տալ մի այլ ստեղծագործություն, որն այնքան շատ հերոսներ ունենա, որքան «Վարդանանքը»: Դա մարդկային ամենատարբեր խառնվածքների ու ամենատարբեր սոցիալական խմբերի մասին պատմող վիթխարի կտակ է: Ծագմական գործիներ ու նախարարներ, պետական անձնավորություններ ու եկեղեցականներ, գրչի ու մտքի մարդիկ, զինվորներ ու գեղուցներ, ծերեր ու պատանիներ, ուսուցիչներ ու քարոզիչներ, արհեստավորներ ու արվեստասերներ, մայրեր ու աղջիկներ, դեսպաններ ու լրտեսներ՝ վիպասանը կարողացել է այս բոլորին ներկայացնել իրենց բնավորությամբ ու հոգեբանությամբ:

«Վարդանանքը» հայ գրականության այն հազվագյուտ երկերից է, որտեղ հիանալի պահպանված է ուելիստական արվեստի հանրածանոթ պահանջը՝ ամեն մի կերպար և որոշակի մարդկային անհատականություն է, և, միաժամանակ, սոցիալական որևէ հոսանքի ներկայացուցիչ:

Դեմիրճյանի տիպադրման ու անհատականացման վարպետությունը նրա ուրիշ ու մի գործում չեր փայլել այնպիսի ուժով ու այնքան բազմակողմանիորեն, որքան «Վարդանանքում»: Կերպարները տարբերվում են միմյանցից ու միայն իրենց բնավորությամբ, այլև նրանց կերտման միջոցներով: Ներտառների մի մասին Դեմիրճյանն օժտում է էպիկական-հերոսական գծերով, մյուսին՝ բնարական տարբերքով, երրորդի հանդեպ բանեցնում է երգիծական (կերպարագծման) հնարքը: Վիպասանը գործի է դրել իր բոլոր հնարքորությունները՝ կենդանագրելու 1500 տարվա հեռավորությամբ մեզանից բաժանված մարդկանց զգացմունքների ու մտքերի, կրթերի ու երազների աշխարհը:

Հայ ժողովրդի ազգային սրբություններից է Վարդան Մամիկոնյանը, որի անվան շուրջը ժողովուրդն ստեղծել է բազում ավանդություններ և սերունդների հշողության մեջ անմահացրել նրան: Դեռևս Ավարայրի երգիշը՝ եղիշեն, իր պատմության մեջ սրբագրծեց Վարդանին, մի ամբողջ ժողովրդական ապստամբություն կոչելով՝ «Վարդանի պատերազմ»:

Այնքան մեծ է եղել Վարդանի գործի հմայքը, որ հետագա դարերում հայ ժողովուրդը, մեծով ու փոքրով, տոնել է «Վարդանանց օրը»: Վարդան Մամիկոնյանի պատկերը եղել է ամեն մի հայ օշախում, հայ աղջիկներն իրենց

օժիտների մեջ տարել են նրա պատկերը, իսկ ժողովրդական գուսանները մեր նախնիների գովերում առաջինը հիշել են «քաջն Վարդանին»:

Ինչպես պատմության ու ժողովրդի հիշողության մեջ, այնպես էլ Դեմիրճյանի վեպում ազատագրական պայքարի գլխավոր դեմքը Վարդան Մամիկոնյանն է:

Պատմության մատյաններում մեծ անուն թողած անձնավորության գրական կերպար ստեղծելը գեղարվեստական դժվարին խնդիր է. գրողից պահանջվում է ոչ թե հերուստ սրբապատկեր, այլ նրա մարդկային կենդանի բնավորությունը: Բացի այդ, ամեն մի գրող պարտավոր է իր ժամանակի խոսքն ասել պատմական հերոսի մասին: Դեմիրճյանը, գծելով Վարդան Մամիկոնյանի կերպարը, մի կողմ է դրել քրիստոնեական նահատակի ավանդական ու հացած պատկերացումը և բացահայտել զորականի, քաղաքական գործիք և մարդու կենդանի խառնվածքը: Ինչպես պատմական մյուս վեպերի դրական հերոսները, այնպես էլ Դեմիրճյանի Վարդան Մամիկոնյանը, հայրենասեր է իր բովանդակ էությամբ: Նա ամեն ինչից բարձր է դասում հայրենիքի շահը: Խաղմական մարտերում թրծված հայոց սպարապետը՝ մարմնացնում է հայրենիքի մաքառումները, տենչերը, երազները և պատրաստ է գլուխը դնել հայրենյաց կովի զոհասեղանին: Բազմաթիվ դրվագներում՝ սկսած Հազկերտի հրովարտակից մինչև Ավարայրի ճակատամարտը, Դեմիրճյանը բացահայտում է Վարդանի հայրենասիրական բարձր գիտակցությունն ու ներշնչանքը: «...Այն, որ ավանդ ենք ստացել մեր նախնիներից՝ մեր հայրենիքը, մեր հավատությունը, մեր իշխանությունը,—դա չենք տա ոչ ոքի»,—այսպես է խոսում Վարդանը ոչ թե յուրայիների հետ, այլ պարսից արքունիքում: Նրա ամբողջ գործունեությունն այս հայրենասիրական ուսմտի իրականացումն է: Ոչ միայն ինքն է զոհվում՝ հասարակ զինվորների հետ բաժանելով պատերազմի բոլոր դժվարությունները, այլև հայրենասիրական սխրագործության է առաքում որպես՝ Զոհրակեն:

Մամիկոնյան նշանավոր տոհմի բարձր առափենությունների կրողն է Վարդանը: Հայրենասիրության առաջին դաստիարակը եղել է մայրը՝ Մամիկոնյան Մեծ Տիկինը, որն իր ոգեշնչությունը խոսքերով անձնագործության դասեր է տալիս և Վարդանին, և հայրենի հողի պաշտպան գեղջուկներին:

Վարդանի հայրենասիրությունը մնունդ է ստանում այն գիտակցությունից, որ իմաստուն կերպով ձևակերպել է Եղիշեն իր Պատմության մեջ. «Զգիտակցված մահք մահք է, գիտակցված մահք՝ անմահություն»:

Դեմիրճյանը, ի դեմս Վարդան Մամիկոնյանի, ներկայացրել է ոչ միայն հայրենասեր-զորականին, այլև հայոց պատմության իմաստը ըմբռնող խելացի քաղաքագետին: Թերևս բոլորից լավ նա է ըմբռնում պարմիկների առաջարկած հավատափոխության քաղաքական նպատակները և ամբողջ էությամբ դիմադրում է այդ ծրագրին: Նա գիտե, որ կրոնի հարցը միայն շարժառիթ է, խորամանկորեն հյուսված որոգայթ, որը սպառնում է ամենից առաջ հայոց աշխարհի ինքնուրույնությանը: «Մեռնենք և շտանք թշնամուն ոչինչ»,—այս նշանաբանն է նա թելադրում և նախարարներին, և հայրենիքի զինվորներին: Այդ հողի վրա էլ շիկանում են նրա հարաբերությունները մարզպան Վասակի հետ, որը պաշտպանում էր կամագոր ստրկության ծրագիրը:

Վարդանը նաև խոհմ ու կշռադատող դիվանագետ է: Նրա դիվանագիտական հմտությունը երևում է մանավանդ այն ժամանակ, երբ հակառակ ուրիշ

նախարարների, առաջարկում է գնալ *Տիզբոն՝ ժամանակ շահեցը և ապստամբությունը* նախապատրաստելու համար:

Պաշտպանված է նաև այն, որ *Դեմիրճյանը* Վարդան Մամիկոնյանին ներկայացնում է որպես ժողովրդական տարերքի էպիթյունը հասկացող ու նրա անշահինդիր հայրենասիրությունը գնահատող պետական մարդու նա գիտե, որ ուամիկ դասակարգը ամենից շատ է շահագրգոված հայրենի հողի պաշտպանությամբ, ուստի և ապստամբությունը նախապատրաստելիս հենվամ. է նախ և առաջ ժողովրդի ուժի վրա: «Նախարարը վախեցած է այս կովից, —խորհում է Վարդանը, —Հոգեորն էլ իր Հոգեոր գործերն է Հոգում, Հոգին փրկում: Նա այդ կարող է անել մի քարանձավում փակվելով և կգոհանա դրանով, եթե մեր աշխարհը ոչնչանա էլ: Բայց ուամիկը կկովի, ուամիկը կփրկի աշխարհը, քանի որ հենց ինքն է աշխարհը»:

Վարդան Մամիկոնյանին վիպասանը ներկայացնում է նրա ներքնաշխարհի բազմագողմանիությամբ և այնքան անմիշական, որ թվում է, թե գործումնենք ոչ թե պատմության ավանդական կերպարի, այլ կենդանի խառնվածքի հետ: *Դեմիրճյանը* վեան անվանել է ոչ թե «Վարդան Մամիկոնյան», այլ «Վարդանանք»:

«Վարդանանքի» ակունքների շուրջը հաղորդման մեջ<sup>29</sup> Մ. Ավդալը եցյանը գտնում է, որ «Վարդանանք» բառակազմությունը իր ձևով հարում է Հնագույն հայկական և ոչ հայկական սրբա-խոսությաներ-վկայաբանություններին, որոնց անունները կազմում են մի գլխավոր նահատակի՝ գաղափարական հերոսի անունից: *Դեմիրճյանը* իրեն վերնագիր նախընտրել է հայ հին գրականությանը հարազատ Վարդանանք ձեզ, «բոլորովին նոր, ժողովրդական իմաստ գնելով նրա մեջ»:

Դա պատահական չէ: Հայոց սպարապետը գլխավորում էր ժողովրդական մի ամբողջ շարժում, ուրեմն և այդ շարժման անունով էլ պետք է կոչվեր վեպը: Շարժման մեջ իրենց տեղն ու դերն ունեն Վարդանի կողմանակից նախարարները, և Հոգեորական դասի առանձին ներկայացուցիչները, և ժողովրդական ապստամբները՝ հայրենիքի գինվորները:

«Վարդանանք» վեպում, գլխավոր հերոսից բացի, *Դեմիրճյանն* ստեղծել է իրենց քաջությամբ ու անձնազոհությամբ աշքի լնկնող մարդկանց բազմաթիվ կերպարներ:

Հայ պատմավեպերում նախարարները գերազանցորեն երկում են իրենց անմիաբանությամբ ու անիշխանությամբ: Դրական քիչ բան է ասվում նրանց առաջավոր դեմքերի մասին: *Վ դարում* նախարարությունն ազգության պահպանության ու հայրենի հողի պաշտպանության հարցում հանդիս բերեց ակներե համերաշխություն: Եղիշեն իր «Պատմության...» վերջում թվարկում է այն նախարարների անունները, որոնք իրենց կյանքը տվին հայրենիքի անկախության պայքարին: *Դեմիրճյանը* ևս, վերանայիլով միակողմանի հայացքը, վեպում կերտում է *հայրենաւելը նախարարների* մի շարք գունեղ կերպարներ: Դրանք, իհարկե, չունեն Վարդանի մտքի խորությունը և աներեր հավատը ժողովրդական տարերքի հանդեպ. ավելին՝ նախարարների մի մասը ժողովրդական «անիշխանության» մեջ տեսնում է իր դղյակի թշնամուն և չի բաժանում ուամիկի մեջ արթնացող սոցիալական գիտակցությունը: Բայց, չնայած դասակարգային նախապահարմունքին, նախարարների մեծ մասը ճակատագրական օրերին հանդիս է գալիս բարձր հատկություններով՝ պայքարի

վճռականությամբ, անձնական խիզախությամբ, հայրենասիրական վարչագծով:

Այդ նախարարներից է Ատոմ Գնումին, որը Վարդանից հետո երկրորդ դեմքն է նախարարների մեջ: Սրան Վարդանն այնքան է վստահում, որ Ավարայրի մարտի նախօրյակին կարգում է իր հաջորդը: Ատոմ Գնումին օժտված է պողպատյա կամքով, լեռնական զորականի վճռականությամբ, քաղաքագետի հավասարակշռությամբ: Առանց տատանվելու նա միանում է Վարդանանց շարժմանը և մեծ գործ է կատարում դիմադրությունը կազմակերպելու համար:

«Հայրենիքը պետք է փրկենք»,—սա է Ատոմի առաջին և վերջին նշանաբանը: Այդ վսնմ՝ նպատակի համար նա, անում է ամեն ինչ՝ նախարարների գորագնդերից ընդհանուր զորաբանակ կազմելու համարձակ ծրագրից մինչև իրեն սոցիալապես անհարազատ ուազմիկների ուժն օգտագործելը: Ատոմը երդվյալ աղնվական է, դասային վիթխարի տարրերություն է զգում իր և ուամիկի միջն, սարսափում է ուամիկի զատումից, բայց վճռական ժամին հանդես է բերում Մտքի ճկունություն՝ միասնական ճակատ կազմելով անիշխանական ուժերի հետ:

Արտակ Մոկացին՝ մյուս համակրելի նախարարը, նույնպես ունի իր հատուկ դատարկի վերաբերմունքը դեպի ուամիկները: Բայց նա չի սարսափում ժողովրդից, այլ աստիճանաբար համոզվում է, թե ինչքան զորություն և առաջնական ժերություն կա գեղջկական այն խրճիթներում, որ արժանացել են նախարարների արհամարհանքին:

Եթե Ատոմ Գնումին վեպում մարմնացնում է հայ ժողովրդի ուազմական կարովը, ապա Արտակ Մոկացին ներկայացնում է ժողովրդի իմաստությունը: Ֆաջ ծանոթ է հայոց պատմությանը և հպարտությամբ է խոսում իր ժողովրդի մասին: Ազգային արժանապատվությունն այնքան խոր արմատներ է գցել Արտակ Մոկացու հոգում, որ նա ծեծում է պարսիկներին ստորաքարշող Վասակի ազգականին և դուրս շարտում վրանից: Հայրենական գրի ու դպրության շերմ պաշտպանը նախ խիզախ կովող է: Վարդանը առաջինը նրան է ուղարկում Ավարայր, իմանալով, թե ինչպիսի անձնազոհության է ընդունակ ազգային հպարտությամբ ներշնչված երիտասարդ նախարարը:

Հայրենասերների շարքում են ուրիշ հերոսներ՝ հայոց ալյուծի հրամանատար Գրեգին Մրցանձուանցը, որն անօրինակ մի վճռականությամբ պարսկական հողից այրուծին հասցնում է Հայաստան, ծեր նախարար Վահան Ամառունին, Ընծայեց Արսենը, որ հանում հայրենիքի զոհաբերում է նաև իր սերը, Վարդանի թիկնապահ Արծվին, որդին՝ Զօհեակը, հոգևորական Պետվոնը, երեցը, մատենագիրներ Նեղիկն ու Եղիշեն, Մեծ Տիկինը, որ հանդես է գալիս «զինվորյալ ենք—հավատաք ենք» կոչակ Ավարայրում նահատակված Անահիտը, որը հանում հայրենյաց հրաժարվում է իր անձնական երջանկությունից: Հերոսական բնավորություններ են սրանք, որոնցից յուրաքանչյուրի համար Դեմիրճյանը գտել է համապատասխան գույներ և դարձել լիարժեք կերպարներ:

Հին պատմիչները, հասկանալի պատճառներով, ժլատ տեղեկություններ են թողել ժողովրդի ներքին կյանքի մասին: Ժողովուրդը, նրանց հայացքով, պատմության գլխավոր դեմքը չէր: Սովետական պատմավեպերում ժողովրդական զանգվածները ներկայանում են որպես պատմական դեպքերի վրա ազդող հզոր ուժ: Այս միտումն իր արտահայտությունը գտավ նաև «Վարդանանքում»: Հարցը միայն այն չէ, որ այստեղ կան ժողովրդական կերպարներ և ժողովրդի

անկասելի տարերքը ցուցադրող բազմամարդ տեսարաններ: Ամբողջ վեպը ծայրից ծայր շնչում է այն գաղափարով, որ ժողովուրդն է այն ուժը, որի վրա հենքելով, նախարարությունը կազմակերպեց ազատագրական պատերազմը: Վեպի առաջին գլուխներից մեկում Դեմիրճյանը ցույց է տալիս հայրենի հողը արյամբ պաշտպանելու շինականների հաստատ վճիռը: Այս տեսարանում երևում է նրանց տագնապն ու մտահոգությունը. կգնա՞ն արդյոք նախարարներն իրենց հետ:

Դեմիրճյանի նկարագրած շինականները՝ Սահակը, Առաքելը, Պողոսը, շրաղացագանը, դարբին Հովակիմը, Վարաժը, Շերանամ պապիկը, Մարտիրոսը և մյուսներն ունեն այն գիտակցությունը, որ երկիր հայրենին կանգուն է ոչ թե ազնվական ու հոգեռական դասով, այլ ժողովրդի միասնությամբ: «Անձներս վրա դնենք,—աշխարհք ազատենք»—այս նշանաբանից է խոսում գեղջուկներից մեկը Վարդանի հետ:

«Մենք ոտքի տակ ծեծված հող ենք: Կծեծեն, կտրորեն, բայց մենք հականք ու կանք: Կապրենք...»,—ասում է մի ուրիշ շինական:

Ժողովուրդն իր վեհությունը ցուցադրում է և՛ Հազկերտի հրովարտակին պատասխան տալու օրերին, և՛ պարսից հարկահաններին դիմադրելիս, և՛ Անդի տարերային ելույթների ժամանակ, և՛ Ավարայրում: Ժողովուրդը հանդես է գալիս անխորտակելի հայրենասիրությամբ, դյուցազնական ուժով, հայրենին պաշտպանելու վառ հավատով:

Ժողովուրդի ուղղամական ոգին ցուցադրելու հետ միասին Դեմիրճյանը ներկայացնում է նաև նրա շինարարական ու աշխատանքային առօրյան: Կյանքի բարձր ըմբռնում ունեն նրա հերոսները՝ լինի դա Տղմուտ գետի ափին Վարդանի հետ զրուցող շինականը, թե հեթանոսական պաշտամունքով գերված Մարտիրոսը, ախոռապան Վարաժը, թե Անահիտի վերքերը դարմանող չրաղացագանի կինը: Իրենց պարզ ու գեղեցիկ կենցաղով նրանք արտահայտում են ժողովուրդական զգացմունքների խորությունն ու կյանքի հավերժությունը:

Դեմիրճյանը կերտել է ժողովրդի հայրենասիրական գիտակցությունն արտահայտող մի շարք ցայտուն կերպարներ: Դրանցից մեկը Առաքել անունով գյուղացին է, որը գլխավորում է ժողովրդական զինվորյալների շարժումը: Նա է ժողովրդի գլուխն անցած մտնում նկեղեցի և նախարարներից պահանջում, որ մերժեն Հազկերտի հրովարտակը: Առաքելը թեև անվտանգությամբ է լցված նախարարների հանդեպ, բայց ինքը այնքան վստահություն է ներշնչում, որ Վարդանը նրան կարգում է ժողովրդական զնդի հրամանատար: Առաքելն ունի և խոր միտք, և շիտակ վերաբերունք, և հերոսական ոգի: Ենթադրենք եկեղեցում նաև նշանանում է պարսից մոռերին: և իր զնդի գլուխն անցած սխրանքներ գործում Ավարայրում:

Ժողովրդական կյանքի մի ուրիշ կողմն է ներկայացվում Սահակի միջոցով: Ըմբռու զյուղացի է Սահակը: Մոլեգին ատելությամբ նա դիմադրում է պարսիկ հարկահաններին: Նրան ենթարկում են ֆիզիկական խոշտանգման, բայց նա պահպանում է իր կամքն ու կորովը: Ժողովրդական վրեժի ու ատելության կենդանի մարմնացումն է Սահակը:

Խշակս Վարդան Մամիկոնյանի անունը հերոսության և հայրենասիրության հոմանիշն է, այնպես էլ Վասակ Սյունեցունը՝ դավաճանի: Անարժան և սոտոր մարդկանց ժողովուրդը խարանում է «Վասակ» անունով:

Հայ պատմավեպերում կան դավաճանների կերպարներ, որոնք գծված են միակողմանիորեն, ներկված բացառապես սև գույնով: Հոգեբան գրողին չեր կարող բավարարել «զտարյուն դավաճանի» կերպարը: Եվ նա ստեղծեց դավաճանի բարդ, հակասական կերպար, աշխատելով հիմնավորել Վասակի դավաճանության հոգեբանական դրդապատճառները:

Ինչպես նկատել է քննադատությունը, Վասակը ևս մարդկային այն բնավորություններից է, որոնք ունեն իրենց բացառիկության, իրենց եզակիության սին մարմարը: Նա իրավացի է համարում միայն իրեն, բարձր է դասում իր անձը: Ինը և ուրիշ ոչ ոք: Այսպիսի համարում ունեցող գերմարդք, առում է Դեմիրճյանը, պետք է որ մոլեգին փառասեր լինի, իսկ այստեղից մինչև դավաճանություն ընդամենը մի քայլ է:

Վասակն անուղղելի փառասեր է: Հայաստանի մարզպանն է, այսինքն՝ ամենաբարձր դիրք գրավող, վճիռներ արձակող մարդը: Բայց՝ ոչ մի բանի առաջ կանգ չի առնում իր դիրքերն էլ ավելի ամրապնդելու և պարսիկների վստահությունը շահելու համար: Վասակը, իհարկե, ունենում է հօգեկան տպապանքի այրող պահեր, բայց այդ ցնցումները նույնպես բխում են նրա փառտիրական էությունից: Ինչպես հայասեր չեն, այնպես էլ պարսկասեր չեն Վասակը եսասեր է: Քծնում է պարսիկներին, բայց և հոգու խորքում ատում է նրանց: Մը ավագ որդին՝ Բաբեկը, հորը նախազգուշացնում է, թե՝ «Դենշապուհը արքա է դառել մեր գլխին», Վասակն իրեն նվաստացած է զգում: Միթե ինքը չի լինելու հրամայողը և չի նվաճելու հայոց թագավորական գահը: Եսասեր մարդում մինչև հոգու խորքը վիրավորում է նաև այն, որ ինքը ժողովրդի մեջ շոնի Վարդանի հեղինակությունը, որը նախարարների մեծ մասը հավանում է սպարապետին:

Մենակ մնացած մարդ, որից երես են թեքում որդիները, խորշում են հարազատները, հեռանում են բարեկամները: Վիպասանն, այսպիսով, ներկայացնում է վտառտառենչ մարդու ողբերգությունը, որը և նրան մղում է դափանության:

Վասակի բարոյական անկմանը ուղեկցում են դաժանություններն ու արգահատելի արարքները: Նա փորձում է պարսկացնել որդիներին և չի դիմադրում, երբ Հաղկերտը նրանց պատանդ՝ պահում Պարսկաստանում: Իսկ երբ որդիներն ըմբոստանում են պարսկամոլ հոր Վարքագծի դեմ, մորթազերը, է արվում ներսիկը և սպանվում Բաբեկը: Վասակը չի ճանաշում ոչ ընտանիք (սպանում է իր հայրենապաշտպան կնոջը), ոչ հայրենիք, ոչ պատիվ ու խիղճ: Նրա աշքի առաջ պարսիկներն այրում են մագաղաթյա մատյաններով լի վանքը, կեղեքում են հայ շինականներին, անարգում են հայի ազգային արժանապատվությունը:

Նպատակը արդարացնում է միջոցները: Վասակն ընկնում է այն աստիճան, որ իր զորքով միանում է պարսկական գնդերին՝ կովեյու իր սեփական ժողովրդի դեմ:

Դենադատները Դեմիրճյանին երեմն կշտամբել են այն բանի համար, որ նա Վասակին ներկայացրել է մարդկային որոշ ապրումներով: Այսպես, մարզպանը ծանր ապրումներ է ունենում որդիների կապակցությամբ, դժվարությամբ է արձակում Բաբեկին սպանելու վճիռը: Սրանով, ըստ էության, Դեմիրճյանը խորացնում է դավաճանի նկարագիրը, ասելով, թե մինչև ուր կարող է գլորվել փառքի մոլուցքով լցված մարդը: Լինում են պահեր, երբ Վա-

սակը մտածում է նաև հայրենիքի մասին, բայց ամեն անգամ գլուխ է բարձրացնում նեղ անձնականությունը և նրան մղում ավելի մեծ հանցանքների:

Վեպում Վասակն ունի իր սավերները՝ իր նման մարդկանց շրջապատը: Դրանցից են Գաղիջոն, որ Վասակին հուզում է նորանոր հանցանքներ, դաժանության մեջ մրցակիցը չունեցող Արտակ Ռշտունին և Կողակը, մի խարդախ ծերուկ, որ առաջնորդվում է «Եղնդնեմ» ոտքերը կիրակեմ, կրարձրանամ գլուխը կկտրեմ» սկզբունքով: Վասակի դավաճանության այս սպասարկութերն ու հանձնակատարները վեպում այնպես են անհատականացված, որ դարձել են մարդկային այս կամ այն արատը մարմնացնող ավարտուն տիպեր: Ջաղիշը՝ քաղաքական ստահակության, Արտակ Ռշտունին՝ ֆեղալական դաժանության, Կողակը՝ բանսարկության:

Անցած 1500 տարվա ընթացքում Վարդանանց պատերազմը հայրենափրական ներշնչման ու ոգևորության անսպառ աղբյուր է եղել հայ ժողովրդի համար: Սկսած Եղիշեից, որ ոսկեղենիկ գրշով անմահացրեց Ավարայրի քաջերին, մինչև մեր օրերը, գեղարվեստական գրականությունը (նաև կերպարվեստը) շարունակ դիմել է Վարդանանց թեմային: Դ. Ալիշանը և Ռ. Պատկանյանը, Ս. Շահազիզը և Զիվանին, Հովհաննիսյանը և Լեռն գրել են բանաստեղծություններ, պոեմներ, դրամաներ, որոնց մեջ հավերժացրել են Վարդանանց պատերազմի հերոսներին, նրանց օրինակով դաստիարակել տասնյակ սերունդներ:

Բայց եթե հայ մատենագիրները, ի դեմս Վարդանանց պատերազմի հերոսների, փառարանել են կրոնական հավատի նահատակներին, եթե XIX դարի գրողները բավարարվել են միայն հայրենասիրական զգացմունքներ արթնացնելով, ապա Դ. Դեմիրճյանը Վարդանանց շարժման մեջ տեղադրել է ավելի խոր ու հավերժական բովանդակություն:

1944 թ. ապրիլի 25-ին իր օրագրում Դ. Դեմիրճյանը գրում է հետևյալ բանալի-տողերը: «Վարդանանքը» խորացնում եմ: Գրել պատմական հայրենասիրական վեպ (միայն) շեմ կամենում: Եթե շպիտի լինի վեպում որևէ նոր բան, շարժե գրելը: Ես կարծում եմ, որ ամեն ազգային նշանակություն ունեցող վեպ պիտի համաշխարհային, համամարդկային մի բան ունենա: Դա միայն իրավունք ո՞նի ազգային լինելու կամ արժե միայն այդպիսի ազգային գրականություն ունենալու<sup>30</sup>:

Դիմելով ազգային պատմության ձակատագրական իրադրությանը՝ Ավարայրի հերոսամարտին, Դեմիրճյանը, ի տարբերություն ազանդական պատմավեպերի միակողմանի ուղղության, հայոց պատմության նահատակների սիրանքի մեջ հայրենասիրության և հերոսության, պետականության և քաղաքական կողմնորոշման շիրտերից բացի առավելապես կարենորեց կյանքի, գոյության, աշխարհի, հոգեկան լիաբուն զգացմունքների համար մղված մաքուման գիծը:

Հայրենասիրական-քաղաքական էական խնդիրների կողքին «Վարդանանքում» գաղափարական ծանրությունը կրում է բռնություններից ազատ կյանքի մեծարման փիլիսոփայությունը, որը Դեմիրճյանի բերած նոր շեշտն է պատմավեպի ավանդական կառուցվածքում:

Վեպի մի ծայրից մյուսն անցնում է ավերիչ պատերազմների՝ կյանքի մեծագույն թշնամու, գալապարտման մոտիվը: Թնավորի սուրբ, ասում է՝ Դեմիրճյանը, — սպառնում է ոչ միայն ժողովրդի ազգային շահերին, այլև ապրելու, վայելելու, կյանքը գեղեցկացնելու մարդկային բնական իրավունքին:

Վեպի մի շարք կերպարների ու տեսարանների միջոցով գրողը ներկայացնում է հողին, ամենօրյա աշխատանքին, ազգային-ժողովրդական ավանդներին հավատարիմ մարդկանց աշխարհը. մի տեղ, հեթանոսական հին սովորությամբ, խնջուղի են նստում ծիրական վարածն ու իր ընկերները, մի ուրիշ տեղ պատանիները վայելում են նիզակավարժության հաճուչքը, մի այլ տեղ շինականը իր մտորումներն է կիսում հայրենի հողի հետ: Ապա՝ նախարարը արվում է սիրո երազներին, ուամիկը հափշտակվում է բնության գեղեցկությամբ, դեռատի աղջկա հոգում բողոքում է առաջին անմեղ սերը: Ընծայնոց Արսենն ու Խորիշան վայելում են իրենց սիրո երջանիկ վայրկյանները, նվազածուները հնչեցնում են հեթանոսական կենսուրախության երգերը, բանաստեղծն անում է գինու գովքը, պատանի զինվորները կատակում են, բազմափորձները՝ փիլիսոփայում աշխարհի բաների շուրջը:

Աշխարհի և մարդու ներդաշնակության իր որոնումներում Դեմիրճյանը վերացական իր բարոյախոսությունից եկավ դեպի խնդրի կոնկրետ-պատմական դրվագքը: Այս առումով «Վարդանանքի» մեջ ևս կարմոր դեր է խաղում նրա ստեղծագործության համար բնորոշ «հող, հատիկ, հաց» ստրուկտուրան: Մրանք, Դեմիրճյանի դասակարգումով, ոչ թե կենցաղային սովորական հասկացություններ են, այլ մարդու բարոյական որակը, կեցության դաշնությունը, զարգացման լրիվությունը սահմանող չափ ու շափանիշները:

«Հողից» դեպի «Հատիկ», «Հատիկից» դեպի «Հաց» ձգվող տարածությունը ժողովրդական աշխարհի «տիեզերքն է», «Հող—Հայրենիկ» ամրությունը, հետևաբար նաև կյանքի ներդաշնակության ստեղծարար սկզբունքը:

Բռնավորի դեմ ելած հայ շինականները զենքին հակադրում են հացն ու համբկը, գոյության բարձր ըմբռնումը զարդարելով իմաստուն ժողովրդական խոսքերով. «Ինչքան էլ զենքերը իրար զարկվեն, հաղթանակը հացին է», «Ահա զաղացը, ավլիր, սրբիր, տար—ինչքան էլ տանես, հատիկը կա ու կա»:

Հատիկի փառաբանությունը Դեմիրճյանի պաթոսի բարձրակետն է: Այդ լույսի տակ վերին աստիճանի կրոստ են հնչում հողի ամրության և վերընձյուղման հավատի մտորումները, որոնք կոշված են բացասելու արհավիրքը. «Մենք ոտքի տակի հող ենք, կանք ու կանք», «Հողը իմաստուն է, դառն և սիրելի», «Նման սերմին եղեք, որ մահ ընդունեց և ծաղիկ ընկավ»:

Պատերազմի մասին պատմող գրքում Դեմիրճյանն առանձնահատուկ միտումով ներկայացնում է ժողովրդական կյանքի այն կողմերը, որոնք արտահայտում են աշխարհի ներդաշնակության համամարդկային գաղափարը: Այդ գաղափարը այժմեական հնչեց Հայրենական պատերազմի տարիներին, երբ ֆաշիստական զալթիչները ցանկանում էին կործանել ծաղկող կյանքը, ամայացնել ամենասուրբ արժեքը՝ հողը, ժողովրդին զրկել ապրելու և երազելու իրավունքից:

«Վարդանանք» պատմավեպում ևս Դեմիրճյանը պատմովյան նյութի վրա շարունակում է «մարդու լուսաբանության» իր գեղարվեստական հիմնական խնդիրը, Վարդանանց շարժումը դիտելով ավելի ընդարձակ պլանով՝ և իրեւ ազգային հաղաքական, և իրեւ մարդկային գոյության կոփի, Ավ. Խաչակյանի բնութագրմամբ՝ «ազատության, ազատ խղճի և կյանքի կոփի»:

Այս շեշտով էլ Դեմիրճյանը «Բնական իրավունքի» վաղեմի ստրուկտուրան բարձրացնում է նոր աստիճանի, բյուրեղացնում «ազատ հոգու», կյանքի և մարդու հարազատության փիլիսոփայությամբ, հայոց պատմավեպերի մեջ բերելով իր՝ դեմիրճյանական գույնը:

«Վարդանանքը», «ռազմական քաջության» վեպ չէ լոկ, ոչ էլ «ազգային ինքնուրույնության» պատում միայն, ոչ էլ «պետականության հայկական ձեռվի» հրահանգարան՝ առավելապես:

Այս ամենն է՝ գումարած կյանքի և մարդու, բնական կյանքի և բնական մարդու վիպասանությունը, աշխարհի մեծարանքը. «Ապրենք աշխարհով... աշխարհը կյանք է»:

Մեծ աշխարհի մեջ դիսոնանսներ են մտցնում «նյութեղեն» կյանքի «տարբեր-տարրեր ձգտումները»՝ պատերազմ, արհավիրք, բռնություն, անհատապաշտություն, որոնց դեմ էլ ծառանում են հոգեկան կյանքի կարգախոսները, ուամիկներն՝ իրենց ուամկական զանգակատնից («ուամիկը կփրկի աշխարհը»), իմաստունները՝ իմաստության («ստորացեք անձերիդ մեջ, որ հարազատանք հասարակի մեջ»,—ասում է պատմիլ նղիշեն):

Դեմիրճյանը պատերազմ է հայտարարում պատերազմին՝ և՛ հայրենիքի, և՛ մարդու աղատության, վայելքի, կյանքի ներշնչանքների, ոգու ազատության համար: Հիշենք Ղևոնդ Երեցի պատվիրանը՝ իմաստունների զրույցում. «Զոհեցեք կյանքը՝ վերցրեք ավելի թանկը՝ ազատությունը»:

Այս դիտակետով Դեմիրճյանը «ուզամական կրակի» կողքին վեպում լայն, շափազանց լայն տեղ է տալիս ժողովրդական կյանքի դրվագներին ու «իր Նրազին» (Ավ. Իսահակյան), պատմության հերոսական անցուդարձը մեկնաբանելով իրեն գոյության լայնության ու շարունակականության, կյանքի հերժության աղբյուր:

Պատոհական չէր, որ հենց պատերազմին, թեկուզեւ պատմական անցյալց, նվիրված վեպում Դեմիրճյանը սրեց մարդուն վերաբերող մտորումների շարքը: Բանն այն է, որ պատերազմները՝ և հին, և նոր, ամենամեծ բռնություններն են կյանքի և մարդու վրա, բնական գոյությանը սպառնացող ծայրահեղ իրադրություններն են, մարդու ողբերգության բարձրակետերը: Դրանով էլ պայմանավորված է «Վարդանանքի» ողբերգական ուժեղ շունչը: Դա և՛ հերոսական-դյուցազներգական, և՛ ողբերգական պաթոսի վեպ է, ուր Դեմիրճյանը, պատմական կորդինատներով եկավ դեպի XX դարի հոգեոր երևույթները, դեպի մեծ ու շքեղ կյանքի իր երազը՝ հոգու ազատությունը:

Հայ պատմավեպերի շարքում «Վարդանանքը» աշքի է ընկնում ձեկի և ոճի յորբահատկությամբ: Սա երևում է այն ժամանակի, երբ «Վարդանանքը» համեմատում ենք դասական գրողների երկերի՝ Թաֆֆու «Մամվելի» և Մուգացանի «Գևորգ Մարզպետունու հետ»:

Այդ երկու գլուխգործոցները գրված են ռոմանտիկական պատմավեպի դասական կանոններով՝ կերպարների բենեռացում, խորհրդավոր հանգույցներ, ոճի հանդիսավորություն, տվյալ կերպարը այս կամ այն բարոյախոսական սկզբունքի մարմնացումը դարձնելու միտում և այլն:

Այնուհետև, դասական պատմավեպերում սյուժեն, կերպարները, գործողությունը ենթարկված են նրանց հեղինակներին զբաղեցրած այս կամ այն կոնկրետ գաղափարի բացահայտմանը: «Մամվելում», օրինակ, այդպիսի խնդիր է հայրենասիրության և հակահայրենասիրության հարցը. «Գևորգ Մարզպետունու մեջ՝ քաղաքական կյանքում անհատների անձնական հարթերությունների դերի հարցը և այլն»:

Շարունակելով Թաֆֆու և Մուրացանի պատմավեպերի ավանդները, Դ. Դեմիրճյանը «Վարդանանքում» հասավ գեղարվեստական մի նոր ոբակի:

Ժամանակի հոգեբանությունն արտահայտող կոնկրետ խնդիրներից բացի «Վարդանանքում» Դեմիրճյանն արծարծեց նաև հայ ժողովրդի պատմությանը վերաբերող փիլիսոփայական լայն խնդիրներ։ Դրանցից հիմնականը դարերի մեջ հայ ժողովրդի գոյատևման պատճառների քննությունն է, որ նա արեց՝ դիմելով Ավարայրի ճակատամարտին։ Ուրիշ խոսքով՝ պատմության կոնկրետ դրվագը Դեմիրճյանն իմաստավորեց ոչ միայն տվյալ ժամանակային հատվածում նրա ունեցած նշանակությամբ, այլև առհասարակ հայ ժողովրդի գոյության փիլիսոփայությունն արտահայտելու համար։ Այս խնդիրը լուծելու համար Դեմիրճյանին, բնականաբար, չէր կարող գոհացնել ավանդական պատմավեպը։ Դրա համար էլ նա դիմեց պատմավեպի մի ձեփ, որտեղ կերպար-ների հոգեբանական վերլուծությունից և V դարի քաղաքական բարդ իրադարձությունների պատկերացումից բացի լայն տեղ են գրավում ժողովրդի ազգային երազների ու մաքառումների ոգեշօնն գնւհատականները, հայրենի հողի ու ժողովրդի հավերժության փիլիսոփայական մտորումները, հայրենական սրբությունները պահպանելու կրքու պատգամները և այլն։

Ավանդական կանոններին ստրկաբար շհետեղող, արտահայտման նոր ձեեր սրոնող արվեստագետ—Դեմիրճյանն ստեղծեց մի գործ, որ ավելի հիշեցնուած է հերոսական ասքի և ժողովրդական դյուցազներգության ժանրը, քան վեպը։

Հայ ժողովրդի հերոսական դյուցազներգությունը ստեղծելու խնդիր ունենալով, Դեմիրճյանը, բնականաբար, չէր կարող բավարարվել ոճական մի որևէ սկզբունքի կիրառությամբ։ Եվ նա դիմեց արտահայտչական տարբեր ու բազմազան ոճերի՝ էպիկական-դյուցազներգական, քնարական, հրապարակախուսական, հոգեզնական, դրամատիկական, երգիծական և այլն։ Այս բոլոր ոճական արտահայտչաձևերը այնպես են ներթափանցված իրար մեջ, որ կաղմում են ներդաշնակ ամբողջություն։ Միասնացման հիմքն այն է, որ Դեմիրճյանը գտել է փոթորկու ժամանակաշրջանի մարդկանց զգացմունքներին ու խոհերին համապատասխանող հրաշունչ, կրքու պատումը։

«Վարդանանքի» ոճի մեջ, ինչպես և պետք էր սպասել, իշխող տեղ են գրավում մարդկանց ու երեւութիւնների պատկերման էպիկական-դյուցազներգական գույները։ Սա առավելապես վերաբերում է ուսումնական գործողություններին ու բազմամարդ տեսարաններին, ինչպես գյուղացիների ներխուժումը Աշտիշատի վանք, Անգղի տարերալին ապստամբությունը, հայոց այրուձիի վերադարձ Պարսկաստանից, Ավարայրի ճակատամարտը և այլն։ Կեպի այս հատվածներում Դեմիրճյանը երևում է իրեն իր ժողովրդի ուժով ու կամքով ներշնչված, նրա ոգու վեհությունն ու հերոսական խոյանքը արտահայտող դյուցազներգակ։

Էպիկական հերոսի գծերով են օժտված վեպի այն կերպարները, որոնք ապրում են գիտակցական բարձր կյանքով և ամեն ինչից վեր են դասում ազգային շահերը։ Այդպիսին են Վարդանը՝ պատերազմներում փորձված գորահրամանատարը, նրա զինակիցներ Աստոմ Գնունին և Արտակ Մոկացին, Ընծայնոց Արսենը և Սրբանձտյան Գարեգինը, որոնց էպիկական ոգին ցույց տալու համար վիպասանն օգտագործել է ժողովրդական էպոսին հատուկ կերպարագծան միջոցներ։

Հոգեզնության ոճին Դեմիրճյանը դիմում է այն մարդկանց կերպարագծերին, որոնք ազգային բարձր շահերին հակաբրում են իրենց անձնական նեղ նպատակները։ Այս ոճի ամենացայտուն օրինակը Վասակն է։ Դեմիրճյանը բայլ առ քայլ հետեւում է Վասակի «Ներքին մտքերի» ընթացքին, զննում

**Է նրա գործողությունների անձնական շարժառիթները և ամբողջացնում դավա-  
ճանի հոգեբանությունը:**

«Վարդանանքը» ծայրից ծայր հագեցած է դրամատիզմով, բայց մի շարք  
կերպարներ, ինչպես Փառանձեմը, ինչպես Գեղեռնը, այնքան խոր հոգեկան  
տվյալտանքներ ունեն, որ կարող էին լինել հրամայի հերոսներ։

«Գեղեռնը՝ առօրյա հարաբերություններում բավականաշափ կամակոր և  
ինքնասածի այդ մարդը, զարմանալի կերպարանափոխություն է ապրում, եթե  
բախվում է հայրենիքի դավաճան իր փեսայի՝ Արտակ Ռշտունու հետ։ Անգամ  
մահվան զնդանում նա ամուր է պահում հայրենասիրական ոգին և հնչեցնում  
իր սկզբունքներին անսասան զինվորյալի կովի երգերը։

«Վարդանանքն» աշքի է ընկնում նաև քնարական հագեցումով։ Արսենի և  
Խորիշայի սերը, Անահիտի ապրումները, հեթանոսական արարությունները,  
պատանիների զինավարժությունը նկարագրող հատվածներում Դեմիրճյանը  
երևում է որպես այդ ամենը վերարտադրող ու դրանցով զմայլվող բանաստեղծ։  
Բանաստեղծական խանդաղատանքն. է հորդում նաև վեպի այն հատվածներից,  
ուր Դեմիրճյանը պատկերում է հայրենի հողի հմաստությամբ զինված գեղ-  
ջուկներին, հայրենական կոփվորի պատրաստվող պատանիներին։

Լինելով երգիծանքի մեծ վարպետ՝ «Վարդանանքում» ևս Դեմիրճյանը  
առատորեն օգտվում է այդ ձիրքից։ Երգիծանքի հիանալի փայլատակում է,  
օրինակ, Կողակի կերպարը։ Երգիծական գույներով են ներկայացված նաև  
պարսկական արքունիքի դեմքերը։ Հագկերտը՝ իր շղածիգ պոռթկումներով,  
Միհրներսեզը՝ իր խորամանկությամբ և այլն։

«Վարդանանքի» հյուսվածքի բաղկացուցիչ մասն է նաև մարտնչող հրա-  
պարակախոսության ոճը։ Դեմիրճյանը ոչ թե դեպքերն անկիրք պատմող է,  
այլ իր հուղական անմիջական վերաբերմունքով այդ ամենը իմաստավորող։  
Հրապարակախոսական ոճն իր բարձրակետին է հանում վեպի վերցում, ուր  
«ամփոփելով» ժողովրդի ազատագրական կովի պատմությունը, Դեմիրճյանը  
գրում է. «Հայոց աշխարհի ձորերից ու դաշտերից խումբ-խումբ, մենակ, եր-  
բեմն և ստվար զանգվածներով գալիս էին գյուղացիներ, զինված ամեն ին-  
չով, որ կարելի էր։

Գալիս էին անվերջ, սպառնալիորեն անվերջ...

Այգես անցան օրեր, տարիներ, անցան դարեր...»։

«Վարդանանքը» հայ գրականության մեջ նշանակալից երևույթ է ոչ միայն  
ոճական գույների հարստությամբ, այլև ինքնատիպ լեզվով։

Հարցը միայն այն չէ, որ Դեմիրճյանը գրել է հարուստ և պատկերավոր  
լեզվով, օգտագործել է հայոց լեզվի ժողովրդական գրական (մասնավորա-  
պես գրաբարի) ալբյուրների ոճական դիպուկ ձևերը կամ էլ առանձին խնամ-  
քով չողացել է նախարարին, ուամիկին, հոգևորականին, հերոսին և դավաճա-  
նին, պատանուն և իմաստուն այրերին իրենց իսկ բնորոշ խոսքով անհատա-  
կանացնելու մասին։ Սրանք «Վարդանանքի» լեզվի կարևոր հատկանիշներն  
են։ Բայց ամենամեծ արժանիքն այն է, որ Դեմիրճյանը վեպը շարադրել է  
մի այնպիսի ինքնատիպ լեզվով, որն իր կառուցվածքով, արտահայտչական  
գույներով, նրբերանգներով ու հնչմունքով ստեղծում է V դարի 1500 տարիւա-  
հեռավորություն ունեցող ժամանակի, լեզվամտածողության պատրանք։ Սա  
ամենաղծվարին գեղարվեստական խնդիրն է, որ հաջողություն է միայն գրական  
խոշոր անհատականությաներին։



Դերենիկ Դեմիրճյան



Ստեփան Զորյան

Վ դարի հայ կյանքին բնորոշ լեզվամտածողությունն ենք զգում և նախաւարների ու ռամիկների զրուցների մեջ, և հերոսական գծերով օժտված մարդկանց պաթոսային-բարձրաշունչ խոսքերում և բազմամարդ տեսարաններ ներկայացնող նկարագրական էջերում, և բնության պատկերներում, և գուսանական հին երգերի նմանակներում (իմիտացիա):

Ահա, օրինակ, մի բեկոր իշխան Արտակի և ջրաղացպանի զրուցից.

«— Ասում ես պատերազմը վեր կացավ.— խոսեց Արտակը, որի տրամադրությունը համենայն դեպք բացվել էր Աստղիկի ուրախ լուրից,— ի՞նչ պիտի անես, շինական:

— Հաց պիտի տամ, իշխան: Ինչքան էլ զենքերը իրար զարկեն—հաղթանակը հացինն է: Դուք զենքով զարկեք, մինք հացով,— շեշտեց ջրաղացպանը, որի դեմքը ժամածովեց ավելի, բայց աշքերը խորամանկ ու հաճելիորեն ծիծաղեցին:

— Կարո՞ղ ես հաց հասցնել այնքան զորքին,— փորձեց Արտակը քթի տակ ժպտալով:

— Հողը կտա:

— Եթե շտա՞՝, լինի՞:

— Է՛, է՛, իշխանիկ, ահա ջրաղաց, ավիր, սրբիր, տար... ինչքան տանես՝ տակերում, անկյուններում, պատաժակերում հատիկը կա ու կա: Ես հաշտ մենակ, աշխարհին է: Կհասցնի: Հասցնել կտա... Հացը աշխատողին չի համում թե չէ, հաց շատ..., — խուզ ավելացրեց ջրաղացպանը և գլուխը տիսուր շարժեց:

Իշխանի ու ռամիկի այս զրուցը դպավորիշ է ոչ միայն իր պարզությամբ ու անմիջականությամբ, այլև նրանով, որ այստեղ զգացվում է հաղթարյան հայերենի կենդանի շունչը՝ նրա յուրահատուկ կառուցվածքը («հաղթանակը հացինն է», «պատերազմը վեր կացավ»), հնչմունքը («թե չէ, հաց շատ»), ոիթմն ու շեշտը («ինչ պիտի անես, շինական»):

Ահա նաև պաթոսային-բարձրաշունչ խոսքի մի օրինակ, որ հատուկ էր իշխանական դասի ներկայացուցիչներին: Հավաքվել են նախարարները և խոսում են Հազկերտի «Թղթի» շուրջը:

Մոկաց նախարարը ասում է.

«— Ես, տյարք, մտահոգ եմ ու տարակուսանքի մեջ: Իրոք՝ ի՞նչ պիտի լինի մեր պատասխանը... Մենք՝ մենք: Բայց երկրի անմիջական պատասխանատում արյաց առաջ մարզպանն է: Երկապակություն կընկնի մեջներս: Սա է դժվարինը»:

Վեճ է ծագում պատասխանի շուրջը: Վեճին մասնակցում է Ռշտումյաց նախարարը, ասելով.

«Ինչու ենք անձներս դնում հոգսերի մեջ: Հազկերտի պատասխանը թող տա կաթողիկոսը: Նա մեր կալվածներով ուռնացել, ձգուում է իշխանության: Նրանք նեղն են, նրանք կկովեն իրենց գործի համար, կցանան մեզ ևս կովեցնել: Բայց մի՞թե հոգևորականությունը մեր արյունով է կամենում հաղթել և միտել նորանոր կալվածների, ինչպես և տիրագլխության: Մեր գործը չէ հոգեոր դասի համար արյուն թափելը: Մեր արյունը մեզ էլ հերիք չի անում արդեն»:

Իր խոսքն է ասում նաև Վարդանը. «Տեր Ռշտումյաց, ոչ է ծամ վեճի և դժգոհության հոգեոր դասի հետ»:

Նախարարներից յուրաքանչյուրի խոսքի մեջ արտահայտվում է և նրանց հոգեկան վիճակը (Արտակի մտահոգությունը, Ռշտումյաց տիրոջ դժգոհու-

թյունը, Վարդանի վճռականությունը), և իշխանական դասին հատուկ բարձրաշունչ մտածողությունը: Հնադարյան հայերենի քերականական մի շարք ձեզ վերի միջոցով («Ես, տյարք, մտահոգ եմ», «միտել նորանոր կալվածների, ինչպես և տիրապլության», «ոչ է ժամ վեճի և դժգոհության») Դեմիրճյանը հասնում է ժամանակի լեզվական կոլորիտի պատրանքին:

Նույն բանը զգում ենք նաև գուսանական-ժողովրդական երգերի նմանությամբ ստեղծված բանաստեղծական տողերում: Ահա դրանցից մեկը.

Ի վեր, ի վեր ի Մասիս,  
Մասիսն ի վեր,  
Ազատ քաշերն ի վեր,  
Մասիսն ի վեր,  
Սուխն հայրենյաց ի վեր,  
Մասիսն ի վեր,  
Գոշ ազատ գոշենք ի վեր,  
Մասիսն ի վեր...

«Վարդանանք» վեպում Դեմիրճյանի լեզուն երևում է նաև այլևայլ հատկանիշներով՝ աֆորիզմի սեղմության հասնող խոր մտքերով, մարդու հոգեկան տվյալ վիճակի համապատասխանող խուքով, նախաղասության կազմության ինքնատիպ եղանակներով, կենդանի դիալոգով, բառագործածության հնագիտությամբ:

Ահա վեպի հարյուրավոր աֆորիզմներից մի քանիսը, որոնք թևավոր խոսքի փայլուն օրինակներ են՝ «Անձներս վրա զնինք՝ աշխարհ ազատենք», «Գինին պիտի երգի, ոչ իրենք», «Նման սերմին եղեք, որ մահ ընդունեց և ծաղիկ ընկավ», «Խամիկը աշխարհք է քշում առաջ», «Աստծո պատկերը շարդեց երեսին» և այլն:

Իմաստուն դարձվածքներով հարուստ է հատկապես շինականների և գիտության մշակների (Կողբացի, Եղիշե) լեզուն:

Թե՛ հեղինակային պատմողական խոսքը, թե՛ հերոսներինը՝ կառուցված է վերին աստիճանի հյութեղ, կենդանի, ինքնատիպ:

Դիտենք, օրինակ, վեպի այն հատվածը, ուր նկարագրվում է հասարակ դասի մարդկանց հեթանոսական խրախճանքը: Խրախճանքին մասնակցող յուրաքանչյուր անձ ներկայացված է իր բնավորությանը համապատասխանող կենդանի խոսքով:

Ահա, օրինակ, Վարաժը՝ հին ախոռապետը, որ այս պահին գինով է՝ մոլեգնած ու խոռվահույզ: Ահա և գինովցած մարդու խոսքը. «Նստեմ: Ես նստում եմ մենակ ու մենակ նծույգի վրա: Ուրիշ տեղ չեմ նստում... նժույգի վրա պիտի զնամ թաղվելու»:

Սա էլ Մարտիրոսը՝ իր «Ճիխական խոհարարության» պահին. «Ախր, խորովածը իր ժամն ունի, դամն ունի, համն ունի: Փայտանը առավոտվա կրակի մարմանդն է սիրում: Այ, տես, աստղը ծիկ է անում սարի կատարից—բարի ժամն է»:

Հեթանոսական խրախճանքի, ինչպես և դրան հաջորդող ձիարշավի տեսարաններում Դեմիրճյանի հեղինակային լեզուն ևս շնում է միջավայրին բնորոշ խոսքի կենդանի, բնական թրթիռներով:

«Վարդանանքում» Դեմիրճյանը հանդես է գալիս որպես դիալոգի փայլուն վարպետ: Վասակի և Գաղիշոյի, Վասակի և Կողակի, Վարդանի և Աթըլի

և այլն, զրուցները իրենց խոր հոգեբանական բովանդակությամբ դիալոգի արվեստի դասական օրինակներ են:

«Վարդանանքի» լեզուն հարուստ է նաև անսպասելի պատկերային գույներով, հին հրովարտակների ոճական ձևերով, առարկաներին տրված թարմ էպիտեսներով, մանավանդ կրկնավոր էպիտեսներով («Փղերը բլուր-բլուր գնացին», «զորքերը անտառ-անտառ շարժվեցին»), խոսքի գրաբարյան ոճավորումներով և այլն:

«Վարդանանքի» հայերենը մեր գրական լեզվի պատմության շափազանց ինքնատիպ երևությներից է:

Թեև գրական որոշ շրջանակներում Դ. Դեմիրճյանն ուներ «տարերային գրադիմ» համբավ, այնպիսի գրողի, որը ամեն ինչ իբրև թե անում է «ենթագիտակցարյան» սահմաններում, սակայն փաստերը վկայում են հակառակ իրողությունը. լինելով «ազատ» գրական խառնվածք, Դեմիրճյանը այդ «ազատությունը» զուգակցում էր մտադիր ստեղծագործական խնդիրների լուծմանը: Պերճախոս օրինակը թերևս «Վարդանանք» պատմավեպն է: Ստեղծագործական խնդիրների նպատակասլացությունն է վկայում ոչ միայն Դեմիրճյանի ջանադիր աշխատանքը պատմական աղբյուրների հետ, այլև վեպի պոետիկան, որը «ազատ պոռթկումների» և «ազատ ներշնչանքների» կողքին մեծ տեղ ունեն նաև մտադիր գեղարվեստական առաջադրությունները: «Վարդանանքի» պոետիկայի հետազոտող Զ. Ավետիսյանի մի շարք հրապարակումներ՝ «Վարդանանքի» պոետիկան» («Սովետական գրականություն», 1982, № 6, «Երկխոսությունը և մենախոսությունը «Վարդանանքում» («Սովետական գրականություն», 1979, № 2), «Ժամանակը, տարածությունը և առարկայական աշխարհը «Վարդանանքում» («Գարուն», 1977, № 5), «Դիմանկարի ստեղծման հոգեբանությունը «Վարդանանք» պատմավեպում» («Դերենիկ Դեմիրճյանի ստեղծագործությունը», «Հոդվածներ և հետազոտություններ», 1980) ցույց են տալիս, որ Դեմիրճյանը իր վեպի շարահյուսվածքը «կարգավորում էր» առհասորակ գեղարվեստի օրինաշափություններով և մասնավորապես արդիական գեղարվեստական մտածողության շափանիշներով:

Գեղարվեստական ընդհանուր նշմարտուրյան և ժամանակային կոնկրետ ճշմարտության զուգադրման օրինակներ են դիտվում վեպի ոռմանտիկական ձևի՝ «հին մողելի» քայլայումը և «նոր մողելի» հայտնագործումը (ուր զըլիսավոր տեղը հատկացվում է անցյալի դինամիկ ըմբռնմանը), «Վարդանանքի» երկխոսությունների տարրեր կերպերը (ինֆորմացիոն երկխոսության, բազմաձայն երկխոսության, ուղղիկային և այլն), առարկաների խորհրդանշանային իմաստավորումները (իրերի ֆունկցիոնալ դերի ընդգծումներով), ժամանակային միավորների («վիպական խրոնոտոպների») շարժունակությունը (կանգնեցնել ժամանակը, առաջ մղել, ետ տանել և այլն), դիմանկարների մարդարանական հիմնավորումները և այլն:

Զ. Ավետիսյանի հրապարակումներից ամենից առարկայականը և հիմնավորվածը Դիմանկարի պոետիկայի հետազոտությունն է, ուր Դեմիրճյանի արխիվային գրություններից պեղված է նաև հետեւյալ ելակետային դրությը. «Պետք է գրել, նկարագրել կինեմատոպրաֆիապես, այսինքն՝ մեծ տեղ տալ տեսողական ընկալմանը, շարժմանը, շարժումներին, գույններին, ձևերին և անպայման պլաստիկական կողմին, մանավանդ մարդկանց»:

«Վարդանանքի» դիմանկարների դասակարգումը ըստ էթնիկական հատկանիշների, ըստ սոցիալական դիրքի, ըստ հոգեբանական վիճակների և այլն,

խոսում է վիպական «քազմաձայնության» դեմիրճյանական մղոմների մասին:

«Վարդանանքը» այս առումով հայ վիպագրության պատմության մյուս նշանակալից էշն է՝ Ե. Չարենցի «Երկիր նախրի» վեպից հետո:

\* \* \*

Հայոց պատմության խորքերում թափառող դեմիրճյանական միտքը հենքում էր մաքառման երկու հիմնական արժեքների վրա: Դրանցից մեկը սուրբ էր, մյուսը գիրք՝ ազգային գոյության անկյունաքարերը:

Ունենալով հայոց պատմության ինքնատիպության այն ըմբռնումը, որ այդ պատմությանը ամենից ավելի հարազատ են հոգևոր շարժումները, հոգևոր վերածնության կողմնորոշումները, Դ. Դեմիրճյանը անհրաժեշտարար «Վարդանանք»՝ ազատագրական պայքարի մեծարանքից հետո դիմեց հայոց գրի՝ մեսրոպյան այրուբնի դյուտի վիպասին:

Ավարայրը, Դ. Դեմիրճյանի պատմագիտական կոնցեպցիայի համաձայն, մեսրոպյան գրերի հայտնագործության ուղղակի շարունակությունն էր:

«Մեսրոպ Մաշտոց» վեպը ծրագրված է եղել իբրև նույնափիսի Էպոպեական կտավ (երեք մասից), ինչպես «Վարդանանքը»՝ ազգային պատմության ամենաճակատագրական իրադրության ժամանակի մասին: Թեև 1948 թվականից ձեռնարկված վեպից 1956-ին «Սովետական գրականություն» ամսագրում (1956, № 9) տպագրվեց միայն առաջին մասը, սակայն ինչպես պարզել են բանասիրական հետախուզումները<sup>31</sup>, Դ. Դեմիրճյանը կյանքի վերջին տարին, մինչև մահվան վերջին շունչը, ապրել է իր վիթխարի մտահղացմանը մարմին տալու ծրագրերով՝ հավաքել է հսկայական պատմական նյութ, կազմել է վիպական նախագծեր, շարադրել է տարբեր մասերի հատվածները, կատարել է մեծաթիվ սևագրություններ:

Դեռ «Վարդանանքը» գրելու ժամանակ Դեմիրճյանն այն մտքին էր, որ իմաստ չունի միակողմանի՝ «միայն պատմական հայրենասիրական» շնչի վեպ ստեղծելը: Նույն այդ կողմնորոշումով էլ նա շարադրում էր հայ առաջին լուսավորիչների՝ Սահակ Պարթևի և Մեսրոպ Մաշտոցի պատմական սիրանքի գեղարվեստական պատումը՝ հիմնական շեշտը ցցելով գրերի գյուտով սկըզբնավորված մշակութային-հոգևոր վերածնության հեռանկարային նշանակության վրա, դրանով պայմանավորելով երկու կարեռը մոմենտ, նախ՝ հայրենիքի ոգու և կամքի իմաստավորումը, ապա՝ մարդկային ազատության, իբրև գոյության գլխավոր նեցուկի, գնահատումը:

Վերին աստիճանի ուշագրավ է հայոց պատմության տվյալ հատվածում Մեսրոպ Մաշտոցի հայտնության դեմիրճյանական բացատրությունը: Իհարկե, Դեմիրճյանը «խորհրդակցել է» պատմիչների և պատմաբանների հետ, օգտվել նրանցից քրիստոնեության տարածման շարժառիթի, իբրև գրերի գյուտի նախապայմանի վերաբերյալ արտահայտած մտքերից, սակայն ավելի մեծ նշանակություն է տվել օտարի բռնության դեմ ազգային կոնսոլիդացիայի նախապայմանի դերին: Նշանակալից են ՚Ի. Դեմիրճյանի արխիվի այն վավերագրերը, ուր նա խոսում է «հոգևոր վերածնությունից», «միասնությունից», գրերի գյուտով «ազգային գիտակցություն» նվաճելու գաղափարից:

Իր վեպի ավարտված հատվածներում ներկայացնելով հայ-պարսկական շիկացած հարաբերությունները (դրանց բարձրակետն է հայոց Խոսրով թագավորի գերեվարությունը), ապա նաև Հայաստանի ներքին կյանքը՝ եկեղեցա-

կանների, հախարարական տների պառակտողական հարաբերություններով, Դ. Դեմիրճյանը այդ «պատմական ֆոնը» դարձյալ ծառայեցնում է ընդդիմադրության շարժմանը, իբրև Արշակոնյաց հարստության հիմքերի-հիմք ներկայացնելու համար:

Դեմիրճյանը շեշտը գցում է ազգի ներքին պոտենցիալի հայտաբերման վրա,—առաջին պլան մղելով բազմափորձ և խելացի կաթողիկոս Սահակ Պարթևին, թեև պատանյակ, բայց հեռատես և կրակոտ Մեսրոպ Մաշտոցին:

«Մեսրոպ Մաշտոցի» պատմական աղբյուրների առատությունը վկայում է, թե ինչքան մեծ նշանակություն էր տալիս Դ. Դեմիրճյանը այդ կուսակին:

## 9

Դ. Դեմիրճյանը հետազոտող է այս բառի լրիվ և ընդարձակ նշանակությամբ: Հետազոտող՝ ոչ միայն իր գեղարվեստական երկերում, այլև հարուստ տեսական ժառանգության էջերում:

Թեև հատուկ չի գրաղվել գիտական պարապմունքներով, չի ֆնացել արխիվային պեղումների և վավերագրային հայտնագործումների, բայց նրա տեսական արծարծումները այնքան մեծ կշիռ ունեն, կուահումներն ու տեսակետներն այնքան ինքնատիպ ու բովանդակալից են, որ կարող են լինել շատ հարցերի գրականագիտական մեկնաբանության ստույգ բանալիներ:

Դեմիրճյան հետազոտողի միտքը գործում էր բազմազան ուղղություններով և ժամանակային-տարածական ընդարձակ շառավիղով: Նրա հարցասիրությունների կենտրոնում, բնականաբար, հայ բազմադարյան գրականության պատմության և նրա արդիականության խնդիրներն էին:

Դեռ 10-ական թթ. ներգրավվելով Հովհ. Թումանյանի ծավալած գրական-կուլտուրական շարժման մեջ, Դեմիրճյանը հանդես եկավ այդ տարիների հրամայական խնդրի՝ գրականության ազգային պաշտպանության վերաբերյալ քննադատական նոթերով («Գրողի իրավունքը», 1913, «Գրականության պաշտպանություն», 1916), որոնք թեև ունեին գերազանցապես հրապարակախոսական ուղղություն, բայց հաճախ երեսում էին նաև մի շարք հարցերի խոր մեկնաբանություններով: Հիշատակարժան է, հատկապես, «Պատանի» գրական ալմանախի հարցաթերթիկին տված պատասխանը, ուր գնահատելով գրական իրադրությունը, Դեմիրճյանը ազգային գրականության համամարդկային որակի յուրացումը կապում էր բացառապես նրա «հայրենացման» ընթացքի հետ:

Եթե 10-ական, այնուհետև՝ 20-ական թթ. Դեմիրճյանը միայն մերթ ընդ մերթ էր հանդես գալիս գրախոսական-թատերախոսականներով, մասնավոր «արձագանքներով» ու տպագորություններով, ապա 30-ական թթ. սկսած նա բարիս բուն իմաստով նետվում է գրապատմական, տեսական խնդիրների հորձանութը՝ գրելով մի շարք ծանրակշիռ հետազոտություններ ու հոդվածներ:

Այս առումով նշանակալից են, հատկապես, ազգային ֆոլկորի և գրականության հուշարձանների գնահատությունները, որոնց մեջ էլ առաջին տեղերը գրավում են «Սասունցի Դավիթ» ժողովրդական վիպերգի, և. Աբովյանի «Վերքի», Դ. Սոնդուկյանի թատերագրություն, Հովհ. Թումանյանի և Ավ. Խոանակյանի բանաստեղծական աշխարհի ընթերցումներ՝ մեկը մեկից խորումկ, մեկը մեկից ինքնատիպ ընթերցումներ:

**Ոսկեղարյան** հայ մատենագիրների պատմագիտական-աղբյուրագիտական արժեքի քննությունից բացի, որը տեղ է գտնել «Վարդանանց պատերազմ» գիտական հետազոտության մեջ, Դեմիրճյանը լայնորեն անդրադարձել է «Սասունցի Դավիթ» ժողովրդական վիպերգի մեկնաբանությանը, մի քանի էական հարցերի լույսի տակ՝ գաղափարական բովանդակության հարց, կառուցվածքի, շարացյուսման, ոճի հարց և այլն:

Թեև Մանուկ Աբեղյանը իր նշանավոր էպոսագիտական աշխատություններում տվել էր մեկնաբանության բանալիները, Դեմիրճյանը ևս ասպարեզ հանեց «Սասունցի Դավիթ» իր ընթերցումը՝ չափազանց արժեքավոր եղանակացություններով: Նախ և առաջ խորոնկ բացատրություն տվեց վեպի ծագման ժողովրդական հիմք ու ակոմքներին (հնությանը), որա մեջ դիտելով դարից դար փոխանցված և պատմական մի դարձակետի բյուրեղացած ժողովրդական ցասման և ըմբուտ ոգու արտահայտությունը: Նույնքան ուշագրավ էին վեպի պատմական ատաղձի և պոետիկական առանձնահատկությունների բացահայտումները, մանավանդ վերջին կետինը, որով «Սասունցի Դավիթը» ներկայացվում էր ազգային գեղարվեստական մտածողության հնագույն՝ դիցապատմական խորքերի հետ ունեցած սերտ առնչություններով:

Դ. Դեմիրճյանի առանձին ուշագրության առարկան են եղել **XIX—XX** դարերի գրողները՝ ուռմանտիկներն ու ռեալիստները, արձակագիրներն ու բանաստեղծները, թատրոնագիրներն ու հրատարակիչները, բայց ամենից ավելի նրան զբաղեցրել է այդ գրականության գագաթների՝ Խ. Աբովյանի, Գ. Սունդուկյանի, Հովհաննեսի և Ավ. Իսահակյանի ստեղծագործական աշխարհը:

Շատ աշխատություններ են գրվել «Վերք Հայաստանի» վեպի մասին, բայց ոչ ոք այդքան ինքնատիպ մեկնաբանություն չի տվել նրա ժանրային կառուցվածքի «սինկրեատիկ» բնույթին, ուր, Դեմիրճյանի դիտումներով, իրար են գալիս արևելյան ժողովրդական և եվրոպական գրական վիպագրության սկզբունքները:

«Աբովյանի գրական ժանրերը» հետազոտությունը արովյանագիտության երեսի էջն է:

Դարբիել Սոմդուկյանը նույնպես եղել է բանասերների տեսական հարցասիրությունների տեսադաշտում, բայց դեմիրճյանական մոտեցումները, մանավանդ ազգագրական-ֆոլկլորային-բարբարային-կենցաղագրական հիմքերից վերաճող ռեալիստական արվեստի դրույթը մնում է ամենահետաքրքրականը մեծ թատրոնագրի ժառանգության մեկնաբանությունների շարքում:

Թումանյանագիտության և իսահակյանագիտության համար թանկագին, կարելի է ասել՝ վճռական բանալիներ են Դեմիրճյանի խոր դիտարկումները՝ Հովհաննեսի ստեղծագործության բոլոր սյուժեներով անցնող «Հալածվածության» մոտիվի, նրա բանաստեղծությունների դոմինանտի՝ հառաշանքի, Ավ. Իսահակյանի երգերի ժողովրդական «Նվաստ» ոճի հիմնավորումների, «պեսիմիզմ-օպտիմիզմի» և այլ խնդիրների վերաբերյալ: Դիտարկումներ, եղանակացություններ, կուահումներ, առանց որի անհնար է պատկերացնել հայ բանաստեղծության հսկաների ճշգրիտ ճանաչումը:

Ազգային գեղարվեստական հուշարձաններից բացի Դեմիրճյանը զննում ների ոլորտի մեջ էին նաև այլ ժողովրդների, հատկապես ուսու գրականության հուշարձանները՝ «հգորի արշավանքից» մինչև Մ. Շոլոխով և Ալ. Տոլստոյ, Յաղեկ («Ճախջախում») և Ֆուրմանով («Զապակ»): Նրա բազմաթիվ «ար-

ձագանքների» շարքում հետազոտական շնչով ընդգծվում է Ն. Վ. Գոգոլի «Մեռյալ Հոգիներ» վեպի լեզվի և ոճի հետազոտությունը, այն գրվածքի, որի շափազանց բարդ տեքստի հմուտ մեկնաբան-թարգմանիչն էր ինքը:

Դեմիրճյանի հողվածների գերակշռող մասը նվիրված է ժամանակակից գրականության տեսությանը և ընթացիկ գրական շարժմանը:

Դեմիրճյանը գրել է և արձակի, և բանաստեղծության, և գրական քըն-նադատության մասին, բայց ամենից շատ՝ դրամատուրգիայի: Եթե ի մի բերենք դրամատիկական գրականությանը վերաբերող հողվածների, ուցեն-դիաների, Գրողների համամիտենական առաջին համագումարում արտասա-նած ճաշի բոլոր մտքերը, ապա կտանանք սոցիալիստական դրամայի վերին աստիճանի ուշագրավ տեսական համակարգ, ուր գրական այդ ժանրի ներքին սկզբունքները դիտված են բազմակողմանիորեն՝ ըստ ժանրի կանոնների, ըստ «հին» և «նոր» թեմաների հարաբերության, ըստ խարակտերների և գործողու-թյան կապերի, ըստ հոգեբանության և կենցաղի առնչության:

Ոչ միայն թատերագրության, այլև գրականության բոլոր ժանրերի համար Դեմիրճյանը վերին պահանջ էր համարում երկի փիլիսոփայական կշիռը. սյուժեի, կերպարի, բառի «փիլիսոփայական ուղղությունը»: Մասնավորապես ուշագրավ են արձակի վավերագրական (ակնարկ) և գեղարվեստական (վեպ) տեսակների դասակարգմանը վերաբերող հողվածը, արձակի և կյանքի հարա-տեսությանը վերաբերող մտորումները: Այս զանգակատնից էլ նայում էր գրա-կանության նոր երեսություններին, մանավանդ երիտասարդական գրականությանը, առաջին հերթին արժեքավորելով այն գործերը, ուր արտաքին դեպքերի պա-տումների մեջ երեսում են ներքին կապ ու կապակցությունները: Այդպիսիք էին դադստանցի երիտասարդ արձակագիր էֆենդի Կապիկի ուազմաճակատային ծրագրերը, որոնց մեջ Դեմիրճյանը նշմարեց փիլիսոփայական հարուստ շերտեր:

Դ. Դեմիրճյանի վերլուծական քննությանն արժանացան Գ. Էմինի, Ս. Խանզադյանի, Ս. Կապուտիկյանի գրքերը և այլն:

Դեմիրճյանի հետազոտական խառնվածքի արտահայտություններից մեկը հայոց գրական լեզվի քննություններն են: Լեզվաշխնարարական մղումների տեր գրող լինելով, Դեմիրճյանը պարբերաբար հանդես է եկել գրական, ավելի հաճախ՝ գեղարվեստական լեզվի զարգացման օրինաշափությունների մեկնաբանություններով՝ հանուն կենդանի, հյութեղ, ազգային լեզվաօճա-կան մտածողության կնիքը կրող արտահայտության: Լեզվական խնդիրները քննելիս Դեմիրճյանը հանդես է բերել լայնախորհություն՝ գեղարվեստական լեզվի առաջ «ըստ շափի» բացելով և ժողովրդական բարբառների, և գրա-բարյան հնարանությունների, և փոխառությունների աղբյուրները, բնակվախենալով «մաքուր, բայց անկնդան» լեզվի պաշտպանների ծառացումից:

Դ. Դեմիրճյանի լեզվաշխնարարական մտորումները տեղ են գտել մի շարք վավերագրերում («Ղազարոս Աղայանի լեզուն», «Մեռյալ Հոգիների» լե-զուն և ուսուցական), սակայն ամենից ավելի ամ-բուղական տեսք են առել «Ժամանակակից հայ գրական լեզվի զարգացման տենդենցիները» բանավիճային հողվածում (ուղղված է լեզվաբան Գ. Սևակի սխալ տեսակետների դեմ), ուր նա երեսում է իրեն ազգային գրական լեզվի զարգացման ուղիների և աղբյուրների հմատ մեկնաբան:

Դեմիրճյանը զբաղվում էր ոչ միայն գրականության, այլև արվեստների (երաժշտության, նկարչության, թատրոնի, ճարտարապետության) զարգացման խնդիրներով:

Դեռևս կյանքի վաղ հասակում հանդես բերելով երաժշտական ձիրքեր, ապա սովորելով Մոսկվայի Կոնսերվատորիայի ջութակի դասարանում (Կ. Սարգսի) և Ժնևի կոնսերվատորիայում, նա մինչև կյանքի մայրամուտը պահպանեց երաժշտության պաշտամոնքը:

Դրա ամենապերճախոս արտահայտությունն էր հայ երգի մասսայականացումը Շվեյցարիայի քաղաքների՝ Ժնևի, Լոգանի, Բեռնի, Ցյուրիխի հայուսանողների շրջանում, նրա մտերմությունը Ժնև ժամանած Կոմիտասի հետ (Կոմիտասի երգչախմբում էր եղել տարիներ առաջ):

Իր հետազոտությունների մեջ են հոդվածները Կոմիտասի պատմական Եղանակուրյան, Կարա-Մուրզայի բերած նորության (բազմաձայնության), Դմ. Շոստակովիչի 7-րդ սիմֆոնիայի առանձնահատկությունների մասին, բանավեճը երաժշտագետ Արշակ Աղամյանի հետ՝ ազգային երաժշտության «հայկական» և ոչ թե «ընդհանուր արևելյան» բնույթի շարժառիթով:

Դերենիկ Դեմիրճյանը սիրում էր նաև նկարել. «ազատ ժամերին» նա կատարում էր գրանկարներ, երգիծանկարներ, ընկերական շարժեր, իսկ «Վարդանանքի» տարիներին վեպի սյուժեներով փորձում է անգամ նկարել յուղաներկ կտավներ: Իր կերպարվեստագիտական ըմբռումները տեղ են դուրս մի շարք հոդվածներում՝ նվիրված Գ. Տաշինջաղյանի, Ե. Թաղեսոյանի արվեստի ընութագրմանը:

Դ. Դեմիրճյանի ճարտարապետական իմացությունները երևում են նրա «Նոր մոնումենտալ» և «Քաղաքը» վիպական տարրերակներում:

Ամենից ավելի Դեմիրճյանը հանդես է եկել թատրոնի մասին: Բազմաթիվ թատերախոսականներից բացի նա գրել է «Հուշեր և խոհեր մեր թատրոնի ու դրամատուրգիայի մասին» ընդարձակ, հիմնարար պատումը, ուր անշափ հետաքրքրական են և հուշերը դարավերջի ու դարասկզբի հայոց թատրոնի խմբումների, ուղիների, դեմքերի մասին, և մանավանդ խոհերը, որոնք Դեմիրճյանին բնութագրում են իրեւ թատրոնական արվեստի խորունկ տեսարանի:

«Դեմիրճյանը դերասանի արվեստի մասին» հոդվածում Լ. Հախվերդյանը նրան համարում է «գերասանական արվեստի ամենախորունկ ըմբռուղն ու բացատրողը», մեկնաբանելով ապրումի ու ցուցադրման խաղաղմերի, հուղարկանության և բանականության դերի, անկեցվածք խաղի, անձնավորման արվեստի, հոգեբանական թատրոնի նրա պատկերացումները<sup>32</sup>:

## 10

Ոչ միայն «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, այլև առհասարակ Դ. Դեմիրճյանի ստեղծագործության լեզվառնական հատվածը հայ գեղարվեստական գրականության ամենահետաքրքրական երևույթների շարքում է:

Գ. Մահարու վկայությամբ Եղիշե Զարենցը մի առիթով ասել է, որ քամու թոցրած թղթի պատառիկից էլ կարելի է ստուգապես ճանաչել Դ. Դեմիրճյանի ձեռագիրը, այնքան դեմիրճյանաբար ինքնուրույն են նրա կիրառած ոճաձևերը և այնքան դեմիրճյանաբար ճկում են նրա արտահայտման եղանակները: Այս մտքով է ներթափանցված նաև Զարենցի «Մեր գրական լեզվի զարգացման 400

տենդենցները և Դ. Դեմիրճյանի լեզուն» նշանավոր գեկուցումը՝ կարդացված  
1984 թվականին:

Մեկնաբանելով հայոց գրական լեզվի զարգացման ու ձևավորման ուղիները՝ իր պատկերացումների սահմաններում (մոտավորապես Վ. Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսության դրույթների ոգով), Զարենցը, իրու գեղարվեստական լեզվի ազգային ձևի, ազգային ֆորմայի հսկական նմուշներ համարում է Դեմիրճյանական ոճաձեւերը, դրանց ազգայնության կարևորագույն հատկանիշը համարելով շարահյուսական կառուցվածքների (միավորների) հարազատությունը հայոց լեզվի օրենքներին:

Լինելով գեղարվեստական լեզվի հմուտ ճախարակողներից մեզը, Դեմիրճյանն այն մտքին էր, որ այսպես ասած «մաքրությունը» լեզվի հյութազրկման համար նույնքան վտանգավոր ճանապարհ է, որքան ժարգոնային դռեհկացումը: Նա համարական լեզվի դիրքերի վրա էր, որի համար էլ պնահատում էր նրան, այն էլ շափազանց բարձր, Եղիշե Զարենցը:

Քննության նյութ դարձնելով հայոց գրական լեզվի զարգացման ուղիները՝ կենտրոնածիգ («Հյուսիսափայլից» մինչև Վահան Տերյան) և կենտրոնախույս (Խաչատուր Աբովյանից մինչև Հովհաննես Թումանյան) թևերով, Զարենցը անդրադառնում է նաև գեղարվեստական լեզվի ազգային, ինքնուրույն ձևերին, հայկական մտածողության բուն արտահայտություններին, դրա օրինակները բերելով Դեմիրճյանի «Տերտերը», «Դատաստան», «Թաջ նազար» երկերից:

Ելակետ ընդունելով «Հետուն արտահայտում է տվյալ ժողովողի մտածողության ձևը» դրույթը, Զարենցն այն կարծիքին է, որ այդ ձևին չի կարելի հասնել ոչ գալառաբարբառով ու գալառական բառապաշտում, ոչ էլ կանոնավոր, բայց նիվելիրովկայի ենթարկված լեզվով:

Գեղարվեստական լեզվի սկզբունքների առումով, Զարենցի եզրակացությամբ, մեծ հարստություն են Դեմիրճյանի և Հեղինակային, և կերպարային լեզուն, որը ազգային ձևը յուրացվում է ոչ թե արտաքին գծերով, այլ այն տարրերի կուտակումով, որոնք հատուկ են միայն հայերենին, բխում են նրա շարահյուսական-կառուցվածքային օրենքներից, նրա ներքին տարրերից:

Օրինակներով հաստատելով Դեմիրճյանի ոճի և ձևի հազվագյուտ ինքնուրույնությունը, Զարենցը իր դիտարկումները ամփոփում է շատ վճռական տեսակետով. «Հիմքում ունենալով իրու լավագույն լեզվի միավոր Վահան Տերյանի գրական լեզուն, պետք է հարստացնենք դա, պատվաստելով այն ինքնուրույն, այն գոնագեղ ֆորմը, որոնց լավագույն նմուշները տվել է մեզ Դերենիկ Դեմիրճյանը»:

Զարենցի դիտումները փաստորեն հանգում էին Դեմիրճյանի ոճային մտածողության գնահատությանը:

Ինքը՝ Դեմիրճյանը ևս հոդվածներում բազմիցս անդրադաել է արտահայտման լեզվի՝ ոճի խնդիրներին, գտնելով՝ «Մի գրողի լեզուն մյուսից տարրերվում է շատ ու շատ առանձնահատկություններով: Ամեն գրող իր գրական ֆակտուրայով ներկայացնում է իր դորձի երկու կողմը. մեկ որ նա մասնակցում է ընդհանուր գրական լեզվին, հաստատում, ամրացնում է նրա հիմքերը, երբեմն պարզապես «կրկնում» է նշանը, և երկրորդ՝ մշակում է այդ լեզուն, մտցնելով իր սեփական տարրերց, երբեմն շատ խորը քանդելով և շինելով»:

Ոճը համարելով առավելապես անհատական երևույթ՝ «ոճը խոսքի ժպիտն է, տիրությունը... կենդանի մարդու արտահայտիլ նշանը», «Ոճն սկսվում է այն ժամանակ, երբ խոսքի ձևի մեջ զգացվում է առանձնահատուկ տրամադրություն», «Ոճը մտքերն արտահայտելու ձևն է» և այլն, Դ. Դեմիրճյանը միաժամանակ դնում է ոճային մտածողության զարգացման խնդիրը, մասնավորապես ժառանալով «օճի ծերացման» երևույթի դեմ՝ հօգուտ ժամանակի նոր շնչին համապատասխանող ոճային-խոսքային կառուցվածքների, դինամիկ, հակիրճ, բովանդակավորված խոսքի:

Մայա Ավագյանի ձիշտ մեկնությամբ Դ. Դեմիրճյանը իր ոճային նկարգրով թեև չափազանց բազմակողմանի գրող է, սակայն նրա մոտ հիմնականը «նրբագծային-վերլուծական» սկզբունքն է, ուր կարևոր դեր են խաղում հերոսների հոգեկան, ներքին աշխարհի վերլուծությունները (Ավ. Խաչակյանը Դեմիրճյանին համարում է «հոգեբանական անալիզի վարպետ»), հուզական վերաբերմունքը (ի՞ հակակշիռ դատողական-տրամաբանական տարրի գերաշության), կյանքի առանձին բեկորների մեջ ընդհանուր օրինաշափություններ հայտնագործելու հակումը, պրոզայի ոիթմական ձեռավորումը։ Դ. Դեմիրճյանը իր ստեղծագործության առաջին իսկ էջերից՝ սկսած քնարական ներշնչանքներից («Մի լաց, մի թացիր աշքերդ, աշքիդ լույսն ափսոս է, կանցնի») մինչև ստեղծագործության վերջին էջերը, տվել է անհատական ոճային մտածողության բազում-բազում օրինակներ՝ «հոգեկան անդունդների» բացահայտումներ («Ավելորդը», «Յաված սեր», «Վարդանանք»), առանձին փաստի (բեկորի) և ամբողջի փոխադարձապատճեններ (խոհական մանրապատումները), ոիթմական-չափածո ընդդժված արձակ («Չարգահը» պատմվածքը—ուղտերի քարավանի ընթացքի բնորոշ ոիթմի նկարագրություններով)<sup>33</sup> և, ի՞արկե, խտացված խոսի անհամար օրինակներ, որ սփոված են նրա ստեղծագործության բոլոր էջերում (մոտավորապես այսպիսի խոսքային կառուցվածքներ՝ «Չէիր լինի ստրուկ, եթե վինեիք ստրուկ»):

Դեմիրճյանի պատվիրաններից մեկն էր «Բարդ կյանքի բարդ արվեստի» պատվիրանը, մյուսը՝ «Գրել պետք է պարզ, ճիշտ, ավարտուն, լայն ընդհանրացումներով» պահանջը։

Դեմիրճյանն ինքը այդ գեղագիտության կրողն էր։

\* \* \*

1945 թ., երբ արդեն ասպարեզի վրա էր իր «գլխավոր գիրքը»՝ «Վարդանանք» պատմավեպը, լայնորեն նշվեց Դերենիկ Դեմիրճյանի գրական գործունեության հիմնամյակը։ Հորելանական հավաքույթում, համառոտակի անդրադառնալով իր անցած գրական ճանապարհին, Դեմիրճյանը հետեւյալ պատկերավոր խոսքով ամփոփեց իր գործը. «Ես ևս եղա հողի մեջ նետված այն հացածատիկը, որ մեռնում է, որպեսզի գա հացը կենդանի...»<sup>34</sup>:

Ասաց նաև, որ իր համար մեծ ուրախություն է ժողովրդի սերը և, մանավանդ, այն հանգամանքը, որ գնահատվում է իր սերը ժողովրդի հանդեպ։ Սա դեմիրճյանական հերթական պարադոքսներից չէր, այլ ամեն մի գրական մշակի վերին երջանկությունն արտահայտող խոստովանություն՝ իր ժողովրդի դատաստանի առաջ։

Արդարեւ, Դեմիրճյանը պատվով բռնեց մեծ քննությունը. անցյալ դարի 90-ական թթ. մինչև կյանքի վերջը (1956), երբ հիվանդանոցում, ոսկրացած մատներով կատարում էր իր պատմական նոր վեպի՝ «Մեսրոպ Մաշտոցի» ձեռագրի սրբագրությունը, Դ. Դեմիրճյանը, տոկուն ու անխոնչ սերմնացանի պես, հայրենի գրականության ցելերում լիաբուն շաղ տվեց արիության, լույսի, արդարության սերմերը՝ ժողովրդի գոյության ոգեղենացած հացի համար:

Դա էր իր գեղագիտության զլիսավոր շեշտը, որ ժառանգաբար ստացել էր մեծ նախորդներից, Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի և մյուս մեծերի՝ ժողովրդին անմնացորդ ժառայելու, նրա ինքնագիտակցությունը վառ պահելու պատվիրանից:

## ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

«Պապ թագավոր» պատմավեպը ավարտվում է հայ ժողովրդի ճակատագիրը խորհրդանշող ցնցող պատկերով։ Բյուզանդական կուսակալ Տերենտը իր պալատն է հրավիրում հայոց թագավորին՝ իշխանների հետ և խրախմանքի պահին նենգաբար սպանում նրանց։ Սպանվածների մեջ է լինում նաև երիտասարդ տարեգիր Երեմիան, որը ամենուրեք ուղեկցում էր Պապ թագավորին և գրի առնում հայոց պատմության ժամանակագրությունը։ Երբ իշխան Թաթը սպանված Երեմիայի ձեռքից վերցնում է մատյանը, պարզվում է, որ «Հայոց պատմության» բոլոր էջերը թաթախված են արյունով։ Պատմության այս ողբերգական բովանդակությունը շատ բանով կանխորշել է հայ ժողովրդի հոգեոր մշակույթի զարգացման ուղղությունը։

Հայոց մշակույթի այս էությունը հիանալի է բնութագրել Վահան Տերյանը, գրելով հետեւյալ տողերը։ «Հայրենիքի երգը հնչել է մեզանում առավել կամ պակաս ուժով՝ Եղիշեից ու Խորենացուց սկսած մինչև մեր օրերը։ Այդ գաղափարը կարմիր թելի նման անցնում է մեր գրականության միջով՝ սկզբից մինչև մեր օրերը, դարձել է մի անբաժանելի հատկանիշ, գունավորել է մեր ինտելիգինցիայի միտքն ու երևակայությունը դարեր շարունակ, անշուշտ, իր կոնկրետ ձևերի որոշ շեղումներով ու տարբեր գույներով, սակայն էությամբ միշտ նույնն է մնացել—մի ֆանտոմ է եղել, մի զորություն, որը մղել է դեպի հերոսական մարտիրոսության, դեպի աներևակայելի լարման հոգեկան ու նյութական էներգիայի, մի անհասանելի, մի միշտ բաղձալի ցավատանց իղդ է դարձել այդ անկախ հայրենիքի, այդ ազգային գոյության գաղափարը»<sup>1</sup>։

Միանգամայն բնական էր, որ ազգային-ազատագրական պայքարի դարավոր ճանապարհ անցած ժողովուրդը նոր ժամանակների ազատագրական գաղափարներով թեավորված, նոր հույսերով ու նոր ակնկալություններով պետք է որոներ իր փրկության ուղիները։ Պարզ է նաև, որ հայ նոր գրականությունը դառնալու էր այդ պայքարի գաղափարական զինակիցը։ Արդարեւ, հաշատուր Աբովյանին հաջորդեցին ազատագրական գաղափարի նորանոր շեփորահարներ, ինչպես Դ. Ալիշանը, Մ. Նալբանդյանը, Ռաֆֆին, Ռ. Պատկանյանը, մի փոքր ավելի ուշ՝ Ավ. Խաչակրյանը, Միամանթոն, Դ. Վարուժանը։

Ազգային-ազատագրական գաղափարները հայ նոր գրականության ուժի և կենսունակության ակունքը լինելով, միաժամանակ նրա «Թուլությունն» էին, քանի որ շատ դեպքերում գրողների հայացքից վարագուրում էին համամարդկային գաղափարները, ժամանակի սոցիալական խնդիրները, մարդու հոգեբանությունն ու կենցաղը։ Այս առումով վերին աստիճանի հետաքրքրական է Դանիել Վարուժանի խոստովանությունն ու տրտունքը։ «Հայրենիքի վշտին համար՝ երկար ատեն սրտիս մեջ ձնշելով է, որ կսնուցանեմ նոր զգացումներ ու կրքեր։ Ժամանակ մըն ալ ինձի քաղցր է իմ գրիչս իմ սրտիս մեջ քարախել»։ Ասպա խոսելով իր «Ցեղին սիրու» գրքի մասին, որի մեջ ամփոփված էին բացառապես հայրենասիրական բանաստեղծություններ, նա գրում է. «Այս հատորը

երբ լույս տեսնե, պիտի սկսիմ ասկե վերջ լոկ կյանքե գրել. ահագին հեղեղ մը կա ներսս՝ որ մինչ ցարդ հայրենիքի դիսկներով թմրված էր»<sup>2</sup>:

Հայ ժողովրդի ազգային ողբերգությունը երկար ժամանակ խանգարում էր գրողներին՝ «կյանքե գրել», պատկերել կյանքն իր խորությամբ և լայնությամբ, մարդկային հոգեբանությամբ ու կենցաղով, դուրս գալ համամարդկային գաղափարների մայրուղին:

Հայ գրականության նոր սերունդը՝ Հովհաննես, Շիրվանզադեն, Մ. Մեծարենցը, Վ. Տերյանը, Նաև Ավ. Խաչակյանը և Դ. Վարուժանը, ազգային-ազատագրական գաղափարները ներդաշնակորեն առնչելով համամարդկային խնդիրներին, հայ գրականությունը դուրս բերին զարգացման լայն ճանապարհ: Արարատի կատարի սև ամպերի հետ նրանք կարողացան տեսնել նաև հայ գեղջուկի, հայ աշխատավոր մարդու ճակատին իշած ամպերը և գրել կյանքի երգը, մարդու երգը:

Գեղարվեստական և գաղափարական այս մթնոլորտում էր, որ գրական առաջին քայլերն արեց Ստեփան Զորյանը՝ մեր արձակի խոշոր վարպետներից մեկը: Նրա առաջին խսկ պատմվածքները արվեստի նոր որակ էին բերում և անմիջապես արժանացան գրական հասարակայնության ուշադրությանը:

Իր ստեղծագործական արմատները խորապես մխրճած ազգային կյանքի պարարտ հողի մեջ, Մտ. Զորյանը արվեստի լույս էր ստանում ոռուսական և եվրոպական արձակի իրեն առավել հարազատ լուսատոններից՝ Տոլստոյից ու Չեխովից, Ֆլորերից ու Մուսաևանից: Նա հայ արձակում կատարում էր ստեղծագործական նույն սխրանքը, ինչ Վահան Տերյանը պոեզիայի մեջ, ստեղծելով մի արվեստ, որի ազգային գոնեղ հենքի վրա հյուսված էին ժամանակակից գեղարվեստական մտածողության նրբագույն թելերը:

## 1

Ստեփան Եղիայի Զորյանը (Առաքելյանը) ծնվել է 1889-ի սեպտեմբերի 15-ին Մեծ Ղարաբիլիսայում\*, նահապետական գյուղացու հարկի տակ:

Լեռնահովտի մեջ կքած մի փոքրիկ ու գեղատեսիլ ավան էր Զորյանի ծննդավայրը՝ լոռու պատմական Վանք գյուղը, ամբողջովին սուզված փարթամ կանաչի մեջ:

Զորյակով վազում էր լեռնային սպիտակափրփուր գետակը, իսկ ձորալանջին խշշում էին դարավոր անտառները, որոնց զով ու թարմ շունչն էր խաղում լեռնահովտի հետ:

Յուրաքանչյուր մարդու համար ոչ մի բան ավելի թանկ չէ, քան հողի այն անկյունը, որտ նա արել է առաջին քայլերը, աշք բացելով՝ տեսել է աշխարհի պես-պես գույները:

Ստեփան Զորյանի համար նվիրական այդպիսի անկյուն էր Ղարաբիլիսան՝ իր կանաչ հորիզոններով, լուսնյակ գիշերներով, ցողաշատ առավոտներով, այլև գարնանային հորդ անձրեներով, մառախուղների թանձր ցանցով, որի միշտ դժվարությամբ իր դեմքն էր ցույց տալիս «քնած մանուկը»՝ Արեւը...

Զորյանի ամենավաղ և ամենալուսավոր տպավորությունները կապված են ծննդավայրի բնության հետ:

\* Մտ. Զորյանի մանկության տարիներին Ղարաբիլիսան արդեն գավառական քաղաք էր, Անդրկովկասի գարշական քարտեզում կոչվում էր Մեծ Ղարաբիլսա— Բոլցոյ Կառակլուս.

«Որպես գյուղացի երեխա,—պատմում է Զորյանը «Ինքնակենսագրական նորթերում»,—սիրում էի անասուններ, սիրում էի դաշտ, անտառ, մանավանդ սարեր ու անտառներ, որ կազմում են իմ ծննդավայրի գեղեցկությունը: Միշտ ցանկանում էի լինել անտառի այս ու այն մասում, բարձրանալ լեռները, ընկերներով կամ մենակ, գնում էինք նոր-նոր աղբյուրներ գտնելու, եղնիկներ տեսնելու, կամ հատապտուղ հավաքելու»:

Բնության հաշալիքների մեջ մանուկ Ստեփանը թերեւ առաջին անգամ դգացել է, որ մարդը Մայր բնության մի մասնիկն է, ինչպես հողն ու երկինքը, արևն ու լուսինը, ծառերն ու թոշոնները, որ արդար բնությունը մարդուն տալիս է երեխ թե մեծագույն բարիքը՝ կյանքի հարազատ շունչը:

Ղարաքիլիսան թեև հայտնի էր բնության ընտիր կտորներով, բայց նրա բնանկարին առանձին վեհություն էր տալիս «սրագագաթ լեռան ուղիղ կատարին» բարձրացող մենավոր ծառը, տեղացիների բառով՝ «կենտ ծառը»: Սա, Զորյանի պատկերավոր բնութագրությամբ՝ «խորհրդանշում էր բարձրության երազը»:

Ղարաքիլիսայում կային զանազան արհեստներով (դարբնություն, պայտառագործություն, ներկարարություն, հյուսնություն) և մանրածախ առեւտրով (ճոթի և մրգի առեւտրով) ապրող մարդիկ, բայց բնակիչների հիմնական մասը իր հանապազորյա ապրուստը վաստակում էր անասնապահությունից, մասամբ էլ՝ երկրագործությունից և այգեգործությունից (վերջինս ղարաքիլիսեցիների համար համեմատաբար նոր զբաղմունք էր):

Իր իսկ վկայությամբ Զորյանի վաղ տպագորությունների մեջ առանձնահատուկ տեղ են գրավել գյուղական աշխատանքը, հողագործների վարն ու ցանքը՝ հայ գեղջուկի ավանդական «Հոռովելի» սիթմով, Մայմեխ սարի հոչակավոր ալպիական արոտավայրերը բարձրացող նախիրը, հովիվների վառած կրակները, սարվորների եռուցեռը՝ կիթն ու խնոցին, աշնանային պտղաքաղը՝ Ղարաքիլիսայի կարմրաթուշ խնձորի այգիներում:

Բնությունից և գյուղական աշխատանքից բացի մանկության տարիների պայծառ կետերը եղել են տատի ու մոր պատմած մեկը մյուսից նախշում հերթիաթները...

Մայրը եղել է հրաշալի պատմող, որի համար էլ դրացիները նրան տվել են «Տիկին Հոմերոս» անունը: Զմուն երկար գիշերներին սա իր շուրջն է բոլորել զավակներին (շորս եղբայր էին, երեք քույր) և բացել կախարդական հերթիաթների ու զրուցների անվերջանալի կծիկը...

Հայրը միշտ դրսում էր՝ իր գործի հետ, մեկ՝ փոքրիկ հողաբաժնում, մեկ՝ խանութում: Տնային հոգսերի ծանրությունը տանում էին տատն ու մայրը: Վերջինս եղել է նաև «առաջին ուսուցիչը»: Ոչ միայն հերթաթներ է պատմել «մութ ու լուս աշխարհներից», Զմրուխտ թոշոնից ու Պղնձե քաղաքից, այլև սովորեցրել այբուբենը այն շափով, որ մանուկ Ստեփանը կարողացել է գույնըգույն մատիտներով գրել իրենց եղան, կովերի ու շների անվանատառերը՝ Ցուլակ, Շուշան, Մաղիկ, Չամբար, Բողար...

«Ղարաքիլիսայում, —պատմում է Զորյանը «Ինքնակենսագրական նորթերում», —կային հայկական հաստատում տրադիցիաներ, սովորութներ, ուր կրոնական ու ժողովրդական տոնները, ծեսերը կատարվում էին ամենայն ճշշտապահությամբ, զերմեռանդությամբ ու մեծ շուրջով: Մեր ավանում կային անգամ հեթանոսական ժամանակներից մնացած ծաղկի տոն (Համբարձում),

անձրկի տոն (Վարդավառ), բերքի օրհնության տոն և նավասարդի ու Բարեկենգանի օրեր...»:

«Այս ամենի հետ միասին, —շարունակում է Զորյանը, —մեր ավանում կար մի տիրող զգացմոնք՝ զարմանալի հայրենասիրություն. բոլոր տներում կտիւված էր «Ոգի Հայաստանի» նկարը՝ Անիի շքեղ ավերակների մեջ նստած մի սգավոր կին, որ հիշեցնում էր հայրենի երկրի երբեմնի անկախությունը և անցած փառքը, նաև V դարի ազգային մեծ հերոս Վարդան Մամիկոնյանի սաղավարտով դիմանկարը, որպես անձնաղբճան հայրենասիրության սիմվոլ... Ամենքը երազում էին հայրենիքի ազատություն, ամեն տեղ երգում էին Միքայել Նալբանդյան, արտասանում էին Պատկանյանի «Հիմի» էլ լոենք, եղբայրք...»: Երիտասարդների իդեալը Խաչը. Արովյանի խիզախ հայրենասեր Աղասին էր»<sup>3</sup>:

Յոթ տարեկանից Զորյանը հաճախել է Զաքար վարժապետի մասնավոր դպրոցը (այդ ժամանակ փոխարքա Գոլիցինի հրամանով փակվել էին հայկական դպրոցները), որը բնավ նման չէր այն «պանսիոններին», որ գործում էին «լուսավորության կենտրոններում»:

Մասնավոր դպրոցում նախագիտելիքներ ստանալով, Զորյանն այնուհետև ընդունվում է ծննդավայրի նորաբաց ուսուական դպրոցը, որն ավարտում է 1904 թվականին:

«Ինքնակենսագրական նոթերում» Զորյանը երանությամբ է հիշում իրենց պարտեզի կղմինդրե տանիքով փոքրիկ այն տնակը, ուր մինչև լուսաբաց, մինչև աքաղաղների կանչը կարդում էր հայ և ուսւ գրողների գրքերը. «Այժմ, երբ ետ եմ նայում կյանքիս անցած ճանապարհին, ինձ թվում է, թե իմ ամենաերջանիկ օրերն անցան այդ խարխով, անզարդ տնակում, երբ ես, ամեն հոգից ազատ, ամբողջովին իմ սիրած գրքերի հետ էի և պատրանքներով լցնում էի մեր պարտեզը, մանավանդ լուսնյակ գիշերներին»<sup>4</sup>:

Ի՞նչ էր կարդում:

Տարբեր տեղերում՝ ինքնակենսագրական՝ գրություններ, հուշեր և այլն, Զորյանը հիշատակում է այն գրողների ու երկերի անունները, որոնք առանձնապես շարժել են նրա հետաքրքրությունը:

Դրանց մեջ են և. Արովյանի «Վերք Հայսստանին», Պ. Պոռշյանի և Րաֆֆու վեպերը, Ռ. Պատկանյանի և Հովհաննեսի թուղթը. Թումանյանի բանաստեղծությունները, V դարի հայ պատմիչները, ուսւ գրականությունից Պուշկինը, Լերմոնտովը, Կոիլովը, Գոգոլի «Տարաս Բուլգար»:

«Սովորելով ուսուական դպրոցում, —գրում է Զորյանը մի նամակում, — ես և իմ դասընկերները, բնականաբար, հայ գրականությունից առաջ ծանոթանում էինք նաև ուսւ գրականությանը՝ թե դասադրիքերում տպված հատվածներով, թե առանձին գրվածքներ կարդալով և թե ուսուցիչների զրուցների միջոցով. Պուշկինի, Լերմոնտովի, Կոիլովի հետ միասին (այն ժամանակ և Տոլստոյին լայն շահերով չէին անցնում) մեր ամենասիրած հեղինակներից էր Նիկոլայ Վասիլեևի Գոգոլը:

Առաջին երկը, որ կարդացի այդ՝ իր արվեստի թարմությունը շկորցնող հեղինակից, «Եինելն» էր... Զավեշտական և միաժամանակ խղճակի Ակակի Ակակիևիշը օրերով չէր հեռանում մտքիցս, նա ինձ թվում էր ոչ թե հեղինակի կողմից հորինված պերսոնաժ, այլ կենդանի մարդ, որ աշխատում էր և դեպարտամենտում, քայլում էր Պետերբուրգի փողոցներում... և հանկարծ ենթարկվում է տիսուր արկածի: Ես խղճում էի նրան, որ այնքան մեծ

զգկանքով ձեռք բերած շինելը գողերը հանում են հագից... Միևնույն ժամանակ նա ինձ թվում էր բախտից ու մարդկանցից մերժված մի խեղճ, հասարակ մարդ շքեղ մայրաքաղաքի փարթամ հասարակության մեջ, որ կյանքը լայնորեն վայելելով, չի նկատում, չի խղճում Ակակի Ակակինի նման խեղճ մարդկանց...»<sup>5</sup>:

Հարաբիլիսայում Զորյանի մանկության տարիներին, հաճախ էին հայտնը վում թափառական գուսաններ՝ մաղախն ուսերին: Երշելով բակից բակ, տնից տուն, նրանք պատմում էին դյուցազնական ժամանակների Հայաստանի, հայոց պատմության նշանավոր անձանց փառահեղ գործերի, ժողովրդի մղած հերոսամարտերի՝ Ավարայրի, Զեյթունի մասին, իրենց շուրջը խըմբված մարդկանց ներշնչելով հայրենասիրական ու ազատասիրական ապրումներ:

Պատանեկան տարիներին Զորյանի վրա առանձնահատուկ տպավորություն են թողել հայ ժողովրդական վիճերգը՝ «Սասունցի Դավիթը» պատմող գզրարներն ու ասացողները. «Առաջին անգամ ես մեր էպոսը լսել եմ մանկությանս օրերին այն թափառական գզրարներից, որ անեղը՝ իրանց ապրուտի այդ միակ գործիքը, թերի տակ շրջում էին գյուղից գյուղ, ավանից ավան, և բուրդ գզելով ու թաղիք գցելով, զրույցներ ու հերիաթներ էին պատմում գյուղացիներին»:

Թափառական գզրարների խմբից Զորյանը հատկապես առանձնացնում է նրանց ավագին՝ «Միքել Անշելոյի Մովսեսին նմանող զլապինդ ծերունում», որը, իր ասելով, «զարմանալի պատմություններ գիտեր»:

Նրա պատումների մեջ,—գրում է Զորյանը,—առաջին տեզերից մեկը գրավում էր Սասուն դյուցազունների վեպը, որը ծերունին պատմում էր տարբեր եղանակներով, մերթ ծոր տալով, մերթ արագացված ոիթմով, ասես «ինքն ականատես է եղել ու մասնակից, ինքն էլ պատմության հետ եկել է հեռվից, հին ժամանակներից, իր զրույցի դարերից»:

Թե ժողովրդական ասացողների ասմունքը, թե իր հարազատ լուսա բարբառով «զրից» անող ծերունիների հյութեղ բառն ու բանը այնքան խոր հետքեր են թողնում, որ հետագայում գրած երկերում շատ անգամ դիմում է այդ ասմունքի ու «զրիցների»՝ կենդանի խոսքի, ոճական գույններին ու պատմողական հնչերանգներին:

Բնության, ազգային-ժողովրդական ծեսերի և գրքերի ներշնչանքները Ստեփան Զորյանի այսպես ասած «բանաստեղծական աշխարհն» էր: Կյանքը, սակայն, ոմեր իր առօրյա պրոզան, տնտեսական հոգսերն ու սոցիալական հակասությունները, որոնք չեն կարող աննկատ մնալ. «Տանուտեր Արսենը հայհոյում էր հորս, ծեր քահանա Տեր Սարգիսը գանգատվում էր իր եկամուտի պակասությունից, քեզի Սիմոնը խոսում էր անտառում թաքնված գանձի մասին, իսկ հարեւան Պետրոսը հավան չի կենում երկաթուղու»:

Սրանք այն նոր երևույթներն են, որոնք նահապետական կյանքի անիվը շրջում են գեղպի բուրժուական հարաբերություններին բնորոշ բարքերը:

Ամենուրեք՝ և՛ ընտանիքում, և՛ ընտանիքից դուրս, և՛ շուկայում, և՛ գրասենյակում, խոր արմատներ է տարածում դարի ոգին՝ նյութապաշտությունը, ավելի շեշտելով մարդկանց վիճակների տարբերությունները:

Ստեփան Զորյանը ժամանակի նոր երևույթների՝ նահապետական բարքերի անկման և մարդկային էության աղավաղումների, ականատեսն էր:



Ակոնի Բակրինց



ئارقىن ئەمەرخ

Բուռն, հափշտակված ընթերցանությունը, որ Ղարաբիլիսայից հետո շարունակվում է նաև Թիֆլիսում՝ «լուսավորության կենտրոնում» (Զորյանը 1905-ին եկել էր Ներսիսյան դպրոց ընդունվելու, բայց քննություններից ուշանալու պատճառով չէր ընդունվել), իր իսկ խոստովանությամբ, եղել է կյանքի ճանաշման ու իմաստավորման հզոր միջոցներից մեկը:

Օրեր շարունակ նա ապրել է կարդացած հարյուրավոր գրքերի տպավորության տակ: Դրանցից էլ քաղել է գրական առաջին դասերը՝ հոգու խորքում փայփայելով գեղարվեստի ասպարեզ ոտք դնելու թաքոն երազանքի, որը ծնվել էր գեռ Ղարաբիլիսայում, երբ նա գրական «գաղտնիքների» պատասխաններն էր փնտրում այլևայլ գրքերում, բայց չգտավ ոչ Պ. Պոոշյանի «Սոսեկարդիթերում» (կարդացած առաջին հայերեն գրքում), ոչ «Տարաս Բուլգայում» (չնայած ստացած «իհուահեղ տպավորությանը»), ոչ էլ «Պատերազմ և խաղաղության» մեջ («այդ խոշորագույն երկում էլ ես գրելու գաղտնիքը չգտա...»):

«Ես եկա, վերջապես, մի եղրակացության; որ գրելու գաղտնիքը գրքերի մեջ չէ, այլ...»:

Դասական գրականության անթառամ երկերից բացի, որոնք, այդուամենայնիվ, բացեցին շատ «գաղտնիքներ», Զորյանի հոգեկան աշխարհի ձևավորման մեջ վճռական դեր ունեցան կյանքից ստացած տպավորությունները:

Ղարաբիլիսան՝ երբեմնի նահապետական վարքով ու բարքով ապրող ամառանոցային գողտրիկ ավանը, նոր կառուցված Թիֆլիս-Կարս երկաթուղու շնորհիվ, ապրում էր հասարակական շրջադարձի տարիներ: Կյանքի ավանդական դանդաղ ընթացքի մեջ խոր ակոսներ էր բացել բուրժուական հարաբերություններին բնորոշ հոգերանությունը, մանավանդ եսասիրության զգացումը՝ աղավաղելով բարքերը, բարոյական շափանիշները, մարդկանց դատապարտելով փակուղիների:

Կյանքի մասին ունեցած նախնական, միամիտ պատկերացումները («Աշխարհը թվում էր մի գյուղ հասարակ, արեւ՝ անտառի մեջ քնած մի մանուկ, իսկ կյանքը՝ պարզ ու մթին հանելուկ») սկսում են տեղի տալ իրականության պրոցեսի առաջ: Կյանքի ճանաշման ընթացքը ավելի է խորանում Թիֆլիսում՝ անդրկովկասյան հասարակական եռուցենի այդ յուրօրինակ խառնարանում, որը Զորյանն անց է կացնում իր կյանքի բավական երկար հատվածը՝ 1906-ից մինչև 1919 թվականը:

Թիֆլիսը, որ այդ տարիներին շնչում էր գեղարվեստական մեծ կյանքով, վճռական դեր է խաղում Ստ. Զորյանի գրական ճակատագրի մեջ:

«Սուրհանդակ» թերթում իբրև թարգմանիչ, «Մշակում»՝ իբրև թարգմանիչ և լրագրող աշխատելիս Զորյանը ծանոթություն է հաստատում Նար-Դոսի, Շիրվանզադեի, «Գեղարվեստի» հրատարակիչ Գ. Լեռնյանի, դասախոսությունների համար Թիֆլիս եկած Վ. Տերյանի, Հայ գրողների կովկասյան ընկերության նախագահ Հովհաննիսի, գրական, թատերական, գիտական ասպարեզի մարդկանց հետ,— մի խոսքով ընկնում է մի այնպիսի միջավայր, որն ամբողջապես ապրում էր հայրենի մշակույթի զարգացման մտահոգություններով:

Զորյանին վիճակվում է լինել զրուցակիցը, ոմնենդիրը, երբեմն նաև առաջին ընթերցողը հայ գրողների: Հանդիպումները խմբագրատներում, հասարակական վայրերում, ընտանեկան հավաքույթներում երիտասարդ հեղինակի

համար (Զորյանը դարասկղբից արդեն մամուլում տպագրում էր իր առաջին պատկերները) ճշտում են գրողի, մասնավորապես հայ գրողի կովումը:

Հովհ. Թումանյանը՝ 1913, 14, 15 թվականներին Հայ գրողների կովկասյան ընկերության ժողովներում արտասանած ճառերով, Նար-Դոսը և Շիրվանզաղին՝ մտերմական զրուցներով, Վահան Տերյանը «Հայ գրականության դալիք օրը» դասախոսությամբ (Զորյանն այդ դասախոսության ունկնդիրների մեջ էր) երիտասարդ գրողին կողմնորոշում են դեպի կյանքի, հոգեբանական խորացումների, «երկրի բուրմունքը» արտահայտող, ողբից ու աղոթքներից, ամեն տեսակ «մողեռն» քամիներից հեռու գրականությունը, դեպի արվեստի ժողովրդական հողը, դեպի ուսւ գրականության հյութեղ ու աղջկամը և Ֆրանսիականի (Ֆլորեր, Դոդե, Մոպասան) հոգեբանական վերլուծության նրաությունը:

Զորյանը եղել է երիտասարդ գրողների այն խմբի մեջ, որ Հովհաննես Թումանյանի բնակարանում լսել է մեծ բանաստեղծի խորհուրդները գրականության նշանակության ու գրողի կոչման մասին: Նրա վրա անչնչելի տպավորություն են թողել Թումանյանի պատվիրանները, թե՝ «Երիտասարդը պետք է լավ ապրի, որ կյանքին լավ աշքով նայի, լավ բաներ գրի, թե չէ մեր գրականությունը ժանգոտել է լաց ու արտասուխի մեջ», թե «Արվեստը մի թագուհի է, որ սիրում է նվիրվածություն ու շուայլություն», թե՝ «Պետք է մեր ժողովրդի լեզուն, կյանքը լավ ուսումնասիրել և այն ժամանակ, ես հավատացած եմ, որ մեր երիտասարդ գրողները կտան ժողովրդին հարազատ գործեր»:

Ոսկե խորհուրդներ, որ ճակատագրական նշանակություն ունեցան Զորյանի ամբողջ կյանքում, ճիշտ հունի մեջ դրին նրա տվյալները:

Կենսաթիրո, բնական արվեստի ոգով են շնչում նաև երիտասարդ գրողին Շիրվանզաղեի տված խորհուրդները՝ նկարագրել կյանքն իր հարստությամբ և «ոչ թե կյանքի պատառիկները, որոնք, լավագույն դեպում, ընթերցողի համար կարող են դեսերտ լինել»:

Ինչպես և Նար-Դոսինը՝ «Գրականության մեջ կարևորը և հետաքրքրականը մարդն է՝ իր հոգեբանությամբ»:

Ստեփան Զորյանի գրական մուտքի օրերին՝ տասական թվականներին, մեծ խոսք ու զրուց էր գնում հայ գրականության զարգացման նոր ուղիների; արվեստի բարձր շափանիշների, հայ գեղարվեստը ելքոպական մակարդակին բարձրացնելու խնդիրների շուրջը: Գրական մթնոլորտում թրթում էր նոր խոսքի պահանջը:

Հասունացած տրամադրությունների խտացումը եղավ Վահան Տերյանի «Հայ գրականության գալիք օրը» դասախոսությունը:

Վահան Տերյանի կողմն էր գրական երիտասարդությունը՝ արվեստի նոր բարձունքներ գրավելու բուն մղումներով:

Ստեփան Զորյանի վրա ևս մեծ տպավորություն է թողնում Տերյանի խոսքը:

Դասախոսությունից հետո նա ճանոթանում է իր սիրելի, բոլորի պաշտամքանաստեղծի հետ:

«Մենք շատ ենք հետ մնացել,—անում է Վ. Տերյանը,— այսպես շի կառող մնալ մեր գրականությունը, պետք է նրան թափ տալ և բարձրացնել...»:

Արվեստի բարձր դասեր տալուց բացի, Թիֆլիսի միջավայրը Զորյանին ներշնչում է աղքային հպարտության զգացմունքներ:

Հայ բազմադարյան մշակույթը երբեք այնքան մեծ ուշադրության չէր պրժանացել, որքան տասական թվականներին։ Ն. Մառի հնագիտական պեղումներից հետո, որ համաշխարհային կարծիք ստեղծեց հայ ճարտարապետության շուրջը, երևույթ էին Վ. Բրյուսովի և Մանուկ Աբեղյանի հրապարակային այն դասախոսությունները, որով շարժվեց «լոռության սառուցը» և ի լուր ամենքի հոչակվեց հայոց միջնադարյան բանաստեղծության և ժողովրդական վեպի միջազգային նշանակությունը։

Թիֆլիսի միջավայրից Ստեփան Զորյանը ժառանքեց նաև մայրենի լեզվի պաշտամունքը, դարձյալ գրական ավագանու, հատկապես Ղազարոս Աղայանի շնորհիվ, որի հետևյալ խոսքը շրջում էր բերներերան։ «Մի ամաշեք մեր լեզվից։ Փողոցով անցնելիս բարձր խոսեք, որ ամենքը, օտարներն էլ զգան, թե կա հայ ժողովուրդ և հայոց լեզու, որը ոչ մի բանով պակաս չէ ուրիշների լեզուներից»։

«Մի ժամանակ, —գրում է Զորյանը ինքնակենսագրական գրության մեջ (1930), —տարվեցի սիմվոլիստներով և իմպրեսիոնիստներով։ Բայց դա կարճ տևեց։ Ռեալիստները միշտ էլ հաղթում էին»։

Շրջադարձի մեջ, անկասկած, վճռական է եղել գրական ավագների դերը, որոնք, ի դեմս Զորյանի, տեսնում էին «աստծո շնորհով» կոչված գրողին և ամեն կերպ քաջալերում էին նրա գրական մուտքը։ Առաջին պատմվածքների մասին բարձր տպագորություններ են հայտնել Շիրվանզադեն, Հովհաննելու, Նար-Դոսը, Վրթ. Փափազյանը, իսկ Վ. Տերյանը որոշել էր իր առաջաբանով, Մոսկվայի «Պանթեոն» հրատարակչության միջոցով տպագրել Զորյանի պատմվածքների հավաքածուն, որը, սակայն, չիրագործվեց պատերազմական հանգամանքների պատճառով։

Բնությունից Զորյանը ստացել էր գրողի ձիրք, գրական միջավայրը տվեց գեղարվեստական ճաշակ, կյանքը՝ մարդու սոցիալական կապերի ու հոգեբանության իմացություն։ այս ամենի շնորհիվ գրական ասպարեզ մտավ մի նոր անուն, որը կոչված էր խոշոր դեր խաղալու հայ գեղարվեստական արձակի պատմության մեջ։

## 2

Սկսած 1909 թվականից, երբ տպագրվեց «Քաղցածները» հոգեբանական պատկերը, Մտ. Զորյանը պարբերական մամուլում, առավելապես «Մշակի», էջերում, տպագրում էր իր պատմվածքները՝ կյանքի զանազան խնդիրների շուրջը։

1918-ին այդ պատմվածքներից նա առանձնացնում է նյութով ու տրամադրությամբ հարազատ գործերի մի հավաքածու, որն իրեւ «պատմվածքների և հատոր» տպագրում է Թիֆլիսի «Պատանի» հրատարակչությունը՝ «Երիտասարդ գրողների գրադարան» մատենաշարով։

Դա հայ գրականության պատմությանը հայտնի «Տիուր մարդիկ» գիրքն էր, որին հետևելու էին պատմվածքների մյուս «հատորները»՝ քաղված դարձյալ պարբերական մամուլից։

Ինչ-ինչ պատճառներով մյուս ժողովածուները լույս տեսան ավելի ուշ («Յանկապատրը»՝ 1923-ին, «Պատերազմը»՝ 1925-ին)՝ 1918-ից հետո գրած նոր գործերի հավելումներով։

Տասական թվականներին գրած պատմվածքները ժողովելով ըստ շարքերի, Զորյանը այդ առանձնացումով ոչ թե ներկայացնում էր իր զարգացումը՝

գրքից գիրք, ինչպես մեկնաբանվել է գրականագիտության մեջ, այլ դրանով ընդգծում էր յուրաքանչյուր շարքի նյութի որակական միատեսակությունը:

«Տիսուր մարդիկ» շարքը մեծ տպավորություն թողեց ժամանակակիցների վրա: Դ. Դեմիրճյանը «Տիսուր մարդիկի» քննարկման ժամանակ այսպես կնահատեց այդ գրքի «պատմագրական» կշիռը: «Այս գրքում ես զգում եմ մեր ազգային գրականության և եվրոպական գրական ձեւերի սինթեզը, ինչ պակասում էր մեզ մինչև այժմ: Հայկական արձակի մեջ ազգային ձեզ շարունակում է իր առանձին գոյությունը՝ Աբրովյանից մինչև գյուղագիրները և եվրոպական ձեզ՝ Ծիրվանզաղեց սկսած: Առաջին անգամ այդ երկու ձեւերի համադրումը ես գտնում եմ այս փոքրիկ գրքի մեջ»:

XX դարի արվեստում, հայ գրականության մեջ նույնպես, ուժեղացավ հետաքրքրությունը մարդու ճակատագրի հանդեպ. կյանքի ընդհանուր սոցիալական գծերի հետ միասին, որ XIX դարի ռեալիզմի գեղագիտական հիմունքն էր, գրականության մեջ տեղ գրավեց նաև առանձին մարդու պատմությունը:

900-ական—910-ական թվականների հայ իրականության համար բնորոշ երևույթ էր տիսուր մարդը՝ համընդհանուր սոցիալական ճնշածամի մեջ հայտնված այն մարդը, որին իրականությունը դատապարտել էր հոգեոր աղքատացման, գոյության մի կետի վրա անշարժանալու, մարդկային բովանդակությունից գրկվելու խաչին:

«Ստեփան Զորյան. տասական թվականներ» (1960) հետազոտության մեջ Խ. Սարգսյանը, զուգահեռ անցկացնելով Ա. Պ. Զեխովի «Խմբրե լիոդ» և «Տիսուր մարդիկ» ժողովածումների միջև և բնավ շժխտելով ստեղծագործական ներքին առնչությունները, այդուամենայնիվ, էական, անգամ արմատական տարրերություններ է տեսնում Զեխովի և Զորյանի հերոսների սոցիալական տիպաբանության մեջ. «Զեխովի հերոսների համար հեղձուցիլ է ինքնակալական ռեակցիայի մթնոլորտը, նրանց համար անհանդուրժելի է այդ իրականության կեղծիքը, նրա անհոգությունը, քաղքենիությունը, մարդկային արժանապատվության տրորումը: Ճիշտ է, նրանք այս ամենին պատասխանում են միայն ինքնասպանությամբ, կամ մահվան անտարբեր սպասումով, կամ էպիլեպտիկ ջղաձգումներով, կամ էլ շարունակում են իրենց գոյությունը՝ միշտ դժգո՞հ ու բարկացած: Բայց նրանց բոլորի մեջ էլ ինչ-որ մի կայծկա, որ կապվում է ապագայի հետ: Նրանք երազում են ազնիվ ու պոետական կյանքի մասին, նրանք ունեն «մարդկային տաղանդ»... այսինքն՝ ուրիշի տառապանքը սուր զգալու ընդունակություն, «ընդհանուր իդեալի»... այսինքն աշխարհայացքի մեծ կարոտ: Նրանք առաջ են նայում և ոչ թե ետ: Նրանք իր ժամանակի լավագույն մարդկանցից են: Նրանք վերընթաց գծի վրա են...

Բոլորովին այլ են Զորյանի «տիսուր» մարդիկ: Նրանք ոչ թե վերընթացի, այլ վարընթացի մարդիկ են: Կապիտալիզմի ջրաղացքարը կամ անդառնալիորեն մանրացրել է նրանց, կամ աղճատել, այլանդակել, երկու դեպքում էլ նետել կյանքի վերջին շարքերը»<sup>7</sup>:

Սոցիալական իրենց նկարագրով Զորյանի հերոսները ավելի շատ հիշեցնում են Գոգոլի («Ենինել»), Դոստոևսկու («Խեղճ մարդիկ») հերոսներին, իսկ Զեխովի հերոսները, որոշ իմաստով, ուսւ գրականությանը քաջ ծանոթ «ավելորդ մարդու տարատեսակն են՝ պատմական նոր իրադրության մեջ:

Զորյանից առաջ հայ գրականության մեջ «տիտուր մարդու» դիմագիծը երևաց արդեն նար-Դոսի «Մեր թաղը» պատմվածաշրում՝ մարդկային այդ որակը կապվելով որոշակի խավի՝ արհեստավորության և աշխարհագրական որոշակի միջավայրի՝ մեծ քաղաքի արվարձանի հետ:

Ձորյանը վերացրեց այդ սահմանագծերը. Նրա «տիտուր մարդը» այդպիսին է և գավառում, և գյուղում, և «լուսավորության կենտրոնում»:

Այնուհետև. Զորյանի «տիտուր մարդու» էությունը որոշվում է ոչ այնքան այդ մարդու սոցիալական վիճակով, որքան այն կյանքի ճնշածամային իրադրությամբ, որն արտադրում է մարդու այդ որակը, այսինքն՝ հասարակական ակտիվ գժերից ու ձգումներից միանգամայն զրկված, իրենց նեղ պատյանների մեջ ամփոփված, իրականությունից կենսական գրգիռներ շտացող «տիտուր մարդկանց»:

«Թիֆլիսի Սոլդատսկի բազարով... անցնում էր մի երիտասարգ՝ մի փոքրիկ կապոց ձեռքին»:

Այդ երիտասարդը նախկին բանտարկյալ էր, որ նոր էր դուրս եկել բանտից և գնում էր իր հանգույցալ հոր «լավ ծանոթի»՝ խանութպան Աբելի մոտ, նրանից դրամական օգնություն խնդրելու:

«Բարի և ոռմանտիկ» դեմքով խանութպանը սպասածից ավելի սիրալիր ներս է կանչում անակնկալ այցելուին, որը խանութ մտնելուց առաջ այնքան սուր ապրումներ էր ունեցել: Մտածում էր, կհավատա՞ արդյոք խանութպանը, կմեկնի՞ օգնության ձեռք:

Տեղի է ունենում անսպասելին:

Երիտասարդը ոչ միայն շի ստանում ակնկալված շնչին օգնությունը, այլև խանութպանին է թողնում գրպանի վերջին կոպեկները՝ փոխարենը առնելով անպետք մի շաքարաման. «Մի քանի րոպեից արդեն նա քայլում էր նորից Սոլդատսկի բազարով, նույն կապոցի հետ մի նոր շաքարաման ձեռքին»:

Սա «Ծաքարաման» պատմվածքի բովանդակությունն է:

Սայրահեղ կարիքի մեջ գտնվող ուսանող Արշամը արդեն քանի երրորդ անգամ մտքում որոշում է կայացնում՝ զնալ վաճառական թևոսի մոտ և պահանջել հասանելիք դասագինը. «Բավական է այլևս, զնամ պիտի և ասեմ՝ «Պարոն, տվեք իմ հասանելիքը»... Այո, այդպես էլ կասեմ, թող նեղանա: Սառը ջուր շատ կա, անամոթ: Ամեն օր «Էսօր-էգուց, էսօր-էգուց» և վերջ շկա՝ «Էսօր-էգուցին»: Խարերա: Փող ես պարտք, տուր, շես տալու, ասա շեմ տալիս: Այն ժամանակ անելիքս կիմանամ: Թե չէ՝ տանել-բերել ու խարել... Ինքդ լավ գիտես, միջոցներից զուրկ ուսանող եմ և միակ եկամուտը դասագինն է... Պարարտ խոզ է ինչը, կարծես ես էլ իրեն պես ապահով իմ և ամեն օր կակառ եմ խմում...»:

Ուսանող Արշամը հույսեր է կապում ստանալիք դասավարձի հետ. դրանով նոր հագուստ կգնի և ժամանակավորապես կդառնա ապահով կենցաղի տեր:

Դեմ առ դեմ հանդիպելով վաճառականին, Արշամի հոգում կուտակված զայրութիւն իշնում է: Նրա հետ էլ տեղի է ունենում նույն բանը, ինչ տեղի ունեցավ «Ծաքարամանի» հերոսի հետ: Արշամը ոչ միայն շի ստանում դասավարձը, այլև վաճառականին պարտք է տալիս իր մոտ եղած մի քանի կոպեկը և խորտակված հույսերով դուրս գալիս փողոց:

Սա էլ «Վճռական մարդը» պատմվածքի բովանդակությունն է:

Այս պատմվածքներում երկու խեղճ, անճարակ հերոսների դիմաց կանգնած են երկու մանրավաճառ, թվում է, թե նրանցից ավելի ուժեղ և ավելի զորավոր: Սակայն և Աբելը, և Թեոսը նույնպիսի «տիտուր մարդ» են, ինչպես «տիտուր» են նախկին բանտարկյալն ու տնային դասատուն: Բանն այն է, որ Ստեփան Զորյանը մարդու «տիտոր» լինելը բացատրում է ոչ այնքան նրանց սոցիալական վիճակով. դրանք այն մարդիկ են, որոնք շունեն հոգեկան բարձր մզումներ, ապրում են միօրինակ, ձանձրալի, սահմանափակ կյանքով:

Սա բնավ չի նշանակում, թե Զորյանը զանց է առնում սոցիալական վիճակների տարբերությունը:

Ցայտուն օրինակներից մեկը «Ճաշը» պատմվածքն է:

Այս պատմվածքը բացվում է վերին աստիճանի տպավորիչ նկարագրությամբ.

«Ժամը շորսն է:

Սոլոլակ թաղը ճաշում է:

Օրվա այս պահին թիֆլիսի այդ հարուստ թաղի արտաքին տեսքը խաղաղ էր, ինչպես գյուղի հնձի ժամանակ: Փողոցների և գրասենյակների ծանրախոհ կյանքն ու շարժումը անցել է սեղանատները, ուր, մարդկանց ձայներից բարձր՝ հնչում է ափսեների, պատառքաղների ու դանակների զնոցը: Սպասավորները մեկը-մյուսի հետեւից ելումուտ են անում խոհանոցից սեղանատուն, սեղանատնից խոհանոց: Տիրում է մաքրություն, լիովիտյուն և ձևականություն: Մարդիկ ուտում են ծանր և խոսում են անվրդով:

Այնուհետև Զորյանը նկարագրում է պարոն Լեոն Աղիջյանի ճաշի հանգիստավոր արարողությունը,—կուշտ մարդու սովորական կենցաղ,—ուր այդ հոգիացած ու ձանձրալի, շափազանց ձանձրալի մարդը երեւում է հոգեկան աշխարհի բացարձակ դատարկությամբ:

Պարոն Լեոնի ճաշի միջոցին ամեն օր նրա թիկունքում կանգնած է լինում սպասավոր Գրիգորը. «Պարոն Լեոնը մի քանի րոպե լուռ ճաշում է: Սպասավորը, նրա ետեւը կանգնած, նայում է նրա թիկունքին, գլխին ու ծնոտներին, որոնց շարժումից շարժվում են և նրա ականջները»:

Լեոն Աղիջյանը՝ անվերջ իր վշտերից պատմող, շարունակ խոհարարի վրա մրթմրթացող, անկապ-անկապ խոսող այդ մարդը ստրկային կախման մեջ է պահում գյուղից եկած սպասավորին, ձգձգելով վերջինիս կուտակած 150 ռուբլու հատուցումը:

Համարյա նույնությամբ կրկնվում է «Եաքարաման» և «Վճռական մարդը» պատմվածքների իրադրությունը: Այստեղ իրար գեմ են կանգնում երկու տիտուր մարդ, մեկը՝ ապահով մարդու, մյուսը՝ թշվառ մարդու «տիտուրթյամբ»:

Այս պատկերներում Զորյանը ետ է տանում կյանքի վարագույրը՝ ներկայացնելու այն միջավայրի էությունը, որն իր ծանր կաղապարներով ճգմում է մարդուն:

Անգույն, մանր մարդիկ են և «Եաքարաման», և «Ճաշը» և սրանց ազգակից մյուս պատմվածքների («Օրիորդ Մարիամը», «Բարեկամները», «Կամաց խոսքեր» և այլն) հերոսները: Անզոր և համակերպվող մարդիկ, որոնք ոչինչ չեն ձեռնարկում՝ բովանդակություն տալու իրենց կյանքին: Ավելին՝ իրենց արարքներով բեռ են դառնում կյանքի համար:

Դրանց մեջ են սովորական կատակի պատճառով կախաղան բարձրացող ամուրի հաշվապահը, աշխարհի հետ բոլոր թելերը կտրած և կյանքի բոլոր տպավորությունները իր թավշաբուրդ կատվի մեջ ամփոփած ծեր գործակագույնությունները:

տարը, մի թյուրիմացության պատճառով «երջանիկ ամուսնություն» երագող օրիորդ Մարիամը:

Սրանք թեև հարուցում են հեղինակի կարեկցանքը, բայց նրա իդեալը չեն: Ավելին, կարեկցելով կյանքի ծախողակներին, Զորյանը միաժամանակ դատապարտում է նրանց՝ համակերպվող բնավորության, թույլ վարքազժի համար:

Ըստ էության «տխուր մարդիկ» են նաև կյանքի փոքրիկ հրամանատարներ՝ թեմական դպրոցի վերակացու թելեկյանը, որ ցանկանում է «մամուլի նյութ դարձնել» գործից իրեն աղատելու փաստը («Վերակացուա», «Ձերմաշափը» պատմվածքի Կարապետը՝ կյանքի ամեն մի արտահայտության հանդեպ ունեցած բնագրական սարսափով), հոգաբարձուն ու քահանան, այլև նույն «Շաքարամանի» ու «Վճռական մարդու» վաճառականները:

Ո՞րն է, Զորյանի դիտումով, այդ հերոսներին «տխուր մարդիկ» դարձնող գլխավոր հատկանիշը:

Ոչ այնքան սոցիալական խեղճությունը, որքան հոգեկան կյանքի ծայրաստիճան աղքատությունը, հոգեկան ստրկությունը:

Դրանք թույլ մարդիկ են, ապրում են տաղտկալի ու անհեռանկար կյանքով, անտրտունջ տանում են իրենց տխուր ճակատագիրը և ամենաթեթև փորձն իսկ չեն անում ընդվզելու կյանքի կապանքների դեմ: Տխուր մարդկանց այս սերունդը, իշարկե իրականության ծնունդ է, բայց նրանց կործանման, անէացման պատճառը նաև իրենք են, իրենց հասարակական պասսիվությունն ու ներքին անազատությունը:

Ի տարբերություն XIX դարի քննադատական ռեալիստների սոցիալական բևեռացումների, Ստ. Զորյանը «տխուր մարդկանց» ներկայացնելիս առավել կարևորում է կյանքի «մանրուքների» ճնշումը մարդու վրա, մանրուքներ, որոնք իրենց լծի տակ մանրացնում և աղքատացնում են կյանքը, մարդկային գոյությունը դատապարտում են պատահականության՝ պատահական դիպվածի:

Տարբերվելով Զեխովից հերոսների սոցիալական տիպաբանությամբ, Ստ. Զորյանը «յուրացնում է» չեխովյան արվեստի որոշ սկզբունքներ, որոնք վճռական տեղ են գրավում նրա պատմվածքի գեղարվեստական համակարգում:

Ինչպես Զեխովը, Ստ. Զորյանն արդեն «Տխուր մարդիկ» շարքում ներսից մեծացնում է պատմվածքի կարճ ձեզ, պատմվածքը դարձնելով առանձին անհատների ճակատագրի, մարդու կենսագրություն (և ոչ թե կենսագրության որևէ հատվածի, որևէ միշտեպի պատմություն):

Զորյանի յուրաքանչյուր պատմվածք մի ճակատագրի պատմություն է:

Այնուհետև՝ այդ ճակատագրը Զորյանի պատմվածքներում երեսում է ոչ թե պարզ նկարագրության, այլ հոգեբանական խորացումների գեղագիտության որակով: Այլ խոսքով՝ Զորյանի ստեղծագործության մեջ հայտնվում է դրաման՝ դրամատիկական միջանցիկ թելը, որի միայն նախնական ձևերը կային նախորդների (Նար-Դոս, Վլթ. Փափազյան և այլք) պատմվածքներում:

Զորյանի հոգեբանական թափանցումը իր որակով դոստուսկիական հոգու մերկացումը, մարդու հոգեկան գաղտնիքների միկրոսկոպիկ բրդումը չէ, այլ՝ մոպասանյան և չեխովյան հոգեբանական խորացումը՝ հիմնված «պատահական», դիպվածային փաստերից, անգամ անեկդոտային սյուժեներից ծագող ճակատագրական, դրամատիկ կենսավիճակների վրա:

«Տխուր մարդիկ» շարքում Զորյանը Զեխովի և Մոպասանի հետ առնչու-

թյուններ է հայտարերում նաև գեղարվեստական տրամադրությունների, վերաբերմունքի ոլորտում:

Տարիներ անց գրած իր հոդվածում՝ նվիրված Զեխովի վարպետությանը, Զորյանը հետևյալ կերպ է բնութագրել մեծ գրողի առանձնահատկություններից մեկը. «Գեխովը գրում էր կյանքի ստվերուտ կողմերի մասին, շբարձրացնելով իր ձայնը. Դա գրական գիտակցված պրիոմ էր. Ուշադիր ընթերցողը այդ պրիոմի տակ միշտ տեսնում է հեղինակի մեծ սիրար»:

Մի այդպիսի բան էլ կարելի է ասել իր՝ Զորյանի արվեստի յուրահատկության մասին:

«Տխուր մարդը» ամենակն էլ Զորյանի իդեալը չէ. նա մերկացնում է այդ մարդուն, մերթ հումորով, մերթ երգիծական վերաբերմունքով ծիծաղում է ստրկային հոգեբանությանը վարժված, «տառապող ձախողակների» վրա, որոնք ընդունակ չեն կյանքում լուծելու և ոչ մի հարց:

Թե նյութապես և թե բարոյապես տառապող, թե տանը, թե դրսում պատյանավորված, գորշ, ձանձրալի, անհեռանկար կյանքով ապրող «տխուր մարդը», Զորյանի վերաբերմունքով, դատապարտված է թողնելու ասպարեզը:

Աշքածակ քահանան, հեղեցական տարբերանշանների համար ամեն տեսակի տգեղ արարքի պատրաստ տեր-Հայրապետը («Տիր-Հայրապետ»), դըպրոցի ծայրահեղ կասկածամիտ վերակացուն («Ձերմաշափը»), որը կարգ ու կանոնի հանդեպ ունեցած իր երկյուղով հիշեցնում է Զեխովի «Պատյանով մարդուն», —բոլոր այս հերոսներն արժանանում են հեղինակի դատապարտող վերաբերմունքին:

Զորյանը իր քննադատության սլաքն ուղղում է նաև հասարակական այն միջավայրի դեմ, որն արտադրում է, մի կողմից՝ տաղտկալի ու անհեռանկար կյանքով ապրող մանր մարդկանց, մյուս կողմից, սրանց խեղճությունը շահատակողներին, նույնպես մանր մարդկանց:

Ստեփան Զորյանի վերաբերմունքը հիշեցնում է իր ամենասիրելի գրողներից մեկի՝ Ա. Պ. Զեխովի, վերաբերմունքը դեպի իրենց խաչին դատապարտված, ուղեմոլոր ու շնչահեղձ լինող հերոսները:

Զեխովին նվիրած ակնարկում Մաքսիմ Գորկին հետևյալ կերպ է բնութագրել գրողի և իր հերոսների հարաբերությունը. «Անզոր մարդկանց այդ ձանձրալի, գորշ ամբոխի միջով անցավ մի մեծ, խելոք, ամեն ինչի նկատմամբ ուշադիր մարդ, նայեց իր հայրենիքի այդ ձանձրալի բնակիչներին և տխուր ժպիտով, մեղմ, բայց խորին կշտամբանքի տոնով, անհույս թախիծը դեմքին, անկեղծ ձայնով ասաց. «Տխուր եք ապրում, պարոնա՛յք»:

Այսպիսին է նաև Զորյանի և իր հերոսների փոխհարաբերությունը. Զորյանը ևս դժգոհում է հերոսների ապրելակերպի ձևերից ու վարմունքներից:

Այնուամենայնիվ, բացասաման այս բանաձեռ Զորյանի պատմվածաշարում ոնի իր առանձնահատկությունը. «Տխուր մարդու» հանցանքը (կամ մեղքը) գալիս է կյանքից, միշավայրից, դառնում է «կյանքի մեղքը», իրականությունն է իր մամլակներով մարդուց հանում կենդանի հյութերը, դարձնում կամագուրկ, թուլամորթ, հասարակական գրգիռներից օտարված էակ:

Զորյանը պատճառները որոնում է ոչ թե մարդու ներսում, այլ մարդուց դուրս՝ հասարակական կառուցվածքի մեջ, —յուրովի արտահայտելով իր կարեկցական վերաբերմունքը զոհերի՝ «խեղճ մարդկանց», հանդեպ:

Տասական թվականներին գրած պատմվածքներում Ստ. Զորյանը վերստեղծում է նույն իրականության պատկերը, այդ իրականության տարբեր երևոյթների, տարբեր հարաբերությունների մեջ հայտնված մարդկանց ճակատագրի միջոցով:

Կյանքի մի երևոյթից անցնելով մի այլ երևոյթի նկարագրության, Զորյանն այդ «անցումներով» հետապնդում է ժամանակի դիմագիծը, իրականության «բարոյական զերմաստիճանը» հայտաբերելու խնդիր:

Զորյանական գլխավոր խնդրի ոլորտում են նաև այն պատմվածքները, որոնք ներկայացնում են նույն տասական թվականներին բնորոշ երևոյթներից մեկը՝ «մարդու և «իրերի» բախումը, «մարդու և «սեփականատիրոջ» հարաբերությունը:

Այս թեման արծարծող պատմվածքները Զորյանը խմբավորել է «Յանկապատ» շարքում, ցանկապատ բառին տալով սիմվոլիկ իմաստ. իրերը դառնում են մարդում մարդուց բաժանող ցանկապատեր:

Այս շարքում Զորյանը պատմում է, թե ինչպես են մարդկային սովորական, բնական կապերը կազմալուծվում, երբ այդ կապերի մեջ հայտնվում է ժիմ»-ի խնդիրը, երբ գլուխ է բարձրացնում սեփականության բնագդը:

Մի ժամանակ հարաբերական անկախության մեջ ապրած մարդիկ հասարակական ընթացքի նոր փուլում՝ բուրժուական հարաբերությունների սրման պայմաններում, սկսում են ապրել իրենց բնական էությանը խորթ ձևերով՝ իրենց երբեմնի (թեկուզ թվացյալ) ազատությունը ստորադասում են իրային-նյութական կապերի ահեղ ուժին:

Իրերը դառնում են ֆետիշներ, հարուցելով մարդկանց բարոյական վերասերումը:

«Մարդու և «սեփականատիրոջ» բախումը, իհարկե, գրականության մեջ նոր երևոյթ չէր: Մանավանդ XIX դարի համաշխարհային գրականությունը սղողված էր «կատաղած փողերի» «բալզակյան» թեմայով և սեփականատիրական հոգեբանության մերկացնումներով: Քննադատական ոեալիզմը բարձրացավ և զորեղացավ այդ նյութի վրա:

Հայ գրականության մեջ նույնպես, դեռ Զորյանից շատ առաջ, այդ երեվոյթը ունեցել է բազմաթիվ արծարծումներ:

Թեմայի մեկնաբանության մեջ Զորյանի բերած նորությունն այն է, որ «մարդու և «սեփականության» հարաբերությունը նա հասարակական ոեալիզից տեղափոխում է ավելի «աննշան» ոլորտներ, ուր գործում են բարոյական վերասերման, հոգեկան խոր ճնշաժամի նույն օրենքները, ինչ «ընտիր»՝ դասական իմաստով բուրժուական հասարակության մեջ:

Զորյանի ներկայացրած իրականությունը՝ ըստ ամենայնի խեղճ, «բաղարակրթության» շավիղներից դուրս ընկած մի իրականություն, այլևս դառնում է «մեծ հասարակության» փոքրացված պատճեն, ուր գոյության դրական սկզբանքներից ավելի կշիռ ունեն բարոյականության ցածր նորմաները:

Այս իրադրության մեջ «տիսուր մարդու կողքին հայտնվում է ծանր մարդը, որն իր արարքներով աղքատացնում ու տգեղացնում է կյանքը, արժեզրկում է բարոյականության ստուգված շափանիշները:

Նանր մարդու նկարագրի բացահայտումն է «Յանկապատ» շարքի նյութը:

Զորյանի պատումը այս շարքում երևում է ավելի խոր վերլուծական շընչով. մինչ «տիուր մարդիկ» գերազանցորեն ներկայացվում էին իրենց գորշ, տաղտկալի գոյությանը պատշաճող հումորի (զորյանական նուրբ հումորի) արտահայտությամբ, առանձին դեպքերում նաև երգիծական մերկացումներով («Ձերմաշափը» և այլն), ապա «Ցանկապատի» պատմվածքներում գործում է պատճառ-հետևանքների վերլուծական սկզբունքը, ուստի և ավելի են ընդգծվում Զորյանի բացասաման բանաձեւերը:

Զորյանի նկարագրած իրականության մեջ «աննշան», իրենից ոչինչ չներկայացնող իրը դառնում է մարդկանց կյանքը ճգնաժամային կետի հասցնող հզոր ուժ:

Ճգնաժամային կետի վրա են Մինասն ու Թեոսը՝ «Ցանկապատ» պատմը վածքի հերոսները: Վաղեմի հարևաններ են, տարիների վեճ ունեն բառացիորեն մի թզաշափ հողի համար: Հողի այդ աննշան պատառն էլ դառնում է իրարից խորթացնող ցանկապատ:

Մինասն ու Թեոսը այնքան են կլանված իրենց հողաբաժինը մի թզով ավելացնելու մտքով, որ անգամ ծանր աղետի ժամին (ուր որ է թշնամին մոտենալու է իրենց գյուղին) ամեն ինչից վեր են դասում սեփականությունը:

Ցանկապատի պատճառով նրանք կանգնում են բարոյական վերասերման ծանր փաստի առաջ: Զորյանը ցանկապատի, ինչպես և գյուղական աղբյուրի մոտ կոտրված կծի («Ղաշաղանը»), ինչպես և մի կովի պատճառով թշնամացած եղբայրների («Ծովանը») սյուժեների վերլուծությամբ գալիս է այն եղբակացության, թե ինչպես կենցաղը իր կնիքն է զնում մարդկանց հոգեբանության վրա, հոգեր ազատության զգացումը փոխարինում է «նյութի գերությամբ»:

«Ծովանը» պատմվածքում, ի տարրերություն «Ցանկապատի», կենցաղին սովորական երեսությը (եղբայրների կոիզն ու թշնամությունը մի կովի համար) մատուցվում է արդեն փիլիսոփայական լայն պլանով:

Դրա կրողը Սովանն է՝ իր «մտածմոնքներով»:

Թե՛ իր տերերի վերաբերմունքի մեջ կատարված փոփոխությունը (առաջված փաղաքշող վերաբերմունքին փոխարինել է թշնամականը), թե՛ ճանապարհորդության ընթացքում (Սովանը փախչում է անտառ, հետո մի տիրոչից անցնում մյուսին, մի վայրից մյուսը) ստացած տպավորությունները Ծովանին կանգնեցնում են բազմաթիվ հարցերի առաջ՝ ինչո՞ւ են մարդկան անհաշտ, ինչո՞ւ են շար ու կեղծավոր, ինչո՞ւ են շարունակ կոիզների մեջ, որո՞նք են ամենօրյա գժությունների պատճառները, «մտածում էր, մտածում և ոչինչ հասկանում»:

Այդուամենայնիվ, Սովանի համար պարզ է երևույթը՝ մարդկային հարաբերությունների ապականությունը, այդ հարաբերությունների մեջ բուն դրած կոպիտ հաշվի ոգին, որը և թելադրում է մարդկային կյանքի բացասաման հետևյալ եղբակացությունը. «Օ՛, տիուր է մարդկանց աշխարհը»:

Սա գրեթե նույն սահմանումն է, որ արտահայտել է Հովհաննես Թումանյանը «Եղջերուն» (1909) պատմվածքում. «Էնպես տգեղ էր թվում ինձ կյանքը»:

Նկարագրելով շարիքը, գույքային հարաբերությունների վրա կառուցված աշխարհը, սեփականատիրական կրքերի եռուզենք, Զորյանն, այդուամենայնիվ, բացասաման բանաձեւը չի դարձնում բացարձակ: Ավելին, դրանց կողքին դնում է նաև աշխարհի դրական ընկալման բանաձեւերը:

Դրական աշխարհատեսության կրողը այս պատմվածքում Սովանն է, որի գարձը դեպի բնությունը նշանավորում է կյանքի հաղթանակը մարդկային

տգեղ բնազդների դեմ. «Սովանն արածում էր պառավ Զեյրանի կողքին և երբեմն-երբեմն, պողը գավակին ու կողերին խփելով, բարձրացնում էր ծանր գլուխը, և իր խոր, վճիտ աշքերով նայում էր հեռու-հեռու մշուշապատ հորիզոններին, ապա, աշքերը փակելով, դունը թեթևակի բարձրացնում էր դեպի արևը, կարծես նրան իր սրտի գոհոմակությունը հայտնելու շերմության և առատ կանաչի համար»:

Հովհ. Թումանյանից ժառանգած աշխարհամեծարման այս գեղագիտությունը երևում է անգամ «Խնձորի այգին» պատմվածքում՝ Զորյանի թերև ամենից ավելի ողբերգական բովանդակություն ունեցող գրվածքում:

Սա ևս, ինչպես «Սովանը», գրված է քնարական-դրամատիկական պատումի կանոններով, պատումի մի եղանակ, որը հնարավորություն է տալիս իրականությունը ներկայացնել ծտվերներով ու լույսերով, բացասական ու դրական արժեքներով:

Գործողությունը կատարվում է Օրան ավանում, որի հպարտությունը խնձորենիների այգին էր. «Մի իսկական այգի, որի ծառերը կանոնավոր շարքեր կազմած, հավասար հեռավորության վրա, գրեթե հավասար բարձրությամբ կանգնած են, ինչպես պարի պատրաստված՝ ձեռք-ձեռքի տված՝ գարնանը կրով ճերմակած բներով, ամառը՝ ծպտուն ու առողջ խնձորներով բեռնը ված, իսկ աշնանը՝ տերևաթափ ու հոգնած քաղից ասես վիրավոր»:

Այս հրաշալի այգին ունի իր հրաշալի այգեպանը:

Մարտին ապեր է՝ բանաստեղծական անմնացորդ նվիրումով իր այգու յուրաքանչյուր ծառին կապված և նրանց ծաղկումով իր կյանքը զարդարող մի ազնիվ ու հպարտ մարդ:

«Մարտին ապերը, — հանձնարարում է Զորյանը, — գիտեր այգու յուրաքանչյուր ծառի կենսագրությունը, ինչպես հայրն իր զավակների, նրանց պատահած դժբախտությունը. ծառի առաջին ծաղկումը նրան պատճառում էր զարմանալի հրճվանք, ինչպես զավակի հարսանիքը ծնողներին. նրանց հիվանդությունը նրան տիրեցնում էր և ստիպում իր հոգածությունը կենտրոնացնել հիվանդ ծառի վրա. կոտրված ճյուղը, կարկտահար ծառը նրա սիրտը լցնում էին դառն վշտերով, իսկ նոր պատվաստների առաջին կանաչն ու ընձյուղում՝ անասելի բավականությամբ ու հրճվանքով...»:

Մինչ Մարտին ապերը խնձորի այգուց էր քաղում կյանքի գեղեցկությունը և, խնձորենիների նորանոր տիսակներ աճեցնելով, զարդարում էր կյանքը, ուրիշները այգուն նայում էին սեփականատիրոջ ագահ աշքերով: Դրանց մեջ են այգեպանի հարազատ աղջիկը՝ նոյեմբեր և նրա գինեվաճառ փեսան՝ Արտուշը:

Երբ մեռնում է Մարեթ նանը և Մարտին ապերը մնում է մենակ, «հարազատները» ավելի են սրում այգուն տիրանալու ախորժակը: Շուտ-շուտ այցի են գալիս, նվիրվածության ցույցեր են անում, բայց իրենց հոգու խորքում փայփայում են այն միտքը, որ շուտով, չդիմանալով վշտին, Մարտին ապերը կմեռնի և ժառանգության օրենքով այգին կանցնի իրենց ձեռքը:

Մինչ նոյեմբ ու Արտուշը որոճում էին իրենց հանցավոր ծրագրերը, մինչ աշխատում էին Մարտին ապորից հեռու պահել մյուս աղջկան ու փեսային, այգեպանն ամուսնանում է այգում աշխատող «գաղթական» նոմութարի հետ: Նրանց ամուսնական դաշինքը, սակայն, ենթարկվում է ծանր փորձության: Դա այնպիսի շարությամբ է լցնում այգու վրա «աշք տնկած» «հարազատնե-

րին», որ նրանք անում են հնարավոր ամեն ինչ՝ ժառանգական իրավունքը շկրցնելու համար:

«Եթե ժառանգ ունեցավ, էն էլ տղա, պրծավ», — խորհրդաժում է խանութ-պան փեսան և իր հանցավոր մտքերը հայտնում կնոջը:

Եթե այլևս անհնարին է դառնում «ցնորդած ծերունուն» «գարձի բերելը», Արտօւն ու Նոյեմը դիմում են ոճրագործության:

Նունուֆարը գնում է եկեղեցի՝ ժամերգության: Եկեղեցուց դուրս գալիս նրա առաջ տնկվում է Նոյեմը և հարգածում: Կիսամեռ վիճակում Նունուֆարին տում են հասցնում, ուր մի շաբաթ հետո փշում է հոգին:

Նունուֆարի մահը տակն ու վրա է անում Մարտին ապոր կյանքը: Խոր-տակվում են բոլոր երազանքները և խնձորի այգին, որ զարդարում էր նրա էությունը, այլևս դառնում է ամենամեծ թշնամին:

Պատմվածքն ավարտվում է ցնցող պատկերով: Գարնան մի առավոտ այ-զու պահակը թխկոցի ձայն լսելով, դուրս է վագում, նա տեսնում է, թե ինչ-պես, «արխալուղի թերը քշտած, փեշերը գոտին խրած» Մարտին ապերը զետին է տապալում այգու ծառերը: Նա կործանում է իր կյանքի նեցուկը:

Սա է, հիմնական գծերով, «Խնձորի այգին» պատմվածքի սյուժեն: Բայց նրա բովանդակությունն այս սյուժեից ավելի հարուստ է և իմաստալիք:

Խնձորի այգին Մարտին ապերը ստեղծել էր իր ամբողջ կյանքի ընթաց-րում և նրանից քաղել հոգու լույսը, բարությունը, կյանքի սերը: Մարտին ապերը աշխարհը դիտում է լուսավոր հայացքով, մեծ և ամբողջական շափա-նիշներով: Դրա մի արտահայտությունն էր նրա ամուսնությունը Նունուֆարի հետ: Դիմելով այդ քայլին, այգեպանը խախտեց մի շարք ավանդական սովո-րություններ: Նախ այն, որ առաջին կնոջ մահից դեռ մեկ տարի էլ չեր ան-ցել, հետո՝ Նունուֆարը «գաղթական» էր, և, վերջապես, Մարտին ապերը ան-համեմատ տարիքով էր նրանից:

Զնայած այս հանգամանքներին, — գրում է նշանավոր քննադատ Խ. Մար-գրսյանը իր «Ստեփան Զորյան» (1961) գրքում, — «ոչինչ շկանգնեցրեց Մար-տին ապորը, մինչև անգամ աղջիկների վայնասունը: Նրա վճիռը անհողդող էր, կամքը՝ անընկձելի: Նրա համար նվիրական էր իր հանգույցալ կնոջ հի-շատակը, բայց նա խղճի խայթ շգգաց ու նրա ձեռքը շդողաց, երբ հաջորդա-բար Նունուֆարին տվեց Սաբեթ նանի գլխաշորը, ապա շորերը, վերջը՝ վե-րարկուն ու ամբողջ տունը: Մարտին ապոր սերը ողջախոհ էր, մաքուր և ազնիվ: Նրա արածը սրբապղծություն չէր, այլ սրբագործություն: Աշխարհը լույս է ու ստեղծագործություն, և Մարտին ապերն ընթացավ աշխարհի հետ միասին, խոնարհվելով նրա օրենքների առջև:

Մարտին ապերը կենսափրության ու մեծ կամքի ազգային խաննվածքն է: Միայն կյանքը պաշտող ու նրա գեղեցկությունը գնահատող մարդը կարող էր կտրատել այն այգու ծառերը, որ նրա համար եղել էր ամենանվիրական բանը աշխարհում: Իր այդ քայլով Մարտին ապերը դրսկորում է ծողովրդա-կան մարդու բարոյական վեհությունը և խոր զզվանքը սեփականատիրական աշխարհից:

Հայ գրականության ամենաառժեղ կանացի կերպարներից է Նունուֆարը: Նա մեծացել է ավանդական միջավայրում և այդ միջավայրից է ժառանգել իր ընավորության լավագույն գծերը՝ առաքինություն, ազնվություն, կյանքի և աշխատանքի սեր: Այդ գծերը տալիս են մարդկայնության մի ամպիսի բարձր ու անթերի որակ, որը յուրովի է ողղողում Մարտին ապոր հոգեկան աշխարհը:

Շատ կորուստներ է ունեցել նումուֆարը, կորցրել է ընտանիքն ու հարազատներին, բայց վառ է պահել նահապետական հայ կնոջը հատուկ աշխատասիրությունն ու ազնվությունը:

Նունուֆարը հայ կնոջ բարոյական մաքրությունն արտահայտող կերպար է: Նրա բնավորության վեհությունը երևում է հատկապես մահվան տեսարանում. շար, անխիղճ մարդիկ արել են ամենասարսափելին՝ հարվածել են միայն և միայն քնքության կարոտ կնոջը, բայց նա անտրտունց տանում է իր դժբախտությունը և անգամ մահվան շնչում չի տալիս հարվածողի անոնց:

Պատմվածքում, իբրև լույսի և ստեղծագործության աղբյուր, երեսում է Խնձորի այգու «կերպարը»: Խնձորի այգին այստեղ նույն դերն է խաղոմ, ինչ թալի այգին Զիխովի Համանուն դրամայում:

Քնարական ջերմությամբ և խանդաղատանքով է Զորյանը նկարագրել այդին. «Այդ երեկո լույս խաղաղություն էր տիրում խնձորի այգում: Այդ գուցե նրանից էր, որ լիալուսինը փայում էր պարզ երկնքում և կաթնագույն լույս էր թափում դաշտի, գյուղի և այգու վրա: Դրանից էր գուցե, որ գորտերը մոտիկ ճահճում ու գետափին կըոկըռում էին խմբով իրենց թախծալի երգը, շները լէին հաշում, խնձորենիները կանգնել էին անշարժ, ասես լուսնով հմայված, իսկ առուն կարծես երազում ծիծաղում էր խոտերի մեջ և մեկ-մեկ ժրպտում լուսնին»:

Սա ոչ թե բնության սովորական պատկեր է, այլ շնչավորված, կենդանի աշխարհ, որն իր գույները ու լույսերն է տալիս այգու խսկական տերերին:

Մարտին ապոր և նունուֆարի կերպարների կողքին գործում են նաև այն ուժերը, որոնք ամայացնում են աշխարհը և կործանում նրա գեղեցկությունը:

Սեփականատիրական միջավայրի բնորոշ ծնունդն է խանութպան Արտուրը՝ իր մեջ ամբարած այդ միջավայրին հատուկ եսամոլական կիրքը, անմարդկային վարքագիծը, շահախնդրությունը:

Եթե Մարտին ապորը և նունուֆարին պատկերելիս Զորյանը դիմում է բնարական-հուզական հնչերանգի, ապա, Արտուրի կերպարին դիմելիս, բանեցնում է քննադատական մերկացման հնչերանգը:

Դա երեսում է նրա թե արտաքինը և թե բարոյախոսությունը ներկայացնելիս: Արտուրին ունի այն համոզումը, որ հարստանալու համար շպետք է խարություն զնել միջոցների մեջ, խարել, եթե անհրաժեշտ է, շողոքորթել, եթե դա է թելադրում իրադրությունը, սպառնալ, եթե դա է պահանջում շահը:

Ահա, օրինակ, Մարտին ապոր հետ ունեցած նրա զրույցներից մեկը, ուր երեսում է հեռատես շողոքորթը. «Մի քաշվիր, պապաշա, եթե մի բան կասա, կանեմ, կազողացնեմ: Ինքը-պրիստավը, գիտես, ինձանից է առուտուր անում: Տանուտեր, բան—բոլորը: ...Եթե մի բան լինի—ասա, եթե խնձոր մնա—իմացրու, մուշտարին գտնեմ...»:

Հաջողություն շգտնելով խոսքով սիրաշահելիս, խանութպանը դիմում է սպառնալիքի: Բայց սա էլ չի անցնում: Այս անգամ նա կազմակերպում է նունուֆարի սպառնությունը, որպեսզի դառնա այգու տերը:

Արտուրը շատ կենդանի կերպար է: Ճիշտ է նկասված քննադատության մեջ, որ «Միշտ մենակ գալով Մարտին ապոր մոտ, նա, կարծես հետը բազմաթիվ մարդիկ էր բերում, մի ամբողջ աշխարհ: Մնալով անձնավորություն, Արտուրը, կարծես ճեղքում էր նրա սահմանները ու ծավալվելով, վերածվում մի ամբողջ սոցիալական շրջապատի»:

Արտուշը գեղարվեստական խոշոր ընդհանրացում է:

«Խնձորի այգին» գրական սյուժեի կառուցման դասական օրինակ է: Այդ կառուցվածքում չկա և ոչ մի մանրամասնություն, որ գեր շունենա պատմվածքում: Կառուցվածքի կենտրոնը դարձնելով այգին, Զորյանը հերոսների բոլոր արարքներն ու ապրումները համախմբում է դրա շուրջը, վերին աստիճանի նպատակասլաց լուծելով հոգերանական բախումները:

Պատմվածքում ի հայտ են եկել Զորյանի վարպետության նաև մյուս գծեր՝ ազգային կոլորիտի զգացողություն, հոգերանական վիճակների պատկերման նրբություն, կենդանի պատու:

Ստ. Զորյանը հպարտ մարդու երգին է, այն մարդու, որ անգամ ճգնաժամային իրադրության մեջ պահում է հոգու վեհությունն ու բարոյական ուժը, արժանապատվությունն ու խիղճը:

Դրանց մեջ են «Անհայտ թելեր» պատմվածքի՝ Սանամը, որի էության մեջ մայրական զգացմոնքը հորձանք է տալիս անասելի ուժով, Շուշանը՝ համանուն պատմվածքից, որ ըմբռուտանում է քաղքենիական միջավայրի գեմ՝ հանուն իր պատվի, «Կրակի» հերոսուհին, որ հրկիզեց գավառական քաղաքի ապականության բունը, «Ծովանտիկ պատմության» Ալին ու Կատարը, որ հանուն իրենց զգացմոնքի՝ դեմ գնացին կրոնական-դավանանքային նախապաշարմոնքներին, «Պապն ու Թոռը» պատմվածքի Եփրեմ պապը, որն իր մահով՝ անտառի հավերժական խշոցի տակ, սրբագործում է կյանքի ճանապարհը և այլն, և այլն:

Եփրեմ պապը ծեր մարդ է, վաղուց արդեն զրկվել է տեսողությունից, բայց առաջվա նման սիրում է կյանքն ու մարդկանց, ուրախ թրթիռով վերհշշում է այն տարիները, երբ ինքը սարում խոտ էր հնձում և դրանից ստանում էր մեծագույն բավականություն: Նրա ցամաքած երակներում նոր ուժով է պոռթիկում կյանքի սերը, երբ ականջին են հասնում սիրած անտառի ձայները: «...Եվ ահա պարզ նրա ականջին է հասնում հինավորց անտառի խըշշոցը, որ նման է գետի շառայունի: Անտառը խըշշում էր այնպես, կարծես բոլոր ծառերը երգ էին ասում: Ինչ լավ է խըշշում անտառը,—մտածեց պապը: Այդ խըշշոցը նույնն էր, ինչ տարիներ առաջ: Այդպես խըշշում էր նա, երբ ինքը երիտասարդ էր, ինչ որ շատ տարիներ առաջ: Այդպես խըշշում էր նա, երբ ինքը երիտասարդ էր, այդպես էր խշում մերին, երբ նա հասակն առած տղամարդ էր... Այդ խըշշոցը նույնն էր, առաջվանը, նույնը կլինի և միշտ»:

Մահվանից առաջ Եփրեմ պապը խնդրում է թոռնիկին՝ տանել իրեն այն դաշտը, ուր անցել է նրա ամբողջ կյանքը. «...Մի փոքր էլ ականջ զնելով այդ ծանոթ, հարազատ ձայներին, պապը հանկարծ կուցավ և գլուխը խոնարհեց գետնին: Երկար համբուրում էր նա կանաչով ծածկված հողը, անզուսպ արցունքներն առատորն թափվում էին նրա աշխերից: Մի փոքր էլ և նա ուժասպառ ընկավ կանաչների վրա»:

Կյանքի մայրամուտին բնության հավերժության մտքին հասած Եփրեմ պապը լստարյուն թումանյանական կերպար է, ինչպիսիք են նաև «Ծովանտիկ պատմության» հերոսները:

Սա պատմում է այն մասին, թե ինչպես հայուհի Կատարինեն և աղրեշանցի Ալին, խախտելով կրոնական օրենքը և դեմ գնալով միջավայրի քարացած ավանդույթներին, սիրում են միմյանց: Պատմվածքի առաջին մասում Զորյանը ծանոթացնում է այն միջավայրի հետ, որը ծանր փորձությունների ենթարկելով այլադավան երիտասարդների սերը, այդուամենայնիվ, լի կարո-

ղանում հաղթել կյանքի գեղեցկությանը: Կատարը սիրում է Ալոն, նրա մեջ ամենից առաջ գնահատելով մեծ հոգու տեր մարդուն: Այդ սերն արժանանում է միշավայրի ծաղր ու ծանակին, մյուս կողմից էլ՝ Կատարի ծնողների մոլեգին զայրույթին: Ալին և Կատարը՝ բնության ազատ զավակները, իրենց հոգիները մաքուր և անաղարտ են պահում նաև բաժանումից հետո և, Հակադրվելով գուհիկ միշավայրին, հաստատում են հոգեկան կապի գեղեցկությունն ու սիրո հավերժությունը:

Բարոյական բարձր նկարագիր ունեցող հպարտ մարդկանց զորյանական կերպարների շարքում են և ձկնորս կեռնը՝ նույնանում պատմվածքից, որի մեծ սերը մարտահրավեր է քաղքենիներին, և՝ «Կրակը» պատմվածքի հերոսուհին, որը հանուն իր մարդկային արժանապատվության հրկիզում է քաղաքում հայտնված «անառակատումը», և «Սպիտակ տան բնակիչները»:

Այս պատմվածքն ունի մոլդավական երգից քաղված հետևյալ բնաբանը:

Կան մենավոր, մենակ սրտեր  
Անհայտ, անտես հեռուներում,  
Խոր ու մթին անտառներում...  
—Մ՛վ է նրանց ոզուկն բերում:

Հեռավոր անտառում, մենավոր սպիտակ տան մեջ, վերշին օրերն են անց-կացնում ծերունի ամուսինները՝ «իրենց հավերի և ծեր շան հետ միասին»: Ծերունի Վարոսը անտառում կատարած շրջագայություններից մեկի ժամանակ գտնում է եղնիկի ձագ, որն «այնուհետև դարձավ ծերերի հոգատարության ամենասիրելի առարկան»: Անսահման սիրով նրանք կապվում են եղնիկին, բայց նրանց երշանկությունը կարճ է տևում: Եղնիկի անհայտանալուց հետո պառավը վշտից մահնում է, բոլորովին որբ թողնելով ծերունուն, ու Այժմ սպիտակ տան մեջ ծերունին ապրում է մենակ՝ իր շան հետ միասին: Ծուտ-շուտ նա իշխում է գյուղ և այցելում պառավի գերեզմանը... Հաճախ նստում է նա իր կացարանի շեմին և հայացքը հեռուն նետած, հիշում իր պառավին և ինչ-որ լուր զնդնում ինքնիրեն: Երբեմն էլ,—այս լինում է առանձնապես երեկոները,—երբ մութն իշխում է անտառի վրա, նա դառնում է ոտքերի մոտ պառկած շանը և խոսում նրա հետ:

— Էդպես Բողար, այ Տոն էլ շկա,— ասում է մեղմ, մտերիմ ձայնով,— նա մենակ թողեց ու գնաց: Նա էլ չի գա, Բողար, էլ չի գա: Անխիղճ այ Տո, խեղճ այ Տո...»:

Ծերունու համար կյանքն ու անտառի գեղեցկությունը այն ժամանակ իմաստ ունեին, երբ նրա հետ կողք-կողքի ապրում էին տարիների անբաժան ընկերը՝ բոլոր ուրախություններին ու տիրություններին արձագանքող պառավն ու եղնիկի ձագը:

«Սպիտակ տան բնակիչները» պատմվածքով Զորյանն ասում է, որ մարդու երշանկության համար անհրաժեշտ են լիարժեք կյանք, սիրող սրտեր և մարդկային միշավայր:

Հպարտ մարդու զորյանական իդեալն ամենից ցայտուն գծերով երևում է տասական թվականների մյուս բնորոշ երևույթը՝ պատերազմը արտացոլող գրվածքներում:

Պատերազմը՝ իր բերած ավերածություններով, մանավանդ՝ բարոյական փլուզումներով, մարդկային գոյության համար նույնպիսի սպառնալիք էր, ինչպես սեփականատիրական կրթերի սանձազերծումը:

Ուստի և Զորյանը տասական թվականներին այդ թեմային անդրադարձավ ավելի շատ, քան որևէ այլ նյութի:

1914-ին գրած «Հնիթերցողները» և «Հովհաններ» պատկերներից հետո, որոնք ներկայացնում են պատերազմի թվացյալ «անհօգ», «կատակային» ընկալումը, «ընդհանուր գծերը», Զորյանը անցավ պատերազմի ողբերգությանը, սրա կոնկրետ՝ և՛ ցավագին, և՛ հերոսական, մարդկային դրսևորումներով:

Պատերազմը՝ երկի թե գոյության ամենածանր իրադրությունը, մարդու ճանաշման ամենամեծ փորձարանը, Զորյանի պատմվածքներում տեղ գտավ և իր հրահրած տագնապներով, և ողբերգական անցքերով, բայց ամենից ավելի՝ մարդու ազատության կապանքների դեմ ծառացող հերոսական այնպիսի բնավորություններով, ինչպես լեռ հայրենասեր պան Պրժեվալդիկին համանուն պատմվածքից, «Զաքարի հարսը» պատմվածքի էսթերը, որ պատիվը փրկելու համար ընտրեց ինքնակամ մահը, գարշինյան շնչով կերտված Վահանը («Վահանի ցավը»), որին պատերազմի հիշողությունն անգամ հանում է հոգեկան հավասարակշռությունից, «Յհանի մահը» պատմվածքի հերոս՝ թթվամական բանակի վիճակին փրկելու իր վերին աստիճանի մարդկային վերաբերմունքով և այլն, և այլն:

Պատերազմի եղելությունները ներկայացնող պատմվածքների շարքում Զորյանի ստեղծագործության բարձրակետը, անտարակույս, 1920-ին գրած «Պատերազմը» պատմվածքն է, խոր ու ամբողջական մի ընդհանրացում, ուր երեվույթը ներկայացվում է պատճառների ու հետևանքների բարդ կապերով:

Դեպքերը տեղի են ունենում Կաղնուտ գյուղում, հայկական աննշան գյուղերից մեկում, այնքան աննշան, որ «երբ պետական որևէ պաշտոնյա է ենում շրջանը պատելու, նա բնավ Կաղնուտ չի մտնում»:

Կաղնուտը... այստեղ ամեն ինչ նույնն է, ինչ որ մեր բոլոր գյուղերում—մի փոքրիկ, տիսուր եկեղեցի՝ քարերը մամուռով ժածկված, փայտե շորս ոտի վրա կանգնած բարձր մի զանգակատում՝ զանգի թելերը սյուներից մեկին կապած, մի փոքրիկ տերտեր, որ կարդալու ժամանակ ակնոցը թելով կապում է ականջներին, մի խանութպան, որի կապույտ ներկած դռներով խանութում նավթի հետ միասին ժախում է «փոնչուիխով» կանֆետ և մի տանուտեր, որը կառավարում է մոտակա երկու՝ Կաղնուտից ավելի փոքր ու աննշան, գյուղեր,—և քահանայի որդի լինելով, սիրում է խոսել գրաբնար.—«Զի քոյե, համենայն դեպս»:

Ինչպես նահապետական բոլոր գյուղերում, Կաղնուտում ևս, մարդիկ ապրում էին այնպես, ինչպես՝ հարյուրավոր տարիներ առաջ. վար ու ցանքս էին անում՝ կոիվ տալով բնության հետ, եկեղեցի էին գնում՝ ամենօրյա աղոթքի, ապրում էին անտրտում՝ այն հավատով, որ ճակատագիրն է այդպես կամեցել:

Բայց հայկական գյուղը՝ Ստ. Զորյանի սիրելի միջավայրը, մեծ աշխարհից մեկուսացած և կղզիացած չէր. ամեն աշնան Կաղնուտի «տղերանցը տանում էին սալդաթ» աշխարհի ժայրերը և այս բոլորը սովորական էր թվում, քանի դեռ «կոիվ չէր ընկել»:

Պատերազմը միանգամից ցնցում է հավիտենական անշարժ թվացող գյուղի «բնական կյանքը», տակնուվրա է անում ամեն ինչ, մի հարվածով գյուղացուն պոկում է իր խաղաղ աշխատանքից և նետում պատերազմի արհավիրքների մեջ:

Գատերազմը դառնում է գյուղացիների դատողությունների, նրանց մըտքերի, խոսք ու գրուցքի առանցքը:

«Կոկվ, էս նեղ մաշալին էդ էր պակաս,—խոսեց առաջինը Սիրանանց Արշոն:

— Բա մեր արտերը, արտերը, ո՞նց պիտի անենք,—բղավեց ժամհարի տղա Զաքարյան իր հաստ, բամբ ձայնով:

Ու ամեն կողմից սկսեցին՝ «արտեր, արտեր...»

Բոլորը խոսում էին արտերի մասին, որովհետև արտերը հասնելու վրա էին, իսկ անդարդ Սեթոն, ինչպես ամեն բանում, այստեղ էլ անդարդ ձեվացավ.

— Էս, տնաշենի տղերք, արտեր, արտեր... էնտեղ կհնձեք էլի, մարդք թե արտ մին չի՞...»:

Մինչ գյուղի «կանցելարում» գյուղացիները մտասույզ գրուցում են աղետի շուրջը, ցավատանջ վերապրելով անհույս ապագան, այդ նույն պահին գյուղում շառաչում է խալիս Արսենի՝ տանուտերի մտրակը, որը նոր զինվորներ է հավաքագրում, ուղարկելու ճակատները՝ «Վարշավի, Աղեսի, Կովելի» կողմերը:

Ամենախոր հոգեբանական դրաման ապրում է Մաճկալանց Դավիթը. «Նրան թվում էր, որ ամենը, ինչ կատարվում է շուրջը, երազ էր, հանկարծահաս, ծանր մի երազ: Կոկվ. ի՞նչ կոկվ, որտե՞ղ, ինչի՞ համար: Հինգ տարի «Ժառայությունից» հետո մի քանի օր էլ չկա եկել է—նորից հրացան, նորից կազարմա, այն էլ ո՞վ գիտի որտեղ... Եվ կոկվ բառը կարծես հարվածում էր նրա գանգը—կոկվ, կոկվ»:

Այս ճակատագրական պահին լիովին դրսւորվում է Մաճկալանց Դավիթի վերաբերմունքը դեպի պատերազմը. նրան ամեն բանից առաջ տանջում է ծերացած ծնողների անօգնական վիճակը, հոգնած ու բեզարած հայրը, որը մի կարող հնձել «սարի խոտը», պառավ մայրը՝ Մարան նանը, և մեկ էլ կինը՝ Վարդիշաղը, որի հետ նոր էր ամուսնացել: Իրական ու դաժան փաստերից գլուխ չհանելով, Դավիթը դիմում է խալիսյի «գթասրտությանը»՝ մի երկու օրով ետ ընկնելու: Բայց մերժում ստանալով, միանում է դեպի օտար ափեր գնացող, դեպի անհայտություն մեկնող զինվորների խմբին. «Հաղթ կուրծքը դուրս գցած, գլուխը բաց, հին շինելն ուսին, գնում էր նա և փնտինթում տանուտեր Արսենի վրա: Նրա հետ գնում էին պառավ մայրը՝ Մարան նանը մի քանի ձու և երկու խաշած հավ կոնատակին, և կինը՝ Վարդիշաղը, նույնպես մի կապոց ձեռքին»:

Զորյանն այնուհետև նկարագրում է գյուղի կյանքը, նրա բնակիչների անհանգստությունը տղերանց համար և, մանավանդ, Դավիթի մոր հոգեկան ծանր ապրումները, որ ապրում էր միայն աղոթքներով ու հույսերով:

Զորյանը անմիջականորեն շի անդրադարձնում ուզմաճակատը, շի նկարագրում ուզմի տեսարաններ, այլ պատերազմը մեկնաբանում է Մարան նանի ապրումների միջոցով: «Նանը որդու նամակները պահում էր ծոցում և եթե մեկը հարց էր տալիս Դավիթի մասին,—հանում էր դրանք և ցույց տալիս. «Էս երկու նամակն է զու արել...»: Ու նամակները ծոցին, ամեն կիրակնամուտ գնում էր եկեղեցի, շեշից շինած կարմիր մոմեր էր վառում և աղոթում Դավիթի համար.—«Տեր, զու խնայես ամեն զարիբի ու ամեն կորածի...»: Պառավ նանը ինքն էլ էր տեսնում, որ կոկվը մեծ է, շատ մեծ... ամեն օր, ամեն

աստծու օր ու գիշեր, պոեզը չէր կտրում պոեզի ետևից, և ամեն օր վագոնները տանում էին զինվոր, զինվոր,—հրացանով, անհրացան»:

Խոր զգացմունքով է վերաբռտադրել Զորյանը նանին համակած տխրությունը, նրա մայրական անեզր վիշտը, նրա վարանամիտ, անշարժ հայացքը դեպի այն ճանապարհները, որտեղից գյուղ են մտնում սալդաթի շինել հագած վիրավոր գյուղացիները: Բնությունն էլ՝ աշնանային մոայլ գուշներով, այս պատմվածքում հնշում է որպես գյուղացու անսահման թախիծը լրացնող տարր. «Աշուն է, քամի, տան առաջի բարդիները խշշում էին և տերևաթափ լինում, նրանց հետ խշշում էին և բոլոր բարդիները, խշշում էին միատեսակ խուլ, համատարած խշշոցով, և ընդհանուր այդ խշշոցի ժիորից բացի գյուղում ուրիշ ձայն չէր լսվում: Խշշում էին բարդիները և նրանց դեղնած տերևները խմբով թռչում էին քամու հետ կամ օդապտույտ տատանումներով թափում գետին...»:

Դավթի պառակ ծնողների վիշտը խորանում է այն բանից հետո, երբ հարսը հեռանում է տնից, կատարյալ դարձնելով օշախի քայքայումը: Հոգեբանական բեկում է կատարվում նանի ըմբռնումների մեջ, աստծուց գութ ու կարեկցանք խնդրող պառավն այլևս չի հավատում արարչի ամենազոր ուժին. «Եթե նրանում մի զորություն կար, էսենց չէր ընի, —ասում էր նա հաճախու:

Մի գարնանային օր Դավթիը վերադառնում է գյուղ, վերադառնում է մի ոտքը կաղ, տխուր, հոգնաբեկ և դանդաղ բայլերով, գլխարկն աշքերին քաշած մոտենում է հայրենական տան շեմին, որտեղ նրան սպասում էր հոգեկան մի ամբողջ դրամա:

Պատերազմի ժամանակ հերոսի հոգեկան աշխարհում սկսված բեկման ընթացքը ավելի է խորանում գյուղում, երբ Դավթի համար ակնհայտ է դառնում իր ընտանիքի վերջնական փլուզումը և, մանավանդ, իր անպետքությունը՝ ֆիզիկական աշխատանքի համար: Դավթիը գնում է իրենց վարատեղը՝ տեսնելու հորը: Նա գյուղի փողոցներով անցնում է ինչպես օտարական. «Ոչ մի տեղ, ոչ Կարպատում, ոչ Պոլչում, ոչ էլ Ռուսաստանում նա իրեն այնպես մենակ ու օտար չէր զգացել, ինչպես այստեղ՝ իր հայրենի գյուղում»:

Հայրենի հողի վրա Դավթի ապրած հոգեբանական դրաման սոցիալական խոր դրամայի է վերածում, երբ նա երկար բացակայությունից հետո որոշում է օգնել հորը, բռնել մանս ու գնալ արորի ետևից. «Զորրորդ թե հինգերորդ ակոսի վերջում, սակայն, արորը հանկարծ դուրս պրծավ ակոսից և վարածն ընկապվ: Դավթիը ոտք դեմ տվեց՝ արորն իր տեղը գցելու, և հանկարծ... ծունկը բռնեց ու շոքեց: Ի՞նչ պատահեց: Նա սաստիկ ցավ զգաց. ծընկին դիպած հին գնդակի տեղն այնպես ծակեց, կարծես մեկը շամփրեց նրան, ոտից մինչև գլուխ վազեց մի տաք հոսանք, և քրտինքը միանգամից ծածկեց նրա ճակատը»:

Այդ գործողությունը կրկնվում է մի քանի անգամ, նորից նույն ցավերը, և Դավթիը հայրենի հողի վրա վերապրում է աշխատանքի համար իր ավելորդության զգացումը: Աշխատավոր հայ գյուղացու ծանր ողբերգությունը աստիճանաբար զարգանալով, ավարտվում է գյուղապետի՝ «վլաստի» ներկայացուցչի, սպանությամբ. «Դավթին անմիջապես ձերբակալեցին և տարան ներս, երբ նրա մոտ եղած թղթերը վերցրին, գրագիրը նրանց մեջ գտավ մեկը, զինվորական վարչությունից տված մի թուղթ, որի վրա գրված էր. «Դավթի Մաճկալով, 28 տարեկան, ազատվում է զինվորական ծառայությունից անպետքության պատճառով»:

**Մաճկալանց Դավիթն, այսպիսով, իր կյանքի ուղին ավարտում է այնպես, ինչպես Զորյանի «Անտառում» պատմվածքի հերոսը՝ Ալեքսանդր Երկուսն էլ դառնում են մարդասպան, մեկը սպանում է անտառապետին, մյուսը՝ գյուղապետին։ Բայց թե մեկը և թե մյուսը ոճրագործներ չեն. կյանքի իրական և դաժան փաստերի վերլուծությունը երանց տանում չ նույն ողիքով՝ բըստացում «վաստիք-գիմ»։**

**Այս ընդհանրությամբ հանդերձ երկու կերպարների էության տարրերությունը որոշակի է: Ալեքսանի հայացքը լայն հորիզոններ չի ընդգրկում, նա կյանքը ճանաչել է միայն մի կողմով՝ հարուստի և աղքատի հակադրությամբ, ուստի նրան պակասում է վերլուծող միտքը: Այդ պատճառով էլ Ալեքսանը չի կարողանում ազատագրվել իրեն կաշկանդող նախապաշտրմունքներից։**

**Ուրիշ բնութագիր ունի Մաճկալանց Դավիթը։**

**Դավիթի միտքն անցել է կյանքի բարդ հակասությունների միջով և նոր միայն ծնունդ տվել նրա պլեբեյական ազնիվ զայրուցիքին: Խոր իմաստ կա այն բանի մեջ, որ նա հերոսանում է ոչ թե պատերազմի առաջին գծում, այլ հարազատ հողի վրա: Աշխատավոր հայ գյուղացու մեջ խոսում է հողի ձայնը՝ հայրենական հողը ևս մասնակցում է նրա տրամադրությունների խմորմանը և դառնում այն կետը, որտեղից սկսվում է նրա գիտակցության բեկումը։**

**Դավիթը մարդկային այն գրակն է՝ որ իր հօգու մեջ խմորվող նոր տրամադրություններով ճանապարհ է բացում Զորյանի հեղափոխական հերաների առաջ։**

**Դավիթը համարտ մարդու զորյանական շառօթ բարձունքն է։**

\* \* \*

**Զորյանի պատմվածքները ներկայացնում են հայ իրականության մի ամբողջ ժամանակաշրջան՝ մարդկային հոգսներով ու տագնապներով, հակասություններով ու դրամաներով: Համապարփակ բնութագրման այդ արվեստին Զորյանը հասավ՝ նվաճելով ոեալիզմի բարձրագույն կանոնը՝ բնավորությունների օրենքը, ուր ի մի եկան զենսական մանրամասնություններն ու հոգեկան ներթափանցումը, հազվագյուտ դիտողականությունն ու եղելությունների պատմական իմաստավորումը։**

**Իր պատմվածքների մեծ մասը Ստ. Զորյանը գրել է տասական թվականներին: Այդ տարիներին գրական ճաշակի օրենսդիրը համարվում էր Ա. Պ. Չեխովը, որը, ինչպես գրել է Ա. Տոլստոյը, ստեղծեց «միանգամայն նոր... ամբողջ աշխարհի համար նոր գրելաձև»։**

**Չեխովը ոեալիզմի պատմության մեջ բացեց նոր ուղիներ, նրա «հայտնագործած» կարծ պատմվածքի ձեզ տարածվեց ամբողջ աշխարհով մեկ և ունեցավ հետնորդներ գրադարձ հարիզոնականներում։**

**Հայ իրականության մեջ շեխովյան արձակի սկզբունքների ստեղծագործական յուրացումը կապվում է ամենից առաջ Ստ. Զորյանի գործի հետ։**

**Մինչ Զորյանի նախորդներն ու ժամանակակիցները պատմվածքը իշեցնում էին ազգագրության ու բարքագրության աստիճանին, մինչ հայ արձակը տատանվում էր նկարագրայնության և պատմողականության ընեներում, Զորյանը հաղթահարեց և ազգագրական կարկատանների գայթակղությունը, և պատումի նաղլաբանական կապանքները, տալով հոգեբանական արվեստի նոր որակի։**

«Զորյանի ժամանակակիցների երկերի մեջ, չնշին բացառություններով,—գրել է Հր. Մաթևոսյանը,—ածականների որակումների մեջ խևդվում ու կապերը քանդել չեր կարողանում գործողություն-կերպար հասկացությունը»<sup>9</sup>, մինչեռ Զորյանը ստեղծեց արձակ բառարվեստի գլխավոր՝ կերպարը:

Այս կետում նրա ուսուցիչն էր Զեխովը, որից նա առավ նաև վարպետության այլ դասեր՝ խոսքի առավելագույն խտացում, հեղինակային ձայնի նվազեցում, ֆարուլայի թուլացում, ներքին դրամատիզմի ուժեղացում, քնարական և դրամատիկական տարրերի միահյուսում, ենթաբնագրի մուծում և այլն, և այլն: Զեխովյան գաղափարական իդեալները ներշնչել են Ստ. Զորյանին, մանավանդ պատյանավոր աշխարհի՝ բաղքենիթյան դեմ ընդվզման և «կյանք-այգի» խորհրդանշանի («Բալենու այգին»—«Խնձորի այգին») թեմաները, ինչպես դա մանրամասն մեկնաբանում է Ե. Ալեքսանյանը իր «Ռեալիզմի պատմությունը» աշխատության մեջ<sup>10</sup>:

Ստ. Զորյանը մեզանում բերեց գործողության և հոգեբանական թափանցման, գեղարվեստական մանրամասնի և ասմունքի բնական հնչերանգի ճաշակը, դրանով իսկ հայկական պատմվածքը տանելով միշազգային շափանիշների ասպարեզ:

Համաշխարհային և հայրենի գրականության մեջ նվիրական շատ անուններ կային, բայց Զորյանի պաշտամունքը, նույնիսկ կարելի է ասել բարձրագույն իդեալը Հովհաննես Թումանյանն էր:

«Հայ բանաստեղծների մեջ,—գրել է Զորյանը դեռ 1919 թվականին,—դժվար է ցույց տալ մեկին, որի բոլոր գործերը այնպես հարազատ լինեն ժողովրդին, որքան Թումանյանինը: Անգրագետ գյուղացուց սկսած մինչև նըրքածաշակ մտավորականը հավասարապես հասկանում են Թումանյանին և զմայլվում նրանով: Սա մի բացառիկ երևույթ է, որ ինքնին ապացուցում է բանաստեղծի մեծությունը, մի երևույթ, որ ցույց է տալիս, թե բանաստեղծը իր ժողովրդի մսից ու արյունից է, այնքան հարազատ, որ եթե մի օր աշխարհի բոլոր ժողովուրդների բանաստեղծության ցուցահանդես լինի, հայ ժողովուրդը ուրիշ ոչ ոքի չի կարող ուղարկել, բացի Թումանյանից, իբրև օրինակ զտարյուն հայ բանաստեղծի...»:

Թումանյանի ստեղծագործության այլեայլ բարձր հատկություններից բացի, Զորյանին նախ և առաջ գրավում էր խոր ժողովրդական-ազգային ոգին, պատումի, պատկերի, մտածողության, ոճաբանության, հնչերանգի հայկականությունը:

Ստեփան Զորյանի պատմվածքը ևս լուծում էր պատումի ազգային ոճի բարդ խնդիրը, նեցուկ ունենալով ժողովրդական հյութեղ ասմունքը, հայոց լեղիի անհուն շտեմարանը, լեզվի պատկերավորության աղբյուրները: Իր արվեստը երբեք չիշեցնելով ժողովրդականի ոճավորման աստիճանին, Զորյանը միտամանակ դիրք մնաց ոճի արհստոկրատական դենդիզմից, հայրենի գրականությանը տալով ամուր, առողջ, հավաք ու դիպուլ լեզվով գրված բնաշխարհիկ ոճի երևելի նմուշներ:

#### 4

Ինչպես ամեն մի գրող, Ստ. Զորյանը ևս ունի ինքնաբնութագրություններ, որոնցից թերեւ ամենասպառիչը սա է. «...Երբ նայում եմ իմ անցած գրական ճանապարհին՝ ինձ թվում է, թե ես պատմագիր եմ, դեպքերի ընթացքին հետևող մի համեստ տարեգիր: Իմ գրական առաջին քայլերից՝ 1910 թվից

սկսած մեր կյանքում տեղի ունեցան շատ խոշոր դեպքեր ու փոփոխություններ և դրանցից կարևորները (ոչ բոլորը, իհարկե) որևէ շափով անդրադարձան իմ գրվածքներում, այլ խոսքերով ասած՝ ես դարձա կարծես պատմական երեսույթների արձագանքող»:

Արդեն տասական թվականների պատմվածքներում Ստեփան Զորյանը երեսում է տարեգրի խառնվածքով: Նրա պատմվածքները շնչում են ժամանակի բնորոշ գույներով, ժամանակակիցների հոգեբանության մեջ անդրադարձված պատմական «կոլորիտով»:

Հիշենք, օրինակ, «ՁԻՇՈՐԻ մոռ» պատմվածքը, ուր զարմանալի կենդանի թափանցումով Զորյանը նկարագրում է զինվորի շինել հագած երեմնի գեղջուկների քաղաքական ինքնագիտակցության ձևավորման ընթացքը:

Կամ, հիշենք, «ՆԱԿԱԹՈՒՂԻՆ», ուր կառապան Պետրոսի կերպարի միջոցով Զորյանը ներկայացնում է փոխանցման շրջանի հոգեբանությունը:

Կարսի երկաթուղու կառուցումը,—դա երեսում է նաև Հովհաննելի «Երկաթուղու շինությունը» պատմվածքից,—հարուցում է նահապետական գյուղացիության խոր դժուռությունը: Երկաթուղու սուլոցը ազդարարում է մանր տնտեսատերերի հոգեկան դրաման:

Այդ խավի ներկայացուցիչն է կառապան Պետրոսը: Սա ամեն կերպ աշխատում է պահպանել սրբագործված հին կարգը՝ «քառածի ֆուրգոնի իշխանությունը» և ինքն էլ հավատալով իր ասածներին, եռանդով սկսում է ապացուցել, որ երկաթուղին «սատանայական բան է», որ վաղ թե ուշ նորից հաղթական կերպարանքով լծելու է իր հոլակավոր ֆուրգոնը և սլանալու է քաղաքի կառապանի ուրախությունն անցնում է շափ ու սահմանից, երբ լուր են տալիս, որ գյուղացիներից մեկի կովն ընկել է գնացքի անիվների տակ. «Մի շաբաթից ավելի գյուղի փողոցներում շրջելով՝ ամեն պատահածի պատմում էր կովի դեպքը և ավելացնում, որ գնացքը քանդելու է գյուղացիների տունը, կտրելու է նրանց հացը, և շատ ուրիշ բաներ, ու միշտ, որպես օրինակ, բերում էր կովը: «Չեզ օրինակ էն օրվա կովը»... Ու այս ասելով, առաջարկում էր, թե լավ կլինի խնդիր տան տերության, որ ոմաշինեն ուրիշ տեղով բանեցնի:

— Դրենք, թե— ախապեր, շենք ուզում, քու վնասն էլ քեզ ընի, քու օգուտն էլ. աշխարհը մեծ, դու միշին, քու մաշինեն տար որ կողմով կուզես բանեցրու, միայն թե մեր գյուղից հեռացրու...»:

Կառապանի հուսահատ «կոիվը» ավարտվում է նրանով, որ վաճառքի է հանում ամբողջ Երևանի նահանգում հայտնի ձիերը, ինքն էլ աշխատանքի մտնում մղաակա երկաթուղային կայարանում. «Այդ կայարանում դուք կտեսնեք սպիտակ մորուքով, կիսամուշտակով և ավելը կուան տակին մի ծերունի: Դուք կտեսնեք նրան կայսրանի լապտերի սյունի մոտ կանգնած և ձեռքերը կրծքին խաչած:

Նա ամեն օր, օրը երկու անգամ, կանգնում է այդտեղ և սպասում, որ գնացքը հեռանա: Իսկ Երբ գնացքը շվլոցով շարժվում է տեղից, և մարդիկ հեռանում են իրենց տները, նա վերցնում է ավելը կուան տակից և սկսում է սրբել պլատֆորմը մարդկանց թողած կեղտից, որի մեծ մասը լինում է արեգածաղկի սերմ և ընկույզի կմեւա:

Դա ինքը մեր հարեսն Պետրոսն է»:

Սովորական փաստը Զորյանի համար դարձել է այն նյութը, որով խորացել է ժամանակաշրջանի հոգեբանության մեջ և տվել դրա տարեգրության ընորոշ էջը:

Տարեգրողի զորյանական խառնվածքը ավելի ցայտուն երևաց հեղափոխությունից հետո՝ 20—30—40-ական թվականներին գրած երկերում:

Տարեգրության շուրջ ունեն և Հայաստանի քաղաքացիական կոիվների, և սոցիալիստական շինարարության, և Հայրենական պատերազմի պատումները:

Հավատարիմ տարեգրի իր խառնվածքին, Զորյանը առաջիններից մեկը եղավ, որ դիմեց քաղաքացիական պատերազմի անցքերին: Սովետական շրջանում նրա գրած առաջին գործը ունի անգամ տարեգրային վերնագիր՝ «Քսանմեկ թիվը», որը երկար տարիներ մնալով անտիպ, 1963-ին լույս տեսավ արդեն նոր վերնագրով՝ «Ամիրյանների ընտանիքը»:

Շուտով Զորյանը տպագրեց «Հեղկոմի նախագահը» (1923) և «Գրադարանի աղջիկը» (1925) վիպակները, որոնք առաջին գործի հետ միասին կազմում են հեղափոխության պատումների շարքը:

Երեք գործ՝ երեքն էլ, ըստ էության, տարեգրություն, վավերագրական պատումներ, ուր Զորյանը անշտապ ու ներհուն ոնով ներկայացնում է Հայաստանի քաղաքացիական կոիվների ընթացքը:

Տեղի ունեցած անցքերին ականատես-տարեգրի նետած հայացքը բնավլի նշանակում, թե Զորյանը բավարարվում է եղելությունների, հեղափոխական դրվագների արձանագրությամբ: Ճիշտ հակառակը-վավերագրական տվյալները նրան անհրաժեշտ են եղել ավելի հիմնավոր լուծելու իր գեղարվեստական խնդիրները, որոնց մեջ կարևորագույն խնդիրը պատմության և մարդու կապերի բացահայտումն էր, ասպարեզ եկած պատմական նոր հերոսի հռգերանության թափանցումը:

Այս խնդրի լուծումը կապված էր գեղագիտական բնույթի դժվարությունների հետ: Նոր մարդը դեռևս ձևավորման ընթացքի մեջ էր,—արագընթաց դեպքերը հաճախ ավելի էին ընդգծվում, քան այդ դեպքերն առաջ տանող մարդիկ, ուստի և միանգամից դժվար էր ճանաչել հերոսական բնավորության ձևավորման բարդ ճանապարհը:

Կար և մյուս դժվարությունը. մի շարք տեսաբաններ, տարված «Համաշխարհային հեղափոխության» ոռմանտիկայով, գրականությանը պարտադրում էին զանգվածային, հավաքական խմբերի նկարագրություններ, որը փաստորեն մարդկային կենդանի անհատականությունը տարրալումը էր «ընդհանուր սկզբունքի» մեջ:

Տեսության թյուրիմացություն, որը 20-ական թվականներին գրականության մեջ գտավ գործնական մարմնացումներ՝ ի դեմս հեղափոխության պաթոսային-վերացական բազմաթիվ արժարծումների:

Վերացական պաթոսի՝ «Կոսմիկական ռոմանտիզմի» իրադրության մեջ Զորյանն ընտրեց պատմական դեպքերի ու հերոսների ռեալիստական յուրացման ուղին, որը ենթադրում է կոնկրետ միջավայր՝ այդ միջավայրի իրական հակասություններով, մարդկային կենդանի բնավորություններ՝ իրենց աշխարհավերերմունքով, հոգեկան ներքին կյանքով, անհատականությամբ, դավանանքով: Այս առումով Զորյանի ստեղծագործության մեջ ուշագրավ գործ է «Ամիրյանների ընտանիքը»՝ 1921 թվականի փետրվարյան խոռվության պատումը, ուր դեպքերի ժամանակագրությանը զուգահեռ տրվում է Հայաստանի պատմական շրջադարձի օրերին երևան եկած հակադիր գաղափարախոսությունների ու տարրեր հոգերանությունների բախման պատկերը:

Պատումի կենտրոնում Ամիրյանների ընտանիքն է, ուր, ինչպես մանրանկարներում, բեկվում են ժամանակի գծերն ու գույները:

«Եթ չէր Ամիրյանների ընտանիքը, բայց մեծ դեպքեր անցան նրա գլխով մի շատ կարճ ժամանակում... և բոլորը անսպասելի», — այս ժանուցումով բացելով վիպական պատմության կծիկը, Զորյանն այնուհետև տարեգրի անշտապ շարադրանքով ներկայացնում է այդ մեծ դեպքերի հանդեպ Ամիրյանի ընտանիքի վերաբերմունքը, որի մեջ էլ բեկվում է ժամանակի գլխավոր էռթյունը՝ հայ ժողովրդի պատմական հեռանկարի խնդիրը:

Դեմ-դիմաց կանգնում են հայրը և որդին՝ նշանավոր, վաստակած գյուղատնտես Օհանես Ամիրյանը և Մոսկվայից վերադարձած ուսանող Արամը, որոնք ընդունում են Հայաստանի պատմական զարգացման միանգամայն տարեկ ուղիներ և հեռանկարներ: Պատմությունը նրանց դրել է ճակատագրական ընտրության առաջ՝ փարել մեկ, կամ մյուս ճանապարհին: Երկուսին էլ հավանարապես մտահոգում է Հայաստանի վերածնության ուղիների հարցը: Երկուսն էլ այրվում են հայ ժողովրդի փրկության ծրագրերով: Այսպիսի հավասարեցումը ոչ միայն պատմական սխալ չէր, այլև բարդ ժամանակի առանձնահատկությունն էր, այն ժամանակի, որն սաներ երկու հայտարար, որոնցից մեկի կրողը որդին էր՝ Արամը, մյուսինը՝ հայրը: Նրանք հավասար էին իրենց երազանքներով, բայց հավասարաբեք չէին այդ երազանքների իրագործման կոնկրետ ուղիները:

Արամը, Զորյանի մեկնարանությամբ, ազգի «պատմական հանելուկի» լուծումը կապում է ազատագրության սոցիալիստական ճանապարհի հետ, այդ իսկ պատճառով էլ վճռականորեն ու հաստատակամորեն խզում է կապերը սոցիալական այն տարրերից՝ իր ընտանիքի, առևտրական Գարդել Զալյանի (սիրում էր սրա աղջկան՝ Նվարդին), սրանց համախոների միշավայրից, որը կառշած է հայ ժողովրդի փրկության հին ու աղետաբեր ճանապարհից:

Ընտանիքի հորը ամենից ավելի անհանգստացնում է այն միտքը, որ հեղափոխությունը կարող է կործանել հայրենիքի գաղափարը, ոնրան վշտացնում էր այն, որ բոլցեկիները Հայաստանն ուզում են տանել ոինչ-որ անհայտ, անորոշ միշազգային ճանապարհով» ու բոլոր հիմնարկների գլխին տնկում են միատեսակ դրոշներ, որոնք նրա սրտին ոչինչ չեն ասում... Ամիրյանին այնպես էր թվում, թե հին կյանքը հին շապկի նման պատովում է հազար տեղից, այնպես որ էլ կապել-միացնել անկարելի կլինի...»:

Օհանես Ամիրյանի գաղափարական դիսպուտի մեջ առանձին տեղ է գրավում «դասակարգային հաշտության» քարոզը, որին որդին պատասխանում է հետեւյալ խոսքով. «Համոզե՞լ... ի՞նչ համոզել, երբ նրանք զենք են վերցնում կովելու և մեզ տապալելու: Ուրեմն և մենք նրանց դեմ ուրիշ բան չենք կարող գործածել, եթե ոչ զենք: Դասակարգային կոիվն ուրիշ կերպ մի լինում, հայրիկ»:

Հայրն ու որդին իրենց «անհաշտությունը» դրսեորում են ոչ միայն գաղափարական վեճի մեջ, այլև կոնկրետ վարքագծով: Հայրը «անակնկալ», շատերի համար անսպասելի որոշում է զենքով պաշտպանել իր համոզմունքները և հրացանով կովել բոլցեկիյան ուժերի դեմ, որոնց մեջ էր, իրու քաղաշխատող, իր հարազար որդին: Ի դեմս Օհանես Ամիրյանի Ստ. Զորյանը ներկայացնում է ազգային փրկության հին ուղիներին ֆանատիկորեն նվիրված մտավորականի հոգեկան աշխարհի փլուզումը, ի դեմս Արամի՝ քաղաքական պայքարի ելած նոր սերնդի հոգեկան լուսավորման ընթացքը:

Վեպի գլխավոր հերոսների շարքում է նաև փիլիսոփայության դոկտոր Բուբենը, հայ գրականության հետաքրքրական կերպարներից մեկը, հայեցող, կյանքին փիլիսոփայական բարձունքից նայող, «միջին գծի» դավանանքի տեր մի բնավորություն, որի կերպարով Զորյանը ընդգծում է պատմական դեպքերից հեռու մնալու՝ «Հեղորդության» հոգեբանությունը:

«Ամիրյանների ընտանիքում» Զորյանը երևում է իբրև երևույթների սոցիալական ու հոգեբանական խորքերի մեջ թափանցող, պատմական եղելությունները հերոսների ներքին մտքերի միջոցով արտացոլող գեղագետ:

Իրականության սոցիալական գծերի բացահայտման և մարդկային հոգեբանության ներթափանցման գեղարվեստական սկզբունքի ցայտուն օրինակ է նաև «Հեղկոմի նախագահը» դրամատիկական-հուզական շաղախի ունեցող երկը, ուր Զորյանը հեղափոխական աշխարհգացումը ներկայացնում է իբրև ներքին հոգեբանական դժվարությունների հաղթահարման ընթացք:

Ճիշտ է, ժամանակի գրական քննադատությունը, ելնելով «զանգվածների» գեղագիտության դիրքերից, հարցականի տակ է դրել Զորյանի սկզբունքները՝ համարելով դրանք «կամերային» անձուկ ոճի ու պսիխոլոգիզմի վերապրուկներ, բայց ճշմարտությունը, վերջիվերջո, Զորյանի կողմն էր. հեղափոխության հերոսին ներկայացնել ոչ միայն «կաշվե բաճկոնակով», այլև իր հուզապրումներով, տառապանքով, հոգեբանական դժվարություններով, իր «ներքին մըտքերով»:

«Հեղկոմի նախագահը» վիպակի գործողության վայրը գալառական քառարքն է, ուր իշխանությունն իր ձեռքն է վերցրել Հեղկոմը:

Սովետական կարգերի հաստատման շիկացած, տագնապալի օրերն են:

Դրույթյան լարվածությունն ավելի է ընդգծում գիշեր-ցերեկ քաղաքի վրայով սուրացող քամին. «Մանր, անհանգիստ օրեր էին ու քանի օր էր քամիներ էին փշում անընդհատ, գիշեր, ցերեկ: Ջունը թափում էր տանիքներից, ձյունով խփում էին լուսամուտներին, դեղերի խոտը ցրիվ էին տալիս բակերում և վնդվնդում շարունակ: Մերկ ծառերը, հեռագրաթելերի նման, նվազմ էին անվերջ... երբեմն էլ օդի միջով, կարծես երկաթաթև նժույգներ էին սլանում—վըզ... տները դողում էին. լուսամուտները դողում էին, մարդիկ դողում էին»:

Գրվածքի առաջին պատկերները ներկայացնում են հեղափոխության հերքը, ինչպես և այն վերաբերմունքը, որ մարդիկ ունեն «անհանգիստ ժամանակի» հանդեպ: Բնորոշ են այս առումով սեաշոր պառավի ցաքուցրիվ դատողությունները. «Հասկանը շեմ էս ինչ բան ա... երեկ կաթն ու կորեկ ախաքեր տղերը էին, էսօր թուր ու թվանք... Տասկանը շեմ... Բալշուիկ, դաշնակցական, էլ ինչ-չես իմանում...»:

Մեռշոր պառավի մտորումների մեջ արդեն գծագրվում է վիպակի հոգեբանական սուր բախումը:

Պառավը գնում է փեսայի՝ հեղկոմի նախագահ, բոլշևիկ Սուեփի մոտ. ուզում է իմանալ, թե ինչու են բանտարկել իր որդիներին:

Վերջիններս կապված են եղել երեանում ապստամբած խոռվարանների հետ և նույնպիսի դավադրություն էլ ծրագրել են իրենց քաղաքում:

Հեղկոմի անդամները սպասում են նախագահի վճռին: Սա պետք է մահապատճի որոշում կայացնի իր կնոջ՝ Վիրգինի եղբայրների նկատմամբ, որոնք նաև իր մանկության ընկերներն են եղել: Տանը նրանց սպասում են կանայք երեխաները, մայրը:

Օսեփի առաջ կանգնում է ճակատագրական հարցը. Հանում անձնական գդացմունքի ներել հեղափոխության թշնամիներին, թե՝ պաշտպանել հեղափոխության շահը:

Ընդհատակի բովով անցած, բազմաթիվ վտանգներ հաղթահարած, պայքարի մեջ կոփված այդ մարդը կյանքում առաջին անգամ կանգնում է նման ծանր հոգեկան կացության առաջ, Վերգինը, որ անսահման նվիրումով կապված է եղել ամուսնուն, նրան է դիմում եղբայրներին խնայելու խնդրանքով:

Իրադրությունը սրվում է Օսեփի և Վերգինի բացատրության տեսարանում: Օսեփը թեև հիմնավորում է հեղկոմի սահմանած մահապատժի անհրաժեշտությունը, բայց և լի ազատվում տանջալի մտքերից. «Կարելի՞ է արդյոք Շիրած կնոջ եղբայրներին սպանել, —ինքն իր հետ խոսում է Օսեփը, —և գայ կնոջ երեսին նայել, ժպտալ, նրա հետ հացի նստել և, վերջապես, ապրել նրա հետ նույն հարկի տակ: Մտածում էր Օսեփը և քայլում ձեռքերը կաշվել բաճկոնակի կրծքագրապանները դրած... Նա ակամա կանգ առավ, ինչպես հանկարծ բացվող վիճի առաջ»:

Հոգեկան դժվարին մաքառումից հետո հեղկոմի նախագահը հեղափոխական պարտի զգացումը գերադասում է անձնական շահերից: Նրա բնավորության վճռականությունը երևում է հատկապես այն տեսարանում, երբ դատավճռից հետո վերադառնում է ընտանիք, ուր սպասում է իր սիրած կինը: Տեղեկանալով մահապատժին, Վերգինը «մնաց անշարժ կանգնած և լոեց: Նա զարմացած էր, հանկարծակի եկած: Լոեց, մի վայրէյան մարդու երեսին նայելով, այնպես, ինչպես նայում են օտար, թշնամի մարդուն՝ պաղ, զննող հայացքով, ապա դիմեց նրան խուլ ձայնով, —իսկ ի՞նչ ասավ քո խիդեր, — հարցրեց նա՝ նույն պաղ, զննող հայացքը մարդու երեսին:

Օսեփը, զգալով կնոջ հայացքն իր վրա, աշքերը բարձրացրեց և նայեց նրան:

— Իմ խիդեր հանգիստ է, — ասավ հանդարտ, անայլայլ:

Թանփը հեղափոխության անշահախնդիր զինվորն է: Անձնականի համար նա լի կարող դավաճանել իր հեղափոխական պարսէին և խղճին:

Պետք է նկատել, սակայն, որ հերոսի բարոյական մաքրությունը և գաղափարական համոզվածությունը ցույց տալով, Ստ. Զորյանին շի հաջողվել նույնքան խոր զգացմունքով ներկայացնել Օսեփի անձնական դրաման: Երբ ցնցված ու ահաբեկված Վերգինը թողնում հեռանում է ընտանիքից, Օսեփը վերին աստիճանի սառը տոնով ասում է. «Բարի ճանապարհ: Հեղափոխականի կերպարի այսպիսի «ուղղագիծ», ինչ-որ շափով սինմատիկ պատկերացումը արտահայտում էր ժամանակի շունչը:

Նույն գծի վրա է նաև «Գրադարանի աղջիկը», հուզական շաղախով տարբեր («Հեղկոմի նախագահը» գրված է ներքին դրամայի կանոններով, սա՝ ասմունքի), բայց ըստ էության հեղափոխության մասնակիցների ներքին աշխարհը բացահայտող մի անհավակնոտ ու պարզալուր երկ, որ տասնամյակներ շարունակ մնում է դպրոցական քրեստոմատիաներում:

«Գրադարանի աղջիկը» ուշագրավ է ոչ միայն հայկական գավառի հեղափոխական ոիթմը հաղորդէլու առումով, ոչ միայն գրադարանի աղջկա ու նրա լվացարարուհի մոր կենդանի բնավորություններով, այլև ազգային պատմո-

ղական արվեստի՝ ժողովրդական ասմունքի ու ժողովրդական հնչերանգի կիրառությամբ:

Գեղարվեստական այդ դժվարին խնդիրը Զորյանն արդեն լուծել էր իր պատմվածքներում. բայց բոլորովին այլ բան է, երբ գործ ունես ավանդական նյութի հետ, ուրիշ բան, երբ հեղափոխության նման ոչ ավանդական երեվույթը ներկայացնում են ազգային ասմոնքային ոճով:

Իր ստեղծագործության մեջ Ստ. Զորյանը հաճախ է անդրադարձել հայ կնոջ կերպարին: Դա պատահական նախասիրություն չէ, այլ պատության հարուստ փորձից բխած համոզմունք՝ հայ կնոջ քաղաքացիական և բարոյական բարձր նկարագրի մասին:

«Խոհեր մեր էպոսի մասին» հոդվածում Զորյանը գրել է. «Հանձին Սովինարի, էպոսում հանդես է գալիս կնոջ բարոյական ուժի մի բարձր տիպար, որ պատիվ է բերում մեր էպոսին և մեր ժողովրդին»:

«Մեր պատմիչների վկայությամբ,— ասում է նա մի ուրիշ առիթով,— հայ կանայք մասնակցել են օտար հափշտակիչների ղեմ մղված ուազմական գործողություններին և բազում հերոսություններ են կատարելու»:

Նա հիշում է V դարում պարսիկների ղեմ մղված Վարդանանց պատերազմի մասնակից հայ «փափկասուն տիկիններին», XII դարում սելցուկների ղեմ մղված կոփվներում խիզախությամբ աշքի ընկած կանանց, որոնց մեջ էր Անիի առասպելական քաջուհին՝ Այծեմնիկը:

Նման բարձր համարում ունենալով հայ կանանց մասին, գրողը, բնականաբար, մարդկային բարձր հատկանիշներ է տեսել նաև իր ժամանակակիցների մեջ:

Վիկտորիան՝ գրադարանի աղջիկը, եղավ հայ կնոջ հոգեկան-բարոյական գեղեցկության և քաղաքացիական արիության մասին գրողի ունեցած պատկերացման մի նոր, բարձր արտահայտությունը: Նրա կերպարում ի մի ճուղեցին հայ կնոջ ազգային-ավանդական ոգին և հեղափոխության մարտիկի հատկանիշները:

Վիպակում Վիկտորիան երևում է մոր պատկերացումներով: Դպրոցական տարիների, գրադարանում անցկացրած անքուն գիշերների, արգելված գրքերի ընթերցանության, վերնահարկում ապրող տերերի նկատմամբ ունեցած վերաբերմունքի, մայիսմեկյան միտինգում արտասանած ճառի և ուրիշ դրվագների մասին պատմելով, մայրը ամրողացնում է հաստատուն վարքագի տեր աղջկա կերպարը:

Գրադարանի աղջկա կերպարով Զորյանն առաջին անգամ հայ գրականության մեջ ներկայացրեց կին-հեղափոխականին, նրա էության մեջ ընդգծելով ոչ թե ոռմանտիկական զոհողության հոգեբանությունը, այլ իր գործի արդարության և ճշմարտության խոր համոզմունքը:

Ժամանակի տարհագիր Ստ. Զորյանը, բնականաբար, չէր կարող շրջանցել նոր հասարակության այնպիսի երեւյթներ, ինչպես գյուղացիական տնտեսությունների համայնացումը, նոր քաղաքների կառուցումը, ժողովրդի կուլտուրական վերածնունդը: Հայ ժողովրդի սոցիալիստական կեցության որոշ երեվույթներ տեղ գտան «Վարդագորի կոմոնը», «Սպիտակ քաղաք», «Արքիկայականի վարժուհին» և այլ գործերում: Զորյանի պատումներում թեև չկան կյանքի նոր գծերի խոր, մոնումենտալ պատկերումներ, բայց և այնպես երեւում են ժամանակի ինչ-ինչ գույններ:

«Վարդածորի կոմունը» պատմվածքում, օրինակ, հավաստի շեշտերով են ներկայացված առաջին կոմունայի կազմակերպիչների՝ թենոյի և նրա ընկերների, սկսած գործի դժվարությունները, «Լիկկայանի վարժուհին» պատմվածքում՝ գրագիտության ծարավ բանվորների ապրումները, իսկ «Սպիտակ քաղաքը» վեպը պատմում է առաջին քաղաքաշինարարների՝ Տիգրանի և բանվորական միջավայրի, ոռմանտիկ կառուցողներին համակած աշխատանքային սգեռության մասին.

Դրանք «պատմության հիշատակարաններ են»:

### 5

Ստ. Զորյանի արձակը ոչ թե նկարագրական, այլ գերազանցորեն պատմողական է: Նա պատմում է ժողովրդական պարզալուր ասացողների նման՝ բնական բառուքան, դիալոգի կառուցման ժողովրդական կերպեր, խոսքի կենդանի շեշտադրություն, ազգային հնչերանգի գույներ և այլն:

Հովհ. Թումանյանի «անձեռակերտ» արձակից ժառանգած այս հարստությամբ, ինչպես և հումորի ու քնարական ներշնչման շուայլ տվյալներով, Զորյանն այն գրողն էր, որ պետք է գրեր (չէր կարող չգրել) նաև մանուկների համար:

Դա իր տարերքն էր:

Զորյանն ականատես էր այն մեծ գործին, որ 1900—1910-ական թվականներին անում էր Հովհ. Թումանյանը՝ հայ մանկական գրականությանը զարկ տալու համար: Նրա աշխատավոր առաջ էր Թումանյանը հրաշշագործում իր մանկական սքանչելի բանաստեղծություններն ու պատումները՝ ավանդություններ, լեգենդներ, հեքիաթներ, մշակում ֆոլկորային նյութեր, թարգմանում և փոխադրում օտար ժողովորդների բանահյուսության նմուշներ: Զորյանի գրական նախասիրությունները կազմավորվեցին «Հասկեր» և «Աղբյուր-Տարագ» հանդեսների բուռն գործունեության շրջանում, հայ դպրոցների համար օրինակելի դասագրքեր ստեղծելու օրերին: Այդ դասագրքերի պսակը եղավ Հովհ. Թումանյանի, կը ու Շանթի և Ստեփան Լիսիցյանի «Լուսաբերը», որն, իր պատմելով, մեծ տպագորություն է թողել Զորյանի վրա:

Հովհ. Թումանյանի և Դ. Աղայանի, «Հասկերի» և «Լուսաբերի» մթնոլորտից Զորյանը քաղեց այն մեծ դասը, որ գրականությունը պարտավոր է հոգեկան սնունդ տալ նաև մանուկներին՝ ներշնչել բարոյական բարձր շափանիշներ, հայրենի բնության սեր, գեղեցկի զգացում, մայրենի լեզվի պաշտամոնք, հարստացնել գիտելիքների պաշարը:

Իր ստեղծագործության համեմատությամբ շատ էլ մեծ չէ մանուկ և պատանի ընթերցողներին հասցեագրված Զորյանի պատմվածքների թիվը, բայց դրանք մեջ կան հուզական խոր վայելք հարուցող էջեր:

Առաջին տեղում էն, իհարկե, բնասիրական և կենդանագրական (անիմալիստական) մանրապատումները («Մի գիշեր անտառում», «Քեռի Սերոբի պատմածներից», «Չալանկը», «Շամոն», «Շեկոն», «Մուկն ու ձուն», «Ճագարը» և այլն), որոնց վրա զգացվում է բնությունն ու կենդանական աշխարհը մեծարող Հովհ. Թումանյանի պատումների շոնչը:

Հովհ. Թումանյանի, Ավ. Խաչակրյանի, Գ. Դեմիրճյանի մշակումներից հետո Զորյանը գրի առավ «Քաջ նազարի» մի նոր տարբերակ, ուր, ինչպես

նախորդ մշակումներում, շեշտը դրված է հանգամանքների բերումով մեծ դիրքի հասած սնարժան մարդու պատմության վրա: Զորյանը մշակել է նաև Հաղարսն Բլբուլի հանրահայտ հեքիաթը, որը այդ ժամանքի նրա լավագույն գործն է: Նրա մշակած կամ ժամանակակիցներից գրի առած զրույցները համառոտ բարոյախոսական խրատներ են արվեստի հուզական ոգու («Զրույց շնչի մասին», «Զրույց երդի մասին»), բնական, «անզարդ» գեղեցկության բարձր արժեքի («Զրույց գեղեցկի մասին», «Զրույց մոլախոտի մասին») և այլ կենսական խնդիրների վերաբերյալ:

Մանկության օրերի անմոռաց հուշապատում է «Մի գիշեր անտառումը»՝ Բնձորա անտառի գունդի նկարագրությամբ: Դրավիշ պատմությունների մի յուրօրինակ աշխարհ է «Քեռի Սերոբի պատմածներից» պատմվածքը՝ կենդանիների մասին հյուսված զրույցներով («Արջը», «Արջն ու վարազը», «Ձին», «Գայլերը»), որը պատմողի բնական ասմոնքը տրված է այնպես, որ բնակչես զգում հեղինակային միշամտության հետքերը:

Իվ մեկ անգամ կարդացել է, չի կարող մոռանալ Զորյանի կենդանագրական պատմվածքների «խելացի», դգայուն կենդանիներին՝ գնացքի ետևից վագող հանապարհորդ Զեկոյին, այն կատվին, որ իր կաթով կերակրում է իրենց մորը կորցրած շան ձագերին, Զալանկ շանն ու Շնկո ձիուն:

Ստ. Զորյանը գրական մշակման է բերել նաև ժողովրդական հեքիաթներ, պատմական ավանդություններ և ժողովրդի մեջ տարածված զրույցներ: Նրա մշակած հեքիաթները, իհարկե, շունեն Վ. Աղայանի հեքիաթների կախարդական խորությունը. նրանք ուշագրավ են իրեն ժողովրդի վառվուն երեակացության մեջ բեկված բարոյախոսության յուրացումներ:

Հեքիաթի մեջ, ինչպես հայտնի է, տարածված սյուժեներից մեկը բարի և շար ուժերի պայքարի սյուժեն է: Այդպիսիք են նաև Ստ. Զորյանի մշակումները («Հարին ու Մարին», «Մահակը» և այլն):

Արձակի «կարճ ձեռքից» Ստ. Զորյանը շուտով անցավ մեծ կտավի:

1934 թ. լույս տեսավ «Մի կյանքի պատմություն» վեպի առաջին գիրքը, 1939 թ.՝ Երկրորդը, առաջինի հետ միասին:

Ժանրային կառուցվածքով «Մի կյանքի պատմությունը» պատկանում է վեպի այն տեսակին, որը գրականագիտությունն առանձնացնում է «ինքնակենսագրական լիապ» անունով:

Դա, իհարկե, պայմանական առանձնացում է, որովհետև, ի տարբերություն այնպիսի ժանրերի, ինչպիսիք են օրագրությունը, հուշապատումը, մեմուարը, ինքնակենսագրական վեպը ոչ միայն ներկայացնում է եղելությունները՝ դեպքերի հավաստի պատմությունը, այլև լուծում է գեղարվեստական ընդհանրացման խնդիրներ:

Այս իմաստով «Մի կյանքի պատմությունը» առնվազում է ինքնակենսագրական ժանրի այն ավանդների հետ, որ սուս գրականության մեջ հաստատեցին Ս. Ակսակովը, Լև Տոլստոյը, Վ. Կորունկոն, Մաքսիմ Գորկին և եվրոպական գրականության մեջ՝ Դիկենսը, Ֆրանսը, Դոլեն՝ ինքնակենսագրական վեպերի հանրահայտ շարքերով:

Վեպը բացվում է քնարական մի մենախոսությամբ, որը Զորյանն ակնարկում է իր պատումի կենսագրական բնույթը. «Անդորր երեկո է: Դուրսը ձյունը, իմ սիրած ձյունը իշնում է հանդարտ: Իշնում է նա մերկ ծառերի վրա, տների վրա, փողոցների վրա: Իշնում ու ծածկում ամեն ինչ—ինամքով, հա-

վասար ու փիշերը դառնում է մարմարյաւ հջնում ու ծածկում է նա հեռուները— հեռու՝ և ուղի ու արահետ, և գյուղ ու քաղաք, և սար ու անտառ նա բռնել է այսօր հորիզոնից հորիզոն, ու թվում է ձյուն է գալիս ամբողջ տիեզերքում։ Դալիս է նա մեծափաթիլ ու հանդարտ, անարգել ու համարձակ, ինչպես եկել է դարեր շարունակ, ինչպես գալիս էր մեր մտնկության օրերին, ինչպես պիտի գա և մեր գերեզմանի վրա, և այն ժամանակ, երբ աշխարհում էլ շենք ունենա ու անոն, ոչ հիշատակ....

...Կրակս ուրախ ժպտում է օջախում, և զգիտես ինչպե՞ս, ի՞նչ կախարդանքով, հուշեր են զարթնում իրար հետեւից ու, ինչպես նկարը էկրանի վրա, հաջորդում են միմյանց այդ հուշերը բազմերանգ, այդ հուշերը ուրախ ու տխուր:

— Զեզ ո՞վ կանչեց, իմ հեռավոր, իմ մոռացված հուշեր։ Արդյոք ձյո՞ւնը քերեց ձեզ, այս երեկո՞ն խաղաղ, թե՞ օջախիս կրակը տուրավ ինձ ետ, դեպ այն օրերը, երբ աշխարհը թվում էր մի գյուղ հասարակ, արեց՝ անտառի մեջ քնած մի մանուկ, իսկ կյանքը, կյանքը—պարզ ու մթին հանելուկա։

Այս մեջբերումից իսկ երեսում է, որ Զորյանը հենվում է իր հուշերին, սուզվում է իր մանկության մեջ՝ պատմելու իր սերնդի ճակատագիրը, նորից վերապրելու իր կյանքի առավոտը՝ տիրություններով ու ուրախություններով, դառն ու քաղցր հուշերով։

Զորյանի պատումն, այսպիսով, հիշողություն է մանկության ու պատանեկության մասին, ավելի ստույգ՝ վերադարձ է դեպի մանկությունը, էլ ավելի ստույգ՝ հրաժեշտ է մանկությանը։

Վերադարձի-հրաժեշտի այս կապակցության մեջ է Զորյանի վեպի յուրահատկությունը։

Մինչ հեղինակը տարիների հեռավորությունից դառնում է իր մանկության տպավորություններին, հերոսը՝ հեղինակի կրկնակը. հրաժեշտ է տալիս, որսվհետև ժամանակը սահմանափակում է մանկությունը։

Մինչ հեղինակը, դառնալով մանկությանը, ակնթարթին տալիս է հավերժականի իմաստ, անսահմանափակ հեռանկար, հերոսը շատ որսշակիորեն զգում է, որ կյանքում, այդուամենայնիվ, կան սահմաններ։

Ոչ միայն տարիքային, այլև պատմական-հասարակական սահմաններ։

Հեղինակի վերադարձ դեպի մանկություն, դեպի հայրենական տուն, դեպի հայրենի բնություն,— այս վերադարձը չի ճանաչում և ոչ մի պատճեց, և ոչ մի սահման։ «Ահա մեր դաշտերը՝ հնածած արտերով ու գետնախնձորի ցանքսերով, ահա աշնան անտառը՝ դեղնափայլ ու տխուր, ահա և աշնան սառնաշունչ քամին, որ զրնգում է այդ անտառում, և տերենները—կարմիր, դեղին և նարնջի—թափիվում են, թափիվում և քամու բերանն ընկած տարվում հեռու...»

Ահա մեր երկինքը կապույտ ու շինչ, ուր կոռուկների եռանկյունի վաշտերը իրար հետեւից շտապում են հարավ և վերնից ահա մեծ ընդմիջումներով լսվում է նրանց դյութական ձայնը։

— Կըրըկ... կըրըկ...»։

Այս և նման քնարական խոսքերով հեղինակը կրկնում է մանկությունը, երգում է այդ մանկության հմայքները, մինչդեռ հերոսը, որ գտնվում է արդեն իրական հանգանակների մեջ, վերապրում է կյանքը՝ իր դառնություններով, տագնապներով, վշտերով ու ցավերով, նաև լուսավոր տպավորություններով։

Վերադարձի-հրաժեշտի գեղագիտությամբ էլ պայմանավորված է «Մի կյանքի պատմություն» կառուցվածքը: Սուրենը դիտում է իր շրջապատը՝ գեպքերով ու մարդկանցով, Զորյանը հետևում է նրա դիտումներին և անհրաժեշտության դեպքում, իր հոգական, երբեմն էլ հեզնական վերաբերմունքով միջամտում:

Վեպի առաջին մասում Սուրենի գննումների նյութը գավառական քաղաքն է՝ իր մարդկանցով, իր բարեկրով, իր բնությամբ:

Հերոսի մանկությունը վշտերով ու հոգսերով լի մանկություն է:

Մի կտոր շաքարի պատճառով այնպիսի իրարանցում է սկսվում հարազատների մեջ, որ գործը հասնում է բաժանության («Բաժանք» գլուխը):

Այս պատմությունը՝ «աննշան», «անմեղ» մի պատմություն, խորհրդանշում է բարեկրի անկումը՝ իր հետքը թողնելով մանկան հոգու վրա:

Եվ այսպես շարունակ՝ միշավայրի նորանոր տպավորությունները՝ սեփականության շուրջը մղվող վեճերը, սակավահող գյուղացիների ամենօրյա տրտումները, հարեանների դաժանությունը, սոցիալական ու քաղաքական ճնշման փաստերը (ցարի հրամանով փակվում են հայոց դպրոցները) կաթիլ առ կաթիլ ներծծելով իր մեջ, Սուրենը հասունանում է այն աստիճան, որ սկսում է մտածել կյանքի «անիծյալ հարցերի» շուրջը:

Դիտենալու-շգիտենալու այս հարաբերության մեջ է ձևավորվում Սուրենի բնավորությունը, մի ընթացք, ուր վճռական դեր հն խաղում կյանքի և դրամասիկական, և լուսավոր երևույթները:

Դաժան կապալառուի կողքին այդ նույն կյանքում կար վարժապետ Զաքարի նման հոգատար մարդ, երկաթուղու գծամասի տիրոջ՝ դաժան Կարլ Կարլիչ կողքին՝ տավարած Մազաթ բիծա, որն ամբողջովին լցված է բնությամբ և ներշնչում է ամենքին բնության մեծ սեր, կային ազնիվ հողագործներ, սրտակից դասընկերներ, որոնք ներկայացնում են մանկության լուսավոր էջերը:

Հերոսի պատանեկան հասակի տպավորություններին է նվիրված վեպի երկրորդ մասը:

Մի կյանքի կենսագրությունն այստեղ, բնականաբար, տրվում է ավելի բարդ ու ճյուղավորված հարաբերությունների մեջ, քան առաջին մասում:

Հրաժեշտ տալով մանկությանը, Սուրենը հայտնվում է Թիֆլիսում՝ «լուսավորության կենտրոնում»: Նա այլևս հասունացած մի պատանի է, որ սկսում է կյանքը ճանաշել արմատապես՝ իր տագնապներով, հակասություններով, խորքերով:

Այս մասին նա անում է հետեւյալ խոստովանությունը. «Կամաց-կամաց կարծես փլվում, փոխվում է իմ պատկերացումը աշխարհի մասին»: Փլուզվում է կյանքի հեքիաթը՝ ճանապարհ տալով իրականության ճշմարտությանը, ուր իրենց սյուժետային դերն ունեն և քերի Շամիրը՝ իր գեղշկական անաղարտ խորհուրդներով, և ճեմարանցի Տիգրանը, և ընդհատակային-հեղափոխական Միքայելը, մարդիկ, որոնք հետագիծ են թողնում տարաստիճան հայ մտավորականի հոգեկան աշխարհի ձևավորման ընթացքի վրա:

Վեպում աստիճանաբար լայնացնելով հերոսի և կյանքի շիման կետերը՝ հայրենական տնից մինչև քաղաքական բարդ շրջանակներ, մանկական տպավորություններից մինչև հասունացող հերոսի ինքնագիտակցություն, պատանեկան երազներից մինչև կյանքի իմաստ տեսդագին որոնումներ, Զորյանը,

ճիշտ նկատել են Բ. Բրայնինան և Ա. Խիտարովան «Ստեփան Զօրյան» գրքում, հետամուռ է «պատմությունը անհատի մեջ» գերցենյան գեղագիտությունը:

Վեպի մի ծայրից մինչև մյուսը, փոխնիփոխ հաջորդականությամբ, ձգվում են իրականության դրական և բացասական արժեքները, որոնք կոչված են հերոսի ճակատագիրն ու բնավորությունը ցուցադրելոց բացի, ներկայացնել նաև իրականության դինամիկան՝ «տիպական հանգամանքները»:

Այս հատկությամբ «Մի կյանքի պատմությունը» վերաճում է «պատմության հիշատակարանի», ժամանակաշրջանի տարիգրության:

## 6

Ստ. Զորյանի ստեղծագործության այսպիս կոչված «պատմական ջիղը» սկիզբ առնելով քսանական թվականներին գրած «Հոռմեական նովելներով», այնուհետև ամբողջացավ նրա երեք պատմավեպերում՝ «Պապ թագավոր» (1944), «Հայոց բերդը» (1960), «Վարազդատ» (1967):

Առաջներում պատմական նյութով ուրախ դրվագքար (հոռմեական կենցաղի մասին պատմող նովելներից բացի Ստ. Զորյանը գրել էր նաև «Մմրատ Բագրատոնի» մեծ պատմվածքը) զբաղված գրողը ստեղծագործական կյանքի վերջին քսանհինգամյակը գրեթե ամբողջովին նվիրեց պատմական նյութի մշակմանը: Դա, իհարկե, պատահական հափշտակություն չէր և ոչ էլ հնասերի հարցասիրություն հեռավոր անցյալով:

Զորյանը այդ նյութին դիմեց ոչ թե պատմության վրա նստած բազմաշերտ փոշին մաքրելու, ոչ էլ անգամ պատմական այլարանության նպատակով, այլ, ամենից առաջ, ժողովրդի անցյալի տարեգրության մեջ եղած քաղաքական ու բարոյական փորձը ժամանակակիցներին ավանդելու համար:

Իր եռագրության նյութը Զորյանը քաղեց հայոց պետականության ամենածանր շրջանից՝ IV դարի վերին աստիճանի բարդ, խառնակ իրադարձություններից, Արշակ Երկրորդի—Պապի—հետպապյան դարաշրջանից, որը պատմական գրականության մեջ՝ Փավստոս Բուզանդից ու Մովսես Խորենացուց մինչև նոր գարերի պատմագիտական հետազոտությունները, լեցուն է րազմաթիվ պատմաքաղաքական «առեղծվածներով»:

Զորյանի մուտքը IV դար հայ գրականության մեջ, իհարկե, առաջինը չէր, XIX դարի ազգային զարթոնքի իրադրության մեջ ստեղծված «արշակյան ցիկլ» բազմաթիվ պատմական ողբերգություններից բացի, IV դարը «պատմական սյուժե» տվեց Ռաֆֆուն՝ «Սամվել» վեպի համար:

Մինչեւ Ռաֆֆին իր ժամանակի հասարակական հոգերանությանը և ազգային շարժումների արդիական ծրագրերին արձագանքելու համար IV դարի «պատմական տարազը» ծառայեցնում էր «հայրենասիրության ու հականության» զգացմունքի բարոյական քննությանը, դեգերելով գերազանցորեն այդ հասկացությունների գեղարվեստական իրացման ուղիներում, Զորյանի պատմավեպերը, լինելով այլ ժամանակի թելադրանք, կոչված էին հարուցելու ժողովրդի պատմական փորձի և գիտակցության այլ եզրեր ու դոսուեր:

Դրանց մեջ գլխավոր, էական դասը ինքնուրույնության համար ժողովրդի մղած պայքարում առաջին հերթին իր ներքին կարողություններին, իր սեփական հոգենոր միջոցներին ապավինելու մտահոգությունն է:

Այս գլխավոր գաղտփարով են շնչում ժամանակագրորեն միմյանց անմիջաբար շարունակող «Հայոց բերդը»՝ Արշակավանի (ինքնուրուզնության ներքին ամրոցի) կառուցման սյուժեով, «Պապ թագավորը»՝ երկրի պատմական-շինարարական վերակառուցման ու բարենորոգումների սյուժեով, «Վարագդատը»՝ դրածո հովանավորի արտաքսման ու անկախությունը կորցնելոց հետո սեփական գրով ինքնուրույնությունը պահպանելու սյուժեով։

Խնքնուրույնության՝ իբրև ժողովրդի գոյության հիմնական նախապայմանի գեղարվեստական ըմբռնումը Զորյանը կարող էր առավել խորությամբ յուրացնել ոչ այլուր, եթե ոչ IV դարում՝ բովանդակությամբ սուր ու դրամատիկ մի ժամանակաշրջան, երբ հանգամանքների բերումով խաչավորվում էին այնեայլ քաղաքական կողմնորոշումներ, այլևս գաղափարախոսություններ, պատմական-հոգեբանակոն հակասություններ։ Դարաշրջանի ընտրությունը ոչ թե ավանդական պատմական շրջագծերի մեջ մնալու ցանկություն էր, այլ գրողի պատմագիտական սուր զգացողության դրսերում։

Պարսկա-հեռումնեական բարդ հարաբերությունների խաչմերուկներում հայտնված Հայաստանը, ինչպես մեկնաբանվում է նորագույն պատմագիտական գրականության մեջ, ապրում էր իր ճգնաժամային շրջանը։ Հայ Արշակունիների թագավորության վերացման քաղաքականությանը, որ անդուդ հետեղականությամբ իրականացնում էին պարսկական-բյուզանդական «հովանավորները» իրենց տեղական համախոհների՝ այսպես կոչված «պարսկասերք» ու «հոռմեասերք» հուսանքների արտահայտիչների հետ միասին, միանում էր նաև երկրի ներսում եղած քաղաքական-սոցիալական սուր հակասությունների ծանրությունը։

Հայ նախարարական ինքնակա տները՝ իրենց հարաճուն կենտրոնախուս ձգտումներով, հոգեոր իշխանությունը՝ աշխարհիկի դեմ ունեցած ուժեղ մըրցակցությամբ, անվերջ պատերազմներից, ծանրացող հարկ ու տուրքից ուժասպառ եղած շինական դասի տնտեսական թուլացումը սպառնալից վիճակ էր ստեղծել երկրի ճակատագրի համար<sup>11</sup>։

Մտեղծված դժվարին իրադրության մեջ, օտարասեր ու ինքնուրույն քաղաքական կողմնորոշումների բարդ կացության առաջ Հայաստանը կարիք ուներ այնպիսի քաղաքագետների, որոնք պետք է կարողանային ստեղծել իր իսկ ներքին ուժերին ապավինող, հզոր, կինտրոնացված ժողովրդի ճակատագիրը տնօրինող պետականություն։

Մինչ Խորենացին ու Փավստոսը, արտահայտելով ժամանակի պաշտոնական գաղափարախոսության տեսակետները, բացասական գնահատական են տալիս Արշակին ու Պապին, Ստ. Զորյանի պատմական ներքնատեսությունը թելադրում է այլ մոտեցում։ Արշակ Երկրորդն ու սրա որդի Պապը, ինչպես և Մամիկոնյան տան սպարապետները (Վասակ, Մուշեղ, Մանվել) Զորյանի դիտարկմամբ (որը հիմնված է ժամանակաշրջանի խոր ու բազմակողմանի քըննության վրա) այնպիսի քաղաքական-ուղղմական գործիչներ էին, որ ի հայտ բերելով պատմական հեռանկարի զգացողություն ու պետական մեծ խելք, իրագործում էին երկրի ինքնուրույն կողմնորոշման քաղաքականությունը։

Հերոսների այս շարքի, ինչպես և դարաշրջանի ընտրության մեջ արտահայտվել է Զորյան-պատմավիպասանի մտածողության ոեալիզմը։

Իր վեպերում նա ընդառաջ շգնաց Մովսես Խորենացու և, հատկապես, Փավստոս Բուզանդի վերագրումներին ու գնահատականներին՝ թե Արշակը «չար, ոճրագործ բնավորություն էր», Արշակավանը՝ «գործ անմտության»,

Պապը՝ շվայտ, սանձարձակ վարքագծի տեր և այլն, այլ տվեց այդ գործիշների նոր մեկնաբանություն:

Եվ Արշակ Երկրորդը, և Պապը, անտարակույս, իրենց ժամանակի ու սոցիալական միջավայրի հարազատ ծնունդն են՝ կաշկանդված և դարաշրջանի պատմական սահմանափակություններով, և դասային նեղ շահերով, և ժամանակի գաղափարական հակասություններով։ Ուրիշ կերպ չէր էլ կարող լինել։ Ստ. Զորյանը վերահաս էր պատմական այս ճշմարտությանը և բնավ շփորձեց լուսապսակ դնել վաղ ֆեռդալիզմի ժամանակաշրջանի նախապաշարմոնքներն ու դասային կրքերը կրող հերոսների գլխին, ինչպես վարվում էին XIX դարի ոռմանտիկները՝ ձեռնամուխ լինելով պատմական անցյալի այս կամ այն նշանավոր անձնավորության գեղարվեստական վերարտագրմանը։

IV դարի հայ պատմական գործիշների գնահատության մեջ Զորյանը, սակայն, ի հայութեաց պատմագիտական ոհալիզմ, Արշակի և Պապի գործի գլխավոր ուղղությունը՝ ինքնուրույն, կենտրոնացած պետականություն ստեղծելու հանքերը արժեքավորելով իբրև հասարակական առաջադիմության՝ պատմական զարգացման միտումի արտահայտություն, մի բան, որ չէին ըմբռնում ոչ նրանց ժամանակակիցները, ոչ էլ պատմության հետագա շրջանի շատ մեկնաբաններ։

Այս դիրքորոշման համար անհրաժեշտ էր պատմության սոցիոլոգիական վերլուծում, որպեսզի խառնակի, «անկարգ» պատմական փաստերից կառուցվեր նրա այսպիս ասած՝ «կոնստրուկտիվ ամբողջականությունը»։

Այդ ամբողջականության սկիզբը, պատմության տրամաբանությամբ, եղավ Արշակ II-ի հանդուգն ծրագիրը՝ Արշակավանի կառուցումը, որի տարեգրությունն էլ՝ արշակյան ու հակաարշակյան հոսանքների ուժեղ հակասություններով ու սուր բախումներով, «Հայոց բերդը» վեպի սյուժետային բովանդակությունն է։

Հայ պետականության ճգնաժամին, երբ թվում էր, թե խորտակվել էին այդ պետականության անկախության բոլոր սյուները, երբ ֆեռդալական կենտրոնախույս շահերը երկան էին եկել իրենց ամբողջ մերկությամբ, այս իրադրության մեջ Արշակը այլ ճանապարհ չէր տեսնում՝ բացի երկրի բոլոր ուժերի համախմբումից։

«Կստեղծեմ իմ բերդը, --ասում է Արշակը,--որ լինի ամենքի բերդը, և լինի ամենից հզոր, քան նախարարց բերդերը, ու դրանով ես կմիաբանիմ նոցա, և այդ միաբանությունը կդառնա հայոց բերդ, անխորտակ բերդ... Թշնամին անզոր կլինի կործանել նորան...»։

Այլևայլ առիթներով մեկնաբաններով բերդաքաղաքի նշանակությունը երկրի ապագա ճակատագրի համար, Արշակը շարունակ ակնարկում է «ներքին բնրդի», «Հոգենոր բերդի» գաղափարը, դրա մեջ զնելով ավելի խոր ու հեռանկարային իմաստ, քան բուն բերդաքաղաքի շինությունն էր։

Այս քաղաքի գաղափարը կապելով Արշակի հետ, Զորյանը բնավ հակառած չէ տեղայնացնելու երեւութը, այլ պատմական կոնկրետ շարժառիթը ընդորձակում է հայ ժողովրդի պատմական անցյալին բնորոշ այն երեսութիւննաբանության համար, որի անունն է անմիաբանություն։

Արշակը, Զորյանի մեկնաբանությամբ, պատմական այն գործիշն է, որ խորապես զգում է այդ աղետաբեր երեւութը և իբրև խելացի քաղաքագետ, փորձում է կանխել անոհաբանության հետագա ընթացքը։ Հայ պետականու-

թյան ճակատագրի մեջ, իհարկե, վերջին խոսքը պատկանում էր արտաքին թշնամուն («Հայոց բերդն» էլ ավարտվում է Արշակի և Վասակի գերությամբ ու Շապուհ արքայի արշավանքով, որից հետո «Արշակավանից մնում է «ավերակր»), բայց պակաս նշանակություն չի ունենում ներքին թշնամուն նախարարների դիմադրությունը, որով և պայմանավորվում է պետականության փլուզումը: Ահա թե ինչու վեպում առաջին պլան է մղվել նախարարների պայքարի թեման՝ ընդեմ Արշակի, որին նրանք վերագրում են «ազգային պատուհասի», միահեծանության, «Հարության» հատկանիշներ, ըստ էության պաշտպանելով իրենց «դղյակի» շահերը:

Սկսած Արշակի հրովարտակից անմիջապես հետո Ներսեհ Կամսարական իշխանի ամրոցում կայացած խորհրդաժողովից մինչև Մերուժան Արծրունու առաջնորդությամբ դեպի Հայաստան կատարված պարսկական արշավանքը, նախարարությունը հանդիս է գալիս որպես մի ուժ, որի վրա է կառուցվում օտար նվաճողի քաղաքականությունը: Այս հանգույցում է Զորյանը դիտում կենտրոնական իշխանության և ժողովրդի դաշինքի պատմական անհրաժեշտությունը: Նախարարներից հեռացած «տիրափախ» շինականները Արշակի մեջ ամեննեին էլ չեն գնահատում իդեալ-գործշին, բայց անսխալ բնադրով կուահում են նրա գործելակերպի ճշմարտությունը, ավելի ստույգ՝ այդ գործելակերպի առավելությունը՝ երկրի անկախության շահերը իրենց անձնական բաղանքներին ստորադասող նախարարների վարած գծից: Շինականները հոծ խմբերով Արշակավան են գնում ոչ այնքան Արշակին, որքան իրենց երկրին նեցուկ լինելու համար՝ ընդեմ նախարարների:

Այս տեսանկյունն է, ահա, գրողին հուշել՝ վեպում լայն տեղ տալու շինական դասի տրամադրություններին, որոնք պատմության ճգնաժամային իրադրության մեջ պաշտպանում են ոչ թե թագավորական դահը, այլ իրենց երկիրը, մաքառում են ոչ թե հանուն Արշակի, այլ հանուն իրենց սոցիալական երազանքների:

Այսպիսի մոտեցումը բխում է Զորյանի պատմագիտական ճշմարտացի դիրքորոշումից, որը բնավ չի ենում հայ հասարակության վերնախավի ու շինականների ինչ-որ «միասնության», շահերի ինչ-որ համընկնման ու նույնացման տեսակետից: Այս մոտիվն է ակնարկում վեպի հենց սկզբնամասում նկարագրված այն դրվագը, երբ Արշակավան փախչող շինականները՝ Թորգոմն ու մյուսները, սպանում են իշխան Դավիթ Համունուն՝ լավ հղացված վիպական մի դրվագ, ուր դրվում է նախարարների ու հասարակության ստորին խավերի անհաջտելի հակամարտության թիման:

Եթե նախարարները վեպում են դավաճանության, ուխտադրության, նինգ գործարքների, եղբայրասպանության, հավատագանցության վարքագծով, հայրենիքի ընդհանուր շահը ստորադասելով իրենց «դղյակի» ու կալվածքների ապահովությանը, շինական դասը, թեև կողոպտված ու նահատակվող, թեև նետված դաժան փորձությունների մեջ, հանդես է բերում հայրենասիրական շահերի բարձր ըմբռնում: Գաղափարական-բարոյական այս պաթսն անցնում է «Հայոց բերդը» վեպի մի ծայրից մյուսը, յուրովի բեկվելով Արշակ երկրորդի՝ վեպի գլխավոր հերոսի, հոգեբանության մեջ:

Հայ պատմիները, քննելով մեր պատմության այս դժվարին ժամանակաշրջանի անցքերը, «ամենայն շարյաց» արմատը համարում էին Արշակի իբրև թե «ոճագործ» բնավորությունը: Ստ. Զորյանը, ամեննեին շմեղմելով հայոց թագավորի բնավորությունը, որը հասնում է դաժանության (ինչպես,

օրինակ, Ներսէն համսարականի ողջ տոհմի ոչնչացումը և այլն), ի դեմս Արշակի ներկայացնում է սղբերգական անհատի, որը մի կողմից խորապես ըմբռում է երկրի խաղաղության հրմանական պայմանի՝ «ներքին բերդի» անհաժեշտությունը, իսկ մյուս կողմից սահիպված է դիմել արարքների, որոնք դեմքնթաց են իր իսկ դասակարգային բաղանքներին։ Արշակավանի կառուցումը՝ թագավորի իդեալը, եթե իբրև հզացում կոչված էր սանձելու նախարարների հարաճուն կենտրոնախույս ձգտումները, մյուս կողմից լինելու էր իր կործանման պատճառը, որովհետև պատմության ընթացքը դեռևս չէր նախապատրաստել նման իդիալի իրագործման հողը, դեռևս պետությունը ծվատում էին իր իսկ ներքին հակասությունները՝ և քաղաքական, և սոցիալական կյանքի ասպարեզներում։

Արշակավանի կառուցումը, ինչպես դա երեսում է վիպական ամբողջ պատումի ընթացքում, ամենակին էլ չի թուլացնում ժամանակաշրջանի դրամատիզմը։ Արշակի հրովարտակը նրա դեմ է հանում ոչ միայն նախարարներին, այլև եկեղեցուն, որը իր վարած քաղաքականությամբ փաստորեն դառնում է նախարարական անմիաբանության նեցուկը։

«Հայոց բերդում» Արշակ երկրորդը, Զորյանի մեկնաբանությամբ, պետականորեն մտածող, թափանցող խառնվածք է, բայց նրան հատուկ են իր դարաշրջանի բոլոր սոցիալական ու բարոյական նորմերը։

Արշակավանը՝ «ինքնավարության ներքին բերդը», ծնվեց իբրև արտաքին ու ներքին ուժերի դեմ ուղղված ամրոց, բայց կործանվեց, իսկ Արշակն էլ անքուն գիշերներից ու անհանգիստ զանգերից հետո արգելափակվեց պարսից Շապուհ արքայի բերդում։

Արշակավանի մեջ տեսնելով միայն իր կամքի արտահայտությունը, իր իմաստության մարմնացումը, Արշակ թագավորը փաստորեն իր իսկ գործը դատապարտում է ձախողման, իսկ իրեն՝ մենակության։ Այստեղից էլ նրա կերպարի խոր ողբերգականությունը, ուր վերջին տեղը շեն գրավում նաև անձնական կյանքի բարդ հանգամանքները, նրա մարդկային թուլությունները։

Եռագրության առաջին գիրքը փակվում է հեղինակային հետևյալ ծանոթագրությամբ։ «Իսկ ի՞նչ եղավ Հայոց բերդը։ Պարսիկները նահանջի ճանապարհին իրենց ողջ կատաղությունը թափեցին Արշակավանի վրա և ավերեցին այն հիմնահատակ։ Եվ այդ օրվանից հայոց բերդաքաղաքը մնաց ավերակ...»։

Հայոց պատմության մեջ ուսկվում է Արշակ թագավորի և Փառանձեմ թագուհու որդու՝ Պապի ժամանակը, որի գործին էլ նվիրված է եռագրության երկրորդ գիրքը՝ «Պապ թագավորը»։ «Պապի մեջ,—ասել է Զորյանը,—ինձ գրավել է նրա լուսավոր պետական միտքը, ազգային պատվի բարձր գիտակցությունը»։

Թեև Արշակի պես Պապը նույնպես հայ պատմագրության մեջ դատապարտվել է իբրև այլասերված ու շվայտ անձնավորություն, նրա վրա բարդվել են ծանր հանցանքներ (ինչպես ներսես կաթողիկոսի սպանությունը), բայց խորանալով պատմական սկզբնաղբյուրների մեջ, Զորյանը յուրովի է լուսաբանել պատմական անցուղարձը։

Իհարկե, Զորյանի մտահոգությունը միայն Պապին «ուեարիլիտացիայի» ենթարկելը չի եղել. իր վեպում նա ցանկացել է ներկայացնել հայ ժողովրդի պատմության առաջավոր դեմքերից մեկին, որը պայքարել է օտար նվաճողների դեմ՝ հանուն աղքային անկախության, ֆեոդալական մասնատվածության ու կենտրոնախույս շահերի դեմ՝ հանուն կենտրոնացված, միասնական

իշխանության, կրոնական ֆանատիզմի դեմ՝ հանուն աշխարհիկ կրթության ու լուսավորության:

Պապը թագավոր է դառնում պատմության այն հատվածում, երբ անվերջ պատերազմներից ու արշավանքներից, ինչպես և նախարարական տների եսակենտրոն վարքագից ուժասպառ Հայաստանը կարիք էր զգում երկրի ինքնուրույն գոյության համար ճակատագրական նշանակություն ունեցող այնպիսի խնդրի լուծման, ինչպիսին կենտրոնական իշխանության և նախարարության միասնությունն էր:

Կանգնելով այդ քաղաքական հոսանքի գուլիքը, Պապը Զիրավի ճակատամարտից՝ պարսից զորքերին երկրից դուրս վնադելուց հետո, ձեռնամուխ է լինում Հայաստանի համապետական շահերն արտահայտող այնպիսի բարենորոգումների, որոնք ընդառաջ էին գնում երկրը անկախ ու անմատչելի տեսնելու՝ ժողովրդի նվիրական երազանքներին:

Արշակը ևս վարում էր երկրի ինքնուրույնության քաղաքականություն, բայց խճճվելով ժամանակի իրարամերժ միտումների ու անձնական կյանքի հակասությունների մեջ, շահարողացավ իրացնել իր ծրագիրը՝ կոտրել ամենից առաջ նախարարական ինքնագլխությունը:

Պապը, շարունակելով Արշակի քաղաքական գիծը («Մենք լինենք մեր նեցուկը»), միաժամանակ վարում է միանգամայն նոր քաղաքականություն, վճռական նշանակություն տալով կենտրոնական իշխանության և նախարարության ներդաշնակությանը: Հեռուստեսորեն նա մերժում է «որքան քիչ նախարար, այնքան լավ» արշակյան սկզբունքը, դժո՞ն նախարարներին վերադանելով նրանցից խլված կալվածքները: Այդ քայլին նա դիմում է բոլոր կենսունակ ուժերը համախմբելու, արքունի միասնական հզոր բանակ ստեղծելու նպատակով, առանց որի անհնար է երկրի տերիտորիալ ամբողջականության պահպանումը:

Պապը Հայաստանը գտավ ավերված, քանդված, կողոպտված, գրեթե ամայի վիճակում: «Ինչո՞ւ երկրը հասավ այս դրության... Ո՞վ է մեղավոր», — այս հարցին Պապը պատասխանում էր՝ նախ և առաջ նայելով երկրի «ներքին վերքերին». «Պապը գիտեր, լսել էր, որ հայ նախարարների մեջ շաբաթ ընդհանուր երկրի շահագրգություն: Զէր եղել նաև մի իշխանություն, որ այս ամենը հասկացներ նրանց, յուրաքանչյուր նախարար անում էր այն, ինչ ցանկալի և նպատակահարմար էր գտնում իր համար, իր դիրքի համար, իր շահի համար: Ամեն նախարար ուներ իր զորքը և անհամաձայնության դեպքում անշատվում էր կենտրոնից կամ քաղաքական ներքին պատերազմ սկըսում: Երկրի գեմ արտաքին պատերազմ ծագելիս նախարարները ավելի սեփական անձի և կալվածքի մասին էին մտածում, քան երկրի, իսկ վտանգի դեպքում երբեմն կամ հնազանդվում էին թշնամուն, կամ մատնությամբ ու կաշառքով ապահովում իրենց...»:

Նախարարների «տարամերժ» ու իրարամերժ» ձգտումները արմատախիլ անելու համար Պապը վճռականորեն դնում է երկրի ինքնուրույնության ամրապնդման խնդրը, մատենագիր երեմիայի հետ կիսելով իր հետեւալ մտորումները. «Բնության մեջ, ինչպես գիտես, ամեն բույս ունի իր գույնը, ամեն ծաղիկ՝ իր բույրը, ամեն կենդանի՝ իր ձայնը, ամեն թռչուն՝ իր երգը... Եվ ոչ մեկը դրանցից չի հրաժարվում բնության տված այդ հատկություններից... Ինչո՞ւ մենք մեր կամքով պիտի հրաժարվենք մեր գույնից, մեր ձայնից, մեր երգից և կրկնենք ուրիշներին...»:

Պապի քաղաքական գծի բուն էությունը արտահայտված է Երեմիային սողված հետեւյալ խոսքի մեջ. «Բավական չէ, որ պարսիկն ասում է՝ «աղոթեցք ինձ նման», բյուզանդացիք ևս ցանկանում են, որ մենք աղոթենք իրենց նման, մենք ևս մեր հերթին բաժանվում ենք երկու մասի, որոնցից մեկն ասում է. «Եկեք աղոթենք պարսիկների նման», մյուսը՝ «աղոթենք հռոմի նման...» ահա մեր գծվարությունը, Երեմիա... Մի խումբ ձգտում է մի կողմ, մի այլ խումբ՝ այլ կողմ, և սակավները միայն հենվում են սեփական հողին... Մեր ժողովրդի տակ ավերում է ավելի այս կամ այն հայ նախարարը, քան թշնամին: Մինչև հիմա այդպես է եղել. բավական է մեկը, մի նախարար դժուհի կամ գծտվի թագավորից՝ իսկույն ձիավագ գնում է Տիգրոն կամ Բյուղանդիսն, թե՝ «Եկեք մեր թագավորին խրատեցեք կամ փոխեցեք, նա վատ խորհուրդ է հղացել ձեր դեմ, նա ուզում է կանգնել այս կամ այն կողմը և վնասել ձեզ»: Այդպես վարվեցին մեր նախարարները Խոսրով թագավորի հետ, պապին հետ, և հորս հետ... Եվ այս է զարմանալի, Երեմիա, —խոսեց նա նորից տրտմտությամբ, —նախարարների շահ, գուցե ավելի, զարմանալի են մեր հոգեսոր հայրերը, եկեղեցու սպասավորները. ճանապարհին, հիշում ես, որ շենք գրավում էինք եկեղեցունն էր, հողը եկեղեցունն էր, շինականը եկեղեցունն էր, և թե ո՞րն է պետությանը՝ լիմացա... Խսկ վարդապետները... Նկատե՞լ ես, այնպես են պահում իրենց, թվում է՝ նորա են տերերը երկրի... Հրամայում են ոչ միայն քահանաներին, այլև շինականներին, անգամ նախարարներին...»:

Վերլուծելով երկրում ստեղծված իրադրությունը, Պապը գալիս է այն մտքին, որ առկա ուժերը միավորելու, ֆեոդալական ինքնամփոփկածությունը հայթահարելու վճռական քաղաքականությունը ոչ մի արդյունք չի բերի, եթե շահմանափակվեն եկեղեցու իրավունքները, քանի որ եկեղեցին ազդեցիկ դիրք էր գրավել պետության մեջ, թերևս նախարարներից ավելի մեծ շափով սպառնալով պետության կենտրոնացման ու անկախության քաղաքականությանը:

Եկեղեցու իրավունքների սահմանափակման քաղաքականությունը (եկեղեցուն տրված հարկեր՝ պտղին ու տասանորդը վերացնելը, կուսանոցների ու անկելանոցների փակումը, եկեղեցական կալվածքների մի մասի բռնագրավումը և այլն), ինչպես և կաթողիկոսների ձեռնադրման նախկին կարգի փոխումը եղավ. Պապի գլխավոր մտահոգությունը: Թեև նրա այդ բարենորոգումները տեղի էին ունենում եկեղեցու սուր դիմադրության պայմաններում, բայց, ինչպես մեկնարանում է վիպագիրը, ճանապարհ էին բացում երկրի հզորության ծրագրերի իրականացման համար:

«Պապ թագավոր» վիպում, այսպիսով, Հայաստանում իրականացվող բարենորոգումները կապվում են, մի կողմից, օտար հպատակության գծի մերձման հետ («Օտարի օգնության հույսը նման է ամպի. կարող է անձրև տալ և շտալ»), իսկ մյուս կողմից՝ ներքին ամներդաշնակության վերացման, «ներքին վերքերի» ապաքինման հետ, այսինքն՝ նախարարական ինքնագխության ու հոգեսոր դասի անոահմանափակ իշխանության վերացման հետ:

«Վարագդատ» վեպի ներքին բովանդակության բացահայտման համար շատ կարենոր բանալի է Վերջարտնը, որը սկսվում է հետեւյալ խոսքով. «Պատերազմը վերջացավ: Խսկ այնուհետև: Այնուհետև, ինչպես գրում է ժամանակի ժամատ տարեփերը, ցրված ավագները հավաքվեցին ևնորից նոր ոստանը հայոց»՝ Դվին, և նորից Պապի սիլագ որդում՝ Արշակին,

կարգեցին գահակալ, իսկ Մամիկոնյան Մանվելին՝ խնամակալ ու սպառապետ... Մուշեղի փոխարեն: Ու Մանվելը երկիրը կառավարեց հանգիստ ու խաղաղ: Եվ տարիներ...»:

Զորյանի ակնարկած «հանգստությունը» սոսկ հարաբերական հասկացություն է. Կարնո դաշտում խայտառակ պարտությունից հետո երկրից արտաքսվել են գերզած թագավորը՝ Վարազդատն ու բյուզանդական դուքսը՝ Պրոկոպոսը, ստեղծվել է թեև խաղաղ մի վիճակ, բայց Մանվելին մտահոգում է «Հայոց երկրի ապագան...»: Ի՞նչ պետք է անել:

Դալիս են դեռ երիտասարդ Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Մանվելը նրանց է վստահում հայրենիքի զորության ու անկախության վահանը լինելու խնդիրը. «Մենք ձեզ հետ հնք, Սահակ սիրելի և Մեսրոպ հարգելի, միայն գտեք մեր հոգին ու ոգին զարացնողը... գտեք մեր գիրը, մեր ճակատագիրը... այն, որ կմիաբանի մեզ և դալար կպահի մեր կենաց ծառը... և շմունաք, որ այս պատերազմը եղավ նաև լեզվի համար... Միով բանիվ՝ խորհեցեք մեր ապագայի մասին...»:

Վերջին պատկերից ու վերջին խոսքից հետո՝ ճնալով դեպի վիպական պատումը, որ ներկայացնում է Բյուզանդիոնից իբրև Արշակունի ուղարկված Վարազդատ թագավորի գահակալության կարճատև շրջանը (374—378)՝ իր շափաղանց արույն սկզբունքով, տեսնում ենք մի նոր գիծ ժողովրդի ինքնուրույնության զորյանական պատկերացումների մեջ:

Ո՞րն է այդ նոր գիծը: Դա հայրենասիրական զգացումի հայտաբերումն է:

Վարազդատը Հայաստան է եկել իբրև հայ թագավոր, բայց նրան միանգամայն խորթ են իր երկիրը, նրա հին ավանդույթները, սրբությունները: Վարազդատը շարագործ չէ ըստ էության, ինչպես բյուզանդական պատվիրակները կամ՝ Պրոկոպոս դուքսը, որ նրան շարունակ պահում է տափնապի վիճակում: Բայց նա դառնում է շարագործ: Բանը միայն այն չէ, որ Վարազդատը, ըստ պատմագրության տվյալների, «ոյուրահավատ» է, պարզամիտ, անփորձ՝ պետություն զեկավարելու համար (եղել է կրկեսի նշանավոր գերասան): Սրանք իրենց հերթին: Սակայն ավելի վտանգավոր է այն, որ նա կտրված է հայրենական արմատներից, շգիտե իր մայրենի լեզուն, չի մերված իր երկրի շահերի հետ, մի խոսքով օտարի դրածն է՝ պատրաստ ամեն քայլի դավաճանելու ընդհանուր գործին:

Վարազդատի այս էությամբ է բացատրվում այն պարագան, որ նա առանց դժվարության ընկնում է հոռմեական հովանավորի սարքած ծուղակը՝ Պապի սպանության առեղծվածը վերագրում է Մուշեղին («...Պապին սպանել են հայ իշխանների սպանանքով»): Հայրենասեր հայ սպարապետին ուղարկելով մահապատճի: Վարազդատը իր պետության մեջ օտար մարմին է, ուստի առանց որևէ տատանման և ժողովրդի դիմադրության պայմաններում անգամ երկրի հարստությունն ուղարկում է բյուզանդական կայսեր՝ իբրև հպատակության վկայություն:

Դրածո, խորթացած թագավորը ոչ միայն սատարում է հայ եկեղեցու ձուլումը բյուզանդականին, այլև մայրենի լեզվի ձուլումը հունականին, որը բյուզանդական նենդ, նվաճողական քաղաքականության մեջ գրավում է առաջին եղերից մեկը:

«Վարազդատ» վեպում նկարագրված դեպքերից առավել խոր իմաստ ունի հռոմեական սպայի առաջարկին ի պատասխան («Ինչո՞ւ լեզվով Աինենք մի»)

նրա լեզում կտրելու պայմանը: Գրիգորիսը և նրա ընկերները կատարելով այդ «վայրենի արտօքը», բնավ շեն կառկածում իրենց արարքի անհրաժեշտության մեջ, դրանով իսկ հասարակ ժողովրդի հայրենասիրական զգացումը հակադրելով երկրի կենսական հարցերին անհաղորդ թագավորի կործանարար քաղաքականությանը:

«Վարազդատի» գաղափարական պաթոսի համար չափազանց բնորոշ է հայ իշխանների՝ Մանվելի ու մյուսների, էության մեջ թափանցող այն գիտակցությունը, որ զենքից բացի անհրաժեշտ է ունենալ ավելի ուժեղ զենք՝ զիրք, անկախության ամենազորեղ վահանը: Վեպի վերջին պատկերներով Զորյանը ակնարկում է այն իրողությունը, որ հայ ժողովրդի պատմությունը թևակոխում է իր նոր շրջանը: «Բոլորը սպասում էին արեին...», — ասվում է վեպում այն բանից հետո, երբ երկրից քշվում են հռոմեացիները՝ Վարազդատի հետ միասին, և Հայաստանը բռնում է երկրի ինքնուրույնության այն ճանապարհը, որը այլևս լույս է ստանալու հայրենի գիր ու գրականությունից:

Զորյանի պատմական եռագրությունը պատմավեպի ժանրի զարգացման արդիական՝ ունալիստական փուլի, արտահայտություն է:

Եթե ԽIX դարի հայ դասական պատմավեպը («Սամվել», «Գևորգ Մարգարետունի», «Երկունք») յուրացնելով վալտերսկոտյան պատմավեպի ավանդները, պակաս ուշադրություն էր դարձնում ժամանակաշրջանի ներքին կյանքի խորքերին՝ պատմության մեջ փնտրելով այս կամ այն բարոյախոսական թեզի ապաստարանը, ապա XX դարի պատմավեպը, յուրացնելով պատմագիտության արդի շափանիշները, խորանում է պատկերվող ժամանակաշրջանի սոցիալական կառուցվածքի մեջ՝ այդտեղից ածանցելու պատմության դասը:

Այս հիմնական տարբերությամբ է բացատրվում նաև դասական ու արդիական պատմավեպերի ոճական կողմնորոշումը. մինչ դասական ոռմանտիկական պատմավեպում պատմականությունը երեսում է պայմանականության սահմաններում, ավելին՝ շեն կարեռվում պատմական ճշմարտության (հավաստիության) եզրերը, ապա ժամանակակից պատմավեպը՝ ի դեմս այդ ժանրի լավագույն օրինակների, հաստատում է պատմական դարաշրջանի քըննական-վերլուծական խորացման սկզբունքը. Այստեղից էլ՝ արդիական պատմավեպի (ասենք՝ «Վարդանանք») կամ Զորյանի եռագրության) հիմնավորումը պատմական ստույգ տղբյուրներով, այդ ժանրի պատմագիտական հագեցումը:

Որիշ հարց է, որ Դեմիրճյանը և Զորյանը իրենց վեպերում հաճախ բանավիճում են պատմական փաստաթղթերի հետ (ուր երեսում են դրանց հեղինակների կողմնակալ գնահատականները). Հաճախ պատմական աղբյուրը մեկնաբանում են յուրովի՝ դրա մեջ փնտրելով պատմության իսկական տրամաբանությունը և ճշմարտությունը՝ արդիականության դիրքերից:

Ստ. Զորյանի եռագրությունը, այս առումով, հայ ժողովրդի IV դարի պատմության տարեգրությունն է: Սա բնավ չի նշանակում, թե Զորյանի վեպերը պատմության վերաշարադրանքն են կամ իլյուստրացիաները: Խոսքն այն մասին է, որ տարբերակելով իրականության յուրացման երկու ձևերը՝ պատմագիտականն ու գեղարվեստականը (որոնց մեջ, անշուշտ, կան որոշակի սահմանագծեր), Զորյանը, ինչպիս և պատմությանը դիմող ամեն մի ճշմարիտ շեղագետ, իր վիպաշարը գրել է և պատմական ժամանակաշրջանի խորիմացությամբ, և պատմության վերաբերյալ իր սեփական հայացքով:

Դարի քաղաքական ու սոցիալական շափազանց բարդ հարաբերությունները հասկանալու համար Զորյանը խորազնին ուսումնասիրել է և սկզբնաղբյուրները (Փավստոս Բուզանդ, Խորենացի, Հռոմեական պատմիչներ), և այդ դարի անցքերի նորագույն պատմագիտական վերլուծությունները՝ Դարագաշյանի, Լիոյի, Հ. Մանանդյանի և այլոց աշխատությունները, այսինքն՝ ստանձնել է պատմաբանի դեր: Զինված պատմությամբ, Զորյանը մշակում է իր գեղարվեստական հայացքը՝ քննական վերաբերմունքը, որով և պատմական կոնկրետ իրադրությունը տեղադրվում է ժամանակային ու տարածական ավելի լայն սահմանների մեջ, քան բուն IV դարի իրադարձություններն են: Այս լայն հայացքով նրա պատմական հուսագրությունը «դարի կենսագրությունից» վիրաճում է ժողովրդի «պատմական կենսագրության», այլ խոսքով՝ չV դարը դառնում է ժողովրդի ճակատագրի «Փիլիսոփայությունը» արծարծելու շարժադիր:

Պատմական եռագրության մեջ դառնալով հայոց պետականության ակունքներին՝ այդ պետականության համար բնորոշ քաղաքական-սոցիալական գաղափարախոսության այլանյլ շերտերով, Զորյանը առաջադրում է գեղարվեստական մի ուրույն հայեցակետ, որը կարելի է ձևակերպել իրքն մարդկանց բարոյական գիտակցության ու բարոյական պատասխանատվության քննություն:

Հեռավոր անցյալից առպարեզ հանելով պատմական հայտնի ու անանուն գործիչներին, Զորյանն ակնարկում է պատմության դատաստանը նրանց հեկատմամբ, մի մասին հատկացնելով պատմության արդարացումը, մյուս մասին՝ պատիճը:

Սրանից շի հետևում, թե Զորյանն իր խնդիրը սահմանափակում է պատմական անձնավորությունների վարքագրությամբ. Հակառակը՝ հեռանալով վարդապետական սահմանափակ ոլորտներից, նա եռագրության մեջ հատկապես կարենում է պատմություն ձայնը, որով և բացատրվում է եռագրության վիպական յուրահատկությունը՝ համայնապատկերային կառուցվածքն ու սոցիալ-հոգեբանական հագեցումը: Այդ անելու համար Զորյանը, բնականաբար, պետք է դիմեր դարաշրջանի լայն համապատկերին, ուր երեսում են հասարակության բոլոր շերտերը՝ թագավորական պալատից մինչև գեղջկական խոճիթներ, նախարարական տներից մինչև հոգևորական ժողովներ, երեսում են ժամանակի մարդիկ՝ ժողովրդի պատմության ու ինքնուրույն գոյության հարցի հանդեպ ունեցած իրենց վերաբերմունքով:

Զորյանի ներկայացրած պատմական իրականությունը բարդ, խճճված իրականություն է՝ բարձրացող և իշնող գծերով, խոր հակասություններով ու տարամերժ, դրամատիկ կոքերով: Հայաստանը նվաճելու համար Պարսկաստանի ու Բյուզանդիայի բացահայտ ու քողարկված ակնկալությունները՝ մի կողմից, երկրի ներսում խորացող կրոնական ու դասային մասնավածությունը՝ մյուս կողմից, հրահրել են քաղաքական ու սոցիալական մի մեծ դրամա, որը լուծելու համար պահանջվում է և համառ պայքար, և գործնական կենսագիտություն:

Զորյանի եռագրության՝ իրքն ուսալիստական ոճաբանության կանոններով գրված ստեղծագործության ստույգ նշաններից մեկը, պատմական դեմքերն ու գեպքերը IV դարի հոգեբանությամբ հագեցնելն է:

Ինչպես Արշակի, այնպես էլ Պապի, ավելի պակաս խորությամբ՝ Վարագդատի հակատագրի մեջ արտահայտվել է IV դարի իրականությունը, ինչպես

և պատմության հերոսների անձնական դրաման, որը պայմանավորված էր ոչ այնքան նրանց անձնական կենցաղի հանգամանքներով, որքան նրանց քաղաքական հույսերի խորտակումով։ Սա նշանակում է, որ Զորյանը գնացել է պատմական հերոսների հոգեկան աշխարհի խորացման ճանապարհով, մի բան, որ առավել ամբողջական է արտահայտվել Արշակ II-ի կերպարում՝ ի գեմս «Գնել-Տիրիթ-Փառանձեմ» հարաբերության։

Հոգերանական խորացումը վերաբերում է ոչ միայն եռագրության, այսպես կոչված, «գլխավոր կերպարներին», ոյլեն շատ ուրիշ հերոսների։ Մասնավորապես հոգերանական սոսույգ նկարագրով են ներկայացված Տերենտը («Պապ թագավոր»), Պրոկոպոսը («Վարազգատ»), մի շարք նախարարներ (Ներսես և Սպանդարյան Կամսարականները, Հայր-Մարդպետը), հոգեոր դասի ներկայացուցիչներ (Խաղաղ Ապիսկոպոսը), ուազմական գործիչներ (Բաթ Սահառունին, Գնել Անձեւացին), մտավորականներ (Երեմիա արքայադպիրը), շինականներ (Թորգոմը), զինվորներ (Հրահատը)։ Սրանք բոլորը կենդանի բնավորություններ են՝ ներկայացված ունալիստական տիպակերտման՝ անհատականացման ու ընդհանուրացման շափանիշներով։

Ժամանակի քաղաքական ոգին վեր հանելու համար Զորյանը պատկերում է ինչպես տարբեր հոսանքների ու հասարակական շերտերի ներքին հակառակությունները, այնպես էլ գրաշրջանի «իրային» միջավայրը (կենցաղ, ագուագրություն, նյութական կուլտուրա և այլն)։ Այս առումով հայ գրականության մեջ եղակի էջեր են նախարարական բերդերի՝ Կամսարականների ամրոցի («Հայոց բերդը»), Արշակունիների պալատի («Պապ թագավոր»), Թագրատունիների դղյակի («Վարազգատ»), ժողովրդական խրախճանքների ու ծիսակատարությունների նկարագրությունները։

Եռագրության մեջ Զորյանը երեսում է նաև իբրև մարտագրության վարպետ։ Նախիջևանի գիշերամարտի, Զիրավի ճակատամարտի, Բյուզանդիայից Հայրենիք վերադարձող Պապի զորախմբի զանգվածային տեսարանները նկարված են գեղարվեստական խոր ներշնչումով, ուազմագետի ձիրքով։

Վիպաշարի, մասնավորապես, «Պապի» ունալիստական որակի մի արտահայտությունն էլ նրա լեզուն է՝ հայոց լեզվի պատմական շերտերով, ժամանակակից գրական հայերենի հուզական գծերով հագեցած, պատռւմային ճկուն հնարավորություններ հայտարերող, պատմական վեպի իսկական լեզու, որ հարստացնում է հայ արձակի ոճական շտեմարանը։

## 7

Ստ. Զորյանի գրական ժառանգության մեջ հատուկ տեղ և կշիռ ունեն մեմուարները, գրական-քնննադատական հոդվածները, ուսւ և արևմտահվրապական գրողներից կատարած թարգմանությունները։

Զորյանի մեմուարները ժամանակի անցուդարձը մանրամասնորեն ներկայացնող հիշատակարաններ լին, ինչպես Շիրվանդադեի «Կյանքի բովիցը», ոչ էլ իր ստեղծագործական ճանապարհն ու դավանանքը մեկնաբանող օրագրություններ, ինչպես Վահրամ Փափազյանի «Հետադարձ հայացքը»։

Դրանք իր ավագ ժամանակակիցների ու մտերիմների մասին պատմող հուշային դիմանակարներ են՝ գրված զորյանական բնական, խորաթափանց, հուզական խոսքով։

Ինչպես արծակի մյուս ժանրերում, հուշագրության մեջ ևս Զորյանը մնում է նույն հավաստի, հավատ ներշնչող, «բնորդի» էությունը՝ նրա մարդկային խառնվածքն ու ստեղծագործական-քաղաքացիական նկարագիրը դիպուկ գծերով հոգեբանական նրբերաններով ներկայացնող պատմող:

Մի ուրիշ գնահատելի կողմ էլ ունեն Զորյանի հուշագրական պատումները. դրանցում ամենին չկան այդ «սուրբյեկտիվ» գրական տեսակետից անբաժան ինքն իրեն ցուցադրելու երեսովի, ինքնավերագրումների հետքեր:

Այս հատկությամբ էլ Զորյանի հուշերը ստանձնում են սկզբնաղբյուրի գեր, այնքան վավերական են նրա պատումները, այնքան ստույգ՝ պատկերացումներն ու զննումները:

Եվ միաժամանակ կենդանի, հյութեղ, արտահայտիչ, այնքան կենդանի և այնքան արտահայտիչ, որ վիրանում են հուշը գեղարվեստական արձակից բաժանող սահմանագծերը: Զորյանի մեմուարը օրինակելի գեղարվեստական արձակ է, ուր երեսում է բնավորություններ վերստեղծելու նրա մեծ վարդետությունը:

Ահա, օրինակ, Ղազարոս Աղայանի մասին պատմող հուշը, ուր անջնջելի գույներով երեսում է նրա առաջետական-ժողովրդասիրական բնավորությունը. լուրաբանչուր մանրամասն կոչված է հնչեցնելու ժողովրդի կարիքներով ու հոգսերով ապրող «ուսուցչի» էության այդ գիծը:

«Վաղ առավոտ, երբ մարդիկ խմբերս շտապում էին իրենց գործին՝ պաշտոնատուն, գործարան, դպրոց, Աղայանը, ձեռները մեջքին դրած կամ որևէ իր բոնած, հանդարտ քայլում էր Վելյամինովսկայա փողոցի մայթով և հետաքրքիր, ուշադիր նայում անցորդներին, ընդունելով նրանց բարևները:

Այդ պահին՝ նա թվում էր մի զորավար, որ դուրս էր եկել ստուգելու իր վաշտերը, տեսնելու, թե յուրաքանչյուր ոք կատարո՞ւմ է իր պարտքը:

Հաճախ, երբ նա կանգնեցնում էր այս կամ այն ժանոթին և խոսում հետք, ինձ թվում էր միշտ, թե հարցնում է.

— Ամեն ինչ կարգի՞ն է ձեզ մոռա: Ժողովրդին չի՞ պատահել մի աղետ, մի վնաս...»:

Զորյանն իր հուշերում «բնորդի» այս կամ այն նրբագիծը հիշելիս (օրինակ, Թումանյանի ժպիտը, կամ Ռոմանոսի քայլվածքը, կամ Նար-Դոսի ռքաշվածությունը), կամ Հ. Կոչոյանի բնակարանը) իր մեկնաբանություններով ընթերցողի համար ճանապարհ է բացում դեպի իր «հերոսների» հոգեբանությունը:

Նրա պատումներում չկան ցաքուցրիվ, անիմաստ տեղեկություններ. իմաստավորված է ամեն ինչ՝ «բնորդի» արտաքինից մինչև հոգեկան նկարագիրը, եղելություններից մինչև իր իսկ հուշագրողի գնահատականները, մեկը մյուսից դիպուկ ու առարկայական, ներշնչված ու ճշմարիտ:

Ստ. Զորյանի գրակունագիտական նյութերի ստվար մասը հայ և օտարազգի գրողների բնութագրություններն են, իր իսկ անվանումով՝ «Ուրվագիծեր»:

Զինելով հետազոտություններ, ինչպես Դ. Դեմիրճյանի մի շարք հոդվածներն են, Ստ. Զորյանի «Ուրվագիծերը» ամփոփում են շափազանց արժեքավոր նյութ իր նախասիրությունների, իր նախասիրած հեղինակների ստեղծագործական գաղտնիքների, գրական վարպետության և հոգեբանության, վե-

պի ու պատմվածքի կառուցվածքի, դասական հեղինակների գրելաձևի յուրահատկությունների ժամկետ:

Զորյանի հոդվածները կրում են իր սեփական տպավորությունների ուժեղ կնիքը:

Այլ խոսքով նրա գրականագիտական վաստակի մեջ զուգակշիռ ոչ թե հետազոտողի, այլ գրողի կողմն է, որ ի հայտ է բերում երանգներ ու առանձնահատկություններ բացահայտելու անվրեպ հմտություն, անթերի ճաշակ, ձեռքի և ոճի գաղտնիքների սուր զգացողություն:

Այս առումով թանկագին էջեր են Պուզկինի, Գեխովի, Շիրվանզադեի արձակի առանձնահատկությունները վիրհանող հոդվածները, Հովհաննեսի ազգային-ժողովրդական ոճի փայլում բնութագրությունը, Հովհաննեսի «Պատրանքի» և Ղ. Աղայանի «Ծիծեռնակի» սպառիլ մեկնաբանությունները:

Զորյանը իր գրականագիտական ժառանգության մեջ ևս երեսում է տարեցրին բնորոշ գնահատականների ճշտությամբ, ազգային-մշակութային գործիչների պատմական նշանակությունը խորությամբ ըմբռնելու հատկությամբ. որա վկայություններն են առաջին և երկրորդ լուսավորիչների՝ Մեսրոպ Մաշտոցի և Խաչատուր Աբովյանի գործի հակիրճ, բայց ըստ ամենայնի սպառի իմաստավորումները:

Զորյանի գրականագիտական ժառանգության մեջ երկու հոդված՝ «Ո՞վ է Հովհաննեսը» (1919) և «Տերյանի մահը» (1920), ունեն բացառիկ պատմական արժեք իբրև գրողի քաղաքացիական խղճի ու գեղարվեստական անվրեպ ճաշակի վավերագրեր:

Այն օրերին, երբ շատ-շատերը, դրանց թվում և ժամանակի ճանաշված տեսաբանները, Հովհաննեսը, առումանյանին համարում էին ընդամենը «Լեռան երգի», «գեղջուկ», երեխանների համար առասպելներ ու հեքիաթներ պատմող, Ստ. Զորյանը ասպարեզ հանեց «Ո՞վ է Հովհաննեսը» հարցը և տվեց մի պատասխան, որը առաջին անգամ հայոց ազգային մեծ բանաստեղծը երևաց իր համամարդկային նշանակությամբ, ժողովրդական խոր տարերքով:

«Տերյանի մահը» հոդվածը ևս ականավոր քնարերգուի առաջին լիարժեք հրապարակային գնահատությունն է և նրա միծ վաստակի պաշտպանությունը այն «լոռությունից», որին արժանացավ կոմունիստ բանաստեղծ Տերյանը գաշնակական Հայաստանում:

Լինելով դասական գրականության երկրպագուն, Ստ. Զորյանը աշակուրջ հետեւել է նաև ոռու սովետական գրականության նորություններին, ոեռ 1920-ական թվականներին գրելով առաջին հոդվածները Ա. Ֆադեևի, Ա. Նեվերովի, Լ. Սեյֆուլինայի երկերի մասին, ուր երեսում է նրա ակտիվ շահագրգությունը սովետական գրականության ճակատագրով: Այդ մտահոգությամբ են շնչում նաև քննադատական ելույթները, ուր Զորյանը հանդես է գալիս սոցիալիստական նոր գրականության բարձր որակի, դարաշրջանին արժանի գեղարվեստական խոսքի, բարձր վարպետության շափանիշներով:

Զորյանը անդրադարձել է նաև ընթացիկ գրականության զարգացմանը, իր ուշադրությունը կենտրոնացնելով մասնավորապես գրական վարպետության, նյութի հոգեբանական մշակման, արտահայտման լեզվի ու ոճի, ազգային ավանդների յուրացման և այլ խնդիրների վրա:

Անձնական խոսակցությունների ժամանակ Ստ. Զորյանը հաճախ ասում էր, որ ինքը թարգմանիլ է: Դրանով թերևս նա ցանկանում էր ընդգծել թարգ-

մանշի բարձր կոչումը և թարգմանությունների վիթխարի նշանակությունը: ազգային գրականությունների գարգացման մեջ:

Հետևող Տոլստոյ, Ա. Օստրովսկի, Դարշին, Չեխով, Անդրեև, Պրիշ-վին, Մովսեսան, Բիշեր-Ստոռու, Մարկ Տվեն, Ստեֆան Ֆլայֆ, Սենկեիլ, — սրանք տարբեր մեծության, բայց բոլորն էլ գրողին սիրելի այն հեղինակներն են, որոնցից թարգմանություններ է արել:

Զորյանի թարգմանական գործի պատկը, անտարակույս, կա Տոլստոյի «Պատերազմ և խաղաղություն» էպոպեայի թարգմանությունն է, ուր սուսական հողի մեծ գրողը երևում է իր խոսքի հզոր ուժով, «խորաթափանց սրատեսությամբ», արվեստի մոգական շնչով:

Մի հոգվածում Զորյանը հետեւյալ կերպ է բնութագրել ստեղծագործական այն բավականությունը, որ ստացել է Տոլստոյից կատարած թարգմանություններից:

«Որպես կա Տոլստոյի «Պատերազմ և խաղաղության», «Կոզակների» և մի քանի այլ մանր գործերի թարգմանի՝ անհրաժեշտ եմ զգում ընդգծել այստեղ մի հանգամանք. շնայած նրա երկերի թարգմանության դժվարության՝ ես ստեղծագործական մեծ ուրախություն էի ապրում՝ այնքան խոր հայտնագործությունների էի հանդիպում ու շատ բան էի սովորում: Թափանցելով նրա մեթոդի ու արվեստի մեջ՝ մարդ ավելի է զգում նրա վարպետությունը»:

Ստ. Զորյանը նաև եղել է կա Տոլստոյի երկերի հայերեն տասհատորյակի (1948—1950) խմբագիրը:

\* \* \*

Իր ստեղծագործական կյանքում Ստ. Զորյանը բարձր պահեց ուսալիզմի՝ ճշմարտության, բնականության, հոգեբանական խորացումների արվեստի դրոշը: Նա երբեք տատանումներ ու խոտորումներ չունեցավ դասական գրականությունից ժառանգած այդ բարձր սկզբունքներից:

Խորաթափանց տարեգրի հայացքով զննելով իր ապրած ժամանակը, որը լի էր պատմական մեծագույն անցքերով, Ստ. Զորյանը գեղարվեստական շնամրող պատկերներով վերարտադրեց հայ ժողովրդի անցած ճանապարհ՝ կապիտալի ժամր իշխանությունից դեպի ազգային ու սոցիալական վերածնություն, «ախուր մարդկանց» կյանքի գորշությունից դեպի «պարզ հոգիների» զգացմունքների վեհությունը:

Ստ. Զորյանը նվաճեց արվեստի դասական պարզության ու խորության գաղտնիքները: Դրանով է բացատրվում նրա գրվածքների լայն մասսայականությունը բոլոր հասակների ու բոլոր շերտերի ընթերցողների շրջանում:

Զորյանի անունը վաղուց դուրս է եկել Հայաստանի սահմաններից, նրա գրքերը լայն ճանաչում են գտել սովետական բազմազգ ընթերցողների մեջ:

Վիճակագրության տվյալներով Ստ. Զորյանը հայ այն արձակագիրն է, որ ամենից ավելի է թարգմանվել և հրատարակվել ոռուսերեն լեզվով: Բավական է հիշել, որ «Դրադարանի աղջիկը» ունեցել է ոռուսերեն տասներեք հրատարակություն, «Մի կյանքի պատմությունը»՝ ինը հրատարակություն, շատ պատմվածքներ տպագրվել են հինգից վեց անգամ:

1973-ին «Խաջոյեանիա լիտերատուրա» հրատարակությունը սկսեց: Ստ. Զորյանի երկերի տպագրությունը՝ հինգ հատորով, 1976-ին ավարտվեց: Հրատարակությունը:

\* \* \*

Ստեփան Զորյանը հայ մտավորականի իսկական տիպար էր, որի էության մեջ այնպես ներդաշնակում էին բարձրաճաշակ գրողը, խստաճաշակ քաղաքցին, պարզաճաշակ մարդը:

Չեխովյան՝ «մարդու մեջ ամեն ինչ պետք է գեղեցիկ լինի» նշանաբանի կենդանի մարմնացումն էր Զորյանը՝ գեղեցիկ արվեստ, բարեկիրթ վարվեցողություն, առօրյա ժխորից վեր կանգնած հպարտ էություն, խղճի մաքրություն, պարտքի խոր զգացում իր գործունեության սկզբից մինչև կյանքի վերջ (մահացել է 1967 թ. Հոկտեմբերի 14-ին):

Այդպիսին չէր կարող վինել այն գրողը, որի ճանապարհը անցավ իր ժողովրդի տառապանքի, այնուԹետև՝ նրա վերածննդի ու ազգային զարթոնքի ուղիներով, որի հայացքի մեջ դրոշմվեցին Դ. Աղայանի, Հովհ. Թումանյանի, Ավ. Խոհանոսի նահապետական իմաստուն դիմագծերը, որ եղավ Մարտիրոս Սարյանի, Մանուկ Աբեղյանի, Հակոբ Կոջոյանի բարեկամը, որն իր աշխատասենյակում ամեն օր խոսք ու զրույց էր անում և. Աբովյանի, Չեխովի, Լ. Տոլստոյի, Վ. Տերյանի նման մեծությունների հետ:

Այդպիսին չէր կարող վինել այն քաղաքացին, որ գրականությունից ավելի շատ խոսում էր ժողովրդի ճակատագրից ու պատմությունից, հայրենի երկրի հուշարձաններից ու ճարտարապետությունից, որ ամենայն մանրամասնությամբ հիշում էր հայոց շարադես պատմության համարյա բոլոր դրվագները, որ զարմանալի մի ուշադրությամբ հետևում էր նոր Հայաստանի ժաղկումին և երբեք, ոչ մի առիթով, չխոսեց իր գրքերից:

Այդպիսին չէր կարող վինել այն մարդը, որ ուներ ցնծացող կանաչի հաղվագյուտ պաշտամունք, որ սիրում էր ոչ միայն բնության, այլև մարդու հանգստությունն ու կենցաղի պարզությունը, որ համեստ էր ժայրահեղության շափ ու նրբանկատ իր խոսքի մեջ:

Հրաշալի կերտվածք, որ երևույթ եղավ մեր ժողովրդի պատմության մեջ:

## ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆՑ

Ակսել Բակունցի ունի «Ծիրանի փողը» վերնագրով մի սքանչելի պատմը-վածք: Դրողի հիշատակարանում՝ ուղեգրությունների տետրում պահպանված տպավորությունների «սովորական» գրառում է պատմվածքի բովանդակությունը:

Ճանապարհորդ գրողը,—վկայում է հիշատակարանը,—ամառնային մի արեսու օր, ձիով բարձրանում է հայկական լեռնային գյուղերից մեկը, որտեղ բնակություն էին հաստատել հրդեհներից և հրացանների կրակից հազիվ փախած, սովահար ճանապարհների փոշին և մոլեգին հուսահատությունն արդեն իրենցից թոթափած հայ գեղջուկները: Դրանք Սասունցի Դավթի, Զենով Օհանի, առյուծամիրտ Մհերի՝ հայկական ժողովրդական էպոսի հերոսների շառավիղներն են, որոնք «քարայժի արահետներով» անցնելով լեռից լեռ, դաշտից դաշտ, մոլորվելով բյուր ճամփաներում ու գտնելով նոր ճամփաներ, վերստին հաստատվել են մի բարձրադիր ու գեղեցկանիստ գյուղում, որը կոչվում է Ջանբերդ:

Ճանապարհորդն այստեղ հանդիպում է մարդկանց, որոնք անսովոր, նույնիսկ ցնցող տպավորություն են թողնում նրա վրա: Առավելապես ուժեղ և յուրահատուկ տպավորություն է թողնում «լեռան գյուղերի ամենալավ մարդը» սրնգահար Հազրոն:

Ո՞վ է Հազրոն: Նրա մասին գրողի հիշատակարանը արձանագրում է հետեւյալը: «Նրա հայրենիքը եղել է քարոտ Սասունը, այդ խուզ երկրի ամենախոռն անկյունը, որտեղ ձորերը դառնում են կիրճեր և լեռների գագաթները ապամանները» սպառմաներ:

Նրա մանկությունը խաղացել է այդ քարափների վրա: Խնչակն Յավեն, այդ պատանին փող է նվագել քարանձավների ստվերում, և նրա պարզ երգերին արձագանքել են ձորերը, երբեմն կարկուտն է շարդել նրան, երբեմն քարերն են քերծել գեմքը, ցուրտը և արկը խանձել են նրա կուրծքը, խնչակն լռան լանջը: Նա կովել է գաղանների հետ, և նրանց հետ, որոնք հրացանների կրակոցների աղմուկով քշում էին նախիրը, ոչխարը, առևանգում կին ու երեխա:

Թվում էր, թե մինչ մահ կապրի այդ ժայռերի վրա, ինչակն իր պապերը...

Բայց պայտեց պատերազմը, եղավ զորածողով, բռնություններ, հրդեհնեցին դաշտի գյուղերը, հրդեհածիգները լորերով բարձրացան մինչև լեռների գագաթները, մինչև նրանց խեղճ խրճիթները, հրացաններ որոտացին և շողացին սրեր, ամապերի փոխարեն քարափների վրա նստեց այրվող գյուղերի ծուխը: Բոցը հասավ գեղնած արտերին, կրակը լափեց և սերմ, և սերմնացան:

Հրից ու սրից, հալածանքից ու աղետներից փրկված ժողովրդի բեկորն է Հազրոն, իրենից անբաժան ավանդական ծիրանի երկար փողով, որով նա, վշտի թի ուրախության պահերին, հնչեցրել է հայրենի երկրի երգերը:

Հազրոյի երգի աղդեցության տակ գրողի հիշատակարանում հավելվում է հետեւյալ գրառումը: «Հազրոն հանեց ծիրանի փողը, այն կարմրավուն որին-

զը, որի վրա նվագել էր կապույտ լեռների երգերը, և նրա մատները խաղացին ծիրանի փողի վրա:

...Նվագում է, այս տնգամ ոչ թե լեռնականների կորովի երգը, որից բորբոքվում է արյունը,—այլ հովվական պարզ մի երգ: Կա և՛ թախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տիսուր հեկեկում է, կա և շնչուրախություն, երբ լեռների վրա ծագում է արեւ, ելնում է ծուխը, մշակը գնում է աշխատանքի, վերջապես կան և կարոտի հնչուններ՝ վերադարձի և վերջին հույսի»:

Բակունցի պատմվածքներից մեկ ուրիշը՝ «Բրուտի տղան», պատմում է Հայաստանում տարածված ժողովրդական արհեստներից մեկի՝ բրուտագործության հոչակավոր վարպետ Ավագի մասին, որն ամեն անգամ ավանդական շարխի վրայից ցած զնելով կավից պատրաստված ամանները, մեկուսի կամ բարձրածայն, ասում է պապերից լսած իմաստուն խոսքը՝ «բարի վայելում»: Իսկ իր կողմից հեղինակը այսպես է բացատրում բրուտ Ավագի գործի արժեքը. «Դիմի» պիտի խմեն այդ կծից, թե՞ աղջիկը հարսանիքի ջուրը պիտի տանի, և ո՞վ է այն հարսը, որ մեջքը օրորելով այդ կուժը պիտի կրի, —բոլորին, այդ անհայտ հարսներին և աղջիկներին է ասում բրուտ Ավագը պապերից լսած խոսքը...»:

Սրնգահարն ու բրուտագործը՝ ժողովրդական արվեստի ներկայացուցիչները, մեկն իր անխարդախ, պարզալուր նվագով, մյուսն իր կենսահայացքի լայնությամբ ու մարդասիրությամբ, բացատրում են առհասարակ Բակունցի վերաբերմունքը դեպի արվեստի նպատակները:

Հզոր ուժ վերագրելով արվեստի բոլոր տեսակներին, Բակունցը նախ և առաջ ելնում է դրանց մեջ արտահայտված կենսական բովանդակությունից: Հիշատակելով «ընդահարի, բրուտագործի, ավելացնենք նաև ժողովրդական ասմունքողի» («Մուրոյի զրուցը»), անանուն գորգագործի («Կյորես») ու ժամանակի տարեգրի («Բրուտի տղան») բարձր վարպետությունը, նա հատուկ առանձնացնում է այդ վարպետության միջոցով կյանքի ժողովրդական սկզբունքների արտահայտման անհրաժեշտությունը:

Բակունցը մեծարում է ժողովրդական կյանքի արմատների վրա բարձրացող արվեստը:

Այդպիսին էր նաև իր ստեղծագործությունը՝ հայրենի հողի ավիշներով և ժողովրդական զգացմունքներով սնվող բակունցյան արձակը, որ շափազանց բարձր էին գնահատում ավագ ժամանակակիցները՝ Ավ. Խսահակյանը, Դ. Դեմիրճյանը, Մ. Սարյանը, Մ. Շահինյանը, «բանաստեղծ-ընկերը»՝ Եղիշե Զարբենցը:

Դեռ քսահական թվականներին գրած նամակներում Ավ. Խսահակյանը հիշում է Բակունցի պատմվածքները և դրվագում նրանց ուսալիզմը, իսկ 1934-ին Փարիզի «ՀՕԿ» լրագրում տպագրում է գրական տարեկան տեսություն, ուր Բակունցին համարում է հայ արձակի առաջին դեմքը:

Մարտիրոս Սարյանի հետ ունեցած մի զրուցում նա ասել է. «Կոմիտասի երգերի և քույների առթիվ խոսում են իբրև այնպիսի հրաշքի մասին, որը չի կարելի բառերով արտահայտել: Բայց, իմ կարծիքով, դա այնքան էլ ճիշտ չէ: Հայաստանում կար մի գորդ, որի բառերը զրնգում էին կոմիտասյան ուժով և փայլվիլում էին քույներով: Դա Ակսել Բակունցն էր»:

Դեռ 1927 թ. Զարենցը գրեց «Ակսելին՝ «Մթնաձորը» կարդալուց հետո» քառատողը, 1936-ին մի շարք բանաստեղծություններում փառաբանեց նրա

«Աստվածային տաղանդը», իսկ այնուհետև, Բակոնցի «անհայտ բացակայումի» տպագրության տակ գրեց «Եվ բառերի համար քո մարմարյա...» տողով սկսվող ներբող ողբերգականը, որը կարող է համարվել մեր ժամանակաշրջանի երկու մեծ գրողների մեծ բարեկամության գեղարվեստական հուշարձանը.

Եվ բառերի համար քո մարմարյա,  
Հնամենի բույսն, որով մեր հին  
Քարաքանդակ անդուռ մատուռների  
Անշնչելի գրերը հնադարյան,—  
Եվ մյուսոնի նման սրբազնագույն,  
Քո երգերի մաքուր սկիհներում պահված  
Խորհուրդների համար մշտահմա,  
Որպես խորհուրդը մեր այրական ոգու,  
Քո «Միիհավի» համար և լուսեղեն՝  
Արփենիկի հուշով սրբագործված հավետ,  
«Ալպիական ժագկի» այն բուրավիտ,  
Որ բորեկու է հար աննյութեղեն,  
Եվ վերջապես քո վեհ, հերոսական  
Անրմնացանի համար, որ ձեւքերով վսեմ  
Շաղում է շողք ու սերմ անանձնական,  
Այս ամենի համար և ծիրանի  
Հազարամյա փողի համար քո այն,  
Որ դարերով տենչած խաղաղության  
Երգն է հնում, և մեր ժողովուրդը բանի  
Ռնի գեթ ափ մի հող արեակի ներքո,  
Հնշելու է երգեր եղբայրական  
Այս ամենի համար, օ՛, խեղճ իմ բարեկամ,  
Ես քեզ օրհնում եմ արդ իմ անաղարտ երգով,  
Այս ամենի համար և քո եղբայրական  
Տառապանքի համար, որ արդ կրկին  
Վեհություն է խառնում քո անաղարտ երգին,  
Ես քեզ պարզում եմ ձեռք եղբայրական:  
Եվ ներրողում եմ քեզ ահա կրկին անեղծ  
Եմ շուրթերով, ինչպես օրեր առաջ,  
Երր դու դեռ այր էիր մի անարատ,  
Եվ ես ընկերն էի քո բանաստեղծ:

# 1

«Ալիքսանդր Բակոնց, որդի Ստեփանի, ի գեղշեն Գորիս»—ժամանակակիցների վկայությամբ այսպիսի գեղումով էր Բակոնցը սովորաբար ներկայացնում իրեն՝ մտերիմների ու բարեկամների շրջապատում։

1899-ին, հունիսի 13-ին Ստեփանի թեկույանի բազմանդամ ընտանեկան հարկի տակ ավելանում է փայտե շարժական մի օրորոց ևս։ Ծնվում է Ակսել Բակոնցը, ըստ շափաբերական մատյանի մետրիկական վկայականի՝ Ալիքսանդր Ստեփանի թեկույանը։ Թե ինչպես են անցել Բակոնցի «ուսկե մանկության» տարիները, —կարելի է իմանալ նրա թուղած գրավոր վկայությունից։ Տարիներ հետո գրած համառոտ ինքնակենսագրության մեջ նա ասում է հետեւյալը։ «Ծնողներս ունեցել են և՛ հող, և՛ հարստություն, բայց ես չեմ տեսել ոչ այդ հողը, և ոչ հարստությունը։ Ես հիշում եմ մի զարհուրելի լքավորություն, «մի տուն լիքը մանուկներ» և այդ՝ գավառական քաղաքում, որտեղ հասարակական դիրքը որոշում էին կուպեցի արշինը և շինովնիկի շինը»։

1905 թվականից սկսած հաճախում է Գորիսի ծխական դպրոցը, ուր Ալեքսանդրն իր ընկերների մեջ աշքի է ընկնում գերազանց առաջադիմությամբ: 1910 թ. մայիսին տրված ավարտական վկայականի բոլոր առարկաների դիմաց նշանակված է «գովկելի»: Նկատի ունենալով Ալեքսանդրի արտակարգ ձիրքն ու ուսման հանդեպ ցուցաբերած ծարավը, Գորիսի 152 բնակիչներ 1910 թ. օգոստոսի 10-ին «Սասուն» գրատանը մի խնդրագիր են կազմում և ուղարկում Ալեքսանդր Հայոց Կաթողիկոսին՝ Հայցելով նրա ազակցությունը Գևորգյան ճեմարանի գիշերոթիկ սաների դասարանական բաժինն ընդունելու ազգատ և բազմանդամ ծնողների դավակ, բայց «առանձնահատուկ ընդունակությամբ» սժուկած պատանուն:

1910 թ. աշնանը Ալեքսանդրը մեկնում է Էջմիածին, Հայրենի Գորիս քաղաքից տանելով տպավորությունների բավական հարուստ պաշար:

Գևորգյան ճեմարանում նա հսկայական հետաքրքրություն է հանդես բերում գիտելիքների տարբեր բնագավառների նկատմամբ, առանձնապես հրապուրվելով Հայրենի ժողովրդի քաղաքական պատմությամբ, լեզվով ու գրականությամբ:

Բակունցի ուսման տարիներին Գևորգյան ճեմարանում էին խմբված Հայկական գուլտուրայի ու Հայագիտության այնպիսի խոշոր դեմքեր, ինչպես Հանճարեղ Կոմիտասը, Հայ Ժողովրդական բանաստեղծության ուսահիրա Հովհաննես Հովհաննիսյանը, Ժողովրդական բանահյուսության ու Հայ հին գրականության անզուգական գիտակ Մանուկ Աբեղյանը, Հայտնի բանասեր Կարապետ Տեր-Մկրտչյանը, լեզվաբաններ Հրաչյա Աճառյանը և Գրիգոր Ղափանցյանը, բանասեր ու բառարանագետ Ստեփան Մալխասյանցը, պատմաբաններ Հակոբ Մանանդյանն ու Աշոտ Հովհաննիսյանը:

Ճեմարանին կից գտնվում էր Հայակական հին ճեռագրերի շտեմարանը՝ Եատենադարանը, որի եռանդուն հաճախորդներից էր Բակունցը: Մագաղաթյան և նուազրերի ու Հնատիպ գրքերի հարստությունը՝ ոնախնական երկրի վավերագրերը, Հարցասեր պատանու առաջ բացում են դարավոր առեղծվածները՝ ժողովրդի պատմության էջերը, հին Հայերենի իմաստները, մատենագիրների, բանաստեղծների, վարքագիրների, ժամանակի տարեգիրների թողած գրական գանձերն ու քաղաքացիական ավանդները:

1915-ին, Հավանորեն գաղափարական նոր տրամադրությունների ազդեցությամբ, Բակունցը Շուշվա «Փայլակ» թերթում թղթակցություն-ֆելիետոն է տպագրում Գորիսի քաղաքագիր և գավառական աղմինիստրացիայի կամայականությունների դեմ: Այդ ելույթի համար նրան բանտ են նստեցնում: «1915—16 ուսումնական տարում,—գրում է Բակունցը,—գաղթի պատճառով փակվել էր ճեմարանը և ես այդ տարին ուսուցի «Հրավիրվեցի» Զանգեզուրի Խոր գյուղը: Ամսուր ես «Հարություն» էի արել, որը և կարելի է հաշվել իմ գրական մկրտությունը, եթե չհաշվենք «Հիմար մարդը» վերնագրով մի հեքիաթ, որ 1913 թվականին տպեց «Աղյուր» ամսագիրը: Այդ ամառ ես ֆելիետոն էի տպել կարծեմ սոցիալ-դեմոկրատական մի թերթում, մեր քաղաքադլիսի և գավառական աղմինիստրացիայի դեմ: Ինձ բանտարկեցին, եղավ «փոթորիկ», և ես բանտարկության 34-րդ օրը ազատվեցի, որպեսզի ուսուցի զնամ այն հեռու գյուղը՝ լորու»:

Էջմիածնի Գևորգյան ճեմարանը, որի դասարանական բաժինը Բակունց ավարտում է 1917-ին,—դասերը վերսկսվելուց հետո,—կարևոր էր է նրա կենսագրության ու մտավոր զարգացման մեջ: Այստեղ է նա սկսել իր գրական

առաջին փորձերը, անքուն գիշերներ լուսացրել գրքերի վրա, խոր կերպով ուսումնասիրել հայրենի գրականության անցած երկար ու դժվարին ուղին: Նրա գրական հետագա կյունքում պակաս նշանակություն չի ունենում Զանգեզուրի ձորերի մեջ կորած հեռավոր կոր գյուղակում անցկացրած կարճատև ժամանակը: Այս պարագան, որպէս իր կյանքի գլխավոր դեպքերից մեկը, հատուկ ընդգծում է նաև ինքը. «Աւաշին անգամ ճանաւեցի գյուղը, նրա մարդկանց, Հետո շատ անգամ այդ թվի հիշողությունները օգնել են ինձ»:

Բակունցի կենսագրության ետճեմարանական (1917) շրջանը առանձնապես ուշագրավ է նրա քաղաքացիական նկարագրի ճանաշման իմաստով: Անհետևանք թողնելով Գեորգյան ճեմարանի լուսանական բաժնում սովորելու համար ներկայացրած իր դիմումը և նույնիսկ այն բանից հետո, երբ ճեմարանի մանկավարժական խորհուրդը որոշում է նրան տեղափոխել լսարանական բաժին, Բակունցը «օրերի կանչով» նետվում է հասարակական կյանքի հորձանուար. «Ամառը՝ հասարակական աշխատանք, աշնանը՝ զինվոր մինչև 1918-ի հունիսը (էրզրում, Կարս, Սարդարաբագ...)»:

Կապուտաշյա հայրենիքի հույսերով ու երազներով 1917 թվականի ձմռանը (գեկտեմբերի 26-ին) Գորիսից էրզրում հասավ Ակսել Բակունցը:

Շարքային գինվոր՝ հետևակային ու հեծյալ Բակունցը էրզրումից զորքերի հետ գալիս է Կարս, Սուլմալու, այստեղից հասնում է Սարդարապագ, ուր 1918 թ. մայիսին տեղի է ունենում հայ ժողովրդի պատմության հերոսական ճակատամարտերից մեկը՝ Սարդարապագի գոյամարտը: Բակունցը մասնակցում է հայկական նոր Ավարայրին:

1918 թ. երևանի «Փողովուրդ» թերթում տպագրվում են Բակունցի մի շարք էտյուդ-ակնարկները («Անտառում», «Աշոտը», «Աղոթք»), որոնց մեջ, ինչպես Զարենցը «Դանթեականում...», նա քննադատական խեթ հայացքով է գնահատում անդեկ ու անսուագաստ շարժումները, արտահայտելով խորին հիասթափություն՝ խոստացած «պատրանքների» հանդեպ: Հազարավոր մարդկանց տրամադրությունների խոտացած հայտարարն են Բակունցի հետևյալ տողերը. «Հայրենի աշխարհս անհայտ հեռուներից կանչում էր ինձ, հմայում: Ես դիտում էի ձյունապատ շղթան, որի մյուս փեշերը հայրենի աշխարհի շրերով էին ոռոգվում: Գիտեի, որ այնտեղից երևում են իմ հեթանոս հայրենիքի արգավանդ ու բերրի դաշտերը, և սրբազն Եփրատը ոլոր-մոլոր, լեռան փեշերը քերելով՝ անցնում է զաշտերի միջով և ցողում ծաղիկները եղեմական:

Եվ մի օր, երբ արևի մարող շղթերը փայլվում էին լինակատարին, ես իմ երազած աշխարհի ճամփեն բռնեցի. ես ցանկացա մարմինս թրշել սրբազն գետի մեջ և բարեպաշտորեն նորից երկրպագել հեթանոս հայրերիս աստվածներին, ամենաճերմակ արշամներին զոհելով:

Ու քայլեցի ես ուրիշների հետքով, շատերի պես: Ճամփեն երկար ու գըժվարին, ճամփեն արնոտ ու մոլոր, բայց քայլեցինք մենք հավատով ու անտըրտունց: Եվ հոգնած, արեավառ ճակատով, հյուծված ու վտիտ, գալիք օրերի կարոտով էինք շերմանում, երբ մի օր մեր երդիկից ծուխը պիտի ելներ, և վայելքի, աշխատանքի երգերը պիտի լսվեին դաշտերում, սարերում: Մեր ոտքերը մաշվեցին քայլելուց, մեր ծնկները կքվեցին ծանր բեռից...

Իզուր, իզուր, իզուր...

Ե՛վ արյուն, ե՛ քրտինք, ե՛ զոհ, ե՛ զրկանք, ե՛ արցունք:

Մենք վերադարձանք՝ այդ ճամփաները նղովելով, այդ ճամփաները, որ հազար-հազար մատաղ կյանք լափեցին ու հագեցան:

ՄԵՐ ուխտը մեզ անմիտ թվաց, մեր ճամփան կորստաբեր, և մնացինք շվարած: Մեկը շեղավ, որ մեզ նոր ճամփաներ ցուց տար, որ ամոքեր մեր հիվանդ սիրտը և թև տար, նոր թեկր՝ ապրելու, ստեղծելու:

«18—19՝ երկանում սրբագրիչ և ուսպորտյոր:

19—20 թվի հունիսը՝ ուսանող պոլիտեխնիկումի և դասաւու որբային գիմնազիոնի: 20—23՝ ուսանող Խարկովի գյուղատնտեսական ինստիտուտի: 1923-ից հետո՝ ագրոնոմ»—այսքան համառոտ է ներկայացնում Բակունցն իր կենսագրության բավական երկար հատվածը «հնքնակենսագրության» մեջ<sup>3</sup>:

Զնայած նյութական ծանր վիճակին, այնուամենայնիվ, Բակունցը 1919 թվականի աշնանը կամքի մեծ լարման գնով ճանապարհ է ընկնում դեպի «անհայտ հեռուներ»՝ ընդհատված կրթությունը շարունակելու նպատակակետը Մոսկվան էր, սակայն նա կանգ է առնում Թիֆլիսում և ընդունվում տեղի պոլիտեխնիկումը: Այնուհետև նա գնում է Խարկով՝ հայաշատ մի քաղաք, ուր նա սկզբում հաշվապահ է դառնում և ապա ուսանող՝ գյուղատնտեսական ինստիտուտում:

1923 թվականին Խարկովի ինստիտուտի առաջադեմ ուսանողը, գյուղատընտեսի մասնագիտությամբ, վերադառնում է Հայաստան և դառնում հանրապետության հայոնի «ագրոնոմներից» մեկը: Պատերազմներից կաթվածահարեղած, համարյա թե քայլայման եղրին հասած Հայաստանի գյուղը կարիքուներ գիտության հիմունքներով զինված, լուսավորական խնդիրներով խանդավաված մասնագետ-գյուղատնտեսների: Այսպիսին էր Ակսել Բակունցը, որը մի կարճ ժամանակ պաշտոնավարելով երևանի սերմնաբուժարանում և գյուղատնտեսական ինստիտուտում (ականավոր սելեկցիոներ-բուսաբան Միքայել Թումանյանի մոտ), այնուհետև դառնում է «Փափառական» գյուղատնտես Զանգեզուրի գավառում (1924—1926):

Աշխատելով իբրև գավառի գլխավոր գյուղատնտես (տեղակալն էր նորավարտ ագրոնոմ Շ. Ս. Աղաբարյանը) և գավառական խորհրդի հողբաժնի վարիչ, իսկ 1926-ից էլ դառնալով գյուղատնտեսության մինիստրության հողվարչության պետի տեղակալ և վարելով այլևայլ պաշտոններ, Ակսել Բակունցը այդ տարիներին (մինչև 1931 թվականը) այնքան հարուստ և բազմազան գյուղատնտեսական գործունեություն է ծավալում, որ դառնում է գյուղատնտեսական ասպարեզի հանաչված հեղինակություններից մեկը: Նրա գործունեության հիմնական ձևը զանգեզուրյան գյուղերի տնտեսական կյանքին առնչվող գործնական խնդիրների կարգավորումն էր: Հողաշափություն, սահմանային լեճեր, ուսուցում, գյուղատնտեսական նոր կուլտուրաների արմատավորում, միջգյուղան ճանապարհներ, ագրոքիմիական միջոցառումներ, սերմացուի տեսակավորում, խոտացանություն, կաթնատնտեսական արտելների կազմակերպում, գյուղական կոոպերատիվների ստեղծում, վարկային ընկերությունների հիմնում, գյուղատնտեսության տարբեր ճյուղերի (անասնապահություն, թունաբուծություն, այգեգործություն, մեղվաբուծություն և այլն) զարգացում, նոր տեխնիկայի օգտագործում և այլն. ահա խնդիրների այն ոչ լրիվ շրջանակը, որ մտահոգել է գավառի գյուղատնտեսին<sup>4</sup>:

Վավերագրերը վկայում են պետական-ժողովրդական մտածողության բարձր աստիճան, որ հատուկ էր «լուսավորչական» խառնվածքի գործիչներին:

Մինչև գրական պրոֆեսիոնալիզմի դիրքերում ամրապնդվելը, Բակունցը կյանքի շատ բնագավառներ է անցնում, իսկ կենսափորձի հարստությունն

այն հիմնական նախադրյալներից մեկն էր, որ ապահովեց նրա մեծ հաջողությունը գրականության ասպարեզում:

Դյուզական ուսուցիչ, շարքային ռազմիկ, թերթերի լրաբեր, հասարակական աշխատող, ուսանող, գյուղատնտես, գյուղթղթակից, գրող, —ահա ընդհանուր գծերով թակունցի կենսագրության զարգացման կորագիծը: Բոլոր այս զբաղմոնքների մեջ կարելի է հետևել մի ներքին կապակցություն, քանի որ դրանք բոլորը թակունցի համար հանդիսացել են միևնույն նվիրական ու մեծ գործի լրացումն ու շարունակությունը: Մի դեպքում այբբենարանը ձեռքին, նա գրեր էր սպառեցնում գյուղական երեխաներին, որոնց համարում էր ժողովրդի ապագան, մյուս անգամ՝ հրացանն ուսած, պաշտպանում էր հայրենի հողը՝ ժողովրդի մշտակայուն գյուղական խարիսխը, ապա ոգևորված նոր կյանքի առաջին բողբոջներով, գյուղատնտեսական գիտելիքներով էր զինում հայրենի հողի սերմնացաններին, մի այլ անգամ դառնում ամեն մի նորի նախանձախնդիր թղթակից և վերջապես ընտրում է գրշի աշխատավորի կոչում՝ գրելու ժողովրդի համար, հյուսելու նրա պատմական բախտի ու հոգեոր փորձի, նրա կենսուժի ու ապագայի երգը:

## 2

Գեղագիտական հայացքների խմորման և տարբեր բմբոնումների սուր պայքարի իրադրության մեջ երևանի և Թիֆլիսի օրաթերթերում՝ «Խորհրդային Հայստան», «Մարտակոլ», «Յարա Յուսուս», —մեկը մյուսի ետևից սկսեցին տպագրվել Զանգելուրի գավառական գյուղատնտես Ակսել թակունցի թղթակցությունները, զրուցները, պատկերները, ակնարկները, նամականին: Բնորոշ է, որ գրական այդ «մանրուբը» գերազանցապես լույս էր տեսնում երևույթների, գեղքերի ու գյուղական անցուդարձի հավաստիությունը հաստատող վերնագրերով. «Մեր գյուղերում», «Գավառական նամականին», «Նամակներ գյուղից»: Բնորոշ է նաև, որ ակնարկների մյուս խումբը վերնագրված է այն գյուղերի ու աշխանների անուններով, որոնցից ստացած իր տպալիրությունները, գյուղական կենցաղի ու աշխատանքի իր ամենօրյա զննումներն էր նա հանձնում ընթերցողի ուշադրությանը՝ «Կյորա», «Խոտ», «Բիշանագ», «Նաթրիդ», «Արմաշ», «Էթեն», «Սարալու» և այլն:

1923—1925 թվականների ընթացքում թակունցը զբաղվում էր բառիս բուն իմաստով՝ գյուղագրությամբ, զանգեզուրյան գյուղերի կենցաղային առօրյայի տարեգրությամբ:

Գրական-էսթետիկական խնդիրներից ավելի գյուղթղթակից ու ակնարկագիր թակունցին հետաքրքրում էր հայ գյուղի հեղափոխական վերափոխության հետ կապված ընթացիկ հարցերը հասարակական քննության առարկա դարձնելու հարցասիրությունը: Եվ, այնուամենայնիվ, թակունցը հետամուտ էր նաև գրական որոշ դիրքերի պաշտպանության: Այս առումով ուշագրավ են թակունցի նամակներում արտահայտված մի շարք մտքեր, որոնք պարզում են նրա ակնարկագրական աշխատանքի բովանդակությունը, բնույթին ու ուղղությունը:

1924 թվականին «Նամակներ գյուղից» հոդվածում նա խստորեն քննագատում է հայ գյուղը իդիալագործող այն «քնարերգակներին», ովքեր հովվերկու կըսաւշշիկի աշքերով են դիտում կյանքը: «Մութ ու տգետ գյուղացին այնքան էլ հեշտ չի ճարում այն չոր հացը, որ ուտում է և չկա ամենեին այն իդիան, որի մասին երգում է պոետը», —եղբակացնում է թակունցն իր նամակում:

Ակնարկագրությունը Բակունցի համար ճանապարհ էր դեպի մեծ գրականություն։

Զերս սխալվում նրանք, այդ թվում նաև գրողի բարեկամները, ովքեր գեղարվեստականության իմաստով մեծ տարածություն էին տեսնում Բակունցի առաջին շրջանի (1923—1926) ակնարկների ու նրա պատմվածքների միջև։ Այդպիսի մի դիտողություն էլ արել է Զարենցը։ Ահա Զարենցի անթվակիր մի գրատումը, որտեղ Բակունցի ակնարկների գեղարվեստականության պակասն է մատնանշվում։ «Նրա գրական աշխատանքի երկու կողմը՝ հիանալի նովելիստ և մակերեսային օչերկիստ։ «Մինաձորը»—գյուղական ակնարկները»<sup>5</sup>։

Մամուլում ուրիշ տեսակետներ էլ են արձանագրվել ակնարկագիր Բակունցի մասին, լավ և վատ, ճիշտ և սխալ, բայց դրանց մեջ իշխող է եղել մի թյուրատեսություն, որի համաձայն Բակունցի ակնարկների գեղարվեստական թուլությունը դիտվում է իրեն ստեղծագործական երկվության արտահայտություն, իբրև նոր ժամանակների հետ գրողի ունեցած հոգեկան խզումների հետևանք։

1928 թ. «Դրական գիրքերում» հանդեսում տպագրված մի հոդվածում հայտարարվում է, թե Բակունցը որպես գեղագետ՝ «իր կապերը շի խզել անցյալց», թեև որպես մտածող՝ «կապված է նորի հետ»<sup>6</sup>։

Բանն այն է, որ գյուղական ակնարկների մեծ մասը գրված են 1924—1926 թվականների ընթացքում, երբ Բակունցը գյուղատնտես էր, գրաղմունքի բերումով շրջան էր Զանգեզուրի գյուղերում, դիտում էր գյուղացիական առօրյան և իր անմիջական գրառումները՝ նամակների, թղթակցությունների, հոդվածի, ձանապարհորդի տպագորության, ականատեսի լրագրային դիտողության ձևով ուղարկում էր կենտրոնական օրաթերթերին (նաև «Մաճկալին») ու այնքան մտահոգված նյութի գեղարվեստական ձևագործման, որքան նոր գյուղի գործնական, անհետաձգելի, ցավոտ հարցերը հասարակության ուշագրությանը հանձնելու խնդիրներով։

Բակունցը ներկայացնում է գյուղում արմատներ գցող նոր կենցաղի մատաղ տունկերի աճեցման դժվարությունները՝ հեղափոխության առաջին օրերին («Արտելիա», 1925), փորձում է գտնել հին անհետացման և նոր կենցաղի ծնունդի պատմական օրինաշափության կոնկրետ դրսերումը մարդկանց հոգեբանական աշխարհում («Տրախտորի մաշին», 1925), ցուցադրել «գարնան կանաչի պես» ծլող հորի բախումը հին կենցաղի հետ, որը տանում է դեպի կյանքի նոր ձեերի հաղթանակ։ «Հին կապերը թուլանում են, տեղ-տեղ մի թեթև հարվածի են սպասում, որ իսպատ վերանան»։

Զափականց գգայուն ու ուշագիր էր Բակունցը ռեալսկանության հանդեպ, և, այդուամենայնիվ, ներքին պահանջ էր զգում՝ «ազատագրվելու» այդ ուելականությունից՝ հանուն բարձր արվեստի, հանուն կենսական ու գեղարվեստական ճշմարտության միաձուլման։

### 3

Արդին 1925—1926 թթ. պարբերական մամուլի էջերում, գերազանցորեն և թորհրդային Հայաստան» օրաթերթում, տպադրվում են գեղարվեստական այն պատումները, որոնք մտան «Մինաձոր» ժողովածուի կազմի մեջ։ Այդ տասնութ պատմվածքները «Մինաձորի» առաջին հրատարակության մեջ ունեն հետևյալ դասագորությունը՝ «Մինաձոր», «Վաղին», «Աքարում», «Այումարի լանջին», «Ծիրանի տափ», «Միրհավ», «Հանավանք», «Գյուղահարի հա-

մար», «Մինա բիբին», «Խաղացավ», «Զորբան», «Թրանջիա», «Մրոց», «Մըթնաձորի ուշարգը», «Խոնարհ աղջիկը», «Լառ-Մարգար», «Սաբու», «Ալպիական մանուշակ»:

«Մինաձորի» տպագրությունն արժանացավ տարբեր, կարելի է ասել՝ հակադիր վերաբերմունքների: Մինչ գյուղացիական Հայաստանում ընթերցողների լայն շարքերը, ի գեմս Ակսել Բակոնցի, տեսան իրենց մեծ և փոքր դրամաների, իրենց երազանքների և հայացքների հարազատ արտահայտչին, ժողովրդական ցավի ու կարոտի գեղագետին, ժամանակի գրական «Հրահնանգիւները» հանդես եկան Բակոնցի ստեղծագործության այնպիսի վերագրումներով, որոնք հետագայում գրականագիտության մեջ որակվեցին «Լեզնդ Բակոնցի մասին» անունով:

Բակոնցը «Հնչեցնում է հին գյուղի մահացման ողբը»<sup>7</sup>, Բակոնցը սրբագրոծում է նահապետական հետամնաց բարքերը, Բակոնցը կեցության իդեալական ձևն է համարում անմարդաբնակ քարանձավների լուսությունը, Բակոնցը նզովում է «քաղաքակրթությունը», — ահա վերագրումների ու լրիվ շարքը:

Աշխարհայացքային զուգահեռներ էին որոնում ոչ միայն կնուտհամսունյան «դիցաբանական սագաների» և բակոնցյան Մինաձորի ծննդաբանության «անհիշելի ժամանակների», ոչ միայն «երկաթի հյուրի» և մուժիկային Ռուսաստանի հանդիպումից ծնված դրամայի եսենինյան կերպի, այլև «մարդուն» և «գագանին» հավասար մակարդակի վրա դնող իմաստասիրության միջև, այլև «հողի իշխանությունը» գյուղացու հավերժական ճակատագիրը համարող տեսությունների միջև:

Բակոնցի ստեղծագործության սխալ մեկնաբանությունների սկզբնաղբյուրը ոչ միայն ժամանակի գեղագիտական իրադրությունն էր, ուր առաջին դիրքերի վրա էր Պրոլետկուլտի «գրական մոփելը», այլև Բակոնցի հասարակական-բարոյական պաթոսի սխալ պատկերացումը:

Դառնանք «Մինաձորի» մեջ տպագրված պատումների ժամանակային ընդգրկման սահմաններին, որը շատ էական մոմենտ է Բակոնցի ստեղծագործության պաթոսը ճիշտ ընթերցելու համար: «Մինաձոր» շարքում կան, իհարկե, պատմվածքներ նախահեղափոխական գյուղի կյանքից, բայց պատմվածքների ճնշող մեծամասնության «սյուժե-ֆաբուլաները» քաղված են քսանական թվականների գյուղի իրականությունից, այն ժամանակաշրջանի, երբ թեև հայոց աշխարհը բռնել էր պատմական զարգացման նոր ուղին, այդուամենայնիվ, շատ բանով դեռևս պահպանվում էին հին կենցաղի և հոգեբանության, նահապետական ապրելակերպի և նախապաշարմունքների գծերը:

Շարքի պատմվածքներում Բակոնցը հատուկ ընդգծում է մինաձորյան գյուղերի ծննդաբանական խոր արմատները և միանգամայն «անվթար», «քաղաքակրթության» հետ ամենամեծ եղբեր չունեցող դիմագիծը:

Ահա նրա հանձնարարականներից մեկը. «Մրոցը մի ուրույն աշխարհ է և երբ ձորի ափով անցնում եք, մի անգամ էլ բարձրանում սարը և իջնում մի ուրիշ ձոր, այնպես է թվում, թե վերջին սարը ձեզ ծանոթ աշխարհի սահմանն էր, իսկ սարից դենը, դեպի ներքև, ընկած է անմարդաբնակ մի երկիր, որի անտառներում արջերը վայրի տանձ են հավաքում և լուսնյակ գիշերներին հաստաբում կաղնիների մոտ գլորվում, կիսաշոր տերմների վրա արջապար խաղում»<sup>8</sup>

Սա էլ մյուս հանձնարարականը. «Մի ուրույն աշխարհ է Մինաձորը, քիչ է ասել կուսական և վայրի: Թվում է, թե այդ մոռացված մի անկյուն է այն օրե-

րից, երբ դեռ մարդը չկար և բրածո դինոզավրը նույնքան ազատ էր զգում իրեն, ինչպես արջը մեր օրերում»:

Իրապես, ինչպես երեսում է պատմվածքների սյուժեներից, Մթնաձորը մի այնպիսի աշխարհ է, ուր դեռևս միմյանցից չեն անջատվել իրականությունն ու առասպելը, առօրյան ու լեզենը, ուր մարդն ու արջը ապրում են կողք-կողքի, ուր բնության և գյուղի միջև չկան էական տարբերություններ: Բնությունը գյուղի մեջ է, գյուղը՝ բնության ծոցում:

Մի խոսքով մթնաձորյան գյուղը բոլոր կողմերով նահապետական, մոռացված, անմատչելի աշխարհ է, այնքան «մոռացված», որ «ճամփի վրա կտնաշխոտ է միայն» և այնքան անմատչելի, որ «ժամանակն այստեղ ուրիշ ընթացք ունի, որի նվազ միավորը դարն է»:

Բակունցն անդրադառնում է, նախ և առաջ, Մթնաձորի ողբերգությանը, այդ եղերքի բնակիչների սոցիալական թշվառության պատկերներին:

Այս ասումով առանձին «ցիկլ» են կազմում «Մթնաձոր», «Օրանջիա», «Տիգրանուհին», «Խաղլացավ», «Այու սարի լանջին», «Հանավանք» կենցաղանկարները:

Գյուղացի Վասիլը («Տիգրանուհին») այնքան է խեղճացել հոգս ու պարտքի ծանրությանից, որ ձմռան մի գիշեր էլ մտքում զնում է օրագիր պահել դրա մեջ գրանցելով իր կենցաղի մանրամասնությունները:

Հին երազանի խոնացած էջերի վրա Վասիլը գրի է առնում շաբաթվակարեւոր անցքերը, ինչպես, օրինակ, «Մայրս գնացել էր իր եղբոր որդու տոմք զոնաղ չորս օրով: Վարսենիկը (կինո) զբաղված էր տանը մանր գործերով: Կովը տվավ 12 գրվանքա կաթ, Սաղիկը՝ ոչ: Տիգրանուհին գնացել էր շաղաց՝ ալյուր աղալու, բայց նորաթ լինելու պատճառով եկավ տոռն: Զէր աշխատում գոմեշը: Բադալի տղան տվավ իր պարտքը՝ վեցը կոտ ցորեն: Առա մի բահի կոթ: Եվս մի շաբաթում հավերը 12 ձու ածեցին, որից 5-ը ծախեցինք, ընդամենը 10 կոտեկեկ...»:

Հին երազանը լցվում է թվերով, տոկոսներով, տվյալներով, —պակասում են դատողությունն ու զգացնունքի զեղումները: Գյուղացին այնքան է կրանված իր առօրեական ողբերգության մանրամասնություններով, որ անդամ ժամանակ չունի վերապրելու այդ ողբերգությունը:

Դառնալով սոցիալական թշվառության հիշատակագիրը, գյուղացի Վասիլը հատկապես արծանագրում է իր քրոջ՝ Տիգրանուհու հետ կապված անցքերը, որոնք միշտ դրվում են «պարտքի դիմաց» կամ «պարտքի կողմանից» շարակարգության մեջ:

Հարազատ քրոջ մահն անգամ ոչ մի ցնցում չի առաջացնում Վասիլի մեջ և նա «հանգիստ սրտով» օրագրում գրանցում է. «Տիգրանուհին մահացավ առանց կարծիքի, տեղոց-տեղ, լավ թաղեցինք, եղավ ծախսը ութ մանեթ փողով, ևս մի փութ գարի տերտերին, գումարով 9 մանեթ 80 կոպեկ: Նաև առի երկու մոմաւ:

Եթե «Տիգրանուհին» պատմվածքում Բակունցն արծարծում է հայ գյուղացուն ծննդից մինչև մահվան օրը ուղեկցող «պարտի», «տոկոսի», «վաշխի», ավանդական թեման, ևթե «Խաղլացավում» նա արծարծում է գյուղացու կյանքից անբաժան սնութի նախապաշարմունքների ճնշման նույնքան ավանդական խնդիրը, ապա մի շաբաթ պատմվածքներում Բակունցը ներկայացնում է ողբերգության այն տարատեսակը, որի հարուցողը ոչ թե «թշնամանքն է» բնության հանդեպ, այլ բնության անմեացորդ, բուռն սերը:

Այդպիսի բովանդակությամբ է ներկայացված ողբերգությունն, օրինակ, սԹրանզիա պատմվածքում։ Սա այն ձորակի անունն է, ուր գյուղացի Մանասը սրոշում է կառուցել իր տունը։ Դյուղի բնանկարի երևի թե ամենագեղեցիկ հատվածն է («Ամեն գարնան մասրենիներն են ծաղկում, բացվում են վայրի վարդերը՝ դեղին, սպիտակ»), ուստի և Մանասի դեմ է հանում տանուտեր Դավոյենց Առաքելին։

Մինչ Մանասն ապրում է իր բանաստեղծական անուրջների հետ, Առաքելը հրդեհում է Մանասի տունը և նրան վերագրելով կազակ գինվորի սպանությունը, աքսորի տալիս «Հեռավոր տունդրաները»։

Ինչպես պատմվածքի սկզբնամասում, վերջնամասում ևս հանդես են գալիս ծաղկած մասրենիները։ Այս «հղման» ներքին իմաստն այն է, որ բնությունն իր գեղեցկությամբ կործանում է նրանով հմայված ազնիվ հոգիներին։ Բանն այն է, որ գեղեցիկ բնությունը՝ կանաչով՝ պատած ձորակը, ձորակում ծաղկած մասրենիները, պարզ երկինքը, գյուղական մթնշաղը, մի բան են խոստանում, իրական կյանքը՝ մի ուրիշ բան։

Հին և նոր հոգեբանությունների լուր մենամարտի ցայտուն վավերագիր է «Մթնաձորի «շարքը» վերին աստիճանի խորունկ պատումը։ Ժայռի պնդին նստած մի ալեոր ծերունի իրենց գոյության հավիտենական անշարժությանը վարժված շինականներին պատմում է ձորերի տեսիլքների և նրանց մշտապես համակած տագնապների մասին։ «Հա, էղ ժամանակ էլ, —շարունակեց ծերունին իր պատմությունը, —ձորում շատ վախ կար! Այ տղա, զուրս եկա Մթնաձորիս դլուխը, աշքիս մեջ շող երևաց։ Լուսնյակ էլ գիշեր էր։ Հըմի ու շողքն ա հեռանում, ոչ էլ ես եմ կարում ետ դառնալի Ասում եմ արջ ա, ինձ հյա շի տեսել։ Մին էլ...»։

Ծերունու ցաբուցրիվ մտապատկերների մեջ իրար են խառնվում բնությունը, լուսնյակ գիշերը, ձորերի արջը և «բազում շարքերը»։ Ալեոր ծերունու բորբոքված երեակայությունը նորանոր տեսիլներ է բարդում ասածի վրա, երբ հանկարծ հնուվից լսվում է ձիու ոտնածայն։ «Փողոցում կանգնել էր մի կին, տղամարդու գլխարկով։ Կինը պինդ բռնել էր ձիու սանձը...»։

Նոր «տեսիլքի» հայտնությունից տագնապած ծերունին թեև շարունակում է Մթնաձորի լուսնյակի ու արջի պատմությունը, սակայն իր իսկ պատումի ընթացքի մեջ երեսում է նրա շփոթմունքը նորի մուտքի հանդեպ, որը մարմնանում է քաղաքից հկած ձիավոր հրահանգչունու կերպարանքում։

Քաղաքի կինը իր հետ բերում է «քաղաքակրթության շունչը» և բնության տեսիլքները մղվում են ետին պլան։ Պատմվածքի այս հանգույցում ալնոր ծերունուն, իբրև Մթնաձորի էության մարմնացում, փախարինում է նոր «տեսիլքի» առաջ արբեցած գյուղացի Սաքանը։

Քաղաքակրթության լրաբերը՝ հրահանգչունին, տակն ու վրա է անում նրա հոգեաշխարհը, ցրում Մթնաձորի միֆական պատկերացումը և Սաքանին կանգնեցնում Մթնաձորի նորացման առեղծվածի առաջ։ «Երազում Սաքանի աշբում երեաց Մթնաձորը։ Սպիտակ շոր հագած մի կին վազում էր իր ետևից, մոտենում էր, որ բռնի, կանգնում էր կինը, ծիծաղելով հետո փախչում ձորն ի վեր»։

Բակունցը ներկայացնում է այն գյուղացու հոգեբանական շրջադարձը, որը թեև զգացմունքներով կապված է մթնաձորյան եղերքին, սակայն ընդառաջ է գնում քաղաքակրթությանը՝ իր եզերքի նորացման գաղափարին։

Բակունցը ներկայացնում է նաև նոր հարաբերությունների ծնունդը հին գյուղի կողքին։ Մրցոց գյուղի բնակիչներն օրինակ («Մրցոց»), թեև արդեն գյուղը

Խորհուրդ և խրճիթ-ընթերցաբան ունեն, բայց դեռ ապրում են Հեթանոսական բարքերով. «Մրցում շատ տներ մինչև այժմ տոնում են մի ուրիշ նոր տարի, որին նավասարդ են ասում: Ինչպես Հեթանոս նավասարդի գիշերը զարթնում են, ճրագները վառում և լուսաղեմին ճաշ անում»:

Դյուլացիներին «Հրաշք» է թվում քաղաքից եկած թղթի այն կտորը, որով վերջ էր տրվում երկու հարկան գյուղերի հողային հին վեճերին («Միրանի տափք»): «Թեհեռուղ թուղթը շատ փոքր էր և հասարակ, բայց ամենամեծ ոռումը էլ այդպիսի աղմուկ չէր հանի Մրցում, ինչ հանեց թուղթը, — արձանագրում է գյուղի տարհգիրը:

Նոր կյանքի անսովոր, «Հեթիաթ-Հրաշքային» ըմբռնաւմն է Բակոնցի գյուղական տարեգրության առանցքը: Բակոնցը ոչ առաջ է ընկնում իրադարձություններից, ոչ էլ իրականությունը մեկնարանում է միակողմանի գծերով, իրեւ «Երկաթյա աղմուկների» կամ «օրերի շոինդի» արտահայտություն:

Իհարկե, Բակոնցը չոնի հարցականներ, ինչպես Սերգեյ Եսենինը, որը տագնապով էր հետևում դարի տեխնիկական հրաշքի՝ գնացքի ետևից անհույս վազող կարմրաբաշ մտրուկին.

Իմ ծիծաղելի, իմ անգին հիմար,  
Ո՞ւր ես սլանում, շդիտե՞ս միթե,  
Որ քո տոհմակից ձիերին հիմա  
Հեծելազորն է հաղթել պողպատե:  
(Թարգմ. Հ. Սահյանի):

Բակոնցը, ոչ միայն չի հաշտվում հին իրականության հետ, ոչ միայն չի իդեալագործում իր եղերքը, այլև ողջունում է նորի արտահայտությունները Մթնաձորում: Ճիշտ է նկատել ժամանակի գրականության հետազոտողը, թե «Ակսելը նկարչի վրձնին միացրել է տրուբադուրի քնարը»<sup>8</sup>:

Բակոնցն, արդարեն, ժողովրդական կյանքի իսկական տրուբադուր էր: Գեղագիտական այդ կեցվածքը խթանեց Բակոնցի ստեղծագործության այն գիծը, որի մասին ոռու քննադատը զրել է. «Նրա ներքնաշխարհի խորքերում, ինչոր տեղ ծվարել, թաք է կացել Զանգեզորի հասարակ, անգրագետ գյուղացիների վերին աստիճանի սիրելի, մայրական տափ կաթով ցողված զեղչկական կեցությունը: Թող որպես նախատիպ դրա համար լիներ կորը կամ մի ուրիշ աղքատիկ հայկական գյուղը: Սակայն այդ խոտի, այդ սնահավատությունների ու ասացվածքների բույրը, այդ համարյա թե նախնադարյան կյանքի բույրը, որտեղ բնակիչների օջախը ծովին է արձակում կտուրների երդիկով և որտեղ մարդիկ ապրում են ձիերի, ոչխարների ու կովերի կողքին, ահա այս ամենը լցվում է Բակոնցի ստեղծագործությունը, ուղեկցում նրան որպես շվիի անպաճույն նվազք<sup>9</sup>:

Գյուղաշխարհի բանաստեղծական էությունը մարմնացնող կերպարներից մեկը Խոնարհ աղջիկն է համանուն պատմվածքից, այն աղջիկը, որի միայն արտաքինի նկարագրությունը բավական է պատկերացում տալու նրա հոգեկան անսահման քնքշություն, սարերի սովոր գեղջկուու մասին: Ահա բակոնցյան տպավորություններից մի քանիսը. «Մոխրագույն շորեր ուներ, զլիխն՝ տանը գործած բրդի շալ», «նրա հագին երկար զոլերով կարմիր շիթ էր: Զեռքերը պահել էր գոգնոցի տակ, կանգնել կտուրի ծայրին: Կանգնել էր եռնարը և մատներվ խաղում էր գոգնոցի եզրի հետ: Մի անգամ միայն ցանկապատի ետևից

նայեց ինձ և ժպտաց», «սպիտակ քարի մոտ, գողածե ընկած երկարադարձ արտերում քաղհան անող կանանց մեջ տեսա Խոնարհին»:

Թակունցի մեկնաբանությամբ Խոնարհը ժողովրդական հեքիաթի ոգիացած Հերոսուհին է, ինչպես և ժողովրդական ասքի հերոսն է «Միրհավը» պատումի Դիլան դային:

Սա ապրում է կյանքի մայրամուտը և իր այգու առաջ նստած՝ վերհիշում ամբողջ կյանքը, որի բարձրակետը եղել է Սոնայի հայտնությունն իր այգում. «Կարծես հավք էր թաքնվել անտառի մթին խորշում: Ապա վիզը երկարեց, ինչպես կաքավը դեղնած արտերում խշշյոն լսելուց, և մի ջահել կին զուրս եկավ սիմինդրի խիտ արտից: Դուրս եկավ, ճոճեց բարակ մարմինը, որպես եղեգ և կաքավի մանր քայլերով սուրաց դեպի հնձանը»:

Կյանքի մայրամուտին Դիլանը նորից վերապրում է սիրո բռնկման պահը և ձեռքն առնում հրացանը՝ արնակուղլ միրհավի հետքերով որոնելու իր կործանված սերը: Դիլան դային թեև շատ գարուններ և աշուններ է անց կացրել, սակայն դեռ հին երազների հետ է. «Լիներ այնպես, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արար հնձեր, Սոնան հաց բերեր իրեն, շապիկը քրաներ և քրտնած նստեր կողքին»:

Դիլան դային սիրո հպատակն է, այն սիրո, որը նրան բարձրացնում է երանության գագաթը և ձուլում հայրենի ուշ աշնան, հնձանի, անտառի, ծաղիկների, միրհավի, ոսկեղեղան հյուսերով աղջկա զույներով՝ ողողված աշխարհի անսահմանությանը:

Թակունցյան աշխարհզգացողության պայմանականորեն ասած «բանատեղծական երակի» բարձրակետը «Ալպիական մանուշակը» պատմվածքն է, վերին աստիճանի խորունկ և գրավիչ մի պատում, ուր լեռնային Հայաստանի ավերակ բերդերի, ալպիական գլխահակ ծաղիկների, քարե արծիվների, բրոնզափայլ լեռների, սպիտակ ամպերի «շքեղ ֆոնի» վրա ներկայացված են բարդ ու հակասական կյանքի դրամաները՝ օցախի առաջ քրմուհու պես շոքած գեղջկունու և կորեկի արտում մանգաղը հուսահատ շարժող հնձվորի դրամաները:

Պատմվածքում երկու տեղ՝ մեկ սկզբում, մեկ վերջում, թակունցը դիմում է հետևյալ մետափորին. «Մաղկեփոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

Չուգահեռ անցկացնելով բնության և մարդկային կյանքի միջև, այդ հազվագյուտ իմաստալից պատկերով Բակունցը հերքում է նման մակերեսային պատկերացումները կյանքի մասին, կյանքի հիմքը համարելով բարդությունն ու անվերջ կրկնվող հակասությունները: Իր իսկ փիլիսոփայական պասկերի արտահայտությունն է նկարագրած գյուղաշխարհը, որի հոգսերի ու ցավերի հանդեպ անտարբեր մնացին և հնություններով հափշտակված հնագետը, և բնությամբ զմայլված նկարիչը:

Միհղեռ արվեստի ինդիրն է, թակունցի հայեցվածքով, հովվերգական արտաքին փայլի տակ տեսնել նրա խոր ողբերգական բովանդակությունը, գյուղական աղքատ կենցաղի մեջ նշմարել իսկական մարդկային արժույթները: Հայացքի այս ուղղությամբ Բակունցի էթիկան դառնում է նրա գեղագիտության խարիսխը:

Դեռ արտասահմանյան թափառումների օրերին Ավ. Խսահակյանն ուշիուշով հետևում էր Խորհրդային Հայաստանի գեղարվեստական կյանքին և իր տպավորություններն ամենամյա գրական տեսությունների ժանրով՝ հրապարակում Փարիզի հայկական պարբերականներւմ:

Ավ. Խսահակյանի քննադատական նոթերի շարքում առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 1934 թվականի տիսությունը («ՀՕԿ», Փարիզ), ուր նա ոչ միայն գնահատում է «Սև ցելերի սերմեացանը» հոչակավոր ժողովածուն (հրապարակված 1933-ին, Հակոբ Կոշոյանի նկարչական ձեավորումով՝ դրավյուրաներով), այլև հակիրճ խոսքով բնորոշում է առհասարակ Ակսել Բակունցի ստեղծագործության ներքին, «միջանցիկ» բովանդակությունը:

Ավ. Խսահակյանը գրում է. «Նրա ստեղծագործությունների վրա,—թեև որոշ շափով ազգված կնուու Համսունից,—անհատական կնիքն է դրված, այնքան թարմ են և ինքնուրույն, և զգացված ամեն մի պատկերն ու արտահայտությունը Զեղուն, խորոնկ լիրիզմով տոգորված են նրա պատմվածքները, առանց ուսիք տակից կորցնելու իրականության հողը, և նրանց վրա ծփում է բնության մեծ Պանի հոգոր շունչը»:

Զարմանալի գեղարվեստական-օրգանական կերպով կատարված է նրա ստեղծագործության մեջ ենթակայականի և առարկայականի ներդաշնակ ձուլմը:

Հզոր է Ակսելի մեջ բնապաշտական (պանթեիստական) զգացողությունը նա ապրում է, զգում է հողը, աւարերքը, եղբայրական մի բարությամբ համակած է դեպի բույսերը, թոշունները, կենդանիները...»:

Հայոց մեծ բնապաշտը՝ Ավ. Խսահակյանը, իրեն հատուկ նրբատեսությամբ կրտսեր գրչակցի ստեղծագործության ներքին ծալքերում նշմարել է գեղարվեստական այն որակը, որը ոչ թե սովորական գիծը կամ նրբագիծն է Բակունցի դիմանկորի, այլ, կարելի է ասել, նրա անհատականության բուն առանցքը:

Թափ առնելով ազգային բնապաշտության մեծահարուստ ավանդներից, որի սկիզբը հասնում է մինչև Խաչատուր Աբովյան (իսկ եթե վեր առնենք դարերի ծածկոցները՝ մինչև Գր. Նարեկացի և Կոստանդին Երզնկացի) և այդ ավանդները համադրելով իր իսկ ներաշխարհում խոր նստվածքներ տված բնության անմիջական, «փորձային» տպավորություններին, Ակսել Բակունցը, արդարեն, վերստեղծեց բնության իր արվեստանոցը, դրա մեջ տեղադրելով աշխարհի և մարդու կապերի իր յուրօրինակ պատկերացումները: Կարելի է ասել, որ նա բնության մեջ մողելավորեց իր կյանքային կոռորդինատները, բնության մեջ՝ «քրագրեց» աշխարհի իր փիլիսոփայական կառուցվածքը, իր, այսպես ասած, «հոգեկան տիեզերքը»:

Թակունցի ստեղծագործության մեջ բնությունը թեև հանդես է գալիս ոչ թե միանշանակ դերով, այլ պես-պես կերպերով,—այսուամենայնիվ, նրա բնապաշտական սուզումների կենտրոնը, եթե երկութիւն նայենք լայն շափագերով, Բնության այն ըմբռնումն է, որի բովանդակությունը հիանալի է մեկնարանել Մաքսիմ Գորկին ուսւ մեծ բնախույզ-գրող Մ. Պրիշվինին գրած նամակներին:

Մի նամակում Գորկին ասում է. «Երբեք մի փիլիսոփայող բննապատ կգրի Զեր «բնութապաշտության» կամ «հողապաշտության», կամ «Լրկրապաշտության» մասին, և Զեր մարդկային դեմքը կծածկի բովեստների մութով կամ

իսրատների մանանեխով։ Իսկ ահա, ինձ համար Դուք այժմ, հենց այսօր, հաստատում եք միանգամայն արդարացի, Զեր կողմից ամուր հիմնավորված գեռօպտիմիզմ, որը վաղ թե ուշ մարդկությունը կընդունի իբրև իր կրոնը։ Թեև մարդկանց վիճակված է ապրելու փոխադարձ սիրո և բարեկամության մեջ՝ իր բնության հետ, եթե մարդը կոչված է լինելու իր բոլոր տեսածների տիրակալն ու տերը և ոչ թե ստրուկը, ինչպիսին նա այժմ է, — ապա այդ երջանկությանը նա կարող է հասնել միայն Զեր արահետով։

Բակունցի «բնապաշտությունը» համադրելով պրիշվինյան «հողափիլիսոփայության» հետ, կարող ենք դիտել շատ ընդհանրություններ, ինչպես «մեծ Մոր» Բնության սրբագործումը, հողի, իրու կեցության վճռական հենարանի, մողելավորումը, հողի և մարդու բարեկամության գուգորդական ըմբռնումը, էլի ուրիշ ընդհանուր գծեր, որի շարժառիթներով Բակունցն անձնական բարեկամաթյուն էր հաստատել բնության փիլիսոփայի և բարոյախոսի հետ<sup>10</sup>։

Մ. Պրիշվինից բացի, ինչպես երևաց Ավ. Խաչակյանի փարիզյան նոթերից, ինչպես վկայում են մամուլի արձագանքները, Բակունցի ստեղծագործությունը զուգահեռ է նորվեգական մեծ գրողի՝ Կնուտ Համսունի ստեղծագործության հետ։

Իրապես, Բակունցը հափշտակված է եղել Կնուտ Համսունի երկերով, հատկապես «Պանը» պոեմ-վիպակի խաչակյանական թարգմանությամբ, որոշակիորեն կրել է նրա նրբահյուս, թավշային, հեքիաթային ոճաձերի ազդեցությունը, բայց ինչպես պարզում է Բակունցի երկերի գաղափարախոսական «կտրվածքը», նրա աշխարհայացքը ավելի ազգային-հողային ներշնչանքների ժնունդ է, քան օտար գրականության պատվաստ։

Կնուտ Համսունը, ինչպես նրա վաղ շրջանի ստեղծագործությունը, մեկնաբանում են արևմտաեվրոպական գրականության պատմաբանները, սարսափով և հարցականներով էր նայում «Նոր Դարին» և բնությունը հակադրելով կապիտալիստական արշավանքին, «բնական կյանքի» ազատությունը՝ «քաղաքակրթության» ավերածություններին, հանդես էր գալիս «Նոր ոռւսոսյականության» պատգամներով։

Դիմելով ֆրանսիական մեծ փիլիսոփայի գաղափարական զինարանին, Համսունը ևս այն մտքին էր, որ արարիչը (բնությունը) ամեն ինչ ստեղծում է կատարյալ տեսքով, իսկ նոր Դարի քաղաքակրթությունը աղավաղում է գոյության կատարյալ ձևերը, մարդուն դարձնում է դիմազրկված ուրվական։

Դարի այս էական հակասության լուծման բանալին Համսունը համարում էր վերադարձ դեպի բնության պարզությունը, դեպի «գիցարանական սագաների» շրջանին բնորոշ անտառային հովվերգությունը։

Ռուսոյականության համսունյան տարրերակի կրողն է «Պանը» վիպակի լեյտենանտ Գլանը՝ նորվեգական ծովաժայռերի, անտառների, մարգագետինների մեջ ապաստանած միայնակ ու թափառաշրջիկ հերոսը, որը հեռացել է դեպի «կանաչ աշխարհը»՝ այնտեղ մարմնավորելու իդեալական կյանքի իր անուրջները։ Բնության անդորրը, խաղաղ անկյունների հետ լեյտենանտ Գլանի առնչությունները երերուն, փիրուն առնչություններ են՝ ավելի զգացմունքային, քան բնական։ Դրանք նաև կյանքից հեռացած փախստական անհատապաշտի առնչություններ են։

Բակունցի աշխարհազգացությանը միանգամայն խորթ է մարդու կրավորական կեցվածքը բնության առաջ։ Նրա պատմվածքների հերոսները ծնրադրում են բնության առաջ, իրենց էռությամբ ձուլվում բնության ձևերի մեջ, բնությունը

Նից քաղում իրենց բնավորության ամբողջականության տարրերը՝ կարոտ, երազանք, բարություն, մարդասիրություն: Իր դավանանքով Բակունցը բնուրյան և մարդու միասնության փիլիսոփիան ու բարոյախոսն է, ասել է թե՝ նա մարդուն գիտում է ոչ թե իբրև բնությունից անշատ կենսաբանական արարածի, այլ բնությանը ձուլված, բնության հավերժության շոմազ իր մեջ կրող անհատականության:

Սա, իհարկե, ոչ միայն նոր հայացք չէր «մարդ-բնություն» իրադրության մեջ, այլև շատ հին, մինչև մարդկության անտիկյան հասակը խորացող դավանանք էր՝ բնափիլիսոփիայություն, որը XIX դարավերջին և XX դարում բորբոքվեց նոր թափով՝ իբրև հասարակական որոշակի հոգերանության, ավելի ստույգ՝ ընդվզող հոգերանության արտահայտման ձև:

Ակուել Բակունցն իր ամբողջ ներքին էությամբ դիմադարձ լինելով՝ բնությանը, նրա մեջ տեսավ, առաջին հերթին, մարդու դաշնակցին, մարդու ուսուցչին, բարոյական դասերի խորհրդատուին, մարդու ամենահարազատ, արյան պես հարազատ տարերբերը: Աշխարհազգացական նման շաղախով ողողված պատմվածք է, օրինակ, «Այու սարի լանջին» մանրապատումը, ուր Բակունցը ներկայացնում է բնության արդար զավակի՝ գյուղի «հանրային հոտի» նախրապան Պետու կենսագրությունը:

Թեև ծայրաստիճան աղքատ մի գեղջուկ է Պետին, սակայն բնավ չի զգում իր վիճակի ծանրությունը, որովհետև ամբողջովին հափշտակված է Մայր-Բնության հրաշքներով. «Երբեմն նրա ալքին էր ընկնում մի շքեղ բգեղ, կամ մի թիթեռ-գունավոր թևերով, կամ դիտում էր, թե ինչպես են մրցյուներն աշխատում հերվա բույնը սարքելու,—Պետին գլուխը օրորում էր և ինքն իրեն խոսում.

— Փա՛ռք շատ, այ աստված, որ էսպես հրաշք բաներ ես ստեղծել:

Ուշագրավ է Պետուն տված Հեղինակային բնութագրությունը. «Ինչ-որ վեհություն կար Պետու շաբաշ, պղնձագույն դեմքին, փոս ընկած աշբերում անհուն բարություն կար և միամիտ սեր դեպի խոտը, կովը, ծաղիկները...»:

Ինչպես Պետին, իրենց բնության անտրոհելի մի մասն են զգում նաև բակունցյան շատ հերոսներ:

Օրինակ՝ Դիլան դային, «Միրհավը» պատմվածքի այն լուսերես ծերունին, որը կյանքի մայրամուտին վերհշելով իր սիրո հեթանոսական բռնկման հեթիաթը՝ իր այգու հնձանը հկած Սոնային, այդ հուշը վերապրում է բնության շքեղ արդուզարդի մեջ, անտառային մթին խորշերի, գեղնած արտերի, կաքավների, տաք հնձանների, արնափետուր միրհավի հարազատ միջալայրում:

Կամ հիշենք «Աև ցելերի սերմացանը» ավանդապատումի հերոսին՝ հաղթահասակ սերմացան Սեթին, որն իր հոգեկան ուժերը քաղում է հայրենի բնության «հողային» շնչից և իբրև իր հերոսական կենսագրության արդար հատուցում իր մաքուր արյամբ ողողում է հայրենի հողի ցելերը. «Թաղվել էր սառը հողում՝ որպես ոսկեհատ սերմ»:

Ակուել Բակունցի ստեղծադրժորժության գրնության կողմնորոշումները» մոտավորապես նույն բովանդակությունն ունեն, ինչ ֆրանսիացիները դնում են «պեյզաժ» բառի մեջ, որը ստուգաբանվում է իբրև երկերի և ապրելակերպի սինթեզ:

Այս առումով թերես ամենացայտուն օրինակը «Ալպիական մանուշակը» պատմվածքն է, ուր լիոնային Հայաստանի դեղանկարչական միանգամայն

ինքնատիպ պատկերի կողքին ընդգծվում են նաև «մարդու և բնության» հարաբերության բակունցյան փիլիսոփայական մտորումները:

Մի որոշակի աշխարհազգացական բովանդակություն է արտահայտում ալպիական մանուշակը, որը պատմվածքում երևում է նախ և առաջ իր «անվթար», բնական տեսքով. «Կաքավարերդի բարձունքի միակ ծաղկելը ալպիական մանուշակն է, ցողոնը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղկել՝ ծիրանի գույն»:

Այս բնութագրությամբ ալպիական մանուշակը հանդես է գալիս լոկ գեղանկարչական դերով, իբրև լեռնային Հայաստանի հեքիաթային գեղեցկության խորհրդանշան, կարելի է ասել՝ իբրև Հայաստանի էմրևմատիկ պատկեր:

Գեղանկարչական դերից բացի նշանակալից են ալպիական մանուշակի «սոցիալական», «ենոքերանական», «փիլիսոփայական» խնդրառությունները:

Չնայած երկիրն ունի վերին աստիճանի գեղեցիկ բնություն, — ասում է Բակունցը, — սակայն նրա բնակիչներն այնքան խորն են թաղված իրենց առօրյա հոգսերի մեջ, որ ժամանակ անգամ չունեն վերապրելու բնության գեղեցիկ պարգևները: Այս մտքի պատկերազարդումն է Բակունցի հետևյալ պարբերությունը. «Ամեն գարնան, երբ Կաքավարերդի լանջին բացվել է ալպիական մանուշակը, այժ ու ոչխար քշել են բերդի լանջերը, պարկը պանրով լցրել ու ձմեռը կրծել կորեկ հաց և այժի պանիր»:

Ալպիական ծաղկի «Հոգեբանական» խնդրառության արձագանքն է բակունցյան հետևյալ նուրբ պատկերը. «Ճող կաթեց ալպիական մանուշակի ծաղկաթերթերի վրա»:

Ալպիական մանուշակի այսպիսի դրամատիկ կառուցվածքը հետևում է այն դեպքին, երբ հնձից վերստանում է հոգնած հնձվորը և իմանալով, որ Կաքավարերդ եկած նկարից ալպիական ծաղկի կողքին նկարել է իր կնոշը, մահակով հարվածում է նրա թիկոնքին:

Եթե վերոհիշյալ պատկերը («Ճող կաթեց...») ցրում է գեղեցկական կենցաղի հովվերգսկան պատկերացումները և առաջին պահին բերում նույն կենցաղի դրամատիկական էությունը, ապա ավելի մեծ գեղարքվեստական-փիլիսոփայական ընդհանրացում է պարունակում բանաստեղծական այն մետաֆորը, որը երևում է երկու անգամ՝ մեկ պատմվածքի սկզբում, մեկ՝ վերջում. «Մաղկափոշու մեջ թաթախված գունավոր բզեզին մանուշակը ճոճք էր թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան»:

Փոխարերական այս պատկերը՝ բնության երկութիւ զուգահեռական համեմատությունը մարդկային կյանքի հետ, ոչ միայն սովորական, «անխորհուրդ» պատկեր չէ՝ կառուցված բնության նյութից, այլև վերին աստիճանի իմաստալից ընդհանրացում է:

Պետք է նշել, որ Բնության բակունցյան աշխարհայացքն ունի մի քանի առանցքներ, այսպես ասած՝ էպիկենտրոններ: Դրանցից մեկը հայացքների կոսմոգոնիական-պանթեստական ուղղությունն է, որով Բակունցը ընդհանրության եղբեր է հայտարերում Մարտիրոս Սարյանի գեղանկարչության հետ, ուր վաղ շրջանի «Հեքիաթներից» սկսած մինչև ամենավերջին շրջանի «Նատյուրմորտային» վրձնահարվածները, աշխարհը ներկայացվում է իբրև ֆանտաստիկական, զարմանահրաշ տեսիլքների մի անսահման շղթա, իբրև կերպարանափոխությունների պիս-պիսություն և տարասեռ մասերի ներքին կարգ ու համաձայնություն: Այդպիսին էր նաև Բակունցի ընկալումը՝ մարդուն իբրև տիեզերքի մաս և շարունակություն դիտելու նրա հայացքը, որով էլ թերես բացատըր-

վում է երկու մեծ արվեստագիտների խոր, ներքին համակրանքը միմյանց հանդեպս (դրա արտահայտությունն էր Ա. Բակունցի և Մ. Սարյանի համատեղ այցելությունը Գորիս՝ գրողի ծննդավայրը (1934-ին), այն այցելությունը, որը պսակվեց մի շաբաթ զանգեղուրյան բնապատկերներով և Բակունցի մոր՝ Թոխչագյուղի (նշանակում է վարդերի փունչ) դիմանկարով):

Տիեզերական, համամարդկային շնչառության տակ են պատկերացվում նաև բուսական և կենդանական աշխարհները, իբրև մարդուն հեռավոր դարերից հարադարձ այնպիսի «համակարգեր», որոնք հենարան են հանդիսանում մարդու և բնության «հավասարակշռությանը»:

«Համասարակշռության» դավանանքը Բակունցի ստեղծագործության մյուս առանցքի՝ աշխարհի էպիկական պատկերացման հիմքն է:

Մթնաձորյան եզերքի էպիկական կառուցվածքի փլուզումը ներկայացնելով, Բակունցը այդ փլուզման նախադրյալները համարում է XIX դարավերջի և XX դարասկզբի հասարակական կյանքի մեջ եղած այն ջղաձգումները, որոնք մարդուն անշատում են իր էպիկական կեցությունից՝ բնության հովանավորությունից և նրան զնում ներքին դիմադրության հարաբերությունների մեջ նույն բնության հանդեպ:

Հասարակական կյանքի և բնության մեջ տարված ուղիղ, բայց ոչ միակերպ գծերը Բակունցի աշխարհայացքի մեջ մուծեցին նաև բնության դրամաների, նրա կոնֆլիկտային բնույթի պատկերացումները, որով Մթնաձորը երևում է իբրև «քաղաքակրթության» դիմանկարի հակառակ երեսը:

Այսուամենայնիվ, բնության և մարդու հարաբերությունների մեջ տեղ գտած բախումների պայմաններում իսկ Բակունցը ամբողջ ուժով վերապրում է ընության և մարդու բարեկամությունը՝ իբրև կեցության կատարյալ ձևերից մեկը:

Այս սլաքով էլ նրա ստեղծագործության մեջ հանդես է գալիս մյուս «առանցքը»՝ Հոռի կերպար-խորհրդանշանը, որը աշխարհագրական տարածք նշանակելուց առաջ, Բակունցի կեղծուկ հերոսների համար նշանակում է և՛ կեցության անփոխարինելի աղբյուր, և՛ զգացմունքների բյուրեղացման ճանապարհ, և՛ բարոյական արժեքների զարգացման հենարան:

Բնությունը գաղափարական այս կապակցության մեջ իրապես երևում է իբրև «հզոր արվեստանոց», ինչպես բնության մասին գրել է ուստի բնափիլիսոփա-բանաստեղծ Ն. Զարուցկին:

Առանցքային մոմենտ է նաև Բակունցի ստեղծագործության մեջ պարբերաբար երեացող աներուպուրֆիզմի ժողովրդական տարրերակը՝ բնության երեսությների մեջ հոգեկան գծեր տեսնելու նրա առանձնակի վերաբերմունքը: Այդ հայացքի դասական ներշնչանքն է, օրինակ, «Միրհավը» պատմվածքը, ուր այնպես են նկարագրված այգին, հնաձանը, արնակոլոլ միրհավը՝ իր ոսկեփետուրներով, որ դրանք երեսում են մարդու կերպարանքով և ասես թե ամբողջացնում են Դիլան դայու հոգեկան աշխարհը: Առանց «մարդակերպ» բնության այդ աշխարհը կլիներ թերի:

Բնութապաշտության հարուստ կոորդինատները պայմանավորված են միշտ էական հանգամանքներով: Բակունցը բնության մեջ է ամբողջապես, թաթախված նրա գույներով, ձայներով, շնչով, մինոլորտով, «հոգով» ու կերպարափոխություններով: Նա ոչ թե ուսումնասիրում կամ նկարագրում է բնությունը, այլ զգում է նրա հավերժական շունչը ու կենդանի, հզոր տարերքը:

Դրա արտահայտովթյունն է, փիլիսոփայական թափանցումներից բացի, Հայաստանի բնության, մասնավորապես զանգեզուրյան պեյզաժի բականցյան գեղանկարչությունը, որը բնության ազգային ինքնատիպ գծերը վերարտագրելու առումով հայ արձակի բարձրակետն է:

Իզուր չէ, որ Ակսել Բակոնցի անոնք տալիս առաջին հերթին հիշվում են բնության նկարչական անթերի վերարտագրությունները:

Հայկական պեյզաժի դասական մարմնացումներ են հատկապես մթնածորյան դգացողությունները, ինչպես, օրինակ, Կաքավաբերդի հանդիսավոր կեցվածքի նկարչական վերակրկնությունը («Լոռություն կա ավերակներում, միայն ձորի մեջ աղմկում է Բասուտա գետը...»), ինչպես «Միրհավոր» քնարական և էպիկական գույնների խրախճանքը, ինչպես բնության գուլալ գույնների մեջ թաթախված Խոնարհ աղջկա վերածննդյան շնչի գիմանկարը: Դասական ուժ ունեն նաև «Սև ցելերի սերմնացանը» գրքի մի շարք բնապատճերներ, օրինակ, համառում պատմվածքի սև ցելերի գրաֆիկան, «Բրուտի տղամի» ժայռապատճերները («...մի ժայռ՝ կարծես արկի դեմ խոնարհվել է հեթանոս քրմուհին»), «Սպիտակ ձին» պատմվածքի անսահման տիրությամբ ողողված բնության գունակերպությունները, «Միրանի փողը» բանաստեղծական ասքի քարափների հերիաթաշունչ գունագծերը:

Բնապատճերային գեղանկարչության հազվագյուտ ձիրքի ուժով Ակսել Բակոնցը վերարծարծեց ազգային բնությունը՝ իր հողով, լեռներով, ծառ ու ծաղկունքով, երկնքով ու ամպերով, անձրևներով ու ամպրոպներով, անտառներով ու մարգագետիններով, թոշուններով ու կենդանիներով, բնության մյուս տարրերով: Եվ այդ ամենը նա մատուցեց ոչ թե իբրև սոսկական վերատպություններ, այլ անհատական և «փիլիսոփայական» վերաբերմունքով, ժանրային տարրեր ձևերի ու ոճերի մեջ: «Սաբոն», օրինակ, հիշեցնում է միջնադարյան մանրանկարչության գույնների վառվոռնությունը, «Ալպիական մանուշակը» «նկարված է» էպիկական շնչով, «Թրանցիան» իմպրեսիոնիստական դյուրաֆեկ, ջրաներկային գույններով, «Մթնածորը»՝ «ժանրային» գծանկարով:

Բնությունը, այսպիսով, Բակոնցի ստեղծագործության մեջ կյանքի «փիլիսոփայական ներսուզման» աղբյուր լինելուց բացի կատարում է նաև ոճակառուցման դեր:

Մրանք են «Բնությունը և Ակսել Բակոնցը» հարուատ նյութի ուրվագծերը:

## 5

30-ական թվականներին Ակսել Բակոնցի գրական նկատողությունների մեջ հայտնվում է այսպիսի մի «անակնկալ» եղրակացություն՝ ժամանակակից գրականության զարգացման ուղիների ու հեռանկարի մասին. «Որտե՞ղ է ծշմարիտ ճանապարհը. վերագրած դեպի սկզբնաղբյուրները, դեպի ժողովրդական ստեղծագործությունը: Ես նկատի ունեմ ոչ թե վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության աղբյուրները, դեպի ֆոլկլորը, այլ վերադարձը դեպի ժողովրդական ստեղծագործության իսկական և նոր ակունքները»<sup>11</sup>:

Ի՞նչ «սկզբնաղբյուրի» ու «ակունքի» մասին է խոսքը: Բակոնցը արդյո՞ք կոչ էր անում դեպի բանահյուսություն, դեպի ֆոլկլորային կերպարնե՞ր և ձեվե՞ր, այսուժենե՞ր ու ոճե՞ր, նմանակներ ու եղանակնե՞ր: Ոչ ամենեին: Բակոնցն ինքը ընդգծում է, որ խոսքը չի վերաբերում ֆոլկլորին: Ընդգծում է՝ տարրերակելու համար ժողովրդական ստեղծագործության իսկական ակունք-

Ների» իր ըմբռնումը, որը միանգամայն այլ բովանդակություն ունի, քան «ֆոլկլորին վերադառնալու» եզրակացությունը:

Ուրեմն, ո՞րն է նրա հայտարարության իմաստը:

«Ժողովրդական ստեղծագործության ակունք» ասելով, Բակոնցը նկատի ուներ ժողովրդական վերաբերմունքը աշխարհի ու պատմության հանդեպ, նկատի ուներ ժողովրդական աշխարհօգացումը և ժողովրդական կյանքի այն բազմազան ու մարդկային հարստությունը, որը պետք է դառնար ժամանակակից արվեստի զարգացման բնահողը:

Այս հայացքը Բակոնցին տանում է դեպի ժողովրդի մարդու պատկերման էպիկական, դիրքորոշումը:

Էպիկական սկզբունքը, բնականաբար, նոր որակ է հաղորդում բակոնցյան ունալիզմին, դարձնելով այն սինթետիկ, բազմակողմանի, ոչ միայն իրականության արտաքին «ճշմարտությանն» ու լուսանկարչական «հավաստիւթյանը» հետամուտ, այլև երևույթների ներքին բովանդակությունը, մարդու և պատմության ներքին միասնությունը իմաստավորող:

Մարդու պատկերման ժողովրդական այս լայն մեկնակետը կար արդեն Բակոնցի մթնածորյան կենցաղանկարների շարքում, բայց կար առանձին տարրերի ձևով:

Բակոնցի գեղարվեստական մտածողության այս հատկանիշը առավել ցայտունությամբ արտահայտվեց ետմթնածորյան պատմվածքների շարքում, որոնց մեջ են հայ ժողովրդի աղքային բնավորության ու ժողովրդական աշխարհզգացման այնպիսի խոր ընդհանրացումներ, ինչպես «Նամակ ոռուսաց թագավորին», «Ծիրանի փողը», «Լառ-Մարգարը», «Սպիտակ ձին», «Եղբայրության ընկույնիները», «Բրուտի տղան», «Սև ցելերի սերմնացանը»:

Այդ պատմվածքներն իրար միացնող ընդհանուր, նշանակալից գաղափարը հայ ժողովրդի աղքային-դեմոկրատական խառնվածքի, նրա համար կենսատոկունության և ապագայի անխախտ հավատի, նրա պատմական մաքառման ու պատմական լավատենության փիլիսոփայությունն է:

Այս տեսակետից հայ գրականության մեջ իսկական գեղարվեստական հայտնությունն էր «Լառ-Մարգարը» պատմվածքը:

Մի կերպարի՝ գյուղական հասարակ ջրվորի կերպարի վրա է հենվում բակոնցյան այս գեղեցիկ էջը: Այս պատմվածքում, Բակոնցը ավելի խոր, սոցիալապես ավելի զգայուն մտածող արվեստագետ է, քան առաջին կենցաղանկարներում: Լառ-Մարգարը, որպես կյանքի երևույթ, որպես կենդանի իրականություն, հայտնի էր Բակոնցից դեռ շատ առաջ, սակայն, նախորդները չէին «տեսել» մարդկային այդ բաղադրությունը, և նա առաջինը հայտնագործեց այդ կերպարը գրականության մեջ: Բակոնցն իր այդ գյուտը նվաճեց գաղափարական նոր տեսանկյունի, հետեւապես նաև գեղարվեստական նոր ու բարձր վարպետության շնորհիվ<sup>12</sup>:

Ո՞վ է լառ-Մարգարը: Գյուղական սովորական մի ջրվոր, որը, սակայն, հարուստ կենսագրական անցյալ ունի: Լառ-Մարգարը կյանքի դժվարին, փշապատ ձանապարհներ է անցել՝ «ճամփի փոշին իր մազերի վրա», իր ժողովրդի տեղահան արված բեկորների հետ միասին վայրից վայր է թափառել, եղերքից եղերք, կորցնելով շատ բան իր ոնեցվածքից և ոչինչ չկորցնելով իր հոգուց: Կորուստների առաջ անհողող մարդը շփոթվել է երբեմն ու շվարել, բայց պահպանել է հոգեկան աշխարհի ամենակարեռը, թանկագին արժեքը՝ կենսասիրությունը, որի հրաշագործ ուժով նա նորից նոր վարել է հայրենի

անմոռնչ հերկը, նորից գութան է քշել, «ցելի ակոսներն է ծրել», — այս ամենը ոչ թե անձնապատճան սկզբունքի դրդումով, ոչ թե սեփական անձի պաշտպանության համար, այլ գիտակցական այն բարձր մղումով, թե ժողովրդի ապագան գտնվում է նրա որդիների ձեռքում:

Ծատ կորուստներ է ունեցել Լառ-Մարգարը անցած բոլոր ճանապարհներին, բայց անսասան է պահել աշխատանքի սերը: «Նրա համար, — սկսում է պատումը Բակունցը, — ամենից մեծ հաճույքը այգին ու արտերը շրեն էր երբ բորիկ, արևից խանձված ոտքերով քայլում էր առվի եզերքով, բահով ճումերը առվից դեն զցում, որ ջրի հոսանքը սահուն լինի, — Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե ջրի պապակ արտերն ու ծարավ այգիները տապ արած, իրեն են սպասում:

Առվով ջուրը կապելիս նա ջրի հետ էլ գնում էր, մինչև ջուրը այգուն հասներ: Արևից շորացած հողը, տեղ-տեղ ճաքճքած, ագահությամբ ծծում էր ջուրը, ճեղքերից օդի պղպջակներ էին դուրս գալիս, ձայն հանում, ասես հողը հազար պող ուներ և անհագ ծարավ»:

Աշխատանքի սիրով է ողողված Լառ-Մարգարի բանաստեղծական աշխարհը, աշխատանքն է զարդարում արտաքնապես ոշնչով աշքի շնկնող, «ոտքերը բարակ ու երկար», արագիլ հիշեցնող ջրվորին, — աշխատանք, որ նրա համար մեծագույն արժեքն է աշխարհում:

Հայրենի գյուղը նա թողեց աշխատանքի ամենաթեծ պահին. «...Կտավատը կապույտ ծաղկներն էր բացել, ծիրանն արդեն դեղնել էր: Վար էր անում, արորը փափուկ հողում ամուն ցելի ակոսներն էր ծրում: Երբ մի անգամ էլ դարձավ, աշքն ընկավ արահետին: Մասրենու մոտ պառավը կանգնել, ճեռքով էր անում:

— Գեղը խոռվտուք կա, մարդ, — կանչում էր պառավը:

Եզներն արձակեց, արօրը ենդի մեջ խրած քողեց»:

Հայրենի գյուղում կիսատ թողած վարը ավելի բազմապատկեց Լառ-Մարգարի սերը աշխատանքի հանդեպ. «Լուսնյակ գիշերներին, երբ գյուղը քնած էր բեզարած մրափով, հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին, լուսնյակ գիշերներին, երբ բարդու վրա իր բնի մեջ հանգստանում է արագիլը, որ լուսաբացին լառ-լառ թերը փռած իշնի ճահճուտի վրա, — Լառ-Մարգարը մինչև լուսաբաց աշխատում էր:

...Ամայի արտերի միջով անցնում էր Լառ-Մարգարը, ջուր տալիս ծարավ հասկերին:

Լուսաբացին արտատերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժապտա և կռանա, մատներով տրորի թաց հողը, տեսնի՝ խո՞րն է ծծել ջուրը, Լառ-Մարգարը ջուրը վարա՞ր չի կապել»:

Արդար աշխատանքի սիրո՝ Լառ-Մարգարի բնավորության այս գլխավոր հատկության վրա է կենտրոնացնում Բակունցն իր ուշադրությունը, այդ զգացմունքի արմատները բացատրելով որպես հողի հետ կապված աշխատավոր մարդու կյանքի փորձից հանված գերագույն ուժ ու անխափան իմաստություն:

Լառ-Մարգարը փիլիսոփա չէ, մտքի մարտիկ չէ, անվախ ու քաջ հերոս չէ չէ, նա համեստ ջրվոր է ընդամենը, բայց կյանքը և հարազատ ժողովրդի պատմությունը նրա մեջ «դրել են» արդար և փորձությունների մեջ ստուգած «փիլիսոփայական» տեսակետ՝ անհունորեն լայն նրա առօրյա զբաղմունքից, մաճկալի ու ջրվորի նրա գործից:

Տեղահանության, թե արհավիրքի օրերին կառ-Մարգարը երկու մտահոգություն է ունեցել՝ առանց կորստի տեղ հասցնել հայրենի ծիրանուտից իր պառավի հավաքած ծիրանի կորիզները և մեկ էլ՝ անվթար պահել թռուանը՝ Թորոսիկին։ Նա ծովակի կգար, եթե շպահաներ այդ արժեքները։ Իսկ նա ծովակի չեկավ, հույսի հայացը միշտ նրա հետ է, որովհետև ծիրանի կորիզները պահ տալով մայր հողին, նա տեսնում է արևի տակ բարձրացող մատաղ տունկերը և դրանց կողքին, գյուղական դպրոցի երեխաների մեջ օրեցօր հասակ նետող թորոսիկին։

«Այ ցելերի սերմնացանը» հավաքածուում կան այնպիսի պատմվածքներ, որոնց հերոսները իրենց կյանքի ուղին անց են կացնում ողբերգական ցընցումների մեջ։ «Նամակ ոռւսաց թագավորին», «Սպիտակ ձին», «Եղբայրության ընկույնիները» պատմվածքներում Բակումցը նորից դառնում է մթնածորյան գյուղերի միջավայրին ու հերոսներին, նորից պատմում է այն մարդկանց մասին, որոնց վրա ծանրացել են սոցիալական իրականության շղթաները։

Այս պատմվածքներում Բակունցը ճշմարտության բուռն զգացումով է վերարտադրում հին գյուղի, նրա մարդկանց ապրած դրաման՝ միաժամանակ լայն գաղափարական հայեցակետի շնորհիվ, նա տալիս է նաև հայ ժողովրդի ազգային նկարագրի էպիկական վեհությունը, ժողովրդի մարդկանց խոր մարդկայնությունը անմարդկային իրադրության մեջ։

Ո՞րն է «Նամակ ոռւսաց թագավորին» պատմվածքի թեմա-գաղափարը։ Դա ժողովրդական բնավորության լավագույն գծերի դրվատումն է, սոցիալական-հոգեբանական այն երեւլիթի պատկերումը, որ ինչքան աճում է անմարդկայնության կոպիտ ուժը, այնքան ժողովրդի մարդը տասնապատկում է իր առաքինությունները, որքան թեքվում է մարդկային իրավունքների ոտնահարման նժարը, այնքան ավելի է լարվում իսկական մարդկայնության հականժարը։ Սա հոգեբանական հասարակ գործողություն չէ, այլ ներքին հարստացման ընթացք, որ Բակունցը ցուցադրում է փայլուն վարպետությամբ։

Պատմվածքի «ղեպքերի» կենտրոնում գտնվում է Բակունցի ստեղծագործության մեջ ոչ հազվագեց գյուղական նահապետներից մեկը՝ Արթին պապը։ «Ինքերը» սկսվում և ավարտվում են նրա կյանքի խաղաղ, ապա ողբերգական պահերի նկարագրությամբ։ Ասենք նաև, որ «ղեպքերը» այստեղ գերազանցորեն տրված են հերոսի հոգեբանության ներքին գործողությունների միջոցով։

«Նամակը...» սկսվում է Արթին պապի մոնումենտալ կերպարի անմոռաց նկարագրությամբ։ «Իրիկնապահին՝ Արթին պապիս նստելու տեղը կամարակապ գարպասի նիշն էր, որի ներքեւի մասը, գետնից մետրաշափ բարձր, կոչիկ տաշշած էր, քարե աթոռի պես սարքած։

Կնստեր իր տեղը, կկութներ հոնի կարմիր մահակին, գլուխը մի կողմի վրա կթեքեր, և եթե զրուցընկեր շունենար, ինքն իրեն կխոսեր ու քթի տակ կծրատար։ Երբ նա ժպտում էր, նրա կապույտ աշքերը փոքրանում էին և աշքերի տակ շարվում էին քարակ կնճիռներ։

Դարպասի մոտ իրիկնապահին նստելը պապիս հին սովորությունն էր։ Կովերը արոտից էին տուն գալիս, վարից՝ հոգնած ու գանդաղ քայլերով, եզները, պառավ ատամների տակ ծամելով ճամփի եղերթից պոկած խոտը։ Ու նստած տեղից պապս մեզնից մեկին մի բան էր պատվիրում։

— էկուց Ալա եզր վարի շտանեթ,—կամ թե,—մի տեսեք էն քուռակն ինչի՞ է կաղում:

Հետո պիտի վեր կենար, խոտը հոնի փայտով հավաքեր և մոտեցներ Ալա եզին, կամ շոյեր քուռակի հիվանդ ոտքը:

Արթին պապի այսպիսի պատկերումը մի տեսակ բնաբան է և կերպարի համար, և ամբողջ գրվածքի համար: Բակունցն այստեղ կենտրոնացրել է այն ամենը, ինչ կա պապի կերպարի մեջ, նրա էության մեջ՝ իրիկնապահի պես խաղաղ ու անդորր հոգի, ազնիվ ու խելոք վարքագիծ, աշխարհ տեսած ու ճանաշած մարդու հազվագյուտ մտերմություն նույն աշխարհի հետ, զարմանալիորեն հոգատար, խանդաղատանքի հասնող վերաբերմունք դեպի շրջապատը, մարդու և մարդկայնության կարուտ:

Եվ վերջապես հավատ դեպի մարդը: Այդ հավատն է նրա դեմքից ես վանում տառապանքի քողը և դիտողի վրա գամում կապույտ աշքերից ճառագայթաղ ժպիտը՝ «բարի ու անշար մարդու ժպիտը»:

Արթին պապը,—ինչպես նրան ներկայացնում է գրողը,—մարդկայնության մի անհանգիստ, կրքու ու վեհանձն քարոզիչ է. թոռներին ու մերձավորներին նա անվերջ պատգամում է անխախտ պահել հոգու մաքրությունը և աղնվությունը: Այս սկզբունքները նրա բարոյական էության տարերքն են: Այսպես է նա ապրել կյանքում ու այդ բարոյական բեռով հասել խոր ծերության: Սակայն, նա որքան հավատարիմ ու անդավաճան է մնացել իր խղճին, որքան անսասան է եղել իր գործողությունների մեջ, նույնքան անխիղճ են վարվել նրա հետ: Որքան արդարամիտ է նրա վարքագիծը, նույնքան անարդար ու անողոք են վարվում պապի հետ:

Արթին պապը գիշեր ու գօր, քնած թե արթուն, տառապում է իր աքսորական որդու անհայտ բախտով: Ի՞նչ էր պատահել: Հայտնի էր միայն, որ նրա որդին՝ Եգորը, «զինվոր եղած ժամանակ ընդդիմացել է և հրացան է քաշել հրամանատարի վրա»: Իսկ որտե՞ղ է, ո՞ւր է աքսորված Եգորը,—ստույգ հայտնի չէր:

Գյուղում պտտվող զանազան սուտ ու սխալ տեղեկությունները Արթին պապի հոգում չեն հանգցնում անթեղած վիշտը, որը մերթ բոցավառվում է ուրպես պայծառ հոյս, մերթ դառնում մարմրին տվող կայծ», նրա վիշտը հույսի է նման, որովհետեւ պապը ծարավի է մարդու իդեալին և տկար կայծ է, որովհետեւ հույսը խարուսիկ է, անուրջ՝ ճշմարտության և արդարության տարրական նորմերը ուսնահարած, մարդկայնության բոլոր արտահայտությունները կլանող աշխարհում:

Արթին պապի միամիտ հավատից էլ ծնվում է ուսաց թագավորին նամակ գրելու գաղափարը: Այդ հավատն էլ դառնում է Արթին պապի կործանման պատճառը:

Սերունին, մանկան երեակայությամբ, պատկերացնում է նամակի ժմանապարհորդությունը՝ քաղաքից քաղաք, միամիտ պարծանքով խոսում է իր գրած նամակի մասին, հիացած-ապշահար նկարագրում է գրագրի թղթի զորությունը («Էնպես դալամ ունի, որ քարին կդնի, քարը կճաքի»), դես ու դեն է ման ածում թղթի այն կտորը, որ «վավերացնում է նամակի գոյությունը»:

Օրերը հալվում են, սակայն չի ստացվում նամակի պատասխանը: Արթին պապը, սակայն, ոչ մի կերպ չի կորցնում հավատը: Օրերից մի օր, հույսը սրտում, նա ոտք է դնում գյուղական պրիստավի մոտ իմանալու, թե ի՞նչ տե-

ղեկություն կա Ռուսաց թագավորին զրած նամակից, որով նա խնդրել էր պարզել որուր անհայտացման «առեղծվածը»:

Բայց պիտի մոտից նա դուրս է գալիս ավերված հոգով ու ֆիզիկապես խոշտանգված. «Հանկարծ դոները բացվեցին, երևացին մի քանի ձեռքեր, իրար խառնված մարմիններ, անթիվ փայլուն կոճակներ և այդ ամենի մեջ պապիս ալեհեր գլուխը:

Չեռքերն իշնում էին նրա գլխին:

...Պապս փոշոտ գլխարկը թափ տվեց ու դարձավ ինձ.

— Զին պահի, բալաս... Պատասխանը չկա:

Բերանից արյուն եկավ: Ես տեսա նրա ջարդված ատամը: Արյունը թքի հետ խառնված կաթում էր նրա արխալուղի վրա»:

Իրական են թե պապը և թե նրա հետ կատարված դեպքը: Բայց միատեսակ իրականություն չեն մարդն ու չեղյալ, անվավեր նամակի պատասխանը: Ավելին, չեղյալ նամակն ավելի հզոր է ու զորավոր, քան կենդանի մարդք և ի վերջո, նրա ճակատագիրը որոշվում է նամակի թյուրիմացությամբ:

Բակունցը Արթին պապի հետ կապված պատմությունից վերցնում է ոչ միայն փաստը, այլև վերաբերմունքը դրա նկատմամբ: Ուրիշ խոսքով փաստը հեղինակը վերցնում է այն իրականության հետ միասին, որտեղ ստեղծվում է երկույթը, որտեղ թագավոր-նամակ հարաբերությունը շրջվում է իր հակառակ իմաստին. հույսը դառնում է ողբերգություն:

«Նամակ ոռւսաց թագավորին» պատմվածքին հավասար, միննույն շարքում է կանգնած «Սպիտակ ձին» պատմվածքը:

Պատմվածքում նկարագրված գործողությունը տեղի է ունենում համաշխարհային պատերազմի շրջանում: Հեղինակը ցույց է տալիս այն ահավոր ազերածությունը, որ հայ գյուղացու տնտեսական ու բարոյական կյանքում կատարում է պատերազմը, բացելով հակասություններ, որոնք թեև վաղուց կային, բայց մի տեսակ նիրհած ու կցկված էին, չէին հայտնաբերվել ամրող բացորոշությամբ:

Ներխուժելով հայ գյուղացու հարկի տակ, պատերազմը շրի երես է հանում գյուղաշխարհի հակասությունների ամբողջությունը, բախման մեջ գնելով ժողովրդական ու հակամուգովրդական ուժերը, երազն ու իրականությունը, գեղեցիկն ու տգեղը, մարդկայինն ու անմարդկայինը, պատրանքն ու առօրյան: Այս երկու սկզբունքների՝ անհատի հոգնոր, բարոյական ազատության ու հասարակական շարիքների, երազի ու իրականության, գեղեցիկի ու շարության բախումը, ծավալվելով հոգեբանական խորահուն դրամայի պլանով, հասցվում է մինչև լուծման ծայրագույն սահմանը:

Պատմվածքը բացվում է «Երազի ու նույսի սկզբունքը» մարմնավորող գյուղական մի խեղճ կնոշ՝ Շարմաղ բիբու կերպարով: Ցոթանասում տարի ապրել է իր հարկի տակ, անխոս աղոթել աստծուն, երկրպագել նրա սպասավորներին Շարմաղ բիբին: Յոթանասուն տարի շարունակ ավանդապահ հայ կինը անտրունչ, ինքն իր մտքերի հետ, կամովին կատարել է միևնույն արարողությունը. «Շարմաղ բիբին երեկոյան, երբ ժամհարը քաշում էր եկեղեցու զանգերը, — խրճիթի ծանր դուռը տնքալով բաց էր անում: Երկար ու կերկեր, իրեն արեկելյան թախծոտ երգ, ճռնշում էր հին դուռը, երբ պառափի դողացող ձեռքերը ծագում էին գեպի դռան մաշված ունկը: Խավար խրճիթում դռան երգին արձագանքում էր պղինձների զնդոցը և Շարմաղ բիբու շինչ ձայնը. .

— Քո փառքը շատ, էսօր էլ զանգերը զարկին,—մրմնչում էր այդ լուսերես կինը, որին իրիկնային զանգերը ավանդում էին անձնական անդորր»:

Այս պատկերում ամփոփված է կեցության մի կատարյալ հանգստություն ու վեհություն: Այդ «Հանգստության» հիմքն այն է, որ կյանքն անցնում է թեթև ու մեղմ սահանքով, երկնային օրհնությամբ, հույսի ու անանձնական սպասումների հերթագայությամբ:

Շարմաղ բիբին մինչև իր կյանքի մայրամուտն անդավաճան ու անշարժավացել է, որ զանգերի զողանքների հետ երկնային մի օրհնություն է ներս մտնում իրենց խրճիթը և դրա համեմատ կառուցել է իր անուրջները երջանկության ու բախտի ոսկեթև աղավնիների մասին, որ գալիս են երազած անտեսանելի աշխարհից ու նրա գեղջկական միամիտ հայացքով՝ թևածում աշխարհի վրա, գյուղի վրա, իրենց խրճիթի վրա, բոլոր խրճիթների վրա, ավետելով խաղաղություն ու բարություն:

Բայց կատարվում է «անսպասելին»: Երազող կնոջ ամենօրյա աղոթքի՝ նրա գերագույն հույսի պոռթկման պահին, գյուղական գդրի ձայնի շարագրութակ ու ահավոր որոտը խլացնում է եկեղեցական զանգերի զողանքը: «Է-հե-հեյ, — ալիք-ալիք դիզվեց-ձայնը, — ժողովուրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ծիատերերը ծիով քաղաք, հեյ-հեյ... Ով շտանի, թագավորի հրամանով տունը, տեղը, է-հե-հեյ...»:

Եկեղեցական զանգերի զողանքի և գդրի կանչի հակադրության իմաստը «մարդկայինի» ու անմարդկայինի բացահայտումն է: Գդրի կանչը ազդարարում է անմարդկայինը, շարիքի սկզբունքը:

Հայկական փոքրիկ գյուղը գդրի մի կանչով խուճապահար ենթարկվում է մարդկային տառապանքների բարձրացող ալիքին, գդրի մի կանչով հիմնահատակ փուլ է գալիս Շարմաղ բիբու կառուցած երազների աշխարհը, տնտեսական ծայրահեղ քայլայման սպառնալիքը դաժան պարտամուրհակի նման կախվում է բոլոր խեղճերի ու թույլերի վրա:

Շարմաղ բիբու ուամիկ հավատից՝ նրա աղոթքից մինչև գդրի կանչը, — այսպիսին է «Սպիտակ ծին» պատմվածքի առաջին հորձանքի բովանդակությունը:

Պատմվածքի այս առաջին հորձանքին իրավամբ առանձին ու կարևոր նշանակություն է տալիս հեղինակը: Սա լավ հղացված բնաբան է ամբողջ պատմվածքի դրամատիկական էության համար: Այստեղ ձևակերպված գաղափարը այնուհետև ավելի նշանակալից ու կոնկրետ բովանդակություն է ստանում, երբ մի կողմ է դրվում Շարմաղ բիբու «Երազի պատմությունը» և պատմվածքի հոմն է մտնում նրա սյուժետային կոնկրետությունը՝ Սիմոնի և նրա ծիու իրական պատմությունը:

Երբ հնչում է գդրի կանչը, ծայր է առնում, ավելի ճիշտ՝ գիտակցվում է Սիմոնի հոգեբանական ու սոցիալական ծանր դրաման: Շատ էր շարշարվել, շատ էր պատեպատ խփել իրեն Սիմոնը, մինչև որ ձեռք էր բերել իր ընտանիքի նեցուկը՝ Ցոլակ անունով ծին, «կապտավուն մորթով», որի վրա, ինչպես աստղերը, ցրված էին սպիտակ նշաններ: Երկար, ալիքածկ պոչ ուներ Ցոլակը: Եվ ասում էին, թե հին ու ազնիվ ցեղի շառավիղն էր այդ ծին, որ Սիմոնը գնել էր մի երկու տարի առաջ, փոխարենը տալով իրենց եղը, մի անմայր հորթ, մի կարպետ և երկու բեռ ցորենք:

Գյուղացու զայրույթը անցնում է ծիու նկատմամբ ունեցած սիրո և կոպտության, հույսի ու ցավի, կարոտի ու դժոհության, քնքշության ու վրդով-

մունքի պրիզմայի միջով, — հոգեկան հակադիր տրամադրություններ, որոնք արագ-արագ հաջորդում են միմյանց, սրում նրա ներքին կոնֆլիկտը ոչ թե իսկական մեղավորների հետ, այլ «իր» հետ, իր «ձիու հետ», Զերմ գորովանքով ծոլակին փայփայող, նրան բոլորանվեր կապված Սիմոնը պատեպատ է դիպչում, հուսադրում իրեն, թե՝ «ոռուի զազախը սրա վրա կարող է նստի»... Չէ, շեն տանի», — նորից հերքում քիչ առաջ մտքով անցածը, վրդովկում, ապա թեթևած շոնչ քաշում՝ նորից աղոտ հույսի ակնկալիքից:

Սիմոնը Հոգեբանական դաժան ճգնաժամի մեջ է: Այս ճգնաժամը պատմը վածքածքի երկրորդ հորձանքն է, իսկ սրա բարձրակետը այն տեսարանը, երբ գյուղացին գոմ է մտնում ու ձիու առաջից վերցնում խոտի խորձը, կարծեք թե իր առաջ կանգնած էր ոչ թե վաղեմի, սպասած, երազած բարեկամը, այլ թօշ-նամին, իր դժբախտության պատճառը:

Անեղը տիրություն է պատում Սիմոնին և նրա ընտանիքի անդամներին, երբ գալիս է ձիուն գոմից հանելու ժամը. «Տիսուր ժամ էր, երբ Սիմոնը զըռնից հանեց ձին: Կարծես ներսը նա զարդարել էր մի դագաղ, իսկ դուրսը սպասում էին այդ վայրկյանին, որ աղի արտասվեն...

Տանեցիները դանդաղաբայլ հետեւցին մինչև հարևանի դուռը, ասես հուղարկավոր էին մի թանկագին դագաղի, որին ուղի էին գցում մահվան անվերդարձ ճանապարհով»:

Տիսուր կոլորիտով նկարված այս տեսարանին հաջորդում է պատմվածքի մյուս, թվով երրորդ հորձանքը՝ ձիատերերի երրը դեպի մերձակա հաղաք: Սպի թափորի է նման ձիավորների լուս շարժումը. «Բոլորն էլ իրենց դժվար մտքերի հետ էին, ձիերն էին համեմատում իրար, ուշի-ուշով դիտում, որպես վի որոշեն, թե ո՞րը նորից կվերադառնա այս ճանապարհով և որի՞ սանձն ու սարքը տերը շալակած տուն կբերի, որպես մեռած մարդու գգեստներ, որոնց վրա այնպես դառնաղի ողբ են ողբում գյուղի կանայք»:

Այս տեսարանում, Սիմոնից բացի, պատմվածքի մեջ են մտնում նաև ուրիշ գյուղացիներ, նույնքան խեղճ ու կրակ, նույնքան շվարած ու տանջված, նույնպես իրենց ֆիզիկական ու կենսական առողջ հյութերը տաժանակիրաշխատանքում մաշած:

Նրանք բոլորը՝ Սիմոնի համագյուղացիները, գյուղից հեռանում են՝ հոգսը սրտներում ծանրացած, մտամոլոր, երկյուղած, անթարթ հայացքները հառած երկնքին, «Կարծես մի քաղցր աշք նայում էր այնտեղից և փրկության աղոտ հույս էր ներշնչում»:

Դառնանք թակունցի պատմվածքի մյուս՝ թվով շորերորդ հորձանքին: Մարդկանց և ձիերի շարքերը հասնում են քաղաք. «...Վրնջում էին ձիերը՝ մետաղածայն ու երկարածոր, ինչպես տիսուր երգը, կարծես վերջին հրաժեշտն էին ուղարկում լեռնային կապույտ լճերին, որոնց ջրից խմել էին, տափաստաններին, որտեղ անցել էր նրանց մանկությունը և ամայի գոմերին: Մեկը թավէ էր վրնջում, մյուսը՝ արծաթահնչյունը և բարձրանում էր հետեւ ոտքերի վրա, ինչպես գաղաղած ցուլ, ձգում էր սանձը և չէր ուզում իշնել այդ անվերդարձ ռողիով»:

Հասնելով ձիերի հավաքատեղը, Սիմոնը ամբողջովին համակվում է Ցուլակին փրկելու գգացումով, ամբողջովին խմորման մեջ է, թեև թվում է, թե նրա հոգու մեջ ոչ մի շարժում չկա: Այդ խմորումը նրան բերում է որոշակի վճիռ, նրան գործելու մղումներ է տալիս: Բայց ի՞նչ: Հանցանք, որ ծնվում է մարդկային հոգու մոլեգնությունից: Իսկ ո՞րն է Սիմոնի գործած հանցանքի

կոնկրետ արտահայտությունը: Նա ետ է դարձնում Ցոլակին և քշում դեպի գետափ: «Այդպես փախչում են սարսափից: Այդպես փախչում է հոտը, երբ կայծակն ահուելի որոտով խփում է մոտակա ժայռին: Այդպես դողահար վազում է գազանը, երբ հրդեհվում է անտառը»:

Եվ պարտված, խուճապահար, անզոր մարդու այդ փախուստին հետեւում է բում հանցանքը: «Սիմոնն անսովոր արագությամբ ձիու համեստը հանեց: Արեի տակ փայլփլեց ձիու ողորկ և գեր մեջքը: Ապա նույն արագությամբ կուցավ և գետնից վերցրեց մի շեշաքար»: Հուսահատ կատաղությամբ նա շեշաքարը քսում է ձիու մեջքին,—գործողություն, որ Բակունցը նկարագրել է գեղարվեստական նուրբ անցումներով, գործողություն, որին նա հոգեբանական անսովոր իմաստ է տվել: Ցոլակի մեջքին բացված վերքը,—ասում է Բակունցն այդ գործողությամբ,—խոր վերք է բացում նաև Սիմոնի սրտում: Դա անհուսորեն պարտված մարդու մաքառումն էր իր գեմ, նրա զայրակնած բողոքն էր աշխարհի կարգի գեմ, սոցիալական անարդարության դեմ:

Պատմվածքի վերջաբանը,—վերադարձող գյուղացիների շարքից առանձնացած Սիմոնը դատապարտում է իր արարքը և արտասանում զղջումի սըրտառուց խոսքը՝ «Հենց իմ փիսությունը մնաց, Ցոլակ... Հիմա հազար ձիու մեջ անտեր խրխնջում ես»,—ընկալում ենք որպես պոռթկացող բողոք կյանքի կապանքների դեմ:

Քննարկված պատմվածքների մեջ արտահայտված ժողովրդական ոգու հաղթանակի մոտիվին ուղղի գծով միանում է «Եղբայրության ընկուզենիները» ծավալուն պատմվածքի ողբերգական թեմայի մեջ բացված հումանիզմի մոտիվը:

Այս պատմվածքում նույնպես Բակունցի խոսքը հետամուտ է ազգային քնավորության էպիկական բովանդակության վերհանմանը: Պատմվածքի հերոսը՝ Աթա ապերը նույնպես, ինչպես Արթին պատճ ու Լառ-Մարգարը, իր վեհ էությամբ կարծեք թե լրացնում է ազգային էպիկական բնավորությունների հերոսների շարքը՝ գրական մշակման բովով անցած մի նոր կերպարով: Այսաեղ էլ մենք տեսնում ենք գեղարվեստական այն սկզբունքների մարմնավորման օրինակը, որի իմաստը հետևյալն է: Հայ գեղջուկ ժողովրդի սրտի ու խղճի պարունակությունն ավելի զորավոր է, քան սոցիալական, իրավական, կրոնական, դավանանքային բոլոր պատնշեները: Այստեղ էլ արձակագիրը առաջ է քաշում ու հիմնավորում աշխատավոր մարդու հումանիստական բարձր էության խնդիրը, նյութ ընտրելով հայկական գյուղի պատմության դրամատիկական շրջաններից մեկի՝ հայ և աղբբեշանական ազգամիջյան արյունոտ ընդհարումների շրջանից:

Ծանր, դաժան օրեր են, վաղվա օրվա տագնապը գյուղացիներին նորից հավաքել է Շուլունց կոչվող քարատակը, որ այժմ «օգա չէր, ինչպես հիսում տարի առաջ, այլ շտար, բազար և մինչև անգամ կլուր»: Գալիս են գյուղացիները այդ քարատակը, խոսում, զրուցում, հիշում անցած «երանելի ժամանակները», խորհրդածում պատերազմի ընթացքից, թանկ ու էժանից, գյուղական աշխատանքից, քաղաքական խնդիրներից, այս ու այն կողմից ստացվող լուրերից: Հավաքվում են քարատակը և, բնականաբար, մեջտեղ է գալիս ժողովրդական երգիծանքի անսպառ հանքաքարը. մեկի հանգիստ ծորացող պատումի միջոցին հանկարծ շառաչում է մյուսի սրախոսությունը, մեկի խորհրդածության դանդաղ երկունքը ընդհատվում է ընդհանուրի դղրդացող ծիծաղի մեջ, զրադացական Անդրու սիրտ մղկտացնող սազի նվագի պահին դուրս է

Նետվում Աթա ապոր աղմկոտ սաբրը, մեկի անմեղ հարցասիրությանը հետևում է մյուսի հեգնական պատասխանը: Ժողովրդական տոնահանդես է հիշեցնում գյուղական աշխատավորների հավաքութը:

Կենցաղային գունեղ պատկերներ են, որ հաջորդում են իրար, սրախոսություններ են, որ առաջածում են ամեն մի քայլափոխի, կծու, գառն հեգնության արտահայտություններ են, որ գյուղացիների համար վահան են ծառայում՝ իրենցից վաղվա տագնապները ետ վանելու նպատակով:

Քարանձավն ապրում է վաղվա հույսով ու երազներով, սակայն հույսի ժայրն ամեննին չի երևում: Առջևում ականապատ դաշտ է, ավելի ծանր օրեր են սպասվում: Դաշնակների և մուսավաթականների հրահրած հայ-ադրբեցանական ազգամիջան անմիտ ընդհարումներին միանում է պլեբեյական խավերի ավելի զորավոր ու անհաղթահարելի թշնամին՝ սովոր:

«Մտավ 1920 թիվը, ձմեռը զոռեց, սովոր սաստկացավ,—արձանագրում է ժամանակագիրը:—Հաց շկար, ցամաք հաց, գարեհաց և նույնիսկ կորեկի բլիք շկար: Իսկ ձյունը գալիս էր և գարնան ոչ մի նշան չէր երևում: Այդպիսի ձյուն Աթա ապերը իր կյանքում չէր տեսել: Իզուր Տեր-Նորընծան ամեն օր գուշակում էր «բարեխսանություն օդի և ջերմություն զրի»: Եերեկը ձյունը դադարում էր, երևում էր սառն արևը և նոր ձյունի ցոլքն ընկնում էր ժայռի լանջին: Մարդիկ հազիվ էին մաքրում դուռ ու բակ և ցրտին կուշ գալով՝ մի կերպ արահետ էին բացում գեպի հարևանի տունը, երբ գորշ ամպերը նորից էին կախվում. սկսվում էր ձյունը, լեռնային երկրի ձյունը, որ իջնում է անընդմեջ...»:

Մահվան արհավիրքը մտնում է հովանատ ու աղքատ գյուղաշխարհը, սկսելով իր դաժան ավերածությունը: Այդ ավերածությունը դադար չունի, ամեն օր խլում է նորանոր կյանքեր: Ողբերգությունն սպասելիորեն ընթանում է գեպի իր «կատարելությունը»: Ողբերգության այդ պատկերը Բակունցը վերարտադրում է առանձնապես տպավորիչ ու ճշմարտացի: Սակայն նրա գեղարվեստական խնդիրը տվյալ գեպքում ողբերգության ցուցադրումը չէ: Նա ցուց է տալիս, թե ինչպես մահվան հուսահատ զղաձգումների մեջ հաղթում է մարդկայնությունը, կյանքի սարսափների մեջ էլ մարդկային խիղճն ու սիրտը ավելը զորավոր են դուրս գալիս:

Ժամանակի, ապա նաև գյուղի կացության ընդհանուր պատկերի միջին, առանձնանում է մարդկայնության թեման:

Գյուղացիների հոծ զանգվածի միջից գրողը առանձնացնում է Աթա ապոր կերպարը:

Պատմվածքի սկզբում Աթա ապերը ներկայանում է մյուս գեղուկների հետ, ընդհանուր կոմպոզիցիայի մեջ, նրանց հավասար դերով, իսկ այնուհետև հեղինակը նրան է հանձնում գաղափարական ամբողջ բեռնվածությունը, ավելի ստույգ՝ մեծակտավ նկարի կոմպոզիցիայի մեջ նա դառնում է կենտրոնական ֆիգուր: Նկարը խմբվում է նրա շուրջը:

Բակունցն իր այս հերոսի մասին ասում է, թե նա ծանր ժամանակներում այն հույսն էր, որին դիմում էին գյուղացիները. «Յորեն լեզու էր, որ նման էր ցորեն հացի»: Ժողովրդական աղետի պահին Աթա ապերը հանգիստ ու դադար չուներ, «հոնի տերօղորմյայի հատիկները գցելով», նա գուշակում էր, թե երբ պիտի բացվի լավ օրը, հուսադրում էր բոլորին, թե մենք «սրով շենք կոտորվել, սովոր էլ չենք կոտորվի», դրացիներին համոզում էր նեղ օրերին իրար օգնել, ժողովրդական առածն էր մեջ բերում՝ բարեկամը ճանաշվում է դժբախտության մեջ և, այս ամենը նրա համար, որպեսողի խաղաղությամբ

ծխան գյուղական խրճիթների երդիկները, որպեսզի հողագործը վաղվա օրը արդար խղճով հայրենի ցելերին հանձնի իր գոյության սերմերը:

Աթա ապերը մարդասերի նույն կերպարն է, ինչ որ տեսանք Բակունցի մյուս պատմվածքներում, նրանց նման կարեկից ու մնջառոգի, հոգով շոայը ու զգայում՝ ուրիշների դժբախտության հանգեցի: Նրա մարդասիրությունը սոսկ խոսք ու պատգամ չէ, այլ նախ և առաջ գործողության ծրագիր, որ նա զարդարում է գեղջկական աշխարհից ծնված իմաստությամբ.. «Իմ խոսքն էն է, որ էլի մենք իրար ցավ կիմանանք: Սրտից սիրտ մի բարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ դարձնողը: Էն էլ որ լինի, գլուխ թող քշի տանի մարդուն էն որ կունկը թուխպի մեջ ցրիվ է գալիս, լսել եք, ոնց են իրար կանչում ու մինն էլ չի կորչում: Ուրեմն մենք էն երկնային թռչունի շափ էլ չկա՞նք... իրաբ ձեռք բռնեցք, մինչև դուրս գանք էս դժվար տարին»:

Գյուղական իրականության բոլոր սպառնալի տարրութերումներին ու ժամանակի խիստ հողմերին դիմացած լեռնցի ծերունին, որ կյանքում երբեք լաց չէր եղել, երբ տեսնում է սովահար երեխաների դիմակները, այնպիսի մի ողբ է արձակում, որ զրնգում է ամբողջ լեռնաշխարհը:

Այդ ողբ չէր, այլ ահարկու բողոք կապույտ երկնքին, բողոք, որին ձայնակցում էր ձմեռվա քնից զարթնող բնությունը և քարի արծիվը, որը երգի աղմուկից դուրս էր թռել,—քարե արծիվն իր թերի վրա տանում էր մարդու բողոքը մահի դեմ:

Աթա ապերը ժողովրդական մարդու հարուստ փորձով գիտի, որ դժբախտությունը կարելի է հաղթել միայն սիրով ու խղճով, միայն անհաշվենկատ վերաբերմունքով: Իր կենսափորձը նա ձեակերպում է հետեւալ բանաձեռվածքը: «Սրտից սիրտ մի բարակ կամուրջ է, էն է մարդուն մարդ դարձնողը»:

Ժողովրդի տառապանքը նրան հասցրել է ինքնամոռացության: «Աթա ապերը գալիս էր տուն և քունը չէր տանում: Պառավը մի կտոր կորեկ հաց էր մեկնում նրան, բայց ծերունին այդ էլ չէր ուտում, խաբելով, թե տեր-նորընծայի տանը ոսպով ճաշ է կերել: Եվ երկար, շատ երկար, մինչև աքլորականը, երբեմն մինչև լուսումութ,—նրա միտքը թևածում էր իր կյանքի անցած ճանապարհների վրա՝ հին օրերից, երբ նրա կյանքն անցնում էր ժաղիկների ու սառնորակ աղբյուրների, բարձր խոտերի մեջ,—մինչև գյուղի խառնակ առորյան, մինչև այս դժբախտ օրերը»:

Շատ բան չի կարողանում պարզել Աթա ապոր որոնող միտքը, շատ բան էլ նա կապում է երկնքի հետ, ճակատագրի անունն է տալիս, քաղաքի դեմ է ծառս լինում («Հացը եթե կշեռք տեսավ՝ արտերը կշորանան»), մոլորզածիրեն այս ու այն կողմն է գցում, բայց և այնպես գեղջկական արդար բնազդի սահմանում ճանաշում է իրականությունը, ըմբռնում է շարիքը. «Հայը ո՞րն է, թուրքը ո՞րն է, դաշնակցականը ո՞րն է, մուսավաթը ո՞րն է»: Այս հակադրությունից է գալիս շարիքը, իսկ շարիքի դեմ պետք է վահան դարձնել սիրտը, շարիքին պետք է հաղթել մարդկայնությամբ:

Անվիճելի վարպետությամբ է զարգացնում Բակունցն իր այս պատմվածքը և հերոսի բնութագրման նպատակով կանգ է առնում. մի դրվագի վրա, որտեղ ավելի խոր ու լիակատար է բացվում Աթա ապոր զգացմունքների, նրան իսկական մարդկայնության իմաստը:

Ո՞րն է այդ դրվագը:

Մինչ Աթա ապերը մտածում էր օրերը տաքանալուն պես գնալ ծանոթ թուրքերի մոտ, մի ծիաբեռ բրինձ խնդրելու, այդ նույն ժամանակ նրա հար-

Կի տակ անսպասելիորեն հայտնվում է նրա մոտիկ քիրվան՝ աղբբեշանցի Սրուցը: Եվ Աթա ապերը նրա հետ կիսում է իր վերջին կորեկի պարկը, իր ընտանիքի վերջին հույսը, Օրուչի այցելությունը դիտելով որպես ազգամիջյան կոփվներին վերջ տվող կոռոնկի ավետիք:

Բակունցը նկարագրելով այդ դրվագը, նորից դիմում է իր նախասիրած լուսաստվերի հնարքին,—ժողովրդի մարդու էակիկական վեհությունը հակադրվում է տիրողների շնչինությանը: Լուսաստվերը հատկապես ընդգծվում է պատմվածքի վերջաբանում: «Մենք ձեր հույսովն ենք ապրում, Օրուշ քիրվա»,—ճանապարհում է իր բարեկամին Աթա ապերը և մի քանի ընկույզ դնում գրպանները՝ երեխաների համար: Այս միջադեպը նոր լույս է գցում հարեան ժողովուրդների աշխատավոր մարդկանց հինավուրց կապին: «Հայերի և թուրքերի մեջ բարեկամության այդ ձեր հին էր... Գուցե թե դաշնի այդ ձեր գալիս է այն ժամանակներից, երբ լեռնցի խաշնարածները և դաշտի երկրագործները բարեկամ դարձան, համոզվելով, որ լեռն ու դաշտը մի մայր երկիր է»: Ժողովուրդների բարեկամության խոր իմաստը մեկ անգամ էլ երեան է գալիս պատմվածքի վերջնամասում: Դաշնակ զինվորները ճանապարհին բռնում են Օրուչին և հայ կոմունիստների հետ գնդակահարում Սրբանի ձորում:

Հայրենի հողը ցաղվում է երկու դրացի ժողովուրդների զավակների արյամբ:

Վեհանձնության անմռաց դրվագ է Աթա ապոր և Օրուչի բարեկամությունը, որը դիմանում է ամենածանր փորձություններին և ծնունդ տալիս ֆղբայրության այն ընկույզնիներին, որոնք իրենց ամենօրյա խշոցով հավերժացնում են ժողովուրդների հինավուրց սրբազն կապը:

30-ական թվականներին Բակունցը գրեց «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքը:

Պատմական ընթացքի երկու կողմերը՝ նորի ծնունդը, աշխարհի ջահելությունը, կյանքի վերակառուցումը և անցած օրերի կարոտը, անցյալի վերջին թեկորների հոգեբանական դրաման, հնի մահացումը «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքում տրված է փիլիսոփայական խոր իմաստավորումով: Փրոբլեմը դիտված է իրեւ դարաշրջանի նշանակալից երևույթներից մեկը:

Այստեղ արտահայտվել է Բակունցի գաղափարական, թեմատիկական, գեղարվեստական նորարարաթյունը, թեև որոշ իմաստով, նույնիսկ առանձին մանրամասնություններով ու մանրագերով պատմվածքը «գրական ծագում» ունի: Խոգոյն Ն. Վ. Գոգոյի «Նևսկի պողոտա» վիպակի ակներև ազդեցության մասին է, որ արտահայտվել է նախ և առաջ պատմվածքի մտահղացման մեջ: Կողոյն իր վիպակում հավաքական կերպար է դարձնում Պետերբուրգի նևսկի պողոտան, որի մասնիկներն են դառնում հերոսները, նախ և առաջ նկարիչ Պիսկարեր: Սրա երաժանքների կործանումը կապվում է այդ պողոտայի հետ: Բակունցը Գոգոյի օրինակով զիխավոր կերպար է դարձնում երեսնի Աստաֆյան փողոցը, որի մի մասնիկն է դառնում նրա անանուն հերոսը: Սա մս կործանվում է նույն այդ փողոցում, ավելի ճիշտ իր խարիսու երազանքներով կւանվում է փողոցի կողմից:

Փողոցն ու հաղաքը հավաքական կերպար դարձնելու գեղարվեստական նախասիրությունը նախ և առաջ կապվում է դրանց համայնապատկերը նկարող հեղինակների սոցիալական մտածողության լայնության ու ընդգրկման հետ: Գոգոյի գաղափարական քաղաքը՝ Միրգորոդը, նրա նևսկի պողոտան, Սալտիկով-Շետրինի Գլուխով քաղաքը, եւ Զարենցի գաղափարական քաղաքը՝

Կարսը, այդ քաղաքի Լորիս-Մելիքյան ու Ալեքսանդրյան փողոցները, Բակունցի Կյորեսն ու Աստաֆյան փողոցը,—այս օրինակները, որ կարելի է շարունակել, կոչված են ոչ միայն ներկայացնելու միջավայր ու հանգամանքներ, այլ նախ և առաջ ցուցադրելու հասարակական կյանքի հակապատկերներն ու մարդկանց սոցիալական հոգեբանությունը: Իհարկե, տարբեր բովանդակություն ունեն այդ բոլոր փողոցների ու քաղաքների կերպարները, տարբեր գեղարվեստական խնդիրների լուծմանն են կոչված դրանք: Բակունցի «Թրովինցիայի մայրամուտը» պատմվածքում, մասնավորապես Աստաֆյան փողոցը կոչված է արտահայտելու ժամանակի գլխավոր հակասություններից մեկը՝ սոցիալական որոշ շերտերին համակած հոգեբանական գլխապտույտը, անցյալի հետ իրենց կապերը շնորհած հերոսների յուրովի ողբերգությունն ու պեսիմիզմը: Նրանց «փիլիսոփայության» կործանումը: Բակունցը Աստաֆյան փողոցից բացի նկարագրում է նաև Երևանի մյուս, ոչ կենտրոնական, այլ, այսպես ասած, անհետաքրքիր, «խաղաղ» փողոցները: Գավառական քաղաքում ամեն մի փողոց ունի իր անկրկնելի պատմությունը, իր առանձնահատկությունները,—Բակունցը ծայր աստիճան կոնկրետ հատկանիշներով է նկարում այդ փողոցների կյանքը, նրանց կենցաղն ու բնակիչներին:

Երևանյան մի շարք փողոցներում կատարած հեղինակային «շրջագայությունը», նրանցից յուրաքանչյուրի սովորական պատմությունն ու առօրյայի շափ սովորական կյանքի վերարտադրությունը կոչված են ընդգծելով՝ կոնտրաստի օրենքով, Աստաֆյան փողոցի անսովոր, մյուսներից առանձնացվող, մյուսներից հեռացող բովանդակությունը:

Այս առանձնացման իմաստի մասին Բակունցը գրում է. «Նրանք բոլորը փողոց են, հաղորդակցության անոթներ և նրանցից ոչ մեկի անօնքը չի կապված երազների, բարբասանքների, այլատեսակ շաղակրատությունների, դատարկապորտ թափառումների և ժամանակի վատնման հետ, ինչպես այս փողոցն է, որի նկարագրությունը հիմա կանենք, ապա կպատմենք մի ուրախառիթ դեպք և նրա հետ կապված մի անանուն մարդու եղերական վախճանը»:

Քաղաքի փողոցների համառոտ նախադրությունից հետո առաջին պլան է մզգում Աստաֆյան փողոցը, որտեղ մյուս փողոցներին բնորոշ երազային, մեղմ, ջրաներկային փափուկ գույները փոխվում են իրենց հակադրությանը:

Աստաֆյան փողոցը նույն արժեքն ունի Երևանի համար, ինչպես նկակի պողոտան Պետերբուրգի համար:

«Ճշմարտության դեմ կմեղանշնք, եթե այս տարածությունը, որ կոչվում է Աստաֆյան, անվանենք փողոց, որովհետև մեր քաղաքում այս փողոցը հրոշակված է նաև իրենք ժամադրավայր, նավահանգիստ... Նա նաև պատկերասրահ է... Այս տարածությունը սովորական առումով փողոց չէ, այլ ունի այնպիսի հատկանիշներ, որոնցից զորք են քաղաքի մյուս փողոցները»,—գրում է Բակունցն իր փողոցի մասին:

«Նևսկի պողոտա» վիպակի հետ Բակունցի պատմվածքը «շաղկապող» հանգույցներից մեկը գլխավոր փողոցների նկարագրության հարազատությունն է, նկարագրություն, որ հետամուտ է փողոցի սոցիալական բովանդակության վերհանմանը:

Գոգոլյան ոիթմով ու կոլորիտով ներկայացնելով Աստաֆյան փողոցի շարժումն ու ներքին պարունակությունն օրվա տարբեր ժամերին՝ առավոտից մինչև իրիկուն, վերստեղծելով հասարակության հավաքական կերպար՝ արտաքին, տեսանելի հատկանիշներով, Բակունցը համում է հին, քաղքենիական

կենցաղաձևերի ու նոր, սովետական առօրյայի, Աստաֆյանի «ամբան» երթեղների, նրա հրապուլըներին գերված «հոգևոր անձանց» և փողոցի «հրապուլըների» նկատմամբ անտարբեր «աշխատանքի մարդկանց» լուս, զսպված հակամարտության բացահայտմանը: Աստաֆյանի «հասարակության» միջից նա չի առանձնացնում հերոսների՝ մանրակրկիտ վերլուծելու նրանց հոգերանությունը: Նա ներկայացնում է լոկ մարդկանց առանձին ուրվագծեր ու բառվերագծեր, անգույն ու անդեմ զանգվածների մասնիկներ, որոնք կարծես թե դուրս են եկել դիմակահանդեսի: «Հասարակության» ամենօրյա շարժման մեջ չկան մարդիկ, այլ կան դիմակներ, չկան ընդգծված անհատներ, այլ կան հագուստներ, ձեեր, մարմնի մասեր: «Ահա գնում է մեկը և գիտե, որ քաղաքի ամենագեղեցիկ ոտքերն իրենն են, գնում է և ոտքերը փոխում այնպես կաքավայլ, կարծես ափսոսում է կոփել գետինը: Ահա և մեկ ուրիշը՝ երկար ու սե արտեանունքներով, որոնց տակից երեւում են մթին աշքերը, ինչպես աստղերը ջրհորի մեջ: Կան և կապույտ աշքեր, այնքան վճիտ, որ նրանց մեջ արտացոլվում է զգեստի ծփանքը, ինչպես անտառի շորորը լեռնային լճակի մեջ: Կան և հողանի բազուկներ և ինչեր չկան և ինչ ձեեր, ձեերի որպիսի կորություն, ամենը նուրբ...»:

Ակամա համեմատության մեջ ես դնում Աստաֆյանի բնակիչներին Բակունցի ժողովրդական բնագորությունների հետ, որոնք ընթերցողի առաջ կանգնում են իրենց լիաբուռն բնագորությամբ ու շոայլ հոգով, իրենց երազների գունագեղությամբ և անհատական աշխարհի փայլով: Այդ համեմատությանը բերում է Բակունցն իր վերաբերմունքով, շեղակի երգիծական լեզվով, իր պատկերների ենթաբնագրով: Ենթաբնագրի իմաստն այն է, որ այդ «անգույն», դիմակավորված, «զանգվածային» հասարակությունը խորթ է ժողովրդական կյանքի բուն էությանը, որ սրան բնորոշ են ծգտումների բաղդենիական սահմանափակությունը, հայացքների ֆիլիստերական նեղությունն ու հոգեկան դատարկությունը:

«Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքում Աստաֆյան փողոցի համայնապատկերը երկրորդ նախադրությունն է՝ մի ավելի էական սոցիալական խնդրի լուծման համար: Նախադրություն, որ նախապատրաստում է պատմվածքի գաղափարական ու գեղարվեստական շափազանց խոր իմաստը: Այստեղ արդեն Բակունցը «բաժանվում է» «գրական աղբյուրից» և մեջտեղ բերում իր գեղարվեստական խնդիրը: Մի կողմ թողնելով պատմվածքի մյուս գծերը, այսպես ասած, նրա «հասարակական երակը», Բակունցն անցնում է պատմվածքի «անհատական երակին»՝ անանուն հերոսի հոգերանության վերլուծությանը: «Այնուամենայնիվ, ամենահրաշալի այդ ժամերի նկարագրությունը շի կարող գերել մեր գրիշը և մեզ ստիպել մոռացության տալու մի էակի, որին մենք պետք է անվանենք անանուն մարդ, որովհետև մի առանձին բան չի ավելանա, եթե հիշենք նրա անունն ու աղքանունը, նկարագրենք նրա դեմքն ու պատմենք նրա կյանքը, թեկուզ համառոտագրած»:

Բակունցի հերոսը քաղքենիության ախտանշաններով վարակված «զանգվածի» մի մասնիկն է, որին հեգնանքով ու նուրբ ընդգծումով հեղինակը հանդես է բերում առանց անուն-ազգանվան: Նորից գործ ունենք մարդու դիմակի հետ. դիմակ ոչ միայն արտաքնապես, այլև ներքին էությամբ: Այդպես էլ ներկայացնում է հեղինակն իր հերոսին. «Գիշերային այդ ժամին երկու խոլոցներից... դուրս է գալիս մի վտիտ մարդ, մի անանուն մարդ: Նա կանգնում է երեք բարդիների առաջ, նայում է ներքև, տեսնում է փողոցի գետինը,

որ շողում է լույսերի տակ և լսում է ջրերի ձայնը: Հետո նա բարձրացնում է վերարկուի օձիքը և մայթի վրայով գնում է դեպի վեր: Փողոցի վերջում հա անհայտանում է և երկար ժամանակ չի երևում»:

Քաղաքի գիշերային այցելուն տարօրինակ մենակյաց է՝ փախած կյանքի աղմուկներից, անձնապաստանած իր պատյանի մեջ, ֆիլիստերության շափ սկեպտիկ՝ նորի հանդեպ: Նա խորշում է նոր կյանքից, փողոցի լույսերից, նրա անցուղարձից, նրա մարդկանցից: Նա սարսափում է քաղաքակրթությունից: Անանուն մարդն ունի իր պատկերացումների աշխարհը՝ աննյութական, անհետացած ու խարխուզ մի աշխարհ, ունի իր երազանքները, իր անպտուղութեագործելի անուղղները:

Ո՞րն է նրա աշխարհը, նրա երազանքների իմաստը:

«Նա կփակեր փողոցի բոլոր մուտքերը կավե պատերով, կթողներ միայն մի դռնակ, որով մտներ միայն սայլը: Նա հողին կհավասարեցներ բոլոր քարեղեն տները և նրանց փոխարեն կկառուցեր կավե խճիթներ, նրանց կռուրին շարդախ, որպեսզի լուսընկա գիշերներին բնակիչները շբարձրանային վերև և լուսնյակը շողք գցեր փայտե օրորոցների վրա: Նա կկտրատեր բոլոր լարերը և բնակիչներին կհրամայեր, որ ձմեռը ձեթ վառեն, մնացած ժամանակ ենեն արևի հետ և պառկեն մթնով: Ենեն արևի հետ և աշխատեն իրենց պարտեզներում, այգիներում, ցանեն սոխ ու սխտոր, ոսկեհատ ցորեն և հընձաններում ոտքերով ճմլեն խաղողը: Նա կցանկանար տեսնել համեստ աղջիկներ, արծաթե մախչայով, զլխանոցներով, երկար-երկար ծամերով, որոնց ծայրերին լինեին ուզումքներ: Աղջիկները սափորներով գինի բերեին հնձաններից, մարեն մառանից հաներ սպիտակ լավաշ, յուղ ու պանիր, ինքը նստեր կտորի վրա, ներքեւը շրեր խոխոչային, վերեւը՝ երկնքի խոր կապույտը: Հավիտյան այդպես մնար այս փողոցը, բերդի պես դրսից անշատված խոր խրամատներով, կապույտ ծուխը բարձրության վերև և ածխի միշից ինքը նայեր Արարատին ու հիանար: Թող ամբողջ աշխարհում թագավորեր երկաթը և միայն այստեղ իշխեր կավը, քարը, փայտը: Դրսից շհասներ ոչ մի հնչյուն, ոչ մի օտար աղմուկ և ոչինչ չվրդովեր նրա հանգիստը:

Անեղծ մնար պրովինցիան...

Այդ էր նրա ցնորքը...»:

Բակունցը անազարտ տեսքով մեջ է բերում անանուն մարդու երազանքը, որ հանգում է իրենց դարն ապրած կեցության պատմական ու հնավանդ ձեւերի իդեալականացմանը: Դա, սակայն, միայն իդեալականացում չէ: Պրովինցիայի շերմեռանդ պաշտպանի երազանքը՝ նրա պատրանքների աշխարհը, յուրովի վեճ է կյանքի նոր ձեւերի ու երևութների հետ: Վեճ, որ նրան դարձրել է մարդախույս, անձնապաստան-ուրվական, վեճ, որ նրան տանում է դեպի ստվերային գոյության ոլորտները, նրա մարդկային էությունը դարձնում հնագարյան ֆետիշ:

Զհաշտվելով նորի հետ և սոցիալական հոգեբանության նկարագրով անպատրաստ լինելով ընդունելու հեղափոխության հրաշագործ վերափոխությունների իմաստը, անանուն մարդը, բնականաբար, ապալինում է նախնագարյանի հրապուրի «կուռքերին»՝ հայացքի խորքում հեռավոր դարերի պատմականորեն հեռացած կյանքի կարոտը: Առանց սոցիոլոգիական կանխակալ տենդենցի, բայց հերոսի հոգեբանական աշխարհի նրբերանգներն ի ցույց դնելով, Բակունցը բացահայտում է հնության և սկեպտիցիզմի փիլիսոփայության սոցիալական արմատները, հնի կրողների պատմական դատապարտվածությունը:

«Անանուն հերոսի» մասնավոր երազանքը պատմվածքում վերաճում է հնադարյանի ու քաղաքակրթության գոտեմարտին:

«Պրովինցիայի մայրամուտը» ուշագրավ վերջաբան ունի, որ պարզում է այդ գոտեմարտի հանդեպ գրողի վերաբերմունքն առավել որոշակի. «Աշխատավոր ժողովուրդը մի օր շրջվեց գեղի այս փողոցը: Սկսվեց այն, ինչ անշնչելի կմնա մեր փողոցի պատմության մեջ: Բահերով ու բրիչներով զինված մի բազմություն գրոհի դիմեց: Փորեցին գետինը և արեկ տակ շողաց այն հողը, որ երեք արեկ երես չի տեսել: Հող լցվեց մայթերի վրա, առաջացան խրամատներ և գուրեր, խճաքարերի կույտեր, որոնք վերջ տվին այդ փողոցի սիրահարների հոգեոր երթին: Քաղաքից դուրս արդեն հաստատ քայլերով՝ մերթ ընդ մերթ քաղաքին և նոր փողոցներին էին մոտենում պողպատե գծերը... եկալ և այն օրը, երբ առաջին վագոնը սուրաց այս փողոցով: Խնդություն էր ու ազատության աղաղակներ: Կարծես զրահագնացք էր, որ քաղաքի բնակիչներին բերում էր փրկություն բազմադարյան ստրկությունից:»

Փողոցն ուրիշ դարձավ: Թերվեց պրովինցիայի գեղնած արեկ: Բացվեց մի վիճ և այդ վիճը կլանեց այն միակն ու անկրկնելին, որ հայտնի էր որպես երևան քաղաքի Աստաֆյան փողոց:

Տրամվայի կապտագույն ոելսերը խորհրդանշում են «սայլային-հյուղակային» աշխարհի նահանջը քաղաքակրթության առաջ:

Այս իմաստն է ակնարկում պատմվածքի զարմանալի նուրբ ու բազմանշանակ վերջվածքը. «Մի գիշեր այն անանուն մարդը, որ վերջին սիրահարն էր այս փողոցի, դուրս եկավ նեղ փողոցների լարդինթոսից, որտեղ ամեն տան մեջ, ամեն ներքնահարկում խոսում էին այդ վիթխարի հաղթանակի մասին: Դուրս եկավ մարդը, նայեց իր երեք բարդիներին: Նրանք կանգուած էին, և երբ սլացավ լույսերով ողողված վագոնը, նա բնաղդաբար սեղմվեց բարդիներին: Ապա արագ-արագ բարձրացավ վեր, դեպի այն բարձրությունը:»

Այստեղ նա տեսավ ոելսերը, որ ձգվում էին փողոցի ամբողջ երկարությամբ: Դրանք գնում էին հեռու, խառնվում ուրիշ ուղիների, անցնում աշխարհց-աշխարհ:

...Հետո պատահմամբ գտան մի վերարկու, որ կոթնել էր քարին, մի զույգ կոշիկներ և հնաձև գլխարկ: Այդ ամենն այնպես էր, որ կարծես մեզը մարդ կա՝ գլխարկի տակ զլուխ, վերարկուի մեջ՝ իրան և կոշիկների մեջ՝ ոտքեր: Բայց ոչինչ չկար: Կարծես մարդը շորերի միջից հրաշքով դուրս էր եկել և անհետացել:

Ֆանտաստիկ հրաշապատումը և հիպնոսացումն ոմի կոնկրետ հասարակական հիմքեր:

Այս պատկերի մեջ երգիծական անողորությամբ բացահայտվում է անիրական կյանքի երազանքի վերջնական փլուզումը իրական կյանքի ուժեղ հորձանքի առաջ, պեսիմիզմի նեղ հոգերանության կործանումը հեղափոխության առաջընթացի առաջ:

Անանուն մարդը պրովինցիայի զոհն է: Պրովինցիան է «իր ներքին հմայք-ներով» մղում դեպի կործանում: Բայց պրովինցիան իր այդ լիցքը ստանում է նոր միջավայրի գոյության շնորհիվ: Պրովինցիան և նոր միջավայրը կարծեք թե կապված, և կապված չեն իրար: Նրանց հարաբերության այս նրությունը, անկախությունը և կախվածությունը մեկը մյուսից, արտահայտվում է պատմվածքի երգիծական բնույթի ու ոճի մեջ: Դա միանգամայն ոեալիստա-

կան և զգալի շափով նուրբ իրոնիա է, «կարեկցությամբ» պատսպարված հեգնանք, որ իր սահմաններում թույլ է տալիս նաև հոփմանյան ֆանտաստիկական հեգնանքի տարրեր: Ֆանտաստիկական հեգնանքի արտահայտությունն է պատմվածքի վերջաբանը՝ շորերի միջից դուրս եկած և անհետացած մարդու պատկերը: Գեղարվեստական իմաստալից պատկեր, որի խնդիրն է պեսիմիստների սերնդի մանրացման, փոշիացման, կլանման փաստի հռչակումը:

## 6

1935 թվականին, «Եղբայրության ընկույթիները» պատմվածքի հետ միասին, մի գրքում, լույս տեսավ Բակունցի հասուն շրջանի ավարտված ստեղծագործություններից մեկը՝ «Կյորես» երգիծական տարեգրությունը:

«Կյորես» Բակունցի վաստակի և, ընդհանրապես, հայ գրականության երգիծաբանական ուղղության բարձրագույն երեսությներից մեկն է, նրա իսկական կոթողը: Պատահական չէ, որ գրական քննադատությունը առանձին շերմությամբ ու ակնածանքով է արտահայտվում Բակունցի այս գրվածքի մասին ու անվերապահորեն դասում է ոռու և հայրենի գրականության մեջ երրես ստեղծված երգիծանքի անկրկնելի արժեքների շարքում, կողք-կողքի<sup>13</sup>:

Փաստերը վկայում են, որ Բակունցը ոչ միայն խորապես ըմբռնում էր երգիծական գրականության հուշարձանները, այլև, որպես ստեղծագործող, զգում էր երգիծանքի յուրահատուկ պոետիկական բովանդակությունը: Նրա իմացությունն ու զգացողությունը արտահայտվել են «Հովնաթան Ամարլը» վիպակում, «Թրովինցիայի մայրամուտը» պատմվածքում, ուրիշ պատկերներում, բայց ամենից ավելի՝ «Կյորես» երգիծական տարեգրության էջերում:

Գրական երեսությները ուղղակի կամ անուղղակի ստեղծագործական ազդակներ են եղել Բակունցի գրվածքի համար, հարստացրել են երգիծանքի մտածողությունն ու կովարուրան: Սակայն «Կյորես» պատկերների հյուսվածքը, իրոնիայի ձեերը, կատակերգականի տեխնիկան հենվում են ժողովրդական-ազգային, երգիծական մտածողության տարրերի վրա:

Պատմական ի՞նչ գծերով ու բովանդակությամբ է քնութագրվում այն իրականությունը, որ Բակունցը ներկայացնում է «Կյորեսում»:

Ժամանակագրության նախաբանում մի էպիկական ընդարձակ հատվածով Բակունցը տալիս է պատմական ժամանակաշրջանի սպառիշ ու սեղմ բնութագրությունը. «Քաղաքն ուներ երկու անուն՝ Գորիս և Կյորես: Երրորդ անունը՝ Կորիս, — տալիս էր միայն մի մարդ՝ դեղավաճառ Քյալլա Ծատուրը, որը քաղաքում հոշակված էր որպես փիլիսոփա և հին գրքերի սիրահար...»

Քաղաքն ուներ երկու անուն և այդ երկու անվան մեջ, ինչպես ընկույզի երկու կճեպի մեջ, պարփակվում էր մի քաղաք՝ երկու իմաստով, մի բնակավայր՝ երկու տարբեր ժողովրդով, որոնք ունեին իրենց առանձին սովորությունները, առանձին շահերը և մինչև անգամ նրանց անունները տարրեր էին և պատահում էր, որ այդ երկու ազգերը իրար լեզու չեին հասկանում: Մի կողմը «օտարականներն» էին, կամ ինչպես կյորեսեցիք էին ասում՝ զարիբականներն էին, — մյուս կողմը՝ բուն Կյորեսն էր և նրա միջնաբերդը՝ Շենը, և նրա նշանավոր պարագլուխները՝ Ղաթրինի Աղալոն, որ բեռնած էշը գետնից բարձրացնում էր, Պարան-Պարան Ավանեսը, որի ձայնը հասնում էր մինչև Դրնգանի ձուր, Գյուրջի Օթին, որի լեզվից վախենում էր մինչև անգամ քաղաքագուի Մատթեոս բեյը:

Ղաթրինի Աղալոն, Պարան-Պարան Ավանեսը, Գյուրջի Օբին և շատ ուրիշ կյորեսնցիներ, լինելով բուն Կյորեսի պարագլուխները, ժամանակակից չեն եղել: Այդ մի դինաստիա էր Հողագործների, բրուտների, ներկարարների, դարբինների ու տավարածների, ցեղային դինաստիա, որ ի դեպ, գլխավորում էր բուն Կյորեսի և նրա միջնաբերդ Շենի կոփվը Գորիս քաղաքի և նրա «օտարականների» դեմ...

Կար Գորիս և կար Կյորես: Երկու տարբեր ժողովուրդ էին և տարբեր էին նրանց լեզուն, սովորովթյունները, անունները և մշտաբորբոք կրակի նման նրանց միջև վառվում էր հին կոփվը:

Թակունցի այս պարբերովթյան մեջ,—իսկ ամբողջ գրվածքի միջով անցնում է «երկու ազգի» մոտիվը, ամբողջ գրվածքը կառուցված է երկու հոսանքների հակադրության վրա,—արտահայտված է նրա ստեղծագործության մտահղացման ելակետային սկզբունքը:

Կյորես և Գորիս անունները տվյալ դեպքում հանդես են գալիս որպես՝ պատմական-սոցիալական որոշակի իմաստ պարունակող ծածկագրություններ և ոչ թե որպես բնակավայրի սոսկական անուններ:

Ո՞րն է դա հասարակագիտական իմաստով: Նահապետական կենցաղի, ավանդական աշխարհի բարքերի ընդհարումը «քաղաքակրթության» աշխարհի երեսութների հետ, ընդհարում, որ պատմական ակնթարթի մեջ կենտրոնացնում է ժողովրդական կյանքի մի ամբողջ ծանր ու անտանելի ողբերգություն:

Կյորեսի անվան հետ են կապված ժողովրդական առողջ սկզբունքները, կենցաղի գեղեցկությունները, ազգային արժեքները, Գորիսի անվան հետ՝ ամեն ինչ համահարթող «քաղաքակրթության» գորշությունը, ժողովրդական կենցաղի կործանումը, առաջին անվան հետ՝ իսկական կյանքը, հասարակ ժողովրդի ինքնատիպությունը, երկրորդի հետ՝ կեղծ, թափանցիկ, բանաստեղծական փայլից զրկված կենցաղը, առաջինը պատսպարում է ժողովրդական աշխարհի բուն էությունը, նրա պոեզիան ու ոգևորությունը, իսկ երկրորդը հանդես է գալիս որպես այդ նույն կյանքի արտաքին, քայլքայվող պատյանը:

Կյորեսը և Գորիսը որպես պատմական կյանքի տարբեր կողմեր մարմնացնող հասկացություններ, արտահայտում են հայկական կյանքի անցման դարաշրջանի ողբերգական ճշմարտությունը: Գյուղական արդար համայնքի ուսուպիհական անուրջներով ապրող, ավանդապահ, աշխարհին իր բանաստեղծական գագաթից նայող հողագործի կամ արհեստավորի համար, որոնք Կյորեսի հիմնական բնակիչներն էին, դաժան ողբերգություն էր «քաղաքակրթության» դարի՝ «կուպեցի արշինի» ու շինովնիկական միջավայրի բարոյականության աղդեցությունը, որ բերում էր բարքերի ապականություն և, բնականաբար, բնակչության հոգեկան աշխարհում ծնում վախի ու հուսահատության խոռվահույզ տրամադրություններ՝ ժամանակի ավերի երթի դեմ:

Անցման ժամանակաշրջանի ցավագին ողբերգությունը թակունցի «երգիծական հովվերգության» համարյա բոլոր կոնտրաստային պատկերներին ուղեցող, նրանցից անբաժան բովանդակությունն է:

Պատմելով փոխանցման շրջանի՝ նահապետականության ու կյանքի բուրժուականացման սկզբունքների բախման հիմքի վրա առաջացած ողբերգության մասին, Բակունցը, սակայն, եղերերգություն չի կարդում անցյալի հանդեպ: Նա չի արդարացնում ժողովրդական ներքին խավերի ահարեկված տագնապն ու սարսափները քաղաքակրթության նորամուծություններից: Ավելին. նա իր երգիծականքի ոլորտի մեջ է առնում թե հասարակության, այսպես կոչ-

զած; «ընտրյալ» մասին, վերջինիս հասարակական արատները և թե ներքին խավերի միամիտ անուրջների պատմական սահմանափակությունը:

Բակոնցի իրոնիան հարվածում է հասարակության երկու բևեռները հավասարապես՝ և Գորիսի, և Կյորեսի բնակիչներին, միայն թե նրանց կյանքի կոնտրաստների խորությունը համապատասխանաբար առաջ է բերում իրոնիայի տարատեսակներ. մի դեպքում իրոնիայի միջով անցնում է լիրիկական սիրո մեղեդին, մյուս դեպքում՝ էպիկական ատելության լիցքը: «Կյորեսի» այս առանձնահատկության կապակցությամբ ճշմարիտ դիտողություն է արել պրոֆ. Վ. Կիրպոտինը. «Բակոնցի իրոնիան ուղղված է կյանքի երկու բևեռների դեմ, սակայն այդ իրոնիան լնցուն է մաղձով, սարկագմով, ատելությամբ, երբ նրա հարվածներն իշնում են վերնախավի վրա, իսկ եթե հարվածն ուղղված է դեպի ներքեւ, նրանում թրթում է համակրանքի, կարեկցության, ցավի և զայրույթի զգացումը՝ հետամնացության համար, վայրենի սովորությունների համար, պայքարի անընդունակ մարդկանց համար»<sup>14</sup>:

«Կյորես» երգիծական տարեգրության համար որպես բնաբան օգտագործված հռոմեական իմաստումի նշանավոր արտահայտությունը՝ «Օ, ժամանակներ, օ, բարքեր» (Օ, tempora, ο, πορες) յուրատեսակ լույս է գցում Բակոնցի ստեղծագործության իմաստին, ավելի ստույգ՝ բացատրում է թեմայի մեկնաբանության ու նյութի արծարծման ուղղության էությունը: Հին, ավանդական, տոհմական Կյորեսի ու նորածագ, «նորոգվող», ավանդականից ձերբադատված Գորիսի կենցաղային կոլորիտի, նահապետական «ասպետությամբ» սրբագործված հին բարքերի ու նոր ժամանակների աղետավոր բարոյականության կրկնվող և մշտապես սաստկացող սոցիալական բախումների յուրածեղությունները նկարագրելով; Բակոնցը ծավալում է «ժամանակների ու բարքերի» թեման:

Պատմական ընթացքի առաջ բերած ողբերգական երևույթները, դրանցից ամենաէականը՝ «Հողագործների» ազգի անհետացումը «քաղաքակրթության» հղորության առաջ: Բակոնցը դիտում է որպես ժողովրդական կյանքի դեմոկրատական ոգու, հայրենասիրական ոգևորության, աշխատավորական գծերի կորստյան սկիզբ:

Նկարագրված բազմաթիվ դրվագներից և ժամանակագրության էջերում, տողամեջ արված հեղինակային «կողմնակի» դատողություններից ընդգծվում է լեզվի մասին ասված բանաստեղծական ներշնչված խոսքը, որով փակվում է «Կյորեսը»: Դա անմիջական ու սերտ առնչություն ունի գրվածքի գաղափարական մտահղացման հետ: Բուն պատմությանը շմերվող, «կողմնակի» մոտիվը, հեղինակային ընդգծված վերաբերմունքի շնորհիվ, դառնում է գրքի կենտրոնական մոտիվներից մեկը:

Ի՞նչ առումով է ժողովրդական լեզուն այդպիսի անհրաժեշտ ու կարևոր, կարելի է ասել՝ վճռական տեղ գրավում Բակոնցի գրվածքում: Պատասխանը պետք է փնտրել այն իրականության մեջ, որի հեռացած պատկերներն է ոգեկշում հեղինակը:

Հին բԵյերի շառավիղները, հարուստ վաճառականները, լինովնիկական վերնախավը,—պատմում է ժամանակագիրը,—իրենց էության մեջ կրում են այնպիսի հատկանիշներ, որոնք ավելի ու ավելի են հեռացնում նրանց ժողովրդական աշխատանքը նվիրական արմատներից: Նրանց համար արդար վաստակն ու ազնիվ աշխատանքը խորթ հասկացություններ են: Նրանք հավելյալ տարր են՝ ժողովրդական առողջ օրգանիզմի վրա պատվաստված, որովհետեւ

Հեռացել են ժողովրդական կյանքի ակունքներից, ժողովրդի հոգևոր պահանջմունքներից և, բնականաբար, խոսում են կամ «շալ հայերենով», կամ ոռւսերենի ու թուրքերենի խառնուրդով, կամ գրոց լեզվի անկենդան ու անկյանք ոճերով, ինչպես Սյունյաց հին թագավորությունը երազող Պավլի բեյ Օրբելյանը և «Տեր զի բազում» անոնավ հայտնի հոգևորականը:

Իսկական, կենդանի ժողովրդական խոսքը՝ կյուրեսերենը: Բակունցը հակադրում է հասարակության «ընտրյալ» մասի լեզվի խայտարղետությանը, վերջինիս «հույժ քաղաքավարի ու բլաղարողնի» լեզվին, — դրանով իսկ, լեզվական արժեքավորման միջոցով, հասնելով խոր ընդհանրացման՝ ցածր ու վերին խավերի սոցիալական նկարագրի, նրանց «հոգևոր շահերի» տարբերության, հայ ժողովրդի ապագա կառուցվածքում մայրենի լեզվին վերապահված առաջնակարգ դերի մասին:

«Լեռնային քամու նման դեպի երկինք պտույտ անող» մայրենի բարբառի՝ ժողովրդական լեզվի պահպանման ու զարգացման հարցը, այնքան կըրքուտությամբ պաշտպանված դասական հայ գրականության մեջ՝ Խաչատուր Աբովյանից մինչև Եղիշե Չարենց, — կենտրոնական այն հանգույցներից մեկն է, որով անցած-գնացած կյանքը նկարագրող «Կյորեսը» արձագանքում էր նաև ժամանակակից հարցերի:

Նահապետական կյանքի ու «քաղաքակրթության» մենամարտը, երբ առանձնապես վիթխարի շափերի էր համում գյուղացիության՝ հողից կտըրվելու և օտար հորիզոններ լվելու, կովկասյան էլգորադոն՝ թաքուն, մարդկային հոծ զանգվածներով լցնելու ընթացքը, Բակունցը ներկայացնում է ավելի լայն պլանով, ոչ թե իբրև «քաղաքակրթության» և «ազատ բնության» ընդհարում, այլ որպես սոցիալական մի այնպիսի կերպարանափոխություն, որը դառնում է գյուղացիության դանդաղ ու տանջալից մահացման, աշխատանքի կործանման սկիզբ:

Բակունցն ըմբռնում էր պատմական շարժման ուղղությունը: Ժամանակագրության էջերում այդ պրոցեսը նա արտահայտում է հետեւյալ, դրամատիզմով հագեցած նախաղասությամբ: «Հողը հողագործի ձեռքից գնում էր և դա անխուսափելի էր, ինչպես մահը, ինչպես մայրամուտը...»:

«Կյորեսը» ժանրային կառուցվածքով ու ձեռվ հիշեցնում է միջնադարյան պատմական քրոնիկոնի ժանրը: Տարեգործ հեղինակը պատմիչի ռաստվածային հանդարտությամբ» ու մանրանկարչի համբերությամբ քայլ առ քայլ՝ անշտապ ու մանրամասն, ծավալում է գավառական իրականության սոցիալական բազմատեսակ երեւութների, այդ կյանքի հերոսների, նրանց ընտանեկան ու հասարակական կենցաղի, գործերի ու վաստակների, սոցիալական ու հոգեբանական հակասությունների մանրակրկիտ նկարագրությունը:

Զանգեզուրյան գավառական կյանքի ակնարկները, ինչպիսիք են «Կյորեսի» տասնմեկ գլուխներից յուրաքանչյուրը, միանում են իրար որպես լայնատարած շղթայի առանձին օղակներ, որոնց խնդիրն է կյանքի իրական, բնական, շմիշնորդված սյուժեի վերարծարծումը:

Քաղաքի բնակիչների կազմը, որ նկարագրում է Բակունցը, բնականաբար, միասեռ չէ: Նրանց մեջ կան «հերոսներ», որոնք իրենց ձեռքն են վերցրել հասարակական կյանքի զեկը և կատարում են մեկը մյուսից անմարդկային արարքներ: Կան նաև այնպիսի հերոսներ, որոնք հանդիսանում են կյանքի դրական սկզբունքների պաշտպանները: Հերոսների այդ երկու, իրար հակառակ դրվող ու ժխտող խմբերի ներկայացուցիչները զլխալոր ներսով՝ կյանքի

Հորձանուտի մեջ են,—բոլորն անհրաժեշտ գաղափարական բեռով. նրանցից յուրաքանչյուրի միջոցով արտահայտվում է ժամանակի կամ միջավայրի այս կամ այն առանձնահատկությունը, հասարակական հոգեբանության այս կամ այն կողմը, պատմական շարժման այս կամ այն մոտիվը:

«Կյորեսի» մեջ նկարագրված մարդկանց, բարերի, սովորությունների ու ելիստական ծայրագույնս արժանահավատությունը պայմանավորված է նրանով, որ Բակոնցի նկարագրական ձիրքը ղեկավարում է ճշմարտության խստապահանջ զգացմունքը: Այդ նույն զգացմունքն է ղեկավարում նաև Բակոնցի իրոնիան, որի միջոցով գրվածքում առանձնանում են ողբերգության դաժան ճշմարտությունը՝ լիրիկական մեղմ երանգների կողքին, կծու, սարկաստիկ, անողոք ժաղը՝ հումորի տիխուր շիթերի կողքին, գավառական քաղաքի առօրյա պրոզան՝ ոռմանտիկական բարձր ոգեշնչման կողքին, կատակերգականը՝ ողբերգականի կողքին:

Ողբերգական իրոնիան հանդես է գալիս և որպես ժխտող սկզբունք, և որպես բացասման ուժ, և որպես լիրիկական վերելքի նախապայման:

«Բակոնցը հիանալի տիրապետում է իրոնիայի վարպետությանը,—գրում է Վ. Կիրպոտինը,—իսկ իրոնիայի արվեստը դժվարին արվեստ է: Իրոնիան ի սեր իրոնիայի շատ հեշտությամբ կարող է վերածվել էժանագին զևկեկության կամ սուբյեկտիվ սկեպտիցիզմի, որ ամեն ինչ դարձնում է ժաղըի առարկա և հաստատում հող շունի իր ոտքերի տակ: Բակոնցի իրոնիային ուղղություն է տալիս նրա աշխարհայցքը»<sup>15</sup>:

## 7

Անցնելով արձակի կարճ ձևերի՝ ակնարկի ու պատմվածքի վարպետության գպրոցը, հմտանալով «գրական արհեստի» գաղտնիքների մեջ և իբրև արվեստագետ հասունանալով, արդեն 20-ական թվականների վերջում Բակոնցը և երթին պահանջ է զգում մանրանկարից թևակոխելու մեծակտավ արձակի բնագավառը:

Մեզ անհայտ ու անծանոթ է Բակոնցի ստեղծագործական լաբորատորիան. շեն պահպանվել նրա գրվածքների ձեռագիր օրինակները, նրա դիտողությունների ու մթերումների ծոցատետրերը, նրա գրառումները՝ նյութի, թեմայի, ժամանի, ոփթմի ու ոճի շուրջը: Զեկան Բակոնցի երկերի գրության կոնկրետ շարժառիթների վրա լրացուցիչ լույս սփռող կենսագրական նյութեր, սակայն մի բան ակներև է, որ գրականության մեջ Բակոնցը եղել է իսկական աշխատավոր, որ երկունքի ծանր ցավերով են ասպարեզ եկել նրա հղկված, քյուրեղացած գրվածքները, և գրողը, ունենալով կայում ու անբասիր ստեղծագործական վարքագիծ, հարազատ է մնացել բարձր արվեստի կոչմանը:

Թե իր պատմվածքները և թե հատկապես էպիկական մեծ կտավները՝ «Կյորես» պատմական-երգիծական քրոնիկոնը, «Կարմրաքար» և «Խաչատուր Արովյան» վեպերը կերտելուց առաջ Բակոնցը վիթխարի գործ է ստանձնել՝ թե անցած ժամանակների հասարակական-քաղաքական հարաբերությունների, սոցիալական կառուցվածքի, նյութական միջավայրի, կենցաղային-ազգագրական կոլորիտի ուսումնասիրության, թե այդ գրվածքների գաղափարական կոնցեպցիան ճշտելու, կառուցվածքն ու ձեր որոշելու, լեզվական-հնչանգային ոփթմը գտնելու համար:

Այդ երեք կապիտալ գործերից, դժբախտաբար, Բակունցը ամբողջացրեց միայն զանգեղուրյան ակնսրկների շարքը՝ «Կյորեսը», իսկ «Կարմրաքար» ու «Խաչատուր Աբովյան» վեպերը մնացին անավարտ և ընթերցող հասարակությանը հայտնի դարձան պարբերական մամուլի էջերում հրատարակված առանձին բեկորներով։ Չտալով ամբողջի լիակատար պատկերը, վեպերի այդ բեկորները, այդուամենայնիվ, պարզում են դրանք ստեղծագործող վարպետի աշխատանքի ուղղությունը, նրա մտահղացումների և կատարման յուրահատկությունները։

Հենվելով դարձյալ գյուղաշխարհի, նրա բնակիչների սոցիալական հոգեքանության և կենցաղի անդուգական իմացության վրա, Բակունցը պատրաստվում էր իր երկարամյա զննումները, իր տպավորություններն ու դիտողությունները, իր քաղաքացիական իդեալները հանրագումարի բերել մի կապիտալ երկի մեջ։ Այդ մոնումենտալ գրվածքը լինելու էր «Կարմրաքարը», որը նույն իրականությունն է պատկերում, ինչ որ բակունցյան պատմվածքների մի զգալի մասը, միայն ավելի ընդարձակ տեսադաշտով և ստեղծագործական ավելի լայն հայեցակետով։

«Կարմրաքարի» հատվածներում ավելի, քան Բակունցի մի ուրիշ ստեղծագործության մեջ, արտահայտվել են նրա բազմաշնորհ ձիրքի հատկանիշները՝ կյանքի դրվագների իմաստավորման արվեստն ու հոգեբանական վերլուծման գարպետությունը, լիրիկական «սուբյեկտիվիզմն» ու էպիկական տարեքը, երգիծական հնարագիտությունն ու գեղարվեստական պատկերի նկարչական թանձրացումը։

«Կարմրաքարը» արտացոլում է դարասկզբի՝ հեղափոխության նախօրյակի հայ գյուղի սոցիալական իրականությունը, այսինքն՝ այն ժամանակաշրջանը, երբ սրբնթաց արագությամբ ծայր առած կապիտալիստական արշավը արդեն մուտք էր գործել նաև ոռոսական կայսրության հեռավոր ու խոր անկյունները, ջնշելով նահապետականության սրբագործված կապերը և դրանք փոխարինելով հակամարդկային արատներով։

«Կարմրաքարը» այն ժամանակաշրջանի պատկերն է ներկայացնում, երբ ոմանք «հարստանում էին, ոմանք աղքատանում։ Հարստացողը մի աշք ավելի էր տուն շինում, կամ մի կտոր հող առնում, զույգ եզր դարձնում երկու-երեք, ընկնում՝ բարձրանում։ Մեկը մյուսին ոտնատակ էր տալիս։ Կովում էին, գլուխ շարդում, պատահում էր, որ մարդ էին սպանում։ Ոմանք ուրիշ քաղաքներ էին գնում վաստակի և այդ վաստակը, որպես հնչուն արծաթ, քանդում, խարխլում էր այն, սպասում էր թեթև շնչի՝ փլվելու համար։»

«Այն ժամանակ քաղաքը մեծ չէր, —դատում են Բակունցի նկարագրած գյուղացիները, —դերձակը դուքսն չուներ, ձեռքին մի ասեղ էր, մի մկրատ։ Տնետուն ման էր գալիս և աշխատում, և տանն էլ հաց ուտում։ Երեք օրում մի արխալուղ էր կարում։ Քաղաքում մի քանի դուրքար կային և ներկարար, բայց դուքսն զատ չէր։ Թավրիզից ուղարկի քարավանով ճոթ ու կտոր էին բերում, շիլեյի, գյուղի արխալուղ, շաքարը փափուկ էր, մի քիչ դեղին... Հիմա շիբանի որդի Մկրտումի խանութում տասը փոթով էլ կարելի է շաքար առնել և այն էլ լավը, կապույտ խալերով, շուտ շհալվող... Նրանք հիմա շիլեյ շեն ժախում... ուղող շկա։»

Առաջ նեղ կածան էր, բայց քանի-քանի մարդ ծեծեցին ու կածանը մի քիչ լայնացավ, ճանապարհ շինվեց մինչև քաղաք։ Իսկ ինչ է դառել այդ քա-

դաքը. ինչ տներ, ինչ խանութներ, ո՞ւր է առաջված դերձակը, որ մկրատը թե՛  
տակ տնետուն էր ման գալիս:

Ճանապարհը բացվեց: Կարմրաքարից շատ մարդ դուրս գնաց: Ավան ամին  
մեկ-մեկ հաշվում էր նրանց, որոնք հեռացել էին գյուղից: Տասներկու հռովի  
թափու էր, Սատուրի թոռը Պետրոպոլի է լինում»:

Կածանը դառնում էր ճանապարհ: Այս դիտողությունը գյուղական բնա-  
կարի ծեափոխության սովորական պատկերում չէ, այլ հագեցած է պատ-  
մական խոր բովանդակությամբ: Այդ «ծեափոխությունը» գյուղաշնարհի  
պատմության, հայ գյուղի ներքին կյանքի հեղաբեկման ընթացքն է ամփո-  
փում իր մեց: Մաճ ու արորին, իր հողի պատառիկին սոցիալապես գամված  
գյուղացու համար բնանկարի փոփոխությունը ամենամեծ ողբերգությունն էր,  
նրա կարծեցյալ «ազատության» կործանման սկիզբը, եռոր ճանապարհը՝  
«անազատության» ճանապարհն էր:

Պակաս կարեոր չի նաև վեպում արծարծված այն թեման, որը կապվում է  
ժողովրդական առողջ տարերքի, ժողովրդական խավերի զգացողություննե-  
րի հետ:

Պահպանելով ժամանակի պատմական ու սոցիալական հատկանիշները՝  
հայ գյուղի բնութագրության մեջ, ժամանակաշրջանը դիտելով զարգացման  
ընթացքում, Բակունցը միաժամանակ կանգ է առնում նաև հայ գյուղացիու-  
թյան կենցաղի լուսավոր ու առաջավոր գծերի վրա, ժողովրդական կենսափի-  
լիսոփայության ու վարքագծի այն երկույթների վրա, որոնք կապվում են  
հայրենի հողի, աշխատանքի, մարդկայնության, բարոյական ազնվության  
հասկացությունների հետ: Այստեղ այս գրվածքում նույնպես, Բակունցը ար-  
ծարծում ու զարգացնում է իր ստեղծագործության առաջատար թեման, բա-  
ցում է «մոռացված աշխարհի», հասարակայնորեն «անզարգացած իրակա-  
նության» բանաստեղծական ու մարդկային բովանդակությունը, ժողովրդա-  
կան կյանքի՝ ապագայի համար պիտանի արժեքները:

Հայ ժողովրդի դարավոր պատմության ամենանշանավոր երկույթներից  
մեկն է Խաչատուր Աբովյանը, իր գործի պատմական արժեքով հավասարակոր  
մեսրոպյան նշանագրերի գյուտին, Վարդանանց ճակատամարտին, զեյթուն-  
ցիների ազատագրական պատերազմին:

Խաչատուր Աբովյանի սխրագործությունը՝ նրա հրեղեն գրիչն ու ազգային  
ինքնագիտակցության պատգամը, նշանակալից գեր խաղաց հայ հասարակա-  
կան կյանքում՝ հեղափոխական գործիշների ու մտավորականների շարքերում,  
Միքայել Նալբանդյանից մինչև Ստեփան Շահումյան, Պերճ Պոռշյանից մինչև  
Եղիշե Զարենց:

Ցուրաքանչյուր գրող ունի իր նվիրական անունը ժողովրդի պատմության  
մեջ: Ակսել Բակունցի համար հայկական պատմության ամենագրավիչ կեր-  
պարն էր Խաչատուր Աբովյանը, որի մասին նա ասում է. «Հիանալի ֆիգուրա՝  
ոչ միայն իր գրական նշանակությամբ, այլև իր կյանքով»:

Մեծ խորհուրդ է պարունակում այն փաստը, որ Բակունցի ստեղծագոր-  
ծության կարապի երգը եղավ ազգային կյանքի վերածնության և ժողովրդի  
քաղաքական զարդում էր շեփորահար Խաչատուր Աբովյանին նվիրված անա-  
վարտ վեպը:

Այդ վեպից «Խորհրդային գրականություն» հանդեսի 1935 թվականի երեք  
համարներում (№ 1, 2, 3) տպագրվել է երեք ամբողջական, ավարտված  
հատված:

«Ալբովլյանի պրոբլեմը» հարյուրամյա անցյալ ուներ հայ հասարակական ժողովականի պատմության ուղիներում։ Թե նախասովետական ժամանակաշրջանում և թե մեր օրերում մեծ գրողի, խիզախ մտածողի, լուսավորական շարժման պարագլիսի և իմաստուն քաղաքագետի ժառանգությունն ու անձնավորությունը ստացել է ամենատարեր մեկնաբանություններ՝ սկսած «կղերամիտ ու կրոնասեր» գործի պիտակից մինչև հայ բուրժուական շրջանների գաղափարական էքսպանսիան փառաբանողի նախատինքը։ Արովյանի անձնավորության և նրա անհայտացման դարավոր առեղծվածի պատվանդանի վրա իրենց գուսակարգային» նիղակներն են ճոճել հայ կղերականության քուրմերն ու լիրերալ հրապարակախոսները, «Շոգեբանական դպրոցի» տնաբույս մետրերն ու գֆատալիստական նախախնամության առաջալները, ստեղծելով հակագիտական տեսությունների ու գաղափարների մի թանձր շերտ...»

«Միստիկ հայրենասեր», որ հայրի ազատագրական ակնկալությունները կապել է ոչ այլ բանի, քան նախախնամության ողորմածության հետ, չունենալով քաղաքական քիչ թե շատ որոշակի ծրագիր ու շահագրգոռություն։

«Զգացմունքների աշխարհի մեջ» տարրութերվող, գրգոված անձնավորություն, որի մթագնած միտքը անկարող էր կողմնորոշվել ժամանակի հասարակական բարդ անցուղարձերում։

Հայերի հատուկ պատմական առաքելության՝ ազգային մեսիանիզմի ու բացառիկության քարոզիչ։

Յարիզմի գաղութային քաղաքականության անվերապահ ազդարար ու սպասավոր, որն իր գաղափարական ըմբռնումներով իշել է մինչև ցարական սատրապների ձգտումների աստիճանը։

Ժամանակի հասարակական-քաղաքական գոտեմարտից հեռու կանգնած ու առհասարակ պայքարի անընդունակ հնագանդ պաշտոնյա։

Հաշտեցման քարոզիչ՝ թագավորական պետության խոնարհ հպատակի գիրքերում կանգնած։

Եվ այն, և այն։

Այսպիսի՝ պարսավագրության շափերի հասնող գույներով էր նիրկայացնում նաշատուր Արովյանի գործն ու անձնավորությունը հին պատմագրությունը՝ ժողովրդական կյանքի վերածնության ու ազգային զարթոնքի ազդարարի բարձունքից նրան «իշեցնելով» մինչև «դասակարգային կախվածության» հահիճը...»

Ա. Արովյանի աշխարհայացքի և առեղծագործության պատմական արժեքի գնահատության հարցում նախահեղափոխական շրջանում արտահայտվել է նաև տրամադրուեն հակադիր ըմբռնումը, որը նրան կապում է ժողովրդական կյանքի նվիրական արմատների, հայ դեմոկրատիայի արմատական շահերի ու տրամադրությունների հետ, նրա գործի մեջ անսահմանորեն բարձր գնահատելով հայկական «մեռած կյանքի» նորոգման քաղաքացիական կրթությունը, վիթխարի հայրենասիրությունն ու ժողովրդասիրությունը, աննահնաջ ու անվարան պայքարը խավար ժամանակների ու հանգամանքների դեմ՝ հանուն հայ ժողովրդի ազգային ու սոցիալական կյանքի վերածնության։ Այս գնահատությունը, ծայր առնելով ժողովրդի «մտածմունքներից»՝ ժամանակակիցների զրուցներից ու պատկերացումներից, Պ. Պուշյանի և Մ. Նալբանդյանի, Ղ. Աղայանի և Ստ. Ոսկանի միջոցով հասնում է մինչև Հովհաննես Թումանյան և Ավետիք Խահակյան, մինչև Վահան Տերյան ու Ստեփան Շահումյան, —որոնք հիմնական շեշտը զնում են ոչ թե Արովյանի համար անխուսա-

փելի պատմական թուղությունների, այլ նրա ժառանգության առաջադիմական-դեմոկրատական էության վրա:

20-ական թվականներին նորից նոր «Արովյանի հարցը» անցնում է «գաղափարական վերանայման քավարանով»... Եվ նորից Արովյանի վաստակի վրա, այս անգամ արդեն գուհիկ-սոցիոլոգիզմի շանքերով, բարդվում են նոր մեղքեր, նորից աղճատվում է Արովյանի դիմապատկերը: Մասնավորապես շրջանառության մեջ է մտնում «գաղափարական նահանջի» հին ակոնքներ ունեցող լեգենդը,—իբրև թե Արովյանը, կյանքի վերջին շրջանում, համակերպվում է իրականությանը, վերանայում է իր նախկին հայացքներն ու փարում քրիստոնեական գաղափարախոսությանը:

30-ական թվականների սկզբին, երբ անցյալի պատմական արժեքների գնահատության ու գիտական մեկնաբանության հարցը առանձնապես սուր կերպով էր դրվում,—նորից ասպարեղ է գալիս և. Արովյանի պատմական դերի, նրա աշխարհայացքի ուղղության, նրա գրական վաստակի ու անձնավորության վերագնահատության խնդիրը:

Անհրաժեշտ էր մարքսիստական գիտության լույսի տակ քննել այդ ամենը, ասել նոր ժամանակների ստուգված խոսքը Արովյանի մասին, ցըել պատմության մշուշը, պարզել առեղծվածներն ու գաղտնիքները, և ոչ թե եղածներին ավելացնել նորերը: Անհրաժեշտ էր Արովյանի գործն ու աշխարհայացքը միանգամից դիտել երկու պատմական իրականության լույսի տակ. այն իրականության, որի ծնունդն էր նա և այն իրականության, որ իր խոսքը պետք է ասեր երա մասին: Բնական է, որ այսպիսի մոտեցումը հնարավորություն կտար Արովյանին տեսնելու առանց «քրեստոմատիկական ողորկության», նրա վիթխարի ուժով ու պատմական առանձին թուղություններով:

«Արովյանի հարցի» գիտական լուծմանը մասնակցում է նաև Ակսել Բակունցը, ստանձնելով պատմաբան-բանասերի դեր: 1932 թ. Արովյանի «անհայտացման» առեղծվածի մասին նա հատուկ գիտական հետազոտություն է գրում և հրատարակում առանձին գրքով: Աշխատությունը կոչվում է «Խաչառու Արովյանի «անհայտ բացակայումը» (արխիվային նոր վավերագրերի ու անհայտ նամակների հիման վրա գրեց Ակսել Բակունցը):

Այս ուսումնասիրության հրապարակ գալու բուն դրդապատճառը եղել է հաշատուր Արովյանի մասին գրվելիք վեպի ծրագիրը: Փաստն ինքնին խոսում է այն մասին, թե ինչքան լրջորեն էր Բակունցը մոտենում առաջադիր ստեղծագործական խնդրին, որքան պատասխանատու էր զգում պատմական վեպի գեղարվեստական ճշմարտությունը պահպանելու հարցում: Ծնվելով ստեղծագործական ծրագրի պատմական ակունքները բացելու միջոցին, Բակունցի ուսումնասիրությունը, սակայն, «վիպական նկատառումներով» ու վիպական խնդիրներով շի սահմանափակվում: Այն միաժամանակ, ամբողջ սրությամբ և այդ տարիների համար հազվագյուտ բարեխնդությամբ առաջ էր քաշում Արովյանի գործի ու անձնավորության շուրջը գոյություն ունեցող և արդեն հնացած տեսությունների վերանայման խնդիրը:

Անկարենոր շէ այն փաստը, որ Բակունցի աշխատությունը սովետական ժամանակաշրջանում լույս տեսած առաջին մենագրությունն է Արովյանի մասին և սովետական արովյանագիտության աշքի ընկնող նշանաձողը:

«Խաչառու Արովյանի «անհայտ բացակայումը» ուսումնասիրությունը նվիրված է երկու գլխավոր, արմատական պարզաբանման:

Առաջին հարցը Աբովյանի «անհայտ բացակայումից առեղծվածի նոր բացատրության փորձն է, երկրորդը՝ Աբովյանի աշխարհայացքի ու քաղաքական դիրքորոշման վերագնահատության խնդիրը։ Առաջին հարցի պատասխանը Բակունցի գրքի թուլությունն է՝ «աքիլլեսյան գարշապարը», երկրորդինը՝ նրա կարևորագույն ծառայությունը աբովյանագիտությանը։

Որո՞նք են Բակունցի ուսումնասիրության այդ երկու կողմերը։ Աբովյանի անտիպ հիշատակարանների, նամակագրության, նրա գեղարվեստական ստեղծագործության առանձին տվյալների, նորահայտ արխիվային վավերագրերի, ժամանակակիցների հիշողությունների ու ժողովրդի մեջ շրջող զրուց-ավանդությունների հիման վրա Բակունցը մեկ առ մեկ քննում է Աբովյանի անհայտացման վերաբերյալ գոյություն ունեցող, հանրածանոթ ու անծանոթ ենթադրությունները («սև կառեթի»՝ քաղաքական աքսորի լեգենդը, ինքնասպանության՝ «գլուխը մահու տալու» տեսակետը, սիրային հողի վրա նրա դեմ կազմակերպված դավադրության վերսիան և այլն) ու առաջադրում է «անհայտ բացակայումից կամ «կամովին հեռանալու» մի նոր տեսակետ, որը հանգում է հետեւյալին։

Աբովյանն իր կյանքի վերջին շրջանում հուսախաբվում է ուսուական զենքի հաղթությունից, առհասարակ Ծուսաստանի դիրքորոշումից սպասած իր քաղաքական-սոցիալական ծրագրերի ու ակնկալությունների մեջ, և առնելով «անհանգիստ ժամանակի»՝ 1848 թվականի եվրոպական հեղափոխության համբավը, «շարժվում է տեղից», հայ փախստական գյուղացիության մի մեծ խմբի հետ հեռանում է «ուսուական պետության սահմաններից»՝ Արաքսի մյուս ափը։ Աբովյանի «Հարկադրյալ փախուստը», նրա գաղափարական «շրջադրը», Բակունցը լի կապում որևէ քաղաքական խմբակցության գործունեության հետ, այլ նրա անցումը դիտում է որպես «Հայաստանի ներսի մասում»՝ պապենական հողերում երկրագրծությամբ զբաղվելու նպատակով արված քայլ։

Բակունցը գրում է, որ Աբովյանը կյանքի վերջին շրջանում «անձնական հուսախաբություն» էր ապրում, որի գիշավոր պատճառն այն էր, որ «ցարական ուժիմը հայոց ազգի»՝ այսինքն նախկին «Հայկական մարզի» գյուղացիության համար ակնկալած բարիքների փոխարեն բերեց կնուտ և աղքատություն»<sup>16</sup>։

Հուսախաբությանը հետեւց «փախուստը այն միջավայրից, որտեղ այլև ոչ մի կովան չուներ»<sup>17</sup>։

Իսկ ի՞նչ գործ ունեն այստեղ 1848 թ. եվրոպական շարժումները։ Այս հարցին Բակունցի տված պատասխանից պարզվում է, որ «Հեղափոխության լուրը միայն առիթ էր, արտաքին հարված, որը նրան տեղից շարժեց այնպիսի նպատակով, որ անմիջական ոչ մի կապ չուներ 1848 թվի հեղափոխության հետ»<sup>18</sup>։

Իսկ փաստացի ի՞նչ տվյալներով է պարզաբանում Բակունցը Աբովյանի «շրջադարձը»՝ նրա հարկադրյալ փախուստը։ Նա հենվում է գերազանցորեն այն մի քանի վկայությունների վրա, որ պարունակում է «ժողովրդի մտածմունք» կոչված գրի առնված փաստաթութը (նամակը)։ Եթովյանի «չերենալու պատճառի մասին» նամակագրի ենթադրյալ հույսը՝ «ումուտը», թե մի օր Աբովյանը կերեա, նրա հավաստիացումը, թե նրան տեսել են այն վայրում (Ակոսի, Կարս, Դյանջա և այլն), Բակունցը դարձնում է «զորեղ փաստարկներ», խորամուխ լինելով դրանցում ընդգծված ցանկության, հույսի և

ոլ թե հավաստիության մեջ: Մերձակա մյուս փաստարկը, թե պաշտոնական գրագրություններում Արովյանին դիտում են որպես «անհայտ բացակայող» չայդպիսիք էին կոչվում նրանք, «որոնց մասին հաստատ տեղեկություններ ունեն, թե անվտանգ անցել են սահմանը»), նույնպես չէր ամրապնդում առաջարկված հիպոթեզը: Եվ, վերջապես, Բակունցի մեջքերած գերմանացի ճանապարհորդների տեղեկությունները՝ Մորիկ Վագների և Ֆր. Բողենշտենի թողած վավերագրերը, ընդգծում են Արովյանի անբավականությունն իր միշտվայրից ու նրա «անանձնական» հուսահատությունը, բայց չեն բացատրում անհայտացման նոր ուղիներ:

Բակունցի նոր տեսակետը քննություն շրունեց:

Պատմաբան Աշոտ Հովհաննիսյանը 1933 թ. հրատարակած «Արովյան» պատասխան գրքում իրավացիորեն նոր վերսիան համարում է ավելի «վիպական-բեկետրիստիկական», քան գիտականորեն համոզիլ տեսակետ, որ առաջ շի շարժում Արովյանի «անհայտացման» առեղծվածի լուծումը, այլ «Արաքսի մի ափից տեղափոխում է մյուս ափը»<sup>19</sup>, —դարձյալ անպատասխան թողնելով հարյուրամյա վաղեմություն ունեցող գաղտնիքը: Պատմաբանը սրամտուրեն Արովյանի կորսույան առեղծվածը համեմատում է մեռնող և վերադարձող հերոսների (Արտավազդ, Մհեր և այլն) ժողովրդական առասպելաբանության հետ և դրանով բացատրում «ժողովրդի մտածումների» մեջ անդրադարձած «հեռանալու և մի օր երևալու մոտիվը»:

Բակունցի առաջ քաշած էմիգրացիայի տեսակետը և փաստական առումով, և մանավանդ՝ իրեւ եղրակացություն, սխալ էր ու գիտականորեն շիմնավորված: «Առեղծվածի» լուծման նախկին ուղիներին բանասերը հավելում էր մի նոր առեղծված...

Իսկ ո՞րն է Բակունցի ուսումնասիրության դրական տենդենցը՝ «իմախուսաթիւ» լեգենդին և առհասարակ հնացած տեսակետներին ներուստ հակադրվող կոնցեպցիան: Դա Արովյանի ժառանգության ու գործունեության ներքին բովանդակությունը որոշելու հարցում Բակունցի հանդես բերած պատմական խորաթափանցությունն է:

Հարուստ փաստարկումներով ու վավերագրերով ներկայացնելով Արովյանի հերոսական մաքառման ուղին, նրա պայքարը ընդդեմ ցարական շինով-նիկության, էջմիածնի հոգեորականության, հայ վաճառականության «ոսկե գահի», Բակունցին այդ ակտիվ ու հետևողական օպոզիցիայի հիմքում տեսնում է գյուղացիական դեմոկրատիայի հետ Արովյանի ունեցած մերձավորագույն առնչությունները:

Աշոտ Հովհաննիսյանը լեգենդ ու նախապաշարմունք է դիտում Արովյանին «գյուղացիական գաղափարախոս» համարող տեսակետը:

Այս բանավեճի մեջ գործ ունենք մի հետաքրքրական երևույթի հետ. Աշոտ Հովհաննիսյանը, որ այնքան հմուտ կերպով ու փայլուն տրամաբանությամբ հերքեց «փախուստի» տեսակետը, — այդ ամենը կատարում է հակապատմական նախադիր սխեմայի համաձայն Արովյանի և հայ դեմոկրատիայի մեջ «գաղափարական խրամատը» հաստատելու նպատակով:

Պատմաբանը Արովյանին համարում է ոլ թե ժամանակի քաղաքական մթնոլորտի զոհ, այլ նրա ողբերգությունը, նրա «վերապրած հոգեկան գալարումները» դիտում է որպես դավանած գրական ուղղության՝ ոռմանտիզմին բնորոշ «պաթալոգիկական անդրադարձում»:

«Եաշատուր Աբովյանի անհայտ բացակայումը» հետագոտությունը՝ վեւրագնահատության սլաքով, յուրատեսակ տակտիկական քայլ էր Բակոնցի կողմից՝ ավելի խոր, իսկական արմատներով ու բնորոշ կապակցություններով հասկանալու Աբովյանի անձնավորությունն ու նրա ժամանակը, ավելի ճիշտ բմբոներու պատմության զարգացման գլխավոր ուղղությունը՝ հակառակ յուններով ու զիգզագներով, և ճիշտ որոշելու նշանավոր անհատի պատմական գործողության էությունը:

Դիտնական-բանասերը նախապատրաստեց-նախորդեց արվեստագետին ոչ միայն սեփական գեղագիտական կոնցեպցիայի որոնումներով, այլև վիպական անհրաժեշտ նյութի հայթայթումով։ Ուրիշ խոսքով՝ գիտական ուսումնասիրության արդյունքները կոշված էին Բակոնցի արձակը սննելու ոչ միայն գաղափարներով, այլև պատմական հավաստիություն ներշնչող աղբյուրներով, փաստերով ու եղելություններով։

Ի՞նչ նշանակություն էր տալիս Բակոնցը պատմական աղբյուրներին, ինչպիսի՞ հարաբերություն էր նա ենթադրում պատմական փաստի, իրական տվյալի ու գրական հորինումի միջև, ինչպիսի՞ մոտեցում էր մշակել ժողովրդի անցյալին նվիրված գրվածքի պատմական նյութի ճշգրտության հարցի կապակցությամբ։

Այս հարցերի պատասխանների համար ունենք երկու կարևոր աղբյուր։ Առաջինը՝ անավարտ վեպի «Տատվածներն են, երկրորդը՝ Ն. Վ. Գոգոլի «Տարաս Բուլգա» էպոպեայի հայերեն թարգմանության համար Բակոնցի գրաժամանն է։

Անդրադառնալով Գոգոլի գրվածքի ստեղծագործական պատմությանը, նրա ակունքներին ու կազմավորման տարրերին, Բակոնցն ասում է. «Տարաս Բուլգայի» մեջ հիշատակված հերոսներից շատերը ոչ միայն պատմական անձնավորություններ են, որոնց մասին Գոգոլը ստեղծեկություններ է հավաքել հին տարեգրությունից, այլև ոմանք եղել են հեղինակի նախահայրերն ու նրանց մասին ավանդել է տոհմական քրոնիկան... Գոգոլի ստեղծագործության համար պատկերների, ոմի և նյութի անսպառ աղբյուր էր այն անգիր վեպերն ու զրուցները, որ նա լսում էր բանդուրիստներից ու շնորհալի պատմող ծերունի կողակներից։ Եվ «Տարաս Բուլգայի» շատ էջեր, հատկապես պատերազմի նկարագրությունները, ամբողջովին, երբեմն ընտրությամբ, առնված են այդ անհայտ պատմիչների ավանդած պատմություններից»<sup>20</sup>։

Գոգոլի երկի իրապատում հիմքերը մատնացույց անելով, Բակոնցը շիմուանում նշել նաև «ոչ իրապատում» պարագան, բովանդակության այն հարստությունը, որ «Տարաս Բուլգան» դարձնում է գեղարվեստական խոսքի անկրկնելի կոթողներից մեկը։ «Նրա (Գոգոլի—Ս. Ա.) հանձարեղ երեակայությունը պիտի ստեղծեր և հագենար այն ամենով, ինչ ամենից շքնաղն է «Տարաս Բուլգայի» մեջ։ ստեղը՝ արևով ողողված, նրա անսահման հարթությունը, որտեղ Գոգոլի երեակայությունը, ինչպես սանձակուած նժույգ, կարող էր անարգել խայտալ. նա կարող էր ճախրել, ինչպես հպարտ ուրուր, նա Հողմի նման կանցներ Դնեպրի առափնյա եղեգների վրայով, վարար ջրերի հետ, կաղմկեր Մեծ ծովի վրա և ոչ մեկը չի թողել այնպիսի էջեր, որտեղ լիներ այնքան արև, այդպիսի սանձարձակ տարերք և այդ տարերքի նման դյուցազններ»<sup>21</sup>։

Այս մեջբերումներից պարզ է դառնում, որ «Տարաս Բուլգայի» գրավիչ հատկություններն են դիտվում, մի կողմից՝ պատմական նյութի հավաստիու-

**թյունը** («Տեղեկություններ է քաղել տարեգրություններից», «ավանդել է քրոնիկան», «աղբյուր էին անգիր վեպերն ու զրույցները»), մյուս կողմից՝ ստեղծագործական երեակայությամբ կերտված գեղարվեստական պատկերը («Երևակայությունը... սանձակուոր նժույգ»):

«Խաչատուր Աբովյան» վեպի տպագրված հատվածները վկայում են Բակունցի երկարատև ու ջանադիր քննական աշխատանքը պատմական ժամանակաշրջանի համար բնորոշ վավերագրերի և Աբովյանի ձեռագրերի հետ, որոնք վեպի կառուցման տարիներին մեծ մասով դեռևս հրապարակված չէին<sup>22</sup>: Գիտնականի հազվագյուտ բարեխզնությամբ ու աղբյուրագետի կորովով նա ուսումնասիրել է Խաչատուր Աբովյանի հարուստ արխիվ՝ դորպատյան շըրջանի հիշատակարանները, գիտական և ուղեգրական ուսումնասիրությունները, նամակնին, պաշտոնական գրագրությունը և վերջապես՝ նրա գրական ստեղծագործությունը: Այնուհետև Բակունցն իրեն «վերածելով» պատմաբանի, ազգագրագետի, լեզվաբանի, ճանապարհորդի,—ծանոթացել է ժամանակաշրջանի այլևայլ գրավոր աղբյուրների՝ եկեղեցական կոնդակների ու հոգեորդությունների գրություններին, դատարանական արձանագրություններին, պարսկական տիրապետության և ոռուսական գորքերի հետ կապված պաշտոնական վավերագրերին, ազգագրական ժողովածուներին, ապա՝ բանավոր զրույցներին, գրառումներին, դարի լեզվական բնագրերին: Պատմական հեռավորության՝ հնության գրոշմբ կրող տվյալների ու բեկորների միջոցով հմուտ հնագետի աշխով նա վերականգնել է դարաշրջանի կենցաղի ու սովորությունների, աշխարհագրական ու էթնիկական միջավայրի, նիստ ու կացի, հասարակական տարբեր շերտերի փոխհարաբերությունների «պատմագիտական» նկարագիրը: Այդքան, իհարկե, բավական չէին պատմական գրվածք գրելու համար: Դրանք, այսպես կոչված, «ատաղձն» ու «շինանյութն» էին՝ գեղարվեստական կառուցվածքի անհրաժեշտ տարրերը:

Անցյալ կյանքի մասին պատմող գրավոր հուշարձանների օգնությամբ, որոնք հաճախ ցաքուցրիվ, կցկուուր, «Հարեանցի» տեղեկություններ են պարունակում այս կամ այն իրադարձության մասին, նա հայտաբերում է հարցուրամյա վաղեմության մարդկային կենդանի հարաբերությունների, սոցիալական ու հոգեբանական կրքերի բնական հյուսվածքը, պարզում է անցյալի հոգեբանական «գաղտնիքները»:

Այս կամ այն պատմական աղբյուրի օգտագործումը կամ բացթողումը կապված է ընտրության սկզբոնքի հետ: Տվյալ փաստի ընտրության մեջ արտահայտվում է ոչ միայն դրա գեղագիտական նշանակությունը, այլև գաղափարական մեկնաբանության ուղղությունը: Փաստերի բացթողումը նույնպես գեղագիտական որոշակի գեր ունի: Պատմական եղելության և՝ օգտագործումը, և բացթողումը հավասարապես կախված է գրողի կոնցեպցիայից: Պատմական նյութով գրողը մասնավորապես կարևոր շեշտը զնում է այն բանի վրա, որ իրականության փաստը կլզիանա, այլ բացվի իր լայն հնարավորություններով, դառնա արվեստի ճշմարտության նախադրյալ:

Պատմական-իրական փաստից «Հեռանալու և միաժամանակ այդ փաստի կամ փաստաթղթի սոցիալական ու հոգեբանական էությունը արվեստի արժեքի վերածելու օրինակներով հարուստ է «Խաչատուր Աբովյան» վեպը:

Ահա, օրինակ, «Գործ Մայրանա, դստեր Մկրտումի» գլուխը:

Մայրանը իրական անձնավորություն է եղել՝ Մարիամ անունով<sup>23</sup>, նա ազգակցական կապ է ունեցել Աբովյանի հետ քաքեռադստեր իմոյ—հիշատա-

կում է նրա մասին Աբովյանը) և հանգամանքների բերումով ապրելիս է եղել Աբովյանի մոր հարկի տակ:

Մարիամը անշափահաս է եղել («11-ամի կենաց»), երբ նրան բռնությամբ ամուսնացրել են Երևանի բնակիչ Նիկողոս Սուրբիասյանի հետ: Բոնի ամուսնությունը ծանր հետևանք է ունենում: Մարիամը թողնում-հեռանում է, դատապարտվելով հոգեկան ծանր վիճակի: «Ողորմելի որբն ու այրին»—ասում է Աբովյանը նրա մասին<sup>24</sup>:

1838 թ. մայիս ամսից սկսած Մարիամի գործի, նրա իրավական ու մարդկային դատի պաշտպանությունը դառնում է ժամանակի մեծ աղմուկ հարուցած գործերից մեկը, մի քանի տարի շարունակ իր վրա հրավիրելով հասարակության ուշադրությունը: Էջմիածնի Սինոդի կարգադրիչ մասի վավերացրելը վկայում են, որ Սինոդը մի քանի անգամ քննել է «քանաքեռցի Մարիամ Մկրտումյանի գործը» և չնայած դրան, անհետևանք է թողել ամուսնալուծության խնդիրը:

Մարդկային ոտնահարված իրավունքի կրքու ու հետևողական պաշտպանությամբ այդ տարիներին հանդես է գալիս Աբովյանը: 1844 թվականին «այսահաւ» Մարիամի գործի առթիվ Աբովյանը երեք դիմում է ներկայացնում Էջմիածնի՝ կաթողիկոսական տեղապահ և Սինոդի ատենադպիր Բարսեղ արքեպիսկոպոսին ու սպառնում նրան, որ Հարցը դրական լուծում չստանալու դեպքում նա կդիմի քաղաքացիական իշխանությունների միջամտությանը: Դրական պատասխան շտանալով, Աբովյանը գրավոր «աղերսագրություն» է ներկայացնում «վեհափառին»՝ ներսես կաթողիկոսին (1845 թ. փետրվարին): «ողբակի որբս այս» Մարիամի մասին: Նա աղաջում է շուտափույթ պատասխան տալ խնդրամատույցի հարցին:

Բակունցը շի սահմանափակվում պատմական արժանահավատ փաստը վեպի հյուալածքին պատվաստելով, այլ ընտրություն է կատարում ձեռքի տակ եղած փաստերից՝ հաշվի առնելով նաև և առաջ նրանց պատմական հարազարդական աստիճանն ու գեղարվեստական հնարավորությունը:

Նա, մասնավորապես, մեծ ուշադրություն է դարձնում հերոսների բնավորության պատմական հարադարձության խնդրին՝ սպատմականության գրիխավոր պայմանին: Այս իմաստով զգալի հետաքրքրություն է ներկայացնում վեպի զլիավոր հերոսի՝ Աբովյանի կերպարի «պատմականության» հարցը: Աբովյանի բնավորության և ճակատագրի հետ կապված բոլոր մանրամասնությունները Բակունցը քաղել է նրա ժամանակի գրավոր աղբյուրներից ու ավանդություններից: Վերցնենք, օրինակ, վեպի «Դեպի Լյառն Մասիս» նախերգանքը, որտեղ վերարծարծվում է Արարատի վերելքի պատմությունը: Այս զլիի համար Բակունց օգտագործել է Աբովյանի հողվածը՝ «նոր վկայություն պարոն պրոֆեսոր Պարրոտի՝ Արարատի գագաթը իսկապես բարձրանալու մասին», Ֆր. Պարրոտի, Մ. Վագների աշխատությունները, Աբովյանի գորպատյան հիշատակարանները և ուրիշ հնախոս աղբյուրներ, որոնցում կան բնորոշ տվյալներ այդ փաստի կապակցությամբ: Աղբյուրները, մասնավորապես, արժեքավոր տեղեկություններ են թողել հոգեկան այն ծանր ապրումների մասին, որ ունեցել է Աբովյանն իր համագյուղացիների երդմնազանցության լուրն առնելով: «Երդմնագրութիւնք եկեալ ի Հայաստանե»:

Այսպիսով, պատմական աղբյուրների ու վկայությունների օգտագործման ձեր շի հանգում անփոփոխ փոխառության: Բակունցը էական «սրբագրումներ» է մտցնում նախնական, առաջնային փաստաթղթի մեջ, էմպիրիկ նախասկիզ-

թը մշակելով, հասցնում գեղարվեստական պատկերի: Նրա վեպով կան, իհարկե, ուղղակի փոխառության նմուշներ նույնպես. դա մասնավորապես վերաբերում է ժամանակաշրջանի լեզվական կոլորիտը պահպանելու համար օգտագործված ոճական դարձվածքներին, բառային արտահայտություններին, արտահայտման «Հնաբույր» ձևերին: Այսպես, Արովյանն իր ժանր վիճակի մասին նամակ է ուղարկում Գաբրիել և Պետրոս Պատկանյաններին, գանգատվելով Հայրենակիցների սառն անտարբերությունից. «Հայրենիքն իս, որ անհաց, և անշոր, և անպաշար տարեգրեաց զիս, ահ, մեղանչեմ՝ զինչ ասեմ ես, Հայրենիքն իմ անպարտ է յայսմ ամենայնի, խստապարանոց որդիք նորա անցուցին ընդ իմ զանցս զայս, որդի անուն թշնամիք նորա, յորոց ի ձեռս տառապի և դժբախտն իմ Հայրենից<sup>25</sup>:

Այս նամակից Բակունցն օգտագործել է «անհաց, անջուր, անպաշար տարեգրեցին ինձ» ոճաբանական հարմար ձեր և կրոնավորներին տրված «խրստապարանոց» արտահայտությունը: Լեզվական իրողությունների ուղղակի «Հայթայթման» ուրիշ շատ օրինակներ կան վեպում. պատմական ու լեզվական կոլորիտի պահպանման համար Բակունցը պեղում էր ժամանակի գրավոր լեզուն և գտնում հարմար ու արտահայտիլ բառաձեւեր:

Բակունցի համար բնորոշը «ուղղակի փոխառությունները» չեն, այլ նյութի ստեղծագործական մշակման սկզբունքը: Այս առումով հետաքրքրական են նաև դորպատյան միշավայրին նվիրված էջերը: Արովյանի դորպատյան հիշատակարանի և «Խաչատուր Աբրովյան» վեպի համապատասխան մասերի ուղադիր համեմատությունը ցույց է տալիս, որ Բակունցը համարյա լրիվ պահպանել է իր գրվածքի փաստական նախասկիզբը, դեպքերի, տեղանունների, անձնանունների, ուսանողական շարժումների վավերականությունը, երևակայությամբ չի հնարել ոչ մի դեպք, ոչ մի դրվագ, ոչ մի փոխհարաբերություն: Նա խորագույնս հավատարիմ է մնացել սկզբնաղբյուրներին:

Բակունցի վեպը, սակայն, խստորեն ստուգված և արժանահավատ փաստական հիմք ունենալով, միանգամայն հեռու է պատմական փաստաթուղթիներուց: Պատմական իրականությանը Բակունցը մոտեցել է քննախույզ պատմաբան-բանասերի ջանասիրությամբ և հեռացել է նրանից որպես գեղագետ, այսինքն՝ պատմական նյութի գիտական ուսումնասիրությունը դարձրել է յուրահատուկ դիտակետ՝ պատմական փաստերի միջից զինված աշքով դուրս բերելու դրանց հոգեբանական, հուզական բովանդակությունը և տալու իր ինքնուրույն գեղարվեստական մեկնությունը՝ Արովյանի ու նրա ժամանակի մասին: Բակունցի վերաբերմունքն արտահայտում էր պատմական վեպի շարժումը՝ դեպի ստուգված փաստը:

«Խաչատուր Աբրովյան» վեպը գեղարվեստական որոշ առանձնահատկություններով և ժանրային սկզբունքներով խախտում էր Հայկական պատմավեպի շարժման ավանդական ուղղությունը և, միաժամանակ, նոր գծեր էր բերում այդ ուղղության մեջ: Հայկական վեպի անկյունաքարը հանդիսացող «Վերք Հայաստանին», որը և արդիական, և պատմական վեպ է միաժամանակ, ինչպես խորիմաստ դիտում է Դ. Դեմիրճյանը «Խաչատուր Արովյանի գրական ժանրերը» ուսումնասիրության մեջ<sup>26</sup>, մի կողմից «արծագանքում էր եվրոպական ոռմանի» ժանրային հատկանիշներին, իր մեջ էր առնում վերջինիս կազմավորման «սինկրետիկական էլեմենտները», մյուս կողմից՝ մերձենում էր արևելյան վիպասանության՝ սիրավեպերի ու հերոսավեպերի ժանրային կառուցվածքին՝ հեքիաթային գունավորումներ, էպոսի հիպերբո-

լային ոճի տարրեր, ոեալիստական նկարագրություններ, հատկապես լիրիկական շեղումներ, որոնք «երբեմն մեջ են ընկնում երաժշտության կանգնցի նման՝ արձակաշար շափառյի շարահյուսությամբ, երբեմն էլ իբրև սյունաշար ուտանավոր, երբեմն էլ իբրև սոսկական երգ»:

Նամակներից մեկում Աբովյանն անդրադառնալով իր վեպի ժանրային ձեփ հարցերին, ասում է, թե այն պետք է համապատասխանի ժողովրդի գեղարվեստական ճաշակին. «Ժողովրդին օտար կերակուրներ մատուցելը թվում էր ինձ անհարմար ու անբնական: Երկար մտորումներից հետո միտքս ընկավ Աղասու դժբախտ պատմությունը: Սակայն ի՞նչ ձեռվ ես այն պիտի վերարտադրեի: Որպես եվրոպական ճաշակի ու ոճի վե՞պ: Դա Հով վերին աստիճանի անմտություն կլիներ: Բանաստեղծությունը, ինչպես և վեպը, իմ կարծիքով, պետք է համապատասխանի ժողովրդի գաղափարներին ու զգացմունքներին»<sup>27</sup>:

Այս զգաստ գիտակցությունն էր Աբովյանին մղում դեպի վեպի ժողովրդական, աղքային ձեփ ընտրությունը, որը և եղավ գերազանցապես արևելյան վիպաշանության ժանրը: Սա, ինչպես իրավացիորեն մատնանշում է Պ. Դեմիրճյանը, «Աբովյանին փրկեց այն համատարած ոռմանտիզմից ու սենտիմենտալիզմից, որի մեջ նա կընկներ լիովին, եթե փորձեր տալ զուտ եվրոպական ոռման: Մինչդեռ «Վերք Հայաստանին» բովանդակում է շատ ուելիստական տարրեր, որ պարագորսալ ձեռվ գալիս են արևելյան ոռմանտիկ վիպաշանությունից, որին դիմեց նա և որը նրան տարավ հակառակ, լիովին հարազատ ուղիով, այսինքն՝ դեպի ժողովուրդը, դեպի ուելիզմի աղբյուրները»:

«Վերք Հայաստանին» ուղղակի իմաստով հանդիսացավ այն մայր գետը, որից ճյուղավորվեցին և նոր հուն մտան հայկական վեպի բոլոր ուղղությունները՝ Պ. Պոռշյանի և Աղայանի սոցիալական վեպերը («Հացի խնդիր», «Ցեցեր», «Արություն և Մանվել», «Երկու քույր») Բաֆֆու ծրագրային-քաղաքական վեպերը («Խենթ», «Կայծեր») և, վերջապես, պատմական վեպը:

Հայկական պատմավեպի ուղղության մեջ սկսվեց, հարաբերական իմաստով, երկարատև ընդհատում, մինչև հրապարակ եկավ Ակսել Բակունցի «Խաշատուր Աբովյանը», մի վեպ, որ կոված էր նորարարական խնդիրներ լուծել պատմական վեպի ժանրի ու պոետիկայի բնագավառում: Բակունցը ոչ միայն պատմավեպը «մաքրեց» խրատական-դիդակտիկական մոմենտներից, ոչ միայն թթափեց մի կողմից «Հեքիաթայնության», մյուս կողմից ոռմանտիկական հանդիսավորության, կերպարների բևեռացման ոճի ազգեցությունը, այլև պատմական նյութի յուրացման նոր սկզբունքներ հայտնագործեց:

Ավանդաբար եկած «հնի ազգեցություններից» ազատագրվելու ընթացքը սոսկ ձեփ ու ոճի արտաքին փոփոխության հարց չէր, սոսկական ձեւքանության առաջադրանք չէր, այլ ներքին խոր ընթացք, կապված պատմական իրականության լուսաբանության նոր տեսանկյուն մշակելու խնդրի հետ:

Պատմական այն վեպերի համեմատությամբ, որննցում պատմությունը առանձնացվում էր որպես որոշակի ընդգծված դրվագ՝ լինի դա ժողովրդական մի խոշոր հերոսամարտ, թե ավելի փոքր մասշտարի իրովություն, —դա կարևոր չէ, —Բակունցի գրվածքը առաջին հայացքից ավելի «կամերային» տպավորություն է թողնում: Զկան քաղմաքանակ արտաքին գործողություններ, սյուժեի առատ մյուղավորություններ և այլն: Թվաղյալ «կամերայնուրյամբ» Բակունցը յուրովի բանավիճում էր հին պատմավեպի, այսպես ասած, «մաշտաբայնության» հետ, և դրանով իսկ ճանապարհ էր հարթում դեպի պատմական նյութի գեղարվեստական արտահայտման նոր եղանակը, նոր սկզբունքը:

Ո՞րն է դա: Այն, որ Բակունցը պատմական տվյալ նյութը չի գիտակցում որպես ժողովրդի պատմական պրոցեսից առանձնացված դրվագ, որ նա **XIX** դարի ազգային-լուսավորական զարթոնքի շրջանը վերցնում է իր լինելիության ու անընդհատության ընթացքում,—Բակունցը տալիս է կյանքի անպայմանական ընթացքը, «կյանքի հոսանքը»:

«Խաշատուր Աբովյանը», այսպիսով, «կյանքի հոսանքի» վեպ է, որտեղ նվազագույնի են հասցված գրական պայմանականությունները և առավելագույնի՝ ժամանակաշրջանի պատմական լրիվության զգացողությունը, կյանքի դգացմունքը:

«Խաշատուր Աբովյան» վեպի պոետիկան նույնպես դեմքնթաց էր գրելակերպի հնացած հնարներին և ոճաբանական նոր գծեր էր բերում գրական տեխնիկայի բնագավառում: Բակունցը հաղթահարեց վիպական ավանդական զուգահեռների, խճճված հանգուցների, խորհրդավոր դիպվածների ընտելությունը, որով և հասավ պատմողական գծերի գրաֆիկական հստակության ու գործողության պարզության: Այս բանին մեծապես օգնեց դրամայի օրենքների կիրառությունը վեպի արվեստում:

«Խաշատուր Աբովյան» վեպը բարձր էր գնահատում Եղիշե Զարենցը: Ռուբեն Զարյանն իր հիշողություններում վերականգնում է խոսակցությունը Զարենցի հետ:

«Գնում էի տոմ, հանդիպեցի Զարենցին:

— Ի՞նչ գիրք է:

Ցույց տվի:

— Հա, «Կյուիլան» է, «Վազիր Մուխթարը» կարդացե՞լ ես:

Ասացի, որ կարդացել եմ:

— Էսկ «Կյուիլան»-ն: Ամենալավն է: «Կյուիլան» «Վազիրից» լավ է: Բայց սպասիր, թող մի Ակսելը «Աբովյանը» մեջ բերի, տես, Տինյանովն ինչ կանի...

Լուր քայլում էինք:

— Տինյանովը էրուղիտ է: Գրել էլ գիտե: Բայց գրող չի: Այսինքն կոշված չէ: Ակսելն իսկական գրող է: Եվ ոչ էլ պակաս էրուղիտ: Սպասիր, մեքիշ էլ սպասիր և այն ժամանակ կտեսնես, թե ինչեր կանի մեր բարեկամը<sup>28</sup>:

## 9

Բակունցի ու ալիստական մեթոդի գլխավոր հատկանիշներից մեկը կյանքի, մարդկանց, երևույթների մատուցման հավաստիությունն է, նրա ներկայացրած մարդկային աշխարհի գեղարվեստական անվիճելիությունը: Բակունցի պատմվածքները՝ նյութով ու կերպարներով գերազանցորեն «փոխառություններ են» կյանքից ու շրջապատի երևույթներից, գերազանցորեն քաղված են անմիջական զննումներից: Դրանք ունեն կամ ինքնակենսագրական կամ պատմական (Եղիշելիթյան իմաստով) աղբյուր:

Բակունցի ստեղծագործական աշխարհում մեծ դեր են խաղում «տեսածն» ու «լսածը», հերոսների նախատիպը և սյուժեի նախօրինակը: Նրա սյուժեները, ինչպես ասում են, կախված են գրչի ծայրից:

Ուշադիր հետևելով թակունցի պատմվածքներին, նկատում ենք, որ նա դրանք պատմում է կամ որպես մանկության տարիների «մոռացված» հիշողություններից մնացած մի բեկոր, կամ որպես որևէ իրական դեպքի ականատես, կամ որպես ճանապարհորդի գրառում, կամ որպես մանկության տարիներին լսած որևէ պատմության կամ զրույցի վերարտադրություն, կամ որևէ ծանոթից լսած իրական դրվագ: Ուրիշ խոսքով, թակունցն իր պատմվածքի կամ սկզբում կամ վերջում, կամ որևէ այլ հանգույցում, ընդգծում է իր պատմությունների՝ բնական սյուժեների հավաստիության ու անվիճելիության հանգամանքը:

Այսպես, «Նամակ ոսւաց թագավորին» պատմվածքի սյուժեն «վերապատմելոց» հետո, թակունցը տալիս է հետևյալ բացատրություն-տեղեկանւ քը. «Շատ տարիներ են անցել: Այդ անցյալը ինձ համար դարձել է հիշողություն, որ հետպհետեւ ընկղնվում է մոռացվածքն անդունդը»:

Մի ուրիշ պատմվածքում՝ «Մի ձմռան գիշեր», պապն ու տատը հանդես են գալիս նույն անուններով՝ Արթին ու Նազու, որը ամրապնդում է նախատիպերի գոյության փաստը:

Ահա «Խոնարի աղջիկը» պատմվածքի սկսվածքը. «Գարնանային առավոտը խոստանում էր պայծառ և արևոտ օր: Կուշտ կերած մեր ձիերը արագ քայլերով բարձրանում էին քարոտ արահետը և ամեն քայլափոխին փնչում: Լուս էինք: Ես մտրակի ծայրով զարկում էի ծառերի տերևներին, պոկում տերևները կամ թափահարում ծառի կախ ընկած ճյուղերը, և գիշերվա ցողը անձրեկի նման թափվում էր ձիու վրա, ինձ վրա...»

— Այս կածանով տասներկու տարի առաջ գնացի Զորագյուղ, — ասաց ընկերս: Թվում էր, թե ինքն իրեն էր խոսում:

Նայեցի նրան: Ժապում էր: Կարծես միտքն էր ընկել մի երջանիկ դեպք, որի ականատեսն են եղել արահետը և հին անտառը»:

«Մուրոյի գրուցը» բացվում է նրա վավերականությունը հաստատող հետևյալ գործնական տեղեկանքով. «Երկրորդ օրն էր՝ Մաղդայում էինք, Ալագյազի լանջի ամենաբարձր գյուղերից մեկում, որտեղից բացվում է հիանալի տեսարան դեպի դաշտը: Ներքև փոված էր Արագդայանի տափարակից մինչև Անի կաչարանը հասնող ընդարձակ տափարակը, գյուղերն ու քաղաքները, որ ցամաք դաշտում կանաչ պարտեզների էին նման, երկաթուղում սպիտակ կայարանները, անբաժան ակացիներով ու բարդիներով»:

Ես և ընկերս նստել էինք քարին, հիացմունքով դաշտին էինք նայում և փորձում գտնել ծանոթ գյուղերը: Լսում էինք, թե ինչպես էր բահը զրնգում, երբ խրվում էր ավազոտ հողում»:

«Եղբայրության ընկույզնիները» պատմվածքը փակվում է ժողովրդական լեգենդ դարձած պատմության ականատեսի վկայությամբ. «Մինասի տղան ցանկապատի հետեւ զրույցի է մտնում անցորդի հետ, հարցնում է՝ ո՞վ է, ո՞ւր է զնում և եթե անցորդը չփիտե, թե ինչ ընկույզենիներ են, Մինասի տղան պատմում է, ինչպես հին զրույց»:

Միջնադարյան գրիների՝ ժամանակագիր-տարեգիրների ոճով թակունցը պատմվածքների մեծ մասին կցում է նման «Հիշատակարաններ», որոնց իրնդիրը ոչ միայն հուզական վերաբերմունք արտահայտելն է, այլև պատմվածքների սյուժեի ու բովանդակության իրական լինելու փաստի ընդգծումը: Կոնկրետ նախատիպից դեպի ընդհանրացում ճանապարհը կապված է նախ և առաջ գեղարվեստական այնպիսի կատեգորիայի էության ըմբռնման հետ, ինչպիսին

սյուժեն է: Դեռ Ա. Ս. Պուշկինը, ինչպես ցույց է տալիս ոռու հայտնի գրականագետ, համաշխարհային գրականության սյուժեների հիմնալի գիտակ Վ. Շըկ-լովսկին, սյուժեի հասկացողությունը հանգեցնում է այն առարկայի կամ հերոսի իմաստին, որոնց գրողը դիմում է: Պուշկինի համար սյուժեն նույնիմաստ էր առարկայի հետ: Նրա միջոցով է շրջանառության մեջ մտել սյոյե—предмет речи народной, Այս բանաձեր այնպիսի նույնականություն է, որ ենթադրում է ոչ թե գրական սյուժեի և պատկերվող առարկայի ու հերոսի մեխանիկական հարմարեցում, այլ սյուժեի միջոցով իրականության գծերի, երևույթների, կապակցությունների հայտնագործություն: Բացատրելով Պուշկինի բանաձերի իմաստը, Շկլովսկին գրում է. «Сущность предмета выясняется в событиях и противоречиях... Сюжет каждого произведения исторически конкретен. При этом, с одной стороны, он предлагает изображение событий, черты которых отражены художником, с другой—в нем не могут отражаться литературные традиции, навыки художественного мышления, предыдущие моменты сознания и т. д. В нем передается событие, которое произошло или могло произойти, но оно отобрано и оформленено»<sup>29</sup>.

Ըեալիստական սյուժեի այդպիսի ըմբռնումը հայ գրականության մեջ իր կատարյալ արտահայտությունը գտավ Հովհ. Թումանյանի ստեղծագործություններում՝ նրա պոեզիայում ու արձակում:

Հովհ. Թումանյանը կայունացրեց «սյուժե-առարկա» սկզբունքը, ելնելով այն համարյա բացարձակ ճշմարտությունից, թե ամենից բանաստեղծական, ամենից բնական ու անխարդախ սյուժեները «իրականության սյուժեներն են», թե առօրյայի կոնկրետ փաստերն ավելի խոր ընդհանրացումներ ու գեղագիտական արժեքներ են պարունակում, քան սյուժետային «հետաքրքրաշարժ» հարումները: Միշտ, գրեթե միշտ ուղեցույց ունենալով այս կամ այն կոնկրետ, իրական դրվագը, հետեւելով երևույթի փաստացիությանը, թակունցը, սակայն, այդ սկզբունքը չի հասկանում բառացիորեն: Նա բոլոր դեպքերում դառնում է տվյալ կոնկրետ երևույթի, տվյալ փաստական իրողության տիրակալը, գեղարվեստական կերպար, միջավայր ու գեղարվեստական աշխարհ ստեղծող խոսքի արվեստագետ:

Այսպես, օրինակ, «Նամակ ոռուաց թագավորին» պատմվածքը իր սովորական՝ փաստական դիրքում հնչում է սոսկ իրեւ մանկական տարիների մոռացված տպավորություններից քաղված մի մեմորարային հուզիչ դրվագ: Այնինչ, թակունցի գեղարվեստական մեկնաբանությամբ այդ դրվագը ճեղքում է փաստագրական կեղերը և դառնում ժողովրդական կենսափիլիսոփայության վերաբերյալ մի սինթետիկ, լայնածայն ընդհանրացում:

Հենվելով սկզբնաղբյուրի վրա, թակունցը, աստիճանաբար, առանց աղարտելու իրական դեպքի բնականության տպավորությունը, հեռանում է «կղբնաղբյուրից՝ դեպի հայ գյուղացու բանաստեղծական քնքուց հոգու, նրա էությունից անբաժան արդար ու զարմանալիորեն սմբողջական վարքագիտի, նրա սրտի միջով անցած ու ժողովրդական տառապանքից ծնված ազնիվ կենսափիլիսոփայության հայտնագործումը»:

Սրբին պապը, ինչպես դա ուղղակի ասում է թակունցն ու հաստատում են ժամանակակիցների հիշողությունները, իրական անձնավորություն է, գրողի ազգականը, պապը՝ մոր կողմից: Ամբողջ գավառում հայտնի է եղել նրա հոգու խոր ցավը՝ աքսորական որդու կապակցությամբ: Որդին քշվել է Միքրի, —հավանաբար քաղաքական անբարեհույս անձնավորություն լինելու

պատճառով։ Պապի կողքին գոյություն է ունեցել գավառական ադմինիստրացիան, որի ներկայացուցիչներին հաճախ է դիմել Արթինը՝ աքսորյալ որդուց որևէ լուր ստանալու հույսով։ Հավանորեն եղել է նաև ինչ-որ նամակ-դիմումի հարց, բայց չի եղել նամակի այն տեսանկյունը, որ արդեն բոլորովին ուրիշ բովանդակություն է հաղորդում թակունցի գրվածքին։ Արթին պապի շարշարանքներից ստացած այն բոլոր տպավորություններն ու միջավայրի այն զննումները, որ կատարել է թակունցը, իրար կողքի դնելով, գեռես շենք ստանա գեղարվեստական կերպար։ Առանց նամակի մոտիվի, գեռես անհայտ են գրվածքի մտահղացումն ու թեման, լայն առումով՝ անհայտ է նաև Արթին պապի կերպարի աշխարհը։ Թեման ու կերպարը անհայտ են ոչ թե որպես նյութ, այլ որպես բովանդակություն։ Նամակը բերում է պատմվածքի իսկական, նշանակալից թեման, որը ոչ այնքան պապի հետ կապված ցավալի դեպքն է և ոչ էլ որդուց լուր ստանալու ամենօրյա ու երբեք չհանդարտվող մտատանշությունը, այլ արդարության որոնման այն անսասան ձգտումը, որ այդպես շարշարում է Արթինին և ի դեմս նրա՝ հայ գյուղացիությանը։ «Խուսաց թագավորին» գրած նամակի իմաստն այն է, որ պատասխանը չի ստացվում, — իսկ հարցը տրված էր պատասխանի համար։ «Չին պահի, բալաս... Պատասխանը շկա», — ասում է Արթինը այն բանից հետո, եթե գնացել էր ոչ թե ստանալու, այլ որոնելու, մի անգամ ևս որոնելու հայ գյուղացիությանը ամբողջ կյանքում տանջող հարցի պատասխանը։

Կյանքից ստացած տպավորությունների հոսանքի մեջ «հեղինակային» մուծում է ոչ միայն նամակի մոտիվը, այլև նրա իմաստալից վերջաբանը։ Մահվանից առաջ Արթին պապը վերստին խոսում է նամակի պատասխանի մասին, ոգերուում է կենդանի մնացածներին՝ պատասխանի հույսով։ Զեղյալ նամակի հետ շղթա են կազմում պատասխանը, սպասումը, հավատը։ Պատասխանը, իհարկե, գալիս է՝ Արթին պապի ողբերգական գալարումների ձևով, — և նոր շղթա են կազմում հալատի կորուսար, սպասման անհմասառյանը, պատասխանի դաժանուրյունը։

Դիտելով թակունցի պատմվածքի «սյուժետագիտությունը», տեսնում ենք, որ ենելով փաստական ճշգրտությունից, նրա սյուժեն անցնում է առօրյայի կոնկրետ փաստի հոգերանական ու սոցիալական բովանդակությունը բացելու միջոցով գեղարվեստական ճշմարտությանը հասնելու աստիճան։

Ահա, օրինակ, «Միրհավը» պատմվածքի սյուժեն։

Կյանքի մի պատառ է նրա բովանդակությունը։ Դիլան դային շահել օրերին հափշտակվել է հարևանի աղջկանով, բայց հարուստ ծնողները ուրիշ փեսացու են ընտրել։ Մեռել է Սոնան, բայց Դիլան դային ապրում է անցած սիրո վերհուշներով։ Այս սիսեման, հավանաբար, այն տասնյակ հայտնի «կենական պատմություններից» մեկն է, որի վրա կառուցել է թակունցն իր պատմվածքը։ Սյուժետային այս հիմքից բացի հեղինակը օգտագործել է իր բազմաթիվ դիտողությունները, բնության և մարդկային հոգերանության հարուստ զննումները, իր տպավորությունները։ Դիլան դային հանդես է գալիս նաև թակունցի ուրիշ գործերում (օրինակ, «Դավառական նամականին»), — հանգամանք, որ վկայում է իրական անձնավորության գոյության փաստը։ Իրական Դիլանից հավանորեն որոշ գծեր անցել են պատմվածքը, բայց ոչ թե նրա հետ կապված այն մեծ ընդհանրացումը, որ մատուցում է թակունցը։

Թակունցի պատմվածքում Դիլան դային հանդես է գալիս տարբեր տարիքներում՝ շահելության օրերին և կյանքի մայրամուտին՝ խոր ծերության

**Հասակում:** Հասակային տարբերությունը սյուժետային այն կարեոր քայլերից մեկն է, որով Բակունցը մոտենում է «կենսական պատմության» գեղարվեստական լուծմանը: Անցել են տարիները, գլորվել են օրերը, բայց Դիլան դալու մեջ գեռ չի խլացել այն հզոր զգացմունքը, որով նա ճանաշում և ընդգրկում է աշխարհը, որով նա ոտք դրեց կյանք և որի հետ միասին հեռանում է կյանքից:

Սյուժետային մյուս կարեոր մուծումը վիրավոր, արնակոլոլ, փետրահան արված միրհավի կերպարն է: Սա արդեն ոչ մի կապ չուներ այն «կենսական պատմության» հետ, որին դիմել է դրողը: Միրհավը իր համար, Դիլան դային՝ իր համար: Այդպես է եղել կյանքում: Սակայն բակունցյան բնական սյույնի գեղարվեստական կազմակերպումը պահանջել է, որ նա դիմեր «մերձավոր» այդ կերպարի միշամտությանը: «Մերձավոր»՝ տվյալ կոնկրետ հարաբերության մեջ: Միրհավը ոչ միայն սյուժետային գուգահեռ է, — այդպիսի իմաստ նա անպայման ունի պատմվածքում, — Միրհավի անունով է կոչվել պատմվածքը ամբողջությամբ. ոչ թե «Դիլան դայի», ոչ թե «Սոնա», այլ «Միրհավ»: Այս վերնագիրը կոչված է ընդգծելու, որ խոսքը ոչ թե կոնկրետ միրային պատմության մասին է, այլ առհասարակ մարդկային զգացմունքների որոնման և կործանման մասին: Միրհավը արդեն սիմվոլ է, ինչպես և սիմվոլ է նրա մարդկային զուգահեռ՝ Դիլան դային: Մասնակի դրվագից դեպի խոր ընդհանրացում, — այսպիսին է «Միրհավ» պատմվածքի սյուժետային ձևափոխության ընթացքը:

«Դյուլբահարի համար» պատմվածքում դեպքերը զարգանում են բացառապես կենցաղային պլանով: «Երբ «փաշայի» գաղթականության ալիքը պրդտոր, — պատմում է Բակունցը, — տարիներ առաջ լափին տվեց Դրմբոնի ձորերին և հեռացավ, պղտոր ալիքը դրնգան ձորերում թողեց մի տաշեղ՝ խնուցի տեր-Մարուքինս:

Ծուտով տեր-Մարուքը դառնում է գյուղի ծխատեր քահանան: Տեր-Մարուքի բացի «Դրմբոնում կա մի կին՝ Դյուլբահարն այրի, երկու որբատեր... տունը գյուղի ծայրին: Դյուլբահարը՝ մարդաթղթ Դյուլբահարը՝ «գարնան ծաղիկ»: Եթե ապրեր Թլկուրանցին Դրմբոնում, Դյուլբահարի համար երեխ կասեր.

Գնա բահար, այլվի բահար.

Այլվի կուտան սիրո խարար...

Թլկուրանցու փոխարեն տեր-Մարուքն է մտքում ասում, թե ինչ փափուկ միս ունի Դյուլբահարն այրի: Ճարպուտում է տերտերը, եռում է արյունը երակներում, և զատկին մասունք տալիս նրա ձեռքը կամացուկ շոյում է Դյուլբահարի թշերը:

Ծուտով «Հոգենոր հորդորը» դառնում է մարմնավոր և Դյուլբահարը հաճախ է այցելում տեր-Մարուքին:

Ահա զեկամերոնյան նովելները հիշեցնող այն հասարակ պատմությունը, մարդկային այն սովորական կապը, որ չեն հանդուրժում գյուղում կազմակերպված կոմսումոլի բջիջի անդամները: Դյուղի կոմսումոլը՝ նահապետական ադաբի ու նոր օրերի բարոյականության պաշտպանը՝ հանցանքի մեջ բռնելով տեր-Մարուքին ու Դյուլբահարին, վճիռ է կայացնում քահանային գյուղից աքսորելու մասին. «Առավոտյան գյուղի մերդանում, կաղնու շվաքի տակ, ուր ամռան շոգին նախրից ետ արած հորթերն են զինչանում, կաղնու շվաքի տակ գեղական ժողովը որոշում է տեր-Մարուքին գյուղից հանել»:

Պատմվածքի պարզ սյուժեն մինչև այստեղ ծավալվում է առանց «խոր հոսանքի»: Դրանից հետո էլ կարծեք թե պատմվածքում բացակայում է ենթակամատը:

Ամբողջ գյուղը քարավանի նման շարժվում է դեպի դատարանը, սակայն, անսպասելի վճիռ է արձակում. մեղավոր է ճանաշում այն դրմբոնցին երին, որոնք անօրինակ ձեռվ հետապնդել են տեր-Մարութին: Դերերը փոխվում են. հանցադրծը՝ մեղադրող, վկաները՝ մեղավոր: Դերերի այս տեղափոխության մեջ էլ արտահայտվում է Բակոնցի պատմվածքի իմաստը. անօրինական են այն աղմուկ-աղաղակը, դրմբոնցիների «չարախոսությունները», որոնցով նրանք ուղղում են խլացնել քահանայի ու Գյուլբահարի միջև արթնացածքնական գգացմունքը:

Պատմվածքի խոր իմաստը մի անգամ էլ ընդդժվում է վերջաբանում. «Աղմուկով հեռացան դրմբոնցիք, հաղթանակից վերադրող բանակի պես: Միայն տեր-Մարութին է՝ հարցական նշան, միտք անում, թե էլ որտե՞ղ կա Դրմբոն, Ժամի զանգեր ծխնգան, շարական ու Մաշտոց և Գյուլբահար, Գյուլբահար...»:

Մարդկային հոգու ներքին ձայնը հակադրվում է արտաքին կաշկանդումներին,—ահա բակոնցյան վերջաբանի գաղափարական խնդիրը: Բակոնց-հեղինակը նույնպես վիճում է այդ կաշկանդումների դեմ, վիճելով՝ հաստատում բնականի հաղթանակը: Այդ վեճը ենթաբնագրի արտահայտման ձերից մեկն է:

Բակոնցյան ենթաբնագրը, այսպիսով, բնագրի շարունակությունն է, նրա լրացումը: Դրանից էլ սյուժեի այն բնականությունն ու կյանքի անպայմանական արտահայտման առավորությունը, որ բակոնցյան ոեալիզմի գլխավոր սկզբունքն է:

Բակոնցն ունի այսպիսի մի արտահայտություն. «Լսե՞լ եք գուք այն արթոն խոսքը, որ հոսում է ինչպես իմաստուն խոսք,—այս բանաձեկի իմաստին է ենթարկված Բակոնցի գրվածքների ձևն ու կառուցվածքը»:

Արթոն զրուցի նման հոսող իմաստուն խոսք,—այս բանաձեկի իմաստին է ենթարկված Բակոնցի գրվածքների ձևն ու կառուցվածքը:

Նրա պատմվածքները չունեն սովորական իմաստով, դասական նովելին հատուկ կառուցվածքային տարրերի հերթագայություն՝ հանգույց, բարձրակետ, լուծում: Ավելին. նրա աշխարհագացումը թելադրել է կառուցվածքի մի այնպիսի ձև, որ թվում է, թե նրա պատմվածքը շունի ոչ սկիզբ, ոչ վերջ: «Անսկիզբ ու անվերջ» պատմվածք, որ ոչ թե «կառուցված է» իրականության նյութը դիտող ու մշակող վարպետի կողմից, այլ պոկած է այդ իրականությունից, նրա մի անձեռակերտ բեկորն է, նրա մի կոնկրետ հատվածը: Այս տպագրությունը, իհարկե, ստեղծվում է բակոնցյան պատմվածքի ներքին էությունից, նրա պատմվածքի կառուցվածքի ժողովրդական ոճից: Իրականությունը Բակոնցը ներկայացնում է որպես ժողովրդական հայացքի անդրադրում և դրան համապատասխան այնպես պատմում այս կամ այն «կենսական պատմությունը», որ թվում է, թե գործ ունես ժողովրդական բանասացների հորինած որևէ հերթաբի, ավանդապատումի կամ զրուցի հետ...

«Անպլան» պատմվածքի սկզբունքը, որ կիրառում է Բակոնցը՝ կյանքի ճշմարտությանը ավելի հարազատ մնալու, երեսույթների արմատներին ավելի մերձենալու նպատակով, նրան թելադրել է մի ուրիշ կառուցվածքային եղանակ: Դա մենուարային պատմվածքի, հուշ-պատմվածքի եղանակն է: Քննադատության մեջ նկատված է, որ Բակոնցն առհասարակ իր գրվածքներում հաճախ է դիմում անցած-գնացած դեպքերի, հեռացած եղելությունների վերհուցին: Բակոնցյան սովորական վերհուցների, «վերհուցների մեջ եղած վեր-

Հուշական բազմաթիվ նմուշներ է դիտել Ռ. Խշխանյանը «Երբ հուշը դառնում է ներկա...» ուսումնասիրության մեջ<sup>30</sup>: Սակայն, մեր կարծիքով, նա միակողմանի է բացատրել վերհուշի դերը Բակոնցի պատմվածքում, հանգեցնելով այն գերազանցորեն քնարական անմիջականություն առաջացնելու նպատակին: Ճիշտ է, վերհուշը այդպիսի դեր նույնպես խաղում է՝ դառնալով հուզական շեշտի կենտրոն, սակայն, վերհուշի իմաստն ավելի խոր ու ավելի բարդ է, քան սոսկ քնարական տպավորություններ առաջ բերելը: Ռ. Խշխանյանի հոդվածում քնարական հուզականության բնութագրություն են համարվում Ավ. Խսահակյանի իմաստությամբ ծանրացած հետևյալ տողերը. «Այնպես նուրբ հն հյուսված այս պատմվածքները, մանավանդ «Միրհավը», «Բրուտի տղան», այնպես նուրբ, հեքիաթ են կարծես, կարծես երազ ես տեսնում, այնպես կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան, որ հուշը դառնում է ներկա, և իրական ներկան դառնում է երազ»:

Ավ. Խսահակյանն այս դիտողությամբ առանձնացնում է Բակոնցի հուշի ժրագրային բնույթը, նրա ոչ այնքան արտաքին հուզականության դերը, որքան աշխարհի նրա տեսողականության ուրույնությունը:

Շատ պատմվածքներ նա կառուցում է ներկա դարձած վերհուշի և վերհուշ դարձած ներկայի հերթագայությամբ, —կառուցման մի ձև, որի իմաստը դարձյալ առօրյայի հեքիաթային բովանդակության հայտաբերումն է:

Բակունցն ունի պարզ վերհուշային և բարդ վերհուշային պատմվածքներ: Առաջինի օրինակն է «Խոնարհ աղջիկը»: Կառուցման շափազանց պարզ սխեմա ունի սա. հեղինակը հիշում. է այն գյուղը, որտեղ տարիներ առաջ ուսուցի էր, հիշում է գյուղական աղջիկներից մեկին՝ Խոնարհին, որն իր փթթման շրջանն էր ապրում: Անցյալը կառուցման իմաստով դառնում է ֆոն, որի վրա գծվում է Խոնարհ աղջկա պորտրեն: Սա նկարչական կտավ է, — կոմպոզիցիայի կենտրոնում աղջկա «ժանրային» դիմանկարը, որը վերցված է թեև ամենօրյա, սովորական ռեալության մեջ, լեռնային գյուղի կենցաղի ու բնության գույների սովորական հարաբերություններում, սակայն գրողի ողեղում՝ ընկալումով այդ ռեալությունը ընկալվում է որպես սիմվոլիկ «հեքիաթայնություն»: Խոնարհի պորտրեն՝ նրա մեկնարանությունը որպես հեքիաթի հերոսուհու, աղջկի է ընդգծված, երբ վերհուշը բաղդատվում է ներկայի հետ. Խոնարհը մայր է արդեն, խեղճ, հոգի տակ, աշխատավոր հայ գյուղացու կին: Այս բաղդատությունը՝ միևնույն անձնավորության երկու տարրեր պորտրեն՝ տարրեր հասակներում, հանկարծակի անցումը երազային գույներից նրա ուղղակի հակադրությանը, —կառուցվածքային այս հնարագիտությունը հենց այն աշխարհազգացման արտահայտությունն է, որ Ավ. Խսահակյանը ձևակերպել է. «Կախարդորեն հալվում են իրար մեջ անցյալն ու ներկան» բառերով:

Եթե «Խոնարհ աղջիկը» կառուցման պլանով նման է բազմաֆիգուր ֆոն - ունեցող դիմանկարչական կոմպոզիցիայի, ապա «Միրհավը» կառուցման ապարերով հիշեցնում է երաժշտական բարդ, սիմֆոնիկ ստեղծագործություն:

Դիլան դայու մեմուարը, նրա կյանքի «Թանկագին հուշը», որ այնպես վարպետորեն թղթին է հանձնել Բակոնցը, պարունակում է կյանքի այնպիսի ըմբռնումներ, որոնք կարող էին առաջանալ մարդու աշխարհազգացման հարցատության նրբին ասոցիացիաներով: Բնորոշ է, որ «Միրհավը» պատմվածքում վերհուշը աղջկի ու աղջկի մեծ տեղ է գրավում, երբ Դիլան դային մոտենում է իր կյանքի մայրամուտին. ներկան իր տեղը զիջում է անցյալի պատ-

կերներին։ Նորից գործ ունենք հայտնի ձեւակերպման հետ. «Հուշը դառնում է ներկա և ներկան երազ»։ Վերհուշը, այսպիսով, պատմվածքում ձեռք է բերում կառուցվածքային տարրի արժեք, դառնում է տրամադրությունների փոխանցման, ոիթմերի փոփոխության միջոց։

Կառուցվածքային մյուս հատկանիշը պատմվածքը մի կերպարի վրա կառուցելու, այդ կերպարը կենտրոն դարձնելու եղանակն է։ «Միրհավի» մեջ՝ ՚Իրան դային, «Լառ-Մարգարում»՝ գյուղի շրբաշխը, «Շիրանի փողում»՝ սրբնահար Հազրոն, «Տիգրանուհու» մեջ՝ գյուղացի Վասիլը և այլն, — այն կերպարներն են, որոնք Բակունցի պատմվածքների կառուցվածքում դառնում են ձգողական այն ուժերը, որ խմբավորում են մյուս տարրերը՝ բնության և կենցաղային միջավայրի պատկերներ, պատմական ու հոգերանական գուգահեռներ։

Փողովրդական լեզվամտածողության հետ է կապված Բակունցի պատումի հակիրճությունն ու ճշգրտությունը։ Ծոմանտիկական գրականության երկարաշունչ, միջանկյալներով լի, ծանրաբեռնված նախադասությունների փոխարեն, ոեալիստները, դրանց թվում և Բակունցի, գրականություն բերին սեղմ, խատած, կենդանի ու բնական խոսքի կուլտուրան Բակունցը կատարելագործեց արձակի տեխնիկան՝ ոչ այն է խոսքը զարդարելու, ոչ այն է՝ արտասովոր խոսքային կառուցվածքների կիրառության, ոչ այն է՝ գրական պերճախոսության, այլ ճիշտ հակառակը՝ նախադասությունը պարզեցնելու, սովորական խոսակցական ոճերին մոտեցնելու ճանապարհով։

Ակնհայտ է նաև Բակունցի հակիրճ ու սեղմ, պարզ ու թեթև գրական տեխնիկայի կապը միջնադարյան ժողովրդական արձակի՝ զրուցի ու առակների արտահայտման պարզության ու կոնկրետության հետ, հանգամանք, որին ուշագրավ զուգահեռներով անդրադարձել է գրականագետ Մ. Ավդալրեգյանը «Ա. Բակունցի կազմած «Աղվեսագիրքը» ժողովածուն» հոդվածում։

Բաղդատելով միջնադարյան առակների թարգմանության և Բակունցի պատմվածքների տեխստերը, բանասերը ցույց է տալիս, թե ինչպես հնագույն արտահայտչական ոճերը (որոշիչ ետադասություն, ենթակայի կրկնություն նախադասության մեջ և այլն) մասնակցում են գեղարվեստական նոր ոճարխանության ձևավորմանը, հարստացնում են գրողի ոեալիստական դիտողականությունը։

Արտահայտման սկզբունքներով լինելով «արխակի», Բակունցը դիմում էր այն հնագույն ոճերին, որոնք ստեղծվելով ժողովրդական միջավայրում, ժողովրդական լեզվամտածողության ազդեցությամբ, նոր արձակի մեջ էին բերում միջնադարյան զրուցյաների ու առակների, մանրակեպերի ու հիշատակարանների ոճարանության դեմոկրատական հոսանքը։

Ինչո՞ւ Բակունցը օգտվում է հատկապես հիշյալ ժանրերի ոճերից ու արտահայտման եղանակներից։ Ամենից առաջ այն պատճառով, որ նա այդ ժանրերի ծագումը կապում է ժողովրդական միջավայրի հետ։ Այսպես, 1935 թ. Բարգմանած «Աղվեսագրք» առաջաբանում, որ նա անվանում է հնագույն ոճով՝ նախաշավիդ, Բակունցը գրում է. «Թոլոր առակագիրներից ու պատմիւներից առաջ առակը հորինել և պատմել է ինքը՝ ժողովուրդը»։ Այնուհետև նաև ասում է, որ առակագիրը լիարուն օգտվել է ժամանակի ժողովրդական բանահյուսությունից, վերամշակել է այն ըստ նպատակադրման և այսպիսով գրի են առնվել բազմաթիվ անգիր զրուցյաներ։ Առակախառն քարոզների հետ

գրականության մեջ խուժել է առակը և մանրավեպը, իսկ վերջիններս իրենց հետ բերել են նաև ժողովրդական լեզու ու ոճա:

Հնագույն ոճաբանության տարրերը Բակունցը միախառնում է խոսքի ժողովրդական սկզբնաղբյուրներին: Նա դեն է նետում այն լեզվառնական միջնապատերը, որ գրականություն մուծեցին ոռմանտիկները, նախ և առաջ մտահոգվելով, որ խոսքը լինի կոնկրետ, ճշգրիտ, արտահայտիչ, համապատասխանի նկարագրվող երկույթին:

Արտահայտման ճշգրտությունն ու կոնկրետությունը Բակունցի ոճակառուցման կենտրոնն ու միջուկն է, թեև առանձին դեպքերում նրա ոճը ունենում է տատանումներ՝ ուելիստական պատումից դեպի ոռմանտիկական գրեշաճերը, սովորական խոսքից մինչև բիբլիական ոճի հանդիսավորությունը:

## 10

Դրական ստեղծագործության «ջրաղացը» ցանկանալով ուղղել կենդանի խոսքի վարար ալիքների հոնը, Բակունցը ոչ միայն չէր բացառում գրաբարի օգտագործման անհրաժեշտությունը, ոչ միայն կողմ էր փոխառություններին<sup>31</sup>, այլև ժողովրդական լեզվի աղբյուրների՝ բարբառների օգտագործման հարցում դեմ էր ազգագրական ճշգրտությանն ու բարբառի ոճավորմանը, գրականության մեջ բարբառների անգիտակից ու հախուռն արշավանքին: «Ես ժողովրդական բանահավաք կամ ազգագրագետ չեմ», — բողոքում էր Բակունցը, երբ նրան ասում էին, թե «Միրանի փողը» պատմվածքում շեղումներ կան Սասունի բարբառից<sup>32</sup>: Նա գտնում էր, որ հախուռն մոտեցումը առաջ է բերում «լեզվի հասոնվածություն» ու «թլվատություն», ուստի և պահանջում էր ստեղծագործական, մտածված վերաբերմունք. «Պետք է բարբառները կշռել գեղատան կշեռքի ճշտությամբ և վարվել այնպես, ինչպես այդ անում են ոռուական գրողները, որոնցից ես կրերեմ մի փորձ: Նրանք վերցնում են ժողովրդական մի արտահայտություն, մեկնաբանում այդ արտահայտության օրենքը և հետո իրենք այդ օրենքի հիման վրա կառուցում այն նոր բառը, որ անհրաժեշտ է ստեղծել: Այդ տեսակետից թումանյանի փորձը շատ ուսանելի է մեզ համար»<sup>33</sup>:

Լեզվական նատուրալիզմի հետ միասին Բակունցը մարտնչում էր գրքայնության, լեզվահորինման ֆորմալիստական պաճումանքի, անբովանդակ ու մշուշապատ ֆրազի դեմ, — պայքարը տանելով՝ գեղարվեստական խոսքի պարզության, ճշգրտության, գեղեցկության հոնով, գրականության լեզուն «զիմակ-խոսքերից», մակաբույժ բառերից, անկենդան ու կոպիտ ձեւերից, ոճի կեղծ նմանակներից ազատագրելու, ժողովրդական ակունքներին մոտեցնելու ճանապարհով:

Բակունցի խոսքը հենվում է լեզվական երկու շերտի վրա: Առաջինը՝ հայ գրականության հին ու նոր գեղարվեստական հուշարձանների լեզվական հարաստությունն է, մյուսը՝ համաժողովրդական կենդանի խոսքի հարստությունը: Այդ երկու շերտերի միահյուսումը Բակունցը, սակայն, դիտում էր ոչ թե որպես լեզվական երկու տարբեր որակների մեխանիկական համադրություն, այլ որպես միասնական գեղարվեստական որակական երկույթը կազմակերպող տարրերի բնական բաղադրություն:

Գրական լեզվի և ժողովրդական-խոսակցական լեզվի ոճական տարրեր շերտերի համադրությունը հակունցի ստեղծագործություններում ենթարկվում է ժողովրդական լեզվամտածողության միասնական օրենքին:

Տեղական բարբառային բառերն ու ոճական դարձվածարանությունը համարելով անհրաժեշտ ու պիտանի արժեքներ գրական լեզվի հարստացման համար, թակունցը, սակայն, չի տարվում ինքնանպատակ կոլորիտայնությամբ և ոչ էլ այնքան «հողեղեն» է դառնում, որ ջնջում է գրականության լեզվի և գեղջուկի խոսվածքի սահմանները:

Ճիշտ է նկատված, թե բարբառային բառերը նրա գրվածքներում «նման են այն դաշտային ծաղիկներին, որոնք ավելի գեղեցիկ են երևում մշակված ծաղիկների կողքին»<sup>34</sup>:

Ժողովրդական բառարմատներն ու դարձվածքները, խոսակցական սովորական ոճերն ու բարբառների լեզվական իրողությունները թակունցն այնպիսի վիրուսուզությամբ է օգտագործում, որ թվում է, թե գործ ոմես ամենաբարեկազմ, արիստոկրատական լեզվի հետ: Այնինչ, «ոճի դենդիկմը» թակունցի պատումի միայն արտաքին, խաբուսիկ, թվացյալ տպավորությունն է, իսկ իրականում, էությամբ թակունցի լեզուն կյանքի թրթումներով ու շընչով հագեցած կենդանի խոսքն է, որ հեղինակի գոշի տակ շողշողում է բազմազան հուզական երանգներով:

Ահա, օրինակ, թակունցի նրբակիրթ, «արիստոկրատական» լեզվով գրած պատմվածքներից մեկը՝ «Միրհավը»: Այստեղ բարբառային բառիմաստներն այնքան հմտությամբ են օգտագործված ու «կարգած» բարական լեզվի բառերին, որ բոլորովին չեն նկատվում այդ «կարերը»: Օրինակ. «Անտառը ծանոթ էր նրան, գիտեր, թե որտեղ է սիրում բույն դնել ու կանչել միրհավը, մթին անտառների ոսկեկիտուր թւշունը: Անտառի մեջ մամռուտ ժայռեր կային, արշաբներ, քամուց ընկած դարավոր կաղնիներ, որոնց վրա սոմկերը շար էին ընկել: Ծառերի կիսաշոր ճղները մամռուտել էին և կիսախավարի մեջ կարծես հետին ոտքերի վրա բրդու արշեր էին կանգնած:»

Ժայռերին շհասած՝ դիմացից լսվեց հրացանի պայթյուն: Աղմուկից զրյնդաց անտառը, գեղին տերևներից ցողի խոշոր կաթիլները մետաղի ծանրությամբ ընկան խազալի վրա: Մթնկա խորշում թիրտաց գիշերահավը:

Թով պիտի լիներ: Կայժքարով հրացանի ձայն չեր, իսկ գյուղում ուրիշ բերգան շկար:

— Տեսնես ո՞վ է որս անում, — մտածեց նա:

Տերևները խշշացին: Դիլան դային տապ արավ: Պահվեց քարի ետևը: Միրհավն էր: Հանգիստ, քուզուց անելով փոխում էր արնագույն տոտիկները և կտությով բրբրում լորենու փափուկ տերևները: Դիլան դային թաքստոցից գլուխը հանեց նշանի, հրացանի փողը երկարեց քարի վրա: Բայց հանկարծ թռավ միրհավը, հետքից մի ուրիշը, ապա երրորդը, շորրորդը...»:

Մեջբերված հատվածում լեզվական կազմությունը բարբառախառն գրական հայերենն է, բայց այդ կազմության մեջ բարբառային ձևերը (նղները շար էին ընկել, արշաբներ, տապ արավ, ցուզուց անել, բերդան և այլն) այնպիսի նրբությամբ են տեղադրված գրական հյուսվածքը, որ բոլորովին չենք գգում դրանց ներկայությամբ:

Թակունցի գրվածքներում պատումի ժողովրդայնության սկզբունքի խորացմանը զգալի շափով նպաստում է հերոսների խոսքի ու հեղինակի խոսքի, հերոսների լեզվամտածողության ու հեղինակի նկարագրական ոճի ար-

տահայտման եղանակների միասնությունը, այդ երկու տարրերը իրար մոռք բերելու, «ուղանացնելու», միաձուլելու և միասեռ տեսքով ներկայացնելու ձգտումը:

Բակոնցի պատմվածքներում թե հերոսների խոսքի և թե հեղինակի պատումի միջև շատ քիչ շեմ շատ էական տարրերություններ: Հեղինակի պատումը նույնպես գտնվում է ժամանակի ժողովրդական-խոսակցական լեզվի օրենքների իշխանության տակ, սնունդ է ստանում այդ լեզվին բնորոշ շարահյուսական կառուցվածքից ու արտահայտման հնչերանգից, խոսակցական պարզ հոսանքից ու կենդանի շեշտերից: Ժողովրդական կենդանի լեզվի ալիքները ուղղություն են տալիս նրա հեղինակային խոսքին: Դա, սակայն, գտարյուն փոխառության ու ոճավորման երևոյթ չէ, այլ ենթարկված է գեղարվեստական ստեղծագործության բարդ օրենքներին, որը ինքնին կոչված է բացառել լեզվի ազգագրական վերարտադրությունը և ներկայացնել բարբարի պատճենման հնարավորությունը:

Ի՞նչ ճանապարհով է Բակոնցը համում գեղարվեստական այդ խնդրի կատարմանը:

Նրա գրվածքներում դեպքը պատմողը միայն հեղինակը չէ: Պատմողը հանդես է գալիս երկու դերով, միացնում է երկու անձնավորություն: Առաջինը դրանցից այն միջավայրի ներկայացուցիչն է, որ լսել կամ տեսել է տվյալ կոնկրետ դեպքը կամ տվյալ կոնկրետ հարաբերությունը: Երկրորդը՝ արվեստագետ հեղինակն է, որ գրական մշակման է ենթարկում «կենսական պատմությունը», գտնում է դրա մատուցման ձևն ու կառուցվածքը: Միջավայրի ներկայացուցիչը նույնպես, ինչ-որ անտեսանելի ձեռվ, հանդես է գալիս որպես պասմող, մտնում է պատմվածքների գործող անձանց շարքը և իրեն հատուկ արտահայտման եղանակը հաղորդում հեղինակի խոսքին:

Պատմողի կերպարը Բակոնցի ստեղծագործություններում հաճախակի տատանումներ է ունենում՝ նույնանալով հերոսներին և ընդլայնվելով՝ մինչև հեղինակը և, այս ճանապարհով, գեղարվեստական երկը դառնում է ավելի բազմապատկեր, գույներով բազմազան ու կենդանի: Պատմողը և հեղինակը փոխարինելով միմյանց, տարրեր հարաբերությունների մեջ են մտնում հերոսների հետ:

Բակոնցի անհատական միասնական ոճի մեջ կատարված այս փոփոխությունները ցույց տալու համար վերցնենք «նամակ ոռուսաց թագավորին» պատմվածքի օրինակը: Հեղինակից բացի, այստեղ կա նաև նրանից առանձնացած պատմող: Վերջինս ականատեսի ստուգապատում ոճով պատմում է Արթին պապի կյանքի ողբերգական էջը՝ նրա բնավորության, վարքագիր, սովորության բոլոր մանրամասնությունները: Պատմողը մեջ է բերում նաև Արթին պապի խոսքի ժողովրդական ձեւերը:

Պատմողը ամբողջ պատումի ընթացքում շարունակ տատանումներ է ունենում. մեկ փոխարինում է հեղինակին և հեղինակ դառնալով մեկնաբանում է գեղքերը, մեկ մտնում է հերոսի մաշկի մեջ՝ նրա ուրույն մտածողությամբ ու ձեռվ, նրա հայացքով վերարտադրելու անցուղարձր: Պատմողը հեղինակը է դառնում, երբ Արթին պապի ներքնաշխարհից դուրս երևոյթներն է ներկայացնում, ավելի ստույգ՝ երբ պատմում է այն մարդկանց մասին, որոնք ինչ-որ դեր են խաղում պապի կյանքում: Խսկ «նույնանում» է հերոսի հետ բոլոր այն դեպքերում, երբ ցուցադրում է պապի ներքին ապրումները, նրա հոգու տագնապներն ու ալեկոծությունը:

Առաջին դեպքում պատմողը «օբյեկտիվանում» է՝ մի տեսակ «չեզոք» դիրք է գրավում, երկրորդ դեպքում՝ «սուբյեկտիվանում» է, ամենասերտ մերձեցումն է հաստատում հերոսների հետ:

Ոճական ուրիշ երեսույթի ենք հանդիպում՝ կարդալով «Միրհավը»: Այստեղ չենք տևսում հեղինակի ու պատմողի այն հարաբերությունը, որ կար նախորդ պատմվածքում: Պատմողի դերը իր վրա է վերցրել հեղինակը: Դիլան դայու միրո պատմությունը տրվում է առանց միջնորդ-պատմողի, միայն հեղինակային մեկնաբանությամբ:

«Միրհավում» նույնպես բացակայում է հերոսի անմիջական խոսքը: Խոսքի երկու շերտերը՝ հեղինակայինն ու հերոսինը, այնպես են միահյուսվել, որ դժվար կլինի տարանջատել: Ուրիշ խոսքով հեղինակի և հերոսի մտածությունները այնպիսի ոճական միասնության են հասցված, որ պատումը ընկալվում է որպես միակտոր հոսանք: Օրինակ. «...Արեք խաղում էր մայրամուտի ամպերի հետ: Անտառում լուսություն էր: Միրհավը թուել էր հեռու... Մամուտ քարի վրա երկու փետուր էր ընկած, դեղնագույն, սև պուտերով, իսկ թփի չոր նյուղերին՝ արյան կաթիլիներ:

Դիլան դային ձորով իշավ ներքեւ

Երբեմն երազ էր թվում միրհավը, բայց մտրակի տեղերը մրմռում էին, աշքի տակ ցավ էր զգում, ոտքերը թեթև դողում էին:

Սեղմել էր հրացանի տաք փողը, ինչպես միրհավի մարմինը, որին միայն մեկ վայրկյան շոշափեց և մատների ծայրով զգաց, որ բմբուզ փափուկ է: Միրհավի մարմինը՝ տաք բմբուզ, ինչպես Սոնայի մարմինը լաշվարդ շապիկի տակ:

Տուն շնաց: Քարքարոտ արահետով իշավ այգին: Ճռնշաց հնձանի դռնակը, ներս մտավ, մեկնվեց քարե հատակի վրա...»:

Միայն հեղինակն է պատմում, բայց նրա պատումը չէր ունենա այն գեղեցկությունն ու դրամատիկական հագեցումը, եթե նրա խոսքի մեջ աննկատելիորեն մուծված չիներ Դիլան դայու պատկերացումներին բնորոշ արտահայտման ուրույնությունը:

Դիտված բոլոր ձևափոխությունները բնական հնչերանգներով են մարմնավորվում Բակունցի պատմվածքներում,—այնքան բնական, որ չի կարող խոսք լինել ոճավարման մասին: «Արվեստը որպես հնարանք» ձևապաշտական բանաձեղ խորթ էր Բակունցի գեղարվեստական մտածողությանը:

Կ. Չուկովսկին, ուսւաց լեզվի փայլում գիտակներից մեկը, ունի այսպիսի մի արտահայտություն՝ «Ժողովրդական գեղագիտական նաշակ»: Բակունցի մասին կարելի է ասել, որ նա ունի բառի ընտրության ու գործածության ժողովրդական գեղագիտական ճաշակ, որով և պայմանավորված է նրա արձակի արտահայտչական միջոցների՝ համեմատությունների, դարձվածքանության, էպիտետի, մետաֆորների ժողովրդական հիմքը, նրա «բառային պատկերների» բնականությունն ու անմիջականությունը:

Ժողովրդական ֆոլկլորային ակոնքներ ունեն Բակունցի կիրառած գարձվածքայնությունը, այլարերությունը, մետաֆորները: Ստեղծվելով ժողովրդի լեզվանական առօրյայում, լեզվի արտահայտչականության այդ միջոցները գրական կիրառության ժամանակ պահպանում են խոսքի ժողովրդական կառուցվածքը և նախադասությունը դարձնում են ավելի սեղմ ու ավելի արտահայտիչ:

Դ. Դեմիրճյանի ձեռագիր թղթերի մեջ պահպանվել է գնահատականի այսպիսի մի բեկոր. «Բակունցը բառարոնում շունի»:

Դեմիրճյանը նկատի ունի ոչ թե ուղղակի բառարոնումը, այլ նոր բառերի ստեղծումը: Իսկ թե ինչու էր Բակունցը՝ լեզվի օրենքների փայլուն գիտակը, հրաժարվում նոր բառեր հնարելուց, դա նույնպես որոշակի սկզբունք էր նրա համար: Այդ մասին նա ասում է. «Եատ անգամ ստիպված ենք լինում հնարել բառ, իրար կցել ու նոր խոսք ստեղծել, այն ժամանակ, երբ մեր գյուղերում հազար տարիներ գործ են ածվում որոշ տերմիններ ու բառեր»<sup>35</sup>:

Իր գրական աշխատանքը, այդ թվում նաև գրվածքների լեզվական ձևավորումը, նա չէր պատկերացնում ժողովրդի անմիջական շփումից անկախ: 1929 թ. գրած մի նամակում Բակունցն ասում է, որ մտադիր է դուրս գալ շըրշագայության՝ ժողովրդագիտական նյութեր հավաքելու նպատակով. «Որոշել եմ սապոդներ հագնել, մի սումկա ուսս գցել, ման գալ գյուղեր, քաշաքներ, հավաքել փշուններ և մի բանի բան ստեղծել»<sup>36</sup>:

\* \* \*

Ակսել Բակունցը հայ մշակութի հավիտենական շարժումը մտած սիրելի ու թանկագին անուններից է, որի վաստակը ընդմիշտ կապրի սերունդների հիշողության մեջ, նրանց հոգում առաջ բերելով երախտագիտության նույնափիսի զգացմունքներ, ինչպիսին ունեն նրա հանդեպ այսօրվա ընթերցողները:

Արդեն մեծ տարածություն է բաժանում մեզ Բակունցի ողբերգությունից և ուրիշ այդպիսի տարիներ կբոլորեն,—բայց միշտ, ինչպես առաջին ալպիական ծաղիկը, թարմ ու բուրավետ կմնա Բակունցի վաստակը՝ ժամանակի լութացքի մեջ ավելի իմաստնացած, միշտ կհիշվի ազնիվ հշմարտությամբ ժանրացած նրա հայացքը, որի մեջ երևում են ժողովրդի ապագայի հրացոլքը, նրա ճակատագիրն ու շուայլ ավանդները:

Ամեն մի նոր սերունդ նրա ստեղծագործության մեջ կրացի ենոր արժեքներ. մերթ կայծքարի նման փայլատակող, մերթ աշնան անտառի տերևների նման խշշացող, մերթ լիքը հասկերի նման ճայթող, մերթ պոզպատի պես զրնգացող ակսելյան բառերի գեղեցիկ հյուսվածքից կրազի հայրենի հողի, մայրենի լեզվի, ազգային բնավորության, երկրի բնության և հշմարտության մեծ սերը,—նվիրական սկզբունքներ, որոնց շազախից էլ կազմված էր Բակունցի անկրկնելի անհատականությունը:

## ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

Դու կամեցար քո երգերով  
Լինել հեռու ու անազարտ,  
Երգողական բո ձեռներով  
Թռնել միայն դափնի ու վարդ,  
Բայց կոչեցին օրերը թեզ  
Ռոպես մարտիկ, շեփորահար...

Այս տողերով է բնութագրել Գուրգեն Մահարին իր ստեղծագործությունը՝ Ճշմարիտ ինքնանկար-խոստովանություն՝ հանված անցած ճանապարհի և սեփական գեղարվեստական փորձի տվյալներից:

Գուրգեն Մահարու ստեղծագործության մեջ, արդարն, առանձնահատուկ երանգ է ստացել ժամանակի ու դաշտային ժաղիկների, շեփորի ու վարդի, օրերի շառաչի ու գարնան անձրենի, դարաշրջանի ու ջինջ, վճիտ աղջկա, ժողովրդական լայն կյանքի ու ճերմակ, խըշացող բարդիների ավանդական «հակասությունը»: Դա հասարակական և անձնական ապրումների, կողեկահիվ ու անհատական զգացմունքների, պոեզիայի առարկայի և նրա գերի հարց՝ է, որը Մահարին լուծում է դրական ձևով և սկզբունքորեն ճիշտ: Այդ երկու կողմերը հանդես են գալիս անիւզելի միասնության մեջ. ոչ կարմիր կակաչների սերն է ղոհարերվում պղնձե քնարին, ոչ էլ պոեզիայի տեսադաշտից դուրս է մզվում նրա էությունը՝ քաղաքացիական բովանդակությունը: \*

«Կարմիր կակաչներ» (1947—1948) բանավիճային պատմվածքի մեջ, ամփոփելով իր երկարամյա մտորումները արվեստի նպատակների շուրջը, Մահարին հանդում է հեղափոխական նոր իրականության և մարդկային քընդուզ հույզերի, ժամանակի և աշխարհի «բոլոր ծաղիկների» բարձր սինթեզի անհրաժեշտության գաղափարին:

Գուրգեն Մահարու ստեղծագործության «թաքուն արդիականությունը» շհասկացվելով, քննադատության կողմից դիտվել է իբրև հեռացում ժամանակի այրովի խնդիրներից, որակվել է «ստեղծագործական շեղոքություն» անունով, իսկ նրա որոնումները ինքնատիպ և ինքնուրույն գրելաձեկի բնագավառում համարվել են սոցիալապես շիմաստավորված ոճի ու ձեկի դրսնորում: Տիսուր թյուրիմացություն, որի մեջ անհրաժեշտ ուղղումներ մտցրեց ժամանակը:

### 1

Գուրգեն Մահարին («մետրիկական» վկայականով՝ Գուրգեն Աճեմյան) ծնվել է 1903 թվականի օգոստոսի 1-ին, Վանում: Հայրը՝ Գրիգոր Աճեմյանը, ծննդավայրի դպրոցներից մեկի տեսուչը, հայտնի էր իբրև Կրթված անձնավորություն, նաև քաղաքական գործունեությամբ՝ «արմենական» կուսակցության շարքերում (1907-ին դառնում է ներկուսակցական պայքարի ղոհերից):

Նախնական կրթությունը Գ. Մահարին ստացել է Վանի Նորաշեն և Երամցան վարժարաններում, աչքի ընկնելով իբրև ընթերցաւեր աշակերտ։ Առաջան վարժարաններում, աչքի ընկնելով իբրև ընթերցաւեր աշակերտ։

«Ոսկե մանկությունը»՝ «ամենամեծ արևոր երկնքի վրա», շարունակվում է կարդացած զրբերի ներշնչանքներով, մինչև աղեսավոր-սեավոր 1915 թվականը, երբ ոչբացավ քարտեզի վրայից այն, ինչ կոչվում էր Արևմտյան Հայաստան և մեկուկես միլիոն հայերի արյունից մի անգամ էլ ծաղկները կարմըրեցին և վերջալույսները արյուն հագան...»<sup>2</sup>:

1915 թվականին, հերոսական ինքնապաշտպանությունից հետո, Վանի բնակիչները ևս բռնեցին գաղթի ճամփաները՝ շարժվեցին դեպի Կովկաս։

Գաղթողների մեջ էր նաև Մահարին՝ մոր և եղբայրների հետ։ «Ես էջմիածին ընկա, հետո Դիլիջան, հետո Երևան, քաղաքից քաղաք, փողոցից փողոց, մայթից մայթ, որբանոցից որբանոց»։

1917-ին, երբ արդեն սկսել էր «գաղտնի տեսակցությունները» Հելիկոնի մուսաների հետ, Մահարին դառնում է Երևանի թեմական դպրոցի աշակերտ։

Այդ օրերի իր ներշնչանքների մասին գրել է. «Կարդացի Տերյանի «Մթընշաղի անուղղները»։ ԱՌոելի տպավորություն։ Թեմական դպրոց։ Արսեն Տերտերյան։ Երևան, երկրորդ որբանոց։ Խմորատիպ թերթ՝ «Նպատակ»։ Առաջին արձակ և շափածո բանաստեղծություններ։ Առաջին անգամ տպվում եմ Երևանի «Աշխատանք» շաբաթաթերթում։ 1917 թ. նոյեմբերի 23-ին։ Ապա Թիֆլիսի «Վան-Տոսպում», «Հորիզոնում», Երևանի «Ժողովուրդ»-ում։ Աշակերտական «Վերածնունդ» շաբաթաթերթում։ Երգիծական նամակների շարք։ Թիֆլիսի «Վան-Տոսպում»՝ գրախոսական-հոդված «Հրազդան» գրական ալմանախի մասին՝ Մենարփունի ստորագրությամբ։ Էլի կեղծանուններ՝ «Գ. Արփունի», «Գ. Դժուն», «Գուրիս», «Գուրգեն», «Գ. Մահարի»<sup>3</sup>։

Սկսնակ Մահարու վաղ տպավորությունների մեջ էր տասական թվականների գրական երիտասարդության կուտքը՝ Վահան Տերյանը։ «Իր տիրաշունչությունը մավզե շնչով ինձ օրորել էր Վահան Տերյանը և անձրևով ու մշուշով լցվել էի ես, որբանոցը, Երևանը, աշխարհը»<sup>4</sup>։

Վահան Տերյանի լուսեղեն անուրջների կողքին հայոց Հելիկոնում տիրագան դիրքեր էր գրավել այսպես կոշված «գաղթականական» պոեզիան՝ մեռելոցի, մոռացումի, ունայնության, կիսալուսինների, անլույս գիշերների, ու ուրպականների, գերեզմանների, աղոթքների, ստվերների պատկերային դալուկ շարքերով, որոնց շունչն ակներնորեն զգացվում է Գ. Մահարու վաղ (1917—1922) ընարի ոճային համակարգի վրա։ «Երկնքում թոշուններ են մեռել, մաղում են փետուրներ հեռավոր...», «Զորն է ընկել իրիկնային բեկունքամին...», «Արտամետյան գիշերներ իմ երգերի պարտեզում», «Խոհերս կդառնան մոռացումի հովիտեն...», «Անսկիզբ, անվերը անձրևն է երգում...», «Ցայդը անլույս, սկասե...», «Չար կյանքում շկար ոսկե բանալին»..., «Դու մի նուրբ աղջիկ ես, դու մի սկ վերջալույս...»։

Առաջին բանաստեղծությունների տպավորության հիման վրա «Վան-Տոսպ» թերթը 1918 թվականին, ի լուր ամենքի, հայտարարեց. «Թուրքահայոր գրականությունը որբ մահարիներով պիտի ծաղկի»։

Հայ ժողովրդի վերջին, ծանրածանր դեպքերի բնորոշ կոլորիտն արտահայտող «կապույտ առասպելների», մոխրագույն զանգերի, մենավոր գիշերների,

խորտակված պատրանքների նվազները, իր իսկ բնորոշումով՝ «մեռնող երգեր», չէին հնչում սպասածին պես: Մահարին խոստովանում է՝ «աշխարհը հուր է հագել, բո երգը չի ճանաշում» (1919), այդ խոստովանության միջոցով արտահայտելով բանաստեղծական նոր ոիթմերի հասունացած պահանջը:

9. Մահարու բանաստեղծություններում, ի տարբերություն հայոց Պառնասում «նարեկացիություն» ճովլողող, անհույս աղոթքներին տրված գրիչների, կային նաև արևային լույսի շերտեր, հույսի երազանքներ՝ «Մթնշաղի կապույտ թևին՝ արևի ոսկին...», «Լույս կա դարձի կածանում», «Հոգիս մի կարմիր թռչուն-փարվում է արևին»...

Սա բանաստեղծական իր տեսագիծն էր, որով հաղորդակցության էր զնում Վահան Տերյանի) և Միսաք Մեծարենցի արևականչերի հետ՝ «Երեկոներդ հնչում են հիմա որպես մոխրագույն, հեռավոր զանգեր՝ երգերիս կապույտ մարգերի վրա...» (1922):

Բանաստեղծության մեջ յուրացնելով կապույտը, Գուրգեն Մահարին, բնականաբար, անշատվում էր սևազույն տեսիլքներից և կապույտի ճամփաներով մղվում դեպի արևային գույները: Նրա «արևային տարերքի» ծննդյան մեջ, անտարակույս, դեր է խաղում Եղիշե Զարենցի հեղափոխական ոիթմերի և հրային շիկացումների բանաստեղծությունը:

«Դժգույն էր և աղքատ դաշնակցական Հայաստանի Պառնասը: Դաշնակցական Պառնասն այդ դժվար տարիներին բռնված էր գինարրուքով և թղթախաղով:

Որբանոցային «գրական» աշխարհում սիրված էր Վեսպերը, որը ստեղծել էր մի տեսակ գաղթականական պոեզիա.

Ոսկե աշուն է նստեր մեր մոխրացած տան բոլոր,

Ոսկեդեղին տերեներ նազով թափեր են պարտեղ...

Ոստանիկը իրեն նման կարճ ու թեթև բաներ էր գրում, Ֆենիքսը ճոռում ու կեղծ կլասիցիզմով նարեկացիություն էր անում, Արմենուհին իր սախարինել լիրիզմով սեր էր ճովողում...

Այս գորշ ֆոնի վրա Զարենցի անունը պայմբեց ոռումքի նման:

Միամանթոյի ահարկու տեսիլներով էի հուզվում, Վարուժանն էր ինձ տանում մինչև հեթանոսականը, թափառում էի Մեծարենցի «Ճամփաներում վրա», ինձ գրավում էր Թեքեյանի «Հանրմը», Կնուտ Համսունի «Պանը»:

Ու ես տեսա-ճանաշեցի Զարենցին.

Հեռո՛ւ, մոտիկ ընկերներին, աշխարհներին, արեներին,  
Հրանուան հոգիներին...

Նոր էր այդ աշխարհը, իրերը, ոիթմը, պատկերները, գույներն ու ստվերները:

Նոր էր աշխարհը, առնական, խորին:

Հեղափոխությունը ես՝ Եղիշե Զարենցով ընդունեցի այն ժամանակը՝  
Լցվեցի ես, որբանոցը, Երևանը, ամրող աշխարհը՝

Ծփոթ երգերով, ու ազմուկներով:

Երևանի երբեմնի «անգլիական բուլվարում» ժանոթանալով արդեն համբավի հասած Եղիշե Զարենցի հետ (Նիկոլ Աղբալյանի «Հայտնագործումից»

հետո), Գ. Մահարին պարբերաբար հայտնվում էր այն որբանոցում, ուր իբրև որբերի դաստիարակ աշխատում էր բանաստեղծությունների ձեռագրերը՝ կարծիքի:

Նա իր հետ տանում էր բանաստեղծությունների ձեռագրեր՝ կարծիքի: Դրանք արձագանք չէին գտնում՝ վհատ ապրումների և տեխնիկայի անկատարության պատճառով:

Մահարին պատմում է. «Ես նրան տվի մի տետր: Անհամբեր և զղային կարդաց, շուր տվեց, էլի կարդաց, չհավանեց, անցավ, կրկնեց և մատը դրեց մեկի վրա.

— ԱՇ, այս մեկը լավն է...

Արտասանեց առաջին տունը.

Փեկ եմ ես կապույտ նազանքների մուժում,  
Ինչ-որ իզուր ու զար ցրել եմ ու թաղել  
Հին գյուղերի ճամփին, ճամփաների փոշում...»

Այդ օրերին էլ դրվում է Զարենց-Մահարի մտերմության և գրական համագործակցության սկիզբը, որը ճակատագրական դեր խաղաց գրական այլ այլ ուղիների վրա տատանվող Մահարու բանաստեղծական անհատականության ձևավորման մեջ:

## 2

Քսանական թվականների սկզբից «որբանոցային տղաների»՝ սկսնակ բանաստեղծների հետ Ալեքսանդրապոլի «Բանվոր» թերթի սրբագրիչ Գուրգեն Մահարին ներգրավվեց պրոլետարական գրական շարժման մեջ՝ նախ իբրև Ազատ Վշտունու «Մուրճ» (1922-ից), ապա՝ Եղիշե Զարենցի «Նոյեմբեր» (1925-ից) խմբակցությունների եռանդուն անդամ. թե մուրճական, թե նոյեմբերական շրջաններում Մահարին երևաց իբրև գրական խնդիրներով այրվող խառնվածք՝ միշտ դիրքերի վրա, գրապայքարի հորձանուտում:

Թեև այդ տարիներին նա կատարում է նաև արձակի փորձեր, կենինականի ագիտ-սատիր թատրոնի («Էսատ») համար գրում էր ագիտ-օպերեներ՝ ագիտկաներ, մամուլում հանդես էր գալիս հրապարակախոսական և գրական-բանավիճային հողվածներով, սակայն իր բուն կոչումը տեսնում էր բանաստեղծական մուսաների մտերմության մեջ:

Պարբերական մամուլի հրապարակումներից բացի, տասնամյակի ընթացքում լուս են տեսնում «1920—23?» (1923), «Տիտանիկ» (1924, Ալեքսանդրապոլ), «Շիրակի շրանցքը» (1925, կենինական), «Բարդիներ» (1927, Երեվան), «Վարսակներ» (1928, Թիֆլիս) գրքերը, իսկ 1932-ին՝ քնարական բանաստեղծությունների, պոեմների և բալլադների հավաքածում՝ «Մրգահաս» խորագրով, Մ. Սարյանի նկարչական ձեռավորումով և դիմանկարով:

Լինելով տպավորվող բանաստեղծական խառնվածք, Մահարին իր «քնարական աշխարհը» կառուցելիս, բնականաբար, սկզբում գնում է սիրելի բանաստեղծների հետքերով: Նրա տողերն են խուժում տերյանական-մեծարենցյան հուզապրումներ, վարուժանյան-թեքեյանական ոճաձեւեր, եսենինյան քնարի իշող-տխուր գույներ, շարենցյան բարձրացող-պաթետիկ տրամադրություններ, լեֆիստական-ֆուտուրիստական պատկերներ՝ վերացական, կոսմիկական հաետորության խառնուրդով:

Վաղ տարիների բանաստեղծական թմանկարը ձևավորվում է հիշյալ «ակունքների» խաչավորումից:

Մերթ Գ. Մահարին հրապորվում է լեֆական հնշախաղերով և «երկաթե երգի» պաշտամունքով, մերթ նրան գրավում են Զարենցի «Խոմանս անսերի» դրույթները, մերթ՝ եսենինյան բոհեմական-կաբակային ըղձանքները («Դնամ հիմա բոսյակի պես, ընկնեմ փողոց—ընկեր գտնեմ»), մերթ նույն եսենինի «դեղկական տիբության» զանգերը, մերթ մեծարենցյան գոմախաղերը, մերթ էլ տերյանական սիրո կանչերը...

Այս բոլոր «ակունքները» Գ. Մահարու բանաստեղծություններում երևում են կամ ուղղակի յուրացումների, կամ էլ «անուղղակի» անդրադարձումների տեսքով:

Դեգերելով բանաստեղծական ավանդական և նորաճաշակ ուղիների վրա («Վերջալուսի գիշերի» և նման ավանդական պատկերների կողքին նա գրում է «արևը՝ կարմիր ափիշա» հույժ ժամանակակից տողը), Մահարին դեռևս շուներ ինքնուրույնության ներքին ուժ, ուստի և «Հարկադրաբար» դիմում էր գրական աղբյուրներին՝ հաճախ անձիշտ մեկնաբանություններով:

Գ. Մահարին հոգեկան շփման եզրեր գտավ հատկապես նէպական միջավայրի գրական մողելի՝ «եսենինականության» հետ:

Ինչպես ժամանակակիցներից շատերը, Գ. Մահարին ևս խոնկերով քուրող, գյուղական զանգերով դողանչող եսենինյան տիբության մեջ չէր նշմարում ուստի բանաստեղծի դրամայի բուն էությունը և տեսնում էր լոկ «քաղաքակրթության»՝ գյուղի ավերման սկզբնապատճառի շեշտը: Դրա արտահայտությունն էր իր «Քառասունքը»՝ շեղյալ Հիսուսին հավասարությունը գյուղացու կերպարով, որը «Երկաթե հյուրի» դեմ ուղղված եսենինի «Սօրոկուս» բանաստեղծության հայկական արձագանքն էր<sup>7</sup>:

Ա. Վ. Լունաշարսկին դառնալով Ս. եսենինի ստեղծագործության միակողմանի պատկերացմանը, գրում էր.

«Հարկավոր չէ եսենինին և եսենինականությունը բացարձակապես նույնացնել: Հարկավոր չէ ոչ թերագնահատել, ոչ էլ գերագնահատել եսենինին: Եսենինը շատ նուրբ հոգով մարդ էր, արտակարգորեն ճկուն և արտաքին աշխարհի բոլոր տեսակի շփումներին շատ դյուրին ենթարկվող:»

Եսենինը գյուղից եկավ ոչ թե որպես գյուղացի, այլ որոշ իմաստով որպես գյուղական ինտելիգենտ: Բայց նա հիանալի գիտեր գյուղը, նոր ձեռվ արտացոլեց այն պոեզիայում և շուտով մողա դարձավ: Պետք է ասել, որ այն շրջանում, երբ նա եկավ մայրաքաղաք, ուժգնորեն հրապուրվում էին գյուղով, գյուղում որոնում էին ճշմարտություն և հայտնություններ:

Գյուղի մասին, գյուղական այն տիբության մասին, որ բուրում են խնկով և զողանշում զանգերի պես,—եսենինի գրած բանաստեղծությունները նշանավորում են ստեղծագործության առաջին շրջանը<sup>8</sup>:

Եսենինի ստեղծագործության մեջ անդրադառնում են սոցիալական որոշ շերտերին համակած գաղափարական և հոգեբանական երերումները, բայց նա ներքին դժվարին պայքարով ձգտում է հասկանալ պատմական պրոցեսի ուղղությունը, ձգտում է հասուլ լինել, թե «ո՞ւր է տանում մեզ դեպքերի ճակատագիրը...»:

Մահարու հայացքների սահմանափակությունը, գումարած դրան նէպի շրջանում ստեղծված այն գաղափարական-հուղական անկայուն միջավայրը, որը չէր ըմբռնում հեղափոխության ժամանակավոր տակտիկական նահանջի

իմաստը և որի հետ կապված էր Մահարին, անշուշտ, սննդարար հող էին ստեղծում եւսենինականության տարածման, մասնավորապես քաղաքի դեմ ուղղված նահապետական-գյուղացիական խռովության տեսակետի «որդեգրման» համար:

Դիմելով «սկզբնաղբյուրներին», Մահարին որոնում էր իր երգի ճանապարհը:

Նրա ճանապարհը, սակայն, բախվում էր գրական իրադրության արգելքներին և ժամանակի գեղագիտական նախապաշտամունքներին:

«Երկարի երգի», իրեւ բանաստեղծության գլխավոր սկզբունքի, մեծարանքի պայմաններում, դասականության հերքման դարբնոցա-մուրճական դիրքերի տարիներին «անհատական» (մտերմական) սկզբունքը համարվում էր կամ գրական հին ավանդների անժամանակյա վերապրուկ, կամ նույնիսկ քաղաքնիություն:

Դեռևս չէին ճշտված նորագույն քնարերգության զարգացման սահմանները, ավելին՝ «գրական օրենսդիրները» անհատական ամեն մի հուզապրում կապում էին իր դարն անցած հոգերանության վերադարձի հետ:

Այս մտայնության դեմ առաջիններից մեկը ծառացավ Գ. Մահարին: Հայ դասականներին նվիրված ձոններից բացի նա գրեց նաև մի շարք բանավիճային բանաստեղծություններ: Դրանց մեջ էր «Վերջինը» (1924) ծրագրային բանաստեղծությունը, որով բացվում է «Տիտանիկ» ժողովածուն.

Վերջին պոետն եմ, լսեցեք ինձ,  
Վերջին կարոտն կմ նաիրարազձ,  
Ինձանից հետո վիճ կբացվի,  
Սահմանագիտը կլինի պարզ:

«Սահմանագիտ» հոգերանական ջղաձգությունը, յուրօրինակ ուսակցիա լինելով «սրնգային», մտերմական, անհատական քնարերգությունը հարցականի տակ զնող հայացքների դեմ, իր բոն էությամբ բնավ էլ միակողմանի տեսակալությունը: Նեփուտուրիստական հափշտակություններից և բոհեմական ըղձանքներից «աղատագրված» Մահարին կոշ էր անում վերականգնել դասականության խզված կապերը, քնարերգության մեջ պղնձեն նվագների կողքին տեղ բացել նաև մտերմական ապրումների արտահայտման համար:

Մի քանի տարի անց Մահարին գրեց իր տագնապների հերքումը՝ «Առաջինը» բանաստեղծությունը (1927), ուր ասում էր.

Ես վերջինը չեմ, հասկացեք ինձ,  
Եվ բորբ կարոտն իմ վերջինը չէ,  
Կմահանան դու, կապույտ բախիք,  
Այնքան եսր երգեք պիտի հնչեն:

Ճիշտ չի լինի ասել, թե ձկապույտ թախիծը» հաղթահարվեց վերջնականակես, առանց հոգերանական ներքին հակասությունների. բանն այն է, որ Գ. Մահարու քնարի մի երակը մնաց ողբերգական մանկության և հայրենի եղերքի ողբերգական կարոտի սահմաններում, «կապույտ տարերքի» հետ:

Այսուամենայնիվ, նրա քնարերգության մեջ բարզավաճեց հայրենի հընձանների և այդեստանների, ակացիաների և բարդիների, «ոսկե, հասկե աղջիկների...» և ոսկեհանդերձ արտերի, զարնան անձրևների ու լուսինային հովվերգության տարերքը:

Թեև ժամանակի քննադատությունը սրեր է ճոճել Գ. Մահարու բարդիների և վարսակների, սերերի և լուսիների դեմ<sup>9</sup>, անգամ նրա քնարը համարել է ժամանակավրեպ՝ հազար ու մի որակավորումներով («մեշշանական», «անհատապաշտական», «մանր բուրժուական»<sup>10</sup> և այլն), բայց այդ պայմաններում իսկ նա ստեղծել է վերին աստիճանի մահարիկական իր երգի աշխարհը՝ «իմ այգում հասել է իմ երգը, — շեմ եղել երգի մուրացիկ»:

Գ. Մահարու քնարական ներշնչանքներն ունեցել են նաև պաշտպաններ։ Դրանց մեջ էր նրա ստեղծագործության զարգացման ընթացքին ուշի ուշով հետևող եղիշե Զարենցը, որը «Մրգահաս» ժողովածուն արժեքավորել է «Մակագրություն մի գրքի վրա» հայտնի ձոնով։

Պայծառ է մեր երկրի զալիքը,  
Օ՛, բերրի հերկերի գուսան—  
Թռող հավետ ապրի այս ծաղիկը  
Մեր դաշտերում բռւսած...

b. Զարենցը Գ. Մահարու քնարը գնահատում էր նախ և առաջ, իրու «նոյեմբերական» դավանանքի յուրացում՝ երկրի առարկայական գույների արձարությունների, ապա նաև՝ զգացմունքների բնականության համար։

«Մրգահասը», արդարեւ, նորագույն քնարերգության գեղարվեստական հայտն էր։

Գուրգեն Մահարու ներշնչանքների մեջ առաջին տեղը գրավում են բնության բանաստեղծությունները։

Միանգամայն յուրօրինակ է նրա բնակարանային քնարերգության կառուցվածքը։ Տխուր և տրտում, խոնարհ և դալուկ բնության ավանդական պատկերային շարքերի դիմաց, որոնցով ողողված է եղել հայոց բանաստեղծությունը, աշնան և տերեւաթափի, մայրամուտի և մթնշաղի գույների փոխարեն իր բանաստեղծություններում Մահարին բացում է արևային, պայծառ, զրնգացող գույների շքեղ հանդես, ուր գլխավոր սահմանակետերն են՝ «զվարթ այգեստանները», «ոսկեվոր արտերը», «խրխնչացող գարունները», «ոսկե հնձանները», երկնամերձ բարդիներն ու դաշտային կակաչները, հայրենի երկրի ջինչ երկինքն ու լուսի նման թափանցիկ օդը։

Սա բնանկարչության միանգամայն նոր որակ էր։ Դրա հարուցողը իր վերածնված երկրի, զրնգացող հայրենիքի «կարմիր մրգահասն էր»։

Այս զգացողությունից էլ սկիզբ են առնում նրա գունագծերը։ ոչ թե աշնանային միալար և բեկված տերեւաթափ, այլ աշնանային «դաշտերի դեղնաբաշ ձի», ոչ թե առվակներին թեքված վշտակոծ ուռենիներ, այլ երկինք միտող, «ճերմակ հարսների» կերպարանք առած բարդիներ, ոչ թե գիշերային անլուս այգիներ, այլ վարար լուսերով շնչող վարդաստաններ, ինչպես նաև «հուռթի», «ձգոր», «կատաղի» այգեստաններ, ոսկեթաթախ հնձաններ։

Գ. Մահարին «ժպտացող բնության», «ժպտացող հողի, ժպտացող արեկ» բանաստեղծն է։ Նրա քնարական բառարանի պատկերային մասերն են «ամառային ոսկե սինին», «ոսկեթև թիթեռը», «գարնան անձրնը», «կարմիր ծաղիկները», «գունավոր ծիածանը», «ոսկեհանդերձ բարդին», «լուսավոր գետը», «հասկերի բաց խուրճը», «ոսկեվար արտը»։

Ճիշտ է նկատված, որ Մահարու բանաստեղծական մտածողությունը գունավոր է, որ նա «մի զարմանալի ու անկարելի հնարանքով կարողանում է գունավորել ամեն ինչ, այգեստանների կանաչի մեջ վառել նուան կարմիրը, շրերի

կապույտին փոել լուսնկալույսի ոսկին, աշնան դեղին հրդեհին խառնել անձրեկ արծաթը»<sup>11:</sup>

Բնության հեղեցման մահարիական կերպը ու միայն «հերքումն էր» անժամիտ, տխուր բնանկարչության ավանդների, այլև այն հանգրվանն էր, որի միշտով բանաստեղծն արտահայտում էր իր հարազատությունն աշխարհի պես-պես դրվագներին, առհասարակ կյանքին,

Դրա հաստատումն են շատ բանաստեղծություններ, ինչպիս օրինակ այս մեկը.

Հոսում են երգերս հիմտ  
Նման լուսաջուր գետի,  
Անցնում եմ իմ երգերի հետ  
Ողողված արկիդ շողբով.  
—Ընդունիր, երկիր, ընդունիր,  
Խնդրությունը բռ պետի,  
Ես այս զաշտերի արիուն  
Եվ ժաղիկների ժողկոմ...

Մահարու համար բնությունն այն կետն էր, որով իրար էին գալիս երկիրն ու երգը՝ «իմ մրգաստան երկիր, մրգանման իմ երգ...»:

Հայրենի երկրի արևային ոիթմերի ու զրնգուն գույների մահարիական արբեցումը («Զնգա արեր թող...», «Օ՛, ողողիր մեր հովհանները...», «Քո արեգով, քո զողով...», «Օ, հնաններ ոսկեդուու...», «Երկիր զաշտային, կարմիր ծաղիկ...» և այլն) ճանապարհ էր դեպի վերագտնված հայրենիքի կերպարը («իմ ելնող երկիր, նոր իմ կարոտ, քո բացվող օրն է իմ դեմ շողում...»), այն հայրենիքի, որը նաիրյան «կապույտ առասպեկներից» այլևս դարձել էր նոր առավոտների շոնչը իր վրա կրող իրականություն:

Դրանով է բացատրվում նաև Մահարու բանաստեղծությունների յուրատեսակ պաթեալիկան՝ հիմնային շնչով, որին հասավ «տխուր և արտում» նվագներից հետո:

Մահարու պեյզաժն ավելին է, քան սովորական բնության պատկերը: Լիրիկական մանրանկարների մեջ դիպուկ, երբեմն անսպասելի նրբերանգներով փոելով հայրենի աշխարհի գեղեցիկ անկյուններից մեկի շուայլ գույներն ու կուլորիտային երանգները, Մահարին արտահայտում է, Մարքսի խոսքերով ասած՝ «Ժպտացող բնուրյան» ըմբռնումը: Մահարու գլխավոր տրամադրությունը, որն անցնում է նրա բանաստեղծությունների միշտ՝ մարդու, կյանքի, աշխարհի սերն է, բնության և մարդու ներդաշնակության զգացումը: Ահա «Այգեստաններ» (1927) բանաստեղծությունը, որտեղ Մահարին երգում է Արարատյան դաշտանկարի գույների շքեղությունն ու գեղեցկությունը:

Այգեստաններ միին, սալարթավոր ու զեհ,  
Այգեստաններ, որոնք կարկամել են, տարվել  
Թւարների վրա ու բւարներն ի վեր...  
Այգեստաններ...

Այգեստաններ հութի ու կատաղի, հզոր  
Բազուկներով կահաշ ու մրգերով գեղին,  
Այգեստաններ, որոնք վարարել են այսօր,  
Սպասում են սիրով իրենց հավաքողին:

Խնկանման խաղող ու տահձ ու բալ ու զեղձ,  
Իմաստություն՝ աշնան մրգերի պես հացած,

իմ մրգաստան երկիր, մրգանման իմ երգ,  
Երգի նման անմահ, Երգի նման ասուն...  
Առեր, առեր երգըս սսկնքառ ու հզոր,  
Այգեստաններ բերրի ու ձեր գիրկը տարեք...  
Այգեստաններ, դուք, որ վարարել եք այսօր,  
Այգեստաններ...

**Մահարու բառարանում Հաճախակի Հոլովկող «ամառային ոսկե սինի», «փառահեղ աշուն», «գարնան անձրև», «ոսկեհանդերձ բարդիներ», «անձրեվով շնչող վարդեր», «լուսաջուր գետ», «Հասկերի բոց խնձոր», «շուայլ այգեստաններ» և նման ուրիշ փոխաբերություններն ու մակղիրները,—արևային, պայծառ երանգներ, — ցույց են տալիս, թե որքան հարստացել է նրա քնարերգության հոգեբանական աշխարհը: Իսկ արևային զգացողությունը ծնվել է հետզհետեւ խորացող այն կապից, որ բանաստեղծը զգում է վերաշինության հզոր տենդով ապրող իր երկրի, իր ժողովրդի հետ.**

Օ՛, ողողիր մեր հովիսները,  
Ցորենով, մրգերով ու վարդերով,  
—Հասունություն, դու որ գալիս ես  
Ոսկեվոր, ոսկեվոր մեր արտերով...

**Երգի և նոր կյանքի բնական զուգորդումից են ծնվում բանաստեղծի՝ Հայրենիքին ձոնած հավատով լի խոսքերը.**

Ես մի բառ քո ոսկերաբառ  
Ու անմահ պղնձե գրքում,  
Ես՝ քո երգը, երգիշը վառ,  
Վար իշած ինդության առորից:

**Բանաստեղծի տողերի մեջ անդրադառնում է նոր աշխարհի գեղեցկության ցոլքը.**

Զնդա արևը թռոց  
Իմ երգերի վրա  
Ու իմ երկրի անդոզ  
Տերեկներին շուայլ,  
Զնդա արևը թռոց  
Խնդությամբ իր անտակ,  
Իմ երգերի հորդան  
Երանգներին տարտամ...

**Արբեցած նոր աշխարհի կառուցման պաթոսով, մարդու փառահեղ գործերով ու վաստակներով, Մահարին իր պոեզիայի շրջապատճետի մեջ է առնում կյանքի բազմազան երկույթներ՝ սկսած Հայրենի դաշտերի կարմիր ծաղիկներից մինչև համայնական դաշտերի «քրտնաթոր հերոսներք»:**

Երկաթավոր մի բազուկ մի նոր աշխարհ է կռում,  
Մի նոր երկիր է երկնում նախրյան իմ երկրում,—

**անկեղծ ոգեորությամբ գրում է բանաստեղծը, աշխատելով գտնել այդ նոր երկրի բանաստեղծական արտացոլման ճշմարիտ ոիթմն ու պատկերը:**

**Վաղ տարիներին իր ներաշխարհի բովանդակությունը Մահարին արտահայտում էր «հին այգու անհեռանկար մենակյացի կերպարով».**

Ա՞յս, հին այգու դռան ես,  
Կնսութիւ տրտում,  
Կիշեր զիշերն անեղք,  
Այգում և իմ տրտում:

Անելանելի թախծի և անափ տիխրության այս երգին փոխարինելու է գաղիս այգու կերպարանափոխված պատկերը.

Ե՞կ, անգին, երգիս այգին,  
Ե՞կ, այնպես զով է այնտեղ,  
Ե՞կ, զզա շունչը կյանքի,  
Ու քաղիր զողովն վարդեր:  
Ե՞կ, անգին, ես քեզ համար  
Պահել իմ վերջին նուռը,  
Չիշեր է, լույս է վարար  
Ու բաց է այգուս գուռը...

Հիմնային-վերընթաց տարերքը բնավ շի նշանակում, թե Մահարու քնարեր-գության «մարգերից» նվազեցին կապույտ ներշնչանքների՝ հին կարոտների պատկերները.

Ինձ կանչում էր ողջ զիշեր,  
Հնօրյա, հին մի կարոտ...

Այդ տրամադրություն հարուցողը հեռվում մոլորված հայրենի եղերքն էր.

Ա՞յս, իմ դաշտերը լայն ու արձակ,  
Եվ մեր խրճիթը, կալը, դեղը,  
Երազի նման եկան, անցան,  
Սպիտակ իմ զառ, թողի քեզ ել:  
Եվ օրորում էր իմ սիրու թուզը  
Անուշ շրջունը հեռու արտի,  
Ու զինիս վրա խշում էր խով,  
Դաշտերում թողած ճերմակ բարդին...

Հնօրյա կարոտի արահետներով Գ. Մահարու քնարերգության սահմաններն են խուժում մանկության գույները՝ այլևայլ զուգորդություններով:

Առաջին հերթին՝ կորցրած սիրու պատկերներով, որի բարձրակետը, անտարակույս, «կարոտ» բանաստեղծությունն է.

Սիրած, ոսկե աղջիկ, դեղին, հասկե աղջիկ,  
Աղջիկ իմ շինչ աշգով,  
Իզուր տարգեցիր դու անձրեների կանչից,  
Իզուր հեռացար դու...  
Ապրում էիր պայծառ դաշտերում իմ հոգու,  
Սաղիկ էիր բացված,  
Բարգու մի ծառ էիր, իմ բարդենի, իմ քույր,  
Իմ ծաղկավոր անցյալ...  
Ա՞յս, անձրկից հետո դու ծիածան գարծար,  
Շրեղ հուր ու երահ,  
Բլուրներին ընկար, արոտներին արձակ  
Ու մարգերի վրա...  
Հետո ցնգեց այն էլ, ո՞ւր ես, սեր իմ սիրած,  
Ոսկեթի իմ թիթեռ,  
Աղջիկ էիր, թե՛ վիթ, ցնորք, մուծ ու միրած,  
Աղջիկ էիր միթե...

Ահա որը բացվեց լիմոնի պես լուսե  
 Բւ նրա պես անուշ,  
 Ա՛խ, Էլ ոչինչ, ոչինչ իմ սիրտը չի հուզի,  
 Ա՛խ, էլ ոչ մի անուն,  
 Սիրած, սակի աղջիկ, սիրո լուսե օրրան,  
 Սի՞թե էլ չես դառնա.  
 Ֆկ խառնվիր երգիս, այս արևոտ օրվան,  
 Այս ջրին ու գարնան...

**Պ.** Մահարու սիրերգներն իրենց բնույթով գերազանցապես վերհուշային պատումներ են անցած-հեռացած, շիրականացած, կյանքի դաժան հանգաւմանքննրում ավերված սիրո մասին:

Պատանության ճամփաներին հանդիպել է ցնորք աղջիկը, «Հրաշալի անծանոթուհին», իբրև լուսեղեն երազ, բայց փշրվել է երազի կառուցվածքը.

Նույն գետն է աղից,  
 Գիշերը սկ է,  
 Ջինչ, վճիռ աղջիկ,  
 Մեռավ քո սերը:  
 Երինչում է դուն  
 Ուկերաշ իմ ձին,  
 —Չես հասնի նրան,  
 Մի նայիր սանձին...

Բանաստեղծին երեսում են «դեղնածամ մանկության» պատկերները, որոնք բնականաբար, հարուցում են անդարձության ապրումներ՝ «անձրկը երգեց թաղման պատարագ...»:

Սիրո վերհուշային պատումներից հուզական խոր լիցք ունեն հատկապես քննարական մոնողրամաները՝ «Բալլաղ Զալոյի և առաջին սիրո մասին», «Թարդիներ» և այլն:

Ինքնակենսագրության տվյալներով Զալոյի մասին բալլագում Մահարին առաջին սիրո կորսալան նյութի հիմքի վրա արտահայտում է առհասարակ կյանքի գեղեցիկ սկզբունքների ավերման դրաման: Մանկության հուշերի մեջ Զալոն երեսում է իբրև ամենապայծառ կետը՝ հարուցելով բանաստեղծական հրաշքի վերապրումը.

Զալոն իմ շունն էր, շալ-շալ աշք ուներ,  
 Զալոն շնաղ էր, պայծառ Զալո,  
 Ընկնում էր ոտիս, աշքը փակում էր  
 Մածկվում էր տատիս շալով:

Ես հանում էի մեր հին գրացից  
 Գույնզգույն լաթեր ու սրմա,  
 Զարդարում էի պոլից մինչի վիզ  
 Աւ տահաճ գաշտերը նրան:

Զալոն բայլում էր պշուհու նման,  
 Սլվան պոլը բռնած ցից,  
 Քավում էր ոտիս, մոռում էր մոռալ,  
 Մառում էր հոգարտ հանուլից...

Այս հավերգությունը ավարտվում է, սակայն, ծանրածանը հանգամանքների բերած ողբերգությամբ.

Գաղթի մալթ ճամփին կորավ իմ շունը,  
 Թով գիտի ո՞ր ձին կոխոտեց...

Եուրջս մեռնում էր վերջին աշտանը,  
Չմնաց ինձ ոչ մի ընկեր...

Երազից իրականություն, իրականությունից դարձյալ երազ,—այսպիսին է բալլագի «անցումների» էությունը:

Դաղթի ճամփաներին խորտակված մանկության խորհրդանշանը, Զալոյից բացի, նաև խաժ աշքերով և ոսկեգույն մազերավ այն աղջիկն է, հովիսյան տաք գիշերներին որթատունկի տակ խոնարհված այն աղջիկը, որի մշուշվոծ հայացքից երեսում է առաջին սիրո պատկերը.

Զալոն է նայում նրա աշքերից,  
Զալոն է տիտուր նայում...

Մանկության գույներից գալով դեպի իր ներկան, այդ «անցումով» Մահարին ավելի է սրում մանկության անդարձության թեման («Օրերի հեռվում նրա հաշոցը հնչում է կարծես լալով...»), ավելի է շիկացնում երազի անիրագործելիության բանաստեղծական թեման:

Ինչ-որ շափով, հատկապես մոնողրամայի կառուցվածքով և հուզական անմիջականությամբ Սերգեյ Եսենինի «Կ սօբակ Կագալեա» հրաշալի պատումը հիշեցնող Զալոյի բալլագի յուրօրինակ լրացումն է «Բարդիները՝ արտեզրին հանդիպած հրաշք-աղջկա («Դու այնքան աղջիկ, այնքան անմեղ...») կերպարով»:

Ինչպես առաջին դեպքում, այստեղ ևս երազի կառուցվածքը տեղի է տալիս դաժան կյանքին.

Առաջին հանդիպում... և ինձ թվաց.  
Որ նման ես դու ճերմակ գառի,  
Ուզեցի քեզ հետ զաշտը զնալ,  
Ու հասնել ճերմակ բարդի ժառին:  
  
Ուզեցի, բայց դու զնացիր տուն,  
Եվ երազ դարձար, դարձար վերհուզ,  
Սփռվեց գորշագույն մի իրիկուն,  
Ու մի շուն հաշեց հեռվից հեռու

Համարյա նույնությամբ կրկնվում է իրադրությունը. երազի պես գալիսանցնում են մանկության գունավոր պատկերներ՝ դաշտն ու խրճիթը, կալնու դեղը, այդ կետից էլ սրելով երազի կորստյան վերապրումը.

Ու գլխիս վրա խշում էր խոզ  
Դաշտերում թռղած ճերմակ բարդին.

Մանկության հուշերը Գ. Մահարու ներաշխարհում բեկվում են ոչ միայն «տիխրության սաղմոսներով», այլև մահարիական ժպիտներով.

Արագիներ, կաշաղակներ, գծեր,  
Քեֆ արեր, քանի լուսին կա դեռ...

\* \* \*

Ա՛խ, ծղրիդներ շատախառ,  
Լուսընկայի հետ  
Ենվեցի ձեր պատճառով  
Այսպես պտետ:

Գ. Մահարու քնարերգությունը ոչ թե լուսանցք է նորագույն հայ բանաստեղծության մեջ, այլ նրա հիմնավոր էջերից մեկը: Նշանակալից է այդ քնարերգության արժեքը՝ մի քանի առումներով:

20—30-ական թվականների գրական եռուզեռի մեջ, երբ բանաստեղծությունը բաժանում էին այլեւայլ տարատեսակների՝ «արտադրական», «քաղաքացիական», «մատերմական» և այլն, Մահարին վերացրեց այդ սահմանագծերը, բանաստեղծությանը վերադարձրեց ներքնաշխարհի՝ հոգեկանության հատկանիշը, ստեղծեց կարոտի, սիրո, բնության բանաստեղծությունը:

«Տանջանքով երկնում էինք նոր երգի նոր ապագան»,—սա ոչ թե գրական կեցվածք էր, այլ ստույգ բացահայտումը այն դժվարությունների, որ կանգնած էր նորագույն բանաստեղծության առաջ: Ինքը դրա կրողներից մեկն էր:

Գ. Մահարին երեսույթ է նաև իր՝ մահարիական ինքնուրույն «ոճի գյուտով»: Փորձարկելով տերյանական-մեծարենցյան-շարենցյան-եսենինյան քնարի ավանդները, նա ստեղծեց իր որակը՝ իմպրեսիոնիստական ոճի շաղախով:

Ճիշտ չի լինի, իհարկե, Մահարուն վերագրել իմպրեսիոնիստների փիլիսոփայական խորացումներ, գեղագիտական հատուկ առաջադրանքների լուծումներ:

Պարզապես ծայրաստիճան զգայուն, սուր քնարական խառնվածքի դրդումներով նա իր բանաստեղծություններում առավելապես հակված է դեպի երեսույթի սննմիշական հուզական արձագանքը, առաջին տպագորությունը, որը և՛ բերում է իմպրեսիոնիստական ոճածներ՝ նրբագծեր, ուրվագծեր, գունախաղեր, հոգերանական պառզաններ, ֆրազի «անտրամարանական» կառուցվածքներ և այլն:

Գ. Մահարու քնարերգությանը բնորոշ ուրվագծային-նրբագծային-էսքիզային ոճաբանությունը երեսում է նաև իր այսպես ասած «սյուժետային» գործերում՝ պոեմներում և բալլագներում: Ոչ միայն «Ծիրակի ջրանցքը՝ «լեֆիստական բուրմունքի» այդ նմուշը, այլև մյուս պոեմները («Գյուղերի երգը», «Կեսպիշերից մինչև առավոտ», «Վերջին մայիսը», «Արնախեղդ վարդեր» և այլն) Գ. Մահարու ստեղծագործության ընդհանուր հաշվեկշռի մեջ ունեն սուկ թեմատիկական վերակառուցման արժեք: Ինքնաբացահայտումների քնարերգում այդ պոեմներում արդեն դիմում է սոցիալական նյութին՝ հայ գյուղերի նախահեղափոխական կյանքի իրազրությանը և քաղաքացիական կոիվների անցքերին: Պոեմ-ուրվագծերը ուշագրավ են նաև ժողովրդական ոճաբանության (բառապաշար, արտահայտչածն, դարձվածարանություն և այլն) հղումներով:

Մահարու ոճային մտածողությունը շատ ավելի հարմար էր բալլագի ժանրին. դրանով է բացատրվում նրա բալլագների («Կարմիր ճիավորի մահը», «Բալլագդ ուռենու, դարբնի սև տղայի և ենող արկի մասին», «Բալլագդ ուռեն զինվորի մասին», «Ծուր սարի բալլագը») գեղարվեստական կատարման ավելի բարձր աստիճանը:

Ահա «Ծուր սարի բալլագը («Նոյեմբերյան ֆրագմենտ»).

—Ինչո՞ւ ես լուր, մայրիկ...  
Ես հիշում եմ հիմա  
Կոիվը Շուր սարի:  
—Ինչո՞ւ ես տիմոր, մայրիկ...  
Թանի կտրիճ ընկավ  
Ծուր սարի մութ լանջում:  
—Դու լալիս ես, մայրիկ...  
—Մաղիկներն են կանչում  
Ծուր սարերի լանջում,

Շուր սարերի վրա  
 Մի օր ընկան նրանք,  
 Հանգան որպես կրակ...  
 Ախ, մնացին անտես  
 Էս արկին կարմիր,  
 Որ բարձրացավ, առես,  
 Շուր սարերի լանջից...  
 —Դու ժպտում ես, մայրիկ...  
 —Շուր սարերի լանջում  
 Սաղիկներն են կանչում...

Սակավաթիվ այս շափատողերի տարողությունը մեծ է, դրանք կրում են կարևոր բովանդակություն: Հերոսական պայքարի մի ամբողջ դրամա է ամփոփված մոր և որդու զրույցի մեջ. արդար գործի, ծողովրդի երջանկության համար նահատակվել են հայրենի աշխարհի կտրիճները, կարմիր արյունով են ներկել նրանք հայրենի լեռները, կանչում են սարերի ծաղիկները, բայց նրանք չկան... Այս բալլագի մեջ ողբերգական կոլորիտը միահյուսվում է լավատեսական վերջվածքին, հաստատվում է գիտակցված նահատակության՝ անմահության գաղափարը, որը Մահարու նաև մյուս բալլաղների հիմնական գաղափարն է:

Երեսնական թվականների երկրորդ կեսից՝ 1936-ից սկսած Գ. Մահարու բանաստեղծության մեջ նվազում են ուրախ, «արևային» ապրումները և, հակառակը, ուժեղանում են տիտոր, բեկված տրամադրությունները:

**Գ.** Մահարին այլևս ձեռք է քաշում իր երկրային «հովվերգություններից» և ծովային կապույտ երգերից, ստեղծագործության նյութ դարձնելով սիրիյան տարագրության մեջ հայտնված անհատի դրամատիկ հուշապրումները: Այդ բանաստեղծությունները համախմբվում են «Անդունդն է վեր» շարքում (երկերի ժողովածու, հատոր I):

Թեև կյանքի վերջին տարիներին Մահարին նվիրված էր գեղարվեստական արձակին, սակայն երբեմն-երբեմն հանդես էր գալիս նաև բանաստեղծություններով:

Դրանք գերազանցորեն իր կյանքի ճանապարհի հուշային վերապրումներ են՝ ողողված իր բնավորությունից անբաժան հումորով և կյանքի անհագ ծարավով:

**Գ.** Մահարին վերջին տարիների բանաստեղծություններում ևս, ներքին պահանջով, դառնում է «արևային արվեստի» վաղեմի նախասիրությանը, տիրության մեջ անգամ հնչեցնելով լուսաճառագման, արևալույսի ոիթմեր:

Գովների հանդես, արև անմար...

**Կամ՝**

«Պղռույն քեզ, գալիք, մեծ առավոտ»:

**Գ.** Մահարին իրեն համարում է վերջին նահատակ՝

ևս գիտեմ, վերջին գոհն ևմ ևս երկորս, նաիրյան վերջին փարավոնը...

«Ներաշխարհի» բանաստեղծը վերջին բանաստեղծություններում ավելի մեծ շափով է դառնում անանձնական նյութերին, լայնացնելով իր ստեղծագործության թեմատիկական բովանդակությունը: Գրում է մի շարք հիմնալի բանաստեղծություններ, որոնցից մեկը հայոց այբուբենի տառերին նվիրված «36» խորագրով Զոնն է:

Քննադատության մեջ հայտնվել է այն միտքը, որ Գուրգեն Մահարին թե՛ւ ևսպարեզ եկավ իրու բանաստեղծ, բայց հաստատել է իրեն ու գրական արժեքների տեր դարձել իրու արձակագիր»<sup>12</sup>:

Գ. Մահարու արձակը, անտարակույս, գեղարվեստական ժանրակշիռ երեւ վույթ է, բայց նրա բանաստեղծական ներշնչանքները ևս, մասնավորապես այգեստանների ու Հնանաների, բարդիների ու կակաչների, անտառի ու անձրեվի, մանկության ու սիրո երգերը, ընդգծված տեղ են գրավում ժամանակի հայ բանաստեղծության խճանկարի մեջ: Իզուր չէ, որ Զարենցը Գ. Մահարուն գնահատում էր «վերին շնորհքով» խոսքով<sup>13</sup>, իսկ Ալիսել Բակունցը «Պրովինցիայի մայրամուտը» պատմվածքում, ի դեմս նրա ակնարկում է այն բանաստեղծին, «որից առավել քանքարով ոչ ոք չի նկարագրել բարդիները, լուսինը, չշրերի երգեցիկ զրույցը...»<sup>14</sup>: Շահան Շահնուրին գրած մի նամակում Մահարին տրտունջով գրել է. «Խմ արձակը եղավ բանաստեղծությանս գերեզմանաբարը» (27 մայիսի, 1966 թ.)<sup>15</sup>:

Գ. Մահարու արձակը:

Առաջին պատմվածքը գրել է 1923 թվականին: Դա «Սի զույգ կոշիկների պատմությունը» երգիծական պատկերն է, որը նույն տարում լույս է տեսել նաև ուկրաիներեն: Ստանալով Պավլո Տիշնայի խրախուսական նամակը, Գ. Մահարին իր բանաստեղծության միջնարարում գրում է նաև արձակ՝ ֆելիխտոնաշունչ պատկերներ, հոգեբանական էտյուդներ, օրագրային-հիշատակարանային նոթեր, որոնց մի մասը տպագրում է «Սիրո, խանդի և նիցցայի պարտիզանների մասին» (1929) հավաքածուի մեջ: Առաջին գրքում արդեն երևում են Գ. Մահարու արձակին բնորոշ այն գծերը, որոնք «մահարիական որակ» դարձան հաջորդ տարիների գրվածքներում: «Անսյուժե», համառոտ, խտացած պատում, քնարական անկաշկանդ հնչերանգ, գրնգուն, ուշարաձիւ» հումոր, նախադասության ֆրագմենտային կառուցվածք, լուսաստվերի ոճաբանություն, շեղումներ շարահյուսման տրամաբանական և քերականական կանոններից, —այսպիսին են Գ. Մահարու արձակի արտահայտչական սկզբունքները: Գ. Մահարու արձակը ոճային առումով թեև իր բանաստեղծության շարունակությունն է, սակայն զտարյուն բանաստեղծական արձակ էլ չէ:

Գ. Մահարու պատմվածքների մի շարքը նվիրված է քանական թվականների գրականության էական խնդիրներից մեկին՝ ընտանիք, սեր, խանդ, անհատի պատություն:

Նոր հոգեբանության, բարոյական նոր լմբունումների կազմավորման տարիներ էին, ժամանակի հասարակագիտական միտքը եռանդով զբաղվում էր ժամանակակից ընտանիքի և սիրո «առեղջվածով», քաղցենիության դեմ մղած պայքարում հասնելով այնպիսի ծայրահեղությունների, որ անհատական ամեն մի ապրում, անգամ՝ սիրո զգացմոնքը, համարվում էր «քաղցենիական հոգե-բանության մնացուկ»: Գ. Մահարին, որ իր բանաստեղծություններում մեծարում էր անհատական ապրումները, արձակում ևս, արդեն բանավիճային շեշտով, «իւառնվում է» հասարակագիտական խոսակցություններին, ասպարեզ հանելով հարցերի իր պատասխանները:

Սիրո և ընտանիքի շարքի համար հանալի կարող է լինել «ինչպես են զրվում պատմվածքները»<sup>16</sup> բանավիճային հոդվածը, ուր Գ. Մահարին նուրբ հեգնանքով «դիմադրում է» գոեհիկ ըմբռնումների ուժեղացող տարափին,

մարդու հոգեկան կյանքի զիգզագները համարելով գրականության զննումների գլխավոր առարկան:

Բահավիճային շեշտ ունեն նաև այդ նյութի արձակ պատումները:

Հետաքրքրական կառուցվածք և լուծում ունի, օրինակ, «Երբ գարունը բացվում է...» եղելություն-հեքիաթը:

Բանֆակի ուսանողներ Գարեգինը և Գոհարը, մթնոլորտի աղղեցությամբ, սերը համարում են «բուրժուական նախապաշտամունք» և բաժանում են հասարակական պարտքի ու անհատական զդացմունքի ենթադրյալ խրամատի հայցքը. Ի՞նչ նոր մարդ, եթե նա պետք է գերի մնա իր ապրումներին:

Այսուամենայիվ, դեպքերն այնպես են դասավորվում, որ «կողմերը» վեր են բարձրանում միամիտ հայացքներից և ամբողջ էությամբ տրվում են սիրո պսակին:

Այս պատմությանը հետեւում է զտարյուն մահարիական լուծումը՝ պատմըվածքին կցված հետևյալ «հեքիաթով». «Լինում է մի աղջիկ (առանց «չի լինումի»), հետո էլ մի տղաւ նրանք փնտրեցին առիթներ իրար հանդիպելու և երբ բոնեցին իրար ձեռները, այդ շատ դուրեկան թվաց նրանց և մարդիկ ասացին, որ նրանք իրար սիրում են: Նրանք քիչ էին հանդիպում մեկ-մեկու, իսկ երբ հանդիպում էին, աշխատում էին շտեսնելու տալ: Այսպես անցան գարուններ, ամառներ, աշուններ և ձմեռներ, մինչև որ նրանք ծերացան: Ծերության օրերին անգամ, երբ նրանք փողոցում պատահմամբ հանդիպում էին, էլի կարմրում էին, կարմրում և խուսափում:—Ես ձեզ կպատմեի այս հեքիաթը, բայց միևնույն է, ձեզանից ո՞վ կհավատա դրան...»:

Մահարիական վերջվածք՝ երկույթի հեգնական գնահատականով, որ նշանակում է հերքման մեջ՝ հաստատում: Այս պատմվածքի նախադրույթի հոգեքանական խոր բացահայտումն է «Սիրո, խանդի և նիցցայի պարտիպանների մասին» պատումը:

Երկու անձնավորություն, դաշնակցական բանակի սպան, որ նաև հարրստության տեր է և շարքային հեղափոխականը, սիրում են Մելինին: Սա կանգնած է ճակատագրական ընտրության առաջ, առաջինի մոտ գրալում է բարեկեցիկ կյանքի հեռանկարը, երկրորդի մեջ՝ զգացմունքը: Ի՞ւմ հետ գնալ,— խճճված իրադրության մեջ Մելինը մերժում է հեղափոխականի սերը և նախընտրում հարուստ սպային:

Մերժման պատճառաբանությունը. «Ես մարդ եմ և մի կյանք ունեմ, ես ուզում եմ քո սեղանի վրա այդ ատրճանակի փոխարեն նիցցայից պատվիրած ծաղիկներ տեսնել, ես նրանց հոտն եմ սիրում և ոչ թե ձեր վասողի հոտը: Խսկ դուք ուզում եք բոլորիս վայրենացնել...»:

Դեպքերը դասավորվում են այնպես, որ Մելինը սպայի հետ փախչում է արտասահման:

Պատմվածքում էական դեր են խաղում հեղափոխական-հերոսի մտորումները: «Կաղափարական հերոսն» այն մտքին է, որ լիարժեք, բարձր զգացմունքների՝ ծաղիկների վայելքի համար, անհրաժեշտ է «նիցցայի պարտիպաններին» վերադարձնել հոգեկան ազատաթյունը:

Ե՛վ հիշատակված, և մյուս կենցաղանկարներում («Աշնանային պատմություն», «Հուսինը ձախից կամ սովորական սեր» և այլն) Մահարին ոչ այնքան գեղքերն է վավերագրում՝ իր հեղինակային հետեւթյուններով, որքան ընթերցողի հետ զրույց է բացում կենցաղի դժվարին խնդիրների շուրջը:

Այս առումով ուշագրավ է հատկապես «Լուսինը ձախից կամ սովորական սեր» պատմվածքը, ուր Մահարին բանեցնում է իր բանավիճային ձիրքն ու նուրբ հումորը:

Հեզանքն ուղղված է առավելապես Թևանյանի դեմ, որը տարված հասարակական գործունեությամբ, աչքաթող է անում իր ընտանիքը, կնոջը՝ Սոֆիկին: Բնականաբար քայլայվում է ընտանեկան ներդաշնակությունը. «Եսկ ձախից ոչ մի լուսին շբարձրացավ, որպեսզի լուսավորեր գոնե մի սովորական սեր, ուրիշ մի սիրուց լուսնահար...»:

Մահարու պատմվածքները շկան քանդակված կերպարներ ու հոգեբանական «լուրջ» գործողություններ, նրանցում իշխողը հեղինակի քնարական հնչերանգն է, դեպքերի մատուցման, ազսպես ասած, հարևանցի, ի միջիայլոց պատումը, անմիջական զրույցի ձեր:

Պատմվածքների տիպուր երանգները դառնում են գրնգուն, լուսավոր, ժպտացող, երբ Մահարին արդին նկարագրում է բնական հարաբերությունների մեջ հյուսված սերը:

«Արենոտ և փոշոտ ճանապարհով գնում էր կուսդալրոցի ուսանող Սերգոն, ձամփու պաշարի և գրքերի պարկն ուսին, քթի տակ մոմուալով ինչ որ դաշտային երգ», — սկսում է Մահարին հերոսի նկարագրությունը («Էլեկտրական լուսին»), ապա անդրադառնում է մանկական «հիշողություններին»՝ թամուշի հետ միասին «կառուցած» ջրաղացը գետափի, գյուղական առաջին դպրոցը, միենույն նստարանի վրա նստած՝ առաջին բառեր հեգելը, հետո էլեկտրակայանի հիմնադրումը՝ խնձորաղաց-ջրաղացների տեղում, կոմսոմոլի բջիջի վկայականով քաղաք մեկնելը: Կենցաղային այս նրբագծերից «ստեղծվում է» մի կերպար-կենսագրություն, մարդու հիանալի բաղադրություն, որի ներքին աշխարհը ամբողջովին ողողված է կյանքի վարար լույսով, որի համար փոխադրձ սերն ամենամեծ բարիքն է կյանքում. «Նա տեսավ փողոցում էլեկտրական լույսը, իսկ վերենում լուսինը... էլեկտրական լուսինը...»:

Մահարին կիրառում է պատմվածքների կառուցման յուրահատուկ ձեր, խուսափում է սյուժետահորինման ծանոթ սխեմաներից և ուղղագիծ ֆարուզաներից:

Կառուցվածքով և սրամիտ լուծումով հետաքրքրական է «Հին այգու պատմությունը», որտեղ իբրև գործող անձեր հանդես են գալիս ծառերը: Պատմվածքը սյուժե չունի, այգին՝ «եղու առած», պատմում է իր հին և նոր տերերի մասին: Առաջին զրույց. «Ես նորից և նորից շնորհակալ եմ թեյնար թեյնարովիշց: Նորից խնամված են իմ արմատները, ծաղկաստանն այս տարի հարստացել է նորանոր բնակիչներով, իսկ անցյալ տարվա վայրի դաշտերի տեղ բնակություն հաստատեց կեշիների մի նոր սերունդ»: Բեյնար թեյնարովիշը լիովի վայելում է տերեւաղարդի կանաչ ծիծաղը: Սակայն փոխվում են ժամանակները. «Բեյնար թեյնարովիշց խլեցին տունը և ինձ. պարտիղպանը նույն սիրով խնամեց իմ հյուղերը, բայց իմ ծառուղիներում երեացին օտար մանուկներ և տերեւաթափի վերջին մրգերը նրանք կերան: Իսկ պարտիղպանի մեծ տղան, նա, որ ամեն օր մեկնում էր տնից սպիտակ ձեռներով ու վերադառնում սկ ձեռնոցներով, նա ոկսեց ավելի հպարտ ման գալ»:

Այգու ժառերի զրույցի ընթացքում Մահարին գծագրում է հնի դանդաղ անէացման պատկերը: «Թեյնար թեյնարովիշի տանը ինչ-որ վատ բան է կատարվում: Նրանք արձակեցին իրենց ոպասունուն և կառքը ծախսեցին...», — պատմում է այգին: Հինը անվերադարձ կերպով թողնում է իր նախկին դիրքե-

ըր, իսկ նորը, որ ներկայացվում է պարտիզանի սև ձեռքերով տղայի խորհրդանշանային կերպարով, վստահորեն մուտք է գործում կյանք. «Պարտիզանի սև ձեռներով տղան ստացավ Բեյնար Բեյնարովիչի սենյակներից մեկը»: Սա հասարակ տեղափոխություն չէ, այլ կյանքի նվաճում՝ կապված ժամանակի օրինաշափությունների հետ («բնակվենք մեր շինած տան մեջ և վայելենք մեր մշակած այգու պտուղները», — հորդորում է տղան՝ տիրոջը հավատարմորեն ծառայող պարտիզանին):

Այսպես, ծառերի խշողի, նրանց զրուցի մեջ քանդակվում են այգու հին տերը՝ Բեյնար Բեյնարովիչը և նրա խեղճ, բայց հավատարիմ պարտիզանը, ապա հանդես են գալիս սրանց որդիները՝ իրենց հոգեկան աշխարհի նոր կառուցվածքով:

«Հին այգու պատմությունը» այլաբանական խորունկ իմաստ ունի: Բեյնար Բեյնարովիչի «անտրտունջ» վտարումը աշխարհից և այգու վրայով սև ձեռքերով փողոց անցկացնելու գործողությունը արտահայտում են այն իրողությունը, որ հինը արմատներ չունի իր համար անհարազատ սոցիալական միջավայրում, որ աշխարհի բոլոր պարտեզների և բոլոր փողոցների ապագան «սև ձեռներով» մարդկանց է պատկանում:

Սա անցվորների և եկվորների՝ 20-ական թվականների գրականության մեջ տարածված թիմայի յուրահատուկ արտահայտությունն էր:

Այդ թիմային է նվիրված նաև «Մայրը» պատմվածքը:

«Զյունը թափվում էր այսպես և մի տարի առաջ: Թաղաքն իր փողոցներով, տանիքներով ու ծառերով մուշտակավորվում է: Շուրջը հանդարտ է, օդի ող մի շարժում, ոչ մի անհանգստություն: Միայն թափվող փաթիլներն են իշշում խոլ, ստորերկրյա ջրի նման խոլ խշողով: Հատ ու կենտ անցորդներ ձյան սպիտակ շերտով զարդարված շտապում են, ուր որ նրանցից մեկը հազար ու նրա ձայնը ձյունապատ փողոցում խոլ արձագանքեց:

...Մի կին գնում է:

Անութի տակ շորեղենի մի կապոց, ձեռքին պարենավոր մի զամբյուղ, դանդաղ ու դժվար գնում է նաև:

Հակիրճ այս նախարանից հետո Մահարին ներկայացնում է միայնակ կնոջ մենախոսություն-խորհրդածությունը՝ իր որդու՝ սխալ ճանապարհի վրա կանգնած Տեփանի մասին, որը հակապետական հանցանքի համար բանտարկվել է ուղղիչ տան «անարև իցում»: Մի տարի է, որ կալանավորված է որդին և այդ մի տարվա ընթացքում աշխարհից վերացած, վշտի տակ կորացած պառակ կինը ապրում է հոգեբանության փոփոխության մի տանշալից ընթացք. «Չէ, նա չի տանի, որ բոլորի մայրերը հպարտանան իրենց զավակներով, իրենցը համարեն այս երկիրն ու նրա առկը, իսկ ինքը, գլխիկոր, մաշի Ուղղի տան անուրախ ճանապարհը»:

Մոր մեջ կուպում են երկու զգացմունք՝ սերը դեպի միակ որդին և այդ սերը հերքող գիտակցությունը, թե որդին սխալ ճանապարհի վրա է, արժանի չէ մայրական գորովալից վերաբերմունքին. «Ամեն մարդ իր գործին, ամեն մարդ քարի վրա մի քար է դնում, մի շյուղ է հասցնում,— դու միայն ծուռ ճանապարհի վրա, դու միայն քո ձեռքով պատժված, դու միայն...»:

Մայրական ցավի միջից լսվում է դատապարտող հնչերանգը՝ հանցավոր մարդու նկատմամբ, որը պատմության տբամաբանությամբ դատապարտված է հեռանալու ասպարեզից:

Հեղափոխական իրականությանը մերվելու մի ուրիշ դրվագ է ներկայացնում «Զիգուգնի երրում» պատմվածքը։ Հայրենիքին օգտակար լինելու բարձր պաղապարով ներշնչված, բայց ժողովրդին ծառայելու ճշմարիթ ուղիները չճանաչող Վարդան Նարինյանը դառնում է դաշնակցական բանակի ակամա վիճոր։ Անցնելով պատերազմի ավերածությունների և դաժանությունների բովով, ականատես դառնալով հայ գյուղացիության և «խմբապետական» տարբերի խոր հակասությանը, մտորելով իր գրությունը «խառը ժամանակներում», «Որոտ» խմբի զինվորը պատերազմի դաշտում ապրում է Հոգեկան լուսավորման ընթացք և այս տնգամ ոչ թե ակամա, այլ խորին հավատով ու գիտակցությամբ կանգնում է սոցիալիստական հեղափոխության դրոշի տակ։

«Զիգուգնի երրում» պատմվածքը, ինչպես առհասարակ, Մահարու շատ գըրվածքներ, հյուսված հն առանձին ֆրագմենտներից, որոնց մեջ առերևույթ բացակայում է սյուժեի տայացին թելերի կապակցությունը, իրականում դա այդպիս չէ։ «Սյուժետային» կուռ մտածողության բացակայությունը ամենակին չի խանգարում, որպեսզի ընթերցողը զգա նկարագրվող ժամանակաշրջանի կյանքի բնորոշ ոիթմը, կյանքի առանձին բեկորների ետնախորքում տեսնի փաստերի հոգեբանությունը։

Մահարու արձակի ոճաբանության համար բնորոշ է «Կարմիր կակաչներ» պատմվածքը (1947—48 թթ.), ուր Վահան Տերյանի կյանքի մի դրվագի միջոցով գրողն արծարծում է հեղափոխության և արվեստի փոխհարաբերության խնդիրը։ Մոռացված մի պատմության վերհուշ է պատմվածքի սյուժետային «միջուկը»։ Քաղաքում հայտնի ծաղկավաճառուն է այցելում Երևան ժամանած բանաստեղծը՝ Վ. Տերյանը, և ծաղկավաճառի աղջկան պատվիրում է կարմիր կակաչներ պահել իր համար։ Խոկ հայրը Տերյանի համար պահված ծաղկիները հանձնում է ուղավ տղերանց։ Դեպքն առերևույթ մեծ տարողություն չունի, բայց էական են այն դատողությունները, որ հյուսվում են ծաղիկների շուրջը։ Վ. Տերյանը՝ ծաղիկների բանաստեղծը, արդեն սոք դրած հեղափոխական պայքարի ուղին, ժողովրդի աղատագրական պայքարի իմաստը տեսնում է այն բանում, որ արդարություն լինի, որ այլևս «շթախծեն աշխարհի ծաղիկները», աշխարհը մարդու առաջ բացվի պայքառ, արևային գույներով։

Արձակագրի հայացքը անցյալից թեակոխում է ներկան. նախկին ծաղկավաճառատան տեղում, առվի մոտ «16 տարեկան մի աղջկի փոել է կարմիր կակաչներ։ Մոտենում են անցորդները, ոմանք հատով, ոմանք վինչերով գնում են կարմիր կակաչներ, վճարում են և քայլում առաջ։ Նրանց մեջ է ծաղկավաճառի դուստր՝ «սե մետափսե շորերով կինը», որը կարմիր կակաչներով փունչը ձեռքին «Տերյանի փողոցով բարձրանում է դեպի վեր և կարմիր կակաչների թերթիկները հատ-հատ պոկում ու նետում է մալթին»։

Հեղափոխությունը, — ասում է Գ. Մահարին կարմիր կակաչների խորհրդանշանով, — ոչ միայն չի խորտակել գեղեցկությունը, այլև մարդուն է բաշխել «միլիոնավոր կարմիր կակաչներ», որոնց «ուրախության» համար նահատակվեցին Շողովրդի լավագույն զավակները։

Պատմվածքում, ինչպես արձակագրին է խոստովանում, չկան «լայնարձակ» արձակին բնորոշ «կենդանի մարդիկ», որոնք «ապրում են, շնում, սիրում են, տանչում, ժպտում են, լալիս, պայքարում են, հաղթում»։

Այսուամենայնիվ մահարիական պատումները վերարտադրում են ժամանակի բնորոշ ֆրագմենտները։ Այդպիսին են «Թե ինչ պատմեցին» («Հոկտեմ-

բերյան քանդակներ») մանրանկարները: Պատմում են երաժշտական շորս գործիք՝ դաշնամուրը, զութակը, սրինգը, շեփորը:

Յուրաքանչյուր գործիք բացում է իր սիրտը: Ժամանակավոր կառավարության օրհատ է, ճարճատում են հին աշխարհի հիմքերը, վիթխարի աղմուկների մեջ լույլ է դաշնամուրի ձայնը, լքվել է ու մոռացվել՝ իր նախկին տերերի կողմից:

Դաշնամուրի շուրջը այլևս չեն հավաքվում կյանքի տերերը, այլևս մեծ դահլիճում չեն հնչում ոռմանսներն ու վալսերը, թվում է, թե եկել է արվեստի կործանման սկիզբը... Ժողովուրդը հեղափոխություն է կատարում՝ էլ ինչ երաժշտություն, ինչ ոռմանսների ժամանակ է, ժողովուրդը կենինին է լսում, ուրեմն անհրաժեշտ է լույլ,—ավարտում է իր խոսքը դաշնամուրը:

Զութակի խոսքը՝ «Իմ լարերը կարող են հնչենել և օրորոցի երգի պայծառ բերկրանքը, և որդեկորույս մոր կսկիծն ու դառնությունը»,—ընդհատվում է փողոցում պայթած համապարկից, որը ստիպում է զութակին մտնել իր պատյանը՝ մինչև գա ժամանակը: «Իսկ առայժմ կարմիր աստղակիրը մատը պարզեց դեպի փողոցը (դեպի զինվորական նվագախմբի մարտական քայլերգը)»,—այս է պահանջում ժողովուրդը:

Գյուղի երիտասարդ հովիվը՝ վարժ սրնգահարը գնաց կոիվ,—պատմում է սրինգը,—«Հրացանի հետ ինձ էլ վերցրեց հետը»:

Սրինգը նույնպես լսում է: «Իմ տերն էլ կրակում էր, կրակում ու չէր էլ մտածում իմ մասին: Իսկ եթե հիշեր ինձ ու փորձեր նվագել... չէր լսվի իմ երգը, իմ երգը, որը սիրում է արձակ դաշտերի խաղաղությունը և լուսթյունը կանաչապատ բլուրների»:

Սոցիալական մեծ ցնցումների ժամանակ հնչում է միայն շեփորը, ոտքի հանելով նրանց, «ով ճորտ է, մերկ է և ստրուկ», կովի կոշելով ազատության գինվորներին: «Ես շպետք է լուեմ,—ասում է շեփորը, —որպեսզի երկրում բարձր, ավելի բարձր և արվեստով հնչեն դաշնամուրի, զութակի և սրնգի երգերը»:

«Հոկտեմբերյան քանդակների» մեջ Մահարին վերադառնում է դեպի «ահեղ ու թևավոր» պատմության այն օրերը, երբ ահաբեկված էսթետները, հեղափոխության մեջ «գուշակում էին» բոլոր գեղեցկությունների կործանումը, «Մաքուր արվեստի» դիրքերից ողբում էին հոգեվարքի մեջ գտնվող անցյալը, չկամենալով ըմբռնել կյանքի երկաթե տրամաբանությունը՝ ժամանակավորապես լուսւմ է նուրբ երաժշտությունը, որպեսզի նոր ուժով հնչի հեղափոխությամբ նորոգված երկրի վրա:

Գ. Մահարու պատմվածքների մի մասը, ամփոփված «Լուսթյան ձայնը» (1964) գրքում նվիրված է մեր երկրի Հյուսիսում ապրող մարդկանց կյանքին: Մահարու Հյուսիսը նույնքան հետաքրքրական է և հարազատ, որքան նրան նկարագրած Հայաստանը:

Մահարին կարողանում է գրավիլ դարձնել պատմվածքը՝ առանց «գրավիլ», «Հետաքրքրաշարժ» սյուժեների: Այդ սկզբունքով են գրված «Մի անգամ դերեզմանատանը», «Արջը ծխամորճով», «Անմեղ մեղավորներ», «Ողբերգություն թոշնանոցում» և մյուս պատումները:

«Մի անգամ գերեզմանատանը» պատմվածքի հիմքում դրված է հետևյալ դեպքը. մահացել է ֆերմայի ջրկիր Վասյայի կինը՝ յոթանասունամյա Մարիա Մախանշուկը և նա մեծագույն հապատությամբ է հիշում հավատարիմ կողակցին, որը խնդրեց, որ իր գերեզմանը միայն Վասյան փորի, ոչ մի օտարար մարդ

շմուռենա: Զնայած վշտին, Վասյան այնուամենայնիվ, գոհ է կյանքից, գոհ անցյալից, իր պառավից, բայց նրա երջանկությունը կյանքի մայրամուտին խոռովում է մի հասարակ միջադեպ: Գերեզմանատուն է գալիս կոլտնտեսության հաշվապահ իվան Սերգեյից և նրանց մեջ աեղի է ունենում հետևյալ խոսակցությունը:

«Տուր... դու հանգստացիր...

Վասյա դային բահը հեռացրեց ու մոմոաց.

— Պետք չէ... ես կփորեմ:

— Հանգստացիր, էլի կփորես,—պնդեց իվան Սերգեյից:

— Պետք չի,—կրկնեց Վասյա դային,—հանգուցյալը հրամայեց, որ ես...

և շթողնեմ օտար մարդիկ...

— Օտա՞ր,—հասու ու կենտ ատամների միջից մոթմոթաց իվան Սերգեյից,

և նրա աշքերի մեջ բռնկվեց մի շար բոց:

— Օտա՞ր...,—նա ձեռքը մեկնեց գեպի բահը՝ չկտրելով իր հայացքը Վասյա դայու աշքերից:

Վասյան նայում էր նրան կարծես հիպնոսացված, կամաց-կամաց նախեղճացավ, կարծես սմբեց, փոքրացավ և բահն անցավ; ինքն էլ շիմացավ թե ինչպես, իվան Սերգեյիշի ձեռքը»:

Դեպքի շարադրանքից հետո Մահարին պատմվածք է մուծում դաշտային արահետի պատկերը. «Վասյա դային ձեռքը մի քանի անգամ խփեց ծնկին, հողը բար տալու համար արդյոք և մշուշված հայացքը հառեց զեպի դաշտերն ու արահետները: Խսկ արահետները խաչաձևում են իրար, բաժանվում, տեղադրել զուգահեռվում, հետո կորցնում են իրար, կարծես պատահաբար կանչում են հեռվից և իրար չեն լսում, չեն լսում»: Այս պատկերով Մահարին ակնարկում է այն մասին, որ կյանքը ավելի բարդ է ու ավելի հարուստ, քան կարող է թվական առաջին տպավորությամբ: Դեղագիտական այս դիրքերի բարձրակետերը եղան «հյուսալիքին շարքի» երկու գործերը՝ «Սև մարդը» և «Սաղկած փշալարեր» պատումները:

«Սև մարդը» ընդարձակ պատմվածքում ի դեմս բրուտ Աշոտ Դայու մոնումենտալ կերպարի, Մահարին արտահայտում է այն բարոյախոսությունը, որ ինչպիսի դժվարագույն պայմաններում էլ գտնվելիս լինի մարդը, պարտավոր է հավատարիմ մնալ իր մարդկային կոշմանը, պատվախնդրությանն ու աշխատավորի էությանը: Այս դիրքերից էլ նա դատապարտում է «սև մարդուն»՝ գող Մանասարին և նրա հոգեկան վերաֆության մեջ խաղում ճակատադրական գեր: Կյանքի ժանրածանը պայմաններում մարդկային բարձր առաքինությունների կրողներն են նաև «Սաղկած փշալարեր» վիպակի հերոսները՝ նկարչուհի Շարթը և կառապան Մամոն: Դժվար սերը նրանց բարձրացնում է հոգեկան արիության աստիճանին:

Ե՛վ «Սև մարդը», և «Սաղկած փշալարեր» գրված են հոգեբանական խոր թափանցումով, արձակին վայել վերլուծություններով, իհարկե, նաև Գ. Մահարուց անբաժան քնարական շնչով և հումորով:

«Մանկության» նախաբանի մեջ իր մտահղացման մասին Մահարին գրում էր. «Տարիները աղոտել են շատ բաներ, օ՛, այս շատ գծեր են չնշվել և շատ պայծառ դեմքեր մշուշվել են ուզում եմ փրկել մնացածն ու հնարավորը իմ մանկության խորասուզվող մակույկից... Հիշել եմ ուզում, վերհիշել և գրել, գրել հեշտ ու թիթե, գրել և գրալ, որ քոնքերս խփում են ներքին հուզմունքից, գրել անմշուշ, պայծառ, պայծառ, այն քաղաքի երկնքի նման, այգեստանների կանաչի և լուսնկա գիշերների խորության նման...»:

Դեղարվեստական վերին աստիճանի կարեռը խնդիր, որը, սակայն, ժամանակի գրական քննադատության մեջ արժանացավ ծուռ ու սխալ մեկնարանությունների:

Վկայակոչելով մանկության և պատանեկության Մահարու քննարական բաշահայտումները («մանկության խորասուզվող մակույկ», «իմ ծափ, իմ ծիծաղ, իմ կապույտ, ոսկի պատանեկություն»), շխորանալով պատումի գեղարվեստական յուրահատկությունների մեջ, դիրքական-ռապպական քննադատները հեղինակին վերագրեցին ոչ միայն անցյալի սրբագործման մեղադրանքը, այլև ռնացիոնալիստական անցյալի վաղաժամ կորստյան» իրեւ թե ողբերգական վերապրումի լեգենդը:

Իրականում Գ. Մահարու եռամաս պատումը («Մանկություն» և «Պատանեկություն» դրվագներին 1955-ին միացավ «Երիտասարդության սեմին» մասը) ոչ մի կապ չունի նման վերագրումների հետ: Վերջին դրվագի ստեղծագործական կենսագրության մասին Գ. Մահարին պատում է հետեւյալը. «1953 թվականին ես Զերժինսկում աշխատում էի որպես տեղական փոքրիկ, կոլխոզային շուկայի գիշերային պահակ: Ժամը 5-ին սկսվում էր իմ գիշերը և առավոտյան ժամը 10-ին միայն վերջանում: Զմեռային սառնաշուշ, երկար գիշերներ: Ես և Անտոնինան ապրում էինք շուկայի փոքրիկ պահակատանը: Դա մի հյուղակ էր հիբավի հազիկ ոտների վրա կանգնած: Տանջալից էին երկար գիշերները, անվերջանալի:—«Նստիր և գրիր,—ասաց մի օր Անտոնինան,—ճիշտ է, գրածներդ երբեք լուս չեն տեսնի, բայց գոնե գիշերներդ կկարճես... կամ, ո՞վ գիտե, գուցե...,—պետք է միայն... շմեռնել... արդարությունը կհաղթի,—գուցե հազարերորդ անգամ կրկնում եմ ես:

Ես նայեցի պահակատան փոքրիկ, խարխուլ սեղանին, նրա վրա դրված նավթի լամպին: Իմ մեջ ասես հնչեց հնօրյա, լավ օրերի հետ կապված մի երգ, վաղուց-վաղուց մոռացված: Ես ինձ գտա տեղական վաճառախանությներից մեկում, վնեցի աշակերտուկան տետրակներ, աշակերտական գրիշ ու թանաքաման, ու երբ գիշերն իջավ, նստեցի իմ խարխուլ սեղանի մոտ ու մոտ քաշեցի նավթի լամպը: Ասես մի կոճակ սեղմլեց և օրերն ու շաբաթները, ամիսներն ու տարիները թալալվեցին դեպի ետ: Ես հասա 1930 թվականին և մտիր աշքերով տեսա իմ «Մանկություն» և պատանեկություն» գրքի վերջին էջի վերջին տողը:

«Այո՛, մայրիկ, պատանեկությունը վերջացավ...»

Դեռ տասներեք տարի առաջ ես գիտեի թե որտեղ եմ հասել և որտեղից պիտի շարունակեմ: Նստեցի և գրեցի.—

«Օրը կիրակի էր:

Սուրենի և Խորենի հետ պատուհանից ներս մտանք մայրիկի սենյակը, որը նման էր մի փոքրիկ, քառակուսի տուփի...»:

Ու նևացան աշակերտական տետրի սպիտակ էջերը<sup>17</sup>:

Ինքնակենսագրական նյութի հիման վրա Մահարին ներկայացնում է այն սերնդի մանկությունը, պատանեկությունը և երիտասարդությունը, որն անցավ ժողովրդի պատմության ողբերգական շրջանի ծանրածանր դեպքերի միջով:

Անցյալի իդեալականացման վերագրումը տեղին կլիներ, եթե Մահարին ինչ-որ շափով նվազեցներ կյանքի ողբերգական երևութների հնչեղությունը, եթե հարթեր իրականության կնճիռները, եթե մոռացության տար ժողովրդի պատմության ամենաողբերգական շրջանի և նրա առավել ողբերգական հատվածի՝ արևմտահայության գաղթի, տեղահանության ցնցող ու սարսափելի անցքերը: Գրքի «արծաթաջուր», «ոսկեծամ», «շինչ լուսնային» էջերի կողքին մահարիական հնչերանգով և հումորով ներկայացված է դարգացման բնական հոնից դուրս ընկած, աղավաղված, ցավագին մանկությունը: «Միամիտ, հիմար և ծիծաղելի ժամ,—խոստվանում է գրքի հերոսը,—քեզ կարող էր ստեղծել միայն պատերազմը և աննորմալ այն տեղահանությունը, որ դարձրեց Հայերին և Սաթիկին, ինձ և Մելինին՝ բեղմնավորող ծաղկափոշի և առէջք, որոնք հանդիպում են միմյանց պատահական մի ձիու ստամոքսի մեջ... Խսկ ե՞ր ձիու ստամոքսի մեջ, որքան էլ բարեպատեհ լինի ծաղկափոշու և առէջքի հանդիպումը, ծաղկիներ են բուսել...»:

Էլ ի՞նչ ուկեզօծում, երբ մանկության ճանապարհներին չեն բուսնում անգամ ծաղկիներ... Մահարին ակամա հերքում է անցյալի սրբագործման լեզենդը, բայց հերքում է մի տեսակ ժպիտով, հեգնանքի հնչերանգով: Սա Մահարու գորելածնի յուրահատկությունն է: Այս մասին ճիշտ դիտողություն է արել Լեզոն Հախվերդյանը. «Ժպիտ էլ կա, ժպիտ էլ: Տեսիք, թե ինչ դառնագին խաղ է խաղում թշվառացող ժողովրդի մասին պատմող գրողի դեմքին: Կոտրված ժպիտ, որ շաղախված է արյունով: Այդ նույն ժողովրդի մասին ժպիտով չե՞ն գրել Պարոնյանը, Օտյանը, «Վշտի ծիծաղի» հեղինակ Առանձարը... Այո՛, կա նաև վշտի ծիծաղ: Բայց ինչո՞ւ վշտի ծիծաղ, երբ պետք է լինի վշտի լաց: Հենց բանն էլ այն է, որ ծանրագին վշտի մասին չի կարելի լալով գրել, մեծ երգիծաբանն է ասել՝ խեղճության վրա արտասուր թափելն՝ ապացուցել է, թե արյուն շունենք թափելու: Դա ունի և իր գեղագիտական բացատրությունը: Եթեծ վշտի այն ահ ու սարսափի, արյան ու ավերի մասին, որ Մահարու գրքի նյութն է, առանց ժպիտի գրել՝ նշանակում է գրել այնպես, որ անհնար լինի կարգալ: Դրա համար էլ գրականության մեջ այնքան շատ են ողբերգության մասին երգիծանքով գրող հեղինակները՝ Դիկկենս, Գոգոլ, Տվեն, Օտյան, Շոլոմ-Ալեյխեմ...»<sup>18</sup>:

Ո՞րն է, երկու խոսքով, Մահարու ինքնակենսագրական պատումի ընդհանուր, «մեծ» թեման. Հայ ժողովրդի արևմտյան հատվածի ծանրագին ճակատագիրը համաշխարհային առաջին պատերազմին նախորդող և հաջորդող տարիներին, նրա անասելի տառապանքը գաղթի ճանապարհներին և, ապա, դաշնակցության տիրապետության օրերին, ժողովրդի մարդկանց անցուղիները ժանր կյանքի մղձավանշի միջով դեպի պատմական այն սահմանագիծը, երբ «Հառնեց երկիր Նախրին՝ ավերներից և մոխրիներից և հնամյա ու հավերժական Մասսիսների առաջ պարզեց իր դրոշակը՝ մուրճ ու մանգաղով և Արարատի ժագաղակը»:

Հայ գրականության համար վճռական նշանակություն ունեցող այդ թեման Մահարին վերապատկերել է տաղանդավոր գրչով և ինքնատիպ արվեստով: Այդ թեմայի մեջ նա միաժամանակ բացել է նրա տասնյակ ենթաթեմաները՝ քաղաքական ճնշում, սոցիալական անարդարություն, տնտեսական աղքատու-

թյում, ցավու տառապանք, մարդկային արժանապատվության կորուստ, որբություն, ազգային վիշտ, լավ գալիքի և պայծառ եղերքի կարուտ, — և այլն, և այլն:

Պատմողից բացի, որը գրքի կենտրոնական հերոսն է, եռագրության մեջ ներկա է նաև հեղինակը, որն անցած կյանքի, հեռացած օրերի, «մոռացված» հուշերի նկատմամբ ունի իր առանձնահատուկ վերաբերմունքը:

Դեպքերը նկարագրում է ականատեսը, դրանք իմաստավորում է դարձյալ ականատեսը, — բայց արդեն հասունացած, ըստ որում վերջինս տեղի-անտեղի «չի խառնվում» հերոսի ապրումների ընթացքին, այլ մի թաքուն ակնարկի, քնարական մի շեղման, հումորի մի բեկորի միջոցով արտահայտում է իր վերաբերմունքը:

Չովաշունչ, խիտ այգեստանների և կանաչների մեջ թաղված Վան քաղաքում է անցնում հերոսի անկրկնելի մանկությունը: Դա անկրկնելի, բայց ամենակին էլ անխռով, իդեալական, «խաղաղ» մանկություն չէ: Մահարու գրքի մանուկ հերոսը, ճիշտ է, երգում է այդ մանկության դրվագների «կապույտ շրջան», բայց այդ երգի մեջ այնքան ցավագին տիրության շեշտեր, այնքան ողբերգական հնչյուններ կան, որ այդ երգը դառնում է բացասումն այն միջավայրի, որտեղ անցնում են աշխարհի վրա դեռ նոր միայն աշք բացող հերոսի առաջին տարինները: Մանուկ հերոսին դեռ անծանոթ են գաղթի ու արհավիրքի ծանր օրերը, իրականությանը նա նայում է դեռ մանկան վճիռ հայացքով, նրա ընկալումները կոնկրետ-զգացական հայեցությունից այն կողմ չեն անցնում, բայց այդ անմիջական պատկերացումների մեջ Մահարի-հեղինակը շատ ճշշմարտություններ ու «գաղտնիքներ է» հուշում Մահարի-հերոսին: Մանկության հիշողությունները պատմելու ճանապարհով Մահարին ցուցադրում է, թե ինչպես են մեծ կյանքի դեպքերը կաթիլ-կաթիլ սուլվում երեխայի հոգու մեջ, ինչպես են «դրսի» անցքերը խոր ճեղքվածքներ թողնում մանկության մեջ, ինչպես են արտաքին միջավայրի դրվագները սեռվ ներկում պայծառ մանկությունը: Հիշենք հոր մասին պատմված եղելությունը. «Հիշում եմ, որ մեկը մեռավ, թե՝ իրեն սպանեց:

— Աճմունց պարոն Քրիփորը...  
— Քո խոր՝ քեռիդ սպանեց, — ասաց գրեթե շշնչալով՝ ինձանից մի քանի տարով մեծ, մեր դրացի Սերունը:

— Ինչի՞...

— Դհեզ, չե՞ս գիտե, հերդ արմենական էր, քեռիդ՝ դաշնակ...

— Բա քո խերն ի՞նչի...

— Հնչակ...

Հնչակ, դաշնակ, արմենակ, — միայն այս մնաց հիշողությանս մեջ այս եղերական զրույցից:

Գրքի հաջորդ դրվագներում՝ «Խորհրդավոր գիշերներ» և «Վանքը» ինչ-որ շափով «լուսավորված» հերոսը պատմում է դաշնակցության «ազգավրկիշ» ռվաստակներից» մասին, իր ձևով բացահայտելով քաղաքական ավանդությունների և հասարակ խավերի միջև գոյություն ունեցող անդունդը:

Բնորոշ մանրամասնություններով առատ են Մահարու «Մանկության» էջերը: Ահա «Զուլհակներ» գլուխը՝ հին աշխարհում մարդու ողբերգության մի թանձր, ավարտված պատկեր: Զուլհականոցի տերը՝ Հակոբ աղան, տիրոջ իրավունքով և տիրոջ մոլուցքով խորտակում է երկու պատանիների՝ Սեղրակի և Թինոյի, նորաբողբոք սերը: Հակոբ աղան երիտասարդ զուլհակին հրամայում է իր դազգահից չորս արշին կտավ կտրել սիրած աղջկա պատանքի համար:

«Սեղրակը շարժվեց ձուլած բրոնզի պես, շափեց կտավը, կտրեց և ընդհանուր յուրիթյան մեջ շարժվեց դեպի Հակոբ աղան և պարզեց նրան սպիտակ կտավը՝ Բոլորն էլ կարծում էին, թե մի վատ բան պիտի պատահի:

Հակոբ աղան գունատվել էր ձեռքի կտավի պես... Բայց Սեղրակը նույն հանգստությամբ դարձավ իր տեղը:

Նույն գիշեր, երբ ես հանգիստ քննել էի տատիս հետ, տատս ինձ զարթեցրեց.

— Գուրիս, Գուրիս, յանկուն ի:

Ես շփիտեի յանկուն ինչ բան էր, բայց երբ աշքերս բացի և մեր սենյակը յուսավորված տեսա կտավի լույսից, հասկացա...»:

«Մանկությունն» ավարտվում է քննարական շնչով գրված մի վերջաբանով, ուր Մահարին, կարծեք թե բանավեճի մեջ մտնելով իր գորքի ապագա անբարեխիղճ ընդդիմախոսների հետ, բացատրում է իր գեղագիտական-գաղափարական խնդիրը. «Այն քաղաքը ծպտում է ինձ հրապույրից զրկված պշրունունման, համառորեն կախվում է ուղեղիս թելերից և չի ուզում հեռանալ:— Նրա մշուշում իշխանն է անցնում մառվերը ձեռքին, Հյուսեյն փաշեն մտնում է Շահրազյանենց տուն՝ խնջույքի, իսկ Նազելին քահ-քահ ծիծաղում է ինձ վրա:

— Իշխանն իմ հոր դոստն ի...

Հետո շքավոր գյուղացիներին են ծեծում անցյալի կապույտ մշուշում: Անցյալի կապույտ մշուշը չի խանգարում, սակայն, որպեսզի ես տեսնեմ նրանց գեմքերի վրա մտրակի կապույտ երիզները: Քինոյի հուղարկավորության ձայնն եմ լսում, երիտասարդ ջուղհակը կանգնել է ձեռքին բռնած շորս արշին սպիտակ կտավ, հետո ջուղհականոցի կապույտ բոցերը կարմիր են ներկում անցյալի կապույտ մշուշը»:

Խիստ գործնական, վավերագրական հաղորդումով է սկսվում հերոսի պատանեկությունը. «Ես դուրս եկա Վանից և բռնեցի Կովկասի ճանապարհը»:

Հնիսի կյանքի այս շրջանը հեղինակի կողմից բնութագրված է «կապույտ և ոսկի պատանեկություն», որի վերաբերյալ հիշողությունների «արծաթ և հըստակ զրերում», սակայն, լողում են «դառնություն, արյուն և սե»:

Ինչպես «Մանկության» մեջ, այստեղ ևս մոտեցումը նույնն է. պատանեկության ծիծաղին խառնված է ողբերգական լացը, ավելի ճիշտ՝ ծիծաղը վկայակոշվում է իրեւ լացի ձեւերից մեկը:

Գաղթի ոլորվող ճանապարհ: Մարդկային մի անծայրածիր քարավան՝ սովահար ճանապարհներով, անքուն ու հոգնած, անօթևան ու քաղցած, խոճապով ու անդադար, մերկ ու բոկոտն, ոտքով ու սալլակներով, թախիծով ու մուեփին ուղերդվում է դեպի Կովկաս՝ «փրկության եղերքը»:

Պատանի հերոսը ճանապարհին կորցնում է հարազատներին. «Ինչպես եղավ, որ ես մենակ մնացի: Ի՞նչ ուժ իմ ձեռքը հանեց տատիս ձեռքերից... Զկան Անուշը, Սուրենը, Խորենը...

— Մայրիկ... Խորեն...

Ես լսեցի իմ ձայնը: Գնում եմ կարծես երազի մեջ, հիպնոսված, շարժում եմ ոտքերս և թվում է, թե նրանք իմը չեն: Աչքիս դեմ երեսում են հրեղեն բծեր, — այդ հոգնությունից է, անքնությունից և քաղցից:

Ես ընկնում եմ ճանապարհի եղերքին»:

Դեպքերի ալեպտույտի մեջ ընկած, անօգնական ու մոլորված պատանի հերոսի մտապատկերների մեջ գծվում են Վանի հերոսական պաշտպանության, կամավորական խմբերի կոփելների, կոկծացող շավով իրենց ծննդավայրը թող-

Նող, գաղթի ճամփաներին մոլորված, արդարության ու կարեկցանքի ծարավ, հուսահատության վերջին սահմանագիծը հասցված մարդկանց կյանքի մեկը մյուսից ծանր դրվագները։ Ֆրագմենտար այս դրվագներից յուրաքանչյուրը նվիրված է մի առանձին թեմայի, պարզում է այն ժամանակվա պատմական իրականության մի առանձին կողմը։ Ահա անանուն, բայց իսկական հայրենասեր-հերոսի մահարիական նկարագիրը։ «Խըժ-խըժ, է՛յ խըժ-խըժ։ Խելագա՞ր էիր թե հերոս։ Ես էլ շգիտեմ, բայց դու տասը օր և տասը գիշեր շքնեցիր։ Երգելով խաղացիր մահվան հետ։ Երգելով բարձրացրիր վիրավորներին, իսկ երբ թաղում էին սպանվածներին, դու երգում էիր։

Վարդ մի բացվիր առավոտվա շաղերով,  
Աղիզ բալա, վարդ քաղեցիր մաղերով։

Խսկ տասներորդ օրը, աւշ երեկոյան, մի գնդակ ծակեց քո քոմքը։

— Տղերք, — ասիր, ձի զարկին, թե մեռա, ինչ կասեք ասեք. Կքնեմ, կըզարթնեմ... տասը օք է շնմ քընե... վարդ մի բացվի... էն վարդը դուք եղեք... ես մեռա...»։

Կամ ահա գաղթի «սավարական» տեսարաններից մեկը. «Գետ է, կիրճ և գարշուրելի գիշեր։

Բերկրի։ Քենդի-մահու...»

Հասել է թշնամին և կրակում է լեռներից։

Գալարվում է մի դանթեական խուճապ։ Փախչում են, տրորում են մեկ-մեկու, կանչում են իրար ու նորից։

Դիսախորիվ են կիները, իսկ տղամարդիկ՝ արյունոտ աշքերով։

Թողնում են սալյերը, անասունները, ձիերը՝ վազում են գեպի կամուրջը, ջատերն իրենց գեան գն նետում։ Նորից դուրս շգալու համար։ Մայրը գիտը շպրտեց իր երեխային և թեթևացած առաջ վազեց։ Գնում է մայրը և ծիծառում է, գնում է մայրը և նորից ծիծառում, գնում է մայրը ու խելագարվում է։

Ժողովրդի «որբանոցային կյանքի» շրջանն առաջին անգամ Մահարու գրիկ և դիտողականության շնորհիվ գրականության մեջ ստանում էր հարազատ, ճշմարտացի գեղարվեստական վերարտադրություն։

Ինչպես «Մանկության» մեջ, «Պատանեկության» մեջ ևս պատմող հերոսը ինչ-որ շափով հեռավորության վրա է գտնվում հեղինակից։

Բայց այստեղ հեղինակը սոսկ հուշարար չէ հերոսի համար, այլ նաև մեկնարան։ Նա ոչ միայն հերոսին պատմում է նրա անցյալը, այլև մղումներ է տալիս՝ իմաստավորելու երնույթները, տեսնելու նրանց կապերը, անհրաժեշտ եղրակացություններ է թելագրում ժամանակի մասին։

«Պատանեկության» մեջ մուծված «հավելյալ», օրյեկտիվ պատմություններն ու օրագրային գրառումները, այլարանական խորհրդածություններն ու «Կողմնակի» դրվագները արտաքուստ ցրիլ տպավորություն թողնելով, ներքուստ խիստ միասնական են, պատմական բովանդակությամբ հագեցած։

«Աշխարհը դիտելով իր կետից», պատանի հերոսը իմաստավորում է ժամանակի իրադարձությունները, արտահայտում իր ուրույն վերաբերմունքը կյանքի նկատմամբ։ Նրա «կենուափիլիսոփայությունը» փայլուն արտահայտություն է գանձ «Անտառային հեքիաթը» բանաստեղծական ոիթմով դրված պլխում։

Համսունցան անտառային ֆեյայի մասին հեքիաթը մտնելով Գուրիսի հոգեկան աշխարհը, հետաքրքրական ձևափոխության է ենթարկվում։

«Անտառային ֆեյա:—Սպիտակ աղավնին իշել է լճափը, թողել է իր փետուրները լճափին, դարձել է աղջիկ և լողացել է լճի արևոտ ջրերում: Հետո փշել է անտառային մի քամի և ցրիվ է տվել լճափի սպիտակ փետուրները: Աղջիկը դուրս է եկել աղավնակերպվելու և չի գտել, չի գտել իր փետուրները: Հետո նա մտել է անտառ և եկել, բնակություն է հաստատել ահա այս անտառային փոքրիկ տնակում և ապրում է որպես մարդացած աղավնի, որպես անտառային սպիտակ ֆեյա»: Մա Համսունն է: Մահարու հերոսը այս հեքիաթին շարահյուսում է իր կյանքի պատմությունը. «Անտառային ֆեյա: Դու սպասում էիր ինձ: Դու գիտեիր, որ ես պետք է գամ հեռու-հեռավոր երկրներից: Երբ ես դուրս եկա իմ երկրից, դու տեսար քո երազը՝ Գալիս է մի տղա. գալիս է յոթ սարով ու յոթ ձորով. գալիս է արյունոտ ուղիներով ու հոգնած...»:

«Անտառային հեքիաթի» ուղղակի շարունակությունն է «Եղնիկը» գլուխը «Անտառապահն ուղղեց հրացանի փողը դեպի թփուտները: Ես և նունիկը մատներով փակեցինք մեր ականջները, որոտը խլացնելու համար»:

— Բո՛ւմ, բո՛ւմ, բո՛ւմ...  
Պայթեց երեք որոտ իրար հետեից:  
Թփուտների մեջ մի բան թփուտց:

Անտառապահը հրացանը հենեց ծառին և դիմեց դեպի թփուտները: Մենք լսեցինք նրա հեռու, չոր ձայնը...

— Թյուհ, սատանա....

Նա գրկել էր մի բան, և գալիս էր կարծես դժվարությամբ, ծնկին տալով: Մոտեցավ, կանգնեց ու ծանրացած բաղուկներով, խփած որսը բռնեց լուսնի դեմ, իր գլխից մի քիչ բարձր, իրենից մի քիչ հեռու, լավ տեսնելու համար:

Լուսնի գունատ շոշերի դեմ բռնել էր նա...  
Բիլու դիակը, Բիլու դիակը...»:

Հերոսի անմիջական պատումի կողքին «հայտնվում է» արձակագիրն իր խոսքով. «Մարդ, ընթերցող, որքան տարօրինակ է լինում որբերի սերը, որքան տարօրինակ...

Տարիներ են անցել, տարիներ այդ օրից, բայց ամեն անգամ, երբ լուսնկա է գիշերը, ես իմ դեմ տեսնում եմ թիլու դիակը... Խսկ ականջներիս մեջ խըշշում է խոռված անտառը... խոռված ու լուսնահար անտառը...»:

Հարուստ, խոր, բովանդակալից ենթաքնագիր ունի Մահարու գրքի այս անզուգական էջը, մի ենթաքնագիր, որի իմաստը հանգում է քնքուշ երազի ու կոպիտ իրականության, լուսեղեն անուրջների և ողբերգական հանգամանքների բախմանը:

Բիլու ճակատագիրը խորհրդանշում է հազարավոր հայ որբերի «տարօրինակ»՝ ոչ ծանր ճակատագիրը «խոռված» այն տարիներին, երբ մարդկային կյանքը ենթարկված էր «կույր պատահականություններին»:

Փշրվեց անտառի գեղեցիկ հեքիաթը, կործանվեց պատանի հերոսի երազների երևակայական ամրոցը, երջանկության սպիտակ աղավնին անդարձ հեռացավ՝ փոխակերպվելով կապույտ թոշոնի: Դեպքերի ալիքը հերոսին մի վայրից նետեց մյուսը, մի կարոտից տարավ մյուսը. նա վերստին տեսավ հարա-

դատ ու օստար, երկույթներ, «տիսուր և ուրախ» դեմքեր: Նրա առաջ ծառացավ նոր ուղիների որոնման, նոր եզերքների հարցը:

Այդ մասին է պատմում գրքի «Երիտասարդության սեմին» մասը:

Երիտասարդական հասուն հասակը, —այս հասակի աշերով է հերոսը նայում կյանքին, —բնականաբար, ավելի լայն իրականություն է ընդգրկում: Գրական ու հասարակական միջավայր, քաղաքական կուսակցություններ և հոսանքներ, քաղաքացիական պատերազմ՝ ու գաղթականություն, դիվանագիտական հարաբերություններ ու «Հայկական հարց», տնտեսական «առօրյա» երկույթներ ու հեղափոխական ցույցեր, նոր դեպքեր ու նոր մարդիկ, բարեկամներ ու ժանուբներ, նոր տեղավայրեր՝ թիֆլիս, Վլադիկավկազ, Բաթում, Երևան, —ահա, ընդհանուր գերով, հերոսի «շիման» նոր կետերը:

Գուրգեն Մահարին «Երիտասարդության սեմին» գրքում ևս շարունակում է հայ ժողովրդի ողբերգության թեման, բայց ոչ միայն ականատեսի դիտումներն է տալիս, այլև փորձում է բացահայտել ժողովրդական ողբերգության պատճառները՝ ո՞վքեր են պատասխանատու անլուր տառապանքի ու անթիվ դժբախտությունների համար:

«Խառնակ ժամանակների» Հայաստանն է վերհշում հերոսը, այն ժամանակները, երբ երկիրը կանգնած էր անդունդի եզրին, երբ «Հայն այդքան հարուստ... հասարակ զուր ծախողի օրական վաստակը հազար ուսուրուց պակաս չէր» և, շնայած դրան, երկրում գործում էր մահվան սառը գերանդին: «Բարեկամներից» լրված Հայաստանը դիվանագիտական նիստերում ճանաշվում էր սոսկ իրեն աշխարհագրական հասկացողություն, նրա «կառավարման մանդատը» մի «հովանավորից» անցնում էր մյուսին:

Ռեալիստական թանձր ներկերով է վերարտադրված «խառն ժամանակների» կենցաղային կոլորիթը՝ զուր ծախող, ուտաբորիկ երեխաներ, գրքերի կազմից կերակուր եփող գյուղացիներ, ճաշի հերթի կանգնած տանջահար գաղթականներ, ուղտերի քարավաններ, պարենավորման քարտեր, պառլամենտի գընծեցի առաջ սովից գալարվող որբեր, շուկաներում վիստող փերեզակներ:

Դաշնակցությունը Մահարու գրքում հանդես է գալիս որպես հակաժողովրդական կուսակցություն: Այս թեման բարձրակետին է հասնում այն տեսարանում, երբ դաշնակցության արկածախնդրությունից խորապես հիսաթափված զորավար Անդրանիկը «Մի բաժակ թեյ» պանդոկում շարադրում է իր կարծիքը: «Ինչո՞ւ լոեցիք, ինչո՞ւ շեք խոսեր: Անդրանիկե՞ն կրաշվիք: Ո՞վ է Անդրանիկը: Ի՞նչ է Անդրանիկը: Տաճկահայաստանի երկինքը սեացավ վառվող քաղաքների ու գյուղերի ծիծից: Յոթը գարուն, յոթը ամառ, յոթը աշուն անձրեկ փոխարեն սև զուր է թափվելու երկնքից, յոթը ձմեռ սև ձյուն է իշնելու ավերակ Հայաստանի, Կիլիկիայի, Զեյթունի, Սասունի, Շապին-Գարահիսարի, Մուշի ու Վանի լեռների ու դաշտերի վրա: Ո՞վ է մեղավոր... Բայց մեղքը, ավելի շուտ ոճիրը գործված է: Թափված է մեկ ու կես միլիոն հայերի՝ մանուկների ու ծերունիների, ուստրերի ու բռնաբարված դրստրերի արյունը...—Ու մեղք է գործված, պետք է փնտրել մեղավորին, հանցանք՝ հանցավորին, ոճիր՝ ոճրագործին... Եթե ես շեմ մեղավորը, հապա ո՞վ է: Փնտրել, գտնել և խալ հանել ոճրագործին...»:

Ո՞վ է մեղավոր: Դաշնակցության «քաղաքագետները» և արևմտյան դիվանագիտության «բարերարները», —պատասխանում է Մահարին իր գրվածքով: Հասարակայնորեն կարենու այս թեման սպառիչ բնութագրություն է ստացել վեպի գործողություններից առերևույթ ածանցվող, բայց ըստ էության նրա իրն-

գիրներին սերտորեն մերվող «Արարատյան միջ կամ ապագա պատմաբանի համար հում նյութեր» գլխամաս: Չարենցյան «Երկիր Նաիրի» վեպի աճեղ երգիծանքին բնորոշ «միամիտ» ծաղրի ձևով Մահարին վերարտադրում է դաշնակցության Արտաքին գործոց մինիստր Դաշունու և նրա կողմանը՝ Եկատերինա Պարսամովնայի զրուցը համաշխարհային քաղաքականության մեջ Հայաստանի պատմական դերի շուրջը, նրա պաթեափկան լրացնելով հետեւյալ մերկացնող մանրամասնով. «Նրա (Դաշունու) ականջներում ցնծության զանգեր էին հընչում, սաղավարտների և վահանների շաշյուն, սուսերների շառաշյուն:

Այդ միջոցին էր, որ Գուրգեն Վահանյանը 50 դեղին թուրքական ոսկիներ հնեցնելով թափեց թեյի պարագաների սկուտեղի վրա, ու նրանց ձեռները մհացան փոխադարձ սիրով ու պետական վստահությամբ»:

Մահարու մերկացնող պաթուսը ուղղված է ոչ միայն դաշնակցության արտաքուստ «հարաշագործ», «ազգանվեր», բայց ներքուստ՝ ողորմելիության շափխանուկ գործելակերպի, այլ արևմտյան պետությունների կեղծ բարեպաշտության դեմ: «Մենք ի՞նչ իմանայինք, որ հայերը չպիտի կարողանան իրենց վայելու պահել. մի մասը գնացել, առանց ծանր ու բարակ կշռադատելու կոտորվել է...», —ասում է Քերզոնի դիվանագիտության բանբերը, ապա խոսքով լուծում տալով «հայկական հարցին», բռնում է դարձի ճամփան՝ «անհետաձգելի գործերը» կարգավորելու:

Մահարու գրքի բարձրակետում հնչում է հեղափոխական ճանապարհով, Սովետական Ռուսաստանի օգնությամբ Հայաստանի ազգային ու սոցիալական ազատագրման թեման: Գրքի հերոսը գտնվելով խաչածեւ ազդեցությունների կենտրոնում, արդեն իր կյանքի հասունության շեմին կանգնում է մուրճ ու մանգաղի իշխանության դրոշի տակ:

Մահարու գրքի «Վերջնագլուխության» հերոսի կյանքի Ողիսականը ամփոփում է նոր իրականության և երկրի ապագայի վերաբերյալ լավատեսական պատկերով. «Մորս եմ տեսնում հաճախ երազում: Տատիս վաղուց է, որ չեմ տեսնում: Բայց ի՞նչ կապ ունի այս գրվածքին վերջաբանի հետ: Ոչ մի կապ: Ես ուզում էի միայն ասել, որ հաճախ մորս տեսնում եմ երազում: Խսկ կողքի սենյակում, ննջարանում, զարթնել է շորս ամսական երեխաս և խոսում է... Ի՞նչ է խոսում, ի՞նչ լեզվով: Հաստատ կարելի է ասել, որ դա աղավնիների բարբառն է, —զո՞ւ-զո՞ւ... և պետք է ենթադրել, որ նա պատմում է իր հարուստ կենսագրությունը. «Ծնվել եմ շորս ամիս առաջ, երևան քաղաքում:

Այսպես էլ է սկսվում մանկությունը, ով դու, որ հայելու միջից նայում ես ինձ թափած գանգուրներով, ալեհեր մազերով պատկած ճաղատով և այնուամենայնիվ ժպիտով»:

Ակներև է, որ այս վերջաբանով Մահարին հաստատում է մանկության նոր որակի ձեավորումը, այն մանկության, որի ոչ թե ակամա, այլ իրական, գալիքին վստահ ժպիտը հերթում է հին մանկությունը:

Մահարին իր վիպակներում հեռացել է նկարագրական արձակի հանրածանոթ կանոններից: Մանկության ու պատանեկության մասին պատմելիս նա գերազանցապես օգտվում է երեսությունների արտահայտման քնարական միջոցներից՝ ածականի ետադաս կիրառություն («անտառը գանգրահեր», «լուսինը շինչ»), որևէ դարձվածքի երկներթ կրնություն («ծիծաղեց, զրնկում ծիծաղով ծիծաղեց»), մի պարբերության վերջին տողը մյուսի առաջին տողը դարձնելու հնարանք («սիրտս երգում է... երգում է սիրտս»), ոկթմական-երածշտական նախադասություններ և այլն:

Հազիվ թե հնարավոր լինի ցույց տալ մեկ ուրիշին, որ Մահարու պես կարողանա հնչեցնել սովորական բառերի քնարական տրամադրությունը: Վիպակների շատ հատվածներ ունեն երգի կառուցվածք ու երգի հնչերանգ: Ահա դրանցից մեկը. «Ամեն ինչ լուսնով է հարրած: Ես առանց մի փոքրիկ վախ զգալու մտնում եմ անտառ: Գնում եմ ծանոթ կածանով, քայլում եմ ստվերների, ժանյակների վրայով, իսկ սիրտս երգում է:

Երգում է սիրտս, իսկ ես լցվում եմ նոր ճայթող հունգերի, նոր ծաղկող ծաղիկների և հասնող առաջին պտղի երգով: Թվում է, որ ես լսում եմ ծիլերի ծլելը, լսում եմ ավիշի երգը, նա երգելով բարձրանում է զեպի ժայերի գագաթը, և ապրում են ժառերը, իսկ լուսինը նրանց քաշում է:

Լուսինը քաշում է անտառին,—դրանից է, որ հաճախ կանգնում է ավիշների ընթացքը նրա երակներում և անտառի սիրտը սկսում է ավելի արագ բարձրախել...

Ես լսում եմ իմ սրտի տրոփը, այդ իմ սիրտն է, իմ սիրտն է տրոփում, անտառի սիրտն է տրոփում, աստծո սիրտն է տրոփում...»:

Երկույթների մատուցման քնարական եղանակը առանձին ուժով երեւմ է բնության պատկերներում: Դրանցից մասնավորապես տպավորիչ է անտառի պատկերը՝ առվակի միալար խոխոչ, մենավոր կածան, վարարած լուսին, բլուրների «կանաչավուն գլուխներ», անտառապահի տնակ, անտառի վրա իշնող անձրև: Սա հայ գրականության լավագույն բնապատկերներից է:

Գ. Մահարու վիպակների ոճի մյուս հատկանիշը հումորն է: Նրա արձակը լիքն է ծաղրով ու ծիծաղով, հեզնանքով ու ծպիտով,—հումորի բոլոր տարրերը գործի են դրված իրեն ողբերգությունն ուժեղացնող միջոցներ:

Որբանոցային կենցաղից Մահարին ընտրում է այնպիսի դրություններ, որոնք ծիծաղելի են արտահայտման ձեռվ և ողբերգական՝ բովանդակությամբ:

Ահա մի հատված այն օրագրից, ուր պատանի հերոսը գրի է առնում օրվա տպավորությունները. «Այսօր եկավ Արտաշի մայրը և գտավ Արտաշին: Արտաշի մայրը լաց եղավ, Արտաշն էլ լաց եղավ: Հետո հավաքվեցին որբերը, նրանք էլ լաց եղան: Եկան օրիորդներ, օրիորդներն էլ լաց եղան: Բոլորն էլ, մի խոսքով, լաց եղան: Շատ ուրախ էր...»:

Ահա մյուս օրինակը. որբանոց է եկել մի լուսանկարիչ: Նա «կարգադրում է, որ բոլոր երեխաները տիրեն ու լացեն: Բայց պատահեց մի զարմանալիք բան. ցուցադրական լացը փոխվեց իսկական լացի և իզուր կարգադրիչը կարգադրում էր. բավական է, բավական է, էլ պետք չէ»:

Գ. Մահարին տիսուր դեպքերի մասին զրում է ծպիտով ու ծիծաղով: Բայց դա կոտրված, աղավաղված ժպիտն է ու ակամա ծիծաղը: Ժպիտ, որ շաղախված է արյունով, և ծիծաղ, որ ծնունդն է ախրության:

Գ. Մահարին իր գրվածքի համար նյութ չի որոնում իր կենսագրությունից, իր կենսագրությունից, իր վերապրումներից դուրս: Նա գրում է զգացածի մասին, պատմում է տեսածի մասին, իր մասին: Քայլ առ քայլ վերլուծում է իր հոգեբանությունը՝ տարրեր հասակներում: Մահարու արձակի ոճական այս հատկանիշը՝ պատուի անձնականացումը գիրքը չի դարձնում «հերոսի հետ կապված դեպքերի սոսկական շարադրանք: «Հերոսի ինքնակենսագրությունն» իր հետ բերում է նորանոր հոգեբանական երանգներ, ներքին գործողության շրջադեմք, նորանոր թեմաներ ու ենթաթեմաներ: «Մեմուարային» հիմք ունեցող գիրքը հարստանում է հերոսի ապրած ժամանակաշրջանի էական փաստերով, ժողովրդի պատմության հերոսական ու ողբերգական դրվագներով, հարստա-

նում է պատմողից արդեն հեղինակ դարձած գրողի մտածմունքներով, նրա տիուր և ուրախ ապրումներով։ Հերոսի կյանքը շղթայվում է ժամանակի երեւությներին, գիրքը ձեռք է բերում տարեգրության գծեր։

Գրքի բոլոր մասերում *Մահարին* պահպանում է անցքերի անմիջական արտացոլման սկզբունքը, դրանք մատուցում է այնպես, ինչպես երկացել է սկզբում երեխային, ապա՝ պատանուն, այնուհետև՝ երիտասարդին։

«Մանկության» մեջ ամեն ինչ մանկական է, չկա «վերլուծության»։ Հեռավոր նշույլ անգամ։ «Պատանեկության» մեջ սրվում է հեղինակի միտքը, նա տանջափին վերապրում է հայ մանուկների ողբերգության, հարազատ ժողովրդի տառապանքների ժանրությունը, իսկ «Երիտասարդության սեմին» գրքում հերոսը զառնում է ավելի զատողական, «նստած», այստեղ հումորին և ժպիտներին փոխարինում են փայլատակող ծաղրն ու մերկացնող հնչերանգը։

*Մահարու* արձակը ոիթմ ոմի, որը չի թույլատրում, որպեսզի նախադասությունը աղոտանա, բեկրեկվի, կորցնի իր ձևը։ Հենց այդ բանաստեղծական ոիթմն ու նուրբ հնչերանգը *Մահարին* հմտությամբ օգտագործում է ոչ միայն բնություն նկարելիս կամ երգելիս, այլև մարդկային փոխհարաբերություններ ու ապրումներ ցուցադրելիս, այլև երկխոսության դեպքում։

*Մահարու* արձակի կապակցությամբ սովորաբար դիմում են «քնարական» բնորոշմանը, որը, ըստ էության, նեղացնում է նրա արձակի բովանդակությունը։ Բանն այն է, որ քնարական սկզբունքի ուժեղացումով *Մահարին* չի դադարում նաև վերլուծող լինելուց, նա կարողանում է խաղաղեցնել հուզականության ալիքները՝ կյանքը վերլուծաբար, մարդկային ճակատագրերով յուրացնելու, կյանքի տվյալ հատվածը փիլիսոփայորեն իմաստավորելու համար։

«Մանկության և պատանեկության» արժեքը միայն հուզականությունը և տրամադրությունը չէ, այլև հայ ժողովրդի պատմության դժվարին տարիների մարդկային ճակատագրերի գեղարվեստական յուրացումը։

Այս գրվածքը, ինչպես և շարունակությունը՝ «Երիտասարդության սեմինը», հերքում են *Մահարու* իբրև «տարերային գրողի», վաղեմի լեգենդը։ Բանն այն է, որ տրամադրության հետ միասին նրա արձակն ոմի խորություն, բառի օգտագործման արտիստականության հետ՝ բնավորությունների կերտման պլաստիկա, մահարիական հումորի ու սրամտության հետ՝ թափանցում, պատկերի հատվածայնության հետ՝ իրականության նյութի լայնացում, ոճական նախամիրությունների հետ՝ երևությների սոցիալական քննություն։

Գ. *Մահարու* հուշագրական եռագրությունը գրական ավանդների զարգացման նոր սկիզբներից մեկը եղավ հայ արձակում։ Անհարկի մանրամասնություններով ու միջանկյալ նախադասություններով ծանրաբեռնված պատումի զիմաց *Մահարին* բերեց հուզական-զուգորդական, դինամիկ խոսքի կովառության կարեւոր դեր են խաղում իմաստային-այլաբանական-խորհրդանշային շեշտերը։

Գ. *Մահարին* մտադիր էր շարադրել «Խնդրակենսագրության» նաև չորրորդ գլուխքը՝ «Երիտասարդությունը»։ Դրանից նրա թղթերի մեջ պահպանված 74 մեքենագրական էջերը տպագրվեցին «Սովորական գրականություն» ամսագրում (1978, № 6)։ «Երիտասարդության» նյութը դարձյալ 1920—21 թթ. Երևանի կյանքն է, մասնավորապես որբանոցային առօրյան։

«Այրվող այգեստաններ» վիպասքի ստեղծագործական կենսագրությունը թեև սկսվեց երեսնական թվականներին՝ «Գուրգեն խանի տոհմը» պատումի հատվածներով («Վերելք», ԱՆ 2—3, 4—5), սակայն կենսագրության «ակամա լուսաբան» տարիները խափանեցին գործի կազմավորման բնականոն ընթացքը և Գուրգեն Մահարու մտահղացումը գեղարվեստական փաստ դարձավ միայն վաթսունական թվականներին:

Պատումի տասնութերորդ Ասքում (սա գրվածքի բազմաթիվ «լիրիկական անտրակտներից» մեկն է) Գ. Մահարին վաղուց ի վեր իրեն պարտադրված «բեռի» մասին գրել է. «ի տվնշյան և ի գիշերի, առանց հաշվի առնելու հանգստի օրն ու կիրակին, եթե ոչ հինգ, ապա ապահովաբար չորս տասնամյակ է, ինչ նրանք անձամբ ծեծում են իմ դուռը և խնդրում են, հրամայում, հարկադրում, կարգադրում, որ ես գրեմ իրենց մասին, որ արձանագրեմ նրանց գործերն ու անոնները փառաց մատյանում: Նրանք փնտրել և գտել են իմ հասցեն, անկախ նրանից, ես տա՞նն եմ, թե ճամփորդության մեջ, հարուստ եմ, թե աղքատ, աշխատունակ եմ, թե անդամալույծ...»

Այսպես հետևեցին նրանք ինձ տարիներ ու տասնամյակներ շարունակ և հետեւում են մինչև այսօր...»:

Հստ տարեցույցի այս խոստովանությունը վերաբերում է 1966 թվականին, երբ Գուրգեն Մահարին մի քանի տարվա «արարման վայելքից» և հոգմությունից հետո (դա են վկայում իր բարեկամներին առաքած նամակները), վերջապես (բայց ոչ վերջնականապես) մարեց պարտամուրհակը՝ ձեւավորեց Վանի վիպասանությունը:

Մինչ Մահարին վերջակետ էր գրել Վանի իրական պատմությանը և իրեն այլևս օրորում էր մեռած քաղաքի՝ «անհետացած ոստանի» վերակենդանացման «հեքիաթով» պարտքը համարելով մարած, «Այրվող այգեստանների» տպագրությունը հրահրեց հասարակական ու գրական մեծ աղմուկ:

Վիպասքի հրապարակային (և բանավոր, և գրավոր) քննություններում<sup>19</sup> արտահայտվեցին միանգամայն սկզբունքային, արդարամիտ տեսակետներ հեղինակի «վրիպումների» վերաբերյալ:

Սուր քննադատության արժանացավ «եկվորների» և «տեղացիների» հակադրության գիծը, անձիշտ համարվեց պատմական առանձին գործիների, օրինակ, Արամ փաշայի գեղարվեստական բնությագրությունը, էական պահանջներ ներկայացվեցին Վանի 1915 թվականի հերոսական ինքնապաշտպանության դրվագները անտեսելու կապակցությամբ:

Եվ այլն, և այլն:

Վեպի քննություններում թեև տեղ գտան նաև անձնական կրքերին հենվող տպագրություններ (ամենասարսափելին՝ իրեն թե թուրքերի կատարած ոճիրը... Մահարին վերագրում է զոհերին), մակերեսային, ոչ գրական հայցքներ («Մահարին աղավաղել է Վանի կենցաղը», «Մահարին սխալ է ներկայացրել» այսինչ կամ այսինչ փաստը), բայց «պատահարի» զգաստ վերլուծությամբ գրողը կարևորություն տվեց մի ամբողջ շարք դիտողությունների, մահվանից առաջ հասցրեց դրանց ուղղությամբ վերախմբագրել Վանի ասքապատումը՝ առանձին հատվածների հապավումների և առանձին դրվագների հավելումների ճանապարհով:

1979-ին, հեղինակի մահվանից տաս տարի անց, տպագրվեց «Այրվող այդ գեստանների» նոր տարբերակը (Գրողի երկերի ժողովածուի 4-րդ հատորում)՝ հետևյալ առաջարանով («Երկրորդ հրատարակության առթիվ»). «Միակ կառ տարյալ զիրքը ես կգրեի, եթե միայն կարողանայի»—այսպես է ասել, եթե շեմ սխալվում, ֆրանսիական գրող Ժյուլ Ռենարը։ Հայ գրողին մնում է կրկնել Ռենարի այս ասույթը։

...Եվ ո՞ւմ, ո՞ւմ մտքով կանցնի, իր զավակի դագաղի վրա ողբացող մոր ողբասացության մեջ քերականական կամ հնչյունական սխալներ որոնել, գտնել կամ շգտնել... Կամ վշտից ծամածոված նրա դիմագծերում ժպիտ հիշեցնող նշույլներ փնտրել, տեսնել կամ շտեսնել...

Գ. ՄԱՆՎԱՐԻ  
28 հունվարի, 1968 թ.:

Հեղինակային այս խոսքը բնավ էլ դիմադրություն չէր քննադատությանը և ոչ էլ «մեղերի» արդարացում։ Մահարին ընթերցողին պարզապես հուշում է գեղարվեստի գնահատման այն ճշմարտությունը, որ ամեն մի ստեղծագործության պետք է մոտենալ իրեն իսկ բնորոշ օրենքներով և, ապա՝ շեշտերը գցել ամենակարենոր կետերի վրա։

Արդին առաջին տարբերակի «Վերջաբանը՝ որպես նախարան» մուտքի մեջ Գ. Մահարին տվել էր իր վիպասքի ճշգրիտ ընթերցման բանալիները՝ դառնաւով «Երկիր նաիրի» համայնաբանդակին, որի միջով, ինչպես ինքն է բնութագրում, «անցնում են մեր վաղվա վեպի ճանապարհները»։

Ելակետային այս դրույթը հաստատելիս Մահարին նկատի ունի, առաջին հերթին, Զարենցի վեպի ողբերգական-երգիծական շունչը՝ հակառակ աղքային ոռմանտիզմի ողբասացական ուղղության, որն իրականությանը նայում էր գույնզգույն ապակիների դիտակով և կենդանի մարդկանց դարձնում սրբապատէերներ։

Հրաժարվելով լուսապսակի՝ գոնազարդման և սրբացման գեղագիտություն նից, Մահարին հակվում է դեպի ուեալիզմի հոգեբանական-կենցաղային տարատեսակի գեղագիտությունը, որի տրամաբանությամբ, ինչպես ինքն է վկայում, որոշ հանգամանքներում ստիպված է տրվել ծիծաղի տարերքին՝ ողբալացի փոխարեն։

Նորից, ինչպես Զարենցի դեպքում, ասպարեզ է գալիս Վահան Տերյանի գառնակսկիծ դարձվածքը՝ իրու բնաբան։

Մի՞քև ես պետք է երգեմ քեզ օրոր  
Եվ արբայական զնեմ զերեղման...

Տերյանական այս զգացողությունն է նաև «Այրվող այգեստանների» ներքին շաղախը։ Իսկ ողբերգական անցքերի մասին Մահարին չէր կարող պատմել ոչ այլ կերպ, քան ծիծաղի-հումորի մեծ քանակով, ինչպես վարվել է նաև մանկության ու պատանեկության սքանչելի պատումներում։

«Վերջաբանը՝ որպես նախարան» նույն Առաջարանում Մահարին իր պատումի նպատակի մասին գրել է. «Եղել է մի քաղաք—քաղմահազար բնակիչներով, որոնք սիրել են իրենց ծննդավայրի հողն ու ջուրը, հնամենի վանքերն ու հուշարձանները։ Ու մի օր ավերվել է այդ նաիրյան կախարդական ոստանը, իսկ նրա խաղաղասեր ժողովուրդը ցրվել է աշխարհով մեկ։ Այս եմ ես երգել, երգել ի խորոց սրտի....»։

Պատահական չէ այստեղ «Երգի», «սրտի երգի» հիշատակությունը։

Մահարին արդարեւ, երգում է Վանը, վերակենդանացնում է ծննդավայրի գծերն ու գույները՝ բոլոր ընթերցողներին ներշնչելու «վանեցիության» զգացմունք:

Այս սլաքով «Այրվող այգեստանները» միանում է ծննդավայրի անհանգնելի սերն ու կարոտը ծրարող մահարիական արձակ և բանաստեղծական ներշնչանքներին:

Վասպուրական-Վանը համաշխարհային առաջին պատերազմի տարիներին, այդ պատերազմի անմիջական նախօրյակին և ծավալման ընթացքում, մանավանդ 1915 թվականին վերապրում է իր դարավոր գոյության ամենաողբերգական շրջանը, երբ «անբոց ու անկրակ, իրենց ծխի մեջ խեղդվելով, այրվում են աղետավոր այգեստանները»:

Պատումի գեղարվեստական տարածությունը Մահարին հատկացնում է կործանվող Վանի պատմությանը՝ մինչեւ վերջին ճակատագրական գիշերը, երբ հնադարյան ոստանը զատարկվում է վանեցիներից, երբ խումապի մատնված քնակիներն իրենց քաղաքի վրա կամար կապած սև ծիածանի տակով բռնում են գաղթի՝ բյուրերի նահանջի, ճամփաները: Դա ինչ խոսք բարդից էլ բարդ, ժայրահեղ շիկացած կետերի աստիճանին հասցված իրադրություն էր, որն իր անբեկաննելի հրամայականն էր դրել առանձին անհատների, սոցիալական առանձին խմբերի, գործող ազգային կուսակցությունների, առաջ՝ որոշելու իրենց դիրքը ընթացիկ և գալիք իրադրձերի հանդեպ:

Այդ իսկ «հրամայականով» «Այրվող այգեստանների» էշերում ասպարեզ է գալիս Վանի համայնաքանդակը՝ բնակչության սոցիալական, դավանանքային, ազգային, կուսակցական ամբողջական կազմով:

Այո՛, Մահարու գրվածքը ևս համայնաքանդակ է, ինչպես Զարենցինը:

Բայց կան նաև էական տարբերություններ:

Մինչ «Երկիր Նախրին» քաղաքական վեպ է, ավելի ստույգ՝ տարբեր գաղափարախոսությունների գոտեմարտը ներկայացնող պատում է՝ Կարսի հասարակական անցուգարձի և կենցաղի ֆոնի վրա, մինչ Առաջարանում հիշվող մյուս գրվածքը՝ Ա. Բակունինի «Կյորեսը», «պատմական քրոնիկոն» է, «Այրվող այգեստանները հոգեբանական-կենցաղային վեպ է՝ Վանի «պատմական անցքերի» ներդիրներով»:

«Ես չեմ սնել իմ գործը արխիվների փոշով», — Առաջարանում Մահարին տալիս է նաև այս բացատրությունը, ընթերցողներին հուշելով, որ ինքը չի սուզվել պատմական հիշատակարանների խորքերը, այլ ծննդավայրի «ողեպերն ու դեմքերը» վերարտադրել է ականատեսի անմիջական տպավորությունների ուղիներով: Վանի կառուցվածքի մեջ տեղադրելով իր տպավորությունների և հիշողությունների հարուստ ավարը, «ապրված նյութը», Մահարին «պատմության ձայնը» վստահում է Ասքի հերոսներին, որոնք և իրենց արարքներով բնութագրում են ժամանակի այս կամ այն եղրը:

Հոգեբանական ծավալուն նկարագրով է ընթերցողին ներկայանում, նախ և առաջ, Վանի համբավավոր վաճառականներից մեկը՝ Օհանես աղա Մուրադիսանյանը (համաքաղաքացիների խոսվածքով՝ Ախանես աղան), հայ գրականության մեջ երբեք ստեղծված ամբողջական կերպարներից մեկը, որի հետ կապվում են վիպական հանգույցների հիմնական թելերը: Ախանես աղան, այսպես ասած, Վանի «առանցքն» է (իհարկե, ոչ Մազութի Համոյի՝ Կարսի «առանցքի» իմաստով), նա է մարմնացնում տոհմական-պատմական վանեցիությունը՝

Հոգեբանական գալարումներով, ներքին զիգզագներով և կերպարանափոխություններով:

Ասքապատումը Մահարին բացում է նրա կենցաղի որոշ կողմերի նկառագրավիճամբ՝ խորհրդանշանի արժեք տալով դրանց: Լինելով Վանի «դրախտի» կերտողներից մեկը, Ախանես աղան այդ պատճառով էլ թերևս չափազանց սուր է վերապրում ծննդավայրին սպառնացող վտանգները:

Իրականությունից առաջ նրան խոր անհանգստություն են պատճառում շար երազները:

Թեև վանը դեռևս իր ամենօրյա գեղեցիկ կերպարանքի մեջ է՝ զվարթ առավոտներ, թոնիրներից բարձրացող ծիսի քուլաներ, շուկայական եռուն անցուդարձ, խոսք ու զրույց, թեև Վանը դեռ ապրում է հին օրերի բարի հիշատակներով, բայց մթնոլորտը արդեն շնչում է վերահաս աղետի նախազգացողություններով:

Դրանք առաջին հերթին բեկվում են Ախանես աղայի էության մեջ. իր կյանքի ամենատոնական օրն իսկ («լաճ ի ծնվի») տեսած երազները («Խուրծիւրծ կանալ օձեր», ամբարից դուրս պրծած մկներ) նա մեկնաբանում է իրեւ վերահաս «սև գիշերների» ստույգ նշաններ:

Վիպական առաջին իսկ դրվագներից Ախանես աղան երևում է տխուրողերգական և զրնգուն-կատակերգական գույների շաղախի մեջ: Դրա ցայտուն արտահայտությունն է նրա հեթանոսական խենթ պարը իր տոհմի սկզբնավորող Մուրադխանյան նախահոր մեծագիր նկարի առջև: Այդ պարի անսանձ, հախուն ոիթմը խորհրդանշում է պարտվող մարդու, պարտվող տոհմի, պարտվող քաղաքի անփարատելի տագնապները:

Շուտով Ախանես աղայի առաջ ամրող հասակով մեկ ծառանում են մեկը մեկից բարդ, ճակատագրական առեղծվածներ, որոնց առաջին պատասխանները կոշված է տալու ինքը՝ հիմնադիր և համբավավոր տոհմի շառավիղը: Ախանես աղան հոր «Կտակի» համաձայն ժառանգել է մեծ հարստություն, ստեղծել իր գիրքին վայել վաճառական ընկերների շրջապատ, որոնց հետ սովորաբար կիսում է իր մտքերը ոչ միայն առեւտրական գործերի, այլև Վանի անցուդարձի շուրջը:

Դեռ երեկ նշանավոր «Եռյակի» մյուս անդամներին՝ Սիմոն և Փանոս աղաներին նա «Հանգստացնում» էր «արուն ջուր լի դառնա, սրտներդ բաց պահեք» խոսքով, իսկ այսօր նրան նույնպես հասնում են «Քուլողների» սպառնագրերը և իր իսկ այգուց լսվում են ահարեկիչ կրակոցները:

Շատ ժամանակ շի անցել, բայց մեկը մյուսի ետևից մարմնանում են Ախանես աղայի շարագուշակ երազները. իր այգու պայմանական հետեւմ է «կոնախների» («սև ակնոցավորի» և «կարճահասակի») գիշերային անակնկալ հայտնությունը փոքր եղբոր՝ Մխոյի գեղցկական հարկի տակ, ապա Աղթամարի վանքի կողոպուտի և վանականների սպանության լուրը մյուս եղբոր («վարժապետ» Գեորգի) մասնակցությամբ, այնուհետև ավագ եղբոր՝ Համբարձումի մահվան լուրը՝ Կոստանդնուպոլիսից, «գեշ» հիվանդության հետևանքով...

Նշանավոր վանեցին, այլևս թողած քունն ու հանգիստը, մտորում է Վանի հեռանկարի շուրջը, դրա հետ կապելով նաև իր գոյության հեռանկարը:

Մավալվող դեպքերի հանդեպ նրա վերաբերմունքի առումով բնորոշ է զրույցը Սիմոն և Փանոս աղան-համախոհների հետ, ապա և մյուս զրույցը՝ դարբին Արարոյի հետ:

Վանի նշանավոր վաճառականները, նստած երկարականջ անասուններին (ի դեպ, տարեց վանեցիները ասում են, որ իրենց ծննդավայրի վաճառական-ները երբեք ավանակ չեն նստել—Ս. Ա.), դուրս են եկել քաղաքամեջ՝ «ճանապարհորդության»:

Թեև արտաքուստ հանգիստ, բայց ներքուստ երեքն էլ հուզված են այն աստիճան, որ հարմար են գտնում իրենց օրն անցկացնել «Ասկերան» կաղինոյում:

Նրանց, բնականաբար, ամենից ավելի մտատանջում են իրենց ուսկիների շուրջը մոլեգնող «ազգափրկիլ» գործողությունները: «Մա կյանք չէ, սա ազգային գործ չէ, սա ավազակություն է»—բնութագրում է Փանոս աղան ստացված «թրղթերի» բովանդակությունը: Նրան համամիտ են նաև Սիմոն և Ախանես աղաները: Երեքն էլ զգուշաբար «ո՞րն է ելքը» հարցի պատասխանը թողնում են օդից կախված, մինչև որ Ախանես աղան իր վերաբերմունքը շարադրում է դարբին Արաբոյին, մեջտեղ բերելով «ոգեզի բնի» պատմությունը:

Ախանես աղայի և Արաբոյի մտքերի զուգահեռ վերաշարադրանքից երեւում է, որ Մահարին ճիշտ ուղղությամբ սրբագրել է «Այրվող այգեստանների» առաջին տարբերակի մեծ վրիպումը:

Դարբին Արաբոն, 1896-ի «մեծ դեպքի» առասպելական քաջերից մեկը, այն Արաբոն, որի «անունն ու համբավը դիրքից դիրք էր անցնում») Ախանես աղայի առաջ շարադրում է իր տեսակետը Վանին սպառնացող «նոր դեպքերից» առաջ. «Օհանես աղա, ես միտք չունեմ քեզպես մարդուն օր-ցերեկով խելք սովորեցնել կամ խորհուրդ տալ: Ես՝ ներողություն: Դու կասես դգեզի բում է, որ դղեզի բունի հետ շխաղաս՝ շին կծի... կասես՝ Արամ-Իշխան, է, երթանք քեզ հետ Կիլիկիա, Օհանես աղա: Կիլիկիայի մեջ Իշխան-Արամ կար, որ բռնեցին, մեր-մանուկ սրի քաշեցին... Օհանես աղա, լավ հիշի, ինչո՞ւ դու, մե մատ էրեխա, թշնամացեր ես դգեզների հետ, ոտնատակ ես արե... Կա-չկա անմեղ տեղ քե բռներ, կծե՞ր են դու էլ քո վրե՞մն ես հանի... թե չէ՝ ինչո՞ւ դու թթռնեկների հետ խաղալու տեղ՝ ընկեր ես դգեզների ետևից...»:

Հետագա դեպքերը Ախանես աղային (ինչպես և նրա համախոհներին) կանգնեցնում են նորանոր «հանելուկների» առաջ. ինչո՞ւ ոստիկանապետ Ագյանը եկավ իր տուն, ինչո՞ւ Արամը և Իշխանը «ևս արին» Մուշեղ Բալդոյյանին, ինչո՞ւ ստեղծվեց Դհերցի Դավոյի գործը: Ինչուներ, ինչուներ: «Շատ վերպիր, ծանր ու թեթև արին ու եղրակացությունը նույնն էր.—դրությունը լուրջ է: Փանոս աղան ասաց՝ շհանդամ, մի օր ծնվեր ենք, մի օր պիտի մեռնենք.—այսպես ասաց, բայց աշքերի մեջ և վախ կար, և վիշտ: Սիմոն աղան ասաց՝ այսինքն, որ գլուխներս խփենք պատին, ի՞նչ կլինի, գլխին կլինի, —այսպես ասաց, բայց աշքերից երկում էր, որ պատրաստ է առնել գլուխը և խփել պատին, ինչ կուզի թող լինի... ինքը լսեց, ոչինչ չասաց, թե՝ ասաց՝ արյուն ջուր չի դառնա, որին Սիմոն աղան պատասխանեց,—այո, արյուն ջուր չի դառնա, բայց ջուր կարող է արյուն դառնա...»:

Բնական հունից դուրս ընկած կյանքը ստեղծում է, ահա, նման անելանելի ծովակներ՝ մարդկանց դատապարտելով ապրելակերպի ողբերգա-կատակերգական ձևերի: Ամենացայտում օրինակը դարձյալ Ախանես աղան է: Ծննդավայրի հանդեպ նրա սերն այնքան ուժեղ է, որ կարող է հասնել ողբերգական

շափերի, բայց դաժան հանգամանքների բերումով նա դառնում է ընդամենը... այդու ծառերի տակ թաքցրած ոսկիների գերին, իսկ «ազգային հերոսի» լուսապսակը կրում է ոչ այլ ոք, եթե... իր գինեմոլ, արկածախնդիր, ամենից լքված եղբայրը՝ Գևորգը:

Լինելով վեպի «առանցքային» հերոսը, Ախանես աղան բնավ էլ գաղափարակիր հերոսը չէ, ուստի և իրավազոր շեն հեղինակի և հերոսի վերաբերումնքները հավասարության նշանով ներկայացնելու փորձերը: Այս կետում քննադատությունը ճիշտ չէր նաև առաջին տարբերակի պայմաններում:

Ախանես աղայի «ներփին մտքերը», ազգային կուսակցությունների, հատկապես «մայր Կուսակցության» ընդդիմադրական վարքագիծը դատապարտող նրա փիլիպիկանները արտահայտում էին հասարակական որոշակի շերտերի կենսահայացը, այդ շերտերին (վաճառականությանը) բերելով «շեզոքության»՝ «միշին գծի», դիրքերը: Իր տեսակետը ավելի որոշակի Ախանես աղան շարադրում է «Վան-Տոսպ» շաբաթաթերթի ամենօրյա ընթերցող Գարբիել աղա Դեմիրճյանին, հիշելով «պատմության դասերը». «Սահմանադրությունից ի՞նչ խեր աեսանք, որ հեղափոխությունից ինչ տեսնենք...»: Եվ մեկը և մյուսը շատ լավ գիտեն, որ միանգամայն արդար են իրավունքների և ազատության իրենց պահանջները, բայց նորից, «դառը փորձը» հիշելով, գալիս են «պետություն և հպատակ» անլուծելի հանգույցին: Նրանց տրամաբանությունը նահանջում է «պետության գեն ի՞նչ կարող ենք անել...» համակերպության քարոզների առաջ: Անտրտոմչ, անկոփի գոյության «փիլիսոփայությունը»՝ Ախանես աղայի և սոցիալական համախոհների դավանանքը, իրականում նշանակում էր ճակատագրին հանձնել Վանի հեռանկարը: Խսկ «ճակատագիրը» ի դեմս թուրքական բարբարոսության (Զեղեթ փաշայի և այլոց), իր ձևով է տնօրինում Վանի ապագան, հնադարյան քաղաքը... դատարկելով նրա տոհմական բնակիչներից:

Մինչև վերջին, ճակատագրական «սև գիշերը», մինչև Վանի ողբերգության ամենավերջին գործողությունը, Ախանես աղան ականատես է լինում «նշանավոր» ու աննշան շատ գեղքերի, աստիճանաբար փլուզվում են նրա դիրքերը՝ ավարտին հասցնելով կերպարի ողբերգակատակերգական էությունը:

Ախանես աղան, ըստ ամենայնի, Վանի ողբերգությունը կրող հերոսն է, որին, սակայն, վիճակված է իր կյանքը ավարտել կատակերգական «կոլորիտի» մեջ:

Ճիշտ հակառակն է տեղի ունենում «վարժապետ» Գևորգի հետ, որը կատակերգական գերից վերաճում է Վանի հերոսամարտի ողբերգական հերոսի, անցնելով «մաքրագործման» ուղիներով:

Վանապատումի մեջ մեծ տեղ տալով «երգիծական ոգեշնչման» ոճաբանությանը, — ծիծաղի ուղիների մեջ են վեպի շատ կերպարներ, — Գ. Մահարին բնավ էլ շի նվազեցնում իրականության ողբերգական ծավալները:

«Այրվող այգեստանները» այնպիսի զտարյուն երգիծական պատում չէ, ինչպիսին է, ասենք, Սալտիկով-Շչետրինի «Մի քաղաքի պատմությունը»: Դա ավելի շուտ բանաստեղծական-հուզախոռվ ասք է ողբերգական անցքերի մասին, որոնց ծանր տպավորությունը թեթևացնելու համար Մահարին «ակամա»... դիմել է երգիծական՝ հեգնական բնութագրումներին, իր հանրաժանոթ հումորի, շուայլ աղբյուրներին:

Ազգային ողբերգության գլխավոր գծին գուգահեռ «Այրվող այգեստանների» գեղարվեստական տարածությունը գրավում են գործող կուսակցությունների (արմենականներ, հնականներ, դաշնակներ) վարքագծի բացահայտումները:

**Եթե** առաջին տարբերակում Գ. Մահարին հանդես էր գալիս «ետին թվով մարգարեի» ղերով («Հպիտք է այս անեին, այն անեին»), ապա նոր խմբագրության մեջ կատարել է շեշտերի տեղափոխություններ՝ դատապարտող մարգարեից դառնալով «անկողմնակալ» ժամանակագիր:

Դրանից բնավ չի նվազել վանի ղեկավար գործիչների սխալների և ավանդյուրանների քննադատության թափը (Աղթամարի վանքի ղեղքերը, Միհրան Մանասերյանի գործարքները, «քողոնների» կամայականությունները հայոց գյուղերում, և այլն, և այլն), ոչ էլ սրբապատկերի կերպարանքն են առել ազգային ապստամբության կազմակերպիչները:

Հրաժարվելով պլակատի սխեմատիզմից, Գ. Մահարին քաղաքական գծի հերոսներին ևս (ինչպես Վանի շարքային բնակիչներին) ներկայացնում է իրենց կյանքի դրամատիկ բովանդակությամբ:

Այս առումով բնորոշ են Արամ Փաշայի անքուն գիշերվա տագնապալի մտորումները և նրա հուշատետրային մեկնաբանությունների քաղվածքները: Ինչպես՝ «Ստեղծված այդ կացության առաջ կանգնել և մտածել, թե ո՞վ է եղել շափավոր, ո՞վ ծայրահեղ, ո՞վ է ճիշտ կամ ո՞վ է սխալվել այս կամ այն կոնկրետ գործում, նշանակում է զբաղվել ծիծաղելի ժամավաճառությամբ... Թողարատմությունը ջոկի հատիկն ու մղեղը»: Ինչպես՝ «Զհամողենք մեզ և ժողովրդին, թե մեղ խաբեցին: Մենք մեզ խաբեցինք...»: Ինչպես՝ «Ժողովուրդն արցունք էր թափում, երբ մենք չկայինք, եկանք մենք և ասացինք, հիմարությամբ եք զբաղված, պետք է ոչ թե արցունք, այլ արյուն թափել»: Ինչպես՝ «Եվ եղավ արյուն ու շեղավ ազատություն»:

Վանի նահանգապետը թեև չի «մաքրաղարդվել» ոչ իր կենցաղային նկարագրից, ոչ էլ գործունեալության ճակատագրական սխալներից, այդուհանդերձ վեպի նոր տարբերակում երեւում է իբրև ազգային տառապանքի կրողներից մեկը:

Դրա փաստումն են Վանի վերջին գիշերվա աղետավոր ժամի իր մենախոսությունները, որ պարտված հերոսը, հանրագումարի բերելով շարշարանաց ուղին, դառնագին ապրումներով է ողողում պատումը. «Եվ ո՞ւր, ո՞ւր է դիմում մոլորված, տեղահան, խուճապահար ժողովուրդը, ո՞ր լուսավոր ափերի կարուտով լողում է փոթորկահույզ կյանքի ժովում նրա մութ ճակատագրի խարխուլ առագաստանավը և սպասում է նրան մի փրկարար նավահանգիստ...»:

Արամի կերպարը սրբագրելով «ողբերգական հերոսի» պլանով, նոր տարբերակում Մահարին ընդառաջ է գնացել մեմուարային գրականության և արխիվային վավերագրերի տվյալներին, որոնց համաձայն Արամը իր զգաստ մտածելակերպով «եղակի բացառություն էր» «մայր կուսակցության» գործիշների մեջ և չէր բաժանում «ղաշնակցական խմբապետների անսանձ արարքները»<sup>20</sup>:

Վերախմբագրված տարբերակում Արամի ողբերգության ընդգծման պատճառով որոշ շափով ստվերի տակ է մնացել ուամկավար Արմենակ Եկարյանը, որը բռլղարացի Գրիգորի և Կայծակ Առաքելի հետ միասին, իբրև Վանի ինքնապաշտպանության գինվորական շտարի անդամ, ականատես անձնավորությունների վկայությամբ, մեծ դեր է խաղացել հերոսամարտի ժամանակ:

Հերոսամարտի հիմնական ծանրությունը Մահարին արդարացիորեն դրել է ժողովրդական տարբերքի վրա: Նոր տարբերակի հավելումներում կարմիր թելի պես անցնում է այն միտքը, որ անկախ կուսակցական շահերից, ծննդավայրի և հայոց հայրենիքի սիրով կրակված Վանի ժողովուրդը տարբերացին մոլեֆնու-

թյամբ ոտքի է կանգնում ճակատագրական պատերազմի՝ ընդդեմ Զեղեթի ար-  
յունահեղության:

1915 թվականի համագգային ողբերգության շղթայի տպավորիչ օղակնե-  
րից մեկը Վանի ինքնապաշտպանությունն է, որի մի շարք կարևոր դրվագներին  
դիմելով (բերդաքաղաքի կոփլիները, Փոլադ բեյի սպանությունը, թուրքական  
զինանոցի հրդեհումը, Համուդ աղայի զորանոցի պայթեցումը, Հայուղիների  
կրակոցները և այլն) Մահարին «Այրվող այգեստաններին» հաղորդեց հերո-  
սականության, հետևաբար և պատմական ճշմարտության այն շունչը, որի նվազ  
քանակի համար արդարացիորեն քննադատում էին առաջին տարրերակը:

Վերախմբադրման ընթացքում Մահարին, ըստ երևույթին, ավելի ուշադիր  
է եղել 1915 թվականի ապրիլ-մայիսյան դեպքերի մասին վկայող պատմական  
հիշատակարանների հանդեպ (օրինակ, Ա—Դո-ի «Մեծ դեպքերը Վասպուրա-  
կանում 1914—1915 թվականներին» գրքի), որոնց մեջ բազմաթիվ տեղեկու-  
թյուններ կան ժողովրդական ապստամբության մարտիկների առասպելական  
քաջությունների մասին:

\* \* \*

«Այրվող այգեստանները» իր կառուցվածքային-ոճային նկարագրով մի-  
տում է դեպի այսպես կոչված «ազատ արձակը», ասել է թե՝ արձակի այն տե-  
սակը, որ կաշկանդված շէ վիպական խստորոշ, քրեստոմատիկական կանոն-  
ներով:

Առհասարակ իր գրական բնավորությամբ լինելով «կյանքի հոսանքի» գե-  
ղագետ, Գ. Մահարին վիպային իրականությունը յուրացնում է իբրև իրական  
նախօրինակների (դեպքերի) և իրական նախատիպերի (հերոսների) համագրա-  
կան (սինթետիկ), որակ, ուր տեղ ունեն պատումային բազմաթիվ շերտեր՝  
նկարագրություններ (Վանի թերդի, այգեստանների, փողոցների, շուկաների,  
զրադարձների, զարոցների առարկայական նկարագրությունները), քնարական  
շեղումներ (հեղինակի դիմումները Վանի հեռավոր՝ նախապատմության նշան-  
ներին), ինքնակենսագրական հուշեր (իր կենսագրության առանձին փաստերի  
թափանցիկ հղումները), հրապարակակոսական միջամտություններ, Վանին  
բնորոշ «կենցաղային կոլորիտի» հյութեղ ոճավորումներ, հիշատակարանային  
մեջբերումներ (Արամի հուշատերի բաղվածքները՝ «Ե՞րբ պիտի բացվի ար-  
շալույսը»), բանավիճային հարցումներ, Վանի բանահյուսության՝ երգերի,  
օրորոցայինների, ասմունքային ոճերի անդրադառնումներ, և այլն, և այլն:

«Այրվող այգեստանների» կառուցվածքը, անտարակույս, համապատկե-  
րային վեպի ժանրատեսակի արձագանքն է՝ Վանի ամբողջական կյանքի ընդ-  
գրկման առումով, բայց և միաժամանակ համայնապատկերի յուրօրինակ խըմ-  
բագրությունն է. վեպի կառուցվածքի հենակետերը ոչ այնքան ֆարուչային՝  
դիպվածային կապերն են (թեև դրանք ևս ունեն իրենց որոշակի տեղը), որքան  
առանձին հերոսից դեպի Վանի ընդհանուր կյանքը ձգվող ներքին-հոգեբանա-  
կան օղակները:

Ասենք, որ ոճային տարբեր հնշերանգների գոյակցության պայմաններում  
հիմնական ծանրությունն ընկնում է երգիծական հնշերանգի վրա:

Դեռ գրական մուտքի օրերից Մահարին ունեցել է «երգիծական» նախա-  
սիրություններ, իսկ այնուհետև խորանալով համաշխարհային երգիծական գրա-  
կանության պատմության մեջ, զինվել է երգիծանքի հարուստ պաշտպանու-

Հյուսիսային տարագրության օրերին, ինչպես երևում է Վ. Ալավանին գրած նամակներից (1953)<sup>21</sup> Գ. Մահարին նորից ու նորից ընթերցել է ուստի գրականության հուշարձանները, մասնավորապես շորս անգամ անդրադարձել է՝ ազգային ինքնաքննադատության կոթողին՝ Ն. Վ. Գոգոլի «Մեռյալ հոգիներին»։ Նրա վաղեմի հետաքրքրությունների մեջ են եղել Սվիլթը, Զեխովը, Երվանդ Օսյանը, Հ. Պարոնյանը, Լեռ Կամսարը, «Քաջ նազարը» (իր ծրագրերի մեջ էր «Քաջ նազարի» արձակ մշակումը՝ հայկական Դոն-Քիշոտի կամ Շվեյկի նման կերպարների հեռանկարով)։ Միուկ բանիվ՝ լինելով հայկական ժիծաղի վարպետներից մեկը, Գ. Մահարին դիմում է Երգիծական բնութագրման ամենատարբեր ձևերին՝ սովորական շարժից ու կատակից մինչև մտրակող, աններող ծաղը, Երգիծական ոգեշնչման ուղղությամբ խորացնելու պատմական իրականության օբյեկտիվ պատկերը։ Նրա ժիծաղի ուղեծիրի մեջ են հայտնվում շատ «պատկառելի վանեցիներ», ինչպես Հակոբ աղա Կանդայանը (Ակբաշան), որը երկի թե Ախանես աղայի կերպարից հետո «Այրվող այգեստանների» մյուս ամենակենդանի կերպարն է՝ գծագրված երգիծական թանձր գույներով («Մեկ՝ վան, մեկ՝ Հակոբ Կանդայան»), ինչպես պարոն Համբարձում Երամյանը, այդ «Կախարդական անձնավորությունը», որը թեև իրեն համարում է «չեզոք-շեֆ», սակայն, ուրբ Վան էր ժամանում մի նոր կուսակալ, կամ այլ բարձր պաշտոնյա, երբ երեք կուսակցությունները փակ ժողովներ էին գումարում «իրենց դիրքը ճշտելու համար», պարոն Երամյանը, ընկած էր ուսուցիչներից մեկի թեր, որ կիրակի քշում էր նոր ժամանած կուսակալի տոմք՝ բարի գալուստ ասելու, իր ուրախությունը հպատակությանը հայտնելու։

— Ես ոչ մի փարթիայի հետ ոչ մի կապ չունեմ. իմ փարթիան հայ ժողովրդի անխարդախ և բոլորանվեր հպատակությունն է հանդեպ Օսմանյան բարձրագույն զահակալության...»։

Այնուհետև գալիս են ավելի շարքային վանեցիների երգիծական-հեղմական-ծաղրական բնութագրումները, որոնց շարքում անմոռանալի են Պոլսից և կած փաստաբան Հրանտ Գալիկյանի և պմազարդ Մահակ-Մյուսլիի դիմանկարները՝ վերարտադրված նրանց խոսքի, խոսակցությունների յուրահատուկ եղանակների միջցոցով։

«Այրվող այգեստանների» երգիծանքի՝ դիպուկ ծաղրանկարների, անեկդոտային պատմությունների, զավելշտախաղերի և հարակից ոճաբանության կողքին լայն տեղ ունեն «հակածիծաղի» ոճային շերտերը՝ հերոսների միանգամայն ունալիստական բացահայտումները (Մյուտուրի և Հայոց ձորի «Խեքա» վանքի կառավարիչ Միհրանի կապերը), էպոսային-հուստորական խոսքակառուցվածքները («Հե՞յ, Շատախի բարձրաբերձ սարեր, անդնդախոր ձորեր, որ սիրով ապաստան եք տվել և հերոսին, և ավաղակին։ Հե՞յ, Կամետի համբավական ծուռեր և այդ Ծուռի մեջ երկու ամենածուռ՝ Զաթը ու Ծերոս»), բանաստեղծական-հուզական ոճաձևեր, վավերագրություններ և այլն, և այլն։ «Այրվող այգեստանները» կարելի է համարել հայոց լեզվով երբեմ ստեղծված բառային խրախճանքներից մեկը՝ այնքան բազմազան և հարուստ են բառագրությունները, այնքան ճկուն են բառային անցումներն ու բառային կապակցությունները, այնքան կենսաթրթիու, անդիմակ են բառերը։

\* \* \*

Հայ արձակի պատմության մեջ «Այրվող այգեստանները» գեղարվեստական հուշարձան է՝ արժանի բազմակողմանի և խոր հետազոտության<sup>22</sup>։

Դա համադրական (սինթեղների) արձակի իսկական նմուշ է՝ կառուցվածքային-պատումային անկախ նկարագրով, ոճային բազմատեսակ գույների շաղախով, վերին աստիճանի կենդանի, արտիստականության աստիճանին հասցված գրելակերպով:

## 6

Խառնվածքով բազմասեր՝ բազմակողմանի հետաքրքրությունների տեր գրական անհատականություն, Գուրգեն Մահարին բանաստեղծության և արձակի գլխավոր հուներից բացի պարբերաբար, կարելի է ասել՝ առանց ընդհատումների, դիմել է նաև զուգահեռ ժանրերի՝ հրապարակախոսության, թատերագրության, քննադատության, հուշագրության, նամակագրության:

Դեռ պատանի հասակում՝ 1918—20 թթ. Մահարին թղթակցություններ է տպագրել ժամանակի պարբերականներում, խմբագրել է «Վերածնունդ» աշակերտական շաբաթաթերթը, իսկ այնուհետև՝ 20—30-ական թվականներին, ապա նաև 60-ական թվականներին, մինչև կյանքի վերջը, հանրապետական մամուլը ողողել է օրվա քաղաքական անցուղարձին, կյանքի նոր երեսույթներին. գրականության արդի մոմենտին նվիրված հոդվածներով, որոնք վկայում են նրա քաղաքացիական անհանգիստ նկարագրիրը: Իրեւ երեսույթների վերլուծություններ Գ. Մահարու «Հրապարակախոսական արձագանքները» աշքի շեն ընկնում խոր և հստակ գիրքերով: Նա այնքան «շուտափույթ», «բանաստեղծավարի» է արձագանքել ժամանակի բարդից էլ բարդ խնդիրներին, որ դեռ 20-ական թվականներին իր բարեկամը՝ Աղասի Խանջյանը, հարկ է համարել նամակով կանիել նրա շափազանց «ոգևորությունը»՝ «Ուրիշ խնդիրների մեջ մի խառնըվիր...»:

«Խառնվելը», սակայն, ինչ-որ տեղ էլ ունեցել է դրական նշանակություն՝ Մահարու հայացքն ուղղելով կյանքի հրատապ խնդիրների կողմը:

Թատերագրության բնագավառում Գ. Մահարու առաջին փորձերը Ալեքսանդրապոլի «Լաստ» ագիտ-թատրոնի համար 1923—24 թթ. գրած օպերետային թերում ունեցող ագիտականներն էին, որոնք հիշարժան են և իրեւ ժամանակի հեղափոխական պաթոսի տուրքեր և իրեւ թատրոնի ավանդական ձևերը նոր կառուցվածքներով նորոգելու հայտեր:

Գ. Մահարին ևս, ինչպես Ե. Զարենցը «Կապկազում», մարտահրավեր էր նետում հոգեբանական արվեստի ավանդներին («Մեզ ի՞նչ թե կա մի Սալոմե, հալում է Յոքանի համար...») և նոր թատերագրության գլխավոր դրույթը հըռշակում էր գործողությունը, պայքարը («Կյանքը մեր, կոփը մեր...»):

Իր ստեղծագործական կյանքի մյուս շրջաններում նույնպես Մահարին գրել է կատակերգություններ, դրամատիկական քանդակներ, էտյուդներ, դրամաներ («Մարգը մարդուն...»), գործի է դրել դիալոգի և հումորի իր ձիրքերը, սակայն այդպես էլ նրա թատերագրությունը չի դարձել թատրոնի երեսույթ՝ դրամատիկական լարի թուղության և հրապարակախոսական, բանաստեղծական լարերի «ուժնության» պատճառով:

Մահարի դրամատուրգը ակներևորեն զիշում է և բանաստեղծին, և արձակագրին:

Այսպես կոչված «զուգահեռ ժանրերից» անտարակուսելի արժեքներ են Գ. Մահարու հուշագրությունները:

**Դեռ 1933-ին, «Գրական թերթում» նա տպագրել էր հորելյանական հուշը Զարենցի մասին, որն այնուհետև դարձավ «Զարենց-Նամե» հուշադիմանկարի հիմքը:**

Լինելով Ե. Զարենցի սակավաթիվ մտերիմներից մեկը և նրա մեծության անվրեպ գնահատողը (Դ. Մահարին է դեռ 1920-ին տպագրել առաջին բանաստեղծական ձոնը Զարենցին՝ «Օրերը մեր կապույտ, կապույտ առասպել»—«Հայաստանի ձայն»), հուշագրողը հակիրճ, բայց դիպուկ բնութափորություններով, հուշային ֆրազմենտներով, մտերմական շեշտով և բանաստեղծական ներշնչանքով վերակերտում է իր մեծ ժամանակակցի կերպարը՝ նրա բնավարության անմիջական գծերով, հոգեկան աշխարհի գաղտնիքներով, հայացքների անկախությամբ:

Դ. Մահարին վերստեղծել է նաև իր մյուս նշանավոր ժամանակակիցների՝ Ակսել Բակոնցի, Աղասի Խանջյանի, Վիլյամ Սարոյանի, Հրաչյա Ներսիսյանի հուշային դիմանկարները,—վերին աստիճանի կենդանի և ինքնատիպ պատումներ, որոնք հայ հուշագրության մեջ հաստատեցին ժանրի մահարիմական որակը:

Փուրգեն Մահարին մեր օրերի սակավաթիվ հայ գրողներից էր, որ հավատարիմ մնաց գրական նամակագրության (էպիստոլյար ժանրի) վաղեմի ավանդներին, ստեղծեց իր նամականին, որն ոնի ոչ միայն անձնական-կենսագրական, այլև գեղարվեստական արժեք:

Նրա թղթակիցների մեջ էին նաև արտասահմանի նշանավոր հայ գրողները, խմբագիրները, մտավորականները: Լայն ու անընդհատ նամակագրություն է ունեցել հատկապես Շահան Շահնուրի, Շամաստեղի, Արամ Հայկապի, Դր. Շահինյանի հետ:

Գ. Մահարու մեծաթիվ նամակները գերազանցապես պատմում են իր կենսագրությունից՝ հոգեկան ապրումներից, գրական ներշնչանքներից, ստեղծագործական մտահղացումներից: Դրանք, սակայն, ամենակին էլ «անձնական» բնույթի շեն, որովհետև անձնականության հենքի վրա անդրադառնում են նամակագիր-գրողի մտորումները գոյության ու մահվան, պատմության հիշատակների ու ժամանակների կապի, անցողիկի ու հավերժականի, առավելապես՝ գրական ստեղծագործության բազմազան կողմերի մասին:

Ինչպես երևում են Գ. Մահարու էպիստոլյար հարուստ ժառանգության առանձին էջերի հրապարակումներից՝ իր որդու և ստեղծագործության մեկնաբանի՝ Գրիգոր Աճեմյանի<sup>23</sup>, նրա նամակները սովորական թղթակցություններ շեն, այլ գեղարվեստական նամակներ՝ լեփ-լեցուն պատկերագոր խոսքի և մահարիական զրոնքացող հումորի փայլատակումներով:

Գ. Մահարին նամակներ հատկապես շատ է գրել կյանքի վերջին տարիաներին (Գր. Աճեմյանի վիճակագրությամբ նա տարեկան գրում էր 130—150 նամակ), մանավանդ իր ճանապարհորդական ուղևորությունների (Մոսկվա, Լիտվա-Պալանգա) ժամանակ, նամակը համարելով կանքի հետ հաղորդակցության և իր ներքին աշխարհի բացահայտման «ամենակարճ» ճանապարհը:

Բառիս իսկական իմաստով գրական մարդ, ազգային գրականության զարգացման շահերով այրվող խառնվածք, Գ. Մահարին շարունակ հանդես է եկել նաև գրական քննադատի դերում:

Դեռ 1918 թ. նա գրախոսություն է տպագրում «Հրազդան» գեղարվեստական հավաքածուի նյութերի մասին («Վան-Տոսպ» թերթում) և այնուհետև՝ ստեղծագործական կյանքի բոլոր հանգրվաններում, հանդես է գալիս հոդվածներով ու գրախոսություններով:

**20—30-ական թվականների նրա «քննադատությունը» առավելապես նվիրված էր նորագույն քնարերգության զարգացման խնդիրներին։ Հանդես գալով մամուլի գրական ասուլիսներում, Մահարին միանգամայն շրջահայաց պաշտպանում էր քնարերգության «մարդկային», հուզական, բանաստեղծական բովանդակությունը գուհիկ-սոցիոլոգների պարտադրած մերկապարանոց սխեմատիզմի, քարոզչության, պլակատի հրահանգներից։**

**Գ. Մահարու գեղագիտական դիրքերի բացահայտման համար ուշագրավ են պարբերականներում տպագրած այն «Նամակները...», որոնց մեջ նա «պոեզիայի դասեր» է տալիս սկսնակ բանաստեղծներին՝ դասականների վկայակոչումներով։**

**Քննադատ Գ. Մահարին առավել բեղմնավոր եղավ 50—60-ական թվականներին։**

**Պատերազմի և ետպատերազմյան տարիներին հանդես եկած բանաստեղծների (Պ. Սևակ, Ս. Կապուտիկյան, Գ. Էմին, Մ. Մարգարյան, Հ. Մահյան, Հր. Հովհաննիսյան, Վ. Դավթյան) ժողովածուների խորաթափանց գրախոսականներից, արձակի նոր երեսույթների (օրինակ՝ Հր. Մաթևոսյանի «Ալխոյի») գնահատումներից, «Հոբելյանական արձագանքներից», ընթացիկ գրականության միտումների և հեռանկարների շուրջը վարած մեծաքանակ հարցազրույցներից բացի Մահարին հանդես եկավ նաև գրականագիտական նոթերով։ Դրանցից առանձնանում է Հովհ. Թումանյանի մասին պատմող «Այս հմուտ, հանճարեղ լուեցին» (1969) հասեն, որն առհասարակ թումանյանագիտության լավագույն էջերից մեկն է։**

**Գ. Մահարին հանդես է եկել նաև թարգմանություններով, գերազանցորեն արձակ գրվածքների։ Դրանցից հիշարժան է էմ. Կազակեվիչի «Աստղ» բանաստեղծական վիպակի թարգմանությունը։**

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆԵՐ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՈՒՆՔՆԵՐԻ ՄՈՏ

1. «Մշակ», 1901, № 1:
2. Հր. Թամրապյան, Եղիշե Զարենցի «Երկիր Նախրի» վեպը, «Պատմա-քանասիրական հանդես», 1977, № 1:
3. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 465:
4. Վահան Տերյան, Երկերի ժողովածու՝ երեք հատորով, հ. 2, 1961, էջ 314—317:
5. Նույն տեղում, էջ 319:
6. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 311:
7. Ս. Սարինյան, Գեղարվեստական գրականության պատմականությունը, Երևան, 1979, էջ 301:
8. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 240—241:
9. Նույն տեղում, էջ 240:
10. «Մեհյան», 1914, № 1:
11. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 335:
12. Վ. Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, էջ 275—276:
13. Նույն տեղում, էջ 302:
14. «Պատման», գրական-գեղարվեստական ալմանախ, Թիֆլիս, 1919:
15. Նույն տեղում, էջ 275—276:
16. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 419:
17. «Վոռոք լիտերատուրա», 1970, №№ 5, 6.
18. Նույն տեղում:

## 20—30-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

1. Վ. Ի. Անդին, Երկերի լիակատար ժողովածու, (5-րդ հրատ.) հ. 7, էջ 133:
2. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 453:
3. ЦГА. Арм. ССР, Фонд վայրի պատճեն, № 226:
4. ЦГАОР СССР, ф. 1918, д. 40, л. 75.
5. Վ. Ի. Անդին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 42, էջ 65:
6. Ալ. Մարտոնի, Խորհրդային Հայաստանի ուղին, 1924:
7. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 453:
8. Վ. Ի. Անդին, Երկերի լիակատար ժողովածու, հ. 43, էջ 237:
9. Նույն տեղում, էջ 238:
10. Նույն տեղում, էջ 238:
11. «Մուրճ», 1921, № 4:
12. «Նոր աշխարհ», 1922, № 3:
13. «Նոր հրդային Հայաստան», 1922, № 5:
14. Նույն տեղում:
15. «Ապագա», «Փարիզ», 1925, № 8:
16. «Երևան», Փարիզ, 1925, № 12:
17. Ավ. Խանհակյան, Երկերի ժողովածու, հ. 5, 1977, էջ 305:
18. Հայաստանի մասին մանրամասն տե՛ս Արտ. Միսիքարյան, Վրաստանի սովետահայ գրականությունը (1966, Երևան), ինչպես նաև Գ. Լունյանի «Հուշերը» (1959, Երևան) և Պահարեի «Բատերական հուշերը» (1960, Երևան) գրքերում:
19. Պողոս Մակենզյան, Հայկական թուալոն կ նրա երեք ու կեռ արբանյակները, «Նորհրդային Հայաստան», 1922, № 157, 2. Սուրբարյան, Մի գրական գեկլարացիայի առթիվ, «Նոր աշխարհ», 1922, № 1, Ա. Կարինյան, Վտանգավոր սայթաքում, «Պայքար», 1923, № 2:
20. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 29—30:

21. Զ. Ղուկասյան, *Սովետահայ գրականագիտությունը 1929—30-ական թթ.*, Ե., 1981.
22. Դ. Գրապարյան, Գրական կյանքը 1920-ական թթ. առաջին կեսին, «Գարուն», 1980, № 57.
23. Հ. Հակոբյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 259.
24. «Կարմիր աստղ», 1924, № 5:
25. «Մարտակով», 1924, № 241:
26. «Թուրա», 1923, № 1:
27. «Կարմիր աստղ», 1922, 12 մայիսի:
28. «Հշշողություններ Եղիշե Զարենցի մասին», Երևան, 1957, էջ 69:
29. Հովի. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 100:
30. Ալոյշիացիայի 1925 թվականի հաշվետվության մեջ ասվում է «...Պրոլետարական գրականությունը որքան էլ ձեական ընդօրինակումներ է կատարում և պետք է կատարի հինգրականությունից, բայց իր բովանդակությամբ պետք է ուզդակի հակառակի նրան» («Խորհրդային Հայաստան», 1925, 11-ը հունվարի):
31. «Խորհրդային Հայաստան», 1925, 5 հուլիսի:
32. «Խորհրդային Հայաստան», 1925, 19 հուլիսի:
33. «Ճշշողություններ Եղիշե Զարենցի մասին», էջ 131:
34. Նույն տեղում, էջ 132:
35. «Խորհրդային Հայաստան», 1925, 13 հուլիսի:
36. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 425—426:
37. «Մարտակով», 1925, 27 սեպտեմբերի:
38. «Խորհրդային Հայաստան», 1929, 1 մայիսի:
39. «Գրական թերթ», 1932, № 3:
40. «Նոր ուղի», 1930, № 1:
41. «Գրական թերթ», 1933, № 7:
42. «Բաց նամակը» առաջին անգամ տպագրվեց 1957-ին, Ս. Սարյանի կազմած «Ե. Զարենցը՝ գրականության մասին» գրքում, այնուհետև մասավ Երկերի ժողովածուի 6-րդ հատորի մեջ:
43. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 220—221:
44. Հովի. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 6, 1959, էջ 166:
45. «Խորհրդային Հայաստան», 1936, № 79:
46. Մ. Գորեկոյ, Հայաստան, 1930, № 1:
47. «Հայաստան», 1931, № 108.
48. Ս. Կորնիլի, Ազգային փոքրամասնությունների գրականությունը, «Սովետական գրականություն», 1956, № 6:
49. «Նոր ուղի», 1929, № 4:
50. «Խորհրդային Հայաստան», 1928, № 174:
51. Գ. Տաճազե, Սтихотворения, Մ. 1960, стр. 159.
52. «Գրական դիրքերում», 1927, № 3—4:
53. «Գրական թերթ», 1937, 11 մայիսի:
54. «Խորհրդային Հայաստան», 1937, № 28:
55. «Գրական թերթ», 1939, № 13:
56. «Գրական թերթ», 1939, № 26:

### Գ Ա Ե Զ Ի Ա.

1. «Կարմիր աստղ», 1921, № 20:
2. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 17:
3. Նույն տեղում, էջ 18:
4. Ալմաստ Զաքարյան, Հեղափոխության տարիների Զարենցի բանաստեղծական շրջադարձը, «Արարեց հասարակական գիտությունների», 1977, № 2: Թիֆլիսի գրական մթնոլորտի համար նշանակալից Երևանի Եղիշե «Երեքի» Վլ. Մայակովսկու, Դ. Բուլլյակի, Վ. Կամենենկու շրջադարյալիան «Թիֆլիսյան հանգրվանը», որի արձագանքները հասկել էին նաև 1917 թ. ֆռատուրիստ Կարա Դարմիշի հետ մտերմացած Եղիշե Զարենցին:
5. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 554:
6. Նույն տեղում, էջ 91—92:
7. Նույն տեղում, էջ 91:
8. Նույն տեղում, էջ 82:
9. Նույն տեղում, էջ 97—98:

10. Սա. Շահնշան, Գրականության մասին, 1948, էջ 105—106:
11. Ա. Ակոլու, Новое утро, М., 1928.
12. Դ. Գևորգյան, Առակի մասին, «Սովետական գրականություն», 1952, № 3:
13. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 22:
14. Նույն տեղում, էջ 45:
15. Վլ. Մայկովսկի, Собр. соч. т. II, стр. 246.
16. Էդ. Զերայշյան, Բանաստեղծական էպոսի նոր ուղիները («Հակոբերեց և Հայ գրականությունը», 1967, էջ 361):
17. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 108:
18. «Գրական դիրքերում», 1928, № 6:
19. Էդ. Զերայշյան, Զորո զադաթ, 1982, էջ 351:
20. «Գրական դիրքերում», 1930, № 4:
21. Ալ. Մյասենիլյան, Ըստիր երկեր, էջ 378:
22. «Նոր ուղի», 1930, № 1—3:
23. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 280—282:
24. «Մուրճ», 1922, № 3:

#### ԳԵՂԱՐԳԵՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿ

1. Ավանդական բանասիրությունը Հայ միջնադարյան գրականությունը հետազոտել է միակողմանի ուղղությամբ՝ լոկ բանաստեղծության, իսկ նորագույն հետազոտություններում (Մ. Ավագարենյան, Հայ կեղարվեստական արձակի սկզբնավորումը, Ա. Մրացյան, Միշնադարյան գրուցքներ, Գ. Գևարյան, Վարդագրության ժանրը և այլն) միայն առաջին քայլերն են կատարվում հնագույն Հայ արձակի զարգացման հարցերը մշակելու ուղղությունը:
2. Ստեփան Զարյան, Երկերի ժողովածու, հ. 1, 1977, էջ 19:
3. «Ընորք», 1925, № 1:
4. Լ. Տիմոֆեօս, Пути развития литературы после Октября, «Известия» АН СССР. 1957, т. XVI, выпуск 5.
5. Ա. Ի. Տոլստոյ. Полное собр. соч. т. XIII, 1949, стр. 288.
6. Վ. Ի. Անդին, Ելթ, հ. 39, էջ 23:
7. Նույն տեղում, էջ 14:
8. Վրացական ՍՈՀ պետական կենտրոնական արխիվ, ֆոնդ 4, գործ 31, թիրթ՝ 408. Տե՛ս «Սովետական Հայաստան», 1958:
9. Մ. Գորեկան, Несобранные литературно-критические статьи, М., 1941, стр. 54—55.
10. Մ. Գորեկի, Ազգային փոքրամասնությունների գրականությունը, «Սովետական գրականություն», 1956, № 6:
11. Վ. Ի. Անդին, Ելթ, հ. 39, էջ 14:
12. Ա. Տեսեւրյան, Նկատողություններ Հայ պատղագիրների մասին, Երեան, 1927:
13. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 660:
14. Արտ. Միթրայրյան, Վրաստանի առվետահայ գրականությունը, 1966, էջ 127:
15. Տե՛ս Երկերի ժողովածուի 6-րդ հատորի (1982) ժանրիթագրիականները, էջ 658:
16. «Պայքար», 1923, № 4:
17. «Գրական դիրքերում», 1930, № 11—12:
18. Գ. Հովհաննեսյան, Խաչակրանի ստեղծագործական աշխարհը, 1969, էջ 175—176:
19. Նույն տեղում, էջ 240—241:
20. «Գրական թերթ», 1933, № 17:
21. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 477:
22. «Գրական թերթ», 1936, № 11:
23. «Գրական թերթ», 1936, № 12:
24. Մ. Գորեկան, Собр. соч. т. 25, стр. 254.
25. Ի. Վ. Գոցոլ, Собр. соч. т. 8, 1952, стр. 481.
26. Վ. Днепров. Проблемы реализма. 1956, стр. 481.
27. «Խորհրդային Հայաստան», 1927, № 63:
28. «Գրական թերթ», 1938, № 7:
29. Первый Всесоюзный съезд советских писателей. Стенографический отчет. М., 1934, стр. 214.

30. «Лит. газета», 1934, 15—августа.  
 31. Ա. Թակոնց, Երևան, հ. 4, 1984, էջ 112:

#### ԹԱՏԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Դեկտեմբերի 1918 թվականից Հյուսիսային Կովկասի և Բուլաստանի հայրաքնակ քաղաքակրություն (Պյատիգորսկ, Կրասնոդար, Աստրախան, Սիմֆեռոպոլ, Դոնի-Ռոստով և այլն) կազմակերպվում են առաջին սովետական հայկական թատերախմբերը, իսկ 1919-ին Սոսկվայում կազմակերպվում է Հայկական առաջին դրամատիկական ստուդիան: Թատերական ձեռնարկումների սկզբնուղղ Ազգությունների Կոմիսարիատի Հայկական գործերի կոմիտեական էր:
2. Թատրոնի կազմակերպումը հանձնարարվում է Պ. Մակինցյանին, Մ. Գևորգյանին, Լ. Քաղաքական Վերջինս մշակում է նոր թատրոնի պատփորմը՝ հիմք ընդունելով՝ «Թատրոնահան օրգանիզմի»՝ «անսամբլայնովյան» գաղափարը.
3. Լ. Փալանքար, Արվեստի մայրուղիներով, Երևան, 1963, էջ 121:
4. «Խորհրդային Հայաստան», 1923, 9 նոյեմբերի:
5. «Խորհրդային Հայաստան», 1921, 27 ապրիլի:
6. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 3, էջ 6:
7. «Խորհրդային Հայաստան», 1924, 25 հունվարի:
8. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 58:
9. Նույն տեղում:
10. Վ. Վաղարշյան, Ընկերներս, բարեկամներս և ես, Երևան, 1958, էջ 590:
11. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, էջ 41:
12. Իր «Հետադարձ Հայացք» մեծուարներում Վ. Փափազյանը շափազանց բարձր է գնահատել «Կապկազը», գրելով թե՝ Զարենցը «կարողացել էր ամփոփել իր ժամանակի շունչը, երբեմն հասելով նույնիսկ Արխանովանի ամեն ինչ ծաղրող հումորին, ամեն ինչ բուժող Ռաբելի ծիծաղին, ամեն դիմակ պատռող Դանտեի ակնարկին...» («Հետադարձ Հայացք», հ. 2, 1957, էջ 57):
13. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 5, էջ 428:
14. «Զարենցը նորից զանումը է ժողովրդական թատրոնի ակունքներին՝ դրա վերակենդանացման մեջ տեսնելով՝ թատրոնի ապագան: Զարենցը այս փորձով զնում էր դեպի էպիկական թատրոնը, որի գեղազիտական համակարգը նույն տարիներին ձևակերպվել էր Բերտոլդ Բրեխտի արվեստում» (Վ. Գրիգորյան, Սովետահայ դրամատուրգիայի ձևավորումը, էջ 51):
15. Հ. Հավիանենիսյան, Թատրոնը միջնադարյան Հայաստանում, էջ 283:
16. «Маркс и Энгельс об искусстве», т. I, М. 1957, стр. 53.
17. Հավիանենիսյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 47:
18. Լ. Հախվեդյան, Թումանյանի աշխարհը, 1966, էջ 399—404:
19. Տ. Հախումյան, Դ. Դեմիրճյանի դրամատուրգիան, 1958, էջ 138:
20. Ե. Զարենց, Երկերի ժողովածու, հ. 6, 1967, էջ 333:
21. Նույն տեղում, էջ 327:
22. Նույն տեղում:
23. Նույն տեղում, էջ 329:
24. Հր. Թամրազյան, Ծիրավանդեն, 1961, էջ 568:
25. Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, 1964, էջ 325:
26. Գ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 5:
27. Հակոբ Պարանյան, Երկեր, հ. 9, Ե. 1975:
28. Տ. Հախումյան, Դ. Դեմիրճյանի դրամատուրգիան:
29. Первый Всесоюзный съезд советских писателей. Стенографический отчет,
30. Գ. Դեմիրճյան, Երկեր, հ. 8, էջ 205—206:
31. Նույն տեղում, էջ 206:
32. Նույն տեղում, էջ 208:
33. Նույն տեղում:
34. Նույն տեղում, էջ 210:
35. Նույն տեղում, էջ 47:
36. «Սովետահայ գրականության պատմություն», հ. 1, 1961, էջ 617:
37. Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 10, էջ 502:

**ՔԱՆԱԿԱՆԱԳԻՑՈՒԹՅՈՒՆ**

1. Հովհ. Թամանյան, Երկերի ժողովածու, հ. 4, 1951, էջ 269:
2. Էդ. Զբարշյան, Հայ գրական բննադատությունը XX դարի սկզբին, «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 1:
3. Դեռ 1917 թ. հեղափոխությունից անմիջապես հետո Պրոլետկուտը ունեցավ լայն արձագանքներ: Այսպէս, 1919-ին Թիֆլիսում սկսեց հրատարակվել «Пролетарская культура» (հրատարակիչ-խմբագիր Սուրեն Երզնկյան) շարաթաթերթը: Թերթի հոդվածներում վերաշարադրված են մայր ամսագրի՝ պետերուրյան «Пролетарская культура»-ի «բանավոր դասակարգի ինքնուրույն կովասուրա» ստեղծելու դրույթները, յանավորապես այն դրույթը, որին միայն բանվորական ծագման գրողներն են ի վիճակի արտահայտելու բանվորի հոգեբանությունը, իսկ մտավորական խավից դուրս եկած գրողներին անմատչելի են բանվորի ներքին աշխարհի շարժումները:
4. Ալ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, 1957, էջ 117—118:
5. Նույն տեղում, էջ 421—422:
6. «Ենորհրդային Հայաստան», 1922, № 268:
7. Նույն տեղում:
8. Նույն տեղում:
9. Ռշագրավ է հետևյալ փաստը. 1925-ին, մշակելով «Նոյեմբեր» խմբակցության Դեկտացիան, Ե. Զարենցը հիմնավորապես հենվում էր Ալ. Մյասնիկյանի վերոհիշյալ հոդվածի տեսական եղբակացությունների վրա:
10. «Ենորհրդային Հայաստան», 1922, № 267:
11. Ալ. Մարտիրոսի, «Ենորհրդային Հայաստանի ուղին», Թիֆլիս, 1924, էջ 45:
12. Ան, Ալ. Մյասնիկյանի հավերժական հիշատակին, «Նոր ակու», 1945, № 5:
13. «Путь правды», 1914, № 5.
14. Տի և Ա. Բոզգանովի «Գեղարքվաստը և բանվոր դասակարգը» գրքի (Մ., 1920) հավելվածը:
15. «Ենորհրդային Հայաստան», 1925, № 185:
16. «Մարտակու», 1924, 18 հունիսի:
17. Գ. Վ. Պետրոսյի այդ տեսության բանաձեռնումն է նրա հետևյալ միտքը. «Բննագատի առաջին խնդիրն է՝ տվյալ գեղարքվաստական երկի գաղափարը արվեստի լեզվից սոցիոլոգիայի լեզվի թարգմանելը, որպեսզի գտնի այն, որը կարող է համարվել տվյալ տեղական գործության սոցիոլոգիական համարժեքը»:
18. «Ենորհրդային գրականություն», 1934, № 3—4, 1935, № 1:
19. «Հայ գրականության պատմություն», հ. 5, 1979, էջ 186—187:
20. Տ. Խանզայան, Հոդվածների ժողովածու, Երևան, 1963, էջ 26:
21. Պողոս Մակինցյան, Դիմագծեր, 1980, էջ 323:
22. Նույն տեղում:
23. Գ. Հակոբյան, Սովետահայ բնագրագիտության անցած ճանապարհ (ահե՛մ «Գրականությունը և ժամանակը», 1980, էջ 315):

**ԵՂԻՉԵ ԶԱՐԵՆՑ**

1. Տի՛մ Վիվանի (Զիդիշյան) «Զարենցի հետ» հուշը («Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», Երևան, 1961, էջ 279):
2. Լուս Արագոն, Պամյան Աւետիկա Իսաակյան. «Правда», 1957, № 294.
3. Մ. Մարյան, Արվետը ըմբռնելու զարմանալի ընդունակություն («Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», էջ 22):
4. Ա. Կամենսկի, Օ Սարյան. «Новый мир», 1962, № 1.
5. Հ. Անդամանյան, Եղիշե Զարենց, «Դարրնոց», 1922, № 1:
6. Մ. Մարյան, Զարենցի հետ, «Սովետական արվեստ», 1967, № 9—10:
7. Հ. Անդամանյան, Փամանակիդ շանչը զարձիր, էջ 52—53:
8. Հովհ. Թամանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 130:
9. Գ. Սևակ, Զեկուցում Զարենցի ծննդյան 70-ամյակին, «Գրական թերթ», 1987, № 40:
10. Լ. Արյունօվ, Եղիշե Չարենց, Էվոլյուցիա տարրության մասին, Երևան, 1967, стр. 15.
11. Գ. Արավ, Մի բանի համառու գրվագներ Զարենցի վերաբերյալ իմ հիշողություններից (ահե՛մ «Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», էջ 104):
12. Գ. Սևակ, Մայաթ-Խովան, 1969, էջ 309:

13. Մ. Նահինյան, Մարտիրոս Սարյանի գաղտնիքը, «Գրական թերթ», 1965, № 35:
14. Խ. Սարգսյան, Տասնամյակների միջով, էջ 199:
15. Ալ. Խաչինակյան, Զարենցի հետ Վենետիկում («Հիշողություններ. Ե. Զարենցի մասին», էջ 20):
16. Գ. Մահարդ, Զարենց-Նամե, էջ 32—33:
17. Մ. Շագինյան, Предисловие (в книге «Страна Наци», Ереван, 1960).
18. Մ. Շագինյան, Предисловие редактора. В книге «Страна Наци», М., 1935, стр. 7.
19. Նույն տեղում:
20. Գր. Նարեկացի. Մասյան «Պղբերգության», Բան. Բ. թ. թարգ. Մ. Խերանյանի:
21. Ա. Կարինյան, Եղիշե Զարենց, 1974, էջ 76:
22. «Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», էջ 391:
23. Գ. Գևորգյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 143—144:
24. Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հ. 4, էջ 392:
25. Յ. Բրյոսօվ, Избранные произведения, т. II, М., 1955, стр. 313.

#### ԴԵՐԵՆԻԿ ԴԵՄԻՐՃՅԱՆ

1. Գ. Գևորգյան, Երկեր, հ. 6, էջ 517:
2. Նշվում են նաև ուրիշ թվականներ՝ 1899, 1902:
3. Գրական այս խմբակցության «Վերնատուն» անոնք, Դեմիրճյանի հուշի տվյալներով, ոմի երկու բացատրություններ՝ Մի բացատրությամբ այդ անոնքը կապվում է խմբակցության հանգրվան-հավաքավայրի հետ, որ էր Թիֆլիսի թերուտովսկայա փողոցի վրա գտնվող № 50 տան Հովհ. Թումանյանի բնակարանը՝ շենքի վերին հարկում («Վերնահարկ-վերնատուն»): Երկրորդ բացատրությամբ՝ խմբակի անդամները կատակով իրենց համեմատում էին Թրիստոնի աշակերտների հետ, որոնք միասին Աստծուց տենչում էին ստեղծագործության սըրբազն հուրբ:
4. Գ. Գևորգյան, Երկեր, հ. 8, էջ 199:
5. Նույն տեղում, էջ 200:
6. «Մշակ», 1913, № 272:
7. Գ. Գևորգյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 444:
8. Նույն տեղում, էջ 445:
9. «Պատմա-բանասիրական հանդես», 1978, № 2:
10. Նույն տեղում:
11. Գ. Գևորգյան, Երկերի ժողովածու, հ. 8, էջ 670—671:
12. Գ. Գևորգյան, Անձանոթ էջեր, 1974, էջ 292:
13. Ա. Զահարյան, Քաջ Նազարի շուրջը (տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը» հոդվածների ժողովածու, 1980):
14. Գ. Գևորգյան, Անձանոթ էջեր, 1974, էջ 293:
15. Մ. Ավազյան, Գ. Գևորգյանի ստեղծագործության ոճի հարցեր (տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 211—212):
16. «Փաջ Նազարի» բեմական պատմության դրվագները (տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 90—97):
17. «Հիյբ Սալվանցի» պատմական հիմքերը (տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը»):
18. Թատրոնի պատմաբանի հավաստումով Վ. Անեմյանն իր բեմադրությունների ընթացքում Դեմիրճյանի տեքստի կողքին ստեղծել է բեմական տարրերակը (տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 97):
19. Լ. Խալարյան, «Երկիր Հայրենին» բեմի վրա («Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 112):
20. «Եղիկոյան Երկան», 1975, 27 սեպտեմբերի:
21. «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 114:
22. «Սովետական Հայաստան», ամսագիր, 1947, № 9:
23. «Սովետական գրականություն», 1943, № 3:
24. «Գարուն», 1970, № 5:
25. Նույն տեղում:
26. «Սովետական Հայաստան» (ամսագիր), 1952, № 10:
27. Գլմթ, ԳԴՅ, № 764:
28. Գլմթ, ԳԴՅ, № 2167:
- 29.Տե՛ս «Գ. Գևորգյանի ստեղծագործությունը», էջ 170—175:

30. ԴԱԹ, ԴԿՅ, № 115:
31. Խոսիլ Կարապետյան, Մեսրոպ Մաշտոց վեպի պատմական աղբյուրների հետքերով (առևտ «Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունը», էջ 176—193):
32. Տե՛ս «Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունը», էջ 217—218:
33. Այս պատմվածքի «որիթմ» վերլուծությունն է Ս. Ավագյանի «Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունը» («Դ. Դեմիրճյանի ստեղծագործությունը», էջ 193—207):
34. Դ. Դեմիրճյան, Երկերի ժողովածու, հ. 8:

#### ՍՏԵՓԱՆ ԶՈՐՅԱՆ

1. Վահան Տերյան, Երկերի ժողովածու, հ. 2, 1961, էջ 251—252:
2. Դ. Վարուժան, Նամականի, 1965, էջ 173:
3. Ստ. Զորյան, Երկերի ժողովածու, հ. 1, էջ 4:
4. Խոյն տեղում:
5. Գ. Հալինան, Ն. Վ. Դոգովը և հայ գրականությունը, 1964:
6. Հետազայում, Երկերի ժողովածուների հրատարակության ժամանակ, Զորյանը վերադասավորեց այդ շարթերը և ավելացրեց նոյն տասական թվականներին գրած, բայց շտպագրած ուրիշ գրքեր ևս:
7. Խ. Սարգսյան, Ստ. Զորյան, 1960, էջ 109—110:
8. «Литературное наследство», т. 60, 1960, стр. 875.
9. Հրաբոսյան, Ստեփան Զորյան, «Հայոցների ձայն», 1970, № 38:
10. Е. Александян. Армянский реализм и опыт русской литературы. Ереван, 1977.
11. Դարաշշանի մասին մանրամասն տե՛ս Վ. Նալբանդյան, Դոգովը և պատմությունը (Երևան, 1970) գրքում:

#### ԱԿՍԵԼ ԲԱԿՈՒՆԻՑ

1. Ավ. Խաչակյանի և Ս. Սարյանի գրուցի այս պատառիկը հրատարակել է Հ. Սալախյանը՝ Ա. Բակունիցի 60-ամյակի օրերին («Литературная газета», 1959, № 132):
2. Չարենցի այս բանաստեղծությունը գրվել է Բակունիցի «անհայտ բացակայումի» շրջանում, 1937 թ.: Առաջին անգամ հրատարակվել է իմ «Ակսել Բակունց» մենագրության մեջ:
3. Ա. Բակունիցի ձեռքով գրված կենսագրական միակ պատառիկը պահպամ է ԳԱԹ-ում:
4. «Էջեր Ակսել Բակունիցի գյուղատնտեսական գործունեությունից» (Երևան, 1969, «Գիտելիք» ընկերություն) գրքույկում է. Բեղարյանը լուսաբանում է այդ խնդիրների մանրամասնությունները: Պատմաբան Վ. Ղազախցյանը վերջերս հայտաբերել է բազմաթիվ արժեքավոր վավերագրեր Բակունիցի գյուղատնտեսական գործունեությունից, որոնց մի մասը մտել է Երկերի ժողովածուի չորրորդ հատորի (1984) մեջ:
5. Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Չարենցի ֆոնդ:
6. «Դրական դիրքերում», 1928, № 5:
7. «Դրական դիրքերում», 1927, № 2:
8. Հ. Սուրխարյան, Ետնոկտեմբերյան հայ գրականություն, 1929:
9. Վ. Կորոտին. Լիօբով կ քրոշել առաջնորդական գործառնությունը, 1956, № 63.
10. Գրա մասին է վկայում Գ. Մահարու Հուչըր. «Ժամանակակից ուսու գրողներից մեծ սիրով սիրով էր Պրիշվինին: Մոսկվայում օրերով լինում էր նրա մոտ և մեծ ոգնորությամբ պատմում նրա մասին: Չարենցը դիտեր, որ Պրիշվինը նրա թւուությունն է: Գրողների առաջին համարմարի օրերին, երբ Ակսելը կորչամ էր, Չարենցը խանդում էր: Երբ երկում էր Ակսելը, անխուսափելի էր հետևյալ հարցը:

  - Ո՞ւր էիր կորել:
  - Պրիշվինի մոտ էի:
  - Դու էլ մարդ ես գտել:
  - Ուսւ մեծագույններից է: Մարդ: Անառապին հերիաթ:
  - Բո՛դ, մ՛..., ըստ ականում էր Չարենցը:

Խոկ երբ մի անդամ նորից Ակսելը կորել էր, Չարենցն անկեղծացավ:

— Պրիշվինը մեծ, հնարքակիր գրող է, հնարքական ֆիգուր: Եվ իգուր չէ, որ Ակսելը սիրում է նրան: Ընդհանուր շատ բան կա նրանց մեջ» («Ակսելյան բանդակներ», «Գրական թիրթ», 1959, № 49):

11. Первый Всесоюзный съезд советских писателей. Стенографический отчет. М., 1934, стр. 212.

12. Կյանքի մարդուն գրականություն բերելու, գրական կերպար դարձնելու այս դժվարին վարպետության մասին է, ակնարկում Կ. Ձելինսկին «Ակսել Բակունց» հոդվածում, գրելով. «Ֆլորեն ատում էր, թե կարելի է պատկերացնել անապատ, բուրգիր, սֆինքը՝ գեռես դրանը շտեսած, բայց այն, ինչ չի կարելի ոչ մի կերպ երևակայել, դա իր դռան շեմքին պազած բնուրք սափրիչ գույնն է»։ Սա միանգամայն իրավացի է։ Այդպես էլ որևէ ճնով չի կարելի պատկերացնել ալգիներ ջրող, թափառական մշակ կառ-Մարգարին, որի պատկերն այնքան փայլուն կերել է Բակունցը («Դրյանարություն», 1956, № 5)։
13. «Նրա երգիծական էջերը, օրինակ, «Կյորենը... հիրավի աննման են։ Նրա «Գավառական ակնարկներն» իրենց խայլող ուժով ստիպում են վերհշել Ծշեղրինին» (Կ. Զելինսկի, Ակունք Բակունց. «Դրյանարություն», 1956, № 5): «Երգիծական գրականության սրանցի նմուշ է «Կյորենը», որի տեղն իրավամբ Զարենցի «Երկիր Նախրի Կողքին» է» (Ռ. Զարյան. Ա. Բակունցի Երկերի համար գրված առաջարան, 1955, էջ 11): «Կյորենը» հանդիսանում է Եղիշե Զարենցի «Երկիր Նախրի» երգիծական վեպի լրացումը, որի արդյունավետ աղդեցությամբ էլ, հավանաբեն, գրվել է» (Վ. Կորոտին, «Լիтературна газета», 1956, № 63)։
14. Վ. Կորոտին, Լիոբով կ պրոտյամ լույս կ պատահ անհայտ բացակայումը, 1932, էջ 57։
15. Նույն տեղում։
16. Ա. Բակունց, Խաշատուր Արովյանի «անհայտ բացակայումը», 1932, էջ 57։
17. Նույն տեղում, էջ 62։
18. Նույն տեղում, էջ 52։
19. Ազրոտ Հովհաննեսիսան, Արովյան, 1933, էջ 76։
20. Ակսել Բակունց, Գրականության մասին, էջ 85։
21. Նույն տեղում, էջ 92։
22. Բակունցը Արովյանի ձեռագրերը ուսումնասիրել է գրողի թոռան՝ Կ. Արովյանի տանը, երբ դեռ նրանք հանձնված չեին գրական թանգարան։
23. «Մայրան» ձեզ պատմական աղյուրներում միայն մեկ անգամ է պատահում։ Դա վրիպակ է, սակայն այնքան մոտ է ժողովրդական հնչմանը, որ Բակունցը ընտրել է անվան այդ ձեզ։
24. Խ. Արովյան, Դիվան, հատ. 1, 1940, էջ 46։
25. Նույն տեղում, էջ 32։
26. «Սովետական գրականություն», 1941, № 2։
27. Խ. Արովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. VII, էջ 391։
28. Ռ. Զարյան, Զարենցի հետ («Հիշողություններ Եղիշե Զարենցի մասին», էջ 358)։
29. Վ. Շահումյան, Յամետկո ո պրոզ ռուսական կլասսիկօ, Մ., 1955, ստր. 19.
30. «Սովետական գրականություն», 1962, № 2։
31. Գրաբարի օգտագործումն ավելի դրական էր համարում պետականության, փիլիսոփայության, ուզմական տերմինոլոգիայի ասպարեզում, իսկ գեղարվեստական գրականության ասպարեզում մասնակի օգտագործումը կապում էր նյութի պահանջի հետ։  
Փոխառությունների մասին Բակունցն ասում է. «Պրոլետարական հեղափոխությունից հետո մեր ժամանակակից լեզուն կրում է խոշոր ազդեցություն այնպիսի մի լեզվից, ինչպիսին է մեր Հոկտեմբերյան հեղափոխության հայրենիքի լեզուն։ Փոխառությունների ասպարեզում մենք ավելի իրավունք ունենք վերցնելու ուսուց լեզվից, քան մեկ ուրիշից»։
32. Վ. Խորենց, Պայծառ անուն, «Երևան», 1959, № 211։
33. Ա. Բակունց, Գրականության մասին, էջ 125։
34. Խորեն Սարգսյան, Ակսել Բակունց, «Նորը», 1928, դիրք առաջին։
35. «Գյուղատնտեսական կյանք», 1925, № 4։
36. Ա. Օրդովիսանյանին 1929 թվականի ապրիլի 16-ին գրած նամակից։

#### ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

1. Գ. Մայրոս. Էնսուագիրների լուսարանությամբ նրա նախնիները սերում են Պարկաստանից՝ տայեմների երկրից, որի համար էլ գորգավաճառությամբ զրագվող երրեմնի «Մուրագիսանցներ» վանում մկրտվել են «Աճեմյաններ» ազգանուն-տոհմանունվ։
2. «Էնքնակենսագրություն» (Երկերի ժողովածու, հ. 1, 1966, էջ 71)։
3. Տե՛ս «Էնքնակենսագրություն» գրված Սուրեն Ազարարյանի համար (1959-ին շարագրված ձեռագիրը պահպամ է իմ թղթերի մեջ)։
4. «Գրական թերթ», 1933, № 3։

5. «Զարենցի մասին», «Գրական թերթ», 1933, № 3:
6. Նույն տեղում:
7. Գ. Մահարու ստեղծագործության հետազոտողներ Գր. Աճեմյանը և Ս. Բոգոյանը, Հենք վելով բանաստեղծի մի «Վրիպակի» վրա, թէ ինքը նսնինին կարդացել է միայն 1924 թվականից, սիալ են համարում 1922—23 թթ. նվազների մեջ՝ «հսնինյան արձագանքների» տեսակետը»: Թեկուզն այն փաստը, որ Գ. Աճեմյանի արխիվում հայտնաբերվել է «Կարակներ» անտփա շարքը՝ 1922-ի թվագրությամբ, ինչպես նաև նսնինին բնորոշ գույների, հնչերանգների, սամաների «յուրացումները», վկայում են Մահարու համարակությունը ուսւ բանաստեղծով և նրանից կրած ազդեցությունները:
8. A. B. Լյոնաչարսկий. Статьи о советской литературе. М., 1958, стр. 438.
9. «Ենքնակենսագրության» մեջ Մահարին պատմում է, որ իր սիրային բանաստեղծությունը («Զգիտեմ, քեզ եմ սիրում, թէ իմ սերը») «Գրական գիրքերում» ամսագրում տպվել է... «մտքերի փոխանակության» կարգով, իսկ ընանկարի համար նա հեռացվել է (1927-ին) պրոլետարական գրական միությունից:
10. Դրանց դիպուկ պատասխանն է հետեւյալ բանաստեղծությունը.

Բայց ինչո՞ւ մանր, կույրեր եք մի՞թե  
ես խոշոր, խոշըր բուժուական եմ,  
եվ իմ երգն է իմ հարստությունը  
Դրամագուխը, հիմնականը:  
Շահագործել եմ ես բարդիներին  
Նրանց բողոքին անգիտակ,  
Քնից զրկել եմ արագիներին,  
Հանդերն եմ առել հանգի տակ...  
Ու գանձեր ունեմ ես անհատնելի  
Լճերում բացել եմ վարկեր,  
Մերկացրել եմ շահել թփերին,  
Լուսնի հետ քեֆեր եմ սարքել...

11. Վ. Դավթյան, Թնարերգու Մահարին, «Գրական թերթ», 1973, № 33:
12. Լ. Հախվերդյան, Մահարու գրիլը, «Սովետական գրականություն», 1959, № 10:
13. Ե. Զարենցի անտիպ թղթերի մեջ պահպաղ սեագրությունից (ԳԱԹ):
14. Ա. Բակունց, Երկերի ժողովածու, հ. 1, 1976, էջ 315:
15. «Գարուն», 1977, № 2:
16. «Եռորհրդային Հայաստան», 1928, № 298:
17. Գ. Մահարի, Երկերի ժողովածու, հինգ հատորով, հ. 1, էջ III:
18. Լ. Հախվերդյան, Մահարու գրիլը. «Սովետական գրականություն», 1957, № 10:
- 19.Տե՛ս «Բանրեր Համալսարանի», 1967, № 2, «Լրաբեր», 1967, № 10:
- 20.Տե՛ս Ա. Հարությունյան, Կանի ինքնապաշտպանությունը 1915 թվականին: «Բանրեր Հայաստանի արխիվների», 1977, № 3:
- 21.Տե՛ս «Սովետական գրականություն», 1978, № 1:
22. «Գուրգեն Մահարի» մենագրության մեջ (ՀՍՍՀ ԳԱ հրատարակություն, 1981) Ս. Բողոսյանը տվել է «...Այգեստանների» ընդարձակ և շատ կողմերով հետաքրքրական վերլուծությունը Մանավորակես ուշագրավ են վեպի քննադատական պաթոսի, սոցիալական որոշ շերտերի (օրինակ, վաճառականության հանդեպ անհաշու վերաբերմունքի), վիպական որոշ հնարանքների, պատմական հիշողությունների հղումների, երգերի, երգաների և այլն եղած դիմարկումները:
23. «Գուրգեն Մահարին նամակներում», «Սովետական գրականություն», 1978, № 1:

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ\*

- Արդար** (Ե. Զարենցի հայրը) 231  
**Արելյան Հովհ.** 34, 369  
**Արեղյան Մանուկ** 67, 75, 227, 286, 288, 321,  
398, 411, 453, 457  
**Արով Գևորգ** 35—37, 39, 42, 67, 69, 71, 87,  
119, 192, 227, 260  
**Արովյան Խաչատրը** 7, 11, 12, 22, 74, 116,  
120, 202, 211, 212, 214, 226, 293, 324—  
326, 397, 398, 401, 403, 404, 407, 412, 451,  
453, 467, 491, 494—503, 567  
**Արովյան Կ.** (Ե. Արովյանի թոռը) 567  
**Աղամյան Արշակ** 400  
**Աղոնց, Ն.** 171  
**Ա-Դո** 555  
**Աթայան Ա.** 186  
**Ալտան Վահրամ** (Գրուզյան) 35, 36, 42, 46,  
49, 50, 62, 71, 83, 87, 90, 94, 101, 102,  
105, 106, 110, 226, 558  
**Ալեքսանյան Ելենա** 1428  
**Ալթոնյան Գ.** 186  
**Ալիշան Ղեոնդ** 317, 320, 388, 404  
**Ախճատառիկան Աննա** 64  
**Ակսակով Ս.** 141, 436  
**Ակսել տե՛ս Բակոնց Ակսել**  
**Ահարոնյան Ավետիք** 116, 218, 320  
**Աղաբար Հակոբ** 40, 81  
**Աղաբարյան Ծ. Ս.** 459  
**Աղայան Ղազարս** 74, 75, 141, 212, 344, 411,  
435, 436, 450, 451, 453, 495, 503  
**Աղպավիկի 106,** —107  
**Աղքալյան Նիկոլ** 12, 344, 519  
**Աճառյան Հրաչյա** 94, 457  
**Աճեմյան Գրիգոր** (Գ. Մահարու հայրը) 517  
**Աճեմյան Գրիգոր** (Գ. Մահարու սրբին) 558, 568  
**Աճեմյան Վարդան** 369, 566  
**Ախենվալդ Յոհ.** 200  
**Ալվազովսկի Հովհ.** 346  
**Անանյան Վ.** 119, 129  
**Անդրեսեն** 81  
**Անդրանիկի զորավար** 143, 544  
**Անդրեև Ա.** 297, 452  
**Անդրեև Լեոնիդ** 125, 231  
**Անտոկոլսկի Պ.** 64  
**Անոնցիո Գ. դը** 231  
**Ազոլիներ** 226
- Առանձար** (Գույումյան Միսակ)
- Առաքել Դավրիժեցի** 187  
**Ասատրյան Ասատրը** 35, 225, 226  
**Ասատրը Գ.** 65  
**Անեե Ն.** 298  
**Ասլան տե՛ս Դարբինյան Մ.**  
**Ավագյան Մայա** 402, 566  
**Ավղալբեգյան Մայիս** 384, 511  
**Ավետիխյան Զավեն** 395  
**Ավերբախ Լ.** 91  
**Առաջի Մովսես (Հարությունյան)** 35, 40, 62,  
119—124, 127, 138, 139  
**Արամ Հայկազ** 558  
**Արասիսանյան Ավ.** 75  
**Արաքս** 36, 42, 138  
**Արզումանյան Սևակ** 148  
**Արիստոֆան** 563  
**Արծրունի Գրիգոր** 66, 320  
**Արծրունի Վահան** 116  
**Արմեն Մկրտիչ (Ալեքյան-Հարությունյան)** 36,  
46, 53—55, 64, 74, 87, 138, 139, 153—161,  
165, 166, 168, 222, 224  
**Արմեն Արմեն** 36, 174  
**Արմենուչի** 519  
**Արշակ Երկրորդ** 439, 440, 441  
**Արշակյան Հերանուշ** 223  
**Արշարունի Ա.** 41  
**Արփատով** 295  
**Արուտչյան Միքայել** 369  
**Առուտչյան Սերգեյ** 369  
**Արքենիկ (Ե. Զարենցի կինը)** տե՛ս Տեր-Առա-  
վազաւարյան Արքենիկ  
**Աքինոգենով** 60, 192
- Բաբել Ի. Էլ.** 117  
**Բագրիցիկի Էդ.** Գ. 88, 89  
**Բաժան Մ.** 64  
**Բակոնց Ակսել** 35, 36, 49, 54, 56—59, 64, 119,  
120, 127—129, 132, 150, 156, 162—164,  
167—169, 211, 222, 224, 306, 324, 339,  
454—477, 479—486, 488—494, 496—516,  
531, 550, 558, 566—568  
**Բահամբուր Եկատերինա** 185, 186  
**Բայլմոնտ Կ.** 260

\* Անձնանունների ցանկը կազմեց Ս. Անաստասյանը:

- Բայլմոնտ Օ. 231  
 Բայրոն 206, 342, 348  
 Բաշալյան Լեռն 35  
 Բաշբեռկ-Սելիքյան Ա. 36  
 Բաշինջաղյան Գ. 400  
 Բարբուռու Հանրի 65, 224  
 Բարսեղ (արքեպիսկոպ.) 501  
 Բարտոն Ա. 81  
 Բերել Ա. 215  
 Բեղլորյան Լ. 567  
 Բեղնի Գ. 60, 81, 82, 86, 105  
 Բեգիյանսկի 105  
 Բելի Անդրեյ 64, 231, 260, 293  
 Բելինսկի Վ. 120, 209, 214  
 Բեխեր Իոհաննես 65, 306  
 Բենս 107  
 Բև Գ. 138  
 Բերնս Ռոբերտ 121  
 Բիշեր-Ստուոլ 452  
 Բլոկ Անդրեանդր 23, 60, 176, 208, 222, 230,  
     234, 252, 256, 257, 317  
 Բոզդանով Ա. 40, 196, 204  
 Բողենշտեղ 498  
 Բողէր Շարլ 231  
 Բողոսյան Սիլվա 568, 569  
 Բոխչաղյուզ (Բակունիցի մայրը) 471  
 Բորյան Գուրգեն 106, 107  
 Բրայնիսոն Բ. 439  
 Բրեխտ Բերտուլդ 563  
 Բրյուոզ Վալերի 62—64, 70, 171, 203, 220,  
     222, 231, 265, 331, 350, 411  
 Բրովկա Պ. 67  
 Բոււար 306  
 Բունին Ի. Ա. 203  
 Բուլլյակ Պ. 69, 561  
 Բուրգալյան Արշակ 177, 369  
  
 Դալմթերյան Ջարուհի 35  
 Դամառ-Քաթիպա տե՛ս Պատկանյան Բ.  
 Դաստե Ա. 4, 41, 71  
 Դատով Ա. 64  
 Դարագաշյան Մ. 370, 379, 448  
 Դարշին Վ. Ա. 452  
 Դարսիս Լոբկա 228  
 Դերցեն Ա. Ի. 209  
 Դիպիուու 198  
 Դյորի 121, 209, 308, 342, 345, 348, 349  
 Դյուլիքիմյան Հ. 51, 91, 192, 205—217  
 Դյուտյան Մ. 147  
 Դյուրցյան Հակոբ 35, 172  
 Դյուրցյան Մելքոն 147  
 Դյուու Ն. Վ. 23, 121, 165, 169, 206, 281, 290,  
     293, 342, 345, 349, 368, 399, 407, 412,  
     483, 499, 539, 556  
 Դոլիցին Զ. 407  
 Դուզե Վ. 63, 64
- Գարկի Մաթևիմ (Պէշկով Ա.) 23, 55—58, 60—  
     63, 115—117, 121, 122, 141, 163, 198, 202,  
     203, 220, 222, 227, 268, 298, 416, 436, 467  
 Գորոդեցկի Ա. 63  
 Գորկու Նարեկացի 235, 253, 306, 318, 337, 467  
 Գրիգորյան Հրու 86, 262  
 Գրիգորյան Վահան 107, 176  
 Գրիշաշվիլի Ի. 103  
 Գուլակյան Արմեն 187, 192, 362, 369  
 Գուլակյան Սյուզան 363  
 Գեղրդյան Մամիկոն 308, 563  
  
 Դաբաղյան Նորայր 42, 49, 50, 91, 209—217  
 Դաղինանի Ը. 67  
 Դանտե Ալիքիերի 242, 308, 316—319, 563  
 Դաշտենց Խաչիկ 106, 107  
 Դավթյան Վահագն 559  
 Դավիթ Անանուն 248  
 Դարբինյան Մաթևոս 40, 129—131  
 Դարբինյան Սուսան 35  
 Դելյանով Ի. Պ. 74  
 Դեմիրճյան (Դեմիրչողյան) Դերենիկ 15, 18,  
     35, 36, 50, 54, 57, 80, 120, 127, 132, 133,  
     138—140, 162, 163, 165, 167, 169, 178—  
     181, 187, 189—193, 216, 322, 340—392,  
     394—403, 412, 435, 447, 450, 455, 502, 503,  
     516, 565, 566  
 Դիգոր Դենի 190  
 Դիկինս Ջ. 141, 142, 486, 539  
 Դյումա Ալ. 367  
 Դնեպրով Վ. 165  
 Դորրոլլուրով Ն. Ա. 120, 206  
 Դոդե Ալֆոնս 410, 436  
 Դուստուկսի Ֆ. Մ. 23, 209, 222, 299, 300, 340,  
     412  
 Դրա (Կանայան Դրաստամատ) 303, 304  
 Դուրյան Գետրոս 95, 142, 223, 320  
  
 Եղինիկ Կողացի 185, 186, 385, 394  
 Եղիշե (պատմիչ) 379, 380, 382—385, 388, 390,  
     394, 404  
 Եսայան Ջապել 35, 57, 141, 142, 147—150  
 Եսենին Սերգեյ 60, 73, 86, 298, 465, 521, 528,  
     568  
 Երզնկյան Սուրեն 40, 48, 295, 564  
 Երմիլով Վ. 90, 91  
  
 Զարուողկի Ն. 471  
 Զագուսկին Մ. Ն. 163  
 Զարգարյան Ռ. 142  
 Զարյան Կոստան 13  
 Զարյան Նաիրի 36, 42, 46, 49—52, 57, 58, 71,  
     74, 82, 83, 90, 103, 105, 106, 110, 113,  
     114, 150, 151, 157, 166, 167  
 Զարյան Ռուբեն 225, 226, 367, 504  
 Զաքարյան Ալմաստ 286, 366  
 Զաքար (Վարժապետ) 407

- Զելինսկի** Կ. 567  
**Զույա** Էմիլ 148, 353  
**Զոհքար Գրիգոր** 214  
**Զորյան Ստեփան** 21, 35, 49, 50, 58, 62, 64,  
 116—120, 129, 139, 141, 143, 167, 168,  
 179, 183, 194, 216, 359, 364, 405—419,  
 421—443, 446—453, 566  
**Զուրաբյան Մարտ** 35  
  
**Էղզար Շահին** 35  
**Էլլուար** 228  
**Էմին Գևորգ** 106, 107, 312, 399, 559  
**Էնգելս Ֆրիդրիխ** 215  
**Էնվեր** 25  
**Էքսենդի Կապիկ** 399  
  
**Քադեսյան Եղիշե** 36, 342, 400  
**Քահրով** 177  
**Քալեաթ** 25  
**Քամանյան Ալեքսանդր** 34, 140, 380  
**Քամանյան Միքայել** 459  
**Քամբազյան Հրանտ** 183  
**Քամբազյան Հրաչյա** 373  
**Քարգյալ Լյուսի** 165  
**Քարյան Սուրեն** 106, 107  
**Քափալցյան Թր.** 166  
**Քերպիրաջյան Վահրամ** 57  
**Քերեյան Վահան** 35, 519  
**Քըլոստինցի** 142  
**Քոթովսկի Վահան** 35, 50, 119, 133, 141—147,  
 165, 167, 192, 193  
**Քորգոմյան Մ.** 40, 119  
**Քովչյան Էդ.** 225  
**Քոմանյան Հռովհ.** 8, 9, 11, 12, 14, 16—19, 21,  
 22, 26, 27, 29, 30, 34, 36, 43, 58, 63, 72,  
 78, 82, 83, 85, 93, 95, 102, 106, 116, 120,  
 127—129, 178—181, 195, 199, 201, 208,  
 212, 213, 218—220, 222, 232, 250, 252, 321,  
 323, 340, 343, 344, 346, 363, 364, 367, 397,  
 398, 401, 405, 407, 409—411, 418, 419, 428,  
 429, 435, 450, 451, 453, 495, 508, 512,  
 559, 565  
**Քուրշյան Հ.** 350  
**Քեսպյան Ստեփան (Բակունցի Հայրը)** 458  
  
**Ժան Ժորժ** 215  
**Ժարով** 105  
**Ժուլյալսկի** 88  
  
**Ժբան Հևերիկ** 172, 208, 209, 231  
**Ժղարելլա (Զարենցի Կիւր)** 337  
**Իլիշ Ռելլա** 65  
**Ինձիկյան Արմեն** 285, 226  
**Իշխանյան Բ.** 198  
**Իշխանյան Ռ.** 510  
**Իսպոլիտ** Տէն 223  
  
**Խսահակյան Ավետիք** 13—20, 34, 35, 43, 72, 77,  
 83, 95, 106, 107, 113, 145, 151—153, 157,  
 179—181, 220, 228, 232, 271, 272, 323,  
 339, 340, 343, 344, 346, 347, 349—351, 363,  
 364, 374, 389, 390, 397, 398, 402, 404, 405,  
 435, 453, 455, 467, 468, 495, 510, 566  
**Խվանով Վյաշեսլավ** 231  
**Խվանով Վակալով** 67  
**Խնձեկ** 261  
  
**Լառ-Ցղի** 312  
**Լահեմիկով** 163  
**Լերեդե-Պոլյանսկի** 214  
**Լելեկի** 210  
**Լելիի (Սահակյան Փառանձեմ)** 256  
**Լենին Վ. Ի.** 17, 18, 23, 27—31, 119, 296—298,  
 310, 321, 352, 536  
**Լեռ (Բարախանյան Առաքել)** 195, 201, 344,  
 388, 448  
**Լեռնիձե** Գ. 67  
**Լեռ Կամսար (Արամ Քովմաղյան)** 132—138,  
 167, 360, 361, 556  
**Լեսսինգ** 190  
**Լերմոնտով Մ.** Յու. 23, 74, 342, 345, 407  
**Լիբեղինսկի Յու. Ն.** 63, 117  
**Լիրկնեխտ Կ.** 77, 215  
**Լիսիցյան Ստեփան** 435  
**Լյաշկո Ն.** 196  
**Լուգսմբուրգ Ռ.** 215  
**Լոնդոնու 206**  
**Լուի Արագոն** 228  
**Լունաշարսկի Ա. Վ.** 60, 63, 77, 80, 134, 204,  
 215, 221, 531  
**Լունյան Գարեգին** 78, 409, 568  
  
**Լալաթյանց Բ.** 321  
**Լայամ** 95  
**Լանզադյան Սերո** 399  
**Լանզադյան Ցոլակ** 12, 14, 15, 50, 207, 217—  
 220  
**Լանլարյան Հակոբ** 35  
**Լանոյան Ս.** 40  
**Լանջյան Աղասի** 55, 557, 558  
**Լաշանյան Համբարձում** 389  
**Լաշատրյան Հ. Ս.** 278  
**Լաշատուր Կեշառեցի** 330  
**Լիտարովկա Ս.** 439  
**Լիենիկով Վ.** 69  
**Լնկո-Ապեր (Ալբարեկ Լնկոյան)** 35, 42, 80—  
 82  
**Լոռչիկ Էղվարդ** 42, 133  
**Լուազինկու Մ.** 16  
**Լորիմյան Հայրիկ (Մկրտչիշ)** 320  
  
**Ծատուրյան Ալ.** 109  
**Սերենց** 162

- Կազակել էմ. 559  
 Կայարի Հակոբ 35  
 Կամենսկի Ա. 229  
 Կամենսկի Վ. 561  
 Կամո (Տեր-Պետրոսյան Միմոն) 77  
 Կամսարական Տիգրան 35  
 Կանայան Ստեփան 50  
 Կապուտիկյան Սիլվա 106, 107, 399, 559  
 Կասյան Սարգս 29  
 Կավերին Վ. 63, 64  
 Կառակ Խվան 84  
 Կարա-Դարվիշ 36, 38, 69, 172, 561  
 Կարա-Մուրզա 400  
 Կարապետ (Դ. Գեմիրճյանի հայրը) 342  
 Կարինյան (Դարրինյան) Արտաշես 137, 201—  
     206, 310  
 Կիպինսկ 228  
 Կիրշոն Վ. 60, 187, 192  
 Կիրպոտին 63, 64, 490, 492  
 Կնուտ Համսոն 231, 467, 468, 519  
 Կոլցով Մ. 60, 64, 121  
 Կոմիտաս 227, 339, 342, 400, 455, 457  
 Կոչերգան Վ. 187  
 Կողոյան Հակոբ 450, 453, 467  
 Կոստանդին Երևնկացի 330, 373, 467  
 Կոռուկնկո Վ. 206, 436  
 Կոփով Ի. Ա. 81, 214, 407  
 Կրոլիկին Վ. 69  
 Կուլողյան Գ. 225  
 Կուահկով 261  
 Կուրրան 177  
 Կուրդինյան Շնչանիկ 35, 198
- Հալաբյան Կարռ 39, 72, 173, 369  
 Հախվերդյան Լևոն 400, 539  
 Հախումյան Տիգրան 33, 61, 180, 189, 192,  
     225, 366, 370, 374  
 Հակոբ Քուղայեցի 187  
 Հակորյան Հակոբ 35, 40—42, 63, 64, 74—80,  
     98, 119, 198, 344  
 Հակորյան Միմեն 223, 224  
 Համասեղ 179, 180, 364, 558  
 Հաշեկ Յարուսլավ 288  
 Հայկունի Գ. 41  
 Հայն Հ. 342, 345  
 Հայրապետյան Հ. 81  
 Հարությունյան Ս. 225  
 Հարությունով Լ. 256  
 Հառապոման Գերհարդ 222, 224, 231, 367  
 Հաֆեղ 95, 108  
 Հեմչուց 287  
 Հեռուտրատ 135  
 Հյուգո Վիկտոր 141  
 Հոմերոս 308  
 Հովհաննես Թէկուրանցի 330
- Հովհաննիսյան Աշոտ 171, 172, 211, 212, 221,  
     222, 225, 226, 457, 498  
 Հովհաննիսյան Հենրիկ 177  
 Հովհաննիսյան Հովհ. 34, 64, 87, 198, 199, 212,  
     214, 226, 388, 457  
 Հովհաննիսյան Հրաչյա 106, 107, 559  
 Հովսեփյան Գրիգոր 321  
 Հորացիոս 306  
 Հրաշյան Խաչիկ 106, 107  
 Հուրյան Թաթուլ 106, 107, 110
- Զերժինսկի Ֆ. 221  
 Զնելաձե Բորիս 89
- Ղազախեցյան Վ. 567  
 Ղազար Փարակեցի 380  
 Ղազիկյան Արամ 317  
 Ղանալանյան Արամ 67, 227  
 Ղարագյուղյան Ա. 189  
 Ղափանցյան Գրիգոր 457
- Ճուղուրյան Հարություն 128
- Մազմանյան Միքայել 39, 72, 173, 369  
 Մաթեսոսյան Հրանտ 428, 559  
 Մալարմե Ստեփան 231  
 Մալեզյան Վահան 35  
 Մալիշկին Ալ. 64, 118  
 Մալխասյանց Մտ. 457  
 Մալյան Հենրիկ 144  
 Մակինցյան Պողոս 12, 34, 31, 65, 219—223,  
     225, 563  
 Մակովսկի Վ. Ե. 202  
 Մահարի Գուրգեն (Ալեմյան) 36, 42, 46, 47,  
     49, 54, 64, 71, 72, 74, 83, 87, 89, 90, 92,  
     93, 103, 105—107, 114, 133, 141, 142, 167,  
     168, 222, 272, 311, 400, 517—559, 567,  
     568
- Մամիկոնյան Հովհ. 224, 225  
 Մամիկոնյան Մանվել 440  
 Մամիկոնյան Մուշեղ 440  
 Մամիկոնյան Վասակ 440  
 Մամուլյան Ռուբեն 125  
 Մայակովսկի Վ. 37, 60, 69, 70, 86, 88, 89,  
     176, 228, 260—263, 273—275, 297, 561  
 Մանանդյան Հ. 448, 457  
 Մանդելտամ Խոսիֆ 64  
 Մանթաշե 351  
 Մանվելյան Լևոն 124, 186, 342, 344  
 Մանվելյան Միքայել 35, 59, 120, 124—126,  
     166  
 Մանուկյան Սարգս 225  
 Մառ Ն. Յու. 171, 221, 411  
 Մատե Զալկա 65  
 Մարգարյան Մարտ 106, 107, 559

- Մարիամ Մկրտումյան (Խ. Արտվյանի ազգականը) 500, 501  
 Մարիենհոֆ 261  
 Մարինետտի 69  
 Մարկ Տվելն 141, 142, 452, 539  
 Մարշակ Ս. 81  
 Մարշանով 177  
 Մարքս Կ. 167, 177, 215, 524  
 Մէլիքյան Արշավիր 215, 216  
 Մէլիքյան Մէլիք (Դեղուշշամ) 35  
 Մէլիքյան Ռոմանոս 36, 450  
 Մէլիքսեթյան Ս. 192  
 Մէլիք-Օհանջանյան Կ. 227  
 Մէծարենց Միտաք 21, 92, 102, 142, 226, 235, 236, 307, 405, 519  
 Մէյերհոլդ Վ. 175, 177  
 Մէսրոպ Մաշտոց 396, 397, 451  
 Մէտերլինկ Մորիս 148, 281  
 Մէրեժկովսկի 198  
 Միրաբյան Վ. 35  
 Միցկիլ Աղամ 88  
 Միքայելյան Թր. 320  
 Միքել Անշելս 408  
 Միկիթյաններ 317, 373  
 Միշյան Լիպարիտ 89, 260  
 Մկրյան Մ. 66, 225  
 Մկրտչ Նաղաշ 331  
 Մկրտչյան Հարոբյուն 49—52, 104, 216, 225  
 Մյասնիկյան Ալ. (Մարտունի) 9, 14, 29, 30, 89, 103, 171, 197—201, 204, 220, 221, 294, 298, 564  
 Մոլիեր 205  
 Մոպասան 349, 405, 410, 415, 452  
 Մոռալսկի 163  
 Մովսես Խորենացի 178, 185, 186, 404, 439, 440, 448  
 Մուրադյան Բագրատ 369  
 Մուրադյան Հրայր 226, 347  
 Մուրացյան 116, 162, 212, 344, 390  
  
 Ցակուլով Գ. 172, 249  
 Ցանիկակի 260  
 Ցարոշինկո 202  
  
 Նազարյան Նորիկ 106  
 Նազարյան Մտեմիանոս 226, 320, 324  
 Նազմ 25  
 Նազոն Օվիդիոս 307  
 Նալբանդյան Միքայել 11, 20, 22, 74, 120, 185, 199, 206, 212, 226, 340, 361, 403, 404, 407, 494, 495  
 Նախոն 227  
 Նաղաշ Հովհաննես 330  
 Նար-Դոս 15, 34, 61, 62, 120, 164, 212, 226, 340, 344, 409—411, 413, 415, 450  
  
 Նեկրասով Ն. Ա. 74, 120, 121, 202, 206, 281, 306  
 Նեվերով Ա. 117, 451  
 Ներսես Կաթ. (Աշտարակեցի) 501  
 Ներսես Ծնորհալի 331  
 Ներսիսյան Հրաչյա 558  
 Նիշշե Ֆրիդրիխ 231  
 Նորենց Վաղարշակ (Երիցյան) 35, 36, 82—84, 106, 226  
  
 Շահազիք Երվանդ 226  
 Շահազիք Միքատ 226, 388  
 Շահինյան Գր. 558  
 Շահինյան Մարիետա 63, 249, 270, 277, 279, 293, 455  
 Շահնուր Շահան 531, 558  
 Շահրիկյան Ե. 133  
 Շահումյան Ստ. 28, 74, 120, 197, 202, 204, 494, 495  
 Շանթ Լուս 10, 21, 43, 172, 178, 212, 344, 347, 354, 435  
 Շապուհ II 376  
 Շարբաբյան Գիգ 36, 369  
 Շերշենկի 261  
 Շերվինսկի Ս. 67  
 Շերսակիր Վ. 208, 342, 345, 349  
 Շիլիկ Ֆր. 88, 518  
 Շիրազ Հովհ. 103, 107, 114  
 Շիրմանգաղի Ալ. 15, 34, 35, 57, 64, 116, 141, 164, 172, 181—183, 213, 222, 223, 279, 283, 344, 367, 405, 409—412, 449, 451  
 Շկովսկի Վ. 506  
 Շմելյով Ի. Ա. 203  
 Շնիգլեր Արթուր 222  
 Շոլոխով Մ. 206, 398  
 Շորոմ-Ալեքսեյ 539  
 Շոպենհաուզեր 231  
 Շոստակովիչ Գև. 400  
 Շշեղրին տե՛ս Սալտիկով-Շշեղրին  
 Շելենկո Տ. Գ. 202, 206  
  
 Ոսկերչյան Արմ. 225  
 Ոստանիկ 519  
  
 Զարենց Եղիշ (Ազգանոնյան) 21, 23, 35—37, 39, 42, 47—51, 54, 56—59, 63—65, 68—73, 83, 86, 87, 89, 90, 92, 94, 101, 102, 104—108, 111, 112, 114, 131, 132, 155, 163, 167, 168, 173—178, 181, 194, 205, 208—210, 216, 217, 222—224, 228—239, 241—339, 359, 367, 369, 396, 400, 401, 455, 458, 461, 483, 491, 494, 504, 519—521, 523, 531, 549, 550, 557, 558, 561, 563, 564, 566, 567  
 Զերով Ա. Պ. 10, 23, 121, 128, 191, 202, 206, 405, 412, 415, 416, 421, 427, 428, 451—453, 556

Զերնիշևսկի Ն. Գ. 120, 202, 206

Չոպանյան Արշակ 35, 223, 224

Չուբար Ե. 53

Չուժակ 295

Չուկովսկի Կ. 306, 515

Պայտղատ Ս. 119, 129

Պապ (թագ.) 439, 440, 441

Պատկերնակ 298

Պատկանաւն Ռափայել 66, 133, 217, 326, 227,  
320, 328, 404, 407

Պատկանյան Գաբրիէլ 502

Պատկանյան Գետրոս 502

Պարոնյան Հակոբ 22, 116, 133, 135, 137, 185,  
206, 214, 225, 539, 556

Պարոռոս Ֆր. 501

Պեղկենաշլյան Մկրտիչ 78, 320

Պետրարկա 338

Պետրոս Առաջին 308

Պետրոսյան Մատաթ 35, 141

Պերեվերզ Վ. Ֆ. 206, 207, 213

Պերգոմայսկի Լ. 64

Պինկերտոն 198

Պիսարկ Դ. Ի. 120

Պլատոնով Ա. 196

Պլեխանով Գ. Վ. 214, 215, 352, 564

Պշտիշևսկի Ստանիսլավ 231

Պագոդին Ն. 60, 188, 192

Պա Էդգար 71, 336

Պոկրովսկի 162

Պոլոյան Պերճ 66, 141, 212, 314, 226, 342—  
344, 407, 409, 494, 495, 503

Պրիվին Մ. 452, 467, 468, 567

Պուտակ Եմելյան 162

Պուշկին Ա. Ա. 23, 74, 81, 120, 206, 214, 222,  
252, 308, 309, 342, 345, 351, 363, 407,  
451, 506

Զանան Մ. 187, 192

Զավախիշվիլի Մ. Ա. 67

Զեկ Լուդոն 209

Զեմալ 25

Զիվանի 388

Զիվիլեկով Ա. 172

Զրբացյան Էղ. 91, 318, 262

Զուղայեցի տե՛ս Հակոբ Զուղայեցի

Ռարլե 565

Ռադով 210

Ռադշակիշնան Ա. 245

Քաֆայել 70

Ոեն Լուդվիգ 65, 116

Ոենար Ժյուլ 549

Ոենե Գիլ 306

Ոիկն 228

Ոիկնի Մաքսիմ 64

Ոոժգննառվենսկի Վ. 64

Ռոմեն Ռոլան 224

Ռոմանոս տե՛ս Մելիքյան Ռոմանոս

Ռուսթավելի Շ. 168

Սաադի 95, 108

Սալախյան Հ. 262, 566

Սալման 50

Սալտիկով-Շլեպին 293, 483, 553, 567

Սահակ Գարբե 396, 397

Սահյան Համո 559

Սաղաթելյան Լ. 189

Սամեն Ալբերտ 230

Սայաթ-Նովա 63, 65, 267, 330, 338

Սանին 198

Սարաջե Կ. 400

Սարգսյան Խորեն 155, 224—226, 412, 420

Սարինյան Մ. 11

Սարմեն 36, 42, 74, 83

Սարյան Գեղամ (Բաղդասարյան) 36, 46, 74, 83,  
92, 94—101, 103, 106, 114, 120, 187

Սարյան Թաթիկ 362, 369

Սարյան Մարտիրոս 34, 63, 84, 85, 198, 228,  
229, 244, 270, 369, 453, 455, 470, 471, 520,  
566

Սարյան Ա. 561

Սարոյան Վիլյամ 558

Սելիքանովսկի Ա. 49

Սելիքինա Լ. 60, 117, 451

Սենկիլ 452

Սերաֆիմովիչ Ա. 60, 117, 119

Սերոր 113

Սերգանտես 209, 222

Սիմանյան Ռ. 21, 22, 89, 235, 248, 318, 320,  
404, 519

Սիմոնյան Դր. 56

Սիմոնով Ռուբեն 173

Սիպիլ 35

Սիրաս Հմայակ 36, 42, 162, 165

Սոլովուր Յենոփոր 231

Սոլովյով Վանվոլոդ 163

Սողոմոնյան Ա. 225

Մոֆոկես 172, 367

Սպանգարյան Սուրեն 79, 197

Սպենդիարյան Ալ. 34

Սվետով Մ. 64, 89, 298

Սվյաթ Զոննաթան 556

Ստանիսլավսկի Կ. 172, 177

Ստենդալ 62, 206

Ստեփան (Դ. Դեմիրճյանի ազգականը) 342

Ստեփան Ռոկան 495

Ստեփան Ռազին 162, 202

Մրգնաձայն Գ. 179, 321, 363

Մութան Համիդ 320

Մուլիսիաշվիլի 62, 122

Մունդուկյան Գ. 116, 133, 171, 173, 212, 217,

226, 397, 398

- Առաջիրին** Վ. 50, 63  
**Սուրբուշ** 203  
**Սուրխաթյան** Հարություն 5, 31, 33, 89, 207—  
 209, 218, 295  
**Տուրիասյան** Նիկոլաս 501  
**Սուրփիասյան** Ս. 323  
**Մետկ Գուրգեն** 58, 398  
**Մետկ Պարույր** 267, 297, 305, 559  
**Մեերյանին** Իզոր 260  
  
**Վագներ** Մորից 498, 501  
**Վալտեր** Ակոս 88  
**Վախթանգով** Ե. 172, 173, 175, 177  
**Վահագն** (Դ. Թեմիրճյանի ազգականը) 342  
**Վահանյան** Ընծակ 49  
**Վահոնի** Ս. 89, 106  
**Վաղարշյան** Վաղարշ 173, 186, 187, 189, 192  
**Վայնինգեր** Օտտոն 198, 231  
**Վանանդեցի** Գուրգեն 42, 49—51, 58, 71, 94,  
 209—211  
**Վանդեկ** Վ. 41  
**Վարդան** Մամիկոնյան 376, 382, 407  
**Վարդանյան** Աննաշվան 35, 42, 189  
**Վարուժան** Գանիկ 21, 22, 98, 99, 102, 320,  
 404, 405, 519  
**Վեսպեր** 83, 92, 103, 519  
**Վերլին** Պոլ 71, 83, 231  
**Վերնարդ** Էմիլ 98, 198, 205, 231, 275, 318  
**Վիլսոն** Վիլրո 262  
**Վիշնակի** Վահվոլող 192  
**Վիրդիլոս** 243, 316, 318  
**Վշտունի** Ազատ 35—37, 39, 41, 42, 50, 60, 69,  
 71, 83—86, 94, 520  
**Վոյնիլ** 202  
**Վուրդուն** Ս. 67  
  
**Տարին** Գալակտիոն 89, 298  
**Տարին** Տիգիան 64, 65, 256  
**Տարոնցի** Սողոմոն 36, 83, 89, 90, 102, 106—  
 109  
**Տեր-Աստվածատրյան** Արքենիկ 261, 274, 298,  
 337  
**Տեր-Գրիգորյան** Էմին 50  
**Տեր-Խորեն** (Յ. Խանգաղյանի հայրը) 217  
**Տեր-Մելիքոսիթեկյան** Ս. 342  
**Տեր-Մկրտչյան** Կարապետ 457  
**Տերյան** Վահան 7—9, 14, 20—22, 29, 36, 59,  
 68, 69, 71, 72, 77, 83, 87, 90, 92, 94, 95,  
 98, 108, 115, 116, 171, 195, 204, 206, 212,  
 220, 222, 223, 225, 234—237, 239, 252, 253,  
 268, 270, 272, 277, 282, 326, 327, 337, 338,  
 340, 347, 401, 404, 405, 409—411, 451, 453,  
 495, 518, 519, 535, 549  
**Տերտերյան** Արմեն 12, 50, 211—214, 518  
  
**Տիգրանյան** Արմեն 36  
**Տիխոնով** Ն. 60, 63, 64, 88, 89  
**Տիխանով** Յուրի 24, 504  
**Տիշին** Պավլ 64, 67, 89, 298, 531  
**Տիրատորյան** Կ. 379  
**Տոլստոյ** Ալ. 67, 118, 163, 203, 398  
**Տոլստոյ** Լև 17, 18, 23, 66, 115, 141, 142, 208,  
 209, 349, 405, 407, 427, 436, 452, 453  
**Տվարդովսկի** Ալ. 111  
**Տուրգենև** Ի. Ս. 202, 452  
  
**Րաֆֆի** 22, 66, 74, 116, 120, 162, 213, 217,  
 218, 279, 320, 390, 404, 407, 439, 508 518  
  
**Տվայդ Ստեֆան** 452  
  
**Ուայլդ** Օսկար 231  
**Ուելս** Հերբերտ 296  
**Ուտմեն** Ռուլտ 205, 275  
**Ուսպենսկի** Գլեբ 202  
**Ուտկին** 105  
  
**Փալանդուց** Մկա 133  
**Փալմտոս** Բուզանդ 439, 440, 448  
**Փափազյան** Վահրամ 176, 449, 563  
**Փափազյան** Վրթանես 15, 344, 411, 418  
  
**Քալանդուց** Ալոն 36, 125, 173, 192, 563  
**Քամալյան** Սարգիս 120  
**Քափանտիյան** Ստ. 36, 171  
**Քյազիմ** Կարաքերիր 256  
**Քոչար** Հրաչյան 119, 129, 133, 138  
  
**Օստրովսկի** Ա. 452  
**Օվայանիկոս-Կուիկումսկի** 213  
**Օտյան** Երվանդ 21, 35, 133, 135, 143, 539, 558  
**Օրբելի** Հովհանն 67, 172  
**Օրդուխանյան** Ա. 568  
**Օրշնիկին** Գ. Կ. 28  
  
**Զաղեն** Ա. 91  
**Զաղեն** Ա. Ա. 60, 66, 67, 117, 118, 398, 451  
**Զեղին** Կ. 67  
**Զենիքս** 519  
**Զիլիստյան** 198  
**Զիրուսի** 95, 316  
**Ցուրեր** 405, 410, 567  
**Ցուկով** Նիկոլա Հուկո 318  
**Ֆորշ** Ուզան 64  
**Ֆրանո** Անատոլ 205, 436  
**Ֆրիկ** 330  
**Ֆրիկ** Վ. Մ. 40, 206, 207, 211

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

<b>Հեղինակի կողմից</b>	<b>5</b>
Նորագույն գրականության ակունքների մոտ	7
<b>20—30-ական թվականների գրական շարժումը</b>	<b>25</b>
<b>Պոեզիա</b>	<b>68</b>
Գեղարվեստական արձակ	115
<b>Թատերագրություն</b>	<b>171</b>
Ծննադատություն և գրականագիտություն	195
<b>Ծղիչ Զարենց</b>	<b>228</b>
<b>Դերենիկ Դեմիճյան</b>	<b>340</b>
Ստեփան Զորյան	404
Ակսել Բակոնց	454
Գուրգեն Մահարի	517
Մանոթագրություններ	560
Անձնանունների ցանկ	569

## ՍՈՒՐԵՆ ԲԱՐԴՈՒՂԻ ԱՂԱԲԱԲՅԱՆ

### ՀԱՅ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

#### ՀԱՏՈՐ 1

**Հրատ. Խմբագիր՝ Ս. Ա. Անաստասյան**  
**Նկարչական ձևավորումը՝ Կ. Կ. Ղաֆարյանի**  
**Տեխ. Խմբագիր՝ Լ. Կ. Հարուրյանյան**  
**Մրրագրի՝ Է. Ա. Սոխիկյան**

#### ИБ 938.

Համձնված է շարվածքի 23. 05. 1985 թ. Ստորագրված է տպագրության 29. 01. 1986 թ.  
 Վ. 04512: Զափը 70×108<sup>1</sup>/<sub>16</sub> թուղթ № 2: Տառատեսակ «գրքի սովորական», բարձր տպագրություն: Պայմ. 51,1 մամ., տպագր. 36,0+4 ներդ. մամուլ: Ներկ. մամուլ 51,1: Հրատ.-հաշվարկ. 44,2 մամուլ: Տպագանակ 8000: Հրատ. № 6429: Պատկեր № 325: Գինը 3 լ. 70 կ.:

ՀԱՅՈՒ ԳԱ Հրատարակություն, 375019, Երևան, Մարշալ Բագրամյան պող. 24 գ.

Издательство АН АрмССР, 375019, Ереван, пр. Маршала Баграмяна, 24 г.

ՀԱՅՈՒ ԳԱ Հրատարակություն տպարան, 375019, Երևան, Մարշալ Բագրամյան պող. 24:

Տիպոգրաֆия Издательства АН АрмССР, 375019, Ереван,  
пр. Маршала Баграмяна, 24.